



Հարգելի՛ ընթերցող.

ԵՊՀ հայագիտական հետազոտությունների ինստիտուտը, չհետապնդելով որևէ եկամուտ, իր կայքերում ներկայացնելով հայագիտական հրատարակություններ, նպատակ ունի հանրությանն ավելի հասանելի դարձնել այդ ուսումնասիրությունները:

Մենք շնորհակալություն ենք հայտնում հայագիտական աշխատասիրությունների հեղինակներին, հրատարակիչներին:

*Մեր կոնտակտները՝*

*Պաշտոնական կայք՝ <http://www.armin.am>*

*Էլ. փոստ՝ [info@armin.am](mailto:info@armin.am)*

ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ  
ԱՍՏՎԱԾԱԲԱՆՈՒԹՅԱՆ ՖԱԿՈՒԼՏԵՏ  
ՀՀ ԳԱԱ ՀՆԱԳԻՏՈՒԹՅԱՆ ԵՎ ԱԶԳԱԳՐՈՒԹՅԱՆ ԻՆՍՏԻՏՈՒՏ

Ռ. Հ. ՎԱՐԴԱՆՅԱՆ

**Հ Ա Յ Ո Ց**

**Տ Ո Ն Ա Ց Ո Ւ Յ Ց Ը**

**(4 - 18 - ՐԴ ԴԱՐԵՐ)**

ԱՍՏՎԱԾԱԲԱՆՈՒԹՅԱՆ ՖԱԿՈՒԼՏԵՏԻ ՄԱՏԵՆԱԾԱՐ 2

ՀՀ ԳԱԱ «ԳԻՏՈՒԹՅՈՒՆ» ՀՐԱՏԱՐԱԿՉՈՒԹՅՈՒՆ  
ԵՐԵՎԱՆ 1999



Վարդանյան Ռ. Հ.

Վ 301 Հայոց տոնացույց (4-18-րդ դարեր). - Եր.: ՀՀ ԳԱԱ «Գիտություն» հրատ., 1999.- 647 էջ:

Աշխատությունը Հայոց Տոնացույցի և նրա պատմությանը նվիրված առաջին ամփոփիչ քննական ուսումնասիրությունն է: Սույն մենագրությունը տալիս է Հայոց Տոնացույցի ծագման և հետագա ընդլայնման հետ կապված խնդիրների ու հարցերի պատասխանները: Աշխատանքի մեջ որոշել ենք բազմաթիվ բնագրերի ստեղծման և տոների ծագման ժամանակները՝ օգտագործելով նորագույն մեթոդները:

Հայոց տոնական տարվա վարձացման փուլերը, սկսած 4-րդ դարից մինչև ներկա «Տոնացույցը», մեքենայական մշակման ենթ ենթարկել և ստեղծել «Հայոց Տոնացույց» կոմպյուտերային ծրագիրը, որը ներկայացրել ենք հնատրուկցիայի և դիսկետի հետ:

Աշխատությունը նախատեսված է հայագիտության տարբեր բնագավառներով հատկապես պատմական ժամանակագրության, աղբյուրագիտության, Հայոց Տոմարի ու Տոնացույցի հարցերով վբաղվող մասնագետների և ներկա Տոնացույցն օգտագործող հավատացյալների համար:

Վ 0503020913 99

705(01)-99

ԳՄԴ 63.3 (2Հ)+ 63.4(2Հ)

ISBN 5-8080-0410-8

© Վարդանյան Ռ. Հ., 1999

**ՆՎԻՐՈՒՄ ԵՄ**

**ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ  
ԱՍՏՎԱԾԱԲԱՆՈՒԹՅԱՆ ՖԱԿՈՒԼՏԵՏԻ  
ԱՌԱՋԻՆ ԴԵԿԱՆ, ՊՐՈՖԵՍՈՐ  
ՇԱՀԷ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍ ԱԾԵՄԵԱՆԻՆ.  
ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ ՔՐԻՍՏՈՆԵՈՒԹՅԱՆ  
ԸՆԴՈՒՆՄԱՆ 1700 ԱՄՅԱԿԻ ԱՌԹԻՎ**

**Մ Ո Ւ Տ Ք**

Հայագիտության դժվարին խնդիրներից են Հայոց Տոնացույցի ծագման և զարգացման հետ կապված հարցերի հետազոտությունը: Պատահական է, որ Հայոց Տոնացույցի մասին չկա քիչ թե շատ ամբողջական քննական ուսումնասիրություն: Հայոց Տոնացույցի առանձին հարցերի մասին արվել են միայն նախնական դիտողություններ: Հիմնախնդրի լուծման բարդություններից կարևորագույնն այն է, որ Հայոց Տոնական տարվա մասին առկա սկզբնաղբյուրները հիմնականում թվագրված չեն: Աշխատանքի շարադրման ընթացքում փորձել ենք որոշել բնագրերի և տոների ժամանակին վերաբերվող խնդիրները: Այդ է պատճառը, որ ներկա հետազոտության մեջ կան ընդհատումներ, այսինքն՝ առաջին հերթին հիմնավորել ենք սկզբնաղբյուրների և առանձին տոների ստեղծման ժամանակը, որից հետո միայն հնարավոր է դարձել քննարկել Հայոց Տոնացույցի ծագման և հետագա ընդլայնման հետ կապված խնդիրները:

Գրական հուշարձանների և առանձին տոնական օրերի թվագրումը կատարել ենք համալիր ուսումնասիրության եղանակով, առաջին հերթին ուշադրություն ենք դարձրել նորագույն մեթոդների, այն է՝ Հայոց տոմարական և տոնացույցային եղանակների ստեղծման վրա ու միայն դրանցով է հնարավոր եղել որոշել սկզբնաղբյուրների և Հայոց տոնական տարվա ժամանակի հետ առնչված հարցերը: Հայոց տոմարական եղանակով խնդիրների լուծման մեթոդը տրվել է մեր «Հայոց տոմարական եղանակը, թարգմանական բնագրերի ժամանակը» աշխատության մեջ: Այդ է պատճառը, որ հետազոտության մեջ հատուկ կանգ չենք առել այդ եղանակի հիմնավորման վրա, այլ անմիջականորեն որոշել ենք բնագրերի և առանձին տոնական օրերի ժամանակը, այսինքն՝ թվագրել ենք հիմնվելով Հայոց շարժական տոմարի առկա ամիսամսաթվերի վրա՝ օգտագործելով «Տոմար» կոմպյուտերային (համակարգչային) ծրագիրը: Հայոց տոնացույցային եղանակը ներկայացվել է առաջին անգամ, որի հետևանքով նախ տվել ենք խնդրի սահմանումը և առանձին օրինակների միջոցով հիմնավորել այն և փորձել ենք դրանով իսկ մատչելի դարձնել ընթերցողներին:

Հայոց տոնական տարվա զարգացման փուլերը սկսած 4-րդ դարից մինչև Միմեոն Երեվանցու «Տոնացույց»-ի խմբագրությունը, ինչպես և ներկայումս գործող տոնացույցը՝ հավելումներով հանդերձ, մեքենայական մշակման ենք ենթարկել և ստեղծել «Հայոց Տոնացույց» կոմպյուտերային ծրագիրը, տեխնիկական գիտությունների թեկնածու Դ. Գ. Ասատրյանի հետ համատեղ:

Ներկա կոմպյուտերային ծրագրում, որը ներկայացրել ենք ինստրուկցիայի և դիսկետի հետ, որը կվաճառվի և՛ գրքի հետ և՛ առանձին, փորձել ենք Հայոց տոմարական և տոնացույցային եղանակների ֆորմալացման ճանապարհով լուծել խնդիրների մի փունջ, որը մատուցվել է շատ պարզ և մատչելի, որպեսզի յուրաքանչյուր հետաքրքրվող սկսած գիտնականից մինչև շարքային հավատացյալը կոմպյուտերային ծրագիրն օգտագործելով կարողանա իմանալ Հայոց Տոնացույցի հետ կապված հիմնական հարցերը, հատկապես թե՛ պատմական, թե՛ այսօրվա, թե՛ գալիք տոնական օրերի ամիսամսաթվերի համարժեքները և շաբաթվա օրերը, ինչպես Հայոց շարժական տոմարով, այնպես էլ Հուլյան և Գրիգորյան անշարժ տոմարներով, սկսած 9 թվականից մինչև 2300-ական թվականների սկզբները: «Հայոց Տոնացույց» կոմպյուտերային ծրագրում ընդգրկել ենք հնագույն Ճաշոցների, Տոնացույցների, Յայսմավուրքների ու նրանց հետագա խմբագրությունների մեջ ավելացրած տոները և սրբերի հիշատակի, ինչպես և Միմեոն Երևանցու և այսօրվա տոնական օրերը:

«Հայոց Տոնացույցը» գիրքը պատրաստվել է Աստվածաբանության ֆակուլտետի դեկան Ծախե Արքեպիսկոպոս Աճեմյանի պատվերով:

Բնագիրը պատրաստվել է համակարգչի վրա նույն ֆակուլտետի աշխատակիցների կողմից, սրբագրությունը և էջակալումը կատարվել են հեղինակի հսկողությամբ:

Տպագրությունը իրականացվել է Գերաշնորհ Տեր Մեսրոպ Արքեպիսկոպոս Աճեմյանի հովանավորությամբ:

Գրքին կցված է «Հայոց Տոնացույց» կոմպյուտերային ծրագրաշար-ուղեցույց: Ուղեցույցը և դիսկետը պատրաստվել են ֆակուլտետի դեկանի հանձնարարությամբ:

Յուրաքանչյուր ոք կարող է միայն իր ձեռքերը օգտագործել հետևելով ինստրուկցիայի և կոմպյուտերային ծրագիրը աշխատացնելով գտնել ցանկացած տարվա տոների օրերի համար-ժեքները:

Դիտարկումները ցույց են տալիս, որ որևէ պատմական բնույթի աշխատություն կարգալիս լինի դա տպագիր թե գրչագիր բնագիր, որտեղ հանդիպում են Հայոց տոնական տարվա հետ կապված ամիս-ամսաթվեր, հետազոտողի և ընթերցողի համար դրանք վեր են ածվել մոգական թվերի, մի կողմից որ այդ տեղեկությունները հիմնականում Հայոց շարժական տոմարով են, մյուս կողմից որ այդ նշումները Հայոց անշարժ և հատկապես շարժական տոներով են, որոնք երկուսն էլ դժվար ընկալելի են: Առաջարկվող կոմպյուտերային ծրագիրը լուծելով այդ խնդիրները վերացրել է այն արգելքները, որոնք դժվարացրել, նույնիսկ անլուծելի են դարձրել այդ տեղեկությունները և մոգական թվերը վեր են ածվել իրականի: Բացի այդ հետազոտողներն օգտագործելով «Հայոց տոնացույց» կոմպյուտերային ծրագիրն, այսինքն՝ կիրառելով նորագույն մեթոդները, կարող են որոշել թարգմանական և ինքնուրույն բնագրերի թարգմանման և գրման ժամանակները, տոների և սրբերի հիշատակի օրերի առաջացման տարիները, ինչպես և ոչ միայն ձեռագրերի ընդօրինակությունների, այլև մայր ձեռագրերի ստեղծման տարեթվերը: Մենք կատարել ենք այդօրինակ աշխատանքներ և հետազոտում կշարունակենք, սակայն մեկ մարդ հնարավոր չէ, որ ընդգրկի բոլոր այն բնագրերը, որոնք ունեն տոնացույցային նշումներ, ուստի Հայոց հին մատենագրության ժամանակագրության պրոբլեմը կլուծվի հեշտությամբ և բոլորիս գործը կդառնա, երբ լայն շրջանառության մեջ մտնի կոմպյուտերային այս ծրագիրը:

Յուրաքանչյուր հոգևորական և հավատացյալ ամեն տարի գնում է օրացույց, որպեսզի իմանա միայն տվյալ տարվա տոների օրերը, մինչդեռ այս կոմպյուտերային ծրագիրը ձեռք բերելով դուք կիմանաք ոչ միայն հին ժամանակների տոների օրերը, որով կարելի է հեշտությամբ որոշել հոբելյանական տարելիցները և նախօրոք պատրաստվել դրանք նշելու համար, այլև առօրյա և գալիք տոների օրերը մինչև 2300-ական թվականների սկզբները, այսինքն՝ մի քանի տասնյակ սերունդների համար լուծվել է մշտական Օրացույց-Տոնացույց ունենալու խնդիրը: Ասենք նաև, որ ամեն մի հետաքրքրվող կարող է պատվիրել «Հայոց Տոնացույց» կոմպյուտերային ծրագրի իր տարբերակը՝ ելնելով իր պահանջներից ու նախասիրություններից: Էլ չենք ասում, որ այդ ծրագիրը կարող է լինել լավագույն նվերը: Հարկ է նշել, որ «Հայոց Տոնացույց» կոմպյուտերային ծրագիրն սկսվում է տոների օրերի ցանկով, որտեղ ընդգրկվել են մոտ 700 տոն ու հիշատակի օր, ըստ հնագույն Ճաշոցների, Տոնացույցների, Յայսմավուրքների տարբեր խմբագրությունների ընդգրկմամբ՝ ներառյալ Սիմեոն Երևանցու «Տոնացոյց»-ի խմբագրությունը, ինչպես և ավելացվել են որոշ ժամանակակից եկեղեցական տոներ: Ընտրելով տվյալ տոնի կամ սրբի հիշատակի, օրը ինստրուկցիային հետևելով, հեշտությամբ կարող եք գտնել Ձեզ հետաքրքրող հարցի պատասխանը: Այդ տոնացույցակին զուգահեռ տրվել են ծանոթություններ և Help, որոնք վերաբերում են տոների համառոտ պատմությանը և ծրագրի տվյալ տոնաշարքի խնդիրներին այն հաշվով որ օգտագործողը դյուրին հասկանա և փնտրի իր ուզածը ժամանակի այն հատվածում, երբ առաջացել է տվյալ տոնը կամ սրբի հիշատակի օրը և չախալվի: Տոնաշարքում ընտրելով որևէ շարժական տոն տոնացույց-ժամանակացույցի միջոցով, ըստ ինստրուկցիայի, առանց դժվարություն կարող եք պարզել, թե այդ տոնը Հայոց շարժական տոմարի ցանկացած ամսաթվին որ տարիների խմբում է կատարվել: Իսկ ընտրելով անշարժ տոնական օր և Հայոց շարժական տոմարի որևէ ամսաթիվ, այս անգամ տոնացույցի միջոցով կիմանաք այն քառամյակի տարիները երբ կատարվել է տվյալ տոնը: Կոմպյուտերային ծրագրի հաջորդ խումբ հարցերը վերաբերվում են Հայոց տոնացույցային տարվա և նրա առանձին ամիսների օրերի Հայոց շարժական տոմարի, ինչպես և Հին (Հուլյան) ու Նոր (Գրիգորյան) տոմարների զուգահեռներին, որոնք տրվել են երկու կտրվածքով, այն է՝ յուրաքանչյուր տարվա և

տարիների խմբերի համար: Այս անգամ այն կարող եք, ըստ ինստրուկցիայի, թերթել սկսած 9 թվականից մինչև 2300-ական թվականների սկզբներն ընկնող ցանկացած տարվա և տարիների խմբի կտրվածքով: Դրանով իսկ ձեռի տակ ունենալով մշտական աղյուսակներ, որոնք կդյուրացնեն որևէ համարժեք ամսաթվի գտնելը կամ ստուգելը, ըստ սկզբնաղբյուրի տվյալների: Ասենք նաև որ նույն շարքի տակ են տրվել հիմնական շարժական տոները, այն է՝ Զատիկը, Հոգեգալուստը, Վարդավառը, Աստուածածինը, Սուրբ Խաչը և Յիսնակամուտը, որոնք նույնպես վերը հիշատակված ձևով կարող եք թերթել և իմանալ Ձեզ հետաքրքրող ցանկացած տարվա կամ տարիների խմբի տոների օրերի իրար համադրելի Հայոց և Հուլյան (նաև Գրիգորյան) տոմարական ամսաթվերը ու շաբաթվա օրերը:

Հարկ է նշել, որ ընտրված տոնի հետ կապված խնդիրը լուծելուց հետո կարող եք ստացված արդյունքները տպագրել և ունենալ ձեռքի տակ ու օգտագործել տարբեր նպատակներով: Հայոց տոնացույցի տվյալների և հեթանոսական աստվածների մասին եղած վկայությունների համադրությունները հնարավորություն են տալիս վերականգնել Հայոց նախաքրիստոնեական դիցարանի տոնական տարվա հիմնական պատկերը, որոնք ավելի ընթեռնելի են դարձնում Հայոց քրիստոնեական տոնական տարվա առանձին տոների առաջացման անհրաժեշտությունը տվյալ հատվածում, ուստի առաջին գլուխը նվիրել ենք այդ խնդրին:

ՀԱՅՈՑ ԴԻՑԱՐԱՆԻ ՏՈՆԵՐԸ

Հայ միջնադարյան սկզբնադարձությունների հաղորդած տեղեկությունների, հատկապես քրիստոնեական և հեթանոսական տոների օրերի համադրության, հիման վրա որոշվում են Հայաստանի նախաքրիստոնեական պանթեոնի աստվածների և աստվածուհիների տոների ժամանակները: Այն կարևոր է ոչ միայն Հայոց դիցարանի մասին մեր սահմանափակ պատկերացումներն ընդլայնելու տեսակետից, այլ հնարավորություններ են ստեղծվում նոր հարցադրումների ու խնդիրների լուծման համար, որոնցից մի քանիսը ներկայացրել ենք շարադրանքում:

1901 թվին Ղ. Ալիշանը «Հայապատում» աշխատության մեջ, Հովհաննես Կոզեռնին նվիրված բաժնում Վենետիկի գրչագրի հիման վրա հրատարակել է Վարդավառի տոնին նվիրված բնագրից մի հատված: Այն վերագրվել է Հովհաննես Կոզեռնին, հավանաբար ելնելով գրչագրի տվյալներից<sup>1</sup>: 1905 թվին Ֆ. Կոնիբերը Փարիզի ձեռագրից վերցրել է նույն բնագրի կրկնօրինակի համարժեք հատվածը, թարգմանել է անգլերենի և կատարել իր ոչ հիմնավոր մեկնաբանությունները<sup>2</sup>, որոնցից մի քանիսին կանդրադառնանք ստորև:

Ն. Պողարյանը Երուսաղեմի ձեռագրերի նկարագրության մեջ հրատարակել է Ֆ. Կոնիբերի, ինչպես և Ղ. Ալիշանի ներկայացրած բնագրի համադրելի հատվածը<sup>3</sup>: Երուսաղեմի ձեռագրում այդ բնագիրը հաջորդում է Հովհաննես Կոզեռնի գրած Վարդավառի տոնի մեկնություն-տոնապատճառին, ունի առանձին, ուրույն վերնագիր, այն է՝ «Այլուստ պատճառ դարձեալ<sup>4</sup> սոյն տաւնին»<sup>5</sup>: Պարզ է, որ ստորև բերվելիք հատվածը Երուսաղեմի բնագրում չի վերագրվել Հովհաննես Կոզեռնին, ինչպես կարծել է Ղ. Ալիշանը, առավել ևս Գրիգոր Արշարունուն, որի մասին աներկբա գրել է Ֆ. Կոնիբերը և կրկնել է Ն. Ակինյանը, այլ մի անհայտ հեղինակի, որի ժամանակը և անձը դեռևս պետք է պարզել:

Բարբախտաբար բնագրում առկա են տոմարական զուգահեռներ, որոնք հնարավորություն են տալիս այն թվագրել, սակայն հեղինակի մասին առայժմ կարելի է միայն ենթադրություններ անել:

Բերենք մեզ հետաքրքրող հատվածը երկու գրչագրերի համադրությամբ. «... Զի ի Նաւասարդի Ա-ն<sup>6</sup> տաւնէին Արամազդայ<sup>7</sup> եւ ի ԺԵ-ն<sup>8</sup> Անահտայ<sup>9</sup>, և ի Սահմի հինգ<sup>10</sup> տաւնէին Վահեան եւ Վահագնի եւ յամառնային ժամանակ տաւնէին Ափրոզիտէ ... իսկ Սուրբ Գրիգոր, ածեալ զմեզ ի լոյս աստուածագիտութեանն, խլէր զղիւական<sup>11</sup> սովորութիւնն եւ ի ճշմարտու-

1 Ղ. Ալիշան, Հայապատում, Վեներիկ, 1901, էջ 89-91:  
2 C. F. Conybeare, Rituale Armenorum, Oxford, 1905, p. 508-514.  
3 Ն. Պողարյան, Մայր ցուցակ ձեռագրաց սրբոց Հակոբեանց, հատոր 4-րդ, Երուսաղեմ, 1969, էջ 452:  
4 Վարդավառի — Ռ. Վ.  
5 Ձեռ. N° 1272, էջ 149բ:  
6 Ղ. Ալիշանի մոտ՝ Մին:  
7 Երուսաղեմի N° 1272 ձեռագրում՝ Արամազդա:  
8 Ղ. Ալիշանի մոտ՝ հնգտասան:  
9 N° 1272 -ում՝ Անահտա:  
10 N° 1272 -ում՝ յեթն:  
11 N° 1272-ում՝ դիական:

թիւնն փոխէր եւ ընդդէմ նոցին կարգէր ի Նաւասարդի Ա-ն<sup>1</sup> Յովհաննու Կարապետին տօնել<sup>2</sup> եւ ի Ժ եւ Ե-ն<sup>3</sup> Աւետեաց Աստուածածնի, եւ ի Սահմի հինգ<sup>4</sup> Յովհաննու<sup>5</sup> եւ Աթանագինէ և զՎարդեւորիս տաւնել զերեւումն Տեառն մերոյ Յիսուսի Բրիստոսի ի Թափովրական<sup>6</sup> լերինն՝ աւրինադրէ...»<sup>7</sup>:

Վերջերս հրատարակած մեր աշխատության մեջ հիմնավորել ենք բնագրերի ժամանակի որոշումը՝ հայոց տոմարական եղանակով<sup>8</sup>: Այստեղ հարկ չենք համարում կանգ առնել թվագրման մեթոդի լուսաբանության վրա, այլ անցնում ենք բնագրի ժամանակի որոշմանը:

Ըստ վերը բերված տվյալների, Անահտի տոնի օրը, այն է՝ Նավասարդի 15-ը, համարժեք է ընդունվել Ավետեաց Աստուածածնի տոնի օրվա հետ: Վերջինիս տոնի օրվա ամսաթիվը հուլյան տոմարով թեև բնագրում բացակայում է իբրև զուգահեռ հայոց շարժական տոմարի ամսաթվի՝ Նավասարդի 15-ի, սակայն հանրահայտ է, որ Ավետեաց Աստուածածնի տոնի օրը անշարժ էր և վաղ շրջանում միշտ կատարվել է Ապրիլի 6-ին<sup>9</sup>, իսկ ուշ շրջանում՝ Ապրիլի 7-ին<sup>10</sup>: Այլ խոսքով՝ հայոց շարժական տոմարի Նավասարդի 15-ը համադրելի է Ապրիլի 6-ին: Դժվար չէ որոշել այն տարեթվերի քառամյակը, երբ գրվել է քննարկվող բնագիրը: Այսպես,

Նավասարդի 15 = Ապրիլ 6, որտեղից Նավասարդի 1 = Մարտ 23 = 992-995 թթ.

Այն է՝ ըստ «Հայոց տոմար» կոմպյուտերային ծրագրի հաշվումների.

Ներկա թվական	Հուլյան ամիս	Հուլյան ամսաթիվ	Շաբաթվա օր	Հայոց թվական	Հայոց ամիս	Հայոց ամսաթիվ	Շաբաթվա օր
992	4	6	4	441	1	15	4
993	4	6	5	442	1	15	5
994	4	6	6	443	1	15	6
995	4	6	7	444	1	15	7

Ավելի ստույգ 992 թվականն է: Այն հիմնավորվում է ներքոհիշյալ հաշվարկով: Ըստ բնագրի տվյալների Գրիգոր Լուսավորիչը Վահան և Վահագնի տոնը փոխել և կարգել է Հովհաննես Կարապետի (Մկրտչի) և Աթանագինի տոնը՝ Սահմի 5-ին<sup>11</sup>: Հայոց քրիստոնեական տոնացույցում Հովհաննես Կարապետի և Աթանագինի տոնի օրը եղել է Պենտեկոստեից (Հոգեգալուստից) հաշված 12-րդ օրը՝ հինգշաբթի<sup>12</sup>:

1 Ղ. Ալիշանի մոտ՝ մի:  
2 N° 1272-ում՝ չիք տօնել  
3 Ղ. Ալիշանի մոտ՝ Հնգտասան  
4 N° 1272-ում՝ յեթն  
5 Ղ. Ալիշանի մոտ՝ Յովհաննու:  
6 Ղ. Ալիշանի մոտ՝ Թափովրական:  
7 Ղ. Ալիշան, Աշխ. աշխ., էջ 90-91, C. F. Conybeare, Աշխ. աշխ., էջ 512, անգլերեն թարգմանությունը, Ն. Պողարյան Աշխ. աշխ., էջ 452, Երուսաղեմի 1272 թվահամարի ձեռագիր, էջ 149բ-153ա: Միևնույն օգտագործել է վերոհիշյալ բնագրի տվյալները հատկապես Անահտի և Ավետեաց Աստուածածնի տոնի համադրումը (տե՛ս Միևնույն վարդապետ Գոշ, Թուրք առ Վրացիս՝ յաղագս ուղղափառութեան հաւատոյ, Գանձասար հ. 6, 1996, էջ 364:  
8 Ռ. Ն. Վարդանյան, Հայոց տոմարական եղանակը. թարգմանական բնագրերի ժամանակը, Երևան, 1993:  
9 Ձեռ. N°N° 179, 979 էջ 293ա, 2092 էջ 225ա:  
10 Ձեռ. N° 9878 էջ 166ա և 940 թվահամարի գրչագիր:  
11 Տարրերթերցում՝ 7-ին:  
12 4514 թվահամարի ձեռ., էջ 252ա և 6:

Այն է՝ ըստ «Հայոց տոնացույց» կոմպյուտերային ծրագրի հաշվումների՝

Ներկա թվական	Հուլյան ամիս	Հուլյան ամսաթիվ	Ծաբաթվա օր	Հայոց թվական	Հայոց ամիս	Հայոց ամսաթիվ	Ծաբաթվա օր
950	6	6	5	399	3	5	5
964	6	2	5	413	3	5	5
978	5	30	5	427	3	5	5
992	5	26	5	441	3	5	5

Հովհաննես Կարապետի և Աթանազիների տոնը Պենտեկոստեից հաշված 12-րդ օրը, Հինգ-շաբթի, սահմի 7-ին, ամենավաղ ժամանակ եղել են հետևյալ տարիներին, այն է՝ ըստ «Հայոց տոնացույց» կոմպյուտերային ծրագրի հաշվումների.

Ներկա թվական	Հուլյան ամիս	Հուլյան ամսաթիվ	Ծաբաթվա օր	Հայոց թվական	Հայոց ամիս	Հայոց ամսաթիվ	Ծաբաթվա օր
892	6	22	5	341	3	7	5
997	5	27	5	446	3	7	5
1011	5	24	5	460	3	7	5

Իսկ Ավետեաց Աստուածածնի տոնը այդ տարիներին ըստ «Հայոց տոնացույց» կոմպյուտերային ծրագրի ընկել է.

Ներկա թվական	Հուլյան ամիս	Հուլյան ամսաթիվ	Ծաբաթվա օր	Հայոց թվական	Հայոց ամիս	Հայոց ամսաթիվ	Ծաբաթվա օր
892	4	6	5	340	12	25	5
997	4	6	3	446	1	16	3
1011	4	6	6	460	1	19	6

Պարզ է, որ Ղ. Ալիշանի մոտ փաստագրված Սահմի 5-ը ստույգ է, քանի որ Սահմի 7-ը վերոհիշյալ բոլոր արժեքների դեպքում համարժեք է Անահիտ-Ավետեաց Աստուածածնի տոնի օրվա հետ: Համադրված երկու տոնական օրերի, այն է՝

1. Անահիտ-Ավետեաց Աստուածածնի,

2. Վահեան և Վահագնի - Հովհաննես Կարապետի և Աթանազիների, հաշվարկները փոխադարձորեն հիմնավորում են, որ հիշյալ բնագրի գրության ժամանակը 992 թվականն է:

Ի դեպ, Սահմի 7-ը բնագրի ընդօրինակության մեջ ընդմիջարկվել է ավելի ուշ ժամանակ, այսինքն 12-րդ դարում, հավանաբար նկատի ունենալով վաղ շրջանում գրված բնագրերի, հատկապես Ագաթանգեղոսի պատմության մեջ վկայված տվյալները, որոնք Հովհաննես Մկրտչի տոնի օրվա համար, թեև ունեն հայոց շարժական տոմարի ամիս-ամսաթիվ՝ Սահմի 7-ը, սակայն բոլորովին այլ համարժեքով՝ համեմատած հուլյան տոմարի հետ: Դրանց մասին կասենք ստորև, որը, ինչ խոսք, պարզություն կմտցնի և համեմատելու հնարավորություն կտա:

Այսպիսով, քննարկվող բնագրի գրության ժամանակն է 992 թվականը, հետևապես բնագրի մեջ բերված մյուս բոլոր հաշվումները հիմնվելու են այդ թվականից բխող տոնական տարվա օրերի վրա: Կարևորը տվյալ դեպքում այն է, որ վերոհիշյալ տոների օրերը ստանում ենք տոնական տարվա կտրվածքով, մանավանդ հայոց շարժական տոմարի ամիս-ամսաթիվերի

պայմաններում, որոնք անշարժ տոմարի նկատմամբ ունեն տարբեր համարժեքներ, ընդհանրապես ընթերցողի կամ հետազոտողի համար դժվար ընկալելի են: Պատահական է, որ մինչև այժմ ուսումնասիրողները առաջնորդվել են հայոց անշարժ և նրան համապատասխանող հուլյան տոմարների համարժեքներով, որոնք բացարձակորեն չեն համընկնում նախաքրիստոնեական տոնական տարվա օրերի հետ:

Տեսնենք բնագրի հեղինակը (բացառված է, որ դա լինի Հովհաննես Կոզեռնը կամ Սամուել Կամրջաձորեցին) ինչպես է պատկերացրել հայոց հեթանոսական աստվածների տոների օրերը, երբ դրանք համադրել է քրիստոնեական տոների օրերի հետ: Ի դեպ՝ Հովհաննես Կոզեռնի գործունեության վաղ շրջանն է համընկնում 992 թվականի հետ, իսկ Սամուել Կամրջաձորեցու՝ ուշ շրջանը: Սկսենք տոնական տարվա սկզբից:

Հարկ է նշել, որ ուսումնասիրողները<sup>1</sup> ցույց են տվել, որ Արամազդն է հայոց նախաքրիստոնեական դիցարանի գերագույն, գլխավոր աստվածը՝ «հորն անուանեալ դիցն ամենայնի», Երկնքի և երկրի, արեգակի, լուսնի, աստղերի, ծովի և ցամաքի արարիչը: Արամազդը լիություն և բարօրություն է պարգևել, ինչպես և արիություն բաշխել: Նրան տվել են հայր, մեծն և արի մակդիրները:

Արամազդը համադրվել է Ահուրա-Մազդայի ու Որմզդի, Զևսի և Դիոսի հետ:

Ինչպես տեսանք, բնագրի հեղինակը Արամազդի տոնի օրը հավասար է համարել Նավասարդի 1-ին, այն է՝ տարեգլխին-տարեսկզբին, որը 992 թվականին համարժեք էր Մարտի 23-ին: Նա միաժամանակ համադրել է Հովհաննես Կարապետի տոնի օրվա հետ: Հայոց քրիստոնեական տոնացույցում Հովհաննես Կարապետին նվիրված տոնական օրեր չատ են եղել՝ առնվազն չորսը, որոնք կատարվել են օրացուցային տարվա տարբեր ամիս-ամսաթիվերի: Տվյալ դեպքում բնագրի հեղինակը նկատի է ունեցել այն տոնի օրը, որը կատարում էին Զատիկից հետո եկող շաբաթ օրը<sup>2</sup>, այսինքն՝ Զատիկից հաշված 7-րդ օրը: 992 թվականին Զատիկը կատարվել է Նավասարդի 5-ին (= Մարտ 27), իսկ Հովհաննես Մկրտչի տոնը՝ Նավասարդի 11-ին (= Ապրիլ 2): Հարկ է նշել, որ Հովհաննես Կարապետի այս տոնի օրը՝ Նավասարդի 1-ը, Զատիկից հաշված 7-րդ օրը, հայոց քրիստոնեական տոնացույց է մտել 9-րդ դարի 2-րդ կեսից, քանի որ այդ տոնի օրը ըստ «Հայոց տոնացույց» կոմպյուտերային ծրագրի տվյալների հետևյալ տարիներին.

Ներկա թվական	Հուլյան ամիս	Հուլյան ամսաթիվ	Ծաբաթվա օր	Հայոց թվական	Հայոց ամիս	Հայոց ամսաթիվ	Ծաբաթվա օր
862	4	25	7	311	1	1	7
876	4	21	7	325	1	1	7
890	4	18	7	339	1	1	7
904	4	14	7	353	1	1	7
918	4	11	7	367	1	1	7
932	4	7	7	381	1	1	7

Ինչպես նկատելի է, բնագրի հեղինակը մոտավոր ձևով է զուգակշռել Արամազդի և Հովհաննես Կարապետի տոնի օրերը, քանի որ մի դեպքում ստանում ենք Մարտի 23 (որովհետև

<sup>1</sup> Տե՛ս Мифы народов мира, М., 1980, Армянская мифология, стр. 104-106, նշված աղբյուրների և գրականության ցանկը:

<sup>2</sup> Ձեռ. № 4514, էջ 171ա:

992 թվին Նավասարդի 1-ը համարժեք էր Մարտի 23-ին), մյուս դեպքում՝ Նավասարդի 11-ին համադրելի Ապրիլի 2-ի հետ: Այս հաշվումները հնարավորություն են ընձեռում որոշելու Արամազդի տոնի օրը՝ հիմնվելով այլ սկզբնաղբյուրների տվյալների վրա, որոնք, ինչպես կտեսնենք, բացահայտում են հիշյալ մոտավոր հաշվարկի իմաստը: Կարևորն այն է, որ բնագրի հեղինակը՝ Արամազդի տոնի օրը դնելով Նավասարդի 1-ին, մատնանշել է տարեսկիզբը, որը համարել է Մարտի 23-ի հետ:

Բերենք վաղ շրջանի տվյալներ ըստ հեղինակների, որոնք հիմնավորում են գարնանամուտը, տարեմուտը, գարնանային գիշերահավասարը, արևային տոմարական տարվա սկիզբը և նրանց անշարժ տոմարների համարժեքները:

Ըստ Փիլոն Եբրայեցու՝

1. «Ամիսս այս ձեզ սկիզբն ամսոյ: Առաջին է յամիսս (Նիսան) տարւոյ:

Ա. Ի գարնանային հասարակությունէ գլըջագայս ամսոյն կարծէ պարտ թուել, իսկ առաջին և սկիզբն՝ ըստ բազանութեան է ասացեալ, նոցունց ի միմեանց զեկուցելոց: Քանզի ասի առաջին է որ դասիւ՝ և է որ զորութեամբ. նոյնպէս և սկիզբն իրևի այն որ ի գարնանային հասարակությունէ ամանակն, և դասիւ և զօրութեամբ յառաջացեալ. զոր օրինակ ի կենդանոջ գլուխ: Արդ՝ զայս և որք յաստեղաբաշխութեանն իմաստունք ասացելում ժամանակիս դնեն զանուն, քանզի գլուխ կենդանաբերին կոչեն զԽոյն, յորում երևեալ արեգակն՝ ծնանի զգարնանային հասարակությունն և առ այսոքիւք և որ տարւոյն ժամանակաց ծննդոցն ել դէպ ամա»<sup>1</sup>:

Ըստ Անդրեասի՝

1. «[Արդ՝ սկիզբն] հասարակելոյ տուրնջեան և գիշերոյ ըստ թուոյ Եգիպտացւոցն ի Ի և ի Դ (24) ամսոյն լինի, որ անուանեալ կոչի Պեմենոյթ, որ գա կշռի ըստ թուոյն Անտիոքացոց ի Ի երորդում (20) Դիւստրոս ամսոյն, այսինքն՝ Մեհեկանի և քանզի Քրիստոս ԴԺ-աներորդ աւուր ամսոյն առաջնոյ (Նիսան 14) չարչարեցաւ, յայտ է՝ յետ հասարակելոյ տուրնջեան և գիշերոյ Արեգ (Նիսան) ամսեան և ոչ այս վրիպեալ է ի մէնջ, թեև այժմ ի մեր ամս և յաւուրս յԱրեգ ամիս են, բազում անգամ արարին Հրեայք զՋատիկն, եւ քանզի սկիզբն ամենայն տարւոյն յԹԺ-երորդի Մարտ ամսոյն լինի, այսինքն ի Մեհեկանի, յայտ է, թէ նա է ամիսն առաջին»<sup>2</sup>:

2. «Եւ արդ [յետ] հասարակաց տուրնջեան և գիշերոյ սկիզբն է տարոյն և ամսեանն առաջնոյ (Նիսան), քանզի ամսին առաջին անտի առնու սկիզբն» (անդ.):

Ըստ Կյուրեղ Ալեքսանդրացու՝

1. «Կատարիւր սրբոց Ջատիկն տօնն ըստ Մովսէսի օրինացն, ի չորեքտասաներորդում աւուր ամսոյն առաջնոյ (Նիսան 14 = Ապրիլ 4), ըստ Եբրայեցոցն սովորութեան ասեմ, յամսեանն նորոյ, յորժամ ամենայն ինչ փթթէր ի վայրի»<sup>3</sup>:

2. «Արդ, կատարումն օրինաց է Քրիստոս, և զոր ի վերա կատարեմք տօն յառաջնումն ամսեան չորեքտասաներորդում աւուրս (Նիսան 14 = Ապրիլ 4), ըստ լուսնի պարագայութեան և սկսանի ըստ Եբրայեցոցն սովորութեան առաջին ամիսն. և գարնանային յեղանակ յառաջ քան զերկոտասան կաղանդանցն Ապրիլի (= Մարտ 21) ըստ արեգակնային ընթացից: Արդ՝ պիտոյք

տեսանիլ առ ի մէնջ եթէ զչորեքտասաներորդ լուսնին, ոչ երկոտասաներորդն համարեալ ամիս, այլ ի սկսանել գարնանային յեղանակին և առաջնոյ ամսոյն ըստ Եբրայեցւոցն»<sup>4</sup>:

Ըստ «Գիրք Պիտոյից»-ի հեղինակի՝

1. «Այլ սքանչելապէս եւ զպատիւ գոյացութեանն ունին երկոքին ի միոջէն պատճառէ, ի մէծն ասեմ արեգակնային լուսաւոր պարգեւութենէ, վասն զի յորժամ փոփոխեալ զգնացսն ի խոյն կոչեցեալ դարձցի կենդանակ. յորժամ զվայելչական զգարնայնոյս ծնանի ժամանակ»<sup>5</sup>:

2. «Այլ զի սկիզբն ամսոց եւս նախակարգեալ եղև ի պայծառակացրդիցն ընդունակ ի հնումն եւ ի նորումս եւ արժանի արդար եւ բոլորովին Աստուծոյ հաճոյիցն գտեալ»<sup>6</sup>:

Ըստ Անանիա Շիրակացու՝

1. «Անուանք ամսոցն ոչ էին ի սկիզբնէ: Այլ՝ սկսեալ յԱդամայ մինչև ի Մովսէս զգարնանամուտն Տարեմուտ անուանէին ամենայն ազգք և ամսոց անուանք ոչ գոյր, բայց միայն գառաջին լուսին՝ զԳարնան առաջին լուսին անուանէին և զկնի Բ-երորդ լուսին, և Գ-երորդ և Դ-երորդ մինչև ցԲԺ-աներորդն, և զողջոյն ամն՝ այսպիսի անուամբ վարէին մինչև ի մուտն գարնանային: Եւ դարձեալ յառաջին դառնային»<sup>7</sup>:

2. «Քանզի ասեն վարդապետք Եբրայեցւոցն, եթէ ի չորրորդ աւուր (= Մարտ 20) ստեղծաւ արեգակն եւ լուսին. վասն այնորիկ հասարակաւորութիւն տուրնջեան եւ գիշերոյ դնեն զաւրն զայն, ասելով, եթէ յերկնամիջակի իսկ էր ստեղծումն, եւ ի վեցերորդ աւուրն (= Մարտ 22) ասեն լեալ զմարդն եւ յաւրէն իսկ յառաջ ի թիւ արկեալ զամիսս համարի ասեն և զերկոտասանամսեայ կատարեալ զթիւ տարեկանին, ունի եւ հինգ աւր աւելիս, որ յառաջ քան զստեղծանել մարդոյն եղև: Արդ, յայդ է, թէ զտարի յարեգակնէ գիտասցուք, եւ զամիս ի լուսնոյ, որպէս եւ աստուածային բարբառն վկայէ յասելն եթէ՝ եղիցի ի նշանս, եւ ի ժամանակս եւ յաւուրս ի տարիս»<sup>8</sup>:

3. «Բայց մեք երթիցուք անդէն ի հրամանն տեառն, որ առ Մովսէսն ասէ՝ Ամիսս այս եղիցի ձեզ սկիզբն ամսոց առաջին, եղիցի ձեզ յամիսս տարւոյ»<sup>9</sup>:

4. «Արդ յաւուր ուրբաթու ստեղծաւ մարդն Նիսան ամսոյ ամսամուտ (= Մարտ 22) էր»<sup>7</sup>:

5. «Եւ միշտ է Նիսան գոյ գարունն յեղանակին այս այսպէս է»<sup>8</sup>:

6. «Մարտ ամսոյ որ աւր Ի (20), Եբրայեցւոցն՝ Աւելեացն Դ (4), մտանէ արեգակն ի խոյն, որ է գլուխ»<sup>9</sup>:

7. «Եւ ի Դ Աւելեացն է (Մարտ 20) միշտ հասարակաւորութիւն տուրնջեան եւ գիշերոյ եւ եղանակ գարնանային»<sup>10</sup>:

Համարժեք բազմաթիվ վկայություններ կան ինչպես վերոհիշյալ հեղինակների, այնպես էլ Հովհաննես Կոզեռնի, Հովհաննես Սարկավագի և մյուս տոմարագետների բնագրերում: Կարծում ենք՝ բերված վկայությունները բավարար են առաջադրված խնդիրը լուծելու համար:

1 Աճ. էջ 148:

2 Գիրք Պիտոյից, Երևան, 1993, էջ 165:

3 Աճ. էջ 168:

4 Աճահա Օիրակացի, Տիեզերագիտություն և տոմար, Ե., 1940, էջ 76:

5 Աճահա Օիրակացու մատենագրությունը, էջ 293:

6 Աճ. էջ 293:

7 Աճ. էջ 311:

8 Տիեզերագիտություն և Տոմար, էջ 67:

9 Օիրակացու մատենագրությունը, էջ 315:

10 Աճ. էջ 315:

1 Փիլոնի Եբրայեցույ մնացորդք ի Հայս... աշխատասիրությամբ Մ. Ավգերյանի, Վենետիկ, 1826, էջ 443-4:

2 Աջ. Աբրահամյան, Անդրեասի տոմարական աշխատություններ, տե՛ս «Բնագիտության և տեխնիկայի պատմությունը Հայաստանում», Քատոր 84, Երևան, 1967, էջ 77-78:

3 C. F. Conybeare, The Armenian version of Revelation and Cyril of Alexandria's scholia on the Incarnation and Epistle on easter, London, 1907, p. 146.

Ակնհայտ է, որ Անանիա Շիրակացին «զգարնանամուտն տարեմուտ անուանէին ամենայն ազգք» ասելով նկատի է ունեցել այն ժողովուրդները (հատկապես հայեր և եբրայեցիներ), որոնց տոմարական տարվա սկիզբը սկսվել է գարնան սկզբով: Հայոց շարժական տոմարի գարնանամուտը, այն է՝ Նավասարդի 1-ը, համադրվել է Մարտի 20-ին, իսկ եբրայեցիների անշարժ տոմարի Նիսանի 1-ը՝ Մարտի 22-ին: Ուշագրավ է, որ Նավասարդի 1-ով սկսող հայոց շարժական տոմարի տարին (= 365 օր) իր 1460-ամյա պարբերաշրջանը ավարտեց հայոց ՆԾԲ թվականով և հայոց ՆԾԳ թվականից սկսեց նոր շրջապտույտ, որը նույնպես համարժեք է Նաւասարդ 1 (= Մարտ 20)<sup>1</sup>:

Վերը բերված փաստերը ցույց են տալիս, որ Նավասարդի 1-ը՝ Արամազդի տոնի օրը, սերտորեն կապված էր Արեգակի ցիկլի սկզբի հետ, որն իր շրջապտույտը սկսում էր խոյի համաստեղությունից՝ Մարտի 20-ից: Այդպիսին էր արեգակնային տարվա սկիզբը՝ սկսած մոտ 1000 թվականից մեր թվականությունից առաջ մինչև մոտ 1000 թվականը մեր թվականությունից<sup>2</sup>:

Արամազդի տոնի օրը հեթանոս հայերը ընդունել են Նավասարդի 1-ը, որը համարժեք էր գարնանամտին, այն էլ իր հերթին համադրել են գարնանային գիշերահավասարի օրվա հետ, այն է՝ Մարտի 20-ի: Նավասարդի 1-ը միաժամանակ հայոց շարժական տոմարի տարեգլուխն էր և այս ավանդույթը փոխանցվեց սերնդից սերունդ և գրանցվեց հայ քրիստոնյա մատենագիրների կողմից:

Հայոց օրանուններից առաջինը Արեգ անունն է կրում: Այն հավանաբար նվիրված էր Արամազդին և նշանակում էր արեգակնային տարվա առաջին օր, այն է՝ սկիզբ:

Հիմքեր կան պնդելու, որ Հայաստանի նախաքրիստոնեական դիցարանի տոնական տարին սկսվել է գերագույն, գլխավոր աստուծու Արամազդի տոնով և այն, թեև հայոց շարժական տոմարի, հաստատուն կերպով եղել է գարնանամտին, որն ընդունվել է գարնանային գիշերահավասարի օրը: Վերջինս իր հերթին հիմնավորվում է Նավասարդ 1-ով, համարժեք հուլյան տոմարի Մարտի 20-ին: Ներկայումս գարնանային գիշերահավասարը, ինչպես հայտնի է, լինում է Մարտի 20-ին և 21-ին (նայած տարի):

Հարկ է նշել, որ Անանիա Շիրակացու կազմած 532-ամյա պարբերաշրջանի մեջ, որտեղ համադրված են հուլյան անշարժ և հայոց շարժական տոմարների համարժեքները, գարնանային գիշերահավասարի օրը անշարժ է և դրվել է Մարտի 20-ին, միայն փոխվել են հայոց շարժական տոմարի ամսաթվերը: Այլ խոսքով՝ գարնանամտի, այն է՝ տոնական տարվա տարեսկզբի գաղափարը եղել է հաստատուն, ինչպես հայոց քրիստոնեական տոնացույցում, երբ դրվել է Հունվար 6-ին՝ Քրիստոսի Ծննդեան և Յայտնութեան օրը, և այդ անշարժ սկզբների համեմատ փոխվել են հայոց շարժական տոմարի ամսաթվերը: Առայժմ որևէ փաստ հայտնի չէ, որ հայոց շարժական տոմարի մեջ որոշակի տարիներից հետո մտցնեին ուղղում՝ ինչպես պարսկականի մեջ, որը կատարել են 120 տարին մեկ անգամ, սակայն կարծում ենք, այդ չի խանգարել հաշվումների համար: Ինչպես քրիստոնյա Շիրակացուն, այնպես և հեթանոս քրմին դժվար չի եղել տվյալ տոնական տարում հաշվարկել և համադրել բնական գարնանամուտը, արևային տարվա սկիզբը, գարնանային գիշերահավասարը, Տարեմուտը՝ Նավասարդի մեկը հայոց շարժական տոմարի այն ամսաթվի հետ, որը եղել է տվյալ ժամանակ, մանավանդ շրջակա ազգերը, սկսած առաջին դարից մեր թվարկությունից առաջ, օգտվում էին հուլյան անշարժ տոմարից և նրա տեղական տարբերակներից: Պատահական չէ, որ Նավասարդի 1 - Գարնանամուտ - տոնական տարվա սկիզբ - արևային տարվա սկիզբ - Արամազդի տոնը օրվա համարժեքները հասել են միջնադար և համադրվել քրիստոնեական սրբերի տոների հետ: Արամազդի տոնի հիմնական

<sup>1</sup> Միայն մասին բացատրություն ունի Հովհաննես Սարկավազը, որին կանոնադրողները ստորև:  
<sup>2</sup> Э. Бихерман, Хронология древнего мира, М., 1975, стр. 54.

կենտրոնն էր Դարանաղյաց գավառի Անի ամրոցը՝ Եփրատի ափին, որտեղ գտնվում էր նրա տաճարը, որի մեջ՝ Արամազդի արձանը: Միաժամանակ ակնհայտ է, որ Արամազդի տոնը կատարվել է նաև Հայաստանի մյուս մեհյաններում:

Արամազդի տոնին հաջորդել է Անահիտ աստվածուհու տոնը:

Առկա փաստերով հետազոտողները ցույց են տվել, որ Անահիտը համարվել է «Փառք ազգիս մերոյ և կեցուցիչ», «մայր ամենայն զգաստութեանց», «բարերար ամենայն մարդկան բնութեան», «որով կեայ և զկենդանութիւն կրէ երկիրս Հայոց»<sup>1</sup>: Նրան տրվել են տարբեր մականուններ՝ Մեծն Անահիտ տիկին, Ոսկեհատ, Ոսկեմայր, Ոսկեծին և այլն: Անահիտի սիմվոլն էր լուսինը: Նրան համեմատել են պարսկական (Անահիտի, հունական Արտեմիսի և Ափրոդիտի հետ:

Հետևենք վերոհիշյալ բնագրի հավանական հեղինակ Հովհաննես Կոզեռնին կամ Սամուել Կամրջաձորեցուն: Անահիտի տոնի օրը դրվել է Նավասարդի 15-ին և համեմատվել Ավետեաց Աստուածածնի տոնի հետ: Ինչպես ցույց տվեցինք վերը, Ավետեաց Աստուածածնի տոնի օրը անշարժ էր և միշտ տոնը կատարվել է Ապրիլի 6-ին հուլյան տոմարով: 992 թվականին Նավասարդի 15-ը հավասար էր Ապրիլի 6-ին: Հասկանալի է, որ այս տոնի օրը հայոց շարժական տոմարով եղել է տարբեր ամիս-ամսաթվերի: Բնագրի հեղինակը հիմնականում ճիշտ է փոխանցել ավանդությունը կամ գտել՝ համադրել Ավետեաց Աստուածածնի տոնի օրվա հետ:

Հավանաբար, իբրև լուսնի աստուածուհի Անահիտի տոնի օրը պետք է կապել լուսնի 19-ամյա պարբերաշրջանի առաջին տարվա լուսնի լրման օրվա հետ, որը հայերի, ինչպես և քրիստոնյա մյուս ժողովուրդների մոտ ընդունել են Քրիստոսի չարչարանաց օրվա Նիսան 14 = Ապրիլ 4-ի հետ: Ասենք նաև, որ լուսնի լրման առաջին օր են դրվել նաև Ապրիլ 1-6-ի օրերը: Ուշագրավ է, որ Մարտի 20-ից խոյի համաստեղությունից սկսվող արևային տոմարական տարին շաղկապվել է լուսնային ամիսների հետ ապրիլի սկզբների լուսնի լրումներով: Քանի որ հայոց շարժական տոմարի 1460-ամյա պարբերաշրջանի սկզբում Նավասարդի մեկը եղել է Մարտի 20-ը, ապա Նավասարդի 15-ը կընկնի Ապրիլ 3-ին:

Ինչպես նկատելի է, Ավետեաց Աստուածածնի կայուն օրվա և Անահիտի օրվա տարբերությունը չնչին է և համադրելի:

Հայոց օրանունների մեջ 19-րդը նվիրված է Անահիտին: Եթե ընդունենք, որ այն Նավասարդի 19-ն է, ապա կստանանք Ապրիլ 7, որը նույնպես տալիս է ապրիլի սկզբները:

Այսպիսով, Անահիտի տոնի օրը համադրելի է Քրիստոսի չարչարանաց և Ավետեաց Աստուածածնի օրերի հետ, որոնք անշարժ տոմարներով արտահայտում էին Նիսան 14 (= Ապրիլ 4)-ը և Ապրիլ 6-ը (ըստ հուլյանի): Այլ խոսքով՝ նախաքրիստոնեական շրջանում Անահիտի տոնը կատարվել է Ապրիլի սկզբներին, որը հայոց շարժական տոմարի ամիս-ամսաթվերով կլինի տարբեր, բայց էությունը կմնա նույնը, այսինքն արտահայտել է լուսնային ամսվա կապը արևային տարվա հետ և լուսնի լրման առաջին տարվա գաղափարը: Անահիտ աստուածուհու տոնի կատարման հիմնական վայրերն էին՝ քաղաքամայր Արտաշատը, Եկեղյաց գավառի Երեզ (Երիզա) ավանը, Տարոնի գավառի Աշտիշատը, ինչպես և Աղձնյաց գավառի Դարբնաց քաղաքը, որտեղ դրված էին Անահիտ դիցուհու արձանները, որոնց թվում նաև՝ ոսկյա:

Ասենք նաև, որ Հովհան Մանդակունին 480-ական թվականներին խմբագրեց «Կանոնք ընթերցուածոց»-ը կամ «Գիր(ք) ընթերցուածոց»-ը, այսինքն հայոց քրիստոնեական տոնացույցը և առաջին անգամ պաշտոնապես Գրիգոր Լուսավորչի հիշատակի օր սահմանեց Զատիկից 15 օր առաջ՝ Մեծ պահքի 5-րդ կիրակիից հետո եկող շաբաթ օրը, որը տատանվում էր 35 օրվա

<sup>1</sup> Ազգաբնագեղայ Պատմություն հայոց, Տփղիս, 1909, էջ 31:



սահմաններում՝ կապված լուսնի 19-ամյա պարբերաշրջանի և Զատիկի օրվա հետ: Քանի որ Զատիկը տեղաշարժվում էր Մարտի 22-ից մինչև Ապրիլ 25-ի սահմաններում, ուստի Գրիգոր Լուսավորչի հիշատակի օրը ընկել է Մարտի 7-ից մինչև Ապրիլ 11-ը եղած ամսաթվերից մեկում: Հաճախ Գրիգոր Լուսավորչի տոնի օրն ընկել է միջին հաշվով Մարտի 20 - Ապրիլ սկզբների օրերին:

Պարզեցինք, որ Արամազդի և Անահիտի տոները կատարվել են Մարտի 20- Ապրիլ սկիզբներին:

Ակնհայտ է, որ Գրիգոր Լուսավորչի հիշատակի օրը դրվել է տարվա նշված հատվածում, որպեսզի մոռացութայն տա հիշյալ աստվածների տոների օրերը և փոխարկվի քրիստոնեական սրբի օրվա: Այսինքն, բացի քրիստոնեական տոնական ցիկլի օրերից, հայոց տոնացույցում ավելացվել է նաև տեղական հզոր սրբի՝ Գրիգոր Լուսավորչի հիշատակի օրը, որպեսզի հեթանոսական գլխավոր աստվածությունները մոռացութայն տրվեն և փոխարկվեն քրիստոնեականի:

Հարկ է նշել, որ Արամազդի և Անահիտի տոնական օրերի էությունը, իմաստը մթազնվել է սկսած 12-րդ դարերի կեսերից, որը բացատրելի է: Բանն այն է, որ 1094 թ. Հովհաննես Սարկավազը հայոց շարժական տոմարը, որը շարունակեց գործածվել, վեր է ածել անշարժի՝ ավելացնելով չորս տարին մեկ օր, Մեհեկանի 30 օրվան ավելացրել է մեկ օր, յուրաքանչյուր 4-րդ տարում Մեհեկանի 23-ը համադրվել է Փետրվարի 29-ի հետ, իսկ Մեհեկանի 31-ը՝ Մարտի 8-ի, ինչպես նշվել է Հովհաննես Սարկավազի «Ազնվականոններում» (հաջորդված «Խառնախորան»): Հովհաննես Սարկավազը հայոց անշարժ տոմարի նավասարդի 1-ը զուգադրեց Օգոստոսի 11-ին: Նրա վկայած բոլոր տվյալները, որոնցով հիմնավորել է Արեգ 12 (= Մարտ 20) համարժեքությունը, հետևաբար նավասարդի 1 = Օգոստոս 11, ցույց է տալիս, որ նա հայոց անշարժ տոմարի տարեմուտը գտել է՝ հետադարձ հաշվարկներ կատարելով և հիմք ընդունելով հայոց շարժական տոմարի 428/431 թթ. քառամյակը:

Առայժմ չկա և հավանաբար չի կարող լինել վաղ շրջանի որևէ վկայություն, որ ցույց տա նավասարդ 1 = Օգոստոս 11 կապը հայոց շարժական տոմարի տարեմուտին, մանավանդ Հովհաննես Սարկավազը՝ հայոց անշարժ տոմարի ստեղծողը, հայոց շարժական տոմարի, այն է՝ 1460-ամյա պարբերաշրջանի ավարտը և նոր սկիզբը՝ նավասարդի 1-ը համադրել է գարնանային գիշերահավասարի օրվա հետ: Նա գրում է. «Յորժամ անարուես պատճէն այն կարգեցաւ, ասի հասարակ լինել գարնանայնոյն յԱհկի ամսոյն ԺԳ (13): Եւ ըստ փոփոխման թուոյ աւուրցն ամսոյ՝ անցեալ աւուրսն ի միւս ամն, յամիսն Նաւասարդի, որ է առ մեւք ձէ (107) ամ»<sup>2</sup>: Հովհաննես Սարկավազը այս տողերը գրել է 1110 թվականին: Ինչպես նշել ենք, ՆԾԳ թվականով սկսվեց նոր շրջապտույտ: Այդ թվականին նավասարդի 1-ը համարժեք էր Մարտի 20-ին, այսինքն՝ գարնանային գիշերահավասարի օրվան, այն է՝ տարվա սկզբին:

12-րդ դարի կեսերից սկսած կազմվել են «Տօնացոյց» և «Յայսմաւուրք» ժողովածուներ՝ հիմք ունենալով հայոց անշարժ տոմարը, որտեղ նավասարդի 1-ին (= Օգոստոս 11) դրել են Հովհաննես Կարապետի տոնը և համադրել Արամազդի տոնի օրվան, իսկ նավասարդի 15-ին (= Օգոստոս 25) նշել են Աստուածածնի տոնի օրը՝ համարժեք դարձնելով Անահիտի տոնի օրվան: Փաստորեն կրկնել են վաղ վկայությունները՝ կատարելով իմաստային փոփոխություններ: Դրանք ոչ մի ձևով չեն առնչվում Արամազդի և Անահիտի տոների նախնական օրերի հետ, բացառյալ նավասարդի 1 և 15 ամսաթվերը, որոնք ինչպես տեսանք, ունեին բոլորովին այլ համարժեքներ՝ համեմատած հուլյան տոմարի ամիս-ամսաթվերի հետ: Այլ խոսքով, նավասարդի 1-ը և 15-ը սիմվոլիկ ամսաթվեր էին հետագայի համար, իսկ նավասարդի 1-ի բուն իմաստը

տարվա սկզբի գաղափարն էր: Ինչ վերաբերում է Անահիտի տոնի համադրությունը Աստուածածնի տոնի հետ (= Օգոստոս 15), ապա կարող ենք ասել, որ այն կոպտագույն սխալ է, նախնական իմաստի լրիվ մթազնում ոչ միայն հայոց անշարժ տոմարին համարժեքի դեպքում, այլև հայոց շարժական տոմարի, որ կատարել է Ֆ. Կոնիերը՝ նավասարդի 15-ը համադրելով Օգոստոսի 15-ի հետ՝ նկատի ունենալով 5-րդ դարի 60-ական թվականների համարժեքը: 10-րդ դարի վերջի բանիմաց հեղինակը գիտեր Աստուածածնի տոնի մասին: Նա համադրել է Ավետեաց Աստուածածնի տոնի օրը Անահիտի տոնի օրվա հետ, այսինքն՝ պահել է Անահիտի տոնի նախնական իմաստը, էությունը և ոչ թե ձևը:

Միաժամանակ ասենք, որ ուսումնասիրողները<sup>1</sup> նավասարդի 1 = Օգոստոսի 11, այսինքն՝ հայոց անշարժ տոմարի տարեմուտի կապելը 1460-ամյա պարբերաշրջանի սկզբի հետ կամ 428 թվին հայոց շարժական տոմարի դադարելու վարկածը անհիմն և չփաստարկված՝ բացառյալ Հովհաննես Սարկավազի կողմից հայոց անշարժ տոմարի տարեմուտը, այն է՝ նավասարդի 1 = Օգոստոս 11 ընդունելը, որն ինչպես նշեցինք, հետադարձ հաշվի արդյունք էր՝ կապված հայոց շարժական տոմարն արտացոլող 428-431 թվերի հետ, որը համադրելի է 1085 թթ., այսինքն, Սարկավազադիր մեկ թվականի, որով սկսվում է նրա 532-ամյա պարբերաշրջանը, իսկ լուսնի առաջին լրման առնչությունը՝ Սարկավազադիր 10 թվականի (= 1094 թ.):

Վերահիշյալ հիմնահարցերի մասին փորձեցինք բացատրություններ տալ, որովհետև հայոց նախաքրիստոնեական դիցարանի աստվածների տոների օրերը ուսումնասիրողները համադրել են հայոց անշարժ տոմարի և նրա հուլյան համարժեքների հետ, որով խեղաթյուրվել է ոչ միայն հեթանոսական տոնական տարվա պատկերը, այլ նաև դատողություններ են արվել՝ նկատի ունենալով այն ենթադրյալ տարվա ժամանակները, որոնք ոչնչով չեն արտացոլում աստուածների տոների ժամանակը:

Հաջորդ տոնական օրը կապված է Վահագնի հետ: Հայտնի է, որ Վահագնը ամպրոպի և որոտի աստվածն էր, ունեցել է ռազմի աստծու գծեր: Նրան տվել են վիշապաքաղն և քաջն մակդիրները: Նա անձրևաբեր էր: Վահագնին համադրել են Վերեթրագնայի և Հերակլեսի հետ:

Քննարկվող բնագրի հեղինակը, կարծես թե, Վահագնին և Վահեանին տարբեր աստուածներ է համարել, սակայն Ագաթանգեղոսի Պատմության մեջ վկայված տվյալներից երեւում է, որ Վահեվահեանը Վահագն վիշապաքաղի մեհյանի անվանումն է, ծայրահեղ դեպքում կարելի է մտածել, որ Վահագնը նաև Վահեվահեան է անվանվել կամ եղել է Վահագնի մակդիրը: Բնագրում հեղինակը տվել է Վահեվահեանի կրճատ տարբերակը, այն է՝ Վահեան:

Վերը տեսանք, որ Վահագնի տոնի օրը զուգակշիռ է համարվել Հովհաննես Մկրտչի և Աթանազիների տոնի օրվա հետ, որը կատարվում էր Պենտեկոստից հաշված 12-րդ օրը: 992 թվին Պենտեկոստեն կատարել են Հոռի 24 (= Մայիս 15), իսկ Հովհաննես Կարապետի և Աթանազիների տոնը՝ Սահմի 5-ին (= Մայիս 26), հինգշաբթի: Այս համարժեքությունը հնարավորություն է տալիս Վահագնի տոնի օրը զուգակշիռ հայոց տոմարի մեջ իր հաստատուն տեղն ունեցող մի երկնային երևույթի հետ: Բանն այն է, որ հայոց տոմարում Մայիսի 24-ին է դրվել Ելաստեղի հայտնվելը երկնակամարում: Թերևս կարելի է մտածել, որ Ելաստեղի երևալը երկնակամարում և Վահագնի տոնի օրը իրար հետ աղերս ունեն, և հնարավորություն է ստեղծվում լրացուցիչ փաստարկով որոշել նրա տոնի օրը՝ Մայիսի 24-ը: Հայոց տոմարի 1460-ամյա պարբերաշրջանի սկզբին այն համադրելի է Սահմի 6-ին: Սակայն առկա են այլ վկայություններ, որոնք Վահագնի տոնի օրվա որոշումը թեական են դարձնում, և այն հանդես է գալիս իբրև տարբերակ: Հայոց օրանունների մեջ Վահագնի օրը 27-րդն է: Քանի որ պարզեցինք, որ Վահագնի տոնի օրը ընկել է Սահմի ամսին, ուստի նրա տոնի օրվա համար ստանում ենք այլ

1 Հովհաննես Իմաստասերի մատենագրությունը, էջ 165:  
2 Հովհաննես Իմաստասերի մատենագրությունը, էջ 263:

1 Ղ. Ալիշան, Մ. Օրմանյան, Լ. Սիմյոնով, Ն. Բադալյան և այլն:





1. «Եւ հրամայեց<sup>1</sup> կատարել անդ ամ յամէ, ի նմին տեղւոջ ժողովեալ ամենեցուն, զյիշատակ սրբոցն<sup>2</sup> որ օր եալլթն էր Սահմի»<sup>3</sup>:

2. «Եւ զյիշատակս վկայիցն բերելով ժամադրեաց ի տօն մեծ հռչակել. սնտեացն պաշտման ի ժամանակի՝ դիցն Ամանորոյ ամենաբեր նոր պտղոց տօնին, հիւրընկալ դիցն Վանատրի, զոր յառաջագոյն իսկ ի նմին տեղւոջ պաշտէին յուրախութեան Նաւասարդի աւուր: Զի ժողովեալ ի յիշատակ մեծի Յովհաննու և սրբոյ վկայի աստուծոյ Աթանագինէի՝ յայն աւուր խմբեալ նմին յաւանի<sup>4</sup> տօնեացն»<sup>5</sup>:

Վերոհիշյալ վկայութիւններէն պարզվում է, որ Գրիգոր Լուսավորչին են վերագրել Հովհաննես Մկրտչի և Աթանագինի համար երկու տոնի օր սահմանելը, որոնցից մեկն ունի Հայոց շարժական տոմարի ամիս-ամսաթիվ. այն է՝ Սահմի 7, իսկ մյուսը՝ ոչ: Սակայն «ամենաբեր նոր պտղոց տօնին» արտահայտութիւնը հուշում է, որ այն կատարվել է ամուսն սկզբներին, ինչպես նկատել է նաև Ն. Ակինյանը<sup>6</sup>:

Այս դիտողութիւնը միաժամանակ կասկածի տակ է դնում այն, որ Ագաթանգեղոսի Պատմութեան մեջ բերված տոները, հատկապես ամիս-ամսաթիվը գրված լինելն 5-րդ դարի սկզբներին. ավելի ստույգ 425-435 թվականների սահմաններում, երբ Նավասարդը ամուսն վերջն էր, առավել ևս Գրիգոր Լուսավորչի ժամանակ՝ 4-րդ դարի սկզբներին, երբ Նավասարդը համադրելի էր ավելի շուտ աշնան սկզբներին: Ուշագրավ է, որ 6-րդ դարի կեսերին վերաբերվող մի բնագրում, որի շնորհիվ հնարավոր է դարձել վերականգնել 6-րդ դարի Հայոց Քրիստոնեական տոնացույցի ընդհանուր պատկերը, Աթանագինի անունը դեռևս չէր մտել տոնացույց և հորջորջվում է «վկայի» անորոշ ձևով<sup>7</sup>: Միաժամանակ ստույգ 5-րդ դարով թվագրվող Երուսաղեմի տոնացույցի հայերեն թարգմանութիւնից, որը կոչվել է «Կանոնք ընթերցուածոց» Հովհաննես Մկրտչի տոնի օրը Օգոստոսի 29-ը է<sup>8</sup>: Ինչպես կտեսնենք այլ վկայութիւններից վաղ շրջանում Հովհաննես Մկրտչի ունեցել է երկու տոնի օր, որոնցից մեկը նշել են Սահմի 7-ին, իսկ մյուսը՝ Նավասարդեան-ամանորեան օրերին: Եթե Սահմի 7-ը համարժեք ընդունենք Օգոստոսի 29-ին, որը, անտարակույս, Հովհաննես Կարապետի տոնի օրն էր, մեկը Հայոց շարժական տոմարի ամիս-ամսաթիվով, մյուսը՝ հուլյան, ապա կատանանք այդ տոնի կատարման տարիների քառամյակը, մյուս կողմից կպարզենք ամանորեան-Նավասարդեան օրերի հուլյան համարժեքը, որը տվյալ դեպքում էական նշանակութիւն ունի: Համադրելով Սահմի 7-ը Օգոստոս 29-ին, ստանում ենք Սահմի 1 = Օգոստոս 23 = 620-623 թթ., մյուս կողմից գտնում ենք Նավասարդի 1 = Հունիս 24-ը: Դրանք կունենան հետևյալ տեսքը ըստ «Հայոց տոմար» կոմպյուտերային ծրագրի:

1.

Ներկա թվական	Հուլյան ամիս	Հուլյան ամսաթիվ	Շաբաթվա օր	Հայոց թվական	Հայոց ամիս	Հայոց ամսաթիվ	Շաբաթվա օր
620	8	29	6	69	3	7	6
621	8	29	7	70	3	7	7
622	8	29	1	71	3	7	1
623	8	29	2	72	3	7	2

2.

Ներկա թվական	Հուլյան ամիս	Հուլյան ամսաթիվ	Շաբաթվա օր	Հայոց թվական	Հայոց ամիս	Հայոց ամսաթիվ	Շաբաթվա օր
620	6	24	3	69	1	1	3
621	6	24	4	70	1	1	4
622	6	24	5	71	1	1	5
623	6	24	6	72	1	1	6

Ուշագրավ են նաև Վարդավառի տոների օրերի զուգահեռները 620-623 թթ. քառամյակում, այն է՝ ըստ «Հայոց տոնացույց» կոմպյուտերային ծրագրի տվյալների:

Ներկա թվական	Հուլյան ամիս	Հուլյան ամսաթիվ	Շաբաթվա օր	Հայոց թվական	Հայոց ամիս	Հայոց ամսաթիվ	Շաբաթվա օր
620	7	6	1	69	1	13	1
621	7	19	1	70	1	26	1
622	7	11	1	71	1	18	1
623	7	3	1	72	1	10	1

Պարզվում է, որ վերոհիշյալ հատվածի Սահմի 7-ը Ագաթանգեղոսի պատմութեան մեջ ընդմիջարկութիւն է և համընկնում է այդ պատմութեան ընդարձակ խմբագրութեան ժամանակի հետ, ապա լուսաբանվում է մյուս հակասութիւնը և բացատրելի դառնում Հովհաննես Մկրտչի մյուս տոնի օրը տարվա կտրվածքով: Հովհաննես Կարապետի մյուս տոնը եղել է «նոր պտղոց տոնին», որը, ինչպես նշել է Ն. Ակինյանը, հարևան եկեղեցիները տոնում էին Հունիս 24-ին<sup>1</sup>: Համադրելի են դառնում Հովհաննես Մկրտչի և Աստղիկի տոնի օրերը, այն է՝ Հունիս 24-ը, որը տարբեր է Հայոց շարժական տոմարի ամիս-ամսաթիվերով: Այն նույնպես բնականոն է, երբ նկատի ենք ունենում Հայոց շարժական տոմարի ամիս-ամսաթիվերի շարժունակութիւնը: Հովհաննես Կարապետի երկրորդ տոնի օրվա բացահայտումը թույլ է տալիս խոսել «Բիզանդարան պատմութիւնք»-ի (= Փափստոս Բուզանդի Հայոց պատմութիւն) մի վկայութեան մասին, որը մեծ հետաքրքրութիւն ունի: Այնտեղ գրված է, որ Բագավանում կատարվող տոնախմբութիւնը, որն այդ տարի համընկել է Գնելի սպանութեան հետ, տեղի էր ունենում «Նավասարդաց ժամանակօք»: «Նավասարդաց ժամանակօք»-ը համադրվել է Հովհաննես Մկրտչի հիշատակի օրվա հետ, որը առ տարի կատարվել է կիրակի օրը: Ն. Ակինյանը ճիշտ կերպով նկատել է, որ Հովհաննես Կարապետի հիշատակի օրը անշարժ պետք է լիներ, որ համընկներ շաբաթվա օրերի հետ, որոնց թվում կիրակի օրվա, ուստի այն եղել է Հունիս 24-ի տոնի օրը: Միաժամանակ պարզ է դառնում, «Նավասարդաց ժամանակօք» տոնը ոչ թե կապվել է

1 Գրիգոր Լուսավորիչը:  
 2 Հովհաննես Մկրտչի և Աթանագինի:  
 3 Ագաթանգեղոս, Պատմութիւն հայոց, 8 815, էջ 425:  
 4 Բագավանի:  
 5 Աճ, 8 836, էջ 435:  
 6 Ն. Ակինյան, Քճնութիւն Ս. Սահակի վերագրուած կանոններու եւ Հայոց եկեղեցական տարիս Է դարու սկիզբը. Վիեննա, 1950, էջ 99-107:  
 7 Կանոնագիրք Հայոց, հատ. Ա, Ե, 1964, էջ 397:  
 8 Ջեռ. № 985, էջ 272բ:

1 Ն. Ակինյան, ԳԶՎ. աշխ., էջ 103:

Նավասարդ ամսանվան հետ, որն անընդհատ շարժվում էր տարիների կտրվածքով՝ համեմատած արևային տարվա կամ հուլյան ամիս-ամսաթվերի հետ, որոնք անվանվում էին ամանորեան-նավասարդեան տոներ, որոնց հետ անմիջական առնչություն ունեն, ինչպես տեսանք, Աստղիկի տոնի օրվա հետ: Ստորև կտեսնենք, որ ամանորեան տոների հետ էին կապված նաև Տիրի, Վանատրի, հատկապես Ամանորի տոնախմբությունները: Վերջինս կարող էր լինել Ադոնիսի հայկական տարբերակը, որը մեռնում, ապա հարություն էր առնում իբրև Ամանոր:

Հարկ է նշել, որ մեր կողմից 550-ական թվականներով թվագրվող թեև Սահակ կաթողիկոսին վերագրվող, բայց իրականում Ներսես կաթողիկոսի և Ներշապուհ եպիսկոպոսի (իբրև նրա փոխանորդ) կողմից գրված կանոնական թղթերում վկայվել է «տաւն վախճանելոցն յելս Հրոտից ամսոյն»<sup>1</sup>, որ այդ ժամանակ կատարվում էր հուլիսի սկզբներին<sup>2</sup>: Այդ տոնը ըստ տարվա ընկնում էր «տաւն Ամբառնալոյ Տեառն յերկինս», այսինքն Համբարձման և Վարդավառի միջև ընկած շրջանում, հաճախ համընկնում էր նրանց հետ, և նվիրվել է ընդհանրապես վախճանվածների հիշատակին: Մեզ թվում է, որ այն գալիս է վաղ շրջանից: Նա թեև մտել է հայոց քրիստոնեական տոնացույց իբրև վախճանվածների հիշատակի օր, բայց վերաբերում է Ամանոր-Ադոնիսին, որը նախ մեռնում էր, ապա հարություն ստանում: Ի դեպ այս տոնը հետագայում հայոց քրիստոնեական տոնացույցի մեջ տարալուծվեց և տեղափոխվեց տաղավարաց անվանվող տոների երկուշարթին:

Ամանոր տոնի հիմնավորումը գտնում ենք նաև Վանատրի օրվա որոշումով:

Մակաբայեցոց Բ գրոց մեջ, ինչպես նշել է Ղ. Ալիշանը, հունական Դիոս Քսենիոսը թարգմանել են «Հիւրասէր Որմզդական դիցն Վանատրի»<sup>3</sup>:

Հայոց տոմարի օրանունների մեջ Վանատրի օրը համարվել է 14-րդը: Հայոց շարժական տոմարի սկզբնական տարիների կտրվածքով ամանորեան-նավասարդեան տոները, որոնք համընկել են Ամանորի և Վանատրի օրերի հետ, ընկնում է Տրէ ամսին, ուստի Տրէ 14-ով կատանանք Վանատրի տոնի օրվա հուլյան համարժեքը, այն է՝ Հուլիս 1-ը: Միանգամայն ընդունելի ամսաթիվ, որը համընկնում է նոր պտղոց տոնի օրերի հետ:

Ամանոր-Ադոնիսի և Վանատրի պաշտամունքի մնացուկները պահպանվել են Համբարձման և Վարդավառի տոնի մեջ, որոնց կանդրադառնանք այլ առիթով:

Կասկած չի կարող լինել, որ Գրիգոր Մագիստրոսի վկայած ներքոհիշյալ հատվածը, կապված Արտաշեսի վախճանի հետ, վերաբերում է ամանորեան-նավասարդեան տոների, այսինքն ամուսնի սկզբի նոր պտղոց տոների հետ:

Ո տայր գծուխ ծխանի

եւ զառաւօտն Նաւասարդի,

Զվազելն եզանց

եւ զվալթել եղջերուաց

մեք փուշ հարուաք

եւ [զ]թմբկի հարկանէաք<sup>4</sup>:

Այժմ փորձենք որոշել Տիր աստծու տոնի օրը, որից հետո կանենք մեր եզրակացությունը ամանունների տոնական շարքի վերաբերյալ: Տիր աստվածը բնութագրվել է «երազացույց ե-

րազահան Տրի դից, դպիր գիտության քրմաց, անուանեալ դիւան գրչի Որմզդի, ուսման ճարտարութեան մեհեան»:<sup>5</sup> Նրան համադրել են Ապոլոնի հետ:

Ուսումնասիրողները Տրէ ամսանունը կապում են Տիր աստծու անվան հետ: Ակնհայտ է, որ Տիրի տոնը կատարել են Տրէ ամսին, որը տարվա կտրվածքով պարբերաշրջանի սկզբին սկսում էր Հունիս 19-ից և ավարտվում Հուլիս 17-ով: Միաժամանակ հայոց օրանունների մեջ Տիր աստծո հետ կապվել է 11-րդ օրը, քանի որ իմաստի տեսակետից ավելի հավանական է, որ Երեզկան-Երեզկան օրանունը համադրվի Տիրի հետ: Ինչպես հայտնի է, Տիրը երազացույց երազահան էր, այսինքն օրանունը իր մեջ ամփոփում է Տիրի ֆունկցիաներից մեկը: Ուստի կարելի է ընդունել, որ Տիրի տոնի օրը համընկել է Տրէ 11-ին, որը վերածելով հուլյան տոմարի կատանանք Հունիս 28-ը: Պարզվում է, որ Տիր աստծո տոնը կատարել են Հունիսի վերջերին, որը կապվում է հայոց քրիստոնեական տոնացույցում սահմանված Թարգմանչաց տոնի հետ: Պարզ է դառնում, որ Սահակ կաթողիկոսը և Մաշտոց վարդապետը Տիր աստծու տոնը փոխարինել են Թարգմանչաց տոնով:

Տիր աստծու տոնի հիմնական կենտրոնն էր Վաղարշապատից Արտաշատ գնացող ճանապարհի մոտ գտնվող մեհյանը:

Այսպիսով առկա նյութերը ցույց են տալիս, որ Ամանորեան-Նավասարդեան տոնական օրերը սկսվել են ամառնամուտի սկզբներով՝ Հունիս 24-ով և ավարտել Հուլիսի սկզբներին, տևել են հավանաբար 10 օր և այդ օրերի քանակը պահպանվել է Համբարձման-Հոգեգալուստ տոնական օրերի մեջ: Վերջիններս, ինչպես հայտնի է, տեղի էին ունենում Զատից հետո 40-րդ և 50-րդ օրը (= 10 օր): Ամանորեան-Նավասարդեան - Նոր պտղոց տոները նվիրված են եղել Աստղիկին, Ամանորին, Վանատրին և Տիրին: Նրանց տոների մնացուկները պահպանվել են հայոց քրիստոնեական տոնացույցից հայտնի սրբոց և Վարդավառի տոնական շրջանի մեջ, որոնք թեև շարժական էին, բայց հիմնականում կատարվում էին Հունիս-Հուլիս ամիսներին:

Հետազոտողները կասկած չունեն, որ հայոց հեթանոսական դիցարանում Միհրը արևի աստվածն էր: Միհրը համադրվել է իրանական Միթրա-Միհրի, սեմական-Առաջավոր ասիական Բարշամինայի և Հեփեստոսի հետ:

Կարծում ենք, որ Միհրի տոնի օրվա հարցը առավել դյուրին է լուծվում: Ուսումնասիրողները կասկած չունեն, որ Մեհեկան ամսվա անունը կապված է Միհրի անվան հետ: Հայոց օրանունների մեջ Միհրի օրը եղել է 8-րդը: Վերոհիշյալ տվյալներից կարելի է եզրակացնել, որ Միհրի տոնի օրը Մեհեկանի 8-ին էր, որը հուլյան տոմարով համարժեք էր Սեպտեմբերի 23-ին: Միաժամանակ հայոց տոմարին նվիրված բնագրերից հայտնի է, որ աշնանային հասարակը կամ գիշերահավասարը եղել է Սեպտեմբերի 18-ին ըստ հուլյան տոմարի, իսկ այժմ լինում է Սեպտեմբերի 22-23-ին: Դժվար չէ հանգել այն հետևություն, որ Միհրի տոնի սկիզբը համապատասխանել է աշնանային գիշերահավասարի օրվա հետ:

Միհրի տոնի օրվա համար ստանում ենք միանգամայն բնական տեղ արևային տոմարի մեջ, մանավանդ եթե նկատի ունենանք, որ Արամազդի տոնը կատարվում էր գարնանային գիշերահավասարի օրը, ապա Միհրի տոնն էլ, իբրև արևի աստված, պետք է համընկներ աշնանային գիշերահավասարի օրվա հետ: Նրա տոնի օրերը համադրել են Սուրբ Խաչի տոների օրերի հետ: Այդպիսի մի ակնարկ Վատմիհր անվան հիշատակությունում, կա՞նք թե ունի Թովմա Արծրունին, երբ պատմում է Ռշտունյաց Ոստանից խաչափայտի գողացման մասին<sup>1</sup>:

1 Կանոնագիրք Հայոց, Բատ. Ա. Ե., 1964, էջ 398:

2 555 թ. Հրոտից 30-ը = Հուլիս 5-ին = երկուշարթի:

3 Ղ. Ալիշան, Հին հավատք կամ հեթանոսական կրոնք հայոց, Վեներիկ, 1895, էջ 256:

4 Գ. Մագիստրոս, Թղթեր, էջ 97, Ն. Ակիմյան, Ազվ. աշխ., էջ 112:

1 Թ. Արծրունի, Գ, ԻԷ, էջ 378, Թ. Ավդալբեգյան, Միհրը հայոց մեջ, հայագիտական հետազոտություններ, Ե, 1969, էջ 64-65:

Միհրի տոնի կատարման հիմնական կենտրոնն էր Դերջան գավառի Բագայուիճ գյուղը, որտեղ գտնվում էր նրա մեհյանը: Միհրի պաշտամունքի հետքեր, ինչպես ցույց է տվել Թ. Ավդալբեգյանը, հետագայում գրանցվել են Վասպուրականում, Սյունիքում և Արցախում:

Անկասկած է, որ Միհրին զոհաբերվող ձիերը զոհում էին նրա տոնի օրը: Պատահական չեն Միհրի պաշտամունքի հետքերը նաև Խաչքարերի վրա: Ինչպես և «Սասնա ծռեր» էպոսի առասպելական կերպարները՝ Մեծ ու փոքր Մհերները, որոնք Միհրի պաշտամունքի հետագա գրանցումներն էին:

Այսպիսով միջնադարյան սկզբնաղբյուրների վկայությունների, հատկապես քրիստոնեական տոների համադրույթյան հիման վրա ստանում ենք Հայաստանի նախաքրիստոնեական դիցարանի տոնական տարվա հիմնական պատկերը, այն է՝ Արամազդ = Նավասարդ 1 = Մարտ 20 = գարնանամուտ = գարնանային գիշերահավասարի օր = տարեգլուխ = արևային տոմարական տարվա սկիզբ:

Անահիտ = Նավասարդ 15 = Ապրիլ 3 = լուսնի առաջին լրման օր = լուսնի 19 - ամյա պարբերաշրջանի 1-ին տարի (= Ապրիլ 4) = ապրիլի սկզբներ:

Վահագնի համար ստանում ենք երկու տարբերակ՝

Ա. Սահմի 6 = Մայիս 24 = Ելաստեղի երևալու օրը,

Բ. Սահմի 27 = Հունիս 14:

Նախընտրելի ենք համարում 2-րդ տարբերակը:

Ամանորեան-Նավասարդեան-Նոր պտղոց տոներ, որոնց թվում՝

Ա. Աստղիկ = Տրէ 7 = Հունիս 24 = ամառնամուտ:

Բ. Ամանոր (մեռնող և հառնող) = Հունիսի վերջեր-Հուլիսի սկզբներ:

Գ. Տիր = Տրէ 11 = Հունիս 28:

Դ. Վանատուր = Տրէ 14 = Հուլիս 1:

Ամանորեան-Նավասարդեան-Նոր պտղոց տոները տևում էին 10 օր, սկսում էին հունիսի վերջերից և ավարտվում հուլիսի սկզբներով:

Միհր = Մեհեկան 8 = Սեպտեմբեր 23 = աշնանամուտ = աշնանային գիշերահավասարի օր:

Բերված տվյալները ցույց են տալիս, որ Հայոց նախաքրիստոնեական դիցարանի տոնական տարին հիմնված է եղել արեգակնային տոմարական տարվա վրա և աստվածների տոները հիմնականում անշարժ կերպով են տոնվել, չնայած Հայոց շարժական տոմարի սկիզբ ունենալով գարնանամուտը, ինչպես և բնական տարվա մյուս հիմնակետերը (ամառնամուտ, աշնանամուտ և այլն): Արևային տոմարական տարին շողկապվել է լուսնային ամիսների հետ Անահիտի տոնով, որը համապատասխանել է լուսնի առաջին լրման օրվա հետ:

Հետագա ուսումնասիրությունները Հնարավորություն կընձեռեն պարզել տոնական տարվա մյուս ամսաթվերը, որոնք անշուշտ կապված են եղել մյուս աստվածների (Նանե, Բարշամ և այլն), ինչպես և նախնիների, թագավորների և այլ կարգի պաշտամունքների հետ:

## ԳԼՈՒԽ Բ

### «ԿԱՆՈՆՔ ԸՆԹԵՐՑՈՒԱԾՈՑ»-Ը

Հայոց քրիստոնեական տոնական տարեշրջանի չորրորդ դարի վիճակը խիստ ասած Հայտնի է: Այն Հնարավոր է մասամբ վերականգնել հինգերորդ դարի Հայկական սկզբնաղբյուրների հիման վրա հետադարձ վերլուծությամբ: Այդ խնդիրը լուծելու համար նախ հարկավոր է պարզել, թե որն է եղել հինգերորդ դարի Հայոց քրիստոնեական տոնացույցը: Բարեբախտաբար դրա համար կան բավարար տեղեկություններ, որոշ վկայությունների վերլուծությամբ ցույց կտանք, որ Հայոց հնագույն տոնացույցը անվանվել է «Կանոնք Ընթերցուածոց»:

Հայոց քրիստոնեական տոնական տարին 5-րդ դարի 20-ական թվականներից, ինչպես կպարզվի հետագա քննությունից, թէ կառուցվածքով, թէ բովանդակությամբ հիմք է ընդունել Երուսաղեմում կիրառվող տոնածիսական համակարգը, դրանով իսկ առաջին լուրջ քայլը կատարել անկախ Հայոց տոնացույց ստեղծելու ճանապարհին, որպեսզի «քրիստոնեության մայրաքաղաքի հեղինակության շնորհիվ Հայ եկեղեցին ազատվի բյուզանդական և ասորական եկեղեցիների ազդեցությունից ու կախվածությունից»<sup>1</sup>:

Ասենք, որ 4-րդ դարի վերջում և 5-րդ դարի սկզբներին Երուսաղեմում գործածվող տոնացույցը վերականգնվում է առաջին հերթին և հիմնականում Հայոց տոնացույցի հնագույն ընդօրինակություններով, ինչպես և այլ սկզբնաղբյուրներով հատկապես ասորերենից և հունարենից հայերեն կատարված թարգմանությունների հիման վրա: Հարկ է նշել նաև, որ թարգմանական բնագրերը զատորոշված չէին ինքնուրույն երկերից իբրև համաքրիստոնեական գրական հուշարձաններ, որի հետևանքով ճիշտ են այն հետազոտողները, որոնք դրանց հիման վրա վերականգնում են նաև ավելի վաղ օգտագործված Երուսաղեմի տոնացույցը:

Հայոց տոնացույցի հնագույն ընդօրինակություններից առայժմ Հայտնի են երեք բնագրեր, որոնք թվագրվում են 9-12-րդ դարերով, այն է՝ Երևանի մատենադարանի 985 թվահամարի (9-10-րդ դդ.), Փարիզի ազգային գրադարանի 44 թվահամարի (10-րդ դդ.), Երուսաղեմի սուրբ Հակոբի Հայկական վանքի 121 թվահամարի (1192/3 թ.)<sup>2</sup> գրչագրերը: Վերոհիշյալ ընդօրինակությունները, թեև որոշ գրչական տարբերությունների, ծագել են մեկ նախնական բնագրից, որը հայերեն է թարգմանվել հունարենից, ինչպես ցույց են տվել ուսումնասիրողները (Ֆ. Կոնիբեր, Ն. Ալիյան, Շ. Ռենու, Ս. Սեբուլյան): Թեև տվյալների սղուծյան, ինչպես կտեսնենք, Հնարավոր է դառնում մասամբ պարզել Հայոց տոնացույցի նախնական օրինակում թարգմանչի կողմից կատարված խմբագրական աշխատանքը, այլ խոսքով Հայոց տոնացույցում բացի թարգմանությունից ենթարկվել է մասնակի խմբագրման՝ նկատի ունենալով վաղ շրջանի իրողությունները Հայաստանում: Պարզ է, որ քննարկվող տոնացույցը առաջին հերթին Հայկական է, որն օգտագործվեց հարյուրավոր տարիներ և տոնացույցի զարգացման զուգընթաց ստեղծվեցին նրա խմբագրությունները, որոնք գործում էին զուգահեռաբար: Պատահական չէ վաղ գործած տոնացույցի ընդօրինակությունները՝ կատարված 9-14-րդ դարերում: Սակայն քանի որ Հայոց տոնացույցը համաքրիստոնեական է, ուստի ճիշտ է նրա միջոցով Երուսաղեմի տոնացույցի վերականգնումը:

Հայոց քրիստոնեական տոնական տարին, հավանաբար հետևելով Երուսաղեմի տոնացույցին, սկսվել է Հունվարի 6-ից՝ Քրիստոսի Մենդեան և Յայտնութեան տոնական օրով և ա-

<sup>1</sup> Շառլ Ռոմու, «Մաշոց» գրքի ծագումն ու զարգացումը, ՊՐՀ, 1987, № 2, էջ 33:

<sup>2</sup> Երուսաղեմի 121 թվահամարի ձեռագիրն ընդօրինակվել է 10-րդ դարի գրչագրից:

վարտել Դեկտեմբերի 29-ով՝ «Յակոբ առաքելոց և Յոհաննու աւետարանչի» հիշատակի տոններով: Ի դեպ, անհասկանալի է Ն. Ակինյանի այն տեղեկությունը, թե «Տոնանամակը կընդգրկէ յայտնութենէն (ծննդեան) տօնէն մինչև հոգեգալուստ շրջանը»<sup>1</sup>:

Հայոց տոնացույցում տվել են տերունական տոները, առաքյալների, մարգարեների, նահատակների և քրիստոնեասեր թագավորների հիշատակի, ինչպես և Քառասնորդաց պահքի օրերը՝ հուլյան տոմարի ամիս-ամսաթվերով ու շաբաթվա օրերով, նշվել են արարողության կատարման վայրերը և ժամերը, ընթերցվելիք բնագրերը՝ սաղմոսներ, Հին ու Նոր կտակարանի տարբեր հատվածներ: Հարկ է նշել, որ դրանցից չեն զրկվել են երկու դեպքում, որոնցից մեկի մասին խոսք կլինի ստորև: Հայոց քրիստոնեական տոնական տարվա վիճակը 5-րդ դարի սկզբներին կենրկայացնենք քիչ հետո: Հարկավոր է նախ թվագրել տոնացույցի նախնական բնագիրը, ապա ճշտել վերնագիրը և դրանց հետ կապված խնդիրները, որից հետո միայն կսկսենք տոնացույցի բովանդակության վերլուծությունը:

Հայոց քրիստոնեական առաջին տոնացույցը, որքան էլ տարօրինակ է և միաժամանակ հասկանալի ուսումնասիրել են եվրոպական հայագետներն ու վաղ քրիստոնեական տոնածիսական համակարգերը հետազոտողները, որոնք Հայոց տոնացույցը համարել են սոսկ փոխառություն երոսաղեմի տոնացույցից: Այն չի պահպանվել ոչ հունարեն և ոչ ասորերեն բնագրերով: Հիշյալ ուսումնասիրողներն անտեսել են որ քննարկվող տոնացույցը առաջին հերթին հայկական քրիստոնեական գրավոր պահպանված առաջին տոնացույցն է, թեև նրանցից և ոչ մեկը ինչպես կտեսնենք չեն կարողացել հիմնավորել այդ տոնացույցի թարգմանության ժամանակը:

Անցնենք Հայոց հնագույն տոնացույցի բնագրի թվագրմանը: Տեսնենք ուսումնասիրողները ինչ հիմքերի վրա են թվագրել այն, որից հետո կհիմնավորենք մեր կողմից կատարված թվագրությունը՝ առաջին հերթին գրչագրերի տվյալներով, ապա մատենագրական այլ վկայություններով: Քիչ հետո կտեսնենք, որ վերոհիշյալ բնագրի, ինչպես և նրա հիման վրա առաջացած տարբերակների վերնագիր են ընկալվել «Կանոնք (Կանոնադրությունք) ընթերցուածոց» կամ «Գիր(ս) Գիրք ընթերցուածոց»:

Հետազոտողները տարակարծիք են «Կանոնք ընթերցուածոց»-ի թարգմանության ժամանակի վերաբերյալ: Ուսումնասիրողների տեսակետները հիմնականում ներկայացրել է Շառլ Ռենուն կամ Աթանասը<sup>2</sup>, սակայն մեծմասամբ չի բացառել այս կամ այն հեղինակի կողմից կատարած թվագրումը: 1905 թ. Ֆ. Կոնիբերը<sup>3</sup> տոնացույցի բնագրի թարգմանությունը հրատարակեց անգլերեն լեզվով և ուսումնասիրելով գրչագիրը եկավ այն համոզման, որ նա թարգմանվել է հունարենից հայերեն 464-468 թվականների քառամյակում: Նրա թվագրման հիմքերը խախտու են: Ֆ. Կոնիբերին հայկական այլ բնագրերից հայտնի է եղել, որ Անահիտ աստվածուհու տոնը տոնվել է Նավասարդի 15-ին, իսկ վերոհիշյալ բնագրում Մարիամ Աստուածածնի տոնի օրը նշվել է Օգոստոսի 15-ին: Նա ենթադրել է, որ Անահիտի տոնի փոխարեն տեղադրվել է Մարիամ Աստուածածնի տոնի օրը, ուստի Նավասարդի 15 = Օգոստոս 15-ով ստացել է 464-468 թթ. (պետք է լինի՝ 468-471 թթ.), այսինքն՝ Հայոց շարժական տոմարի այն տարիների քառամյակը, երբ Նավասարդի 1 հավասար էր Օգոստոսի 1-ին: Նախ նշենք, որ Ֆ. Կոնիբերի օգտագործած սկզբնաղբյուրում, որը սխալմամբ վերագրել է Գրիգոր Արշարունուն, այսինչ 992 թ. գրված Վարդավառի տոնին նվիրված մեկնություն է, Անահիտ աստվածուհու տոնի օրը՝ Նավասարդի 15-ը համարվել է Ավետեաց Աստուածածնի տոնի օրվա հետ, այն է՝

Ապրիլ 6-ի: Պարզ է, որ Ֆ. Կոնիբերի թվագրումն ընդունելի է: Բացի այդ այլ առիթով. «Հայոց դիցարանի տոները» ուսումնասիրության մեջ ցույց ենք տվել, որ Յասմավուրը ժողովածուների վկայված տվյալները կապված Անահիտ Աստուածուհու և Մարիամ Աստուածածնի տոների օրերի համարժեքի հետ թյուրիմացության արդյունք են: Դրանցով հնարավոր է թվագրել տվյալ հուլյարձանը: Այս դեպքում այդ համարությունը ոչ մի հիմք չունի: Քանի որ տոնացույցում ոչ մի խոսք չի ասված Անահիտի վերաբերյալ: Ֆ. Կոնիբերի կատարած թվագրության վրա, ինչպես նշել է Շ. Ռենուն, հետագա ուսումնասիրողները ուշադրություն չեն դարձրել, թեև նրանից և ոչ մեկը չեն բացառել այդ թվագրման հնարավորությունը, այսինքն՝ ցույց չեն տվել նրա կատարած սխալները, որոնք այդքան էլ ակնհայտ չեն:

Ա. Բաումշտարկը<sup>1</sup> քննարկվող գրչագրի խմբագրության տարիներ է որոշել 460 թվականից հետո, նկատի ունենալով սուրբ Ստեփանոսի նահատակության օրվա նշումը, որը ըստ նրա եղել է 460 թ. Հունիս 15-ին: Դրան առարկել է Շ. Ռենուն:

Ըստ Բ. Կապելլի<sup>2</sup> հիշյալ գրական հուլյարձանը պետք է թվագրել 417-500 թթ., քանի որ մի դեպքում հիշատակվել է Հովհաննես Երոսաղեմացին, որը մահացել է 417 թ., իսկ մյուս դեպքում Պետրոսի ուծացման վայրում եկեղեցի կառուցվեց 500 թ.: Օ. Սեքուլյանը նշել է, որ Պետրոսի ուծացման վայրում եկեղեցի է կառուցվել 439 թ., ուստի այդ իրողությունը եղել է մինչև եկեղեցու կառուցումը: Օ. Սեքուլյանի կարծիքը ուշագրավ է Երոսաղեմի տոնացույցի հունարեն բնագրի ժամանակը որոշելու տեսանկյունից:

Դոն Բոթը<sup>3</sup> տոնացույցի թվագրումը դնում է 431-434 թթ.: կապված Հայ թարգմանիչների գործունեության և Եփեսոսի ժողովի հետ: Ըստ նրա Աստուածածնի տոնակատարությունը Եփեսոսի ժողովի արդյունքն է, ուստի թարգմանությունը կատարել են Հայ թարգմանիչները 431-434 թթ. ընթացքում: Այս տեսակետը կրում է զուտ տեսական բնույթ:

Դոն Հերմինգը<sup>4</sup> կարծել է, որ բնագրի թարգմանությունը արվել է մոտ 460 թվին: Նրա համար հիմք է ծառայել այն, որ Սուրբ Ստեփանոսի նահատակության վայրում է կառուցվել բազիլիկ եկեղեցի և այնտեղ տեղադրվել է վկայի մասունքները 439 թ. Մայիս 15-ին: Ըստ Ռենունի սուրբ Ստեփանոսի մասունքները հայտնաբերվել են 415 թ. Դեկտեմբերի և նույն ամսի 26-ին տեղափոխվել, ոչ թե բազիլիկ եկեղեցի, այլ Երոսաղեմի հարավում գտնվող Սիոնի եկեղեցու ավանդատուն, որն էլ եղել է Նախավկայի առաջին մատուռը: Հայագետի վերոհիշյալ կարծիքը, հիմնված արևմտյան ավանդության վրա, հաստատվում է հայկական բնագրերով:

Հայկական գրչագրերում առկա է Ստեփանոս Նախավկայի նշխարների գյուտի պատմությունը, որտեղ Սիոնի եկեղեցին է նշված որպես Ստեփանոսի մասունքների առաջին հանգրվան: «Գիւտ նշխարաց սրբոյն Ստեփանոսի նախավկային եւ որոնց ընդ նմա» վերտառությունն ունեցող բնագրում գրված է. «... Ապա ազդ արարեալ եպիսկոպոսին (Հովհաննես Երոսաղեմցու մասին է խոսքը - Ռ. Վ.) և էջ հանդերձ Բ եպիսկոպոսաւք: Եւ հրամայեցին

<sup>1</sup> Ն. Ակինյան, Մատենագրական հետազոտություններ... Բ. Ե. Վիեննա, 1953, էջ 290:  
<sup>2</sup> R. Athanase, Le Codex Armenien Jerusalem 121. I Intruducion aux origines de la liturgie Hierosalymitaine Lumieres nouvelles (Patrologia orientalis, Tome XXXV. Fascicule 1 N° 163), Brepols-Turnhouse, Belgique 1969, pp. 215.  
<sup>3</sup> F. Conybeary, Rityaly Armenorim, London, 1905, p. 507-527 (507-511).

<sup>1</sup> A. Baumstark, Festbreuer und Kirchenjahr der Syrischen Jakobiten (studien zur Geschich und kultur des Altertums, 3), Peder zborn, 1910, p. 95 hyu7hj, Nuerschlossene Urkunden altchristlicher Perik opon ordnung des ostaramaischen Sprachgedietes, dans oriens chritianus, 3., 5., Band 1 (1927), p. 1-22 9p. 137-139), Գույնի Liturgie comparee, principes et methodes pour l, etude des liturgies chitennes 3<sup>e</sup> edition, reoue Pardom Bernard Botte, Cevetoge, 1953, p. 159.  
<sup>2</sup> B. Capelle, La fete de le Vierge, a Jerusalem au Ve siecle, dans Le musem 561 (1943) p. 1-33.  
<sup>3</sup> B. Botte, Le lestonnaire Armenien et la fete de le Theotokos a Jerusalem au ve siecle, dans Sacris Erudiri, 8 (1949), p 111-122.  
<sup>4</sup> (Dom Botte), Archive fur Liturgie wissenschaft III/2 (1954), p. 409-411.

զսուրբն Ստեփանոս Հանել և դնել յԵրուսաղէմ ի սուրբն Սիոն (բնագրի այլ մասում՝ ի նորին մատրանն - Ռ. Վ.) միաբանութեամբ բան արկեալ վկայարան յարժանաւոր տեղիս...»<sup>1</sup>:

Նույն բնագրում կարդում ենք. «... Իմ (Ղուենկանոսի - Ռ. Վ.) ըստ սովորութեան ննջելոյ յանկողնի ի զատուցեալ տանն լուսարանի, ուր արկղն սպասու եկեղեցոյն կար, յաւուր ուրբաթոյ այգանալոյն որ աւր Գ էր Քաղոց ամսոյ, ի ժամանակս չորեքտասաներորդի յընդի Քտիկոնին. ի վեցերորդում Թէոդոսի տերանց մերոց ինքնակալ թագաւորի...»<sup>2</sup>: Այստեղ նշվել է Ստեփանոսի նշխարների գյուտի և վկայաբանութեան տարին, որը Թեոդոս փոքրի վեցերորդ տարին էր, այն է՝ 414 թ.<sup>3</sup>: Սակայն մեզ համար կարևորն այն է, որ ամիս-ամսաթիվը տրվել է Հայոց շարժական տոմարի Քաղոց 3-ով, որով որոշվում է հիշյալ բնագրի թարգմանութեան տարիները: Քանի որ Ստեփանոսի մասունքները գտնվել են դեկտեմբեր ամսին և Սիոնի ավանդատուն է դրվել Դեկտեմբերի 26-ին, ուստի ըստ «Հայոց տոմար» կոմպյուտերային ծրագրի ստանում ենք հետևյալ արդյունքները՝

Դեկտեմբեր 26 = Քաղոց 1-30 = 360/363 - 476/479 թթ.:

Ակնհայտ է, որ հիշյալ բնագրի թարգմանութեանը տեղի է ունեցել 414-479 թթ. սահմաններում: Հավանական տարիներն են 420-ական թվականները, երբ Եզնիկ Կողբացին և Հովսեփ Պաղնացին թարգմանութեանը էին կատարում Եդեսիայում: Այդ թարգմանութեանը ամենայն հավանականությամբ կատարվել է ասորերենից, որովհետև բնագրում առկա են ասորերեն բառեր և արտահայտություններ: Այլ խոսքով հիշյալ բնագիրն Ստեփանոսի մասունքների մասին գրված բնագրի հնագույն թարգմանութեանն է կատարված 5-րդ դարում, որը հետագայում փոխանցվել է սերնդից սերունդ:

2021 թվահամարի Տոնապատճառ ժողովածուի «Պատճառ տաւնի նախավկաին Ստեփանոսի» վերնագիրն կրող հատվածում գրված է. «... ասեն թէ Յոհան (նկատի ունի Հովհաննես Երուսաղեմցու - Ռ. Վ.) էր անուն, այն է որ Աղոնհացիցն ի տաւնել .ենք, Եժ (Հնգետասան) եպիսկոպոս յԵրուսաղէմ, և յայտնեցաւ բազում սքանչելեաւք և բժշկութեամբ, և եղաւ ի Սիոն ոսկերք սրբոյ) նախավկաին: Եւ ապա իշխան մի Աղեքսանդր անուն շինեաց վկայարան փառաւոր և անդ փոխեաց զնշխարս սրբոյն: Եւ ի վախճանելն Աղեքսանդրի մարմին նորա եղաւ ընդ սրբոյն տապանաւ իբրև Ստեփանոսին: Եւ յետ ժամանակաց կինն Աղեքսանդրի կամեցաւ զնալ Կոստանդնուպալիս, զի անտի էր Յուլիա անուն, և տարաւ տապան սրբոյն Ստեփանոսի անգիտաբար զառն իւրոյ տապանն կարծելով... Շինեաց վկայարան մեծափառ և անտ եղաւ, և զայն աւր ևս տաւն կարգեցին, որ է Աւգոստոս յերկուսն...» (էջ 12ա-19ա):

2040 թվահամարի Տոնապատճառ հավաքածուի մեջ առկա են հետևյալ տեղեկությունները՝ «... Եւ ապա ըստ նախագուշակ տեսլանն առեալ զնշխարս երանելոյն Ստեփանոսի, որ է եզնամոլոյն, առ ի սպաս հարկիլ մեծ քաղաքին և սայլին սուրբ, զի յԵրուսաղէմ արժան էր սպասաւորել նախասարկաւագին, ուր մեծ քահանայապետն մեր պատարագեցաւ...: Եւ բերեալ ասէ սաղմոսիւք և աւրհնութեամբ եղին ի սուրբն Սիոն: Զոր յետ սուղ ինչ աւուրց Աղէկասնդրոս ոմն վկայասեր շինեաց տաճար ի սուրբ քաղաքին Երուսաղէմ և բազում աղերսիւ ինդրեաց ի հայրապետն և վերափոխեաց զմեծապայծառ պարգև զսուրբ Ստեփանոս նախավկայի Քրիստոսի» (էջ 32ա-35բ):

Այսպիսով Հայոց գրավոր ավանդութեան համաձայն Հովհաննես Երուսաղեմցին սուրբ Ստեփանոսի մասունքները առաջին անգամ դրել է Սիոնի եկեղեցում:

Դոն Հեյմինգի մյուս փաստարկն էլ այն է, որ նոր տարվա տոնակատարութեանը Բեթղեհեմում (հետևաբար Երուսաղեմում) մտցրել է Հորենաղը և այդ տոնը վերացել է նրա մահից (458 թ.) հետո: Հայտնի է, որ Հունվարի 6-ի տոնակատարութեանը կատարվել է Արևելքում 4-րդ դարից սկսած և ոչ մի կապ չունի Հորենաղի հետ:

Գ. Կրեյմերը հետևել է Դոն Հեյմինգին Հունվարի 6-ի տոնակատարութեան կապակցութեամբ, միաժամանակ նշել է, որ Տոնացույցի խմբագրութեանը չի կարելի տանել մինչև 458 թ., այլ մինչև Քաղկեդոնի ժողովը (450 թ.): Իսկ Ստեփանոսի հիշատակութեանը կապվում է 439 թ. հետ: Այլ խոսքով բնագիրը թվագրել է 439-450 թթ.: Այս կարծիքը ևս ընդունելի չէ, որովհետև նոր տարվա տոնը, ինչպես տեսանք, Հայտնի էր 4-րդ դարից, իսկ 439 թ. Սուրբ Ստեփանոսի բազիլիկ եկեղեցու կառուցման տարին է, որտեղ, ինչպես նշվեց, առաջին անգամ չի դրվել նրա մասունքները:

Շառլ Ռընուև<sup>1</sup> կամ Աթանասը Երուսաղեմը սահմանքի թվագրումը կապել է մի կողմից Սուրբ Ստեփանոսի նշխարների գյուտի (415 թ. Դեկտեմբերի), նրա մասունքները Սիոնի եկեղեցի ավանդատուն տեղափոխելու (Դեկտեմբեր 26), ինչպես և Հովհաննես Երուսաղեմցու մահվան (417 թ.), մյուս կողմից Երուսաղեմի հյուսիսում 438-439 թթ. Եվդոկիա կայսրուհու կառուցած սուրբ Ստեփանոսի բազիլիկ եկեղեցու հիշատակության բացակայության հետ: Այստեղ, ինչպես նշել է հեղինակը, հետագայում տեղափոխվեց Ստեփանոսի մասունքները: Նրա հիշատակը սկզբից տոնել են Սիոնի եկեղեցու ավանդատանը: Շ. Ռընուևի վկայակոչած տվյալները, ինչ խոսք, կարևոր են Երուսաղեմի սահմանքի նախատիպի գոյությունը փաստարկելու համար 417-439 թթ. սահմաններում, սակայն ինչպես Շ. Ռընուև, այնպես էլ մյուս ուսումնասիրողները չեն կարողացել հիմնավորել Երուսաղեմի տոնացույցի հունարենից հայերեն կատարած թարգմանության և խմբագրության ժամանակը, որովհետև, ինչպես գրել է Շ. Ռընուև «... այն չի կապել որևէ հայտնի պատմական իրադարձության հետ»<sup>2</sup>: Փոքր ինչ հետո կհիմնավորենք, որ «Կանոն ընթերցուածոց»-ի հայերեն թարգմանության և խմբագրման ժամանակի և թարգմանչի համար ունենք ավելի քան հիմնավոր փաստեր:

Ն. Ակինյանը<sup>3</sup> բնագրի հունարան հայերեն լեզվից ելնելով, թվագրել է 5-րդ դարի 2-րդ կեսով կամ վերջերով: Թվագրելով «Կանոն ընթերցուածոց»-ը միաժամանակ ցույց կտանք ընդհանրապես լեզվական տվյալներով թվագրելու սնանկությունը և կբացահայտվի նոր իրողություններ, որոնք այնքան կարևոր են Հայոց հին մատենագրության ժամանակագրության, ինչպես և դասական հունարան հայերեն թարգմանութեանների պարբերացման համար:

Օ. Սեքուլյանը<sup>4</sup> Շ. Ռընուևի գրքի կապակցությամբ գրած գրախոսականում նշել է, որ Երուսաղեմի 121 թվահամարի գրչագրում վկայել է «... սրահ քահանայապետի» արտահայտությունը, ուստի բնագրի գրությունը եղել է մինչև 438/439 թթ., երբ կառուցվեց Պետրոսի սրբավայր-եկեղեցին:

Այլ խոսքով հետազոտողների փաստարկները (հատկապես Շ. Ռընուևի, Օ. Սեքուլյանի և այլն ցույց են տալիս, որ Երուսաղեմյան սահմանքը հունարեն լեզվով գոյություն է ունեցել

1 Ձեռ. № 7583, էջ 239բ:

2 Ձեռ. № 7583, էջ 232բ:

3 Բնագրի մեջ տարեթվերի տվյալները համարժեք չեն, ուստի կամ «չորեքտասաներորդի»-ը պետք է սրբագրել «երկուտասաներորդի»-ի՞նչ դիկտիոնի կամ «ի վեցերորդում թեոդոսի»-ը «ի ութերորդում», որով համադրելի կդառնան այդ զուգահեռ թվերը:

1 Renoux Athanase, Le Codex Armien Jerusalem 121. I. Intriducion aux origines de la liturgie Hierosalymitaine. Lumieres nouvelles. Patrologia orientalis, Tome XXXV. Fascicule 1 № 163/Brepols-Turnhoue. Belgique 1969, pp. 215.

2 Շ. Ռընուև, «Մաշոց» գիրք ծագումը..., ամդ. էջ 32:

3 Ն. Ակինյան, Աշխ. աշխ., էջ 290-291:

4 Հանդես Ամսորեայ, 1969, թիւ 1-3, էջ 111-119:



417 թվից հետո և 439 թվից առաջ, բայց այն երբ է թարգմանվել Հայերեն չի կարողացել հիմնավորել և ոչ մի ուսումնասիրող: Դեռ ավելին, Մովսես Խորենացու 1500-ամյակի առթիվ մեր կարգացած գեկուցման մեջ փորձել ենք ցույց տալ, որ «Կանոն ընթերցուածոց»-ի Հայերեն թարգմանութունը կատարվել է 417-480-ական թվականների սահմաններում և լուսնի 19-ամյա պարբերաչափանի օգտագործմամբ որոշել ենք թարգմանութայն թվականները: Ստացված թվականներից նախընտրել էինք 459-ը, որը, ինչպես կտեսնենք, ճշտվում է Հայոց տոմարական եղանակի ընձեռած հնարավորութուններով:

Անցնենք «Կանոն ընթերցուածոց»-ի թվագրմանը նախ հիմնվելով բնագրի տվյալների վրա:

Վերահիշյալ ընդօրինակութունների հետազոտութունը ցույց է տալիս, որ «Կանոն ընթերցուածոց»-ի անբաժանելի մասն է կազմել Կյուրեղ Երուսաղեմցու Կոստանդիանոսին գրած թուղթը: Այսպես, 985 թվահամարի ձեռագրում կարդում ենք «մայիս ամսոյ, որ աւր է (7) ժողովին առաջ սրբոյ Գողգոթային, զաւրն երեւելոյ նշանի խաչի յերկնից, եւ այս կանոն կատարի. Սաղմոս ԴԶ (96) կցուորդ (բերվում են բնագրերը - Ռ. Վ.): Ի Գաղատացոց թղթոյն Պաւղոսի առաքելոյ (բերվում են բնագրերից հատված - Ռ. Վ.): Եւ ապա ընթեռնուն զթուղթ Կիւրղի եւ պիսկոպոսի Երուսաղեմացոյ. Վասն երեւելոյ նշանի խաչին յերկնից (կցում է երկրի վերնագիրը - Ռ. Վ.) «Թուղթ Կիւրղի եպիսկոպոսի Երուսաղեմացոյ առ Կոստանտինոս թագաւոր. Վասն երեւելոյ լուսոյ խաչի» (ապա ներկայացվում են բնագրերը, որոնց թվում մեզ հետաքրքրող հատվածը - Ռ. Վ.) այն է՝ «...գերանելի ասեմ զխաչն լուսոյ ճառագայթիւք փայղեալ յԵրուսաղէմ՝ Ահեւտեսաւ զի յաւուրս այնորիկ սուրբ Պենտեկոստէին ի գլուխ Ահականի ( այլ բնագրերում՝ Ահեւտեսաւ ի յերկր ժամ ամենայաղթ խաչն լուսոյ կազմեալ երկնից գեր ի վերայ սրբոյ Գողգոթայի մինչեւ ի սուրբ լեառն Զիթենյաց ցոյացեալ երեւէր...»<sup>1</sup>: Այնուհետեւ գալիս է. «Ալելուիա, Սաղմոս ԴԶ...: Աւետարան ըստ Մատթեոսի...»<sup>2</sup>:

Այլ խոսքով բնագրում բերել են Մայիսի 7-ին սուրբ Գողգոթայի առաջ ինչպիսի նշանի երկնքից երեւալու օրվա արարողական կանոնները իրենց ընթերցվածներով: Ակնհայտ է, որ Կյուրեղ Երուսաղեմցու թուղթը գրված «առ Կոստանդիանոս» եղել է այդ կանոնի օրգանական մասը և ողջ տոնացույցի հետ թարգմանվել Հայերեն:

Ի դեպ, այն չէր կարող լինել Կյուրեղ Երուսաղեմցու մեկ այլ, այն է՝ «Կոչումն ընծայութեան» երկի մաս, ինչպես կարծել է Գ. Զարբհանյանը, քանի որ Կյուրեղ Երուսաղեմցու թղթի բնագրերը գտնվում են «Կանոն ընթերցուածոց»-ի ընդօրինակութունների և ոչ մեկը «Կոչումն ընծայութեան բնագրերի մեջ»:

Հայոց տոմարական եղանակի ընձեռած հնարավորութուններով, որի տեսական բացատրութունը տվել ենք մեկ այլ աշխատութայն մեջ<sup>3</sup>, տոնացույցի անբաժան մասը կազմող Կյուրեղի թղթի ներքին տվյալներով հնարավոր դարձավ թվագրել «Կանոն ընթերցուածոց»-ի հայերեն թարգմանութայն ժամանակը:

Անցնենք թվագրմանը:

Տեսանք, որ Երուսաղեմի տոնացույցում Մայիսի 7-ին է կատարվել Սուրբ Գողգոթայի առաջ կատարված կանոնները նվիրված Սուրբ Խաչի երկնքից երեւալու օրվան, որը ոչ միայն փոխառվել է, այլ հայ թարգմանիչը համարժեք է ընդունել Ահեւտեսաւ ամսին: Այսպես է հասկացել նաև Հովհաննես Սարկավազը իր «Առ Սարգիս» գրած նամակում: Համադրելով բնագրում հի-

շատակված համարժեք ամիս-ամսաթվերը ըստ «Հայոց տոմար» կոմպյուտերային ծրագրի տվյալների ստանում ենք հետևյալ արդյունքները, այն է՝ Մայիս 7 = Ահեւտեսաւ 1-30 = 312/5 - 428/31 թթ.: Հետևում է, որ Երուսաղեմի տոնացույցը Կյուրեղի թղթի հետ միասին թարգմանվել է հունարենից Հայերեն 408-431 թվականի սահմաններում, որոնց միջին տարեթիվն է 419-ը: Ստացված տարեթվերի սահմանները ավելի են նեղանում, երբ նկատի ենք ունենում տոնացույցում առկա Հովհաննես Երուսաղեմցու հիշատակի օրվա նշումը: Ուսումնասիրողները ցույց են տալիս, որ Հովհաննես Երուսաղեմցին մահացել է 417 թվականին, ուստի թարգմանութայն ներքին սահմանը 417 թվականից հետո է: Քիչ անց ցույց կտանք, որ այդ բնագրի թարգմանիչն է Սահակ կաթողիկոսը, որը 428 թ. գահընկեց արվեց և հինգ տարի բանտարկված մնաց:

Պարզ է, որ վերանում է մեր ստացված տարեթվերի վերին սահմանի քառամյակը, այն է՝ 428-431 թթ.: Հետևապես Երուսաղեմի «Կանոն ընթերցուածոց»-ը հունարենից Հայերեն է թարգմանվել և մասամբ խմբագրվել 417-428 թթ. միջև, հավանաբար Ահեւտեսաւ 28 = Մայիս 7-ի համարժեք քառամյակում, այն է՝ 420-423 թթ.: «Կանոն ընթերցուածոց»-ի թվագրումը պարզութուն է մտցնում և հնարավորութուն տալիս հայկական սկզբնաաղբյուրների տված տեղեկութունների հիման վրա որոշել հիշյալ բնագրի թարգմանիչ-խմբագրին:

Կորյունի վկայութայն համաձայն, Սահակ կաթողիկոսը 435/6 թթ., ավելի ստույգ 428 թ. առաջ (մինչև գահագուրդ ավելը և բանտարկվելը), հունարենից Հայերեն էր դարձրել եկեղեցական գրքերի ամբողջութունը և շատ սուրբ Հայերի իմաստութուններ, իսկ 435/6 թթ. հետո եզնիկ Կողբացու հետ միասին վերանայեց Սուրբ Գրքի Հայերեն բնագիրը, որը թարգմանել էին ասորերենից, Կոստանդնուպոլսից բերված Աստվածաշնչի հունարեն կանոնական օրինակի հիման վրա, ինչպես և Սուրբ Գրքի շատ մեկնութուններ էլ թարգմանեցին: Վերահիշյալ տեղեկութունը և «Կանոն ընթերցուածոց»-ի թարգմանութայն ժամանակի որոշումը, կարծում ենք, աներկբա է դարձնում, որ հիշյալ թարգմանութունը կատարել է Սահակ կաթողիկոսը, քանի որ եկեղեցական գրքերի գումարութայն մեջ մտնում են Պատարագամատուցը, Տոնացույցը և Մաշտոցը: Արդարանում է Հայոց տոնացույցերի միջոցով մեզ հասած ավանդութունը, համաձայն որի «Աստուածայատնութեան ժամանակարգութիւն ըստ սրբոյ Լուսաւորչին աթոռաց հրահանգից և կարգաց, զոր ընկալեալ է սրբոյն Սահակայ և հասուցին առ մեզ նախնիք մեր»<sup>1</sup>:

Թարգմանչի որոշմանը, եթե նույնիսկ ծայրահեղ քննադատութայն դիրքերից էլ մոտենանք, որի կարիքը չկա, այնուամենայնիվ բնագրի թարգմանութայն թվականների որոշումը հնարավորութուն է տալիս դիտարկել մեկ տարբերակ ևս: Ըստ Խորենացու, Հայտնի է, որ 420-ական թվականներին Կեսարիայում հունարենից Հայերեն թարգմանութուններ էին կատարում Հովհան Եկեղեցացին և Արձանը, որոնք նույնպես կարող էին հիշյալ բնագրի թարգմանիչները լինել, բայց քանի որ տոնացույցի ներդրումը Հայ եկեղեցու կենցաղում կաթողիկոսի իրավասութայն մեջ էր մտնում, ապա ով էլ որ թարգմանեց, միայն Սահակ կաթողիկոսի համաձայնութայն և խմբագրութայն պետք է ներդրվեր Հայոց եկեղեցու առտնին կենցաղում: Ինչպես նկատելի է նույնիսկ միջնորդված թարգմանութունը ևս բնականորեն տանում է դեպի Սահակ կաթողիկոսը:

Այսպիսով, տոմարական անառարկելի զուգահեռներով, ժամանակակցի մատենագրական վկայութայն, ինչպես և հետագա ավանդութայն հիմնավորվում է, որ Երուսաղեմի տոնացույցը հունարենից Հայերեն է թարգմանել և մասնակի խմբագրել՝ դարձնելով համակովկասյան քրիստոնեական տոնացույց, Սահակ կաթողիկոսը 420-ական թվականների սկզբներին:

Քննարկենք հիշյալ տոնացույցի խմբագրման հարցը:

1 Ձեռ. № 985, էջ 237ա-241բ:

2 Ձեռ. № 985, էջ 237ա-241բ:

3 Ռ. Վարդանյան, Հայոց տոմարական եղանակը, թարգմանական բնագրերի ժամանակը, Երևան, 1993:

1 Ձեռ. № 9838, էջ 119բ և այլն:

«Կանոնք ընթերցուածոց»-ի մեջ գրված է. «Սեպտեմբերի ամսոյ որ աւր ժԳ. Նավակատիք սրբոց տեղեաց Երուսաղէմի՝ զուրթ աւր լինի»: Շարունակութեան մեջ բերվել է երկու օրվա արարողական կարգը սպասվելիք ութ օրվա փոխարեն: Այս փաստը ցույց է տալիս, որ Սահակ կաթողիկոսը տոնացուցը խմբագրել է, այլապես բաց չէր թողնի Հաջորդ վեց օրվա տոնածիսական արարողական կարգի կանոնները, որոնք վերականգնվեցին ուշ շրջանում դարձնելով Ս. Խաչի և Եկեղեցու տոնական օրերը: Սահակ կաթողիկոսը խմբագրեց Քրիստոսի Ծննդեան և Աստուածայայտութեան կանոնը՝ Հունվարի 6-ը դարձնելով Հայոց եկեղեցական տարվա սկիզբ: Բանն այն է, որ Քրիստոսի Ծննդեան օրը՝ Դեկտեմբերի 25-ը, 4-րդ դարի վերջերից՝ 370-80-ական թվականներից, Հռոմից ներթափանցեց Արևելքի և Հարևան եկեղեցիները, Քրիստոսի Ծնունդը սկսեցին տոնել Դեկտեմբերի 25-ին, իսկ Մկրտութիւնը՝ Հունվարի 6-ին, որը չընդունեց Հայոց եկեղեցին, ինչպես ցույց են տալիս Հատկապես ասորերենից կատարված թարգմանութիւններում (Եփրեմ Ասորի, Անդրեաս) փաստագրված Հունվարի 6-ը և շարունակեցին Քրիստոսի Ծնունդն ու Մկրտութիւնը տոնել միաժամանակ՝ այսինքն պահպանեցին Հին ավանդույթը: Մենք չգիտենք Երուսաղէմի տոնացուցում Քրիստոսի Ծնունդն ու Յայտնութիւնը դրված էր մի կանոնի տակ, թե տարբեր, մանավանդ Հետագայում այդ տոները Հաստատապես տոնվում էին առանձին, իսկ Հայոց մեջ Հիմնականում միասին, չնայած որոշ ժամանակավոր խախտումներ: Հայոց մեջ Գրիգոր Լուսավորիչը ըստ ավանդութեան սահմանել է Հովհաննես Մկրտչի հիշատակի օր, որը մտավ Սահակ կաթողիկոսի խմբագրած տոնացուց 0գոստոսի 29-ի կանոնի տակ, թեև բացառված չէ, որ այն եղած լինի նաև Երուսաղէմի տոնացուցում:

Բիզանդարան պատմութիւնների հեղինակի մի հաղորդումից երևում է, որ 4-րդ դարի տոնացուցում օգտագործվել է անշարժ տոմար, հավանաբար հուլյանը, որը Սահակ կաթողիկոսը վերջնականորեն ներդրեց Հայոց մեջ, թեև բացառված չէ, որ Հուլյան տոմար է օգտագործվել նաև Երուսաղէմի տոնացուցում:

Շառլ Ռընուի վկայակոչած տվյալների համաձայն «Itinerarium Egeriae»-ում Հունվարի 6-ի ծիսական արարողութիւնների նկարագրութիւնը սկսվում է Բեթղեհեմից (Երուսաղէմի համայնքի) Երուսաղէմ վերադառնալու և նրան ուղեկցող «օրհնեալ, որ երկիր...» երգի հիշատակմամբ: Հենց այդ արարողական կարգն էլ բացակայում է Հայկական հնագույն և ընդհանրապես ճաշոցներում: Դա պարզապես նշանակում է, որ Սահակ կաթողիկոսը տեղայնացրել է տոնացուցի կանոնները դուրս հանելով որոշ հատվածներ: Շառլ Ռընուն չի ուզում տեսնել այդ, որովհետև Հայոց տոնացուցը դիտում է իբրև սոսկ թարգմանութիւն, այսինքն՝ Երուսաղէմի տոնացուց: Նա փորձում է նույնիսկ անհաջող բացատրութիւն տալ իր իսկ տեսակետն արդարացնելու միտումով<sup>1</sup>:

Մեջբերած փաստերը ցույց են տալիս, որ Սահակ կաթողիկոսը սոսկ փոխառութիւն չկատարեց Երուսաղէմի տոնացուցից, այլ խմբագրեց այն: Հայագիտութեան համար Հայոց առաջին քրիստոնեական տոնացուցի թվագրումը և խմբագրումը կարևոր նշանակութիւն ունի, միաժամանակ էական ու սկզբունքային կարևորութիւն ունի դասական և հունարան Հայերեն թարգմանութիւնների փոխհարաբերութիւնների տեսանկյունից ժամանակագրական կտրվածքով: Այն առանձին քննարկման խնդիր է: Առայժմ ասենք այսքանը, որ վերոհիշյալ բնագրի, ինչպես և այլ թարգմանական գործերի, որոնցից մեկի մասին կխոսենք քիչ հետո, ժամանակի որոշումը թույլ է տալիս պնդել, որ դասական և հունարան Հայերենով կատարված թարգմա-

նութիւնները սկսել են զուգահեռաբար, ուստի պետք է վերանայել հունարան դպրոցի պարբերացման խնդիրը ժամանակագրական կտրվածքով:

Պարզվում է, որ դասական և հունարան Հայերենով սկսել են թարգմանութիւններ կատարել զուգահեռաբար 410-20-ական թվականներից սկսած: «Կանոնք ընթերցուածոց»-ի ժամանակի և թարգմանչի որոշումը կասկած չի թողնում, որ հունարան Հայերենի Հիմնադիրը Սահակ կաթողիկոսն է:

Քննարկենք ևս մեկ հարց:  
Կորյունի, Ղազար Փարպեցու վկայութիւններից և տոմարական Հաշվումներից Հայտնի են դարձել, որ Աստվածաշունչը թարգմանել են Հայերեն ասորերենից 408-415 թթ. սահմաններում, սակայն հետագայում 435/6-440 թթ. վերանայել են Կոստանդնուպոլսից բերված հունարեն կանոնական օրինակի հիման վրա:

Հայերեն լեզվով գրված առաջին քրիստոնեական տոնացուցի թվագրումը և թարգմանիչ-խմբագրի որոշումը թույլ է տալիս բացատրել Սահակ կաթողիկոսի Աստվածաշունչի ասորական թարգմանութեան վերանայման պահանջը: Բանն այն է, որ Երուսաղէմի տոնացուցում յուրաքանչյուր տոնի կապակցութեամբ բերվել են ընթերցվելիք նյութեր Հին ու Նոր Կտակարանի տարբեր մասերից և Սահակ կաթողիկոսը թարգմանելով այն, ինչպես և աչքի առաջ ունենալով ասորերենից կատարված թարգմանութիւնը, նկատել է տարբերութիւնները, որն էլ, մեր կարծիքով, եղել է պատճառ, որ նա պատվիրի հունարեն կանոնական բնագիրը և շտկումներ ու լրացումներ կատարի: Ի դեպ ուսումնասիրողները նկատել են տարբերութիւններ Աստվածաշունչի ներկա բնագրի և տոնացուցի աստվածաշնչյան հատվածների միջև: Մի բան պարզ է, որ մինչև Կոստանդնուպոլսից բերած Աստվածաշունչի հունարեն կանոնական բնագիրը, առկա էր Հին ու Նոր Կտակարանի ինչպես ասորերեն բնագիրը և նրա թարգմանութիւնը, այնպես էլ հունարեն բնագրի ստվար հատվածներ թարգմանված Երուսաղէմի տոնացուցի միջոցով:

Ն. Ադոնցը փորձել է ցույց տալ, որ Մակաբայեցուց գիրքը թարգմանվել է 460-468 թթ<sup>1</sup>, սակայն, այդ փորձը անհաջող է: Բանն այն է, որ մեր կողմից առաջադրված Հայոց տոմարական եղանակը հնարավորութիւն է ընձեռում թվագրել նույնիսկ Աստվածաշունչի առանձին գրքեր, որոնց թվում Մակաբայեցուց գիրքը: Մակաբայեցուց գրքի մեջ վկայվել է Ահեկան ամիսը, այն է՝ «մինչև յերեսուն ահեկանի ամսեան» (ԺԲ, 30) և «յամսեան ահեկանի, որ աւր հնգետասան էր» (ԺԱ, 33): Հունական բնագրում դրա փոխարեն համապատասխանորեն ունի 30 և 15 Քսանթիկոս ամսի: Ն. Ադոնցը գտել է դրանց համարժեք հուլյան ամսաթվերը, այն է՝ Ապրիլ 28 և 13 ու Նավասարդի 1-ով ստացել է 460-468 թթ.: Քանի որ թե հունական, թե Հայկական բնագրերում ամսաթվերն նույնն են, ուստի հունական ամսանուն Քսանթիկոսն է փոխարինվել Հայոց շարժական տոմարի Ահեկան ամսանվան, այսինքն՝ ամսաթվերն բառացի թարգմանութիւններ են, միայն ամսանուններն են փոխվել, ուստի ճիշտ չէ Նավասարդի 1-ով որոշել թվականը: Ունենալով Քսանթիկոս 30 = Ապրիլ 28 = Ահեկան 1-30, ըստ «Հայոց տոմար» կոմպյուտերային ծրագրի տվյալների ստանում ենք առաջին ամսաթվի տարիները, այն է՝ 347/50-463/4 թթ., իսկ երկրորդ ամսաթվի համար, այն է՝ Քսանթիկոս 15 = Ապրիլ 13 = Ահեկանի 1-30, ստանում ենք 407/10-523/6 թթ.: Որովհետև Ապրիլ 28-ը և 13-ը միաժամանակ համարժեք են Ահեկան ամսի տարբեր օրերին միայն այդ ամսաթվերի հատման տարեթվերին, որն է 407/10-463/4 թթ. (միջինը 435 թվական), ապա Մակաբայեցուց գիրքը թարգմանվել է 407-464 թթ. միջև ընկած սահմաններում: Միջին թվից, այն է՝ 435 թվականից ելնելով կարելի է պնդել, որ այն թարգմանվել է 435-440 թթ.: Սահակ կաթողիկոսի կամ Եզնիկ Կողբացու կողմից: Ի դեպ Մակաբայեցուց գիրքը ևս հունարան Հայերենով հնագույն թարգմանութիւններից

<sup>1</sup> Շառլ Ռընու, Աստուածայայտութեան տօնը Երուսաղէմում Դ և Ե դարերում ըստ Երուսաղէմի հայկական ճաշոց գրքի, Գամաասար, 1996, էջ 164:

<sup>1</sup> Ն. Ադոնց, Դարձեալ Կորիւնի շուրջը, Հանդես Ամսօրեայ, 1928, էջ 91-94:



է: Վերոհիշյալ հաշվումները ևս հիմնավորում են որ Աստուածաշունչը թարգմանվել է ամբողջ- ջուլթյամբ 408-441 թթ., նախ 408-415 թթ. (ասորերենից), 420-423 թթ. (հունարենից հատված- ներ տոնացույցի մեջ) և 435-441 թթ., (Կոստանդնուպոլսից բերված հունարեն կանոնական բնագրից) և արդեն հայացված Աստուածաշունչը օգտագործված ենք գտնում, ինչպես Ագա- թանգեղոսի պատմության (գրված 428-435 թթ., խմբագրված 620-623 թթ.), Բիւզանդարան պատմության (գրված 435-445 թթ.), Կորյունի Վարք Մաշտոցի (գրված 446 թ.), այնպես էլ Եղիշեի Վարդանանց պատմության (ավարտած 469 թ.), Մովսես Խորենացու Հայոց պատմու- թյան (գրված 470-ական թվերի վերջերին 480-ական թվականների սկզբներին) և Ղազար Փար- պեցու Հայոց պատմության (գրված 490-ական թվականներին) մեջ:

Ակնհայտ է, որ Աստուածաշունչի թարգմանության մեջ կան տարբեր շերտեր կապված Պեշի- տոյի, 70-ից թարգմանության և այլ խմբագրությունների հետ:

Հայոց քրիստոնեական առաջին տոնացույցի մեջ առկա աստուածաշունչյան հատվածներով հնարավորություն են ստեղծում որոշել թե այն որ խմբին է պատկանել, մանավանդ տարբե- րություններն արդեն նկատվել են ուսումնասիրողների կողմից (Ս. Կոխ, Ծ. Ռընու): Այս ուղ- ղությունը կատարվելիք աշխատանքները պետք է շարունակվեն, որպեսզի ստացվեն ավելի կոնկրետ և վերջնական արդյունքներ:

Տեսնենք, ըստ Հայ մատենագիտական վկայությունների, քննարկվող բնագիրը ի՞նչ ան- վանում է ունեցել: Ասենք, որ ուսումնասիրողները հատուկ չեն անդրադարձել Տոնացույցի նախնական վերնագրի հարցին:

Ն. Ակինյանը կիրառել է Երուսաղեմյան տոնանամակ<sup>1</sup> արտահայտությունը, որը գալիս է Գրիգոր Վկայասերի «Տաւնանամակ»-ի, այսինքն նրա խմբագրած տոնացույցի անվանումից:

Շ. Ռընուն<sup>2</sup> օգտագործել է Երուսաղեմյան սահմանք տերմինը Երուսաղեմի տոնացույցի, այսինքն հունարենից հայերեն դարձրած նախնական բնագրի համար, իսկ Հայոց քրիստոնեա- կան տոնացույցերի, այն է՝ հետագա տարբերակների համար ձաշոց տերմինը:

Պետք է նշել, որ Երուսաղեմյան սահմանք արտահայտությունը, ինչպես կտեսնենք, տեղ չի գտել Հայ մատենագիրների վկայություններում, այլ «Կանոնք (Կանոնադրութիւնք) ընթեր- ցուածոց» կամ «Գիր-Գիրս-Գիրք ընթերցուածոց», թեև միշտ գիտակցվել է, որ Հայոց տոնա- ցույցը փոխառվել էր Երուսաղեմից: Իսկ ձաշոց տերմինը գալիս է Գրիգոր Արշարունու «Մեկ- նութիւն ընթերցուածոց» բնագրի առկա խմբագրությունից, որը կատարել է Ջաքարիա կաթո- ղիկոսը 9-րդ դարի 60-ական թվականներին և մեզ է հասել շնորհիվ Գեորգ Մեղրիկի ընդօրի- նակության (11-րդ դարի վերջ): Ասենք, որ Գրիգոր Արշարունին այդ տոնացույցը ճանաչել է իբրև «Կանոնք կամ Կանոնադրութիւնք կամ Գիրք կամ Գիր կամ Գիրս ընթերցուածոց» և իր վերլուծությունը վերնագրել «Մեկնութիւն ընթերցուածոց»: Բնագրում յուրաքանչյուր տոնի առիթով տալիս է կանոն տերմինը, որից կարելի է հետևեցնել, որ գիրքը անվանվել է «Կանոնք ընթերցուածոց»:

Բերենք Հայ մատենագրական տեղեկությունները:

Հովհան Մանդակունու 9-րդ կանոնում գրված է. Եւ որ Մնունդ առնեն յառաջ քան զՅայտնութիւնն՝ չէ արժան, զի սուտ է, զի Մնունդն եւ Յայտնութիւնն մի են եւ յայտ յԸն- թերցուածոցն<sup>3</sup> է, որ ասէ «Յիսուսի Քրիստոսի ծնունդն էր այսպէս» (Մատթ. Ա. 18)<sup>4</sup>:

1 Ն. Ակինյան, Մատենագրական հետազոտություններ... հ. 5, էջ 290-291:  
2 Շ. Ռընուն, «Մաշոց» գիրք ծագումը..., անդ. էջ 28-30:  
3 Բնագրում (համեմատական) լրճթերցուածոց, տողատակում՝ լրճթերցուածոց, վերականգնումը մերն է:  
4 Կանոնագիրք հայոց, հ. Ա., էջ 499:

Այստեղ խոսքը գնում է ոչ թե նոր կտարականի համապատասխան հատվածի այլ տո- նացույցի մեջ եղած վկայություն մասին: Կարելի է բերել բազմաթիվ տեղեկություններ, բայց բավարարվենք գրչագրերի և ձեռագրաց ցուցակների հղումներով<sup>1</sup>, մանավանդ հետագա շա- րադրանքից այդ հարցը կհստակեցվի: Ղազար Փարպեցին Ղևոնդեանց նահատակության նկա- րագրությունից հետո գրում է. «կատարէին կարգեալ կանոնս Գուբաղայինց և կարդացմանս ընթերցուածոց»<sup>2</sup>:

Այս դեպքում ևս ակնհայտ է, որ Ղազար Փարպեցին նկատի է ունեցել «Կանոնք կամ գիրք ընթերցուածոց»-ը:

Հովհաննես Գաբեղենացին, որը որքան մեզ հայտնի է, առաջին անգամ կատարել է տո- նացույցի Քրիստոսի Մննդեան և Աստուածայայտնութեան կանոնի մեկնությունը, օգտագործել է «ընթերցուածոց» տերմինը՝ առանձին ընթերցվածների համար, իսկ Արտեմոնի տոնացույցի հա- մար՝ «Արտեմոնագիր Ընթերցուածոց»: Նրա մոտ խոսքը գնում է քննարկվող բնագրի մասին: Բերենք այդ տեղեկությունը:

«Եւ Կիւրղոս Երուսաղէմի եպիսկոպոս... և տաւնս և ընթերցուածս և զՍաղմոս ի սրբոց ա- ռաքելոցն զեղեալսն հաստատեալս, և զյիշատակ մարգարէից և առաքելոց և մարտիրոսաց ստուգեալ կարգեաց և գլուխ տաւնից զյայտնութիւնն եղ՝ սուրբ առաքելոցն էր կարգեալ, և չասաց զծնունդն յառաջ քան զյայտնութիւն, այլ զմի և զնոյն: Եւ զոր յայլ քաղաքս ըստ արտեմոնաղիր ընթերցուածոց դեկտեմբեր ամսոյ ի քսան և հինգ ծնունդ առնեն, զայն Յակոբայ առաքելոյ և Դաւթա Մարգարէի յիշատակի աւ[ը] եղ Կիւրեղ, քանզի և սուրբ հարքն որ ի Նի- կիա ժողովեալ, և երանեալ սուրբն Գրիգորիոս և սուրբն Արիստակէս ոչ կարգեցին երկուս տաւնս զծնունդն և զՅայտնութիւնն, այլ մի տաւն: Եւ նոցունց հոգեկիր վարդապետքն և թարգման- չիք, որք յԱղեքսանդր[իա] և յայլ յայտնի քաղաքս վարժեալ, ոչ աւելիս և նորս ինչ թարգմա- նեցին և ոչ ընկալան, և ոչ մեզ աւանդեցին, այլ հաստատեալ ենք ի վերա հիման սուրբ առա- քելոցն և երանելի հարցն, որ մի և նույն տաւն կատարեցին, և կատարենք ի պատիւ սուրբ եր- ռորդութեանն, զաւր սուրբ Յայտնութեանն՝ ոչ բաժանելով յերկուս զայս աւր ի Յորդանան զծնիցեալ բանն»<sup>3</sup>:

606-607 թթ. Մովսես եպիսկոպոսի Վրթանես Քերթողին գրած նամակի մեջ կարդում ենք. «... նույնպես և յաղաքս միաւորական տաւնին Յայտնութեան՝ որ է հրաշափառ ամենասուրբ ծնունդն յունուարի ամսոյ ի վեցն կատարեալ. զոր կանոնեալ հին ընթերցուածոց»<sup>4</sup> (ընդգծումը մերն է - Ռ. Վ.): Կասկած չկա, որ Մովսեսը հիշատակել է Սահակի «Կանոնք ընթերցուածոց»-ը:

Բերենք Անանիա Շիրակացու վկայությունները<sup>5</sup>:

ա) «... եւ յայտ է ի կանոնադրութիւնէն ընթերցուածոցն սրբոյն Կիւրղի, քանզի այսպէս, եթէ ին (25) [աւուր] ամսոյն դեկտեմբերի է տաւն Դաւթի եւ Յակոբու զոր յայդ քաղաքս ծնունդ Քրիստոսի առնէն...»:

բ) «... զկանոն ծննդեան ի վեց յունուարի կարգեաց նոյն ինքն Կիւրեղ. քանզի գրեալ է ի սկզբան կանոնին այսպէս, թէ տաւն սրբոյ Յայտնութեան կատարի ի յունուարի որ [աւր] վեց է

1 Հ. Սահակ վրդ. Մեմմեմեան, Մայր ցուցակ հայերէն ձեռագրաց մատենագրարանի Միխայիլայնց ի Վեներիկ, հատոր Դ., Վեներիկի, 1993, էջ 567-588, 595-606 եւ: Վիեննայի ձեռագրացուցակներ Հ. Տալլան, էջ 18-19, Ն. Ոսկյան, էջ 215-217 և այլն:  
2 Ղազար Փարպեցի, Պատմութիւն հայոց, էջ 262:  
3 Գիրք թղթոց, էջ 88-89:  
4 Գիրք թղթոց, էջ 124-125:  
5 Անանիա Շիրակացու մատենագրությունը էջ 285:

ամսոյն ժողովին ի Հովուանոցն. եւ զայս ինչ կանոն կատարին եւ ապա ի Բեթղեմ եւ ի Յայրին»:

Ակնհայտ է, որ այստեղ ևս խոսք է գնում քննարկվող բնագրի մասին:

Մովսես քերթողահայր Սյունեցին «Յաղագս Վարդավառին խորհրդոյ» բնագրի մեջ, որը ինչպես կտեսնենք հետագայում, գրվել է 703 թվականին, օգտագործել է «ընթերցուածոցն»<sup>1</sup> տերմինը նկատի ունենալով «Կանոնք ընթերցուածոցը»: Ասենք նաև, որ Մովսես Սյունեցին օգտագործել է «Կանոնք ընթերցուածոց»-ի հնագույն բնագիրը, որտեղ բացակայում է Վարդավառի կանոնը: Այդ է պատճառը, որ Վարդավառը համեմատում է Տաղավարաց և այլն տոներին հետ և ասում որ Վարդավառի կանոնը հենք չեն սահմանել և պատճառաբանում է:

Հովհաննես Իմաստասերն օգտագործել է «ընդ ընթերցուածոցն հրաման» արտահայտությունը: Բերենք այդ վկայությունը. «Բայց տեսնենք առ այսոքիւք և զայն ևս, եթէ ոմանք և վայելչագունից սովորութեանց ջանան խափանումն ի վերայ բերել, և զաստուածայատնութեան և զծննդեան նորին զօր, զոր ի վեցն յունվարի ի միասին տօնել սովոր է աշխարհս մեր այդ զծննդեան սիրեն ոմանք կատարել զտօն. իսկ յայտնութեան խորհրդոյ՝ և ոչ միով իւր կամին ճառս ի մեջ բերել, կապելով ամենեկին զինքեանս ընդ ընթերցուածոցն հրաման զօր Երուսաղեմիքն յութօրեայս յայտնութեան ետ՝ յութ եկեղեցիսն իւրեանց երթալով՝ զնոցին տեղեաց և զկանոն կատարեն օրէն սագանդութիւն կարծելով զայս եթէ զառ ի հնոցն զթերի ինչ ըստ խորհրդոյն խնդրոյ՝ կատարելագործել ումեք հրամայէ հոգին Սուրբ»<sup>2</sup>:

Հովհաննես Օձնեցին ևս հիշատակել է «Կանոնք ընթերցուածոց»-ը:

«Ստեփաննոսի Սրենեաց եպիսկոսի, մեծի իմաստասիրի, պատասխան թղթոյն Անտիոքու եպիսկոպոսի զոր վասն հաւատոյ գրեալ էր» վերտառութիւնը կրող բնագրում վկայվել է. «դարձեալ ասէք եթէ զԱւետիսն ի մարտի ի քսան և հինգն ոչ կատարէք, և ոչ զծնունդն ի դեկտեմբերի ի քսան և հինգն: Աղաչեմ զի ուսուցես մեզ, թէ յոր գիրս կայ, յառաքելոց, թէ յուղղափառ վարդապետաց կամ որով պատճառանաւք եղեալ է, զայդուսիկ յայդմ տեղոջ: Եթէ զԱրտեմոնին ասեք ոչ ընդունիմք. զի մեք յերուսաղէմէ գիտեմք զսկիզբն հաւատոց, և առաքելքն յերուսաղէմ կարգեցին զկանոնսն և Յակոբոս Տեառն եղբայրն յերուսաղէմ կազեաց զընթերցուածն, և Կիւրեղ հայրապետն զնոյն դաւանեաց: ... և նա ի Տիբեթա ամսեանն ի քսան ու մէկն տաւնէր, որ է ըստ Հռոմին ի յունուարի ի վեցն, և այլ առաքելքն ի նմանէ ուսեալք տաւնէին զաւր ծննդեանն և մկրտութեանն ի միում աւուր, որ է վեց Յունուարոյ, որպէս և ի կանոնքն իւրեանց իսկ կայ»<sup>3</sup>: Ակնհայտ է, որ Ստեփաննոս Սյունեցին նկատի ունի թարգմանված «զկանոնսն կամ «ի կանոնքն» կամ «զընթերցուածն»:

«Սակա ժողովոց» բնագրի հեղինակը կիրառել է «Գիր ընթերցուածովն» (կարգա ընթերցուածոցն - Ռ. Վ.) վերնագիրը քննարկվող գրչագրի համար: Բերենք այդ տեղեկությունը: «... եւ որ զծնունդն յառաջ քան զՅայտնութիւնն առնին, մեծ մեղք են և յայտ յԱւետարանէ անտի է, որ սա է, և Յիսուս Քրիստոսի ծնունդն էր այսպէս. և ի սոյն դէմս աւրինակի փակեալ կայ Գիր ընթերցուածովն. զորս կարգեալ են ուղղափառացն սրբոց»<sup>4</sup>:

Ակնհայտ է, որ բնագրի հեղինակը նկատի ունի հայոց տոնացույցը, որը վերնագրել է «Գիր ընթերցուածոց»:

«Տեառն Գէորգեայ Հայոց վերադիտողի եւ հոգեշնորհ փիլիսոփայի, Պատասխանի թղթոյն Յովհաննեսի Ասորոց պատրիարքի» նամակի մեջ գրված է.

«Արդ ամաչեսցէ Արտեմոն, յամաւթ լիցի եւ ժողովն Քաղկեդոնի, զի ոչ կարեն ցուցանել առանձնական տաւն մկրտութեանն Քրիստոսի, ոչ ի Յակովբայ եղբաւրէ Տեառնէ եւ ոչ ի Կիւրեղէ, եւ ոչ գտանէ ոք յընթերցուածագիրն (ընդգծումն մերն է - Ռ. Վ.), զի թէպէտ եւ գրեցին աւետարանք եւ առաքելալք, եւ պրակք առաքելոցն Ղուկասու զմկրտութիւն Քրիստոսի, այլ ոչ հրաման սահմանեցին կատարելոյ որպէս ծննդեանն, վասն ի ծնունդն լինելոյ Մկրտութեանն եւ ոչ բաժանելոյ» (Գիրք թղթոց, երկրորդ հրատ. Երուսաղէմ, 1994, էջ 624-656): Գէորգ կաթողիկոսն «գիր ընթերցուածոց»-ի փոխարեն օգտագործել է «ընթերցուածագիր» տերմինը:

Պողոս Տարոնացին իր բանավեճային թղթի մեջ գրում է. «Արդ Արտեմոն և Յուստիանոս ձեզ (Հուլյներին - Ռ. Վ.) հաւատալի թուի քան զՅակովբոս և զԱստուածածինն և զառաքելսն: Արտեմոն ի Յովհաննու աւետարանչին անիծած է: Իսկ մեք (Հայերը - Ռ. Վ.) զՅակովբայ զկարգեալսն պահեմք: Իսկ Նիկիա ժողովն էր մեր սուրբ Ռըստակես որդի Լուսաւորչին Սրբոյն Գրիգորի և արքային Տրդատ գրեաց առ սուրբ ժողովն և առ կայսրն Կոստանդին զի զկարգ տաւնից տերուական և զսահման ամենայն կարգաց, որ յերուսաղէմ եղին սուրբ առաքելքն գրով տայցեն ի հայք, զոր և արար կայսրն պսակեալն յԱստուծոյ: Մակար Երուսաղէմի հայրապետին հրամայեալ տա բերել զառաքելագիր կանոնեալ ընթերցուածն (ընդգծումը մերն է - Ռ. Վ.) յաւրենի սուրբ ժողովոյն հրամանաւ ՅԺԷ-իցն առեալ բերէ ի հայք առ Տրդատ և առ Լուսաւորչին սուրբ Գրիգոր, և հրամանաւ երկոցունց գրեաց եղան կարգ ընթերցուածին (ընդգծումը մերն է Ռ. Վ.) յամենայն գաւառս Հայոց: Այս է մեր տաւնից խրատ: Չէ անիծեալն Արտեմոն»<sup>1</sup>:

Պողոս Տարոնացին հայոց տոնացույցի վերնագիրը, կարծես թե, բնորոշել է «կանոնեալ ընթերցուածն» կամ «կարգ ընթերցուածին», որը փաստորեն նույն է ինչ «Կանոնք (Կարք) ընթերցուածոց» վերնագիրը: Վերոհիշյալ մեջ բերված հատվածի մեջ, որ խոսքը գնում է հայոց տոնացույցի մասին երկու կարծիք լինել չի կարող: Հարկ է նշել, որ Երուսաղեմի 121 թվահամարի ձեռագիրն ընդօրինակվել է հայոց ՈՒՍԱ (= 1192/3 թթ.) թվականին՝ 10-րդ դարում գրված նախնական գրչագրից, իսկ կազմվել է հայոց ՉԿԷ (= 1318 թ.) թվականին: Ձեռագրի կազմողի հիշատակարանում գրված է «... Յոգնայմեղս Մամթէոս ի գաւառէն Դարանաղեաց. ել եկեալ ի պահանջմանէ [քանքարացն] պատահեցաւ գրոցս որ ընթերցուածք կոչէ (ընդգծածը մերն է - Ռ. Վ.) ... Արդ կազմեցաւ սուրբ կտակքս ի թուին Հայոց ՉԿԷ (= 1318 թ.). ի սուրբ քաղաքն Երուսաղէմ ի դուռն սուրբ հրեշտակապետարաց...»<sup>2</sup>:

Ընդգծված բառերն ցույց են տալիս, որ դեռևս 1318 թ. «Կանոնք ընթերցուածոց»-ի պահպանել էր իր անվանումը, միայն «ընթերցուածք» ձևակերպմամբ:

Ասենք նաև, որ Երուսաղեմի 121 թվահամարի ձեռագրում գրված է. «Սահմի Ժ. Գրիգոր Լուսաւորչի ելքն ի Վիրապէն. է վեցերորդում շաբաթին»: Մեծ Պահքի 6-րդ շաբաթին երեք չեն նշել Գրիգոր Լուսաւորչի ելքը Վիրապից, ինչպես ցույց են տալիս հայոց տոնացույցերն ու թովմա Արծրունու շարունակողը, այլ Պենտեկոստից հաշված 14-րդ օրը, ուստի Սահմի 10-ով որոշվում է այն գրչագրի ժամանակը, որից արտագրվել է 121 թվահամարի ձեռագիրը այն է՝ 933 թ. կամ 947 թ., և այլն, որովհետև միայն 10-րդ դարում է նշվել Սահմի 10-ին Գրիգոր Լուսաւորչի ելքի Վիրապից՝ Պենտեկոստից հաշված 14-րդ օրը:

1 Սրբոյ հօրն մերոյ Մովսէսի Խորենացոյ մատենագրութիւն, Վեներիկ, 1865, էջ 337:

2 Հովհաննու Իմաստասիրի Աւձնեցոյ Մատենագրութիւնք, Վեներիկ, 1833, էջ 12:

3 Գիրք թղթոց, էջ 325:

4 Գիրք թղթոց, էջ 232:

1 Երուսաղեմի 1277 թվահամարի ձեռագիր, էջ 280ա-բ:

2 Մայր ցուցակ Ձեռագրաց սրբոց Յակոբեանց, հ. 1, կազմեց Ն. Եպս. Պողարեան Երուսաղէմ, 1966, էջ 352:

Ն. Ակինյանը նկարագրել է Հռոմի քահանայապետական Լեոնյան Հայ վարժարանի ձեռագրերը, որտեղ բերել է 3 (70)-րդ ճաշոցի հիշատակարանը «... Յամի ԶԾԱ (1302) Հայոց թուականի յանկ եղեալ աւարտեաց աստուածախոս Մատեանս, որ կոչի ընթերցուած...»<sup>1</sup>:

Այստեղ ևս ճաշոց ընդունված տերմինի փոխարեն մատյանը անվանվել է «Ընթերցուած»:

Երուսաղեմի 3153 թվահամարի Ճաշոցի հիշատակարանում գրված է. «Այդ գրեցաւ սա ի թվիս Հայոց ՊԶԲ (= 1432/3 թթ.) ... քանզի ունի սա զբոլոր մասունս տաւնից տէրունականաց՝ զոր սուրբ Հարքն Հաստատեցին, զընթերցուածսն զոր Յակոբոս եղբայր Տեառն եւ Կիւրեղ Երուսաղէմա Հայրապետ...» (Հատոր 9-րդ, էջ 401):

1194 թ. ընդօրինակված Տօնական անվանվող ժողովածուի հիշատակարանի մեջ կարդում ենք. «... բազմութեամբ ճառիցս, որ ի սմա կան արձանագրեալք Հաստատութեամբ Հաւատոյ. ընթերցուածոց դրութեան՝ տաւնական տաւնից տէրունականաց, եւ խաչակիր վկայից եւ սրբոց առաքելոց եւ մարգարէից. բովանդակեալ ի ծննդենէն Քրիստոսի մինչև յաւարտումն բովանդակ տարւոյն, որ է կատարումն ընթերցուածոցն տաւն սրբոց առաքելոցն, որոցն Որոտման»<sup>2</sup>:

Պակաս ուշագրավ է Մշո Տոնական ճառընտիրի հիշատակարանի վկայութիւնը, այն է՝ «... եւ պատշաճեալ յաղագս ըստ դրման ընթերցուածին, զոր ի սուրբ Յակոբայ եւ ի Կիւրղէ Հաստատեցաւ. ըստ նմին կարգին եղին զոր ի սմայս են կարգ եկեղեցականք, անուանելով Տաւնականք, յաղագս սկզբան տարոյն մինչև ի կատարումն նորա, որ ունի զընթերցումն գիշերային պաշտման, զտերունական տաւնից եւ զյիշատակ սրբոց մարգարէից եւ զառաքելոց, եւ մարտիրոսաց, Հայրապետաց, եւ թագաւորաց, յորում արարիչն աւրհնի յաւիտեանս»<sup>3</sup>:

Հիշյալ հիշատակարանների հեղինակները թեև տոնացույցը տոնական են անվանում, բայց չեն մոռացել «ընթերցուածոց» տերմինը:

Հետաքրքիր է նաև Տօնապատճառ ժողովածուների տվյալները, որտեղ «Տօնից պատճառ» և «Մեկնութիւն ընթերցուածոց» վերնագրերը համարժեք են նկատում և զուգահեռ օգտագործում, այսինքն նախկին «Մեկնութիւն ընթերցուածոց»-ը վերանվանվել է Տօնապատճառ:

Յայտնաբերված ժողովածուներում ևս վկայվել է «Գիրս ընթերցուածոց»-ը: Այն ինչ խոսք ստեղծվել է նախորդ շրջանի տեղեկությունների հիման վրա: Բերինք մեկ օրինակ: 4741 թվահամարի Յայտնաբերված ընդօրինակության մեջ, որը Զեռագրաց ցուցակի հեղինակները վերագրել են Տեր-Իսրայելին, «Քաղոց ժէ. Դեկտեմբեր ԻԵ. տօն է Դաւթի մարգարեի և Յակոբա առաքելոյն, զոր այն ազգիք ծնունդ առնեն և ոչ մեք» կանոնի տակ գրվել է. «Սա (Յակոբոս եղբայր Տեառն կամ առաքյալը - Բ. Վ.) կարգեաց զգիրս ընթերցուածոց և զտօնս տէրունականս և ասաց. Յունուարի 2 (6) զծնունդն Քրիստոսի և Լ (30) ամի ըզմկրտութիւն, ի նմին աւուր Յունուարի 2, որպէս և Ղուկաս վրկայ է և էր Յիսուս ամաց իբրև Լ-ից սկսեալ: Զայս Հաստատեաց և Կիւրեղ եպիսկոպոսապետն Երուսաղէմի, որ յաւելի գիրս ընթերցուածոց և զայլ տօնս» (էջ 146բ-147ա): Որից հետո գրել է Արտեմոնի «Գիրս ընթերցուածոց»-ի մասին, իհարկե, քննադատելով: Այստեղ ևս ավանդույթի համաձայն վկայվում է Հակոբ-Կյուրեղի ընթերցուածոցի մասին սակայն իրականում խոսքը գնացել է գործառնություն մեջ գտնվող «Կանոնք-Գիրս ընթերցուածոց»-ի մասին:

<sup>1</sup> Յուցակ հայերեն ձեռագրաց Հռոմի հայոց հիւրանոցի ի ս. Վլաս եւ քահ. Լեոնեան հայ վարժարանի կազմէ Լ. Ներսէս Վ. Ակինեան, Վիեննա, 1961, էջ 52:  
<sup>2</sup> Ա. Մաթևոսյան, Ազգ. աշխ., էջ 277-278:  
<sup>3</sup> Աճ, էջ 31:

Վկայութիւնները կարող ենք բազմապատկել, սակայն կարծում ենք բերվածն էլ բավարար է տոնացույցի վերնագրի մասին եզրակացություն գալու համար:

Վերոհիշյալ տեղեկությունները կասկած չեն թողնում, որ Սահակ կաթողիկոսը Երուսաղեմի տոնացույցի հայկական տարբերակը վերնագրել է «Կանոնք (Կանոնադրութիւնք) ընթերցուածոց» կամ «Գիր-Գիրս-Գիրք ընթերցուածոց»-ը: Նախընտրում ենք «Կանոնք ընթերցուածոց» վերնագիրը: Միջնադարի հայ մատենագիրները «Կանոնք ընթերցուածոց»-ը վերագրել են տարբեր հեղինակությունների մի կողմից՝ Հակոբ Տեառնաեղբորը, Մակար Երուսաղեմցուն և Կյուրեղ Երուսաղեմցուն, մյուս կողմից՝ Գրիգոր Լուսավորչին, Արիստակեսին և Սահակին:

Ուսումնասիրությունները ցույց են տալիս, որ «Կանոնք ընթերցուածոց»-ը, որն իբրև քրիստոնեական տոնացույց օգտագործվում էր Երուսաղեմում հավանաբար 4-րդ դարի վերջին և ակներևորեն 5-րդ դարի սկզբներին Սահակ կաթողիկոսը թարգմանեց հունարենից հայերեն 417 թվից հետո ստեղծված ընդօրինակությունից և մասնակի խմբագրեց 420-423 թթ. և դարձրեց Կովկասյան համաքրիստոնեական տոնացույց: Պատահական չէ, որ Հայոց սրբերից և ոչ մեկը չմտավ նրա տոնացույցի մեջ:

Հարկ է նշել, որ «Կանոնք ընթերցուածոց», «Կանոնադրութիւնք ընթերցուածոց», «Գիր ընթերցուածոց», «Գիրք ընթերցուածոց», «Գիրս ընթերցուածոց» վերնագրերը ինչպես տեսանք շարունակվեցին օգտագործել վաղ միջնադարի ընթացքում, սակայն Հայոց տոնացույցի հետագա խմբագրություններին տրվեցին տարբեր անվանումներ՝ Ճաշոց, Տօնական, Հոռոմադիր, Տօնանամակ, Տոնացոյց ըստ շաբաթուց և այլն: Այդ տերմինները և նրանց բովանդակությունը կքննարկենք Հայոց տոնացույցի զարգացման պատմությունը ներկայացնելիս: Այժմ համառոտ ասենք հետևյալը:

8-րդ դարի 10-ական թվականների վերջերում - 20-ական թվականների սկզբներին Հովհան Ծանեցին խմբագրեց «Կանոնք ընթերցուածոց»-ը: Այն հետագայում անվանվել է «Տաւնացոյց ըստ շաբաթուց»:

«Կանոնք ընթերցուածոց» և նրա համարժեք վերնագրերին ավելացված Ճաշոց տերմինը մտել է շրջանառության մեջ 8-րդ դարից ոչ շուտ, ավելի որոշակի 9-րդ դարի 2-րդ կեսից, իսկ Տօնականը՝ ավելի ուշ:

«Կանոնք ընթերցուածոց»-ը խմբագրեց Ատոմ Վարագեցին և նրա խմբագրությունը Հայտնի է Հոռոմադիր անվամբ: Հոռոմադիրն հուլյան ամսաթվերով կազմած տոնացույց է համապատասխան ընթերցվածներով: Այն Հայտնի է դարձել 832 թվահամարի ձեռագրի ընդօրինակության հիման վրա: Տոնացույցի ներքին տվյալներով և մատենագրական վկայություններով թվագրել ենք 992 թվականով: Պարզ է, որ Հոռոմադիր տերմինը մտավ այդ թվականից հետո:

11-րդ դարի վերջին և 12-րդ դարի սկզբներին Գրիգոր Վկայասերը, Գրիգորիսը և Կիրակոս Դրագարկեցին ստեղծեցին տոնացույցի նոր խմբագրություն նույնպես հուլյան ամսաթվերով և համապատասխան ընթերցվածներով, որին հեղինակները կոչել են նոր տերմինով, այն է՝ Տաւնանամակ: Վերջինս Հայտնի է դարձել 12-րդ դարի վերջի և 13-րդ դարի ընդօրինակություններով: Հիմնավորել ենք, որ այդ տոնացույցերը ժառանգել են Տօնանամակը և հետագայում մասամբ խմբագրվել են: Խմբագիրներից հատկապես Հայտնի է Ներսես Շնորհալին, որի մասին աներկբա հիշում են տոնացույցերից շատերը Պենտեկոստի տօնի օրվա հատվածում:

Այդ բնագրի հետագա խմբագրությունները Հայտնի են նաև այլ անվանումներով: Ն. Ակինյանի նկարագրած ձեռագրի 2-րդ նվիրատվական հիշատակարանի մեջ, որ գրվել է Հայոց

728 թվականին (= 1279-1280 թթ.) Գրիգոր Վկայասերի Տօնանամակը և Հայոց անշարժ տոմարի ամսաթվերով կազմած ճաշոցը անվանվել է Ժամագիրք<sup>1</sup>:

Երոսաղեմի 454 թվահամարի ճաշոցի, որտեղ առկա է Գրիգոր Վկայասերի և Հայոց անշարժ տոմարի ամսաթվերով բնագրի Հիշատակարանում գրում է. «... կարգաւ ի Տաւնանամակ Համախմբարանն յընթերցուած անդր Համառատեալ», որից հետո մեկ այլ տեղ գրում է. «... գժամագիրքս ասեմ՝ որ ճաշոց կոչի»<sup>2</sup>: Իսկ նույն գրչագրի ստացողի Հիշատակարանում գրված է. «... լուսազարդ Մատենի ընթերցուածոյս...» (էջ 432):

Հ. Տաշյանը նկարագրել է Վենետիկի կայսերական մատենադարանի Հայերեն ձեռագրերը, որի մեջ առկա է 16 թվահամարի գրչագիրը ընդօրինակված. «Ի թվաբերությանն արեթական տոմարիս Ռ. եւ ԿԲ ամի» (= 1612/3 թթ.), որի Հիշատակարանում գրված է. «Արդ անուանի Գիրքս ճաշոց, զի Հանապազոր ի ճաշոյն ընթեռնի այլև կոչի տարեգիրք, զի զբոլոր տարին զընթերցուածսն յինքեան ունի»<sup>3</sup>:

Երոսաղեմի 1670 թ. ընդօրինակված 5 թվահամարի գրչագիրն Հիշատակարանում անվանվել է. «Տարոյ գիրք», իսկ 16 թվահամարի գրչագիրն իր Հիշատակարանում ունի՝ «Գիրքս որ կոչի Տարեգիրք»<sup>4</sup>:

Վենետիկի 169 թվահամարի գրչագրի Հիշատակարանում այն անվանվել է «Կիսաճաշոցիս», իսկ 216-ը իր Հիշատակարանում գրչագիրն «... անուանի սա ընթերցուած»: 936 թվահամարի ստացողն անվանում է «Սուրբ գրոցս, որ է ճաշագիրք», 6236-ը՝ «Ճաշոցիս», 6301-ը՝ «Ճաշու Գիրկս», իսկ 7741 թվահամարի գրչագիրն սկսում է «Յաղագս խնդրոյ ընթերցուածին» վերնագրով, որի մեջ օգտագործում է «ասի կարգ ընթերցուածոցն...» արտահայտությունը, իսկ նորոգման Հիշատակարանում՝ «այս ճաշոցն, որ նորոգեցա»: 4916 թվահամարի գրչագրի ուշ գրված ստացողի Հիշատակարանում այն անվանում է «Սուրբ ճաշու գիրքս»: Հիշյալ բնագրի անվանումների պատկերը պատմական տարբեր ժամանակների Համար ակնհայտորեն պարզ է:

Պահպանված Հայերեն գրչագրերը (այն է՝ Երևանի 985, Փարիզի 44 և Երոսաղեմի 121 թվահամարների ձեռագրեր) Հնարավորություն են տալիս ամբողջական պատկերացում կազմել Հայոց քրիստոնեական տոնացույցի հետ և կատարել նրա բովանդակության վերլուծությունը: Ծանոթանանք «Կանոնք ընթերցուածոց»-ի տոնական տարվան:

Տաւն սրբոյ Մննդեանն և Յայտնութեանն կատարի Յունուարի Զ (6). առաջին աւուրն...

յերկրորդ աւուրն ծննդեանն...

(յերկրորդում աւուրն ժողովին ի մատրանն սրբոյն Ստեփանոսի)

յերրորդ աւուրն ծննդեանն...

Ի չորրորդ աւուրն ծննդեանն...

Հինգերորդ աւուրն ծննդեանն...

Վեցերորդ աւուրն ծննդեանն...

յեւթներորդ աւուրն ծննդեանն...

յութերորդ աւուրն ծննդեանն եւ թլփատելոյ Տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի...

...Յամենայն յիշատակս սրբոց մարտիրոսացս այս կանոն կատարի:

Յունուարի ամսոյ որ աւր ԺԱ (11) յիշատակ Պետրոսի եւ Աբեսողոմայ...

Յունուարի ամսոյ որ աւր ԺԷ (17) յիշատակ սրբոյ Անտոնի անապատականի...

Յունուարի ամսոյ որ աւր ԺԹ (19) յիշատակի Թեոդոսի Թագաւորի մեծի...

Փեբրուարի ամսոյ որ աւր ԺԴ<sup>1</sup> (14) Քառասնորդք ծննդեանն Տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի...

Մարտ ամսոյ որ աւր Թ (9) յիշատակ Քառասնիցն

Մարտի ամսոյ որ աւր ԺԸ<sup>2</sup> (18) յիշատակ Կիւրղի եպիսկոպոսի Երոսաղէմացոյ...

(Ընթերցուած վարդապետութեան ի գիր անկելոյն ի սուրբ Քառասնորդսն եւ Հաներձելոցն կնիք առնուլ...)

Ընթերցուած որ ի սուրբ Քառասնորդսն կատարի...):

յԱռաջնումն շաբաթու պահոցն չորեքշաբաթի աւր...

եւ ի նմին շաբաթու ուրբաթ աւր...

յԵրկրորդում շաբաթու պահոցն

երկուշաբաթի աւր...

երեքշաբաթի աւր...

Չորեքշաբաթի աւր...

Հինգշաբաթի աւր...

Ուրբաթ աւր...

յԵրրորդում շաբաթու Քառասնորդացն չորեքշաբաթի...

ուրբաթ աւր...

Ի չորրորդումն շաբաթու Քառասնորդացն չորեքշաբաթի աւր...

ուրբաթ աւր...

Ի Հինգերորդ շաբաթուն (Քառասնորդացն) աւր...

ուրբաթ աւր...

Ի վեցերորդ շաբաթուն Քառասնորդացն...

Չորեքշաբաթի աւր...

Ուրբաթ աւր...

(կատարեցա կանոն վեցերորդ շաբաթու սուրբ Քառասնորդացն):

յԱռաջ քան ցվեց աւրինաւոր Զատիկին շաբաթն աւր ի վեցերորդ ժամու ժողովին ի Ղազարիովն (Ղազարաւն)...

Ի Կիւրակեի աւուրն Արմաւենաց ողոգոմին...

(Ի նմին աւուր ինն ժամու...):

Երկուշաբաթի աւր ի Զատիկի պահին...

Երեքշաբաթի աւր...

Չորեքշաբաթի աւր...

Հինգշաբաթի աւր՝ Հին Զատիկին...

<sup>1</sup> Տե՛ս Ցուցակ հայերեն ձեռագրաց Հոռոմի հայոց հիւրանոցի ի Ս. Վլաս եւ քառ. Լևոնեան հայ վարժարանի, Վիեննա, 1961, էջ 53-55:

<sup>2</sup> Տե՛ս Եմի ձեռագրացուցակում, հ. 2-րդ, էջ 43:

<sup>3</sup> Ցուցակ հայերեն ձեռագրաց, Կայսերական Մատենադարանին ի Վիեննա, Վիեննա, 1891, էջ 23-24:

<sup>4</sup> Երոսաղեմի ձեռագրացուցակ հ. Ա. էջ 53-58 և 99-103:

<sup>1</sup> Ֆ. Կոնիբերի մոտ 15, որը տպագրական սխալ է:

<sup>2</sup> Գրչագրերում առկա է նաև 12 (ԺԲ), որը գրչական սխալ է:

Այգուկն ուրբաթուն...  
Շաբաթն աւր երեկուն Ջատկին...  
Կիւրակէի Ջատկին...  
Երկուշաբաթի աւր  
Երեքշաբաթի աւր...  
Չորեքշաբաթի աւր...  
Հինգշաբաթի աւր...  
Ուրբաթ աւր...  
Շաբաթ աւր  
Կիւրակէ աւր...

Ընթերցուածք խորհրդածութեան զայգոյ Ջատկին... են զՋատկի շաբաթն այսպէս յանէ մինչեւ Ջատկի զատիկն, որպէս եւ ի կանոնի ցուցանէ:

(Եւ յետ ութ աւուր Սուրբ Ջատկին երկուշաբաթի աւր...):

Մայիս ամսոյ որ աւր մի է Երեմիայի մարգարէի յիշատակի Յանաթովն...

Մայիս ամսոյ որ աւր է (7) ժողովին առաջ սրբոյ Գողգոթայի զաւրն երեւելոյ Նշանի Խաչին յերկնից...

Մայիս ամսոյ որ աւր Թ (9) է ի սուրբն Բեթղեմ(է)մ մանկանցն սպանելոց ի Հերովդէ թագաւորէ...

Մայիս ամսոյ որ աւր ԻԲ (22) յիշատակ Կոստանտինոսի թագաւորի<sup>1</sup>...

Սուրբ վերանալոյ տեառն Յիսուսի Քրիստոսի յերկինս յաւուրն Քառասնորդի յետ Ջատկի...

յԱւուր սրբոյ Պենտեկոստէին կիւրակէն աւր...

Յունիս ամսոյ որ աւր Ը Ժ<sup>2</sup> (10) Դիր Ջաքարիայ մարգարէի...

Յունիս ամսոյ որ աւր ԺԴ (14) Եղիսէի մարգարէի...

Յուդիս ամսոյ որ աւր երկու Տապանակին... (որ ի Կրիաթարիմա)...

Յուդիս ամսոյ որ աւր վեց Դիր Եսայայ մարգարէին...

Աւգոստոս ամսոյ որ աւր մի է. Մակաբէացւոցն... վկայութիւն Եղիազարու և Շրմոնեայեւ եւթըն որդիոյն նորա...:

Աւգոստոս ամսոյ որ աւր ԺԵ (15). Մարեմայ Աստուածածնի...:

Աւգոստոս ամսոյ աւր ԻԳ<sup>3</sup> (23) Թովմայի առաքելոյ եւ այլոց սրբոյ ի Բեթփագէ...

Աւգոստոս ամսոյ որ աւր ԻԹ<sup>4</sup> (29). Յովհաննու Մկրտչի...

Սեպտեմբերի ամսոյ որ աւր ԺԳ<sup>5</sup> (13). Նաւակատիք սրբոյ տեղեացն Երուսաղէմի. զութ աւր լինի:

զԱռաջին աւրն ի սուրբ Յարութեանն... եւ ի վաղիւ անդր յերկրորդում աւուրն ժողովին ի Սուրբ Մատրանն եւ նոյն կանոն կատարի եւ ի նմին աւուր ցուցանեն զպարտուական կենսատու Սուրբ Խաչն ամենայն ժողովոցն:

Սեպտեմբեր ամսոյ, որ աւր ԺԵ (15) Փիղիպպոսի առաքելոյ...

Նոյեմբերի ամսոյ, որ աւր Լ (30). Անդրեայ առաքելոյ...

Դեկտեմբերի ամսոյ, որ աւր ԻԵ (25). Դաւթի եւ Յակոբ. զոր յայդ քաղաքս Մնունդ առնեն...

Դեկտեմբերի ամսոյ, որ աւր ԻԶ<sup>1</sup> (26). յիշատակ սրբոյ Ստեփանոսի...

Դեկտեմբերի ԻԹ (29). Յակոբա և Յովհաննու առաքելոյ...

Անցնենք տոնացուցի բովանդակութեան վերլուծութեանը:

Ինչպես նկատելի է տոնական տարին սկսել է Հունվարի 6-ով: Այդ ավանդույթը, Հետագա որոշ շեղումներով, ընդունեցին Հայոց բոլոր տոնացուցեքը, որոնք խմբագրվեցին Հաջորդ դարերում:

Բացի անհատական հիշատակի օրերից, մյուս մարտիրոսների և սրբերի հիշատակի օրեր էին նախատեսվել Հունվարի 13-ին, Մարտի 9-ին և Օգոստոսի 23-ին: Ուշագրավ է, որ «յամենայն յիշատակս սրբոց մարտիրոսաց» Հունվարի 13-ը, 5-րդ դարի կեսերից Հետո վերանվանվեց «մատուռ», իսկ 6-րդ դարի կեսերից՝ «Մատուռնս»:

Ինչպես նկատելի է Տոնացուցում անշարժ տոնվող տոնական օրերն ունեն Հուլյան տոմարի ամսաթվեր, իսկ շարժական տոները՝ ոչ: Շարժական տոների ժամանակը կախված էր յուրաքանչյուր տարում Ջատկի տոնի կատարման օրվանից, որից և որոշվում էր մի կողմից Մեծ Պահքի սկիզբը, մյուս կողմից Պենտեկոստի: Ջատկի օրը որոշել է լուսնի 19-ամյա պարբերաշրջանի հիման վրա, որը կքննարկեն այլ առիթով: Այստեղ միայն ասենք, որ Սահակ կաթողիկոսի և Մաշտոց վարդապետի հանձնարարութեամբ 429 թ. Հովսեփ Պաղնացին կամ Եզնիկ Կողբացին ասորերենից հայերեն թարգմանեցին Անդրեասի 200-ամյա տոմար-տոնացուցը, որը ներդրվեց Հայոց քրիստոնեական տոնական տարվա մեջ, որոշելու համար հատկապես Մեծ Պահքի, Ջատկի և Պենտեկոստի ամսաթվերը:

Տոնացուցի տոնելի շարքից երևում է, որ այն հիմնականում նվիրված էր Քրիստոսին և համընդհանուր քրիստոնեական սրբերի հիշատակին: Պարզ է, որ Սահակ կաթողիկոսը այն կատարել է համակովկասյան առաջնութիւնը պահելու միտումով, միաժամանակ չեզոքութիւն պահպանելու ասորական և բյուզանդական եկեղեցիների հանդեպ: Սահակ կաթողիկոսը հիմնականում չկատարեց տոնացուցի տեղայնացում: Այն կազմավորման սկզբնական փուլում էր, որը սկսվել էր դեռևս չորրորդ դարից և առաջին էտապն ավարտվեց 8-րդ դարի սկզբներին (719-726 թվականներին), երբ Հովհան Օձնեցին ստեղծեց տոնացուցի նոր խմբագրութիւն, այն է՝ «Տաւնացուց ըստ շաբաթուց»-ը: Հայոց քրիստոնեական տոնացուցի տարեկան շրջանը, ինչպես նկատելի է հիմնվել է Հուլյան անշարժ տոմարի վրա: Այն օգտագործվեց նաև Հետագայում: Ասենք նաև, որ հենց սկզբից զուգահեռաբար կիրառվում էին Հայոց շարժական տոմարը և Հուլյանը: Նրանք փոխկապակցված էին, որը երևում է «Կանոնք ընթերցուածոց»-ի մեջ վկայված Մայիս-Ահեկան համադրումից, որով և թվագրեցինք տոնացուցը:

Մեզ, խիստ ասած, հայտնի չէ, թե 4-րդ դարում գործող Հայոց քրիստոնեական տոնացուցը ինչ տոմար է կիրառել, թեև Բուզանդարան պատմութեան հեղինակի մի հաղորդումից

1 Այս հատվածը բացակայում է Ֆ. Կոնիքերի հրատարակության մեջ:  
2 Հուլիս 10-ի փոխարին Ֆ. Կոնիքերի հրատ. մեջ՝ 27:  
3 Օգոստոս 23-ի փոխարեն առկա է օգոստոս 24-ը:  
4 Օգոստոս 29-ի փոխարեն առկա է հունվար 29-ը, որը գրչական սխալ է:  
5 Սեպտեմբեր 13-ի փոխարեն առկա է սեպտեմբեր 23-ը, որը հետագա փոփոխության արդյունք է:

1 Դեկտեմբեր 26-ի փոխարեն առկա է նաև դեկտեմբեր 27-ը, որը փոփոխության արդյունք է, սակայն առայժմ պարզ չէ, թե որ ամսաթվին պետք է նախապատվություն տրվի: Դեկտեմբերի 26-ը դեկտեմբերի 25-ին կատարված Քրիստոսի ծննդյան օրը կատարելու արդյունք է:

կապված Ամանորեան-Նավասարդեան տոներին և Հովհաննես Մկրտչի հիշատակի օրվա հետ, որը կիրակի էր, երևում է, որ կիրառվել է անշարժ տոմար՝ հավանաբար հուլյանը:

Սահակ կաթողիկոսը 5-րդ դարի 20-ական թվականներից հուլյան տոմարը վերջնականապես ներդրեց հայոց եկեղեցական տոնական տարվա մեջ և այդ ավանդույթը շարունակվեց հետագայում: Փաստորեն հայոց և հուլյան տոմարները զուգահեռաբար օգտագործվել են Հայաստանում: Հուլյան տոմարի տարածման պատմության համար ինչ խոսք կարևոր է 5-րդ դարում, թերևս 4-րդ դարից, նրա կիրառումը փաստելը Հայաստանում, իսկ հայոց համար կարեւորն այն է, որ եկեղեցական տոնացույցի տարին հիմնվեց հուլյան տոմարի վրա և տարվա սկիզբն ընդունվեց Հունվար 6-ը՝ Քրիստոսի Մենդեան և Աստվածայայտնութեան տոնական օրը:

Քննարկվող տոնացույցում անհամեմատ թույլ է զգացվում շաբաթական շարքի գոյությունը, որը հիմք էր «Տոնացույց ըստ շաբաթուց»-ների: Այն առկա է միայն տարվա, այն է՝ Մեծ Պահքի, Չատկի տոնական շարքի և Համբարձում-Պենտեկոստի օրերի մեջ: Դեռևս բացակայում է Պենտակոստե-Վարդավառ հատվածը, որը հետագայում պետք է հարստացներ հայոց եկեղեցական տոնական տարին: Ինչպես նկատելի է, Հայոց տոնացույցում բացակայում են տեղական սրբերի հիշատակի տոնական օրերը: Հայկական սկզբնաղբյուրների քննությունից պարզ է դառնում, որ տեղական և համաքրիստոնեական այլ սրբերի տոնական օրեր, թեև առկա է 4-րդ դարում և 5-րդ դարի սկզբներին, սակայն դրանք ընդգրկվում են հետագայում խմբագրված տոնացույցերում աստիճանաբար, բացի այդ սրբերի հիշատակը տոնում էին լոկալ ձևով և ունեին տեղայնացված բնույթ՝ նման նախաքրիստոնեական աստվածների:

Այսպիսով Սահակ կաթողիկոսի թարգմանած և մասամբ խմբագրած տոնացույցի հիմքում դրվեց Երուսաղեմի եկեղեցիներում կատարվող ծիսատոնական համակարգը: Այն առաջին հայոց քրիստոնեական տոնացույցն էր, որ գրված էր հայերեն լեզվով:

## ԳԼՈՒԽ Գ

### ՈՐՈ՞ՆՔ ԵՆ ՍԱՀԱԿ ԿԱԹՈՂԻԿՈՍԻ ԿԱՆՈՆԱԿԱՆ ՀՐԱՄԱՆՆԵՐԸ ԵՎ ԹՂԹԵՐԸ

Միջնադարի գործիչները (Սահակ Չորափորեցի, Հովհան Օձնեցի, Ներսես Շնորհալի, Մխիթար Գոշ, Կոստանդին Բարձրաբերդցի, Կիրակոս Գանձակեցի), ինչպես և 18-20-րդ դարերի ուսումնասիրողները (Միքայել Չամչյան, Ղևոնդ Ալիշան, Մաղաքիա Օրմանյան, Նորայր Բուզանդացի, Ներսես Մելիք-Թանգյան, Հակոբոս Տաշյան, Յոհան Թորոսյան և Վազգեն Հակոբյան) գտել են, որ Սահակ կաթողիկոսի անվամբ մեզ հասած կանոնական խմբերի հեղինակը հենց ինքը՝ Սահակ Պարթևն է: Ա. Մախն և Ֆ. Կոնիբերը կասկած են հայտնել այդ կապակցությամբ, իսկ Հովսեփ Գաթրճյանը և Ներսես Ակինյանը ժխտել են հրատարակված կանոնների Սահակ կաթողիկոսին պատկանելը, մի դեպքում այդ կանոնները դնելով 6-րդ դարի առաջին տասնամյակներին կամ Սահակի մահից 100 տարի հետո կամ 533-690 թթ.-ի միջև կամ նույնիսկ 8-րդ դարում (Հ. Գաթրճյան), մյուս դեպքում 7-րդ դարի առաջին քառորդին (Ն. Ակինյան):

Ինչպես կտեսնենք, երկու կարծիքներն էլ սխալական են: Սահակ կաթողիկոսի անվամբ կանոնական հրամանները կամ թղթերը մեզ են հասել հիմնականում կանոնագրքերի մեջ՝ կանոնական խմբերով: Դրանք թեև կանոնագրքում նոր վերնագրեր են ստացել, այն է՝ «Կանոնք Սահակայ Հայոց Հայրապետի գլուխ ՄԵ» և «Սրբոյն Սահակայ Հայոց կաթողիկոսի գիր աւանդութեան... գլուխ Ա», սակայն պահպանել են նախնական վերնագրերը հիմնականում ենթավերնագրերի (նաև որոշ վերնագրերի) մեջ, թեև դրանք նույնպես ենթարկվել են խմբագրման: Այնուամենայնիվ, Սահակ կաթողիկոսի անվամբ հայտնի են հետևյալ կանոնական խմբերն իրենց ենթավերնագրերով՝

1. Յաղագ քորեպիսկոպոսաց թէ ո՞րպես պարտ է զկանոնական կարգն հաստատուն պահել յեկեղեցիս:
2. Նորին կարգ քահանայից առ ժողովրդականս եւ նոցին ժողովրդականաց հնազանդութիւն եւ կարգ ուղղութեան առ քահանայս:
3. Նորին սրբոյն Սահակայ, թէ որպէս սահմանեցաւ կարգ ուխտի և որոշման վանաց:
4. Նորին թէ որպէս պարտ է եպիսկոպոսաց ունել զընտանիս սրբոյ եկեղեցւոյ:

<sup>1</sup> Սուիերք Հայկականք, Բատոր Բ., Վեներիկ, 1853, էջ 71-134, Ներսես Վ. Մելիք-Թանգյան, Հայոց եկեղեցական իրավունք, Շուշի, 1903, էջ 517-531, 523-558, A. Mai, Scriptorum veterum nova collectioe vaticanis codicibus edita, t.x, 2, Romae, 1838, p. 276-290 (առաջաբան, p. XXI); F. C. Conybeare, The Armenian Canons of st. Sahak, catholicos of Armenia (390-439 A.D.), The American Journal of Theology, 2, 1894, p. 828-848 (տե՛ս Հանդէս Ամսօրեայ, 1899, էջ 59, Հ. Մ. Չամչյան, Պատմութիւն Հայոց, Բ. Ա., էջ 511-512, Մխիթարայ Գօշի Դատաստանագիրք Հայոց, Բրատ. Վ. Վ. Բաստամեանց, Վաղարշապատ, 1880, էջ 95, 204-205, Կիրակոս Գանձակեցի, Պատմութիւն, Վեներիկ, 1805, էջ 15, 172, Ղ. Ալիշան, Յուշիկք, Ա, էջ 330, Մ. Օրմանյան, Ազգապատում, Բ. Ա, էջ 238-284, Հ. Յ. Գաթրճյան, Սրբազան Պատարագամատոց Հայոց, 1897, էջ 141 ծան. 103, էջ 323, 733, էջ 231 ծան. 38, էջ 281, Նորայր Բյուզանդացի, Կորին վարդապետ եւ նորին թարգմանութիւնք, Տփլիս, 1900, էջ 168, ծան. 1, Հ. Յ. Տաշյան, Վարդապետութիւն Առաքելոց անվաներական կանոնաց մատեանը, Վիեննա, 1896, էջ 51 և այլն, Հ. Յ. Թորոսյան, Կանոնք Ս. Սահակայ, Բազմավեպ, 1938, էջ 86-96, Ն. Ակինյան, Քննութիւն Ս. Սահակի վերագրուած կանոններու և Հայոց եկեղեցական տարին Է դարու սկիզբը, Վիեննա, 1950, էջ 99 կայլն: Կանոնագիրք Հայոց, Բատոր Ա և Բ (Բրատարակութեամբ Վ. Հակոբյանի), Երևան, 1964 և 1971 թթ.:



5. Նորին թէ որպէս պարտ է եպիսկոպոսաց պահել զգանձս եկեղեցոյ կամ որոց որպէս մատակարարէ:

6. Սրբոյն Սահակայ Հայոց կաթողիկոսի գիր աւանդութեան յաղագս կարգի սպասաւորաց սրբոյ եկեղեցոյ եւ պտղոցն ժողովրդականաց ընծայելոց ի տուն Աստուծոյ, գլուխ Ա:

Պարզ է, որ վերոհիշյալ կանոնական խմբերում (և ոչ միայն) են գտնվում Սահակի կանոնները ավելի ճիշտ կանոնական հրամանները կամ թղթերը, քանի որ մի կողմից Շահակի վանի ժողովի (445 թ.) վավերագրերում, որպես ժամանակակցի վկայություն, ակնարկվել են հատկապես Սահակի և Մաշտոցի կանոնական գործունեությունը, մյուս կողմից Սահակ Չորափորեցին (7-րդ դարի վերջին քառորդ) օգտվել է Սահակի կանոնական թղթերից դրանք համարում է «կանոնական հրաման սուրբ հօրն Սահակայ» մինչև Հովհան Օձնեցու կանոնագրքի մեջ մտնելը:

Տեսնենք կարող են վերոհիշյալ կանոնական խմբերը դասդասել, գատել իրարից: Առկա կանոնագրքերի ընդօրինակությունների մեջ դրանք ունեն տարբեր հերթականություն: Հովհան Օձնեցին Սահակին վերագրված կանոնները չի դասակարգել ըստ եկեղեցական աստիճանների, իսկ որոշ ձեռագրերում այն դասավորված է ըստ եկեղեցական աստիճանավորման սկզբունքի՝ վերից վար: Ահա այս վերջին սկզբունքն էլ նկատի ունենալով Սահակի կանոնների առաջին հրատարակիչ Ղ. Ալիշանը և նրան հետևած Ն. Ակինյանը և Վ. Հակոբյանը փորձել են ենթադրել, որ «Յաղագս քորեպիսկոպոսաց...» (1) ենթավերնագիրը կրող կանոնախմբին նախորդել է «Նորին թէ որպէս պարտ է եպիսկոպոսաց...» (4) ենթավերնագիրը կրող կանոնախումբը: Նկատենք, որ այդ դեպքում հաջորդ ենթավերնագիրը կրող «Նորին թէ որպէս...» (5) կանոնախումբը դուրս է ընկնում համարակալումից կամ լավագույն դեպքում ստացվում է, որ այդ երկու հատվածներն էլ պետք է նախորդած լինեին «Յաղագս քորեպիսկոպոսաց...» ենթավերնագիրը կրող հատվածին, սակայն վերջինին նախորդելու այսպես կոչված «ապացույցները» նրանք գտել են 4-րդ և ոչ թե 5-րդ ենթավերնագիրը կրող բնագրի մեջ, այն է՝ «Զի սրբոց բարեպաշտաց եւ առաքինութեամբ պայծառացելոց պարտ է հաւատալ զպատիւ կարգի պաշտմանս այսորիկ, վերագոյն ճառեցաւ ի մէնջ...»: Հիշյալ նախադասության մեջ «վերագոյն ճառեցաւ ի մէնջ»-ը պետք է գրված լիներ ոչ թե 4-ի, այլ 5-ի մեջ, որպեսզի նրանց ենթադրությունը հիմնավորվեր: Բացի այդ այնտեղ խոսվում է ընդհանրապես Հայոց եկեղեցու «կարգի պաշտմանս» մասին, որն ավելի բնորոշ է «Նորին կարգ քահանայից...» ենթավերնագիրը կրող բնագրին, ուստի մեզ թվում է ավելի հիմնավոր, որ «վերագոյն ճառեցաւ ի մէնջ»-ը, այսինքն՝ «Յաղագս քորեպիսկոպոսաց...»-ը նախնական բնագրում հաջորդել է «Նորին կարգ քահանայից...»-ին: Մինչև հիշյալ բնագրերի զուգահեռ հատվածներ համադրելը ասենք, որ «Նորին կարգ քահանայից...» ենթավերնագրի վերջին հատվածը չի ավարտվում սովորական ձևով, այն է՝ «...նմանութիւն բերել յանձինս հրեշտակական վարուց, աւտարասիրութիւն եւ եղբայրասիրութիւն»<sup>1</sup>, մինչդեռ «Յաղագս քորեպիսկոպոսաց...» ենթավերնագրի վերջը ավարտ է նշանակում, այն էլ վաղագույն ձևակերպմամբ. «Շնորհաւք եւ մարդասիրութեամբ տեառն մերոյ եւ փրկչին Յիսուսի Բրիստոսի»<sup>2</sup>:

Այժմ բերենք «Նորին կարգ քահանայից...» և «Յաղագս քորեպիսկոպոսաց...» ենթավերնագրերի մեջ պարունակող հատվածները զուգահեռաբար:

<sup>1</sup> Կանոնագիրը Հայոց, հ. Ա, էջ 386:

<sup>2</sup> Կանոնագիրը Հայոց, հ. Ա, էջ 375:

Նորին կարգ քահանայից...

Եղբարց սիրելեաց երիցանց եւ վանականաց, որպէս ամբաստանութիւն եղիտ առ մեզ ի բազում տեղիս ժողովրդականաց զքահանայից թէ որպէս ծուլութեամբ ունի զկարգ եկեղեցու պաշտման եւ աղաթից, եւ զայլ ամենայն կարեւոր առաջնորդութիւն... (ընդգծումը մերն է - Ռ. Վ.)

(Կանոնագիրը Հայոց, հ. Ա, ԸԼԲ (ԸԼԸ), ԺԳ, էջ 375):

Վերը հիշված երկու բնագրերի մեջ խոսքը գնում է Հայոց եկեղեցու կարգի պաշտման մասին և ընդգծված նախադասությունները լիովին համապատասխանում են իրար և «կարգ պաշտմանս այսորիկ վերագոյն ճառեցաւ ի մէնջ»-ը ցույց է տալիս, որ «Յաղագս քորեպիսկոպոսաց...» ենթավերնագիրը նախորդել է «Նորին կարգ քահանայից...» ենթավերնագրին: Կարծում ենք, որ «Նորին կարգ քահանայից...»-ի սկիզբը, այն է՝ «Եղբարց սիրելեաց երիցանց եւ վանականաց...», իբրև մուտք է ծառայել այդ կանոնական թղթերի համար:

Վերջապես մենք այն տպավորությունն ենք ստանում, որ «Նորին կարգ քահանայից...» և «Յաղագս քորեպիսկոպոսաց...» ենթավերնագրերով բնագրերը թե՛ լեզվական, թե՛ ոճական առումով նույն հեղինակի ստեղծագործության տարբեր մասերն են, իսկ «Յաղագս քորեպիսկոպոսաց...» և «Նորին թէ որպէս...» աշխատանքները թե՛ լեզվական, թե՛ ոճական տեսակետից միանգամայն տարբեր հեղինակների են պատկանում, դեռ ավելին, դրանք բոլորովին տարբեր ժամանակի արտադրանքներ են, որի մասին խոսք կլինի քիչ հետո:

Այսպիսով, Սահակին վերագրվող կանոնական խմբերի մեջ առանձնանում են երկու ենթավերնագիր կրող բնագրեր, որոնք ոչ միայն լեզվական և ոճական առումներով իրար համարժեք են, այլ նախնական բնագրում դասավորված են եղել սկզբից «Նորին կարգ քահանայից...»-ը, ապա՝ «Յաղագս քորեպիսկոպոսաց...»-ը: Սրանք մենք համարում ենք Սահակ կաթողիկոսի կանոնական թղթերը կամ «կանոնական հրաման(ք) սրբոյ հօրն Սահակայ», ինչպես նշել է Սահակ Չորափորեցին: Ընդ որում դրանց Սահակ կաթողիկոսին պատկանելը հիմնավորվում է ոչ միայն լեզվական, ոճական և վերը կատարած տեքստաբանական քննությամբ, որ մենք համարում ենք երկրորդական, (եթե չգտնվեին ավելի զորավոր փաստեր), այլև աղբյուրագիտական նյութերով: Վերջինս, ինչ խոսք, որոշիչ է տվյալ հարցում: Ներկայացնենք մեր փաստարկումները պատմական հակառակ հաջորդականությամբ:

Յովհան Օձնեցու գրած կանոնները, հատկապես մկրտության ձեթի մասին և Սահակ կաթողիկոսի նույնանուն կանոնը համարժեք են, սակայն Հ. Օձնեցին չի տալիս Սահակ կաթողիկոսի անունը, այլ ասում է ինչպես հրամայված է (Նախնիների կողմից), թեև Սահակի կանոնները վերնագրել է «Կանոնք Սահակայ Հայոց Հայրապետի գլուխ ՄԵ» կամ «Սրբոյն Սահակայ Հայոց Հայրապետի»: Դրան հակառակ Սահակ վերջինը (ըստ Օձնեցու), այն է՝ Սահակ Չորափորեցին հիշատակում է կանոնական հրամանի հեղինակին՝ «Սուրբ հաւրն Սահակայ»: «Հարցմունք կանոնական Յովհաննայ Սիւնականի քաղաքաց եւ առնթերադրեալ պատասխանիք նմին Սահակայ Հայոց կաթողիկոսի եւ նորին աթոռակցաց եպիսկոպոսաց բազմաց» վերնագիրը կրող բնագրի «Վասն յաւելուածոյ ձիթոյն» (ԺԴ կանոն) ենթավերնագրի հարց ու պատասխանի մեջ գրված է. «Հարցումն. Թէ պա՞րտ է յայնմ ձիթոյ յաւելուլ ի մկրտութեան ձեթն եւ այնու կնքել զմարդիկն կամ թէ բնաւ պարտից յաւելուածովք վարել:

Յաղագս քորեպիսկոպոսաց...

Զի սրբոց բարեպաշտաց եւ առաքինութեամբ պայծառացելոց պարտ է հաւատալ զպատիւ կարգի պաշտմանս այսորիկ վերագոյն ճառեցաւ ի մէնջ... (ընդգծումը մերն է - Ռ. Վ.)

(Կանոնագիրը Հայոց, հ. Ա, ԾԻ (ԾԾԶ), Ա, էջ 368):

Պատասխանի. Ոչ է պարտ վարել յաւելուածովք, զի ունայնանայ շնորհն եւ յանգիտութիւն կրթի, այլ պարտ է յամենայն տարւոջ ի հայրապետէն ընդունել, ըստ կանոնական հրամանի սուրբ հաւրն Սահակայ»<sup>1</sup>:

Մկրտութեան ձեթի կանոնը գտնուած ենք «Նորին (Սահակի - Ռ. Վ.) կարգ քահանայից...»-ի Ի (20) կանոնի մեջ. «Եւ յամենայն տեղեաց մերոյ իշխանութեան, յամենայն ամի գկնի սրբոյ Զատկին, զիւղ մկրտութեանն հարկաւորութեամբ բերցնն առ մեզ քահանայք եւ աստի ի մեզէ ընկալցին աւրհնութիւն իւղոյն: Եւ անձամբ մի աւրհնեսցնն ի տունս իւրեանց, որպէս սովորեցին ոմանք ի տգիտութենէ վասն զի ոչ է իշխանութիւն այդ քահանայից այլ եպիսկոպոսաց գործ է»<sup>2</sup>:

Այս վերլուծութիւնը ցույց է տալիս, որ մինչև 7-րդ դարի վերջին քառորդը այդ կանոնը եղել է Սահակ կաթողիկոսի կանոնական հրամանների կամ թղթերի մեջ:

Բերենք հաջորդ փաստը: Վերջերս հրատարակված մեր աշխատութեան մեջ ցույց ենք տվել, որ «Կանոնք առաքելական»-ը կամ «Վարդապետութիւն առաքելոց»-ը թարգմանվել-խմբագրվել է 547 թվականին Աբդիշոյի, Ներսեսի և Ներշապուհի կողմից: Այդ աշխատանքի մեջ կան ավելացրած, այսինքն խմբագրված հատվածներ, որտեղ թարգմանիչ-խմբագիրները օգտվել են Սահակի կանոնական թղթերից:

Բերենք այդ հատվածները զուգահեռաբար:

Յաղագս քորեպիսկոպոսաց

Ը. Իսկ զպոռնկորդիս եւ որ յերկրորդացն եւն հաւասար մինչեւ յերրորդ ծնունդն ըստ առաջին կանոնաց (օրենք ԻԳ) հետի կացցեն ի կարգէն եւ ի շնորհացն. զի պարկեշտ եւ սուրբ եւ աներկեան եղիցի ուխտ պաշտօնէից Աստուծո...

Չի թէ Ղեւտական ազգն այնպիսի պատուէր ընկալաւ սուկալի եւ զգուշաւոր անարատ սպասաւորութեան, որչափ եւս առաւել այժմ քո եւն արժանաւոր փութոյ ըստ Պաւղոսի վկայութեան: (Կանոնագիրք Հայոց, հ. Ա, էջ 371)

Կանոնք առաքելական կանոն ԺԲ (խմբագրված հատված)

...Չպոռնկեալսն, զշնացեալն եւ զայլագործսն յերիցութիւն կամ ի սարկաւագութիւն եւ կամ այլ ինչ սպասաւորութիւն եկեղեցոյ մի մերձեմերձեցուցեն, զի մի կարգեալք ընդ նոքաք թիրեացին: Չի եթէ ստուերք հանդերձելոցն Մովսիսի զանարատն ընտրէր ի սպասաւորութիւն խորանին, որչափ եւս առաւել որ նորայ ուխտիս է միջնորդ:

Կանոն ԻԱ (խմբագրված հատված)

...Չի եթէ Ղեւտացիսն յամենայն ի մերէ:

...հետացուցեալ ապա մերձեցուցեալ առ ինքն որչափ եւս առաւել որ նոքայ ուխտիս եւն սպասաւոր միջնորդք եւ պաշտօնեալք Քրիստոսի անարատք իցեն եւ անմեղք:

(Ն. Ակիմյան, Աշխ., էջ 42-43):

Վերոհիշյալ համադրումները ցույց են տալիս, որ «Յաղագս քորեպիսկոպոսաց...» ենթավերնագիրը կրող բնագիրը, այսինքն Սահակի կանոնական հրամանները կամ թղթերը մինչև 547 թ., այն է՝ մինչև «Կանոնք առաքելական»-ի կամ «Վարդապետութիւն առաքելոց»-ի թարգմանութիւն-խմբագրումը ծանոթ էին այդ թարգմանիչ-խմբագիրներին:

<sup>1</sup> Կանոնագիրք Հայոց, հ. Ա, էջ 512-513:

<sup>2</sup> Կանոնագիրք Հայոց, հ. Ա, էջ 379:

Ակնհայտ համարժեքութիւններ կան Սահակի կանոնական թղթերի և Ներսեսի ու Ներշապուհի կողմից գրված կանոնների միջև, որոնք նկատելի է Հ. Տաշյանը և վերագրել Սահակ կաթողիկոսին: Ն. Ակիմյանը հետևել է Հ. Տաշյանին համադրումների հարցում, սակայն այն ծառայեցրել է նրան, որ Սահակին վերագրված կանոնները տանի և տեղադրի 6-րդ դարի կեսերից հետո, այսինքն 7-րդ դարի առաջին քառորդին:

Այլ ուսումնասիրողների և մեր կողմից նկատված համարժեք հատվածները կներկայացնենք ստորև:

Այժմ ասենք հետևյալը: Պարզվում է, որ Ներսեսի և Ներշապուհի գրած կանոնների մոտ կեսը ձևված են Սահակի կանոնական հրամանների կամ թղթերի հիման վրա: Բայց նրանք գոյատևել են և հասել մինչև Հովհան Ծանեցին:

Ներսես կաթողիկոսը և Ներշապուհ եպիսկոպոսը իրենց կանոնները գրելիս առաջնորդվել են նաև Սահակի կանոնական թղթերով և նկատի են ունեցել այժմյան համարակալումով հայտնի (ըստ Վ. Հակոբյանի հրատարակութեան) հետևյալ կանոնները: Սահակի 15-րդ կանոնի դիմաց ունենք Ներսեսի և Ներշապուհի 6-րդ և 14-րդ կանոնները, 16-րդի դիմաց 16-ը, 17-րդի՝ 17-ը, 21-րդի՝ 8-ը, 23-րդի՝ 5-ը, 24-րդի՝ 20-ը, 27-28-րդի՝ 24-ը, 29-30-րդի՝ 23-ը և 3-4-ը, 31-րդի՝ 22-ը և 1-2-ը, 32-րդի՝ 13-ը:

Բերենք այդ համարժեք հատվածները:

Նորին կարգ քահանայից...

ԺԵ. Չամանն զիսաւոր քահանայն հանապազորդեալ յեկեղեցուցն կացցէ. եւ այլ ընկերքն շաքաթուք առ նմա փոխանակաւ կացցեն, զի պաշտամունքն տուրնջեան եւ գիշերոյ մի խափանեացին, վասն զի այդ է գործ մշակութեան եւ նոյն պատիւ (էջ 377):

(Այս և հետագայում փակագծերում դրված էջերը ըստ Կանոնագիրք Հայոցի):

Ներսեսի և Ներշապուհի եպիսկոպոսի

Չ. քահանայի զշաքաթու եւ զկիրակէի պատարագ մի իշխեսցեն խափանել, որպէս եւ տեսաք ի բազում տեղիս. այլ մատուցեն անխալ սաղմոսիք եւ մարգարէի եւ առաքեալք եւ անտարանաւ կարգաւորաբար... (էջ 480):

ԺԴ. Պաշտան եւ պատարագիք եւ սպասք սրբոյ եկեղեցուցն ի գիսաւոր քահանային տան եղիցի, որպէս յառաջագոյն կարգեալ է: Եւ ինքն զիսաւոր քահանայն զեկեղեցի մի իշխեսցէ թողոյ եւ գործոյ տան պարապել, այլ մշտնջենաւոր է սուրբ եկեղեցուցն կացցէ, զի պաշտան եւ աղաթքն տունջեան եւ գիշերոյ ժամուցն եւ տեսչութիւն ժողովրդոց մի խափանեացէ. իսկ այլ ընկերքն զաման փախանակաւ կացցեն, պղերգոթեամբ կամ երկրական հոգովք. ի մտից մի իշխեսցէ մասն առնուլ: Քահանայք միակամք լիցին արհնել միաբանութեամբ զժողովրդականսն եւ զորս ուրոշել ի սրբոյ եկեղեցուցն (էջ 484):

ԺԶ. Մկրտութիւն առնել երկիրաձուրթեամբ, եւ կանայքն ի ժամ մկրտութեանն մերձ առ քահանայսն մի իշխեսցեն կալ, որպէս սովորեցին ոմանք առնել յանդամաբար եւ մկրտել ընդ նոսա, այլ ի տեղուց իրեանց աղաթեսցեն (էջ 377-378):

ԺԸ. Եւ կանայք առ քահանայս մի իշխեսցեն կալ, բայց սարկաւագունքն սպասաւորեսցեն, եւ կանայք յիրեանց տեղին աղաթեսցին, եւ մի եղիցին գործակիցք քահանայիցն, որպէս յեսնք, ունելով զտեղիս սարկաւագոյն (էջ 485):



ԺԷ. Եւ սարկաւագք մկրտութիւն մի իշխեսցեն առնել. ապա եթէ արասցեն՝ լուծեալ լիցի ի սարկաւագութենէն հանդերձ պատուհասիւ, զի ոչ է սարկաւագն քահանայ, այլ սպասաւոր քահանային (էջ 378):

ԻԱ. Եւ լսեմ թէ զեկեղեցոյ սպաս, մանաւանդ զվարագոյր ի հարսանիս առագաստ փեսայի եւ հարսին, եւ զսկին գինի ըմպելոյ յանաթս տան զինուորաց, վասն որոյ զքահանայն զայն արժան է իլել ի կարգէ իւրմէ, վասն այդպիսի խառնակ եւ շատ գործոց, զոր յայսմհետէ այլ մի ոք իշխեսցէ առնել, իսկ եթէ ոք գտցի արարեալ, լուծեալ լիցի ի քահանայութենէն:

ԻԳ. Տգէտ երէցեղբարք՝ ժողովորդ մի իշխեսցեն ունել. երկականայք երէցեղբարք ընդ զինուորս կացցեն՝ որոշեալ ամենեւին յեկեղեցականաց եւ ի մասնէ եկեղեցոյն, վասն զի եղեն մարմնասերք (էջ 380):

ԻԴ. Եւ որպէս եղեւ անառակ սովորութիւն քահանայից եւ նոցին կանանց՝ գերեզմանս առ եկեղեցիս առնել եւ ի տեղիս սրբութեան, յայսմանէ յառաջ մի իշխեսցեն առնել, այլ ի ժողովրդականացն հանգստարանս եղիցին եւ քահանայիցն հանգստարանք զի սրբութեան տեղին պարկեշտութեամբ պատուեսցի (էջ 381):

ԻԸ. Պատուէր արարէք նոցա, զի տղայոց կանայս մի խաւեսցին, եւ մի կատարելոցն՝ առանց զիրեարս տեսանելոյ միմեանց հաճութեամբ եւ դուք քահանայք, տղայոց ամենեւին իսկ պսակ մի արհնէք մինչ ի կատարումն հասակի: Իսկ կատարելոցն որոց զմիմեանս ոչ իցէ տեսեալ ի հաճոյս ինքեան, պսակ մի իշխէք դնել առանց քննութեան եւ ցնոսին ինքեանս հարցանելոյ՝ գուցէ բռնադատութեամբ ծնաւդաց ակամա հաւանեալ իցեն, եւ զայնպիսի հարսանիս մի իշխէք յանձն առնուլ, զի մինչեւ ցայսար յայդպիսի անկարգութենէ բազում վնաս գնացին յաշխարհի՝ հոգեւոր եւ մարմնաւոր (էջ 382):

ԺԸ. Զգուշացին առաւել եւս սարկաւագունք՝ մի գուցէ մկրտութիւն առնիցեն յանդգնաբար ի կորուստ (էջ 485):

Ը. Եւ կտակարանս եւ զմարգարէս եւ զառաքեալս եւ զԱւետարանս բովանդակ ստասցի սրբոյ եկեղեցոյ ի պտուղ եւ ի մտից, եւ հանդերձս բովանդակ սրբոյ սեղանոյն եւ զեկեղեցոյ առագաստ տանց փեսայից եւ հարսանց, զոր այր մի իշխեսցեն առնել. զոր թէ գտցի ոք արարեալ թէ քահանայ է լուծցի, թէ դպիր նզովեսցի (էջ 481-482):

Ե. Եւ երկականայք թեւ գրակարգաց իցեն եւ պաշտամենայք ի մտից սրբոյ եկեղեցոյ եւ ոչ միում մասի արժանի մի լիցին. զի չէ պարտ ապաշխարողաց առաջնորդութիւն առնել, զպտուղս եւ զուխտս պահանջել ընդ քահանայս: Նոյնպէս եւ տգետք մի իշխեսցեն մտեց եկեղեցոյ. զի անիրաւ է, վասն անուսումնութեանն ընդ զինուորս կայցեն եւ զհայրենի հող եւ զջուր կայցին եւ յարքունիս հարկ տացեն եւ զորդիս ի դպրոց տացեն, զի ուսուցին (էջ 480):

Ի. Գերեզմանս յեկեղեցիս մի իշխեսցեն առնել, ապա եթէ գտցի ոք արարեալ՝ յեկեղեցոյն պատարագ մի ոք իշխեսցէ մատուցանել մինչեւ մաքրեսցեն զտեղիսն (էջ 486):

Ի. Տղայոց պսակ մի իշխեսցեն արհնել, եւ մի կատարելոցն երկոցունց՝ առանց զմիմեանս տեսանելոյ, զի այսպիսի անժամ հարսանեաց գնացին վնասք մահաբերք եւ ժողովրդականք զայսպիսի հարսանիս մի իշխեսցեն առնել, զի նոցունց իսկ է կորուստ (էջ 487):

ԻԸ. Ապա եթէ լսեմ եթէ ոք ի քահանայից յանդգնի եւ արտաքոյ մերոյ հրամանի այնպիսեանցն պսակ արհնեսցէ՝ գիտասցի, զի քահանայն պատուհաս կրեսցէ ըստ արհնակի վնասակարացն, եւ ծնաւդքն ոչ անպարտ լինի ի պատուհասէ (էջ 382-383):

ԻԹ. Քահանայք միաբան կատարեսցեն զպաշտամեն եւ զպատարագ ազապացն առանց Աւետարան կարդալոյ մի իշխեսցեն քահանայք մատուցանել. ապա եթէ գտցի ոք ի նոցանէ յորկորստութեան յառաջ քան զպատարագն, ի պատարագի հաց մի իշխեսցէ երթալ եւ յընկերաց իւրոց որոշել կացցէ (էջ 383):

Լ. Նոյնպէս եւ շինականք որ յագապ հրաւիրեսցան՝ պաշտման եւ պատարագի հաղորդեսցին, յառաջ քան զպատարագն մի իշխեսցեն ի տունս իւրեանց ուտել եւ ըմպել: Եթէ իցէ ոք որ յառաջագոյն կերիցէ եւ արբցէ ի տուն իտում, ի հաց պատարագին մի իշխեսցէ երթալ, զի մի եղիցի դատապարտութիւն անձին եւ թշնամանք հոգեւոր տաւնին, զի խելաբարութիւն անուն այն իսկ է. եթէ ոք յանդգնեսցի գալ՝ քահանայքն եւ ընկերք իւրեանց մի թողցեն ի ներքո, զի ատելի է եկեղեցոյ այնպիսի անառակութիւն (էջ 383):

*Ներսեսի և Ներշապուհի կողմից հրավիրված Դվինի 555 թ. մարտի 21-ի ժողովի վավերագրի մեջ ևս առկա մի հատված Սահակի կանոնական հրամաններից կամ թղթերից:*

*Բերենք այդ վկայությունները զուգահեռաբար:*

Նորին (Սահակի - Բ. Վ.)

կարգ քահանայից...

ԻԶ. ...ատեսցեն զշնացողսն, զգողս, զպոռնիկս, զաւագակս ամենեւին մի հաղորդեսցին

(Կանոնագիրք Հայոց, հ. Ա., էջ 381):

Ուխտ միաբանութեան հայոց աշխարհի ի ձեռն Ներսիսի հայոց կաթողիկոսի, և Մերշապուհ Մամիկոնեց եպիսկոպոսի...

...Եւ զգողս և զպոռնիկս և զայդ վնասակարս զոր մեք արտաքոյ եկեղեցոյ և արհնութեան առնեսք և չհամարեսք արժանի սրբոյ հաղորդութեանն...

(Գիրք թղթոց, էջ 72-75):

*Այսպիսով, Ներսես կաթողիկոսի և Ներշապուհ եպիսկոպոսի կազմած կանոնները, ինչպես և «Ուխտ միաբանութեան...»-ը ցույց են տալիս, որ մինչև 550-ական թվականները Սահակ*

կաթողիկոսի կանոնական հրամանները կամ թղթերը շրջանառության մեջ էին հայ իրականության մեջ:

Հազար Փարպեցին; թեև անորոշ ձևով, բայց կարծում ենք, հիշատակել է Սահակ կաթողիկոսի կանոնական թղթերի (և տոնացույցի) մասին հետևյալ հատվածում՝ «...ժողովս տարևորական... յօր կարգադրութեան նորա (Սահակ կաթողիկոսի - Ռ. Վ.) կատարեն» (Ղ. Փարպեցի, էջ 84):

Աղբյուրագիտական փաստերի զորեղութունը մեծ է, երբ այդ սկզբնաղբյուրները թվագրված են: Մեր վերջերս գրած աշխատության մեջ<sup>1</sup> հիմնավորել ենք, որ Նիկիայի ժողովի վավերագրերը հունարենից հայերեն է թարգմանվել 464-467 թվականներին ամենայն հավանականությամբ Գյուտ կաթողիկոսի կողմից: Սահակի կանոնական հրամաններից կամ թղթերից օգտվել է Նիկիայի ժողովի վավերագրերի թարգմանիչ-խմբագիրը:

Բերենք այդ հատվածները զուգահեռաբար:

Նորին կարգ քահանայից.-

ԺԷ. Եւ սարկաւագք մկրտութիւն մի իշխեսցեն առնել, ապա եթէ արասցեն լուծեալ լինիցի ի սարկաւագութենէն հանդերձ պատուհասի, զի ոչ ի սարկաւագն քահանայ, այլ սպասատր քահանային

(Կանոնագիրը Հայոց, Բ. Ա, էջ 378)

Նիկիայի վավերագրերի թարգմանություն

ԺԷ. Լորք եհաս ի սուրբ եւ մեծ ժողովն Նիկիա թէ ի տեղիս տեղիս սարկաւագունք օրենս տան եւ մկրտութիւնս առնեն եւ ընդեմ թուեցաւ գործն առաքելական կանոնաց եւ մեծ ամենայն ժողովուս: (ընդգծումը Ն. Ակիմյանի):

(Ն. Ակիմյան, էջ 55-56, Կանոնագիրը Հայոց, Բ. Ա, էջ 123):

Ընդգծված բառերը ըստ Ն. Ակիմյանի, թարգմանիչ-խմբագրի հավելվածներն են, որոնք վերցվել են Սահակի կանոնական թղթերից:

Նիկիայի վավերագրերի թարգմանիչ-խմբագիրը օգտվել է Սահակի կանոնական հրամանների կամ թղթերի մի հատվածից ևս, որը լուրջ հետաքրքրություն է ներկայացնում, ինչպես կտեսնենք նաև այլ առումով:

Բերենք այդ հատվածները զուգահեռաբար:

Նորին կարգ քահանայից...

ԻԶ. Ուսուցէք եւ ժողովրդականս յամենայն անատակութենէ ի բաց փախչել՝ յորկորստութենէ, յարբեցողութենէ, ի հակառակութենէ, ի գրկելոյ զաղքատս եւ զընէրս իրեանց. մի կոտորս, մի հանգանակողս, մի չարասէրս, ատեսցեն զշնացողս, զգողս, զպոռնիկս, զաւագակս, ամենեւին մի հաղորդեսցին եւ մի ասպնջական լինիցին այնպիսեանց. զի մի եղիցին եւ ինքեանք ընդ նոսին՝ որոյք կորստեան

(Կանոնագիրը Հայոց, Բ. Ա, էջ 381-382):

Նիկիայի վավերագրերի թարգմանություն

ԺԲ. Վասն այնցիկ որ կոչեցանք եւ յօժարութեամբ կայան գաստիճանն, եւ ապա ի մեղս գառածսն եւ կերան զփխսածո իրեանց ի շնութիւն, ի պոռնկութիւն, ի գողութիւն, յագահութիւն, յոխակայութիւն, մանաւանդ զանհնարին աղէտս որ գործինք, եւ անդէն ի խորհուրդն եւ ի սուրբ սեղանն մերձեանն, այսինքն ի պատարագն մատուցանել եւ շարժեն զբարկութիւն Աստուծոյ ի վերա երկրի կամ եղեւ մեծ ժողովոքն վասն մարդասիրութեան... (ընդգծումը Ն. Ակիմյանի):

(Ն. Ակիմյան, էջ 56-57, Կանոնագիրը Հայոց, Բ. Ա, էջ 124-125):

Ի դեպ վերոհիշյալ հատվածով կարելի է թվագրել Սահակի կանոնական թղթերը կամ հրամանները 420-428 թթ.: Այն ուղղված է աղանդավորների դեմ, հատկապես բարբարիանոս աղանդի, որի մասին վկայում է Կորյունը Մաշտոցի գործունեության կապակցությամբ:

Նիկիայի ժողովի վավերագրերի թարգմանիչ-խմբագիրը՝ Գյուտ կաթողիկոսը իր կողմից ավելացրած մասում, որն ընդգծված է, ակնհայտորեն օգտվելով Սահակի կանոնական թղթերից, իր խոսքերը ի տարբերություն Սահակի ուղղել է քաղկեդոնականների դեմ, ինչպես նկատել է Ն. Ակիմյանը:

Հարկ է նշել, որ Նիկիայի վավերագրերի մեջ հավելումները ունեն առկա բոլոր ձևագրերը, այսինքն համեմատական բնագրերը համարժեք են, ուստի այդ հավելումները գալիս են թարգմանության նախնական բնագրից և ուշ շրջանի հավելումներ չեն, ինչպես կարծել է Ն. Ակիմյանը:

Այս հատվածը միաժամանակ ցույց է տալիս, որ հայոց եկեղեցին հանձինս Գյուտ կաթողիկոսի առաջին անգամ դեռևս 464-467 թթ. իր բացասական վերաբերմունքն է դրսևորել քաղկեդոնականների նկատմամբ: Ուստի հայագիտության մեջ ընդունված կարծիքը, թե մինչև Դվինի ժողովը (506 թ.) և այդ կապակցությամբ Բարկեն կաթողիկոսի գրած թղթերը (506/7 թթ.) Քաղկեդոնի և քաղկեդոնականների նկատմամբ որևէ վերաբերմունք չի եղել, հերքվում է, ինչպես վերոհիշյալ թարգմանության մեջ մտած թարգմանիչ-խմբագրի՝ Գյուտի հավելվածներով, այնպես էլ 472-475 թթ. թարգմանված Տիմոթէոս Կուզի «Հակաճառութեան» թարգմանությամբ, որի հավանական թարգմանիչ ենք համարել Հովհան Մանդակունի կաթողիկոսին:

Շահապիվանի ժողովի (445 թ.) վավերագրում, հատկապես վերնագրի մեջ, այն է՝ «Սահմանք եւ կանոնք կարգի Աստուծոյ սրբոյ եկեղեցւոյ, զոր եղին վարդապետք Հայոց ի լրութիւն Առաքելական և Նիկիական կանոնաց Հաստատութիւն» խմբագրված վիճակով իր արտահայտությունն է գտել Սահակի կանոնական թղթերից, այն է՝ «զկարգ եկեղեցւոյ պաշտման» կամ «կարգի պաշտմանս այսորիկ», ինչպես և Շահապիվանի ԺԵ կանոնը օգտագործվել է Սահակի ԻԶ կանոնը: Շահապիվանի կանոնների մեջ Սահակի կանոնական հրամանների շատ փոխառություններ չկան, որովհետև այն «ի լրութիւն» էր, ինչպես առաքելական (որը հավանաբար թարգմանված էր) և Նիկիական կանոնների, այնպես էլ Սահակի կանոնական թղթերի:

Փորձեցինք հիմնավորել, որ Սահակի կանոնական հրամանները կամ թղթերը, որոնք մեզ են հասել «Նորին կարգ քահանայից...» և «Յաղագս քորեպիսկոպոսաց...» ենթավերնագրերով ոչ միայն վավերական են, այլև օգտագործվել են հայ մատենագրական բնագրերում իրենց ստեղծումից (420-428 թթ.) քիչ հետո, թեև մեզ են հասել ոչ թե առանձին բնագրերով, ինչպես Ներսեսի և Ներչապուհի կանոնների, այնպես էլ հատկապես Հովհան Օձնեցու կազմած կանոնագրի մեջ:

Մի քանի դիտողություն: Սահակ կաթողիկոսի կանոնական հրամանների կամ թղթերի մեջ օգտագործված հավանաբար իր իսկ կողմից թարգմանված բնագրերի մասին:

Սահակի կանոնական թղթերում իր դրսևորումն է գտել Գրիգոր Լուսավորչին վերագրված Պատարագամատուցի որոշ արտահայտություններ: Ի դեպ Հ. Գաթրճյանը հիմնավորել է, որ այդ պատարագամատուցը թարգմանություն է հունարենից և վերագրել է Բարսեղ Կեսարացուն:

Բերենք մեկ համարժեք նախադասություն Պատարագամատուցից և Սահակի կանոնական թղթերից զուգահեռաբար:

<sup>1</sup> Հայոց տոմարական եղանակը, թարգմանական բնագրերի ժամանակը, Ե., 1993, էջ 36-37:

Պատարագամատոյց  
...խորհուրդ մարմնոյ եւ արեան միածին  
որդոյ իւրոյ...  
(Էջ 150):

Սահակի կանոնական թղթեր  
(հոդված Բ)  
...խորհուրդ մարմնոյ եւ արեան ապրե-  
ցուցչին մերոյ և Տեառն...  
(Էջ 368-369):

Վերը բերվածից երևում է, որ Գրիգոր Լուսավորչին վերագրված Պատարագամատույցը Սահակ կաթողիկոսի թարգմանած և կիրառութեան մեջ դրված Պատարագամատույցն է, որը Բարսեղ Կեսարացունն է: Այդ մասին անորոշ, ավելի ճիշտ ընդհանրացված ձևով հիշատակել է Կորյունը: Նրա վկայությունից կարելի է հետևեցնել, որ Պատարագամատույցի թարգմանու- թյունը Սահակ կաթողիկոսը իրականացրել է 435 թվականից առաջ, ավելի ստույգ 428 թվից առաջ (մինչև գահընկեց արվելը և բանտարկվելը), հավանաբար 415-420-ական թվականներին սկզբներին և գործադրութեան մեջ դրել: Այն ավանդաբար վերագրվել է Գրիգոր Լուսավորչին:

Սահակի կանոնական թղթերում օգտագործվել են հատվածներ նաև Մակար Երուսաղեմ- ցու թղթից:

Բերենք դրանք զուգահեռաբար:

Մակարի թուղթը  
...եւ է որ սարկաւագունք մկրտութիւն առնեն (Էջ 219)  
Ա. թէ արժանի իցէ սարկաւագաց մկրտութիւն առնել, եւ կատարեալ իցէ խոր- հուրդն: Գիտութիւն լիցի քրիստոսասէր եղ- բայրութեան ձերոյ. զի եպիսկոպոսաց եւ քահանայից միայն է իշխանութիւն այս եւ սարկաւագաց զայս առնել չէ արժան. քան- զի սպասաւորք են, եւ խափանեալ է այս առ ի նոցանէ: Եւ աւելի է խնդրելն, թէ կատա- րեալ է առ ի նոցանէ մկրտեալ, բայց պարտ է նախ քննել, թէ սովորութիւն իցէ գաւառին այնմիկ սարկաւագացն մկրտել եւ եթէ գտցի ոք արարեալ, ընդ անմեղութեամբ է վասն անգիտութեան կարգաց եկեղեցոյ, զի սո- վորութեան գաւառին զհետ չոգաւ: Իսկ եթէ գիտէր զկարգս եկեղեցոյ եւ անց գնոքաք, եղիցի ի վերայ նորա պատիժ ըստ կարգի յանցանացն:  
(Էջ 221-222):

Սահակի թուղթը  
ԺԷ. եւ սարկաւագք մկրտութիւն մի իշ- խեսցեն առնել, ապա եթէ արասցեն՝ լուծեալ լիցիս ի սարկաւագութեանն հանդերձ պատուհասիս, զի ոչ է սարկաւագն քա- հանայ, այլ սպասաւոր քահանային:  
(Էջ 378):

Բովանդակային և բառացի նմանություններ ունեն Մակարի և Սահակի թղթերի այլ հատվածներ ևս, ինչպես օրինակ Մակարի կանոնների Բ-ն Սահակի կանոնների Բ-ին, Զ-ն նույնպես Բ-ին, Դ-ն՝ Ի-ին, Բ-ն՝ ԻԵ-ին, Գ-ն՝ Դ-ին և Ե-ին: Այս ոչ պատահական համարժե- քությունները ցույց են տալիս, որ Մակար Երուսաղեմցու թղթի թարգմանությունը ևս կատա- րել է Սահակ կաթողիկոսը և օգտագործել իր կանոնական թղթերի մեջ: Մեզ թվում է Կորյունի այն հատվածը, որ Սահակը թարգմանություններ է կատարել հատկապես հայրապետների աշ- խատանքները հավասար չափով վերաբերվում է նաև Մակար Երուսաղեմցու թղթին: Ուշագ- րավ է, որ Անանիա Շիրակացին հական է հանվան է հիշատակում և օգտագործում է մի հատված

Մակար Երուսաղեմցու կանոնական թղթից, բնականաբար այն ժամանակ, երբ նա դեռ չէր մտել Կանոնագիրք Հայոցի մեջ: Մենք չենք ուզում մտնել բանավեճի մեջ այլ կարծիքների կապակցությամբ, մանավանդ բերված բառացի և բովանդակային հատվածները կասկած չեն թողնում, որ Սահակ կաթողիկոսի կանոնական հրամաններում օգտագործվել է Մակար Երուսա- ղեմցու կանոնական թուղթը արդեն հայերեն թարգմանված հավանաբար 420-ական թվական- ներին):

\*\*\*

Հովհան Օձնեցու մոտ հաջորդ կանոնախմբից երեքը (տես վերը հիշատակված 3-րդ, 4-րդ և 5-րդ ենթավերնագրերը) դասավորված են նույն հերթականությամբ: Այդ կարգը հիմնավոր- վում է 3-րդ բնագրի մեջ տեղ գտած վկայությամբ, այն է՝ «Արդ՝ արժանաւոր է եւ զառաջին ճառ բանին յիշատակել...»<sup>1</sup>:

6-րդ բնագիրը կանոնագրքի հնագույն ընդօրինակություն մեջ դրված է առանձին կանո- նի տակ, սակայն ինչպես նկատել է Ն. Ակիմյանը, Հովհան Օձնեցին ծանոթ էր այդ բնագրին, ինչպես և վերոհիշյալ բնագրերի նյութերին ծանոթ են թե՛ 645 թ. կայացած Դվինի ժողովի վա- վերագրերի հեղինակը, թե՛ Ներսես Տայեցու կողմից կազմած կանոնների մեջ, այսինքն այդ բնագիրն արդեն կար 7-րդ դարի կեսերից առաջ: Մյուսների մասին կխոսենք քիչ հետո: Թեև բնագիրն արդեն կար 7-րդ դարի կեսերից առաջ: Մյուսների մասին կխոսենք քիչ հետո: Թեև այս կանոնական խմբի վերնագրերում և ենթավերնագրերում իրենց զբաղեցրածն է գտել Սահակ կաթողիկոսի հեղինակությունը, սակայն լեզվական և ոճական առումով այս խումբը տարբեր- վում է նախորդից: Դրանք, իհարկե, որոշիչ հիմքեր են այդ երկու խմբերը տարբերակելու հա- մար, սակայն բավարար չեն որոշելու երկրորդ խմբի ստեղծման ժամանակը, հնարավորության դեպքում նաև հեղինակը կամ հեղինակները: Այդ հարցերը պարզաբանելու են գալիս աղբյու- րագիտական սովյալները, որոնք, ինչ խոսք, որոշիչ դեր ունեն: Տեսանք, որ այդ բնագրերը կա- յին մինչև 7-րդ դարի կեսերը:

Նախ ցույց տանք, որ հիշյալ կանոնական խումբը իբրև աղբյուր օգտագործել է Սահակի կանոնական հրամանները կամ թղթերը: Դրանով իսկ պատասխան կտանք նաև այն հարցին, որ այդ կանոնական խումբը տարբեր է Սահակի կանոնական թղթերից:

Համադրենք այդ հատվածները զուգահեռաբար:

Յաղագս քորեպիսկոպոսաց...

Բ. ...Յորս սուրբ եւ աստուածընկալ սե- ղանն է հաստատեալ, յորոց վերայ կատա- րի մեղսաքաւիչ եւ կեանարար խորհուրդ...: ...ապրեցուցչին մերոյ Տեառն:  
(Կանոնագիրք Հայոց, Բ. Ա, էջ 368, Ն. Ակիմյան, Աշվ. աշխ., էջ 26):

Յաղագս քորեպիսկոպոսաց...

Ը. ...Պարկեշտ եւ սուրբ եւ աներկեւան եղիցի ուխտ պաշտօնէից Աստուծոյ:  
(Կանոնագիրք Հայոց, Բ. Ա, էջ 371, Ն. Ակիմյան, Աշվ. աշխ., էջ 27):

...Թէ որպէս պարտ է եպիսկոպոսաց ունել զընտանիս...

ԽԶ. ...Ուսուցից մեծարել զաստուածըն- կալ սեղանն, յորոյ վերայ կատարի կեանա- րար խորհուրդն ապրեցուցիչ մերոյ Տեառն:

(Կանոնագիրք Հայոց, Բ. Ա, էջ 404, Ն. Ակիմյան, Աշվ. աշխ., էջ 26):

...թէ որպէս սահմանեցաւ կարգ ուխ- տի...

ԼԶ. ...բայց միայն աներկեւան պահես- ցուք զհաւատս:

(Կանոնագիրք Հայոց, Բ. Ա, էջ 388, Ն. Ակիմյան, Աշվ. աշխ., էջ 27):

<sup>1</sup> Կանոնագիրք Հայոց, Բ. Ա, էջ 393, հոդված ԼԸ:

Ա. ...աստուածահաճոյ վարուք (Անդ. էջ 368 և էջ 27):

Նորին կարգ քահանայից...

ԺԸ. Եւ պատարագացն երեխայրիք ի գլխատր քահանային տունն երթիցէ յամենայն ժողովրդականաց:

(Կանոնագիրք Հայոց, Բ. Ա, էջ 378, Ն. Ակինյան, Աշվ. աշխ., էջ 68-69):

ԻԳ. Երկկանայք երէց եղբարք ընդ զինուորս կալցեն որոշեալ ամենեւին յեկեղեցականաց եւ ի մասնէ եկեղեցւոյն. վասն զի եղեն մարմնասերք:

(Կանոնագիրք Հայոց, Բ. Ա, էջ 380, Ն. Ակինյան, Աշվ. աշխ., էջ 72):

*Վերոհիշյալ համադրումները կասկած չեն թողնում, որ երկրորդ կանոնական խմբի հեղինակները օգտվել են Սահակի կանոնական հրամաններից կամ թղթերից, ուստի այդ բնագրերը գրվել են ավելի ուշ:*

*Ն. Ակինյանը թեև քննարկվող կանոնախմբի ժամանակը և հեղինակները կարող էր պարզել, սակայն վրիպել է աչառու վերաբերմունքի հետևանքով, նաև նկատի չի ունեցել մի քանի էական փաստեր, թեև դրանցից ոմանք նրան հայտնի են եղել: Բանն այն է, որ Ներսես կաթողիկոսը և Ներշապուհ Եպիսկոպոսը կանոնները շարադրելիս օգտվել են իրենց իսկ կողմից գրված կանոնական թղթերից, ինչպիսիք են «Ուխտ միաբանություն» և, հավանաբար, «Գիր աւանդութեան»-ը, և այլն, որոնց հետագայում տրվել են կանոնների տեսք՝ օգտագործելով տարբեր կանոնների մեջ, թեև այդ կանոնական թղթերը պահպանվել են և օգտագործվել թե՛ Հովհան Օձնեցու, թե՛ առանձին՝ «Գիրք թղթոց»-ի մեջ:*

*Ներկայացնենք այդ բնագրերը զուգահեռաբար:*

Գիր աւանդութեան...

Ա. Ժողովրդականք ամենայն զպտուղ եւ գերեխայրիս երիցանց մատուցեն անգեղջաբար մտօք...

Սոյնպէս եւ քահանայք զամենայն նախակարգեալ հասս հատուցեն եպիսկոպոսաց առանց յապաղանց եւ մի անկցին ի հեղգութիւն, մանաւանդ յափշտակել հնարելով զաւանդ վիճակելոցն...

Տգետք ոմանք ըստ սովորութեան մի եղիցին արժանի առնուլ հասս մտից, այլ ումանց պարապեալքն եւ շնորհի քահանայութեան արժանացեալք՝ նոքա եղիցին արժանի հասից: Եւ դպիրք գրակարգացք սրբանեալք ամենայն պարկեշտութեամբ՝ մի գրկեցին ի բաժնէ իրեանց... իսկ կանայք երիցանց այրիք մնացեալքն եւ սրբութեամբ պարկեշտացեալք՝ արժանի լինիցին մասին իրեանց

ԽԷ. ...վարք աստուածահաճոյ կենաց:

(Անդ. էջ 407 և էջ 27):

...Գիր աւանդութեան...

Ա. ...եւ փրկութեան պատարագաց երեխայրիք երթիցէն ի վանս գլխատր քահանայիցն, այսինքն եպիսկոպոսացն:

(Կանոնագիրք Հայոց, Բ. Բ, էջ 235-236):

Ա. ...բայց երկկանայք որ ամենեւին զցանկութեան մարմնոյ զհետ չոգան, նոքա ոչ ունին մասնատրել շնորհ սրբութեանց:

(Կանոնագիրք Հայոց, Բ. Բ, էջ 237, Ն. Ակինյան, Աշվ. աշխ., էջ 72):

Կանոնք ներսէսի եւ ներշապիոյ

Մամիկոնէից եպիսկոպոսի...

ԺԳ. Եւ ժողովրդականք մի հրապուրեցին ի նոցանէ ի բաժանումն սրբոյ եկեղեցւոյ, զի պատճառ խոփութեան բերէ, այլ զպտուղս եւ զմուտս ժողովրդականք միաբանութեամբ անխափան. եւ մի ըստ դասաց բաժին եւ երդոց, որ եղել վնաս եւ քահանայից առեալ ի սրբոյ եկեղեցւոյ բաժանեցն կարգատրաբար, որպէս արէն է. գլխատր քահանայիցն՝ Բ մասունք եւ կէս մասին, եւ այլ քահանայքն՝ մէն Բ մասունս. եւ սարկաւագունքն՝ մի մասն եւ կէս մասին. եւ դպիրքն եւ այրի կանայք թէ իցէն պարկեշտ՝ մի մասն առանց ամենայն հակառակութեան...

(Կանոնագիրք Հայոց, Բ. Ա, էջ 483, Ն. Ակինյան, Աշվ. աշխ., էջ 70-71):

*Կարծում ենք, որ այս համադրությունները ցույց են տալիս վերոհիշյալ կանոնական թղթերի ստեղծման ժամանակը՝ 550-ական թվականների սկզբներ և դրանց հեղինակներին՝ Ներսես կաթողիկոսին և Ներշապուհ Եպիսկոպոսին: Այս թվագրումն ավելի է ամրապնդվում, երբ համեմատում ենք «...թէ որպէս սահմանեցաւ կարգ ուխտին...» կանոնական թղթի և Վրթանես Քերթովի մոտ հանդիպող բառացի համընկնումները:*

*Բերենք դրանք:*

...Թէ որպէս սահմանեցաւ...

ԼԸ. ...եւ երիցս երանեալն քաջ նահատակն Քրիստոսի Գրիգորիոս...

(Կանոնագիրք Հայոց, Բ. Ա, էջ 393):

ԽԴ. ...ընկալեալ ի քաջ նահատակէն՝ ի տեսունէն Գրիգորէ...

(Անդ, էջ 402):

*Նման բնույթի արտահայտություններ ենք գտնում նաև Հովհաննես Գարեղենացու մոտ: Վերոհիշյալ կանոնական թղթերի օգտագործման վերին սահմանը հասցրինք մինչև 570-ական թվականները, ծայրահեղ դեպքում 604-607 թթ.: Վրթանես Քերթով, իսկ ստորին սահմանը չի կարող անցնել 6-րդ դարի սկիզբներից այն կողմ, որովհետև «...թէ որպէս սահմանեցաւ կարգ ուխտին...» բնագրում առկա է Վարդավառի տոնի կատարման հիշատակություն: Հայտնի է, որ այլակերպության տոնը Արևելքի եկեղեցիներում տարածում ստացավ 6-րդ դարի սկիզբներից հետո: Պատահական չէ, որ ընդհանրապես Սահակի կանոնական հրամանների կամ թղթերի գոյությունը կասկածողների և ժխտողների հիմնական փաստարկներից մեկն էլ Վարդավառի տոնի վկայությունն էր հիշյալ փաստաթղթերում: Կարծում ենք այս փաստերը բավարար են, որպեսզի հիշյալ կանոնական թղթերը թվագրենք 550-ական թվականների սկիզբներով մինչև 555 թ. և դրանց հեղինակներ ընդունենք Ներսես կաթողիկոսին (551-560 թթ.) և նրա տեղապահ Ներշապուհ Եպիսկոպոսին:*

*Քննարկենք այս կանոնական խմբի հետ կապված մի կարևոր խնդիր ևս:*

*Ներսես կաթողիկոսը և Ներշապուհ Եպիսկոպոսը կանոնական թղթերն ու կանոնները ստեղծելիս օգտվել են նախորդ շրջանում ստեղծված թե՛ թարգմանական, թե՛ ինքնուրույն երկերից, որոնցից մի քանիսի ժամանակի որոշումը էական նշանակություն ունի, մասնավորապես արդեն պարզ է, որ դրանք ստեղծվել են 550-ական թվականներից առաջ:*

*Բերենք այդ բնագրերից մի քանիսը զուգահեռաբար:*

Պատարագամատոյց

Եւ նոյն ինքդ բաշխի ի միջի մերում (Լամբրոնացու մոտ «ի մեզ») միշտ անծախսապէս

(Ն. Ակինյան, Աշվ. աշխ., էջ 39):

Ագաթանգեղոս

Ի բռնութեան հարկապահանջ իշխանաց (Անդ., էջ 34)

Անկիրիոյ ԺԴ կանոն (մուծված թարգմանչի կողմից)

Քորեպիսկոպոսաց մի լիցի երիցունս կամ սարկաւագունս օծանել...: Քանզի

Վրթանես քերթով

...երանելի նահատակն Քրիստոսի եւ հայր մեր Գրիգորիոս

(Գիրք թղթոց, էջ 93)

...եւ ի քաջ նահատակէն տեսուն Գրիգորէ...

(Անդ, էջ 112, 113, 138):

Թէ որպէս սահմանեցաւ կարգ...

ԼԷ. ...որ միշտ անծախսապէս բաշխի ի մեզ

(Կանոնագիրք Հայոց, Բ. Ա, էջ 392, Ն. Ակինյան, Աշվ. աշխ., էջ 39):

Անդ.

ԼԸ. ...ազատ յամենայն հարկապահանջ իշխանաց

(Անդ, էջ 395 և էջ 34):

...Թէ որպէս պարտ է եպիսկոպոսաց ունել ընտանիս

ԽԵ. Այցելու եւ հասարակաց հայր է եպիսկոպոս... տեսուչ եւ առաջնորդս գա-

յանցմամբ ի գաւառս լիճէիճ եպիսկոպոսունք այս ինքն ի գիւղս. զայնպիսիսն կոչէ քորեպիսկոպոսս, զի որ եպիսկոպոս տեսուչ գաւառի ասի ըստ հոռոմիճ առ մեծամեծօք՝ այս ինքն որ զքաղաքսն ունիճ առ նօքոք կոչիճ տքա գաւառաց եպիսկոպոս:

(Ն. Ակիմյան, Աշխ., էջ 39):

Եզնիկ

Պատիժ պատուհասից կրել

(Ն. Ակիմյան, նշվ. աշխ., էջ 33):

Երթաղականք

...առաւել խնամոտ եւ արդիւնակատար

(Ն. Ակիմյան, Աշխ., էջ 34):

Հովհան Ոսկերեան Պատղ. Ա 29

...եւ ոռացեալ պարտատիցիճ ընդերք

(Ն. Ակիմյան, նշվ. աշխ., էջ 30-31):

ւառաց եւ գիւղից կացուցանելով. որք անուանիճ քորեպիսկոպոս

(Կանոնագիրք Հայոց, հ. Ա, էջ 403, Ն. Ակիմյան, Աշխ., էջ 39):

Անդ

ԽԷ. ...կրեցիճ պատիժ պատուհասից

(Կանոնագիրք Հայոց, հ. Բ, էջ 408, Ն. Ակիմյան, Աշխ., էջ 33):

...ԹԷ որպէս պարտ է եպիսկոպոսաց պահել գանձս...

Ծ. ...զի խնամոտ եւ արդիւնակատար

(Կանոնագիրք Հայոց, հ. Ա, էջ 412, Ն. Ակիմյան, Աշխ., էջ 34):

Անդ

ԾԴ. ...եւ յորսացեալ անկեալ պարտատիցեճ ընտերք թասելով

(Կանոնագիրք Հայոց, հ. Ա, էջ 418, Ն. Ակիմյան, Աշխ., էջ 30-31):

Այս համեմատութիւններից պարզվել է, որ մինչև 550-ական թվականները թարգմանվել և գրվել էին մի շարք բնագրեր, որոնցից առաջմ մեզ հետաքրքրում է Անկիլուրիայի կանոնները:

\*\*\*

Հայ կանոնական բնագրերի, ինչպես թարգմանական, այնպես էլ ինքնուրույն, որոնք ըստ էության իրարից չեն տարբերվել, զարգացման ընթացքը տարբեր կերպ են պատկերացվել: Մեր կողմից նորովի թվագրված մի շարք թարգմանական հուշարձանները, ինչպես և վերոհիշյալ հայ կանոնական բնագրերի մեջ հստակութիւն մտցնելը և թվագրելը թույլ են տալիս վաղ շրջանի կանոնական բնագրերի ժամանակագրութիւնը դնել ավելի հաստատուն և հուսալի հիմքերի վրա:

Հ. Գաթրճյանը և նրա հետևորդները ալ ուսումնասիրողներ (Հ. Տաշյան, Ն. Ակիմյան, Ս. Տիգրանյան, Հ. Ոսկյան և այլն) 5-րդ դարի կանոնագիրքը պատկերացրել են հունարենից հայերեն թարգմանված Նիկիայի, Անկյուրիայի, Կեսարիայի, Նեոկեսարիայի, Գանգրայի, Անտիոքի, Լատրիկի, ինչպես և ասորերենից հայերեն թարգմանած առաքելական ու Շահապիվանի կանոնախմբերով: Ի դեպ, միայն Հ. Տաշյանն է ընդունել Սահակ կաթողիկոսի քննարկված կանոնների գոյությունը:

Հայոց կանոնագրերի սկզբնավորման և հետագա խմբագրութիւնների խնդիրները կվերլուծենք առանձին մենագրական ուսումնասիրութիւն մեջ, ինչպես Սահակ կաթողիկոսի կանոնական հրամանների կամ թղթերի կապակցութիւնը կատարեցիք, մանրամասն ներկայացնելով մեր հիմնավորումները: Այստեղ միայն համառոտ ուրվագծում ենք «Կանոնագիրք Հայոց» ժողովածուի առաջացման և հետագայում կատարած խմբագրութիւնների ընթացքը մինչև 6-րդ դարի կեսերը՝ կապված Սահակ կաթողիկոսի կանոնական հրամանների կամ թղթերի հետ, բերելով միայն որոշ լրացուցիչ ապացույցներ կարճառոտ ձևի մեջ:

Մեր ուսումնասիրութիւնները ցույց են տալիս, որ հայոց քրիստոնեական կանոնագիր-տութիւն հիմնադիրը Սահակ կաթողիկոսն է, որը մեր եկեղեցու հրատապ պահանջներից ելնելով առաջին հերթին դեկավարեց և ակտիվ մասնակցեց համար առաջին կանոնական բնագրի՝ Աստվածաշնչի թարգմանութիւնը, նախ 408-415 թթ. սահմաններում, ապա՝ հետագայում: Այնուհետև գրերի գյուտից մինչև 428 թվականը, այսինքն՝ նրա պաշտոնական կաթողիկոսութիւն ժամանակաշրջանում, դրեց հայոց կանոնագրերի հիմքերը. թարգմանելով — խմբագրելով ու գրելով մի խումբ կանոնական գրվածքներ, որոնք ըստ առկա «Կանոնագիրք Հայոց»-ի Ա խմբի խմբագրութիւն հետևյալ կանոնախմբերն են՝

1. Կանոնք առաքելական ի ձեռն Կղեմայ (85 կանոն, որից մի քանի կանոններ ավելացրել է թարգմանիչ-խմբագիրը):

2. Կանոնք հարանց հետեւողաց (27 կանոն, որը գրած կարող է լինել նաև Մաշտոց վարդապետը):

3. Կանոնք Սրբոյն Գրիգորի (30 կանոն, 4-րդ դարի բանավոր ավանդույթը գրի է առել Սահակ կաթողիկոսը և վերագրել Գրիգոր Լուսավորչին):

4. Կանոնք Աթանասի (Տիմոթեոսի) հարցմունք (98 կանոն, որի մեծ մասը պատկանում է թարգմանիչ-խմբագրին):

5. Կանոնք Բարսղի Կեսարացոյ (51 կանոն, որից 10 կանոն թարգմանիչ-խմբագրինն է):

6. Կանոնք Սրբոյն Սահակայ (55 կանոն, որից 35-ն են հեղինակինը, իսկ 20-ը վերագրել ենք Ներսես կաթողիկոսին և Ներշապուհ եպիսկոպոսին):

7. Կանոնք Մակարայ Երուսաղէմի Հայրապետի (9 կանոն):

Շատ համառոտ հիմնավորենք վերոհիշյալ բնագրերի գրութիւն ժամանակը:

«Կանոնք առաքելականք»-ի կամ «Վարդապետութիւն առաքելոցի»-ի 20-րդ կանոնը գրելիս թարգմանիչ-խմբագիրները (Արդիշոյ, Ներսես և Ներշապուհ եպիսկոպոսներ) 547 թ., ինչպես կտեսնենք, բառացի օգտվել են «Կանոնք առաքելական ի ձեռն Կղեմայ» բնագրի 84-րդ կանոնից<sup>1</sup>, որը նկատել է դեռևս Հ. Տաշյանը:

464-467 թթ. Անտիոքի կանոնները հունարենից հայերեն թարգմանող և խմբագրող հեղինակը հենց առաջին կանոնում բառացի ընդմիջարկել է «Կանոնք առաքելական ի ձեռն Կղեմայ» կանոնախմբի յոթներորդ կանոնից և տվել է վերջինիս անունը. այն է՝ «զսահմանս զառաքելոցն»<sup>2</sup>, որոնք բնականաբար հունական բնագրում բացակայում են:

Ակնհայտ է, որ քննարկվող կանոնախումբը թարգմանվել և խմբագրվել է 464-467 թթ. առաջ՝ Սահակ կաթողիկոսի կողմից, որովհետև նա 85-րդ կանոնում հրամայում է եպիսկոպոսներին «Կանոնք առաքելական ի ձեռն Կղեմայ» կանոնները գործադրել հայոց մեջ: Հարկ է նշել, որ 85-րդ կանոնը՝ ևս բացակայում է հունական բնագրում:

Հովհաննես Օձնեցիի Գրիգոր Լուսավորչի կանոնախումբը վերագրում է Սահակ կաթողիկոսին, թեև թարգմանված է համարում հունարենից հայերեն<sup>3</sup>:

1 Տե՛ս Կանոնագիրք Հայոց, հ. Ա, էջ 99-100 և 40:  
2 Տե՛ս Կանոնագիրք Հայոց, հ. Ա, էջ 76 և 205-206:  
3 Տե՛ս Կանոնագիրք Հայոց, հ. Ա, էջ 402-403: Այն անհասկանալիորեն դրված է Սահակին վերագրվող խոսքի կանոնի տակ և այլ կանոնախմբի վերջին կանոնում, թեև անվերապահ վերաբերվում է Գրիգոր Լուսավորչի կանոններին ու ոչ մի կասկած չի կարող լինել, որ այն Գրիգոր Լուսավորչի կանոնախմբի վերջում և ինչ-ինչ պատճառով տեղափոխվել այլ տեղ: Այն ծառայել է այդ կանոնախմբի Հ. Օձնեցու վերջաբանը:

Նէոկեսարիայի և Լաոդիկեի կաճոնախմբերի հուշարձանից հայերեն կատարած թարգմանիչ-խմբագիրը՝ 464-467 թթ. ընթացքում, ընդմիջարկել և օգտվել է Գրիգոր Լուսավորչի կանոններից: Այսպես, Նէոկեսարիայի 8-րդ կանոնը, որը բացակայում է հուշարձանի բնագրում, պարզապես բառացի վերցվել է Գրիգոր Լուսավորչի 5-րդ կանոնից, իսկ Լաոդիկեի 29-րդ կանոնը թարգմանելու ժամանակ օգտվել է Գրիգոր Լուսավորչի 28-րդ կանոնից<sup>1</sup>:

Շահապիվանի կանոնների հեղինակը, թեև լրացնում է նոր կանոններով նախորդ կանոնախմբերը, այնուամենայնիվ մասամբ նկատի է ունեցել դրանք: Օրինակ, Շահապիվանի 11-րդ կանոնում օգտագործված ենք գտնում Գրիգոր Լուսավորչի 17-րդ, ինչպես և Սահակ կաթողիկոսի 33-րդ ու Աթանաս (Տիմոթեոս) Ալեքսանդրացուն վերագրվող, բայց Սահակ կաթողիկոսի կողմից խմբագրված և լրացված 36-րդ կանոնները<sup>2</sup>:

Պարզ է, որ վերոհիշյալ կանոնախմբերը թարգմանվել և գրվել են 445 թվականից առաջ՝ Սահակ կաթողիկոսի կողմից:

Բերենք երկու կանոն ևս: Նէոկեսարիայի կանոնախմբի թարգմանիչ-խմբագիրը 9-րդ կանոնը տալիս օգտվել է Բարսեղ Կեսարացու 4-րդ կանոնից: Ի դեպ Նէոկեսարիայի հիշյալ կանոնը ևս բացակայում է հուշարձանի բնագրում<sup>3</sup>, որը նույնպես լրացրել է Սահակ կաթողիկոսը:

Հարկ է նշել, որ Ագաթանգեղոսի պատմության և Շահապիվանի ժողովի կանոնների մեջ վկայություններ կան առաքելական կանոնների մասին, իսկ Կորյունի «Վարք Մաշտոց»-ի բնագրի առանձին հատվածներ վկայում են առաքյալներից հետո գրված կանոնական շնորհապատում գրվածքների, ինչպես և Սահակ կաթողիկոսի օտար Հայրապետների աշխատանքների թարգմանության մասին, որոնց թվարկեցինք վերևում:

Այս համառոտ ուրվագիծն անգամ կասկած չի թողնում, որ մեր իրականության մեջ «Կանոնագիրք Հայոց»-ի առաջին խմբագիր-հեղինակը Սահակ կաթողիկոսն է, որը ղեկավարել և ակտիվ մասնակցություն է ունեցել կանոնախմբերի թարգմանության-խմբագրության և ըստեղծման ժամանակ, ինչպես և ապահովել է նրանց գործադրությունը հայոց եկեղեցու կողմից:

445 թ. վերջերին հրավիրվել է Շահապիվանի ժողովը և գրվել են կանոններ, որոնց վավերականությունը կասկածից դուրս է: Այն լրացնում էր վերոհիշյալ կանոնական խմբերին:

451 թ. տեղի ունեցած Քաղկեդոնի ժողովից հետո անխուսափելի անհրաժեշտություն առաջացավ հուշարձանից հայերեն կատարված թարգմանությունների ընթացքում առավել ուշադրություն դարձնել կանոնական գրականությանը, հատկապես Նիկիայի ժողովի և նրան գաղափարակից ու հաստատող կանոնախմբերի հայացման վրա:

Հովհաննես Օձնեցին գրում է, որ Նիկիայի ժողովի և նրա շարունակությունը կազմող կանոնախմբերի հերթականությունը վերցրել է նախորդ շրջանի կազմողներից, իսկ դրանք ըստ «Կանոնագիրք Հայոց»-ի Ա խմբագրության հերթականության հետևյալ բնագրերն են:

1. Կանոնք Նիկիա մեծ ժողովոյն (20 կանոն, որոնք խմբագրվել են երկու կանոն ավելացվել ու պակասեցվել են):
2. Կանոնք Անկիւրեայ (20 կանոն, մեկ հոդված ավելացվել է և 6-ը՝ պակասեցվել):
3. Կանոնք Կեսարիայ (10 կանոն, վերցվել է Անկյուրիայի կանոններից և 4 կանոն ավելացվել):

4. Կանոնք Նէոկեսարեայ (20 կանոն, 8-12-րդ կանոնները լրացվել են, իսկ հուշարձանի բնագրում եղածները պակասեցվել են):

5. Կանոնք Գանգրայ (23 կանոն, որից 4-ը ավելացված է):

6. Կանոնք Անտիոքայ (25 կանոն, որից մեկը ավելացրած, իսկ մյուսները խմբագրված են):

7. Կանոնք Ղառոզիկեայ (55 կանոն, պակասեցրել են և խմբագրել կանոնները, չթարգմանելով առանձին կանոններ):

8. Կանոնք Սարդիկեայ (21 կանոն, խմբագրված են):

9. Կանոնք Կոստանդնուպոլսի (3 կանոն, ավելացվել է առաջաբանը Հ. Օձնեցու կողմից):

10. Կանոնք Եփեսոսի ժողովոյն (6 կանոն, խմբագրված է առաջաբանը և հուշարձանի նկատմամբ ունի պակաս կանոններ):

11. Կանոնք Սեւանտեայ (14 կանոն):

Այս կանոնական խմբերի թարգմանությունը և խմբագրությունը իրականացվեցին Գյուլտ կաթողիկոսի ղեկավարությամբ 464-467 թթ., որը հիմնավորվում է վերջերս մեր կողմից Նիկիայի վավերագրերը հայերեն թարգմանության թվագրությամբ: Վերը տեսանք, որ Անկյուրիայի կանոնները օգտագործվել են 550-ական թվականներին, իսկ Գանգրայի կանոնները՝ 604-607 թթ.: Հիշյալ կանոնախմբերը կիրառված ենք գտնում հետագայում ստեղծված կանոնախմբերի և առանձին բնագրերի մեջ, որոնց թվարկման համար պահանջվում են բազմաթիվ էջեր: Այլ խոսքով հիմնավորվում է, որ «Կանոնագիրք Հայոցի» երկրորդ խմբագրությունը իրականացրել է Գյուլտ կաթողիկոսը, որը լրացրել է հիշյալ կանոնախմբերը նոր կանոններով և պակասեցրել մեր տոնածիսական կարգերին չհամապատասխանող կանոնները: Այն հատկապես երևում է Գանգրայի կանոնների վերջաբանում ավելացրած հատվածով, որը բացակայում է հուշարձանի բնագրում: Հասկանալի է դառնում, որ արդեն 5-րդ դարի 60-ական թվականներին թարգմանվել կամ գրվել էին Հովհաննես Օձնեցու «Կանոնագիրք Հայոց» մտած հիմնական կանոնախմբերը:

Հարկ է նշել, որ վերոհիշյալ բոլոր կանոնախմբերը, որոնք հուշարձանից հայերեն կատարված թարգմանություններ են, ավելի հին են և մոտ նրանց ստեղծման ժամանակին, քան հուշարձանի, ասորական և այլ լեզուներով մեզ հասած կանոնական բնագրերը: Հասկանալի է, որ հայկական համարժեքները կարող են նպաստել հիշյալ բնագրերի սրբագրմանը և ավելի լավ հասկանալուն, մինչդեռ կատարվել են միայն հակառակ գործընթացներ:

Հովհան Մանդակունի կաթողիկոսը հավանաբար 480-ական թվականների սկիզբներին գրեց իր կանոնական հրամանները, որը Հովհան Օձնեցու կազմած կանոնագրում կրում է «Կանոնք Հովհաննու Մանդակունույ Հայոց կաթողիկոսի» վերնագիրը: Թեև որոշ հայագետներ այդ կանոնները թեական են վերագրել Հովհան Մանդակունուն, այսինքն դիտել են իբրև անհարազատ գրվածք, սակայն ոչ մի փաստով չեն հիմնավորել իրենց տեսակետը: Մենք ոչ մի հակառակ փաստ չունենք Հովհան Օձնեցու վկայության դեմ այն մասին, որ այդ կանոնները Հովհան Մանդակունուն են<sup>1</sup>: Մանավանդ Հովհան Օձնեցուց առաջ Անանիա Շիրակացին այդ կանոնների հեղինակ է ճանաչում Հովհան Մանդակունուն: Դեռ ավելին, Անանիա Շիրակացին օգտվելով այդ կանոններից հավաստում է, որ Քրիստոսի Մնուսդն ու Յայտնութիւնը միաժամանակ տոնելը Հունվարի 6-ին սահմանել է Հովհան Մանդակունին:

<sup>1</sup> Տե՛ս Կանոնագիրք Հայոց, հ. Ա, էջ 245 և 182, 249 և 235:

<sup>2</sup> Տե՛ս Կանոնագիրք Հայոց, հ. Ա, էջ 247, 385, 304-305 և 440-444:

<sup>3</sup> Տե՛ս Կանոնագիրք Հայոց, հ. Ա, էջ 337-338, 182-183, 576:

<sup>1</sup> Վարդավառի հնագույն բնագրերի ժամանակի մասին հոդվածում, որը տպագրվում է «Օղակաթ»-ում, ցույց ենք տվել, որ Հ. Մանդակունու մեկ կանոն հետագա խմբագրության արդյունք է:



Հայոց կանոնագրքի ձևավորման գործում առանձնակի դեր ունի «Կանոնք առաքելական»-ի կամ «Վարդապետութիւն առաքելոց»-ի թարգմանութիւն-խմբագրութիւնը: Այն կատարվեց ասորերեն լեզվից և տեղի ունեցավ 547 թվին<sup>1</sup>, ինչպես հիմնավորել ենք վերջերս հրատարակված մեր աշխատության մեջ: Նրա թարգմանիչ-խմբագիրներն էին Աբդիշոն, ինչպես և Ներսես ու Ներշապուհ եպիսկոպոսները:

Ի դեպ «Կանոնք առաքելական»-ի կամ «Վարդապետութիւն առաքելոց»-ի «...որ աւրչորք էր Մարգաց ամսոյ, յաւուր միաշաբաթուղ, որ է կատարումն Պենտակոստէին» հատվածի համար «Հայոց տոնացույց» կոմպյուտերային ծրագրի հաշվումները տալիս են հետևյալ արդյունքները.

Ներկա թվական	Հուլյան ամիս	Հուլյան ամսաթիվ	Հայոց թվական	Հայոց ամիս	Հայոց ամսաթիվ
428	6	10	-	11	4
519	5	19	-	11	4
533	5	15	-	11	4
547	5	12	-	11	4

«Կանոնք առաքելական»-ի թվագրման համար նախապատվութիւն չենք տվել 428 թվականին, ինչպես և 519 թ. և 533 թ., որովհետև թարգմանիչ-խմբագիրները բառացի օգտվել են Կլիմենտ Հռոմեացուն վերագրվող առաքելական, Շահապիվանի ժողովի, Հովհան Մանդակունու կանոններից, ինչպես և Ափրահատի ճառերից (թարգմանված 540-ական թվականներին, որի միջին տարեթիվն է 543-ը): Հասկանալի է, որ այդ բնագրի թարգմանութիւնը և խմբագրութիւնը կատարվել է 547 թվականին:

Վերոհիշյալ կանոնական գրվածքի թարգմանութիւնը, ինչպես և Ներսես կաթողիկոսի և Ներշապուհ եպիսկոպոսի (իբրև տեղապահ) կողմից կանոնական թղթերի ու կանոնների ստեղծումը անհրաժեշտութիւն էին ոչ միայն Հայոց եկեղեցին ավելի գործուն դեկավարելու, այլև Հուստինիանոսի 530-ական թվականների եկեղեցական քաղաքականութեան մեջ կատարած բարեփոխումների, որոնք վերաբերում էին Քաղկեդոնի հավատը Արևելյան եկեղեցիներում ներդնելուն: Այդ քաղաքականութիւնը, ինչպես և 553 թ. Կոստանդնուպոլսի ժողովը բերեցին նրան, որ Հայոց եկեղեցին, ինչպես և Ասորականը՝ Աբդիշոյի դեկավարութեամբ անջատվեցին քաղկեդոնական եկեղեցուց: Դրա վերջակետը եղավ Դվինի ժողովը, որը տեղի ունեցավ 555 թվականի մարտի 21-ին և գրվեց «Ուխտ միաբանութեան»-ը:

Վերը ցույց տվեցինք, որ Ներսես կաթողիկոսը և Ներշապուհ եպիսկոպոսը ոչ միայն թարգմանեցին կանոնական բնագրեր, այլև ստեղծեցին ինքնուրույն կանոնական թղթեր ու կանոններ, որոնք հիմնված էին մեր նախորդների ժառանգութեան վրա և ամրապնդում էին Հայոց եկեղեցու ինքնուրույն հիմքերը:

Հասկանալի է, որ «Կանոնագիրք Հայոց»-ի 3-րդ խմբագրութիւնը կատարվեց 6-րդ դարի 40-50-ական թվականներին վերոհիշյալ հեղինակների կողմից, որոնք նոր կանոնախմբերով հարստացրին մեր կանոնական ժառանգութիւնը:

Հայոց կանոնական բնագրերի (ինչպես թարգմանական, այնպես էլ ինքնուրույն, որոնք միմյանցից ըստ էության չեն տարբերվել), ստեղծումը 5-րդ դարի սկզբներից մինչև 6-րդ դարի կեսերը, վերոհիշյալ թվարկումով չի սպառվում: Հնարավոր է, որ թարգմանված լինեն այլ եկեղեցական գործիչների կանոնական բնագրերը, սակայն դրանց թվագրման համար բավարար

աշխատանքներ չեն կատարվել և դրանց պատասխանները կտրվեն հետագա քննութիւնների ընթացքում: Մանավանդ վերոհիշյալ բնագրերի հստակ թվագրումները նոր հեռանկարներ են բացում ուսումնասիրողների առջև:

550-ական թվականներով թվագրված Ներսես կաթողիկոսի և Ներշապուհ եպիսկոպոսի կողմից գրված կանոնական թղթերը, հատկապես «Թէ որպէս սահմանեցաւ կարգ ուխտի և որոշման վանաց» բնագիրը հնարավորութիւն է տալիս վերականգնել 6-րդ դարի Հայոց քրիստոնեական տոնացույցը և այն փոփոխութիւնները, որոնք բացակայում են վաղ բնագրերում:

<sup>1</sup> Ռ. Հ. Վարդանյան, Հայոց տոմարական եղանակը..., էջ 24-30:

ԱՆԴՐԵԱՍԻ 200-ԱՄՅԱ ԶԱՏԿԱՑՈՒՑԱԿ

Սահակ կաթողիկոսը հասկանում էր, որ Երուսաղեմի տոնացույցի թարգմանությունը և խմբագրումը բավարար չէր Հայոց քրիստոնեական տոնացույցի կիրարկումն ամբողջությամբ ապահովելու համար: Անհրաժեշտ էր ունենալ նաև Զատիկացուցակ, որը հիմք էր դառնալու Զատիկի և մյուս շարժական տոների օրերը որոշելու համար ոչ միայն տվյալ տարում, այլ առնվազն 95-ամյա պարբերաշրջանի համար: Այդպիսի Զատիկացուցակներ արդեն կազմվել էին, մնում էր ընտրություն անել: Սահակ կաթողիկոսը ընտրություն կատարեց Անդրեասի 200-ամյա Տոմար-Տոնացույց-Զատիկացուցակը, և ինչպես կտեսնենք, պատվիրեց Հովսեփ Պաղնացուն և Եզնիկ Կողբացուն թարգմանել այն ասորերենից և ներդրեց Հայոց քրիստոնեական տոնացույցի մեջ:

Ասորի և Հայ մատենագիրներին հայտնի է եղել Անդրեաս անունով մի հեղինակ: Նա, ըստ Եղիա Մծբնեցու, գրել է Զատիկի մասին մեկնություն, որն ուղղված է եղել հրեական Զատիկ դեմ, ինչպես և ժամանակագրություն<sup>1</sup>: Նրա աշխատությունների ասորերեն և հունարեն բնագրերը առայժմ հայտնի չեն: Հայկական սկզբնաղբյուրները ոչ միայն պահպանել են Անդրեասի անունը, այլ նաև նրա աշխատանքները, թեև ոչ ամբողջական վիճակում:

Քիչ հետո կտեսնենք, որ Եզնիկ Կողբացին և Մովսես Խորենացին օգտվել են Անդրեասի խմբագրած ժամանակագրությունից, իսկ Անանիա Շիրակացին իր ժամանակագրության մեջ հիմնականում պահպանել և հետագա սերունդներին է փոխանցել նրա ժամանակագրությունը սկսած Աբամից մինչև Արկադիոս և Օնորիոս (մոտավորապես 395-396 թթ.):

Անանիա Շիրակացին Զատիկին նվիրված մեկնության մեջ օգտվել է Անդրեասի նույնանուն մեկնությունից: Երևանի մատենադարանի 1973 և 1999 թվահամարների գրչագրերում գետեղված ենք գտնում Անդրեասի Զատիկի մեկնության ամբողջական և խմբագրված հատվածներ, ինչպես նաև կազմած 200-ամյա Զատիկացուցակի կանոնները: Այդ և այլ բնագրերի համադրությունները հնարավորություն են տվել վերականգնելու Անդրեասի 200-ամյա Տոմար-Տոնացույցը:

Աշ. Աբրահամյանը և Հ. Անասյանը անդրադարձել են Անդրեասի և նրան վերագրվող բնագրերին, ինչպես և ցույց են տվել, որ Հայ մատենագրության մեջ Անդրեասի մասին հիշատակություններ ունեն Անանիա Շիրակացին, Գևորգ Գառնեցի կաթողիկոսը, Հովհաննես Սարկավազը և այլ հեղինակներ, որոնց կանոնադառնանք քիչ հետո:

Ուշագրավ է, որ Երևանի մատենադարանի 1973 թվահամարի ձեռագրի գրիչը 1342 թ. հայտնում է, որ «Այս բոլորքս որ են ԴԺ-ան յԱնդրեասէն են հանուած»<sup>2</sup>:

Պարզվում է, որ Լուսնի 19-ամյա պարբերաշրջանի աղյուսակները, որոնք Անդրեասը իր Զատիկի մեկնության մեջ անվանել է «չորեքտասան» Անիից Երզնկա է բերել Հովհաննես Երզնկացին՝ Աբրահամ գրչի վարդապետը: Իհարկե վիճելի է, թե հիշյալ 19-ամյա բոլորակները ու՞մ հեղինակությունն են՝ Անդրեասի<sup>3</sup>, թե՞ Անանիա Շիրակացու, որի մասին վերջինս գրել է իր հիշատակագրության մեջ, բայց մի բան պարզ է, որ Անիում գտնվող մի ձեռագրում թերևս տոմարագրական բնույթի ժողովածուի մեջ են եղել Անդրեասի և Անանիա Շիրակացու բնագրերը:

1 V. Grumel, La Chronologie, Paris, 1958, p.98-108.

2 ՄՄ. 1973 թվահամարի գրչագիր, էջ 65ա:

որից ընդօրինակվել են ոչ միայն լուսնի 19-ամյա բոլորակները, այլ հատկապես «Անդրեասայ մեծի վասն սրբոյ պասեքի...» աշխատանքը:

Մեր ուսումնասիրություններով հնարավոր դարձավ թվագրել Անդրեասի Զատիկացույցի, ինչպես և ժամանակագրության հայերեն թարգմանության ժամանակը և գտնել նոր հետքեր վաղ շրջանի Հայ մատենագրական բնագրերում:

Անցնենք Անդրեասի աշխատությունների թարգմանությունների ժամանակի խնդրին:

Հայկական միջնադարյան գրչագիր ձեռագրերը պահպանել են ուշագրավ տեղեկություններ Անդրեասի տոմարի մասին: Անդրեասի 200-ամյա տոնացույցին նվիրված աշխատությունը թարգմանվել է ասորերենից<sup>1</sup> հայերեն, սակայն ամբողջական վիճակում չի պահպանվել: Նրա աշխատության ասորերեն բնագիրը հայտնի չէ<sup>2</sup>:

Մեր ուսումնասիրություններից պարզվել է, որ Անանիա Շիրակացին Զատիկին նվիրված մեկնության մեջ օգտվել է Անդրեասի աշխատության հայերեն թարգմանությունից: Այն հասկանալի պատճառով հատուկ քննության չենք առել, սոսկ որոշ մեջբերումներ ենք կատարել զուգահեռաբար թե՛ մեկից, թե՛ մյուսից:

Առկա ընդարձակ բնագիրը Մաշտոցյան Մատենադարանի<sup>3</sup> 1973 թվահամարի ձեռագրում (1342 թ.) կրում է «Անդրեասայ մեծի վասն սրբոյ պասեքի յետ և յառաջ խաղալոյ և վասն դրութեան երկերիւրեկին» վերտառությունը: Անդրեասի բնագրի թարգմանության համառոտած և խմբագրած օրինակը ՄՄ 1999 թվահամարի ձեռագրում (1126 թ.) ունի «Խոսք Անդրէասի ի մաստասերի վասն Զատիկայ» անվանումը:

Բնագրի ներքոհիշյալ հատվածը, ինչպես նշել են ուսումնասիրողները, հնարավորություն է տալիս թվագրելու Անդրեասի 200-ամյա տոնացույցի ասորերենից հայերեն թարգմանություն ժամանակը:

Ներկայացնենք բնագիրը՝

«[Արդ՝ սկիզբն] Հասարակելոյ տուրնջեան և գիշերոյ ըստ թուոյ Եգիպտացուցն ի Ի և ի Դ (24) ամսոյն լինի, որ անուանեալ կոչի պեմենովթ, որ գայ կշուի ըստ թուոյ Անտիոքացուց ի Ի երորդում (20) դիւստրոս ամսոյն, այսինքն՝ ի Մեհեկանի, և քանզի Քրիստոս ի ԴԺ աներորդում (14) աւուր ամսոյն առաջնոյ / = Նիսան / չարչարեցաւ, յայտ է՝ յետ Հասարակելոյ տուրնջեան և գիշերոյ յ]Արեգ / = Նիսան / ամսեան, և այս ոչ վրիպեալ է ի մէնջ, թեև այժմ ի մեր ամս և աւուրս յարեգ ամիս են / ընդգծումը մերն է - Ի. Վ./, բազում անգամ արարին հրէայք Զատիկն»<sup>4</sup>:

Մինչ թարգմանության ժամանակի մասին մեր տեսակետը շարադրելը, համառոտակի ներկայացնենք Աշ. Աբրահամյանի և Հ. Աղայանի կարծիքները:

Աշ. Աբրահամյանն առաջին անգամ հրատարակել է Անդրեասի Զատիկի մեկնությունը «Անդրեասի տոմարագիտական աշխատությունները» վերտառությամբ հոդվածում: Այնտեղ նա

1 Տե՛ս Մ. Ա. Կեր-Պետրոսյան, Сиро-Армянские литературные связи в IV-V вв. (Автореферат), Ленинград, 1986, стр. 11-17.  
2 Ատորական սկզբնաղբյուրներից հայտնի է միայն Եղիա Մծբնեցու վկայությունները Անդրեասի և Արա աշխատությունների մասին (տե՛ս V. Grumel, La Chronologie, Paris, 1958, p. 98-108):  
3 Այսուհետև՝ ՄՄ:  
4 Հ. Աղայան, Անդրեաս Բյուզանդացու երկուհարյուրամյա տոնացույցը և Արա հայերեն թարգմանությունը, Բանբեր Երևանի համալսարանի, Երևան, 1979, նո. 2, էջ 135: Աշ. Աբրահամյան, Անդրեասի տոմարագիտական աշխատությունները, բնագիտության և տեխնիկայի պատմությունը Հայաստանում / Գիտական աշխատությունների ժողովածու /, հ. 6, Երևան, 1967, էջ 78:



աղբյուրագիտական-տեքստաբանական այլ հարցերի հետ միասին անդրադարձել է նաև Անդրեասի բնագրի թարգմանության ժամանակի խնդրին<sup>1</sup>:

Անդրեասի 200-ամյա տոնացույցի թարգմանության ժամանակը որոշելու համար Աշ. Աբրահամյանը հիմք է ընդունել գարնանային գիշերահավասարի օրը /Մարտի 20/ և հայկական Մեհեկան ամիսը /24-ից 30-ը/<sup>2</sup> և հանգել այն հետևություն, թե թարգմանությունը կատարվել է մինչև 381 թվականը /մյուս հոգվածներում՝ 383 թ./<sup>3</sup>:

Առաջին հոգվածում նկատի ունենալով Արեգ ամսի հիշատակությունը նա չի բացառել նաև 5-րդ դարի սկզբում թարգմանած լինելու հանգամանքը: Աշ. Աբրահամյանը հետագայում հրատարակել է իր վերոհիշյալ վարկածից և ընտրել միայն Մեհեկանով թվագրելը, այսինքն մինչև 383 թվականը:

Հարկ է նշել, որ Անդրեասի թարգմանիչը բնագրի նույն հատվածում բացի Մեհեկան ամսանունից հիշատակել է նաև նրան հաջորդող ամսի՝ Արեգի անունը: Հայտնի փաստ է, որ գարնանային գիշերահավասարը Արեգ ամսին /1-ից 30-ը/ եղել է 384-387 թթ. սկսած մինչև 500-503 թթ.:

Գարնանային օրահավասարի համար հայոց Մեհեկան և Արեգ իրար հաջորդող ամիսների հիշատակությունը ակնհայտ կերպով բացառում է բնագրի թարգմանությունը Մեհեկանով թվագրելը: Ի դեպ թարգմանիչը գարնանային օրահավասարն ընդունել է հայկական Մեհեկան և Արեգ ամիսներին:

Հասկանալի է, որ գարնանային գիշերահավասարը Մեհեկանին եղել է Անդրեասի 200-ամյա աղյուսակի առաջին 32 տարում, իսկ հետագա 120 տարում՝ Արեգին՝ վերջապես վերջին 48 տարում՝ Ահեկանին:

Այսպիսով պարզ է դառնում, որ եթե առաջներում /353-383 թթ./ գարնանային գիշերահավասարը համընկնում էր Մեհեկան ամսին /23-ից 30-ը/, ապա իր ապրած ժամանակ թե՛ գարնանային օրահավասարը /Մարտի 20/, թե՛ Քրիստոսի չարչարանքի օրը, այն է՝ առաջին լուսնի լրման օրը /Նիսան 14=Ապրիլի 4/ և փաստորեն լուսնի 19-ամյա պարբերաշրջանի առաջին տարին լինում է Արեգ ամսին:

Դժբախտաբար Աշ. Աբրահամյանը չի նկատել թարգմանության տարին հավաստող այս չափազանց կարևոր և ըստ էության միակ փաստը, որն առկա է վերոհիշյալ հատվածում:

<sup>1</sup> Աշ. Աբրահամյան, Անդրեասի տոմարական աշխատությունները, էջ 72-74:

<sup>2</sup> Եթե ընդունենք, որ 353-356 թթ. նավասարդի 1-ը համարված է եղել օգոստոսի 29-ին, ապա Մեհեկանի 24-ը զուգահեռվել է մարտի 20-ին: Իսկ եթե ընդունենք, որ նավասարդի 1-ը համապատասխանել է օգոստոսի 30-ին, ապա Մեհեկանի 23-ը համարված է մարտի 20-ին: 552 թ. նավասարդի 1-ը = հուլիսի 11 համապատասխանությունը ցույց է տալիս, որ 353 թ. նավասարդի 1-ը համարված է օգոստոսի 30-ին: Բ. Թումանյանը գտնում է, որ օգոստոսի 29-ը 30 է դառնում այն պատճառով, որ հուլյան տոմարում 4-րդ տարվա մեջ նախքան է լինում, իսկ եգիպտականում՝ 3-րդ: Սակայն հայկական շարժական տոմարը նախքան չունենալ և եգիպտական խմբին չէր պատկանում, ուստի վերոհիշյալ զուգահեռությունը պատահական է: Նույնիսկ այն պարագայում, եթե 353-356 թթ. նավասարդի 1-ը համարված լիներ օգոստոսի 29-ին: Մանավանդ հեղինակը տարեգրությունը ընդունել է մարտի 22-ը և ոչ օգոստոսի 29-ը, ինչպես ենթադրվել է մինչև այժմ:

<sup>3</sup> Աշ. Աբրահամյան, Հայոց գիր և գրչություն, Երևան, 1973, էջ 102-104, նույնի, Աղբյուրագիտական վիճելի մի քանի հարցերի մասին, Պատմա-բանասիրական հանդես, 1976, նո 2, էջ 175, նույնի, Անդրեաս Բյուզանդացու տոնացույցի թարգմանության ժամանակը, Պատմա-բանասիրական հանդես, 1980, նո 2, էջ 179-189:

Անդրեասի բնագրի հրատարակման և ուսումնասիրման գործում արժեքավոր աղբյուրագիտական և տեքստաբանական դիտողություններ ունի է. Բ. Աղայանը: Նա նույնպես անդրադարձել է Անդրեասի 200-ամյա տոնացույցի թարգմանության ժամանակին<sup>1</sup>:

Է. Աղայանն իրավացիորեն հիմք է ընդունել թարգմանչի այն հաղորդումը, թե գարնանային գիշերահավասարի օրը, թե Քրիստոսի չարչարանաց օրը լինում են Արեգ ամսին: Սակայն նա հիմնվել է բնագրի մի հատվածի վրա, որտեղ առաջին ամսվա սկիզբը, այսինքն՝ նիսանի 1-ը փաստագրվել է Մարտի 19-ը, որը գրչական սխալ է և չի հիմնավորվում հայկական տոմարական սկզբնաղբյուրներով: Բացի այդ է. Աղայանը Քրիստոսի չարչարանաց օրը համարել է Ապրիլի 1-ը, որը նույնպես ընդունելի չէ, քանի որ բնագրում փաստագրվել է Քրիստոսի չարչարանաց օրը, այն է՝ առաջին լուսնի լրման օրը /Նիսան 14 = Ապրիլի 4/, այսինքն՝ լուսնի 19-ամյա պարբերաշրջանի առաջին տարին, որը հայտնի է հայկական տոմարական բնագրերից: Դժբախտաբար է. Աղայանը ևս ուշադրություն չի առել այն, որ բնագրում հատուկ ընդգծվում է լուսնի 19-ամյա պարբերաշրջանի առաջին տարին, որով որոշվում է թարգմանության տարին: է. Աղայանի կողմից հաշված 421 /կամ 440/ թվականը չի կարող թարգմանության տարին լինել, որովհետև այն Անդրեասի լուսնի 19-ամյակի 12-րդ տարին է, երբ լուսնի լրումը Ապրիլի 2-ին /Նիսանի 12-ին/ էր:

Առկա բնագրերի ու հայ տոմարագետների, հատկապես Անանիա Շիրակացու և Հովհաննես Իմաստասերի աշխատությունների օգնությամբ փորձենք հասկանալ ու տեսնել, թե նրանք ինչպես են բացատրել մի քանի տոմարական հարցեր, որոնց վրա էլ հիմնականում հիմնված է 200-ամյակի թարգմանության ժամանակի որոշումը:

Անդրեասը, ինչպես հայտնի է, կազմել է 200-ամյա Տոմար-Տոնացույց: Այդ մասին նա Ձատկի մեկնության մեջ գրել է.

«...վասն այսորիկ երկերիւր ամի միանգամայն համարեցայ ըստ թուլոն Անտիոքացոց ի չորեքհարիւրորդէ առաջնորդէ ամէն մինչև յամն վեցհարիւրորդ այնոցիկ, որ կացցեն յաշխարհի, կազմեցի ես՝ Անդրէաս, եղբայր Մագնոսի եպիսկոպոսի, և դրոշմեցի առանձինն զբնաւ, զմի մի ամ երկերիւրն ամի, յեւթն և ի Ժ /17/ կանոն, որովք զամենայն համարն բովանդակեցի յերկերիւր կարգ և զզատիկն մեկնեցի զմի մի կարգս առ մի մի տարի»<sup>2</sup>: Այս թվերի մասին կիսոսենք քիչ հետո:

Արդ տեսնենք, թե այս հաղորդումը ինչպես են ընկալել հայ տոմարագետները և մատենագիրները:

Դիմենք Անանիա Շիրակացու և Հովհաննես Իմաստասերի համարժեք վկայություններին:

#### Շիրակացի

«Բայց Էասանք, որ ԳԳ (պետք է լինի ԻԳ - Ռ. Վ.) նիսան կարգեցին գլուխ բոլորին, եւ ոչ աղարտեցին զառաջինն բայց զի տոմարն Անդրեասեան երկերիւր ամացն յե-

#### Իմաստասեր

«Բայց Էասեանքն, որ ԻԳ նիսանայ կարգեցին գլուխ բոլորին և զայնոց ազգացն՝ որ նմա հանդիպին, ոչ թե զնա խոստովանեցան և համարել գլուխ բոլորին և ոչ ա-

<sup>1</sup> Է. Բ. Աղայան, Նախամաշտոցյան հայ գրի ու գրականության, մեսրոպյան այբուբենի և հարակից հարցերի մասին, Երևան, 1977, էջ 126-145: Նույնի, Անդրեաս Բյուզանդացու երկուհարյուրամյա տոնացույցը և նրա հայերեն թարգմանությունը, Բանբեր Երևանի համալսարանի, նո 2, 1979, էջ 128-129, նույնի Անդրեասի երկուհարյուրամյա զատկացույցի թարգմանության ժամանակի մասին, Պատմա-բանասիրական հանդես, նո 2, 1980, էջ 190-198: Նույնի, հայոց բուն թվականի սկիզբը և Հայկական շրջանները, Լրագրեր /հաս. գիտ./ նո 11, 1983, էջ 16: Նույնի, Ավանարկներ հայոց տոմարների պատմությունից, Երևան, 1986, էջ 93-150:

<sup>2</sup> Է. Աղայան, Անդրեաս Բյուզանդացու երկուհարյուրամյա տոնացույցը, էջ 138: Աշ. Աբրահամյան, Անդրեասի տոմարական աշխատությունները, էջ 80:

րիս /պետք է լինի ի Դ - Ռ. Վ./ Գիսան սպառեցաւ եւ սկիզբն հինգհարիւրէկին ի երեք /ի-ին տալ թվի ԳՅԱՆԿՈՒԹՅՈՒՆ և կարողալ՝ ԻԳ - Ռ. Վ.) Գիսան եղէ վասն այնորիկ եղ ի գլուխ բոլորին ոչ ի սկզբանէ ելիցն եւ խաչելութեան, այդ անին իսկ հինգհարիւրեակ բոլորին բայց խոստովանեցին գլուխ բոլորին զչորեքսասան Գիսան, զհրամայեալն ի Տեառնէ, որում եւ մեք հետեւեցուցրուք»

/Անանիա Օրբակացու մատենագրութիւնը, էջ 299/:

դարտեցին զառաջինսն: Այլ վասն զի տամար Անդրէասայ երկու հարիւր ամացն ի չորս Գիսան սպառեցաւ: Եւ սկիզբ Օ եակ բոլորին ի քսան և երեք Գիսանայ եղև, վասն այնորիկ գնա եղ գլուխ բոլորին ոչ միայն ի սկզբանն, և ելից և խաչելութեան այլ միայն ամին, իսկ հինգհարիւրեակ բոլորին: Բայց խոստովանեցին գլուխ բոլորին զՕԴ Գիսանայ հրամայելոյն ի Տեառնէ, որում մեք հետեւեցուցրուք»:

/Հովհաննէս Իմաստասերի մատենագրութիւնը, էջ 275/:

Ըստ Շիրակացու և Իմաստասերի զուգահեռ վկայութիւններ<sup>1</sup> Անդրեասի 200-ամյակը ավարտվել է Նիսանի 4-ին /= Մարտի 25/ լուսնի լրումով:

Անդրեասի տոմարի մասին Հովհաննէս Իմաստասերի աշխատութիւններում գտնում ենք նաև հետևյալ վկայութիւնները:

1. «Եւ է սկիզբն երկուհարիւրեկին /Անդրեասի - Ռ. Վ./ ի չորից ապրիլի չորեքտասաներորդն լուսնոյ զատկաց. և վախճան, յետ տաս ինն և տասներեկաց և տասանց ամաց<sup>2\*</sup> »<sup>3</sup>:

2. «Բայց երկուհարիւրեակն ի չորից անտի ապրիլիոս ամսոյ սկսանի և առնու վախճան ի մարտիս ամսոյ ի քսան և հինգին. տասն անգամ կատարեալ զբոլորն, և տաս ևս այլ ի վերայ ամս»<sup>4</sup>:

Հովհաննէս Սարկավազի տեղեկութիւններից պարզվում է, որ Անդրեասի 200-ամյակը կազմվել է 19×10+10 /կամ 19×5+19×5+10/ տարուց, որն սկսվել է 19-ամյակի առաջին տարով, երբ լուսնի լրումը Ապրիլի 4-ին էր և ավարտվել 10-րդ տարով, երբ լուսնի լրումը Մարտի 25-ին էր:

Հայկական թվականի սկզբի կապակցությամբ Անդրեասի 200-ամյակի մասին Սամուել Անեցու մոտ կարդում ենք.

«Աստանոր լցեալ լինի ամք ի ծննդենէն Քրիստոսի ՇԾԳ յորում և բովանդակեցան կանոնք Մեկին Անդրիասայ, զորոյ զկնի կարգեցաւ թուականս Հայոց այսպիսի պատճառաւ. ի լրմանն Մ. եկին, լրումն զատկին, ի մարտի ԻՆ էր: Եւ ի սկզբանն՝ յապրիլ Դ»<sup>5</sup>:

Այս հաղորդման մեջ Սամուել Անեցին փաստորեն կրկնել է Անանիա Շիրակացուն և Հովհաննէս Իմաստասերին միայն լրացուցիչ հայտնելով Անդրեասի 200-ամյակի վերջին տարին, այն է՝ 553-ը՝ քրիստոնեական հայկական թվականով: Ժամանակին Անանիա Շիրակացուն, Հովհաննէս Իմաստասերին, հատկապես Սամուել Անեցուն կրկնել են Կիրակոս Գանձակեցին, Ստեփանոս Օրբելյանը, Հակոբ Ղրիմեցին և այլ հեղինակներ<sup>6</sup>:

Անդրեասի տոմարի առաջին տարվա համար 1342 թ. գրված ՄՄ 1973 թվահամարի ձեռագրում ասվում է. «...և սկիզբն իրողութենէս այսմիկ ՅԾԴ ամն գալստեան Տեառն մերոյ)»

1 Անանիա Օրբակացու մատենագրութիւնը, էջ 299, Հովհաննէս Իմաստասերի մատենագրութիւնը, էջ 275:  
 2\* Բնագրում՝ ամսոց, որը գրչական սխալ է:  
 3 Հովհաննէս Իմաստասերի մատենագրութիւնը, էջ 246:  
 4 Անդ, էջ 247:  
 5 Սամուէլի քահանայի Անեցույ, Հաւաքումը ի գրոց պատգամաց, Վաղարշապատ, 1898, էջ 74:  
 6 Կիրակոս Գանձակեցի, Պատմութիւն հայոց, Երևան, 1961, էջ 41-42: Ստեփաննոսի Սիւնեաց եպիսկոպոսի Պատմութիւն տանն Սիսական, Մոսկվա, 1861, էջ 69-70: ՄՄ ձեռ. Գո 1114, էջ 90բ, 90ա-բ:

Յիսուսի Քրիստոսի և ՆԱ երորդ ամն շինածոյ Անդրոք քաղաքի և Դիողղիանոսի ԿԹ ամ և Կիրոս քաղաքի ՈԿԴ ամ և ի [Ժ]<sup>1</sup> Ջերորդ հիմատող Կոստանդնի ոգոստին որդոյ Կոստանդին եւ ի ԱԺ ինդիքտիոնին յետ զնահանջսն կարգելոյ) յորս դիպի ԺԴ երորդն լուսնի սուրբ զատկին ապր[իլի] Դ...»<sup>2</sup>:

Հիշյալ թվերը աղյուսակի մեջ ունեն հետևյալ տեսքը:

Ձուգահեռ թվականներ	Թվերից ստացված մնացորդները	19-ամյակի հմայտ. տարվա լուսնի լրումը	19-ամյակի 1-ին տարվա լուսնի լրումը
1	2	3	4
354 /Քրիստոնեական հայկական թվական/	12/-1-1=-2/	A 4	A 13
401 /Անտիոքի հիմնադրման թվական/	2(-1)	A 4	A 4
69 /դիողղետիանոսի էրա/	12	A 4	A6 A5
Կոստանդինի 16-րդ տարին=353 թ	11(-1)	A 4	A 13
664 /Կիրոսի հիմնադրման թվական/	18(+2)=1	A 4	A 4
11-րդ ինդիկտիոն			
353 /Քրիստոնեական դիոնիսյան թվական/	11	A 4	-
	11/-1/	A 4	A 13

Վերը բերված բոլոր համաժամանակյա թվականներով Անդրեասի տոնացույցի առաջին տարին, այն է՝ 353 թվականին լուսնի լրումը եղել է Ապրիլի 4-ին, իսկ Ջատիկը՝ ապրիլի 11-ին<sup>3</sup>: 353 թվականին լուսնի լրումը փաստագրվել է նաև Վ. Գրյունելի ժամանակագրության գլխավոր աղյուսակում<sup>4</sup>: Անդրեասի 200-ամյակի վերջին տարին Անտիոքի հիմնադրման թվականության 600-րդ տարին է, որը կրկին բաժանելով 19-ին, ստանում ենք 11 մնացորդ, որից հանելով մեկ միավոր ստանում ենք Անտիոքյան 19-ամյակի 10-րդ տարին: Այն համարժեք է Անդրեասի 19-ամյակի 10-րդ տարուն, երբ լուսնի լրումը Մարտի 25-ին էր:

Անդրեասի 200-ամյակի վերջին տարին քրիստոնեական հայկական թվականով Սամուել Անեցին փաստագրել է 553-ը: Այն բաժանելով 19-ի ստանում ենք երկու մնացորդ, որից մի կողմից հանելով մեկ հավելադիր տարին, մյուս կողմից 19-ամյակի տարին ստանալու համար պետք է հանել ևս մեկ թիվ և լուսնի լրումը կլինի Մարտի 25-ին՝ հայկական և հռոմեական 19-ամյակի 19-րդ տարուն: Վերահիշյալ երկու թվերն էլ համարժեք են քրիստոնեական դիոնիսյան թվականի 552 տարուն, որտեղ ևս 19-ամյակի համապատասխան տարին ստանալու համար բաժանում ենք 19-ի և հանում մեկ միավոր և լուսնի լրումը գալիս է Մարտի 25-ը:

Այսպիսով ակնհայտ է, որ Անդրեասի 200-ամյակը սկսվել է 353-ին և ավարտվել է 552 թվականին. լուսնի 19-ամյակի առաջին լրման տարին եղել է Ապրիլի 4-ը /=Նիսանի 14/, 10-րդ տարին՝ Մարտի 25-ը /=Նիսանի 4/:

Անդրեասի 200-ամյա տոմար-տոնացույցը չօգտագործվեց հետագայում շարունակաբար, որովհետև թերութիւններ ունեն:

1 Ուղղումը Աշ. Աբրահամյանի:  
 2 ՄՄ ձեռ. Գո 1973, էջ 251ա:  
 3 V. Grumel, Գշվ. աշխ., էջ 240-244:  
 4 V. Grumel, Գշվ. աշխ., էջ 240-244:

Այդ մասին վկայություններ է թողել Անանիա Շիրակացին: Նա գրել է. «Ապա ի սպառել Անդրեասեան տոմարին ամացն երկերիւրոց յաւուրս Յուստիանոսի թագաւորի, եղև բազում խնդիր հմտագոյն իմաստասիրաց՝ վասն ոչ բերելոյ ճշգրտիւ գկարգ իննեւտասն բոլորակին, որ իննսուն և հինգ ամով բովանդակէր զեղանակ շրջագալութեան. նոյն յոլովից թուեցաւ դժոխին, զի բազում ամաւք ըստ աւուրց ըստ աւուրց բոլորակին չտալէր զկնի բեսիքիստոնն...»:

Անդրեասի տոմարը, ինչպես տեսանք, հիմնվել է լուսնի 19-ամյա պարբերաշրջանի վրա: Նրա մոտ այդ շրջանը հայտնի է «չորեքտասաներորդն լուսնի» կամ պարզապես «չորեքտասաներորդ» անվանումներով:

Ներկայացնենք որոշ վկայություններ.<sup>1</sup>

1. «Զի թէ դիպեսցի Դժ-աներորդն ի շաբաթուն, յառաջագոյն պահէ յեկուշաբաթոյն մինչև ի շաբաթն և ունի կարգ կատարեալ»:
2. «...որն Դժ աներորդին լուսնի...»:
3. «...աւրն չորեքտասաներորդի լուսնի անցանէ...»:
4. «...թեպէտ և չորեքտասաներորդն իսկ նմա դիպեսցի...»:
5. «և վասն այսորիկ յորում եւուր դիպեսցի չորեքտասաներորդն լուսնի, եթէ կիրակի դիպեսցի, միւս շաբաթ անցանէ, և եթէ երկշաբաթով դիպեսցի, պահէ շաբաթն ողջոյն, զի երթիցէ հասցէ և լցցէ զխորհուրդն և ի շաբաթու չարչարանացն պահեսցէ, վասն այսորիկ իսկ և պասքա կոչի, որ թարգմանի չարչարանք փրկչին մերոյ»:
6. Տես նաև է, Ը, Թ և Ժ կանոնները:

Բարեբախտաբար Անդրեասի, ինչպես և նրանից օգտված Շիրակացու բնագրերում փաստագրվել է չորեքտասաներորդի, այսինքն՝ լուսնի 19-ամյա պարբերաշրջանի առաջին տարվա մասին: Դիմենք վկայություններին<sup>2</sup>:

Անդրեաս  
1. «Քանզի բազումք յասորոց աներկիւղ յամառութեամբ կարծեցին, եթէ յԲԺ-աներորդում ամսեան պարտ իցէ առնել զգատիկն բաղարջակերաց, զոր Աստուած կանխաւ ի ձեռն Մովսէսի պատուիրեաց որդւոցն Իսրայելի, որպէս և գրեալ է, թէ՛ ասաց Տէր ցՄովսէս և ցԱհարոն այս եղիցի ձեզ սկիզբն ամսոց. առաջին լիցի ձեզ ամեայն ամսոց տարւոյն: Ասաջիր յամեայն ժողովրդի որդւոցն Իսրայելի ի Ժ երորդում ատուր յամսեանս յասմիկ աոցեն իւրաքանչիւր գառն ըստերդ և եղիցի պահել զգուշացեալ անոց մինչև ի տասն և չորրորդ [աւրն] ամսոյն, քանզի և յայնմ ատուր փրկեցան ազգն և ցեղք անոց՝ մշանակեալ արեամբն ի վերայ սեմոց դրանց անոց՝ ի հնազանդութիւն և ի ծառայութիւնն փարաւոնի»:

Անանիա  
«Չտան արքոյ գատիկիս ուսաք ի Մովսէսէ և յելիցն Իսրայելի յԵփայտոսէ, քանզի գրեալ է այսպէս. Խաւսեցաւ Տէր ընդ մովսէսի և ընդ Ահարովնի յերկրին Եփայտացոց և ասէ. Ամիսս այս եղիցի ձեզ սկիզբն ամսոց, առաջին եղիցի ձեզ յամիսս տարւոյ: Եւ յառաջ մատուցեալ ասէ. Ի տասներորդում ատուր ամսեանս այսորիկ աոցեն իւրաքանչիւր ոչխար ըստ տունս, ապա թե ոչ ըստ տանց տոհմից յառագա աղքատութեանն հանկանակեալ: Եւ զնովիմբ ածեալ ասէ. «Եւ եղիցի պահեալ մինչեւ ցտասն և չորս ար ամսոյս այսորիկ. և զենցեն ընդ երեկս և շաղախոսցեն զբարաւորն. և զերկուսեան սեամսն յարեւելն, որ եղև պահպանական անդրանկացն առի սատաւելն»:

<sup>1</sup> Է. Աղայան, Անդրեաս Բյուզանդացու երկուհարյուրամյա տոնացույցը, էջ 137, 138-139: Աշ. Աբրահամյան, Անդրեասի տոմարական աշխատությունները, էջ 79, 80-81:  
<sup>2</sup> Է. Աղայան, Անդրեաս Բյուզանդացու երկուհարյուրամյա տոնացույցը, էջ 134: Աշ. Աբրահամյան, Անդրեասի տոմարական աշխատությունները, էջ 75-76:

2. «... և քանզի Քրիստոս ի Դժ-աներորդում աւուր ամսոյն առաջնոյ /Նիսան/ չարչարեցաւ յայտ է՝ յետ հասարակելոյ տուրնջեան և գիշերոյ [յ]Արեգ /Նիսան/ ամսեան...»:  
Անդրեասի, ինչպես և Շիրակացու հիշյալ բնագրերում չորեքտասաներորդի լուսնի ասելով ընկալել են լուսնի 19-ամյա պարբերաշրջանը, իսկ այդ ցիկլի առաջին տարին Նիսանի 14-ը /Սպրիլի 4-ը/: Այդ են վկայում նաև Շիրակացու և Իմաստասերի համարժեք տեղեկությունները<sup>1</sup>:

<p>Օիրակացի</p> <p>1. «...ի չորրորդ ատուրն ապրելի եղ չորեքտասան լուսնի. և կարգեաց զնա զլուսն բոլորի. վասն զի ի միմ ատուր հանդիպի ըստ երապեցոց չորեքտասան Նիսան լուսն և անվերադրութիւն»:</p> <p>2. «Ապա և յետոյ Եգրաս անորգեալ կարգեաց զին և տասներեակ լուսնի ազգին երապեցոյ. և անխափան տաւնեցաւ մինչև զխաչելութիւն փրկչին. յորում դիպաւ ի չորեքտասաներորդումն միսան լուսնի յատուր հինգշաբթոյ ըստ արիմակի յելիցն յԵփայտոսէ»:</p>	<p>Իմաստասեր</p> <p>1. «... ի չորս ապրիլի եղ զչորեքտասան լուսնի և կարգեաց զնա զլուսն բոլորին, վասն զի ի սմին ատուր հանդիպի չորեքտասան միսանայ լուսն և անվերադրութիւն»:</p> <p>2. «Ապա յետոյ Եգրայ անորգեալ կարգեաց զին և տասներեակ լուսնի զազգին երապեցոց և անտի անխափան տաւնեալ մինչև ի խաչելութիւն Քրիստոսի, յորում դիպաւ չորեքտասաներորդն Նիսան յատուր Ե շաբթոյ լուսն լուսնին ըստ արիմակի ելիցն յԵփայտոսէ, զի և մեք փրկեցաք պատուական արեամբ Քրիստոսի»:</p>
---	--

Հովհաննես Սարկավազից հասել են նաև<sup>2</sup> հետևյալ տեղեկությունները: 1. «Եւ որ ասեն ի չորս ապրիլի, որ է Նիսան չորեքտասան»:

2. «Եւ էր լրումն լուսնոյ գատկաց չորրորդն ապրիլի, որ է չորեքտասան Նիսան ամսոյ»:  
Այսպիսով կասկածից վեր է, որ երբայական Նիսան ամսի 14-ը համարժեք է հուլյան տոմարի Ապրիլի 4-ին: Այն լրման օր է ընդունվել և լուսնի 19-ամյա պարբերաշրջանի առաջին տարի:

Չորեքտասաներորդի կամ չորեքտասաներորդի լուսնի, այսինքն լուսնի 19-ամյա շրջանի ետ և առաջ շարժվելու օրինաչափությունների մասին կան տեղեկություններ Անդրեասի Զատիկ մեկնության մեջ:

Բնագրի ընդարձակ, թե համառոտ խմբագրությունների մեջ<sup>3</sup> փաստագրվել են հետևյալ համարժեք հատվածները.

<p>Ընդարձակ խմբագրություն</p> <p>«Արդ՝ եկեղեցի Քրիստոսի, յորժամ դիպեսցի Դժ-աներորդ լուսնոյ յԺԹ-երորդէն մարտի ամսոյ և անդէն ի մոտս կատարեսցին ԲԺ-ան ամսեայ թիւքն լուսնոյն, միս ևս ամիս յաւելումք ի վերայ բԺ-ան ամսոյն, որ անուանեալ կոչի անհանջեալ, զի այն ամբ, քանզի պակաս գտանին թիւք ընթացից»</p>	<p>Համառոտ խմբագրություն</p> <p>«Արդ՝ եկեղեցի Քրիստոսի, յորժամ դիպի չորեք Ժ-ան լուսնին, որ է ի մարտի ժ ը մինչև ի ԺԷ ապրիլի, այսինքն արեգ»:</p>
---	--

<sup>1</sup> Անանիա Օիրակացու մատենագրությունը, էջ 295, 294: Հովհաննես Իմաստասերի մատենագրությունը, էջ 272, 271:  
<sup>2</sup> Հովհաննես Իմաստասերի մատենագրությունը, էջ 225, 252:  
<sup>3</sup> Է. Աղայան, Անդրեաս Բյուզանդացու երկուհարյուրամյա տոնացույցը, էջ 135-136: Աշ. Աբրահամյան, Անդրեասի տոմարական աշխատությունները, էջ 73, ՄՄ ձեռ. նո 1999, էջ 18ա:

լուսնոյ քան զթիւ ընթացից արեգականն, այսպէս կազմեցաւ, զի նահանջեալ ամսաւք լիցի, որպէս զի երթիցէ հասցէ թիւք ընթացից լուսնոյ թուոյ ընթացից արեգականն...»:

**Բերենք Անդրեասի բնագրից օգտված Շիրակացու և Իմաստասերի համարժեք վկայութիւնները<sup>1</sup>:**

**Շիրակացի**

«Արդ քանզի տուչութիւն եկեղեցւոյ ունցանէ պահել ամի զաւր բաղարջակերացն, եւ յորժամ դիպի չորեքտասան լուսնի ի չորս անելացն մինչև ի քսան եւ ութերորդն [Նիսանայ], այսինքն է ապրելի [ուր և տասն] պահեմք եւ առնեմք զատիկ: Իսկ եթէ չորս անելացն է, անդէն յաղարս ամիս կոյս կատարիցի երկուտասան թիւք լուսնոյ, միս եւս այդ ամիս յաւելումք ի վերայ երկուտասան ամսոյն, որ անուանեալ կոչի նահանջեալ, զի յայն ամս քանզի պակաս գտանի թիւք ընթացից լուսնի քան զթիւս արեգական, այս այսպէս կազմեցաւ, զի նահանջեալ ամսաւք լիցի, որպէսզի երթիցէ հասցէ թիւ ընթացից լուսնոյ, թուոյ ընթացից արեգական...»:

**Իմաստասեր**

Արդ՝ յորժամ դիպի չորեքտասան լուսնի ի չորս անելացն մինչև ի ԻԸ /28/ Նիսանայ, այսինքն ապրիլի ուր և տասն (18) պահեմք և առնեմք զատիկն, իսկ եթէ Դ/4/ անելացն և անդէն յաղարս ամիս կոյս /տպագրի մէջ՝ յագարսսիս, իսկոյն/ կատարեցին երկուտասան ամսեալ, որ անուանեալ կոչի նահանջեալ, քանզի յայն ամք պակաս գտանին ընթացս լուսնի: Քանզի զթիւ ընթացիցն արեգական»:

Անդրեասի բնագրի ընդարձակ խմբագրութիւնից պարզ է դառնում, որ չորեքտասաներորդի, այսինքն լուսնի 19-ամյակի այն տարիներին, երբ անհրաժեշտ է եղել Մարտի 19-ից այն է՝ տարվա վերջին 12-րդ լուսնի վրա ավելացվել է նահանջեալ ամիսը, այսինքն՝ դարձել է 13-րդ լուսնի, քանի որ մի կողմից այդ տարիներում լուսնային տարվա օրերի քանակը պակաս էր արեգակնային օրերի քանակից, մյուս կողմից այդպես է արվել որպեսզի մեկ տարվա ընթացքում երկու Ջատիկ չլինեն: Բնագրի մյուս տարբերակում համառոտորդ ազդվելով Շիրակացուց հարմարեցրել է տոմարի պահանջներին ավելացնելով՝ «մինչև ժէ ապրիլի, այսինքն՝ Արեգ»: Այդ երևում է նաև Շիրակացու և Իմաստասերի բնագրերից: Ըստ այդմ լուսնի 19-ամյակի այն տարիներին, երբ լուսնի լրումը լինում էր Մարտի 20-ից հետո մինչև Ապրիլի 18-ը, այսինքն՝ առաջին տարուց հաշված A4-ին, M24-ին, A1-ին, M21-ին, M29-ին, A6-ին, M25-ին, A2-ին, M22-ին, M30-ին, A18-ին, M27-ին, այն է՝ 1-ին, 2-րդ, 4-րդ, 5-րդ, 7-րդ, 9-րդ, 10-րդ, 12-րդ, 13-րդ, 15-րդ, 16-րդ և 18-րդ տարիներին, երբ եղել է երկուտասաներորդ լուսնին, նայած շաբաթվա ինչ օր է ընկել պահել և կատարել են Ջատիկը: Լուսնի 19-ամյակի 3-րդ, 6-րդ, 8-րդ, 11-րդ, 14-րդ, 17-րդ և 19-րդ տարիներին տարվա վերջից ավելացրել են «նահանջեալ» ամիսը, այսինքն՝ դարձրել են երեքտասաներորդ լուսնի տարի, որպեսզի մի կողմից լուսնային տարվա օրերի քանակը հավասարվի արեգակնային օրերի քանակին, մյուս կողմից մեկ տարում երկու Ջատիկ չլինի: Այնուհետև այդ լրումից սկսած նայած շաբաթվա ինչ օր է ընկել պահել և կատարել են Ջատիկը:

<sup>1</sup> Անուանա Շիրակացու մատենագրությունը, էջ 299: Հովհաննես Իմաստասերի մատենագրությունը, էջ 275:

Լուսնի 19-ամյա պարբերաչափի ուսումնասիրությունը ևս ցույց է տալիս, որ այդ չափի 12 տարին համարել են երկուտասաներորդ լուսնի, իսկ 7 տարին նահանջեալ՝ այսինքն՝ երեքտասաներորդ լուսնի: Այդ յոթ տարիներում տարվա վերջից, այն է՝ Մարտի 19-ից (ըստ Անդրեասի) կամ Մարտի 20-ից (ըստ հայ տոմարագետների), երբ արեգակը փաստորեն արեգակնային տարվա սկզբից սկսում էր իր ցիկլային շարժումը ինչի համաստեղությունից լրացուցիչ ավելացրել են լուսնի պակաս օրերը:

Հուլյան տոմարով արված լուսնի 19-ամյակի հետազոտությունից երևում է, որ գարնանային օրահավասարից /Մարտի 20-ից/ հետո, երբ լուսնի ծնունդը 1-ին տարուց A4-ից սկսած լինում էր M27-ին, M24-ին, M31-ին, M27-ին, M25-ին, M22-ին և M29-ին, այսինքն 12-րդ լուսնին էր, իսկ երբ լուսնի լրումը կատարվում էր գարնանային գիշերահավասարից /մարտի 20-ից/ առաջ՝ M12-ին, M9-ին, M16-ին, M13-ին, M10-ին, M7-ին և M14-ին, այսինքն՝ 3-րդ, 6-րդ, 8-րդ, 11-րդ, 14-րդ, 17-րդ և 19-րդ տարիներին, նահանջեալ ամիսը՝ 13-րդ լուսնինը ավելացնում էին տարվա վերջից, այսինքն 354 օրը դարձնում էին 384 օր:

Այն տոմարական համակարգերում և տոմարագետ հեղինակների մոտ, եթե առաջին տարին չէր դրվում A4-ին, այլ A6(A5)-ին, A13-ին, A2-ին և այլն, ապա համապատասխանորեն փոխվում են տարիների հաջորդականությունը և երեք /մասամբ 2/ տարիների ցիկլային փոփոխությունը, որի մասին կիսովի քիչ հետո, սակայն ոչ 19-ամյակի տարիները:

Լուսնի 19-ամյա պարբերաչափում մշտապես նույն 12 տարում լինում էր երկուտասան լուսնին, իսկ նույն 7 տարում՝ երեքտասան: Լուսնի 19-ամյակի մեջ թե ի՞նչ ցիկլային, այսինքն ետ և առաջ շարժվելու փոփոխություն է կատարվել 12 և 7 տարիներում, վերոհիշյալ բնագրերից չի երևում: Հովհաննես Իմաստասերը և «սկիզբն տոմարի հայոց...»-ում բացատրել են այդ երևույթը և ցույց են տվել, որ 19-ամյակի ետ և առաջ գնալու այդ տարիների փոփոխությունը կատարվել է հիմնականում երեք տարին մեկ<sup>1</sup>:

**Ներկայացնենք բնագրերը.**

1. «Ի տգիտաց ոմանց տարակուսեն յաղագս չորեքտասաներորդ սրբոյ զատիկին, որ իննևտասան ամաւք յառաջ և վերջ խաղայ զատիկն: Արդ՝ թէպէտ և գիտնոցն յայտնի է ստուգապէս, յաղագս տգիտաց սուղ ինչ բանիւ նշանակեսցուք: Եւ է այսպէս:

Կատարէ արեգակն գտարին ՅԿԵ /365/՝ երկուտասան ամսաւք հինգ աւուրք՝ երեսուն երեսուն աւր ի կենդանակերպաց շաւիղսն ընթանալով՝ սկսեալ ի խոյէն և զհինգ աւուրսն յաւելեալ յընթացից ճանապարհէ ժողովէ և ոչ որպէս ստեղծանեն յանուանեալ աստեղացն ընթակցութենէ: Իսկ Լուսին գրովանդակ տարուոյն ընթացս արեգակն կատարէ յաւուրս ԻԹ/29/ և կէս: Եւ զայս առնէ ի տարւոյն երկուտասանիցս, և այն կոչի տարի ըստ լուսնին՝ մետասան աւուր պակաս քան գտարի արեգակն: Եւ ոչ է արժան երկու ամս առնել զմին և անուանել այլ ըստ արեգակն և այլ ըստ լուսնոյ, և քակտել ի միմեանց զաւուրս միոյ մի, և աւրինակ իմն տալ պատերազմել ընդ միմեանս արեգակն և լուսնոյ և աւուրց ժամանակին, այլ զուգել և հաւասարել զերկոսին և ի միաբանութիւն գումարել, և անուանել զեղեալն մի ամ: Եւ լինի այս յորժամ առնումք մետասան աւր ի լուսնոյ ապագայ ամէն և դնեմք ի վերայ երկուտասանին լուսնոյ: Քանզի լուսին ՅԾԴ /354/ աւր կատարէ զերկուտասան ընթացսն կիտէ ի կէտ, որ կոչի տարի ըստ լուսնին, իսկ զմետասան ի վերա ածելով հաւասարեմք ընթացիցն արեգակն և լինի ՅԿԵ /365/ աւր: Եւ յերիս ամս աւելեալ աւուրքն լուսնոյ, լինի ԼԳ /33/ աւր: Եւ յերիս ամս աւելեալ աւուրքն լուսնոյ, լինի ԼԳ /33/ աւր և կոչի աւրն այն երեքտասանայ լուսնին: Թողումք զերեսուն աւրն յամիս մի և երկու աւուրս ածեմք ի միւսոյ ամին մետասան աւուրցն: Սո-

<sup>1</sup> Սկիզբն տոմարի հայոց..., ՄՄ Ձեռ. Գն 1999, էջ 14ա-բ:

քա կոչեն վերադիրք: Եւ այսպէս ժողովեալ ի ժԹ /19/ ամին լինին է /7/ ամիսք, մի աւուրք պակաս, զոր լնուն իննեւտասան մասունքն, որ ժողովին ի իննեւտասան ամացն և կատարեն լիով զեթն ամիսն, և դարձուցանեն անդէն ի նոյն: Եւ պարտ է առնել զատիկն յետ հասարակելոյ տուրնջեան և գիշերոյ: Զի եթէ ի ներքոյ քան զայս ոք կամիցի առնել, սխալ է բազում անգամ և առնէ երբէք երբէք ի մի տարւոջն երկու զատիկս, որպէս և հրեան յոլովակի գտանին արարեալ այսպէս:

2. Վասն արեգական եւ լուսնոյ եւ վասն մետասան ժամուն որ եառ լուսինն յարեգական եթէ զինչ է:

Արդ ժԱ մասունքն զոր յառաջին աւուրն եառ լուսինն յարեգականէն լինին յամսեանս ժԱ ժամ է երակ մասամբ եւ ի տարին ժԱ աւր: Այս են աւել ի ընթացք լուսնին քան զարեգականէ: Եւ ժողովին ժԱ աւուրքն ժԹ տարին եւ առնեն ԳԺ-ան լուսին զոր եւ նահանջ անուանեմք: Յետ հասակաւորութեան անմանն եւ ի ժԹ ամի շրջանի իւրոյ կատարէ այլ ևս ամիսս է ի ժԱ աւուրքն անտի զոր ամի մնա յարեգականէ անդ եւ կատարիչն ամսոցն է անց պակաս է մի աւր զորոյ լնու զպակասութիւնն մասունք ժԹ մնացեալքն ի լուսնեն: Վասն զի ի ժԹ ամի մասունք պակասելով ժԹ-ից ժԹ-նն լինի ՅԿ (360) զոր բաժանելով յԲԺ-ան: Այս են աւուրք է ամի նահանջեալք որ դարձուցանէ զլուսինն»<sup>1</sup>:

Հոռմեական լուսնի 19-ամյակի ուսումնասիրութիւնը ցույց է տալիս, որ վերոհիշյալ ցիկլային փոփոխութիւնը, թե՛ն հիմնականում եղել է երեք, մասամբ երկու տարին մեկ /8-րդ և 19-րդ տարիներին/:

Չորեքտասաներորդի, այսինքն լուսնի 19-ամյա պարբերաշրջանի մի այլ առանձնահատկութեան մասին պահանջով է տեղեկութիւն Անդրեասի Զատիկի մեկնութեան մեջ:

Բնագրի թե՛ ընդարձակ, թե՛ համառոտ խմբագրութիւններում<sup>2</sup> առկա են հետևյալ համարժեք հատվածները՝

**Ընդարձակ խմբագրություն**

«Արդ՝ քանզի տուչութիւն եկեղեցոյ այսպէս ուսուցանէ պահել ամի ամի զարն բարեպաշտեաց, և զի մերթ դիպի ԳԺ-աներորդն ի մարտի, այսինքն՝ ի մեհեկանի, և մերթ յապրիլի, այսինքն՝ յարեգ ամսեան...»:

Մեկ այլ համանման հատված պահանջով է բնագրի համառոտ խմբագրութեան մեջ, որից անկասկած օգտվել է Հովհաննես Սարկավազը:

**Ներկայացնենք բնագրերը<sup>3</sup> զուգահեռաբար:**

**Համառոտ խմբագրություն**

«Կանոն գատկայ շուրջ եկեալ զանձամբ բարընդակ գԹժ ամսաք. ցուցանէ զչորեքտասան լուսնի ըստ ատուրց ամսոց դատրիտի կամ քսանթիկոսի լուսնաց, եւ հոռմայեցոց

**Համառոտ խմբագրություն**

«Արդ՝ զի եկեղեցի ուսուցանէ պահել զարն բարեպաշտեաց, և մերթ դիպի չորեքտասան լուսնին ի մարտի, այսինքն է մեհեկանի, և մերթ յապրիլ է արեգ...»:

**Հովհաննես Սարկավազ**

«Գրէ դարձեալ մի ոմ մանկանց եկեղեցոյն վասն իննսունհինգեկի բոլորակի՞թէ նոյն ատուրք գան և ի նոյն շաբաթս ըստ թուոյ Դիւստրոս ամսոյ կամ քսանթիկոս, որ

մարտի կամ ապրիլի, եւ հայերէն մեհեկանի կամ արեգ եւ ոչ ըստ նոցուն ատուրց շաբաթու դիպեացի, բայց ՂԵ ամն նոյն թիւն վերարին զանձամբ եկեալ»:

է մարտի կամ ապրիլի և հայերէն մեհեկանի կամ արեգ»:

Վերոհիշյալ բնագրերից հետևում է, որ լուսնի 19-ամյա և 95-ամյա պարբերաշրջաններում /19x5/, ինչպես և 200-ամյակի յուրաքանչյուր տարում Քրիստոսի չարչարանաց օրը, այն է՝ լուսնի լրման օրը երեք տարվա /մասամբ երկու տարվա/ հաճախականությամբ, մերթ հանդիպում է Մարտին, մերթ՝ Ապրիլին կամ մերթ՝ Դիւստրոսին՝ մերթ Քսանթիկոսին, ըստ հունական տոմարի կամ մերթ Մեհեկանին, մերթ Արեգին ըստ հայկական տոմարի: Եթե հուլյան և հունական տոմարական համակարգերի համար վերոհիշյալ ամիսների ցիկլային կրկնությունը ցանկացած ժամանակահատվածի համար ճիշտ է, որովհետև անշարժ տոմարներ էին՝ հունականը հուլյանի տեղական տարբերակն էր, ապա հայկական շարժական տոմարի համար ամիսների ցիկլային կրկնությունը և լուսնի լրման օրը երեք (մասամբ երկու) տարվա հաճախականությամբ կրկնվելը 95-ամյակի և հատկապես 200-ամյակի համար ճիշտ է, որովհետև լուսնի լրումը, եթե 353-383 թթ. հանդիպել է մերթ Մեհեկանին, մերթ Արեգին, ապա 384-552 թթ. լուսնի լրումը եղել է մերթ Արեգին, մերթ Ահեկանին, մերթ Մարերին:

Հայկական Մեհեկան և Արեգ ամսանունների ընդմիջարկությունը թարգմանչի կողմից ինչպես կտեսնենք, առաջացել է նրանից, որ թարգմանությունը կատարվել է Արեգին և բնագրին միջամտողը նկատի չի ունեցել, որ լուսնի լրումը 200-ամյակի հետագա տարիներին հայկական շարժական տոմարի չորս տարին մեկ օրով ետ ընկնելու և լուսնի 19-ամյա պարբերաշրջանի օրինաչափությունների համաձայն անհրաժեշտաբար պետք է կատարվեր նաև Ահեկանին և Մարերին:

**Բերենք 384-448 թթ. համար մեր կազմած աղյուսակը՝**

Ներկայացված	Գարնանային գիշերահավ. օրը՝ մարտի 20-ը հայկական ամսոյ և ամսաթվերով	Լուսնի 19 ամյակի լրման օրը			Զատիկը	
		Տարին	հուլյան ամիսներով և օրերով	հայկական ամիսներով և օրերով	հուլյան ամիսներով և օրերով	հայկական ամիսներով և օրերով
1	2	3	4	5	6	7
384	Արեգի 1	13	M 22	Արեգի 3	M 24	Արեգի 3
385	- .. - 1	14	A 10	- .. - 22	A 13	- .. - 25
386	- .. - 1	15	M 30	- .. - 11	A 5	- .. - 17
387	- .. - 1	16	A 18	- .. - 30	A 25	ահեկանի 7
388	- .. - 2	17	A 7	- .. - 20	A 9	արեգի 22
389	- .. - 2	18	M 27	- .. - 9	A 1	- .. - 14
390	- .. - 2	19	A 15	- .. - 28	A 21	ահեկանի 4
391	- .. - 2	1	A 4	- .. - 17	A 6	արեգի 19
392	- .. - 3	2	M 24	- .. - 7	M 28	- .. - 11
393	- .. - 3	3	A 12	- .. - 26	A 17	ահեկանի 1
394	- .. - 3	4	A 1	- .. - 15	A 2	ար. 11
395	- .. - 3	5	M 21	- .. - 4	M 25	- .. - 8

<sup>1</sup> Սկիզբն տոմարի հայոց, 1999, ձեռ. էջ 14ա-բ:

<sup>2</sup> Է. Աղայան, Անդրեաս Բյուզանդացու երկուհարյուրամյա տոնացույցը, էջ 138: Աշ. Աբրահամյան, Անդրեասի տոմարական աշխատությունները, էջ 80, ՄՄ ձեռ. նո 1999, էջ 18ա-20ա:

<sup>3</sup> ՄՍ ձեռ. նո 1999, էջ 18ա-բ: Հովհաննես Իմաստասերի մատենագրությունը, էջ 281:

396	- .. - 4	6	A 9	- .. - 24	A 13	- .. - 28
397	- .. - 4	7	M 29	- .. - 13	A 5	- .. - 20
398	- .. - 4	8	A 17	աճեկանի 2	A 18	աճ. 3
399	- .. - 4	9	A 6	արեգի 21	A 10	արեգի 25
400	- .. - 5	10	M 25	- .. - 10	A 1	- .. - 17
401	- .. - 5	11	A 13	- .. - 29	A 14	- .. - 30
402	- .. - 5	12	A 2	- .. - 18	A 6	- .. - 22
403	- .. - 5	13	M 22	- .. - 7	M 29	- .. - 14
404	- .. - 6	14	A 10-	- .. - 27	A 17	աճեկանի 4
405	- .. - 6	15	M 30	- .. - 16	A 2	արեգի 9
406	- .. - 6	16	A 18	աճեկանի 5	A 22	աճեկանի 9
407	- .. - 6	17	A 7	արեգի 24	A 14	- .. - 1
408	- .. - 7	18	M 27	- .. - 14	M 29	արեգի 16
409	- .. - 7	19	A 15	աճեկանի 3	A 18	աճեկանի 6
410	- .. - 7	1	A 4	արեգի 22	A 10	արեգի 28
411	- .. - 7	2	M24	- .. - 11	M26	- .. - 13
412	- .. - 8	3	A12	աճեկանի 1	A14	աճեկանի 3
413	- .. - 8	4	A1	արեգի 20	A6	արեգի 25
414	- .. - 8	5	M21	- .. - 9	M22	- .. - 10
415	- .. - 8	6	A9	- .. - 28	A11	- .. - 30
416	- .. - 9	7	M29	- .. - 18	A2	- .. - 22
417	- .. - 9	8	A 17	աճեկանի 7	A22	աճեկանի 12
418	- .. - 9	9	A6(5)	Ար 26(25)	A7(14)	Ար 27 (Աճ.4)
419	- .. - 9	10	M25	Ար 14	M30	Ար 19
420	- .. - 9	11	A13	Աճ 4	A18	Աճ 9
421	- .. - 10	12	A2	Ար 23	A3(10)	Ար 24 (Աճ1)
422	- .. - 10	13	M22	Ար 12	M26	Ար 16
423	- .. - 10	14	A10	Աճ 1	A15	Աճ 6
424	- .. - 10	15	M30	Ար 21	A6	Ար 28
425	- .. - 11	16	A18	աճեկանի 10	A11	աճ. 11
426	- .. - 11	17	A7	արեգի 29	A11	աճեկանի 3
427	- .. - 11	18	M27	- .. - 18	A3	արեգի 25
428	- .. - 11	19	A15	արեգի 29	A22	աճեկանի 6
429	- .. - 12	1	A4	- .. - 18	A7	արեգի 30
430	- .. - 12	2	M24	աճեկանի 8	M30	- .. - 22

431	- .. - 12	3	A12	արեգի 27	A19	աճեկանի 3
432	- .. - 12	4	A1	- .. - 24	A3	արեգի 26
433	- .. - 13	5	M21	աճեկանի 5	M26	- .. - 10
434	- .. - 13	6	A9	արեգի 25	A15	աճեկանի 1
435	- .. - 13	7	M29	- .. - 22	M31	արեգի 24
436	- .. - 14	8	A17	աճեկանի 12	A19	աճեկանի 14
437	- .. - 14	9	A6	աճեկանի 1	A11	- .. - 6
438	- .. - 14	10	M25	արեգի 19	M27	արեգի 21
439	- .. - 14	11	A13	աճեկանի 8	A16	աճեկանի 11
440	- .. - 14	12	A2	արեգի 27	A7	- .. 2
441	- .. - 15	13	M22	արեգի 17	M23	արեգի 18
442	- .. - 15	14	A10	աճեկանի 6	A12	աճեկանի 8
443	- .. - 15	15	M30	արեգի 25	A4	արեգի 30
444	- .. - 15	16	A18	աճեկանի 15	A23	աճեկանի 20
445	- .. - 16	17	A7	- .. - 4	A8	- .. - 5
446	- .. - 16	18	M27	արեգի 23	M31	արեգի 27
447	- .. - 16	19	A15	աճեկանի 12	A20	աճեկանի 17
448	- .. - 16	1	A4	- .. - 2	A11	- .. - 9

Վերոհիշյալ դիտողությունները և աղյուսակը հիմնավորում են, որ հայկական ամսանունները Անդրեասի բնագրի մեջ ընդմիջարկություններ են՝ ավելացված թարգմանչի կողմից:

Այսպիսով, մի կողմից բացահայտվում է թարգմանչի կատարած սխալը տոմարական հաշվումների մեջ՝ հայկական ամսանունների ներմուծման հետևանքով, մյուս կողմից պարզվում է, որ Անդրեասի բնագրում հայկական ամսանունները թարգմանչի միջամտություններ են:

Անդրեասը, ինչպես հայտնի է դառնում հիշատակարանից, 200-ամյա աղյուսակը կազմել է հիմնվելով անտիոքացիների թվականության վրա: Բնական է մտածել, որ գարնանային օրահավասարի օրը՝ Դյուստրոսի 20-ը, որն անտիոքացիների տոմարով է, բնագրային է: Անտիոքացիների տոմարը հուլյանի տեղական տարբերակն է, ուստի Դյուստրոսի 20-ը համարժեք է Մարտի 20-ին:

Բերենք հայկական սկզբնաղբյուրների վկայությունները գարնանային գիշերահավասարի օրը Մարտի 20-ին և մյուս անշարժ տոմարների համապատասխան ամսաթվերով սկսելու մասին: Այդ տեղեկությունները հաստատում են Անդրեասի բնագրի անտիոքյան և եգիպտական տոմարների ամսաթվերը:

1. «Վասն զի արարչութիւնն հասարակաւորութեանն էր, և ի Դ յԱւելեացն / = Մարտի 20/ է միշտ: Եւ միշտ աստ մտանէ Նիսան ամիսն առաջին, զոր Արեգ ամիս կոչեցին: Զի թէ և - յիւրայէլ ծածուկ էր ժամանակ լինելութեան էիցն, և առաջին գոլ ամիսն յայտնեաց աստուած յասելն զսա առաջին և զսոյն վկայեն գիրք և առաջինքն: Արդ՝ պատարագն Աբրահամու ի ԺԴ Նիսան / = Ապրիլի 4/ և ելն Աղամայ ի դրախտէն, ի խաչելն Քրիստոսի, ելքն յեգիպտոսէ. և



մուտ յերկիրն: Եւ ժամանակս զայս և զգործս ի գարնանային յեղինակին ասեն կատարելագրութիւնքն: Ուստի յայտ է անշարժութիւն հասարակաւորութեանն»<sup>1</sup>:

2. «Իսկ որպէս այժմ կանոնեալն ունի յամենայն եկեղեցիս հաւատացելոց երից ազգաց՝ ի քսանն յառաջագոյնն ասացելոցդ ամսոց, որ լինի ԻԴ /24/ պեմենովթայ ըստ եգիպտացւոց, և աւել աւուրցն եբրայեցոցն ի չորսն, ուր և երկոտասան ութերորդի /արեգի - Ռ. Վ. / ամսոյն ըստ հայուն կանոնեցաք պահել, ոչ առանց վկայութեան առաջնոց և հնոց արանց իմաստնոց, որպէս վերագոյնն ասացաւ»<sup>2</sup>:

3. «...Արդ՝ եթէ դիցես սկիզբն ժամանակին գարնանայնոյ զիննեբրորդ արեգ ամսոյ և չորս աւելեացն եբրայեցւոց՝ որ է քսան մարտ ամսոյ և ազարայ և դիւստրոսի, և ԻԴ /24/ պեմենովթայ»<sup>3</sup>:

4. «Այս են հասարակածք ԲԺ ազգաց. ըստ հռոմոց թուոյ ի Մարտի ի Ի/20/ է հա[նապազ], յունաց ի Դիւստրոսի Ի /20/ է հա[նապազ], ասորոց ի յԱզարի Ի/20/ է հա[նապազ], եբրայեցոց, արաբացւոց եւ մակեդոնացւոց ի յԱւելեացն ի Դ/4/ է հա[նապազ], եգիպտացւոց ի Պեմենովթ ԻԴ /24/ է հա[նապազ], թէովպաց ի յիմգաւրթ ԻԴ/24/ է հա[նապազ]»<sup>3</sup>:

5. «Զի հասարակածին է ստեղծ զարեգակ և զլուսին որ ըստ եբրայեցոց էր յԱւելեացն Դ և ըստ հռոմոց Մարտի ի ի յաւուր Դ շաբաթոջ»<sup>4</sup>:

6. «Հասարակածն եգիպտացւոց ի Պեմենովթ Ի ԻԴ /24/ է հա[նապազ]»<sup>5</sup>:

7. «...Աւելացն ի Դ գարնանամուտ է»<sup>6</sup>:

Այսպիսով բնագրում գարնանային գիշերահավասարի օրը փաստագրվել է Դիւստրոսի 20-ին = Պեմենովթի 24-ին, որոնք համարժեք են հուլյան տոմարի Մարտի 20-ին:

Անդրեասի բնագրի բոլոր հատվածներում, երբ խոսքը գնում է առաջին ամսվա մասին, հեղինակը նկատի է ունեցել միայն եբրայական Նիսան ամիսը:

Բերենք որոշ հատվածներ<sup>7</sup>:

1. «Արդ՝ քանզի զաւրինակն և զնմանութիւնն յառաջնումն ամսեանն հրամայէր առնել, չէր իշխանութիւն եկեղեցւոյ յԲԺ-անեբրորդ ամսեանն առնել զգատիկս զայս»:

2. «...Վասն այնորիկ հարկ է մեծաւ փութով ամի ամի յամսեանն առաջնում առնել զգատիկն»:

3. «Եւ արդ՝ [յետ] հասարակած տուրնջ[ե]ան և գիշերոյ սկիզբն տարւոյն և ամսեանն առաջնոյ, քանզի ամիսն առաջին անտի առնու սկիզբն»:

4. «... և քանզի Քրիստոս ի ԴԺ-ան երրորդում աւուր ամսոյն առաջնոյ / = Նիսան / չարեցաւ, յայտ է՝ յետ հասարակելոյ տուրնջեան և գիշերոյ [յ]արեգ / = Նիսան / ամսեան...»:

5. «Եւ քանզի սկիզբն ամենայն տարւոյն [յիԲ]՝<sup>8</sup> երրորդին մարտի ամսոյ ինի, այսինքն է մեհեկանի, յայտ է, թէ նա է ամիսն առաջին»:

1 Անանիա Օրբակացի, Տիեզերագիտություն և տոմար, էջ 67:

2 Հովհաննէս Իմաստասերի մատենագրությունը, էջ 240:

3 Հովհաննէս Իմաստասերի մատենագրությունը, էջ 266:

4 Տես ՄՄ ձեռ. 1999, էջ 25ա:

5 Հ. Ղրիմեցի, Մեկնութիւն տոմարի ՄՄ ձեռ. 1114 էջ 38ա-բ:

6 Ամիսք Եգիպտացւոց, 1999, էջ 15բ:

7 Պատճեն տոմարի եբրայեցւոց և ամիսքն իւր, ՄՄ ձեռ. 2001, էջ 39բ /34ա/:

8 Է. Աղայան, Անդրեաս Բյուզանդացու երկուհարյուրամյա տոնացոյցը, էջ 134, 135, 136: Աշ. Աբրահամյան, Անդրեասի տոմարական աշխատությունները, էջ 76, 77, 78:

6. «Զի եթէ ոչ լինէին ամիսք նահանջեալք և յետ կատարելոյ տասն և երկուց ամսոց պահել և առնէին զգատիկն բաղարջակերացն, այլ ձգեն ածեն զմեծ նահանջ ամիսք, զի միշտ յետ հասարակելոյ տուրնջեան և գիշերոյ արասցուք զգատիկն, քանզի նոքօք հասանեմք յամիսն առաջին արմտեաց»:

Ակնհայտ է, որ բնագրում առաջին ամիս ասելով Անդրեասը, ինչպես և նրա թարգմանիչը, հասկացել են եբրայական Նիսան ամիսը, իսկ «ի տասն և չորրորդ [աւուր] ամսոյն»-ի տակ նկատի ունեն Նիսանի 14-ը: Այդպես են ընկալել նաև հայ տոմարագետները:

Ըստ Շիրակացու եբրայական Նիսան ամիսը առաջին ամիսն է՝ «քանզի ամսոյն առաջնոյ որ անուանեալն կոչի Նիսան...»: Մեկ այլ տեղ Անանիա Շիրակացին գրում է. «Վասն զի արարչութիւնն ի հասարակաւորութեանն էր, և ի Դ յաւելեացն / = Մարտի 20 / է միշտ: Եւ միշտ աստ մտանէ Նիսան ամիսն առաջին, զոր Արեգ ամիս կոչեցին»:

Անկասկած Շիրակացին առաջին հերթին նկատի ունեւր Անդրեասի բնագրի թարգմանչին, երբ Նիսան ամսանունը թարգմանել են իբրև հայկական Արեգ ամիս: Այս վկայությունը հիմք է տվել Անդրեասի վերոհիշյալ հատվածում Արեգ ամսի համարժեքը /փակագծում/ դնել Նիսան ամսանունը Շիրակացուց տեղեկանում ենք նաև հետևյալին.

«...Մի տաւնեսցուք յերկոտասաներորդում ամսեան յառաջ քան զհասարակել տուրնջեան եւ գիշերոյ, այլ յամսեանն առաջնում տաւնեսցուք. քանզի յամսեանն առաջնումն չարչարեցաւ Քրիստոս զկնի հասարակելոյ տուրնջեան եւ գիշերոյ որպէս եւ ի սկզբանցն ստեղծաւ մարդն առաջին զկնի հասարակելոց տուրնջեան եւ գիշերոյ. յամսեանն առաջնումն էլ յեգիպտոսէ. փրկեցաւ ի փարաւոնէ, ազատեցաւ ի կաւոյն գործոյ. ի նմին աւուր եւ մեք փրկեցաք յաներևոյթ բռնաւորէն եւ ի դառն գործաւորաց նորին զաւրաց, եւ ազատեցաք ի կաւոյն մեղաց չարանաւք փրկչին»<sup>1</sup>:

Ընդ որում, ինչպես երևում է բնագրերից, առաջին ամիսը հիմնականում սկսում էր գարնանային գիշերահավասարից հետո: Անդրեասի բնագրում Նիսանի առաջին օրվա մասին կա հուլյան տոմարի զուգահեռ նշում: Անանիա Շիրակացու աշխատություններից<sup>2</sup> հայտնի են դառնում, որ եբրայական Նիսանի 1-ը համարժեք է հուլյան տոմարի Մարտի 22-ին, ինչպես և մյուս ժողովուրդների տոմարական համակարգերի համապատասխան ամսաթվերին, որոնց վկայակոչելը անհրաժեշտ չենք նկատում: Հովհաննէս Սարկավազի կազմած «Ոստանախորան» աշխատության մեջ հռոմեական Մարտի 22-ը համարժեք է եբրայական Նիսանի 1-ին, իսկ Ապրիլի 4-ը՝ Նիսանի 14-ին:

Այնտեղ կարելի է գտնել նրանց համարժեքները նաև այլ ժողովուրդների տոմարական զուգահեռներով:

Հովհաննէս Սարկավազն ունի նաև հետևյալ արժեքավոր վկայությունները<sup>3</sup>:

1. «Ի մարտի ամսոյ ԻԲՆ /22/ Նիսան ամսոյ մուտ է»:

2. «Ի մարտի ԻԲ /22/ տարէմուտ է եբրայեցւոց, արաբացւոց, մակեդոնացւոց»:

3. «Դարձեալ զնոյն պարզաբար առցաք ասել: Յառաջին աւուր ըստ Նիսան ամսոյ, և ի ԻԲ /22/ երից ազգացդ ամսոց, դիւստրոսի ըստ յունաց և ըստ ասորոց՝ յազար, իսկ ըստ Հռոմի Ի /20/ մարտի ամսոյ /յ/ ասեն զսկիզբն հասարակաւրէին գարնանայնոյն և ի ԻԶ ն/26/ պեմենովթայ՝ ըստ եգիպտացւոց»:

8 Բնագրում՝ յԹԺ, որը ուղղել եմք:

1 Անանիա Օրբակացու մատենագրությունը, էջ 298:

2 Անդ էջ 290, 315-317 և այլն:

3 Հովհաննէս Իմաստասերի մատենագրությունը, էջ 213, 215, 240, 266:

4. «Որպէս զի յերկաքանչիւրոցդ ամսոց ի նոյն աւուրս և քանիս Հասարակաւորութեանն գարնանայնոյ կշիռ գոյգ Հանդիպել ի քսան երկոցունց, կամ յերկու և ի քսան. ըստ որում՝ ասեն ոմանք այլք: Իսկ կէսք ի մետասան արեգ ամսոյ և ի ԻԲ /22/ ադար ըստ ասորոց, որ է վեցերորդ ամիս նոցա: Եւ ըստ յունաց՝ նոյնպէս ԻԲ /22/ դիւստրոս ամսոյ, որ է հինգերորդ՝ նոցա: Իսկ ըստ եգիպտացւոցն ի ԻԶ /26/ և ի Լթներորդի ամսոյն, որ կոչի պեմենովթ: Եւ են այսոքիկ գայգ ի ԻԲ-ացն երրորդ ամսոյն ըստ հռոմոց, անուանեցելումն մարտի: Եւ լինի սոքա, որ աւր մուտ է Նիսան ամսոյ ըստ եբրայեցւոցն, որ է առաջին ամսոց նոցա, յորոց հրաման առին տաւնել զգատիկն աւուր չորեքտասաներորդի»:

5. «Սակայն առաւել հաճոյ թուի ասացեալն ի Յովսեպոսէ՝ յաղագս սկզբանն եղանակի գարնանայնոյ լինի յառաջին աւուրն Նիսան ամսոյ՝ որ ըստ եբրայեցւոցն, և Հանդիպի ըստ եգիպտացւոցն ի ԻԶ /26/ պեմինովթայ, իսկ ըստ հռոմոց՝ ի ԻԲ /22/ մարտի ամսոյ: Նմանապէս և ըստ յունաց՝ դիւստրոս ամսոյ ԻԲ /22/, և ըստ ասորոցն՝ ադար նոյնպէս ԻԲ /22/ և ըստ հայոց՝ արեգ ամսոյ ԺԱ /11/, զոր դիւրին է ածել յուղղութիւն»:

ՄՄ ձեռ. 1114 թվահամարի ձեռագրում գրված է.

«Մարտի ԻԲ մուտ է Նիսանայ»<sup>1</sup>:

Վերոհիշյալ տոմարական զուգահեռները կասկած չեն հարուցում, որ Նիսանի 1-ը համարժեք է Մարտի 22-ին: Հասկանալի է, որ Անդրեասի բնագրում տարվա սկիզբը, այսինքն՝ Նիսանի 1-ը, որ արձանագրվել է հուլյան տոմարով Մարտի 19-ը գրչական սխալ է: Այն պետք է ուղղել Մարտի 22: Այդ երևում է նաև բնագրի լուսնի 19-ամյակի նահանջեալ ամսի՝ 13-րդ լուսնի մասին հիշատակութունից, որտեղ այն ավելացվում էր տարվա վերջին՝ Մարտի 19-ին՝ արեգակի սկզբնական կետից շարժվելու խոյի համաստեղություն մտնելուց առաջ:

Մարտի 19-ի հիշատակությունը լավագույն դեպքում կարելի է ընդունել գարնանային գիշերահավասարի օրվա փաստագրում, սակայն այդ ևս, ինչպես տեսանք, բնագրով չի հաստատվում:

Հայտնի է, որ Անատոլիոս Լաոդիկեցին է ընդունել գարնանային օրահավասարի օր Մարտի 19-ը, ըստ Եվսեբիոս Կեսարացու «Եկեղեցւոյ պատմութիւն» աշխատության և Հովհաննես Սարկավագի համարժեք տվյալների<sup>2</sup>, իսկ Նիսանի 1-ը՝ Մարտի 22:

Եվսեբիոս Կեսարացին բերել է մի հատված Անատոլիոսի Զատիկական կանոնից, որի համաձայն արեգակի տարեկան շրջապտույտի սկիզբը եղել է Մարտի 19-ը, այսինքն գարնանային գիշերահավասարի օրը, իսկ Մարտի 22-ը համարժեք է ընդունել Նիսանի 1-ին: Վերջապես Անանիա Շիրակացու հաղորդման համաձայն առաջին տարվա լուսնի լրման օր է ընդունել Ապրիլի 4-ը (= Նիսան 14): Այլ խոսքով Անատոլիոսը իր կազմած 19-ամյա պարբերաշրջանի առաջին տարվա սկիզբն է ընդունել գարնանային գիշերահավասարի, այն է՝ արեգակնային տարվա և լուսնային տարվա շրջապտույտի փախկապակցությունը, որը տվել է Մարտի 19-ի, Նիսանի 1-ի և 14-ի ամսաթվերով: Անատոլիոսին հետևեցին Անդրեասը, Էսաը, Անանիա Շիրակացին և այլ հեղինակներ, որոնք օգտագործեցին Անատոլիոսի 19-ամյա պարբերաշրջանը սկիզբ ընդունելով Նիսան 14 (= Ապրիլ 4)-ի տարին:

Այլ խոսքով գարնանային գիշերահավասարի օրը տարբեր ժամանակներում և հեղինակների կողմից ընդունվել է Մարտի 19-ը, 20-ը, 21-ը և 22-ը: Միայն վերջին դեպքում

է, որ գարնանային գիշերահավասարի օրը համարժեք է եղել առաջին ամսվա սկզբի հետ, այն է՝ Նիսանի 1-ի:

Այս տոմարական հասկացություններն ու հարցերը քննելուց հետո դառնանք Անդրեասի տոնացույցի թարգմանությունյան ժամանակի խնդրին:

Անդրեասի բնագրի հայերեն թարգմանությունյան մեջ ասվում է, և որովհետև Քրիստոսը առաջին ամսի (այսինքն՝ Նիսան ամսի) 14-րդ օրը չարչարվեց՝ հայտնի է գարնանային գիշերահավասարից հետո՝ Նիսան ամսին: Այնուհետև թարգմանիչը շարունակում է. «և այս ոչ վրիպեալ է ի մէջ, թեև այժմ ի մեր ամս և աւուրս յԱրեգ ամիս են»: Վերոհիշյալ հատվածը ցույց է տալիս, որ թարգմանությունյան տարում գարնանային գիշերահավասարը /= Մարտի 20/ և Քրիստոսի չարչարանքի օրը՝ այն է՝ առաջին լուսնի լրման օրը, այսինքն՝ լուսնի 19-ամյա պարբերաշրջանի առաջին տարին /= Նիսանի 14 = Ապրիլի 4/ եղել են հայկական Արեգ ամսին: Հետևաբար դժվար չէ գտնել, թե Արեգ ամսին միաժամանակ գարնանային օրահավասարը և Քրիստոսի չարչարանքի օրը՝ ավագ լուսնի լրման օրը, այսինքն՝ լուսնի 19-ամյակի առաջին տարին, որ թվականներին են համընկել:

Քանի որ Անդրեասի 200-ամյա տոնացույցը, ինչպես տեսանք, սկսվել է 353-ին և ավարտվել 552 Քրիստոնեական դիոնիսյան թվականին, ուստի պարզ է դառնում /տես աղյուսակը/, որ գարնանային գիշերահավասարի օրը և լուսնի 19-ամյակի առաջին տարիները միաժամանակ Արեգ ամսին համընկել են՝ 391 թ., 410 թ., 429 թ. և 448 թ. (մասամբ):

Բերված թվերից առաջինը և վերջինը /391 թ. և 448 թ./ թարգմանությունյան տարի լինել չեն կարող մի դեպքում՝ հայերեն գրերը տակավին հայտնի չլինելու, մյուս դեպքում՝ Քրիստոսի չարչարանաց օրը, այն է՝ առաջին լուսնի լրման օրը Ահեկանի 2-ին լինելու պատճառով: Մնում են 410 և 429 թվերը, որոնցից մեկն էլ եղել է Անդրեասի տոմարի թարգմանությունյան տարին:

410 թվին, ինչպես երևում է վերը բերված աղյուսակից, գարնանային գիշերահավասար է եղել Արեգի 7-ին /= Մարտի 20/, լուսնի 19-ամյակի առաջին տարին՝ Արեգի 22-ին /= Ապրիլի 4/, Զատիկը՝ Արեգի 29-ին /= Ապրիլի 11/: 429 թվին գարնանային գիշերահավասարի օրը եղել է Արեգի 12-ին /= Մարտի 20/, լուսնի 19-ամյակի առաջին տարին՝ Արեգի 27 /= Ապրիլի 4/, Զատիկը՝ Արեգի 30-ին /= Ապրիլի 7-ին/:

Բերված թվականներից մեկի ընտրությունը, ինչ խոսք, կարոտ է լրացուցիչ քննության:

Վերջերս գրած մեր աշխատության մեջ<sup>1</sup> լրացուցիչ փաստերով հիմնավորել ենք, որ Անդրեասի Տոմար-Տոնացույց-Չատկացուցակը թարգմանվել է 429 թ. և նրա թարգմանիչներն են եղել Հովսեփ Պաղնացին կամ Եզնիկ Կողբացին:

Այժմ անհրաժեշտ ենք համարում նոր փաստով ցույց տալ, որ Անդրեասի ժամանակագրությունը հունարենից թարգմանել են նույն հեղինակները 429 թվականին կամ մինչև 435 թվականը, երբ Հովսեփ Պաղնացին և Եզնիկ Կողբացին վերադարձան հայրենիք Կոստանդնուպոլսից: Նրանք Եզնիկայում ասորերենից և հավանաբար հունարենից հայերեն կատարած թարգմանություններից հետո մոտ 430 թվից մեկնեցին Կոստանդնուպոլիս հունարենի մեջ ավելի կատարելագործվելու և նոր թարգմանություններ ստեղծելու համար ու վերադարձան Հայաստան 435/436 թթ.: Այդ լրացուցիչ հիմնավորումը գտնում ենք Անդրեասի ժամանակագրության և Եզնիկ Կողբացու «Եղծ աղանդոց»-ի համադրության մեջ: Բերենք Անդրեասի և Եզնիկ Կողբացու համարժեք հատվածները.

<sup>1</sup> ՄՄ ձեռ. Գո 1114, էջ 125բ:

<sup>2</sup> Եսեբիոս Կեսարացու, Պատմութիւն Եկեղեցւոյ, Վեներիկ, 1877, էջ 600-603: Հովհաննես Իմաստասերի մատենագրությունը, էջ 241:

<sup>1</sup> Ռ. Հ. Վարդանյան, Հայոց տոմարական եղանակը..., էջ 22-23:

Անդրեաս<sup>1</sup>

Յաւան՝ եւ ի նմանէ Յոյնք եւ Հեղդէնք:

Եզնիկ<sup>2</sup>

Բայց Յոյնք ի Յաւանայ եւ Հելլէնք կոչից  
Յոյնք:

Ակնհայտ է, որ Եզնիկ Կողբացին իր աշխատութիւնը շարադրելիս (430-ական թվականների վերջեր-440-ական թվականներ) օգտագործել է իրենց (Հովսեփ Պաղնացի կամ Եզնիկ Կողբացի) թարգմանութիւնից: Ըստ երևույթին, Ն. Ակինյանը վերոհիշյալ փաստն է նկատի ունեցել, երբ անորոշ գրել է, որ Անդրեասի աշխատութիւնները թարգմանվել են Հայերեն 5-րդ դարում:

Պարզել ենք, որ Մովսես Խորենացին նույնպես օգտվել է Անդրեասի ժամանակագրութայն Հայերեն թարգմանութիւնից:

Խորենացին գրում է. «Արդ զԿայինան չորրորդ ի Նոյէ ամենայնք ի ժամանակագրացն գրեն, և ի Սեմայ երրորդ: Նոյնպէս և զԹիրաս, չորրորդ ի Նոյէ, իսկ ի Յաբեթայ երրորդ. թէպես և ըստ մերում թարգմանութեանս (Աստվածաշնչի - Ռ. Վ.) ոչ ուրեք ի բնագրի գտանի: Իսկ զՄեստրայիմ չորրորդ ի Նոյէ և երրորդ ի Քամա՝ ոչ ի մերում թարգմանութեանս և ոչ ի ժամանակագրաց ուրեք կարգեալ գտանեմք: Այլ այսպէս զսա կարգեալ գտաք ի յուշմագունէ և յընթերցասիրէ ումեմն Ասորոյ. և հաւատարիմ թուեցաւ մեզ ասացեալն» (գիրք Ա, գլ. Ե, էջ 19-20): Այս ուշմագուն և ընթերցասեր ասորին Անդրեասն է, որն իր ժամանակագրութայն մեջ Մեստրայիմին դնում է Նոյից հետո 4-րդ տեղը, իսկ Քումից՝ 3-րդ (Շիրակացու մատենագրութիւնը, էջ 360):

Խորենացին իր պատմութայն 4-րդ գլուխը ամբողջությամբ և 5-րդ գլխի մի մասը և այլ հատվածներ քաղել է Անդրեասից: Դրանում համոզվելու համար համադրենք Անանիա Շիրակացու ժամանակագրութայն միջոցով մեզ հասած Անդրեասի Տոմար-ժամանակագրութայն համապատասխան հատվածները Խորենացու պատմութայն համարժեք հատվածների հետ (տես Անանիա Շիրակացու ժամանակագրութիւնը, էջ 357-359, 365 ևն և Մովսես Խորենացու Պատմութիւն հայոց, էջ 14-18 ևն):

Վերոհիշյալ բնագրերի համեմատութիւնից երևում է, որ դրանք բառացի նույնութիւններ են: Խորենացին փոքր ինչ կրճատել է Անդրեաս-Հիպոլիտին, իսկ որոշ հատվածներում փոխ է առել միայն անվանումները: Էլ չենք ասում, որ կարելի է մեկը մյուսով սրբագրել:

Միաժամանակ պարզ է դառնում, որ Անդրեասի ժամանակագրութիւնն է Խորենացու սկզբնաղբյուրը և ոչ հակառակը, ինչպես փորձել է ցույց տալ Բ. Սարգսյանը: Դեռ ավելին, Հիպոլիտին Եզնիկ Կողբացին կամ Հովսեփ Պաղնացին թարգմանել են ոչ անմիջապես, այլ Անդրեասի Տոմար-ժամանակագրութայն միջնորդությամբ, որն օգտվել է Հիպոլիտից, ինչպես և այլ ժամանակագիրներից (Ափրիկանոս, Եվսեբիոս Կեսարացի ևն) և իր ժամանակագրութիւնը հասցրել մինչև Արկադիոս և Ոնարիոս:

Այլ խոսքով, Անանիա Շիրակացու ժամանակագրութայն միջնորդությամբ մեզ հասած բնագրերը, որոնք կրում են հետևյալ ենթավերնագրերը կամ անվերնագիր են, այն է՝

1. Մովսէսի Խորենացույ եւ Անդրեասի
2. Վասն Նոյի
3. Անդրեասի

<sup>1</sup> Անանիա Շիրակացու մատենագրութիւնը, էջ 359:

<sup>2</sup> Եղծ աղանդոց, Թիֆլիս, 1914, էջ 144:

4. Եւ այս անուանք են եւթանասուն եւ երկու ազգացն

5. Եւ այս ազգք են որ գիտեն ի սոցանէ դպրութիւն

6. Պարսից թագաւորք

7. (Եգիպտոսի Պտղոմեանք) (Յետ Ալեքսանդրի թագաւորեաց Եգիպտոս... Պտղոմէոս Ղաւղոս ամս քառասուն...)

8. Իշխանք Եբրայեցւոց...

Անդրեասի ժամանակագրութայն հատվածներ են, որոնք 200-ամյա տոմար-տոնացույցի հետ իբրև նրա բաղկացուցիչ մաս թարգմանվեցին հունարենից Հայերեն 429 թ. (կամ մինչև 435 թվականը) Եզնիկ Կողբացու կամ Հովսեփ Պաղնացու կողմից:

Անանիա Շիրակացին օգտագործեց նաև նախորդ թարգմանված կամ գրված «Առաջին մէնիշխանութեանն Հռովմայեցւոց» և «Թագաւորք Պարսից Սասանականք», «Եւսիբի ժամանակագրի», «Եպիփանու և Պարսից թագաւորք» ենթավերնագրերը կրող բնագրերից, ինչպես և գրեց «Կայսերք Հռոմոց, թէ որչափ ամբ կալան կամ ամիսք եւ զինչ գործ գործեցան» վերնագրված ժամանակագրութիւնը հասցնելով մինչև Հայոց ՃԼԴ-ՃԼԵ թվականները (= 685-687 թթ.):

Ի դեպ երևում է, որ «Առաջին մէնիշխանութեանն Հռովմայեցւոց, վերնագիրը կրող բնագրի հեղինակն իր շարադրանքը տալիս օգտագործել է երկու տարբեր բնագրեր, որովհետև սկզբից մինչև Զենոն տալիս է կայսրերի հյուպատոսութայն տարիները, իսկ հետագայում Ղեւոն մեծից մինչև Հերակլը՝ ոչ: Որ այդ բնագրերի հեղինակը Հայ է, ակնհայտ երևում է Դիոկղետիանոսի հատվածից, երբ գրում է. «Եւ կենարար վարդապետութիւնն Քրիստոսի պատմեցաւ Հայոց ի) ձեռն Սուրբ Գրիգորի Պարթեւի» (էջ 374): Այդ բնագրի հեղինակը ապրել է 7-րդ դարերում (հավ. 40-ական թվականներից հետո), որովհետև օգտագործել է Եվսեբիոս Կեսարացու «ժամանակականք»-ն, որը ինչպես ցույց ենք տվել, թարգմանվել է հունարենից Հայերեն 6-րդ դարի վերջին կամ 7-րդ դարի սկզբներին: Մանավանդ իր ժամանակագրութիւնը հասցնում է Հերակլը ներառյալ (641 թ.):

Դրան հակառակ Շիրակացին օգտագործել է բացի Եվսեբիոսից նաև նոր աղբյուրներ, որոնցից մի մասը Հայտնի չէ, իսկ մյուս մասը, ինչպես ցույց է տվել Բ. Սարգսյանը և այլն, Հայտնի է, ինչպես և Խորենացուն, որի որոշ հատվածներ համառոտել է:

Կարծում ենք, որ Հովսեփ Պաղնացին և Եզնիկ Կողբացին վերոհիշյալ Տոմար-ժամանակագրութայն հետ միասին թարգմանել են Մար Աբաս Կատինայի կամ Մար Աբբա Մծուռնեցու «Նախնեաց Պատմութիւնք»-ը, որը պահպանվել է Սեբեոսի Պատմութայն սկզբնական մասում, այլապես անհասկնալի է 5-րդ դարի մեր մատենագիրների Հայերին թորգոմեան ազգ անվանելը (Փ. Բուզանդ, ևն) ինչպես և Մ. Խորենացու բազրատունիների Հայկից սերվելու տարբերակի հերքումը ի օգուտ հրեական տարբերակի, էլ չենք խոսում նախնեաց պատմութայն և Մ. Խորենացու համապատասխան հատվածների համարժեքութայն մասին:

Ինչ խոսք, այստեղ տեղը չէ նման հարցերի մանրամասն շարադրանքի, բայց մի բան շատ հստակ է, որ Անդրեասի 200-ամյա Տոմարը (Տոնացույց) և ժամանակագրութիւնը թարգմանեցին 429 թ. և հիմնավորապես ներդրեցին Հայ քրիստոնեական տոնացույցի մեջ, իսկ հետագայում հիմք հանդիսացավ Հայոց մեծ տոմարի կամ թվականութայն համար:

1973 թվահամարի ձեռագրում Զատիկի մեկնութայն վերջում պահպանվել են նաև Անդրեասի 200-ամյա Տոմար-Տոնացույցի համար գրված 17 կանոնները, որոնք հետևյալներն են՝

«Ա. Առաջին կանոնն՝ զարն որի միող է չորս ամսն նուաճեցուցանէ, որ կոչի բխէքիստոն, որ լինի յառաջ քան զվեց (պետք է լինի զԳ - Ռ. Վ.) ամսամտին մարտի և եթէ յուրում աւուր շաբաթուն դիպի:

Բ. Կանոն ցուցանէ՝ թէ քանի ըստ թուոյ ամացն Անտիոքացոց լինի չորսհարիւրերորդէ և ի միոյ մինչև զվեցհարիւրերորդն:

Գ. Կանոն ցուցանէ՝ թէ ամի ամի եւթնևտասաներորդն մարտի և հինգերորդն (վեցերորդն պետք է լինի - Ռ. Վ.) ապրիլի, և վեցերորդն յունուարի, յորում լինի աւր յայտնութեան տեառն մերոյ ի տասներորդ ամսեան [քսան] մի աւր դիպի (Եբրայական 10-րդ այն է՝ տրեթ ամսի 21-ի մասին է խոսքը Համարժեք հունվարի 6-ին):

Դ. Կանոն ցուցանէ՝ թէ. որում ամի է ամիսն նահանջեալ:

Ե. Կանոն ցուցանէ՝ թէ յորում ամսեան լինի սկիզբն եւթն շաբաթոցն պահոց:

Զ. Կանոն ցուցանէ՝ թէ քանիս ամսոյն սկիզբն սուրբ պահոցն քառասներորդաց:

Է. Կանոն ցուցանէ՝ թէ յորում ամսեան չորեքտասան լուսնոյ է:

Ը. Կանոն ցուցանէ՝ թէ քանիսն նորուն ամսոյ դիպի չորեքտասաներորդն:

Թ. Կանոն ցուցանէ՝ թէ յորում ժամու՝ ի ժամուցն տունջեան կամ գիշերոյ, դիպի չորեքտասաներորդն:

Ճ. Կանոն ցուցանէ՝ թէ յորում ժամու առնու սկիզբն չորեքտասաներորդն:

[Ճ]Ա. Կանոն ցուցանէ՝ թէ յորում աւուր յաւուրց շաբաթուն է:

[Ճ]Բ. Կանոն ցուցանէ՝ թէ յորում աւուր է մեծ աւրն զատկաց:

[Ճ]Գ. Կանոն ցուցանէ՝ թէ քանի ամսոյն լինին կիրակէն սուրբ:

[Ճ]Դ. Կանոն ցուցանէ՝ թէ յորում ամսեան առնու կատարումն պենդակոստէին:

[Ճ]Ե. Կանոն ցուցանէ՝ թէ քանի ամսեան կատարի պենդակոստն:

[Ճ]Զ. Կանոն ցուցանէ՝ թէ յեթն ամ պատշաճի եւթներեակն ըստ Մովսէսի գրոցն:

[Ճ]Է. Կանոն ցուցանէ՝ զեւթնից եւթնեակս կոչի յորելեան, որ յիսնակք ամաց, որ լինի թողութիւն գիւղից, ծառայից և պարտուց»<sup>1</sup> :

Անդրեասի Զատիկի մեկնության, կանոնների և հայ մատենագրական վկայությունների հիման վրա վերականգնել ենք Անդրեասի 200-ամյա տոմար-տոնացույցը, որը ներկայացնում ենք ստորև:

Ա Ն Դ Ր Ե Ա Ս Ի 200 - Ա Մ Յ Ա

Զ Ա Տ Կ Ա Ց Ո Ի Ց Ա Կ Ը

( վ եր ա կ ա զ մ ու թ յ ու ն )

<sup>1</sup> Տես ձեռ. 1973, էջ 255ա, Աշ. Աբրահամյան, Անդրեասի տոմարագիտական աշխատությունները, էջ 80-81 ևն:

Ժամանակ	Համար	Պարտավորություններ	Համար	Պարտավորություններ	Համար	Պարտավորություններ	Համար	Պարտավորություններ	Միջին և ամենագույն		Դրամային համար	Գումարներ		Վճարող	Վճարման ամսաթիվ	Վճարում
									Համար	Պարտավորություններ		Համար	Պարտավորություններ			
1	2		5	6	7	8	9	10	11	12	13	14	15	16		
Ա	401	9(11)	քաղց 10	4	փտ 21	արաց 26	մեհեկ 23	1(10)	ապր 4	արեգ 8	ապր 11	ար 15	մայ 30	մարտ 4		
	402	20(22)	- "	5	փտ 6	արաց 11	- "	2(11)	միտ 24	մեհեկ 27	միտ 27	մեհ 30	մայ 15	ահեկ 19		
	403	1(3)	- "	6	փտ 26	մեհեկ 1	- "	3(12)	ապր 12	արեգ 16	ապր 16	ար 20	հուն 3	մարտ 8		
	404	12(4)	- "	7	փտ 18	արաց 23	- "	4(13)	ապր 1	ար 6	ապր 7	ար 12	մայ 26	մարտ 1		
	405	23(25)	քաղց 11	2	փտ 2	արաց 9	մեհեկ 24	5(14)	միտ 21	մեհ 25	միտ 23	մեհ 28	մայ 11	ահեկ 16		
	406	4(6)	- "	3	փտ 22	արաց 28	- "	6(15)	ապր 9	ար 14	ապր 12	ար 17	մայ 31	մարտ 6		
	407	15(17)	- "	4	փտ 14	արաց 20	- "	7(16)	միտ 29	ար 3	ապր 4	ար 9	մայ 23	ահեկ 28		
	408	26(28)	- "	5	միտ 5	մեհեկ 10	- "	8(17)	ապր 17	ար 23	ապր 23	ար 29	հուն 11	մարտ 18		
	409	7(9)	քաղ 12	7	փտ 18	արաց 25	մեհեկ 25	9(18)	ապր 5(6)	ար 11(12)	ապր 8	ար 14	մայ 27	մարտ 3		
	410	19(21)	- "	1	փտ 10	արաց 17	- "	10(19)	միտ 25	մեհ 30	միտ 31	ար 6	մայ 19	ահեկ 24		
	411	30(2)	- "	2	միտ 2	մեհեկ 7	- "	11(1)	ապր 13	ար 19	ապր 20	ար 26	հուն 8	մարտ 15		
	412	11(13)	- "	3	փտ 15	արաց 22	- "	12(2)	ապր 2	ար 9	ապր 4	ար 11	մայ 23	ահեկ 30		
	413	22(24)	քաղ 13	5	փտ 6	արաց 14	մեհեկ 26	13(3)	միտ 22	մեհ 28	միտ 27	ար 3	մայ 15	ահեկ 22		
	414	3(5)	- "	6	փտ 26	մեհ 4	- "	14(4)	ապր 10	ար 17	ապր 16	ար 23	հուն 4	մարտ 12		
	415	14(16)	- "	7	փտ 11	արաց 19	- "	15(5)	միտ 30	ար 6	ապր 1	ար 8	մայ 20	ահեկ 26		
	416	25(27)	- "	1	միտ 2	մեհ 9	- "	16(6)	ապր 18	ար 26	ապր 20	ար 28	հուն 8	մարտ 17		
	417	6(8)	քաղ 14	3	փտ 22	մեհ 1	մեհեկ 27	17(7)	ապր 7	ար 15	ապր 12	ար 20	մայ 31	մարտ 9		
	418	17(19)	- "	4	փտ 7	արաց 16	- "	18(8)	միտ 27	ար 4	միտ 28(1)	ար 5(12)	մայ 16	ահեկ 23		
	419	28(30)	- "	5	փտ 27	մեհ 6	- "	19(9)	ապր 15	ար 2	ապր 17	ար 25	հուն 5	մարտ 14		

Ժամանակ	Համար	Պարտավորություններ	Համար	Պարտավորություններ	Համար	Պարտավորություններ	Համար	Պարտավորություններ	Համար	Պարտավորություններ	Համար	Պարտավորություններ	Համար	Պարտավորություններ	Համար	Պարտավորություններ	Համար	Պարտավորություններ	
																			1
Ա	420	372	11	փտ 19	արաց 28	- "	1(10)	ապր 4	ար 13	ապր 8	ապր 8	ար 17	մայ 27	մարտ 6					
	421	373	22	փտ 10	արաց 20	մեհեկ 28	2(11)	միտ 24	ար 2	ար 13	միտ 31	ար 9	մայ 19	ահեկ 27					
	422	374	3	փտ 23	մեհ 3	- "	3(12)	ապր 12	ար 21	ար 10	ապր 5	ար 14	հուն 1	մարտ 11					
	423	375	14	փտ 15	արաց 25	- "	4(13)	ապր 1	ար 10	մեհ 30	միտ 27	ար 6	մայ 24	մարտ 3					
	424	376	25	փտ 7	արաց 17	- "	5(14)	միտ 21	ար 19	միտ 21	ար 27	ար 26	մայ 15	ահեկ 25					
	425	377	6	փտ 26	մեհ 7	մեհեկ 29	6(15)	ապր 9	ար 8	ար 19	ապր 16	ար 11	մայ 20	ահեկ 30					
	426	378	17	փտ 11	արաց 22	- "	7(16)	միտ 29	ար 27	ար 8	ապր 1	ար 23	հուն 9	մարտ 15					
	427	379	28	միտ 3	մեհ 12	- "	8(17)	ապր 17	ար 27	ար 17	ապր 21	ահեկ 1	մայ 31	մարտ 12					
	428	380	9	փտ 23	մեհ 4	- "	9(18)	ապր 5(6)	ար 16(17)	ար 5	ապր 12	ար 8	մայ 16	ահեկ 27					
	429	381	21	փտ 17	արաց 19	մեհեկ 4	10(19)	միտ 25	ար 5	միտ 28	միտ 28	ար 28	հուն 5	մարտ 17					
	430	382	2	փտ 27	մեհ 9	- "	11(1)	ապր 13	ար 24	ար 13	ապր 17	ար 20	մայ 28	մարտ 9					
	431	383	13	փտ 19	մեհ 1	- "	12(2)	ապր 2	ար 13	ար 3	ապր 9	ար 5	հուն 12	մարտ 17					
	432	384	24	փտ 4	արաց 16	- "	13(3)	միտ 22	ար 3	ար 3	միտ 24	ար 20	մայ 5	ահեկ 30					
	433	385	5	փտ 23	մեհ 6	արեգ 1	14(4)	ապր 10	ար 22	ար 22	ապր 13	ար 25	հուն 1	մարտ 14					
	434	386	16	փտ 15	արաց 28	- "	15(5)	միտ 30	ար 11	ար 11	ապր 5	ար 17	մայ 24	մարտ 6					
	435	387	27	փտ 7	արաց 18	- "	16(6)	ապր 18	ար 30	ար 30	ապր 9	ահեկ 7	հուն 13	մարտ 26					
	436	388	8	փտ 20	մեհ 3	- "	17(7)	ապր 7	ար 20	ար 20	ապր 25	ար 22	մայ 28	մարտ 11					
	437	389	19	փտ 11	արաց 25	արեգ 2	18(8)	միտ 27	ար 9	ար 9	ապր 1	ար 14	մայ 20	մարտ 3					
	438	390	30	միտ 3	մեհ 15	- "	19(9)	ապր 15	ար 28	ար 28	ապր 21	ահեկ 4	հուն 9	մարտ 23					
	439	391	11	փտ 16	արաց 30	- "	1(10)	ապր 4	ար 17	ար 17	ապր 6	ար 19	մայ 25	մարտ 8					
	440	392	22	փտ 8	արաց 22	- "	2(11)	միտ 24	ար 7	ար 7	միտ 28	ար 1	մայ 16	ահեկ 30					
	441	393	3	փտ 27	արեգ 12	արեգ 3	3(12)	ապր 12	ար 26	ար 26	ապր 17	ահեկ 1	հուն 5	մարտ 20					
	442	394	14	փտ 12	արաց 27	- "	4(13)	ապր 1	ար 15	ար 15	ապր 2(9)	ար 16(23)	մայ 21	մարտ 5					
	443	395	25	փտ 4	արաց 19	- "	5(14)	միտ 21	ար 4	ար 4	միտ 25	ար 8	մայ 13	ահեկ 26					
	444	396	6	փտ 24	մեհ 9	- "	6(15)	ապր 9	ար 24	ար 24	ապր 13	ար 28	հուն 1	մարտ 17					
	445	397	17	փտ 15	մեհ 1	արեգ 4	7(16)	միտ 29	ար 13	ար 13	ապր 5	ար 20	մայ 23	մարտ 8					
	446	398	28	փտ 28	մեհ 14	- "	8(17)	ապր 17	ահեկ 2	ահեկ 2	ապր 18(25)	ահեկ 3(10)	հուն 6	մարտ 22					
	447	399	9	փտ 20	մեհ 6	- "	9(18)	ապր 10	ար 21(20)	ար 10	ապր 10	ար 25	մայ 29	մարտ 14					
	448	400	21	փտ 12	արաց 28	- "	10(19)	միտ 25	ար 10	ար 10	ապր 1	ար 17	մայ 20	մարտ 6					
	449	401	2	փտ 24	մեհ 11	արեգ 5	11(1)	միտ 25	ար 29	ար 29	ապր 14(1)	ար 30(ար7)	մայ 20	մարտ 19					
	450	402	13	փտ 16	մեհ 3	- "	12(2)	ապր 2	ար 13	ար 13	ապր 6	ար 22	մայ 25	մարտ 11					

1	2	3	4	5	6	7	8	9	10	11	12	13	14	15	16
451	403	24	-	-	3	փտ 8	արց 25	-	13(3)	միտ 22	ար 7	միտ 29	ար 14	մայ 17	մար 3
452	404	5	-	-	4	փտ 28	մեհ 15	-	14(4)	ապր 10	ար 27	ապր 17	անեկ 4	հուն 5	մար 23
453	405	16	քաղ 23	-	6	փտ 12	արց 30	արեգ 6	15(5)	միտ 30	ար 16	ապր 2	ար 19	մայ 21	մար 8
454	406	27	-	-	1	մտ 4	մեհ 20	-	16(6)	ապր 18	անեկ 5	ապր 22	անեկ 9	հուն 10	անեկ 26
455	407	8	-	-	2	փտ 24	մեհ 12	-	17(7)	ապր 7	ար 24	ապր 14	անեկ 1	հուն 2	մար 20
456	408	19	-	-	4	փտ 9	արց 27	-	18(8)	միտ 27	ար 14	միտ 29	ար 16	մայ 17	մար 5
457	409	30	քաղ 24	-	5	փտ 28	մեհ 17	արեգ 7	19(9)	ապր 15	անեկ 3	ապր 18	անեկ 6	հուն 6	մար 25
458	410	11	-	-	6	փտ 20	մեհ 9	-	1(10)	ապր 4	ար 22	ապր 10	ար 28	մայ 29	մար 17
459	411	22	-	-	7	փտ 5	արց 24	-	2(11)	միտ 24	ար 11	միտ 26	ար 13	մայ 16	մար 1
460	412	3	-	-	1	փտ 25	մեհ 14	-	3(12)	ապր 12	անեկ 1	ապր 14	անեկ 3	հուն 2	մար 22
461	413	14	-	-	2	փտ 16	մեհ 6	արեգ 8	4(13)	ապր 1	ար 20	ապր 6	ար 25	մայ 25	մար 14
462	414	25	քաղ 25	-	3	փտ 1	արց 21	-	5(14)	միտ 21	ար 9	միտ 22(9)	ար 10(17)	մայ 10	անեկ 28
463	415	6	-	-	4	փտ 21	մեհ 11	-	6(15)	ապր 9	ար 28	ապր 11	ար 30	մայ 30	մար 19
464	416	17	-	-	5	փտ 12	մեհ 3	-	7(16)	միտ 29	ար 18	ապր 2	ար 22	մայ 21	մար 7
465	417	28	քաղ 26	-	7	մտ 4	մեհ 23	արեգ 9	8(17)	ապր 17	անեկ 7	ապր 22	անեկ 12	հուն 10	անեկ 30
466	418	9	-	-	1	փտ 24	մեհ 8	-	9(18)	ապր 6(5)	ար 26(25)	ապր 7(14)	ար 27(ա4)	մայ 26	մար 16
467	419	21	-	-	2	փտ 9	արց 30	-	10(19)	միտ 25	ար 14	միտ 30	ար 19	մայ 18	մար 8
468	420	2	-	-	3	փտ 29	մեհ 20	-	11(1)	ապր 13	անեկ 4	ապր 18	անեկ 9	հուն 6	մար 28
469	421	13	քաղ 27	-	5	փտ 13	մեհ 5	արեգ 10	12(2)	ապր 2	ար 23	ապր 3(10)	ար 24(առ)	մայ 22	մար 13
470	422	24	-	-	6	փտ 5	արց 27	-	13(3)	միտ 22	ար 12	միտ 26	ար 16	մայ 14	մար 5
471	423	5	-	-	7	փտ 25	մեհ 17	-	14(4)	ապր 10	անեկ 1	ապր 15	անեկ 6	հուն 3	մար 25
472	424	16	-	-	1	փտ 17	մեհ 9	-	15(5)	միտ 30	ար 21	ապր 6	ար 28	մայ 25	մար 17
473	425	27	քաղ 28	-	3	փտ 1	մեհ 22	արեգ 11	16(6)	ապր 18	անեկ 10	ապր 19(26)	անեկ 11(1)	հուն 7	մար 30
474	426	8	-	-	4	փտ 21	մեհ 14	-	17(7)	ապր 7	ար 29	ապր 11	անեկ 3	մայ 30	մար 22
475	427	19	-	-	5	փտ 13	մեհ 6	-	18(8)	միտ 27	ար 18	ապր 3	ար 25	մայ 22	մար 14
476	428	30	-	-	6	մտ 4	մեհ 26	-	19(9)	ապր 15	անեկ 8	ապր 22	անեկ 15	հուն 10	միոց 4
477	429	11	քաղ 29	-	1	փտ 17	մեհ 11	արեգ 12	1(10)	ապր 4	ար 27	ապր 7	ար 30	մայ 26	մար 19
478	430	22	-	-	2	փտ 9	մեհ 11	-	2(11)	միտ 24	ար 16	միտ 30	ար 30	մայ 18	մար 11
479	431	3	-	-	3	փտ 1	մեհ 23	-	3(12)	ապր 12	անեկ 5	ապր 19	անեկ 12	հուն 7	միոց 1
480	432	14	-	-	4	փտ 14	մեհ 8	-	4(13)	ապր 1	ար 26	ապր 3	ար 27	մայ 22	մար 16
481	433	25	քաղ 30	-	6	փտ 5	արց 30	արեգ 13	5(14)	միտ 21	ար 14	միտ 26	ար 19	մայ 14	մար 8

1	2	3	4	5	6	7	8	9	10	11	12	13	14	15	16
482	434	6	-	-	7	փտ 25	մեհ 20	-	6(15)	ապր 9	անեկ 3	ապր 15	անեկ 9	հուն 3	մար 27
483	435	17	-	-	1	փտ 10	մեհ 5	-	7(16)	միտ 29	ար 22	միտ 31	ար 24	մայ 19	մար 13
484	436	28	-	-	2	մտ 1	մեհ 25	-	8(17)	ապր 17	անեկ 12	ապր 19	անեկ 14	հուն 7	միոց 3
485	437	9	արաց 1	-	4	փտ 21	մեհ 17	արեգ 14	9(18)	ապր 6(5)	անեկ 1(ար30)	ապր 11(10)	անեկ 6(5)	մայ 30	մար 25
486	438	21	-	-	5	փտ 6	մեհ 2	-	10(1)	միտ 25	ար 19	միտ 27	ար 21	մայ 15	մար 10
487	439	2	-	-	6	փտ 26	մեհ 22	-	11(1)	ապր 13	անեկ 8	ապր 16	անեկ 11	հուն 4	մար 30
488	440	13	-	-	7	փտ 18	արգ 14	-	12(2)	ապր 2	ար 28	ապր 7	ար 3	մայ 26	մար 22
489	441	24	արաց 2	-	2	փտ 2	արգ 29	արեգ 15	13(3)	միտ 22	ար 17	միտ 23	ար 18	մայ 11	մար 7
490	442	5	-	-	3	փտ 22	մեհ 19	-	14(4)	ապր 10	անեկ 6	ապր 12	անեկ 8	մայ 31	մար 27
491	443	16	-	-	4	փտ 14	մեհ 11	-	15(5)	միտ 30	ար 25	ապր 4	ար 30	մայ 23	մար 19
492	444	27	-	-	5	մտ 5	արգ 1	-	16(6)	ապր 18	անեկ 15	ապր 23	անեկ 20	հուն 11	մար 8
493	445	8	արաց 3	-	7	փտ 18	մեհ 16	արեգ 16	17(7)	ապր 7	անեկ 4	ապր 8(15)	անեկ 5(12)	մայ 27	մար 24
494	446	19	-	-	1	փտ 10	մեհ 8	-	18(8)	միտ 27	ար 23	միտ 31	ար 27	մայ 19	մար 16
495	447	30	-	-	2	մտ 2	մեհ 28	-	19(9)	ապր 15	անեկ 12	ապր 20	անեկ 17	հուն 8	միոց 6
496	448	11	-	-	3	փտ 22	մեհ 20	-	1(10)	ապր 4	անեկ 2	ապր 11	անեկ 9	մայ 30	մար 28
497	449	22	արաց 4	-	5	փտ 6	մեհ 5	արեգ 17	2(11)	միտ 24	ար 21	միտ 27	ար 24	մայ 15	մար 13
498	450	3	-	-	6	փտ 26	մեհ 25	-	3(12)	ապր 12	անեկ 10	ապր 16	անեկ 14	հուն 4	միոց 3
499	451	14	-	-	7	փտ 18	մեհ 17	-	4(13)	ապր 1	ար 29	ապր 8	անեկ 6	մայ 27	մար 25
500	452	25	-	-	1	փտ 3	մեհ 2	-	5(14)	միտ 21	ար 19	միտ 23	ար 21	մայ 11	մար 10
501	453	6	արաց 5	-	3	փտ 22	մեհ 22	արեգ 18	6(15)	ապր 19	անեկ 8	ապր 12	անեկ 11	մայ 31	մար 30
502	454	17	-	-	4	փտ 14	մեհ 14	-	7(16)	միտ 29	ար 27	ապր 4	անեկ 3	մայ 23	մար 22
503	455	28	-	-	5	մտ 6	արգ 3	-	8(17)	ապր 17	անեկ 16	ապր 24	անեկ 23	հուն 12	միոց 12
504	456	9	-	-	6	փտ 19	մեհ 19	-	9(18)	ապր 6(5)	անեկ 6(5)	ապր 8	անեկ 8	մայ 27	մար 27
505	457	21	արաց 6	-	1	փտ 10	մեհ 11	արեգ 19	10(19)	միտ 25	ար 24	միտ 31	ար 30	մայ 19	մար 19
506	458	2	-	-	2	մտ 2	արգ 1	-	11(1)	ապր 13	անեկ 13	ապր 20	անեկ 20	հուն 8	միոց 9
507	459	13	-	-	3	փտ 15	մեհ 16	-	12(2)	ապր 2	անեկ 2	ապր 5	անեկ 5	մայ 23	մար 24
508	460	24	-	-	4	փտ 7	մեհ 8	-	13(3)	միտ 22	ար 22	միտ 27	ար 27	մայ 15	մար 16
509	461	5	արաց 7	-	6	փտ 26	մեհ 28	արեգ 20	14(4)	ապր 10	անեկ 11	ապր 16	անեկ 17	հուն 4	միոց 6
510	462	16	-	-	7	փտ 11	մեհ 13	-	15(5)	միտ 30	ար 30	ապր 1	անեկ 2	մայ 20	մար 21
511	463	27	-	-	1	մտ 3	արգ 3	-	16(6)	ապր 18	անեկ 19	ապր 21	անեկ 22	հուն 4	միոց 11
512	464	8	-	-	2	փտ 23	մեհ 25	-	17(7)	ապր 7	անեկ 9	ապր 12	անեկ 14	մայ 31	միոց 3



1	2	3	4	5	6	7	8	9	10	11	12	13	14	15	16
513	465	19	4	արաց 8	4	փտ 7	մեհ 10	արեգ 21	18(8)	միտ 27	ար 28	միտ28(A4)	ար29(ահ6)	մայ 16	մար 18
514	466	30	5	- "-	5	փտ 27	մեհ 30	- "-	19(9)	ապր 15	ահեկ 17	ապր 17	ահեկ 19	հուն 5	միոց 8
515	467	11	6	- "-	6	փտ 19	մեհ 23	- "-	1(10)	ապր 4	ահեկ 6	ապր 9	ահեկ 11	մայ 28	մար 30
516	468	22	7	- "-	7	փտ 11	մեհ 14	- "-	2(11)	միտ 24	ար 26	միտ 31	ահեկ 3	մայ 19	մար 22
517	469	3	2	արաց 9	2	փտ 23	մեհ 27	արեգ 22	3(12)	ապր 12	ահեկ 15	ապր13(20)	ահ 16(23)	հուն 1	միոց 5
518	470	14	3	- "-	3	փտ 15	մեհ 19	- "-	4(13)	ապր 1	ահեկ 4	ապր 5	ահեկ 8	մայ 24	մար 27
519	471	25	4	- "-	4	փտ 7	մեհ 11	- "-	5(14)	միտ 21	ար 23	միտ 28	ար 30	մայ 16	մար 19
520	472	6	5	- "-	5	փտ 27	արգ 1	- "-	6(15)	ապր 9	ահեկ 13	ապր 16	ահեկ 20	հուն 4	միոց 9
521	473	17	7	արաց10	7	փտ 11	մեհ 16	արեգ 23	7(16)	միտ 29	ահեկ 2	ապր 1	ահեկ 5	մայ 20	մար 24
522	474	28	1	- "-	1	փտ 3	արգ 6	- "-	8(17)	ապր 17	ահեկ 21	ապր 21	ահեկ 25	հուն 9	միոց 14
523	475	9	2	- "-	2	փտ 23	մեհ 27	- "-	9(18)	ապր 6(5)	ահ 10(9)	ապր 6(13)	ահ 10(17)	հուն 1	միոց 6
524	476	21	3	- "-	3	փտ 8	մեհ 13	- "-	10(19)	միտ 25	ար 29	միտ 28	ահեկ 2	մայ 16	մար 21
525	477	2	5	արաց 11	5	փտ 27	արգ 3	արեգ 24	11(1)	ապր 13	ահեկ 18	ապր 17	ահեկ 22	հուն 5	միոց 11
526	478	13	6	- "-	6	փտ 19	մեհ 25	- "-	12(2)	ապր 2	ահեկ 7	ապր 9	ահեկ 14	մայ 28	միոց 3
527	479	24	7	- "-	7	փտ 4	մեհ 10	- "-	13(3)	միտ 22	ար 26	միտ 25	ար 29	մայ 13	մար 18
528	480	5	1	- "-	1	փտ 24	մեհ 30	- "-	14(4)	ապր 10	ահեկ 16	ապր 13	ահեկ 19	հուն 1	միոց 8
529	481	16	3	արաց 12	3	փտ 15	մեհ 22	արեգ 25	15(5)	միտ 30	ահեկ 5	ապր 5	ահեկ 11	մայ 23	մար 28
530	482	27	4	- "-	4	մտ 7	արգ 12	- "-	16(6)	ապր 18	ահեկ 24	ապր 25	մար 1	հուն 13	միոց 20
531	483	8	5	- "-	5	փտ 20	մեհ 27	- "-	17(7)	ապր 7	ահեկ 13	ապր 10	ահեկ 16	մայ 29	միոց 5
532	484	19	6	- "-	6	փտ 12	արգ 19	- "-	18(8)	միտ 27	ահեկ 3	ապր 1	ահեկ 8	մայ 20	մար 26
533	485	30	1	արաց 13	1	մտ 3	արգ 9	արեգ 26	19(9)	ապր 15	ահեկ 22	ապր 21	ահեկ 28	հուն 9	միոց 17
534	486	11	2	- "-	2	փտ 16	մեհ 24	- "-	1(10)	ապր 4	ահեկ 11	ապր 6	ահեկ 13	մայ 25	միոց 2
535	487	22	3	- "-	3	փտ 8	մեհ 16	- "-	2(11)	միտ 24	ար 30	միտ 29	ահեկ 5	մայ 15	մար 22
536	488	3	4	- "-	4	փտ 28	արգ 6	- "-	3(12)	ապր 12	ահեկ 20	ապր 17	ահեկ 25	հուն 5	միոց 14
537	489	14	6	արաց 14	6	փտ 12	մեհ 21	արեգ 27	4(13)	ապր 1	ահեկ 9	ապր 2(9)	ահ 10(17)	մայ 21	մար 28
538	490	25	7	- "-	7	փտ 4	մեհ 13	- "-	5(14)	միտ 21	ար 28	միտ 25	ահեկ 2	մայ 13	մար 21
539	491	6	1	- "-	1	փտ 24	արգ 3	- "-	6(15)	ապր 9	ահեկ 17	ապր 14	ահեկ 22	հուն 2	միոց 11
540	492	17	2	- "-	2	փտ 16	մեհ 25	- "-	7(16)	միտ 29	ահեկ 7	ապր 5	ահեկ 14	մայ 24	միոց 3
541	493	28	4	արաց 15	4	փտ 28	արգ 8	արեգ 28	8(17)	ապր 17	ահեկ 26	ապր18(25)	ահ27(տր4)	հուն 6	միոց 15
542	494	9	5	- "-	5	փտ 20	մեհ 30	- "-	9(18)	ապր6(5)	ահ 15(14)	ապր 10	ահեկ 19	մայ 29	միոց 8
543	495	21	6	- "-	6	փտ 5	մեհ 15	- "-	10(19)	միտ 25	ահեկ 3	միտ26(A2)	ահեկ 4(11)	մայ 13	մար 22

1	2	3	4	5	6	7	8	9	10	11	12	13	14	15	16
544	496	23	7	- "-	7	փտ 25	արգ 5	- "-	11(1)	ապր 13	ահեկ 23	ապր14(21)	ահ24(տր1)	հուն 2	միոց 13
545	497	13	2	արաց 16	2	փետր 16	մեհ 27	արեգ 29	12(2)	ապր 2	ահեկ 12	ապր 6	ահեկ 16	մայ 25	միոց 5
546	498	24	3	- "-	3	փետր 8	մեհ 19	- "-	13(3)	միտ 22	ահեկ 1	միտ 29	ահեկ 8	մայ 17	միոց 27
547	499	5	4	- "-	4	փետր 21	արգ 2	- "-	14(4)	ապր 10	ահեկ 20	ապր11(18)	ահ 2(28)	մայ 30	միոց 10
548	500	16	5	- "-	5	փետր 13	մեհ 24	- "-	15(5)	միտ 30	ահեկ 10	ապր 2	ահեկ 13	մայ 21	միոց 2
549	501	28	7	արաց 17	7	մարտ 4	արգ 14	արեգ 30	16(6)	ապր 18	ահեկ 29	ապր 22	մար 3	հուն 10	միոց 14
550	502	8	1	- "-	1	փետր 24	արգ 6	- "-	17(7)	ապր 7	ահեկ 18	ապր 14	ահեկ 25	հուն 2	միոց 22
551	503	19	2	- "-	2	փետր 9	մեհ 21	- "-	18(8)	միտ 27	ահեկ 7	միտ 30	ահեկ 10	մայ 18	մար 28
552	504	30	3	- "-	3	փետր 29	արգ 11	- "-	19(9)	ապր 15	ահեկ 27	ապր 18	ահեկ 30	հուն 6	միոց 19
553	505	11	5	արաց 18	5	փետր 20	արգ 3	արեգ 1	1(10)	ապր 4	ահեկ 16	ապր 10	ահեկ 22	մայ 29	միոց 11
554	506	22	6	- "-	6	փետր 5	մեհ 18	- "-	2(11)	միտ 24	ահեկ 5	միտ 26	ահեկ 7	մայ 14	մար 25
555	507	3	7	- "-	7	փետր 25	արգ 8	- "-	3(12)	ապր 12	ահեկ 24	ապր 15	ահեկ 27	հուն 3	միոց 16
556	508	14	1	- "-	1	փետր 17	մեհ 30	- "-	4(13)	ապր 1	ահեկ 14	ապր 6	ահեկ 19	մայ 25	միոց 8
557	509	25	3	արաց 19	3	փետր 1	մեհ 15	ահեկահ2	5(14)	միտ 21	ահեկ 3	միտ22(29)	ահեկ 4(11)	մայ 10	մար 23
558	510	6	4	- "-	4	փետր 21	արգ 5	- "-	6(15)	ապր 9	ահեկ 22	ապր 11	ահեկ 24	մայ 30	միոց 13
559	511	17	5	- "-	5	փետր 13	մեհ 27	- "-	7(16)	միտ 29	ահեկ 11	ապր 3	ահեկ 16	մայ 22	միոց 5
560	512	28	6	- "-	6	մարտի 4	արգ 17	- "-	8(17)	ապր 17	մար 1	ապր 22	մար 6	հուն 10	մար 24
561	513	9	1	արաց 20	1	փետր 17	արգ 2	ահեկահ3	9(18)	ապր 6(5)	ահ 20(19)	ապր7(14)	ահ 21(28)	մայ 26	միոց 10
562	514	21	2	- "-	2	փետր 9	մեհ 24	- "-	10(19)	միտ 25	ահեկ 8	միտ 30	ահեկ 13	մայ 18	միոց 2
563	515	13	3	- "-	3	մարտ 1	արգ 14	- "-	11(1)	ապր 13	ահեկ 27	ապր 19	մար 3	հուն 7	միոց 22
564	516	13	4	- "-	4	փետր 14	մեհ 29	- "-	12(2)	ապր 2	ահեկ 17	ապր3(10)	ահ 18(25)	մայ 22	միոց 7
565	517	24	6	արաց 21	6	փտ 5	մեհ 21	ահեկահ4	13(3)	միտ 22	ահեկ 6	միտ 26	ահեկ 10	մայ 14	մար 28
566	518	5	7	- "-	7	փտ 25	արգ 11	- "-	14(4)	ապր 10	ահեկ 26	ապր 15	ահեկ 30	հուն 3	միոց 19
567	519	16	1	- "-	1	մտ 10	մեհ 26	- "-	15(5)	միտ 30	ահեկ 14	միտ31(27)	ահ 15(22)	մայ 19	միոց 4
568	520	27	2	- "-	2	փտ 1	արգ 16	- "-	16(6)	ապր 18	մար 4	ապր19(26)	մար 5(12)	հուն 7	միոց 24
569	521	18	4	արաց 22	4	փտ 21	արգ 8	ահեկահ5	17(7)	ապր 7	ահեկ 23	ապր 11	ահեկ 27	մայ 30	միոց 16
570	522	19	5	- "-	5	փտ 13	մեհ 30	- "-	18(8)	միտ 27	ահեկ 12	ապր 3	ահեկ 19	մայ 22	միոց 18
571	523	30	6	- "-	6	մտ 26	արգ 13	- "-	19(9)	ապր 15	ահեկ 1	ապր 3	ահեկ 27	մայ 30	միոց 21
572	524	11	7	- "-	7	փտ 18	արգ 5	- "-	1(10)	ապր 4	ահեկ 21	ապր 7	ահեկ 24	մայ 26	միոց 14
573	525	22	2	արաց 23	2	փտ 9	մեհ 28	- "-	2(11)	միտ 24	ահեկ 10	մար 30	ահեկ 17	մայ 18	միոց 5
574	526	3	3	- "-	3	մտ 1	արգ 17	- "-	3(12)	ապր 12	ահեկ 29	ապր 19	մար 6	հուն 7	միոց 25

1	2	3	4	5	6	7	8	9	10	11	12	13	14	15	16
575	576	527	14	-	4	փտ 14	արգ 2	-	4(13)	ապր 1	առնել 18	ապր 4	առնել 21	մայ 23	մրոց 10
576	528	528	25	-	5	փտ 6	մեհ 24	-	5(14)	մրտ 21	առնել 8	մրտ 26	առնել 13	մայ 13	մրոց 2
577	529	529	6	արոց 24	7	փտ 25	արգ 14	առնել 7	6(15)	ապր 9	առնել 27	ապր 15	մար 3	հուն 3	մրոց 25
578	530	530	17	-	1	փտ 10	մեհ 29	-	7(16)	մրտ 21	առնել 16	մրտ 31	առնել 18	մայ 19	մրոց 7
579	531	531	28	-	2	մտ 2	արգ 19	-	8(17)	ապր 17	մար 5	ապր 20	մար 8	հուն 8	մրոց 26
580	532	532	9	-	3	փտ 22	արգ 11	-	9(18)	ապր 6(5)	առնել 14	ապր 11	առնել 30	մայ 30	մրոց 19
581	533	533	21	արոց 25	5	փտ 6	մեհ 26	առնել 8	10(19)	մրտ 25	առնել 13	մրտ 27	առնել 15	մայ 15	մրոց 4
582	534	534	2	-	6	փտ 26	արգ 16	-	11(1)	ապր 13	մար 2	ապր 16	մար 5	հուն 4	մրոց 24
583	535	535	13	-	7	փտ 18	արգ 8	-	12(2)	ապր 2	առնել 21	ապր 8	առնել 27	մայ 27	մրոց 16
584	536	536	24	-	1	փտ 3	մեհ 23	-	13(3)	մրտ 22	առնել 11	մրտ 23(30)	առնել 24	մայ 11	մրոց 1
585	537	537	5	արոց 26	3	փետր 22	արգ 13	առնել 2	14(4)	ապր 10	առնել 30	ապր 12	մար 2	մայ 31	մրոց 21
586	538	538	16	-	4	փետր 14	արգ 5	-	15(5)	մրտ 30	առնել 19	ապր 4	առնել 24	մայ 23	մրոց 13
587	539	539	27	-	5	մարտի 6	արգ 25	-	16(6)	մրտ 18	մար 8	ապր 24	մար 14	հուն 12	հրտո 3
588	540	540	8	-	6	փետր 19	արգ 10	-	17(7)	ապր 7	առնել 28	ապր 8(15)	մար 29(մա6)	մայ 27	մրոց 18
589	541	541	19	արոց 27	1	փետր 10	արգ 1	առնել 10	18(8)	մրտ 27	առնել 17	մրտ 31	առնել 20	մայ 19	մրոց 10
590	542	542	30	-	2	փետր 9	արգ 22	-	19(9)	ապր 15	մար 6	ապր 20	առնել 11	հուն 8	մրոց 30
591	543	543	11	-	3	փետր 15	արգ 7	-	1(10)	ապր 4	առնել 25	ապր 5(12)	առնել 18	մայ 23	մրոց 14
592	544	544	22	-	4	փետր 7	մեհ 29	-	2(11)	մրտ 24	առնել 15	մրտ 27	առնել 18	մայ 13	մրոց 6
593	545	545	3	արոց 28	6	փետր 26	արգ 19	առնել 11	3(12)	ապր 12	մար 4	ապր 16	առնել 8	հուն 4	մրոց 26
594	546	546	14	-	7	փետր 18	արգ 10	-	4(13)	ապր 1	առնել 22	ապր 8	առնել 29	մայ 27	մրոց 19
595	547	547	25	-	1	փետր 3	մեհ 26	-	5(14)	մրտ 21	առնել 12	մրտ 24	առնել 15	մայ 12	մրոց 4
596	548	548	6	-	2	փետր 23	արգ 16	-	6(15)	ապր 9	մար 2	ապր 12	առնել 15	մայ 31	մրոց 24
597	549	549	17	արոց 29	4	փետր 14	արգ 8	առնել 12	7(16)	մրտ 29	առնել 21	ապր 4	առնել 27	մայ 23	մրոց 16
598	550	550	28	-	5	մարտի 6	արգ 28	-	8(17)	ապր 17	մար 10	ապր 24	մար 17	հուն 18	հրտո 6
599	551	551	2	-	6	փետր 19	արգ 13	-	9(18)	ապր 6(5)	առնել 29(28)	ապր 9	մար 2	մայ 28	մրոց 21
600	552	552	21	-	7	փետր 11	արգ 5	-	10(19)	մրտ 25	առնել 18	մրտ 31	առնել 24	մայ 19	մրոց 13

Անդրեասի 200-ամյա Ձատկացուցակում կիրառվել է նահանջ տարվա գաղափարը: Այդ երևում է նրա գրած առաջին կանոնից և Ձատկի մեկնությունից, ինչպես և Շիրակացու և մյուս հայ հեղինակների վկայություններից:

Անտիոքի թվականության կիրառությունը գտնում ենք Անդեասի երկրորդ կանոնում և նրա գրած հիշատակարանում, որի համար թվականության համակարգելի մեջ ներառել ենք այն:

Վերադիրների համակարգերից թե ո՛րն է օգտագործել, դժվար է ստույգ խոսք ասել, թեև Շիրակացու բնագրերից դատելով առաջին տարվա վերադիրը պետք է եղած լինի 9-ը: Փակագծում նշել ենք նաև 11-ը (մեկ 19-ամյակի համար):

Կասկածից վեր է, որ անդրեասը Հունվարի 6-ին և Տրեթ 21-ին է դրել Քրիստոսի ծննդյան և աստվածահայտնության տոնը: Այն երևում է նրա գրած երրորդ կանոնից և Ձատկի մեկնությունից: Այդ օրվա հետ կապված շաբաթվա օրերի շարքը վերականգնելը դժվարություն չի ներկայացնում, որովհետև ունենք դրա 200-ամյակի 1-ին տարին:

Անդեասի կրած Ձ կանոնից իմանում ենք, որ նա տվել է «սկիզբն Սուրբ քառասնորդաց»-ը, որը յուրաքանչյուր տարի կատարել են Ձատկից հետ հաշվված 50-րդ օրում, ուստի դժվարություն չի ներկայացրել վերականգնել նաև այդ օրը:

Գարանանային գիշերահավասարի օրվա մասին գտնում ենք Անդեասի Ձատկի մեկնության մեջ, բացի այդ նրա ներկայացրած կանոններից պարզ է դառնում, որ նա 200-ամյա Ձատկացուցակը կազմելիս անշարժ կերպով մարտի 20-ին = դ-յուստրոսի 20-ին = պմինովթի 24-ին է դրել գարանանային գիշերահավասարի օրը յուրաքանչյուր տարի, որը հայ թարգմանիչները և հետագայում Ձատկացուցակը կիրառողները համարժեք են դարձրել հայոց շաբաթական տոմարի ամիս-ամսաթվերին՝ չորս տարին մեկ փոխելով ամսաթիվը, որով և որոշել են մյուս տոնական օրերը հայոց ամսաթվերով: Անդրեասի գրած Ը, Թ, Ժ և ԺԱ կանոնները վերաբերվում են լուսնի լրման օրվա որոշմանը, որը կատարվել է լուսնի 19-ամյա պարբերաշրջանի հիման վրա: Այս հարցում Անդեասը հետևել է Անատոլիոսի կազմած 19-ամյակին և նրա առաջինտարվա գաղափարին, որը ապրիլի 4-ն էր (նիսան 14-ը):

ԺԲ կանոնից և հիշատակարանից երևում է, որ նա տվել է Ձատկի, իսկ ԺԴ և ԺԵ կանոններից՝ Պենտեկոստի օրերը 200 տարվա համար:

Հայոց քրիստոնեական տոնական տարվա սկզբի՝ Հունվարի 6-ի և հատկապես շաբաթական տոների՝ Մեծ Պահքի, Ձատկի և Պենտեկոստի համար Անդեասի 200-ամյա Ձատկացուցակի թարգմանությունում ստեղծվեցին հաստատուն տոմարական հիմքեր, որոնց կատարումը շաբաթական շարքի վրա նախատեսված էր նաև Երուսաղեմից փոխառված տոնացույցում: Այդ ամուր տոմարական հիմքերը ունենալով դժվարություն չէր ներկայացնում համադրել և գտնել հայոց շաբաթական տոմարի ամիս-ամսաթվերը տոնական տարվա կտրվածքով: Պատահական չէ, որ հայ թարգմանիչները բնագրում ավելացրել են հայոց շաբաթական տոմարի համարժեքները:

Ի դեպ, Անդեասի մոտ հիշատակվել են Հուլյան, Անտիոքյան, Եգիպտական և Եբրայական տոմարները և նրանց համարժեքները: Սա նշանակում է, որ Անդրեասը կիրառել է վերոհիշյալ չորս տոմարների 19-ամյակները, իսկ մյուս հինգ ժողովուրդների 19-ամյակները հետագայում ավելացրել է Անանիա Շիրակացին: Վերջապես երեք ժողովուրդների 19-ամյակներ ավելացրել է Հովհաննես Սարկավազը: Այսպիսով ունենում ենք 12 ժողովուրդների 19-ամյա աղյուսակներ, որոնք առկա են հայոց տոմարական բնագրերում:

Հայ թարգմանիչները ավելացրել են Հայոց շարժական տոմարի գուգահեռները: Վերջինս մեզ հիմք է տվել Անդրեասի 200-ամյա Զատկացուցակը վերականգնելիս տալ նաև Հայոց շարժական տոմարի համարժեքները յուրժաբանչյուր տարվա համար:

Այսպիսով, Երուսաղեմի տոնացույցի և Անդրեասի Զատկացուցակի թարգմանություններով հիմք դրվեց Հայոց քրիստոնեական առաջին գրավոր տոնացույցին, որն սկսվեց օգտագործվել 429 թվականից՝ դատելով լուսնի պարբերաշրջանի առաջին տարվա ապրիլ 4 = նիսան 14 տվյալներից:

Հայոց քրիստոնեական գրավոր առաջին տոնացույցի հեղինակը, ինչ խոսք, Սահակ կաթողիկոսն էր, որն ինքնուրույնության ձգտելով համադրեց և ներդրեց տարբեր տոնացույցերի և տոմարական համակարգերի տվյալները: Այսպիսով Հայոց քրիստոնեական տոնացույցի հիմնաքարերը դրվել էին, և նա սկսեց իր ինքնուրույն ճանապարհը, հետագայում ընդլայնվելով և զարգանալով:

## ԳԼՈՒԽ Ե

### ՔՐԻՍՏՈՍԻ ԾՆՆԴԵԱՆ ՏՈՆԻ ԽՆԴԻՐԸ

#### «ԿԱՆՈՆՔ ԸՆԹԵՐՑՈՒԱԾՈՑ»-Ի ԽՄԲԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԴԱՍԱԿԱՐԳՈՒՄԸ ՀՈՎՀԱՆ ՄԱՆԴԱԿՈՒՆԻՆ ԵՎ ՀԱՅՈՑ ՏՈՆԱՑՈՒՅՑԻ ՆՈՐ ԽՄԲԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ

Հայոց եկեղեցական տոնական տարվա սկիզբն ընդունվեց Քրիստոսի Ծննդեան և Աստուածայայտնութեան տոնը, որը 5-րդ դարի սկզբից, թերևս ավելի վաղ, մինչև Սահակ կաթողիկոսի և Մաշտոց վարդապետի մահը (441/2 թթ.) տոնում էին Հունվարի 6-ին: Այդ են վկայում Հայոց տոնացույցի, այն է՝ «Կանոնք ընթերցուածոց»-ի. Անդրեասի 200-ամյա Տոմար-Տոնացույցի տվյալները, որոնք քննեցինք վերևում, ինչպես և Եփրեմ Ասորու չորս ավետարանների համաբարբառի մեկնության թարգմանությունը, որտեղ գրված է. «եւ ծնաւ նա (Քրիստոսը Ռ. Վ.), որ օր վեց էր Քաղոց (= Հունվար) ամսոյ ըստ յուներէն թուոյ»<sup>1</sup>: Ցույց ենք տվել, որ հիշյալ աշխատանքը ասորերենից հայերեն են թարգմանել Եզնիկ Կողբացին կամ Հովսեփ Պաղնացին 416-419 թթ.<sup>2</sup>: Ի դեպ Քրիստոսի Ծննդեան և Աստուածայայտնութեան տոնը Հայոց շարժական տոմարի Քաղոց ամսին (1-ից 30-ը), ըստ «տոմար» ծրագրի հաշվումների, կատարել են մինչև 433-436 թթ. քառամյակը, որտեղ Հունվարի 6-ը հավասար է Քաղոց 30-ին: Քրիստոսի Ծնունդն և Աստվածահայտնությունը Հունվարի 6-ին միաժամանակ տոնելու սովորությունը խախտվեց ու երկու տոնական օրվա վերածվեց հավանաբար Սահակ կաթողիկոսի և Մաշտոց վարդապետի մահից հետո: Քրիստոսի Ծնունդը տոնվեց Դեկտեմբերի 25-ին, իսկ Մկրտությունը՝ Հունվարի 6-ին մինչև Հովհան Մանդակունի կաթողիկոսի կարգադրությունը:

Մեկ այլ առիթով ցույց կտանք, որ Շահապիվանի ժողովը հրավիրվել է 445 թվականի Դեկտեմբերի 25-ին՝ Նորարեր տոնի օրը, Սահակի մահվանից հետո 5-րդ և Հազկերտ 2-րդի թագավորության 7-րդ տարում: Տեսնենք որն է այն տեղեկությունը, որ հնարավորություն է տալիս հիմնավորելու հիշյալ փոփոխությունը Հայոց մեջ: Եղիշեն Վարդանի գնդի Աղվանքում և Սյունիքում կատարած քաջագործությունների կապակցությամբ վկայել է. «Իբրև այս ամենայն աջողութիւն լինէր երկիւղածացն Աստուծոյ, ամենայն եպիսկոպոսունք և երիցունք պատուէր հրամանի տուեալ աշխարհին, զողջոյն ամիսն Քաղոց պահօք և աղօթիւք առնել խնդրուածս առ Աստուած, և զտօն պատերազմաց յաղթութեան խառնել ի սուրբ տօն յայտնութեանն Քրիստոսի, զի անխափան կացցէ մեծ յիշատակարանց այս ընդ աստուածային արանց տօնին:

Եւ զսոյն զայս ամենայն այցելութիւնս Աստծոյ, որ ի վերայ աշխարհին Հայոց մեծապէս երևացաւ, գրեցին սուրբ եպիսկոպոսունք և ետուն տանել յաշխարհն Յունաց ի մեծ քաղաքն առ սուրբ ուխտ եկեղեցւոյն. զի և նոքա աղօթս առնելով խնդրեսցեն յԱստուծոյ, որպէս սկսաքս ի նմին և կատարեսցուք»<sup>3</sup>:

Ի դեպ «ի սուրբ տօն Յայտնութեանն Քրիստոսի» Քաղոց ամսին կատարելու փաստը, ինչպես նշել ենք մեկ այլ առիթով<sup>4</sup>, ցույց է տալիս որ Եղիշեն ժամանակակիցն է իր նկարագրած

1 Սրբոյն Եփրեմի մատենագրութիւնք, հատոր Բ, Վեճետիկ, 1836, էջ 18-19:  
2 Ռ. Վարդանյան, Հայոց տոմարական եղանակը. թարգմանական բնագրերի ժամանակը, Երևան, 1993, էջ 13-15:  
3 Եղիշէի վասն Վարդանաց եւ Հայոց պատերազմի, աշխ. Ե. Տեր-Մինասեան, Ե., 1957, էջ 81:  
4 Ռ. Վարդանյան, Հայոց տոմարական եղանակը... էջ 77-78:

դեպքերին և հնարավոր չէ եղիչներն տեղափոխել 6-րդ դարի վերջերը, որովհետև միայն 5-րդ - դարում է եղել Քրիստոսի հիշյալ անշարժ տոնը Քաղոց ամսին:

Անցնենք «Վասն Վարդանանց եւ Հայոց պատերազմին» բնագրի տեղեկութեան վերլուծութեանը: Եղիչի մոտ հիշատակված Քրիստոսի «Յայտնութեան» ու Հաղթութեան տոնը, որ կատարվել է Քաղոց ամսին, եղել է Դեկտեմբերի 25-ին, որովհետև 449-452 թթ. քառամյակում Քաղոց 30-ը, ըստ «Տոմար» կոմպյուտերային ծրագրի հաշվարկների, համարժեք է Հունվարի 2-ին, այսինքն Հունվարի 6-ը դուրս է ընկնում Քաղոց ամսի սահմաններից և համարժեք է Արաց 4-ի հետ: Ասենք նաև, որ 480-ական թվականների սկզբներին, ավելի ստույգ 480-483 թթ. քառամյակում, Դեկտեմբերի 25-ը համարժեք է Քաղոց 30-ին, իսկ 484 թվից Դեկտեմբերի 25-ը ևս դուրս է գալիս Քաղոց ամսի սահմաններից և նրանք համարժեք կլինեն միայն 1460 տարի հետո: Այս վերլուծությունը ցույց է տալիս, որ Հայոց եկեղեցին մոտ 445 թվից մինչև 480-ական թվականների սկզբը, Քաղոց ամսին տոնել են հուլյանի նման, Քրիստոսի Ծննդեան օրը՝ Դեկտեմբերի 25-ին, իսկ Մկրտությունը՝ Հունվարի 6-ին: Պատահական չէ, որ Հայոց եպիսկոպոսները, ինչպես նշել է Եղիչեն, գրեցին և ուղարկեցին հուլյանի երկիրը, մեծ քաղաքը, այն է՝ Կոստանդնուպոլիս, եկեղեցու սուրբ ուխտին, Աստուծո թուր ալյուր յայցելութունները, այսինքն՝ հաջողությունները, որոնք մեծապես երևացել էին Հայոց աշխարհի վրա, որպեսզի նրանք ևս աղոթք անեն և Աստուծո խնդրեն, որ ինչպես Հայերը սկսել են, այնպես էլ հաջողություններ ավարտեն սկսած գործը այսինքն Հայերը, իբրև հուլյանի հավատակիցներ, ցանկացել են, որ նրանք նույնպես Քրիստոսի Ծննդեան տոնին, որ կատարում էին նույն օրը, աղոթք անեն և Աստուծո խնդրեն Հայերի հաջողության համար:

Ի դեպ, հուլյանը հռոմեացիներից ընդունեցին Քրիստոսի Ծննդեան տոնը Դեկտեմբերի 25-ին կատարելը միայն 370-ական թվականների վերջերին 380-ական թվականների սկզբներին, իսկ մինչև այդ Արևելյան եկեղեցիների պես այդ տոնը կատարում էին Հունվարի 6-ին: Հայերը ճիշտ է առաջին անգամ խախտեցին ավանդույթը մի քանի տասնյակ տարիներ, դժբախտաբար առայժմ մեզ անհասկանալի պատճառներով, որովհետև թե Սահակ կաթողիկոսի թարգմանած և խմբագրած «Կանոնք ընթերցուածոց»-ում, թե Անդրեասի 200-ամյա տոմար-տոնացուցում, որոնք Հայոց տոնական տարվա հիմքերն էին, Քրիստոսի ծննդեան և Յայտնութեան տոնական օրը մեկն է և սահմանված Հունվարի 6-ին:

Հովհան Մանդակունին, ինչպես կտեսնենք փոքր ինչ հետո, վերականգնեց հին ավանդույթը և Քրիստոսի Ծնունդն ու Յայտնությունը կրկին սահմանեց մեկ օր կատարել, այն է՝ Հունվարի 6-ին, դրանով իսկ կարգավորելով Հայոց եկեղեցական տարվա սկզբի հարցը, ինչպես և խմբագրեց հին Կանոնք ընթերցուածոցը՝ ներմուծելով նոր տոնական օրերը Հայոց մեջ:

\*\*\*

Տեսնենք կարող ենք գտնել Հովհան Մանդակունու «Կանոնք ընթերցուածոց»-ի խմբագրության ընդօրինակված բնագրեր: Մինչև այդ հարցին պատասխանելը հարկավոր է լուծել «Կանոնք ընթերցուածոցի» խմբագրության խնդիրները, որոնց մի մասին կանոնադրաբանք հետագա շարադրանքի ընթացքում, իսկ այստեղ քննենք հատկապես այն գրչագրերը, որոնք վկայակոչել է Շ. Ռընու: Հարկ է նշել, որ ճաշոցների դասակարգման միակ փորձը կատարել է Ֆրանսիացի հայագետ Շառլ Ռընուն կամ Աթանասը<sup>1</sup>: Նա հնագույն խումբը համարել է սոսկ թարգմանություն: Վերը հիմնավորեցինք, որ Սահակ կաթողիկոսը ոչ միայն թարգմանել, այլ խմբագրել է Երուսաղեմի տոնացուցը: Այդ «Կանոնք ընթերցուածոցը» Անդրեասի 200-ամյա

<sup>1</sup> Շ. Ռընուն, «Մաշոց» գրքի ծագումն ու զարգացումը, Պատմա-բանասիրական հանդես, 1987, № 2, էջ 28-45 և այլն:

Տոմար-Տոնացուցի հետ միասին հիմք են հանդիսացել Հայոց տոնաձևական տարվա համար: Հիշյալ Կանոնքը հետագայում սկսեց խմբագրվել, երբ Հայոց տոնական տարին սկսեց ընդլայնվել և ընդգրկել նոր տոնական օրեր:

Շ. Ռընուն առանձնացրել է ևս մեկ խումբ, որը նա որակել է որպես Հայոց ճաշոցի հնագույն խումբ և թվագրել մինչև 750 թ. ընկնող ժամանակահատվածով:

Ասենք, որ ինչպես Սահակի «Կանոնք ընթերցուածոց»-ը, այնպես էլ հետագայի խմբագրությունները դառնալով Հայոց տոնաձևական գրքերից մեկը ու շրջանում ընդօրինակվել և օգտագործվել են հասնելով նույնիսկ 14-րդ դարը, քանի որ «Կանոնք ընթերցուածոց»-ի շատ կանոններ կիրառվել են տոների կատարման ժամանակ համարյա անփոփոխ կամ որոշ հավելումներով միայն: Ինչպես «Կանոնք ընթերցուածոցի» հնագույն խումբը, այնպես էլ հետագա խմբագրությունները վերականգնվում են և հասցեագրվում այս կամ այն ժամանակին, ու շրջանում կատարված ընդօրինակությունների հիման վրա, որոնք իրենց ստեղծումից հետո կամ ընդօրինակության ժամանակ կրել են նոր փոփոխություններ կամ կատարվել են ընդմիջարկություններ:

Շ. Ռընուն դասակարգել է Հայոց ճաշոցների «Հնագույն» խումբը նկատի ունենալով հետևյալ ձեռագրերը. Վենետիկի Մխիթարյանների №169 (XI դար), 285 (XI-XII դդ.), Վիեննայի Մխիթարյանների №3 (1302 թ.), Երուսաղեմի №121 (1192 թ. նկատի է ունեցել հավելված անվանվող մասը), Երևանը №5356 (XIII դար), Թյուրինգենի MA XIII №21 (անթվական): Նա միաժամանակ գրել է, որ այլ ձեռագրերով ևս կարելի է ամբողջացնել Հայկական ճաշոցների այս խմբի նախնական ցանկը, սակայն չի նշել ոչ մի ձեռագրի համար:

Տեսնենք ինչ խմբագրություններ են ներկայացնում վերոհիշյալ ընդօրինակությունները, ի՞նչ տոնական օրերի նորություն են բերում նախորդ հնագույն խմբի համեմատ, ինչպես և որ ժամանակով են թվագրվում, եթե դրա համար կան բավարար հիմքեր:

Ասենք Վենետիկի 169 թվահամարի բնագրից, որի գիտական նկարագրությունը վերջերս տվել է Ս. Ճեմճեմյանը և թվագրել է այն նախկին 11-րդ դարի փոխարեն 10-11-րդ դարերով՝ ելնելով միայն գրչության ձևից<sup>1</sup>:

Ասենք, որ բարեբախտաբար բնագրում կան տվյալներ, որոնց նկատմամբ կիրառելով թվագրման նորագույն մեթոդներ, հնարավորություն են տալիս ոչ միայն ստույգ թվագրել 169 թվահամարի (և այլ ձեռագրեր) գրչագիրը, այլև բացահայտել այնտեղ գոյացած տարբեր շերտեր:

Վենետիկի 169 թվահամարի ձեռագրի տվյալների մեծագույն մասը, հասկանալի պատճառով, գալիս են հնագույն «Կանոնք ընթերցուածոց»-ից: Բնագրի տված նորությունները հետևյալներն են: Քրիստոսի Ծննդեան և Աստուածայայտնութեան երրորդ օրվա՝ Հունվարի 8-ի կապակցությամբ գրվել է. «Յերրորդում առուր ժողովին ի սուրբ մատրանն ի քաղաքի, յառուր կիրակէի, եւ այս կանոնով կատարի...»:

Գրչագրում «յառուր կիրակէի»-ն ընդմիջարկվել է հետագայում: Բանն այն է, որ Հունվարի 8-ը «յառուր կիրակէի» էր պատահում տարիների որոշակի կրկնվող պարբերությամբ, որովհետև Հունվարի 6-ը, Քրիստոսի Ծննդեան և Աստուածայայտնութեան օրը, ինչպես երևում է հնագույն Տոնացուցից, Անդրեասի 200-ամյա Զատկացուցակից, ինչպես և Անանիա Շիրակացու ՇԼԲ-ից, անշարժ էր և յուրաքանչյուր տարի համապատասխանել է շաբաթվա որևէ օրվա, որոնց թվում՝ կիրակի: Այդպիսի հատկություններ ունեին նաև Քրիստոսի Ծննդեան տոների

<sup>1</sup> Հ. Սահակ վրդ. Ճեմճեմյան, Մայր ցուցակ հայերէն ձեռագրաց մատենադարանին Մխիթարեանց ի Վենետիկ. հատոր Դ, Վենետիկ, 1993, էջ 567-588:

մյուս օրերը, որոնց թվում երրորդ օրը՝ Հունվարի 8-ը: Այս փաստով միայն կարելի է արձանագրել, որ «Կանոնք ընթերցուածոց»-ը հետագա արտագրութունների ժամանակ ենթարկվել է ընդմիջարկութունների: Վերջինս կատարվել է, ինչպես կտեսնենք հետագա քննութունից, Հայոց 346 թվին (= 897/8 թթ): Հաջորդ ուշադրության արժանի նորութիւն, որ թվագրելու հնարավորութուն է տալիս, հետևյալ հատվածն է. «Ի Մարգաց ԻԵ (25), Աթանասի եւ Բարսղի եւ Գրիգորեանց՝ Աստուածաբանի, Նիւսացոյ, Սքանչելագործի եւ Յովհաննու, Կիւղի, Պրոկղի, Երանոսի, Եպիփանու, Եփրեմի եւ Մեղիտոսի, եւ որ սոցին նման են, եւ այս կանոն կատարի...»: Ս. Ճեմճեմյանը գրել է, որ կանոնը սկսելուց առաջ՝ ստորին լուսանցքի վրա կա հետևյալ տվյալը՝ «Բարեկենդանին շաբաթ աւրն»: Պարզ է, Սուրբ Հայրապետների հիշատակի օր է սահմանվել Բուն Բարեկենդանի կիրակիից առաջ ընկնող շաբաթ օրը, որը եղել է Հայոց շաբաթական տոմարի Մարգաց 25-ին:

Ի դեպ, հնագույն տոնացույցը չունի ոչ Բուն Բարեկենդանի կանոնը, որը ինչպես կտեսնենք, Հովհան Մանդականու հավելումն է և ոչ էլ նրան նախորդող շաբաթ օրը դրված Հայրապետների տոնը: Վերջինս Հովհան Օձնեցու «Կանոնք ընթերցուածոցի»-ի նոր ու արմատական խմբագրման արդյունք է: Սակայն կարևորը տվյալ դեպքում այն է, որ Հայոց շաբաթական տոմարով դրված Մարգաց 25-ը հնարավորութուն է տալիս թվագրել գրչագիրը: Որոշենք այդ թվականները Հայոց տոնացույցային եղանակով, որի տեսական և գործնական հիմնավորումն տվել ենք մուտքում և կտանք, երբ քննարկեն ճաշոցների և տոնացույցերի այն խմբերը, որոնք կանոնվել են Հայոց տոմարի ամսաթվերով: Ասենք որ Վենետիկի 169 թվահամարի գրչագրի տվյալները հնագույն օրինակներից են:

Հայոց տոնացույցերի տարբեր խմբագրութուններ միանշանակ վկայել են, որ Սուրբ Հայրապետների հիշատակի օր է սահմանվել Բուն Բարեկենդանից առաջ ընկնող շաբաթ օրը, որը բնագրի տվյալներով կատարել են Մարգաց 25-ին, այսինքն Ջատիկից ետ հաշված 51-րդ օրը: Պարզ է, որ Ջատիկը պետք է կատարած լինեն Նավասարդի 10-ին, իսկ Սուրբ Հայրապետների հիշատակի օրը՝ դրանից ետ հաշված 51 օր՝ Մարգաց 25-ին: Այդպիսի համապատասխանութուններ ըստ «Հայոց տոնացույց»-ի հաշվարկների եղել են հետևյալ տարեթվերին՝

Ներկա թվական	Հուլյան ամիս	Հուլյան ամսաթիվ	Ծաբաթվա օր	Հայոց թվական	Հայոց ամիս	Հայոց ամսաթիվ	Ծաբաթվա օր
994	2	10	7	442	11	25	7
1008	2	7	7	456	11	25	7
1022	2	3	7	470	11	25	7

Քննարկվող տարեթվերից առաջնութուն պետք է տալ 994 թվականին, ինչպես կտեսնենք, Սուրբ Խաչի օրը կիրակի ընկնելու կապակցությամբ: Բացի այդ հիշյալ տարեթվի նախապատվութուն տալը հիմնավորվում է բնագրի մեջ տեղ գտած այլ փաստով: Գրչագրի հաջորդ նորութիւնը նախորդ «Կանոնք ընթերցուածոց»-ների հետ այն է, որ Մեծ Պահքի յուրաքանչյուր շաբաթ օր սահմանված Սրբերի հիշատակի օրերից երկուսն ունեն Հայոց շաբաթական տոմարի ամիս-ամսաթիվ: Դրանք են Թեոդորոս զորավարի և Գրիգոր Լուսավորչի հիշատակի օրերի նշումները, որոնցից առաջինինը կքննարկենք փոքր ինչ ուշ, իսկ Գրիգոր Լուսավորչի հիշատակի օրվա նշումը այս է. «Սահմի ամսոյ որ աւր ԺԵ (15) Սրբոյն Գրիգորի ելն ի Վիրապէն»<sup>1</sup>:

Այս կանոնը գրչագիրն ընդօրինակողի ընդմիջարկութունն է, որովհետև Թովմա Արծրունու շարունակողի տվյալներից. ինչպես և տոնացույցից հաստատապես գիտենք, որ Գրիգոր

Լուսավորչի ելքը Վիրապից տոնը կատարել են Պենտեկոստից հաշված 14-րդ օրը, շաբաթ, իսկ այս բնագրում ընդմիջարկվել է Մեծ Պահքի հինգերորդ կիրակիից հետո եկող շաբաթ օրը: Ասենք, որ Հայոց շաբաթական տոմարի Սահմի 1-ը՝ 900-1000 թթ. սահմաններում ընկել է Հուլյան տոմարի Հունիս 14 — Մայիս 20-ի միջև, հետևապես Սահմի 15-ը կընկնի Հունիս 28 — Մայիս 29-ի սահմաններում, իսկ Բուն Բարեկենդանից հետո եկող հինգերորդ շաբաթվա շաբաթ օրը ընկել է Մարտի 7 — Ապրիլ 16-ի միջև: Ակնհայտ է, որ Սահմի 15-ը չէր կարող լինել Գրիգոր Լուսավորչի այն տոնի օրվա համարժեքը, որը կատարվել է Բուն Բարեկենդանից հետո ընկնող հինգերորդ շաբաթ օրը: Դրան հակառակ Սահմի 15-ը ընկել է Պենտեկոստից հետո եկող 14-րդ օրվա սահմաններում, որը կատարել են Մայիս 23-ի — Հունիս 20-ի միջև՝ նայած տարի: Պարզ է, որ հաշվումների համար պետք է ընտրել իրական ամսաթվերն ու տոնական օրերը: Պենտեկոստից հաշված 14-րդ օրը Սահմի 15-ին է ընկել հետևյալ տարեթվերին, ըստ «Հայոց տոնացույց» ծրագրի հաշվումների.

Ներկա թվական	Հուլյան ամիս	Հուլյան ամսաթիվ	Ծաբաթվա օր	Հայոց թվական	Հայոց ամիս	Հայոց ամսաթիվ	Ծաբաթվա օր
977	6	9	7	425	3	15	7
991	6	6	7	440	3	15	7
1005	6	2	7	454	3	15	7
1019	5	30	7	458	3	15	7

Պարզ է դառնում, որ Վենետիկի 169 թվահամարի գրչագրի ընդօրինակութունը կատարվել է 994 թվին, երբ Մարգաց 25-ին վերոհիշյալ Սուրբ Հայրապետների հիշատակի օրն էր, իսկ 991 թ. Սահմի 15-ին՝ Գրիգոր Լուսավորչի ելքը Վիրապից տոնը: Եթե ընդունենք, որ Սահմի 15 փաստագրողը նկատի է ունեցել Գրիգոր Լուսավորչի ելքը՝ Վիրապից տոնի օրը Ջատիկից ետ հաշված 16-րդ օրը, այսինքն Մեծ Պահքի 5-րդ կիրակիից հետո եկող շաբաթ օրը, որը Հայոց շաբաթական տոմարի ամսաթվերով համապատասխանորեն կընկնի Սահմի 15 — Հոռի 30-ին, Ստորին սահմանի համար ստանում ենք 1231 թվական, որը հակասում է ոչ միայն բոլոր տոնացույցերի ցուցումներին, այլ ձեռագրի ընդօրինակման մասին եղած նախորդ բոլոր պատկերացումների: Ինչպես նկատելի է, մեր ստացած արդյունքները համահունչ են գրչագրի գրչութունից ելնող թվագրման հետ միայն ավելի է հստակացել: Այսպիսով Վենետիկի 169 թվահամարի ձեռագիրը գրվել է 994 թվականին, այսինքն 10-րդ դարի վերջերին:

Հաջորդ նորութիւնը նախորդ «Կանոնք ընթերցուածոց»-ի հետ այն է, որ Մեծ Պահքի յուրաքանչյուր շաբաթ օր կանոնվել է հինգ սրբերի հիշատակի օր, որոնց թվում Թեոդորոս զորավարի, որը ստացել է նաև Հայոց տոմարի ամսաթվային նշում: Վենետիկի 169 թվահամարը գրչագրում վկայվել է հետևյալ ամսաթիվը՝ «Մարգաց ԻԳ. Թեոդորոսի գաւրավարի...»: Ակնհայտ է, որ հիշյալ ամսաթիվը ժամանակակից չէ քննարկած Հայրապետների հիշատակի օրվա ամսաթիվի հետ, որովհետև նրանց միջև կա մեկ շաբաթվա տարբերութուն այն է՝ 7 օրվա, իսկ այս ամսաթվերի միջև՝ երկու օրվա, ուստի Մարգաց 23-ը այլ տարիների ցուցում է: Ինչպես վերոհիշյալ գրչագիրը, այնպես էլ տոնացույցերի բնագրերը Թեոդորոս զորավարի հիշատակի օր են կանոնել Բուն Բարեկենդանից հետո եկող շաբաթ օրը, այն է՝ Մարգաց 23-ը: Ուստի Ջատիկից ետ հաշվելով 44 օր կստանանք Մարգաց 23-ի տարեթվերը: Ըստ «Հայոց տոնացույց»-ի տվյալների դրանք երկուսն են, այն է՝

<sup>1</sup> Վ. 169 ձեռագիր էջ 116ա, տե՛ս Ս. Մեմճեմյան, Աշխ. աշխ., էջ 567-580:



Ներկա թվական	Հուլյան ամիս	Հուլյան ամսաթիվ	Ծաբաթվա օր	Հայոց թվական	Հայոց ամիս	Հայոց ամսաթիվ	Ծաբաթվա օր
884	3	7	7	332	11	23	7
898	3	4	7	346	11	23	7

Հայոց տոմարական եղանակով ստանում ենք հետևյալ արդյունքները՝ Մարգաց 23 = Փետրվար 17 (Թեոդորոս գորավարի հիշատակի օրվա տվյալ), որտեղից Մարգաց 1 = Հունվար 26 = 957-960 թթ: Նախապատվությունը տալիս ենք Հայոց տոնացույցային եղանակով ստացված տարեթիվերին, որովհետև Հայոց ամսաթիվը դրված է նրա տոնի օրը, իսկ հիշատակի օրը տրված է Հայոց անշարժ տոմարի Մեհակի 11-ի տակ, որը տալիս է 428-431 թթ., որը Սարկավագադիր տոմարի տարեկիզբն է միայն նշում: Քննարկվող տարեթիվերից նախապատվություն տալիս ենք Հայոց 346 թ.=897/898 թթ., որովհետև 897 թվականին Հունվարի 8-ը ընկել է կիրակի, որը տրված է գրչագրում, իսկ 898 թ. Մարտի 4-ին, շաբաթ՝ Թեոդորոս գորավարի հիշատակի օրը: Դժվար է եզրակացնել, որ Վենետիկի 169 թվահամարի ձեռագիրն, որն ընդօրինակվել է 10-րդ դարի վերջերին, իր հիմքում ունեցել է 9-րդ դարի վերջի, այսինքն 898 թվականի գրչագիր, որտեղ արդեն վկայվել էր Մարգաց 23-ը որպես Թեոդորոս գորավարի հիշատակի օր՝ (Բուն Բարեկենդանից հետո շաբաթ օրը, իսկ Հունվարի 8-ը կիրակի = 897 թ. = 346 թ):

169 թվահամարի ձեռագիրը հաջորդ նորոյթն այս է, «Շաբաթ օր. Դիր Զաքարիա մարգարէին...»: Հնագույն «Կանոնք ընթերցուածոց» - ներում Զաքարիա մարգարեի հիշատակի օր է սահմանվել անշարժ տոնական օրով՝ Հունիսի 10-ին: Զաքարիա մարգարէի հիշատակի օր՝ շաբաթ, սահմանել է Հովհան Օձնեցին, որը ինչպես կտեսնենք, խմբագրել է «Կանոնք ընթերցուածոցը» - «Տաւնացոյց ըստ շաբաթուց»-ը: Զաքարիայի տոնական օրը կատարել են Պենտեկոստից հաշված 35-րդ օրը՝ շաբաթ, որի հետևանքով Հունիսի 10-ը կորցրել է իր նախնական իմաստը, քանի որ նրա տոնը ընկել է Հունիսի 13 - Հուլիսի 17-ի օրերից մեկում՝ նայած տարի կապված Զատիկի օրերի տեղափոխման հետ: Այլ խոսքով 9-րդ դարից առաջ կար մի «Կանոնք ընթերցուածոց», որտեղ Զաքարիայի հիշատակի օրը արդեն կանոնվել էր շաբաթ օրը: Իսկ այն, ինչպես նշեցինք, Հովհան Օձնեցու «Կանոնք ընթերցուածոցի» խմբագրությունն էր: Ի տարբերություն հնագույն «Կանոնքի» 169 թվահամարի ձեռագրում տրվել է Վարդավառի կանոնը, այն է՝ «Վարդավառին այս կանոնն կատարի...»: Այն սահմանվել է 6-րդ դարի վերջին կամ 7-րդ դարի սկզբներին: Ուշագրավ է, որ Մովսես Սյունեցին, Սամուել Կամրջաձորեցին և Հովհաննես Կոզեռնը վկայում են, որ Վարդավառի կանոնը չի եղել հնագույն «Կանոնք ընթերցուածոց»-ում, այն հաստատվում է առկա բնագրերով:

Վերջապես Վենետիկի 169 թվահամարի ձեռագիրը վկայել է ևս մեկ նորոյթ, այն է՝ «Սեպտեմբեր ամսոյ, որ աւր ԺԴ (երկու բառ անընթեռնելի ըստ Ս. Ծեմճեմյանի, որը վերականգնել ենք. «երկրորդ առուրն») կիրակէին ժողովին ի սուրբ Մատրանն...»: Սուրբ Խաչի տոնի օրը՝ Սեպտեմբերի 14-ին կիրակի եղել է մեր ստացած տարեթիվերից մեկում, այն է 990 թվականին Սեպտեմբերի 14-ը ընկել է կիրակի, ուստի կիրակի օրվա նշումը գալիս է 994 թ. ընդօրինակված բնագրից: Սեպտեմբերի 14-ին կիրակի ընկնելու հարցը փոքր ինչ այլ է: Հնագույն «Կանոնք ընթերցուածոցի» մեջ Սուրբ Խաչը ժողովրդին ցուցադրելը կատարվել է Նավակատեաց Եկեղեցու տոնի 2-րդ օրը, անշարժ տոնական օրով Սեպտեմբերի 14-ին, որը տարիների կտրվածքով որոշակի հաճախականությամբ համընկնում էր կիրակի օրվա հետ: Բնագրում Սուրբ Խաչի օրը առանձնացած է, սակայն կիրակի օրվա նշումը նոր խմբագրման արդյունք է կատարված «Կանոնք ընթերցուածոց»-ի 3-րդ խմբագրության ընդօրինակություններից մեկում: Նյութերի ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ Վենետիկի 169 թվահամարի գրչագիրը ընդօրինակվել է 994 թվին հիմքում ունենալով 898 թ. արտագրված նախագաղափար գրչագիր,

իսկ վերջինս իր մեջ ներ է առել 8-րդ դարի սկզբների որոշ հավելումներ, որոնք հանելու դեպքում կստանաք «Կանոնք ընթերցուածոց»-ի 3-րդ խմբագրության ընդօրինակություն, որտեղ իր հաստատուն տեղն ունի Վարդավառի կանոնը: Ասենք որ հիշյալ գրչագիրը Հովհան Օձնեցու խմբագրությունը չէ, որովհետև, ինչպես կտեսնենք, դրանք որակապես տարբեր էին: Այդ խմբագրությունը քանի որ ունի Վարդավառի կանոնը, ապա գալիս է 6-րդ դարի կեսերից - 7-րդ դարի սկզբներից: Այն հնագույն խմբագրությունից տարբերվում է ոչ միայն Վարդավառի կանոնի ներմուծմամբ, այլև Առաջավորաց Պահքի, Բուն Բարեկենդանի և Մեծ Պահքի յուրաքանչյուր շաբաթ՝ Թեոդորոս գորավարը, Կյուրեղ Երուսաղեմցու, Հովհաննես Երուսաղեմցու, 40-ից և Գրիգոր Լուսավորչի հիշատակի օրերի ներմուծմամբ, որոնք կատարվեցին «Կանոնք ընթերցուածոց»-ի 2-րդ խմբագրության ժամանակ:

Շառլ Ռենուն թվարկել է նաև Վենետիկի 285 թվահամարի ձեռագիրը, որը ելնելով գրչության ձևից թվագրել են 11-12-րդ դարերով: Այն ընդունելի է: Միայն նշենք, որ գրչագիրն արտագրվել է «Կանոնք ընթերցուածոցի» այնպիսի խմբագրությունից, որտեղ դեռևս բացակայել է Վարդավառի կանոնը: Բանն այն է, որ գրչագիրն ընդօրինակելիս Վարդավառի կանոնը և Սուրբ Խաչի ութօրեա կանոնները արտագրվել և դրվել են Դեկտեմբերի 29-ից, այսինքն՝ եկեղեցական տարվա վերջից հետո: Ակնհայտ է, որ վերջիններս քաղվել են այլ բնագրերից ընդօրինակության ժամանակ և գրանցվել ոչ իրենց բնականոն տեղում, այլ վերջում միայն: Վենետիկի 285 թվահամարի գրչագրում ընդօրինակության ժամանակ տարվա վերջում առանձնացված Սուրբ Խաչի տոնը և նրա ութօրեա կանոնները խոսում են այն մասին, որ 11-րդ դարում Սուրբ Խաչի տոնական օրերը ընդլայնվել են, որոնք իրենց հաստատուն տեղը ունեցան Գրիգոր Վկայասերի Տօնանամակում: Ի դեպ, Սահակ կաթողիկոսի թարգմանած և խմբագրած «Կանոնք ընթերցուածոց»-ում առկա է երկու օրվա կանոն, այն է՝ Սեպտեմբերի 13-ի և 14-ի որպես «Նաւակատեաց Եկեղեցոյ» տոնական օրեր: Վենետիկի 285 թվահամարի գրչագրից հանելով տարվա վերջից հետո ընդօրինակված կանոնները, այն է՝ Վարդավառի և Սուրբ Խաչի, ստանում ենք «Կանոնք ընթերցուածոցի» 2-րդ խմբագրության բնագիր, որտեղ փաստորեն չկա Վարդավառի կանոնը, իսկ առկա են Մեծ Պահքի շաբաթ օրերը դրված սրբերի հիշատակները, որոնք բացակայում են հնագույն կանոնքում, ուստի արդյունք են երկրորդ խմբագրության:

Շ. Ռենուն հիշատակել է Վիեննայի 3-րդ թվահամարի գրչագիրը, որը թվագրել են 10-11-րդ դարերով: Այն պակասավոր է, ինչպես նշել է Հ. Տաշյանը, ուստի հնարավոր չէ ստույգ վերագրել «Կանոնք ընթերցուածոց»-ի հնագույն խմբագրություններից որևէ մեկին:

Շ. Ռենուն վկայակոչել է Վիեննայի 700 թվահամարի (XVI դ.) և Հոմի քահանայապետական Լեոնյան հայ վարժարանի 3-րդ թվահամարի (1302 թ.) ձեռագրերը: Դրանց նկարագրությունները թերի են, ուստի որևէ խմբի պատկանելության հարցը մնում է հարցականի տակ: Ասենք, որ Պ. Անանյանը «Քննական նկատողություններ» հոդվածի առաջին մասում<sup>1</sup>, որը շարունակելի է, համառոտ նկարագրել է Լեոնյան վարժարանի №3 գրչագիրն և որոշ մեջբերումներ կատարել: Դատելով այդ համառոտ նկարագրությունից և մեջբերումներից, Լեոնյան վարժարանի №3 թվահամարի ձեռագրում ընդօրինակվել են երեք ճաշոց-տոնացույցեր: Նրանցից մեկը Հայոց անշարժ տոմարի ամսաթիվերի կարգով է տրված: Նշանակում է, որ այն առաջացել է 11-րդ դարի վերջերից - 12-րդ դարի սկզբներից, եթե ոչ 12-րդ դարի կեսերից հետո գրված բնագրից: Բանն այն է, որ Սարկավագադիր տոմարն, ինչպես ցույց կտանք հետագա շարադրանքում, ստեղծվեց 1094 թվականին: 1110 թ. և 1116 թ. Հովհաննես Սարկավագը մեկնեց այդ տոմարի առանձին հարցեր:

1 Տե՛ս Բազմալեւ, 1993, 1-4 թիվ, էջ 3-32:



Երկրորդ ճաշոցն Երուսաղեմյան Կանոնքին է նման, ինչպես նշել է հեղինակը բնագրում, Վարդավառի տոնը կանոնվել է երեք օր: Հետագա շարադրանքում ցույց կտանք, որ Վարդավառը մեկօրյա տոնից վեր է անվել երեքօրյա տոնի ամենավաղը 11-րդ դարից: Նշանակում է, որ այդ բնագիրը կարող էր ստեղծված լինել 11-րդ դարից հետո: Եթե Վարդավառի երեքօրյա կանոնն համարենք ընդմիջարկություն, ապա հնարավոր է, որ հիշյալ գրչագրի նախագաղափարը ավելի վաղ ծագում ունենա, սակայն մենք չգիտենք, թե գրչագրում էլ ինչ նորամուծություններ կան: Վերջին 3-րդ տոնացույցը Գրիգոր Վկայասերի-Կիրակոսի Տօնանամակն է համառոտ տարբերակով:

Շ. Ռենուի թվարկած հաջորդ ճաշոցն Երուսաղեմի 121 թվահամարի ձեռագիրն է: Վերջինիս գիտական նկարագրությունը կատարել է Ն. Պողարյանը, ուստի կարող ենք դատողություններ անել ոչ միայն որևէ խմբին պատկանելու հարցում, այլև հնարավոր է դառնում որոշել հիշյալ ձեռագրին հիմք ծառայած գրչագրի ժամանակը:

Երուսաղեմի 121 թվահամարի բնագրի առաջին մասը, ինչպես նշել են ուսումնասիրողները, որոնց թվում նաև Շ. Ռենուն, իրավամբ պատկանում է հնագույն խմբին, իսկ նրա երկրորդ մասը «Կանոնք ընթերցուածոց»-ի 3-րդ խմբագրության արդյունք է: Քննարկվող ձեռագիրն ընդօրինակվել է հայոց Ոսկ թվականին (= 1192-1193 թթ): Նրա 2-րդ մասում առկա է հետևյալ տեղեկությունը. «Սահմի Ժ. Գրիգոր Լուսավորչի ելն ի վիրապէն ի վեցերորդ շաբաթի...»: Այն ակնհայտորեն ընդմիջարկություն է, որը կատարվել է նախագաղափար գրչագրում և ընդօրինակվել հետագայում, այսինքն՝ 1192-1193 թթ.: Բանն այն է, որ ինչպես Վենետիկի 169 թվահամարի, այնպես էլ Երուսաղեմի 121 թվահամարի գրչագրերում Գրիգոր Լուսավորչի ելքը Վիրապից տոնի օրը դրվել է Ձատկից ետ հաշված 16-րդ օրը, շաբաթ: Մինչդեռ Թովմա Արծրունու շարունակողից, որն ապրել է 10-րդ դարի 30-ական թվերի վերջերին, հաստատապես գիտենք, որ Գրիգոր Լուսավորչի ելքը Վիրապից տոնի օր է եղել հայոց շարժական տոմարի Սահմի 10-ին, միաժամանակ հայոց տոնացույցերը միանշանակ վկայել են, որ հիշյալ տոնի օրը Պենտեկոստից հաշված 14-րդ օրն էր շաբաթ, ուստի Գրիգոր Լուսավորչի ելքը Վիրապից տոնը Սահմի 10-ին եղել է ըստ «Հայոց տոնացույց» ծրագրի հաշվումների, հետևյալ տարիներին:

Ներկա թվական	Հուլյան ամիս	Հուլյան ամսաթիվ	Օարաթիվ օր	Հայոց թվական	Հայոց ամիս	Հայոց ամսաթիվ	Օարաթ օր
933	6	15	7	382	3	10	7
947	6	12	7	396	3	10	7
967	6	8	7	410	3	10	7
974	6	5	7	424	3	10	7
989	6	1	7	438	3	10	7
1003	5	29	7	452	3	10	7

Իրանցից ընդունելի տարեթիվը 933 թվականն է, որովհետև 947 թվականին Գագիկ Արծրունին արդեն մահացել էր, որից Բագրատունեաց Աբբաս թագավորը ինչպես հայտնի է, օգնություն էր խնդրել Ատրպատականից եկած վտանգի առաջն առնելու համար: Այսպիսով առանց վարանելու կարելի է պնդել, որ Գագիկ Արծրունին ճակատամարտից առաջ կատարել է Գրիգոր Լուսավորչի ելքը Վիրապից տոնը Պենտեկոստից հաշված 14-րդ օրը, շաբաթ, Սահմի 10-ին (= հունիս 15) 933 թվականին:

Հնարավոր է մտածել, որ Երուսաղեմի 121 թվահամարի ընդօրինակությունը կատարվել է 10-րդ դարի գրչագրից, որովհետև Սահմի 10-ին է եղել Գրիգոր Լուսավորչի ելքը Վիրապից տոնի օրը միայն այդ ժամանակ:

Սահմի 10 ամսաթիվը ցույց է տալիս, որ Գրիգոր Լուսավորչի ելքը Վիրապից տոնը արդեն գոյություն ուներ 10-րդ դարում և ստեղծվել է 9-րդ դարի չորրորդ քառորդին, երբ երկրորդ անգամ խմբագրվեց Հովհան Օձնեցու «Կանոնք ընթերցուածոց» - «Տաւանացոյց ըստ շաբաթուց»-ը: Այդ հարցը քննել ենք Գրիգոր Լուսավորչի տոնական օրերի վերլուծության մեջ, որը կատարել ենք առանձին վերնագրի տակ: Այստեղ միայն նշենք, որ Գրիգոր Լուսավորչի ելքը Վիրապից տոնի օրը Մեծ Պահքի 5-րդ կիրակիից հետո եկող կամ 6-րդ կիրակիից առաջ ընկնող շաբաթ օրը դնելն կամ ընդմիջարկելը, որոնք վկայել են թե Վենետիկի, թե Երուսաղեմի հիշյալ գրչագրերը, խոսում է այն մասին, որ Գրիգոր Լուսավորչի հիշատակի օրը, որը գալիս էր վաղ շրջանից, փորձել են վերածել նրա ելքը Վիրապից տոնի: Այն հաջողություն չի ունեցել: Գրիգոր Լուսավորչի ելքը Վիրապից տոնը տեղափոխելով Ձատկից ետ հաշված 16-րդ օրը և դնելով Սահմի 10-ին ըստ «Հայոց տոնացույց» ծրագրի հաշվումների ստանում ենք՝ 1187 թ. 1201 թ. և 1212 թ., որոնք հակասում են նույնիսկ ձեռագրի ընդօրինակման հիշատակարանի տարեթիվին (= Ոսկ = 1192/3 թթ.), ինչպես և բոլոր տոնացույցերի տվյալներին: Ինչ վերաբերում է Սահմի 10-ի մյուս որակին, ապա ասենք, որ այն անցել է հետագա ճաշոցներին, Տօնացույցերին ու Յայսմավուրքներին և վեր է անվել հայոց անշարժ տոմարի ամսաթվի ստանալով հուլյան տոմարի այլ համարժեք: Երուսաղեմի 121 թվահամարի ձեռագրի 2-րդ մասից հանելով ընդմիջարկությունները, որոնց թվում Գրիգոր Լուսավորչի ելքը Վիրապից տոնական կանոնը, ստանում ենք «Կանոնք ընթերցուածոց» 3-րդ խմբագրության գրչագիր, որտեղ առկա է Վարդավառի տոնի կանոնը: Շ. Ռենուն հղել է նաև Երևանի 5356 թվահամարի բնագիրը (13-րդ դար): Ձեռագրի թվագրումը հավանաբար ընդունելի է, որովհետև Հովհաննես Մկրտչի տոնի օրերից մեկը գրանցվել է նավասարդի 1-ի կանոնով, որը հայոց անշարժ տոմարի ամսաթիվ է համարժեք Օգոստոսի 11-ին: Վերջինս ստեղծվել է, ինչպես կտեսնենք, 11-րդ դարի վերջում: Հանելով այդ ընդմիջարկված հատվածը ունենում ենք մի այնպիսի ընդօրինակություն, որտեղ բացակայում է Վարդավառի տոնի կանոնը, ուստի այն «Կանոնք ընթերցուածոց»-ի 2-րդ խմբագրության գրչագիր է, նույնպես որոշ հավելումներով:

Երևանի 5479 թվահամարի ձեռագրի ընդօրինակությունը կատարվել է 14-րդ դարում: Այն պատկանում է «Կանոնք ընթերցուածոց»-ի 2-րդ խմբագրությանը, քանի որ Վարդավառի կանոնը բացակայում է: Բնագրի մեջ առկա է. «Յառաջաւորի Պահոցն շաբաթ աւր. Յիշատակ է սրբոյն Սարգսի գաւրաւարի և այս կանոն կատարի...» (էջ 22բ) հատվածն ընդմիջարկություն է Հովհան Օձնեցու «Կանոնք ընթերցուածոց»-ի խմբագրությունից: Սակայն այդ գրչագիրը վերջինիս խմբին չի պատկանում, որովհետև դրանք որակապես տարբեր են իրարից, բացառյալ ընդմիջարկվածը: Այսպիսով ունենք «Կանոնք ընթերցուածոց»-ի հետևյալ խմբագրությունները: Հնագույն խմբերը, որը Սահակ կաթողիկոսի թարգմանած և խմբագրած «Կանոնք ընթերցուածոց»-ի հետագա ընդօրինակություններն են, պահպանվել են Երևանի մատենադարանի 985 թվահամարի, ինչպես և Երուսաղեմի 121 թվահամարի (առաջին մաս) ու Փարիզի 44 թվահամարի գրչագրերով:

2-րդ խմբագրության ընդօրինակություններն են Վենետիկի 285, Երևանի 5356 և 5479 թվահամարների ձեռագրերը: 3-րդ խմբագրության արգասիք են հետևյալ ընդօրինակությունները Վենետիկի 169 և Երուսաղեմի 121 (2-րդ մաս), թվահամարների բնագրերը: Հիշյալ խմբերից որևէ մեկի մեջ կարող են մտնել Վիեննայի 3-րդ և 700, Վենետիկի 625-րդ, Լեոնյան վարժարանի 3-րդ և Երևանի 6500, 6139 և 4614 թվահամարների ձեռագրերը, որոնք չունեն տարբերիչ հստակ նախանշաններ և խառն խմբագրություններ են: Նրանցից հանելով հետագայում կատարված խմբագրությունները նոր միայն կարող ենք վերագրել այս կամ այն խմբին:

Այս շարադրանքի վերջում կշարունակենք հիմնավորել միայն «Կանոնք ընթերցուածոց»-ի երկրորդ խմբագրությունը, որն ինչպես կտեսնենք, կատարել է Հովհան Մանդակունի կաթո-

ղիկոսը 5-րդ դարի 80-ական թվականներին, իսկ մյուս՝ 3-րդ խմբագրություն մասին գրել ենք առանձին վերնագրի տակ: Այստեղ միայն նշենք, որ Շ. Ռենուին և մյուս հայագետներին հայտնի չէ, որ 8-րդ դարի սկզբում Հովհան Օձնեցին կատարեց «Կանոնք ընթերցուածոց»-ի հաջորդ խմբագրությունը, որի համառոտ տարբերակն է նաև հետագայից հայտնի «Տոնացոյց ըստ շաբաթուց»-ը: Այս խմբագրությունը հնագույն խմբի նման ունեցել է մի քանի նոր խմբագրություններ, որոնք հայտնի են ճաշոցների և տոնացույցների հարյուրավոր ընդօրինակություններով, որոնցից մի մասին կամա թե ակամա անդրադարձել է Շ. Ռենուն: Այդ խնդիրները նույնպես ենթարկվել են առանձին մշակումների: Վերջապես 992 թվականին՝ հնագույն խմբերի ազդեցության տակ, Ատոմ Վարագեցին կազմեց «Հոռոմադիր»-ն, որը ներկայանում է Երևանի 832 թվահամարի ձեռագրով (մի մասը), ինչպես և 3266 թվահամարի (մի մասը) գրչագրով: Այն նույնպես վերլուծվել է առանձին վերնագրի տակ:

Շ. Ռենուն առանձնացրել է ճաշոցի «հնագույն» խմբագրության որոշ նորույթներ, որոնց թվում մուծում կատարված Պահքի յուրաքանչյուր վեց կիրակիների (առաջինը՝ Բուն Բարեկենդան), ինչպես առավոտյան (մեկ սաղմոս, մեկ ավետարանական հատված), այնպես էլ ճաշի ժամի արարողական կարգի մեջ:

Ասենք, որ հիշյալ մուծումները տեղի են ունեցել «Կանոնք ընթերցուածոց»-ի 2-րդ խմբագրության ժամանակ, որովհետև 6-րդ դարի կեսերին արդեն տոնում էին ինչպես Առաջավորի Պահքի, այնպես էլ Մեծ Պահքի կիրակիները, որոնց թվում Բուն Բարեկենդանը:

Մյուս նորույթը Շ. Ռենուն համարել է Պահքի յուրաքանչյուր (1-ին) 2-րդ, 3-րդ, 4-րդ, 5-րդ և վեցերորդ կիրակիներին հաջորդող շաբաթ օրը որևէ սրբի տոնի մուծում հետևյալ հերթականությամբ թեոդորոս զինվոր (սրբագրել՝ զորավար - Ռ. Վ.), Կյուրեղ Երուսաղեմցի, Հովհաննես Երուսաղեմցի, Քառասուն վկաներ, Գրիգոր Լուսավորչի հիշատակի օր և Ղազարի հա-րություն օր:

Հիշյալ սրբերի անշարժ տոնական օրերի վերածումը շարժական ինչպես և թեոդորոս զորավորի և Գրիգոր Լուսավորչի հիշատակի օրերի մուծումը ևս իրականացրել է Հովհան Մանդակունի կաթողիկոսը 5-րդ դարի 80-ական թվականներին, որի մասին կիսոսենք քիչ հետո: Ինչ վերաբերվում է Շ. Ռենունի բերած մյուս նորույթին, այն է՝ Վարդավառի տոնի մուծմանը, ապա այդ տոնի կատարման մասին տեղեկություն ենք գտնում 6-րդ դարի կեսերից: Բնական է, որ կանոնի մուծումը տեղի է ունենցել «Կանոնք ընթերցուածոց»-ի երրորդ խմբագրության ժամանակ:

Շ. Ռենուն գրում է, որ ուղղակի փաստերի բացակայության պատճառով դժվար է պարզել, թե հայոց ծիսակատարության պատմության որ ժամանակահատվածն են ներկայացնում այդ բնագրերը: Միաժամանակ նա վերոհիշյալ բնագրերը մեկ խումբ է համարել և թվագրել 750 թվականից առաջ:

Դժբախտաբար Շ. Ռենուն տեղյակ չէ եղել «Կանոնք ընթերցուածոց»-ի Հովհան Օձնեցու կատարած արմատական խմբագրման հետ, այլապես հիշյալ «հնագույն» խումբը կթվագրեր 719-728 թթ. և ոչ թե 750-ից առաջ, թերևս տարբերակեր նաև «հնագույն» խմբի երկու խմբագրությունները, որոնք երևում են նույնիսկ բնագրերից՝ Վարդավառի կանոնի բացակայությամբ: Այլ խոսքով Շ. Ռենունի դասակարգումը և թվագրումը ճաշոցների հիշյալ խմբի համար հերքվում է, որովհետև նա չի ունեցել դասակարգման համար հստակ չափանիշներ և պատմական կովաններ: Համառոտակի նշենք ճաշոցների, այն է՝ «Կանոնք ընթերցուածոց»-ի խմբագրությունների ժամանակը: Տեսանք, որ Սահակ Կաթողիկոսը «Կանոնք ընթերցուածոցը» թարգմանեց և խմբագրեց 417-428 թթ. սահմանները հավանաբար 420-423 թթ.: 2-րդ խմբագրությունը տեղի ունեցավ 5-րդ դարի 80-ական թվերին Հովհան Մանդակունու կողմից, որի

մասին կիսոսենք քիչ հետո: 3-րդ խմբագրությունը կատարվեց 6-րդ դարի վերջում կամ 7-րդ դարի սկզբներին: Հավանաբար այդ խմբագրության հեղինակը Կոմիտաս Կաթողիկոսն է: Վերջապես հաջորդ խմբագրությունը իրականացրեց Հովհան Օձնեցի կաթողիկոսը 719-728 թթ. սահմաններում, որն սկզբունքային փոփոխություն էր: Չհաշված «Արտեմանադիր ընթերցուածոց»-ի կիրառությունը 630-ական թվականներին մինչև 710-ական թվականները:

\*\*\*

Անցնենք Հովհան Մանդակունու գործունեության վերահամանը հատկապես հայոց տոնածիսական կարգերի բնագավառում: 480-ական թվականների սկզբներին, եթե ոչ 470-ական թվականների վերջին, Հովհան Մանդակունի կաթողիկոսը վերականգնեց Քրիստոսի Մնունդն ու Աստուածայայտություն միանգամից Հունվարի 6-ին կատարելու հին ավանդույթը, դրանով իսկ հայոց եկեղեցական տոնական տարվա սկիզբը: Հովհան Մանդակունին իր գրած կանոնների 9-րդ կետում հրամայում է. «Եւ որ ծնունդ առնեն յառաջ քան զՅայտնութիւնն՝ չէ արժան, զի սուտ է, զի ծնունդն և Յայտնութիւնն մի են եւ յայտ յընթերցուածոցն է, որ ասէ «Յիսուս Քրիստոսի Մնունդն էր այսպես» (Մատթ. Ա. 18)»<sup>1</sup>: Հիշյալ կանոնում Հովհան Մանդակունին առաջին անգամ հղում է հնագույն «Կանոնք ընթերցուածոց»-ի համապատասխան ընթերցվածը հիմնավորելու համար Հունվարի 6-ին Քրիստոսի Մնունդն ու Յայտնութիւնը միաժամանակ կատարելը: Բացի Հովհան Մանդակունու կանոնից, առկա են Անանիա Շիրակացու ուշագրավ տեղեկությունները: Նա գրում է. «... Յայսմ կացցուք հաստատուն անխախտելի (Հունվարի 6-ը - Ռ. Վ.). եւ քաւ (և) մի լիցի մեզ յերկուս բաժանել. այդ ի միում աւուր արասցուք զծնունդն եւ զմկրտութիւն. եւ գերկոցուց ողջ պահելով զկարգս, հետեւեսցուք սրբոց առաքելոցն եւ երանելեաց հարցն որք ի Նիկիայ, եւ մերոց վարդապետացն: Քանզի ոչ եթէ չհհասս ի նոսա եւ վասն այնր չ(ը)նկալան այդ յառաջ քան բազում ժամանակս եւ մերս եկն յաշխարհ եւ ընկալեալ եղեւ որպէս յանգէտ եղելոց ճշմարտութեանն. եւ հարուստ ամս ձգեալ մինչեւ ցերանելին Յոհան կաթողիկոսն որ ազգաւ Մանդակունի էր. եւ ապա նորա ի խնդիր եղեալ ճշմարտութեանն եւ քննեալ եւ հասու լիալ՝ թողուլ հրամայէ, յետ որոյ եւ մեք հետեւեսցուք»<sup>2</sup>:

Ակնհայտ է, որ Անանիա Շիրակացին Հովհան Մանդակունուն է վերագրում Քրիստոսի Մնունդն ու Մկրտությունը միանգամից Հունվարի 6-ին կանոնելու առաջնությունը, օգտվելով նրա խմբագրած «Կանոնք ընթերցուածոց»-ից և կանոններից, սակայն այն սահմանել էր Սահակ կաթողիկոսը, իսկ Հովհան Մանդակունին միայն վերականգնեց այն: Անանիա Շիրակացին ըստ էության «Կանոնք ընթերցուածոցը» վերագրել է Հովհան Մանդակունու, սակայն այն պետք է հասկանանք միայն խմբագրելու իմաստով: Հաջորդ հեղինակը, որը նույնպես «Կանոնք ընթերցուածոց»-Տոնացույցի ճոխացումը վերագրել է Հովհան Մանդակունուն, Հովհաննես Դրասխանակերտցին է: Նա գրել է, որ Հովհան Մանդակունին «կարգս յօրինեալ ճոխացուցանէ պայծառապէս զամենայն աղօթական (յաղոթականս) ժամակարգութիւնս եկեղեցոյ սրբոյ...»<sup>3</sup>: ժամանակագրություն ասելով Հովհաննես Դրասխանակերտցին հասկացել է ճաշոց-տոնացույցը: Պատահական չէ, որ որոշ տոնացույցերը նույնիսկ վերնագրերում գտնում ենք հետևյալ տեղեկությունը. «Աստուածայայտութեան ժամանակագրութիւն ըստ սրբոց լուսավորչի աթոռաց և հրահանգից և կարգաց զոր ընկալեալ ի սրբոյն Սահակայ եւ հասուցին առ մեզ նախնիք մեր»<sup>4</sup>:

1 Կանոնագիրք Հայոց, հատոր Ա, էջ 449:

2 Անանիա Շիրակացու մատենագրությունը, էջ 289:

3 Հովհաննես կաթողիկոսի Դրասխանակերտցույ, Պատմութիւն հայոց, Թ., 1912, էջ 60:

4 Ձեռ. № 9838, էջ 119բ:

Փաստորեն Հովհաննես Դրասխանակերտցին ևս ճաշոց-տոնացույցը վերագրել է Հովհան Մանդակունուն, որն ինչ խոսք պետք է ընկալել խմբագրման իմաստով:

Այլ խոսքով Հովհան Մանդակունին վերականգնեց հունվարի 6-ը իբրև Քրիստոսի Ծննդեան և Աստուածայայտնութեան միասնական օր, ինչպես և խմբագրեց «Կանոնք ընթերցուածոց»-ի որոշ հատվածներ կանոնելով նոր տոնական օրեր համապատասխան ընթերցվածներով, որոնք երևում են ինչպես նրա կանոններից, այնպես էլ «Կանոնք ընթերցուածոցի» հավելումներից և 6-րդ դարի տվյալներից:

Հովհան Մանդակունին, ինչպես գրել է Մ. Օրմանյանը օգտվելով նրա գրած կանոններից, շաբաթ և կիրակի պահքից ազատ է հռչակում, «գինին ու ձեթն ու ձուկն իբրև ուտեաց կերակուր կը դասէ», չորեքշաբթի և ուրբաթ Մարտիրոսների տոները կարգելի և այլն<sup>1</sup>:

Հովհան Մանդակունին «Կանոնք ընթերցուածոց» է ներմուծել Առաջավորաց Պահոց և Բուն Բարեկենդանի կանոնները: Ներսեսի և Ներշապուհի գրած կանոնական թղթերում, որը կատարվել է 550-ական թվականներին, ինչպես տեսանք Սահակ կաթողիկոսի կանոնական թղթերի քննության ժամանակ, Առաջավոր Բարեկենդանի և Բուն Բարեկենդանի տոները կատարել են, ուստի դրանք մտել են «Կանոնք ընթերցուածոց» 2-րդ խմբագրության ժամանակ: Հովհան Մանդակունու կատարած «Կանոնք ընթերցուածոցի» խմբագրության գրչագրեր, հայտնի են ուշ շրջանի բնագրերով, որոնք պահպանվել են Վենետիկի 285, Երևանի 5356 և 5479 թվահամարների ձեռագրերում: Ըստ Վենետիկի 285 և Երևանի 5356 թվահամարների գրչագրերի տվյալների ոչ միայն առանձնացվել ու ներմուծվել են Առաջավորի պահքի և Բուն Բարեկենդանի կանոնները, այլև Մեծ Պահքի յուրաքանչյուր կիրակիից առաջ շաբաթ օրը սահմանվել են հետևյալ սրբերի հիշատակի օրերը՝ Թեոդորոս զորավար, Կյուրեղ Երուսաղեմցի, Հովհաննես Երուսաղեմցի, Սեբաստիայի քառասուն մանկանց, Գրիգոր Լուսավորչի և Ղազարի Յարութրեան: Դրանցից Կյուրեղ և Հովհաննես Երուսաղեմցիների, ինչպես և քառասուն մանկանց հիշատակի օրերը գալիս են նախորդ «Կանոնք ընթերցուածոցից» միայն հուլյան ամսաթվերը, որոնք երբեմն առկա են նշված բնագրերում կորցրել են իրենց նախնական իմաստը, փոխարինվել են շաբաթ օրերի, դրանով իսկ անշարժ տոնական օրերը վեր են ածվել շարժական տոների, քանի որ ինչպես Առաջավորի Բարեկենդանի, Բուն Բարեկենդանի և Մեծ Պահքի մյուս շաբաթ և կիրակի օրերի հուլյան համարժեքի որոշումը կախված էր Զատիկի կատարման օրվանից:

Ուշագրավ է Գրիգոր Լուսավորչի հիշատակի օրվա սահմանումները. 1. «Շաբաթ աւր. Սրբոյն Գրիգորի», 2. «վեցերորդ շաբաթու. Սրբոյն Գրիգոր չարչար(ր)անաց եւ. Վիրապընկեց [ա]ռնելոյ», և «Գիւտ նշխարաց սրբոյն Գրիգորի»<sup>3</sup>: Վերջինս խմբագրված տարբերակներ են:

«Գիրք թղթոց»-ի 6-րդ դարի բնագրերում ևս առկա է Գրիգոր Լուսավորչի մասին հիշատակութուններ, որոնց անդրադարձել ենք նրա տոնական օրերի քննության մեջ:

Գրիգոր Լուսավորչի հիշատակի օրվա նշումը մտել է Ագաթանգեղոսի պատմության 620-623 թթ. կատարած ընդարձակ խմբագրության մեջ հետևյալ ձևակերպմամբ. 1. «Հինգերորդ շաբաթ աւրն վկայաբանութիւն սրբոյն Գրիգորի Հայոց լուսաւորչին, որ վկայեաց առաջի Տրդատայ թագավորին»: 2. «վեցերորդ շաբաթ աւրն. Յիշատակ սրբոյն Գրիգորի Հայոց Լուսաւորչին, Ագաթանգեղայ պատմութենէն»: Ստեփանոս Սյունեցին Գրիգոր Լուսավորչի և Տրդատ թագավորի հիշատակի օր է վկայել Մեծ Պահքի օրերին, որոնց քննությունը կատարել ենք Գրիգոր Լուսավորչի տոնական օրերի կապակցությամբ առանձին գլխի տակ:

Այլ խոսքով 6-րդ դարի կեսերի, 7-րդ դարի 20-ական թվականների, 8-րդ դարի սկզբների տվյալները ցույց են տալիս, որ Գրիգոր Լուսավորչի հիշատակը կանոնված էր, ուստի այն կատարվել է «Կանոնք ընթերցուածոցի» 2-րդ խմբագրության մեջ: Վերոհիշյալ վերլուծությունները ցույց են տալիս, որ Հովհան Մանդակունին 480-ական թվականներին խմբագրել է Հնագույն կանոնքը, վերականգնել է Քրիստոսի Ծննդեան և Աստուածայայտնութեան կանոնը Հունվարի 6-ին կատարելը միասնաբար, ավելացրել է Առաջավորաց Կիրակիի, Առաջավորի Պահքի, Բուն Բարեկենդանի և Մեծ Պահքի շաբաթվա օրերը սրբերի հիշատակի օրերը տալով նաև այդ օրերի ընթերցվածները: Հովհան Մանդակունին Մեծ Պահքի շաբաթ օրերին սրբերի հիշատակ դնելով փաստորեն վեր է ածել շարժական շաբթի, որը հետագայում դարձավ որոշիչ ամբողջ տոնական տարվա սրբերի տոների համար:

3 Մ. Օրմանյան, Ազգայատում, էջ 477-478:

1 Ձեռ. N° 285, Վենետիկ:

3 Ձեռ. N° 5356:

ՀԱՅՈՑ ՏՈՆԱԿԱՆ ՏԱՐԻՆ ԵՎ ԴԱՐԻ 50-ԱԿԱՆ ԹՎԱԿԱՆՆԵՐԻՆ

Սահակ կաթողիկոսի կանոնական թղթերի պատկանելության խնդիրը լուծելիս, որի արդյունքները շարադրեցինք քիչ առաջ, հիմնավորեցինք, որ մեզ հասած վեց կանոնական խմբերից երկուսը պատկանում են Սահակ կաթողիկոսի գրչին, իսկ մյուս չորսը գրվել են 6-րդ դարի 50-ական թվականներին ներսես կաթողիկոսի (և ներշապուհ եպիսկոպոսի, որպես նրա փոխանորդ) կողմից: Այդ հարցը հստակեցնելուց հետո դժվար չէ հատկապես «... թէ որպէս սահմանեցաւ կարգ ուխտի և որոշման վանաց» բնագրի մեջ փաստագրված տոնական օրերի և նախորդ շրջանում ստեղծված «Կանոնք ընթերցուածոց»-ների խմբագրութունների համադրութայան հիման վրա վերականգնել Հայոց տոնական տարին 6-րդ դարի կեսերին: Դա անհրաժեշտ է մի կողմից ունենալու Հայոց տոնացույցի հետագա զարգացումը, մյուս կողմից վերացնելու այն թերացումը, որը կատարել է Ն. Ակինյանը այլ կերպ ներկայացնելով Հայոց տոնական տարին հատկապես տոնացույցային տարվա սկիզբը:

Բերենք վերոհիշյալ բնագրի տեղեկութունները:

1. «ՇԾԹ (ՇԾԵ) Խ. Արդ պարտ է մեզ զհատուցումն շնորհից սահմանադրելով հաստատել յայտարարութեամբ՝ թէ որպէս պարտ է հատուցանել ի վանս եւ կամ ամուսնացելոց քահանայից:

Տաւն սրբոյն Յովհաննու Մկրտչի եւ վկայի, զոր նախակարգեաց առաքեալն եւ խոստովանողն Քրիստոսի եւ Հայր վերստին նորոգման բոլոր Հայաստան աշխարհիս Գրիգորիոս՝ ի վասն, զի ուխտադրութեան պահաւք հաստատեցաւ: Եւ որ ինչ միանգամ այլ ինչ ուխտք են՝ ի վանս կատարեսցին, եւ շաբաթք եւ պահքք եւ ծոմք, զի ուխտից են կատարմունք, զի ուխտաւորեալ են բնակիչք, շնորհիւ ուխտին կերակրեսցին: Եւ տաւն ամենայն մարտիրոսաց զոր մատուռն կոչեմք: Վարդավառին մատաղենիքն միայն պտուղ յամենայն արմտեաց քոռ քոռ ի ժողովրդականաց եւ յամուսնացեալոց քահանայիցն յառաջին արմտեացն, այսինքն յընտրոցն, զի զեղծցին կողք ցորենոյ եւ հնծանք գինւոյ եւ իւղոյ, եւ մի ի վատթարացն իբրեւ զկային, գուցէ զնորին լուիցուք զպատուհաս: Տաւն սրբոց Յայտնութեանն, եւ Քառասնորդք նորա, եւ Տեառնընդառաջն, եւ Առաջաւոր պահոցն կատարումն: Տաւն միջնոց քառանբորդացն Չատկի, աւր Ղազարու, Մեծ Հինգշաբթի Չատկին, յորում կենարարն մեր աւանդեաց աշակերտացն զխորհուրդս նորոյ ուխտիս: Երկուշաբաթի Չատկին ընծայիւք եւ հաճոյակատար աւժխտիւք, զի Չատկին, տաւն Ամբանալոյ Տեառն յերկինս, տաւն Վախճանելոցն յելս հրոտից ամսոյ: Այսոքիկ տաւնք: Ի վասն՝ յուխտաւորեալ տեղիսն երթիցէ նախանն, զի կերիցեն պաշտաւնեայք տեղւոյն եւ հիւքք զի քահանայից, թէպէտ եւ ամուսնացեալք իցեն, եւ արեղայից եւ ամենայն իսկ ուխտի մանկանց չէ արժանի չէնս աւթել. այլ ի վանս բայց թէ ուր ոչն գուցեն՝ եւ զկողոպուտ վախճանելոյ տանուտէրանց է տախտէ եւ յաթոռոյ, մինչեւ ցպնակ եւ ցգդալ, եւ որ ինչ անձին զգեստն մինչեւ ցկաւչիկս եւ զգաւտի, եւ անկողինն երթիցէ ի վանս, զի հանգիցեն ի վրայ նորա յայնր մտեալ հիւրքն եւ աւրհն եսցեն»:

2. «ՇԿԲ (ՇԾԸ) ԽԳ. Իսկ ամուսնացելոց քահանայիցն եղիցին տաւնք շաբաթն՝ Չատկի, եւ Չատկին սուրբ, եւ Երկրորդ Չատկին եւ յերկրորդ Չատկէն ի վեր կիրակէին ամենայն եւ Պենտակոստն եւ տաւն սրբոյ Աստուածածնին եւ Վարդավառն, բայց է մատաղենեացն, որ է կատարումն Քառասնորդացն առաքելական տաւնից հաւատացելոց Չատկի, եւ զպտուղ յամենայն արմտեաց քոռ քոռ, եւ պատարագք, որ մասնականաւ են կէս կաշւոյն եւ ճրագուրն զերկու մասունսի վանս թողլով զպաշտաման եւ զլուցման, զմին տարցին, զի լուցման մասնն, եւ

որ ոչխարաւ է զդմակն անդամով եւ երագուն, եւ խախացոցն, եւ մորթն եւ զգեստն միայն տանտիկնանց վախճանեցելոց: Եւ տաւն Բարեկենդանին եւ Ողոգոմեանն մեծ, որ թարգմանի բարեբանեալ աւր, եւ թէ այլ տաւնք ոք կատարեսցէ աներկեւան եւ առանց հակառակութեան պաշտաւնէիցն կացեն դասք, գիտելով որում շնորհի արժանաւորք եղեն. զի պարկեշտութեամբ եւ ուսումնասիրութեամբ վարեսցին. եւ մի եղիցին բանակուիւք, այլ սիրունք, աւթունք եւ զուարթունք յամենայնի, զի բաւական լիցին խրատել զստահական եւ զյուլացեալսն ածել ի կարգ հաւատոյ, քանզի այդ գործ է վարդապետի եւ հոգեւոր հովուի»<sup>1</sup>:

Ըստ «Կանոնք ընթերցուածոցի»-ի երկու խմբագրութունների և բերված տեղեկութունների համադրութայան վերականգնենք Հայոց եկեղեցական տոնական տարին: Ըստ վերոհիշյալ բնագրի տվյալների:

1. Տաւն Սրբոյ Յայտնութեանն (Հունվար 6):
2. Տաւն ամենայն մարտիրոսաց, զոր Մատուռնս կոչեմք (Հունվար 13):
3. Եւ Առաջաւոր պահոցն (կիրակի, շաբաթական), և երկուշաբաթից մինչև ուրբաթ իբրև պահքի օրեր:
4. Տաւն Բարեկենդանին (Կիրակի, շաբաթական):
5. Եւ Քառասնորդ նորա, այսինքն՝ Յայտնութեան, Տեառնընդառաջ (Փետրվար 14):
6. Տաւն միջնոց Քառասնորդաց (Կիրակի շաբաթական):
7. Աւր Ղազարու (շաբաթ, շաբաթական):
8. Ողոգոմեան մեծ-Բարեբանեալ աւր (Կիրակի, շաբաթական), այսինքն՝ Ծաղկազարդ կամ Արմավենեաց օր:
9. Մեծ Հինգշաբթի (շաբաթական):
10. Դիր Չատկին (ուրբաթ, շաբաթական):
11. Չատկին սուրբ (Կիրակի, շաբաթական):
12. Երկուշաբթի Չատկին (շաբաթական):
13. Շաբաթ Չատկին (շաբաթական):
14. Երկրորդ Չատկին (Չատկից հաշված հաջորդ Կիրակի, շաբաթական)
15. Երկրորդ Չատկէն ի վեր կիրակի ամենայն (Կիրակիներ, շաբաթական):
16. Տաւն ամբառնալոյ Տեառն յերկինս (հինգշաբթի, Չատկից հաշված 40-րդ օրը):
17. Պենտակոստին ի Հաւատացելոց Չատկին (Կիրակի շաբաթական):
18. Տաւն սրբոյն Յովհաննու Մկրտչի եւ վկայի (Հունիս 24):
19. Քառասնորդ առաքելական տաւնից Հաւատացելոց Չատկի (շաբաթական):
20. Տաւն Վախճանելոց յելս Հրոտից ամսոյ (Հրոտից 30 = Հուլիս սկզբի օրերից մեկը, անշաբթ ամսաթվով, որն արտահայտվել է Հայոց շաբաթական տոմարի ամսաթվով):
21. Վարդավառ (Կիրակի, շաբաթական):
22. Տաւն Սրբոյ Աստուածածնի (Օգոստոս 15):
- (23. Տաւն Սրբոյ Յովհաննու Մկրտչի եւ վկայի (Օգոստոս 29)):
24. Այլ տաւնք առաքելոց և Մարգարէից (Անշաբթ տոնական օրերով, առհասարակ տարվա ընթացքում հատկապես տարվա վերջում Դեկտեմբերի 25-29):

<sup>1</sup> Կանոնագիրք Հայոց, Բ. Ա., էջ 397-402:

Բնագրում, ինչպես տեսանք, խառն են տրված տոնական օրերը, սակայն դա չի խանգարում վերականգնել տոնական տարին սկսած տարվա սկզբից մինչև վերջ, մանավանդ, երբ նկատի ենք ունենում նախորդ շրջանում գրված բնագրերը:

Հարկ է նշել, որ Ն. Ակինյանը միտումնավոր այլ կերպ է վերականգնել Հայոց տոնական տարվա պատկերը, երբ նկատի ենք ունենում Հատկապես նրա գիտելիքները Հնագույն բնագրերի բնագավառում: Այդ է պատճառը, որ անհրաժեշտություն ենք համարում հիմնավորելու և փաստարկելու մեր կատարած վերականգնումը:

«Տաւն սրբոյ Յայտնութեանն» տոնվել է անշարժ տոնական օրով Հունվարի 6-ին և Համարվել է սկիզբ Հայոց եկեղեցական տարվա: Այդ հիմնավորվում է Սահակ կաթողիկոսի «Կանոնք ընթերցուածոց»-ի կատարած թարգմանություն և խմբագրության, Անդրեասի 200-ամյա տոմար-տոնացույցի, Եփրեմ Ասորու Համաբարբառի, Հովհան Մանդակունու «Կանոնք ընթերցուածոց»-ի 2-րդ խմբագրության ու կանոնների տվյալներով, որոնք վկայակոչվեցին վերևում:

547 թ. Ներսես և Ներշապուհ եպիսկոպոսները Աբղիշոյի Հետ Համատեղ թարգմանեցին և խմբագրեցին «Կանոնք առաքելական»-ը, որտեղ ևս հստակորեն հայոց եկեղեցական տոնական տարվա սկիզբ է ընդունվել Հունվարի 6-ը: Բերենք այդ վկայությունը. «է. Կարգեցին առաքելքն եւ եղին Հաստատութեամբ թէ եղիցի տաւն ծննդեան եւ յայտնութեանն Տեառն եւ Փրկչին մերոյ, որ է գլուխ եւ սկիզբն տաւնից եկեղեցւոյ, որ աւր Զ Յունուարի ամսոյ. ըստ յունարէն թուոյ եւ մեծապես խմբեցեն զտաւնն զայն ցնծութեամբ եւ ուրախութեամբ, սաղմոսիւք եւ աւրհնութեամբ, եւ երգովք հոգեւորաւք, եւ ընթերցցին գիրք մարգարէականք և առաքելականք»<sup>1</sup>: Ի դեպ «որ է գլուխ եւ սկիզբն տաւնից եկեղեցւոյ»-ն ասորական բնագրում բացակայում է, այսինքն՝ խմբագիրների հավելումն է, որը վերաբերվում է Հայոց եկեղեցական տոնական տարվա սկզբին:

Հովհաննես Գաբեղենացի կաթողիկոսը 6-րդ դարի 60-ական թվականներից գրեց Քրիստոսի Մննդեան և Աստուածայայտնութեան տոնի մեկնություն, որտեղ նույնպես տարվա սկիզբն համարել է Հունվարի 6-ը: Ներկայացնենք այդ բնագրի մի հատված. «եւ Կիւրղոս Երուսաղէմի եպիսկոպոս... և տաւնս և զընթերցուածս և զսաղմոսս ի սրբոց առաքելոցն զեղեայսն Հաստատեայ, և զյիշատակ մարգարէից և առաքելոց և մարտիրոսաց ստուգեալ կարգեաց և գլուխ տաւնից զյայտնութիւնն եղ՝ զոր սուրբ առաքելոցն էր կարգեալ, և (չ)ասաց զծնունդն յառաջ քան զյայտնութիւնն, այլ զմի և զնոյն: Եւ զոր յայլ քաղաքս ըստ Արտեմոնադիր ընթերցուածոց ղեկտեմբեր ամսոյ ի քսան և հինգ ծնունդ առնեն, զայն Յակովբայ առաքելոյ և Դաւթայ մարգարէ յիշատակի աւ(ր) եղ Կիւրեղ, քանզի և սուրբ հարքն որ ի Նիկիա ժողովեալ, և երանելի սուրբն Գրիգորիոս և սուրբն Արիստակէս ոչ կարգեցին երկու տաւնս զծնունդն և զՅայտնութիւնն, այլ մի տաւն: Եւ ըստ նոցունց հոգեկիր վարդապետքն և թարգմանիչք, որք յԱղեքսանդր(իայ) և այլ յայտնի քաղաքս վարժեալ, ոչ աւելիս և նորս ինչ թարգմանեցին, և ոչ ընկալան, և ոչ մեզ աւանդեցին, այլ Հաստատեալ եմք ի վերա հիման սուրբ առաքելոցն և երանելի հարցն, որ զմի և նոյն տաւն կատարեցին, և կատարեմք ի պատիւ սուրբ Երրորդութեանն, զաւր սուրբ Յայտնութեանն՝ ոչ բաժանելով յերկուս զայսաւր ի Յորդանան զծնիցեալ բանն»<sup>2</sup>:

Բերենք 604-607 թթ գրված Մովսես եպիսկոպոսի տեղեկությունը: «Արդ՝ որպէս առաք պատուէր ի սուրբ հարցն ոչ հաղորդել անխտիր ընդ ամպարիչսս, և ոչ միաբանել և զուգել տաւն մեծի գատկին ընդ հրեայսն և ընդ անուանեալ Կաթարոսսն, նոյնպէս և յաղագս միաւորական տաւնին Յայտնութեան, որ է Հրաշափառ ամենասուրբ ծնունդն յունուարի ամսոյ ի

վեցն կատարեալ, զոր կանոնեալ Հին ընթերցուածոց: Վասն զի մի աւր դիպեցաւ Մնունդն և Մկրտութիւն եւ ոչ հաւասարել ընդ նոսա, և ոչ ընդ մեզ հաղորդել հաւատով, և ոչ ապականել զխորհուրդ եւթն շաբաթուցն պահոց, այլ լնուլ զսուրբ քառասներորդսն, հինգաւրեայ յառաջաւոր պահովքն: Ահիւ և տրտմութեամբ և սրբութեամբ տա(ւ)նել ի գլուխ զսուրբ քառասներորդացն պահս, և ոչ վայրապար յաւուրս պահոցն քարոզել աւետարան և մատուցանել պատարագ հրամայեցին. թեև յիշատակ ուրուխ դիպեցի, բայց ի շաբաթու և ի կիւրակէի: Եւ սահմանեցին այսպէս, եթէ ոք կատարեալ հասակաւ, առողջ մարմնով, քրիստոնեայ անուն ի վերայ և զքառասնաւրեայ պահս ի գլուխ ոչ տա(ւ)նեցի, նզովեալ լիցի: Եւ եթէ յաւաջ շաբաթուն ի հինգշաբաթին աւր քան զհաղորդել սուրբ խորհրդեան՝ բերան ոչ լուծցէ, նզովեալ լիցի և ամենայն պահք քառասներորդացն ընդունայն լիցին»<sup>3</sup>:

Անանիա Շիրակացի Քրիստոսի Մննդեան և Աստուածայայտնութեան տոնի մեկնության մեջ տալիս է հետևյալ վկայությունները.

1. «Բագում աշխատութիւն գործառնութեանս մերոյ վասն սրբոյ տաւնից Աստուծոց էր, յոր հասաքս եւ զոր ճառել արժանաւոր եղաք, նախ զտաւն ծննդեան Քրիստոսի Աստուծոց մերոյ, որ է սկիզբն տաւնից եւ տարեկանաց մերոց, եւ գլուխ կացուրդաց. եւ ամենայնից ի Քրիստոս յիշատակաց»<sup>4</sup>:

2. «Տաւն սրբոյ ծննդեան Քրիստոսի, Բժ աւուրբ յառաջ քան զտաւն Մկրտութեանն, ոչ կարգեցաւ ի սուրբ առաքելոցն, եւ ոչ ի նոցունց փոխանորդացն, որպէս եւ յայտնի է ի կանոնաց սրբոց առաքելոցն: Քանզի գրեալ է ի վեցերորդ գլուխ կանոնացն այսպէս եթէ կարգեցին առաքելքն եւ եղին Հաստատութեամբ, թէ եղիցի տաւն ծննդեան եւ Յայտնութեանն Տեառն եւ Փրկչին մերոյ գլուխ եւ առաջնորդ տաւնից եկեղեցւոյ, որ աւր ԻԱ է Տիբեթ ամսոյ, որ է Զ յունուարի ըստ հռովմայեցւոց»<sup>5</sup>:

3. «... զկանոն ծննդեանն ի վեց յունուարի կարգեաց նոյն ինքն Կիւրեղ: Քանզի գրեալ է ի սկզբան կանոնին այսպէս. թէ տաւն սրբոյ Յայտնութեան կատարի ի յունուարի, որ վեց էր ամսոյն, ժողովին ի հովուանոցն, եւ զայս ինչ կանոն կատարեն. եւ ապա ի Բեթղեմ եւ ի յայրին: Ահա յայտնապես ցուցանէ ի միում աւուր տաւնել զերկոսին. եւ ո՞վ ժպրհեսցի ասել պարսաւանս ինչ երանելոյն Կիւրղի կամ ի նմանէ կարգեցելոցն...»<sup>6</sup>:

4. Անանիա Շիրակացի տոմարագիտական տեսանկյունից հիմնավորելով Հունվարի 6-ը շարունակում է, որ «Գիտեմ սակաւս ի յունաց որք զայդ տաւնէին (Հունվար 6-ը - Ռ. Վ.) մինչեւ ի Յուստինանոս թագաւորն: Եւ ի նմանէ հարկաւորեալք ամենեքեան ընկալան (Դեկտեմբեր 25-ը - Ռ. Վ.) Երուսաղէմ, Հռովմ, Աղեքսանդր(իա) եւ ամենայն աշխարհ, բայց մեզ մի լիցի ի մարդկայնուցս երկնչել յահէ, առաւել քան յաստուածայնուցս...»<sup>7</sup>:

5. «Արդ այսուհետեւ յայտ արասցուք զանցնիւր ազգացն, եթէ յորում ամսեան կամ քանի աւուրցն լիցի սուրբ Յայտնութիւնն: Առաջին յայտնութիւն ըստ Եբրայեցւոցն Տիբեթ ամսոյ, որ աւր ԻԱ է միշտ:

Երկրորդ յայտնութիւն ըստ ասորոց Քանուն ամսոյ, որ Զ է միշտ:

Երրորդ յայտնութիւն ըստ արաբացւոց Արսոն ամսոյ՝ որ աւր ԻԱ է միշտ:

Չորրորդ յայտնութիւն ըստ եթիովպացւոց Թերաս ամսոյ որ աւր ԺԱ է միշտ:

1 Գիրք թղթոց, էջ 124-125:  
2 Անանիա Շիրակացու մատենագրությունը, էջ 283:  
3 Անանիա Շիրակացու մատենագրությունը, էջ 283:  
4 Անդ, էջ 285:  
5 Անդ, էջ 290:

1 Կանոնագիրք Հայոց, Բ. Ա., Կանոնք առաքելականք, էջ 32, հոդված է:  
2 Գիրք թղթոց, էջ 85-89:



Հինգերորդ յայտնութիւն ըստ եգիպտացւոց Տուբիլ ամսոյ որ ար ԺԱ է միշտ:

Վեցերորդ յայտնութիւն ըստ Մակեդոնացւոց Մակատրիոն ամսոյ որ ար Իա է միշտ:

Եւթներորդ յայտնութիւն ըստ Յունաց եւզենեոս ամսոյ որ ար Զ է միշտ:

Ութերորդ յայտնութիւն ըստ Հռովմայեցւոց յունուարի ամսոյ որ ար Զ է միշտ:

Իններորդ յայտնութիւն ըստ Հայոց փոփոխմամբ է ըստ չորից չորից ամաց»<sup>1</sup>:

Վերոհիշյալ բացահայտ տվյալները խոսում են մեր վերականգնած տոնական տարվա, հատկապես նրա սկզբի մասին և հերքում ն. Ակինյանի վերականգնումը, որն սկսել է Սեպտեմբերից: Այն, ինչպես հայտնի է, բյուզանդական տարվա սկիզբն է և ոչ մի կապ չունի հայոց տոնական տարվա սկզբի հետ: Շարունակենք տոնական տարվա վերականգնումը: «Կանոնք ընթերցուածոց»-ից հայտնի է «տաւն ամենայն մարտիրոսացն»-ն, որը կատարվել է Քրիստոսի Մենդեան և Աստուածայայտնութեան ութերորդ օրը, այն է՝ Հունվարի 13-ին: Հի-շյալ բնագրում այն անվանվել է հավելադիր անվամբ՝ «մատուունս» ձևակերպմամբ: Այն, ինչ խոսք, նորութուն է նախորդ բնագրերի համեմատութեամբ, թեև այդ տոնական օրը առաջին անգամ գրանցված է 464-467 թթ. թարգմանած և խմբագրած Նիկիայի ժողովի վավերագրերում՝ «մատուունս» ձևով:

Առաջավորաց Պահքը Հայոց տոնացույցում իբրև տոնական օրեր սահմանեց Հովհան Մանդակունին իր «Կանոնք ընթերցուածոց»-ի խմբագրութեան մեջ, ըստ երևույթին հիմնվելով Ագաթանգեղոսի պատմութեան վկայութիւնների վրա: Հաջորդ անգամ Առաջավորի Պահքին ենք հանդիպում, իբրև մատենագրական տեղեկութիւն, հիշյալ բնագրում: Առաջավորի Պահքի հիշատակութեան ենք հանդիպում նաև Մովսես եպիսկոպոսի թղթում գրված Վրթանես Բերթողին 604-607 թթ., որը բերվեց վերևում:

Առաջավոր Պահքի մասին ուշագրավ տեղեկութիւն է տալիս Ստեփանոս Սյունեցին: Բերենք այդ վկայութիւնը. «Այլ վասն Առաջաւորի պահոցն զմեզ զի հայհոյէք: Առեք զգիրս մերոյ Լուսաւորչին, ընթերցէք զի նա է մեր լուսաւորութեան աւուրք առաջինք, զնա եմք պահել ծոմաջան և անսուղ մինչև յանասունս անգամ. զի յորժամ ել նա ի վիրապէն, ետես աշխարհս մեր զամենայն դիւամոլեալ. և ամենեքեան անկեալ առ ոտս նորա լացին, մինչև ինքն ընդ նոսին յարտասուս եղեալ, և զհինգ աւրն անսուղ պահեաց ինքն հաղերձ թագաւորաւն և ամենեքումբք, և ապա սկսաւ ի վարդապետութիւն աւուրս վաթսուն, և դեռ չէին մկրտեալք, և իբրև մկրտեցան ամենեքեան ի միասին, վասն յիշատակի մերոյ լուսաւորութեանն կրկին անգամ պահեցաք և պահեմք մինչև ցայժմ»<sup>2</sup>:

Ակնհայտ է դառնում, որ Առաջավորաց Պահքի ինչպես և Բարեկենդանի տոնի կանոնները ներմուծմամբ, որը կատարեց Հովհան Մանդակունին, ընդլայնվեց Հայոց տոնացույցը և շաբաթական շարքի կիրառութիւնը էլ ավելի ամրապնդվեց:

Հիշյալ բնագրից երևում է, որ Քրիստոսի Մենդեան 40-րդ օրը ստացել է Տեառնընդառաջ անվանումը: Տոնական օր է դարձել Մեծ Պահքի կիսող օրը՝ «միջնոց քառասորդաց»-ը, որը բացակայում է վաղ շրջանի բնագրերում:

Զատիկին նախորդող օրերը պահպանվել են ամբողջութեամբ: Նորութիւններն այն են, որ «ողոգոմեան մեծ»-ը թարգմանվել է «բարեբանեալ ար»: Զատիկի նախորդող հինգ շաբթիւն, որը նախորդ բնագրերում բնորոշվել է «հին Զատիկին» ձևով վերանվանվել է «մեծ հինգ շաբթիւն», իսկ ուրբաթը՝ «Դիր Զատիկին»: Ուշագրավ է, որ Զատիկին հաջորդող կիրակին կրում է «Երկրորդ

Զատիկին» անվանումը, որն ուշ շրջանի բնագրերից հայտնի է «Նոր կիրակի» և «կրկնագատիկ» անուններով:

Հայոց տոնացույցում «Երկրորդ Զատիկից» հետո մինչև Համբարձում, իբրև տոնական օրեր ավելացել են կիրակիները, որոնք բացակայում են նախորդ բնագրերում, իսկ Հովհան Օձնեցու խմբագրած տոնացույցում, ինչպես կտեսնենք հետագա քննութեան մեջ, Զատիկից հետո եկող կիրակին վերանվանվել է Նոր Կիրակի, իսկ հաջորդ կիրակին վերածվել է Աշխարհամատրան տոնի:

Նախորդ բնագրերից հայտնի «Սուրբ վերանալոյ Տեառն» տոնը ստացել է «Տաւն ամբառնալոյ Տեառն յերկինս» ձևակերպումը, որը հետագայում ժողովրդի մեջ կենցաղավարվող Համբարձման տոնի նախնական վիճակն է ներկայացնում: Ակնհայտ է, որ «Վերանալոյ»-ն հետագայում չէր կարող դառնալ համբարձում, իսկ «Ամբառնալոյ»-ի վերածումը Համբարձման բնականոն է: Պենտեկոստեն ստացել է նոր անվանում, այն է՝ «հաւատացելոց Զատիկին», որը բնագրերում հետագայում չի հանդիպում: Քննարկվող բնագրի մեջ վկայվել է. «տաւն սրբոյն Հովհաննու Մկրտչի եւ վկայի զոր նախակարգեաց առաքեալն եւ խոստովանողն Քրիստոսի եւ հայր վերստին նորոգման բոլոր Հայաստան աշխարհիս Գրիգորիս՝ ի վասն...»:

Հովհաննես Մկրտչի տոնին ավելացվել է «եւ վկայի» անորոշ արտահայտութիւնը, որն Ագաթանգեղոսի պատմութեան ընդարձակ խմբագրութեան մեջ՝ կատարված 620-623 թթ., ստացել է Աթանագինեի անունը, ուստի Հովհաննես Մկրտչի հիշյալ տոնը եղել է Հունիս 24-ին կատարվող հիշատակի օրը, որը հետագայում դրվել է Պենտեկոստեից հետո եկող 12-րդ օրը, հինգ շաբթիւն: Հովհաննես Մկրտչի օր է սահմանվել վաղ շրջանում նաև Օգոստոսի 29-ին, սակայն քիչ հավանական է, որ այդ օրվա վրա ավելացվեր «վկայի» անորոշ արտահայտութիւնը, քանի որ Հովհաննես Մկրտչի և Աթանագինեի տոնը միասին նշել են Պենտեկոստեից հետո եկող տոնին միայն, որն ընկել է Մայիս 21 — Հունիս 24-ի օրերից մեկում, այսինքն Հովհաննես Մկրտչի Հունիս 24-ի տոնի օրվա սահմաններում: Նկատի ունենալով այս իրողութիւնը Հովհաննես Մկրտչի և վկայի տոնը վերականգնել ենք Պենտեկոստեից հետո անշարժ տոնական օրվա, թեև ցուցակում փակագծերի մեջ հարցականի տակ գրանցել ենք Օգոստոսի 29-ի տակ ևս:

Նախորդ բնագրերից հայտնի չէ «տաւն վախճանելոց յիս հրոտից ամսոյ»-ն, որը կատարվել է անշարժ տոնական օրվա Հուլիս սկզբներին և հիշյալ բնագրում ստացել է Հրոտից 30-ի Հայոց շարժական տոմարի ամսաթիւրը: Այդ տոնը, ինչպես տեսանք վերը, գալիս է վաղ շրջանից և ամենայն հավանականութեամբ կապվել է հեթանոսական շրջանի ամառային տոնական շարքի հատկապես Ամանոր-Ադոնիսի հետ, իբրև մեռնող և հարութիւն առնող աստվածութեան տոն, որը ժամանակավորապես վերածվեց վախճանվածների հիշատակի օրվա: Հետագայում վախճանվածների հիշատակի օրը չի հանդիպում բնագրերում, քանի որ այն տարալուծվել էր Տաղավարաց անվանվող տոների մեջ և տոնվում էր երկու շաբթի օրերին, թեև նրա մնացուկները պահպանվեցին Համբարձման-Վարդավառի տոնական շարքերի մեջ:

Վարդավառի տոնի հիշատակութեանը հանդիպում ենք առաջին անգամ: Այդ տոնը չկա նախորդ շրջանի «Կանոնք ընթերցուածոց»-ների խմբագրութիւնների մեջ և այն նորամուծութիւն է Հայոց տոնացույցում 6-րդ դարի կեսերին վկայված: Վարդավառի տոնի կանոնը սահմանված ենք տեսնում 6-րդ դարի վերջի - 7-րդ դարի սկզբներին խմբագրված «Կանոնք ընթերցուածոց»-ի նոր խմբագրութեան մեջ, որը հետագայում հիմնովին մտավ Հայոց կենցաղ:

Ուշագրավ է, որ հիշյալ բնագրում Առաջավոր Պահքից մինչև Վարդավառ կազմավորված ենք տեսնում որպես շաբաթական շարքի վրա հիմնված շրջան՝ առանձին բացատրութեամբ և հետագայում Հովհան Օձնեցին հիմք ընդունելով այն Առաջավորի Պահքից մինչև Վարդավառ շաբաթվա օրերով սահմանեց սրբերի հիշատակի տոներ՝ հիմնելով Առաջավորի, Զատիկի, Հոգե-

1 Անագիա Օիրակացու մատենագրութիւնը, էջ 290:  
2 Գիրք թղթոց, էջ 333:



գալստի և Վարդավառի կիրակիների վրա: Ինչ վերաբերվում է առաքյալների, մարգարեների և սրբերի առանձնապես հայոց սրբերի հիշատակի օրերին, ապա բացառյալ Հովհաննես Մկրտչի և վկայի օրվա հատուկ չի առանձնացված, որովհետև նրանց հիշատակը տոնվում էր անշարժ տոնական օրերով և հատկապես տեղայնացված էին և առանձին վանքերի մենաշնորհն էր և նրանց տոնական օրերի հասույթը պատկանում էր այդ վանքի և նրան սպասարկող ամուսնացած քահանային, որի հետևանքով հատուկ չի շեշտվել: Այլ խոսքով քննարկվող բնագիրը համարելով նախորդ շրջանում ստեղծված տոնացույցի հետ հնարավորություն տվեց վերականգնել 6-րդ դարի կեսերի տոնական տարվա պատկերը ընդհանուր գծերով, ինչպես և բացահայտել այն փոփոխությունները, որոնք կատարվել էին հայոց տոնացույցում ավելի քան 70 տարվա ընթացքում:

ԷԱՍՅԱՆ 532-ԱՄՅԱ ՁԱՏԿԱՑՈՒՑԱԿԸ ԵՒ ՀԱՅՈՑ ԹՎԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԸ

552 թվականի Նիսան 4 (= Մարտի 25)-ի լուսնի լրման կանոնով, որը 19-ամյակի 10-րդ տարին էր, ավարտեց Անդրեասի 200-ամյա Ձատկացուցակը: Սպառվեց այն հիմքը, որով կարգավորում էին Հայոց տոնացույցի՝ «Կանոնք ընթերցուածոց»-ի, հատկապես շարժական տոները տարիների կտրվածքով: Հայերը և մյուս քրիստոնյա ժողովուրդները, որոնք օգտագործում էին Անդրեասի 200-ամյա տոնացույցը կամ պետք է առաջնորդվեին նրանով՝ որոշ փոփոխություններ կատարելով, սկսելով 200-ամյակի սկզբից, որը միանշանակ չէր, որովհետև այն վերջացել էր 19-ամյակի 10-րդ տարով, կամ պետք է ընտրեին այլ ուղի: Անդրեասի 200-ամյա Ձատկացուցակը շարունակելու հիմնական բարդություններից մեկն էլ, ինչպես նշել է Անանիա Շիրակացին, Բեսեքիստոնի խնդիրն էր: Նրա վկայած տեղեկությունը կներկայացնենք քիչ հետո:

Հայերեն, ինչպես տեղեկացրել են բնագրերը, 9 տարի (թերևս ավելի) առաջնորդվել են լուսնի 19-ամյա պարբերաշրջանով, այսինքն մինչև Անդրեասի 19-ամյակի ավարտը, որտեղ ունենալով լուսնի լրման օրը և որոշելով Ձատկի կիրակին, դժվար չէր կարգավորել նաև տարվա մյուս շարժական տոները: Այս տեսակետից ուշագրավ է Մ. Չամչյանի, հավանաբար Վենետիկի ձեռագրերից քաղած վկայությունը այն է՝ «ի սպառել երկիրեկի Անդրէասին՝ այլ ոչ դարձաւ իւրաքանչիւր եղանակ և կարգադրութիւն տօնից ըստ առաջադրին (այսինքն՝ Անդրէասի - Ռ. Վ.), բայց միայն օր լրմանն, և զթ՝ (9) ամն ոմն այսպէս և ոմն այնպէս վարեցաւ, և յամին ժբ-րորդի (10) ապա սկիզբն եղև հինգ հարիւրեկիս, վասն այսորիկ ասէ ի գիւտ բոլորից ինն և տաս-ներեակացն, թէ կալ զթուականն և թթ երթ...»<sup>1</sup>: Այս և մյուս տեղեկությունները, որոնք կներկայացնենք հետագա շարադրանքներում, ցույց են տալիս, որ հայերը ամենաքիչը 553-561 թ.թ. եկեղեցական տոները կարգավորել են լուսնի 19-ամյա պարբերաշրջանի լուսնի լրման օրերից ելնելով, իսկ հայոց 10 թվականին (= 562 թ.) սկսվել է հինգհարիւրեակը, այն է՝ էասյան ՇԼԲ-ն, որն ինչ որ իմաստով ընդունելի է: Սակայն միայն լուսնի 19-ամյակով ղեկավարվելը հեռանկարային չէր, այլ պետք է ունենային առնվազն 95-ամյա զատկացուցակներ: Այդ շրջանում ստեղծվել և ստեղծվում էին 532-ամյա զատկացուցակներ, որոնք լուսնի 19-ամյա ցիկլի և արևային 28-ամյա փոքր շրջանի կամ 28-ամյա (4×7) շաբաթական շարքի, որը Շիրակացին բնորոշել է Բեսեքիստոն անվամբ, արտադրյալի թիվն էր: Նրանք նախորդ զատկացուցակների համեմատ կատարյալ էին, որովհետև նույն պարբերաշրջանը կրկնվելու էր շարունակաբար: Շիրակացին, որքան մեզ հայտնի է առաջիններից մեկը, եթե ոչ առաջինը հայ մատենագրության մեջ, տեղեկացրել և մեկնել է էասյանների և Իրենի 532-ամյա Ձատկացանկերը: Տեսնենք ինչ վկայություններ է թողել Շիրակացին: Նա գրում է. «Յետ որոյ եւ յաւուրս Կոստանդեայ, որդւոյն Կոստանդիանոսի, Անդրեաս եղբայր Մագնոսի եպիսկոպոսի, կարգեաց տու-մար երկերիւր ամաց, սակայն եղ այն ոչ անտարակուսելի: Ապա ի սպառել Անդրեասեան տոմարին ամացն երկերիւրոց յաւուրս Յուստիանոսի թագաւորի, եղել բազում խնդիր հմտագունից իմաստասիրաց՝ վասն ոչ բերելոյ ճշգրտիւ զկարգ ինն եւ տասն բոլորակին, որ իննսուն եւ հինգ ամով բովանդակէր զեղանակ շրջագայութեան, նոյն յոլովից թուեցաւ դժոխին, զի բազում ամաւք ըստ աւուրց բոլորակին չտողեր զկնի Բեսեքիստոնն. վասն որոյ եղեալ քննութիւն յԱղեքսանդրիայ, որ է մայրաքաղաք ամենայն իմաստասիրութեանց գտաւ անտարակուսելի աւրինակ

<sup>1</sup> Մ. Չամչյան, Պատմութիւն Հայոց, Բ. 2, Վեներտիկ, 1785, էջ 509:

ՇԼԲ ամաց չըջաբերութեանն, որ ստուգիւ ցուցանէ զաւուրս չորեքտասան պասեքին: Արդ ոչ եթէ նորաձեւելովս ինչ աղարտեցին զվաղնջուցն դրոշմեալ կանոն, այլ ճշգրտիւ գնոյն չորեքտասան յինն եւ տասն յինն եւ տասան թուոյ դրոշմեցին յամարական ոճով. զի անտրտում եւ անստուերագիր տպաւորեալ եղիցի գրութիւն (թերևս՝ դրութիւն): Եւ է կարգաւ ախոյոցիկ գլուխ իմաստասիրաց՝ Աղէքսանդրացին էաս. ունելով իւր ընկեր զհրեայն Փենեհեզ որ ի Տիրերիդայ, զԳաբրիէլ յատուրոց, եւ զՅոհան յարաբացւոց եւ զԱբդիէ յեթովպայ, զՍերգի ի մակեդոնացւոց, զԵեւղոգի ի յունաց, զԳիգան ի հռովմայեցւոց: Ունելով ընդ իւր եւ այլ ընկերս էաս ի նոյն եգիպտացւոց զորոց անուանս ոչ հիշատակեցաք ի պատմութեանս, բայց ընդ ամենայն ասի լինել արս երեսուն եւ վեց»<sup>1</sup>:

Ի դեպ Հակոբ Ղրիմեցին Տոմարի մեկնութիւններէ մեկում համառոտել է Շիրակացուն տալով որոշ մանրամասներ: Նա գրել է.

«... իսկ ժամանակս անբարիչտ թագաւորին Յուստինիանոսի եղև լրումն Մ. ամի կարգացն Անդրեասու և սկսան շփոթել լրմունք գատկաց և Գիրք արուեստական տումարաց: Իսկ այր մի ի ճշմարտագունից իմաստասիրաց յեգիպտոսական մայրաքաղաքէն Աղէքսանդրեայ էաս անուն կոչեցեալ ձայն արկեալ առ ինքն ժողովէ գայրս կորովամիտս... և այլ ԼԶ արամբք հավատարմաւք եւ սկսան խորհիլ գտանել դարձ արեգականն և լուսնին ի միում ամի եւ գտին գայն լեալ ի ԻԸ ինն և Ժ(Թ) երեակսն և ազդեցութեամբ հոգւոյն սրբոյն ծանեան զլուսին ստեղծեալ ի լրմանն ձևի և զաւուրս Եժան ընթացեալ լեալ էր և բոլորեալ լուսովն և այսպես աւարտեալ զկարգ ծնընդեանն եւ հասեալ յԱպրիլի Դ առնու զառաջին լրումն նուազելոյ եւ շինեցին ՇԼԲ տարու լրմունք»<sup>2</sup>: Մեզ հայտնի է, որ լրմունքի օրերը շփոթեին, սակայն 19-ամյակի լրման որոշ ամսաթիվեր փոխել են, հավանաբար հեղինակը նկատի է ունեցել այդ: Կարևորն այն է, որ Հակոբ Ղրիմեցին էասյան ՇԼԲ-ի 19-ամյակի 1-ին տարին ապրիլ 4-ն է գրանցել հետեւելով իր նախորդներին:

Շիրակացին խոսում է Իրեոն վարդապետի մասին, որը «դրանն արքունի ի քաղաքին Կոստանդնուպալսի»<sup>3</sup> և քննում նրա կազմած ՇԼԲ-ն, որն ոչ այլ ինչ էր քան էասյանների ՇԼԲ-ի տարբերակ, որտեղ նա փոխել է Ապրիլ 6-ը դարձնելով Ապրիլ 5 և դրել 19-ամյակի առաջին տարի, տալով վերադիրների ու թվականության իր համակարգերը: Վերջիններիս կանոնադրականք Անանիա Շիրակացու լուսնի 19-ամյա աղյուսակների պատկանելության խնդիրը քննելիս, իսկ որոշ հարցեր կվերլուծենք քիչ հետո:

Հարկ է նշել, որ Իրեոնի կազմած ՇԼԲ-ն, ըստ Շիրակացու, «Բունութեամբ հրամանի թագաւորին ընդ ամենայն աշխարհն զիւրն հաստատեաց»<sup>4</sup>:

Մինչև Անանիա Շիրակացու հույժ կարևոր և սկզբունքային հաջորդ տեղեկությունները բերելը, որպեսզի ընթերցողներն ավելին ուսումնասիրողները դյուրին կողմնորոշվեն քննարկվող տարիների և հատկապես ամսաթիվերի մեջ, հասկանան հայ մատենագրական վկայությունները և խուսափեն այնտեղ տեղ գտած խառնաշփոթից, ներկայացնենք 552-590 թթ. Չատկացուցակի մեջ հետաքրքրող տվյալները.

№№	Ներկա թվական	Հայոց թվական	19-ամյակի տարիներ		19-ամյակի օրերը		Չատկի օրերը		Ծանոթագրություններ
			Անդրիասի	Հասի և Հայոց	հուլյան ամս.	հայոց ամսաթ.	հուլյան ամս.	հայոց ամսաթ.	
1	2	3	4	5	6	7	8	9	10
Ա	552	—	10	—	M25	Ահեկի 18	M31	Ահեկի 24	Անդրեասի 200-ամյակի վերջին տարին: Նիսան 4=M25: Անտիոքի 600 թվ. = 552 թ. M-ն՝ Մարտն է: A-ն՝ Ապրիլն է:
Բ	553	1	(11)	1	A 13	Մարտի 7	A 20	Մարտի 14	Հայսյան ՇԼԲ-ի և հայոց թվականության սկիզբը: Նիսան 23=A 13
Գ	554	2	(12)	2	A 2	աբ. 26	A 5	աբ. 29	
Դ	555	3	(13)	3	M 22	աբ. 15	M 28	աբ. 21	
Ե	556	4	(14)	4	A 10	մար. 5	A 16	մար. 11	
Զ	557	5	(15)	5	M 30	աբ. 24	A 1	աբ. 26	
Է	558	6	(16)	6	A 18	մար. 13	A 21	մար. 16	
Ը	559	7	(17)	7	A 7	մար. 2	A 13	մար. 18	
Թ	560	8	(18)	8	M 27	աբ. 22	M 28	աբ. 23	
Ճ	561	9	(19)	9	A15	մար. 11	A 17	մար. 13	
ԺԱ	562	10	-	10(1)	A 4	աբ. 30	A 9	մար. 5	
ԺԲ	563	11	-	11(2)	M 24	աբ. 19	M 25	աբ. 20	
ԺԳ	564	12	-	12(3)	A12	մար. 9	A 13	մար. 10	
ԺԴ	565	13	-	13(4)	A 1	աբ. 28	A 5	մար. 2	
ԺԵ	566	14	-	14(5)	M 21	աբ. 17	M 28	աբ. 24	
ԺԶ	567	15	-	15(6)	A 9	մար. 6	A 10	մար. 7	
ԺԷ	568	16	-	16(7)	M 29	աբ. 26	A 1	աբ. 29	
ԺԸ	569	17	-	17(8)	A 17	մար. 15	A 21	մար. 19	
ԺԹ	570	18	-	18(9)	A 6	մար. 3	A 13	մար. 11	Իրեոնի 19-ամյակի 1-ին տարին, լրումը A 5-ին = Գիսան 15, Չատիկը՝ A 6 = Գիսան 16, ծուազատիկ:
Ի	571	19	-	19(10)	M 25	աբ. 22	M 29	աբ. 26	
ԻԱ	572	20	-	1(11)	A 13	մար. 12	A 17	մար. 16	
ԻԲ	573	21	-	2(12)	A 2	մար. 1	A 9	մար. 8	
ԻԳ	574	22	-	3(13)	M 22	աբ. 20	M 25	աբ. 23	
ԻԴ	575	23	-	4(14)	A 10	մար. 9	A 14	մար. 13	
ԻԵ	576	24	-	5(15)	M 30	աբ. 29	A 5	մար. 5	
ԻԶ	577	25	-	6(76)	A 8	մար. 18	A 25	մար. 25	
ԻԷ	578	26	-	7(17)	A 7	մար. 7	A 10	մար. 10	
ԻԸ	579	27	-	8(18)	M 27	աբ. 26	A 2	մար. 2	
ԻԹ	580	28	≠	9(19)	A 15	մար. 16	A 21	մար. 22	

1 Անանիա Շիրակացու մատենագրությունը, էջ 295-6:  
 2 Ձեռ. № 1114, էջ 61ա:  
 3 Անանիա Շիրակացու մատենագրություն, էջ 286  
 4 ԿԱՊ, էջ 286:

Լ	581	2	*	10(1)	A 4	մար. 5	A 6	մար. 7	
ԼԱ	582	30	*	11(2)	M 24	աճ. 24	M 29	աճ. 29	
ԼԲ	583	31	*	12(3)	A 12	մար. 13	A 18	մար. 19	
ԼԳ	584	32	*	14(3)	A 1	մար. 3	A 2	մար. 4	
ԼԴ	585	33	*	14(5)	M 21	աճ. 22	M 25	աճ. 26	
ԼԵ	586	34	*	15(6)	A 9	մար. 11	A 14	մար. 16	
ԼԶ	587	35	*	16(7)	M 29	աճ. 30	M 30	մար. 1	
ԼԷ	588	36	*	17(8)	A 17	մար. 20	A 18	մար. 21	
ԼԸ	589	37	*	18(9)	A 6	մար. 9	A 10	մար. 13	
ԼԹ	590	37	*	19(10)	M 25	աճ. 27	M 26	աճ. 28	

Բերենք Անանիա Շիրակացու և Հովհաննես Սարկավազի Զատկի մեկնություններից համարժեք տեղեկությունները, որոնք վերաբերվում են էսայանների ՇԼԲ-ին:

**Շիրակացի**

«Բայց էսասանք որ զգուղղել՝ ԻԳ-Ռ. Վ.) Գիսան կարգեցին գլուխ բոլորի, եւ ոչ աղարտեցին գառաջինն, բայց զի տոմարն Անդրեասեան երկերիս ամացն յերիս (ուղղել ի Դ(4)-Ռ. Վ.) Գիսան սպառեցաւ եւ սկիզբն հինգհարիւրեկին ի երեք (ուղղել՝ ԻԳ-Ռ. Վ.) Գիսան եղև. վասն այնորիկ եղ ի գլուխ բոլորի. ոչ ի սկզբանէ ելիցն եւ խաչելութեան, այլ անիս իսկ հինգհարիւրեակ բոլորին բայց խոստովանեցին գլուխ բոլորի զչորեքտասան Գիսան, զհրամայեալն ի Տեառնէ, որում եւ մեք հետեւեցուք» (Անանիա Շիրակացու մատենագրությունը, էջ 299):

**Սարկավազ**

«Բայց էսասանքն, որ ԻԳ (23) Գիսանայ կարգեցին գլուխ բոլորին և զայլոց ազգացն՝ որ անա հանդիպին, ոչ թէ զնա խոստովանեցան և համարել գլուխ բոլորին և ոչ աղարտեցին գառաջինն: Այլ վասն զի տամար Անդրեասայ երկու հարիս ամացն ի չորս Գիսան սպառեցա: Եւ սկիզբ Օեակ բոլորին ի քսան և երեք Գիսանայ եղև, վասն այնորիկ զնա եղ գլուխ բոլորին ոչ միայն ի սկզբանն, և ելից և խաչելութեան այլ միայն ամիս, իսկ հինգհարիւրեակ բոլորին: Բայց խոստովանեցին գլուխ բոլորին զԺԴ Գիսանայ հրամայելոյն ի Տեառնէ, որում մեք հետեւեցուք» (Հովհաննես Իմաստասերի մատենագրությունը, էջ 275):

Անանիա Շիրակացու և Հովհաննես Սարկավազի համարժեք վկայություններից՝ ավելի լավ պահպանված Սարկավազի մոտ, որի միջոցով վերականգնել ենք Շիրակացու մոտ տեղ գտած գրչական սխալները, չի հասկացվել մինչև վերջերս կամ բացատրվել է առնվազն անհասկանալիորեն<sup>1</sup>: Այդ տվյալներից հետևում է, որ էսայաններն իրենց ստեղծած 532-ամյակի սկիզբը սկսել են 553 թ. երբ լուսնի լրումը Նիսան 23 (= Ապրիլ 13) էր (տե՛ս վերը բերված զատկացուցակը), շարունակելով Անդրեասի 200-ամյակը՝ ավարտը 552 թ., երբ լուսնի լրումը Նիսան 4 (= Մարտ 25) էր, սակայն իրենց կազմած ՇԼԲ-ի առաջին տարին խոստովանել են 562 թ., երբ 19-ամյակի հետևապես ՇԼԲ-ի 1-ին տարվա լուսնի լրումն ընկել է Նիսան 14 (= Ապրիլ 4) -ին և տոմարական հաշվումները հատկապես վերադիրների համակարգը և այլ տոմարական մանրամասներ, սկսել են գործադրել 19-ամյակի 1-ին տարվանից: Այդպես են վարվել նաև հայերը, երբ ընդունեցին էսայան ՇԼԲ-ն և համադրեցին հայոց շարժական տոմարի հետ՝ ստեղծելով հայոց թվականության համակարգը և հետագայում հաշվով ստացան հայոց 1 և 10 տարեթվերը: Ասենք նաև, որ էսայաններին՝ 532-ամյակի (19 × 28) օրինաչափություններն գտնելուց

<sup>1</sup> Է. Աղայան, Ակնարկներ... էջ 155-156:

հետո դժվար չէր հետադարձ հաշվով սկսել Անդրեասի 200-ամյակի ավարտից հետո, երբ լուսնի լրումը Ապրիլի 13-ին էր և 19-ամյակի 11-րդ տարին (կամ 19-ամյակի ցանկացած համարից), որովհետև այդ միջանկյալ տարիների համար նրանք կարող էին օգտագործել 19-ամյակի կանոնները: Այդպես վարվեցին Անդրեասի 200-ամյակի հետ կապը չկտրելու համար այսինքն՝ նրա Զատկացուցակը շարունակեցին: Սակայն չակոր Ղրիմեցու արտահայտությունը «դարձ արեգական և լուսնի ի միում ամի»-ն չէր կարող լինել 19-ամյակի ցանկացած տարուց, այլ միայն որոշակի տարիներից, այն է՝ Ապրիլ 4, Ապրիլ 6(5), Ապրիլ 2 (նաև Մարտ 25), քանի որ արևային տարին իր շրջապտույտը սկսել է խոյի համաստեղությունից Մարտի 20-ից և լուսնային տարին պետք է համապատասխանեցնեին նրան այդ սկզբից: Պատահական չէ, որ էսայանները ընտրեցին 19-ամյակի Ապրիլի 4-ի տարուց, իսկ Իրեոնը՝ Ապրիլի 5-ի, որն էսայանների մոտ Ապրիլ 6-ի տարին էր: Հաշվի էր առնվել նաև քրիստոնեական գաղափարախոսության սկզբունքային հարցերը այն է՝ արարչության առաջին օրվա (Մարտ 17) և մարդու ստեղծման (Նիսան 1 = Մարտ 22), ինչպես և Ելից և Քրիստոսի խաչելության հետ կապված ավանդությունները: Այլ խոսքով էսայանների ՇԼԲ-ի հատկապես 19-ամյակի առաջին տարին Ապրիլ 4-ից սկսելու անհրաժեշտություն էր: Այդպես էր նաև մյուս ՇԼԲ-ների համար, որոնք սկսել են Ապրիլ 2-ից, Ապրիլ 5-ից, բացառությամբ Մարտի 25-ի տարբերակը: Ինչ խօսք, եթե էսայանները ՇԼԲ-ի օրինաչափությունները հայտնաբերեին 562 թվականից ավելի ուշ, ապա նրանց ՇԼԲ-ն կսկսվեր կրկին Ապրիլ 4-ի լուսնի լրումից և Անդրեասի 200-ամյա Զատկացուցակի հետ կապը չկտրելու համար հետագայում հաշվով ՇԼԲ-ի սկիզբը կընտրեին Անդրեասի 19-ամյակի 11-րդ տարին, երբ լուսնի լրումը Ապրիլի 13-ին էր, միայն այդ դեպքում ոչ թե 9 տարի ետ կգնային, այլ ավելին, ինչպես վարվել է Շիրակացին, երբ իր կազմած ՇԼԲ-ի առաջին տարին համարել է 581 թվականը՝ լրումը Ապրիլ 4-ին, իսկ սկսել է Անդրեասի 200-ամյակից հետո եկող տարուց, ինչպես էսայանները, այսինքն 28 տարվա անջրպետով, բայց ՇԼԲ-ի և հայոց թվականի օրինաչափությունները չխախտելու պատճառով հաշվումներն սկսել են նույնպես էսայանների հետ Ապրիլի 13-ից և 4-ի լուսնի լրման տարիներից: Այսպիսով էսայանների ՇԼԲ-ն 562 թվականից սկսելը հատկապես Ապրիլ 4-ի լուսնի լրումից, այսինքն իրենց ընտրած 19-ամյակի առաջին տարուց, սկզբունքային նշանակություն ուներ որպեսզի 532-ամյա (19 × 28) շրջապտույտի տարիները կրկնվեին նույնությամբ հաջորդ ՇԼԲ-ների ժամանակ:

Մինչև էսայանների ՇԼԲ-ի մասին հայ մատենագրության մեջ պահպանված մյուս վկայությունների վերլուծությանն անցնելը մեկնաբանենք Շիրակացու մոտ եղած մի քանի հարցեր, որոնք կարևոր նշանակություն ունեն առաջադրած խնդիրները լուծելու համար:

Նա գրել է. «Եւ մի փոխեսցուք զսահմանս հարցն եւ մի ընկալցուք զչորեքտասան լուսնի ի հինգ ապրեղի, այլ զկարգեալն ի սրբոց հարցն եւ մի դիցուք այդ լրումն գլուխ բոլորի, բայց զհրամայեալն ի Տեառնէ զչորեքտասան նիսան եւ զայլոց ազգաց որ նմայն Հանդիպին»<sup>1</sup>: Ինչպես տեսանք էսայանները ՇԼԲ-ն սկսել էին Անդրեասի 19-ամյակի 11-րդ տարուց, երբ լուսնի լրումը Նիսանի 23-ին (Ապրիլ 13) էր, սակայն առաջին տարին խոստովանել էին Նիսան 14-ը (Ապրիլ 4), որոնք իրարից ունեին 9 տարվա անջրպետ, իսկ Իրեոնը, իրեն 19-ամյակի առաջին տարին դրել էր Նիսան 15 (= Ապրիլ 5)-ին, որն էսայանների մոտ Նիսան 16 (Ապրիլ 6) է: Վերջինս Ապրիլ 4-ին ունի 9 տարվա հեռավորություն, իսկ Ապրիլ 13-ից՝ 18, այսինքն էսայան ՇԼԲ-ի սկզբին հետևապես հայոց թվականի առաջին տարում լուսնի լրումը եղել է Ապրիլ 13-ին, էսայանները ինչպես և հայերը խոստովանել են Ապրիլ 4-ը, իբրև առաջին տարի, իսկ Իրեոնը Ապրիլ 5-ը է ընդունել 19-ամյակի առաջին տարի: Վերջինիս ընդունած ամսաթիվը, որն էսայանների 19-ամյակի մեջ Ապրիլ 6-ն էր փաստորեն մեկ օրվա տարբերությամբ և սկիզբ

<sup>1</sup> Անանիա Շիրակացու մատենագրությունը, էջ 299:

Համարած ՇԼԲ-ի նզովքի է արժանացել ըստ Շիրակացու, որովհետև «Քանզի իբրև դեպի ի շաբաթու հինգ ապրեղի ըստ Իրոնական թուոյն, Համարին զնա լրումն, եւ ի վեց ապրեղի առնեն զգատիկն, որ դիպի ի վեչտասան նիսան եւ փաւնեն զոյգ ընդ հրէից, ստուենկնեալ Հարցն նզովից»<sup>1</sup>:

Ի դեպ քրիստոնեաները հրեաներից զատվել էին և նրանց նման Չատիկը չէին կատարում թերևս Նիկիայի ժողովից (325 թ.) և Անդրեասի 200-ամյակի 1-ին տարուց, այն է 353 թ. Հետո: Իսկապես 570 թ., որը համարժեք է Հայոց 18 թվականին, երբ ՇԼԲ-ի սկսելու 18-րդ տարին էր և հասյան 19-ամյակի 9-րդ տարին, իսկ Իրեոնի 19-ամյակի առաջին տարին, լուսնի լրումն ընկավ Ապրիլ 5-ին օրը շաբաթ, ըստ Իրեոնի կատարած փոփոխության, և Ապրիլ 6-ին կիրակի կատարեցին Չատիկը, ինչպես ասում է Շիրակացին հրեաների և այլ հերձուածողների նման: Ապրիլի 5-ին լրման օր լինելը և Ապրիլ 6-ին Չատիկ կատարելը հաստատվում են Ֆ. Գինցելի և Վ. Գրյունելի հաշվումների հիման վրա կազմած ժամանակագրությունների — զատկացուցակների տվյալներով<sup>2</sup>: Միայն նշենք որ անհասկանալիորեն Վ. Գրյունելը ուշ նեստորական և Հակոբիկների ավանդությունների, այն էլ անորոշ տվյալների հիման վրա հաշվել, ստացել և նախընտրել է ինչպես հասի, այնպես էլ Իրեոնի Մարտի 25-ի լուսնի լրման տարին, որպես նրանց 19-ամյակի հետևապես ՇԼԲ-ի առաջին տարի<sup>3</sup>: Դեռ ավելին նա չի ընկալել Անանիա Շիրակացու աներկմիտ վկայությունը այն մասին, որ հասի 19-ամյակի առաջին տարին սկսել է Ապրիլ 4-ի լուսնի լրման տարուց, իսկ Իրեոնին՝ Ապրիլ 5-ի, որը հասի 19-ամյակի Ապրիլ 6-ի լուսնի լրման տարին էր, թեև նրան հայտնի է եղել է. Դյուլորեի բացատրությունը, ինչպես և հայկական սկզբնաղբյուրների տեղեկությունները:

Այդպիսի Չատիկ օրեր Իրեոնի ՇԼԲ-ում եղել է 4 անգամ 570 թ., 665 թ., 760 թ., և 1007 թ.: Դրանցից երկրորդը ինչպես նկատելի է, ընկել է Շիրակացու ժամանակ, այն է՝ 665 թվականին (Հայոց 113 թվականին): Հասյանների մոտ ի տարբերություն Իրեոնի լուսնի լրումը դրել էին Ապրիլ 6-ին, ընկավ կիրակի օր, որի հետևանքով Չատիկը կատարեցին Ապրիլի 13-ին, այսինքն հաջորդ կիրակի: Կարծում ենք, նաև այդ է պատճառը, որ նախապատվությունը տրվեց հասյանների ՇԼԲ-ին, երբ Իրեոնինը Բյուզանդիայում թագավորի հրամանով ընդունել էին բոլորը: Այս իրողությունը գտել է իր արձագանքները Հայ մատենագրական բնագրերում և նույնիսկ Հետագա ծագատիկները մեծ վեճերի տեղիք են տվել, որոնց կանգրդառանք այլ առիթներով:

1999 թվահամարի գրչագրում, ընդօրինակված 1126 թ. «Ի նոյն խորհորդ վասն Չատիկ» վերնագիրը կրող բնագրում, որն օգտվել է վաղ շրջանի աղբյուրներից, գրված է. «Յորժամ անցեալ էր երկերիւր ամ Անդրեասի տումարին յետ ժ ամի, որպես կարծեն ոմանք, եթէ սխալ եղեն, ժողովեցան յԱղեքսանդրիայ մայրաքաղաք ուսումնասիրաց ի ժ (բնագրում ժԹ) թուականին կարգեցին զաւրինակ չորեքժան լուսնին ՇԼԲ ամաց ոչ աղարտելով զվաղընջուց դրոշմեալն ինն և ժ երբեակն. այլ ի նոյն դասելով, զի անտրտում եւ անստուեր տպաւորեալ կացցէ դրութիւնն: Իսկ ի ժԼ թուականին ներոն (կարգա՝ Իրեոն) անուն ժամանակագիր հերձուածող ի բաց ընկեց զ թ և ժ երբեակ սրբոյն Պանփիւղայ և զ Զ-ն Ապրիլի ի Ե փոփոխեց, եւ վերադիր լուսնին, զհնգեթակ եւ զվեցեակն ի բաց պատառելով զճշմարտութիւն ոչ զամենայն թ եւ ժ երբեակն այլ միայն ՂԵ ամի, զի այլ թ եւ ժ երբեակն թէպէտ թուով զատան, սակայն կատարմամբ պատեքին զմի առնեմք, զի աւարտուեն շաբաթուն կիրակէն է: Իսկ ի շաբաթուն դիպելով Ե-ն

Ապրիլի կատարի Չատիկն ըստ ներոնի, իսկ ի սրբոյն Պանփիւղայ ի Զ-ն Ապրիլի լրումն, որ է միաշաբաթի անցուցանէ ի միւս կիրակէն, որ լինի Ապրիլի ժԳ (բնագրում՝ ժԴ ուղղումը մերն է)»<sup>1</sup>: Ինչպես նկատեցիք այն մատենագրական ուշ շրջանը արձագանք է հիշյալ իրողության, այսինքն՝ Իրեոնի փոփոխության, որը պատշաճ մակարդակով մեկնել է Շիրակացին, միայն այստեղ 18 թվականի (= 570 թ.) հիշատակությունն է հետաքրքրական: Թեև անունները փոփոխված են, բայց խոսքը գնում է հասյան ՇԼԲ-ի մեջ կիրառված 19-ամյակի ապրիլ 6-ին և Իրեոնի ՇԼԲ-ի Ապրիլ 5-ի լրման մասին, նաև ըստ «Պանփիւղայ». այսինքն Եվսեբիոս Կեսարացու անունն է տվել հեղինակը և դա սխալ չէ, որովհետև հասյանները օգտագործել են նախնիների 19-ամյակը, որոնց թվում Եվսեբիոս Կեսարացու կիրառածը: Հարկ է նշել, որ ծագատիկները եղել են ոչ միայն 95 տարին մեկ, այլ՝ 247: Այսպես 2-րդը 1-ից և 3-րդը 2-րդից տարբերվում են 95 տարով, սակայն 4-րդը 3-րդից տարբերվում է 247 տարով: Դա հասկանալի է, որովհետև 19-տարին մեկ լրումը Ապրիլի 5-ն է գալիս, բայց շաբաթվա օրը տարբերվում է:

Հարկ է նշել, որ է. Աղայանը բերել է Վանական վարդապետի մի հաղորդում կապված Իրեոնի առաջին եղծման թվականի հետ, որը գրչական սխալի հետևանքով դարձել է ութ, ութև տասանի փոխարեն մանավանդ բնագրի բովանդակությունը հուշում է այդ ուղղումը չի բացատրել այն ըստ Վանական վարդապետի՝ «Քանզի յետ ութ(և տասան) ամի իմաստասիրացն, ապա երևեցաւ եղծումն իրացն և Հայք յԱղդէէ Գամրացի իմաստասիրէ՝ յառաջ առեալ էին զուղղորդն և յայնժամ ընդ պարսից տիրապետութեամբ գոլով չանկան յեղծումն նոցա: Եւ էր այն ի տասն թուականին Հայոց»<sup>2</sup>: Վանական վարդապետի հիշյալ վկայությունից հետևում է, որ 562 թ., այսինքն Հայոց 10 թվականին հայերը Աղդէ Գամրացուց ստացել էին ՇԼԲ-ն՝ Չատկացուցակը, որտեղ ի տարբերություն Իրեոնի Չատկացուցակի Ապրիլ 6-ին էր դրված լուսնի լրումը, իսկ Իրեոնի մոտ՝ Ապրիլ 5-ին: Հայոց 18 թվականին կամ ՇԼԲ-ի 18-րդ տարում, այն է՝ 570 թ. «Երևեցան եղծումն իրացն», այսինքն Ապրիլ 5-ին լրման օրը եկավ, իսկ Ապրիլ 6-ին կատարեցին Չատիկը, որն ընդունելի է էր հայերի համար, իսկ վերջիններս քանի որ առաջնորդում էին հասյան ՇԼԲ-ով, որտեղ այդ տարի լրումն ընկավ Ապրիլ 6-ին, կիրակի, իսկ Չատիկը կատարեցին Ապրիլ 13-ին հաջորդ կիրակի ըստ սովորության: Վանական վարդապետը նկատի է ունեցել այս իրողությունը: Բացի այդ, ինչպես կտեսնենք առաջիկա վերլուծության մեջ, Հայոց 10 թվականից, որը համարժեք է 562 թվին կիրառության մեջ մտավ հասյան ՇԼԲ-ն, որի խմբի մեջ հնարավոր է որ եղած լինի Աղդէ Գամրացին, որի անունը Շիրակացու մոտ չի պահպանվել, բայց նրան հիշում են և Հակոբ Ղրիմեցին և Կիրակոս Գանձակեցին: Բայց Անանիա Շիրակացին «Քննիկոն»-ի մեջ մեկնել է ութ ազգերի տոմարները (գումարած Հայոցը որպես 9-րդ), որոնց անունները հական է հանվան է բերել է Քրիստոսի Մննդեան և Յայտնութեան ճառում համապատասխան ամսաթվերով: Իսկ այդ ազգերի ներկայացուցիչների անունները տվել է հասյանների ՇԼԲ-ի ստեղծման պատմության կապակցությամբ: Հավանաբար Վանական վարդապետը շփոթել է Աղդէի Եթովպացու հետ (դարձնելով Գամրացի) մանավանդ գամրացոց տոմարը Շիրակացին չի քննել) և նրան հետևել են Կիրակոս Գանձակեցին ու Հակոբ Ղրիմեցին: Հնարավոր է մտածել նաև, որ Վանական վարդապետին, ինչպես և Կիրակոս Գանձակեցուն ու Հակոբ Ղրիմեցուն հայտնի են եղել մի ավանդություն, որի համաձայն հայերին Աղդէ Գամրացին է ծանոթացրել հասյանների ՇԼԲ-ին, բայց այն կարող էր լինել ուշ շրջանի տարբերակ, որովհետև Անանիա Շիրակացին չգիտի այդ մասին, մանավանդ որ նա անուն առ անուն բերել է ութ ազգերի ներկայացուցիչներին, այսինքն՝ իր մեկնած տոմարների հեղինակներին, որոնք մասնակցել են Աղեքսանդրիայի ժողովին, որին գլխավորում էր հասը: Իսկ Հայոց մատենագրության մեջ

1 Անանիա Շիրակացու մատենագրությունը, էջ 297:

2 St' u Ginzl, Handbuch der mathematischen und technischen Chronologie, III band, Leipzig, 1914, p. 411-421, V. Grumel, La Chronologie Traite d'Etudes Byzantines I, Paris, 1958, p. 270, Ն. Բաղայան, Օրացույց պատմություն, Երևան, 1970, հավելված II, էջ 473:

3 St' u V. Grumel, La Chronologie p. 54-55, 48-102, 103-108. 140-145:

1 Ձեռ. N° 1999, էջ 20ա-բ:

2 St' u Է. Աղայան, Ակնարկներ..., էջ 157:

Հայտնի մյուս ազգերի տոմարները մեկնել է Հովհաննես Սարկավազը, որի հայտնի բնագրերում նույնպես բացակայում է Ազդէ Գամրացու անունը:

Այժմ քննարկենք հայկական սկզբնաղբյուրների նաև այլ տեղեկություններ, որոնք պահպանել են էասյանների ՇԼԲ-ի ստեղծման և գործադրման ժամանակի մասին տվյալներ: Այս իմաստով հայկական բնագրերի տվյալները բաժանվում են հիմնական չորս խմբի, որոնք ներկայացնում են տարբեր ժամանակագրական շերտեր: Բերենք հնագույն խմբի վկայությունները: Անանիա Շիրակացու «Ժամանակական կանոն»-ում գրված է. «Եւ ի նորին (Հուստինիանոսի - Ռ. Վ.) երեսներորդ եւ ի չորրորդ ամի կարգեցին Աղեքսանդրացիք զինն եւ տասն չորեք-տասներորդն զատկաց՝ քսան եւ ութեակ շրջագայութեամբ ՇԼԲ ամաց բոլորակն եւ ի նոյն թագաւորի քսան (եւ Ե) երորդ ամի՝ Հայ թուականն կարգեցաւ»<sup>1</sup>:

Մ. Չամչյանը բերել է Վենետիկի ձեռագրատանը պահվող հին ճառերնորներից մեկի տեղեկությունը, որը հիմնականում համարժեք է վերոհիշյալին միայն որոշ համառոտամբ, այն է՝ «ի նոյն ԼԴ ամի (Հուստինիանոսի - Ռ. Վ.) կարգեցին աղեքսանդրացիք զինն և տասներեակն չորեքտասներորդ ՇԼԲ ամացն զբոլորակն և ի նոյն թագաւորի ԻԵ. Հայոց թուականն կարգեցաւ»<sup>2</sup>:

Ըստ 5254 թվահամարի գրչագրի.

«... և յԼ[Դ] ամին նորա (Հուստինիանոսի - Ռ. Վ.) կարգեցին Աղեքսանդրացիքն զուսնացոյցան զՇԼԲ ամաց բոլորակն»<sup>3</sup>:

Ասողիկի մոտ գտնուում ենք հետևյալ տեղեկությունը. «Յուստինանոս ամս ԼԷ ի սորա չորեքտասներորդն կարգեցաւ թուականս Հայոց ի Դունայ ժողովին, ի սորա ԻԳ ամին կարգեցին Աղեքսանդրացիքն զինն և տասներեակն (տարընթերցված՝ զինն և տասներակն) զչորեքտասաներորդն (տարընթերցված՝ չորեքտասներորդն) Չատկաց ԻԼ շրջագայութեամբ»<sup>4</sup>:

Ակնհայտ է, որ վերը բերված վկայությունների նախնական սկզբնաղբյուրը Անանիա Շիրակացու «Ժամանակական կանոն» է: Քանի որ Շիրակացու իսկ կողմից բերված տոմարական ստույգ ամիս-ամսաթվերով ստացանք էասյան Շ. եակի սկիզբը և ընդունած առաջին տարիները, այն է՝ 553 և 562 թվականները, ուստի Հուստինիանոսի 25 և 34 տարիները համարժեք են ընդունել այդ տարեթվերին: Միայն նշենք, որ «Հայ կամ Հայոց թուականն կարգեցաւ»-ի տակ պետք է հասկանալ Հայոց թվականության սկիզբը (Հավանաբար Շիրակացին նկատի է ունեցել Պատճենի թվականի կանոնը), որի հիմնավորումը կտրվի հետագա շարադրանքում: Հարկ է շեշտել, որ Ասողիկը օգտվելով Շիրակացու «Քննիկոնից» փոխել է Հուստինիանոսի տարեթվերը. այն է՝ 14 և 23, որոնցից առաջինը քաղել է «Սակս ժողովոց...»-ի հեղինակից<sup>5</sup>, իսկ երկրորդ տարեթիվն ինքն է ստացել իմանալով էասյան ՇԼԲ-ի, որը նույնն է ինչ Հայոց թվականության սկզբի և էասյան ՇԼԲ-ի ընդունած առաջին տարվա 9 տարվա տարբերությունը: Ի դեպ քննարկվող տարեթվերի տարբերությունը (562-553, 34-25 և 23-14), որը հավասար է 9-ի այդ է հաստատում, բացի դրանից մատնանշում է հետագայում ստացված Հայոց 1 և 10 թվականները:

Հարկ է նշել, որ Հակոբ Ղրիմեցին տոմարի մեկնության մեջ բերել է Շեակին վերաբերվող Հուստինիանոսի 34 տարին խառնելով Շեակի, Անդրեասի 200-ամյակի ավարտի և Հայոց թվականի սկզբի հետ: Նա գրել է. «Եւ վասն Հայոց թվականիս իմայ, զի ոմանք գրեալ են զվախճան

Մեկին Անդրեասայ և զսկիզբն թվականիս Հայոց և զՇեակ բոլորին լինել յԼԱ ամի թագաւորութեան Յուստինանոսի ամբարիշտ կայսերն եւ ի ԻԴ Խոսրովու պարսից արքային եւ այլք յԼԴ-ն եւ ոմանք յԼԶ-ն և այլք աւելի և նուազ...»<sup>1</sup>:

Հակոբ Ղրիմեցին չփոթել է բոլոր տարեթվերը: Նախ Խոսրովի 24-րդ տարին (= 531 + 24 = 555 թ.) համարժեք է Հուստինանոսի 31-րդ տարուն (= 527 + 31 = 558 թ.), երբ ելնում ենք այժմ ընդունված գիտական ժամանակագրությունից: Բացի այդ Խոսրովի 24-րդ տարին Դվինի ժողովի տարին է: Ասենք նաև, որ 17-րդ դարի Հայ անանուն ժամանակագիրը կրկնել է վաղ վկայություններից ոմանք, որոնց թվում «երեսուն (եւ երեք Ուստինանոսի կայսերն Յունաց»-ը<sup>2</sup> էասյան ՇԼԲ-ի համար, սակայն կատարել է ԼԴ-ն ԼԳ-ի փոխելու սովորական համարվող գրչական սխալ:

Այսպիսով սկզբնաղբյուրների հիշյալ տեղեկությունների խումբը էասյան ՇԼԲ-ի սկիզբը կապել են Ապրիլ 13-ի լուսնի լրման, այն է՝ 553 թվականի, ինչպես և Հուստինիանոսի 25-րդ տարվա հետ և համարել են Հայոց թվականության սկիզբ, որը հետագարժ հաշվի արդյունք է, իսկ էասյան ՇԼԲ-ի դավանած առաջին տարին, որը սկսել է 19-ամյակի 1-ին տարվա Ապրիլ 4-ի լուսնի լրումով, այն է՝ 562 թվականը, որը համարել են Հուստինիանոսի 34-րդ տարվա հետ և համարել են ՇԼԲ-ի ստեղծման և գործադրման տարին:

Հայ սկզբնաղբյուրների հաջորդ խումբը, որոնք ավելի ուշ են ստեղծվել, էասյանների Շ-եակի ստեղծման և գործադրության սկիզբը կապել են Հայոց 10 թվականի հետ. այն է ներկա 562 տարու: Դրանցից հնագույնը Անանիա Շիրակացու տոմարի մեկնության խմբագրության մեջ է, որտեղ Շիրակացուն պատկանող բնագրինը անուղղակի տվյալ է, իսկ խմբագրված հատվածինը, որը կատարվել է Հովհաննես Սարկավազից հետո, որովհետև կապվում է Հայոց անշարժ տոմարի հետ, ուղղակի վկայություն է Հայոց տաս թվականի<sup>3</sup> Հովհաննես Սարկավազը հստակ վկայել է. «Ի տասն թուականին եղաւ հինգ ձեակն»<sup>4</sup>:

«Սամուէլ քահանայի հավաքումն գրոց պատմագրաց յաղագս գիւտի ժամանակաց անցելոց մինչև ներկայս ծայրաքաղ արարեալ» բնագրի ընդօրինակության մեջ կարդում ենք. «Աստանաւր լցեալ լինի ամք ի ծնընդենէն Քրիստոսի ՇԾԳ, յորում և բովանդակեցան կանոնք Մեկի Անդրեասայ գորոյ զկնի կարգեցաւ թվական (տպագրում՝ թուականս) Հայոց այսպիսի պատճառաւ ի լրման Մեկի լրումն Չատկի ի Մարտի ԻԵ էր և սկզբանն Ապրիլի Դ: Եւ վասն զի ոչ ի սկիզբն կարասցին գնալ, զի յետ ԻԵ-ին ԺԳ էր Ապրիլի և Թ լրմունք ի մեջ: Եւ այնր աղագաւ սկսան շփոթել տաւնք ամենայն և արհեստ իրողութեան որ (տպ. որպէս) ասացաւ: Ապա յիմաստունք ժամանակին ի միասին եկալ կարգեցին թվական Հայոց, որով ուղղեցեն Չատկին Տեառն. այլովք հանդերձ: Բայց ոչ կատարեալ ճշմարտութեան կալան սխալ զամս Թ (տպագիրը՝ բայց ոչ կարացեալ ի ճշմարտութեան կալ անսխալ զամս Թ): Իսկ ի Ժ երրորդ թվականին էաս անուն իմաստուն մտաւք ժողովեաց, առ ինքն արս կորովամիտս և յիմաստունս և կարգեցին զանտարակուսելի աւրինակն որ Շեակն կոչի: Այս է պատճառն թվականին Հայոց, զոր ի կարգ կանոնացս արմարեսցուք (տպ. յարմարեսցուք), վասն դիւրայհասութեան ժամանակաց»<sup>5</sup>:

Սամուել Անեցու վկայակոչած լուսնի լրման ամսաթվերով, ինչպես վերը կատարեցինք, հեշտութեամբ որոշվում են ներկա թվականները, այն է՝

1 Անանիա Շիրակացու մատենագրությունը, էջ 296:  
2 Մ. Չամչյան, ՊՀ, հ. 2, էջ 511:  
3 Ձեռ. № 5254, էջ 202:  
4 Ասողիկ, էջ 141:  
5 Տե՛ս Գիրք թղթոց, Թ.. 1901, էջ 221:

1 Ձեռ. № 1114, էջ 160ա:  
2 Մանր ժամանակագր. հ. 1, Ե., 1951, էջ 255:  
3 Տե՛ս Անանիա Շիր., Տիեզ. և Տոմար, Ե., 1940, էջ 81 և 87:  
4 Մանր ժամանակագր. հ. 1, էջ 23:  
5 Ձեռ. № 6644, էջ 144ա-բ, Սամուելի քահանայի Անեցոյ, Հավատմունք ի գրոց պատմագրաց..., Վաղարշապատ, 1893, էջ 741-51:



1. 552 թ. = Մարտի 25 = Անդրեասի 200-ամյակի ավարտը
2. 533 թ. = Ապրիլ 13 = Հայոց թվականի սկիզբը
3. 562 թ. = Ապրիլ 4 (Ապրիլ 13(1) + 9 = 10) էասյան Շեակի ստեղծման և գործադրման տարին, Հայոց 10 թվականը:

Սամուել Անեցին հետևելով իր վարդապետ Գևորգ Մեղրիկին Հայոց մեկ թվականը վեր է ածել քրիստոնեական Հայկական 554 թվականի. իսկ 10 թվականը կլինի 563-ը: Սամուել Անեցու տեղեկությունների մի մասը կքննարկենք քիչ ուշ, միայն ասենք, որ նա էասյան Շեակի գործադրման սկիզբը փաստորեն համարել է 562 ներկա թվականը:

«Յաղագս տարեմտին ի Վանական վարդապետեն ասացեալ» մեկնության ընդօրինակություններից մեկում գրված է. «Իսկ (ի) թագաւորութեան Յուստիանոսի ամբարըւշտի, որ զՏեառնընդառաջն ի Փետրուարի յերկուսն փախեաց, Մեակն Անդրայ (կարդա՝ Անդրեասի) լցաւ, և պիտոյ էր գլուխ ՇԹժեկ կանոնին, և ինն ամ խափան եկաց տուժար և զտաւն: Ապա էասս իմաստասէր յԱղեկսանդր(իա) ժողովեց առ ինքն Լ[Զ] այր(ք) իւր նմանք և յառաջ վարել զարուեստն Անդրայ, արարին զՇԼԲ ամաց լրումն ի նոյն դառնալով: Վասն այն անտարակուսելի է բոլորն այն: Բայց զԻրոն՝ իմաստասեր ի դրան թագաւորին ոչ կոչեցին»<sup>1</sup>:

Վանական վարդապետի ակնարկն Հայոց 10 թվականի մասին է, երբ, ըստ նրա, ստեղծվեց էասյանների ՇԼԲ-ն:

Բերենք Կիրակոս Գանձակեցու տեղեկությունները. «Եւ յերրորդ ամի նորա (Մովսէսի, երկու ընդօրինակություն մեջ՝ Հովհաննեսի - Ռ. Վ.) լցեալ լինի ի ծննդենէն Քրիստոսի ամբ ՇԾԳ, և բովանդակեցաւ կանոնք երկերիւրեկին, զոր կարգեաց իմաստասերն Անդրէաս, եղբայր Մանգնոսի եպիսկոպոսի հրամանաւ Կոստանդնի կայսեր վասն լրմանցն զատկաց և այլ տօնից. զի իբրև լցաւ երկերիւր ամ, լրումն զատկին մարտի ԻԵ էր և ի սկզբանն ապրիլի Դ, և զի ոչ ի սկիզբն կարգացին գնալ, զի յետ ԻԵ ին ԳԺ-անն էր ապրիլի և Թ լրմունք ի մեջ կային և այնր աղագաւ սկսան շփոթել տօնք և ամենայն արհեստք տոմարականք:

Ապա Հայրապետն Մովսէս (երկու ընդօրինակություն մեջ՝ Հովհաննէս) ժողովեաց զիմաստունսն, որ էին ի ժամանակին, յորս էր և Աթանաս ի վանաց սուրբ Կարապետին, և կարգեցին թուական Հայոց, որով ուղղեցեն զգատիկ տեառն այլովքն հանդերձ: Բայց ոչ կարացեալ կալ ի ճշմարտութեան անսխալ զամս ինն: Իսկ ի տասներորդ թուականին էասս ոմն անուկ Աղէքսանդրացի, այր կորովի և իմաստուն, իբրև ետես զայնպիսի շփոթումն, որ ամենայն եկեղեցիս, ձայն արկեալ առ ինքն հաւաքեաց զամենայն իմաստունս, որ յամենայն ազգաց զԱղղէ՝ ի Գամրայ, զԳրգան՝ յԱսորւոց, զԵլոգոս՝ ի Յունաց, զՓենեհէս՝ ի Հրէաստանէ, զՅոհան՝ յԱրարիոյ, և այլ արս երեսուն և վեց իւր նմանիս և այլ բազմութեամբ, և յառաջ վարեալ զարուեստն Անդրէասի (երկու ընդօրինակություն մեջ՝ Անդրէի) ՇԼԲ այլ ի նոյն դարձաւ: Ապա կարգեցին զանտարակուսելի օրինակն, որ հինգհարիւրեակն անուանի, բազմիմաստ և անսխալ, գլուխ եղեալ բոլորին զԴն ապրիլի, զի իբրև աւարտի ՇԼԲ ամն. այլ ի նոյն դառնայ: Եւ սկսան ուղղիլ ամենայն տօնք և արուեստք իրողութեան»<sup>2</sup>:

Կիրակոս Գանձակեցու մյուս հարցադրումներին և հատկապես շփոթմունքին կանդրադառնանք հետագա շարադրանքի մեջ: Վերը բերվածի մեջ կարևորն այն է, որ նա հետևելով առանձնապես Սամուել Անեցուն և նրա բերած լման օրերին ու քրիստոնեական Հայկական թվականին: Նա փաստորեն էասյանների Շեակի ստեղծման և գործադրման թվական է ընդունել Հայոց 10 թվականը, որն ինչպես տեսանք, ներկա 562 թվականն էր:

Ստեփանոս Օրբելյանը հետևել է վերը հիշված հեղինակներին և տվել որոշ նորույթներ: Նա գրում է. «Ի չորրորդում ամի Հայրապետութեան տեառն Մովսիսի՝ Հայոց կաթողիկոսի. ի տասներորդ ամի մարգարանութեան Հայոց Մծեթայ Գնունուոյ, մինչ էր Կենարարին թուականն 553, ի լրման երկու հարիւրեկին Անդրեասայ, յորում ամի էր լրումն զարկին ի մարտի ի 25, և սկիզբն բոլորին յապրիլի չորսն, ոչ կարացին գնալ ի սկիզբն. քանզի յետ քսան և հինգին տասն և երեքն էր ապրիլի և ինն լրմունք ի միջոցին պակաս գայր. այնր աղաջաւ սկսան շփոթիլ ամենայն տօնք տարւոյն:

Ապա հարկ եղև թուական Հայոց կարգել, զի նովաւ ուղղեցեն զտարակոյսն, զոր և ուղղեցին: Իսկ ի ձեռն էասսայ իմաստնոյ (այլ ընդօրինակություն մեջ. զոր և ուղղեցին իսկ ի տասն թուականին ի ձեռն էասս իմաստնոյ) որ կարգեաց զանտարակուսելի օրինակն հինգ հարիւրեկին՝ այլովք իմաստնովք Հայոց: Արդ ի կարգել թուականին մեծաւ ժողով ի Դուին քաղաքի, էր եպիսկոպոս Սիւնեաց տէր Վրթանէս, և իշխան՝ տէր Միհր Արտաշիր, որք միաբանեալ ընդ ժողովոյն յուղարկեցին իմաստուն վարդապետս և զկատարեալ գիտնականս իրեաց, և ուղղեցին զանտարակուսելի տոմարն...»<sup>3</sup>:

Ստեփանոս Օրբելյանը հիմնականում հետևել է Սամուել Անեցուն և Կիրակոս Գանձակեցուն (ինչպես և Ասողիկին) լման օրերին և քրիստոնեական Հայկական թվականի հարցերում և չհաշված Ստեփանոս Օրբելյանի շփոթմունքը, որից երկուսի մասին կխոսենք քիչ հետո, էականն այն է, որ նա էասյան Շեակի ստեղծման և գործադրության սկիզբը դրել է Հայոց 10 թվականին:

Ուշագրավ տեղեկություններ է տալիս Հակոբ Ղրիմեցին, այն է՝ «Ժամանակս ամբարիշտ արքային (լուսանցքում՝ ԹԳ (= թագաւորին) Յուստիանոսի եղև լրումն Մ ամի կարգացն Անդրիասու եւ սկսան շփոթել լրմունք զատկաց եւ գիրք արուեստական տուժարաց: Իսկ այր մի ի ճշմարտագունից ուսումնականաց յեգիպտական մայրաքաղաքէն յԱղեքսանդրեայ էաս անուն կոչեցեալ ձայլ արկել առ ինքն ժողովէ և հաւաքէ զարս կորովամիտս զԱղղայ ի Գամրաց, զՓենէս ի հրէաստանէ, զՅոհան ի յարարիոյ՝ զՅորբել յեթովպիոյ, զՍերգի Մակենդոնիոյ, զԳրգան ասորոց և այլ ԼԶ արամբք հաւատարմոք խորհին գտանելն դարձ արեգական և լուսնի ի միում ամի եւ գտին: Զայս լեալ ի ԻԼ ինն և ժերեակսն, ապա ղնեն զօր լրմանն ՇԼԲ ամի անսխալ զաւարտն գտեալ ի Մարտի ԻԵ եւ սկզբնաւորել յԱպրիլի ԺԳ-իցն եւ վասն զի անցեալ էր Թ ամ յիսկզբանէ բոլորին կարգեցին զԱպրիլի Դ-ն եւ ասացին թվական Հայոց Ժ, ուստի սահմանեցին երթալ ի թվին Թ եւ զայլն երթալ ԺԹ և Ի Դ-ից Ապրիլի գտանել զօր լրմանն»<sup>2</sup>:

Հիշյալ ամսաթվերով հեշտություններ ստանում ենք 553 թ. և 562 թ., որոնցից վերջինը համարժեք է Հայոց 10 թվականին, որը Հակոբ Ղրիմեցին ևս համարել է ՇԼԲ-ի ստեղծման և գործադրման տարեթիվ:

Գրիգոր Կամախեցու խմբագրած ժամանակագրության մեջ կարդում ենք «Եւ Հայոց թվականին Ժ կարգեցաւ հինգ հարիւրեակն, որով ուղղեցաւ Զատիկն»<sup>3</sup>:

Դավիթ Բաղիչեցու (XVII դար) ժամանակագրության մեջ, որը վերնագրել է «Դաւիթ բանասիրի Բաղիչեցոյ ծաղկաքաղ արարեալ ի բազում պատմագրաց...» կարդում ենք.

«Յետ Ղևոնդի եկաց Հայրապետ Ներսէս ի գաւառէ Բագրեւանդայ, ի գեղջէ Աշտարակոյ ամս Թ(9): Յետ սորայ Յոհաննէս, ի գաւառէ Գաբղենից, ի գեղջէ Մնձղնուտայ ամս ԺԵ (15): Եւ ապա տէր Մովսէս ամս Լ(30). ի գաւառէ յԱրագածոտն, ի գեղջէ Եղիվարդա: Սա Ժ(10) ամին

<sup>1</sup> Ձեռ. № 3082, էջ 364ա:

<sup>2</sup> Կիրակոս Գանձակեցի, Պատմութիւն Հայոց, Երևան, 1961, էջ 41-43:

<sup>1</sup> Ստեփանոսի Սիւնեաց եպիսկոպոսի Պատմութիւն տաճն Սիսական, Մոսկվա, 1861, էջ 69-70:

<sup>2</sup> Ձեռ. № 1114, էջ 98ա-99ա:

<sup>3</sup> Մանր ժամանակագր. հ. 2, էջ 263:



իւրոյ, և ոմանք Դ(4) ասեն, և յիշխանութիւն Մծեծայ և Յուստիանոսի Կոստանդնու և Խոսրովու Պարսից, այս Մովսէսի հրամանաւ եղաւ թվականն Հայոց, յետ լրման Մ (200) եկին Անդրեասայ ի Դուին քաղաքի ի կենարար ծննդենէն Փրկչին մերոյ ամբ ՇԾ (եւ Գ (553)), և ի լուսաւորչէն ՄԽԱ (241) և ի գտանելոյ գրոյն ձժէ (117) և էր Յունաց թուականն ՅԴ (304) և Ասորոց թուականն ՊՀԱ (871): Ոմանք ի պատմագրաց ասեն թէ առ ներսսիւ եղաւ թվական, բայց յոլովքն առ այն Մովսէսիւ ասեն. թվական ժ կարգեցաւ Շեակն ի ձեռն էասայ Աղէքսանդրացոյ»<sup>1</sup>:

Առայժմ չքննարկելով մյուս տարբերակները, ասենք որ. «թվական ժ կարգեցաւ Շեակն ի ձեռն էասայ Աղէքսանդրացոյ» ծաղկաքաղ արված հատվածը միանգամայն ճիշտ է արտացոլել իրողութիւնը:

Ի դեպ 11-րդ դարի առաջին կեսին գրված մի ժամանակագրութեան մեջ Հայոց Թ թվականի տակ (ուղղել՝ ժ) տրվել է. «ժողովն իմաստասիրաց յԱղէկսանդր(իա), որ լմնացուցեն զհինգ հարիւրեակ և էր էաս իմաստասեր ԼԶ ընկերաւք»<sup>2</sup>:

Այսպիսով սկզբնաղբյուրների վերը բերված խումբը Հայոց 10 թվականին (= 562 թ.) են դրել էասյան ՇԼԲ-ի ստեղծման և գործածութեան սկիզբը, որը թեև ճիշտ է, բայց հետևադարձ հաշվի արդյունք էր:

Սկզբնաղբյուրների հաջորդ խումբը տարբեր ձևակերպումներ են տալիս, բայց ՇԼԲ-ի սկիզբը կապում են Խոսրովի 31-րդ տարվա հետ: Այս թվականը հավանաբար վաղ ծագում ունի, բայց մեզ է հասել ուշ շրջանի բնագրերում: Բերենք այդ տեղեկությունները:

Հովհաննես Դրասխանակերտցին գրում է «Յամի տասներորդի Հայրապետութեան սորա (Մովսէսի - Ռ. Վ.) և երեսներորդի առաջներորդի ամին Խոսրովայ՝ որդւոյ Կաւատայ արքայի Պարսից՝ լցեալ բովանդակեալ շրջանակ բոլորակի հինգհարիւր երեսուն երկու ամաց, ապա ի հրամանէ մեծին Մովսէսի քերթողք և գիտունք արուեստին եղին զկարգ թուականութեան Թորգոմեանս համարոյ. որ է շարժումն յառաջխաղաց և հիմն գանազան մասանց արուեստին: Եւ այսպէս ըստ հայկականս լեզուի տուեալ տօմար տօնից տարեկանաց, յայնմհետէ ոչ կարօտանանային իբրև մուրացիկ իմն առնելով յայլոց ազգաց զպիտանի խորհրդաց արարողութիւնս»<sup>3</sup>:

Թեև Հովհաննես Դրասխանակերտցու անորոշ «լցեալ բովանդակեալ» արտահայտութեանը, նա ՇԼԲ-ն կապել է Խոսրովի 31-րդ տարվա հետ, այն է՝ 562 թվականի (531+31): Դրասխանակերտցու մյուս հարցադրումներին կանդրադառնանք հետագա շարադրանքի մեջ: Վարդան Արևելցին տեղեկացրել է. «... Սա (Մովսէս - Ռ. Վ.) ի տասներորդ ամի Հայրապետութեան իւրոյ, և ի ԼԱ ամի Խոսրովու որդւոյ Կաւատայ. և ի ԺԴ Յուստիանոսի՝ որ զսուրբ Սոփի շինեաց, եղեալ Թուական Հայոց և տումար. յորում ժամանակի (քսան տարով յառաջ - Մ. Չամչյան) լցեալ էր շրջանն ՇԼԲ (Մ - Ռ. Վ.) ամաց: Եւ էր մարգպան Հայոց Մծեծ Գնունի, որ կալաւ զիշխանութիւն ամս ԼԱ: Եւ ի Դիր թուականին էին Պետրոս եպիսկոպոս քերթօղն Սիւնեաց, և Ներշապուհ ի Տարոնոյ, և Աբգիշոյ ի Սասնոյ, զոր եպիսկոպոս ձեռնադրեաց Մովսէս»<sup>4</sup>:

Վարդան Արևելցին օգտվելով իր նախորդներից տվել է մի շարք հակասական տարբերակներ, որոնց թվում Խոսրովի 31-րդ տարին, որն անտարակույս ՇԼԲ-ի ստեղծման և գործադրման տարին է: Վարդան Արևելցու մյուս հարցադրումները կշտկվեն, երբ վերջնականորեն պարզ դառնա էասյան ՇԼԲ-ի և Հայոց թվականի հաստատման խնդիրները, մանավանդ որ Հայոց թվական

1 Մանր ժամանակագր. հ. 2, էջ 329:  
2 Մանր ժամանակագր. հ. 2, էջ 17:  
3 Հովհաննու կաթողիկոսի Դրասխանակերտցու, Պատմութիւն հայոց, Թիֆլիս, 1912, էջ 65:  
4 Մ. Չամչյան, Պատմութիւն Հայոց, հ. 2, էջ 510:

նութեան համակարգի ստեղծումը անմիջականորեն կապված էր նրա հետ: Այդ հարցերը հատկապես երկրորդը կարգաբանվի հետագա շարադրանքի ընթացքում:

Անանուն Սեբաստացու (13-րդ դ.) տարեգրութեան մեջ կարդում ենք. «Տէր Մովսէս կաթողիկոսը Հայոց, որ է ի գեղջէ եղիավարդայ եկաց կաթողիկոս ամս Լ(30): Սա ի Ժ(10) ամի իւրոյ Հայրապետութեանն և ԼԱ(31) ամին Խոսրովոյ որդոյ Կաւատայ և ԺԴ(14) Յուստիանոսի կալյսեր Հոռոմայեցոց որ զսուրբ Սոփի շինեաց, յայսմ ժամանակիս եղաւ թվական Հայոց և տումար ազգիս մերոյ: Եւ էր ի ծննդենէն Քրիստոսի մինչև ի դիր թվական ՇԾԴ (554) (մյուս ընդօրինակութեան մեջ՝ ԵՃՇԳ (553)) ամ: Զի Անդրէաս եպիսկոպոս եղբար Մանգնոսի եղեալ էր կանոն Մ (200) ամաց, որով զՉատիկն առնէին և այն բովանդակեալ էր և վճարեալ և վասն այնորիկ եղին զթվական Անդրեաս (իմացիր՝ էսա) Աղեկսանդրացի այլովք իմաստասիրովք կարգեցին զհինգ հարիւրակ բոլորն և այնու ուղղեցաւ»<sup>1</sup>:

Մանր ժամանակագրութեան անանուն հեղինակը օգտվելով նախորդներից բերել է նաև Խոսրովի 31-րդ տարին:

Այսպիսով հայկական սկզբնաղբյուրների քննարկվող խմբի հեղինակներն էասյան ՇԼԲ-ի սկիզբն ու գործածումը կապել են Խոսրովի 31-րդ տարվա, այն է 562 թվականի հետ: Այն անտարակույս ճիշտ է այն իմաստով, որ էասյան Շեակ ստեղծվեց և գործադրվեց 562 թվականին, նրանց դավանած 1-ին տարվանից, թեև ՇԼԲ-ի սկիզբը սկսեց 553 թ.:

Սկզբնաղբյուրների հաջորդ խումբը ՇԼԲ-ի ստեղծման և գործադրման տարին արտահայտել են քրիստոնեական Դիոնիսյան թվականով: Հովհաննես Սարկավազը իր ժամանակագրութեան մեջ գրել է. «Անտի (ի ծննդենէ կենարարին) մինչև ի Հայ թուականին դիր ՇԾԳ, ինն ամաւ զկնի հինգ հարիւրեակն եղաւ, ի ծննդենէն յետ ՇԿԲ ամաց...»<sup>2</sup>:

1999 թվահամարի գրչագրի «Ի Դաւթէ ասացեալ» վերնագիրն կրող բնագրում կարդում ենք. «... և ի ծննդենէն (Քրիստոսի) մինչև ի Հայ թուականն ամբ ՇԾԳ և զկնի Թ ամի եղաւ Շեակն, ի ծննդենէն յետ ՇԿԲ ամի...»<sup>3</sup>:

Նույն ձևակերպումն ունի 2001 թվահամարի ձեռագրի «Դարագլուխ» վերնագիրը կրող ժամանակագրութիւնը<sup>4</sup>:

Այսպիսով վերը բերված բնագրերի խումբը Շեակի գործածութեան սկիզբը համարել են 562 թվականը: Այդ տարեթվերը Հովհաննես Սարկավազը վերցրել է այլ բնագրից: Նա տվյալ դեպքում նկատի է ունեցել ոչ թե իր օգտագործած քրիստոնեական հայկական թվականը, այլ քրիստոնեական դիոնիսյան թվականը, այսինքն ներկա թվական հիմնադրի տարբերակը:

Հատկապես Անանիա Շիրակացու, ինչպես և հայկական սկզբնաղբյուրների վերոհիշյալ չորս խմբի վկայությունները, մեր հաշվումները, ցույց են տալիս ու հիմնավորում, որ էասյանների ՇԼԲ-ն ստեղծվել և գործադրվել է 562 թվականից, երբ նրանց օգտագործած լուսնի 19-ամյա պարբերաշրջանի առաջին տարին էր, իսկ լուսնի լրումը Ապրիլ 4 = Նիսան 14-ին էր ընկել: Միաժամանակ պարզ դարձավ, որ էասյանները շարունակել են Անդրեասի 200-ամյակը և իրենց ՇԼԲ-ի սկիզբը դրել են 553 թվականին երբ լուսնի լրումը Նիսան 23 = Ապրիլ 13-ին էր, այսինքն Անդրեասի 19-ամյակի 11-րդ տարին: Այլ խոսքով էասյանների կազմած ՇԼԲ-ն ունեցել է երկու սկիզբ մեկը՝ նրանց ՇԼԲ Ձատկացուցակի սկիզբը, որը 553 թվականն է, մյուսը՝ նրանց ընդունած լուսնի 19-ամյա պարբերաշրջանի առաջին տարին, որից արևային և լուսնա-

1 Մանր ժամանակագր. հ. 2, էջ 123:  
2 Մանր ժամանակագր. հ. 1, էջ 22-23:  
3 Ձեռ. № 1999, էջ 214բ-215ա:  
4 Տե՛ս Ձեռ. № 2001, էջ 36բ:

յին տարիներն իրար համադրել են և սկսել են հաշվել վերադիրների համակարգը և այլ տոմարական մանրամասներ, այսինքն տոմարական հաշվումները կատարել են 562 թվականից՝ Նիսան 14 = Ապրիլ 4-ից. ՇԼԲ-ի ստեղծումից և գործադրությունից, մանավանդ որ Նիսան 14 — Ապրիլ 4 ամսաթվերը կապվում էին արարչություն, Ելից և Քրիստոսի խաչելության հետ, ինչպես նշել են Շիրակացին և Սարկավագը: Այդպես են վարվել նաև հայերը: Նրանք որոշ ժամանակ անց ընդունեցին էասյանների ՇԼԲ-ն և այդ հիմքի վրա ստեղծեցին հայոց թվականության համակարգը: Ասենք նաև որ էասյանների և հայոց ՇԼԲ-ի կամ թվականության տարբերությունը միայն այն է, որ հայոց տոմարի շարժական լինելու պատճառով հայոց ամսաթվերը մեկ տարվա կտրվածքով ընկնում են երկու տոնական տարվա վրա: Այդպես էր նաև 532 տարիների կտրվածքով:

Վերոհիշյալ վերլուծություններից պարզ դարձավ, որ Ներսեսի կաթողիկոսության 2-րդ տարում Անդրեասի 200-ամյա Ձատկացուցակը սպառվեց (552 թ.): Դեռևս չէր ստեղծվել էասյան ՇԼԲ-ն: Հայ մատենագրական վկայություններից երևում է, որ Ներսես կաթողիկոսի 4-րդ տարում, այն է՝ 555 թ. Մարտի 21-ին Դվինում հրավիրվել է եկեղեցական ժողով և կանոնվել է «Գիր աւանդութեան»-ը: Այնտեղ հավանաբար քննարկվել է նաև եկեղեցական տոների հատկապես Ձատկի և մյուս շարժական տոների կատարման հարցը, թեև կաթողիկոսի կարգադրություն կարող էր լինել 553 թ. սկզբներին: Վերը բերված տեղեկությունների համաձայն, նրանք առաջնորդվել են 19-ամյակի լուսնի լրումներով և դրա հիման վրա հաշվել ու կատարել են տոները:

Հետագայում հայ պատմիչներն ու տոմարագետները հետադարձ հաշվով ստացել են Հայոց Մեծ թվականի առաջին տարին (552/3 թ.), որի հիմքը այն է՝ էասյանների ՇԼԲ-ն դեռևս չկա: Այն իսկապես ընկել է Ներսեսի կաթողիկոսության տարիներին և սխալմամբ նրան վերագրել հայոց Մեծ թվականի՝ հայոց շարժական տոմարը թվականության համակարգի վերածելու կարգադրությունն ու հաստատումը: Այս տեսանկյունից բնորոշ է նաև Ասողիկի մյուս վկայությունը: Նա գրել է. «Եւ ի սորա (Մծեծ Գնունու - Ռ. Վ.) եօթներորդ ամին եկաց կաթողիկոս Հայոց Տէր Ներսէս ի Գաւառէն Բագրևանդայ ի գեղջէն Աշտարակայ՝ ամս թ: Սա ի չորրորդ ամի հայրապետութեան իւրոյ և ի տասներորդ ամի իշխանութեան Մեծէժայ արար ժողով ի քաղաքն Դուին եւ էին գլխաւորք Պետրոս (տարբերակ՝ Պողոս) եպիսկոպոս քերթող Սիւնեաց և Ներշապուհ ի Տարօնոյ (և) կարգեցին զթուականն Հայոց ի ԺԴ-ն Յուստինոսի կայսեր, որ զսուրբն Սոփիա (տարբերակներ՝ Սոփի, Սոփէ) շինեց և ի ԻԴ-ն խորհրդայ որդոյ Կաւատայ Պարսից արքայի: Յորում ամի սուրբն Յեզիտբուզիտ (Ձեռագրում՝ Եզիտբուզիտ) կատարեցաւ ի Քրիստոս: Եւ Հայք այդմ ամի և յայդմ ժամանակի ի բաց կացին Յունաց հաղորդութենէ եւ էր Յունաց թուականն ՅԴ յէ ամէն Փիլիպպոսի կայսեր:

Ժողովի ամենայն ժամանակ ի ծննդենէ փրկչին մինչև ցժողովն Դունայ և զթուականն հայոց ամբ ՇԾԳ և ի լուսաւորութենէ սրբոյն Գրիգորի, որ է սկիզբն աստուածածանօթութեանն աշխարհիս հայոց ամբ ՄԾԲ»<sup>1</sup>:

Այս մեջբերված հատվածում շփոթված են մի խումբ տարբերակներ, որոնց անդրադառնալն անհրաժեշտություն է հենք համարում, որովհետև Ասողիկի օգտագործած թվականության համակարգերի հարցը առանձին ուսումնասիրության խնդիր է, միայն նշենք, որ եթե «կարգեցին զթուականն Հայոց»-ը հասկանանք հայոց մեկ թվականը որի համարժեք քրիստոնեական թվականը իսկապես «ՇԾԳ»-ն է, քանի որ Ասողիկի մոտ հայոց և քրիստոնեական թվականի տարբերությունը 552 է, այսինքն՝ նրա մոտ հայոց մեկ թվականի համարժեքը 553 թվականն է, ապա

<sup>1</sup> Ստեփանոսի Տարոնցոյ Ասողկան, Պատմութիւն տիեզերական, 2-րդ հրատ., Ս. Պետերբուրգ, 1885, էջ 82-83:

Ասողիկը ճիշտ է վերածել քրիստոնեական թվականի, թեև նկատի չի ունեցել հայոց մեկ թվականի 552 թվականի մասը: Իսկ ինչ վերաբերվում է Ներսես կաթողիկոսի ժամանակ հայոց թվականի հաստատվելուն, ապա այն ընդունելի է:

1999 թվահամարի ձեռագրում առկա է, հավանաբար տոմարական բնագրի, մի պատճառով, որտեղ գրված է. «Ի թագաւորութեանն Խոսրովու, ի հայրապետութեանն Ներսեսի Շինողի, եւ ի Նահատակութեանն Յիզտբուզտի սահմանեցին կանոն գլխաչեցարն եւ եղին տոմար ըստ հայոց. վերադիրն Դ էր (ուղղել՝ Գ - Ռ. Վ.)<sup>1</sup>, է երրեակն Գ էր (նկատի է ունեցել հուլյանը Ռ. Վ.)<sup>2</sup>, լրումն՝ ի Մարբրի յէ, աւրն Կիւրակէ, Յիսնակամուտն՝ ի Քաղոց ի ԺԱ, Յայտնութիւնն՝ յԱրաց Լ-նն, հասարակածն՝ յԱհկի ԺԳ-ն, ամառնամուտն՝ ի Հրոտից ի ԺԴ. աշնանայինն՝ ի Սահմի ի Ժ-ն, ձմեռնամուտն՝ յԱրաց ի ԺԱ, Աստուածածինն՝ ի Հոռի ի Զ-ն, Սուրս Խաչն՝ ի Սահմի ի Զ-ն, անկաստեղն՝ ի Մարբրի յԼ-ն, ելն (այսինքն՝ ելստեղն)՝ ի Մարգաց ի ԺԸ-ն»<sup>3</sup>:

Մեզ հայտնի չի, որ Ներսես կաթողիկոսին (551-560 թթ.) Շինող մականունը տալին: Հեղինակը նկատի է ունեցել հիշյալ կաթողիկոսին, ինչպես կտեսնենք, բերված ամսաթվերից ստացված տարիներից: Հայտնի է, որ հայոց թվականության սկիզբն ընկել է Խոսրով պարսից թագավորի (531-579 թթ.) և Ներսես կաթողիկոսի ժամանակներին, եթե «եղին տոմար ըստ հայոց» ձևակերպումն այդ իմաստով հասկանանք:

Տեսնենք բնագրի վերը բերված հայոց շարժական տոմարի ամսաթվերով հնարավոր է ճշգրտորեն որոշել այն թվականները, որը նկատի է ունեցել հեղինակը: Բարբախտաբար բնագրում տրվել են հայոց շարժական տոմարի և տոնացոյցի այն իրողությունները (լրում, Յիսնակամուտ, Յայտնութիւն, հասարակած, ամառնամուտ, աշնանային, ձմեռնամուտ, Աստուածածին, Սուրբ Խաչ, Անկաստեղ, Ելստեղ), որոնք չհաշված լրումը, վաղ շրջանում անշարժ էին և հայոց տոմարական և տոնացուցային բնագրից հայտնի են նրանց հուլյան համարժեքները, որոնց հայոց շարժական տոմարի ամսաթվերն էլ տարիների որոշակի կտրվածքով կան հիշյալ բնագրում: Հարկ է նշել, որ «լրումն՝ ի Մարբրի յէ, աւրն Կիւրակէ»-ն հնարավորություն է տալիս հայոց ամսաթվերից ստացած քառամյակի տարիներն ավելի հստակեցնել ներկա թվականի տարիներով: Վկայված ամսաթվերի տարիների քառամյակն գտնելու համար կիրառենք հայոց տոմարական եղանակը<sup>4</sup>:

Ասենք, որ հայոց շարժական տոմարի ամսաթվերը բերում ենք բնագրի տված հերթականությունամբ սկզբից տալով տոմարական իրողություն կամ տոնի անվանումը, իսկ վերջում սրանց հուլյան համարժեքները փակագծերի մեջ:

- 1. Լրումը՝ Մարբրի 7, կիրակի (= Ապրիլ 13), որտեղից Մարբրի 1 = 552-555 թթ.:
- Գտնենք, թե քառամյակի որ տարում է Մարբրի 7-ին կիրակի եղել:
- ա) 552 թ. Մարբրի 1 = Ապրիլ 7, Մարբրի 7 = Ապրիլ 13 = շաբաթ
- բ) 553 թ. Մարբրի 1 = Ապրիլ 7, Մարբրի 7 = Ապրիլ 13 = կիրակի
- գ) 554 թ. Մարբրի 1 = Ապրիլ 7, Մարբրի 7 = Ապրիլ 13 = երկուշաբթի
- դ) 555 թ. Մարբրի 1 = Ապրիլ 7, Մարբրի 7 = Ապրիլ 13 = երեքշաբթի:

Նկատենք, որ ըստ Ձատկացուցակի լրումը եղել է՝ 552 թ. (Մարտ 25), 553 թ. (Ապրիլ 13), 554 (Ապրիլ 2) և 555 թ. (Մարտի 22), այսինքն միայն 553 թվականին լրման օրը ընկել է Ապրիլ 13-ին: Այնպես որ ինչպես լրման, այնպես էլ կիրակի օրվա նշումով ստանում ենք 553 թ.,

1 Տե՛ս Բ. Թումանյան, Հայ աստղագիտության պատմությունից. Ե., 1985, էջ 123-124:  
2 Տե՛ս Բ. Թումանյան, նույն աշխատութ., էջ 124:  
3 Ձեռ. № 1999, էջ 86ա:  
4 Տե՛ս Ռ. Վարդանյան, Հայոց տոմարական եղանակը ... էջ 5-6:

ուստի հեղինակը նկատի է ունեցել հայոց մեկ թվականի ամիս-ամսաթվերը, որոնք ընկած են ներկա երկու թվականների կտրվածքում, այն է՝ 552 թ. Հոռիի, Սահմիի, Քաղոցի և մասամբ Արացի ամսաթվերը, իսկ 553 թ. մասամբ Արացի, Ահեկանի, Մարերի, Մարգացի և Հրոտիցի ամսաթվերը: Քննարկված օրինակն էլ բավարար էր համապատասխան եզրակացություն անելու համար, սակայն շարունակենք ամսաթվերի վերլուծությունը:

2. Յիսնականություն՝ Քաղոց 11 (= Դեկտեմբեր 18), որտեղից Քաղոց 1 = Դեկտեմբեր 8 = 552-555 թթ. (= 552 թ.):

3. Յայտնութիւնն՝ Արաց 30 (= Հունվար 6), որտեղից Արաց 1 = Դեկտեմբեր 8 = 552-555 թթ. (= 553 թ.):

4. Հասարակածն՝ ահկի 13 (= Մարտ 20), որտեղից Ահկի 1 = Մարտի 8 = 552-555 թթ. (= 553 թ.):

5. Ամառնամուտն՝ Հրոտից 14 (= Հունիս 19), որտեղից Հրոտից 1 = Հունիս 6 = 552-555 թթ. (= 553 թ.):

6. Աշնանայինն՝ Սահմի 10 (= Սեպտեմբեր 18), որտեղից Սահմի 1 = Սեպտեմբեր 9 = 552-555 թթ. (= 552 թ.):

7. Զմեռնամուտն՝ արաց 11 (= Դեկտեմբեր 18), որտեղից Արաց 1 = Դեկտեմբեր 8 = 552-555 թթ. (= 552 թ.):

8. Աստուածածինն՝ Հոռի 6 (= Օգոստոս 15), որտեղից Հոռի 1 = Օգոստոս 10 = 552-555 թթ. (= 552 թ.):

9. Սուրբ Խաչն՝ Սահմի 6 (= Սեպտեմբեր 14), որտեղից Սահմի 1 = Սեպտեմբեր 9 = 552-555 թթ. (= 552 թ.):

10. Անկաստեղն՝ Մարերի 8 (= Ապրիլ 14), որտեղից Մարերի 1 = Ապրիլ 7 = 552-555 թթ. (= 553):

11. Ելսատեղն՝ Մարգաց 18 (= Մայիս 24), որտեղից Մարգաց 1 = Մայիս = 552-555 թթ. (= 553 թ.):

Այսպիսով 1126 թ. ընդօրինակված 1999 թվահամարի գրչագրի պատահիկի հեղինակը ճշգրտորեն որոշել է հայոց մեկ թվականի հայոց շարժական տոմարի ամսաթվերը, որոնք վերաբերում են տոմարական իրողություններին և տոնական օրերին: Հեղինակը դրանք համարել է հայոց տոմարի, այն է՝ թվականության դրման տարի, որով և սայթաքել է, քանի որ նրանք արտացոլում են հայոց մեկ թվականի, այսինքն՝ սկզբի, տոմարական և տոնացույցային իրողությունները:

Մ. Չամչյանը բերել է «գրանս Միխայելի ասորոյ. ի ՊԱ թուին ասորոց սկսաւ թիւն հայոց առ տ(է)ր ներսեսիւ հայրապետիւ ի ԼԸ ամին Յուստիանոսի, և ի թագաւորութեան պարսից Խոսրովու: Այլք առ Մովսեսիւ ասեն կաթողիկոսիւ»<sup>1</sup>: Ինչպես նկատելի է վերը բերվածից Միքայել Ասորին պաշտպանել է հայոց թվականության հաստատումը ներսես կաթողիկոսին վերագրելու տարբերակը, թեև հիշել է նաև Մովսես կաթողիկոսին տալու տեսակետները: Սակայն վկայված տարբերակը ոչ մի կերպ չեն կապվում ոչ ներսեսի և ոչ էլ Մովսեսի կաթողիկոսության ժամանակների հետ:

1999 թվահամարի գրչագրի ասորական տոմարի մեկնության մեջ գրած է. «Եւ յԱղեկսանդրէ մինչև ի ծնունդն քրիստոսի են ամբ 309» (309):

Միքայել Ասորու վկայած 871 ասորոց թվականից հանենք 309 կստանանք 562 թվական քրիստոնեական հայկական թվականով:

Ալեքսանդրի և հայոց մեծ թվականի համար գրվել է կանոն, որտեղ նրանց տարբերությունը 862 է: Միքայել Ասորու տված 871 ասորոց թվականից հանենք 862 կստանանք հայոց 9 թվական, որին գումարելով 553 կստանանք 562 քրիստոնեական հայկական թվականը, իսկ 551/2 գումարելու դեպքում կգտնենք ներկան, այն է 560/1 թթ.: Պարզ է դառնում, որ Միքայել Ասորու փաստագրած 871 ասորոց թվականը համարժեք է 562 թվականին՝ քրիստոնեական հայկական թվականով և 560/1 թթ.: քրիստոնեական Դիոնիսյան կամ ներկա թվականով:

Հուստինիանոսի 38-րդ տարին, այսինքն՝ վերջին տարին, ինչպես հայտնի է 565 թվականն է: Միքայել Ասորին 871 և 38 թվերը դրել է համարժեք: Ըստ նրա ստացվում է, որ Հուստինիանոսի վերջին տարին ներկա 560/1 թթ. է: Սխալը 4-5 տարի է: Այնպես որ Միքայել Ասորու մոտ հիշատակված Ասորոց 871 թվականը ավելի մոտ է էսայան ՇԼԲ-ի ստեղծման տարուն, քան ներսեսի, առավել ևս Մովսեսի կաթողիկոսության տարիներին, որովհետև 560/1 թթ. ներսեսը մահացած էր, իսկ Մովսեսի նախորդը Հովհաննեսն էր, որի առաջին տարին 560/1 թթ.:

17-րդ դարի ժամանակագիրը պաշտպանում է հայոց թվականության հաստատումը ներսեսին վերագրելու վարկածը: Նա գրել է. «... Եթե ամի իշխանութեան սորին (Մեծ Գնունու - Ռ. Վ.) եղաւ թուական հայոց ԵՃՄԱ թուոյն Քրիստոսի, ի ԸՃՀԱ թուին Ասորոց, երեսուն (ե)ւ երեք ամին Ուստիանոսի կայսերն: Յունաց, առ տէր ներսիսին հայրապետիւ, ի թագաւորութեան Խոսրովու Պարսից արքայի, և այլք առ Մովսիսիւ հայրապետին ասեն, զկնի Խ ամի հալածմանն Միխայիլին»<sup>1</sup>: Անանուն ժամանակագիրը պաշտպանելով ներսեսին, հայոց թվականի հաստատումը վերագրելով նրան, բերել է տարբերակ, որոնք ոչնչով չեն կապվում նրա ժամանակի հետ Հուստինիանոսի 33 տարին, ասորոց 871 թվականը և այլն: Այնպես որ, հայոց թվականի կարգադրությունը ներսես կաթողիկոսին վերագրելու վարկածը ինչպես տեսանք, վերջնականորեն հերքվում է էսայան ՇԼԲ-ի դեռևս չստեղծված լինելու պատճառով:

Հաջորդ տարբերակն այն է, որ հայ մատենագիրներն ու տոմարագետները հետագարձ հաշվով ստացել են Հայոց մեծ թվականի առաջին տարին և ուշ գործած կաթողիկոսներին (Հովհաննես, Մովսես) տեղափոխել են, վաղ դնելով նրանց տարիները: Այս տեսակետից բնորոշ են նաև Հովհաննես Կոզեռնի վկայությունները: «Մեկնութիւն տոմարի զոր արարեալ Յոհաննիսի վարդապետի, որ մականուանենին Կոզեռն» վերնագիրը կրող բնագրում գրված է. «Արդ վասն զի յԱրաց ամսոյ յԼ(30) հանդիպեցաւ դնել զգիր թուականութեան Հայոց ազգիս ի ձեռն Անանիայի Շիրակացոյ, ի ժ երորդ ամի աթոռակալութեան Տեառն Յոհաննիսի (տարբերակ Մովսեսի 260. N°1999, էջ 27ա) հայոց կաթողիկոսի, որ ԻԳ թիւ էր հայրապետացն ի սրբոյն Գրիգորէ, եւ ի ԻԵ ամին Յուստիանոսի կայսեր, ի հիմնարկութեան մեծ եկեղեցոյն սուրբ Սոփեայ, եւ ի ԻԲ ամին Խոսրովու պարսից արքայի: Արդ յայն տարուջ յորում զթուականն եղին ԲՁՀՁ ամ էր յԱղամ(յ) մինչեւ ի հայ.թուականն, և ի ծննդենէն Քրիստոսի մինչեւ ի սրբոյն Գրիգորի ելն ի Վիրապէն ամբ ՄՀՁ, եւ անտի մինչեւ զհայ թուականն ամբ ՄՀՁ, որ լինի ի ծննդենէն Քրիստոսի մինչեւ զհայ թուականն ամբ ՇՄԲ»<sup>2</sup>:

Բերենք նաև Հովհաննես Կոզեռնի տոմարի մեկնության առանձին հատվածներ:

1. «Իսկ զի ասէ. կալ թիւ մի յԱրաց ամսոյ: Վասն զի յորում ամի զթուականն եղին, եւ առաջին ամ էր յետ նահանջի, եւ ի նոյն ամի լրումն գատկին ի Մարերի յէ էր, եւ աւրն կիւրակէ եւ Ապրիլի ժԳ, որ է սկիզբն բոլորին ապրելեացն»<sup>3</sup>:

1 Մանր ժամանակագր., հ. 1, էջ 255:  
2 Ձեռ. N° 1999, էջ 67բ-68ա, տե՛ս նաև Մ. Չամչյան, Պատմութիւն հայոց, հ. Բ, էջ 509:  
3 Ձեռ. N° 1999, էջ 70ա-բ:

1 Մ. Չամչյան, Պատմութիւն հայոց, հ. 2, էջ 511:

2. «Յառաջին ամին թուականին լրումն գատկին ի Մարերի յէնն էր եւ յերկրորդ ամի թուականին դառնալոց էր լրումն գատկին զԱհկի ԻԶ-ն»<sup>1</sup>:

Հովհաննես Կոզեռնը թեև Հայոց թվականության հաստատումը կապել է Հովհաննես կամ Մովսես կաթողիկոսների անվան հետ, սակայն իր բերած տվյալները, որոնք կքննենք քիչ հետո, մատնանշում են Հայոց մեկ թվականը (= 552-553 թթ.): Բացի այդ նա ճշգրտորեն Անանիա Շիրակացուն է վերագրել Հայոց ՇԼԲ-ի ստեղծումը, որը հաստատվում է Հովհաննես Կոզեռնի հետևյալ տողերով՝ «Արդ վասն զի յԱրաց ամսոյ յԼ(30) Հանդիպեցաւ զնել զգիր թուականութեան Հայոց ազգիս ի ձեռն Անանիայի Շիրակացոյ», ինչպես և Գեորգ Մեղրիկի՝ «... ի Շեկին զգիր թուականին» արտահայտությամբ, ըստ Անեցու (էջ 75): Հովհաննես Կոզեռնի գրած տոմարի մեկնության վերը բերված հատվածներն ևս ցույց են տալիս, որ նրա ձեռքի տակ եղել է Շիրակացու «Քննիկոնը» հատկապես նրա ՇԼԲ-ի ամբողջական բնագիրը:

Այժմ տեսնենք Հովհաննես վարդապետը Հայոց որ թվականն է նկատի ունեցել, երբ բերել է հիշյալ Հայոց ամսաթվերը: 1999 թվահամարի գրչագրի տոմարական պատառիկի ամսաթվերը քննելիս տեսանք, որ 553 թվականն էր, երբ լուսնի լրումը եղել է Մարերի 7 = Ապրիլ 13 = Կիրակի, որն էսայան և Հայոց ՇԼԲ-ների կամ «Գիր թուականութեան Հայոց»-ի լուսնի 19-ամյակի, այն է՝ «սկիզբն բոլորի պարելեացն»-ի, առաջին տարին էր: ՇԼԲ-ի 2-րդ տարում լուսնի լրումը ընկել է Ահեկանի 26-ին, ինչպես նշել է հեղինակը և հաստատվում է Շիրակացու ՇԼԲ-ով: Վերջապես Արաց 30-ը համարժեք Հունվարի 6-ին նույնպես մատնանշում է 553 թվականը: Այնպես, որ Հովհաննես Կոզեռնը նկատի է ունեցել «յառաջին ամին թուականին», այսինքն՝ Հայոց մեկ թվականը, որը համարժեք է ներկա 553 թթ.: Հովհաննես Կոզեռնը Հայոց մեկ թվականի սկիզբ է համարել 553 թ. և «ի ծննդենէն Քրիստոսի մինչեւ ցհայ թուականն ամբ ՇԼԲ» է համարել նշելով նաև «եւ առաջին ամն էր յետ նահանջի», այսինքն 552 թվից հետո, ոչ միայն թվականի կանոնի, որտեղ Հայոց մեկ և քրիստոնեական թվականի տարբերությունը 552 է, այլ նաև Հայոց եկեղեցական տոնական տարին Արաց 30-ին (= Հունվար 6) սկսելու պատճառով: Նա նույնպես նկատի չի ունեցել 552 թ. մասը: Ասենք նաև, որ Հովհաննես Կոզեռնի տոմարի մեկնության մեջ բերված որոշ Հայոց ամսաթվեր մեկ օրվա սխալ են պարունակում և մատնանշում են ոչ թե 552-555 թթ. այլ 556-559 թթ. քառամյակը: Այսպես նա Աստուածածնի տոնի օրը դրել է Հոռի 7-ին (պետք է լիներ Հոռի 6-ին), Սուրբ Խաչի օրը տվել է Սահմի 7-ի ամսաթվի տակ (պետք է լիներ Սահմի 6), գարնանային գիշերահավասարը բերել է Ահեկանի 14-ի տակ (պետք է լիներ Ահեկանի 13) և այլն: Վերոհիշյալ ամսաթվերի մասին գրել ենք վերևում, որի համար հարկ չհամարեցինք մանրամասն շարադրել: Հետագարձ հաշվով ստացել կամ նկատի են ունեցել Հայոց թվականի առաջին տարին և Հովհաննես կամ Մովսես կաթողիկոսներին տեղափոխել են այդ ժամանակը նաև 11-րդ դարի առաջին կեսին գործած ժամանակագիրը, Հովհաննես Սարկավազը, Սամուել Անեցին, Մխիթար Այրիվանեցին, Անանուն ժամանակագիրները (16 և 17-րդ դարեր) Դավիթ Բաղիշեցին (17-րդ դ.) և այլ հեղինակներ, որոնց բնագրերի մի մասը ներկայացրինք վերը այլ առիթով, մյուսները անհրաժեշտ չենք գտնում ներկայացնել, որովհետև նույն երևույթի կրկնություններն են վերցրած վաղ շրջանի հեղինակներից կամ որոշ հավելումներ արված, որոնք ավելի են խճողել պատկերը: Վերը տեսանք, որ 562 թվականին հայտնաբերվեց և գործադրվեց էսայանների ՇԼԲ-ն, որը Հայոց մեծ թվականի հիմքն էր: Այդ իրողությունը համընկավ Հովհաննես կաթողիկոսի 2-րդ տարվա հետ: Այդ է պատճառը, որ հայ մատենագիրներն ու տոմարագետները հետագարձ հաշվով ստացել են էսայանների ՇԼԲ-ի տարին և Մովսես կաթողիկոսին տեղաշարժել են առաջ: Այսպես են վարվել Հովհաննես Դրասխանակերտցին, Վարդան Արևելցին և այլ հեղինակներ, որոնց բնագրերի մի

մասը բերվեցին վերևում ՇԼԲ-ի ստեղծման տարեթիվը ճշտելու կապակցությամբ: Թերևս Հովհաննես Գաբրիելացուն վերագրեինք էսայանների ՇԼԲ-ի ընդունման և հաստատման իրողությունը, եթե ունենայինք գոնե մեկ դրական փաստ: Սակայն այն բացակայում է:

Կարծում ենք, որ Հովհաննես Գաբրիելացին, եթե տեղյակ է եղել վերոհիշյալ ՇԼԲ-ների ստեղծմանը, ապա ձեռնապահ է մնացել որևէ տարբերակի ընտրության մեջ կամ էլ նախընտրել է Իրեոնի կազմած ՇԼԲ-ն: Բանն այն է, որ նրա կաթողիկոսության ժամանակ հայ-պարսկական հարաբերությունները խիստ սրվել էին և Հովհաննես կաթողիկոսը մյուսների հետ հակված էին Բյուզանդիան, որտեղ օգտագործում էին Իրեոնի կազմած ՇԼԲ-ն, ինչպես տեսանք Շիրակացու տեղեկությունից: Ի դեպ Հովհաննես կաթողիկոսի տարիներին է եղել առաջին ծագատիկը: Ըստ Իրեոնի գատկացուցակի 570 թ. լուսնի լրումը ընկավ ապրիլ 5-ին շաբաթ օր և ապրիլ 6-ին կատարեցին Ջատիկը:

Հովհաննես կաթողիկոսը 572 թվականից և հետագա տարիներին իր թափառական կյանքը անցկացրեց Կոստանդնուպոլսում և նույնիսկ հունական ծեսով հաղորդվեց Կոստանդնուպոլսի պատրիարքի հետ: Այդ վարմունքը քննադատության ենթարկվեց հայրենիքում: Այնպես որ էսայան ՇԼԲ-ի ընդունումն ու հաստատումը, իբրև Հայոց եկեղեցու Ջատկացուցակ, Հովհաննես կաթողիկոսի կողմից, քիչ հավանական է, մանավանդ այն սկզբնաղբյուրների, որոնք Հայոց թվականությունը հետևապես էսայան ՇԼԲ-ն վերագրում են նրան, տեղափոխում են 550-ական թվականները, այսինքն՝ հետագարձ հաշվով ստացած Հայոց թվականության սկիզբը, երբ էսայան ՇԼԲ-ն չէր էլ ստեղծված, իսկ Հովհաննեսը կաթողիկոս ընտրվեց ՇԼԲ-ի կամ Հայոց թվական 8-րդ տարում (= 560 թ.): Բացառելով Ներսես և Հովհաննես կաթողիկոսներին, որպես էսայանների ՇԼԲ Ջատկացուցակի ներդրողներ Հայոց մեջ, մնում է Մովսես կաթողիկոսը: Նրա մասին, թեև հայկական սկզբնաղբյուրները տալիս են հակասական տեղեկություններ, բայց անվերապահորեն Մովսես կաթողիկոսին պետք է նախապատվություն տալ իբրև էսայան ՇԼԲ-ի կիրառողի Հայոց եկեղեցու կենցաղում ի հակադրություն Իրեոնի Ջատկացուցակի: Նախ Մովսես կաթողիկոսի սկզբի տարիներին սրվեցին հայ-հունական եկեղեցական հարաբերությունները, իսկ հետագա տարիներին ինչպես հայտնի է, վերածվեց բացահայտ թշնամանքի և արևմտյան Հայաստանում ստեղծվեց Հայոց նոր հակաթու կաթողիկոսությունը Հովհան Ավանեցու գլխավորությամբ: Մյուս կողմից Շիրակացու հայոց ՇԼԲ ընդունած տարեթիվը, որի մասին կիսոսենք նրա կազմած ՇԼԲ-ն քննելիս, ցույց է տալիս, որ էսայան ՇԼԲ-ն, ինչպես և Հայոց տոմարի պատճեն հաստատվեց Մովսես կաթողիկոսի 4-րդ տարում, այն է՝ 581 թվականին, Դվինի եկեղեցական ժողովում:

Բացառված չէ, որ Մովսես կաթողիկոսի 10-րդ տարին, որն ավանդել են ուշ շրջանում ապրած հայ մատենագիրները, իբրև Հայոց թվականի կամ տոմարի հաստատման տարի կապել են կամ էսայանների ՇԼԲ-ի և Հայոց թվականի սկզբի. այն է՝ Ապրիլ 13-ից սկսվող առաջին տարվա լուսնի 19-ամյակի 10-րդ տարվա հետ, որն առաջին անգամ ընկել է 562 թվին, իսկ 2-րդ անգամ՝ 581 թվին, կամ էսայանների ու Հայոց լուսնի 19-ամյակի 1-ին տարվա. այն է՝ Ապրիլ 4-ից սկսվող 10-րդ տարվա հետ, որն առաջին անգամ պատահել է 571 թվին, իսկ 2-րդ անգամ՝ 590 թվին: Հիշյալ տարեթվերից Մովսեսի կաթողիկոսության ժամանակին են հանդիպում 581 և 590 թվականները: Ընտրությունը կրկին ընկնում է 581 թվականի վրա: Եթե մեր առաջարկած տարբերակն ընդունվի, ապա բացատրվում է Մովսեսի կաթողիկոսության 10-րդ տարվա վարկածը: Պարզ է դառնում, որ լուսնի 19-ամյակի 10-րդ տարին համարել են Մովսեսի կաթողիկոսության 10-րդ տարին: Այդպիսի դեպքերից է, երբ Հովհաննես Դրասխանակերտցին Մովսես կաթողիկոսի 10-րդ տարին համարժեք է դրել էսայանների և Հայոց լուսնի 19-ամյակի 10-րդ տարուն: Ի դեպ նման թվագրման հնագույն վկայությունը գտնում ենք Սեբեոսի պատմության մեջ Երուսաղեմի 614 թվականի գրավման կապակցությամբ: Այդ տեղեկությունները

<sup>1</sup> Ձեռ. № 1999, էջ 71բ:

տեղ գտած գրչական սխալների, այլև հեղինակի թվագրման նոր եղանակի կիրառման, այն է՝ լուսնի 19-ամյակի օրվա թվագրելու հետևանքով:

Երուսաղեմի պաշարման, գրավման, ջարդերի և հրկիզման հարցերն առանձին ուսումնասիրության խնդիր է: Այստեղ բերեք Սեբեոսի և Թովմա Արծրունու համարժեք վկայությունները և տանք միայն ամփոփիչ մեկնություն, նկատի ունենալով ոչ միայն մեր դիտարկումներն, այլև հետազոտողների (Ֆ. Կոնիբեր, Մ. Օրմանյան, Գ. Աբգարյան, Գ. Գրիգորյան) կատարած բանասիրական ճշգրտումներն ու վերլուծությունների այն կետերն, որոնք ընդունելի ենք համարել:

Նախ ներկայացնենք հիշյալ բնագրերի զուգահեռ տեղեկությունները:

Սեբեոս

Յայնժամ ժողովեաց Խոռեամ, որ Ըռագմիոզան, զարս իր և երթեալ բանակեցաւ շուրջ զԵրուսաղէմաւ և պաշարեաց զնա, և կալաւ ի վերայ նոցա գործ պատերազմի զարս ժԹ (ուղղել՝ ԺԲ): Եւ փորեալ ի ներքոյ զհիմունս քաղաքին աւերեցին ցաւարիսսպն: Եւ եղև յաւուրն ԺԹ-երորդի յամսեանն Մարգաց, որ ար ԻԸ էր ամսոյն (ուղղել՝ եւ եղև յաւուրն ԺԴ-երորդի, յամսեանն Մարերի, որ ար ի Ը էր ամսոյն), յամի ԻԵ-երորդի թագաւորութեանն Ապրուէզ Խոսրովա. զկնի տաս արս անցանելոյ յետ զատկին առին զարքն Պարսից Երուսաղէմ, և սուր ի գործ արարեալ մինչև ցերիս արսս՝ սպառեցին զամենայն մարդիկ քաղաքին. և նստան ի ներքս քաղաքին [ԻԱ ար. ապա ելեալ բանակեցան արտաքոյ քաղաքին] և այրեցին զքաղաքն հուրք: Եւ համարեցին համար անկելոց դիակացն, և եղև թիւ սպանելոցն ԺԷ հազար մարդ: Եւ զորս կալան կենդանիք՝ ԼԵ հազար մարդ: Կալան և զհայրապետն, որում անուն էր Ջաքարիա, և խաչապանն և ի խնդիր անկեալ կենսաբեր Խաչիմ՝ սկսան զնոսա տանջել և բազումս ի պաշտանելից կառափնատեալ սատակելին ի ժամանակին յայնմիկ: Ապա ցուցին զտեղին, ուր ծածկեալ կայր գոր առեալ վարեցին ի գերութիւն և զարծաթ և զոսկի քաղաքին ձուլեալ խաղացուցին ի դուռն թագաւորին:

Ապա վասն անկելոց ձերբակալացն հրաման հասեալ ի թագաւորեն առնել ի վերայ ողորմութիւն, շինել զքաղաքն, և նոսա անդէն հաստատել իւրաքանչիւր կարգ: Եւ զհրեայս հրամայե հալածական առնել ի քաղաքէն և անդէն վաղվաղակի մեծաւ ստիպով կատարեն զհրաման արքունի: Եւ կարգեցին երիցապետ զոմն ի վերա քաղաքին, անուն Մողեստոս<sup>1</sup>:

Թովմա Արծրունի

Յայնժամ ժողովեալ Խոռեմ Եռագմայուզան զգօրս իւր բանակեցաւ շուրջ զԵրուսաղէմաւ և պաշարեաց զնա և պատերազմեցաւ ընդ Երուսաղէմի արս ԺԹ. և փորեալ զհիմունսն աւերեցին զպարիսպն: Եւ եղև յաւուրն ինն և տասներորդի, յամսեան մարգաց, որ օր ԻԸ էր ամսոյն, յամի քսան և հինգերորդի թագաւորութեանն Խոսրովու որ կոչէր Ապրուէզ զկնի Ժ արս անցանելոյ զատկին առին զքաղաքն և սուր ի գործ արարել Գ արս սպառեցին զամենայն մարդ ի քաղաքին. և նստան ի ներքս ի քաղաքին ԻԱ օր. ապա ելեալ բանակեցան արտաքոյ քաղաքին, և զքաղաքն այրեցին հրով: Եւ հրամայեցին համար առնել անկելոց դիակացն, զտաս թիւ սպանելոցն ԺԷ Ի մարդ: Կալան և զհայրապետն Ջաքարիայ և ի խնդիր անկեալ աստուածային սուրբ նշանին՝ սկսան զնոսա տանջել, մինչև զբազումս ի պաշտանելից կառափեալ սատակեցին. ապա ցուցին զտեղին ուր ծածկեալ էր զոր առեալ վարեցին ի գերութեան, և ոսկի և արծաթ անբաւ խաղացուցին ի դուռն թագաւորին: Եւ վասն մնացելոցն որք ի քաղաքին և ի սահմանս նորա՝ ել հրաման յարքուն ուստ առնել ի վերա նոցա ողորմութիւն, շինել զքաղաքն և հաստատել զամենեւին յիւրաքանչիւր կարգ: Եւ անդէն վաղվաղակի կատարելն զհրաման արքունի և կարգեցին երիցապետ զոմն ի վերա քաղաքին որում անուն էր Մողեստոս<sup>2</sup>:

Վերահիշյալ վկայությունների, որոշ գրչական սխալների սրբագրումից հետո պարզվում է, որ 614 թվին պարսիկները Երուսաղեմը պաշարել են չորեքտասներորդի օրը, այսինքն լուսնի 19-ամյակի լրման օրը, այն է՝ Մարերի 8-ին (= Մարտ 30) և Ջատկից 10 օր հետո գրավել են քաղաքը, որն ընկել է Մարերի 19-ին (= Ապրիլ 10) Ջատկը՝ Մարերի 9-ին (= Մարտ 31 + 10 օր) Պաշարումից գրավում 12 օր: Երեք օր կոտորել են քաղաքի բնակչությանը մինչև Մարերի 22-ը (= Ապրիլ 13) (Մարերի 19+3 և Ապրիլ 10 + 3), որից հետո պարսիկները մնացել են քաղաքում 21 օր, այսինքն մինչև Մարգաց 13-ը (= Մայիս 4) (Մարերի 22 + 21 օր և Ապրիլ 13 + 21 օր), իսկ հետո տեղափոխվել և ժամանակավորապես բնակվել են քաղաքից դուրս ու այրել Երուսաղեմը, հավանաբար հաջորդ օրը Մարգաց 14-ին (= Մայիս 5), որը Համբարձման օրվանից պակաս է 4 օրով<sup>1</sup>:

Հայ մատենագիրներից շատերը (Հովհաննես Դրասխանակերտցի, Սամուել Անեցի, Կիրակոս Գանձակեցի, Ստեփանոս Օրբելյան, Վարդան Արևելցի և այլն) թեև շփոթելով տարեթվերը և տարբեր ձևակերպումներ տալով Մովսես կաթողիկոսին են վերագրում հայոց թվականության համակարգի ստեղծման կարգադրությունը, որը Հովհաննես Դրասխանակերտցու բառերով հնչում է այսպես. «Ի հրամանէ մեծին Մովսեսի քերթողք և գիտունի արուեստին (տոմարական - Ռ. Վ.) եղին զկարգ թուականութեան Թորգոմեանս համարոյ»: Դրասխանակերտցու «զկարգ թուականութեան Թորգոմեանս համարոյ»-ն դա Շիրակացու ՇԼԲ-ն է: Այս բնորոշումը մասամբ է ճիշտ, որովհետև ճշմարտարացի է Հովհաննես Կոզեռը, երբ գրում է. «Արդ վասն զի յԱրաց ամսոց յԼ (30) հանդիպեցաւ դնել զգիր թուականության Հայոց ազգիս ի ձեռն Անանիայի Շիրակացու», որը Գևորգ Մեղրիկի «ի Շեկին զգիր թուականին»-ն է: Հայոց թվականության համակարգն, այսինքն՝ հայոց ՇԼԲ-ն ամբողջությամբ և վերջնականորեն Անանիա Շիրակացին է կազմել հիմնվելով էասյանների ստեղծած ՇԼԲ-ի վրա և մեկնել հայոց և մյուս ութ ազգերի տոմարները: Միաժամանակ նա ակնարկում է «աս է» կամ «ասի» - բառերով, իր նախորդներին, որոնց թվում հայոց տոմարի պատճենի հեղինակին: Սա նշանակում է, որ «Պատճեն տոմարի հայոց»-ը կամ ուշ շրջանի «Պատճեն տոմարի հայոց մեծաց»-ը, նրանից ավելի վաղ է գրվել: Շիրակացուց հետո եկող հեղինակները տալիս են հայոց տոմարի պատճենի հեղինակի անունն ու ժամանակը: Հովհան Մամիկոնյանը «Պատմութիւն Տարօնոյ»-ի մեջ գրում է. «Աթնասա՝ ամս Ժ: Սա էր ի ժամանակս Մովսեսի Հայոց կաթողիկոսի, որ զթուականն գրեաց, զի նա էր տեղեակ տոմարի ամենայն ազգաց»<sup>2</sup>:

<sup>1</sup> Ի դեպ առկա է նաև հաշվման երկրորդ տարբերակը, թեև ոչ այնքան հաստատուն հիմունքով, որը հետևյալն է: Պարսիկները պաշարել են Երուսաղեմը Մարերի 8-ին (= Մարտ 30) և Ջատկից 10 օր հետո գրավել այն: Լրման օրը (Մարտ 30) շաբաթ է ընկել, որի հետևանքով Ջատկից կարող էր ընկնել ոչ թե Մարտի 31-ին, այլ Ապրիլ 7-ին, այսինքն հաջորդ կիրակի: Մենք հաստատուն փաստեր չունենք 19-ամյակի օրերի համար, բացառությամբ Իրեոնի 19-ամյակի առաջին տարվա՝ Նիսան 15 (= Ապրիլ 5) համար, որը մեր 19-ամյակում Նիսան 16 (= Ապրիլ 6 էր, ինչպես վերը տեսանք): Եթե այդպես է, ապա Ջատկից ընկել է Ապրիլ 7-ին, իսկ նրանից 10 օր հետո լինում է Մարեր 26 (= Ապրիլ 17): Երեք օր ոչնչացրել են քաղաքի բնակչությանը, այսինքն մինչ Մարերի 29 (= Ապրիլ 20) -ը և մնացել քաղաքում 21 օր, այն է՝ Մարգաց 20 (= Մայիս 11), որից հետո դուրս են եկել քաղաքից և այրել Երուսաղեմը հավանաբար Մարգաց 21-ին (= Մայիս 12), որը 3 օրով ավելի է համբարձման տոմարից:

<sup>2</sup> Պատմութիւն Տարօնոյ զոր թարգմանեաց Ջեմըր Ասորի, Վենետիկ, 1832, էջ 68, տե՛ս նաև Յովհան Մամիկոնեան, Պատմութիւն Տարօնոյ, աշխ. Ալ. Աբրահամյանի, Երևան, 1941, էջ 147:

<sup>1</sup> Պատմութիւն Սեբեոսի, աշխ. Գ. Աբգարյանի, Ե., 1979, էջ 115-116:  
<sup>2</sup> Թովմայի վարդապետի Արծրունոյ Պատմութիւն տանն Արծրունեաց, Թիլիս, 1917, էջ 153-154:



Կիրակոս Գանձակեցին Հայոց թվականի ընդունման կապակցությամբ գրել է . «... Ապա Հայրապետն Մովսէս (երկու գրչագիր տալիս են Հովհաննէս) ժողովեաց զիմաստունս, որ էին ի ժամանակին, յորս էր և Աթանաս ի վանաց սուրբ Կարապետին, և կարգեցին թուական Հայոց, որով ուղղեցն զՋատիկ տեառն այլովքն հանդերձ...»<sup>1</sup>:

Մխիթար Այրիվանեցու մոտ կարդում ենք. «Սրբոյն Մովսեսի կաթողիկոսի հրամանաւն՝ Տարոնացի Աթանաս ի Գլակայ վանաց արար գտոմար Հայոց»<sup>2</sup>:

Մխիթար Այրիվանեցու «գտոմար Հայոցը» ճիշտ է արտացոլում իրողութիւնը և Հովհան Մամիկոնյանի «թուականի»-ի տակ և Կիրակոս Գանձակեցու «թուական Հայոց»-ի տակ պետք է հասկանալ այդ իմաստը: Այսպիսով Հայկական սկզբնաղբյուրների տվյալներից կարելի է հետևեցնել, որ Աթանաս Տարոնացին է. «Պատճեն տոմարի Հայոց»-ի հեղինակը, որը կատարել է Մովսես կաթողիկոսի հրամանը:

Մեր մի աշխատութեան մեջ գրել ենք այդ մասին: Բերենք այդ հատվածը.

«Հովհաննես Կողբունի բնագրի համապատասխան հատվածներ համեմատութիւնը Հայտնի հնագույն բնագրերի հետ, մեզ բերում է այն համոզման, որ 1999 թվահամարի ձեռագրում գետեղված «Սկիզբն տոմարի Հայոց և պարսից զոյգ ընդ միմեան(ց)» վերնագիրը կրող ընդօրինակութիւնը ավելի հավասարազոր է Աթանաս Տարոնացու կարծեցյալ նախնական բնագրի: Ի դեպ «Սկիզբն տոմարի Հայոց...» վերնագրի «սկիզբն» բառը այլ իմաստների կողքին ունի և նախնական իմաստը: «Սկիզբն տոմարի Հայոց...»-ի<sup>3</sup> և «Պատճէն տոմարի ըստ Հայերէն թվականի զոր կարգեալ է Անանիա Շիրակացի վարդապետի»<sup>4</sup> բնագրերի համեմատութիւնից պարզվեց, որ այն իսկապես ուշ շրջանում (համեմայն դեպս Հովհաննես Իմաստասերից հետո) խմբագրված Հայոց շարժական և անշարժ տոմարին նվիրված բնագիր է: Հանելով անշարժ տոմարին նվիրված հատվածները, պարզվում է, որ Շիրակացին օգտվել է նաև «Սկիզբն տոմարի Հայոց...» բնագրից՝ թվականի (1-ին մաս), ամսամուտի, օրագրուտի, նահանջի, 19-եակի, վերագրի (մի մասի) տոմարական սահմանումները տալիս: Որոշ նմանութիւններ ունեն նաև լուսնի ծննդի լրման և գատկի լրման սահմանումները: Պետք է նշել, որ «Սկիզբն տոմարի Հայոց...» վերտառութեամբ բնագրում ևս առկա են 12-րդ դարի սկզբների որոշ ընդմիջարկութիւն կամ խմբագրութիւններ: Ի դեպ «Սկիզբն տոմարի Հայոց և պարսից...» վերնագիրը չի համապատասխանում բնագրի բովանդակութեանը, որովհետև այդ տեքստը ամբողջովին նվիրված է Հայկական մեծ տոմարին և բացառութիւն են կազմում սկզբի մասում գուգահեռաբար տեղադրված Հայկական և պարսկական ամսանունները (վերջիններս գրեթե անընթեռնելի են): Հնարավոր է մտածել, որ այդ վերնագրի «... և պարսից զոյգ ընդ միմեանց» հատվածը դրվել է ձեռագիրը ընդօրինակելիս: Մանավանդ բնագիրը (բացառութեամբ պարսկական ամսանունների) ընդօրինակվել է ավելի վաղ շրջանի ձեռագրերից: Կողբունի և այդ բնագրի համեմատութիւնից երևում է, որ այն ավելի հարազատ է Աթանաս Տարոնացու կողմից գրված հնագույն պատճենին: Վերջինս մեկնել է Անանիա Շիրակացին «Քննիկոն»-ում և «Պատճէն տոմարի» գրված »<sup>5</sup>:

Դժվար է ասածին որևէ բան ավելացնել, քանի որ Հայոց տոմարի պատճենները այնքան խիստ են խմբագրվել, որ նախնական բնագիրը համարյա անհնարին է վերականգնել:

Եթե ընդունվի մեր տեսակետը՝ «Սկիզբն տոմարի Հայոց...»-ը Աթանաս Տարոնացուն համարելու, իհարկէ բեռնաթափելով որոշ խմբագրված հատվածներ, ապա այդ բնագրի որոշ կանոններ հնարավորութիւն են տալիս եզրակացութիւնների համար:

«Սկիզբն տոմարի Հայոց...»-ի թվականի կանոնը ձևակերպվել է. «Թուական այսպէս արայ. կալ թիւ մի յԱրաց ամսոյ թուեայ մինչև ցյայտնութիւնն չորեքատկեայ թուական է: Եթէ յառաջին ամին ես Գ ի բաց երթ, եթէ յերկրորդին՝ Բ, եթէ յերրորդին՝ Ա, եթէ ի չորրորդին լեալ կալ նահանջի ամ է»<sup>1</sup>:

Թվականի այսպիսի կանոն կարող էր գրել մեկը, որը էսայան ՇԼԲ-ի սկիզբը, հետևաբար Հայոց մեկ թվականը, դրել է 552/5 թվականների քառամյակում, որովհետև «Յայտնութիւն»-ը Հայոց շարժական տոմարի Արաց 30-ին (= Հունվար 6) եղել է միայն 552-555 թվականների սահմաններում, հետևապես Հայոց 1 թվականին «Յայտնութիւն»-ը եղել է 553 թվականի Քաղոց 30-ին: Տվյալ քառամյակում Հայոց եկեղեցական տարվա սկիզբը Քաղոց 30-ին էր, որովհետև եկեղեցական տարվա սկիզբն անշարժ էր, ուստի Հայոց շարժական տոմարի ամսաթվերը չորս տարին մեկ օրով առաջ են ընկել և տեղափոխվելով մյուս ամիսներով ու ամսաթվերով վերադարձան Հայոց տոմարական տարվա սկիզբը՝ Նավասարդի 1-ը 14-րդ դարի սկիզբներին: Բացի այդ եկեղեցական տարվա անշարժ սկզբի համեմատ Հայկական ամիս-ամսաթվերը տարվա կտրվածքով ընկնում էին երկու տարվա վրա, որը լրացուցիչ բարդութիւններ էր ստեղծում: Այլ խոսքով, Աթանաս Տարոնացին ստեղծելով Պատճեն տոմարի Հայոցը շարժական տոմարի ամսաթվերը համադրեց էսայան ՇԼԲ-ի հետ, փաստորեն Հայոց շարժական տոմարը ինչ որ իմաստով վերածվեց թվականութեան համակարգի, սակայն այն դեռ նախնական փուլում էր: Հայոց թվականների խնդիրը քննել են սկսած Մ. Չամչյանից մինչև է. Աղայանը<sup>2</sup>:

Հայոց թվականութիւնը կապել է Մովսես կաթողիկոսի հետ դեռևս Մ. Չամչյանը և նրան տեղափոխել 550-ական թվականները, իսկ Մ. Օրմանյանը պաշտպանելով հանդերձ Մ. Չամչյանի տեսակետը, Մովսես կաթողիկոսին դրեց իր միջավայրը և իր իսկ կազմած ժամանակագրութիւնից ելնելով նրա 10-րդ տարում, որն է՝ 584 թ. է դնում նրա կարգադրութեան իրականացում, թեև հիշել է 574 թվականի վարկածը: Դժբախտաբար Մովսեսի տարիները ստույգ ո-

1 Ձեռ. № 1999, էջ 2բ:  
2 Տե՛ս Մ. Չամչյան, Պատմութիւն Հայոց. Բ. 2-րդ, Վենետիկ, 1785, Տոմարագիտութիւն ընդհանուր եկեղեցական եւ քաղաքական, աշխատասիրեալ ի Հ. Խաչատուր վարդապետ Սիրմելեան ի Մխիթարեան միաբանութեան, 1818, ՌՄԿԷ Վենետիկ, E. Dulaurier, Recherche sur la chronologie armenienne, Paris, 1859, Գ. Կոստանդնուպոլիս, Աստղաբաշխութիւն համառոտ, Ջմյուռնիա, 1853, Ղ. Ալիշան, Յուշիկք հայրենեաց Հայոց, Վենետիկ, 1869, Ս. Գուրմի, Տոմարական համառոտ գիտելիք, Վաղաշապատ, 1888, Գ. Աղայան, Տոմար և տոնացույց Հայաստանաց եկեղեցւոյ, Տփլիս, 1894, Ն. Ալիյան, Հայոց թվականի հաստատութեան ժամանակը, Հանդես ամսօրեայ № 4 1904 (էջ 97-102), Գուրմի, Հայոց թվականի հաստատութեան ժամանակը հատվածիս քննութեանց պատասխանս, Անդ (էջ 218-224), Գ. Աղայան, Հայոց թվականի հաստատութեան ժամանակը, Հանդես ամսօրեայ, № 4, 1904 (էջ 156-157), Մ. Օրմանյան, Ազգապատմ. Բ. Ա, Պեյրուք, 1959, Գուրմի, Հայոց եկեղեցի, Երևան, 1993, F. Ginzler, Handbuch der mathematischen und technischen Chronologie, III B., Leipzig, 1914, Լ. Սեմյոնով, Հայկական տոմարի մի քանի հարցերի մասին, Մատենադարանի գիտական նյութերի ժողովածու № 1, Ե., 1944, Աղ. Աբրահամյան, Անանիա Շիրակացու մատենագրությունը, Ե. 1944, Նույնի. Հովհաննես Իմաստասերի մատենագրությունը, Ե. 1956, Գուրմի, Հայոց գիր և գրչություն, Ե. 1973 և այլն, Grumel, La Chronologie... Paris, 1958, Լ. Իզմաստիու Աղայան, Հայկական թվականի մասին գիտելիքներ, Բազմավեպ, 1966, թիվ 7-8 և 9-10, Լ. Բաղայան, Օրացույցի պատմություն, Ե. 1970 և այլն, Բ. Թումանյան, Հայ աստղագիտության պատմություն, Ե., Բ. Ա., 1964, Բ. Բ., 1968, Գուրմի, Տոմարի պատմություն, Ե., 1972, Գուրմի, Հայ աստղագիտության պատմությունից, Ե., 1985 և այլն, Ջ. Էյնաթյան, «Պատճէն տոմարի հայոց մեծացն» և նրա մի քանի մեկնությունները, Լրաբեր, № 7, 1976, Գուրմի, Հակոբ Ղրիմեցի, Տոմարագիտական աշխատություններ Ե., 1987 և այլն, Գ. Բրուտյան, Հայոց տոմարի որոշ հարցերի մասին, Էջմիածին, 1983, № 7 և 1984 № 5 և այլն, Է. Աղայան, Ակնարկներ հայոց տոմարների պատմության, Ե., 1986 և այլն:

1 Կիրակոս Գանձակեցի, Պատմութիւն հայոց, Ե., 1961, էջ 62:  
2 Մխիթարայ Այրիվանեցոյ, Պատմութիւն Հայոց, Մ. 1860, էջ 48:  
3 Ձեռ. № 1999, էջ 67բ-78բ:  
4 Ձեռ. № 4298, էջ 190բ-204բ:  
5 Բ. Վարդանյան, Հայաստանի չափերն ու կշիռները, Երևան, 1989, էջ 23:



որոշված չեն հատկապես նրա 1-ին տարին: 6-րդ դարի այդ հատվածի կաթողիկոսների շարքի միակ հիմնավորված թվականը դա Ներսեսի 4-րդ տարին է, որը համարված է Խոսրովի 24-րդ տարվա հետ, այսինքն 555 թ. Մարտի 21, կիրակի, Արմավենյաց օրը, երբ տեղի ունեցավ Դվինի եկեղեցական ժողովը, իսկ մյուսը 7-րդ դարի սկզբի Աբրահամի կաթողիկոսության տարիները այն է՝ 607-610 թթ. Հիմնված ժամանակակից և ժամանակին մոտ կանգնած սկզբնաղբյուրների վրա: Միջանկյալ հատվածի տարիները պայմանական են մի քանի տարվա շեղումներով, ուստի տոմարի նորոգման տարեթիվերը պետք է կապել լուսնի 19-ամյակի տարիների հետ, ինչպիսիք էին 581 թ. և 591 թ., որովհետև ՇԼԲ-ի գործադրությունը կապված էր նրա սկզբների հետ, որից միայն պատմական հակասական տեղեկություններից ընտրել ամենահավանականը սպասել նոր տվյալների: Այդ իմաստով ամենահավանական տարեթիվը կարելի է ընդունել 581 թ., մանավանդ Անանիա Շիրակացու ՇԼԲ-ի 828 և 1360 տարեթիվերի մեր վերլուծությունից հետո:

Այսպիսով Մովսես կաթողիկոսի կարգադրությամբ Աթանաս Տարոնացին դրեց Հայոց թվականության համակարգի հիմքը գրելով պատճեն տոմարի Հայոցը, որը խարսխված էր էասյան ՇԼԲ-ի վրա և հաստատվեց 581 թվականի Դվինի եկեղեցական ժողովում: Փաստորեն Մովսես կաթողիկոսը միանգամից կատարեց երկու բարեփոխում մի կողմից Հայոց տոնացույցի հիմքում դրեց էասյան ՇԼԲ-ն, մյուս կողմից Աթանաս Տարոնացու ջանքերով գրվեց Պատճենը, որը Հայոց թվականության համակարգի սկսման առաջին քայլն էր: Սակայն միայն Պատճենով, ինչպես երևում է մեզ հասած կցկտուր տեղեկություններից, հնարավոր չեղավ Հայոց թվականության համակարգի հարցը վերջնականորեն լուծել: Պատահական չէ, որ հնագույն հիշատակարաններից մեկում, որը մեզ է հասել հետագա ընդօրինակությամբ, գրված է. «... յամի թուականութեան Հայոց նոր եղելով երկրորդ ամի, յաւուրս տեառն Մովսեսի կաթողիկոսի՝ որ ի Վաղարշապատ»: Մեր ուսումնասիրության մեջ ցույց ենք տվել, որ նոր հաստատված Հայոց երկու թվականը պետք է հասկանալ Մովսեսի 5-րդ տարին, այն է՝ 582 թվականը<sup>1</sup>: Եթե հասկանանք Հայոց թվականի սկիզբը, ապա անհասկանալի է Մովսես կաթողիկոսի հիշատակությունները: Հիշատակարանի հեղինակը պետք է գրեր Հայոց 30 թվականին, բայց գրել է նոր հաստատված Հայոց թվականի երկրորդ տարին, այսինքն դեռևս չէր յուրացրել Հայոց թվականության համակարգը: Այնուամենայնիվ Աթանաս Տարոնացու պատճեն տոմարի Հայոցը կարևոր դեր խաղաց Հայոց տոմարը յուրացնելու գործում և 7-րդ դարի, հատկապես վիմական արձանագրությունների մեջ, լայնորեն օգտագործված ենք գտնում Հայոց շարժական տոմարի ամիս-ամսաթիվերը, սակայն հազվագյուտ Հայոց թվականը, որոնցից մեկին անդրադարձել ենք Անանիա Շիրակացու հիշատակարանների մեկնության կապակցությամբ: Հայոց թվականության համակարգը հստակ և անխափան սկսեց գործել, երբ Շիրակացին կազմեց Հայոց ՇԼԲ-ն զուգահեռ դնելով էասյանները ՇԼԲ-ի պատճեններից մեկի հետ, որը հուլյան ամիս-ամսաթիվերով էր: Պատահական չէ, որ Հովհաննես Կոզեռնը «գիր թուականութեան Հայոց ազգիս»-ը համարում է Անանիա Շիրակացու Հայոց ՇԼԲ-ն, որի մասին հատուկ ուսումնասիրություն է կատարվել հետագա շարադրանքում. դա այդպես է, սակայն Հայոց թվականի հիմքերը գցել էր Մովսես կաթողիկոսը, երբ հաստատեց էասյան ՇԼԲ-ն և Պատճեն տոմարի Հայոցը:

Հայոց թվականության համակարգի ներքին օրինաչափությունները և Հայոց թվականը թվականության այլ համակարգերի, հատկապես քրիստոնեականի, վերածելը հատուկ ուսումնասիրության խնդիր է, որովհետև վերոհիշյալ հարցերը հիմնավորելու համար ավելի շատ էջեր են պահանջում, քան ներկա շարադրանքը:

<sup>1</sup> Տե՛ս Ռ. Հ. Վարդանյան, Անանիա Շիրակացու հիշատակարանների մեկնության շուրջը և մի քանի տոմարակա-ժամանակագրական հարցեր, Պատմա-բանասիրական հանդես, 1987, № 1, էջ 208:

Այստեղ ասենք միայն հետևյալը, որ Հայ մատենագրության մեջ պահպանված տարեթիվերը և ամսաթիվերը, հետազոտությունները ինչպես և սկզբնաղբյուրների բացահայտ վկայություններն ու Հայոց թվականի համար գրված տոմարական կանոնները ցույց են տալիս, որ 7-րդ դարի 20-30-ական թվականներից սկսած սահմանափակ կիրառություն է ունեցել Քրիստոսի չարչարանաց թվականը (Հովհան Մայրավանեցի-Մայրագոմեցի, որոշ ուշ շրջանի հիշատակարաններ), իսկ 7-րդ դարի երկրորդ կեսից սկսեց օգտագործվել Քրիստոսի Ծննդեան թվականի Դիոնիսյան (Անանիա Շիրակացի), հունական (Անանիա Շիրակացի, Փիլոն Տիրակացի և այլն), ինչպես և հավանաբար այլ տարբերակներ: Աթանաս Տարոնացու պատճենից, իսկ ավելի հիմնավորապես Անանիա Շիրակացուց սկսած Հայոց և Դիոնիսյան, այսինքն՝ ներկա, թվականների տարբերությունը դրել են 552 և տվյալ Հայոց թվական քրիստոնեական թվականի վերածելու կանոնը (նույնպես տարբերությունը տալով 552): Այլ խոսքով 553 թվականից են սկսել հաշվել Հայոց մեկ թվականը ըստ էության անտեսելով 552 թվականի ժամանակահատվածը, թեև գիտակցվել է վերջինիս գոյությունը: Դրան նպաստել է Հայոց եկեղեցական տարվա սկիզբը (= Հունվար 6), Ջատիկ 1-ին տարվա օրը (= Ապրիլ 20), արտահայտելը և այլն: Այդ ուղղության ներկայացուցիչներ են Անանիա Շիրակացին, Ղևոնդը, Հովհաննես Դրասխանակերտցին, Ասողիկը, Հովհաննես Կոզեռնը, Մատթեոս Ուռհայեցին և այլն, որոնցից բացահայտ վկայություններ են թողել վերջին հեղինակները:

Անիի դպրոցի ներկայացուցիչները ստեղծել են քրիստոնեական Հայկական թվականի երկրորդ տարբերակը, որոնք Հայոց և քրիստոնեական թվականի տարբերությունը սահմանել են 556 (նաև 555), այսինքն Հայոց մեկ թվականի սկիզբ են համարել 556 քրիստոնեական Հայկական թիվը: Այն սահմանափակ կիրառություն է ունեցել (11-րդ դարի սկզբի Անիի կաթողիկեի արձանագրությունը, 11-րդ դարի կեսերին գրված ժամանակագրությունը, առանձին հիշատակարաններ և այլն):

11-րդ դարի վերջին 12-րդ դարի սկզբին Գևորգ Մեղրիկը, ինչպես վկայում է նրա աշակերտ Սամուել Անեցին, ստեղծեց քրիստոնեական Հայկական թվականի 3-րդ տարբերակը, որը լայն կիրառություն ունեցավ և նույնիսկ թվականի կանոնը փոխեցին և Հայոց ու քրիստոնեական թվականների տարբերությունը 552-ից դարձրին 553, այսինքն Հայոց մեկ թվականը համարեցին սկսած 554 թվականից: Այդ ուղղության ներկայացուցիչներ են Հովհաննես Սարկավազը, Սամուել Անեցին, Կիրակոս Գանձակեցին, Վարդան Արևելցին, Ստեփանոս Օրբելյանը, Հակոբ Ղրիմեցին, շատ հիշատակարանների հեղինակներ և այլն: Ուշ շրջանում կիրառություն ունեցավ նաև 551 թվականը (17-րդ դարի ժամանակագիրներ և այլն): Օգտագործվել են նաև քրիստոնեական թվականի այլ տարբերակներ՝ հունական, ասորական, ֆռանգաց և այլն, որպես Հայոց թվականի համարժեքներ:

Այս համառոտ ակնարկն անգամ ցույց է տալիս, որ հիշյալ տեսանկյունն առանձին շարադրանք է պահանջում: Միայն նշենք, որ բերված տվյալները կօգնեն հասկանալու այն մատենագրական տեղեկություններին, որոնք բերվեցին վերևում էասյան ՇԼԲ-ի և Հայոց թվականի սկզբի կապակցությամբ:

Էասյան ՇԼԲ-ի և Հայոց թվականության մասին ուսումնասիրողների գրած կարծիքներին հատուկ չենք անդրադառնում: Այս հարցերի մասին հետազոտողների ստացած դրական արդյունքները, որոնք հարմար ենք նկատել օգտագործել ենք այս կամ այն հարց լուծելիս, իսկ երբեմն նոր մեկնաբանումներ ենք տվել որոշ թեր արտահայտված կարծիքներին:

Հանրահայտ է, որ Հայոց մեկ թվականի և ներկա թվականների, այն է՝ 552-553 թթ. համարժեքների, ինչպես և Հայոց շարժական տոմարի հուլյան անշարժ տոմարի ամիս-ամսաթիվերի զուգահեռների հարցերը և այլ խնդիրներ, որոնք գիտականորեն հիմնավորվել են նախորդների կողմից և կազմվել ժամանակագրական-տոմարական աղյուսակներ, ինչպես և այլ խնդիրներ:

կրկնելու անհրաժեշտությունը չենք տեսել, միայն աշխատել ենք նոր արդյունքներով հաստատել դրանք:

ՇԼԲ-ի, Հայոց տոմարի ու թվականության զարգացման պատմությունը, քննարկվող ժամանակագրական կտրվածքում, տվել ենք, քանի որ մի կողմից դրանք Հայոց տոնացույցի կարգավորման հիմքերն էին, մյուս կողմից նրանց միջոցով հնարավոր է դառնում լուծել՝ հայագիտության համար կարևորություն ներկայացնող խնդիրներ, որոնք թերի են ուսումնասիրվել կամ ընդհանրապես չեն հետազոտվել մասնագիտորեն:

Այսպիսով հայկական սկզբնաղբյուրների վկայությունները հիմնավորում են, որ հասյան ՇԼԲ Զատկացուցակը ստեղծվեց և գործադրվեց 562 թվականին, երբ լուսնի լրումը ընկավ Ապրիլ 4 = Նիսան 14-ին ընդունեցին թե 19-ամյակի, թե ՇԼԲ-ի առաջին տարի և տոմարական հաշվումները կատարեցին այդ տարվանից սկսած: Միաժամանակ հասյանները շարունակեցին Անդրեասի 200-ամյա Զատկացուցակը և հասյան ՇԼԲ-ի սկիզբը եղավ 553 թ., երբ լուսնի լրումն Ապրիլ 13 = Նիսանի 23-ին էր: Այն եղավ Հայոց և հասյան թվականի սկիզբ՝ հաշվման հիմաստով:

Մովսես կաթողիկոսի կարգադրությամբ և 581 թ. Դվինի եկեղեցական ժողովի հաստատմամբ գործադրվեց հասյան ՇԼԲ-ն, իբրև Հայոց եկեղեցու Զատկացուցակ: Միաժամանակ ստեղծվեց Հայոց տոմարի պատճենը, որով սկիզբ դրվեց Հայոց թվականության համակարգին, որտեղ Հայոց թվականի 1-ին տարին համադրվեց ներկա 552-553 թթ., հայոց թվականության համար 1-ին տարին դարձավ Ապրիլի 13-ի լուսնի լրումով սկսված տարի, իսկ տոմարական հաշվումները սկսեցին Ապրիլ 4-ից՝ 19-ամյակի 10-րդ տարուց, որը նույնն է ինչ Հայոց 10 թվականը: Հայոց թվականության համակարգը վերջնականորեն ներդրվեց Հայոց մեջ, երբ Շիրակացին կազմեց Հայոց ՇԼԲ-ն համադրելով հասյանների ՇԼԲ-ի մի տարբերակի հետ, որը հուլյան տոմարի ամիս-ամսաթվերով էր:

Ինչպես տեսանք Հուլյան տոմարը ներդրել է Հայոց մեջ Սահակ կաթողիկոսը, երբ թարգմանեց և խմբագրեց «Կանոնք ընթերցուածոց»-ը՝ ստեղծելով Հայոց տոնացույցը:

## ԳԼՈՒԽ Ը

### «ԿԱՆՈՆՔ ԸՆԹԵՐՑՈՒԱԾՈՑԻ» ԵՐՐՈՐԴ ԽՄԲԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ: ԱՐՏԵՄՈՆԱԳԻՐ ԸՆԹԵՐՑՈՒԱԾՈՑԻ ՈՐՈՇ ՏՈՆԵՐԻ ԿԻՐԱՌՈՒՄԸ ՀԱՅՈՑ ՄԵՋ 630-710-ԱԿԱՆ ԹՎԱԿԱՆՆԵՐԻՆ

Վերը տեսանք, որ «Կանոնք ընթերցուածոց»-ի երրորդ խմբագրության գրչագրեր են Վենետիկի 169 ու Երուսաղեմի 121 (2-րդ մաս) ձեռագրերը: Այս խմբագրության մեջ ի տարբերություն նախորդների կատարվել է մուծում Վարդավառի կանոնի՝ համապատասխան ընթերցվածներով հանդերձ:

Քիչ առաջ ցույց տվեցինք, որ 550-ական թվահամարներին Վարդավառի տոնը կենցաղավարում էր Հայոց մեջ: Հասկանալի է, որ Վարդավառի կանոնը կարող էր մտնել «Կանոնք ընթերցուածոց» կամ այդ ժամանակ կամ դրանից որոշ ժամանակ անց: Բայց քանի որ 550-ական թվականներին դեռևս չէր լուծված տոնական տարվա հիմքը հանդիսացող հասյան ՇԼԲ-ի խնդիրն, ուստի հավանական է, որ «Կանոնք ընթերցուածոց»-ի մեջ նոր փոփոխություն կատարելը տեղի ունեցավ այդ հարցի լուծումից հետո: Պարզ է, որ «Կանոնք ընթերցուածոց»-ի երրորդ խմբագրությունը կատարել է կամ Մովսես կաթողիկոսը կամ Կոմիտաս կաթողիկոսը: Մենք հակված ենք մտածել, որ այդ փոփոխությունը կատարել է Կոմիտաս կաթողիկոսը, մանավանդ Հոփսիսեանց նվիրված շարականի ստեղծումը կողմնակիորեն հուշում է այդպիսի տարբերակի գոյությունը: Իսկ Մովսես կաթողիկոսը, ինչպես տեսանք, կատարեց հասյան ՇԼԲ Զատկացուցակի ներդրումը և Հայոց տոմարի պատճենի հաստատումը: Այլ խոսքով «Կանոնք ընթերցուածոցի» երրորդ խմբագրությունը կատարվել է մինչև 630-ական թվականները, այն է՝ մինչև «Արտեմոնազիր ընթերցուածոցի» կիրառումը եզր կաթողիկոսի օրոք, որի մասին կխոսենք քիչ հետո:

Ստեփանոս Սյունեցին գրել է. «Այլ թէ ընդ էր ոչ կարգեաց Հակոբոս յընթերցուածին տաւն աւետեացն, նաև ոչ Կիւրղի փոյթ եղեալ»<sup>1</sup>: Այս տեղեկությունից երևում է, որ «Կանոնք ընթերցուածոց»-ների մեջ չի եղել Ավետեաց Աստուածածնի տոնը, հետևապես կանոնը: Դա նշանակում է, որ «Կանոնք ընթերցուածոց»-ի հնագույն խմբերի թվագրումը, որոնց թվում երրորդ խմբագրության, առաջ էր քան 8-րդ դարի սկզբները, որովհետև իսկապես դրանց մեջ Ավետեաց Աստուածածնի կանոնը բացակայում է: Այն մուծվեց Հովհան Օձնեցու խմբագրած «Կանոնք ընթերցուածոցի» մեջ:

Ուշագրավ է, որ «Կանոնք ընթերցուածոց»-ի երրորդ խմբագրության մեջ, ինչպես նախորդներում, Սուրբ Խաչի տոնը առանձնացված չէ, այլ տոնվել է Նավակատեաց Եկեղեցու տոնի երկրորդ օրը: Այն առանձնացվեց և դրվեց Սեպտեմբեր 14-ի կանոնի տակ 8-րդ դարի սկզբներին: Այս փաստը նույնպես խոսում է այն բանի օգտին, որ «Կանոնք ընթերցուածոց»-ի երրորդ խմբագրությունը տեղի է ունեցել մինչև 7-րդ դարի 30-ական թվականները, որովհետև Սուրբ Խաչի տոնը սկսեց արմատապես տեղ գտնել տոնացույցերի մեջ Քրիստոսի Խաչափայտի հետ կապված հայտնի դեպքերից հետո:

Վերահիշյալ դիտողությունները կասկած չեն թողնում, որ «Կանոնք ընթերցուածոցը» խմբագրվել է 6-րդ դարի կեսերից - 7-րդ դարի 30-ական թվականներից առաջ: Մենք նախապատվություն ենք տալիս Կոմիտաս կաթողիկոսին, որպես կանոնքի նոր խմբագրի:

<sup>1</sup> Գիրք թղթոց, էջ 327:

Ըստ Հայկական սկզբնաղբյուրների 630-ական թվականներից սկսած մինչև Հովհան Ծանեցի Հայոց տոնացույցի մեջ փոփոխություններ կատարվեցին:

Ներկայացնենք որոշ վկայություններ: «Սակա ժողովոց»-ի հեղինակը գրում է, որ Եզր կաթողիկոսը և նրա հաջորդները «նզովիվք չափ ի բաց մերժին, և զմիաւորութիւն Մննդեանն և զՄկրտութեանն և զխաչեցարն յերիս սրբասացութեանցն ի բաց մերժեցին մինչև ցեղիայ, որ եկաց ամս ժԳ»<sup>1</sup>, իսկ Մանազկերտի ժողովում (726 թ.) «Հաստատելով զհաւատս ուղղութեան տնաւրինական բանին Աստուծոյ»<sup>2</sup>: Ասողիկի մոտ կարդում ենք.

«Սա (Տէր Յովհաննէս փիլիսոփայն ի գաւառէ Տաշրաց ի գեղջէ Օձնայ) արար ժողով ի Մանազկերտ քաղաք ի սահմանագլուխն Հարքայ ամենայն եպիսկոպոսօք Հայոց, ընդ որս էր և Գրիգորիս փիլիսոփայ քորեպիսկոպոս Արշարունեաց, և զեպիսկոպոս յԱսորւոց Յակոբիկ տանէ՝ հրամանաւ պատրիարզին իւրեանց, յաւուրս Սմբատայ իշխանութեանն, սրբելով յաշխարհէս զքաղկենդոնականացն երկարնապի խոստովանութիւն և զաւանդութիւնն՝ որ խմորով և ջրով ապականեն զսուրբ խորհուրդն, և ձկամբ և ձիթով և զինուով՝ զպահս քառասորդացն և զայլ աւուրս կանոնեալս, որ յաւուրցն Եզրի մինչև ցայս մնացեալ էր յաշխարհիս Հայոց ի մասինն Յունաց: Չայս ամենայն իբրև խմոր հին ի բաց ընկեցեալ՝ սահմանեցին խոստովանութիւն հաւատոյ՝ մի բնութիւն մարմնացելոյ Բանին Աստուծոյ, և առանց խմորոյ և ջրոյ կատարել զսուրբ Խորհուրդն և զպահոց աւուրսն սրբութեամբ տա(ւ)նել ի գլուխ, այլ վասն կարեաց հիւանդաց և մարմնասէր իշխանաց թողացուցին զչաբաթ և զկիրակէ. ոչ ուխտի մանկանց եկեղեցւոյ և ճգնաւորաց Քրիստոսի»<sup>3</sup>: Ստեփանոս Տարոնացին ուշադրություն է դարձրել Եզրի և նրա հաջորդների օրոք տեղի ունեցած փոփոխություններին և Հովհաննէս Ծանեցու կատարած բարեփոխումներին մասնավորապես Հայաստանի հունական մասում:

«Տօնապատճառ» ժողովածուի խմբագիրներից Հավանաբար Սամուել Կամրջաձորեցին գրել է. «Թագաւորն Յունաց Հերակղ ժողով արար ի Կարնո քաղաք, Յունաց իմաստասիրաւքն և զոմանս ի Հայոց. Եզր կաթողիկոսին Հայոց, որ եղև եզր հաւատոտ տգետ գոլով: Կամեցան քննութիւն առնել հաւատս եւ Եզր հաւանեցաւ ժողովոյն Քաղկենդոնի, և զկնի նորա Զ կաթողիկոս նստան Քաղկենդոնի աղանդովն ամս ՂԶ, զԱռաջաւորաց պահս և զամենայն ի բաց բարձինի Հայոց, և ապա յետ այտորիկ շնորհաւք Սուրբ Հոգոյն ընդրեցաւ ի յաթոռ հայրապետութեան Սրբոյն Գրիգորի Յոհաննէս իմաստնասեր կատարեալ ի գիտութիւն Աստուծաին մատենից: Արար ժողով ի Մանազկերտ բազում եպիսկոպոսովք և վարդապետաւք և զառաջին հաւատն, որ եղաւ ի սրբոյն Գրիգորէ աւանդութիւն հաստատեցին և նորին մարգարեութեամբն լցաւ... և դարձեալ եղին զԱռաջաւորաց պահսն և ի կատարմանն գլխատակ քաջ նահատակի (Սուրբ Սարգիս - Ռ. Վ.) և առաւել նշանագործին խորհրդաբար, զի որք լուծցին պատիժս կրեսցեն, որպես եղեալ յամենայն ժամ և լինի մինչև ցայսպէս ժամանակի...»<sup>4</sup>:

Կիրակոս Գանձակեցին վկայում է, որ Եզրը «փոխեաց զամենայն ուղղափառ կարգաւորութիւնս եկեղեցւոյ, և զընթերցուածն Յակոբայ և Կիւրղի, փոխեալ այնորիկ զԱրտեմոնին երդեալ, զոր յանդիմանեաց Սուրբ վարդապետն Յոհան...»<sup>5</sup>: Իսկ Հովհան Ծանեցին «Կարգեալ ընթերցուածն սրբոյն Յակոբայ և Կիւրղի և զամենայն տօնան՝ որպէս կարգեալ էր սրբոյն Գրիգորի

1 Գիրք թղթոց, էջ 221-222:  
2 Աճղ., էջ 224:  
3 Տե՛ս Ստեփանոսի Տարոնեցւոյ Ասողկան Պատմութիւն տիեզերական, 2-րդ տպ., - Պետերբուրգ, 1885, էջ 102-103:  
4 Ձեռ. N° 3795, էջ 79բ:  
5 Կիրակոս Գանձակեցի, Պատմութիւն հայոց, էջ 54-55:

և տօնեցին ի Իճ դեկտեմբերի ամսոյ Դաւթի Մարգարէին և Յակոբայ առաքելոյն, զոր յայլ ազգս ծննդեան Տեառն տօնեին...»<sup>1</sup>:

Վերոհիշյալ վկայությունները, ինչպես և Հովհան Ծանեցու «Կանոնք ընթերցուածոցի» նոր խմբագրումը և նրա հիմքի վրա Հայոց ըստ շաբաթուոյ տոնացույցի ստեղծումը և կարգաւորութիւնը Հունվարի 6-ը պաշտօնապես վերականգնելու մասին որպես Քրիստոսի Մննդեան և Աստուածայայտնութեան տոնական միասնական օր, ցույց են տալիս, որ Եզր կաթողիկոսից սկսած Հայոց տոնացույցում կատարել էին խմբագրություններ և «Կանոնք ընթերցուածոց»-ը փոխարինել էին «Արտեմոնադիր ընթերցուածոց»-ով, այսինքն ընդունել էին հունական եկեղեցու կողմից տոնվող մի շաբաթ տոներ, այն է՝ Քրիստոսի Մնուկը տոնում էին Դեկտեմբերի 25-ին, իսկ Աստուածայայտնութիւնը՝ Հունվարի 6-ին, Քառասորեա Գալուստը՝ Փետրվարի 2-ին և Ավետեաց Աստուածածնի տօնը՝ Մարտի 25-ին: Սրանք իրար հետ կապված տոներ էին և - հիմնված Չաբարիայի պապանձման և Եղիսաբեթի Հղիութեան օրերի ընդունելու հետ: Հունական ծեսին հետևողները Չաբարիայի պապանձումը և Եղիսաբեթի Հղիութիւնը դնում էին Թշրի 10-ին (= Սեպտեմբերի 27-ին) և այնտեղից ստանում վերոհիշյալ տոնական օրերը, իսկ Հայկական ծեսի կողմնակիցները Չաբարիայի պապանձումը դնում էին Թշրին 10-ին, իսկ Եղիսաբեթի Հղիութիւնը Թշրին 22-ին (= Հոկտեմբերի 9), այսինքն՝ Քալուստյան և Տաղավարահարաց տոներից հետո, որը տևում էր 12 օր (5+7), որից հետո դժվար չէր ստանալ Քրիստոսի Մննդեան և Աստուածայայտնութեան օրը՝ Հունվարի 6-ը, նրա 40-օրեա գալուստը՝ Փետրվարի 14-ը, իսկ Ավետայց Աստուածածնի տոնը՝ Ապրիլ 6-ին, այսինքն 12 օրվա տարբերությամբ: Այդ տոների տեսական և գործնական հիմնավորմանն անդրադարձել են ինչպես տոների առանձին մեկնությունների (Անանիա Երրակացի և այլ հեղինակներ), այնպես էլ Տօնապատճառ անվանվող ժողովածուների մեջ, որոնց հեղինակներն են Չաբարիա կաթողիկոսը, Սամուել Կամրջաձորեցին և այլն: Թերևս Հունվարի 6-ին Քրիստոսի Մննդեան և Աստուածայայտնութեան օրվա և հունական եկեղեցու կողմից ընդունված Իրիոնի Չատկացուցակի քննադատությունն էր պատճառը, որ պաշտօնապես չընդունեց և չհաստատեց Անաստաս կաթողիկոսը և որոշ ժամանակ կաթողիկոսարանում փակի տակ մնաց Անանիա Երրակացու Տոմար-ժամանակագրությունը, այն է՝ Քննիկոնը: Քանի որ վերոհիշյալ թվարկած կաթողիկոսների մեջ էր մտնում նաև Անաստաս կաթողիկոսը՝ Անանիա Երրակացու պատվիրատուն:

1 Աճղ. էջ 67-70:

ՍՐԲԵՐԻ ՀԻՇԱՏԱԿԻ ՏՈՆԵՐԻ  
ԿԱՏԱՐՈՒՄԸ ՀԱՅՈՑ ՄԵՋ (4-8-ՐԴ ԴԱՐԵՐ)

«Բիւզանդարան պատմութիւնք»-ի հեղինակի մոտ գտնուած ենք թեև ընդհանուր բնույթի, սակայն հետաքրքրութիւններ կայանող տեղեկութիւններ կապուած 4-րդ դարում կարտարվող տոնախմբութիւնների, մասնավորապես կապուած սրբերի հիշատակի տոնական օրերի հետ: Նա պատմում է «Զայսու ժամանակաւ երթեալ Հասանէր եպիսկոպոսապետն Վրթանէս ի մեծն յառաջին ի մայր եկեղեցեացն Հայոց, որ էր յերկրին Տարօնու, ուր նշանօքն եղեւօք կործանեցան բազիլիք մեհենիցն յայնժամ վասն ևս առ մեծաւն քահանայապետաւն Գրիգորիւ: Սա երթեալ կատարէր անդ, ըստ Հանապազ սովորութեանն, գտեառնն զխաչական զփրկութեանն զպատարագն Գոհութեան, զհաղորդութիւն չարչարանաց յիշատակի, զկենդանարարն և զազատիչն զմարմին և զարիւն աստուածորդոյն տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի: Քանզի այսպէս իսկ սովոր էին եպիսկոպոսապետք Հայոց, հանդերձ թագաւորօքն և մեծամեծօքն, նախարարօքն և աշխարհախումբ բազմութեամբք պատուել զնոյն տեղիս, որ յառաջ էին տեղիք պատկերաց կռոցն, և ապա յանուն աստուածութեանն սրբեցան, և եղեն տուն աղօթից և տեղի ուխտից ամենայն ումեք: Մանավանդ յայն ի գլխաւոր տեղին յեկեղեցին ժողովել ի յիշատակ սրբոցն՝ որ էին անդ, կատարել անդ ամի ամի եւթն անգամ, որք զնոյն ունէին սովորութիւն առաւել ևս ի մեծի մարգարեարան մատրանն Յովհաննու: Սոյնպէս և յառաքելարանս տեառն աշակերտացն: Սոյնպէս ի վկայարանս մարտիրոսացն ամի ամի ժողովեալք, զօր տօնին յիշատակի նոցա վարուց գործոց կենաց քաջութեան խմբեալ ցընծային»<sup>1</sup>:

Վերոհիշյալ հատվածում շատ հստակ ասվում է, որ հայերը պաշտում էին կուռքերի տեղերը, իսկ քրիստոնեությունը ընդունումից հետո այդ նույն տեղերը սրբազործվեցին և դարձան աղոթքի տներ և ուխտատեղիներ քրիստոնյա հայերի համար: Նա, ինչպես տեսանք, հիշատակում է մի խումբ սրբատեղիներ, որտեղ սովորություն համաձայն հավաքվում և կատարում էին սրբերի հիշատակը յուրաքանչյուր տարի՝ յոթ տարբեր տեղերում, որոնց թվում գլխավոր եկեղեցում՝ Հովհաննես մարգարէի մատուռում: Ի դեպ թե Ագաթանգեղոսի պատմության հեղինակը, թե «Բիւզանդարան պատմութիւնք»-ի մեջ հատուկ վկայվել է Հովհաննես Մկրտչի հիշատակի օրվա կատարման մասին: Այդ տոնը, ինչպես տեսանք, կատարում էին անշարժ տոնական օրվա՝ Հունիս 24-ին, որը համընկնում էր հեթանոսական շրջանում տոնախմբվող ամառային տոնական շարքի սկզբնական օրերից մեկի հետ: Այն շարունակվեց տոնվել մինչև 8-րդ դարի սկզբները, որպես անշարժ տոնական օր՝ տեղայնացված ձևով: 5-րդ դարի սկզբներին թարգմանված և խմբագրված «Կանոնք ընթերցուածոցում»-ում գտնուած ենք Հովհաննես Մկրտչի երկրորդ տոնի օրը, նույնպես անշարժ տոնական օրով՝ Օգոստոսի 29-ին, որը հավանաբար կատարվել է նաև վաղ շրջանում, երբ նկատի ենք ունենում Ագաթանգեղոսի պատմության հեղինակի այն նշումը, որ Գրիգոր Լուսավորիչն է սահմանել Հովհաննես Մկրտչի համար երկու տոնական օր: Վերոհիշյալ հեղինակների հիշատակած սրբերի տոների մասին տված տեղեկություններին կանդորդառնանք քիչ հետո: Այժմ բերենք «Բիւզանդարան պատմութիւնք»-ի հեղինակի թանկարժեք վկայությունը Պարսից պատերազմի ժամանակ ընկած զոհերի հիշատակի օր սահմանելու մասին: Նա գրում է. «Անկանիւր ի պատերազմին այնմիկ մեծ սպարապետն Հայոց Վեչէ և լինէ ամենայն աշխարհին սուգ անհնարին, զի բազում անգամ էր տէրն փրկութիւն

<sup>1</sup> Փալստոս Բուզանդ, Պատմութիւն Բայոց, էջ 14-16:

տուէալ Հայոց ի ձեռն նորա: Ապա ժողով էր եպիսկոպոսապետն Վրթանէս, միտթարէր զամենեսեան, և զինքն թագաւորն զնոսրով, և զօրսն ամենայն, որք բազում անձկարեաց արտասուկաթ ողբովք և ծնանրաթախիկ հոգով, մեծաւ կոծովք և անհնարք աշխատանօք պաշարեալք, զգնացելոցն կարիս մնացելոցն համարեալ սգային: Զորս մատուցեալ սփոփեր զնոսա մեծն Վրթանէս, և ասէր Միտթարեացուք ի քրիստոս, վասն զի մանաւանդ որք մեռանն, նոքա յաղագս աշխարհի և եկեղեցաց և աստուածագործ օրինացն տուչութեան, զի մի գերեալ քանդեսցի աշխարհս և սուրբ եկեղեցիքն անօրինեսցին, և կամ մարտիրոսք անարգեսցին, և կամ սուրբ սպասքն ի ձեռս պղծոցն և անօրինացն անկցին, և սուրբ ուխտն այլայլեսցի և որդիք մկրտութեամբ գերութեամբ անկցին ի պէսպէս պղծութիւնս անօրէնութեան կարգաց պաշտամանց: Եւ եթէ զաշխարհս ունիցին արգեւք թշնամիքն, և զիւրեանց զանօրէն զանկրօն զանաստուած կրօնիցն զօրէնս աստ արգեւք հաստատէին, որ զօր խնդրեմքս, քաւ և մի լիցի: Իսկ մեր բարեպաշտութեան նահատակք ի վերա այսորիկ ճգնեալ պատերազմաւ, զչար պահեալ հեռացուցեալ հալածեալ յաշխարհէ մեռան, զի մի յայսպիսի աստուածապաշտ և աստուածասէր աշխարհ անօրէնութիւն մտեալ չարի կամաց ի ծառայութիւն անկցէ, և բազում ոգիս ջերմեռանդ սիրով բնութեան ի միմեանց քակտեալ քայքայեսցէ: Իսկ սոքա մինչդեռ կենդանի էին, արդար վաստակօք ի վերայ այսորիկ վաստակեցան, և ի մահուն իւրեանց զմիամտութեան հաստատութեան զանձինս փոխանակ տալով ընդ ճամարտութեան տեսան, մատուցին ի վերայ եկեղեցեաց և ի վերայ մարտիրոսաց, և ի վերայ ուխտին սրբութեան օրինացն, և ի վերայ կարգաց հաւատոցն և ի վերայ ուխտին քահանայութեան, և ի վերայ անթիւ նոր ի Քրիստոսի մկրտելոցն, ի վերայ բանակի տեառն աշխարհիս: Որք այնմ ամենայնի փոխանակ զանձինս իւրեանց ոչ խնայեցին, ընդ վկայս Քրիստոսի է նոցա համար պատուոյ: Արդ մի լացցուք զնոսա, այլ պատուեսցուք ընդ ճամարտութեան առ նահատակսն դիցուք ընդ աշխարհ օրէնս յաւիտեանս յաւիտենից զի ամենայն ոք զսոսա յիշատակ քաջութեան իրբև Քրիստոսի նահատակաց անխափան կատարեսցէ: Եւ մեք տօնս արասցուք, և ուրախ լիցուք զի աստուած այսօրեւք հաճեսցի ընդ մեզ, յայսմ հետէ խաղաղութիւն շնորհեսցէ: Եւ եղ օրէնս ընդ աշխարհ մեծ քահանայապետն Վրթանէս, զնոցա առնել զյիշատակն ամ յամէ և որք փոխանակ աշխարհին փրկութեան մեռանիցին ի նմանութիւն նոցա եղ կանոն՝ յիշել զսոսա առ սուրբ սեղանն աստուծոյ ի ժամ պատարագին յորժամ զանուանս սրբոցն կարգիցեն, և ապա զենի նոցա զՀայոցն և մնացելոցն յանցելոցն գութ և խնամ կալցին: Զի սոքա յասել ի նմանութիւն Յուդայ և Մատթեայ Մակաբէի անկան ի ճակատ պատերազմի և նմանութիւն եղբարց նոցա»<sup>1</sup>:

Վերոհիշյալ վկայությունը համաձայն Վրթանես կաթողիկոսը Վաչեյանների, ինչպես և հետագայում գոհվող գորականների հիշատակի օր է սահմանել Մակաբայեցուց նմանութեամբ: Իսկ հնագույն տոնացույցում Մակաբայեցուց հիշատակի օրը Օգոստոս 1-ին է կանոնված: Ծիշտ է հնագույն տոնացույցը մարտիրոսների հիշատակի ընդհանուր օր ունի նաև Հունվար 13-ին, Մարտի 9-ին և Օգոստոսի 23-ին, սակայն տվյալ դեպքում Վաչեյանների օրը դրվել է Օգոստոսի 1-ին և փաստորեն պատարագից հետո Մակաբայեցոց հիշելուց հետո հիշել են նաև Վաչեյաններին: Հետագա սկզբնաաղբյուրներում բացակայում է Վաչեյանների մասին տեղեկություններ, որովհետև ամենայն հավանականությամբ, ինչպես նշել է Մ. Օրմանյանը, նրանց հիշատակի օրը միացվեց Վարդանանց տոնի օրվա հետ: Այդ տոնը տոնվեց Օգոստոս մեկին մինչև 8-րդ դարի սկզբները, որից հետո տոնը վերածվեց շարժական տոնի և տեղափոխվեց այլ տեղ, որը և տոնվում է մինչև օրս: Այլ խոսքով Հայոց տոնացույցում սկսած 4-րդ դարից մտցվել է պատերազմում զոհվածների հիշատակի օր, դրանով իսկ ազգային երանգ տրվել քրիստոնեական տոնական տարվան: Սկզբնաաղբյուրների վկայությունները ցույց են տալիս, որ

<sup>1</sup> Անդ. էջ 44-46:

Թորդանի եկեղեցում տոնվել է Գրիգոր Լուսավորչի և Տրդատ Թագավորի հիշատակի օրը, նախապես հավանաբար Մարտի 9-ին իսկ 5-րդ դարի 80-ական թվականներից այդ տոնը վերածվեց շարժականի և տոնվեց Մեծ Պահքի 5-րդ կիրակիից հետո եկող շաբաթ օրը: Այն փաստորեն տեղադրվեց Արամազդի և Անահիտի տոնի օրերին, դրանով իսկ հեթանոսական աստվածների տոնական օրերը վերածվեցին Քրիստոնյա սրբերի հիշատակի օրերի:

Այրարատյան աշխարհի Վաղարշապատի եկեղեցիներում էին տոնվում Հռիփսիմեանց և Գայիանեանց հիշատակի օրերը: Այդ տոները նույնպես տոնվում էին անշարժ տոնական օրերով, ինչպես ցույց կտանք հետագա քննություն մեջ, Սեպտեմբերի 26-ին և 27-ին մինչև 8-րդ դարի սկզբները, որից հետո այդ տոները ևս վերածվեցին շարժականի և տոնվեցին Պետեկոստեից հաշված 9-րդ և 10-րդ օրերին, երկուշաբթի և երեքշաբթի:

Դրսից բերվում էին սրբերի մասունքներ և տեղադրում այս կամ այն մատուռում: Այդ երևույթը կանոնավորելու համար հատուկ որոշումներ են ընդունվել հատկապես Շահապիվանի ժողովում: Ուշագրավ է, որ սրբերի մասունքները օրինական էր համարվում և դրվում որևէ մատուռում միայն որևէ եպիսկոպոսի գրած թղթի հիման վրա: Այլ խոսքով, ոչ միայն թարգմանվում էին սրբերի վարքեր և վկայություններ, այլև ստեղծվում էին նորերը, ինչպես հիշյալ թղթերի հիմքի վրա, այնպես էլ այլ տեղերից բերված և վաճառքի հանած սրբերի մասունքների հիման վրա, որոնց պատմությունը գրի էր առնվում: Այդպիսի օրինակներից են Թադեոս առաքյալի և Սանդուխտ կույսի վկայաբանությունը, Ղևոնդեանց նահատակության պատմությունը, Յիզտրեզտի վկայաբանությունը և այլն: Հետագա ուսումնասիրության մեջ հատկապես տոնական օրերի քննության մեջ ցույց կտանք, որ սրբերի տոնական օրերը 5-8-րդ դարերում տոնվել են տեղայնացված ձևով անշարժ տոմարի տոնական օրերով, իսկ 8-րդ դարի սկզբներից վեր են ածվել շարժական տոնի, պատահական չէ, որ վաղ շրջանի վկայությունները այդքան սուղ են, հատկապես նրանց տոնական օրերի մասին: Միայն նշենք, որ Թադեոս առաքյալի և Սանդուխտ կույսի հիշատակի օրերը նշվել են համապատասխանորեն Դեկտեմբերի 23-ին և 17-ին հիմնականում Արտագում, Սահակ կաթողիկոսին՝ Սեպտեմբերի 16-ին՝ Աշտիշատում, Մաշտոց վարդապետին՝ Փետրվարի 16-ին՝ Օշականում, Եղիշեին՝ Փետրվարի 17-ին՝ Մոկքում կամ Ռշտունիքի սուրբ Եղիշեի քարայր-մատուռում և այլն, մինչև 8-րդ դարի սկզբները, որից հետո Հովհան Օձնեցին նրանց մտքրեց հայոց տոնացույցի մեջ և այդ տոնական օրերը վերածվեցին համահայկական, թեև մասամբ պահպանվեց նրանց տեղայնացված բնույթը: Ինչ վերաբերվում է նոր սրբերի տոներին, ապա նրանք սկզբից տոնվում էին անշարժ և տեղայնացված ձևով, որից հետո նոր մտքրել են տոնացույց:

ՀԱՅՈՑ ԵՒ ԶԱՏԿԱՑՈՒՑԱԿԸ ԵՎ ԱՆԱՆԻԱ ԾԻՐԱԿԱՑԻՆ

Ըստ «Անանիա Ծիրակա(յ)նոյ համարողի Յաղագս Թ եւ Ժ երեկաց լուսնի<sup>1</sup>» բնագրի հիշատակարանի՝ «Արդ ես՝ Անանիա Ծիրակացի ստուգիւ քննեցի զամենայն աւուրս ընթացից եւ եղանակաց լուսնի ըստ իւրում շրջագայէ և խօրանօք փակեալ արձանացուցի, զի անաշխատ զինդրողսն պահեսցէ, եւ եզի յառաջ զընծայումն լուսնի եւ զկնի լրումն, թէ ի քանիս ամսոյ լինի, եւ թէ ի տուընջեան, թէ ի գիշեր, եւ թէ յորում ժամու...»<sup>2</sup>:

Անանիա Ծիրակացու վերոհիշյալ հիշատակարանին չէինք անդրադառնա, եթե վերջնականորեն պարզված լիներ նորալուսնի և լիալուսնի 19-ամյա աղյուսակների պատկանելության հարցը:

19-ամյա աղյուսակների մի մասը, այն է՝ հոռմեականը, առաջին անգամ հրատարակել է Աշ. Աբրահամյանը Հովհաննես Իմաստասերի մատենագրության մեջ և վերագրել նրան<sup>3</sup>: Սակայն հետագայում, երբ նրան հայտնի դարձավ վերոհիշյալ հիշատակարանը, հրաժարվեց իր նախկին տեսակետից և 19-ամյա աղյուսակները վերագրեց Անանիա Ծիրակացուն<sup>4</sup>:

Բ. Թումանյանը հանդես եկավ Աշ. Աբրահամյանի դեմ և փորձեց ցույց տալ, որ այդ աղյուսակները Ծիրակացունը չեն և հավանական համարեց, որ դրանք կազմել է Հովհաննես Իմաստասերը: Առարկության հիմնական կետերը հետևյալն են՝ 1. Հայոց շարժական տոմարի համար այդպիսի աղյուսակներ ընդհանրապես չեն կազմվել: 2. Ծիրակացու և Իմաստասերի վերադիրների սխտեմը տարբեր են և 19-ամյակի, հետևապես ՇԼԲ-ի համապատասխանությունները հարմար են գալիս Հովհաննես Սարկավագին, քան Անանիա Ծիրակացուն:

Հայոց շարժական տոմարի համար իրոք այդպիսի աղյուսակներ անհնարին էր կազմել, որը կարծում ենք շատ լավ հասկանում էր Ծիրակացին: Այն երևում է ՇԼԲ-ի հայոց շաբթից, ուստի նրա հիշատակարանում անկասկած է, որ խոսքը գնում է Հոռմեական (և հուլյան տոմարի տեղական տարբերակների, այսինքն մյուս յոթ ժողովուրդների) շաբթի լուսնի ընծայման և լրման 19-ամյա աղյուսակներ կազմելու մասին, որոնք զուգահեռաբար գործում էին հայկական շաբթի հետ: Այդ երևում է Ծիրակացու տոմարական մի պատառիկից, որը մեզ է հասել 10-րդ դարի գրչության մեջ: Այդ հատվածը պատասխանում է նաև Բ. Թումանյանի առաջադրված այն հարցերին, թե Ծիրակացին վերադիրների ինչ համակարգ է օգտագործել և 19-ամյակի առաջին տարին պարբերաշրջանի որ տարին է համարել: Այդ տոմարական բնագիրը հետևյալն է. «...Արդ համարելով զչորսն յերեք [հ], արիւր իս են Թ եւս պիտի, որ է առաջին ամին արարածոց աշխարհի յարակա, այսինքն է վերադիր լուսնի: Եւ ուներ տարին արարածոյ աշխարհի աւուրս ՅԻՆ ըստ լուսնի, որ պիտի ԺԲ ամսոց լրումն ՅԾԴ աւուրս այդ Թ եւս աւր: Իսկ արեգակն կատարեաց զՅԿԵ աւրն եւ գերիս ժամսն, որ ունի աւել քան զլուսին աւուրս առաջնոյ ամին, քան զՅԻՆ-ն ի աւր աւելի, որ լինի յարակայ երկրորդ ամի ի բոլորակս եւ ապա կարգաւ մինչև

1 Ձեռ. № 2001, էջ 213ա-բ:  
2 Անանիա Ծիրակացու լուսնի պարբերաշրջանները, տպագրության պատրաստեց Ա. Գ. Աբրահամյանը, Երևան, 1962, էջ 40-44:  
3 Աշ. Աբրահամյան, Հովհաննես Իմաստասերի մատենագրությունը, Երևան, 1956, էջ 99-100, 283-293:  
4 Անանիա Ծիրակացու լուսնի պարբերաշրջանները, էջ 40-41:



ցվախճան ինն ու տասներեկ[ին]։ [ա]մենայն մետասան ունիս. գյարակայսն...»<sup>1</sup>։ Այս հատվածում Շիրակացին ավելի քան պարզ գրում է, որ 19-ամյակի պարբերաշրջանի իր սկսած առաջին տարում վերադիրը եղել է 9, 2-րդ տարում՝ 20, «եւ ապա կարգաւ մինչեւ ցվախճան ինն ու տասներեկին»։ Ուստի դժվար չէ գտնել Շիրակացու 19-ամյակի առաջին, երկրորդ և մյուս տարիները։ Պարզվում է, որ նա 19-ամյակի առաջին տարին սկսել է, երբ լուսնի լրումը Ապրիլի 4-ին էր և վերադիրը զրվել է 9, 2-րդ տարում լուսնի լրումը Մարտի 24-ին էր և վերադիրը՝ 20 և այլն։

19-ամյակի առաջին տարվա մասին Շիրակացին և Իմաստասերը հստակ մատնանշել են Ջատկի մեկնությունների մեջ, որոնց բնագրերը կրել են ստորև։ Այստեղ միայն նշենք, որ 19-ամյակի, հետևապես նաև ՇԼԲ-ի առաջին տարին նրանք համարել են այն տարին, երբ լրումը Նիսանի 14 (= Ապրիլի 4) էր։ Իմաստասերի 19-ամյակի, հետևապես ՇԼԲ-ի առաջին տարվա վերադիրը 11 է։ Բնական կլիներ, եթե Բ. Թումանյանը իր համեմատությունները սկսեր առաջին տարվանից, սակայն նա սկսել է Ապրիլի 13-ից (էասյան և հայոց 1-ին տարին), մյուս դեպքում՝ տարբեր տարիներից (էասյան և 19-ամյակի 1-ին տարուց՝ Ապրիլի 4 և Բյուզանդական 19-ամյակի առաջին տարուց Ապրիլի 2), որի հետևանքով հանգել է այլ հետևություն։

Անանիա Շիրակացու և Հովհաննես Իմաստասերի կազմած հոռոմեական 19-ամյա պարբերաշրջանի աղյուսակներում վերադիրների և զարնանային լիալուսնի օրերը դասավորվել են հետևյալ հերթականությամբ.

Վերադիրների համակարգը 19-ամյակի տարիները	Ըստ Շիրակացու	Ըստ Սարկավազի	Լրումները
1	9	11	A 4
2	20	22	M 24
3	1	3	A 12
4	12	14	A 1
5	23	25	M 21
6	4	6	A 9
7	15	17	M 29
8	26	28	A 17
9	7	9	A 6
10	19	21	M 25
11	30	2	A 13
12	11	13	A 2
13	22	24	M 22
14	3	5	A 10
15	14	16	M 30
16	25	27	A 18
17	6	8	A 7
18	17	19	M 27
19	28	30	A 15

19-ամյա աղյուսակից պարզ երևում է, որ Շիրակացու և Իմաստասերի յուրաքանչյուր տարվա վերադիրների տարբերությունը 2 է, իրար հաջորդող տարիները՝ 11, բացառությամբ 10-րդ տարվա, որտեղ երկուսինն էլ 12 է։ Վերջինիս բացատրությունը գտնում ենք Շիրակացու հետևյալ հատվածներում<sup>1</sup>։ Բերենք մեկ վկայություն՝

«... Դարձեալ զի՞նչ է թ և ժ երեկութիւն որ յաւելու ի վերադիրն յամենայն լուսին մաս մի յաւելու, և յապրիլի Դ-իցն մինչև ի մարտի ի ԻԵ-ի լինի ձԻ, որ կոչի օր մի ըստ մասանց լուսնին և թիւ մի յավելու ի վերադիրն։ Եւ յապրիլի ԺԳ են մինչև յապրիլի ԺԵ-ն յամենայն լուսին մաս մի յաւելու, բայց օր ոչ կատարի, զի դառնայ լուսինն յապրիլի Դ-իցն, և նոր սկիզբն առնու բոլորին...»։

Տոմարական բնագրերում կան այլ վկայություններ ևս, սակայն սահմանափակվենք հիշյալ տեղեկությունով։

Համեմատությունը ցույց է տալիս, որ վերադիրների մակարդակով Շիրակացու կազմած 19-ամյա պարբերաշրջանի վրա Իմաստասերն ավելացրել է միայն վերադիրների իր համակարգը, որով և տարբերվում են միմյանցից։ Անկասկած է, որ այդպիսի աշխատանք կարող էր անել միայն հեղինակը՝ Հովհաննես Սարկավազը, ուստի նա էլ եղել է Շիրակացու 19-ամյա պարբերաշրջանի առաջին խմբագիրը։ Դրա ապացույցը հոռոմեական 19-ամյա աղյուսակներում կողք կողքի դրված վերադիրներ են, որոնցից առաջինը Հովհաննես Իմաստասերինն է, երկրորդը՝ Անանիա Շիրակացունը։

Հայ մատենագիրները գրում են, որ Անանիա Շիրակացին «արար լրմունք ՇԼԲ ամաց», իսկ առանց 19-ամյակի, որը ՇԼԲ-ի հիմքն է, հնարավոր չէր կատարել այդ աշխատանքը։ Պատահական չէ, որ 19-ամյակների համար ևս գտնում ենք վկայություն, որ «Անանիա Շիրակացին է արարեալ»<sup>2</sup>։

Կասկածից վեր է, որ Շիրակացու հիշատակարանում խոսքը գնում է հոռոմեական (և հուլյան տոմարի տեղական տարբերակների) այսինքն 8 ազգերի 19-ամյա աղյուսակների կազմելու մասին, որոնք հայկական տոմարի հետ տրված է ՇԼԲ-ում փաստագրված բազմաթիվ ձեռագրերում։

Մինչև առկա լուսնի ծննդեան և լրման 19-ամյա աղյուսակների պատկանելության խնդիրը քննելը տեսնենք 19-ամյակի լուսնի լրման ցանկերը որ ժամանակին են համապատասխանում։ Դրանով իսկ կպատասխանենք այն հարցին, թե լուսնի լրումների, հետևապես լուսնի ծնունդների աղյուսակները որ հեղինակինը կարող էր լինել։ Հայկական սկզբնաղբյուրները միանշանակ վկայում են, որ Ջատկական լուսնի լրման օրերը հաստատուն են ընդունել Անդրեասի, էասյանների, Շիրակացու, Սարկավազի ինչպես և հետագա ժամանակներում։ Հ. Բաղալյանի առաջարկած նորալուսնի և լիալուսնի օրացույցի (1-4000 թթ.) արդյունքների<sup>3</sup>, որն իրականացրել ենք կոմպյուտերային ծրագրի հաշվումների միջոցով, ինչպես և Օպոլցերի արևի խավարումների աղյուսակների տվյալների համադրության հիման վրա պարզել ենք, որ 19-ամյակի առկա Ջատկական լրումներն առաջացել են 6-րդ դարից ոչ շուտ։ Բերենք մեկ օրինակ։ Առաջին տարվա լուսնի լրումը բոլոր հեղինակների մոտ գրանցվել է Ապրիլի 4-ի ամսաթվի տակ, սակայն իրականում լուսնի լրումն, Ապրիլ 4-ին է եղել միայն 562-886 թթ. սահմաններում։ Անդրեասի 200-ամյա զատկացուցակի տարիների (353-552 թթ.) լուսնի լրումներն յուրաքանչյուր 19 տարին մեկ ընկել են Ապրիլ 5-ին, իսկ Հովհաննես Սարկավազի ժամանակ, ավելի

<sup>1</sup> Աշ. Արրահամյան, Անանիա Շիրակացու մատենագրությունը, էջ 310-311։

<sup>1</sup> Անանիա Շիրակացի, Տիեզերագիտություն և տոմար, աշխատասիրությամբ Աշ. Արրահամյանի, Երևան, 1940, էջ 68-69, 78-79։  
<sup>2</sup> ՄՄ ձեռ. N° 2001, էջ 44բ։ Աշ. Արրահամյան, Անանիա Շիրակացու լուսնի պարբերաշրջանները, էջ 42։  
<sup>3</sup> Հ. Բաղալյան, Օրացույցի պատմություն, էջ 295-312։



ստույգ 885-1227 թթ. սահմաններում, յուրաքանչյուր 19 տարին մեկ Ապրիլ 3-ին, սակայն ընդունել են Ապրիլ 4-ը: Պարզ է, որ մեզ հասած 19-ամյակի լրումների ցանկերն Անանիա Շիրակացուն են, որը հետևել է էասյաններին: Թեև վերջիններիս գործելու ժամանակ լրման օրը մեկ մեկ պատահել է նաև Ապրիլ 5-ին: Սակայն նրանք ևս, ինչպես վկայել է Շիրակացին, առաջին տարվա լուսնի լրման օրն ընդունել են Ապրիլ 4-ը: Այսպիսով պարզ է դառնում, որ Շիրակացին կազմել է 19-ամյա աղյուսակ լուսնի ծնունդների և լրումների համար, որից մեզ է հասել միայն հիշատակարանը: Այժմ պարզենք, թե մեզ հասած և հրատարակված 19-ամյա աղյուսակները որ ժամանակին են վերաբերում: Նախնայես նշենք, որ հրատարակված բնագրերում բացի զատկական լրումների օրերից և վերադիրների երկու համակարգից, մյուս բոլոր տվյալները 14-րդ դարի 1-ին կեսի խմբագրությունների արդյունքներ են: Ասենք նաև, որ առկա 19-ամյա աղյուսակներում ներ են առնվել Սարկավազի կիրառած վերադիրների, ինչպես և հավանաբար հնգեակների ու վեցեակների նոր համակարգերը:

Որպեսզի վերականգնենք ինչպես Անանիա Շիրակացու, այնպես էլ Հովհաննես Սարկավազի կազմած 19-ամյա լուսնացույցերը հարկավոր է պարզաբանել մի շարք տոմարական հարցեր՝ հենվելով իրենց իսկ տվյալների և առկա տոմարական կանոնների վրա:

Ուշագրավ է հետևյալ փաստը: Անանիա Շիրակացու կազմած ՇԼԲ-ում հնգեակների համակարգը սկիզբ է առնում Ապրիլի 2-ի լուսնի լրումից, որտեղ հնգեակն հինգ է: Հաջորդ Մարտի 22-ի լուսնի լրման տարում հնգեակը տաս է, 19-րդ տարում, երբ լուսնի լրումը Ապրիլ 13-ին է հնգեակն հավասար է 95-ի: Յուրաքանչյուր 19 տարին մեկ հնգեակների համակարգը կրկնվում է նույնությամբ:

Դրանում համոզվելու համար բավական է վերցնել Շիրակացու կազմած ՇԼԲ-ի պահպանված հատվածներից որևէ տարեթիվ: Այսպես, 518 թվականի շարքում հնգեակի արժեքը գրանցել է 20, լուսնի լրումը՝ Մարտ 30, գիշերվա ժամը 8-ի (3-րդ մասում): Կատարենք տոմարական կանոններով նախատեսվող գործողությունները, որի մասին հանգամանորեն կխոսենք ներքևում, այն է՝  $31$  (հունվար)  $+ 28$  (փետրվար)  $+ 30$  (մարտ)  $= 89 + 20$  (հնգեակի արժեքը)  $= 109 - 60 = 49$  (րոպեն)  $\times 2 = 98 - 60 = 38 : 5 = 7$  և  $3$  (մնացորդ, որը մասն է)  $+ 1 = 9$  գիշերվա ժամը 8-ի 3-րդ մաս, որը փաստագրված է բնագրում:

Առկա տպագիր 19-ամյա աղյուսակներում հնգեակների համակարգը սկիզբ է առնում Ապրիլ 4-ի լուսնի լրումից, որտեղ հնգեակի արժեքը հինգ է: 2-րդ տարում, երբ լուսնի լրումն Մարտի 24-ին է հնգեակը հավասար է 10, իսկ 19-րդ տարում երբ լուսնի լրումն Ապրիլ 15-ին հնգեակը հավասար է 95-ի: Այդպես կլինի նաև յուրաքանչյուր 19 տարին մեկ: Ապրիլ 4-ի լրման տարում Շիրակացու ՇԼԲ-ում հնգեակը հավասար է 45-ի, իսկ տպագիր աղյուսակում դրված է հինգ: Պարզ է, որ հնգեակների համակարգերը տարբեր են: Շիրակացին այդպիսի ակնհայտ հակասություն թույլ չէր տա, որ ՇԼԲ-ում կիրառի հնգեակի մեկ համակարգ, իսկ 19-ամյակում, որը ՇԼԲ-ի հիմքն է, մեկ այլ հնգեակի համակարգ:

Բերենք մեկ այլ կարգի տեղեկություն: Հովհաննես Սարկավազի կազմած Ազնվականոններում կամ Ազգաց կանոններում տրվել են 19-ամյակի լուսնի ծննդեան օրերը, որն, ի դեպ, մինչև օրս չի հասկացվել: Նա Հունվար, Փետրվար... Դեկտեմբեր ամիսների աղյուսակներում սկզբից նշել է այսպես կոչված հոռոմեական մեծ վերադիրների համակարգը և յուրաքանչյուր վերադիրի դիմաց դրել է լուսնի ծննդեան օրերը, տալով տարբեր տոմարական համակարգերի ամիս-ամսաթիվների համարժեքներով: Սարկավազի իսկ տվյալներով վերականգնենք 19-ամյակի 1-ին տարվա Ապրիլ 4-ի լուսնի ծննդեան աղյուսակը հուլյան տոմարով: Նա 11 վերադիրի դիմաց

ունի հետևյալ շարքը. Հունվար 19, Փետրվար 18, Մարտ 19, Ապրիլ 18, Մայիս 17, Հունիս 16, - Հուլիս 15, Օգոստոս 14, Սեպտեմբեր 12, Հոկտեմբեր 12, Նոյեմբեր 10 և Դեկտեմբեր 10<sup>1</sup>:

Ստանանք հիշյալ շարքը կիրառելով տոմարական կանոնը: Ըստ այդ կանոնի լուսնի ծնունդը գտնելու համար պետք է վերցնել 30 (կամ 60) հաստատուն թիվը և դրանից հանել վերադիր և կիսակի գումարը: Տվյալ դեպքում վերադիրը 11 է, իսկ հուլյան տոմարի ամիսների կիսակներն ու ստացման կանոնները բերված են բնագրերում:

Ներկայացնենք հուլյան տոմարի կիսակների արժեքները  
 Հունվար = 0  
 Փետրվար = 1,5  
 Մարտ = 0  
 Ապրիլ = 1,5  
 Մայիս = 2  
 Հունիս = 3,5  
 Հուլիս = 4  
 Օգոստոս = 5,5  
 Սեպտեմբեր = 7  
 Հոկտեմբեր = 7,5  
 Նոյեմբեր = 9  
 Դեկտեմբեր = 9,5

Հունվարի համար ստանում ենք 19 ամսաթիվը քանի որ Հունվարը կիսակ չունի, ուստի 30-ից հանենք 11 կստանանք 19: Փետրվարի համար ստանում ենք 17,5 ( $30 - (11 + 1,5) = 17,5$ ), իսկ Սարկավազի մոտ 18 է: Պարզ է դառնում, որ Սարկավազն ստացած թիվն կլորացրել է դեպի մոտակա ամբողջ թիվը, այն է՝ Փետրվարի 18-ը: Մարտը նույնպես կիսակ չունի, ուստի ստանում ենք 19, որը գրանցված է Սարկավազի մոտ: Ապրիլի համար գտնում ենք 17,5, որը Սարկավազի մոտ 18 է: Այս դեպքում ևս թիվը կլորացվել է: Նույն գործողությունը կարելի է կատարել մյուս ամիսների ամսաթիվներն ստանալու համար, վերցնելով այդ ամիսների կիսակները: Պարզաբանենք որ տոմարական կանոններով ստացված կոտորակային թիվերը, այսինքն կեսերը, աղյուսակների մեջ կլորացրել են դեպի ամբողջ ամսաթիվերը, քանի որ լուսինը ծնունդից ծնունդ կամ լրումից լրում անցնում է միջին հաշվով 29, 5 օրվա ընթացքում, իսկ աղյուսակների մեջ դրվել են հիմնականում հաջորդաբար 29 կամ 30, որովհետև ամսաթիվերը կեսեր չունեն: Բայց այդ հիշյալ ամբողջացումը կախված էր հաջորդ տարվա լուսնի ծնունդների և լրումներն օրացույցի հետ համապատասխանեցնելուն, երբ նկատի ենք ունենում 19-ամյակի մեջ 7 ամիս ավելացնելուն, որպեսզի համարժեք դառնան լուսնային և արևային տարիները:

Պարզ է, որ Հովհաննես Սարկավազն առաջնորդվել է տոմարական կանոններով և ստացել 19-ամյակի լուսնի ծնունդները: Այդպես է վարվել նաև 19-ամյակի լրման օրերը գտնելու համար: Միայն այս դեպքում տոմարական կանոնն այլ է, այսինքն՝ վերցվում է 45 հաստատուն թիվը և դրանից հանվում վերադիրի և կիսակի գումարը: Իսկ եթե 30-ից մեծ թիվ է ստացվում հանվում է 30: Այդ նույն սկզբունքներն է կիրառել Անանիա Շիրակացին:

Ակնհայտ է Սարկավազի կազմած Լուսնացույցի 1-ին տարվա լուսնի ծնունդների և տպագիր աղյուսակի 1-ին տարվա մեկ օրվա տարբերությունները բոլոր ամիսների համար (Հունվար 18 և այլն<sup>2</sup>: Ասենք նաև, որ տպագիր աղյուսակում վերադիրը 11 է, սակայն տոմարական կանոնով պետք է ստանար հունվար 19-ը և ոչ 18: Հեղինակը վերցրել է նախորդ աղ-

1 Տե՛ս Ա. Գ. Աբրահամյան, Հովհաննես Իմաստասերի մատենագրությունը, էջ 160-183:  
 2 Աճ. էջ 283-292:

յուսակի համառոտ տարբերակը և հարմարեցրել իր ժամանակի իրողութան հետ: Ուշագրավ է, որ վերևում ստացած կեսերը անտեսել է և Փետրվարի համար գրել է 17 ամսաթիվը:

Անանիա Շիրակացու 19-ամյա աղյուսակների 1-ին տարվա լուսնի ծնունդը համեմատած Սարկավագի տվյալների հետ պետք է ունենար երկու օրվա տարբերություն, երբ նկատի ենք ունենում առաջին տարվա վերադիրների տարբերությունը (11 և 9) և տոմարական նույն կանոնները, այսինքն Շիրակացու մոտ 19-ամյակի 1-ին տարվա լուսնի ծնունդը դրվել է հունվարի 21-ին (30 - (9 - 0) = 21): Պարզ է, որ Շիրակացու համեմատ տպագիր աղյուսակի տարբերությունը կազմել է երեք օր:

Հաշվումները ցույց են տալիս, որ 19-ամյակի 1-ին տարվա լուսնի ծննդեան օրը Հունվարի 21-ին է ընկել 4-րդ դարի վերջերից մինչև 7-րդ դարի վերջերն ընկնող ժամանակահատվածի յուրաքանչյուր 19-ամյակի 1-ին տարում (A4), Հունվարի 20-ին՝ 7-րդ դարի վերջերից 8-րդ դարի սկզբներից մինչև 11-րդ դարի սկզբները, Հունվար 19-ին՝ 11-րդ դարի սկզբներից մինչև 14-րդ դարի սկզբները, Հունվարի 18-ին՝ 14-րդ դարի սկզբներից մինչև 17-րդ դարի սկզբները: Այս օրինաչափությունը կրկնվում է 19-ամյակի մյուս տարիների ամսաթվերի հետ, քանի որ յուրաքանչյուր 312 տարին մեկ օրով ետ է շարժվել լուսնի ծննդեան և լրման օրերը, թեև Զատիկական լուսնի լրման օրերն ընդունել են հաստատուն ամսաթվերի տակ:

Պարզ է դառնում, որ առկա բնագիրը չէր կարող ստեղծվել 14-րդ դարի սկզբներից առաջ, թերևս այն կազմվել է 1342 թվականին Երևանի մատենադարանի 1973 թվահամարի գրչագրի ընդօրինակողների կողմից, որոնք իրենց ձեռքի տակ ունեցել են հատկապես Լուսնացույցի համառոտ խմբագրությունը, որն առկա է այդ գրչագրում, ինչպես և Շիրակացու ու Սարկավագի որոշ տվյալներ: Սակայն Լուսնացույցի ամբողջ հաշվարկն, այսինքն՝ նախորդների խմբագրությունը իրականացվել է 1342 թվին և այն պետք է դիտել իբրև ինքնուրույն աշխատանք: Մանավանդ որ նոր 19-ամյա աղյուսակներ կազմվել դժվար չէր, քանի որ հենց 1973 թվահամարի ձեռագրում առկա են տոմարական կանոններ, որոնք հնարավորություն են տալիս հաշվարկել և գտնել լուսնի ծննդեան և լրման ցանկացած օրը, ժամը, մասը, ըրպեն, ինչպես և ցերեկվա և գիշերվա պահը:

Ասենք նաև, որ համարժեք վերադիրների դեպքում թեև դրանք դրվել են 19-ամյակի այլ տարիներին Շիրակացու Լուսնացույցի նույն տվյալներն օգտագործել է Սարկավագը և լուսնացույցի համառոտ տարբերակի խմբագիրը, իսկ Սարկավագից և Լուսնացույցից համառոտ խմբագրից օգտվել են 1342 թվականին ստեղծված Լուսնացույցի խմբագիրներն, որը երևում է լուսնացույցերի տվյալների համադրումից: Դեռ ավելին, առկա բնագրի հեղինակները պահել են 19-ամյակի որոշ տարիների ամսաթվերը, որոշ չափով խախտելով օրինաչափությունները, իսկ Լուսնացույցի համառոտ խմբագրության կոտորակային կեսերը ամբողջացրել են պարզապես կեսերը վերացնելու միջոցով:

Լուսնացույցի տպագիր տարբերակում լուսնի ծննդեան և լրման օրերի դիմաց տրվել են գիշերվա և ցերեկվա ժամերը և մասերը, որոնք նույնպես տարբեր են թե Շիրակացու, թե Սարկավագի բնագրերում: Նախ գտնենք ժամը, մասը, ըրպեն, գիշերվա կամ ցերեկվա պահը, ինչպես և փորձենք դրանք վերածել ժամանակակից միավորների՝ օգտագործելով մատենագրական վկայությունները, տոմարական կանոնները և ժամանակակից մեթոդների ընձեռած հնարավորությունները: Ներկայացնենք բնագրերում առկա տոմարական կանոնները:

2001 թվահամարի «Տոմար Հոռոմի» վերնագրի տակ կարդում ենք. «Բոպէիւ լուսին յորժամ առնես. կալ ի Յունուարի ամսամտէն մինչև ուր ես և ած ի վերայ զհնկեակ ամին և երթ ԿԿ, որքան զԿ-ի խոնարհ մնա ըրպէ է...» (էջ 25ա):

3082 թվահամարի գրչագրում գրված է. «Բոպէ այսպէս արա. կալ ի Յունուարոյ ամսամտէն մինչև ուր ես, զհնգեակն ի վերայ բեր և երթ ԿԿ, որ ի խոնարհ մնայ ըրպէ է» (էջ 385ա):

Հակոբ Ղրիմեցու խմբագրած տոմարական պատճէի մեջ կարդում ենք. «Բոպէ ա(յսպէս) արա կալ Յունուարոյ ամսամտէն մինչև ուր ես, զհնգեակն ի վերայ) ած և երթ ԿԿ, որ մնայ ըրպէ է...»<sup>1</sup>:

Այնուհետև բնագրերը տալիս են հետևյալ կանոնները:

1999 թվահամարի «Պատճէն տուժարի հոռոմայեցոց» վերնագրի տակ գրված է. «Թէ զժամն կամիցիս գիտել զլմանն կամ զծննդեանն. կալ զրոպէն և կրկնեա, թէ ընդ Կ ելանէ զԿ տուը (բնագրում ր- Բ. Վ.) նջեանն տուը և զայլն Ե Ե թիւ ժամս արա և գիշերոյն տուը, և գտանես զլրումն: Մնունդն նոյնպէս արա, բայց զԿ գիշերոյ տուը, ապա թէ ոչ ելանէ մինչև ի Կ դու ի տեղին արա» (էջ 28ա): Ըստ 2001 թվահամարի «Տոմար Հոռոմի» վերնագրի տակ գրված բնագրի «Եթէ կամիցիս գիտել զլրումն լուսնին կամ զծնունդն, թէ յորում ժամու իցէ. կալ զրոպէ աուըն և կրկնեայ, թէ ընդ Կ-իւ ելանէ զԿ տուընջեան տուը և զմնացեալն Ե Ե թիւ ժամս արաց և - տուը գիշերոյն և գտանես թէ յորում ժամու է կամ ի քանիբորդ մասին: Այլ ըստ փոփոխմանն հանցես զժամսն յաւելողն և ի պակասելն ըստ տուընջեան և ըստ գիշերոյ» (էջ 25ա):

Ըստ Հակոբ Ղրիմեցու տարբերակի՝ «Թե կամիցիս գիտել զժամս ծննդեանն և զլրումնն. կալ ըրպէն և կրկնեա, թէ ընդ Կ ելանէ Կ գիշերուն աուը և զայլն Ե Ե թիւն ժամս արա և տուը տուընջեանն և զգրտանես զընթացումն, թէ ի քանի ժամ է և [քանի մասն: Նույնպէս և զլրումն արա զԿ տուընջեան տուը և այլս Ե Ե թիւ (ժամս) արա և գիշերոյն տուը և գտանես և - թէ զԿ ոչ ելանէ... ծն(նդ)եանն ի գիշերոյն տուը և զլրմանն տիւն փոփոխմանն հանես զժամսն ի յ(=աւ)ելովն և ի պակասելն աւ[ը] [տուը]նջեանն ի գիշերոյն» (էջ 13ա-բ): Տոմարական բնագրից և առկա Լուսնացույցի տվյալներից պարզ է դառնում, որ ըրպեն գտնելու համար վերցվում է հունվարի 1-ից մինչև տարվա օրվա գումարն, ավելացվում այդ տարվա հնգեակի արժեքը և հանվում 60 կամ 60-ի կրկնապատիկը, եռապատիկը և այլն: Ստացված թիվը ըրպեն է: Իսկ լուսնի ծննդեան կամ լրման օրը գտնելու համար ստանում ենք տվյալ օրվա ըրպեն և կրկնապատկում, որից հանվում է 60, եթե կրկնապատիկը տալիս է ավելի մեծ թիվ ու ստացված թիվը բաժանում հինգի և գումարում 1, այսինքն՝ տալիս են գիշերվա կամ ցերեկվա ժամին, գտնում ենք լուսնի ծննդեան կամ լրման օրը, ժամը և մասը: Ասենք նաև որ ըրպեի կրկնապատիկը, եթե փոքր է 60-ից ցերեկվա ժամն ու մասն է, իսկ եթե մեծ է 60-ից հանվում է 60, որը նշանակում է գիշերվա ժամն ու մասն է:

Վերոհիշյալ կանոններն օգտագործենք և մատենագրական տեղեկությունների հիման վրա ստանանք վկայված օրերի ժամերն ու մասերը:

Ըստ «Նորին Յոհաննու» վերնագիրը կրող բնագրի՝ «Յայսմ խաւարման արեգականն՝ էր թուական հոռոմայեցոց փոքրն ՅԼԳ (333), և հայոցն նոյնպէս փոքրն ԻԹ(29), յերկրորդ ժամուն, ի ինն և տասաներորդի (19) բնագրում ի քսաներորդի (20) Մարտի աուըն չորեքշաբ(ա)թոջ ի սուրբ քառասնորդացն, ի հինգերորդ շաբաթին. խաւարեցաւ արեգական: Եւ էր շինութիւն քաղաքին Հոռոմոց՝ ԲՊԿԷ (1867) ամ, իսկ ի Դիոկղետիանոսէ ՊԼ (830) ամ: Եւ Անտիոք քաղաքի շինութեան՝ Բ(Ճ)ԿԳ (1163) ամ: Եւ Կիւրղոս քաղաքի՝ ԲՆԻԵ (1425): Իսկ ի գալստենէ Տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի՝ ԲՃԺԵ (1115) ամ ըստ հաստատուն և ճշմարիտ համարոյ: Եւ յԱղամայ ՅՅԺԳ (6313) ամ ըստ ևթանասնիցն թարգմանութեան, Արեգ ամսոյ ի մետասան (11) կամ որպէս արուեստ կարգն ունի Նաւասարդի ի(և) ևթն (=27) (բնագրում՝ ի ևթն), միով աուըր յառաջ

<sup>1</sup> Ձեռ. № 1114, էջ 13ա-բ:

քան զհասարակաւորութիւն տունջեան և գիշերոյ, ի ՆՀԳ (473) ոլոմպիադին յառաջանում ամին ըստ համարոյ Յունաց: Եւ էր բուն թուական հայոց ՇԿԲ (562)»<sup>1</sup>:

Ըստ Հովհաննես Սարկավագի Արևի խավարումը եղել է 1113 թ. Մարտի 19-ին, չորեքշաբթի = Արեգի 11 (Սարկավագադիր տոմարի ամիս-ամսաթիվով = Նավասարդի 27 (հայոց շարժական տոմարի ամիս-ամսաթիվով) = Սուրբ Քառասնորդաց հինգերորդ շաբաթին (= Մարտի 16-ից 23-ը) = երկրորդ ժամին:

Ըստ Սարկավագի ազգաց կանոնների լուսնի ծնունդն եղել է Մարտի 19-ին = Արեգի 11, իսկ լուսնի լրումը՝ Ապրիլի 4-ին, Չատիկը՝ Ապրիլի 6-ին, Վերադիրն 11 է, իսկ Մարտը կիսակ չունի, այսինքն հավասար է գերոյի, հին հնգեակն = 45: Այս տվյալների և տոմարական կանոնների կիրառմամբ ստանանք 2-րդ ժամը:

$31+28+19=78+45=123-120=3\times 2=6:5=1$  ժամ 1 մաս +  $1=2$  ժամ 1 մաս = Մարտի 19 ցերեկվա ժամը 2-ի 1-ին մասում: Պարզվում է, որ լուսնի ծնունդն եղել է ժամը 2-ի 1-ին մասում և Սարկավագը դրել է լուսնի ծննդեան օրվա ժամը և մասը իսկ Արևի խավարումը պետք է համընկնեն կամ լինեն փոքր ինչ ուշացումով: Ըստ մեր հաշվումների 1113 թ. Լուսնի ծնունդն եղել է Գրինվիչի ժամանակով ժամը 4 անց 48 րոպեին, իսկ Երևանի արևային ժամանակով կլինի մոտ 3 ժամ հետո, այն է՝ ժ. 7 անց 46 րոպեին: Այս հաշվով լուսնի լրումը եղել է ժամը 7 անց 46 րոպեին, որը համարժեք է 2-րդ ժամի 1-ին մասին: Արևի խավարումն ըստ Օպոլցերի տվյալների եղել է 1113 թ. Մարտի 19-ին Գրինվիչի ժամանակով 5 անց 53,8 րոպեին, որը կհամապատասխանի Երևանի արևային ժամանակի ժ. 8 անց 51, 8 րոպեին: Այլ խոսքով լուսնի ծննդից ավելի քան մեկ ժամ հետո նոր եղել է արևի խավարում, ուստի լուսնի ծնունդն եղել է 2-րդ ժամի 1-ին մասում, իսկ արևի խավարումը՝ 3-րդ ժամի հավանաբար 2-րդ մասում: Պարզ է, որ հայոց ցերեկվա 1-ին ժամը համապատասխանել է ժ. 6<sup>30</sup>-7<sup>30</sup>-ի միջոցին, իսկ 2-րդ ժամը՝ 7<sup>30</sup>-8<sup>30</sup>-ի միջոցին:

12-րդ դարի 70-ական թվականներին գրված մի ժամանակագրության մեջ կարդում ենք «...Եւ ի նոյն ամի (ի ՌԻՆ(625) թուականին հայոց - Ռ. Վ.) խաւարեցաւ արեգակն ի նոր կիւրակէին, ի մետասան (11) ապրիլի, յերկրորդ ժամու, մինչև աստեղք երևեցա»<sup>2</sup>:

Իսկապես հայոց 625 թվականին, որը համարժեք է ներկա 1176 թվին Չատիկը եղել է Ապրիլի 4-ին, իսկ նոր կիրակին դրանից մեկ շաբաթ հետո, այն է՝ Ապրիլ 11-ին, որը ստույգ գրանցվել է սկզբնաղբյուրում, հին հնգեակն 75 է, որովհետև լուսնի լրումը դրվել է Մարտի 29-ին, 19-ամյակի 16-րդ տարում, իսկ լուսնի ծնունդը պարզվում է, որ ընկել է Ապրիլ 11-ին: Հաշվենք 1176 թ. նահանջ տարվա Ապրիլի 11-ի ժամը և մասը.

$31+29+31+11=102+75=177-120=57\times 2=114-60=54:5=10$  ժ. 4 մաս +  $1=11$  ժ. 4 մ. = Ապրիլ 11 գիշերվա ժամը 11-ի 4-րդ մաս (կլոր 12 ժամին):

Ըստ հաշվումների 1176 թ. լուսնի ծնունդն ընկել է Ապրիլ 11-ին Գրինվիչի ժամանակով գերո ժամին և գերո րոպեին, որը Երևանի Արևային ժամանակով կլինի գիշերով մոտ ժամը 3-ին: Այս տվյալները երկու ժամվա տարբերություն են տալիս: Փորձենք տվյալ խնդիրը լուծել արևի խավարման տվյալներով: Ըստ Օպոլցերի 1176 թ. արևի խավարումը եղել է Ապրիլ 11-ին Գրինվիչի ժամանակով ժամը 5 անց 33,1 րոպեին, որը վերածելով Երևանի արևային ժամանակի կլինի ժ. 8 անց 31,1 րոպե: Այն համապատասխանել է 2-րդ ժամին 4-րդ մասին (կլոր 3-րդ ժամին):

Տեսանք, որ լուսնի ծնունդն ընկել է գիշերվա ժամը 11-ի 4-րդ մասում, որը կլորացնենք և դարձնենք գիշերվա ժամը 12-ը: Դրանց գումարենք երեք կստանաք ցերեկվա ժամը 2-ի 4-րդ մասը կլոր 3-րդ ժամը (ժ. 11 մ. 4 (կլոր 12) + 3 = ժ. 14 մ. 4 (15) - 12 = ժ. 2 4-րդ մ. (ժ. 3):

Երևանի արևային ժամը, որը համարժեք էր 8 անց 31,1 րոպեին, երբ եղել է արևի խավարում, հավասարվում է հայոց ցերեկվա 3-րդ ժամին, իսկ 1-ին ժամը կհամապատասխանի 6<sup>30</sup>-7<sup>30</sup>- միջոցին: Դժբախտաբար ուրիշ ստույգ մատենագրական վկայություններ մեզ հայտնի չեն, որ կարողանային օրինակները շարունակել, սակայն հայտնի է, որ հայոց ցերեկային ժամերն սկսել են արևածագից և ամենայն հավանականությամբ հաշվի են առել գարնանային գիշերահավասարի օրերի արևածագերը, ուստի կարող ենք վերականգնել հայոց ցերեկային և գիշերային ժամերի ներկա համարժեքները, որը կհիմնավորեն ժամանուկները ևս: Այլ խոսքով բերված վկայությունները բավարար են տալու հայոց ժամերի համարժեքները, եթե ոչ վերջնականորեն ստույգ գոնե մոտավոր ներկա գուգակչիները, որոնք նպաստում են հասկանալու նաև լուսնացույցերի իրական բովանդակությունը:

Բերենք հայոց ժամանուկները և նրանց ներկա համարժեքները:

Առավոտյան ժամեր.

1. Այգ<sup>1</sup> (ժ. 6<sup>30</sup>-7<sup>30</sup>):
2. Ծայգ, Ծագեալ (= ժ. 7<sup>30</sup>-8<sup>30</sup>):
3. Զօրացեալ, Զայրացեալ (= ժ. 8<sup>30</sup>-9<sup>30</sup>):
4. Ծառագայթեալ (= ժ. 9<sup>30</sup>-10<sup>30</sup>):
5. Շառաւեղեալ, Շառաւիղեալ (= ժ. 10<sup>30</sup>-11<sup>30</sup>):
6. Երկրատես (= ժ. 11<sup>30</sup>-12<sup>30</sup>):
7. Շանթակալ, Շանթակող, Շանթակողմն (= ժ. 12<sup>30</sup>-13<sup>30</sup>):
8. Հրակաթ (ժ. 13<sup>30</sup>-14<sup>30</sup>):
9. Հուր փայլեալ, Հուր թափեալ, Հուր կաթեալ (= ժ. 15<sup>30</sup>-16<sup>30</sup>):
10. Թաղանթեալ, Թաղարթեալ (= ժ. 15<sup>30</sup>-16<sup>30</sup>):
11. Արագոտ, Առաւոտ, Տարափ (= ժ. 16<sup>30</sup>-17<sup>30</sup>):
12. Արփող, Տարփող (= ժ. 17<sup>30</sup>-18<sup>30</sup>):

Գիշերային ժամեր.

1. Խաւարակ, Գիշերակ (= ժ. 18<sup>30</sup>-19<sup>30</sup>):
2. Աղջամուղջ, Աղջամղջակ (= ժ. 19<sup>30</sup>-20<sup>30</sup>):
3. Մթացեալ, Բաւնդակ (= ժ. 20<sup>30</sup>-21<sup>30</sup>):
4. Շաղաւօտ, Խաժակ (= 21<sup>30</sup>-22<sup>30</sup>):
5. Կամաւօր, Համաւօտ (= ժ. 22<sup>30</sup>-23<sup>30</sup>):
6. Բավական, Կատաղատես (23<sup>30</sup>-24<sup>30</sup>):
7. Խաւաթափեալ, Հաւաթափեալ (ժ. 24<sup>30</sup>-1<sup>30</sup>):
8. Գիգակ, Գիջակ, Դագակ (= ժ. 1<sup>30</sup>-2<sup>30</sup>):
9. Լուսաճեմ, Լուսակ, Լուսագայ (= ժ. 2<sup>30</sup>-3<sup>30</sup>):
10. Առաւօտ, Փողահար (= ժ. 3<sup>30</sup>-4<sup>30</sup>):
11. Լուսափայլ, Հետագօտ (= ժ. 4<sup>30</sup>-5<sup>30</sup>):
12. Փայլածու, Փայլածումն, Կաքաւող (= ժ. 5<sup>30</sup>-6<sup>30</sup>):

Տանք 19-ամյակի Չատիկական լրումների ամիս-ամսաթվերը, հին և նոր հնգեակները և դրանց հիման վրա կազմված գիշերվա և ցերեկվա ժամերը ու մասերը, ինչպես և նրանց ժամանակակից միավորների համարժեքները:

<sup>1</sup> Հովհաննես Իմաստասերի մատենագրությունը, էջ 278:

<sup>2</sup> Մանր ժամանակագրություններ, հ. 2-րդ, էջ 502:

<sup>1</sup> Կես ժամերը կարելի է անտեսել և հաշվել ժ. 6-ից-7-ը և այլն:

**Հին հնգեակների համակարգով:**

Լրման օրերը	հնգեակի տարին	հնգեակի արժեքը	ցերեկ գիշեր	ժամ	մաս	ներկա ժամերը	թվականից ստացված 19-ամյակի տարին
Ապրիլ 2	1	5	9	3	4	20 <sup>30</sup> -21 <sup>30</sup>	2
Մարտ 22	2	10	9	1	2	18 <sup>30</sup> -19 <sup>30</sup>	3
Ապրիլ 10	3	15	9	10	5	3 <sup>30</sup> -4 <sup>30</sup>	4
Մարտ 30	4	20	9	8	3	1 <sup>30</sup> -2 <sup>30</sup>	5
Ապրիլ 18	5	25	9	6	1	11 <sup>30</sup> -12 <sup>30</sup>	6
Ապրիլ 7	6	30	9	3	4	8 <sup>30</sup> -9 <sup>30</sup>	7
Մարտ 27	7	35	9	1	2	6 <sup>30</sup> -7 <sup>30</sup>	8
Ապրիլ 15	8	40	9	10	5	15 <sup>30</sup> -16 <sup>30</sup>	9
Ապրիլ 4	9	45	9	8	3	13 <sup>30</sup> -14 <sup>30</sup>	10
Մարտ 24	10	50	9	6	1	11 <sup>30</sup> -12 <sup>30</sup>	11
Ապրիլ 12	11	55	9	3	4	20 <sup>30</sup> -21 <sup>30</sup>	12
Ապրիլ 1	12	60	9	1	2	18 <sup>30</sup> -19 <sup>30</sup>	13
Մարտ 21	13	65	9	10	5	15 <sup>30</sup> -16 <sup>30</sup>	14
Ապրիլ 9	14	70	9	8	3	1 <sup>30</sup> -2 <sup>30</sup>	15
Մարտ 29	15	75	9	6	1	23 <sup>30</sup> -24 <sup>30</sup>	16
Ապրիլ 17	16	80	9	3	4	8 <sup>30</sup> -9 <sup>30</sup>	17
Ապրիլ 6	17	85	9	1	2	6 <sup>30</sup> -7 <sup>30</sup>	18
Մարտ 25	18	90	9	10	3	3 <sup>30</sup> -4 <sup>30</sup>	19
Ապրիլ 13	19	95	9	•	1	13 <sup>30</sup> -14 <sup>30</sup>	1

**Նոր հնգեակների համակարգով**

Լրման օրերը	նոր հնգեակի տարին	նոր հնգեակի արժեքը	ցերեկ գիշեր	ժամ	մաս	ներկա ժամերը	թվականից ստացված 19-ամյակի տարին
Ապրիլ 4	1	5	9	4	3	21 <sup>30</sup> -22 <sup>30</sup>	10
Մարտ 24	2	10	9	2	1	19 <sup>30</sup> -20 <sup>30</sup>	11
Ապրիլ 12	3	15	9	11	4	4 <sup>30</sup> -5 <sup>30</sup>	12
Ապրիլ 1	4	20	9	9	2	2 <sup>30</sup> -3 <sup>30</sup>	13
Մարտ 21	5	25	9	6	5	23 <sup>30</sup> -24 <sup>30</sup>	14
Ապրիլ 9	6	30	9	4	3	9 <sup>30</sup> -10 <sup>30</sup>	15
Մարտ 29	7	35	9	2	1	7 <sup>30</sup> -8 <sup>30</sup>	16
Ապրիլ 17	8	40	9	11	4	16 <sup>30</sup> -17 <sup>30</sup>	17
Ապրիլ 6	9	45	9	9	2	14 <sup>30</sup> -15 <sup>30</sup>	18
Մարտ 25	10	50	9	6	3	11 <sup>30</sup> -12 <sup>30</sup>	19
Ապրիլ 13	11	55	9	4	1	21 <sup>30</sup> -22 <sup>30</sup>	1
Ապրիլ 2	12	60	9	1	4	18 <sup>30</sup> -19 <sup>30</sup>	2
Մարտ 22	13	65	9	11	2	16 <sup>30</sup> -17 <sup>30</sup>	3
Ապրիլ 10	14	70	9	8	3	1 <sup>30</sup> -2 <sup>30</sup>	4
Մարտ 30	15	75	9	6	3	23 <sup>30</sup> -24 <sup>30</sup>	5
Ապրիլ 18	16	80	9	4	1	9 <sup>30</sup> -10 <sup>30</sup>	6
Ապրիլ 7	17	85	9	1	4	6 <sup>30</sup> -7 <sup>30</sup>	7
Մարտ 27	18	90	9	11	2	4 <sup>30</sup> -5 <sup>30</sup>	8
Ապրիլ 15	19	95	9	8	5	13 <sup>30</sup> -14 <sup>30</sup>	8

Հնգեակների հին և նոր համակարգերի համապատասխան լուսնի լրումների դեպքում իրարից ունեն երկու-ութ ժամերի տարբերություն: Հարկ է նշել, որ լուսնի ծննդեան և լրման օրերի, ժամերի, մասերի և րոպեների համար վերցվել են հաստատուն ամսաթվեր, որոնք ճիշտ են մի որոշակի ժամանակահատվածի, ավելի հստակ 312 տարվա համար, թեև այդ հատվածում ևս որոշ տարբերություններ տալիս են: Ուսումնասիրությունները հատկապես հաշվումներն, որոնք թեև կես օրվա ճշտություն ունեն, ցույց են տալիս, որ լուսնի ծննդեան և լրման ամսա-

թվեր հուլյան տոմարում նվազման տեղեկեց են ունեցել, իսկ Գրիգորյան տոմարում աճման և յուրաքանչյուր դեպքում պետք է նկատի ունենալ տարբերությունները և համադրվեն արևի խավարումների տվյալների հետ, մանավանդ վերջիններիս հետ լուսնի ծնունդները կամ համընկել են կամ լուսնի ծնունդներն եղել են մի քանի ժամով ավելի վաղ քան Արևի խավարումները: Այս բացատրությունները համարում ենք բավարար, որպեսզի ներկայացնենք մեր կողմից վերականգնած Անանիա Շիրակացու 19-ամյակի աղյուսակները լուսնի ծննդեան և լրման համար, իսկ Հովհաննես Սարկավազի կազմած և մեր կողմից նույնպես վերականգնված 19-ամյա աղյուսակները կներկայացնենք Սարկավազի տոմարին նվիրված գլխում:

**Անանիա Շիրակացի «Լուսնացոյց» (19-ամյա աղյուսակներ լուսնի ծննդեան և լրման)**

1.

Ծնունդն լուսնի	Քա գիշեր	Տի գիշեր	ժամ	Մաս	Լրումն լուսնի	Քա գիշեր	Տի գիշեր	ժամ	Մաս	Ծանոթություն
Յունուար	21	Տ	3	2	Յունուար	6	Ք	9	2	Հնգեակն՝ 45
Փետրուար	20	Ք	3	2	Փետրուար	5	Տ	9	2	Վեցեակն՝ 54
Մարտ	21	Տ	2	5	Մարտ	6	Ք	8	5	Վերադիրն՝ 9
Ապրիլ	20	Ք	2	5	Ապրիլ	4	Տ	8	3	Լրումն՝ Ապրիլ 4
Մայիս	19	Տ	2	3	Մայիս	4	Ք	8	3	ԲԺ-ան լուսնի
Յունիս	18	Ք	2	3	Յունիս	3	Տ	8	3	
Յուլիս	17	Տ	2	1	Յուլիս	2	Ք	8	1	
Աւգոստոս	16	Ք	2	1	Աւգոստոս	1	Տ	8	1	Օգոստոսն ունի երկու լրում, որովհետև նախորդ ամսաթվին գումարվում է 30 և 29, 29,5-ի փոխարեն, որը լուսնական ամսի միջին թիվն է: Այն գալիս է նախորդ 19-ամյակի տարուց, որտեղ եղել է 13 լուսնի:
Սեպտեմբեր	14	Տ	1	4	Սեպտեմբեր	29	Տ	7	4	
Հոկտեմբեր	14	Ք	1	4	Հոկտեմբեր	29	Ք	7	4	
Նոյեմբեր	12	Տ	1	2	Նոյեմբեր	27	Տ	7	2	
Դեկտեմբեր	12	Ք	1	2	Դեկտեմբեր	26	Ք	6	5	

2.

Ծնունդն լուսնի	Քա գիշեր	Տի գիշեր	ժամ	Մաս	Լրումն լուսնի	Քա գիշեր	Տի գիշեր	ժամ	Մաս	Ծանոթություն
Յունուար	10	Ք/Տ	12	5	Յունուար	25	Տ	6	5	Հնգեակն՝ 50
Փետրուար	9	Տ	12	5	Փետրուար	24	Ք	6	5	Վեցեակն՝ 60
Մարտ	10	Ք	12	3	Մարտ	24	Տ	6	1	Վերադիրն՝ 20
Ապրիլ	9	Տ	12	3	Ապրիլ	24	Ք	6	3	Լրումն՝ Մարտ 24
Մայիս	8	Ք	12	1	Մայիս	23	Տ	6	1	ԲԺ-ան լուսնի
Յունիս	7	Տ	12	1	Յունիս	22	Ք	6	1	Լրման օրը եղել է մարտի
Յուլիս	6	Ք	11	4	Յուլիս	21	Տ	5	4	25-ին սակայն սովորույթի համաձայն որել են մարտի
Աւգոստոս	5	Տ	11	4	Աւգոստոս	20	Ք	5	4	
Սեպտեմբեր	3	Ք	10	2	Սեպտեմբեր	18	Տ	5	2	24-ին: Իսկ ժամն ու մասը
Հոկտեմբեր	3	Տ	10	2	Հոկտեմբեր	18	Ք	5	2	կլիմի 6 և 3: Նոյեմբ. ունի
Նոյեմբեր	1	Ք	10	5	Նոյեմբեր	16	Տ	4	5	երկու ճնունդ: Այն գալիս է հաջորդ 19-ամյակի տարուց,
Դեկտեմբեր	30	Ք	10	3	Դեկտեմբեր	16	Ք	4	5	որտեղ լինելու է 13 լուսնի

3.

Ծնունդն լուսնի	Քա նիք	Տի գիշեր	Ժամ	Մա սն	Լրումն լուսնի	Քա նիք	Տի գիշեր	Ժամ	Մա սն	Ծանոթություն
Յունուար	29	Տ	6	3	Յունուար	14	Տ	4	3	Հնգեակն՝ 55
Փետրուար	28	Գ	10	3	Փետրուար	13	Գ	4	3	Վեցեակն՝ 66
Մարտ	29	Տ	10	1	Մարտ	14	Տ	4	1	Վերադիրն՝ 1
Ապրիլ	28	Գ	10	1	Ապրիլ	12	Գ	3	4	Լրումն՝ Ապրիլ 12
Մայիս	27	Տ	9	4	Մայիս	12	Տ	3	4	Գժ-ան լուսն
Յունիս	26	Գ	9	4	Յունիս	11	Գ	3	4	
Յուլիս	25	Տ	9	2	Յուլիս	10	Տ	3	2	
Աւգոստոս	24	Գ	9	2	Աւգոստոս	9	Գ	3	2	
Սեպտեմբեր	22	Տ	8	5	Սեպտեմբեր	7	Տ	2	5	
Հոկտեմբեր	22	Գ	8	5	Հոկտեմբեր	7	Գ	2	5	
Նոյեմբեր	20	Տ	8	3	Նոյեմբեր	5	Տ	2	3	
Դեկտեմբեր	20	Գ	8	3	Դեկտեմբեր	5	Գ	2	3	

4.

Ծնունդն լուսնի	Քա նիք	Տի գիշեր	Ժամ	Մա սն	Լրումն լուսնի	Քա նիք	Տի գիշեր	Ժամ	Մա սն	Ծանոթություն
Յունուար	18	Տ	8	1	Յունուար	3	Տ	2	1	Հնգեակն՝ 60
Փետրուար	17	Գ	8	1	Փետրուար	2	Գ	2	1	Վեցեակն՝ 72
Մարտ	18	Տ	7	4	Մարտ	3	Տ	1	4	Վերադիրն՝ 12
Ապրիլ	17	Գ	7	4	Ապրիլ	1 31	Գ Տ	1 1	2 2	Լրումն՝ Ապրիլ 1
Մայիս	16	Տ	7	2	Մայիս	31	Գ	1	2	Բժ-ան լուսն
Յունիս	15	Գ	7	2	Յունիս	30	Տ	1	2	
Յուլիս	14	Տ	6	5	Յուլիս	29	Տ	12	5	
Աւգոստոս	13	Գ	6	5	Աւգոստոս	28	Տ	12	5	
Սեպտեմբեր	11	Տ	6	3	Սեպտեմբեր	26	Տ	12	3	
Հոկտեմբեր	11	Գ	6	1	Հոկտեմբեր	26	Գ	12	3	
Նոյեմբեր	9	Տ	6	1	Նոյեմբեր	24	Տ	12	1	
Դեկտեմբեր	9	Գ	6	1	Դեկտեմբեր	23	Գ	11	4	

5.

Ծնունդն լուսնի	Քա նիք	Տի գիշեր	Ժամ	Մա սն	Լրումն լուսնի	Քա նիք	Տի գիշեր	Ժամ	Մա սն	Ծանոթություն
Յունուար	7	Տ	5	4	Յունուար	22	Տ	11	4	Հնգեակն՝ 65
Փետրուար	6	Գ	5	4	Փետրուար	21	Գ	11	4	Վեցեակն՝ 78
Մարտ	7	Տ	5	2	Մարտ	21	Տ	10	5	Վերադիրն՝ 23
Ապրիլ	6	Գ	5	2	Ապրիլ	21	Գ	11	2	Լրումն՝ Մարտ 21
Մայիս	5	Տ	4	5	Մայիս	21	Տ	11	2	Բժ-ան լուսն
Յունիս	4	Գ	4	5	Յունիս	19	Գ	10	5	
Յուլիս	3	Տ	4	3	Յուլիս	18	Տ	10	3	
Աւգոստոս	2 31	Գ Տ	4 8	3 1	Աւգոստոս	17	Գ	10	3	
Սեպտեմբեր	30	Գ	4	1	Սեպտեմբեր	15	Տ	10	1	
Հոկտեմբեր	29	Տ	3	4	Հոկտեմբեր	on	Գ	10	1	
Նոյեմբեր	28	Գ	3	4	Նոյեմբեր	13	Տ	9	4	
Դեկտեմբեր	27	Տ	3	2	Դեկտեմբեր	13	Գ	9	4	

6.

Ծնունդն լուսնի	Քա նիք	Տի գիշեր	Ժամ	Մա սն	Լրումն լուսնի	Քա նիք	Տի գիշեր	Ժամ	Մա սն	Ծանոթություն
Յունուար	26	Գ	3	2	Յունուար	11	Տ	9	2	Հնգեակն՝ 70
Փետրուար	25	Տ	3	2	Փետրուար	10	Գ	9	2	Վեցեակն՝ 84
Մարտ	26	Գ	2	5	Մարտ	11	Տ	8	5	Վերադիրն՝ 4
Ապրիլ	25	Տ	2	5	Ապրիլ	9	Գ	8	3	Լրումն՝ Ապրիլ 9
Մայիս	24	Գ	2	3	Մայիս	9	Տ	8	3	Գժ-ան լուսն
Յունիս	23	Գ	2	3	Յունիս	8	Գ	8	3	
Յուլիս	22	Գ	2	1	Յուլիս	7	Տ	8	1	
Աւգոստոս	21	Տ	2	1	Աւգոստոս	6	Գ	8	1	
Սեպտեմբեր	19	Գ	1	4	Սեպտեմբեր	4	Տ	7	4	
Հոկտեմբեր	19	Տ	1	4	Հոկտեմբեր	4	Գ	7	4	
Նոյեմբեր	17	Գ	1	2	Նոյեմբեր	2	Տ	7	2	
Դեկտեմբեր	17	Տ	1	2	Դեկտեմբեր	2 31	Գ Տ	7 6	2 5	

7.

Ծնունդն լուսնի	Քա ճիք	Տի գիշեր	Ժամ	Մա սն	Լրումն լուսնի	Քա ճիք	Տի գիշեր	Ժամ	Մա սն	Ծանոթություն
Յունուար	15	Տ	12	5	Յունուար	30	Գ	6	5	Հնգեակն՝ 75
Փետրուար	14	Տ	12	5	Փետրուար	-	-	-	-	Վեցեակն՝ 90
Մարտ	15	Տ	12	3	Մարտ	1 29	Տ Գ	6 6	5 1	Վերադարձն՝ 15
Ապրիլ	14	Գ	12	3	Ապրիլ	29	Տ	6	3	Լրումն՝ Մարտ 29
Մայիս	13	Տ	12	1	Մայիս	28	Գ	6	1	ԲԺ-ան լուսն
Յունիս	12	Գ	12	1	Յունիս	27	Տ	6	1	
Յուլիս	1	Տ	11	4	Յուլիս	26	Գ	5	4	
Աւգոստոս	10	Գ	11	4	Աւգոստոս	25	Տ	5	4	
Սեպտեմբեր	8	Տ	11	2	Սեպտեմբեր	23	Գ	5	2	
Հոկտեմբեր	8	Գ	11	2	Հոկտեմբեր	23	Տ	5	2	
Նոյեմբեր	6	Տ	10	5	Նոյեմբեր	21	Գ	4	5	
Դեկտեմբեր	6	Գ	10	5	Դեկտեմբեր	21	Տ	4	5	

8.

Ծնունդն լուսնի	Քա ճիք	Տի գիշեր	Ժամ	Մա սն	Լրումն լուսնի	Քա ճիք	Տի գիշեր	Ժամ	Մա սն	Ծանոթություն
Յունուար	4	Տ	10	3	Յունուար	19	Գ	4	3	Հնգեակն՝ 80
Փետրուար	3	Գ	10	3	Փետրուար	18	Տ	4	3	Վեցեակն՝ 96
Մարտ	4	Տ	10	1	Մարտ	19	Գ	4	1	Վերադարձն՝ 26
Ապրիլ	3	Գ	10	1	Ապրիլ	17	Տ	3	4	Լրումն՝ Ապրիլ 17
Մայիս	2	Տ	9	4	Մայիս	17	Գ	3	4	ԳԺ-ան լուսն
Յունիս	1 30	Գ Տ	9 9	4 2	Յունիս	16	Տ	3	4	
Յուլիս	30	Գ	9	2	Յուլիս	16	Տ	3	2	
Աւգոստոս	28	Տ	8	5	Աւգոստոս	14	Տ	3	2	
Սեպտեմբեր	27	Գ	8	5	Սեպտեմբեր	12	Գ	2	5	
Հոկտեմբեր	26	Տ	8	1	Հոկտեմբեր	12	Տ	2	5	
Նոյեմբեր	25	Գ	8	3	Նոյեմբեր	12	Գ	2	3	
Դեկտեմբեր	24	Տ	8	1	Դեկտեմբեր	10	Տ	2	3	

9.

Ծնունդն լուսնի	Քա ճիք	Տի գիշեր	Ժամ	Մա սն	Լրումն լուսնի	Քա ճիք	Տի գիշեր	Ժամ	Մա սն	Ծանոթություն
Յունուար	23	Գ	8	1	Յունուար	8	Գ	2	1	Հնգեակն՝ 85
Փետրուար	22	Տ	8	1	Փետրուար	7	Տ	2	1	Վեցեակն՝ 102
Մարտ	22	Գ	7	4	Մարտ	8	Գ	1	4	Վերադարձն՝ 7
Ապրիլ	22	Տ	7	4	Ապրիլ	6	Տ	1	2	Լրումն՝ Ապրիլ 6
Մայիս	21	Գ	7	2	Մայիս	6	Գ	1	2	ԲԺ-ան լուսն
Յունիս	20	Տ	7	2	Յունիս	5	Տ	1	2	
Յուլիս	19	Գ	6	5	Յուլիս	4	Տ	12	5	
Աւգոստոս	18	Տ	6	5	Աւգոստոս	3	Տ	12	5	
Սեպտեմբեր	16	Գ	6	3	Սեպտեմբեր	1 31	Տ Գ	12 12	3 1	
Հոկտեմբեր	16	Տ	6	3	Հոկտեմբեր	30	Տ	12	1	
Նոյեմբեր	14	Գ	6	1	Նոյեմբեր	29	12	12	1	
Դեկտեմբեր	14	Տ	6	1	Դեկտեմբեր	28	Տ	11	4	

10.

Ծնունդն լուսնի	Քա ճիք	Տի գիշեր	Ժամ	Մա սն	Լրումն լուսնի	Քա ճիք	Տի գիշեր	Ժամ	Մա սն	Ծանոթություն
Յունուար	11	Գ	5	2	Յունուար	26	Գ	11	2	Հնգեակն՝ 90
Փետրուար	10	Տ/գ	5	2	Փետրուար	26	Տ/գ	11	2	Վեցեակն՝ 108
Մարտ	11	Գ	4	5	Մարտ	26	Գ	10	3	Վերադարձն՝ 19
Ապրիլ	10	Տ/գ	4	5	Ապրիլ	26	Տ	10	5	Լրումն՝ Մարտ 25
Մայիս	9	Գ	4	3	Մայիս	24	Գ	10	3	ԲԺ-ան լուսն
Յունիս	8	Տ	4	3	Յունիս	23	Տ	10	3	
Յուլիս	7	Գ	4	1	Յուլիս	22	Գ	10	1	
Աւգոստոս	6	Տ	4	1	Աւգոստոս	21	Տ	10	1	
Սեպտեմբեր	4	Գ	3	4	Սեպտեմբեր	19	Գ	9	4	
Հոկտեմբեր	4	Տ	3	4	Հոկտեմբեր	19	Տ	9	4	
Նոյեմբեր	2	Գ	3	2	Նոյեմբեր	17	Գ	9	2	
Դեկտեմբեր	2 31	Տ Գ	3 2	2 3	Դեկտեմբեր	17	Տ	9	2	



11.

Ծնունդն լուսնի	Քա Գիք	Տի գիշեր	Ժամ	Մա սն	Լրումն լուսնի	Քա Գիք	Տի գիշեր	Ժամ	Մա սն	Ծանոթություն
Յունուար	30	Տ	2	5	Յունուար	15	Գ	8	5	Հնգեակն՝ 95
Փետրուար	-	-	-	-	Փետրուար	14	Տ	8	5	Վեցեակն՝ 114
Մարտ	1 30	Գ Տ	2 2	5 3	Մարտ	15	Գ	8	3	Վերադիրն՝ 30
Ապրիլ	29	Գ	2	3	Ապրիլ	13	Տ	8	1	Լրումն՝ Ապրիլ 13
Մայիս	28	Տ	2	1	Մայիս	13	Գ	8	1	ԳԺ-ան լուսն
Յունիս	27	Գ	2	1	Յունիս	12	Տ	8	1	
Յուլիս	26	Տ	1	4	Յուլիս	11	Գ	7	4	
Աւգոստոս	25	Գ	1	4	Աւգոստոս	10	Տ	7	4	
Սեպտեմբեր	23	Տ	1	2	Սեպտեմբեր	8	Գ	7	2	
Հոկտեմբեր	23	Գ	1	2	Հոկտեմբեր	8	Տ	7	2	
Նոյեմբեր	21	Տ	12	5	Նոյեմբեր	6	Գ	6	5	
Դեկտեմբեր	21	Տ	12	5	Դեկտեմբեր	6	Տ	6	5	

12.

Ծնունդն լուսնի	Քա Գիք	Տի գիշեր	Ժամ	Մա սն	Լրումն լուսնի	Քա Գիք	Տի գիշեր	Ժամ	Մա սն	Ծանոթություն
Յունուար	19	Տ	10	3	Յունուար	4	Տ	4	3	Հնգեակն՝ 5
Փետրուար	18	Գ	10	3	Փետրուար	3	Գ	4	3	Վեցեակն՝ 6
Մարտ	19	Տ	10	1	Մարտ	4	Տ	4	1	Վերադիրն՝ 11
Ապրիլ	18	Գ	10	1	Ապրիլ	2	Գ	3	4	Լրումն՝ Ապրիլ 2
Մայիս	17	Տ	9	4	Մայիս	2	Տ	3	4	ԲԺ-ան լուսն
Յունիս	16	Գ	9	4	Յունիս	1 30	Գ Տ	3 3	4 2	
Յուլիս	15	Տ	9	2	Յուլիս	30	Գ	3	2	
Աւգոստոս	14	Գ	9	2	Աւգոստոս	29	Տ	3	2	
Սեպտեմբեր	12	Տ	8	5	Սեպտեմբեր	27	Գ	2	5	
Հոկտեմբեր	12	Գ	8	5	Հոկտեմբեր	27	Գ	2	5	
Նոյեմբեր	10	Տ	8	3	Նոյեմբեր	25	Գ	2	3	
Դեկտեմբեր	10	Գ	8	3	Դեկտեմբեր	24	Տ	2	1	

13.

Ծնունդն լուսնի	Քա Գիք	Տի գիշեր	Ժամ	Մա սն	Լրումն լուսնի	Քա Գիք	Տի գիշեր	Ժամ	Մա սն	Ծանոթություն
Յունուար	8	Տ	8	1	Յունուար	23	Գ	2	1	Հնգեակն՝ 10
Փետրուար	7	Գ	8	1	Փետրուար	22	Տ	2	1	Վեցեակն՝ 12
Մարտ	8	Տ	7	4	Մարտ	22	Գ	1	2	Վերադիրն՝ 22
Ապրիլ	7	Գ	7	4	Ապրիլ	22	Տ	1	4	Լրումն՝ Մարտ 22
Մայիս	6	Տ	7	2	Մայիս	21	Գ	1	2	ԲԺ-ան լուսն
Յունիս	5	Գ	7	2	Յունիս	20	Տ	1	2	
Յուլիս	4	Տ	6	5	Յուլիս	19	Տ	12	5	
Աւգոստոս	3	Գ	6	5	Աւգոստոս	18	Տ	12	5	
Սեպտեմբեր	1	Տ	6	3	Սեպտեմբեր	16	Տ	12	3	
Հոկտեմբեր	1 30	Գ Տ	6 6	3 1	Հոկտեմբեր	16	Գ	12	3	
Նոյեմբեր	29	Գ	6	1	Նոյեմբեր	14	Տ	12	1	
Դեկտեմբեր	28	Տ	5	4	Դեկտեմբեր	14	Գ	12	1	

14.

Ծնունդն լուսնի	Քա Գիք	Տի գիշեր	Ժամ	Մա սն	Լրումն լուսնի	Քա Գիք	Տի գիշեր	Ժամ	Մա սն	Ծանոթություն
Յունուար	27	Գ	5	4	Յունուար	12	Տ	11	4	Հնգեակն՝ 15
Փետրուար	26	Տ	5	4	Փետրուար	11	Գ	11	4	Վեցեակն՝ 18
Մարտ	27	Գ	5	2	Մարտ	12	Տ	11	2	Վերադիրն՝ 3
Ապրիլ	26	Տ	5	2	Ապրիլ	10	Գ	10	5	Լրումն՝ Ապրիլ 10
Մայիս	25	Գ	4	5	Մայիս	10	Տ	10	5	ԳԺ-ան լուսն
Յունիս	24	Տ	4	5	Յունիս	9	Գ	10	5	
Յուլիս	23	Գ	4	3	Յուլիս	8	Տ	10	3	
Աւգոստոս	22	Տ	4	3	Աւգոստոս	7	Գ	10	3	
Սեպտեմբեր	20	Գ	4	1	Սեպտեմբեր	5	Տ	10	1	
Հոկտեմբեր	20	Տ	4	1	Հոկտեմբեր	5	Գ	10	1	
Նոյեմբեր	18	Գ	3	4	Նոյեմբեր	3	Տ	9	4	
Դեկտեմբեր	18	Տ	3	4	Դեկտեմբեր	3	Գ	9	4	

15.

Ծնունդն լուսնի	Քա նիք	Տի գիշեր	Ժամ	Մա սն	Լրումն լուսնի	Քա նիք	Տի գիշեր	Ժամ	Մա սն	Ծանոթություն
Յունուար	16	Գ	3	2	Յունուար	1 31	Տ Գ	9 9	2 2	Հնգեակն՝ 20
Փետրուար	15	Տ	3	2	Փետրուար	2	Գ	10	1	Վեցեակն՝ 24
Մարտ	16	Գ	2	5	Մարտ	30	Գ	8	3	Վերադիրն՝ 14
Ապրիլ	15	Տ	2	5	Ապրիլ	30	Տ	8	5	Լրումն՝ Մարտ 30
Մայիս	14	Գ	2	3	Մայիս	29	Գ	8	3	ԲԺ-ան լուսն
Յունիս	13	Տ	2	3	Յունիս	28	Տ	8	3	
Յուլիս	12	Գ	2	1	Յուլիս	27	Գ	8	1	
Աւգոստոս	11	Տ	2	1	Աւգոստոս	26	Տ	8	1	
Սեպտեմբեր	9	Գ	1	4	Սեպտեմբեր	24	Գ	7	4	
Հոկտեմբեր	9	Տ	1	4	Հոկտեմբեր	24	Տ	7	4	
Նոյեմբեր	7	Գ	1	2	Նոյեմբեր	22	Գ	7	2	
Դեկտեմբեր	7	Տ	1	2	Դեկտեմբեր	21	Տ	6	5	

16.

Ծնունդն լուսնի	Քա նիք	Տի գիշեր	Ժամ	Մա սն	Լրումն լուսնի	Քա նիք	Տի գիշեր	Ժամ	Մա սն	Ծանոթություն
Յունուար	5	Տ	12	5	Յունուար	20	Գ	6	5	Հնգեակն՝ 25
Փետրուար	4	Տ	12	5	Փետրուար	19	Տ	6	5	Վեցեակն՝ 30
Մարտ	5	Տ	12	3	Մարտ	20	Գ	6	3	Վերադիրն՝ 25
Ապրիլ	4	Գ	12	3	Ապրիլ	18	Տ	6	1	Լրումն՝ Ապրիլ 18
Մայիս	3	Տ	12	1	Մայիս	18	Գ	6	1	ԳԺ-ան լուսն
Յունիս	2	Գ	12	1	Յունիս	17	Տ	6	1	
Յուլիս	1 31	Տ Գ	11 11	4 4	Յուլիս	16	Գ	5	4	
Աւգոստոս	29	Տ	11	2	Աւգոստոս	15	Տ	5	4	
Սեպտեմբեր	28	Գ	11	2	Սեպտեմբեր	13	Գ	5	2	
Հոկտեմբեր	27	Տ	10	5	Հոկտեմբեր	13	Տ	5	2	
Նոյեմբեր	26	Գ	10	5	Նոյեմբեր	11	Գ	4	5	
Դեկտեմբեր	25	Տ	10	3	Դեկտեմբեր	11	Տ	4	5	

17.

Ծնունդն լուսնի	Քա նիք	Տի գիշեր	Ժամ	Մա սն	Լրումն լուսնի	Քա նիք	Տի գիշեր	Ժամ	Մա սն	Ծանոթություն
Յունուար	24	Գ	10	3	Յունուար	9	Գ	4	3	Հնգեակն՝ 30
Փետրուար	23	Տ	10	3	Փետրուար	8	Տ	4	3	Վեցեակն՝ 36
Մարտ	24	Գ	10	1	Մարտ	9	Գ	4	1	Վերադիրն՝ 6
Ապրիլ	23	Տ	10	1	Ապրիլ	7	Տ	3	4	Լրումն՝ Ապրիլ 7
Մայիս	22	Գ	9	4	Մայիս	7	Գ	3	4	ԲԺ-ան լուսն
Յունիս	21	Տ	9	4	Յունիս	6	Տ	3	4	
Յուլիս	20	Գ	9	2	Յուլիս	5	Գ	3	2	
Աւգոստոս	19	Տ	9	2	Աւգոստոս	4	Տ	3	2	
Սեպտեմբեր	17	Գ	8	5	Սեպտեմբեր	2	Գ	2	5	
Հոկտեմբեր	17	Տ	8	5	Հոկտեմբեր	2 31	Տ Գ	2 2	5 1	
Նոյեմբեր	15	Գ	8	3	Նոյեմբեր	30	Տ	2	3	
Դեկտեմբեր	15	Տ	8	3	Դեկտեմբեր	29	Գ	2	1	

18.

Ծնունդն լուսնի	Քա նիք	Տի գիշեր	Ժամ	Մա սն	Լրումն լուսնի	Քա նիք	Տի գիշեր	Ժամ	Մա սն	Ծանոթություն
Յունուար	13	Գ	8	1	Յունուար	28	Տ	2	1	Հնգեակն՝ 35
Փետրուար	12	Տ	8	1	Փետրուար	27	Գ	2	1	Վեցեակն՝ 42
Մարտ	13	Գ	7	4	Մարտ	27	Տ	1	2	Վերադիրն՝ 17
Ապրիլ	12	Տ	7	4	Ապրիլ	27	Գ	1	4	Լրումն՝ Մարտ 27
Մայիս	11	Գ	7	2	Մայիս	26	Տ	1	2	ԲԺ-ան լուսն
Յունիս	10	Տ	7	2	Յունիս	25	Գ	1	2	
Յուլիս	9	Գ	6	5	Յուլիս	24	Տ	12	5	
Աւգոստոս	8	Տ	6	5	Աւգոստոս	23	Տ	12	5	
Սեպտեմբեր	6	Գ	6	3	Սեպտեմբեր	21	Գ	12	3	
Հոկտեմբեր	6	Տ	6	3	Հոկտեմբեր	21	Տ	12	3	
Նոյեմբեր	4	Գ	6	1	Նոյեմբեր	19	Գ	12	3	
Դեկտեմբեր	4	Տ	6	1	Դեկտեմբեր	19	Տ	12	1	

Ծնունդի լուսնի	Քա Նիք	Տի Գիշեր	Ժամ	Մա սն	Լրումն լուսնի	Քա Նիք	Տի Գիշեր	Ժամ	Մա սն	Ծանոթություն
Յունուար	2	Գ	5	4	Յունուար	17	Գ	11	4	Հիմնական 40
Փետրուար	1	Տ	5	4	Փետրուար	16	Տ	11	4	Վեցական 48
Մարտ	2	Գ	5	2	Մարտ	17	Գ	11	2	Վերադիրն 28
Ապրիլ	1 30	Տ Գ	5 4	2 5	Ապրիլ	15	Տ	10	5	Լրումն Ապրիլ 15
Մայիս	30	Տ	4	5	Մայիս	15	Գ	10	5	ԳԺ-ան լուսնի
Յունիս	28	Գ	4	3	Յունիս	15	Տ	11	2	
Յուլիս	28	Տ	4	3	Յուլիս	13	Գ	10	3	
Աւգոստոս	26	Գ	4	1	Աւգոստոս	12	Տ	10	3	
Սեպտեմբեր	25	Տ	4	1	Սեպտեմբեր	10	Գ	10	1	
Հոկտեմբեր	24	Գ	3	4	Հոկտեմբեր	10	Տ	10	1	
Նոյեմբեր	23	Տ	3	4	Նոյեմբեր	8	Գ	9	4	
Դեկտեմբեր	22	Գ	3	2	Դեկտեմբեր	8	Տ	9	4	

\*\*\*

Տեսնենք ինչ տվյալներ կան Իրեոնի ՇԼԲ-ի և նրա առանձին բաղադրիչների մասին:

Բերենք Շիրակացուց վկայություններ.

«Աստանաւր ասէ եղեալ զԻրոն վարդապետ դրանն արքունի ի քաղաքին Կոստանդնուպալսի, որ ազգականութեամբ աւտար եւ ոչ քաղաքացի, զոր ոմանք եւ աղբքսանդրացի իսկ գոլ ասացին: Զսա զգարեալ ասէ ընդ ժողովս իմաստասիրացն որ յԱղեքսանդրիա, իբր քամահանս իւր վարկանել զոչ անդր կոչեցեալ, հակառակ ճշմարտութեանն մաքառի, խոտէ զկարգեալն ի նոցանէ (էասյան ՇԼԲ-ն-Ռ. Վ.): Նոյնպես եւ զառաջնոց եղեալսն զոգցես իբրեւ տգէտս զնոսա համարեալ, առնէ ժամանակագրութիւն նորաձայն, հակառակ աստուածային գրոց, եւ ամենայն ժամանակագրաց, նոյնպէս եւ տոմար եւ փոխէ զիննեւտասներբեակն լուսնի ի վեցէն ապրեղի, եւ փոխանակ կարգէ հինգ ապրեղի, եւ ղնէ զնա գլուխ բոլորի եւ առնէ իւր աւրինակ գտասն փարմութի (= Ապրիլի 5) ըստ եգիպտացուց, որ ի մէնջ պարմափիւրն ձայնի եւ ղնէ զնա գլուխ բոլորի՝ լրումն եւ անվերադրութիւն, հակառակ առաջնոցն: Որպես եւ նոքա երբայցեցին հայելով ձեւացուցին. սորա նոյնպէս զեգիպտացին արարեալ աւրինակ, իբր թէ ցուցանեւ իմաստասիրացն Աղեքսադրի եթէ յոյժ տգէտ էք. որ եւ ոչ ձերոյ ազգիդ հմուտ եք. զիարդ այդոց ազգաց կարգեցէք տումար: Եւ զհոգիմայեցուցն այսպէս կարգեաց. եղ զհինգ ապրեղի՝ գլուխ բոլորակի. եւ կարգեաց նմա վերադիր Ը (8), վասն զի երեքտասանաւրեաց ասաց զլուսին յաւուր ստեղծման իւրոյ. զուգելով զութ եւ զհինգ, այսինքն զվերադիրն եւ զլրումն ի խորհուրդ նմա համարեցաւ: Այդ եւ երեքտասան շրջառութիւն թուոց լուսնականաց՝ զարեգականայնեալքն խորհուրդ նմին համարեցաւ, եւ արկանելով ի վերայ վերադիրն ԺԱԺԱ թիւ մինչեւ զկատարումն իննեւտասներբեկին, եւ բոլորին. եւ ապա երկուտասան թիւ արկանէ զվերադրովն ըստ կագի կատարման իննեւտասներբեկի. եւ ի վերայ լրմանն արկանէ քսան թիւ. եւ առնու ի բաց երկուտասան եւ մետասան ցկատարումն իննեւտասներբեկի եւ բոլորին եւ ապա առնու ի բաց ԺԲԺԲ վասն կատարման իննեւտասներբեկին եւ խաղացուցանէ անուացեալ ծանուցեալ ի ճարտարութիւն արուեստին պանձալով. աղարտեալ խոտէ զառաջնոցն զիրս, եւ բռնութեամբ հրա-

մանի թագաւորին ընդ ամենայն աշխարհն զիւրն հաստատեաց: Բայց մեք քաւ եւ մի լիցի հաւանել ժամանակագրութեանն Իրոնի շփոթելոյ եւ յաճախելոյ արտաքոյ աստուածային գրոց. եւ մի ընդունել զթիւս տոմարի նորա զխաբողականս, եւ լիցուք ընդ նոյնվիւր սուրբ հարցն: Քանզի գրեալ է այսպէս. Անիծեալ որ առնէ զատիկ ընդ տիրասպան ազգին հրէից, եւ կամ ընդ շամրտացուց եւ կամ ընդ Պաւղիանոսաց Անիծեալ որ առնէ զատիկ յերեքտասան լուսնի: Արդ Իրոն թեպէտ եւ բիւր անգամ կարծէ ճարտարանալ. սակայն ոչ զեղծանի ի նոյնվիցս յայսցանէ. զի որ ի միոյն փախչի եւ ի միւսն շողախի, նմանէ այնմ որ սակաւ աղաւթէ եւ բազումս հայհոյէ: Քանզի իբրեւ զիպի ի շաբաթու հինգ ապրեղի ըստ Իրոնական թուոյն, համարին զնա լրումն եւ ի վեց ապրեղի առնեն զգատիկն որ դիպի ի վեշտասան նիսան եւ տաւնեն զոյգ ընդ հրէից, ստունկնեալ հարցն զնոյնվից: Քանզի ոչ երբեք տաւնեալ է հրեից ի հնգեւտասան նիսան գտաւն զատիկ, այլ միշտ տաւնեն ի վեշտասան նիսան, նոքա եւ շամրտացիք. քանզի շամրտացիք հաստատագոյն քան զնոսա. ունին թեպէտ եւ ի նոցանէ են ուսեալիք: Այդ եւ Պաւղիանոսք ի նմին աւուր տաւնեն եւ զինչ աւր և դիպի լրմանն, կիւրակէ անուանեն, որպէս եւ հրեայք շաբաթ անուանեն թեպէտ եւ չիցէ շաբաթ» (էջ 296-297):

Բացի Ապրիլ 6-ը Ապրիլ 5-ի փոխելու տարբերակից 19-ամյակի մյուս ամսաթվերի մասին Շիրակացին ուրիշ տեղեկություն չի տալիս, իսկ Կիրակոս Գանձակեցին հայտնում է, որ Իրեոնը Ապրիլ 15-ը (պետք է լինի Ապրիլ 17-ը) դարձրեց Ապրիլ 16, այսինքն փոխել է 19-րդ տարվա ամսաթիվը ևս: Սակայն չենք քննարկում այդ ամսաթվի փոփոխությունը, քանի որ լրացուցիչ որևէ տեղեկություն հայտնի չէ: Մանավանդ Շիրակացին, որ բավականին մանրամասն շարադրել է Իրեոնի տեսակետն, որևէ բան չի հայտնում այդ կապակցությամբ: Ինչպես տեսանք էասյանների ՇԼԲ-ի առիթով Վ. Գրյունելը վերականգնել է Իրեոնի 19-ամյակը և նրա 1-ին տարին համարել է Մարտի 25-ը, մինչդեռ Շիրակացին հստակ գրել է, որ Իրեոնի 19-ամյակի, հետևաբար ՇԼԲ-ի 1-ին տարին Ապրիլ 5-ն էր:

Բայց այդ Գրյունելի վերականգնած Իրեոնի 19-ամյակի մեջ Ապրիլ 17-ը փոխել է Ապրիլ 16-ի, միաժամանակ նշել է, որ Ապրիլ 16-ի ամսաթիվը երբեք չի օգտագործվել: Այլ խոսքով ունենք Կիրակոս Գանձակեցու վկայությունը և Վ. Գրյունելի վերականգնումը Ապրիլ 17-ը Ապրիլ 16 դարձնելու մասին, սակայն քանի որ Շիրակացին որևէ ակնարկ անգամ չուներ, ուստի մնում է սպասել նոր տվյալների Իրեոնի 19-ամյակի այդ ամսաթիվը վերջնականորեն ճշտելու և փոխելու համար: Մենք վստահել ենք Շիրակացուն և վերականգնել Իրեոնի 19-ամյակի ամսաթվերը և վերադիրների համակարգը, միաժամանակ փակագծում նշելով Ապրիլ 16-ի դատան, հետագա ուսումնասիրողների ուշադրությունը հրավիրելու միտումով: Հարկ է նշել, որ Ապրիլ 17-ը Ապրիլ 16-ով փոխելով հարցը չի սպառվում, այլ այդ փոփոխությունը բերելու է Զատիկ օրերի ընդունված կարգի խախտման, որը բնագրերի տվյալներով պետք է հիմնավորվի: Այս առիթը Շիրակացին բաց չէր թողնի քննադատելու Իրեոնին: Այսպիսով Շիրակացին հնարավորություն է տալիս վերականգնելու Իրեոնի 19-ամյակը հետևաբար նրա ՇԼԲ-ն, որը որոշակի հետաքրքրություն է ներկայացնում ՇԼԲ-ների պատմության վերականգնման համար: Շիրակացու հանգամանակից քննությունից պարզվում է, որ Իրեոնը 19-ամյակի սկիզբ է ընդունել Ապրիլ 5-ը և վերադիրը դրել է 8: Նա 19-ամյակի հաջորդ տարիներին ավելացրել է 11, իսկ վերջին տարում՝ 12:

Շիրակացու վերադիրների համակարգը պարզելուց հետո դժվար չէ համադրել Իրեոն վարդապետի ընդունած 19-ամյակի հետևաբար ՇԼԲ-ի վերադիրների համակարգի հետ և տեսնել նրանց տարբերությունները:

Նախ ներկայացնենք Շիրակացու և Իրեոնի օգտագործած 19-ամյակի ամսաթվերը և վերադիրների համակարգը, այն է՝

ըստ Թիրակացու

- 1. A 4 - 9
- 2. M 24 - 10
- 3. A 12 - 1
- 4. A 1 - 12
- 5. M 21 - 23
- 6. A 9 - 4
- 7. M 29 - 15
- 8. A 17 - 26
- 9. A 6 - 7
- 10. M 25 - 19
- 11. A 13 - 30
- 12. A 2 - 11
- 13. M 22 - 22
- 14. A 10 - 3
- 15. M 30 - 14
- 16. A 18 - 25
- 17. A 7 - 6
- 18. M 27 - 17
- 19. A 15 - 28

ըստ Իրեոնի

- 1. A 5-8
- 2. M 25 - 19
- 3. A 13 - 30
- 4. A 2 - 11
- 5. M 22 - 22
- 6. A 10 - 3
- 7. M 30 - 14
- 8. A 18 - 25
- 9. A 7 - 6
- 10. M 27 - 17
- 11. A 15 - 28
- 12. A 4 - 9
- 13. M 24 - 20
- 14. A 12 - 1
- 15. A 1 - 12
- 16. M 21 - 23
- 17. A 9 - 4
- 18. M 29 - 15
- 19. A 17(A16) - 27

Նախ, ինչպես նկատելի է, Շիրակացին 1-ին տարին ընդունել է, ինչպես էսայանները Ապրիլ 4-ը, իսկ Իրեոնը՝ Ապրիլ 5-ը, որոնք իրարից ունեն 9 տարվա տարբերություն, եթե 1-ին տարին սկսենք Ապրիլ 4-ից: Իսկ եթե 1-ին տարին սկսենք ապրիլ 5-ից կունենան 12 տարվա տարբերություն: Մյուս կողմից Շիրակացին հետևելով էսայաններին Ապրիլ 6-ը չի փոխել, իսկ Իրեոնը Ապրիլ 6-ը փոխել է Ապրիլ 5-ի: Վերը բերված աղյուսակից հետևում է, որ Շիրակացու և Իրեոնի վերադիրների համակարգի տարբերությունները մեկ են 1-ից 9-րդ տարիների համար, 10-ից 18-րդ տարվա երկու, իսկ 19-րդ տարվա համար նույնպես մեկ: Հաշվումները ցույց են տալիս, որ Իրեոնը ընտրած 1-ին տարում, որ նա սահմանել է Ապրիլ 5-ը, լուսնի լրումներն իրականում ընկել են հետևյալ կերպ. 4-րդ դարի վերջից 5-րդ դարի սկզբներից մինչև 8-րդ դարի սկզբները Ապրիլ 6-ին, այսինքն իր գործած ժամանակաշրջանում, այն է՝ 6-րդ դարի 2-րդ կեսում լուսնի լրումներն ընկել են ոչ թե ապրիլ 5-ին այլ ապրիլ 6-ին՝ մեկ օր ուշացումով: Այնուհետև 8-րդ դարի սկզբներից մինչև 11-րդ դարի սկզբները լուսնի լրումներն եղել են Ապրիլի 5-ին, իսկ 11-րդ դարի սկզբներից մինչև 14-րդ դարի սկզբները՝ Ապրիլ 4-ին: Այնպես որ Շիրակացին ըստ էության ճիշտ է քննադատել Իրեոնին, որովհետև նա դիտել է լուսնի ընթացքը և տեսել, որ Իրեոնի ընտրած 1-ին տարում լուսնի լրումներն ընկել են ոչ թե Ապրիլ 5-ին, այլ Ապրիլ 6-ին: Իսկ լրումից առաջ կամ լրման օրը երբեք Չատիկ չեն կատարել, այլ միշտ լրումից հետո: Հրեաներից գատվելու հիմնականներից մեկն էլ լրումից հետո Չատիկ կատարելն էր, որի պաշտպանության դիրքերից է ելել Անանիա Շիրակացին:

\*\*\*

Անցնենք Անանիա Շիրակացու կազմած Հայոց ՇԼԲ զատկացուցակի վկայությունների քննությունը:

«Անանիա Շիրակունեոյ համարողի ասացեալ ի գատիկն Տեառն» մեկնության մեջ գրված է. «... Եւ քանզի չեն տեղեակ բազումք թուոց, մանաւանդ շինականք եւ վարդապետութիւն Տեառն մերոյ տարածեցաւ կալաւ աշխարհ ամենայն. վասն այնորիկ ՇԼԲ (532) ամաց միանգամայն համարեցա ըստ թուոյ Աղեքսանդրացոց ի ՊԻԸ (828) ամէն մինչև յամն Ռ34 (1360), այնոցիկ որոց կացցեն յաշխարհի, կազմեցի ես Անանիա, որդի Յովհաննիսի Շիրականեոյ, եւ դրոշմեցի ա[ռ]անձին զբնաւ մի մի ամ ՇԼԲ (532) ԻԸ(28) կանոն, որովք զամենայն] համարն բովանդակեցի ՇԼԲ (532) կարգ, եւ գատիկն] մեկնեցի զմի մի կարգ առ մի մի տարի»<sup>1</sup>:

Անանիա Շիրակացու վերոհիշյալ հիշատակարանը գիտական շրջանառության մեջ է դրել Ք. Պատկանյանը 1877 թ.<sup>2</sup>: Նա այդ հատվածի մասին որևէ ծանոթագրություն չի տալիս: Ն. Ակիսյանը Շիրակացու չվերծանված հիշատակարանը ի թիվս այլոց բերում է իբրև հայոց թվականի 9-րդ դ. հաստատված լինելու վկայություն<sup>3</sup>, մինչդեռ ինչպես կտեսնենք, հենց այն է հիմնավորում 581 թ. հայոց թվականի հաստատված լինելը:

Բնագրի հաջորդ հրատարակողին՝ Աշ. Աբրահամյանին անբացատրելի է մնացել «Աղեքսանդրացոց թվականի հիշատակությունը Շիրակացու Չատիկի ճառի վերջում»<sup>4</sup>:

Անանիա Շիրակացու հիշատակարանի թվերին անդրադարձել է Վ. Գրյունմելը<sup>5</sup>: Նրան ևս անբացատրելի են մնացել այդ «Հանելուկային թվերը», այն է՝ «ըստ թուոյ Աղեքսանդրացոց ի ՊԻԸ (828) ամէն մինչև յամն Ռ34 (1360)»: Վ. Գրյունմելը այդ թվերին բացատրություն գտել է ներկայացնելով մի էրա, որը սկսել է 172 թ. մ.թ.ա.: Այս մեկնակետից հանել է առաջին թիվը, այն է՝ 828-ը և ստացել 656 թվական:

Արդ դառնանք Շիրակացու հիշատակարանի թվերի վերծանությանը:

«Յաղագս թուոյ Հռոմայեցոց» վերնագիր կրող տոմարական բնագիրը, որը գրվել է Հովհաննես Սարկավագից մինչև 1373 թ. ընկած ժամանակահատվածում, տեղեկացնում է. «Յաղագս թուականին որ ըստ ոմանց ասելոյ յԱղեկսանդրացոյն ասեն լինել, այլ ոչ ունի հաստատութիւն բանն»<sup>6</sup>: Այդ նույն բնագրից քաղված հատվածը որոշ տարբերություններով բերել է Աշ. Աբրահամյանը «Տիեզերագիտություն և տոմար» գրքում որպես Շիրակացու տոմարի հատված<sup>7</sup> հետևյալ ձևով՝ «Դարձեալ ցուցանեմ քեզ յաղագս Հռոմայեցոց թուականի որ ըստ ոմանց ասելոյ յԱղեքսանդրացի Իռիոնէ ասեն լինել, այլ ոչ ունի հաստատութիւն բանն»<sup>8</sup>:

Վերոհիշյալ հատվածները առիթ տվեցին մտածելու և առաջարկելու հիշատակարանում փաստագրված «ըստ թուոյ Աղեքսանդրացոց»-ի տակ հասկանալ հայկական մատենագրությունից հայտնի Արշակունիների թվականությունը (= 247 թ. մ.թ.ա., ըստ Եսեբիոս Կեսարացու 250 թ. մ.թ.ա.): Այս դիտողությունն ընդունելու դեպքում Շիրակացու հիշատակարանում վկայված թվերը կվերծանվեն հետևյալ կերպ.

1. 828 - 247 = 581 թ.	2. 1360 - 247 = 1113 թ.
(828 - 581 = 247)	(1360 - 1113 = 247)

1 ՄՄ ձեռ. № 2679, էջ 29ա-բ:  
 2 Ք. Պատկանյան, Անանիայի Թիրակունեոյ մնացորդ բանից, Ս. Պետերբուրգ, 1877, էջ 26:  
 3 Ն. Ակիսյան, Հայոց թվականի հաստատության ժամանակը. «Հանդես ամսօրյա», № 4, ապրիլ, 1904, էջ 102:  
 4 Աշ. Աբրահամյան, Անանիա Թիրակացու մատենագրությունը, էջ 108:  
 5 V. Grumel. Op. cit., p. 142-143, 138.  
 6 ՄՄ ձեռ. № 2001, էջ 203 բ:  
 7 «Յաղագս թուոյ Հռոմայեցոց» բնագրում կան վկայություններ հայկական անշարժ տոմարի մասին, ուստի այն Թիրակացուն պատկանել չի կարող:  
 8 Անանիա Թիրակացի, Տիեզերագիտություն և տոմար, էջ 86:

Այս թվականները հիմնավորվում են մեր առաջադրած մեթոդով: Վերծանված թվականները աղյուսակի մեջ կուենան հետևյալ պատկերը:

Ձուգահեռ թվականներ	թվերից ստացված մնացորդ	19-ամյակի հմպտ. տարվա լուսնի լրումը	19-ամյակի 1-ին տարվա լուսնի լրումը
828 (արշակունիների թվական)	11 /-1/	A 4	A 13
581 (քրիստոնեական դիոնիսյան թվական)	11 /-1/	A 4	A 13
1360 (արշակունիների թվական)	11 /-1/	A 4	A 13
1113 (քրիստոնեական դիոնիսյան թվական)	11 /-1/	A 4	A 13

Հիշատակարանների թվականները հաստատվում են նաև այլ վկայություններով:

Անանիա Շիրակացու և Հովհաննես Իմաստասերի Ձատկի մեկնություններից հայտնի են հետևյալ համարժեք տեղեկությունները:

**Շիրակացի**

«Բայց էասանք որ զԳ (պետք է լինի ԻԳ - Ռ. Վ.) Նիսան կարգեցին գլուխ բոլորի, եւ ոչ աղարտեցին գառաջինն, բայց զի տոմարն Անդրեասեան երկերիւր ամացն յերիս (պետք է լինի Ի Գ - Ռ. Վ.) Նիսան սպառեցաւ եւ սկիզբն հինգհարիւրեկին ի երեք (ի-ն տալ թվի նշանակություն և կարդալ՝ իգ) միսան եղեւ. վասն այնորիկ եղ ի գլուխ բոլորի. ոչ ի սկզբանէ ելիցն եւ խաչելութեան, այդ մի՞ն իսկ հինգհարիւրակ բոլորին բայց խոստովանեցին գլուխ բոլորի զչորեքտասան Նիսան, զհրամայեալն ի Տեառնէ, որում եւ մեք հետեւեցուք»<sup>1</sup>:

**Իմաստասեր**

«Բայց էասեանքն, որ ԻԳ Նիսանայ կարգեցին գլուխ բոլորին և գայլոց ազգացն՝ որ մնա հանդիպին, ոչ թէ գնա խոստովանեցան և համարել գլուխ բոլորին և ոչ աղարտեցին գառաջինն: Այլ վասն զի տաւմար Անդրեասայ երկու հարիւր ամացն ի չորս Նիսան սպառեցաւ: Եւ սկիզբ Ե եակ բոլորին ի քսան և երեք միսանայ եղև, վասն այնորիկ գնա եղ գլուխ բոլորին ոչ միայն ի սկզբանն, և ելից և խաչելութեան այլ միայն ամին, իսկ հինգհարիւրեակ բոլորին: Բայց խոստովանեցին գլուխ բոլորին զԳՆ Նիսանայ հրամայելոյ ի Տեառնէ, որում մեք հետեւեցուք»<sup>2</sup>:

Շիրակացու և Իմաստասերի համարժեք վկայություններից հետևում է, որ էսայանները, Շիրակացին (հետագայում նաև Իմաստասերը), թեև ՇԼԲ պարբերաշրջանի առաջին տարին (553 թ.) սկսել են Նիսանի 23-ի (Ապրիլի 13-ի) լուսնի լրումից շարունակելով Անդրեասի 200-ամյակը (սկիզբը՝ 353 թ., ավարտը՝ 552 թ.), սակայն իրենց ՇԼԲ-ի սկիզբը, այն է՝ առաջին տարին համարել են էսայանները և Շիրակացին 562 թ., (Շիրակացին՝ սիմվոլիկ նաև 581 թ., Իմաստասերը՝ 1094 թ.), երբ առաջին լուսնի լրման օրը Ապրիլի 4 = Նիսանի 14 էր:

Վերոհիշյալ վկայություններից հետևում է, որ էսայանները 9 տարի գումարել են իրենց ՇԼԲ-ին, որպեսզի շարունակեն Անդրեասի 200-ամյակը ժամանակագրորեն բաց չթողնելով այդ միջանկյալ հատվածը: Պատահական չէ, որ հայկական սկզբնաաղբյուրները վկայում են Ձատկի կատարման 9 տարվա խառնաշփոթության մասին և հայկական մեծ թվականության 10-րդ տարում (562 թ.) դնում են էսայանների ՇԼԲ-ի սկիզբը, իսկ նորը՝ 1094 թ.:

<sup>1</sup> Անանիա Շիրակացու մատենագրությունը, էջ 299:  
<sup>2</sup> Հովհաննես Իմաստասերի մատենագրությունը, էջ 275:

Անանիա Շիրակացին կամ պետք է հետևեր էսայաններին 562 թ. համարելով հայոց ՇԼԲ-ի սկիզբը դրան ավելացնելով 9 տարի, որպեսզի հասներ Անդրեասի 200 ամյակի վերջին և հայկական մեծ թվականի սկզբին կամ էլ ընտրեր այլ թվական: Շիրակացին հետևել է էսայանների ՇԼԲ-ին սակայն նա սիմվոլիկ ընտրել է նաև 581 թ. որպես Մովսես կաթողիկոսի պաշտոնական կարգադրության թվական:

Արդ տեսնենք մեզ հասած ամենահնագույն անկասկած Շիրակացու ՇԼԲ-ն պահպանված ՄՄ 2679 թվահամարի ձեռագրում, հնարավորություն տալիս է հիմնավորելու 581 թվականը, որպես Շիրակացու ՇԼԲ-ի սիմվոլիկ սկիզբը, որը փաստագրվել է նրա հիշատակարանում: Այդ ՇԼԲ-ն վերջանում է 550 տարով: Հետագարձ հաշիվ կատարելով (550-532) կստանանք հայոց 18 (570 թ.) թվական, որտեղ լուսնի լրումը Ապրիլի 6-ն է: Մեզ արդեն հայտնի է, որ Շիրակացին իր հաշվումները սկսել է այն ժամանակից, երբ լուսնի լրումը Ապրիլ 4-ը (= Նիսանի 14) էր: 19-ամյա պարբերաշրջանում Ապրիլ 6-ից Ապրիլ 4 գնալու համար հարկավոր է 11 տարի: Հետևապես հայոց 18 թվականին գումարելով 11 կստանանք հայոց 29 թիվը, որը համարժեք է 581 թվին: Առկա ՇԼԲ-ի 550 տարուն (որտեղ նույնպես լուսնի լրումը Ապրիլի 6-ն է) գումարելով 11, կստանանք հայոց 561 թ. = 1113 թ., որը Շիրակացու հիշատակարանի մեր ստացած մյուս թիվն է: Այսպիսով ՇԼԲ-ով ևս հիմնավորվում են Շիրակացու հիշատակարանի մեր ստացած թվերը: ՇԼԲ-ից ևս պարզ է դառնում, որ Շիրակացին սիմվոլիկ սկիզբ է ընտրել 581 թվականը հետևելով հայոց կեղեցու պաշտոնական հաստատման թվականին, մանավանդ ՇԼԲ-ն «Քննիկոն»-ի մի մասն էր, որը գրվել է Անաստաս կաթողիկոսի պատվերով:

Գտնում ենք, որ Շիրակացու ՇԼԲ-ն կիսատ է: Ահա թե ինչու: ՇԼԲ կամ Ե-եակ անվանվող աղյուսակի թե հայկական, թե հռոմեական շարքերը, ինչպես տեսանք, ավարտվում են 550-ով: 532 տարուց հետո եկող տարիների մեջ ընդհատում չկա, այսինքն՝ ամբողջական շարք է: Սակայն վերջին՝ 550 տարին վերջանում է հռոմեական 19-ամյակի 18-րդ տարով, երբ լուսնի լրումը Ապրիլ 6-ին է<sup>1</sup>: Պարզ է, որ Շիրակացու ՇԼԲ-ի առաջին տարին Ապրիլի 4-ն է, ուստի այն 11 տարով պակաս է և պետք է վերջանար հայոց 561 թվականով (= 1113 թ.) որպեսզի հետագարձ հաշվով 532 տարին սկսվի 581 թվից:

Միանգամայն ակնհայտ է, որ Շիրակացին իր կազմած ՇԼԲ պարբերաշրջանին ավելացրել է 29 տարի, որպեսզի ետ գնա Անդրեասի 200-ամյակի վերջը. այսինքն՝ հայկական թվականության սկիզբը: Մեզ հայտնի ՇԼԲ-ն 550 տարիներով դրա լավագույն ապացույցն է: Հայ հեղինակները հետագայում հետագարձ հաշվով ստանալով հայոց մեծ թվականի սկիզբը, ինչպես նաև էսայանների ՇԼԲ-ի սկիզբը, մոռացության են մատնել 581 թ. և տոմարի նորոգումը կապել Ներսես և Հովհաննես կաթողիկոսների հետ:

581-ը հիմնավորելու համար հիշատակենք ևս մի քանի վկայություններ: Հայկական սկզբնաաղբյուրներից (Գիրք թղթոց, Սեբեոս, Ուխտանես) հաստատապես հայտնի է, որ Աբրահամը կաթողիկոս է ընտրվել 607 թվականին, որից հանելով Մովսեսի 30 տարիները, ստանում ենք նրա կաթողիկոս ընտրվելու 1-ին տարին, այն է՝ 577 թվականը: Այդ գումարելով հայկական մատենագրությունից հայտնի այն փաստը, որ նոր հաստատված հայոց մեծ թվականության և տոմարի հաստատումը եղել է Մովսես կաթողիկոսի 4-րդ տարում, կրկին ստանում ենք 581 թվական: Այն հիմնավորում է Շիրակացու հիշատակարանի առաջին թիվը:

<sup>1</sup> Եթե ընդունենք, որ Անանիա Շիրակացին է ցկել 550 տարուց հետո կիսատ թողել, ապա կարելի է մտածել, որ նա 1-ին տարվա (Ապրիլի 6-ի) ավելացնելով լրումով կամեցել է ստանալ տոմարի գուման տարին գումարելով 95-ամյա ցկել: Այսպես, եթե 550 - 532 = 18 հայոց թվականին (= 570 թ.) գումարենք 95, կստանանք 113 հայոց թվական (= 665 թ.), որը համապատասխանում է մատենագրական այն վկայություններին, թե Անաստաս կաթողիկոսի պատվերով Անանիա Շիրակացին գրեց հայոց տոմարի մեկնությունը:

Մեր վերոհիշյալ հաշվումների դեմ հնարավոր առարկություններից մեկը կարող է լինել, այն, որ այժմ ընդունված ժամանակագրությունը Մովսեսը կաթողիկոս է եղել 574-604 թթ. (30 տարի), իսկ 604-607 թթ. մինչև Աբրահամի կաթողիկոս ընտրվելը տեղապահել է Վրթանեսը: Սակայն կաթողիկոսների տարիների ընդունված ժամանակագրությունը շտկելու կարիք ունի: Ահա թե ինչու: Հայկական սկզբնաղբյուրներում պահպանված կաթողիկոսական շարքերից և ոչ մեկում տեղապահները չեն հիշատակված: Հետևաբար տեղապահների տարիները գումարվել են վախճանված (կամ կենդանի) կաթողիկոսի իշխած տարիների վրա: Հավանական բացառություն կարող էր լինել այն դեպքում, երբ տեղապահը ընտրվել էր կաթողիկոս: Այդ տեղի չի ունեցել Վրթանեսի հետ: Կարծում ենք, որ նրա տեղապահության տարիները ևս մտել են Մովսեսի կաթողիկոսության տարիների մեջ: Իրականում Մովսեսը գահակալել է 27 տարի՝ 577-604 թթ.: Վրթանեսի տեղապահության 3 տարին գումարվել է 27 տարվա վրա, դարձել 30 տարի, այն է՝ 577-607 թթ.: Ի դեպ այս դիտարկումը կարող է ճշգրտումներ մտցնել կաթողիկոսական շարքի ժամանակագրության մեջ, եթե հայտնի է կաթողիկոսի մահից հետո տեղապահների գոյությունը:

Մյուս հնարավոր առարկությունը այն է, որ մեր սկզբնաղբյուրները Մովսես կաթողիկոսի կարգադրությունը և հաստատումը կապում են նաև նրա 10-րդ տարվա հետ: Կարծում ենք թյուրատեսությունը առաջացել է նրանից, որ հետագայում հետադարձ հաշվով ստացել են 19-ամյակի 10-րդ տարին, երբ լուսնի լրումը ապրիլի 4-ին էր և այն համարել Մովսեսի կաթողիկոսի 10-րդ տարին: Պատահական չէ, որ Դրասխանակերտցին, Ուխտանեսը, Անանուն Սեբաստացին և այլ պատմիչներ տոմարի կարգավորման կարգադրությունը վերագրելով Մովսեսին այն Դրասխանակերտցին, Վարդան Արևելցին, Միխայել Ասորին և այլ պատմիչներ դնում են Խոսրովի 31-րդ տարում (562 թ.) կամ 871 թվին ըստ ասորական տոմարի (= 562 թ.), այսինքն՝ 19-ամյակի 10-րդ տարում, երբ Լուսնի լրումը ապրիլի 4-ին էր, շփոթելով էասյանների ՇԼԲ-ի առաջին տարվա հետ:

Ներսեսի կաթողիկոսության առաջին տարին հիմնավորվում է Դվինի ժողովի տարեթվով: «Սակա ժողովոց»-ի հեղինակը գրում է. «Ի սկզբան թուականութեանս Հայոց, վեցերորդ ժողով արար Տէր Ներսէս Ի Դունի, Ի չորրորդ ամի կաթողիկոսութեանն իւրոց, և Ի Դ (24) ամի թագաւորութեանն Խոսրովու արքայի Պարսից և Ի Ժ Դ (14) ամի Յուստիանոսի կայսեր»<sup>1</sup>: Ներսեսի 4-րդ տարին (551+4) և Խոսրովի 24-րդ տարին (531+24) կլինի 555 թ., իսկ Հուստինիանոսի 14-րդ տարին պետք է սրբագրել 28, որից հետո ևս կստացվի 555 թ.:

581 թվի բացատրությունը մի կողմից ցույց է տալիս, որ հայկական մեծ թվականության և տոմարի մասին Մովսեսի պաշտոնական կարգադրությունը իրականացվել է նրա 4-րդ տարում, մյուս կողմից հասկանալի են դառնում Շիրակացու հիշատակարանի թվերը: Պարզվում է, որ Շիրակացին սկիզբ է ընտրել 581 թ. հետևելով եկեղեցու պաշտոնապես հաստատված տարուն, մանավանդ, որ նրա պատվիրատուն Անաստաս կաթողիկոսն էր, որն անկասկած Շիրակացուն հնարավորություն է տվել ծանոթանալու կաթողիկոսարանի համապատասխան փաստաթղթերին:

581 թ. հիմնավորումը և ժամանակագրական-տոմարական ճշգրտումները հնարավորություն են տալիս հստակություն մտցնել հայոց մեծ թվականի և տոմարի նորոգման հետ կապված մատենագրական վկայությունների մեջ, որը կատարեցինք վերևում: Շիրակացին 532-ամյա պարբերաշրջանին ավելացրել է 29 տարի, որպեսզի ետ գնա Անդրեասի 200-ամյակի վերջը, այսինքն՝ հայկական թվականի սկիզբը պահպանելով էասյան ՇԼԲ-ի պարբերաբար կրկնվելու օրինաչափությունը: Պարզ է նաև, որ հայկական մատենագրությունից հայտնի հայկական մեծ

թվականով սկսվող 1-29 թվերը հետագայում հետադարձ հաշվով ստացված թվեր են: 581 թ. բացահայտումը ցույց է տալիս, որ Շիրակացին հայոց անշարժ տոմարի նախագիծ չի ստեղծել: Այդ հիմնավորում է նաև Շիրակացու Յայտնութեան ճառով, որտեղ նա Յայտնութեան օրը բերում է ութը ժողովուրդների անշարժ տոմարների օրերով (Հունվարի 6 և այլն), իսկ հայկականի համար ասում է. «յայտնութիւն ըստ Հայոց փոփոխմամբ և ըստ չորից չորից ամաց: Եւ եթե զիարդ գիտելի է, եւ կամ ընդէր ոչ առկայացեալ ըստ այդոց ազգաց, յիւրում տեղոջ հատմեցից ըստ կարգի տոմարին»: Հասկանալի է, որ եթե Շիրակացին անշարժ տոմար կազմած լիներ նա Յայտնութեան կոնկրետ օրը կնշեր և չէր ասի, որ այն չորս տարին մեկ փոխվում է, որը բացատրելու է իր տեղում: Հետագայում հայ մատենագիրները հատկապես Հ. Դրասխանակերտցին հայկականի հետ զուգահեռաբար գրված հոռոմեականը համարել է անշարժ տոմարի Շիրակացու նախագիծը:

Նախորդ վերլուծություններում ցույց տվեցին, որ հուլյան տոմարը հիմք էր հանդիսանում հայ եկեղեցական տոնական տարվա, որով և առաջնորդում էին:

Անանիա Շիրակացին թեև ստեղծեց հայոց ՇԼԲ-ն, սակայն ինչպես հաղորդում են հետագա պատմիչները պաշտոնական հաստատում չստացավ, բայց ոչ այն պատճառով, որ կատարյալ չէ, այլ նաև հայոց շարժական տոմարի հետևանքով, մանավանդ նախորդ դարերից եկող հուլյան տոմարը և նրա հիմքի վրա կառուցված ՇԼԲ-ն, հավանաբար լրիվ բավարարում էր հայոց եկեղեցու պահանջները: Սակայն Անանիա Շիրակացու կազմած ՇԼԲ-ն հայոց և հոռոմեացոց տոմարների զուգահեռներով հնարավորություն ընձեռեց հայոց շարժական տոմարի և թվականության համակարգի ներդրմանը հայերի կենցաղում: Հետագայում հայոց տոնացույցի ամսաթվերի ենք հանդիպում արդեն հայոց շարժական տոմարի ամսաթվերով, իսկ հայոց թվականությունը վերջնականորեն մտնում է հայերի կենցաղի մեջ: Պատահական չէ, որ Հովհաննես Կոզեռնը թեև հայոց թվականի սկիզբը դնում է 552/3 թթ., սակայն «Արդ վասն զի յԱրաց ամսոյ յԼ (30) Հանդիպեցաւ դնել զգիր թուականութեան Հայոց ազգիս Ի ձեռն Անանիայի Շիրակացոյ», այսինքն հայոց ՇԼԲ-ի ստեղծումը կապում է Անանիա Շիրակացու անվան հետ:

2679 թվահամարի ձեռագրում պահպանվել է Շիրակացու կազմած ՇԼԲ աղյուսակի հայոց և հոռոմեացոց շարքերը 484-550 թվերի սահմաններում, այսինքն՝ վերջին հատվածները, սակայն այդքան էլ բավական է, որպեսզի վերականգնվի Շիրակացու ՇԼԲ-ն մինչև 560 թվականը: Մենք հուլյան և հայոց տոմարներով շարքերը միացրել ենք:

Շիրակացու 532-ամյա պարբերաշրջանը վերականգնել է Աշ. Աբրահամյանը 1-ից 532 տարիները, այսինքն 552-1084 թթ.: Մենք օգտագործել ենք նրա վերականգնումը, սակայն կրկին վերահաշվարկ ենք արել, ուղղել սխալները և հայկական տարեթվերը վերածել ժամանակակցի, որովհետև հայկական տառերի գործածությունը տպագրելու դեպքը սխալների քանակը ավելացնում է:

Այլ խոսքով ներկայացրել ենք այն հիմքը առանց որի հայոց քրիստոնեական տոնացույցը դժվար ընկալելի է, եթե չստանա անհնար: Ներկայացնենք մեր կողմից վերականգնած Շիրակացու կազմած զատկացուցակը:

<sup>1</sup> Գիորջ թղթոց, Թիֆլիս, 1901, էջ 222:



Նա հանգ	Թվական		Հնգ եակ	Վերադիր		Յոթնեակ		Աստուածայախոնու- թեան օր			Բարե Հուլյան
	Ներ- կա	Հա- յոց		Հուլ- յան	Հա- յոց	Հուլ- յան	Հա- յոց	Հուլ- յան	Հայոց	Օտար- վա օր	
1	2	3	4	5	6	7	8	9	10	11	12
	553	1	95	30	3	3	4/5	հուն. 6	արց 30	2	մարտ. 2
	554	2	5	11	14	4	5/6	—	—	3	փետր. 15
	555	3	10	22	25	5	6/7	—	—	4	փետր. 7
1	556	4	15	3	6	6/7	7/1	—	—	5	փետր. 27
	557	5	20	14	17	1	1/2	—	մեհ. 1	7	փետր. 19
	558	6	25	25	28	2	2/3	—	—	1	մարտ 3
	559	7	30	6	9	3	3/4	—	—	2	փետր. 23
2	560	8	35	17	20	4/5	4/5	—	—	3	փետր. 8
	561	9	40	28	1	6	5/6	—	մեհ. 2	5	մարտ 27
	562	10	45	9	12	7	6/7	—	—	6	փետր. 19
	563	11	50	20	23	1	7/1	—	—	7	փետր. 3
3	564	12	55	1	4	2/3	1/2	—	—	1	փետր. 23
	565	13	60	12	15	4	2/3	—	մեհ. 3	3	փետր. 15
	566	14	65	23	26	5	3/4	—	—	4	փետր. 5
	567	15	70	4	7	6	4/5	—	—	5	փետր. 20
4	568	16	75	15	18	7/1	5/6	—	—	6	փետր. 12
	569	17	80	26	29	2	6/7	—	մեհ. 4	1	մարտ 3
	570	18	85	7	10	3	7/1	—	—	2	փետր. 23
	571	19	90	19	22	4	1/2	—	—	3	փետր. 8
5	572	20	95	30	3	5/6	2/3	—	—	4	փետր. 28
	573	21	5	11	14	7	3/4	—	մեհ. 5	6	փետր. 19
	574	22	10	22	25	1	4/5	—	—	7	փետր. 3
	575	23	15	3	6	2	5/6	—	—	1	փետր. 23
6	576	24	20	14	17	3/4	6/7	—	—	2	փետր. 16
	577	25	25	25	28	5	7/1	—	մեհ. 6	4	մարտ 7
	578	26	30	6	9	6	1/2	—	—	5	փետր. 20
	579	27	35	17	20	7	2/3	—	—	6	փետր. 12
7	580	28	40	28	1	1/2	3/4	—	—	7	մարտ 3
	581	29	45	9	12	3	4/5	—	մեհ. 7	2	փետր. 16
	582	30	50	20	23	4	5/6	—	—	3	փետր. 8
	583	31	55	1	4	5	6/7	—	—	4	փետր. 28
8	584	32	60	12	15	6/7	7/1	—	—	5	փետր. 13
	585	33	65	23	26	1	1/2	—	մեհ. 8	7	փետր. 4
	586	34	70	4	7	2	2/3	—	—	1	փետր. 24
	587	35	75	15	18	3	3/4	—	—	2	փետր. 9
9	588	36	80	26	29	4/5	4/5	—	—	3	փետր. 29
	589	37	85	7	10	6	5/6	—	մեհ. 9	5	փետր. 20
	590	38	90	19	22	7	6/7	—	—	6	փետր. 5
	591	39	95	30	3	1	7/1	—	—	7	փետր. 25
10	592	40	5	11	14	2/3	1/2	—	—	1	փետր. 16
	593	41	10	22	25	4	2/3	—	մեհ. 10	3	փետր. 8
	594	42	15	3	6	5	3/4	—	—	4	փետր. 21
	595	43	20	14	17	6	4/5	—	—	5	փետր. 13
11	596	44	25	25	28	7/1	5/6	—	—	6	մարտ. 3
	597	45	30	6	9	2	6/7	—	մեհ. 11	1	փետր. 23
	598	46	35	17	20	3	7/1	—	—	2	փետր. 9
	599	47	40	28	1	4	1/2	—	—	3	մարտ 1
12	600	48	45	9	12	5/6	2/3	—	—	4	փետր. 21
	601	49	50	20	23	7	3/4	—	մեհ. 12	6	փետր. 5
	602	50	55	1	4	1	4/5	—	—	7	փետր. 25
	603	51	60	12	15	2	5/6	—	—	1	փետր. 17

Կենդան	Փիշերահավասար ի օր		Լրման օր		Չատկի օր		Ծանոթագրություններ
	Հայոց	Հուլյան	Հայոց	Հուլ.	Հայոց	Հուլ.	
13	14	15	16	17	18	19	20
արեգ 25	մարտ 20	ահեկ. 13	A 13	մար 7	A 20	մար 14	
արեգ 10	—	—	A 2	ահեկ 26	A 5	ահեկ 29	
արեգ 2	—	—	M 22	ահեկ 15	M 25	ահեկ 21	
արեգ 26	—	—	A 10	մար 5	A 16	մար 11	
արեգ 7	—	ահեկ. 14	M 30	ահեկ 24	A 1	ահեկ 26	
արեգ 27	—	—	A 18	մար 13	A 21	մար 16	
արեգ 19	—	—	A 7	մար 2	A 13	մար 8	
արեգ 5	—	—	M 27	ահեկ 22	M 28	ահեկ 23	(Չ. A4 -ահեկ 30)
ահեկ 20	—	ահեկ. 15	A 15	մար 11	A 17	մար 13	
արեգ 16	—	—	A 4	ահեկ 30	A 9	մար 5	
արեգ 1	—	—	M 24	ահեկ 19	M 25	ահեկ 20	(Չ. A1 -ահեկ 27)
արեգ 22	—	—	A 12	մար 9	A 13	մար 10	(Չ. A20 -մար 17)
արեգ 16	—	ահեկ. 16	A 1	ահեկ 28	A 5	մար 2	
արեգ 3	—	—	M 21	ահեկ 17	M 28	ահեկ 24	
արեգ 18	—	—	A 9	մար 6	A 10	մար 7	(Չ. A17-մար 14)
արեգ 11	—	—	M 29	ահեկ 26	A 1	ահեկ 29	
արեգ 30	—	ահեկ. 17	A 17	մար 15	A 21	մար 19	
արեգ 28	—	—	A 6	մար 4	A 13	մար 11	(Լ. A5 - մար 3, Չ. A6 - մար 4)
արեգ 7	—	—	M 25	ահեկ 22	M 29	ահեկ 26	
արեգ 28	—	—	A 13	մար 12	A 17	մար 16	
արեգ 19	—	ահեկ. 18	A 2	մար 1	A 9	մար 8	
արեգ 4	—	—	M 22	ահեկ 20	M 25	ահեկ 23	
արեգ 23	—	—	A 10	մար 9	A 14	մար 13	
արեգ 17	—	—	M 30	ահեկ 29	A 5	մար 5	
ահեկ 6	—	ահեկ. 19	A 18	մար 18	A 25	մար 25	
արեգ 21	—	—	A 7	մար 7	A 10	մար 10	
արեգ 16	—	—	M 27	ահեկ 26	A 2	մար 2	
ահեկ 3	—	—	A 15	մար 16	A 21	մար 22	
արեգ 18	—	ահեկ. 20	A 4	մար 5	A 6	մար 7	
արեգ 10	—	—	M 24	ահեկ 24	M 29	ահեկ 29	
արեգ 30	—	—	A 12	մար 13	A 18	մար 19	
արեգ 16	—	—	A 1	մար 3	A 2	մար 4	(Չ.- A9-մար 11)
արեգ 7	—	ահեկ. 21	M 21	ահեկ 22	M 25	ահեկ 26	
արեգ 27	—	—	A 9	մար 11	A 14	մար 16	
արեգ 12	—	—	M 29	ահեկ 30	M 30	մար 1	(Չ.- A6 - մար 8)
ահեկ 2	—	—	A 17	մար 20	A 18	մար 21	(Չ.- A25-մար 28)
արեգ 23	—	ահեկ. 22	A 6	մար 9	A 10	մար 13	(Լ.- A5 -մար 8,
արեգ 9	—	—	M 25	ահեկ 27	M 26	ահեկ 28	(Չ.- A2 -մար 5)
արեգ 29	—	—	A 13	մար 16	A 15	մար 18	
արեգ 21	—	—	A 2	մար 6	A 6	մար 10	
արեգ 13	—	ահեկ. 23	M 22	ահեկ 25	M 29	մար 2	
արեգ 26	—	—	A 10	մար 14	A 11	մար 15	(Չ.- A18-մար 22)
արեգ 18	—	—	M 30	մար 3	A 3	մար 7	
ահեկ 8	—	—	A 18	մար 23	A 22	մար 27	
արեգ 30	—	ահեկ. 24	A 7	մար 12	A 14	մար 19	
ահեկ 15	—	—	M 27	մար 1	M 30	մար 4	
ահեկ 5	—	—	A 15	մար 20	A 19	մար 24	
արեգ 28	—	—	A 4	մար. 10	A 10	մար 16	
արեգ 12	—	ահեկ. 25	M 24	ահեկ 29	M 26	մար 1	
ահեկ 2	—	—	A 12	մար 18	A 15	մար 21	
արեգ 24	—	—	A 1	մար 7	A 7	մար 13	

1	2	3	4	5	6	7	8	9	10	11	12
13	604	52	65	23	26	3/4	6/7	հուն 6	--	2	փետր. 2
	605	53	70	4	7	5	7/1	--	մեհ 13	3	փետր. 21
	606	54	75	15	18	6	1/2	--	--	5	փետր. 13
	607	55	80	26	29	7	2/3	--	--	6	մարտ 5
14	608	56	85	7	10	1/2	3/4	--	--	7	փետր. 18
	609	57	90	19	22	3	4/5	--	մեհ 14	2	փետր. 9
	610	58	95	30	3	4	5/6	--	--	3	մարտ 1
	611	59	5	11	14	5/6	6/7	--	--	4	փետր. 14
15	612	60	10	22	25	7	7/1	--	--	5	փետր. 6
	613	61	15	3	6	1	1/2	--	մեհ 15	7	փետր. 25
	614	62	20	14	17	2	2/3	--	--	1	փետր. 10
	615	63	25	25	28	3	3/4	--	--	2	մարտ 2
16	616	64	30	6	9	4/5	4/5	--	--	3	փետր. 22
	617	65	35	17	20	6	5/6	--	մեհ. 16	5	փետր. 13
	618	66	40	28	1	7	6/7	--	--	6	փետր. 26
	619	67	45	9	12	1	7/1	--	--	7	փետր. 18
17	620	68	50	20	23	2/3	1/2	--	--	1	փետր. 10
	621	69	55	1	4	4	2/3	--	մեհ. 17	3	մարտ 1
	622	70	60	12	15	5	3/4	--	--	4	փետր. 16
	623	71	65	23	26	6	5/6	--	--	5	փետր. 6
18	624	72	70	4	7	7/1	6/7	--	--	6	փետր. 26
	625	73	75	15	18	2	7/1	--	մեհ. 18	1	փետր. 10
	626	74	80	26	29	3	1/2	--	--	2	մարտ 2
	627	75	85	7	10	4	2/3	--	--	3	փետր. 22
19	628	76	90	19	22	5/6	3/4	--	--	4	փետր. 7
	629	77	95	30	3	7	4/5	--	մեհ. 19	6	փետր. 26
	630	78	5	11	14	1	5/6	--	--	7	փետր. 18
	631	79	10	22	25	2	6/7	--	--	1	փետր 6
20	632	80	15	3	6	3/4	7/1	--	--	2	փետր. 23
	633	81	20	14	17	5	1/2	--	մեհ 20	3	փետր. 13
	634	82	25	25	28	6	2/3	--	--	5	մարտ 6
	635	83	30	6	9	7	3/4	--	--	6	փետր. 19
21	636	84	35	17	20	1/2	4/5	--	--	7	փետր. 11
	637	85	40	28	1	3	5/6	--	մեհ 21	2	մարտ 2
	638	86	45	9	12	4	6/7	--	--	3	փետր. 15
	639	87	50	20	23	5	7/1	--	--	4	փետր 7
22	640	88	55	1	4	6/7	1/2	--	--	5	փետր. 25
	641	89	60	12	15	1	2/3	--	մեհ 22	7	փետր. 18
	642	90	65	23	26	2	3/4	--	--	1	փետր 3
	643	91	70	4	7	3	4/5	--	--	2	փետր. 23
23	644	92	75	15	18	4/5	5/6	--	--	3	փետր. 15
	645	93	80	26	29	6	6/7	--	մեհ 23	5	մարտ 6
	646	94	85	7	10	7	7/1	--	--	6	փետր. 19
	647	95	90	19	22	1	1/2	--	--	7	փետր 10
24	648	96	95	30	13	2/3	2/3	--	--	1	մարտ 2
	649	97	5	11	14	4	3/4	--	մեհ. 24	3	փետր. 15
	650	98	10	22	25	5	4/5	--	--	4	փետր. 7
	651	99	15	3	6	6	5/6	--	--	5	փետր. 27
25	652	100	20	14	17	7/1	6/7	--	--	6	փետր. 12
	653	101	25	25	28	2	7/1	--	մեհ. 25	1	մարտ 3
	654	102	30	6	9	3	1/2	--	--	2	փետր. 23
	655	103	35	17	20	4	2/3	--	--	3	փետր. 8
26	656	104	40	28	1	5/6	3/4	--	--	4	փետր. 27
	657	105	45	9	12	7	4/5	--	մեհ. 26	6	փետր. 19
	658	106	50	20	23	1	5/6	--	--	7	փետր 3
	659	107	55	1	4	2	6/7	--	--	1	փետր. 23

13	14	15	16	17	18	19	20
արեգ 9	--	--	M 21	ահել 27	M 22	ահել 28	(Չ.- M29-մար 5)
արեգ 29	--	ահել. 26	A 9	մար 16	A 11	մար 18	
արեգ 21	--	--	M 29	մար. 5	A 3	մար 10	
ահել 11	--	--	A 17	մար. 24	A 23	մար 30	
արեգ 27	--	--	A 6	մար. 14	A 7	մար 15	(Լ. A5-մար.13)
արեգ 16	--	ահել. 27	M 25	մար. 2	M 30	մար 7	
ահել 8	--	--	A 13	մար 21	A 19	մար 27	
արեգ 23	--	--	A 2	մար 10	A 4	մար 12	
արեգ 16	--	--	M 22	ահել 30	M 26	մար 4	
ահել 5	--	ահել. 28	A 10	մար 19	A 15	մար 24	
արեգ 20	--	--	M 30	մարտ 8	M 31	մար 9	(Չ.- A7-մար 16)
ահել 10	--	--	A 18	մար 27	A 20	մար. 29	
ահել 3	--	--	A 7	մար 17	A 11	մար 21	
արեգ 24	մարտ 20	ահել. 29	M 27	մար 6	A 3	մար 13	
արեգ 7	--	--	A 15	մար.25	A 16	մար 26	(Չ.- A23-մար 3)
արեգ 29	--	--	A 4	մար 14	A 8	մար 18	
արեգ 22	--	--	A 24	մար 4	M 30	մար 10	
արեգ 11	--	ահել. 30	A 12	մար 23	A 19	մար 30	
արեգ 26	--	--	A 1	մար. 12	A 4	մար 15	
արեգ 18	--	--	M 21	մար 1	M 27	մար 7	
ահել 9	--	--	A 9	մար 21	A 15	մար 27	
արեգ 23	--	մար. 1	M 29	մար. 10	M 31	մար 12	
ահել 13	--	--	A 17	մար 29	A 20	մրգ. 1	
ահել 5	--	--	A 6	մար 18	A 12	մար 24	(Լ.- A5-մար 17)
արեգ 21	--	--	M 25	մար 7	M 27	մար 9	
ահել 10	--	մար. 2	A 13	մար 26	A 16	մար 29	
ահել 2	--	--	A 2	մար 15	A 8	մար 21	
արեգ 17	--	--	M 22	մար 4	M 24	մար 6	
ահել.18	--	--	A 10	մար 24	A 12	մար 26	
արեգ.29	--	մար. 3	M 30	մար 13	A 4	մար 18	
ահել 19	--	--	A 18	մրգ 2	A 24	մար 8	
ահել.3	--	--	A 7	մար 21	A 9	մար 23	
արեգ 27	--	--	M 27	մար 11	M 31	մար 15	
ահել.16	--	մար. 4	A 15	մար 30	A 20	մրգ 5	
ահել.1	--	--	A 4	մար 19	A 5	մար 20	(Չ.- A12-մար 27)
արեգ 23	--	--	M 24	մար 8	M 28	մարտ 12	
ահել 14	--	--	A 12	մար 28	A 16	մրգ 2	
ահել.5	--	մար. 5	A 1	մար 17	A 8	մար 24	
արեգ.20	--	--	M 21	մար 6	M 24	մար 9	
ահել.10	--	--	A 9	մար 25	A 13	մար 29	
ահել.3	--	--	M 29	մար 15	A 4	մար 21	
ահել 22	--	մար. 6	A 17	մրգ 4	A 24	մրգ 11	
ահել.7	--	--	A 6	մար 23	A 9	մար 26	(Լ. A5-մար 22)
արեգ 28	--	--	M 25	մար 11	A 1	մար 18	
ահել 19	--	--	A 13	մրգ 1	A 20	մրգ 8	
ահել 3	մարտ 20	մար 7	A 2	մար 20	A 5	մար 23	
արեգ 26	--	--	M 22	մար 9	M 28	մար 15	
ահել 16	--	--	A 10	մար 28	A 17	մրգ 5	
ահել 2	--	--	M 30	մար 18	A 1	մար 20	
ահել 21	--	մար 8	A 18	մրգ 7	A 21	մրգ 10	
ահել 23	--	--	A 7	մար 26	A 13	մրգ 2	
արեգ 28	--	--	M 27	մար 15	M 29	մար 17	
արեգ 18	--	--	A 15	մրգ 5	A 17	մրգ 7	
արեգ 30	--	մար 9	A 4	մար. 24	A 9	մար 29	
արեգ 25	--	--	M 24	մար 13	M 25	մար 14	(Չ.- A1-մար 21)
ահել 13	--	--	A 12	մրգ 2	A 14	մրգ 4	

1	2	3	4	5	6	7	8	9	10	11	12
27	660	108	60	12	15	3/4	7/1	հուն 6	— .. —	2	Վետր 16
	661	109	65	23	26	5	1/2	— .. —	մեհ. 27	3	Վետր. 7
	662	110	70	4	7	6	2/3	— .. —	— .. —	5	Վետր. 20
	663	111	75	15	18	7	3/4	— .. —	— .. —	6	Վետր. 12
28	664	112	80	26	29	1/2	4/5	— .. —	— .. —	7	մարտ 3
	665	113	85	7	10	3	5/6	— .. —	մեհ 28	2	Վետր. 23
	666	114	90	19	22	4	6/7	— .. —	— .. —	3	Վետր 8
	667	115	95	30	3	5	7/1	— .. —	— .. —	4	Վետր. 28
29	668	116	5	11	14	6/7	1/2	— .. —	— .. —	5	Վետր. 20
	669	117	10	22	25	1	2/3	— .. —	մեհ 29	7	Վետր. 3
	670	118	15	3	6	2	3/4	— .. —	— .. —	1	Վետր 23
	671	119	20	14	17	3	4/5	— .. —	— .. —	2	Վետր. 16
30	672	120	25	25	28	4/5	5/6	— .. —	— .. —	3	մարտ 7
	673	121	30	6	9	6	6/7	— .. —	մեհ 30	5	Վետր 20
	674	122	35	17	20	7	7/1	— .. —	— .. —	6	Վետր. 12
	675	123	40	28	1	1	1/2	— .. —	— .. —	7	մարտ 3
31	676	124	45	9	12	2/3	2/3	— .. —	— .. —	1	Վետր 17
	677	125	50	20	23	4	3/4	— .. —	Արեգ 1	3	Վետր 8
	678	126	55	1	4	5	4/5	— .. —	— .. —	4	Վետր. 28
	679	127	60	12	15	6	5/6	— .. —	— .. —	5	Վետր 13
32	680	128	65	23	26	7/1	6/7	— .. —	— .. —	6	Վետր 5
	681	129	70	4	7	2	7/1	— .. —	արեգ.2	1	Վետր. 23
	682	130	75	15	18	3	1/2	— .. —	— .. —	2	Վետր. 9
	683	131	80	26	29	4	2/3	— .. —	— .. —	3	մարտ 1
33	684	132	85	7	10	5/6	3/4	— .. —	— .. —	4	Վետր. 21
	685	133	90	19	22	7	4/5	— .. —	Արեգ 3	6	Վետր 5
	686	134	95	30	3	1	5/6	— .. —	— .. —	7	Վետր. 25
	687	135	5	11	14	2	6/7	— .. —	— .. —	1	Վետր. 17
34	688	136	10	22	25	3/4	7/1	— .. —	— .. —	2	Վետր. 9
	689	137	15	3	6	5	1/2	— .. —	Արեգ 4	4	Վետր. 21
	690	138	20	14	17	6	2/3	— .. —	— .. —	5	Վետր 13
	691	139	25	25	28	7	3/4	— .. —	— .. —	6	մարտ 5
35	692	140	30	6	9	1/2	4/5	— .. —	— .. —	7	Վետր 25
	693	141	35	17	20	3	5/6	— .. —	Արեգ 5	2	Վետր. 9
	694	142	40	28	1	4	6/7	— .. —	— .. —	3	մարտ 1
	695	143	45	9	12	5	7/1	— .. —	— .. —	4	Վետր. 21
36	696	144	50	20	23	6/7	1/2	— .. —	— .. —	5	Վետր 6
	697	145	55	1	4	1	2/3	— .. —	Արեգ 6	7	Վետր. 25
	698	146	60	12	15	2	3/4	— .. —	— .. —	1	Վետր 17
	699	147	65	23	26	3	4/5	— .. —	— .. —	2	Վետր. 2
37	700	148	70	4	7	4/5	5/6	— .. —	— .. —	3	Վետր. 22
	701	149	75	15	18	6	6/7	— .. —	Արեգ 7	5	Վետր 13
	702	150	80	26	29	7	7/1	— .. —	— .. —	6	մարտ 5
	703	151	85	7	10	1	1/2	— .. —	— .. —	7	Վետր. 18
38	704	152	90	19	22	2/3	2/3	— .. —	— .. —	1	Վետր 10
	705	153	95	30	3	4	3/4	— .. —	Արեգ 8	3	մարտ 1
	706	154	5	11	14	5	4/5	— .. —	— .. —	4	Վետր. 3
	707	155	10	22	25	6	5/6	— .. —	— .. —	5	Վետր 6
39	708	156	15	3	6	7/1	6/7	— .. —	— .. —	6	Վետր 26
	709	157	20	14	17	2	7/1	— .. —	Արեգ 9	1	Վետր 10
	710	158	25	25	28	3	1/2	— .. —	— .. —	2	մարտ 2
	711	159	30	6	9	4	2/3	— .. —	— .. —	3	Վետր 22
40	712	160	35	17	20	5/6	3/4	— .. —	— .. —	4	Վետր 13
	713	161	40	28	1	7	4/5	— .. —	Արեգ 10	6	Վետր 26
	714	162	45	9	12	1	5/6	— .. —	— .. —	7	Վետր. 18
	715	163	50	20	23	2	6/7	— .. —	— .. —	1	Վետր. 10

13	14	15	16	17	18	19	20
ահել 8	— .. —	— .. —	A 1	մարտ 22	A 5	մար 26	
արեգ 29	— .. —	մար 10	M 21	մար 11	M 28	մար 18	
ահել 12	— .. —	— .. —	A 9	մար 30	A 10	մրգ 1	(Չ.-A17-մրգ 8)
ահել 3	— .. —	— .. —	M 29	մար 19	A 2	մար 23	
ահել 23	— .. —	— .. —	A 17	մրգ 9	A 21	մրգ 13	
ահել 16	— .. —	մար 11	A 6	մար 28	A 6	մար 28	(Լ.-A5-մար27, Չ.-A13-մրգ 12)
ահել 1	— .. —	— .. —	M 25	մար 16	M 29	մար 20	
ահել 21	— .. —	— .. —	A 13	մրգ 5	A 18	մրգ 10	
ահել 13	— .. —	— .. —	A 2	մար 25	A 9	մրգ 2	
արեգ 28	— .. —	մար 12	M 22	մար 14	M 25	մար 17	
ահել 18	— .. —	— .. —	A 10	մրգ 3	A 14	մրգ 7	
ահել 8	— .. —	— .. —	M 30	մար 22	A 6	մար 29	
ահել 30	— .. —	— .. —	A 18	մրգ 12	A 25	մրգ 19	
ահել 15	— .. —	մար 13	A 7	մրգ 1	A 10	մրգ 4	
ահել 7	— .. —	— .. —	M 27	մար 20	A 2	մար 26	
ահել 27	— .. —	— .. —	A 15	մրգ 19	A 22	մրգ 26	
ահել 23	— .. —	— .. —	A 4	մար 29	A 6	մրգ 1	
ահել 3	— .. —	մար 14	M 24	մար 18	M 29	մար 23	
ահել 23	— .. —	— .. —	A 12	մրգ 7	A 18	մրգ 13	
ահել 9	— .. —	— .. —	A 1	մար 26	A 3	մար 28	
ահել 2	— .. —	— .. —	M 21	մար 16	M 25	մար 20	
ահել 21	մարտ 20	մար 15	A 9	մրգ 5	A 14	մրգ 10	
ահել 6	— .. —	— .. —	M 29	մար 24	M 30	մար 25	(Չ.-A6 -մրգ2)
ահել 26	— .. —	— .. —	A 17	մրգ 13	A 19	մրգ 15	
ահել 19	— .. —	— .. —	A 6	մրգ 3	A 10	մրգ 7	(Լ.-A5-մրգ2, Չ.-A2-մար 29)
ահել 3	— .. —	մար 16	M 25	մար 21	A 26	մար 22	
ահել 23	— .. —	— .. —	A 13	մրգ 10	A 15	մրգ 12	
մար 15	— .. —	— .. —	A 2	մար 29	A 7	մրգ 4	
ահել 8	— .. —	— .. —	M 22	մար 19	M 29	մար 26	
ահել 20	— .. —	մար 17	A 10	մրգ 8	A 11	մրգ 9	(Չ.-A18 -մրգ16)
ահել 12	— .. —	— .. —	M 30	մար 27	A 3	մրգ 1	
մար 2	— .. —	— .. —	A 18	մրգ 16	A 23	մրգ 21	
ահել 25	— .. —	— .. —	A 7	մրգ 6	A 14	մրգ 13	
ահել 9	— .. —	մար 18	M 27	մար 25	M 30	մար 28	
ահել 29	— .. —	— .. —	A 15	մրգ 14	A 19	մրգ 18	
ահել 21	— .. —	— .. —	A 4	մրգ 3	A 11	մրգ 10	
ահել 7	— .. —	— .. —	M 24	մար 23	M 26	մար 25	
ահել 26	— .. —	մար 19	A 12	մրգ 12	A 15	մրգ 15	
ահել 18	— .. —	— .. —	A 1	մրգ 1	A 7	մրգ 7	
ահել 3	— .. —	— .. —	M 21	մար 20	M 23	մար 22	
ահել 22	— .. —	— .. —	A 9	մրգ 10	A 11	մրգ 12	
մար 15	— .. —	մար 20	M 29	մար 29	A 3	մրգ 4	
արեգ 5	— .. —	— .. —	A 17	մրգ 18	A 23	մրգ 24	
ահել 20	— .. —	— .. —	A 6	մրգ 7	A 8	մրգ 9	(Լ.-A5-մրգ 6)
ահել 12	— .. —	— .. —	M 25	մար 26	M 30	մրգ 1	
մար 2	— .. —	մար 21	A 13	մրգ 15	A 19	մրգ 21	
ահել 7	— .. —	— .. —	A 2	մրգ 4	A 4	մրգ 6	
ահել 9	— .. —	— .. —	M 22	մար 23	M 27	մար 28	
ահել 30	— .. —	— .. —	A 10	մրգ 13	A 15	մրգ 18	
մար 3	— .. —	մար 22	M 30	մրգ 2	M 31	մրգ 3	(Չ.-A7-մրգ 10)
ահել 26	— .. —	— .. —	A 18	մրգ 21	A 20	մրգ 23	
ահել 19	— .. —	— .. —	A 7	մրգ 10	A 12	մրգ 15	
մար 1	— .. —	— .. —	M 27	մար 30	A 3	մրգ 7	
մար 1	մարտ 20	մար 23	A 15	մրգ 19	A 16	մրգ 20	(Չ.-A23-մրգ 27)
ահել 23	— .. —	— .. —	A 4	մրգ 8	A 8	մրգ 12	
ահել 15	— .. —	— .. —	M 24	մար 27	M 31	մրգ 4	

1	2	3	4	5	6	7	8	9	10	11	12
41	716	164	55	1	4	3/4	7/1	հուն 6	--	2	մարտ 1
	717	165	60	12	15	5	1/2	--	Արեգ11	3	փետր 13
	718	166	65	23	26	6	2/3	--	--	5	փետր 6
	719	167	70	4	7	7	3/4	--	--	6	փետր. 26
42	720	168	75	15	18	1/2	4/5	--	--	7	փետր 11
	721	169	80	26	29	3	5/6	--	Արեգ12	2	մարտ 2
	722	170	85	7	10	4	6/7	--	--	3	փետր. 22
	723	171	90	19	22	5	7/1	--	--	4	փետր. 7
43	724	172	95	30	3	6/7	1/2	--	--	5	փետր. 27
	725	173	5	11	14	1	2/3	--	Արեգ13	7	փետր 18
	726	174	10	22	25	2	3/4	--	--	1	փետր. 3
	727	175	15	3	6	3	4/5	--	--	2	փետր. 23
44	728	176	20	14	17	4/5	5/6	--	--	3	փետր. 15
	729	177	25	25	28	6	6/7	--	Արեգ14	5	մարտ 3
	730	178	30	6	9	7	7/1	--	--	6	փետր. 19
	731	179	35	17	20	1	1/2	--	--	7	փետր. 11
45	732	180	40	28	1	2/3	2/3	--	--	1	մարտ 2
	733	181	45	9	12	4	3/4	--	Արեգ15	3	փետր. 15
	734	182	50	20	23	5	4/5	--	--	4	փետր. 5
	735	183	55	1	4	6	5/6	--	--	5	փետր. 27
46	736	184	60	12	15	7/1	6/7	--	--	6	փետր 19
	737	185	65	23	26	2	7/1	--	Արեգ16	1	փետր. 3
	738	186	70	4	7	3	1/2	--	--	2	փետր. 23
	739	187	75	15	18	4	2/3	--	--	3	փետր. 15
47	740	188	80	26	29	5/6	3/4	--	--	4	մարտ 6
	741	189	85	7	10	7	4/5	--	Արեգ17	6	փետր. 19
	742	190	90	19	22	1	5/6	--	--	7	փետր. 11
	743	191	95	30	3	2	6/7	--	--	1	փետր. 23
48	744	192	5	11	14	3/4	7/1	--	--	2	փետր. 16
	745	193	10	22	25	5	1/2	--	Արեգ18	4	փետր 7
	746	194	15	3	6	6	2/3	--	--	5	փետր 27
	747	195	20	14	17	7	3/4	--	--	6	փետր1(28)
49	748	196	25	25	28	1/2	4/5	--	--	7	փետր 6
	749	197	30	6	9	3	5/6	--	Արեգ19	2	փետր 23
	750	198	35	17	20	4	6/7	--	--	3	փետր 8
	751	199	40	28	1	5	7/1	--	--	4	փետր. 28
50	752	200	45	9	12	6/7	1/2	--	--	5	փետր 20
	753	201	50	20	23	1	2/3	--	Արեգ20	7	փետր 3
	754	202	55	1	4	2	3/4	--	--	1	փետր. 23
	755	203	60	12	15	3	4/5	--	--	2	փետր. 16
51	756	204	65	23	26	4/5	5/6	--	--	3	փետր. 8
	757	205	70	4	7	6	6/7	--	Արեգ21	5	փետր 20
	758	206	75	15	18	7	7/1	--	--	6	փետր. 16
	759	207	80	26	29	1	1/2	--	--	7	մարտ 3
52	760	208	85	7	10	2/3	2/3	--	--	1	փետր. 24
	761	209	90	19	22	4	3/4	--	Արեգ22	3	փետր 8
	762	210	95	30	3	5	4/5	--	--	4	փետր. 28
	763	211	5	11	14	6	5/6	--	--	5	փետր 13
53	764	212	10	22	25	7/1	6/7	--	--	6	փետր. 5
	765	213	15	3	6	2	7/1	--	Արեգ23	1	փետր. 23
	766	214	20	14	17	3	1/2	--	--	2	փետր. 16
	767	215	25	25	28	4	2/3	--	--	3	մարտ 1
54	768	216	30	6	9	5/6	3/4	--	--	4	փետր. 21
	769	217	35	17	20	7	4/5	--	Արեգ24	6	փետր. 18
	770	218	40	28	1	1	5/6	--	--	7	մարտ 3
	771	219	45	9	12	2	6/7	--	--	1	փետր. 17

13	14	15	16	17	18	19	20
մար 5	--	--	A 12	մրգ 17	A 19	մրգ 24	
ահեկ 20	--	մար 24	A 1	մրգ 6	A 4	մրգ 9	
ահեկ 12	--	--	M 21	մար 25	M 27	մրգ 1	
մար 2	--	--	A 9	մրգ 14	A 16	մրգ 21	
ահեկ 18	--	--	M 29	մրգ 4	M 31	մրգ 6	
մար 7	--	մար 25	A 17	մրգ 23	A 20	մրգ 26	
ահեկ 29	--	--	A 6	մրգ 12	A 12	մրգ 18	(L.- A5-մրգ 11)
ահեկ 13	--	--	M 25	մար 30	M 28	մրգ 3	
մար 5	--	--	A 13	մրգ 20	A 16	մրգ 23	
ահեկ 26	--	մար 26	A 2	մրգ 9	A 8	մրգ 15	
ահեկ 11	--	--	M 22	մար 28	M 24	մար 30	
մար 1	--	--	A 10	մրգ 17	A 13	մրգ 20	
ահեկ 23	--	--	M 30	մրգ 7	A 4	մրգ 12	
մար 13	--	մար 27	A 18	մրգ 26	A 24	հրտ 2	
ահեկ 28	--	--	A 7	մրգ 15	A 9	մրգ 17	
ահեկ 20	--	--	M 27	մրգ 4	A 1	մրգ 9	
մար 10	--	--	A 15	մրգ 24	A 20	մրգ 29	
ահեկ 25	--	մար 28	A 4	մրգ 13	A 5	մրգ 14	(Q.- A12-մրգ 21)
ահեկ 15	--	--	M 24	մրգ 2	M 28	մրգ 6	
մար 7	--	--	A 12	մրգ 21	A 17	մրգ 26	
ահեկ 30	--	--	A 1	մրգ 11	A 5	մրգ 18	
ահեկ 15	--	մար 29	M 21	մար 30	M 25	մրգ 3	
մար 4	--	--	A 9	մրգ 19	A 10	մրգ 23	
ահեկ 26	--	--	M 29	մրգ 8	A 5	մրգ 15	
մար 16	--	--	A 17	մրգ 28	A 24	հրտ 5	
մար 1	--	մար 30	A 6	մրգ 17	A 9	մրգ 20	(L.- A5-մրգ 16)
ահեկ 23	--	--	M 25	մրգ 5	A 1	մրգ 12	
մար 6	--	--	A 13	մրգ 24	A 14	մրգ 25	(Q.- A21-հր 2)
ահեկ 29	--	--	A 2	մրգ 14	A 5	մրգ 17	
ահեկ 20	մարտ 20	մրգ 1	M 22	մրգ 3	M 28	մրգ 9	
մար 10	--	--	A 10	մրգ 22	A 17	մրգ 29	
ահեկ 25	--	--	M 30	մրգ 11	A 2	մրգ 14	
ահեկ 17	--	--	A 18	հր 1	A 21	հր 4	
մրգ 5	--	մրգ 2	A 7	մրգ 20	A 13	մրգ 26	
ահեկ 22	--	--	M 27	մրգ 9	M 29	մրգ 11	
մար 18	--	--	A 15	մրգ 28	A 18	հր 1	
մար 5	--	--	A 4	մրգ 18	A 9	մրգ 23	(Q.- A1-մրգ 15)
ահեկ 19	--	մրգ 3	M 24	մրգ 7	M 25	մրգ 8	
մար 9	--	--	A 12	մրգ 26	A 14	մրգ 28	
մար 1	--	--	A 1	մրգ 15	A 6	մրգ 20	
ահեկ 23	--	--	M 21	մրգ 5	M 28	մրգ 12	
մար 6	--	մրգ 4	A 9	մրգ 24	A 10	մրգ 25	(Q.- A17-հր 2)
ահեկ 30	--	--	M 29	մրգ 11	A 2	մրգ 17	
մար 19	--	--	A 17	հր 2	A 22	հր 7	(L.- A5-մրգ21, Q.6-մրգ 22, Q.- A10-մրգ26)
մար 11	--	--	A 6	մրգ 22	A 6	մրգ 12	
ահեկ 25	--	մրգ 5	M 25	մրգ 10	M 29	մրգ 14	
մար 15	--	--	A 13	մրգ 29	A 18	հրտ 4	
ահեկ 30	--	--	A 2	մրգ 18	A 3	մրգ 19	(Q.- A10-մրգ 26)
ահեկ 23	--	--	M 22	մրգ 8	M 25	մրգ 11	
մար 12	--	մրգ 6	A 10	մրգ 27	A 14	հր 1	
մար 4	--	--	M 30	մրգ 16	A 6	մրգ 23	
մար 17	--	--	A 18	հր 5	A 19	հր 6	(Q.- A26-հր 13)
մար 10	--	--	A 7	մրգ 25	A 10	մրգ 28	
մար 1	--	մրգ 7	M 27	մրգ 14	A 2	մրգ 20	
մար 21	--	--	A 15	հր 3	A 22	հր 10	
մար 6	--	--	A 4	մրգ 22	A 7	մրգ 25	

1	2	3	4	5	6	7	8	9	10	11	12
55	772	220	50	20	23	3/4	7/1	հում. 6	-- --	2	փետր 9
	773	221	55	1	4	5	1/2	-- --	Արեգ 25	4	փետր. 28
	774	222	60	12	15	6	2/3	-- --	-- --	5	փետր. 16
	775	223	65	23	26	7	3/4	-- --	-- --	6	փետր. 5
56	776	224	70	4	7	1/2	4/5	-- --	-- --	7	փետր. 25
	777	225	75	15	18	3	1/2	-- --	Ահեկ 26	2	փետր. 9
	778	226	80	26	29	4	2/3	-- --	-- --	3	մարտ 1
	779	227	85	7	10	5	3/4	-- --	-- --	4	փետր. 21
57	780	228	90	19	22	6/7	4/5	-- --	-- --	5	փետր. 6
	781	229	95	30	3	1	5/6	-- --	Ահեկ 27	7	փետր. 25
	782	230	5	11	1	2	6/7	-- --	-- --	1	փետր. 17
	783	231	10	22	25	3	7/1	-- --	-- --	2	փետր. 2
58	784	232	15	3	6	4/5	1/2	-- --	-- --	3	փետր. 28
	785	233	20	14	17	6	2/3	-- --	Ահեկ 28	5	փետր. 23
	786	234	25	25	28	7	3/4	-- --	-- --	6	մար 5
	787	235	30	6	9	1	4/5	-- --	-- --	7	փետր. 18
59	788	236	35	17	20	2/3	5/6	-- --	-- --	1	փետր. 10
	789	237	40	28	1	4	6/7	-- --	Ահեկ 29	3	մարտ 1
	790	238	45	9	12	5	7/1	-- --	-- --	4	փետր. 21
	791	239	50	20	23	6	1/2	-- --	-- --	5	փետր 6
60	792	240	55	1	4	7/1	2/3	-- --	-- --	6	փետր. 26
	793	241	60	12	15	2	3/4	-- --	Ահեկ 30	1	փետր. 17
	794	242	65	23	26	3	4/5	-- --	-- --	2	փետր. 2
	795	243	70	4	7	4	5/6	-- --	-- --	3	փետր. 22
61	796	244	75	15	18	5/6	6/7	-- --	-- --	4	փետր. 14
	797	245	80	26	29	7	7/1	-- --	Ահեկ 1	6	մար 5
	798	246	85	7	10	1	1/2	-- --	-- --	7	փետր. 18
	799	247	90	19	22	2	2/3	-- --	-- --	1	փետր 10
62	800	248	95	30	3	3/4	3/4	-- --	-- --	2	մարտ 1
	801	249	5	11	14	5	4/5	-- --	Ահեկ 2	3	փետր. 13
	802	250	10	22	25	6	5/6	-- --	-- --	5	փետր 6
	803	251	15	3	6	7	6/7	-- --	-- --	6	փետր. 26
63	804	252	20	14	17	1/2	7/1	-- --	-- --	7	փետր. 11
	805	253	25	25	28	3	1/2	-- --	Ահեկ 3	2	մարտ 2
	806	254	30	6	9	4	2/3	-- --	-- --	3	փետր 28(2)
	807	255	35	17	20	5	3/4	-- --	-- --	4	փետր 7
	808	256	40	28	1	6/7	4/5	-- --	-- --	5	փետր. 27
	809	257	45	9	12	1	6/7	-- --	Ահեկ 4	7	փետր. 18
	810	258	50	20	23	2	7/1	-- --	-- --	1	փետր. 10
	811	259	55	1	4	3	1/2	-- --	-- --	2	փետր. 23
65	812	260	60	12	15	4/5	2/3	-- --	-- --	3	փետր 13
	813	261	65	23	26	6	3/4	-- --	Ահեկ 5	5	փետր 6
	814	262	70	4	7	7	4/5	-- --	-- --	6	փետր. 26
	815	263	75	15	18	1	5/6	-- --	-- --	7	փետր 11
66	816	264	80	26	29	2/3	6/7	-- --	-- --	1	մարտ 2
	817	265	85	7	10	4	7/1	-- --	Ահեկ 6	3	փետր. 22
	818	266	90	19	22	5	1/2	-- --	-- --	4	փետր. 7
	819	267	95	30	3	6	2/3	-- --	-- --	5	փետր 27
67	820	268	5	11	14	7/1	3/4	-- --	-- --	6	փետր. 19
	821	269	10	22	25	2	4/5	-- --	Ահեկ 7	1	փետր. 3
	822	270	15	3	6	3	5/6	-- --	-- --	2	փետր. 23
	823	271	20	14	17	4	6/7	-- --	-- --	3	փետր. 25
68	824	272	25	25	28	5/6	7/1	-- --	-- --	4	մարտ 6
	825	273	30	6	9	7	1/2	-- --	Ահեկ 8	6	փետր. 19
	826	274	35	17	20	1	2/3	-- --	-- --	7	փետր 11
	827	275	40	28	1	2	3/4	-- --	-- --	1	մարտ 3

13	14	15	16	17	18	19	20
ահեկ 29	մարտ 20	-- --	M 24	մրգ 12	M 29	մրգ 17	
մար 18	-- --	մրգ 8	A 12	հր 1	A 18	հր 7	
մար 6	-- --	-- --	A 1	մրգ 20	A 3	մրգ 22	
ահեկ 25	-- --	-- --	M 21	մրգ 9	M 26	մրգ 14	
մար 16	-- --	-- --	A 9	մրգ 29	A 14	հր 4	
ահեկ 28	-- --	մրգ 9	M 29	մրգ 18	M 30	մրգ 19	(Չ.- A6- մրգ 26)
մար 20	-- --	-- --	A 17	հր 7	A 19	հր 9	
մար 12	-- --	-- --	A 6	մրգ 26	A 11	հր 1	(L.- A5- մրգ 25)
ահեկ 28	-- --	-- --	M 25	մրգ 15	M 26	մրգ 16	(Չ.- A2- մրգ 23)
մար 17	-- --	մրգ 10	A 13	հր 4	A 15	հր 6	
մար 9	-- --	-- --	A 2	մրգ 23	A 7	մրգ 28	
ահեկ 23	-- --	-- --	M 22	մրգ 12	M 23	մրգ 13	(Չ.- M30- մրգ 20)
մար 15	-- --	-- --	A 10	հր 2	A 11	հր 3	(Չ.- A18- հր-10)
մար 6	-- --	մրգ 11	M 30	մրգ 21	A 3	մրգ 25	
մար 26	-- --	-- --	A 18	հր 10	A 23	հր 15	
մար 11	-- --	-- --	A 7	մրգ 29	A 8	մրգ 30	(Չ.- A15- հր 7)
մար 3	-- --	-- --	M 27	մրգ 19	M 30	մրգ 22	
մար 23	-- --	մրգ 12	A 15	հր 8	A 19	հր 12	
մար 15	-- --	-- --	A 4	մրգ 27	A 11	հր 4	
ահեկ 30	-- --	-- --	M 24	մրգ 16	M 27	մրգ 19	
մար 21	-- --	-- --	A 12	հր 6	A 15	հր 9	
մար 12	-- --	մրգ 13	A 1	մրգ 25	A 7	հր 1	
ահեկ 27	-- --	-- --	M 21	մրգ 14	M 23	մրգ 16	
մար 17	-- --	-- --	A 9	հր 3	A 12	հր 6	
մար 10	-- --	-- --	M 29	մրգ 23	A 3	մրգ 28	
մար 29	-- --	մրգ 14	A 17	հր 12	A 23	հր 18	
մար 13	-- --	-- --	A 6	հր 1	A 8	հր 3	(L.- A5- հր 30)
մար 6	-- --	-- --	M 25	մրգ 9	M 31	մրգ 25	
մար 26	-- --	-- --	A 13	հր 9	A 19	հր 15	
մար 11	-- --	մրգ 15	A 2	մրգ 28	A 4	մրգ 30	
մար 3	-- --	-- --	M 22	մրգ 16	M 27	մրգ 22	
մար 23	-- --	-- --	A 10	հր 6	A 16	հր 12	
մար 9	-- --	-- --	M 30	մրգ 26	M 31	մրգ 27	(Չ.- A7 - հր 4)
մար 28	-- --	մրգ 16	A 18	հր 15	A 20	հր 17	
մար 20	-- --	-- --	A 7	հր 4	A 12	հր 9	
մար 5	-- --	-- --	M 27	մրգ 23	M 28	մրգ 24	(Չ.- A4 - հր 1)
մար 25	-- --	-- --	A 15	հր 13	A 16	հր 14	(Չ.- A23 - հր 5)
մար 17	մարտ 20	մրգ 17	A 4	հր 2	A 8	հր 6	
մար 9	-- --	-- --	M 24	մրգ 21	M 31	մրգ 28	
մար 22	-- --	-- --	A 12	հր 10	A 13	հր 11	(Չ.- A20- հր 18)
մար 13	-- --	-- --	A 1	մրգ 30	A 4	հր 3	
մար 3(6)	-- --	մրգ 18	M 21	մրգ 19	M 27	մրգ 25	
մար 26	-- --	-- --	A 9	հր 8	A 16	հր 15	
մար 11	-- --	-- --	M 29	մրգ 27	A 1	մրգ 30	
մրգ 1	-- --	-- --	A 17	հր 17	A 20	հր 20	
մար 23	-- --	մրգ 19	A 6	հր 6	A 12	հր 12	(L.- A5- հր 5)
մար 8	-- --	-- --	M 25	մրգ 24	M 28	մրգ 27	
մար 28	-- --	-- --	A 13	հր 13	A 17	հր 17	
մար 21	-- --	-- --	A 2	հր 3	A 8	հր 9	
մար 5	-- --	մրգ 20	M 22	մրգ 22	M 24	մրգ 24	
մար 25	-- --	-- --	A 10	հր 11	A 13	հր 14	
մար 17	-- --	-- --	M 30	մրգ 30	A 5	հր 6	
մրգ 7	-- --	-- --	A 18	հր 20	A 24	հր 26	
մար 22	-- --	մրգ 21	A 7	հր 9	A 9	հր 11	
մար 13	-- --	-- --	M 27	մրգ 28	A 1	հր 3	
մրգ 3	-- --	-- --	A 15	հր 17	A 21	հր 23	

1	2	3	4	5	6	7	8	9	10	11	12
69	828	276	45	9	12	3/4	4/5	հում 6	-- --	2	փետր 16
	829	277	50	20	23	5	5/6	-- --	Ահեկ 9	3	փետր 7
	830	278	55	1	4	6	6/7	-- --	-- --	5	փետր. 27
	831	279	60	12	15	7	7/1	-- --	-- --	6	փետր 12
70	832	280	65	23	26	1/2	1/2	-- --	-- --	7	փետր. 3
	833	281	70	4	7	3	2/3	-- --	Ահեկ10	2	փետր. 23
	834	282	75	15	18	4	3/4	-- --	-- --	3	փետր 15
	835	283	80	26	29	5	4/5	-- --	-- --	4	փետր. 28
71	836	284	85	7	10	6/7	5/6	-- --	-- --	5	փետր. 20
	837	285	90	19	22	1	6/7	-- --	Ահեկ11	7	փետր 11
	838	286	95	30	3	2	7/1	-- --	-- --	1	փետր. 23
	839	287	5	11	14	3	1/2	-- --	-- --	2	փետր 16
72	840	288	10	22	25	4/5	2/3	-- --	-- --	3	փետր 8
	841	289	15	3	6	6	3/4	-- --	Ահեկ12	5	փետր. 27
	842	290	20	14	17	7	4/5	-- --	-- --	6	փետր. 12
	843	291	25	25	28	1	5/6	-- --	-- --	7	մարտ 3
73	844	292	30	6	9	2/3	6/7	-- --	-- --	1	փետր. 23
	845	293	35	17	20	4	7/1	-- --	Ահեկ13	3	փետր. 8
	846	294	40	28	1	5	1/2	-- --	-- --	4	փետր. 28
	847	295	45	9	12	6	2/3	-- --	-- --	5	փետր 20
74	848	296	50	20	23	7/1	3/4	-- --	-- --	6	փետր 3
	849	297	55	1	4	2	4/5	-- --	Ահեկ14	1	փետր. 23
	850	298	60	12	15	3	5/6	-- --	-- --	2	փետր 16
	851	299	65	23	26	4	6/7	-- --	-- --	3	փետր. 1
75	852	300	70	4	7	5/6	7/1	-- --	-- --	4	փետր. 21
	853	301	75	15	18	7	1/2	-- --	Ահեկ15	6	փետր. 18
	854	302	80	26	29	1	2/3	-- --	-- --	7	մարտ 3
	855	303	85	7	10	2	3/4	-- --	-- --	1	փետր. 17
76	856	304	90	19	22	3/4	4/5	-- --	-- --	2	փետր 9
	857	305	95	30	3	5	5/6	-- --	Ահեկ16	3	փետր. 28
	858	306	5	11	14	6	6/7	-- --	-- --	5	փետր. 13
	859	307	10	22	25	7	7/1	-- --	-- --	6	փետր. 5
77	860	308	15	3	6	1/2	1/2	-- --	-- --	7	փետր 25
	861	309	20	14	17	3	2/3	-- --	Ահեկ17	2	փետր. 16
	862	310	25	25	28	4	3/4	-- --	-- --	3	մարտ 1
	863	311	30	6	9	5	4/5	-- --	-- --	4	փետր 21
78	864	312	35	17	20	6/7	5/6	-- --	-- --	5	փետր. 13
	865	313	40	28	1	1	6/7	-- --	Ահեկ18	7	մարտ 3
	866	314	45	9	12	2	7/1	-- --	-- --	1	փետր 17
	867	315	50	20	23	3	1/2	-- --	-- --	2	փետր 9
79	868	316	55	1	4	4/5	2/3	-- --	-- --	3	փետր. 28
	869	317	60	12	15	6	3/4	-- --	Ահ. 19	5	փետր 13
	870	318	65	23	26	7	4/5	-- --	-- --	6	փետր 7
	871	319	70	4	7	1	5/6	-- --	-- --	7	փետր 28
80	872	320	75	15	18	2/3	6/7	-- --	-- --	1	փետր 10
	873	321	80	26	29	4	7/1	-- --	Ահեկ 20	3	մարտ 1
	874	322	85	7	10	5	1/2	-- --	-- --	4	փետր 21
	875	323	90	19	22	6	2/3	-- --	-- --	5	փետր 6
81	876	324	95	30	3	7/1	3/4	-- --	-- --	6	փետր 26
	877	325	5	11	14	2	4/5	-- --	Ահեկ21	1	փետր 15
	878	326	10	22	25	3	5/6	-- --	-- --	2	փետր 2
	879	327	15	3	6	4	6/7	-- --	-- --	3	փետր 22
82	880	328	20	14	17	5/6	7/1	-- --	-- --	4	փետր 13
	881	329	25	25	28	7	1/2	-- --	Ահեկ22	6	մարտ 5
	882	330	30	6	9	1	2/3	-- --	-- --	7	փետր 18
	883	331	35	17	20	2	3/4	-- --	-- --	1	փետր 10

13	14	15	16	17	18	19	20
մար 20	-- --	-- --	A 4	հր 7	A 5	հր 8	(Ջ.- A12- հր 15)
մար 11	-- --	մրգ 22	M 24	մրգ 26	M 28	մրգ 30	
մրգ 1	-- --	-- --	A 12	հր 15	A 17	հր 20	
մրգ 16	-- --	-- --	A 1	հր 4	A 2	հր 5	(Ջ.- A9- հր 12)
մար 8	-- --	-- --	M 21	մրգ 24	M 24	մրգ 27	
մար 29	-- --	մրգ 23	A 9	հր 13	A 13	հր 17	
մար 20	-- --	-- --	M 29	հր 2	A 5	հր 9	
մրգ 3	-- --	-- --	A 17	հր 21	A 18	հր 22	(Ջ.- A25- հր 29)
մար 26	-- --	-- --	A 6	հր 11	A 9	հր 14	(Լ. A5- հր 10)
մար 17	-- --	մրգ 24	M 25	մրգ 29	A 1	հր 6	
մար 30	-- --	-- --	A 13	հր 18	A 14	հր 19	(Ջ.- A21- հր 26)
մար 22	-- --	-- --	A 2	հր 7	A 6	հր 11	
մար 15	-- --	-- --	M 22	մրգ 27	M 28	հր 3	
մրգ 4	մարտ 20	մրգ 25	A 10	հր 16	A 17	հր 23	
մար 19	-- --	-- --	M 30	հր 5	A 2	հր 8	
մրգ 9	-- --	-- --	A 18	հր 24	A 22	հր 28	
մրգ 2	-- --	-- --	A 7	հր 14	A 13	հր 20	
մար 16	-- --	մրգ 26	M 27	հր 3	M 29	հր 5	
մրգ 6	-- --	-- --	A 15	հր 22	A 18	հր 25	
մար 28	-- --	-- --	A 4	հր 11	A 10	հր 17	
մար 13	-- --	-- --	M 24	հր 1	M 25	հր 2	(Ջ.- A1- հր 9)
մրգ 3	-- --	մրգ 27	A 12	հր 20	A 14	հր 22	
մար 25	-- --	-- --	A 1	հր 9	A 6	հր 14	
մար 10	-- --	-- --	M 21	մրգ 28	M 22	մրգ 29	(Ջ.- M29- հր 6)
մար 1	-- --	-- --	A 9	հր 18	A 10	հր 19	(Ջ.- A17- հր 26)
մար 22	-- --	մրգ 28	M 29	հր 7	A 2	հր 11	
մրգ 12	-- --	-- --	A 17	հր 26	A 22	աւ 1	
մար 27	-- --	-- --	A 6	հր 15	A 7	հր 16	(Լ.- A5- հր 14)
մար 20	-- --	-- --	M 25	հր 4	M 29	հր 8	
մրգ 9	-- --	մրգ 29	A 13	հր 23	A 18	հր 28	
մար 23	-- --	-- --	A 2	հր 12	A 3	հր 13	(Ջ.- A10 - հր 20)
մար 16	-- --	-- --	M 22	հր 1	M 26	հր 5	
մրգ 7	-- --	-- --	A 10	հր 21	A 14	հր 25	
մար 28	-- --	մրգ 30	M 30	հր 10	A 6	հր 27	
մրգ 11	-- --	-- --	A 18	հր 29	A 19	հր 30	
մար 3	-- --	-- --	A 7	հր 18	A 11	հր 22	
մար 27	-- --	-- --	M 27	հր 8	A 2	հր 14	
մրգ 15	-- --	հր 1	A 15	հր 27	A 22	աւ 4	
մրգ 5	-- --	-- --	A 4	հր 16	A 7	հր 19	
մար 22	-- --	-- --	M 24	հր 5	M 30	հր 11	
մրգ 12	-- --	-- --	A 12	հր 25	A 18	աւ 1	
մար 27	-- --	հր 2	A 1	հր 14	A 3	հր 16	
մար 21	-- --	-- --	M 21	հր 3	M 26	հր 8	
մրգ 9	-- --	-- --	A 9	հր 22	A 15	հր 28	
մար 25	-- --	-- --	M 29	հր 12	M 30	հր 13	(Ջ.- A6- հր 20)
մրգ 14	մարտ 20	հր 3	A 17	աւ 1	A 19	աւ 3	
մրգ 6	-- --	-- --	A 6	հր 20	A 11	հր 25	(Լ.- A5 - հր 19)
մար 21	-- --	-- --	M 25	հր 8	M 27	հր 10	
մրգ 12	-- --	-- --	A 13	հր 28	A 15	հր 30	
մրգ 1	-- --	հր 4	A 2	հր 17	A 7	հր 22	
մար 18	-- --	-- --	M 22	հր 6	M 23	հր 7	(Ջ.- M30 - հր 14)
մրգ 8	-- --	-- --	A 10	հր 25	A 12	հր 27	
մար 30	-- --	-- --	M 30	հր 15	A 3	հր 19	
մրգ 30	-- --	հր 5	A 18	աւ 4	A 23	աւ 4	(Ջ.- ը հայոց 329 թը
մրգ 5	-- --	-- --	A 7	հր 23	Ա8(15)	հր 24(աւ 1)	վից անցնում է 330թ)
մար 27	-- --	-- --	M 27	հր 12	M 31	հր 16	



1	2	3	4	5	6	7	8	9	10	11	12
83	884	332	40	28	1	3/4	4/5	-- --	-- --	2	մարտ 1
	885	333	45	9	12	5	5/6	-- --	Ահեկ23	3	փետր 21
	886	334	50	20	23	6	6/7	-- --	-- --	5	փետր 6
	887	335	55	1	4	7	7/1	-- --	-- --	6	փետր 26
84	888	336	60	12	15	1/2	1/2	-- --	-- --	7	փետր 8
	889	337	65	23	26	3	2/3	-- --	Ահեկ24	2	փետր 2
	890	338	70	4	7	4	3/4	-- --	-- --	3	փետր 22
	891	339	75	15	18	5	4/5	-- --	-- --	4	փետր 13
85	892	340	80	26	29	6/7	5/6	-- --	-- --	5	մարտ 5
	893	341	85	7	10	1	6/7	-- --	Ահեկ25	7	փետր 18
	894	342	90	19	22	2	7/1	-- --	-- --	1	փետր 10
	895	343	95	30	3	3	1/2	-- --	-- --	2	մարտ2
86	896	344	5	11	14	4/5	2/3	-- --	-- --	3	փետր 15
	897	345	10	22	25	6	3/4	-- --	Ահեկ26	5	փետր 6
	898	346	15	3	6	7	4/5	-- --	-- --	6	փետր 26
	899	347	20	14	17	1	5/6	-- --	-- --	7	փետր 11
87	900	348	25	25	28	2/3	6/7	-- --	-- --	1	մարտ 2
	901	349	30	6	9	4	7/1	-- --	Ահեկ27	3	փետր 22
	902	350	35	17	20	5	1/2	-- --	-- --	4	փետր 7
	903	351	40	28	1	6	2/3	-- --	-- --	5	փետր 27
88	904	352	45	9	12	7/1	3/4	-- --	-- --	6	փետր 19
	905	353	50	20	23	2	4/5	հուն. 6	Ահեկ28	1	փետր 10
	906	354	55	1	4	3	5/6	-- --	-- --	2	փետր 23
	907	355	60	12	15	4	6/7	-- --	-- --	3	փետր 15
89	908	356	65	23	26	5/6	7/1	-- --	-- --	4	փետր 7
	909	357	70	4	7	7	1/2	-- --	Ահեկ29	6	փետր 26
	910	358	75	15	18	1	2/3	-- --	-- --	7	փետր 11
	911	359	80	26	29	2	3/4	-- --	-- --	1	մարտ 3
90	912	360	85	7	10	3/4	4/5	-- --	-- --	2	փետր 23
	913	361	90	19	22	5	5/6	-- --	Ահեկ30	3	փետր 7
	914	362	95	30	3	6	6/7	-- --	-- --	5	փետր. 27
	915	363	5	11	14	7	7/1	-- --	-- --	6	փետր. 19
91	916	364	10	22	25	1/2	1/2	-- --	-- --	7	փետր. 3
	917	365	15	3	6	3	2/3	-- --	մար 1	2	փետր 23
	918	366	20	14	17	4	3/4	-- --	-- --	3	փետր. 15
	919	367	25	25	28	5	4/5	-- --	-- --	4	փետր 7
92	920	368	30	6	9	6/7	5/6	-- --	-- --	5	փետր. 20
	921	369	35	17	20	1	6/7	-- --	մար 2	7	փետր 11
	922	370	40	28	1	2	7/1	-- --	-- --	1	մարտ 3
	923	371	45	9	12	3	1/2	-- --	-- --	2	փետր 16
93	924	372	50	20	23	4/5	2/3	-- --	-- --	3	փետր. 8
	925	373	55	1	4	6	3/4	-- --	մար 3	5	փետր. 27
	926	374	60	12	15	7	4/5	-- --	-- --	6	փետր. 12
	927	375	65	23	26	2	5/6	-- --	-- --	7	փետր 3
94	928	376	70	4	7	2/3	6/7	-- --	-- --	1	փետր. 23
	929	377	75	15	18	4	7/1	-- --	մար 4	3	փետր. 15
	930	378	80	26	29	5	1/2	-- --	-- --	4	փետր 28
	931	379	85	7	10	6	2/3	-- --	-- --	5	փետր. 20
95	932	380	90	19	22	7/1	3/4	-- --	-- --	6	փետր 12
	933	381	95	30	3	2	4/5	-- --	մար 5	1	փետր. 23
	934	382	5	11	1	3	5/6	-- --	-- --	2	փետր. 16
	935	383	10	22	25	4	6/7	-- --	-- --	3	փետր. 8
96	936	384	15	3	6	5/6	7/1	-- --	-- --	4	փետր. 25
	937	385	20	14	17	7	1/2	հուն. 6	մար 6	6	փետր. 12
	938	386	25	25	28	1	2/3	-- --	-- --	7	մարտ3

13	14	15	16	17	18	19	20
մրգ 17	-- --	-- --	A 15	աւ 2	A 19	աւ 1	Չ-ը հայոց 332-ից333թ)
մրգ 9	-- --	հր 6	A 4	հր 21	A 11	հր 28	
մար 24	-- --	-- --	M 24	հր 10	M 27	հր 13	
մրգ 13	-- --	-- --	A 12	հր 29	A 16	աւ 3	
մար 27	-- --	-- --	A 1	հր 19	A 7	հր 25	
մար 21	-- --	հր 7	M 21	հր 7	M 23	հր 10	
մրգ 11	-- --	-- --	A 9	հր 27	A 12	հր 30	
մրգ 6	-- --	-- --	M 29	հր 16	A 4	հր 22	
մրգ 23	-- --	-- --	A 17	աւ 1	A 23	աւ 7	(Լ.Լ.Չ.340-ից 341)
մրգ 8	-- --	հր 8	A 6	հր 25	A 8	հր 27	(Լ.Ա5 - հր 24)
մրգ 30	-- --	-- --	M 25	հր 13	M 31	հր 19	
մրգ 20	-- --	-- --	A 13	աւ 2	A 20	աւ 4	(Չ-ը343-ից 344)
մրգ 6	-- --	-- --	A 2	հր 22	A 4	հր 24	
մար 27	-- --	հր 9	M 22	հր 11	M 27	հր 16	
մրգ 17	-- --	-- --	A 10	հր 30	A 16	աւ 1	(Չ-ը346-ից 347)
մրգ 2	-- --	-- --	M 30	հր 19	A 1	հր 21	
մրգ 28	-- --	-- --	A 18	աւ 4	A 20	աւ 6	(Լ.Լ.Չ.348-ից 347)
մար 14	-- --	հր 10	A 7	հր 28	A 12	աւ 3	
մար 29	-- --	-- --	M 27	հր 17	M 28	հր 18	(Չ.Ա4- հր 25)
մրգ 19	-- --	-- --	A 15	աւ 1	A 17	աւ 3	(Չ-ը351-ից 352)
մրգ 12	-- --	-- --	A 4	հր 26	A 8	հր 30	
մրգ 3	մարտ 20	հր 11	M 24	հր 15	M 31	հր 22	
մրգ 16	-- --	-- --	A 12	աւ 4	A 13	աւ 5	(Չ.- A20-աւ7)
մրգ 8	-- --	-- --	A 1	հր 23	A 5	հր 27	
մար 1	-- --	-- --	M 21	հր 13	M 27	հր 19	
մրգ 20	-- --	հր 12	A 9	աւ 2	A 10	աւ 3	(Չ.- A17-աւ 5)
մրգ 5	-- --	-- --	M 29	հր 21	A 1	հր 24	
մրգ 23	-- --	-- --	A 17	աւ 5	A 21	աւ 9	(Լ.Լ.Չ.359-ից 360)
մրգ 19	-- --	-- --	A 6	հր 30	A 12	աւ 1	(Լ.- A5- հր29,Չ. -ը 360-ից 361)
մրգ 8(2)	-- --	հր 13	M 25	հր 18	M 28	հր 21	
մրգ 22	-- --	-- --	A 13	աւ 2	A 17	աւ 6	(Լ.Չ.362-ից 363)
մրգ 13	-- --	-- --	A 2	հր 26	A 9	աւ 3	
մար 29	-- --	-- --	M 22	հր 16	M 24	հր 18	
մրգ 19	-- --	հր 14	A 10	աւ 5	A 13	աւ 2	(Չ. 365-ից 366)
մրգ 11	-- --	-- --	M 30	հր 24	A 5	հր 30	
հր 1	-- --	-- --	A 18	աւ 8	A 25	աւ 15	(Լ.Լ.Չ.367-ից 368)
մրգ 17	-- --	-- --	A 7	աւ 3	A 9	աւ 5	
մրգ 8	-- --	հր 15	M 27	հր 22	A 1	հր 27	
մրգ 28	-- --	-- --	A 15	աւ 6	A 21	աւ 12	(Լ.Լ.Չ.370-ից 371)
մրգ 16	-- --	-- --	A 4	հր 30	A 6	աւ 2	
մրգ 7	-- --	-- --	M 24	հր 20	M 28	հր 24	
մրգ 25	-- --	հր 16	A 12	աւ 4	A 17	աւ 9	(Լ.Լ.Չ.373-ից 374)
մրգ 10	-- --	-- --	A 1	հր 28	A 2	հր 29	(Չ.- A9 աւ1)
մրգ 1	-- --	-- --	M 21	հր 17	M 25	հր 21	
մրգ 23	-- --	-- --	A 9	աւ 2	A 13	աւ 6	(Լ.Լ.Չ.376-ից 377)
մրգ 16	-- --	հր 17	A 29	հր 26	A 5	աւ 3	
մրգ 27	-- --	-- --	A 17	աւ 10	A 18	աւ 11	(Լ.Լ.Չ.378-ից 379)
մրգ 19	-- --	-- --	A 6	աւ 4	A 10	աւ 3	Լ.- A21-աւ3, Չ 379-ից 380)
մրգ 18	-- --	-- --	M 25	հր 23	A 1	հր 30	
մրգ 23	-- --	հր 18	A 13	աւ 7	A 14	աւ 8	(Չ.- Չ21-աւ 15) (Լ.Լ.Չ.359-ից 360)
մրգ 16	-- --	-- --	A 2	աւ 1	A 6	աւ 5	
մրգ 8	-- --	-- --	M 22	հր 20	M 29	հր 27	
մրգ 26	-- --	-- --	A 10	աւ 5	A 17	աւ 12	(Լ.Լ.Չ.384-ից 385)
մրգ 16	մարտ 20	հր 19	M 30	հր 29	A 2	աւ 2	
հր 3	-- --	-- --	A 18	աւ 13	A 22	աւ 17	(Լ.Լ.Չ. 386-ից 387)

1	2	3	4	5	6	7	8	9	10	11	12
	939	387	30	6	9	2	3/4	--	--	1	փետր. 23
97	940	388	35	17	20	3/4	4/5	--	--	2	փետր. 9
	941	389	40	28	1	5	5/6	--	մար 7	3	փետր. 28
	942	390	45	9	12	6	6/7	--	--	5	փետր. 20
	943	391	50	20	23	7	7/1	--	--	6	փետր. 5
98	944	392	55	1	4	1/2	1/2	--	--	7	փետր. 23
	945	393	60	12	15	3	2/3	--	մար 8	2	փետր. 16
	946	394	65	23	26	4	3/4	--	--	3	փետր. 1
	947	395	70	4	7	5	4/5	--	--	4	փետր. 21
99	948	396	75	15	18	6/7	5/6	--	--	5	մարտ 12
	949	397	80	26	29	1	6/7	--	մար 9	7	փետր. 3
	950	398	85	7	10	2	7/1	--	--	1	փետր. 17
	951	399	90	19	22	3	1/2	--	--	2	փետր. 2
100	952	400	95	30	3	4/5	2/3	--	--	3	փետր. 28
	953	401	5	11	14	6	3/4	--	մար 10	5	փետր. 16
	954	402	10	22	25	7	4/5	--	--	6	փետր. 5
	955	403	15	3	6	1	5/6	--	--	7	փետր. 25
101	956	404	20	14	17	2/3	6/7	--	--	1	փետր. 15
	957	405	25	25	28	4	7/1	--	մար 11	3	մար 1
	958	406	30	6	9	5	1/2	--	--	4	փետր. 21
	959	407	35	17	20	6	2/3	--	--	5	փետր. 13
102	960	408	40	28	1	7/1	3/4	--	--	6	մարտ 3
	961	409	45	9	12	2	4/5	--	մար 12	1	փետր. 17
	962	410	50	20	23	3	5/6	--	--	2	փետր. 9
	963	411	55	1	4	4	6/7	--	--	3	մարտ 1
103	964	412	60	12	15	5/6	7/1	--	--	4	փետր. 19
	965	413	65	23	26	7	1/2	--	մար 13	6	փետր. 5
	966	414	70	4	7	1	2/3	--	--	7	փետր. 25
	967	415	75	15	18	2	3/4	--	--	1	փետր. 10
104	968	416	80	26	29	3/4	4/5	--	--	2	մարտ 2
	969	417	85	7	10	5	5/6	հունվ 6	մար 14	3	փետր. 21
	970	418	90	19	22	6	6/7	--	--	5	փետր. 6
	971	419	95	30	3	7	7/1	--	--	6	փետր. 26
105	972	420	5	11	14	1/2	1/2	--	--	7	փետր. 18
	973	421	10	22	25	3	2/3	--	մար 15	2	փետր. 2
	974	422	15	3	6	4	3/4	--	--	3	փետր. 22
	975	423	20	14	17	5	4/5	--	--	4	փետր. 13
106	976	424	25	25	28	6/7	5/6	--	--	5	մարտ 5
	977	425	30	6	9	1	6/7	--	մար 16	7	փետր. 18(12)
	978	426	35	17	20	2	7/1	--	--	1	փետր. 10
	979	427	40	28	1	3	1/2	--	--	2	մարտ 2
107	980	428	45	9	12	4/5	2/3	--	--	3	փետր. 22
	981	429	50	20	23	6	3/4	--	մար 17	5	փետր. 6
	982	430	55	1	4	7	4/5	--	--	6	փետր. 26
	983	431	60	12	15	1	5/6	--	--	7	փետր. 18
108	984	432	65	23	26	2/3	6/7	--	--	1	փետր. 2
	985	433	70	4	7	4	7/1	--	մար 18	3	փետր. 22
	986	434	75	15	18	5	1/2	--	--	4	փետր. 13
	987	435	80	26	29	6	2/3	--	--	5	փետր. 23
109	988	436	85	7	10	7/1	3/4	--	--	6	փետր. 19
	989	437	90	19	22	2	4/5	--	մար 19	1	փետր. 10
	990	438	95	30	3	3	5/6	--	--	2	մարտ 3
	991	439	5	11	14	4	6/7	--	--	3	փետր. 15
110	992	440	10	22	25	5/6	7/1	--	--	4	փետր. 5
	993	441	15	23	6	7	1/2	--	մար 20	6	փետր. 26

13	14	15	16	17	18	19	20
մրգ 25	--	--	A 7	նաւ 2	A 14	նաւ 9	(Լ.ևՁ. 387-ից 388)
մրգ 11	--	--	M 27	հր 27	M 29	հր 29	
մրգ 30	--	հր 20	A 15	նաւ 11	A 18	նաւ 14	(Լ. և Ձ. 389-g 390)
մրգ 28	--	--	A 4	նաւ 5	A 10	նաւ 6	(Ձ. 390-ից 391)
մրգ 7	--	--	M 24	հր 24	M 26	հր 26	
մրգ 27	--	--	A 12	նաւ 9	A 14	նաւ 11	(Լ.ևՁ. 392-ից 393)
մրգ 19	--	հր 21	A 1	նաւ 3	A 6	նաւ 3	(Ձ. 393-ից 394)
մրգ 3	--	--	M 21	հր 22	M 22	հր 23	(Ձ. M 29-հր 30)
մրգ 23	--	--	A 9	նաւ 6	A 11	նաւ 8	(Լ.ևՁ. 395-ից 396)
հր 13	--	--	M 29	նաւ 1	A 2	նաւ 5	
մրգ 8	--	հր 22	A 17	նաւ 15	A 22	նաւ 20	(Լ. և Ձ. 397-ի 398)
մրգ 21	--	--	A 6	նաւ 4	A 7	նաւ 5	(Լ. A 5 նաւ3, Ձ. A 14-նաւ12, Լ.ևՁ. 398-399-ը)
հր 6	--	--	M 25	հր 27	M 30	նաւ 2	
հր 3	--	--	A 13	նաւ 12	A 18	նաւ 17	(Լ. ևՁ. 400-ից401)
մրգ 18	--	հր 23	A 2	նաւ 1	A 3	նաւ 2	(Ձ. A 10-նաւ9, Լ.ևՁ. 401-ից 402)
մրգ 10	--	--	M 22	հր 25	M 26	հր 29	
մրգ 30	--	--	A 10	նաւ 9	A 15	նաւ 14	(Լ.ևՁ.403-ից404)
մրգ 21	--	--	M 30	նաւ 4	A 6	նաւ 6	
հր 7	--	հր 24	A 18	նաւ 18	A 19	նաւ 19	(Ձ. A26-նաւ26)
մրգ 27	--	--	A 7	նաւ 7	A 11	նաւ 11	
մրգ 19	--	--	M 27	նաւ 1	A 3	նաւ 3	
հր 9	--	--	A 15	նաւ 16	A 22	նաւ 23	
մրգ 23	--	հր 25	A 4	նաւ5	A 7	նաւ 8	
մրգ 16	--	--	M 24	հր 29	M 30	նաւ 5	
հր 3(6)	--	--	A 12	նաւ 13	A 19	նաւ 20	
մրգ 27	--	--	A 1	նաւ 3	A 3	նաւ 5	
մրգ 13	--	հր 26	M 21	հր 27	M 26	նաւ 2	
հր 3	--	--	A 9	նաւ 11	A 15	նաւ 17	
մրգ 18	--	--	M 29	նաւ 5	M 31	նաւ 2	
հր 9	--	--	A 17	նաւ 20	A 19	նաւ 22	
մրգ 30	մարտ 20	հր 27	A 6	նաւ 9	A 11	նաւ 14	(Լ.- A5- նաւ8)
մրգ 15	--	--	M 25	նաւ 2	M 27	նաւ 4	
հր 2	--	--	A 13	նաւ 16	A 16	նաւ 19	
մրգ 28	--	--	A 2	նաւ 6	A 7	նաւ 11	
մրգ 12	--	հր 28	M 22	հր 30	M 23	նաւ 1	(Ձ.- M30- նաւ 3)
հր 2	--	--	A 10	նաւ 14	A 12	նաւ 16	
մրգ 23	--	--	M 30	նաւ 30	A 4	նաւ 8	
հր 13	--	--	A 18	նաւ 23	A 23	նաւ 28	
մրգ 29	--	հր 29	A 7	նաւ 12	A 8	նաւ 13	(Ձ.- A21 - նաւ 30)
մրգ 21	--	--	M 27	նաւ 1	M 31	նաւ 5	
հր 11	--	--	A 15	նաւ 20	A 20	նաւ 25	
հր 3	--	--	A 4	նաւ 10	A 11	նաւ 17	
մրգ 18	--	հր 30	M 24	նաւ 4	M 27	նաւ 2	
հր 8	--	--	A 12	նաւ 18	A 16	նաւ 22	
մրգ 30	--	--	A 1	նաւ 7	A 8	նաւ 14	
մրգ 15	--	--	M 21	նաւ 2	M 23	նաւ 4	
հր 5	--	նաւ 1	A 9	նաւ 16	A 12	նաւ 19	
մրգ 25	--	--	M 29	նաւ 5	A 4	նաւ 11	
նաւ 5	--	--	A 17	նաւ 24	A 24	հր 1	
հր 3	--	--	A 6	նաւ 14	A 8	նաւ 16	(Լ.- A5- նաւ 13)
մրգ 26	--	նաւ 2	M 25	նաւ 2	M 31	նաւ 8	
հր 16	--	--	A 13	նաւ 21	A 20	նաւ 28	
մրգ 29	--	--	A 2	նաւ 10	A 5	նաւ 13	
մրգ 20	--	--	M 22	նաւ 5	M 27	նաւ 5	
հր 11	--	նաւ 3	A 10	նաւ 19	A 16	նաւ 25	

1	2	3	4	5	6	7	8	9	10	11	12
	994	442	20	14	17	1	2/3	--	--	7	փետր 11
	995	443	25	25	28	2	3/4	--	--	1	փետր. 3
111	996	444	30	6	9	3/4	4/5	--	--	2	փետր. 23
	997	445	35	17	20	5	5/6	--	մար 21	3	փետր 7
	998	446	40	28	1	6	6/7	--	--	5	փետր. 25
	999	447	45	9	12	7	7/1	--	--	6	փետր 19
112	1000	448	50	20	23	1/2	1/2	--	--	7	փետր 11
	1001	449	55	1	4	3	2/3	հուն. 6	մար. 22	2	փետր 23
	1002	450	60	12	15	4	3/4			3	փետր 15
	1003	451	65	23	26	5	4/5			4	փետր 7
113	1004	452	70	4	7	6/7	5/6			5	փետր 27
	1005	453	75	15	18	1	6/7		մար.23	7	փետր 11
	1006	454	80	26	29	2	7/1	--	--	1	մարտ6(3)
	1007	455	85	7	10	3	1/2	--	--	2	փետր 23
114	1008	456	90	19	22	4/5	2/3	--	--	3	փետր 8
	1009	457	95	30	3	6	3/4	--	մար 24	5	փետր. 25
	1010	458	5	11	14	7	4/5	--	--	6	փետր 19
	1011	459	10	22	25	1	5/6	--	--	7	փետր. 6
115	1012	460	15	3	6	2/3	6/7	--	--	1	փետր. 23
	1013	461	20	14	17	4	7/1	--	մար 25	3	փետր. 15
	1014	462	25	25	28	5	1/2	--	--	4	մարտ 7
	1015	463	30	6	9	6	2/3	--	--	5	փետր. 20
116	1016	464	35	17	20	7/1	3/4	--	--	6	փետր 22
	1017	465	40	28	1	2	4/5	--	մար 26	1	մարտ 3
	1018	466	45	9	12	3	5/6	--	--	2	փետր. 16
	1019	467	50	20	23	4	6/7	--	--	3	փետր. 7
117	1020	468	55	1	4	5/6	7/1	--	--	4	փետր 28
	1021	469	60	12	15	7	1/2	--	մար 27	6	փետր. 18
	1022	470	65	23	26	1	2/3	--	--	7	փետր 3
	1023	471	70	4	7	2	3/4	--	--	1	փետր 23
118	1024	472	75	15	18	3/4	4/5	--	--	2	փետր. 16
	1025	473	80	26	29	5	5/6	--	մար 28	4	փետր 28
	1026	474	85	7	10	6	6/7	--	--	5	փետր 20
	1027	475	90	19	22	7	7/1	--	--	6	փետր 7
119	1028	476	95	30	3	1/2	1/2	--	--	7	փետր 25
	1029	477	5	11	14	3	2/3	--	մար 29	2	փետր. 16
	1030	478	10	22	25	4	3/4	--	--	3	փետր 8
	1031	479	15	3	6	5	4/5	--	--	4	փետր 21
120	1032	480	20	14	17	6/7	5/6	--	--	5	փետր 13
	1033	481	25	25	28	1	6/7	հուն. 6	մար 30	7	մարտ 3(6)
	1034	482	30	6	9	2	7/1	--	--	1	փետր. 23
	1035	483	35	17	20	3	1/2	--	--	2	փետր 9
121	1036	484	40	28	1	4/5	2/3	--	--	3	փետր. 28
	1037	485	45	9	12	6	3/4	--	մրգ 1	5	փետր. 20
	1038	486	50	20	23	7	4/5	--	--	6	փետր 5
	1039	487	55	1	4	1	5/6	--	--	7	փետր 25
122	1040	488	60	12	15	2/3	6/7	--	--	1	փետր 15
	1041	489	65	23	26	4	7/1	--	մրգ 2	3	փետր. 1
	1042	490	70	4	7	5	1/2	--	--	4	փետր 21
	1043	491	75	15	18	6	2/3	--	--	5	փետր.16(3)
123	1044	492	80	26	29	7/1	3/4	--	--	6	փետր. 3
	1045	493	85	7	10	2	4/5	--	մրգ 3	1	փետր. 15
	1046	494	90	19	22	3	5/6	--	--	2	փետր 9
	1047	495	95	30	3	4	6/7	--	--	3	մարտ 1
124	1048	496	5	11	14	5/6	7/1	--	--	4	փետր 13
	1049	497	10	22	25	7	1/2	--	մրգ 4	6	փետր 5

13	14	15	16	17	18	19	20
մրգ 26	--	--	M 30	ճառ 8	A 1	ճառ 10	
հր 16	--	--	A 18	ճառ 27	A 21	ճառ 30	
հր 9	--	--	A 7	ճառ 17	A 12	ճառ 22	
մրգ 23	--	առ 4	M 27	ճառ 6	M 28	ճառ 7	(Չ.-A 4 - ճառ 14)
հր 11	--	--	A 15	ճառ 25	A 17	ճառ 27	
հր 5	--	--	A 4	ճառ 14	A 9	ճառ 19	
մրգ 28	--	--	M 24	ճառ 4	M 31	ճառ 11	
հր 10	մարտ 20	Առ 5	A 12	ճառ 23	A 13	ճառ 24	(Չ.-A20 - հրո 1)
հր 2	--	--	A 1	ճառ 12	A 5	ճառ 16	
մրգ 24	--	--	M 21	ճառ 1	M 28	ճառ 8	
հր 15	--	--	A 9	ճառ 21	A 16	ճառ 28	
հր 29	--	ճառ 1	M 29	ճառ 10	A 1	ճառ 13	(Գ. 453-ից 454)
մրգ 19	--	--	A 17	ճառ 29	A 21	հրո 3	
հր 13	--	--	A 6	ճառ 23	A 6	ճառ 18	(Լ. A5-ճառ 17, Չ.-A6-ճառ 18)
մրգ 27	--	--	M 25	ճառ 7	M 28	ճառ 10	
հր 13	--	ճառ 2	A 13	ճառ 26	A 17	ճառ 30	
հր 8	--	--	A 2	ճառ 15	A 9	ճառ 22	
մրգ 23	--	--	M 22	ճառ 4	M 25	ճառ 7	
հր 13	--	--	A 10	ճառ 24	A 13	ճառ 27	
հր 5	--	ճառ 3	M 30	ճառ 13	A 5	ճառ 19	
հր 25	--	--	A 18	հրո 2	A 25	հրո 9	
հր 10	--	--	A 7	ճառ 21	A 10	ճառ 24	
հր 13	--	--	M 27	ճառ 11	A 1	ճառ 16	
հր 22	--	ճառ 4	A 15	ճառ 30	A 21	հրո 6	
հր 7	--	--	A 4	ճառ 19	A 6	ճառ 21	
մրգ 28	--	--	M 24	ճառ 8	M 29	ճառ 13	
հր 20	--	--	A 12	ճառ 28	A 17	հրո 3	
հր 3	--	ճառ 5	A 1	ճառ 17	A 2	ճառ 18	(Չ.-A9- ճառ25)
մրգ 16	--	--	M 21	ճառ 6	M 25	ճառ 10	
հր 16	--	--	A 9	ճառ 25	A 14	ճառ 30	
հր 9	--	--	M 29	ճառ 15	A 5	ճառ 22	
հր 21	--	ճառ 6	A 17	հրո 4	A 18	հրո 5	(Չ.-A10-հրո12)
հր 13	--	--	A 6	ճառ 23	A 10	ճառ 27	(Չ.-A5 - ճառ22)
մրգ 30	--	--	M 25	ճառ 11	M 26	ճառ 12	(Չ.-A2 - ճառ19)
հր 19	--	--	A 13	հրո 1	A 14	հրո 2	(Չ.-A21-հրո 9)
հր 10	--	ճառ 7	A 2	ճառ 20	A 6	ճառ 24	
հր 2	--	--	M 22	ճառ 9	M 29	ճառ 16	
հր 15	--	--	A 10	ճառ 28	A 11	հրո 1	
հր 9	--	--	M 30	ճառ 18	A 2	ճառ 21	
հր 27	մարտ 20	ճառ 8	A 18	հրո 7	A 22	հրո11	
հր 19	--	--	A 7	ճառ 26	A 14	հրո3	
հր 4	--	--	M 27	ճառ 15	M 30	ճառ 18	
հր 24	--	--	A 15	հրո 5	A 18	հրո 8	
հր 16	--	ճառ 9	A 4	ճառ 24	A 10	ճառ 30	
հր 21	--	--	M 24	ճառ 13	M 26	ճառ 15	
մրգ 30	--	--	A 12	հրո 2	A 15	հրո 5	
հր 12	--	--	A 1	ճառ 22	A 6	ճառ 27	
մրգ 28	--	ճառ 10	M 21	ճառ 11	M 22	ճառ 12	(Չ.-M29- ճառ19)
հր 18	--	--	A 9	ճառ 30	A 11	հրո 2	
հր 11	--	--	M 29	ճառ 19	A 3	ճառ 24	
հր 1	--	--	A 17	հրո 9	A 22	հրո 14	
հր 13	--	ճառ 11	A 6	ճառ 28	A 7	ճառ 29	(Լ. A5-ճառ 27, Չ. A14-հրո6)
հր 7	--	--	M 25	ճառ 16	M 30	ճառ 21	
հր 27	--	--	A 13	հրո 5	A 19	հրո 11	
հր 12	--	--	A 2	ճառ 25	A 3	ճառ 26	(Չ.-A10-հրո3)
հր 4(3)	--	ճառ 12	M 22	ճառ 14	M 26	ճառ 18	

1	2	3	4	5	6	7	8	9	10	11	12
	1050	498	15	3	6	1	2/3	--	--	1	փետր. 10
	1051	499	20	14	17	2	3/4	--	--	2	մարտ 1
125	1052	500	25	25	28	3/4	4/5	--	--	3	փետր 21
	1053	501	30	6	9	5	5/6	--	մրգ 5	5	փետր. 16
	1054	502	35	17	20	6	6/7	--	--	6	փետր 26
	1055	503	40	28	1	7	7/1	--	--	7	փետր 27
126	1056	504	45	9	12	1/2	1/2	--	--	2	փետր. 9
	1057	505	50	20	23	3	2/3	--	մրգ 6	3	մարտ 1
	1058	506	55	1	4	4	3/4	--	--	4	փետր 13
	1059	507	60	12	15	5	4/5	--	--	5	փետր 20
127	1060	508	65	23	26	6/7	5/6	--	--	7	փետր 25
	1061	509	70	4	7	1	6/7	--	մրգ 7	1	փետր. 10
	1062	510	75	15	18	2	7/1	--	--	2	մարտ 2
	1063	511	80	26	29	3	1/2	--	--	3	փետր 22
128	1064	512	85	7	10	4/5	2/3	--	--	5	փետր 6
	1065	513	90	19	22	7	3/4	հուն. 6	մրգ 8	5	փետր 6
	1066	514	95	30	3	1	4/5	--	--	6	փետր. 26
	1067	515	5	11	14	2	5/6	--	--	7	փետր 15
129	1068	616	10	22	25	3/4	6/7	--	--	1	փետր. 3
	1069	517	15	3	6	5	7/1	--	մրգ 9	3	փետր. 22
	1070	518	20	14	17	6	1/2	--	--	4	փետր 13
	1071	519	25	25	28	7	2/3	--	--	5	մարտ3
130	1072	520	30	6	9	1/2	3/4	--	--	6	փետր 28
	1073	521	35	17	20	3	4/5	--	մրգ 10	1	փետր. 10
	1074	522	40	28	1	4	5/6	--	--	2	մարտ 2
	1075	523	45	9	12	5	6/7	--	--	3	փետր. 15
131	1076	524	50	20	23	6/7	7/1	--	--	4	փետր. 6
	1077	525	55	1	4	1	1/2	--	մրգ 11	6	փետր. 26
	1078	526	60	12	15	2	2/3	--	--	7	փետր 17
	1079	527	65	23	26	3	3/4	--	--	1	փետր 3
132	1080	528	70	4	7	4/5	4/5	--	--	2	փետր 22
	1081	529	75	15	18	6	5/6	--	մրգ 12	4	փետր 13
	1082	530	80	26	29	7	6/7	--	--	5	մարտ 6
	1083	531	85	7	10	1	7/1	--	--	6	փետր 19
133	1084	532	90	19	22	2/3	1/2	--	--	7	փետր 10
	1085	533	95	30	3	4	2/3	--	մրգ 13	2	մարտ 2
	1086	534	5	11	14	5	3/4	--	--	3	փետր 15
	1087	535	10	22	25	6	4/5	--	--	4	փետր 7
134	1088	536	15	3	6	7/1	5/6	--	--	5	փետր. 27
	1089	537	20	14	17	2	6/7	--	մրգ 14	7	փետր 19
	1090	538	25	25	28	3	7/1	--	--	1	մարտ 3
	1091	539	30	6	9	4	1/2	--	--	2	փետր 23
135	1092	540	35	17	20	5/6	2/3	--	--	3	փետր 8
	1093	541	40	28	1	7	3/4	--	մրգ 15	5	փետր. 27
	1094	542	45	9	12	1	4/5	--	--	6	փետր 19
	1095	543	50	20	23	2	5/6	--	--	7	փետր 3
136	1096	544	55	1	4	3/4	6/7	--	--	1	փետր 23
	1097	545	60	12	15	5	7/1	հուն. 6	մրգ 16	3	փետր 15
	1098	546	65	23	26	6	1/2	--	--	4	փետր. 5
	1099	547	70	4	7	7	2/3	--	--	5	փետր 20
137	1100	648	75	15	18	1/2	3/4	--	--	6	փետր. 18
	1101	549	80	26	29	3	4/5	--	մրգ 17	1	մարտ 3
	1102	550	85	7	10	4	5/6	--	--	2	փետր 23
	1103	551	90	19	22	5	6/7	--	--	3	փետր 8
138	1104	552	95	30	3	6/7	7/1	--	--	4	փետր 28
	1105	553	5	11	14	1	1/2	--	մրգ 18	6	փետր. 19

13	14	15	16	17	18	19	20
հր 24(3)	--	--	A 10	հոտի 3	A 15	հոտի 8	
հր 9	--	--	M 30	ճառ 22	M 31	ճառ 23	(Ջ.-A7- ճառ30)
հր 29	--	--	A 18	հոտի 12	A 19	հոտի 13	(Ջ.-Ջ26- հոտի20)
հր 21	--	ճառ 13	A 7	հոտի 1	A 11	հոտի 5	
հր 16	--	--	M 27	ճառ 20	A 3	ճառ 27	
հր 26	--	--	A 15	հոտի 9	A 16	հոտի 10	(Ջ.-A23- հոտի17)
հր 28	--	--	A 4	ճառ 29	A 7	հոտի 2	
հր 10	--	ճառ 14	M 24	ճառ 18	M 30	ճառ 24	
հր 30	--	--	A 12	հոտի 7	A 19	հոտի 14	
հր 13	--	--	A 1	ճառ 26	A 4	ճառ 29	
հր 22	--	--	M 21	ճառ 16	M 26	ճառ 21	
հր 27	--	ճառ 15	A 9	հոտի 5	A 15	հոտի 11	
հր 12	--	--	M 29	ճառ 24	M 31	ճառ 26	
հր 2	--	--	A 17	հոտի 13	A 20	հոտի 16	
հր 25	--	--	A 6	հոտի 3	A 11	հոտի 8	(L.-A5- հոտի 2)
հր 9	մարտ 20	ճառ 16	M 25	ճառ 21	M 27	ճառ 23	
հր 29	--	--	A 13	հոտի 10	A 16	հոտի 13	
հր 29	--	--	A 2	ճառ 29	A 8	հոտի 5	
մրգ 7	--	--	M 22	ճառ 19	M 23	հոտի 20	
հր 26	--	ճառ 17	A 10	հոտի 8	A 12	հոտի 10	
հր 18	--	--	M 30	ճառ 27	A 4	հոտի 2	
ճառ 5	--	--	A 18	հոտի 16	A 24	հոտի 22	
հր 13	--	--	A 7	հոտի 6	A 8	հոտի 7	Ջ.-A15 - հոտի14)
հր 15	--	ճառ 18	M 27	ճառ 25	M 31	ճառ 29	
առ 5	--	--	A 15	հոտի 14	A 20	հոտի 19	
հր 20	--	--	A 4	հոտի 3	A 5	հոտի 4	(Ջ.-A12- հոտի11)
հր 12	--	--	M 24	ճառ 23	M 27	ճառ 26	
առ 2	--	ճառ 19	A 12	հոտի 12	A 16	հոտի 16	
հր 23	--	--	A 1	հոտի 1	A 8	հոտի 8	
հր 9	--	--	M 21	ճառ 20	M 24	ճառ 23	
հր 29	--	--	A 9	հոտի 10	A 12	հոտի 13	
հր 21	--	ճառ 20	M 29	ճառ 29	A 4	հոտի 5	
ճառ 6	--	--	A 17	հոտի 17	A 24	հոտի 25	
հր 26	--	--	A 6	հոտի 7	A 9	հոտի 10	
հր 18	--	--	M 25	ճառ 26	M 31	հոտի 2	
ճառ 3	--	ճառ 21	A 13	հոտի 15	A 20	հոտի 22	Սարկավազադիր 1 թվ.
հր 23	--	--	A 2	հոտի 4	A 5	հոտի 7	
հր 15	--	--	M 22	ճառ 23	M 28	ճառ 29	
առ 5	--	--	A 10	հոտի 13	A 16	հոտի 19	
հր 28	--	ճառ 22	M 30	հոտի 2	A 1	հոտի 4	
ճառ 5	--	--	A 18	հոտի 21	A 21	հոտի 24	
առ 2	--	--	A 7	հոտի 11	A 13	հոտի 16	
հր 17	--	--	M 27	ճառ 30	M 28	հոտի 1	(Ջ.-A4- հոտի 6)
ճառ 2	--	ճառ 23	A 15	հոտի 19	A 17	հոտի 21	
հր 28	--	--	A 4	հոտի 8	A 9	հոտի 13	
հր 13	--	--	M 24	ճառ 27	M 25	ճառ 28	(Ջ.-A1- հոտի 4)
առ 3	--	--	A 12	հոտի 17	A 13	հոտի 18	(Ջ.-A20- հոտի 25)
հր 26	մարտ 20	ճառ 24	A 1	հոտի 6	A 5	հոտի 10	
հր 16	--	--	M 21	ճառ 25	M 28	հոտի 2	
առ 1	--	--	A 9	հոտի 14	A 10	հոտի 15	(Ջ.-A17 - հոտի22)
հր 29	--	--	M 29	հոտի 4	A 1	հոտի 7	
ճառ 8	--	ճառ 25	A 17	հոտի 23	A 21	հոտի 27	
առ 5	--	--	A 6	հոտի 12	A 13	հոտի 19	(L.-A5 - հոտի11, Ջ.-A6 - հոտի12)
հր 20	--	--	M 25	ճառ 30	M 29	հոտի 4	
ճառ 5	--	--	A 13	հոտի20	A 17	հոտի 24	

1	2	3	4	5	6	7	8	9	10	11	12
	1106	549	80	26	29	3	4/5	— „ —	մրգ 17	1	մարտ 3
	1107	550	85	7	10	4	5/6	— „ —	— „ —	2	փետր 23
	1108	551	90	19	22	5	6/7	— „ —	— „ —	3	փետր 8
138	1109	552	95	30	3	6/7	7/1	— „ —	— „ —	4	փետր 28
	1110	553	5	11	14	1	1/2	— „ —	մրգ 18	6	փետր. 19
	1111	554	10	22	25	2	2/3	— „ —	— „ —	7	փետր 4
140	1112	560	40	28	1	2/3	1/2	— „ —	— „ —	7	մարտ 3

13	14	15	16	17	18	19	20
աւ 2	— „ —	աւ 26	A 2	հոռի 9	A 9	հոռի 16	
աւ 2	— „ —	— „ —	A 10	հոռի 17	A 14	հոռի 21	
հր 29	— „ —	— „ —	M 30	հոռի 7	A 5	հոռի 12	
աւ 14	— „ —	աւ 27	A 18	հոռի 26	A 25	հոռի 3	
աւ 4	— „ —	— „ —	A 7	հոռի 15	A 10	հոռի 18	
հր 26	— „ —	— „ —	M 27	հոռի 4	A 2	հոռի 10	
աւ 11	— „ —	— „ —	A 15	հոռի 24	A 21	հոռի 30	

\*\*\*

Այժմ ներկայացնենք Շիրակացու գատկացուցակի և նրա հետ առնչվող Հարցերը, որոնք սերտորեն կապվում են Հայոց քրիստոնեական տոնացույցի հետ: Դատելով Շիրակացու Զատիկի ճառի մի վկայությունից կարելի է ասել, որ էսայան ՇԼԲ պարբերաչրջանի ամսաթվերը, որոնք երբայական տոմարով էին Շիրակացին վեր է ածել Հայկականի 550 (560) տարվա սահմաններում, նա օգտվել է էսայան ՇԼԲ-ի նաև այնպիսի կրկնօրինակից, որը Հուլյան տոմարով էր: Աղյուսակի առաջին սյունակի մեջ, որն անվանել է նահանջ, զուգահեռ դրված թե Հայոց, թե Հռոմեացոց շարքերը տրված է նահանջ տարվա կարգը, այն է՝ 4 տարին մեկ Համարակալված են: Ընդ որում դա վերաբերվում է միայն Հռոմեական շարքին, որովհետև Հայոց տոմարը նահանջի գաղափարը չունենք: Սակայն Հայոց շարքում ևս դրված է, որպեսզի Հասկանալի դարձվի Հռոմեացոց շարքի Համապատասխան տարվա հղումները և Հայոց ամսաթվի մեկ օրվա փոփոխությունը: 2-րդ սյունակում տվել ենք ներկա թվականը, որպեսզի հեշտ լինի օգտագործելու համար, բայց այդ հասկանալի դարձվի Շիրակացու տված Հայոց թվականի տարբերվելը:

5-րդ և 6-րդ սյունակներում դրված է Հուլյան և Հայոց վերադիրները: 553 թ. կամ Հայոց 1 թվականին վերադիրը 30 է և 3: Սակայն վերադիրների համակարգը սկիզբը սկսում է 562 և Հայոց 10 թվականից այն է՝ 9 և 12, որից հետո կիրառվում է 19-ամյա պարբերաչրջանի թվերը, որոնք յուրաքանչյուր 19 տարին մեկ կրկնվում են: Շիրակացու կողմից օգտագործված վերադիրների համակարգի Հուլյան շաքը հիմնավորեցինք վերևում, իսկ այստեղ բերված է նաև Հայոց շաքը, որոնց տարբերությունը 3 է: Առաջին տարուց հետո յուրաքանչյուր հաջորդ տարվա սկզբին լուսնի փուլի հասակը ավելանում է 11 օրով, իսկ Ապրիլ 13-ի լուսնի լրումից հաշված 19-րդ տարում, իսկ Ապրիլ 4-ի լուսնի լրումից հաշված 10-րդ տարում յուրաքանչյուր 19-ամյակում ավելանում է 12 օրով: Այսպես 1-ին տարվա վերադիրին 9-ին ավելանում է 11 և 2-րդ տարվա վերադիրը 20 է, իսկ 3-րդ տարվանը 20 + 11 = 31 - 30 = 1, իսկ Հայոցը 12 է, որին զուգարելով 11 ստանում ենք 23, երրորդ տարում 23 + 11 = 34 - 30 = 3 և այդպես շարունակ մինչև 18-րդ տարի: Նախավերջին տարվա վերադիրին ավելացվում է 12 և նորից սկսվում է վերադիրների նույն շաքը:

7-րդ և 8-րդ սյունակներում դրված են Հուլյան և Հայոց յոթնեակները: Հուլյանը 4-րդ տարում ունի երկու թիվ, որոնցից մեկը, ինչպես բացատրել է Բ. Թու-

մանյանը, հունվարի 1-ից մինչև Փետրվարի 29-ի համար է, իսկ մյուսը Մարտի 1-ից մինչև տարեվերջ: Հայոցը պետք է ունենար մեկ յոթնեակի թիվ, սակայն Հուլյանի հետ համարժեքությունը պահպանելու համար տրված են երկուական յոթնեակներ, որը նույնպես բացատրել է Բ. Թումանյանը:

9-րդ, 10-րդ և 11-րդ սյունակներում տրված է Աստուածայտնութեան Հուլյան և Հայոց ամիս-ամսաթվերը, ինչպես և շաբաթվա օրը: Հարկ է նշել, որ Հայոց եկեղեցական տարին սկսվել է Հունվարի 6-ով: Այդ հաստատվում է ոչ միայն «Կանոնք ընթերցուածոց»-ի տարբերականներով, որոնք գործում էին զուգահեռաբար, այլև Հովհան Մանդակունու, «Կանոնք առաքելականի»-ի, Հովհաննես Գաբելեցու, Անանիա Շիրակացու, Հովհան Օձնեցու վկայություններով: Այդ ավանդույթը, թեև որոշ խախտումները պահպանվեց մինչև մեր օրերը:

Հայոց տոմարի շաբաթական լինելու հետևանքով Հայոց ամսաթվերը չորս տարին մեկ փոխվել են և Շիրակացու ՇԼԲ-ում եթե 1-ին տարում Աստուածայտնությունը Արաց 30-ին էր, ապա 550 տարում Մարգաց 17-ին: Այն ինչ խոսք դժվարացնում էր տոնի հաշվարկը, սակայն պատմական վկայությունների բացահայտման և ճշգրիտ ժամանակը որոշելու համար, եթե Հայտնի է ամսաթիվը կամ նույնիսկ տարեթիվը և տոնի հիշատակությունը, դրանք անզուգական տվյալներ են:

12-րդ և 13-րդ սյունակներում տրված են Բարեկենդանի օրերը Հուլյան և Հայոց ամիս-ամսաթվերով: Հիշյալ տոնի օրվա հաստատագրումը կարևոր էր շաբաթական տոների նախորդ շաքը, ինչպես և Մեծ Պահքից մինչև Զատիկ օրերի և շաբաթվա շաքը կարգավորելու համար:

14-րդ և 15-րդ սյունակները բերված են գարնանային գիշերահավասարի Հուլյան և Հայոց ամսաթվերի համարժեքները: Այն կարևոր էր ոչ միայն Զատիկի նախորդ և հաջորդ շաբաթները կարգավորելու տեսանկյունից, այլ մնացուկային ձևով պահպանվել էր ինչպես տեսանք, հեթանոսական նոր տարվա օրը մի դեպքում Հուլյան անշաբթ տոմարով, մյուս դեպքում հայկական շաբաթական տոմարի համարժեքներով:

16, 17, 18 և 19-րդ սյունակներում բերված են լուսնի լրման և Զատիկի օրերի Հուլյան և Հայկական զուգահեռները: Եթե լուսնի լրման օրերը 19 տարին մեկ կրկնվում էին, ապա Զատիկի օրերը տատանվում էին կապված այն բանի հետ, թե լուսնի լրման օրը տվյալ տարում շաբաթվա ինչ օր է ընկել:

Հարկ է նշել, որ վերոհիշյալ տոների առաջինը Զատիկի օրը խախտեց ՇԼԲ-ի Հայոց և Հուլյան տարիների կարգը, որից հետո նաև լուսնի լրման և գարնանային գիշերահավասարի օրերը, ինչպես նաև հետագայում բարեկենդանի նույնիսկ Աստուածայտնութեան օրերը:

Մանթազարությունների մեջ բերել ենք լրացուցիչ տվյալներ տարբեր Հարցերի վերաբերյալ: Այսպես, հունական և հռոմեական եկեղեցին նույնպես օգտագործել են լուսնի 19-ամյա տարբերաչրջանը, սակայն նրանց մոտ 19-ամյակի 18-րդ տարում լուսնի լրումը դրված էր ոչ թե Ապրիլի 6-ին, այլ Ապրիլի 5-ին, երբ Ապրիլի 5-ը շաբաթ օր էր գալիս ապրիլի 6-ին կիրակի օրը տոնում էին Զատիկը: Այդ չի ընդունվել Հայոց եկեղեցու կողմից և վեճերի տեղիք է տրվել, նույնիսկ անվանել են ծուղափակ: Հայոց եկեղեցում, եթե այդ օրը շաբաթ և կիրակի էր ընկնում, ապա Զատիկը տեղափոխում էին հաջորդ կիրակի օրը: Այդ մասին բավականի հանգամանալի գրված է մատենագրական բնագրերում սկսած Անդրեաս-Անանիա Շիրակացուց: Լուսնի 19-ամյակի Ապրիլ 5-ի (Հայոցով՝ 6-ի) տարվա , որից նրանց 1-ին տարվա համար պարզ է եթե շաբաթ կամ կիրակի է ընկել տեղափոխել են հաջորդ կիրակի սակայն պարզ չէ մյուս օրերի համար, թեև այդպիսի օրեր եղել են 19-ամ-

յակի մյուս տարիների ևս, ուստի մենք բերել ենք նաև այդ օրերի զուգահեռները ծանոթագրութունների մեջ:

881 թվից, այն է՝ Հայոց 329 տարուց մերթ ընդ մերթ և ապա հաճախ Չատիկը սկսում է կատարվել 330 թվի Նավասարդի 4-ին, այսինքն Հայոց տարեթիվը մեկով աճում է և խախտվում է 552 հաստատուն թիվը զատկացուցակի ուղղահայաց կտրվածքի տարիների տոնների սահմաններում, ուստի այն դեպքում, երբ որևէ տոնի օր նշված է Նավասարդի կամ հաջորդ տարվա ամիս-ամսաթիվով դրանց տարբերությունը մեկով ավելանում է և ներկա թվականը գտնելու համար տվյալ տարուն պետք է գումարել 551: Այլ խոսքով, եթե պատմական հիշատակարաններում տրված է թվականը և հիշատակված Չատիկի օրը, ապա տվյալ աղյուսակին նայելով կարելի է որոշել, թե տվյալ տարեթիվը ներկա թվականին վերածելու համար ինչ թիվ պետք է գումարվի 552 թե 551: Շիրակացու աղյուսակը օգնում է նաև պատմական ստույգ թվականները ճշտելու տեսանկյունից: Այսպես Հովհաննես Դրասխանակերտցին հայտնում է որ Յուսուֆի արշավանքը սկսվեց Հայոց 358 թվականի Չատիկին: Ուսումնասիրողներն անհասկանալիորեն ընդունել են 909 թվականը մինչդեռ այն եղել է 910 թվականին: Հայոց 358 թ. պետք է գումարել 552, քանի որ Չատիկը եղել է Հրոտից 24-ին (= Ապրիլ 1) և ոչ Նավասարդին կամ հետագա ամիսներին: Տվյալ դեպքում 551 գումարելը Հայոց 358 թվին սխալ է:

Շիրակացին բերել է նաև Չատիկյան լրումների գիշերվա կամ ցերեկվա ժամը: Այն չտվեցինք աղյուսակի շատ ծանրաբեռնված լինելու պատճառով: Հետաքրքրվողը կարող է վերցնել մեր ներկայացրած Չատիկյան լրումների աղյուսակը (հին հնգեակների համակարգով) և Ապրիլ 13-ի լրումից 1 թվականից (= 553 թ.) սկսելով տալ հնգեակի արժեքը՝ 95 և լրման ցերեկվա ժամը՝ 8-ի 1-րդ մաս, որից հետո Ապրիլ 2-ի տարվա տվյալները և այդպես շարունակ 19 տարին մեկ կրկնելով ստանա 532-ամյա կամ 560-ամյա աղյուսակներ, որոնք փաստորեն 19-ամյակի կրկնություններն են 28 կամ ավելի անգամ:

Շիրակացին գրեց Աստուածայայտութեան և Չատիկի մեկնություններ, որոնք Հայոց քրիստոնեական տոնացույցի հիմնավորման համար կարևոր նշանակություն ունեցան:

Այսպիսով Անանիա Շիրակացին իր կազմած ՇԼԲ-ով ստեղծեց այն հիմքը առանց որի հնարավոր չէ պատկերացնել Հայոց քրիստոնեական տոնացույցի գործադրությունը և հետագա կատարելագործումը, մանավանդ Հայոց տոնացույցի շաբաթական ցիկլի վերջնական ձևավորման համար Շիրակացու կազմած Չատիկացուցակը էական նշանակություն ունեցավ:

Հայագիտության մեջ տիրում է այն թյուր կարծիքը, որ իբրև թե Անանիա Շիրակացին ստեղծել է Հայոց անշարժ տոմարի նախագիծ, որը հաստատում չի գտել: Այն հիմնված է Հովհաննես Դրասխանակերտցու վկայության վրա, որին կրկնել են հետագա պատմիչներն ու գործիչները:

Սակայն նյութերի ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ Հայոց քրիստոնեական տոնացույցը իր ստեղծման օրվանից հիմնված էր հուլյան տոմարի վրա և նույնիսկ եկեղեցական տոնական տարին սկսում էր անշարժ կերպով Հունվարի 6-ից: Շատ տոներ հատկապես սրբերի հիշատակի օրերը, որոնք անշարժ էին, տոնվում էր հուլյան տոմարի ամսաթվերի համաձայն, երբեմն միայն համադրվել են Հայոց շաբաթական տոմարի ամսաթվերին: Շիրակացին շարունակեց այդ ավանդույթը, սակայն Հայոց շաբաթական տոմարի համադրության հիման վրա ստեղծված ՇԼԲ-ն Հովհան Օձնեցուն և հետագայում, ինչպես կտեսնենք, հնարավորություն տվեց որոշ ժամանակ հուլյան տոմարի գործածությունը տոնացույցում վերածել մինիմումի սահմանափակել նրա գործածությունը ստեղծելով Հայոց տոնացույցի այն տարբերակը, որը հիմնականում հիմնված էր Շաբաթական ցիկլի վրա, որտեղ հաստատուն

էր ոչ միայն հուլյան ամսաթիվը, անշարժ տոների այլև շաբաթվա օրերը շաբաթական տոների ցիկլերի սահմաններում: (Առաջավորի Պահք - Մեծ Պահք - Չատիկ - Պենտեկոստե - Վարդավառ և այլն):

Տոնացույցում, ինչպես կտեսնենք, հուլյան տոմարով են տվել միայն անշարժ տոները՝ պահպանելով տարվա սկիզբը՝ Հունվարի 6-ը:

Այսպիսով Անանիա Շիրակացին հավանաբար 665 թվականին արդեն գրել էր իր «Քննիկոն»-ը, որի մեջ էր նաև Հայոց ՇԼԲ-ն զուգահեռ դրված հուլյան ՇԼԲ-ի հետ: Քննիկոնի բովանդակությունը անդրադարձել ենք այլ աշխատության մեջ, որը կրկնելու անհրաժեշտության չենք տեսնում<sup>1</sup>:

Այստեղ միայն նշենք, որ Շիրակացու ստեղծած ՇԼԲ-ն դարձավ այն հիմք, որով կարգավորվում էր Հայոց տոնական տարին: Հայոց ՇԼԲ-ն այն խարիսխն էր, որի վրա սկսեց վերջնականորեն և անխափան գործել Հայոց թվականության համակարգը: Այն դարձավ նաև այն ատղձը, որի վրա Հովհան Օձնեցին կառուցեց իր «Կանոնք ընթերցուածոց»-ի կամ «Տոնացույց ըստ շաբաթուց»-ը: Հայոց ՇԼԲ-ն թեև Շիրակացին սկսեց էասյանների նման 553 թ. Անդրեասի 200-ից հետո, բայց իր ՇԼԲ-ի և 19-ամյակի 1-ին տարին ընդունեց 581 թվականը որպես էասյանների ՇԼԲ զատկացուցակի և «Պատճեն տոմարի Հայոց»-ի գործադրության տարի, Մովսես կաթողիկոսի կարգադրության և դրանք Դվինի ժողովի հաստատման տարի: Պատահական չէ, որ նրա ՇԼԲ-ն 550 տարվա է, թեև պետք է լիներ 532 տարվա համար: Անանիա Շիրակացին մեկնեց 9 ազգերի տոմարները, որոնց մեջ իհարկէ նաև Հայոցը, որով դյուրացրեց մյուս ազգերի և Հայոց տոմարի ու տոնացույցի մեջ համապատասխանություններ գտնելը և մեկը մյուսով ստուգելը:

<sup>1</sup> տե՛ս Ռ. Վարդանյան, Հայաստանի չափերն ու կշիռները:



ՀՈՎՀԱՆ ՕՁՆԵՑՈՒ ԱՐՄԱՏԱԿԱՆ ԲԱՐԵՓՈՒՄՆԵՐԸ  
ՀԱՅՈՑ ԾԱՇՈՑ-ՏՈՆԱՑՈՒՅՑՈՒՄ

Հայագիտության մեջ մինչև օրս աչքաթող են արվել Հովհան Իմաստասերի հիմնարար աշխատանքները «Կանոնք ընթերցուածոց»-ի նոր խմբագրության և նրա համառոտ տարբերակի՝ «Տաւնացոյց ըստ շաբաթուցի», ինչպես և հայոց արարողական կարգի հարստացման բնագավառում: Հովհանն Օձնեցու մատենագրական ու կանոնական, որոնք թվում նոր բնագրերի համադրումները հնագույն ճաշոց-տոնացույցերի, ինչպես և Հովհաննեա Դրասխանակերտցու, Ասողիկի և Կիրակոս Գանձակեցու ուղղափառ տեղեկությունների հետ հնարավորություն են տալիս նորովի ընկալել Հովհան Իմաստասերի գործունեությունը Հայոց տոնա-ծիսական համակարգի, հատկապես «Կանոնք ընթերցուածոց»-ի - տոնացույցի խմբագրման ուղղությամբ, որոնք սկզբունքային նոր ուղղություն բացեցին հայոց տոնացույցի զարգացման հետագա ընթացքի համար: Նախ բերենք մատենագրական վկայությունները:

Հովհաննեա Դրասխանակերտցին գրում է. «... Եւ զկնի սորա յաջորդէ զաթոռն սուրբ մեծ Իմաստասէրն Հովհաննէս... յաւէտ իմն հմտագոյն սա գրով դրոշմեալ՝ տա եկեղեցւոյ Քրիստոսի զբովանդակ կարգաւորութիւնս պաշտման ժամուց, գեղեցիկ իմն յօրինուածքով ճոխացուցեալ և բացայայտեալ ևս զմիոյ միոյ կարգացն զմեկնութիւնս ի մխիթարութիւն կղերց եկեղեցւոյ...»<sup>1</sup>:

Ըստ Հովհաննեա Դրասխանակերտցու տեղեկությունների Հովհաննեա Իմաստասեր հայոց կաթողիկոսն ամբողջ ժամկարգությունն, այսինքն՝ «Կանոնք ընթերցուածոց» - տոնացույցն է կարգավորել և գեղեցիկ հորինվածքներով ճոխացրել, ինչպես և իր գրած կանոնական ու մատենագրական ժառանգության մեջ նրանց առանձին դրվագներ մեկ առ մեկ մեկնել է ի մխիթարություն եկեղեցու սպասավորների:

Ասողիկը, ինչպես տեսանք գրելով Եզրից հետո կատարված փոփոխությունների և Հովհան Օձնեցու կողմից ավանդության վերականգնման, իմիջիայլոց, հիշել է նաև Տօնացույց կատարած նրա խմբագրության մասին, մասնավորապես «զպահս քառասորդացն և զայլ աւուրս կանոնեալս» և «զպահսց աւուրս սրբութեամբ տալենի ի գլուխ»<sup>2</sup> ձևակերպումներով, որոնք ոչ այլ ինչ են քան տոնական տարվա նոր խմբագրություն, քանի որ հիշյալ տոները կանոնված էին մինչև Հովհաննէս փիլիսոփան և նա վերականգնեց դրանք:

Հովհաննեա Դրասխանակերտցու և Ասողիկի վերոհիշյալ տեղեկություններն ավելի է բացահայտում Կիրակոս Գանձակեցին: Նա գրում է. «... և կանոնական օրինադրութեամբ պայծառացոյց գեղեցիկ ի բաց ընկեցեալ զդաւանութիւնն Քաղկեդոնի, որ յաւուրցն Հերակլի կայսեր և Եզր կաթողիկոսի ուներ անկարգութիւն աշխարհս Հայոց: Կարգեալ զընթերցուածն սրբոյն Յակոբայ և Կիւրղի և զամենայն տօնսն որպէս կարգեալ էր սրբոյն Գրիգորի. և տօնեցին ի ԻԵ Դեկտեմբերի ամսոյ Դաւթի մարգարէին և Յակոբայ առաքելոյն, զոր յայլ ազգս ծննդեան տեառն տօնէին. և երգեաց շարական հարցին՝ «Մեղաք յամենայն և զպատուիրանս քո ոչ պահեցաք. արդ խոստովանիմք առ քեզ», որ մինչև ցայսօր պաշտի յեկեղեցիս հայոց, սկսեալ ի ՃՀԵ թուականէն մինչև ի ՈՂ թուականս (= 1241 թ.) որ այժմ յաւուրս մեր է: Եւ այսպէս կարգաւորեալ զաշխարհս ամենայն առաքինութեամբ, և ինքն վարդապետութեան և աղօթից պարա-

պեալ: Շինէ և եկեղեցի մեծ ի գիւղն իւր Օձուն, որ հուպ է առ քաղաքին Լօռէ, և իւր ընտրեալ տեղի բնակութեան սակաւ մի ի բացեալ ի գիւղէն՝ անդ դադարէր...»<sup>1</sup> :

«Յայսմավուրքի» խմբագիրներից մեկը՝ Կիրակոս Գանձակեցին, որ լավատեղյակ էր նախորդ շրջանում ստեղծված բնագրերին, ուղղակի վկայել է, որ Հովհան Օձնեցին «կարգեալ զընթերցուածն սրբոյն Յակոբայ և Կիւրղի», այսինքն՝ «Կանոնք ընթերցուածոց», ինչպես և «զամենայն գտօնսն որպէս կարգեալ էր սրբոյն Գրիգորի», այն է՝ կարգել-խմբագրել է բոլոր տոները հայոց մեջ, որոնք գործադրության մեջ էին մինչև 726 թվականը: Դրանից հետո օգտագործվել է Հովհան Օձնեցու խմբագրած «Կանոնք ընթերցուածոց»-Տոնացույց ըստ շաբաթուցը մինչև հայոց ՈՂ (= 1241 թ.) թվականը, երբ Կիրակոս Գանձակեցին գրում էր այդ տողերը: Վերջինս միաժամանակ մասնավորեցրել է հարցը, հայտնելով որ Հովհան Օձնեցին է վերականգնել «Կանոնք ընթերցուածոց»-Տոնացույցում սահմանված Հունվարի 6-ի՝ Քրիստոսի Ծննդեան և Աստուածայայտությունեան և Դեկտեմբերի 25-ին՝ Դավիթ մարգարեի և Հակոբ առաքյալի տոները և այլ մանրամասներ: Սակայն տվյալ դեպքում կարևորն այն է, որ Հովհան Իմաստասերը խմբագրել է նախորդ շրջանում օգտագործված «Կանոնք ընթերցուածոց»-ը և սահմանել հայոց սրբերի հիշատակի օրերը: Նրա վերականգնած և թարմացրած «Կանոնք ընթերցուածոց»-ը և սրբերի տոնական օրերն ի՞նչ տեսք են ունեցել և ի՞նչ նորություններ են բերել նախորդների համեմատ երևում է նաև Հովհան կաթողիկոսի գրած Նոր կիրակիի մեկնությունից: Նախ մի քանի խոսք այդ գրվածքի մասին:

Հովհան Իմաստասերի մատենագրական բնագրերին, որոնք հրատարակվել են դեռևս 19-րդ դարի 30-ական թվականներին, ավելանում է նրա կողմից գրված «Յոհաննու Իմաստասէրի Հալյոց կաթողիկոսի ի միաշաբաթոյ ասացեալ»<sup>2</sup>, «Վասն Նոր Կիրակէին»<sup>3</sup>, «Ի խորհուրդ Նոր Կիրակէին»<sup>4</sup> վերնագրերը կրող և «Տօնապատճառ» ժողովածուներում գտնվող մեկնության ընդօրինակությունները: Այն հայագիտությանը մինչև օրս հայտնի է: Հովհան կաթողիկոսն «Նոր կիրակէին» վերաբերվող մեկնությունը գրել է իր կաթողիկոսության տարիներին (719-728 թթ): Բերենք նրա վկայությունը, «... Իսկ Աստուածային գիշերն ոչ գտանեմք այսպիսի ասացեալ, այլ եթէ հանէր զգիշերն ի գլուխ յաղաթան Աստուծոյ վրկայեն Երուսաղեմացիքն, որ մինչև ցայսաւր զմիաշաբաթին աւրն պայծառացուցանեն գիշերապաշտութեամբ: Յակոբայ եղբաւր Տեառն հրամայեալ է նոցա և ես իմոցս զնոյն հրամայեցի՝ Յովհան Հայոց կաթողիկոսն, նորին հրամանին հետեալ և առաքելական կանոնացն հնազանդեալ, ի հաճոյս կամացն: Իսկ մեզ յամենայն աւր կիրակէի զնոյն աւր յիշատակեմք, և ի մեզ վերաբերելով և զոր ի նմա հանգիստ է Քրիստոսի երախտեալքն ի մեզ հաւատարմացուցանեմք...»<sup>5</sup> :

Այս ուղղակի տեղեկությունը, որպես հեղինակի կողմից տված վկայություն, ցույց է տալիս, որ Հովհան Օձնեցին ոչ միայն գրել է մեկնություն Նոր կիրակիի տոնի մասին, այլ իր հօտին հրամայել է այդ կիրակի օրը կատարել գիշերային պաշտամունք: Հարկ է նշել, որ «Նոր կիրակէ» տերմինը առաջին անգամ վկայած ենք գտնում Հովհան Օձնեցու բնագրում, որը մինչև այդ և հետագայում հայտնի է «Զատիկի Զատիկ», «Երկրորդ Զատիկ», «Կրկնազատիկ» տերմիններով: Բացի այդ նրա բնագրի տվյալներից երևում է, որ Հովհան կաթողիկոսն օգտագործել է Գրիգոր Աստվածաբանի Նավակատեաց ճառը, որն արդեն թարգմանված էր հունարենից հայերեն:

1 Կիրակոս Գանձակեցի, Պատմութիւն Հայոց, Ե., 1961, էջ 67-70:  
2 Ձեռ. N° 3795 էջ 204 բ:  
3 Ձեռ. N° 2040, էջ 310ա:  
4 Ձեռ. N° 2819, էջ 270ա:  
5 Ձեռ. N° 2819, էջ 270ա-274ա, ձեռ. N° 2040, էջ 310ա-314բ:

1 Հովհաննու կաթողիկոսի Դրասխանակերտցոյ Պատմութիւն հայոց, Թիֆլիս, 1912, էջ 101:  
2 Ասողիկ, Աշխ. աշխ., էջ 102-103:

«Նոր Կիրակէին» մեկնութիւնը ցույց է տալիս, որ Հովհան Իմաստասերի խմբագրած «Կանոնք ընթերցուածոց»-«Տաւնացոյց ըստ շաբաթուց»-ը հետագայից Հայտնի ճաշոցների և տոնացույցների այն տեսակներն ու խմբերն են, որոնք կազմված են շաբաթական շարքի հիման վրա և սրբերի հիշատակի տոները տրված են շաբաթվա օրերով: Հետագա շրջանում ավելացվել են նաև Հայոց և հուլյան ամսաթվեր, որոնց մի մասը վերցվել է նախորդ շրջանում գրված բնագրերից: Հովհան Օձնեցու կազմած «Կանոնք»-ձաշոցների խմբին են պատկանում ընդօրինակված հետևյալ գրչագրերը՝ 936(ՄԼԴ), 6500(ԺԳԴ.), 2948(ԺԳԴ.), 142(1269թ.), 202(1277թ.), 1028(1296/7թթ.), 6235(1325թ.), 6301(1318թ.), 4514(1322/3թթ.), 5455(ԺԴԴ.), 7741(1360թ.), 4614(ԺԴԴ.), 6501(ԺԴԴ.), 8904(1401թ.), 1407(1420թ.), 4977(ԺԵԴ.), 939(1441/2թթ.), 4438 և 4437(ԺԴԴ.), 4506(ԺԵԴ.), 4698(ԺԵԴ.) և այլն: Տոնացույցներից կարելի է հիշատակել Հնագույնները, այն է՝ 759(1277/8թթ.) և 179(1292թ.) գրչագրերը: Այլ հավաքածուների ճաշոցներին և տոնացույցներին կարելի է ծանոթանալ Երուսաղեմի, Վենետիկի, Վիեննայի և այլ վայրերի մասին եղած ձեռագրաց ցուցակներից: Վերոհիշյալ ճաշոցները, իբրև գործող օրգանիզմներ, ենթարկվել են նորանոր խմբագրությունների, սակայն նախնականը Հովհաննես Օձնեցու խմբագրած «Կանոնք ընթերցուածոցի» և նրա համառոտված տարբերակի, այն է՝ Հայոց տոնացույցի նոր տեսակն էր: Առայժմ ասենք այսքանը, որ Հովհան Իմաստասերի կազմած ճաշոց-տոնացույցը մինչև Կիրակոս Գանձակեցին և վերը թվարկած ձեռագրերի ընդօրինակությունները հետագա հեղինակների կողմից խմբագրվել են 9-րդ դարի չորրորդ քառորդին, 11-րդ դարի ընթացքում, 12-րդ դարի 60-70-ական թվերին, 13-րդ դարի վերջին և այլն: Երբ հանում ենք հետազայում կատարած ներմուծումները ստանում ենք Հովհան Օձնեցու կազմած ճաշոց-տոնացույցի նախնական պատկերը, իհարկե ոչ ամբողջական տեսքով, որովհետև այդ վերականգնումը հիմնականում կատարել ենք հետադարձ վերլուծության միջոցով: Փորձենք ստանալ Հովհան Օձնեցու ճաշոց-տոնացույցի նախնական վիճակը հիմք ունենալով հետագա բնագրերը, որոնց վկայած տոնական տարվա ցանկը անհրաժեշտություն է հենք համարում ներկայացնել, որովհետև այն կներկայացվի հետագա շարադրանքի ընթացքում: Սկսենք տոնական տարվա սկզբից:

Հովհան կաթողիկոսը, ինչպես կտեսնենք ստորև նրա բնագրերի տեղեկություններից, վերականգնել է Հունվար 6-ին Քրիստոսի Ծնունդն ու Աստվածայայտությունը միաժամանակ տոնելու Հայոց ավանդական կարգը, որը խաթարվել էր Եզր կաթողիկոսի և նրա հաջորդների օրոք: Նա գրում է. «... Բայց տեսանեմք առ այսօրիւք և զայն ևս, եթէ ոմանք և վայելչագուներից սովորութեանց ջանան խափանումն ի վերայ բերել, և զաստուածայայտութեան և զծննդեան նորին զօր, զոր ի վեցն յունվարի ի միասին տօնել սովոր է աշխարհս մեր, այժմ զծննդեան սիրեն ոմանք կատարել զտօն, իսկ յայտութեան խորհրդոյ՝ և ոչ միով իւրի կամին ճառս ի մեջ բերել, կապելով ամենեկին զինքեանս ընդ ընթերցուածոցն հրաման (նկատի ունի «Կանոնք ընթերցուածոց»-ի հայերեն բնագիրը - Ռ. Վ.) զօր Երուսաղեմցիքն յուլթօրեայս յայտութեանդ՝ յուլթ եկեղեցիսն իւրեանց երթալով՝ զնոցին տեղեացն և զկանոնն կատարեն օրինսագան դուլթիւն կարծելով զայս. եթէ զառ ի հնոցն զթերի ինչ ըստ խորհրդոյն խնդրոյ՝ կատարելագործել ումեք հրամայէ հոգին սուրբ»<sup>1</sup> :

Հովհան Օձնեցու գրած 26-րդ կանոնում կարդում ենք. «Պարտ և արժան է յայտութեան աւուր՝ կատարել զջրոյն օրինութիւն ի վերայ ջուրց ըստ պատշաճի ի տեղիսն հանդիպեալ, ձեթ արկանելով ի նա և աղօթս մատուցանելով ի ձեռն այնորիկ յիշատակել զառ ի փրկչէն վասն մեր ի Յորդանան զմկրտութիւն որպէս և ի գալստեանն աւուր ոստան բառնալ, և ճոճանակս շարժել, զնմանութիւն բերելով մանկանցն երբայեցույ ծափելոյն և ոստան մատուցանելոյ. զի

<sup>1</sup> Հովհաննէս Իմաստասերի Աւմեցույ մատենագրութիւնք, Վենետիկ, 1833, էջ 12:

աշխարհս մերոյ մարդկան, և ամենայն քրիստոնէից աւանդութեամբ կալեալ է զսոյն»<sup>1</sup>: Իսկ 30-րդ կանոնում ասվում է. «Արժան է յայտութեան աւուր Մատթեոսի զլիսոյն զմկրտութեան կարգին ընթեռնուլ զԱւետարան: Այլ յամենայն իսկ ութօրեայն խառնել պատշաճ վարկանիմ ընդ ծննդեան Աւետարանսն զմկրտութեան Աւետարանսն...»<sup>2</sup>:

Կանոն ընթերցուածոց-տոնացույցերում վկայված Պետրոս Հայրապետի և Աբիսողոմ սարկավազի, Անտոն անապատականի, Թեոդոս թագավորի հիշատակի օրերը գալիս են վաղ շրջանի բնագրերից: Հովհաննես Օձնեցու կատարած փոփոխությունը, ինչպես երևում է հետագա բնագրերից, այն է, որ վերացվել են հուլյան ամիս-ամսաթվերը այդ օրերի կապակցությամբ կամ եթե հուլյան ամիս-ամսաթվեր կան, ապա այդ ամիս-ամսաթվերը կորցրել են իրենց նախնական իմաստը և հիշյալ սրբերի հիշատակի տոները կատարվել են Քրիստոսի Ծննդեան և աստուածայայտութեան ութ օրերից (հունվար 6-13) հետո համապատասխան հերթականությամբ, եթե Քրիստոսի Ծննդեան օրերի և Առաջավորի Բարեկենդանի միջև օրեր մնում էին, իսկ եթե օրերը քիչ տոնել են զույգերով կամ միասին, որն երևում է հետագա ճաշոց-տոնացույցների բացատրություններից: Ինչ վերաբերվում է Քրիստոսի ծննդյան օրերի և Առաջավոր Բարեկենդանի միջև դրված սրբերի հիշատակի օրերին, որը տատանվում էր մինչև 17 օրվա սահմաններում, ապա այդ սրբերը տարբեր հերթականությամբ մտցվել են 12-րդ դարից հետո, իսկ 13-րդ դարի վերջում Գևորգ Դրազարկեցին, ինչպես կտեսնենք հետագա շարադրանքում, նրանց տեղափոխել է չորս շաբաթվա շարքերի մեջ:

Հովհան Իմաստասերն Հայոց ճաշոց-տոնացույցի մեջ սկսած Առաջավորի Բարեկենդանից մինչև Բուն Բարեկենդանի կիրակին շաբաթական շարքերով (յուրաքանչյուր շաբաթ չորս օր) մուծեց սրբերի հատկապես Հայոց մեջ կենցաղավարվող սրբերի հիշատակների օրեր, որոնց վաղ շրջանում տոնում էին անշարժ տոնական օրով, այն է՝ հուլյան ամիս-ամսաթվերով, որոնք երբեմն համադրում էին Հայոց շարժական տոմարի ամիս-ամսաթվերի հետ, ինչպես և ունեին տեղայնացված բնույթ, վերածեց համահայկական տոնական օրերի: Ներկայացնենք Հովհան Օձնեցու կողմից սահմանված սրբերի հիշատակի օրերը սովյալ հատվածում, այն է՝ Առաջավորի բարեկենդանից հետո եկող ուրբաթ օրը՝ Նինուեացոց, շաբաթ օրը՝ Սարգսի զորավարի: Կիրակիները նվիրված էին հիմնականում Քրիստոսին: Երկուշաբթի օրը՝ Ատոմեանց, երեքշաբթի՝ Ոսկեանց, հիգլաբթի՝ Սուքիասեանց, շաբաթ՝ Սահակ կաթողիկոսի: Հաջորդ Կիրակիից հետո եկող երկուշաբթի՝ Պիոն քահանայի և Մարկոսի Արեթուսայ եպիսկոպոսի, երեքշաբթի՝ Վարդանանց, հինգշաբթի՝ Ղևոնդեանց, շաբաթ՝ 4-5-րդ դարերի Հայրապետների՝ Աթանասի և Բարսեղ և Գրիգորեանց՝ Աստուածաբանի, Նիսացուց, Սքանչելագործի և Հովհաննու, Կիւրղի, Պրոկղի, Երանոսի, Եպիփանու, Եփրեմի և Մելիտոսի և որ սոցին նման են: Այն հետազայում փոխվեց «Սրբոց Հայրապետացն» կամ «Սրբոց Հայրապետացն Կոստանդնուպոլսի Սուրբ ժողովոյն ճԾից»:

Այս հերթականությունը պահպանվեց հետագայում ընդօրինակված ճաշոց-տոնացույցերում, որոշ փոփոխություններով:

Ասենք, որ Սուքեասեանց տոնի մասին հիշատակություն ենք գտնում Ստեփանոս Սյունեցու մոտ<sup>3</sup>, այսինքն ճաշոց-տոնացույցի գործադրության սկզբնական տարիներից: Մշո տոնական ճառընտրի վերնագրերից մեկում պահպանվել է հետևյալ ուշագրավ վկայությունը.

1 Աճ. էջ 32:  
2 Աճ. էջ 32-33:  
3 Գիրք թղթոց, էջ 323:

«Մարերի Ի Ի(20). Վկայաբանութիւն Սրբոյն Սարգսի զաւրավարի եւ որդւոյ նորա(յ) որոյ ա- նուն կոչի Մարտիրոս, որ թարգմանի վկայ եւ այդոց զինուորաց, որք ընդ նոսա վկայեցին»<sup>1</sup> :

Մարերի 20-ով հնարավոր է դառնում թվագրել Սուրբ Սարգսի վկայաբանութեան թարգ- մանութեան ժամանակը: Տվյալ դեպքում Մարերի 20-ը կարող է նշանակել կամ Հունվարի 31, այն է՝ Սուրբ Սարգսի վկայութեան օրը կամ նրա հիշատակի հայոց համարժեքը, որը կատարել են ըստ տոնացույցի տվյալների Առաջավորաց կիրակիից հետո եկող շաբաթ օրը: 1-ին տարբե- րակը այսինքն՝ հայոց տոմարական եղանակը, տալիս է հետևյալ արդյունքները՝ Մարերի 20=Հունվար 31, որտեղից Մարերի 1=Հունվար 12 = 893-896 թթ:

2-րդ տարբերակի (այն է՝ Հայոց տոնացույցին եղանակի դեպքում՝ Մարերի 20= (=Հուն- վար 31)= Առաջավորաց կիրակիից հետո եկող շաբաթ օրը կամ Բուն Բարեկենդանից ետ հաշված 16-րդ օրը տալիս է ըստ «Հայոց տոնացույց» ծրագրի հաշվումների հետևյալ պատկերը.

Ներկա թվական	Հուլյան ամիս	Հուլյան ամսաթիվ	Շաբաթվա օր	Հայոց թվական	Հայոց ամիս	Հայոց ամսաթիվ	Շաբաթվա օր
882	2	3	7	330	10	20	7
896	1	31	7	344	10	20	7
910	1	27	7	358	10	20	7
924	1	24	7	372	10	20	7

Երկու եղանակով կատարված հաշվումները ցույց են տալիս, որ Սուրբ Սարգսի տոնը, որ կատարվել է ավելի վաղ հայոց տոմարի Մարերի 20-ի (= հունվար 31) ամսաթիվ է ստացել 896 թվականին:

Ակնհայտ է, որ Սուրբ Սարգսի վկայաբանությունը ասորերենից թարգմանել է Գագիկ Վանահայրը և ներդրել Հայոց մեջ: Պարզ է դառնում, որ Սուրբ Սարգսի հիշատակի օրը նշել են 9-րդ դարի վերջից ավելի վաղ: Ամենայն հավանականությամբ Սուրբ Սարգսի հիշատակի օրը շաբաթ օրվա կանոնով մտել է հայոց տոնացույց Հովհան Օձնեցու ժամանակ, ինչպես երևում է Հովհան Օձնեցու կանոնքի նաև ուշ շրջանում գրված բնագրերից, և Սամուել Կամրջաձորեցու «Տօնապատճառ»-ի տվյալներից:

Ի դեպ, Սուրբ Սարգսի վկայաբանության հաջորդ թարգմանությունը կատարեց Միխայել ասորին և խմբագրությունը՝ Ներսես Շնորհալին 12-րդ դարի կեսերին, որի մասին տարբեր բնագրերում առկա է նրանց հիշատակարանների ընդօրինակությունները: Մշո տոնական ճա- ուղնտիրի հեղինակը օգտվել է նաև Գագիկ վանահոր կազմած Ատոմագրից, որն ամենայն հա- վանականությամբ Հայոց տոնացույցի ըստ շաբաթուցի հիման վրա կազմված վկայաբանական ժողովածու էր, ի տարբերություն Սողոմոն Մաքինացու կազմած Տոնականի, որը հիմնվել է «Կանոնք ընթերցուածոցի» նախնական խմբագրությունների վրա:

Վենետիկի 169 թվահամարի ճաշոցի հայոց ամսաթիվերի վերլուծության մեջ տեսանք, որ սուրբ հայրապետների հիշատակի օրը հայոց շարժական տոմարի Մարգաց 25-ի ամսաթիվն էր ստացել 994 թ, որի հիմք գրչագիրը գալիս էր 9-րդ դարի վերջերից, ուստի այս տոնական օրը սկիզբ է առել Հովհան Օձնեցու կազմած ճաշոց-տոնացույցից՝ 8-րդ դարի սկզբներից:

Ինչպես նկատելի է հիշյալ հատվածի սրբերի հիշատակի օրերը հիմնավորվում են ինչպես Ստեփանոս Սյունեցու, այնպես էլ ուշ բնագրերի վկայությունների հետագարձ վերլուծությամբ:

<sup>1</sup> Ձեռն N° 7729, էջ 278:

Բուն Բարեկենդանից հետո եկող յուրաքանչյուր շաբաթ օր դրված սրբերի հիշատակի օրերը, որը կատարել էր Հովհան Մանդակունին, պահպանվեց նույնությամբ:

Զատիկից հետո եկող շաբաթ Հովհաննես Մկրտչի գլխատման հիշատակի օր սահմանելը գալիս է Հովհան Օձնեցու ճաշոց-տոնացույցի 9-րդ դարի չորրորդ քառորդի խմբագրությունից, ինչպես կտեսնենք Հովհաննես Մկրտչի տոնական օրերի վերլուծության մեջ: Հովհան կաթողի- կոսի «Ի խորհուրդ Նոր Կիրակէի» բնագրից պարզ է դառնում, որ Զատիկից հետո եկող կիրակիներին նոր անվանումներ տալը, այն է՝ Նոր Կիրակէ, Աշխարհամատրան, ինչպես և Նոր Կիրակիի օրը գիշերապաշտոն կատարելը ու Աշխարհամատրան տոնը, որ դրվել է Զատիկից հաշված 3-րդ կիրակի, սկիզբ է առել 8-րդ դարի սկզբներից:

Ավետեաց Աստուածածնի տոնի օրը Նոր Կիրակիից հետո չորեքշաբթի օր կանոնելը հա- վանաբար Հովհան Օձնեցու ճաշոց-տոնացույցի խմբագրության արդյունք է, թեև այն հական նշանակություն չունեցավ, որովհետև թե դրանից առաջ, ինչպես վկայում են Անանիա Շիրա- կացին և Ստեփանոս Սյունեցին, այնպես էլ հետագայում Ավետեաց Աստուածածնի տոնը կա- տարվեց Ապրիլ 6-ին և որոշ տարիներ էր միայն որ համընկնում էր չորեքշաբթի օրվա հետ: Ուշագրավ է, որ Զաքարիա կաթողիկոսը դեռևս 9-րդ դարի 60-ական թվականներին պաշտպա- նում էր Աստուածածնի Ավետումը չորեքշաբթի օրը դնելու վարկածը. ինչպես երևում է նրա կատարած Գրիգոր Արշարունու «Մեկնություն ընթերցուածոց»-ի խմբագրությունից:

Նախորդ «Կանոնք ընթերցուածոց»-ների մեջ երևման խաչի տոնի օրը սահմանված է անշարժ ամսաթիվով՝ Մայիս 7-ին, որը հետագայում կանոնվեց Զատիկից հաշված 4-րդ կամ 5- րդ կիրակի, սակայն առաջիկա պարզ չէ, թե այն կատարել է Հովհան Օձնեցին, թե նրա ճաշոց- տոնացույցի հետագա խմբագիրները:

Ճաշոց-տոնացույցի հիշյալ խմբում Հոգեգալուստից կամ Պենտեկոստից հետո եկող շա- բաթ դրվել է Երեմիա մարգարեի հիշատակի օրը, իսկ հաջորդ կիրակի՝ Նավակատեաց Եկեղեցու տոնն է: Երկուշաբթի՝ Հռիփսիմեանց, Երեքշաբթի՝ Գայիանեանց, Հինգշաբթի՝ Հովհաննես Մկրտչի և Աթանագինէի, իսկ շաբաթ՝ «Գրիգորի ելն ի Վիրապէն»:

Նախորդ «Կանոնք ընթերցուածոց»-ներում Երեմիա մարգարեից հիշատակի օրն ունի հուլ- յան տոմարի ամիս-ամսաթիվ, այսինքն տոնն անշարժ է եղել, իսկ այստեղ դրվել է Պենտեկոս- տից հետո եկող շաբաթ օրը, դրանով իսկ վերածվել է շարժական տոնի: Հայոց եկեղեցու Նա- վակատիկի տոնի օր է սահմանվել Հոգեգալուստեան հաջորդ կիրակին: Այս տոնը հետագայում ստացել է հայոց շարժական տոմարի ամիս-ամսաթիվ, այն է՝ Տրէ 20 և նրա թվերի առաջացման ժամանակի և այլ խնդիրների տեսական բացատրության ու գործնական արդյունքները կատա- նանք, երբ կքննարկենք Հայոց ճաշոցների, Տոնացույցերի և Յայսմավուրքների ամիս-ամսա- թվերը: Այստեղ միայն ասենք այսքանը, որ «Նավակատեաց եկեղեցույ» տոնը կատարվել է Պենտեկոստից հաշված 8-րդ օրը՝ կիրակի Տրէ 20-ին 1090 թ., 1104 թ., 1118 թ. և 1132 թ. ու Նավակատեաց եկեղեցու մեկնության հեղինակը Դավիթ Քոբայրեցին է, որը ստացել է հիշյալ ամսաթիվը: Նա միաժամանակ այդ տոնի առաջացումը վերագրել է Գրիգոր Լուսավորչին: Թերևս կարելի է Նավակատեաց եկեղեցու տոնի ներդրումի հայոց մեջ վերագրել Հովհան Օձնե- ցուն, բացառելով «Կանոնք ընթերցուածոց-տոնացույցի» 2-րդ և 3-րդ խմբագրությունները, ո- ռոնք կատարվել էին մինչև Դավիթ Քոբայրեցին, որովհետև վերջինիս ժամանակ և նրանից փոքր ինչ առաջ էին կատարվել այդ խմբագրությունները, իսկ նա այդ տոնը կապել է ավելի վաղ ժամանակների հետ: Պարզ է, որ Հայոց Նավակատեաց եկեղեցու տոնը, իբրև շարժական տոն ավելի վաղ չէր կարող առաջանալ քան 8-րդ դարի սկզբները: Հռիփսիմեանց և Գայիա- նեանց հիշատակի օրերը երկուշաբթի և երեքշաբթի կանոնելը նույնպես Հովհան Օձնեցու բա- րեփոխման արդյունք է: Բանն այն է, որ Հռիփսիմեանց և Գայիանեանց հիշատակի օրերը ա- ռաջին անգամ հայոց շարժական տոմարի Հոռի 26 և 27 ամսաթիվերն են ստացել ըստ հաշվում-

ների հայոց 314 թվականին (865 թ.) երբ Պենտեկոստեից հաշված 9 և 10-րդ օրերը Հոռի 26-ն էր (= Հուլիս 18), Երկուշաբթի և Հոռի 27-ը (=Հուլիս 19), Երեքշաբթի: Իսկ մինչև 9-րդ դարի 70-ական թվականները շաբաթական շարքի հիման վրա ստեղծված ճաշոց-տոնացույցի այլ խմբագրություն հայտնի չէ, ուստի Հռիփսիմեաց և Գայիանեանց տոները «Կանոնք ընթերցուածոց» տոնացույց է մուծել Հովհան Օձնեցին և վերոհիշյալ սրբերի հիշատակի օրերը անշարժից վեր է ածել շաբաթական տոներին:

Ասեմք նաև, որ Հովհաննես Մկրտչի և Աթանազիների հիշատակի օրը մինչև 8-րդ դարի սկզբները կատարել են անշարժ տոնական օրով Հուլիս 24-ին, իսկ Հովհան կաթողիկոսը այդ տոնի օրը վերածեց շաբաթական դնելով Պենտեկոստեից հաշված 12-րդ օրը, հինգշաբթի: Հիշյալ տոնի 8-րդ դարի սկզբներին կատարելու հիմնավորման հայոց շաբաթական տոմարի ամսաթվային նշումը՝ Նավասարդի 1-ը, գտնում ենք Հովհան Մամիկոնյանի Տարոնի պատմության մեջ, որի վերլուծությունը կատարել ենք առանձին Հովհաննես Մկրտչի տոնական օրերի կապակցությամբ: Այստեղ բերենք միայն «Հայոց տոնացույց» ծրագրի հաշվման արդյունքները, այն է՝

Ներկա թվական	Հուլյան ամիս	Հուլյան ամսաթիվ	Շաբաթվա օր	Հայոց թվական	Հայոց ամիս	Հայոց ամսաթիվ	Շաբաթվա օր
706	6	3	5	155	1	1	5
720	5	31	5	169	1	1	5
734	5	27	5	183	1	1	5

Ինչ վերաբերվում է Գրիգոր Լուսավորչի ելքը Վիրապից տոնի շաբաթ օրը սահմանելուն, ապա այն Հովհան Օձնեցու Կանոնք-տոնացույցի 2-րդ խմբագրության արդյունք է, որը կատարվեց 9-րդ դարի 4-րդ քառորդին և այդ տոնը ինչպես տեսանք, 933 թ. կատարել է Գագիկ Արծրունին՝ ինքն Վիրապի մոտ ճակատամարտից առաջ, որտեղ հաղթեց Ատրպատական ամիրա Մուֆլիհին:

Պենտեկոստեից հաշված երրորդ կիրակիից հետո առկա են հետևյալ սրբերի հիշատակի օրերը այն է՝ երկուշաբթի՝ Նունեի և Մանեի, Երեքշաբթի՝ Մանկանց Բեղդահամի, Հինգշաբթի՝ Սարգսի և Բագոսի, Շաբաթ՝ Մովկիմա քահանայի: Այս շարքի մեջ, ինչպես կտեսնենք հետագա քննության ընթացքում, Նունեի և Մանեի տոնական օրը հայոց շաբաթական տոմարի ամսաթիվ է ստացել առաջին անգամ 919 թվականին, իսկ Սարգսի և Բագոսիները՝ 906 թվականին, ուստի հիշյալ տոնական օրերի սահմանումը ևս Հովհան Օձնեցու բարեփոխման արդյունք է:

Պենտեկոստեից հաշված 4-րդ կիրակիից հետո եկող երկուշաբթի դրվել է Եպիփան Կիպրացու հիշատակի օրը, Երեքշաբթի՝ Կոստանդիանոս թագավորի և Հեղինեի, Հինգշաբթի՝ Թեոդորոն Գաղատացու և Թալիլեա բժշկի և շաբաթ՝ Գրիգոր Լուսավորչի (նշխարացն) կամ Գիւտ նշխարաց սրբոյն Գրիգորի:

Այս շարքի համար վաղ շրջանից որևէ տվյալ չունենք: Միայն նշենք, որ Կոստանդիանոս թագավորի հիշատակի օրը նախորդ «Կանոնք ընթերցուածոց»-ներում անշարժ էր, իսկ այժմ դրվել է Երեքշաբթի օրը և վեր է ածվել շաբաթական տոնի: Ասեմք նաև, որ Գրիգոր Լուսավորչի պահքի օրերը և գիւտ նշխարացի օրը 2-րդ խմբագրության արդյունք է:

Պենտեկոստեից հաշված 5-րդ կիրակիից հետո եկող երկուշաբթի է սահմանվել Ներսես Հայրապետի և Խաչ Եպիսկոպոսի հիշատակի օրը, Երեքշաբթի՝ Դանիէլի և երկու Մանկանց, Հինգշաբթի՝ Սահակի և Մեսրոբի և այլոց թարգմանչաց, Շաբաթ՝ Զաքարիա մարգարէի:

Սրբերի հիշյալ շարքի մեջ Ներսես Հայրապետի և Խաչ Եպիսկոպոսի հիշատակի օրը հայոց շաբաթական տոմարի ամսաթիվեր են ստացել 10-րդ դարի սկզբներին, ուստի այդ եղել է Հովհան

Օձնեցու կազմած հայոց ճաշոց-տոնացույցում: Թարգմանչաց տոնը տոնվել է 5-րդ դարից սկսած անշարժ տոնական օրով, որն այստեղ վեր է ածվել շաբաթականի և դրվել հինգշաբթի օրվա կանոնի տակ: Վերջապես տեսանք, որ Վենետիկի 169 թվահամարի «Կանոնք ընթերցուածոց»-ի մեջ, որն երրորդ խմբագրության բնագիր է, ընդմիջարկվել է Զաքարիա մարգարեի հիշատակի օրը շաբաթի կանոնի տակ 9-րդ դարի վերջում, ուստի այդ տոնական օրը ևս սահմանել է Հովհան Օձնեցին և Զաքարիայի անշարժ տոնական օրը, որն ունի հուլյան տոմարի Հունիս 10-ի ամիս-ամսաթիվ, վերածվեց շաբաթական տոնի, դրանով իսկ կորցնելով Հունիս 10-ի ամսաթվային նախնական իմաստը: Պենտեկոստեից հաշված 6-րդ կիրակիից հետո եկող երկուշաբթի սահմանվել է Տրդատ թագավորի և Աշխեն տիկնոջ և Խոսրովիղիստոյ հիշատակի օր, Երեքշաբթի՝ Հայրապետացն՝ Արիստակեսի, Վրթանիսի, Հուսիկի, Գրիգորիսի և Դանիէլ Եպիսկոպոսի, հինգշաբթի՝ Եղիսէի մարգարէի, Շաբաթ՝ առաքելոցն՝ Պետրոսի և Պողոսի գլխատմանն: Այս հատվածի սրբերի համար չունենք վաղ շրջանի որևէ մատենագրական վկայություն կամ հայոց շաբաթական տոմարի ամսաթիվ: Միայն նշենք, որ Եղիսէ մարգարեի հիշատակը տոնում էին Հունիսի 14-ին, իսկ Պետրոսի և Պողոսի գլխատման հիշատակը՝ Հունիս 29-ին, որոնք վերածվեցին շաբաթական տոնի նույնպես կորցնելով հուլյան ամիս-ամսաթիվերի նախնական իմաստը:

Վարդավառ-Աստուածածին հատվածում սրբերի հիշատակի օրերը դասավորվել են հետևյալ հերթականությամբ: Նախ Վարդավառից առաջ ընկնող շաբաթ օրն է սահմանվել «Տապանակին Աստուծոյ որ ի Կարիաթարիմ» տոնը, որը նախորդ շրջանում ուներ Հուլիս 2-ի ամսաթիվը: Այնուհետև Վարդավառին հաջորդող երկուշաբթի կանոնվել է Աբրահամ և Խորեն խոստովանողների հիշատակի օրը, Երեքշաբթի՝ Յիզտրուզտի վկայի, Հինգշաբթի՝ Եսայի մարգարէի, Շաբաթ՝ Թադէոս առաքյալի և Սանդուխտ կույսի: 2-րդ կիրակիից հետո եկող երկուշաբթի՝ Շուշանկանն դասեր Վարդանայ, Երեքշաբթի՝ Կիպրիանոս Եպիսկոպոսի և Յուստինեա Կույսի, Հինգշաբթի՝ 45 վկաների և Եւփիմեա ու Քրիստինեա կույսերի, Շաբաթ՝ Նախահարցն, 3-րդ կիրակիից հետո եկող երկուշաբթի՝ Սահակի և Հովսեփի, Երեքշաբթի՝ 12 մարգարեների, Հինգշաբթի՝ Աթանազիէ Եպիսկոպոսի և 10 աշակերտների և 7 վկաների, Շաբաթ՝ Եփեսոսի ժողովի: 4-րդ կիրակիից հետո՝ եկող երկուշաբթի՝ Մակարայեցիների, Երեքշաբթի՝ Սոփիի և երեք դուստրերի, Հինգշաբթի՝ Քրիստափոր Շնագլխոյ և Շաբաթ՝ Անտոնիոսի և Թեոփիլոսեանց:

Յիզտրուզտի, Շուշանկի, Քրիստինեա կույսի, Եփեսոսի և Քրիստափորի հիշատակի օրերի հայոց շաբաթական տոմարի ամսաթիվերից, որոնք կքննարկենք ավելի ուշ, երևում է, որ Վարդավառ-Աստուածածին հատվածի սկզբնավորումը կապվում է Հովհան Օձնեցու բարենորոգումների հետ, թեև հետագայում կատարած որոշ փոփոխությունների, ինչպես և Զատիկի օրերի հետ կապված հիշյալ շարքի տոնական օրերի միացմանը զույգերով կամ տեղափոխմանը տարվա այլ ժամանակ, երբ այդ հատվածում մնում էր տոների մեկ շաբաթ: Նյութերի ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ Հովհան Օձնեցին Աստուածածնից մինչև տարվա վերջ թողել է այնպես ինչպես նախորդ «Կանոնք ընթերցուածոց»-ների խմբագրություններում է եղել: Միայն կատարել է որոշ սրբագրումներ: Փոխման Աստուածածնի տոնը մնացել էր Օգոստոսի 15-ի կանոնի տակ, որը միայն 11-րդ դարի սկզբներին դրվեց Օգոստոսի 15±3 օր, կիրակի:

Սուրբ Խաչի տոնի առանձնացումը իբրև ինքնուրույն տոնական օր Հովհան Օձնեցու խմբագրման արդյունք է, որը երևում է Ատոմ Վարագեցու Հոռոմազիրից, որտեղ այդ տոնն առանձնացված և դրված է Սեպտեմբերի 14-ի կանոնի տակ, իսկ հետագայում Սուրբ Խաչի տոնը տոնվեց Սեպտեմբեր 14 ±3 օր, կիրակի:

Հովհան Օձնեցու, ինչպես նշել է Կիրակոս Գանձակեցին, Ավագ տոները վերականգնեց նախկինի պես և Դեկտեմբերի 25-ին վերասահմանեց Դավիթ մարգարեի և Հակոբ առաքյալի տոնական օրը: Այլ խոսքով սկզբնաղբյուրների և ամսաթիվերի վերլուծության հիման վրա հնարավոր դարձավ հիմնական վերականգնել Հովհան Օձնեցու ստեղծած-խմբագրած «Կանոնք

ընթերցողաձևով - Տոնացոյց ըստ շաբաթուրդ» նախնական բնագիրը: Նրա ստեղծման ճաշոց-տոնացույցը, նախորդների համեմատ ունի սկզբունքային տարբերություն, այն է, որ սրբերի հիշատակի օրերը կանոնվել է շաբաթվա օրերով, որի հետևանքով անշարժ տոնավող օրերը վեր են անվել շաբաթականի:

Հովհան Օձնեցին ըստ էության ստեղծեց ազգային ճաշոց-տոնացույց, որը հետագայում խմբագրվեց մի քանի անգամ: Նրա կանոնած տոները, ըստ շաբաթական շարքի, շարունակեցին տոնվել և ընդլայնվել մինչև այսօր:

Այսպիսով հիմնավորվում է, որ Հովհան Կաթողիկոսն է հիմնականում ստեղծել ճաշոց-տոնացույցը, որը դասավորված է շաբաթական շարքով և տոները հիմնականում կատարվում են շաբաթական տոների սկզբունքով, միայն մի քանի անշարժ տոներ մնացին, որոնց թվում Քրիստոսի Ծննդեան տոները (Հունվար 6-13) կամ եկեղեցական տարվա սկիզբը, Տեառնընդառաջը (Փետրվար 14), Ավետեաց Աստուածածնի տոնը (Ապրիլ 6), Փոխման Աստուածածնի տոնը (Օգոստոս 15), Սուրբ Խաչը (Սեպտեմբեր 14), Ավագ տոները (Դեկտեմբեր 25-29), որոնցից մի մասը նույնպես հետագա խմբագրությունների ժամանակ վերածվեցին շաբաթական տոնի դրվելով շաբաթական շարքի մեջ:

Միաժամանակ պարզ է դառնում, որ «Կանոնք ընթերցողաձևով»-ների բոլոր խմբագրությունները, բացառյալ Ատոմ Վարագեցու Հռոմադիրը և Գրիգոր Վկայասերի Տոնանամակը, որոնք հիմնականում հիմնվել են Հուլյան ամսաթվերի վրա, այսինքն կանոնվել են անշարժ տոնական օրով, խմբագրվել են 8-րդ դարի սկզբներից առաջ, իսկ Հովհան Կաթողիկոսի (719-728 թթ.) ստեղծված «Կանոնք ընթերցողաձևով»-«Տոնացույցը» սկսեց գործադրվել և արմատապես փոխեց տոնական տարվա պատկերը:

Ասենք նաև, որ հերքվում է Մ. Օրմանյանի այն կարծիքը, որ «Տոնացոյց ըստ շաբաթուրդ»-ը գալիս է Գրիգոր Լուսավորչի ժամանակներից:

## ԳԼՈՒԽ ԺԲ

### 8-ՐԴ ԴԱՐԻ ԴԱՐԻՄ ՍՏԵՂԾՎԱԾ ՏՈՆԱԿԱՆ ԲՆԱԳՐԵՐԸ

7-րդ դարի 2-րդ կեսից սկսած մինչև 8-րդ դարի կեսերը բեկումնային շրջան էր Հայոց տոնական տարվա հետ կապված խնդիրների լուծման առումով:

Անանիա Շիրակացին ստեղծեց Հայոց Տոնացույցի հիմքը հանդիսացող ՇԼԲ Զատկացուցակը՝ Հայոց և Հուլյան ամիս-ամսաթվերով, դրանով իսկ հաստատուն հիմքերի վրա դրեց ոչ միայն Զատիկի տոնի կատարումը տարի առ տարի, այլ Հայոց թվականության համակարգը: Նա մեկնեց 9 ազգերի տոմարները, ինչպես և գրեց մի քանի տոների մասին, որոնցից մեզ են հասել Քրիստոսի Ծննդեան և Աստուածայայտնութեան և Զատիկին նվիրված վերլուծությունները: Գրիգորիսը՝ Արշարունյաց եպիսկոպոսը հավանաբար 7-րդ դարի վերջերում կամ 8-րդ դարի սկզբներին, Կյուրեղ երուսաղեմցու «Կոչումն ընծայութեան» երկի նմանությամբ գրեց «Մեկնութիւն ընթերցողաձևով»-ը, որը սկիզբ հանդիսացավ Հայոց տոնական օրերի և նրանց պատճառների ամբողջական մեկնությունը սկսած Քրիստոսի Ծննդեան տոնից մինչև Զատիկ: Այն հետագայում խմբագրվեց ու կազմվեցին «Մեկնութիւն ընթերցողաձևով»-«Տաւնապատճառ» ժողովածուների խմբագրությունները:

Հովհան Օձնեցին հիմնեց ազգային տոնացույցի իր տարբերակը, որը քննությունն բռնեց հետագա դարերում: Վերոհիշյալ հեղինակների և նրանց կատարած գործերի մասին գրել ենք առանձին վերնագրերի տակ:

7-րդ դարի վերջին-8-րդ դարի սկզբներին Հայոց տոնացույցի առանձին հարցերի մասին մեկնություններ գրեցին Սյունաց հոգևոր առաջնորդներ Մովսեսը և Ստեփաննոսը: Մովսես Քերթովը ինչպես կտեսնենք հետագա շարադրանքում, գրեց Վարդավառի ճառը, իսկ Ստեփաննոսը ոչ միայն թարգմանական բնագրերի հեղինակ է, այլ Հայոց տոնածիսական երկերի ստեղծող, որոնցից կիսուսն է միայն մեկ թարգմանության մասին: Վերջապես Սողոմոնը՝ Մաքենացոց վանքի հիմնադիրը կազմեց «Կանոնք ընթերցողաձևով»-ի հիմքի վրա մի ճառընտիր, որը նույնպես մեծ հետք թողեց հետագա ժողովածուների կազմման ժամանակ: Սկսենք վերջին երեք հեղինակների որոշ գործերի քննությունը ժամանակագրական կարգով:

\*\*\*

Վարդավառի տոնի մեկնությունը վերագրում են Մովսես Քերթովազորը: Վերջինիս տակ հասկացել են Մովսես Խորենացուն: Սակայն այս տարբերակն ընդունելի չէ, որովհետև «Կանոնք ընթերցողաձևով»-ի երկու, այն է՝ Սահակ Պարթևի և Հովհան Մանդակունու, խմբագրություններում Վարդավառի տոնը չի փաստագրվել, այսինքն 5-րդ դարում այդ տոնը չի եղել Հայոց տոնացույցում: Վարդավառի տոնի միակ հիշատակությունը գտնում ենք 6-րդ դարի կեսերին, ինչպես տեսանք վերևում: Պարզ է, որ Մովսես Խորենացուն վերագրելու վարկածը դուրս է գալիս քննությունից: Գրիգորյանը Արշարունյաց եպիսկոպոսների ցանկում գտել է Մովսես անունով երկու եպիսկոպոս, որոնցից մեկին էլ վերագրել է Վարդավառի ճառը: Նրանք, ըստ Գ. Հովսեփյանի բերած ցանկի<sup>1</sup> և մեր հաշվումների, Արշարունյաց եպիսկոպոսներ են եղել 587/8-597/8 թթ. և 634/5-646/7 թթ սակայն, ոչ մի վկայություն չկա, որ նրանց որակեին Քերթով կամ Քերթովազայր տիտղոսով:

1 Գ. Հովսեփյան, Հիշատակարաններ, էջ 51:



Նախ թվագրենք Վարդավառի ճառը հիմնվելով բնագրի տվյալների վրա: Այնտեղ ասվում է, որ այս մերձավոր տոնի խորհուրդը, այսինքն մոտակա Վարդավառի տոնը Տաղավարաց տոնի պես տոնում ենք եօթներորդ ամսի տասնհինգերորդ օրը՝ Կիրակի: Վերջինս թվագրելու հնարավորություն է տալիս: 7-րդ ամսի 15-րդ օրը հասկանալու համար ունենք երեք տարբերակ, այն է՝ երբայեցոց, հոռմեացոց (հուլյան) և հայոց 7-րդ ամսի 15-ը: Երբայեցոց 7-րդ ամսի 15-ին, այն է՝ Թշրին 15-ին համարժեք Հոկտեմբերի 2-ին, երբեք Վարդավառի տոն չի կատարվել, ուստի այս տարբերակը բացառվում է: Հայոց շարժական տոմարի 7-րդ ամսի 15-ին, այն է՝ Մեհեկանի 15-ին (Կիրակի) Վարդավառի տոնը ըստ «Հայոց տոնացույց» ծրագրի տվյալների կատարվել է:

Ներկա թվական	Հուլյան ամիս	Հուլյան ամսաթիվ	Ծաբաթվա օր	Հայոց թվական	Հայոց ամիս	Հայոց ամսաթիվ	Ծաբաթվա օր
1264	7	27	1	713	7	15	1
1278	7	24	1	727	7	15	1
1292	7	20	1	741	7	15	1
1383	6	28	1	832	7	15	1

Այս տարբերակը ևս ընդունելի չէ, որովհետև Վարդավառի ճառը արդեն վաղուց գրված էր: Մնում է միակ տարբերակը, այսինքն՝ հուլյան տոմարի 7-րդ ամսի 15-ը, այն է՝ Հուլիս 15-ի կիրակին: Տեսնենք որ թվականներին են եղել Վարդավառը՝ Հուլիսի 15-ի կիրակի: Ըստ Անանիա Շիրակացու ՇԼԲ Ձատկացուցակի Ապրիլ 8-ին եղել է Ձատիկը, հետևաբար Հուլիս 15-ին Վարդավառը 6-րդ դարի 2-րդ կեսի - 8-րդ դարի սկզբներին, Վարդավառի համար «Հայոց տոնացույց» ծրագիրը տալիս է՝

Ներկա թվական	Հուլյան ամիս	Հուլյան ամսաթիվ	Ծաբաթվա օր	Հայոց թվական	Հայոց ամիս	Հայոց ամսաթիվ	Ծաբաթվա օր
619	7	15	1	68	1	21	1
630	7	15	1	79	1	24	1
641	7	15	1	90	1	27	1
703	7	15	1	152	2	12	1
714	7	15	1	163	2	15	1
725	7	15	1	174	2	18	1
736	7	15	1	185	2	21	1

Տեսանք, որ Արշարունյաց եպիսկոպոսներից առաջին Մովսեսը թեմի առաջնորդ է եղել 587/8-597/8 թթ., իսկ 2-րդ Մովսեսը՝ 634/5-646/7 թթ. որոնցից 1-ին Մովսեսի ժամանակ Վարդավառի տոնը Հուլիս 15-ին չի եղել, ուստի վերանում է հիշյալ Մովսեսին Վարդավառի ճառի վերագրելու տարբերակը, մնում են Արշարունյաց Մովսես 2-րդը և Մովսես Սյունեցին, որոնցից միայն վերջինիս կարող էին Քերթոզհայր տիտղոսը տալ իբրև «Ստեփաննոս քերթողի» ուսուցիչ, ուստի Վարդավառի ճառը գրել է կամ 703 թվականին ՇԼԲ-ի 151 տարին կամ 714 թվականին (ՇԼԲ-ի 162 տարին), երբ Վարդավառն ընկել է հուլիս 15-ին, կիրակի, այն է՝ 7-րդ ամսի 15-րդ օրը: Նախընտրելին 703 թվականն է: Կարծում ենք բնագրի իսկ տվյալներով հիմնավորվում է, որ վարդավառի ճառի հեղինակը Մովսես Քերթոզհայրը՝ Սյունեցին է, որը իր

մեկնությունը գրել է 703 թվականին: Ի դեպ Կյուրեղ Ալեքսանդրացու Ջատկի մեկնության մեջ, որի թարգմանությունը կատարել է 716 թվականին, ինչպես կտեսնենք քիչ հետո, «... ի ձեռն Ստեփանոսի քերթողի աշակերտիս Մովսեսի Սիւնեաց եպիսկոպոսի»: Պարզ է, եթե Ստեփանոսը քերթող է, ապա նրա ուսուցիչը՝ Մովսես Սյունեաց եպիսկոպոսը պետք է լիներ Քերթոզհայր:

\*\*\*

Մովսես Քերթոզհայր Սյունեցուն շարունակեց նրա աշակերտը՝ Ստեփանոս Քերթող Սյունեցին, որի ինքնուրույն և թարգմանական գործունեությունը հայտնի է, սակայն մենք ուզում ենք խոսել նրա թարգմանական գործերից մեկի մասին, այն է՝ Կյուրեղ Ալեքսանդրացու Ջատկի մեկնության: Այդ հիմնավորվում է Ստեփանոս Սյունեցու հիշատակարանի վկայությամբ. «Ի վեց հազարերորդի, երկերկերորդի, քսաներորդի չորրորդի ամի արարածոց աշխարհիս ըստ յունարեն թվոյ. ի չորեքտասներորդի ենդիքտիոնի, յերկրորդ ամի թագաւորութեան Անաստասի, թարգմանեցան գիրքըս պարապմանց և թղթոց սրբոյն Կիւրղի եպիսկոպոսին Աղէքսանդի, ի ստոյգ օրինակաց ի Կոստանդնուպոլսի ի ձեռն Դաւթի հիւպատոսի և թագաւորական սեղանոյ կենառի եւ ի ձեռն Ստեփանոսի քերթողի աշակերտիս Մովսէսի Սիւնեաց եպիսկոպոսի...»: Թարգմանությունը կատարել է 716 թ. (6224-5508):

Այդ թղթի վերնագիրն է «Տեառն Սրբոյն Կիւրղի եպիսկոպոսի Աղէքսանդրացոց առ բարէպաշտ Թէոդոսիոս: Յաղագս Տօնի սրբոյ Ջատին»<sup>2</sup>: Բնագրում պահպանվել է ուշագրավ վկայություն Կյուրեղի կողմից Ջատկացուցակի կազման մասին: Այնտեղ գրված է.

«Այդ՝ կատարեալ առաջնոյճ ձերոյ բարեփառ հիւպատութեան յամի հարիւրերորդի յինն և ի տասներորդի ի Դիոկղետիանոսի, յայնմանէ առեալ շարադրեցաք, զկնի ճ՝ և ժ ամեայ ժամանակի զթիւն լուսնի, նշանակեալ նրբապես և ստուգիւ զլուսնի զպարագայութիւն ըստ իւրաքանչիւր ամի, և զօրն յորում մատնեցաւ Քրիստոս, չորեքտասներորդն ասեմ, ևս և զյարութեան նորա օրն, այն է զկիւրակէն: Քանզի յարեալ ի մեռելոց՝ ամենեցունց Փրկիչն, ի խոր գիշերին յերեկոյի շաբաթուն, այն է ի վաղ առաւօտուն ի լուսանալ կիւրակէին ըստ սրբոյ աւետարանչաց հաւատոյ: Բայց վասն չի պիտոյ էր զինն և տասներեկին շրջագայութիւն կատարեալ գրել շարակարգութեամբ, հարկաւորապես, յառաջնում ձեր բարեփառ հիպատութեանդ որ եղև ի հարիւր(եր)որդի ինն և տասներորդի ամի Դիոկղետիանոսի, յառաջագոյն եղաք ամօք չորիւք, զի թուով որդ զկնի նորին՝ հարիւր և տասն ամացն, ոչ պարտ գոլ բերիլ, բայց գրեալ միայն: Վասն որոյ որպէս ասացի ինն և տասներեկին շրջագայ բոլոր երևիլ ի կանոնին, զի իւրաքանչիւր կանոն ինն և տասն ամաց շրջագայութիւն ունի»<sup>3</sup>:

Պարզվում է, որ Կյուրեղ Ալեքսանդրացին իր Ջատկացուցակը սկսել է 399 թվից և ավարտել 513 թվին, բայց թեոդոսի պատվին ցանկացել է սկսել 403 թվից ավարտելով 513-ին, սակայն 95-ամյակի թվերով այն պետք է սկսվեր 418 թվից և ավարտվեր 513 թվին: Ուշագրավ է, որ Կյուրեղի 19-ամյակի 1-ին տարին Ապրիլի 6-ն է (կամ 5-ը), ուստի 1-ին տարուց սկսելու համար 4 տարի ավելացրել է 110-ը դարձնելով 114, իսկ 95-ամյա ցիկլը սկսել է 418-ից, այդ երևում է հետևյալ թվերից:

$$A6 (A5) - 114 = 399 - 513 \text{ թթ. } (19 \times 6)$$

$$M22 - 110 = 403 - 513 \text{ թթ.}$$

$$A6 (A5) - 95 = 418 - 513 \text{ թթ. } (110 - 15 = 95)$$

1 Conubear F. C., The armenian version of revelation and Cyril of Alexandrias scholia on the incarnation and Epistle on easter, Zodon, 1907, p. 149.

2 Աճղ. էջ 143-149:

3 Աճղ. էջ 143-149:



119+284= 403 թ., 119+110=229+284=513 թ., 399+114=513 թ., 403+15=418+95=513 թ.

Այս վկայությունների հիման վրա հետազոտված կարելի է վերականգնել Կյուրեղի ստեղծած Զատկացուցակը, որը մեծ հետաքրքրություն է ներկայացնում քրիստոնեական տոնացույցների հատկապես Զատիկի տոնի կատարման պատմության համար:

\*\*\*

Ուշադիր քննենք այն սկզբնաղբյուրները, որոնք գրում են Սողոմոն Մաքինացու կատարած աշխատանքի մասին և տեսնենք դրանք հնարավորություն տալիս են որոշակի եզրահանգման համար: Բերենք Ստեփանոս Օրբելյանի վկայությունը, որը Ստեփանոս Սյունեցու վարքն ու վախճանը տալիս գրում է. «Եւ յետ լնլոյ հասակի՝ (Ստեփանոս Սյունեցին - Ռ. Վ.) ոչ կամէր թաքչել ջահն ընդ գրանաւ մարմնոյն, այլ հրաժարեր ի բազմամբոխ քաղաքէն (Դվինից - Ռ. Վ.) և գայր ի համբաւատենչ և մեծաշքանչ հանդիսարանն, ի հրեշտակերամ կրօնաստանն սուրբ և յաստուածաբանակ առաքինարանն Մաքենոցաց, առ աստուածազգեաց և սերովբէատիպ հարանց հայրն Սողոմոն (այլ օր.՝ Սաղօմ), որ էր էգոնոմ մեծի ուխտին և պայծառանայր յայնմ ժամանակի մեծամեծ ճգմամբք և անտանելի խստամբեր վարուք, որ և յօրինեաց զպայծառացուցիչն տօնից տէրունականաց և յիշատակաց (այլ օր.՝ և յիշատակս Մարտիրոսաց) զՏօնականն ի 150 թուին Հայոց»<sup>1</sup>:

Ստեփանոս Օրբելյանի վկայությունից կարելի է անել միայն մի եզրակացություն, այն որ Սողոմոն Մաքինացին հորինել է Տօնական, այն է՝ տոնացույց, այն էլ 150 թվականին = 701/2 թթ.: Տեսնենք ինչ է գրում Մշո Տոնական ճառընտիր ընդօրինակողը: Հիշատակարանում գրված է.

«Աւգնեա Սուրբ Երրորդութիւնն: Սկիզբն պատմութեանց աստուածարեալ եւ սրբազանագոյնդ վարդապետութեանց հոգիացելոց արանց, սրբոց հարց, եպիսկոպոսաց և վարդապետաց հաստատիչք զառ ի միմեանց ասացելոց, եւ տապալիչք զամպարչտութիւնս ամենաղանդ հերձուածողացն զայնոսիկ զաստուածաբան հայրապետաց, զիւրաքանչիւրսն ասացեալ ճառս հոգիախոսս վարդապետութիւնս, զորում ի կանոն կարգադրութիւն ժողովեալ առն Աստուծոյ Սողոմովն՝ Մաքենոցաց ուխտին առաջնորդ, ի գաւառին Գեղարքունի, որ յորջորջեցաւ յանուն նախարարին Գեղամա, ի թուականին ՃՂԶ: Եւ պատշաճեալ յաղագս ըստ դրման ընթերցուածին զոր սրբոյն Յակովբայ եւ ի կիւրղէ հաստատեցաւ. ըստ նմին կարգի եղին զոր ի սմայս եւ կարգք եկեղեցականք, անուանելով Տաւնական, յաղագս սկզբան տարոյն մինչև ի կատարումն նորա, որ ունի զընթերցումն գիշերային պաշտման, տէրունական տաւնից, եւ զյիշատակ սրբոց մարգարէից եւ զառաքելոց, եւ մարտիրոսաց, հայրապետաց և թագաւորաց, յորում արարիչն՝ աւրինի յաւիտեանս»<sup>2</sup>:

Ձեռագրի վերջին հիշատակարանում ասվում է.

«... սկսեալ եւ կատարեալ զԱստուածագիծ տառիցն պատգամս... թէ որպէս տեղեկացեալ այսպիսի մեծի քննութեանց. եւ որպիսի հիմանց հաստատեալ զայսպիսի շինուած աստուածեղէն զհաստատեալ կանոն տաւնից ժողովոց եւ զվսեմական արտադրութիւնս, հոգէպատումն ճառից պատմութեանց եւ ժողովոց արդարոց զգիւնուորական գովութիւնս սակայն եւ ի նման է (Սողոմոն Մաքինացու-Ռ. Վ.) առեալ զթելագրելի աւրինակս ուխտաւորաց երջանկաց, յաւրինեցին ընդ միտ ածելով ոչինչ նուազ ընդ նորոյայն գրելոց...»<sup>3</sup>:

«Հարցումն Վահրամայ վարդապետը եւ պատասխանի վարդապետին Վանականայ» բնագրի ընդօրինակության մեջ կարդում ենք.

«(Հարցումն). զհայ գրեանքդ ո՞վ եղեալ: (Պատասխանի). զՏօնականն Մաքենոցի հայրն Սողոմոնի...»<sup>1</sup>: 836 թվահամարի գրչագրի հարց ու պատասխանի մեջ գտնում ենք համարժեք վկայություն, այն է՝ «Հարց. զհայադիր գրեանքդ ո՞վ է կարգեալ:

Պատասխան. զՏաւնականն Մաքենոցին հայրն Սողոմոն...»<sup>2</sup>: Մխիթար Այրիվանեցին 696 թվականի տակ արձանագրել է. «Հայր Սողոմոն արար զտօնականն ի Մաքենիս»<sup>3</sup>:

Վերոհիշյալ վկայություններից հետևում է, որ Սողոմոն Մաքինացին 696 թ. (ըստ Մխիթար Այրիվանեցու), 701/2 թթ. (ըստ Ստեփանոս Օրբելյանի) և 744/8 թթ. (ըստ Մշո ճառընտիրի հիշատակարանի) կազմել է Տօնական ճառերի ժողովածու ըստ «Կանոնք ընթերցուածոց»-ի, այսինքն հայոց եկեղեցական տարվա կտրվածքով: Քիչ հետո Մշո տոնական ճառընտիրը քննարկելիս կտեսնենք, որ Սողոմոն Մաքինացին օգտվել է նաև Հովհան Օձնեցու խմբագրած Ճառոց-Տոնացույցից իր Տօնականի մեջ ներառելով Սարգիս զորավարի և Կոստանդնուպոլսի ժողովին (381 թ.) մասնակցած հայրապետների հիշատակի օրերը տալիս, եթե վերջիններս գալիս են սկզբնագրից, ապա կարելի է պնդել, որ այդ ժողովածուի 747/8 թթ. կազմված լինելը ավելի մոտ է իրականությանը քան 696 թ. կամ 701/2 թթ.: Որպեսզի պարզենք Տօնական անվանվող ժողովածուի էությունը, ներկայացնենք Մշո Տոնական ճառընտիրի կառուցվածքն ու բովանդակությունը, մանավանդ վկայությունները բացի անվանումից ու տոնական տարվա մասին արված տեղեկությունից ուրիշ որևէ տվյալ չեն պարունակում:

Մշո Տոնական ճառընտիրում պահպանվել են 5-8-րդ դարերում խմբագրված «Կանոնք ընթերցուածոց»-ների խմբագրությունների, այսինքն հնագույն տոնացույցերի տոնական շարքի մնացուկները, որոնցով հնարավորություն է ստեղծվում վերականգնել այն, ինչպես և նկատել այնտեղ առաջացած նոր շերտերը: Քանի որ Մշո Տոնական ճառընտիրի երկու մասի բաժանված գրչագրերը մեր ձեռքի տակ են գտնվել շատ կարճ, ուստի օգտվել ենք գրչագրի նկարագրությունից: Այն, ըստ նկարագրության, սկսված է. «Ի մեծի աւուր ճրագալուցին Մննդեան եւ Յայտնութեան Տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի». այսինքն Հունվարի 5-ի գիշերվա կանոններով: Այնուհետև պահպանվել են:

«Գ աւրն»

«Ե-րդ աւուր»

«Զ-րդ աւուրն»

«Է-րդ աւուրն»

«Ը-րդ աւր»

Տրվել են Մննդեան օրերին պատշաճող բնագրեր, որոնք վերցվել են թե թարգմանական, թե ազգային հեղինակների գրվածքներից:

Քրիստոսի Մննդեան 8 օրեա տոներից հետո գրված է. «Կատարեցաւ կարք ընթերցման գիշերային պաշտման Մեծի Մննդեան եւ Յայտնութեան մերոյ Յիսուսի Քրիստոսի ճառ ԿԴ (64)»<sup>4</sup>:

Իսկապես գրանցվել են 64 ճառեր 205 էջի սահմաններում, որոնք վերաբերվում են Քրիստոսի Մննդեան և Յայտնութեան ութ օրերին:

1 Ստ. Սիւն. Եպ, Պատմութիւն տանն Սիսական, Մոսկվա, 1861, էջ 96, գլ. Լ:

2 Ձեռ. № 7729, էջ 3, Ա. Մաթևոսյան, Հայերեն ձեռագիր հիշատակարաններ Ե-ԺԲ դդ., Ե., 1988, էջ 32:

3 Նկարագրություն, էջ 82:

1 Ձեռ. № 774, էջ 153բ:

2 Ձեռ. № 836, էջ 106բ:

3 Մխիթարա Այրիվանեցույ Պատմութիւն հայոց, իլոյս ընծայեաց Մկրտիչ Էմիւ, Մ., 1860, էջ 51:

4 Ձեռ. № 7729, էջ 205:

Միայն այս փաստերը բավարար են, որ պարզենք Սողոմոն Մաքինացու կազմած ժողովածուի բնույթն, անկախ նրանից թե այդ ճառերից քանիսն են տեղ գտել նախնական բնագրում: Շարունակենք թվարկել տոնական շարքի պահպանված հատվածների վերնագրերը.

Ի յիշատակ սուրբ Հայրապետին Պետրոսի եւ Աբիսողոմայ երանելոյն:

Ի յիշ(ատակ) սրբոյն Անտոնի անապականի:

Վկայաբանութիւն սուրբ մանկանց եփեսոսի: Այս հատվածը գալիս է ընդօրինակութեան ժամանակից, որովհետեւ վաղ շրջանում հիշյալ սրբերի հիշատակի օրը չի դրվել հունվարի 13-Առաջավորի բարեկենդանի կիրակիի միջև:

Ի յիշ(ատակ) սուրբ Սարգսի զաւրաւարի: Այս տոնի օրը մտցրել է տոնացույց Հովհաննես Օձնեցի կաթողիկոսը:

Բուն բարեկենդանին շաբաթուն շաբաթ աւուրն. Յիշատակ սուրբ Հայրապետացն ՃԾ եպիսկոպոսացն: Այս կանոնը ևս Հովհաննես Օձնեցու տոնացույցից է գալիս, սակայն հիշյալ ձևակերպումը գալիս է 9-րդ դարի վերջի -10-րդ դարի սկզբներից հետո եկող տոնացույցերից:

Առաջին կիրակէին Բուն Բարեկենդանին Խ-որդացն պահոց:

Առաջին շաբաթուն շաբաթ աւուրն Խ-որդաց պահոց, Յիշատակ սրբոյն Թեոդորոսի:

Բ կիր(ակէ):

Բ շաբաթուն շաբաթ աւուրն. Յիշատակ սուրբ Հայրապետին Երուսաղեմի Կիրլոզի

Գ կիր(ակէ):

Դ-րդ շաբաթուն շաբաթի Յիշատակ սրբոց Խ վկայիցն:

Ի յիշ(ատակ) սուրբ Հաւրն մերոյ Լուսաւորչի Հայրապետի մեծի եւ մարտիրոսի Գր(իգորի):

Զ-րդ կիր(ակէ):

Ի մեծի աւուր երկուշաբաթուն:

Ուրբաթու չարչարանաց Տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի:

Նորին յամենասուրբ Պասքա Աստուծոյ մերոյ:

Ի մեծի աւուր Համբարձման Տեառն Աստուծոյ Յիսուսի Քրիստոսի:

Ի յիշատակ սուրբ մանկանց Բեղղեմի:

Ի յիշատակ սուրբ Թագաւորին Կոստանտինոսի:

Ի յիշատակ սուրբ Մարգարեին Զաքարիայ:

Ի յիշատակ սուրբ մարգարեին Եղիսեի

Յաղագս տապանակին

Ի մեծի աւուր վարդաւառին:

Յիշատակ փոխման սրբոյ Աստուածածնին եւ միշտ կուսին մաւր Տեառն Մարիամու:

Ի յիշատակ սուրբ մարգ(արէին) Եսայիա

Վկայութիւն յիշատակի սուրբ առաքելոյն Թովմայի

Ի յիշատակ սրբոց Մակաբայեցոց

Ի Յիշատակ սուրբ Կարապետին Հովհ(աննու) եւ Մկրտչին

Առաջին գիւտ սուրբ Խաչին:

Ի յիշատակ սուրբ առաք(ելոյն) Փիլիպոսի

Այդուստ վկայաբանութիւն Բարդուղիմէոսի եւ Թադէոսի, գլխաւոր սրբոց առաքելոցն ընտրել ԺԲ աշակերտք: Այս հատվածը, ինչպես վկայել է Գրչագիրը այլ տեղից է վերցրել և դրել այստեղ:

Վկայաբանութիւն Անդրէի առաքելոյ:

Ի յիշ(ատակ) սուրբ մարգ(արէ) Դաւթի եւ առաքելոյն Յակովբայ եղբաւր Տեառն:

Սրբոյն Ստեփաննոսի յառաջսարկավագի եւ նախավկայի Քրիստոսի:

Ի յիշատակ Պետրոսի և Պաւղոսի:

Ի յիշ(ատակ) սուրբ առ(աքելոյն) Յակովբայ եւ Յովհաննու որդւոյն Զեբեթա:

Վերնագրերի այս թվարկումն անգամ ցույց է տալիս, որ Մշո Տոնական ճառընտիրի նախագաղափար օրինակը կազմվել է հնագույն «Կանոնք ընթերցուածոց»-ների խմբագրութունների հիման վրա, որոնք ստեղծվել էին 5-8-րդ դարերում: Այնտեղ տեղ են գտել հիմնականում համընդհանուր ճանաչում ստացած քրիստոնեական սրբերի տոները և այդ օրերին կարգացվող ճառեր, մեկնություններ, պատմություններ՝ հեղինակված տարբեր հեղինակությունների կողմից:

Ակնհայտ է նաև այն, որ Մշո Տոնական ճառընտիրն ընդօրինակողն օգտվել է Սողոմոն Մաքինացու կազմած տոնական ճառընտիրի ոչ թե նախնական բնագրից, այլ 9-րդ դարի վերջի 10-րդ դարի սկզբի խմբագրությունից, որտեղ ներ է առել Զաքարիա կաթողիկոսի գրվածքները, Սուրբ Սարգսի վկայաբանությունը թարգմանված Գագիկ վանահոր կողմից 896 թվին և այլ բնագրեր: Ընդօրինակողն որոշ բնագրեր ընդգրկել է ժողովածուի մեջ 13-րդ դարից առաջ ստեղծված տեքստերից, որոնց մասին հիշատակություններ է թողել նա: Մշո տոնական ճառընտիրը Տոնացույց չէ, որովհետև չկան ընթերցվածները, որոնք ընթերցվում էին տոների ժամանակ: Այն մի տեսակ խառնուրդ է իր ժամանակից և հետագայից հայտնի «Մեկնութիւն ընթերցուածոց»-«Տաւնապատճառ» ժողովածուների, ինչպես և վկայաբանական ժողովածու-Յասամավուրքների: Ուստի ճիշտ է հայագիտության մեջ ընդունված այն տեսակետը, որ Սողոմոն Մաքինացին կազմել է Տոնական ճառընտիր, այսինքն հնագույն տոնացույցերի խմբագրությունների հիման վրա, տոնական տարվա կտրվածքով ներկայացրել է ճառերի ժողովածու: Սողոմոն Մաքինացու ստեղծած տոնական ճառընտիրը խմբագրվել է 9-րդ դարի վերջին -10-րդ դարի սկզբներին, որն էլ նախօրինակ է ծառայել Մշո տոնական ճառընտիրին, որի ընդօրինակության ժամանակ ևս հարստացել է նորանոր նյութերով: Նկատենք նաև, որ Սողոմոն Մաքինացին տոնական ճառընտիրը կազմելիս օգտվել է Հովհան Օձնեցու խմբագրած «Կանոնք ընթերցուածոց» - Տոնացույցից, քանի որ տվել է Սարգիս զորավարի և Կոստանդնուպոլսի ժողովի 150 հայրապետների հիշատակի օրերը (թեև ուշ շրջանի ձևակերպմամբ), ուստի կարելի է պնդել, որ Սողոմոն Մաքինացու Տոնական ճառընտիրը ստեղծվել է 747/8 թ. և ոչ 701/2 թ. ինչպես վկայում է Ստ. Օրբելյանը կամ 696 թ. - ըստ Մխիթար Այրիվանեցու:

Քննությունից պարզ է դառնում, որ Սողոմոն Մաքինացին ստեղծել է Տոնական ճառընտիր, որի կառուցվածքի հիմքում ընկել է 5-8-րդ դարերի սկզբներին խմբագրված «Կանոնք ընթերցուածոց»-ների խմբագրությունները: Այդ ճառընտիրի հիմքի վրա խմբագրվել են նոր ճառընտիրներ, որոնց թվում Մշո Տոնական ճառընտիրը, 1525 թվահամարի գրչագիրը (13-րդ դար) և այլ բնագրեր, որոնք մյուս ճառընտիրներից զատորոշվել են, քանի որ չափանիշ են ունեցել 5-8-րդ դարերի սկզբներին խմբագրված «Կանոնք ընթերցուածոց»-ի խմբագրությունների կառուցվածքը և հիմնականում բացառել են ծառայ-Տոնացույց ըստ շաբաթուցի հետագա խմբագրությունները: Դրանով իսկ պահպանել են Սողոմոն Մաքինացու Տոնական ճառընտիրը միայն հարստացնելով այն նոր նյութերով:

«ՄԵԿՆՈՒԹԻՒՆ ԸՆԹԵՐՑՈՒԱԾՈՑ» («ՏՕՆԱՊԱՏԾԱՌ») ԺՈՂՈՎԱԾՈՒԻ ԱՌԱՋԱՑՈՒՄԸ ԵՒ ՆՐԱ ՀԵՏԱԳԱ ԽՄԲԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Հայոց Տոնացույցի ծագման և զարգացման ուսումնասիրության առիթով անհրաժեշտաբար առնչվել ենք «Մեկնութիւն ընթերցուածոց»-«Տաւնապատճառ» ժողովածուների հետ, որոնք «Կանոնք ընթերցուածոց»-ի և նրա խմբագրութիւնների մեկնութիւններն են: Այնտեղ տրվել են տոների ու նրանց ժամանակ ընթերցվող Հին և Նոր Կտակարանի բնագրերի վերլուծութիւնները: Այլ խոսքով այդ ժողովածուների խմբագրութիւնները Հայոց քրիստոնեական տոնացույցի այն է՝ «Կանոնք ընթերցուածոց»-ի տոնական շարքի և նրա առանձին ընթերցվածների իմաստային և բովանդակային մեկնաբանութիւններ-բացատրութիւններն են: Այդ ժողովածուների հեղինակները դրանք ներկայացնելիս հիմնվել են նախորդ շրջանի օտար և հայ հեղինակների գրած բնագրերի վրա, մեծամասամբ նրանցից վերցրել են առանձին կտորներ քաղվածաբար կամ ամբողջական բնագրեր են տեղադրել իրենց ժողովածուի մեջ կատարելով հեղինակային հավելումներ:

Փոքր ինչ հետո ցույց կտանք հիշյալ ժողովածուի սկզբնավորման ժամանակը: Մինչ այդ ասենք, որ Հայոց Տոնացույցի, այն է՝ «Կանոնք ընթերցուածոց»-ի առաջացման, որն ինչպես տեսանք տեղի ունեցավ 5-րդ դարի 20-ական թվականներից, և նոր խմբագրութիւնների ստեղծմանը զուգընթաց թարգմանվեցին մի շարք բնագրեր, որոնք վերաբերվում էին քրիստոնեական վարդապետութիւնը և նրա առանձին խնդիրների վերլուծութիւնը, ինչպես և հայ հեղինակների կողմից ստեղծվեցին առանձին տոների նվիրված մեկնութիւններ (Մամբրէ վերծանող, Եղիշէ, Պետրոս Սյունեցի, Հովհաննես Գաբրիելացի, Անանիա Շիրակացի, Հովհաննես Իմաստասեր Օձնեցի, Սողոմոն Մաքինացի, Ստեփանոս Սյունեցի, Մովսես Սյունեցի և այլն), որոնք տոների հետ կապված առանձին հարցերին էին միայն անդրադարձել, չհաշված Սողոմոն Մաքինացու կատարած աշխատանքը, որը փոքր ինչ այլ բնույթ ուներ, որին անդրադարձել ենք առանձին: Առաջին հեղինակը հայ իրականութիւն մեջ Գրիգոր Արշարունյաց եպիսկոպոսն էր, որ 7-րդ դարի վերջին կամ 8-րդ դարի սկզբներին Կյուրեղ Երուսաղեմացու «Կոչումն ընծայութեան» երկի նմանութիւնը, 34 գլուխների մեջ մեկնեց Հայոց տոնացույցի տոնական օրերը և նրանց ժամանակ կարդացվող Հին և Նոր Կտակարանի հատվածները, այն է՝ առանձին ընթերցվածները հատկապես Քրիստոսի Մենդեան և Աստուածայայտնութեան տոնից սկսած մինչև Զատիկ երկրորդ կիրակին, չհաշված նրա կատարած մասնակի մեկնութիւնները հետագա տոնական օրերի մասին: Այդ գիրքը հայտնի է «Մեկնութիւն ընթերցուածոց» անվամբ:

Ահա այդ ժամանակ է, որ հիմք դրվեց քննարկվող տոնական ժողովածուին: Պատահական է, որ ժողովածուի անունը, ինչպես կտեսնենք, հիմնականում «Մեկնութիւն ընթերցուածոց» կամ «Ընթերցուածոց մեկնութիւն» էր կամ նրա տարբերակները, իսկ ավելի ուշ՝ «Տաւնապատճառ», որն իմաստի տեսակետից, լիովին համապատասխանել է «Մեկնութիւն ընթերցուածոց»-ին: Բացի այդ քննարկվող ժողովածուի մեջ հատկապես Պահքի առանձին ընթերցվածների համար հիմք մնաց Գրիգոր Արշարունու մեկնութիւնները որոշ հավելումներով: Ասենք, որ Փ. Անթափյանը, որն առաջինը հայագիտութիւն մեջ ըստ էութիւնի բացահայտեց «Տոնապատճառ» ժողովածուների հարցը և փորձեց լուծել մի շարք խնդիրներ<sup>1</sup>, անուշադրութիւն է մատ-

<sup>1</sup> Փ. Անթափյան, Տոնապատճառ ժողովածու և Վարդան Արևելցի, Բանբեր Մատենադարանի, № 10, 1971: Նույնի, Վարդան Արևելցի գիրք Ա, գլուխ 8-րդ, էջ 208-244, Ե., 1987:

նել և չի պատկերացրել այդ ժողովածուի իրական ստեղծողի՝ Գրիգորի՝ Արշարունյաց եպիսկոպոսի վաստակը: Ի դեպ, նա բերում է 1007 թվահամարի Տոնապատճառի ընդօրինակողի կարծիքը, իբր թե Տոնապատճառն Արիստակեսին վերագրելու տարբերակը: Սակայն այն իրականութիւնը չի համապատասխանում, որովհետև գրիչը ոչ թե տոնապատճառն է վերագրում Արիստակեսին, այլ «Կանոնք ընթերցուածոց»-ը, որի պատմութիւնն է տալիս կարճառոտ: Բերենք այդ հատվածը «Ուստի սկիզբն տաւնից փրկութեան մերոյ» առաջին եպիսկոպոս (խոսք Հակոբ Տեառնաեղբոր մասին է - Ռ. Վ.) ձեռնադրեալ յառաքելոցս յԵրուսաղէմայ] անտրանիկ որդին Յովսեփայ] որ մաւտակայ էր անճառ ծննդեան նորա ի սուրբ կուսէն, և ի տաճարն ընձայելոյն, և յեզիպտոս գնալոյն փախստեամբ, և ստիւղ գիտեր գամիսն և զԱւետիսն Գաբրիէլի կոյս, և զծնունդն, և զաւր չարչարանացն, և զերկինս վերանալն, և զիջումն Հոգոյն Սրբոյ յառաքելայսն: Եւ նա կարգեաց զսկիզբն տաւնից տերունականաց զծնունդ փրկչին Յունվարի ի վեցն խորհրդաբար ընթերձաւաւք ութ աւր կանոնեալ տաւնել ամենայն հաւատացելոց Քրիստոսի: Եւ ի Յակոբա պահի մինչև ի ժամանակս Դիոկղետիանոսի Աղեքսանդրու հայրապետին: Եւ ի նմանէ աւանդեցաւ առ Անդոն անապատական: Եւ յԱնտոնէ բերեալ լինի ի մեծ ժողովն (խոսքը Նիկիայի ժողովի մասին է- Ռ. Վ.) և ընկալեալ փառաւորեցին զԱստուած, և առեալ սփռեցան իւրաքանչիւր գաւառս, յորմէ կարգէ սկսեալ, ապա, մեծին Կուրղի՝ գտաւղի փրկական սուրբ խաչն, զկարգս երախայիցն և զսուրբ աղուհացիցն ընթերձաւածսն, որ յառաջ ի գիրս անկան: Եւ ի մերոյ բերաւ աշխարհ ի սրբոյն Ռատակիսէ: Բերաւ յետո և կարգեալն ի Կուրղէ»<sup>1</sup>: Այստեղ անկասկած խոսքը գնում է «Կանոնք ընթերցուածոց»-Տոնացույցի մասին, որը գրիչը վերագրում է Յակոբ Տեառնաեղբորը և Կյուրեղ Երուսաղեմացուն, իսկ Հայաստան բերելը՝ Արիստակեսին: Առաքել գրիչը շարունակութիւն մեջ ասում է, որ այն առնելով մեկնեցին տոները և նրանց պատճառները, որոնց թվում հիշում է Զաքարիա կաթողիկոսին, որի մասին կխոսենք քիչ հետո:

Տեսնենք մեզ հասած գրչագրերի ընդօրինակողները հիշյալ ժողովածուին ի՞նչ անվանումներ են տալիս:

1007 թվահամարի ձեռագրի (XII դ.) գրիչ Առաքելն իր հիշատակարանում անուղղակի վկայել է. «Արդ զսոցա («Կանոնք ընթերցուածոց»-ից և նրա հեղինակներից - Ռ. Վ.) բանքս առեալ սրբոյ] հայրապետին մեր Զաքարիայի և այլ սրբոց վարդապետաց, լուսաւորեցին զամենայն հաւատացեալս ի Քրիստոս՝ Եւ ցուցին մեզ գտաւնս և զպատճառս (ընդգծումը մերն է - Ռ. Վ.). զՄնունդ Փրկչին մերոյ] և զԸնծայումն քառասնաւրեալ] ի տաճարին, զկարգաւորութիւն Պահոց Աղուհացից, զՅարութիւն Ղազարու, և զամենաւրեայ Գալուստն Քրիստոսի Աստուծոյ մերոյ յԵրուսաղէմ, զՓրկագործ չարչարանս և զԹաղումն երեքաւրեալ], և զՅարութիւնն Աստուածապէս, զՀամբարձումն առ հայր, և զառաքումն Հոգոյն Սրբոյ] յաշակերտսն զԱյլակերպութիւնն Աստուծոյ մերոյ] ի թափորական (լեռինն), և զՓոխումն Աստուածածնին: Կարգաւորեցին և լուսաւորեցին, զոր ինչ և զ[տ]ին անաւթ եկեղեցոյ], ի փոքրկանց մինչև զմեծամեծս: Յուցին մեզ զչարչարանս հայրապետացն սրբոց, թէ որով աւրինակաւ և զանտես տանջանս մարտիրոսացն ի տեսութիւն անին, թէ որով խորհրդով զամենայն շաքաթ աւր պարտ է տաւնել մարտիրոսաց, յայտնեցին զահաւոր, զահագին, զսոսկալի, զերկրորդ Գալուստն Քրիստոսի Աստուծոյ ահագին փառաւք՝ ի հատուցումն գործոց մարդկան»<sup>2</sup>:

Հիշատակարանի գրիչն անուղղակի տեղեկացրել է, որ իր ընդօրինակածը վերաբերվում է «Կանոնք ընթերցուածոցի» մեջ գրված տոներին և նրանց պատճառներին: Նա հիշում է Զաքար-

<sup>1</sup> Ձեռ. № 1007, էջ 466ա-բ, տե՛ս Գաև Ա. Մաթևոսյան, Գշվ. աշխ., էջ 311:  
<sup>2</sup> Ձեռ. № 1007, էջ 466բ-467ա, տե՛ս Գաև Հայերեն ձեռագրերի հիշատակարաններ Ե-ԺԲ դդ., աշխ. Ա. Ս. Մաթևոսյանի, Ե. 1988, էջ 311-312:

րիա կաթողիկոսին որպես տոնների և նրանց պատճառների մասին գրող հեղինակ, որը հաստատվում է 1007 թվահամարի գրչագրի մեջ տեղ գտած նրա յոթ բնագրերով ու առանձին քաղվածքներով՝ մյուս հեղինակների հետ կողք-կողքի: Հիշատակարանի հեղինակն այն տպավորությունն է ստեղծում, որ Ջաքարիան է այդ տոնների և պատճառների հեղինակ-խմբագիրը:

3795 թվահամարի գրչագրի (1190/1 թթ.) ընդօրինակող Փիլիպոսը երկու տեղ վկայել է.

1. «Կատարեցի զայս երգ մատենիս աստուածաին գանձարանի, որ կոչի Տաւնից պատճառ և Ընթերցուածոց մեկնութիւն»<sup>1</sup>:

2. «... որ (կոչի) Տաւնից պատճառ և Ընթերցուածոց մեկնութիւն...»<sup>2</sup>:

Գրիչը հայտնում է, որ իր ընդօրինակած ժողովածուն ունեցել է երկու անվանում, այն է՝ «Տաւնապատճառ» և «Ընթերցուածոց մեկնութիւն»: Հնագոյն անվանումը, ինչպես տեսանք, վերջին վերնագիրն է, որը գալիս է Գրիգոր Արշարունու գրքի, այն է՝ «Մեկնութիւն ընթերցուածոց» անվանումից, իսկ մյուս անվանումներն, որոնց թվում «Տաւնապատճառ» առաջացել են ուշ շրջանում, երբ խմբագրվեց և ընդլայնվեց նրա մեկնութիւնը:

1888 թվահամարի գրչագիրը (X1 դ.) վերնագրել է «Բացայայտութիւն տաւնից» (էջ 154բ):

2021 թվահամարի Տոնապատճառի ընդօրինակութիւնը Փ. Անթապյանը թվագրել է 1184 թ., հավանաբար նկատի ունենալով գրչագրում ուշ շրջանում ավելացված «գրեց... , Ուր մայիս ժԸ»-ն (էջ 182բ), սակայն բնագրում առկա է «Վասն տարեմտին Վանական (վարդապետի) ասացեալ»-ը (էջ 62ա), որը 13-րդ դարից շուտ էջը կարող մտնել այդ ընդօրինակութիւնի մեջ: Գրչագիր, թեև սկզբի էջում, նույնպես ուշ շրջանում ավելացվել է «Ձտոնապատճառ գիրքս գովելի արարեալ Կարմին ջաճորոյ սուրբ Հօրն Սամուէլի» (էջ 1ա) նախադասութիւնը, բայց 12 էջ անգրել է և սկիզբը թերի է, որովհետև սկսում է «Պատճառ տաւնի Նախավկային Ստեփաննոսի» (էջ 12ա) ենթավերնագրով: Ինչպես նկատելի է, հիշյալ ժողովածուն 13-րդ դարի վերջում անվանվել է Տոնապատճառ և վերագրվել Սամուէլ Կամրջաճորեցուն, սակայն ուսումնասիրութիւնները ցույց են տալիս, որ այն Վարդան Հաղպատեցու կազմած «Տաւնապատճառ»-ի գրված 1166-1173 թթ. ուշ շրջանի ընդօրինակութիւնն է:

1204 թվահամարի գրչագիրը ժողովածու է: Այնտեղ ներ են առել «Վերլուծութիւն ընթերցուածոց հանդերձ այլոց» վերնագիրը կրող բնագիրը: Նրա հիշատակարանում գրված է. «Թւին ՈԶ (=1231/2 թթ.) գրեցաւ Աստուածային ընթերցուածիս մեկնութիւնս ի մեծահռչակ ուխտս Սանահինս...» (էջ 324 բ):

Ակնհայտ է, որ հիշյալ բնագրի վերնագիր է ընկալվել «Վերլուծութիւն ընթերցուածոց» կամ «Մեկնութիւն ընթերցուածոց»: Այն հավանաբար եղել է Վարդան Հաղպատեցու ժողովածուի վերնագիրը, որովհետև այդ գրչագիրը իր բովանդակութեամբ հիմնականում հարում է 2021 թվահամարի բնագրին, թեև այն կարող էր կոչվել երկրորդ անվամբ՝ «Տաւնապատճառ»: Հնարավոր է մտածել, որ 5561 թվահամարի Տոնապատճառի ընդօրինակութիւնը 2021 և 1204-ի խմբից է հետագա հավելումներով: 3082 թվահամարի (1267 թ.) ժողովածուի մեջ ընդօրինակված է Տոնապատճառ, որի հիշատակարանում այն անվանվել է «...պատճառ նամակս տաւնից...» (էջ 475-478ա): 5197 թվահամարի գրչագրի գրիչը հիշատակարանում գրում է, որ «զայս գիրք Տոնապատճառ հօսքեցի բազմաց ի մի» և «... գրեցի [ի] Տաւնապատճառս ի թվին Չիթ և կազմեցաւ յաւուր վճարման Մարերի ԻԸ-ն և Հոռոմեացոց Նոյեմբեր] Դ-ն յաշնան եղանակիս...» (էջ 211ա-212ա): Պարզ է, որ ժողովածուն անվանվել է «Տաւնապատճառ», ավարտել է 1280 թ. Մարերի 28=Նոյեմբեր 4, Երկուշաբթի, իսկ Նոյեմբերի 3-ին կիրակի գիշերը երկրաշարժ

1 Ձեռ. № 3795, էջ 291բ-292ա, տե՛ս նաև Ա. Մաթևոսյան, Գշվ. աշխ., էջ 261:  
2 Ձեռ. № 3745, էջ 296ա, տե՛ս նաև Ա. Մաթևոսյան, Գշվ. աշխ. էջ 263:

է եղել: 522 թվահամարի ձեռագրի (1297/8 թթ.) գրիչ Սարգիսը իր ընդօրինակած ժողովածուն անվանել է «Պատճառ տաւնից տերունականաց» (էջ 59ա): 3931 թվահամարի ձեռագրի (1309 թ.) ընդօրինակողն իր ժողովածուն անվանել է «Նամակ Տաւնակ[ան]իս» (էջ 272-273ա): 2195 թվահամարի ժողովածուն (ԺԴ դ.) ուշ շրջանի միջամտողը կոչել է «Տոնապատճառ գիրք» (էջ 1ա), իսկ 2040-ի գրիչը՝ «Մեկնիչս ընթերցուածոցին» (էջ 137ա): Բավարարվենք բերված նյութերով: Հետևութիւնը պարզ է քննարկվող ժողովածուի վերնագիր է ընտրվել «Մեկնութիւն ընթերցուածոց» և նրա տարբերակները, իսկ հետագայում վերանվանվել է «Տաւնապատճառ» դրանք զուգահեռաբար օգտագործվել են: Այդ ժողովածուի առաջացումը կապվում է Գրիգոր Արշարունի եպիսկոպոսի հետ և նրա գրած «Մեկնութիւն ընթերցուածոց»-ը հիմք է ընդունվել հետագա խմբագրութիւնների համար և նույնիսկ վերցվել է նրա երկի վերնագիրը: Որ Գրիգոր Արշարունու «Մեկնութիւն ընթերցուածոց»-ն է հիշյալ ժողովածուի առաջացման սկիզբը երևում է «Մեկնութիւն ընթերցուածոց»-ի Ջաքարիա կաթողիկոսի խմբագրութիւնից, որը նույնպես չի նկատվել ուսումնասիրողների կողմից, այլապես հետևութիւնները հատկապես Ջաքարիա կաթողիկոսի կողմից կատարած աշխատանքների մասին կլինեին ավելի հիմնավոր և փաստարկված:

1964 թվին Վենետիկում Բ. Ջրաքյանը հրատարակեց Գրիգորիս Արշարունի քրեպիսկոպոսի «Մեկնութիւն ընթերցուածոց»-ը Գեորգ Մեղրիկի 11-րդ դարի ընդօրինակութիւնից<sup>1</sup>: Նա համառոտ նկարագրել է Գեորգ Մեղրիկի գրչագիրը և բերել նրա հիշատակարանը: Ինչպես գրչագրի ձեռագիրը, այնպես էլ Գեորգ Մեղրիկի հիշատակարանի տվյալները ուշագրավ են մի շարք խնդիրներ լուծելու համար:

Բերենք Գեորգ Մեղրիկի հիշատակարանը «ԶԳէորգ տառապեալ եւ տրուպ, գվերջին յորդիս եկեղեցւոյ, զստացող սուրբ գրոցս որ բովանդակեալ ունի յինքեան զխորհուրդս տօնից տէրունականաց, զոր սրբոց հարցն մերոց, ոգեշահ աշխատութեամբ բացայայտեցաւ ի սրբոյն Գրիգորիսէ, եւ Յովհաննիսի իմաստասիրի, և Սամուէլի վարդապետի, շարագրեցաւ ի քարտիս, ով ընթերցող յիշ[ս]ցես ողորմութեամբ զՄեղրս մեղաւոր» (էջ 27):

Վերահիշյալ հիշատակարանում Գեորգ Մեղրիկը հստակ գրում է, որ իր ընդօրինակութիւնի մեջ ներ է առել «զխորհուրդս տօնից տէրունականաց» այսինքն՝ «Մեկնութիւն ընթերցուածոց Տոնապատճառը»-ի բնագրեր, որոնք գրել են Գրիգորիսը, Հովհաննես Օձնեցին և Սամուէլ Կամրջաճորեցին: Այլ խոսքով հիշատակում է իրեն ընտրած հեղինակներին, որոնք մեկնել են տերունական տոները: Սա հարցի մի կողմն է, բայց ավելի կարևորը ընդօրինակված բնագրերն են, որոնք որոշ հատվածների վերլուծութիւնը հատկապես Գրիգոր Արշարունու աշխատանքի, ցույց է տալիս, որ Գեորգ Մեղրիկը այդ բնագիրը վերցրել է 9-րդ դարի ընդօրինակութիւնից, որը խմբագրել է Ջաքարիա կաթողիկոսը: Ըստ Բ. Ջրաքյանի Գրիգորիսի «ընթերցուածոց մեկնութիւն»-ը բաժանված է 34 գլուխների: 15-րդ գլուխը վերնագրված է. «Թէ զի յուրբաթու եւ ի չորեքշաբթու ընթերցուածի»: Կասկած չի կարող լինել որ այդ գլխի մի մասը գրել է Գրիգորիս Արշարունին այն է՝ «նոյնպէս երկուքն, որոշ ընթերցուածքն յուրբաթուն»... մինչև «և յուրբաթուն զմուտն ի դրախտն փիլիսոփային վկայութեամբ» (այսինքն՝ Գրիգոր Արշարունուց և ոչ Հոբի, ինչպես կարծել է Գ. Ջրաքյանը), որից հետո խմբագիրը շարունակում է «բայց զի ի բնագրին ոչ գտանի, մեզ անընդունելի է: Իսկ մերն այս է, թէ զոր օրինակ լուսաւորացն տարրն զմարդկային բնութեանս ցոյցս ունէր, որպէս Յակոբ պարտէ լուծանելով զեխաղն արեգական, լուսնոյ եւ աստեղաց Յովսեփու, այսպէս եւ զգալի լոյսն պարզ եւ տարած երբեակ թուով աւուրցն զխորհուրդ երրորդութեանն յինքեան ուներ եւ զոր օրինակ զգալի լոյսն ի չորրորդ աւուրն ժողովեալ ի նիւթն, նոյնպէս եւ իմանալի լոյսն ի հօրէ՝ ի չորեքշաբթուն աւետա-

1 Տե՛ս Գրիգորիսի Արշարունու քրեպիսկոպոսի Մեկնութիւն ընթերցուածոց, Վենետիկ, 1964:

րանցաւ Կուսին, ծագեալ մեզ ի նմանէ արեգակն արդարութեան եւ լուսաւոր առեալ զխաւար մեր: Որպէս ի չորրորդի՝ կենդանեաց լինել, եւ ստեղծուած Կնոջն որով կեանքն յայտնեցան, սա եւ ի չորեքհազարին աւետարանի, աւետեօքն Աբրահամու առ Սառա խորհրդաբար եւ ի վեց հազարիս ճշմարտապէս աւետարանեցաւ ի Գաբրիէլէ սրբոյ կուսին Մարիամու յաւուր չորեք- շաբաթու, որպէս յայտնի եւ հինգհարիւրեակ բոլորակէն:

Եւ եթէ կամիս գտանել զօրն, կալ երկերիւր եւթանասուն եւ ինն եւ արա եւթներեակ հո- ուոմի եւ օրագիւտ արա ապրիլի եւթանն, եւ գտանէս չորեքշաբաթ զօրն աւետեաց: Նոյնպէս եւ զծննդեանն օր՝ թէ կամիս գտանել յաւել ի նոյն թուականն թիւ մի, արա եւթներեակ, նոյնպէս եւ օրագիւտ յուսուարի վեցին, որպէս եւ իւր կարգն է, եւ գտանէս հինգշաբաթ զօրն ծննդեանն եւ յայտնութեան Փրկչին: Որպէս եւ ի հինգերորդ աւուրն ջուրցն հանել զեռուն շնչոց կենդա- նեաց, որ օրինակ է զմկրտութեամբ ծնունդն որդւոյ մարդկան եւ այսպես ի կարգ անկեալ ա- լուրքն ունէին չորեքշաբաթն զաւետիսն, հինգշաբաթն՝ զծնունդն, ուրբաթն՝ զխաչելութիւնն, շաբաթն, զթաղումն, կիրակեն՝ զյարութիւնն: Զի որ օրինակ հինգօրեա պահովք յուրբաթն մահու կցորդ լինիմք նոյնպէս հինգօրեա խորհրդոյս զօրութեամբ՝ եւ յարութեանն հաղորդ լի- ցուք փոխել յեւթներեակէն ի նոր ութներեակն: Եւ չէ պարտ հաւանել ոմանց որ աւելի թուա- կանս լուսնականս եւ արեգակնայինս ցնորին ի քաւութեանն օրէ յառաջ, եւ ի կաւրոտ ոչ կարեն անել, որք զաւետիսն ի մարտի քսան եւ հինգ ասեն, եւ ջանան զօրն չորեքշաբաթ առնել, եւ զծնունդն ի դեկտեմբերի քսան եւ հնգին, և զօրն ուրբաթ եւ առնել ոչ կարեն զի թէ հինգհա- ռիւրեակ բոլորակդ ճշմարիտ է զօր եկեղեցւո Աստուծոյ ընկալեալ է. եւ զչարչարանս Փրկչին ե- րեք հարիւր տասն եւ երիս թուականին եղեալ է, որպէս յերեքհարիւրտասն եւ չորսն՝ ըստ պա- տուականութեան՝ զապրիլի զչորսն, ապա եւ այս անշարժելիք են. զի մինչ ունիս զայս թուա- կան եւ երեսուն եւ երիս հանես, վասն զի երեսուն եւ չորրորդն ի թուականին պիտի լինել, յու- նուարի վեցն հինգշաբաթ լինի եւ մինչեւ երեսուն եւ չորս հանես, ապրիլի եւթն չորեքշաբաթ եւ եթէ ըստ երբայեցուցն՝ լուսնականաւքն կամիս գտանել զօր քաւութեանն, որ է պապանձ- մանն Զաքարիայի եւ զգաճն ի տուն իւր եւ զաւետիս Մարիամու Աստուծածածինն ի հրեշտա- կէն, ապա այսպէս, կալ երկերիւր եւթանասուն եւ ութ (զհոռոմին) թուական, եւ այս թուական է որ ըստ Հռոմին (տաւմարի) զաւետեացն զօրն ի չորեքշաբաթու, եւ զծննդեանն յուրբաթու ածէ ի մարտ, և ի դեկտեմբերի ի քսան եւ հինգ: Բայց, աստի ի չարչարանացն ամ երեսուն եւ վեց ամ լինի, եւ թէ պատեհ ոք կարծէ, ինքն գիտասցէ, բայց այլ չգտանի որ ընդ հինգհարիւրեակ բոլորակին զուգաւորի, բայց դու կալ զնոյն թուական եւ արա զվերադիր հոռոմի ամսոյ, եւ լինի մի թիւ վերադիրն, եւ արա մարտի ամսոյ ծնունդ, եւ գտանես ի քսան եւ ինն նոյն ամսոյ զծնունդն, եւ այն էր երբայեցուցն սկիզբն տարւոյն որ կոչի նիսան, առաջին ամիսն եւ ապա կալ հարիւրեւթանասուն եւ եօթն օր եւ այն լինի վեց ամիս լուսնական եւ տասն այլ որ է քա- ւութեանն օր՝ յեւթներորդ ամսեանն եւ Հռոմին հոկտեմբերի ամսոյ է մի օր եւ հնգետասան եր- րայեցուցն տաղաւարահարացն՝ որ է հոկտեմբեր վեց, եւ ի քսանեւ երկու թշրին ամսոյ՝ կատա- րումն տօնին եւ դարձն Զաքարիայի ի տուն իւր վասն զի յերեկօրեա հրամայէր սկսանել տօնին, որ է հոկտեմբերի երեքտասան, եւ կալ դարձեալ հարիւր եօթանասուն եւ հինգ օր եւ լինի վեց ամիս լուսնական, ըստ հրեշտակինն բանի սա Մարիամ զեղիսաբեթէ, եւ տուր ի նոյն ամսոյ ե- րեքտասան յառաջիկայ ամսոցն եւ բավանդակի յապրիլի ամսոյ վեցն աւետիք հրեշտակին առ Մարիամ որոյ օրն լինի չորեքշաբաթ երկերիւր եւթանասուն եւ եւթն թուականաւն, բայց նոցա երկօրին քսան եւ հինգն վրէպ են յաւուրցն զոր կամի, թէ եւ տարեալ ի վերջ երթան կամ յա- ուաջ, զի զայլն զինչ եւ առնէնն չէ ճշմարիտ, մինչ ընդ հինգհարիւրեակ բոլորակին թուականին չմիաբանին, որով ապրիլի ի հնգետասանն պիտի գալ երեսուն եւ չորիւք ամօք, որում չարչա- րանք Փրկչին, զի որպէս զմուտ պահոց ի Զատկէն պարտ է առնել. այսպէս զաւետիսն եւ զծնունդն՝ ի չարչարանացն ամէ (էջ 115-118):

Վերոհիշյալ հատվածը համարում ենք Զաքարիա կաթողիկոսի խմբագրութունը, ոչ միայն այն պատճառով, որ 1007 թվահամարի ձեռագրի ընդօրինակողը նրան է վերագրում Տո- նապատճառի հաջորդ խմբագրութունը, որը լրացուցիչ փաստարկ է միայն, այլ հետևյալ փաստերի հիման վրա: Նախ «Մեկնութիւն ընթերցուածոց»-ի խմբագիրը բերել է Գրիգոր Ար- շարունու շարադրանքը, ապա շարունակում, որ «մերն այս է» և շարադրում իր ասելիքը, որ- տեղ հիմնվելով ՇԼԲ զատկացուցակի 313 և 314 թվականների վրա, որոնք համարժեք են ներկա 865 և 866 թվականներին, հիմնավորել Քրիստոսի Ծննդի, Ավետեաց Աստուծածածնի և Քրիստո- սի չարչարանաց օրվա ամսաթվերը և շաբաթվա օրերը տարիների կտրվածքով: Նման հաշ- վումներ, իհարկէ, կարող էր կատարել Գրիգոր Արշարունին, սակայն ՇԼԲ-ի այդպիսի թվեր չէր կարող օգտագործել: Նա կիրառեւ ՇԼԲ-ի իր ապրած տարիների տարեթվեր, որոնք առկա են ՇԼԲ-ում: Այնպես որ այդ հաշվումները կատարել է մի հեղինակ, որն ապրել է 9-րդ դարի 60- ական թվականներին: Այդպիսի հեղինակ՝ կապված Մեկնութիւն ընթերցուածոցի խմբագրու- թյան հետ, ինչպես տեսանք, հիշատակվում է միայն Զաքարիա կաթողիկոսը: Վերջինս խմբագ- րել է այդ ժողովածուի հիմք հանդիսացող Գրիգոր Արշարունու «Մեկնութիւն ընթերցուածոց»-ը ավելացնելով տոնական օրերը և նրանց առանձին ընթերցվածների մասին նոր մեկնութուններ: Պատահական չէ, որ հնագույն «Մեկնութիւն ընթերցուածոց»-«Տաւնապատճառի» ընդօրինա- կութունների, այն է՝ 1007 և 3995 թվահամարների գրչագրերի մեջ տեսնում ենք Զաքարիա կաթողիկոսի յոթ աշխատանքների հիշատակութունն առանձին կամ խառն: Այսպես.

1. «Սուրբ վարդապետացն ասացեալ Յոհաննու Ոսկեբերանի, Եփրեմի, Մամբրեի, Զաքա- րիայի եւ Ստեփանոսի ի Գալուստն Տեառն յերուսաղէմ»<sup>1</sup>:
2. Ի մեծի աւուրն երկուշաբաթի երանելոյն Զաքարիայի Հայոց կաթողիկոսի եւ այլոց վարդապետաց ասացեալ»<sup>2</sup>:
3. Ի մեծի աւուրն երեքշաբաթի Զաքարիայի Հայոց կաթողիկոսի<sup>3</sup>:
4. «Ի մեծի աւուրն ուրբաթուն Զաքարիայի Հայոց կաթողիկոսի և այլոց սրբոց ասա- ցեալ»<sup>4</sup>:
5. «Թեոփիլոսի եւ Զաքարիայի ասացեալ ի Թաղումն Տեառն»<sup>5</sup>:
6. Յաղագս Համբարձմանն երանելոյն Եփրեմի, Յոհանու Ոսկեբերանի, Զաքարիայի և Ստեփանոսի ասացեալ»<sup>6</sup>:
7. Զաքարիայի Հայոց կաթողիկոսի՝ ի փոխումն Աստուծամաւրն»<sup>7</sup>:

Վերոհիշյալ գրչագրերը համարում ենք Սամուել Կամրջաձորեցու ժողովածուի ընդօրինա- կութուններ հետագա որոշ հավելումներով, սակայն քննութիւնը ցույց է տալիս, որ Զաքարիա կաթողիկոսը 9-րդ դարի 60-ական թվականներին խմբագրել է «Մեկնութիւն ընթերցուածոց»-ը և ավելացրել իրեն հետաքրքրող, տոնների մեկնութիւնները, որից հետագայում օգտվել է Սամ- վել Կամրջաձորեցին թերևս Զաքարիա կաթողիկոսի բնագրերից ավելացնելով նորերը՝ միացնելով այլ հեղինակների երկերի հետ: Այլ խոսքով անկասկած է, որ «Մեկնութիւն ընթերցուածոցի» հաջորդ խմբագիրը Զաքարիա կաթողիկոսն է:

1 Ձեռ. № 1007, էջ 206ա, 3795, էջ 135ա:  
2 Ձեռ. № 1007, էջ 230ա, 3795, էջ 148ա:  
3 Ձեռ. № 1007, էջ 236բ, 3795, էջ 151բ:  
4 Ձեռ. № 1007, էջ 265բ, 3795, էջ 168ա:  
5 Ձեռ. № 1007, էջ 284ա, 3795, էջ 178ա:  
6 Ձեռ. № 1007, էջ 337բ, 3395, էջ 190բ:  
7 Ձեռ. № 1007, էջ 429բ, 3795, էջ 241բ



Հաջորդ հեղինակը, որը մասն ունի «Մեկնութիւն ընթերցուածոց»-«Տաւնապատճառի» կազման և խմբագրութեան մեջ դա Սամուել Կամրջաձորեցին է, որն այն իրականացրել է 10-րդ դարի վերջերին 11-րդ դարի սկզբներին: Այդ մասին աներկբա գրել է, ինչպես տեսանք Գեորգ Մեղրիկը: Թե ինչ է ավելացրել հիշյալ ժողովածուի մեջ Սամուել Կամրջաձորեցին նույնպես Հայտնի է դառնում Գեորգ Մեղրիկի գրչագրից, որը գրել է 11-րդ դարի վերջում, «Մեկնութիւն ընթերցուածոց»-«Տաւնապատճառ»-ի մեջ Սամուել Կամրջաձորեցու ներդրումն ըստ Գեորգ Մեղրիկի հետևյալ բնագրերն են՝

1. Յաղագս տօնից տերունականաց:
2. Յաղագս առաջին աւուրն:
3. Յաղագս քառասնօրեայ ի տաճարն ընծայելոյն:
4. Յաղագս առաջաւոր պահոցն:
5. Յաղագս քառասնեկի պահոցն:

Հիշյալ բնագրերը տարբեր անվանումներով առկա են քննարկվող ժողովածուի բազմաթիվ ընդօրինակութիւններին մեջ, սակայն անկասկած է, որ 1007, 3795 մասամբ 1888 թվահամարի (նկատի ունենք Առաջավորի պահքի հատվածները) գրչագրերն Սամուել Կամրջաձորեցու խմբագրութեանն են պատկանում: Հաջորդ հեղինակը, որ տալիս է Սամուել Կամրջաձորեցու կազմած ժողովածուի, որ նա անվանել է «պատճառ պատճենից», բովանդակութիւնը Մատթեոս Ուռհայեցին է: Նա 1007 թվականին ծագատիկի վեճերի կապակցութեամբ գրել է. «Եւ սկիզբն արար Սամուել յառաջին աւուրն յարարչութենէ և գայր հասանէր մինչև ցվերջին պատկեր օրն ու զամենայն պատճառ պատճենից ըստ առաջին իմաստնոցն հաստատուն կացուցաներ»<sup>1</sup>:

Մատթեոս Ուռհայեցին ծագատիկի վեճը օգտագործելով տվել է Սամուել Կամրջաձորեցու կազմած ժողովածուի՝ «պատճառ պատճենից»-ի, այն է՝ մեկնութիւն ընթերցուածոց-Տաւնապատճառի բովանդակութիւնը, որը ներածութիւնից և Ավագ տոններից հետո, իբրև նախապատրաստական հատված, անցել է Քրիստոսի Մննդեան և Աստուածայայտութեան տոնին, իբրև տոնական տարվա սկիզբ և ավարտել տարվա մյուս տոների մեկնութեամբ, իսկապես օգտագործելով առաջին իմաստունների մեկնութիւնները: 1007 և 3795 թվահամարների գրչագրերը կան ամբողջական բնագրեր կամ դրանց առանձին հատվածների ավելի քան քսան հեղինակութիւններին, որոնց թվում օտար հեղինակներից՝ Աթանաս Ալեքսանդրացու, Եփրեմ Ասորու, Կյուրեղ Երուսաղեմցու, Հովհան Ոսկեբերանի, Անդրեասի, Պրոկլի, Նեքտառեա, Թեոփիլոսի, ինչպես և Հայ հեղինակներին՝ Մամբրե Վերծանող, Գրիգոր Արշարունի, Հովհան Իմաստասեր-Օձնեցի, Ստեփանոս Սյունեցի, Զաքարիա կաթողիկոս, Յովհաննես Դրասխանակերտցի, Անանիա Նարեկացի, Սամուել Կամրջաձորեցի, Հովհաննես Կոզեռն Տարոնացի, Սարգիս, Պողոս Տարոնացի (վերջինները ավելացվել են հետագա խմբագրութեան ընթացքում): «Հարցումն Վահրամայ վարդապետին եւ պատասխանի վարդապետին Վանականայ» բնագրի մեջ գրված է. «(Հարց). զՀայ գրեանքդ ո՞վ եղեալ: (Պատասխան). ՁՏօնականն՝ Մաքենացի Հայրն Սողոմոնի, զՏօնացոցն՝ Վարագայ Հայրն Ատոմ, զՏօնապատճառն՝ Կամրջակձորոյ Հայրն Սամուէլ, զՆերբողեանն՝ Գրիգորէս Վկայասէրն»<sup>2</sup>: Մեկ այլ հարց ու պատասխանիքի մեջ գրված է. «(Հարց) զՀայագիր գրեանքդ ո՞վ է կարգեալ:

Պատասխան. զՏաւնականն՝ Մաքենոցին Հայրն Սողոմոն, զՏաւնապատճառն՝ Կամրջաձորոյ Հայրն Սամուէլ, զՆերբողեանն՝ Գրիգորիս Կլակեցին Վկայասերն»<sup>1</sup>:

Ակնհայտ է, որ մեջբերված բնագիրը Վանական վարդապետի հարց ու պատասխանիքի տարբերակ է: Մխիթար Այրիվանեցին 1001 թվի տակ գրել է. «Աստ Ստեփաննոս Ասողիկ պատմագիր և Արիստակես Լաստիվերտացի և Սամուէլ Հայրն Կարմնջաձորոյ զտօնացուցակն յօրինէր և սուրբ Հայրն Ատոմ Վարագեցի ըզհոռմագիրն կարգաւօրէր, իսկ Հայրն Սիմէոն արար զԱղամագիրքն (այլ օր արար զԱղամ գիրսն) հարիւր և մետասան ճառ ի խնդրոյ Սենեքերիմայ՝ թագաւորին Վասպուրականի: Տիմոթ վարդապետն արար զմեկնութիւն Արարածոց»<sup>2</sup>:

Այստեղ Մխիթար Այրիվանեցին կամ Տօնացուցակի տակ հասկացել է Տօնապատճառը կամ պարզապես շփոթել է Տօնապատճառը Տօնացուցակի հետ, քանի որ մյուս սկզբնաղբյուրներում խոսքը գնում է Սամուել Կամրջաձորեցու կողմից Տօնապատճառ ժողովածու կազմելու մասին:

Այսպիսով սկզբնաղբյուրների քննութիւնը հնարավորութիւն է տալիս վերականգնել «Մեկնութիւն ընթերցուածոց»-ի (Տօնապատճառի) հեղինակներին՝ Գրիգոր Արշարունուն, Զաքարիա Կաթողիկոսին և Սամուել Կամրջաձորեցուն և նրանց ներդրումը հիշյալ ժողովածուի ստեղծման և խմբագրման գործում:

Մյուս հեղինակն, որ մաս ունի «Մեկնութիւն ընթերցուածոցի» կազման և խմբագրման մեջ Արիստակես Լաստիվերտցին է, որն անկասկած կատարել է 11-րդ դարի 2-րդ կեսին:

Գուրգեն Մանուկյանը Փարիզից՝ Սիրարփի Տեր-Ներսիսյանից ստանալով գրչագրի պատճենը «Էջմիածին» ամսագրում ներկայացրել է իր նախնական դիտողութիւնները: Նա գրում է, որ Փարիզից ազգային գրադարանի նախկին 93 թվահամարի ձեռագիրը երկու մասի է բաժանված, մի մասը այժմյան 174 թվահամարի ձեռագիրն է, մյուսը կրել է «Հայկական հավելված», 106 համարը (այժմ N° 303), որտեղ գտնվում է Լաստիվերտցու «Մեկնութիւն ընթերցուածոցը»<sup>3</sup>:

Հիշյալ ձեռագիրն ընդօրինակվել է Հայոց ՈԶ թվականին, որը համարժեք է ներկա 1231-1232 թվականներին, Հռոմկլայում, Թորոս գրչի ձեռքով, Դավիթ եպիսկոպոսի պատվերով: Ձեռագիրն ունի «Լաստիվերտցոյն՝ Մեկնութիւն ընթերցուածոցի, թերևս «ընթերցուածոցէն» խորագիրը: Այն սկսվում է հետևյալ տողերով «Տէր մեր Յիսուս Քրիստոս ծնալ ի սուրբ կուսէն, զի զհնացեալ արարածս վերստին նորոգեսցէ», իսկ վերջը թերի է՝ «Զի երբեակ տերութեան...»:

Գ. Մանուկյանին թվում է, որ Մեկնութեան վերջից առանձնապես շատ պակաս է, քանի որ Հիսուսի ծննդյան և Հայտնութեան 8-րդ օրվա կապակցութեամբ (թվափատութիւն) արդեն ընդարձակ տրված է: Եւ քանի որ 5-րդ, 6-րդ և 7-րդ օրերի մասին գրածները շատ ծավալուն չեն, ուրեմն դժվար թե Լաստիվերտցին միայն վերջին օրվա կապակցութեամբ շատ լայն մեկնութիւն գրեր<sup>4</sup>: Գրչագրի վերնագրից դատելով, այն է՝ «Լաստիվերտցոյն՝ Մեկնութիւն ընթերցուածոցի» կամ «ընթերցուածոցէն», կարելի է միանշանակ պնդել, որ Արիստակես Լաստիվերտցին գրել է ամբողջական «Մեկնութիւն ընթերցուածոց», որից, հնարավոր է, որ գրիչը վերցրել է սկիզբը՝ Քրիստոսի Մննդեան և Աստուածայայտութեան 8 օրերի մասը, եթե «ընթերցուածոցէն» տարբերակն ընդունենք, որից էլ 8-րդ օրվա հատվածը պակասավոր է: Մնում է սպասել նոր ամբողջական գրչագրի, որպեսզի պատկերացում կազմենք այդ բնագրի մյուս օրերի մեկնութիւնների մասին, մանավանդ Հայտնի է, որ Արիստակես Լաստիվերտցին գրել է տոնական այլ օրերի

1 Մատթեոս Ուռհայեցի, Պատմութիւն, էջ 54-55:  
2 Ձեռ. N° 774, էջ 153բ-154ա:

1 Ձեռ. N° 836, էջ 106բ:  
2 Մխիթարայ Այրիվանեցոյ Պատմութիւն Հայոց, ի լոյս ընծայեաց Մկրտիչ Էմին, Մոսկվա, 1860, էջ 57:  
3 Տե՛ս Գ. Մ. Մանուկյան, «Լաստիվերտցոյն՝ Մեկնութիւն ընթերցուածոց», Էջմիածին, 1969, Ե, էջ 36-43:  
4 Տե՛ս Գ. Մ. Մանուկյան, Ազգ. աշխ. աղ. էջ 38:



մասին մեկնություններ, որոնք կարող էին «Մեկնութիւն ընթերցուածոց»-ի հատվածներ լինել: Այլ խոսքով Արիստակես Լաստիվերտցին իր մասն է բերել «Մեկնութիւն ընթերցուածոց»-ի նոր խմբագրման մեջ:

Հաջորդ հեղինակը, որ խմբագրել է «Մեկնութիւն ընթերցուածոց»-«Տաւանապատճառ» ժողովածուն Վարդան Հաղպատեցին է:

1897 թվահամարի ձեռագրի ընդօրինակող Խաչատուրը, որը ըստ Փ. Անթապյանի, Վարդան Հաղպատեցու աշակերտներից մեկն է, գրել է. «Ես նուստս յորդիս եկեղեցւոյ Խաչատուր, բազում փութով հարցանէր՝ խնդրելով զպատճառս գրեանց սրբոյն Գրիգորի Նիւսացւոյ գտանել, և յորովս լուսայ ի կենդանի ձայնից պատճառս այլ և այլս առանձին ամենայն գրեանցն Նիւսացւոյ: Իսկ վարդապետն իմ Վարդան եցոյց ինձ գրեալ յիւրում Տաւանապատճառին զոր ինք իսկ հաստատեալ էր ի Տէր Ներսիսէ հայոց կաթողիկոսէ, և զնոյն գտեալ յաւրինակէ, և գրեալ այսպէս՝ թէ Գրիգոր աստուածաբան զերկոտասան ամ եկաց ի Բիւզանդիայ և մաքրեաց զքաղաքն յամենայն հրճուածողացն»<sup>1</sup>:

Խաչատուրի վկայությունից երևում է, որ Վարդան Հաղպատեցին, ոչ միայն կազմել է «Տաւանապատճառ» ժողովածու, այլ հաստատել է տվել Ներսես Շնորհալուն (1166-1173 թթ.): Նրա տեղեկությունից երևում է, որ Վարդանի կազմած Տոնապատճառում եղել է Գրիգոր Նյուսացու և Գրիգոր Աստվածաբանի բնագրերից: Հիշյալ վկայությունը թույլ է տալիս գտնել Վարդան Հաղպատեցու կազմած Տոնապատճառի գրչագրեր:

2021 թվահամարի ձեռագրի ընդօրինակությունը, թեև ուշ շրջանում վերագրվել է Սամուել Կամրջաձորեցուն, սակայն այն Վարդան Հաղպատեցուն է կամ ավելի ճիշտ ուշ շրջանի նրա խմբագրությունը: Այդ գրչագրում ունենք հետևյալ բնագրերը.

1. «Պատճառ Քրիստոս ծնեալ ճառին» (էջ 38ա):
2. «Գրիգորի Աստուածաբանի» (էջ 42ա):
3. «Պատճառ Սուրբ Աւետարանին Մատթէոսի, ասացեալ Տեառն Ներսիսի կաթողիկոսի» (էջ 49բ):
4. «Աւետարան ըստ Մատթէոսի եւ ի ծնանելն Յիսուսի ի Բեղղահեմ Հրէաստանի (էջ 57ա):
5. «Պատճառ բանից Գրիգորի Աստուածաբանի որ ասէ ի պահու իմում կա» (էջ 163ա):

Խաչատուր գրչի վկայության և հիշյալ գրչագրի բնագրերի համադրությունը թույլ է տալիս պնդել, որ 2021 թվահամարի տոնապատճառը Վարդան Հաղպատեցու կազմած տոնապատճառի խմբագրություններից է: Ուշագրավ է, որ Վարդան Հաղպատեցին բերել է Գրիգոր Նյուսացու և Գրիգոր Աստվածաբանի բնագրերը, այլ Ներսես Շնորհալունը: Վերջինիս Մատթէոսի Աւետարանի մեկնությունը գրվել է Գեորգ Հաղպատեցու խնդրանքով, որն և տեղադրել է իր կազմած Տոնապատճառում:

Կարծում ենք, որ 1204 թվահամարի ձեռագրում գետեղված «Վերլուծութիւն ընթերցուածոց հանդերձ այլոց»-ը նույնպես կապված է Վարդան Հաղպատեցու կազմած Տոնապատճառի հետ: Այն ընդօրինակվել է հայոց ՈԶ (= 1231/2 թթ.) թվականին Սանահինում և բովանդակությունն մեջ ունի վերահիշյալ բնագրերից երկուսը, այն է՝ 1. Պատճառ Քրիստոս ծնեալ ճառին (էջ 279 ա) և 2. «Այսպէս վերայգրեալ Գրիգորի Աստուածաբանի Նազիազու եպիսկոպոսի՝ յայտնութիւն Տեառն» (285բ):

Ակնհայտ է, որ գտնված է Վարդան Հաղպատեցու Տոնապատճառի խմբագրության ձեռագրեր, որոնց համադրությունը միմյանց և այլ բնագրերի հետ հնարավորություն կտա վերականգնելու նրա կազմած տոնապատճառի նախնական խմբագրությունը, որը հետագա ուսումնասիրության խնդիր է: Մի բան պարզ է, որ 1166-1173 թթ. սահմաններում Վարդան Հաղպատեցին կազմել է Տոնապատճառ ժողովածու և նույնիսկ հաստատել տվել Ներսես Շնորհալուն:

Տոնապատճառի կազմության մեջ իրենց ավանդն ունեն Գրիգոր Գանձակեցին (1190 թ.), Հովհաննես Գանձակեցին (XIII դ.)<sup>2</sup>, Քերոբ վարդապետի և այլոց կողմից:

Ի դեպ 1204 թվահամարի գրչագրում (1231/2 թթ.) կարդում ենք 1. «Պատճառ յովանակճեմ գալստեան Տեառն մեր Յիսուսի Քրիստոսի ի սուրբ քաղաքն Երուսաղէմ՝ յԱստուածաշունչ գրոց և ի հոգեւից մեկընչաց և ի բանիբուն վարդապետաց ժողովեալ Քերոբի ումեմն անպիտան աշակերտի: Բանից բանին Յիսուսի, զոր մեծաւ աշխատութեամբ հաւաքեցի սակաւս ինչ ի մէնջ յաւելեալ է բանն, որ ասէ եւ գան յերիքով» (էջ 242ա): 2. «Սկիզբն և պատճառ առակաւոր բանիցն Սողոմոնի յայն որ ասէ. ունայնութիւն ունայնութեան և զոր կամիցի ոք ի նոյն գրոց նորին Քերոբի աւաք» (էջ 258բ): 2021 թվահամարի ձեռագրում գրված է. «Պատճառ գալստեան Տեառն յերուսաղէմ ի բազում աւրինակաց հաւաքեալ ի Քերոբ վարդապետէ» (էջ 117ա): Մենք այն տպավորությունն ենք ստանում, որ Քերոբ վարդապետը ժամանակակից է Վարդան Հաղպատեցուն և նրա գործակիցն է եղել, որովհետև նրա հնագույն հավաքածուները գտնվում են Վարդան Հաղպատեցու Տոնապատճառում կամ էլ գործել է մինչև 1231/2 թթ., որովհետև նրա հավաքած բնագրերը գտնվում են 1204 թվահամար ձեռագրում: Այլ խոսքով Քերոբ վարդապետի գործունեության շրջանը կապված է 1166-1232 թթ. միջոցի հետ:

Տոնապատճառ ժողովածուի խմբագրման մեջ իր ավանդն է բերել Վարդան Արևելցին, որն հիմնավորել է Փ. Անթապյանը<sup>3</sup>:

Վերջինիս փաստարկները մանրամասն շարադրելու անհրաժեշտությունը չկա միայն բերենք 4139 թվահամարի Տոնապատճառի հիշատակարանի, որից հետո նոր տվյալներով փորձենք հաստատել Փ. Անթապյանին:

1267 թ. Հաղպատում ընդօրինակված 4139 թվահամար ձեռագիրը Վարդան Արևելցու «կազմած «Տոնապատճառ»-ն է հենց և հիշատակարանը գրել է ձեռագրի գրիչ՝ Տիրացուի կողմից, որը, ինչպես գիտենք, այդ նույն Վարդանի անմիջական աշակերտն է»<sup>4</sup>: Բերենք 4139 թվահամարի Տոնապատճառի հիշատակարանը.

«Ի մերումս բացափայլեալ ժամանակի յամենեցունց ոգիս (Վարդան վարդապետ-Փ. Ա.) արեգակնածագ փայլմամբ նշողիւք լուսաւորել ըստ բացման աչաց և ականջաց ներքին մարդոյն՝ արանց, միանգամայն և կանոնցն մեծաց և փոքունց, եկեղեցականաց և աշխարհականաց և ամենայն չափս հասակի, նաև օտարալեզուցիս: Եւ այսպես երկար ժամանակ ի ծերութիւն հասեալ և [ան]պայման բարի քաղաքավարութեամբ կեցեալ ըստ կամացն աստուծոյ ի զար[դ]-յեկեղցւոյ և ի պարծանս ուղղափառ հաւատացելոց: Փոխեցաւ ի հանգիստն արդարոց, յիշատակ նորա օրհնութեամբ եղիցի առաջին աստծոյ:

Վասն որոյ հոգ տարեալ սա յոյժ եկեղեցւոյ, նորին մանկանց՝ վերածնելոց ի Քրիստոս, և բազում ինչ բան թիւրեալ ի սուրբ գիրս յուղղեաց ի մեկնչաց սրբոց, նաև՝ զՍաղմոսն գլխովն և զերկարութիւն յայլ և յայլ մեկնչաց ի մի վայր ժողովեալ կարճ և համառոտ բանիւ սեփականել դիւրահաս ընթերցողաց, որպէս և զայս մեծ հոգևոր բուրաստանս ամենալիր ծաղկոցացս՝ պատ-

1 Ձեռ. № 3395, էջ 96ա:  
2 Տե՛ս Փ. Անթապյան, Աշխ. աշխ., էջ 237:  
3 Փ. Անթապյան, Աշխ., հ. Ա., էջ 238-244:  
4 Անթ., էջ 239:

1 Ձեռ. № 1897, էջ 108ա, տե՛ս նաև Փ. Անթապյան, Աշխ., հ. Ա., էջ 238:

ճառս տաւնից տէրունականաց՝ (ընդգծումը մերն է - Ռ. Վ.), Հավաքմունք սուրբ բանասիրաց... որով և ես ի[սկ] յամենայնի անարժանս և անպիտանս, որ Տիրացու անուանեցա[յ] ի նորին աշակերտացն, որ և ի սա աշխատեցայ և ըստ կարի իմում ջանացա[յ] զՏերունական տաւնից պատճառն որ և ի սա գծագրեցաք ... Հռչակաւոր սուրբ ուխտիս ի յաստուած[կառոյց] ... Հաղթատ, թուին Հայոց ՉԺԶ (1267) ... տէրունական սուրբ և աստուածընկալ նշանիս ... և այլ սրբոցս, յաթոռակալութեանս տէր Յովհաննիսի մեծի Հոգևորի «սուրբ վերադիտողի...»<sup>1</sup>:

Տիրացուն «Տօնապատճառն» ընդօրինակել է Վարդան Արևելցու մահից, այն է՝ 1271 թ. Հետո, բայց հիշատակարանի տարեթիվը թողել է բնագրի տարեթիվը, այն է՝ 1267/8թթ.: Դրանով իսկ կարելի է ասել, որ Վարդան Արևելցին Տօնապատճառի կազմելը վերջացրել է 1267/8 թթ.: Եթե ընդունելի չլինի այս բացատրությունը, ապա հիշատակարանի տասնավորն է շփոթված ՉԺԶ-ի փոխարեն ՉԻԶ (= 1277/8թթ.), ինչպես գրել է Փ. Անթապյանը: Կարծում ենք առաջին տարբերակն է ավելի մոտ ճշմարտությանը: 4139 թվահամարի գրչագրում Վարդան Արևելցին օգտագործել է իր իսկ կողմից գրված ներբողյանը նվիրված Հովհաննես Մկրտչին: Նա «Պատճառ սրբոյն Յովհաննու Կարապետին» ենթավերնագրի տակ գրել է իր ներբողյանը, որն սկսում է «Բազմադիմի են ճանապարհ իմաստութեան...»<sup>2</sup>: Սակայն բնագրում չի հիշատակվում հեղինակի անունը: Հ. Տաշյանին հայտնի է եղել «Ներբողեան Վարդանայ ի Յովհաննէս Մկրտչ...» («Բազմադիմի են ճանապարհ իմաստութեան...»)<sup>3</sup>, որը վերոհիշյալ բնագրի ընդօրինակությունն է: Փ. Անթապյանը ձեռքի տակ չի ունեցել այդ բնագիրը, որպեսզի հետազոտություն կատարի Հանգամանորեն: Մեզ հաջողվեց գտնել հիշյալ բնագրի ընդօրինակությունը, որտեղ այդ ներբողյանը վերագրվել է Վարդան Արևելցուն, ինչպես կտեսնենք քիչ հետո: Այժմ մի քանի խոսք այդ ձեռագրի մասին: 2695 թվահամարի ձեռագիրը Յայսմավուրք է, ընօրինակված 14-րդ դարում: Այդ բնագրի ուսումնասիրությունը ցույց տվեց, որ այն Տեր-Իսրայելի և Կիրակոս Գանձակեցու Յայսմավուրքների խառնուրդ է, այսինքն՝ նոր խմբագրություն կազմված Տեր-Իսրայելի կողմից կիրառված տոնական տարվա կտրվածքով: Ահա այդ Յայսմավուրքի խմբագրության Նավասարդի մեկի կանոնի տակ գրված է հիշյալ ներբողյանը: Կանոնի վերնագիրն է. «Նաւասարդի ամսոյ ի մինն և Աւգոստոս ի ԺԱ. Տաւն է Յովհաննու Մկրտչին՝ կարգեալ ի սրբոյն Գրիգորէ Լուսաւորչին մերոյ» (էջ 214բ):

Վերջում ունի հետևյալ վկայությունը. «Սրբոյ Կարապետին բարեխաւութեամբ գթա տէր իմ Յիսուս ի բազմերանեան երջանիկ բարունին և յամենագովելի աստուածաշնորհ հայրն հաւատոյ Վարդան՝ յարմարող այսմ աստուածային գանձի...» (էջ 217):

4139 թվահամարը Տօնապատճառի և 2695 թվահամարի Յայսմավուրքի բնագրերը Վարդան Արևելցունն է: Բերենք մեկ համարժեք վկայություն զուգահեռաբար:

4139 թվահամարի գրչագիր

Եւ մեծ ասացուք յաղագս տաւնից գանազանութեան սրբոցն, թէ որպէս ըստ չորից յեղանակաց բաժանեալ են ի միմեանց ըստ պատահման ատուրցն: Վասն զի առաջինն է որ մուտն Նաւասարդի ամսոյ. Նահատակութեան է յիշատակ և գլխատմանն, զոր մշտնջենաւորապէս տաւնէ եկեղեցի սուրբ: Իսկ երկրորդն, որ յաւորս Պենտակոստէին մերձաւոր և նոր կիրակէին. դիր է

2695 թվահամարի գրչագիր

և մեք ասացուք յաղագս տաւնից գանազան սրբոյս, թէ որպէս ըստ Դ-ից յեղանականաց բաժանեալ են ի միմեանց ըստ պատահման ատուրցն: Վասն զի առաջինն որ է մուտս Նաւասարդի ամսոյ. Նահատակութեան է յիշատակ և գլխատմանն, զոր մշտնջենաւորապէս տաւնէ եկեղեցի սուրբ: Իսկ երկրորդն, որ յաւորս Պենտակոստէին մերձաւոր և նոր կիրակէին. դիր է սրբոյն

1 Փ. Անթապյան, ԳԶՎ. աշխ., էջ 239, նաև Ձեռ. № 4134, էջ 438ա-բ:

2 Ձեռ. № 4139, էջ 62բ:

3 Հ. Տաշյան, Յուրակ ձեռագրաց ... էջ 567, Փ. Անթապյան, ԳԶՎ. աշխ., էջ 160:

սրբոյն Գրիգորի ի բառնալ Գայթակոթեանց Անհատական պատկերին և Արմազդահին և փոխաբերիլ ճշմարտութեան տաւնիք ի տեղուցն յայնորիկ սրբոյն Յովհաննու, և ի միսումն շաբաթն Աստուածածինն: Իսկ երրորդ տաւնն ի Սահմի է. Յովհաննու և Աթանագինէ զալ սուրբ Աշխարացն, և ի տեղի առնուլ կառացն ի ձորակին մերձ յԱշտիշատ Տարունոյ. զարն զայն տաւն ուրախութեան հրամայեցին կատարել ի հանգրստեան սրբոցն: Իսկ ի Դ. գիտ է սուրբ գլխոյն յԱմասիա քաղաքի, որ բերաւ ի միակեցացն և յայտնեացաւ աստուածասիրաց անձանց ի թագաւ (փոխ. Ի Թ-ն) Աւգոստոս: Այդ այս չորիք տաւնիս պատուի մեծն Յովհաննէս ըստ չորից յեղանակակաց տարոյն մաքրութեան և ըստ չորից տիեզերաց աշխարհի կատարելութեան, որ ընդ բոլոր հանուրց կաթողիկէ եկեղեցի գարդարի տաւնիք հոգևոր ուրախութեամբ (2695, էջ 217ա-բ):

Մեջբերվածից պարզ է դառնում, որ Վարդան Արևելցին իր իսկ կողմից գրած ներբողյանը օգտագործել է Տօնապատճառի մեջ մեկնելու Հովհաննես Մկրտչի տոնական օրերը:

Այսպիսով կասկած չի կարող լինել, որ 4139 թվահամարի գրչագիրը կամ Վարդան Արևելցու կենդանության ժամանակ 1267/8 թթ. գրված Տօնապատճառն է, որ ընդօրինակեց նրա աշակերտը Տիրացուն թողնելով նախկին տարբեր թիվը կամ գրչագիրն 1277/8 թթ. է: Ասենք նաև որ վաղ շրջանում կազմված «Մեկնութիւն ընթերցուածոց»-ները ունեն համեմատաբար փոքր քանակի միավոր բնագրերը, իսկ Վարդան Արևելցուն Տօնապատճառը կրկնակի միավոր բնագրերի քանակ ունի: Այսպես, մոտավորապես հետևյալ բնագրերի քանակն ունեն վաղ գրված ժողովածուները:

Գր. Արշ. - 34

1007- 66

3795 - 52

2021 - 34

2039 - 64

1888 - 73

4139 - 113

«Մեկնություն ընթերցուածոց-Տաւնապատճառ»-ի հետագա ընդօրինակություններն ունեն նոր մուծումներ նախորդների համեմատ: Նրանց ուսումնասիրությունը ապագայի խնդիր է:

Այս ուսումնասիրությունը թելադրված է Հայոց տոնացույցի զարգացման պատկերը ամբողջական ներկայացնելու միտումով, իսկ Մեկնութիւն ընթերցուածոց-Տաւնապատճառի խմբագրությունների համապարփակ ուսումնասիրությունը կարող է կատարվել միայն մենագրական հետազոտության ճանապարհով:

Այսպիսով Գրիգոր Արշարունին 7-րդ դարի վերջում գրեց «Մեկնութիւն ընթերցուածոց»-ը, որը հիմք դարձավ հետագա խմբագրությունների համար, որոնցից 2-րդը կատարվեց 9-րդ դարի 60-ական թվականներին Ջաքարիա կաթողիկոսի կողմից, 3-րդը՝ Սամուել Կամրջաձորեցու

կողմից 10-րդ դարի վերջին - 11-րդ դարի սկզբներին և մեզ են ներկայացնում ուշ շրջանի, այն է՝ 1007 և 3795 թվահամարների գրչագրերով:

Հաջորդ հեղինակը Արիստակես Լաստիվերտցին է, որի ընդօրինակությունը հայտնի է Փարիզի ոչ ամբողջական գրչագրով:

Վարդան Հաղպատեցին 1166-1173 թթ. սահմաններում խմբագրեց «Մեկնութիւն ընթերցուածոց-Տաւնապատճառ»-ը, որի գրչագրերն են ուշ շրջանի ընդօրինակությունները, այն է՝ 2021 և 1204 թվահամարների ձեռագրերը:

Վարդան Արևելցին 1267/8 թթ. կատարեց Տօնապատճառի հաջորդ խմբագրությունը, որը մեզ է ներկայանում իր մահից հետո ընդօրինակված 4139 թվահամարի գրչագրով:

ԱՏՈՄ ՎԱՐԱԳԵՑՈՒ ԽՄԲԱԳՐԱԾ ՀՈՌՈՄԱԳԻՐԸ  
(10-րդ դարի վերջ)

Հայկական սկզբնաղբյուրները հատկապես Վանական վարդապետը և Մխիթար Այրիվանեցին տեղեկացրել են Ատոմ Վարագեցու կողմից խմբագրված Տոնացույց-Հոռոմադիրի մասին:

Բերենք այդ վկայությունները:

Ըստ «Հարցումն Վահրամայ վարդապետի եւ պատասխանի վարդապետին Վանականայ» բնագրի՝

«(Հարցումն). գհայ գրեանքդ ո՞վ եղեալ: (Պատասխանի). զՏօնական՝ Մաքենցի հայրն Սողոմոնի, զՏօնացուցն՝ Վարագայ հայրն Ատոմ, զՏօնապատճառն՝ Կամրջակ յորոյ հայրն Սամուէլ, զՆերբողեանն՝ Գրիգորէս Վկայասէրն»<sup>1</sup>:

Ըստ Մխիթար Այրիվանեցու (1001 թ. տակ)՝ «Աստ Ստեփանոս Ասողիկ պատմագիր և Արիստակէս Լաստիվերտացի և Սամուէլ հայրն Կարմնջաձորոյ գտօնացուցակն յօրինէր և սուրբ հայրն Ատոմ Վարագեցի զհոռոմադիրն կարգաւորէր...»<sup>2</sup>:

Վերոհիշյալ տեղեկությունները ցույց են տալիս, որ Ատոմ Վարագեցին խմբագրել է տոնացույց, որն անվանվել է «Հոռոմադիր»: Հոռոմադիր անվանվող տոնացույցի հարցում հայագիտության մեջ տիրում է շփոթ<sup>3</sup>: Հիշյալ կարծիքները քննարկելու անհրաժեշտություն չենք համարում:

Փորձենք գտնել քննարկվող բնագրի ընդօրինակությունը: Մեզ է հասել 1154/5 թթ. արտագրված Տոնացույցի-Ճաշոցի գրչագիր, որն ունի 832 թվահամարը: Այն հուլյան ամիս-ամսաթվերով կազմված հայոց Ճաշոց-Տոնացույցի խմբագրություն է, որը կրում է «Կարգ տաւնից ըստ Հոռովմն ամսոցն, որք կատարին ի Քրիստոս» վերնագիրը: Դատելով բնագրից կարող ենք հստակորեն ասել, որ այն «Կանոնք ընթերցուածոց»-ի հետագա խմբագրություն է: Կասկած չկա, որ «Կանոնք ընթերցուածոց»-ը հետագա դարերում վերանվանվել է Հոռոմադիր, այսինքն հռոմեական ամիս-ամսաթվերով գրված ճաշոց-տոնացույց: Հնարավոր է մտածել, որ այն առաջացել է բնագրի վերնագրից, այն է՝ «Կարգ տաւնից ըստ Հոռովմն ամսոցն...»:

Դժվար չէ նաև բնագրի մեջ տեղ գտած տվյալների և Մխիթար Այրիվանեցու վկայած 1001 թվականի համադրությունը որոշել թե «Կանոնք ընթերցուածոց»-Հոռոմադիրն երբ է խմբագրվել:

Պարզենք Հոռոմադիրի խմբագրման ժամանակը նախ ելնելով գրչագրի տվյալներից: 832 թվահամարի բնագրի մեջ գրված է. «Յուլիս Բ. Տապանակին, որ է աւր Նաւակատեաց Վարդավառի տաւնին» (203ա):

Հիշյալ տեղեկությունը ցույց է տալիս, որ բնագրի գրման տարում հուլիս 2-ը եղել է շաբաթ օր, իսկ Վարդավառը՝ կիրակի: Կիրառելով հայոց տոնացույցի եղանակը գտնում ենք, որ այդպիսի համապատասխանություն եղել են հետևյալ տարիներին՝ 970 թ., 981 թ. և 992 թ.:

1 Ձեռ. № 774, էջ 153բ-154ա:  
2 Մ. Այրիվանեցի, Պատմութիւն Հայոց, էջ 57:  
3 Տե՛ս Գ. Զարբանալյան, Պատմութիւն դպրութեան, էջ 569, Մ. Ավդալբեգյան, Յայնսավորք ժողովածուն, Փ. Անթապյան, Վարդան Արևելցի գիրք Ա. էջ 210 և 214:

Համադրելով Մխիթար Այրիվանեցու վկայած 1001 թվականի հետ, կարելի է պնդել, որ Հոռոմադիրն խմբագրվել է 992 թվականին: Այլ խոսքով Ատոմ Վարագեցին Հայոց Ճաշոց-Տոնացույցը, որն անվանվել է Հոռոմադիր, խմբագրել է 10-րդ դարի վերջին: Հոռոմադիրը պահպանվել է Հայոց տոնական տարվա հետևյալ օրերը

Տաւն սրբոյ Յայտնութեանն կատարի Յունարի Զ...

Յերկրորդում աւուրն սրբոյն Ստեփանոսի... Մինչև 8-րդ օրը նախատեսված է ընթերցուածներ:

Յունուարի ԺԱ. Պետրոսի եւ Աբիսողոմա...

Յունուարի ԺԷ. (բնագրի՝ ԻՆ ուղղումը մերն է). Սրբոյն Անտոնի...

Յունուարի ԺԹ. Թեոդոսի թագաւորի...

Փետրուարի ամսոյ որ աւր ԺԴ. քառասնաւրեայ գալուստն Տեառն ի տաճարն...

Բարեկենդանին շաբաթ աւր սրբոց Հայրապետացն...

Բարեկենդանին Կիւրակէին...

Ղազարուն...

Արմաւենեացն...

Երկրորդ շաբաթուն Յիշատակ Թեոդորոսի գաւրավարի...

Երրորդ շաբաթուն Յիշատակ սրբոյն Կիւրղի Երուսաղէմի Հայրապետի...

Երրորդ Կիւրակէին...

Ի չորրորդ շաբաթուն. Յիշատակ Յովհաննու Երուսաղէմի Հայրապետի...

Չորրորդ Կիւրակէին...

Հինգերորդ շաբաթուն Յիշատակ սրբոց քառասնիցն...

Հինգերորդ Կիւրակէին...

Վեցերորդ շաբաթուն սրբոյն Գրիգորի Հայոց Լուսաւորչի...

Վեցերորդ Կիւրակէին...

Մայիս Ա. Երեմիա Մարգարէի...

Մայիս Է. Երեւումն սրբոյ խաչին յերկնից...

Մայիս Թ. Մանկանց Բեղղահեմի...

Մայիս ԻԲ. Կոստենդինոսի թագաւորի...

Յունիս Ժ. Դիր Զաքարիա Մարգարէի...

Յունիս ԺԴ. Եղիսէի Մարգարէի...

Յունիս Բ. Տապանակին, որ է աւր Նաւակատեաց Վարդավառի տաւնին...

Յունիս Զ. Դիր Եսայայ մարգարէի...

Աւգոստոս Ա. Մակաբայեցուցն...

Աւգոստոս ԺԵ. Փոխման Աստուածածնին...

Աւգոստոս ԻԳ. Թովմայի առաքելոյ...

Աւգոստոս ԻԹ. Յովհաննու Մկտրչի...

Սեպտեմբերի ԺԳ. Նաւակատիք սուրբ տեղեացն Երուսաղէմի...

Սեպտեմբեր ԺԴ. Սրբոյ Խաչին...

Նոյեմբերի ԺԵ. Փիլիպպոսի առաքելոյ...

Նոյեմբերի Լ. Անդրէի առաքելոյ...

Դեկտեմբեր ԻԵ. Դաւթի եւ Յակովբայ...

Դեկտեմբերի ԻԶ. Սրբոյն Ստեփանոսի...

Դեկտեմբերի ԻԸ. Պետրոսի եւ Պաւղոսի...

Դեկտեմբերի ԻԹ. Յակովբայ եւ Յովհաննու...

Նախորդ տոնացույցերի Համեմատությամբ այստեղ նորութիւններ են հետևյալ տոները.

Հունվարի 7-ին կատարել են Սուրբ Ստեփանոսի հիշատակի տոնը, որը նախորդ տոնացույցերի մեջ բացակայում է: Նրա հաջորդ տոնը, որ նախատեսված էր հնագույն տոնացույցերում Դեկտեմբեր 27-ին պահպանվել է և այստեղ Բուն Բարեկենդանից առաջ ընկնող շաբաթ օրը կանոնականացվել է սուրբ Հայրապետների հիշատակը: Ղազարի և Արմավենաց օրերը ընկել են Մեծ պահքի առաջ, որն անհասկանալի է: Չկա Ջատիկ և հաջորդ կիրակիի արարողական կարգը, որոնք ցույց են տալիս, որ տոնացույցի նախնական օրինակը խաթարված է:

Յունիսի 2-ի Տապանակի օրը առկա է նախորդ տոնացույցերում, սակայն նա Հայտնվել է շաբաթական շարքը ցույց տվող Վարդավառի նախորդ օրը անվանվելով Նավակատեաց Վարդավառի, որը մուծվել է Հովհան Օձնեցու Տոնացույցի ազդեցութեան տակ:

Օգոստոսի 15-ի Մարիամ Աստուածածնի տոնը վերանվանվել է Փոխման Աստուածածնի:

Սեպտեմբերի 14-ին Սուրբ Խաչի ժողովրդին ցույց տալու օրը փոխարինվել է Սուրբ Խաչի տոնով, որը ինչ խոսք նույնպես Հովհան Օձնեցու Տոնացույցի ազդեցութեան հետևանք է: Նա փաստորեն հետևել է Հովհան Օձնեցուն ավելացնելով հուլյան ամիս-ամսաթիվը:

Հովհան Օձնեցու տոնական շաբաթական շարքի ազդեցութիւնը զգալի է, սակայն բացակայում են Հայոց սրբերի հիշատակի օրերը: Հոռոմադիրը Հովհան Օձնեցու Տոնացույցից հետո, կարծես թե, Շաբաթական Տոնացույցի բաղկացուցից մասն էր, որոնք գործում էին զուգահեռաբար:

Պատահական չէ, որ Հոռոմադիրը չի արտահայտել Հայոց սրբերի օրերը, քանի որ նա թեև կրում է շաբաթական շարքի ազդեցութիւնը, բայց Հայոց սրբերի տոների օրերը տալու դեպքում էլ չէր անվանվի Հոռոմադիր: Այն չի տվել նաև այն պատճառով, որ չէր կարող ամսաթիվեր նշանակել: Այսպիսով Հայտնի է դառնում Հայոց քրիստոնեական տոնացույցի հաջորդ տարբերակը հուլյան ամսաթիվերով, որը ուշ շրջանում վերանվանվել է Հոռոմադիր:

ՍԱՐԿԱՎԱԳԱԴԻՐ ՏՈՄԱՐԸ ԵՒ ՇԼԲ-Ը

Հայոց տոնացույցի և տոմարի պատմության մեջ իր ուրույն տեղն ունի Հովհաննես Սարկավազը:

Նրա կենսագիրը գրում է. «Յետ այսորիկ ի խոյզ և ի քնին ընթացից լուսաւորացոյ մը-տեալ, տայր գումարել ի միատեսակ և յանստեր իւր թիւս տոմարի, գուշ և գակն ոգւոց: Եւ տեղեակ առնէր տօնից կարգաւորաց և փոփոխմանց ամսոց և ամականաց, և եղանակաց քառաբա-ժին տարատմամբ: Եւ որ ինչ ի քառեակս և ի բոլորս եղեալ են երկասիրացն կաճառք, զպիտա-նիս և զարդախնարար իրս, ի նըհանջաւոր յառաջադեմցմունս և զետեղաւոր անշարժ կառուց-մունս: Եւ ի շրջընթաց իւրակի կողսն ինն և տասնեկաց և քսան և ութեակ բոլորատար պարու-նակաց...»<sup>1</sup>:

Սամուել Անեցին միայն գրել է. «ՌՃԼԱ ի ՇՀԸ ամին փոխեցաւ ի Քրիստոս մահուամբ վարդապետն մեծ որ Սարկաւազն կոչիւր ի Հաղբատ»<sup>2</sup>:

Կիրակոս Գանձակեցին տեղեկացնում է. «Սոյնպէս և մեծիմաստն գիտութեամբ քան զյո-լովս և հանճարեղն յամենայնի՝ մտահարուստն Յովհաննէս, Սարկաւազն կոչեցեալ, ի Հաղ-բատ: Սա բազում ինչ աշխատասիրեաց ի գիրս՝ յիշատակ բարի թողուլ սա զբազմաց փափագե-լին և ոչ ձեռնհաս, զհաստատ և զանշարժ տոմարն կարգեաց Հայոց փոխանակ շարժականին և անհաստատնոյն, ազատ և միաբանութիւն ամենայն ազգաց տոմարի ընդ Հայոց վասն զի յոյժ իմաստուն էր այրն և աստուածային շնորհօք զարդարեալ: Նորա բանքն ամենայն իմաս-տասիրական ոճով, որպէս զԳրիգոր Աստուածաբանին, և ոչ գեղջուկ: Սա գրեաց ճառս ներքո-ղականս ի մեծազոր արքայն Հայոց Տրդատ, և ի սուրբ Հայրապետն Ներսէս, և ի սքանչելին Սահակ և Մեսրոպ արար և շարական Ղեռնդեանցն քաղցր եղանակաւ և յարմար բանիւ, որոյ սկիզբն է այս. «Պայծառացան այսօր սուրբ եկեղեցիք»: Գրեաց նոցուն և ճառս ներքողական. գրեաց ևս և գիրս աղօթից. գրեաց և օրինակս ստոյգ գրոց... եւ այսպէս բարւոք քաղաքավարու-թեամբ կեցեալ յաշխարհի՝ փոխեցաւ ի Քրիստոս աշխատասէրն ի Հաղբատ... Եւ եղև վախճան սրբոյն ի ՇՀԸ թուականին»<sup>3</sup>:

Մխիթար Այրիվանեցու հրատարակիչը 1085 թվականի տակ գրել է. «Սկիզբն նոր թուա-կանին, որ կարգեցաւ ի Յովհաննէս վարդապետէ Հաղբատացւոյ, որ Սարկաւազ կոչեցաւ: Սա արար անշարժ տոմար ըստ այլոց ազգաց»<sup>4</sup>:

Նույն տեղեկությունը բերել է Գ. Զարբհանալյանը հավանաբար քաղելով վենետիկի Ձեռագրերից, այն է՝ «ՇԼԴ. սկիզբն նոր թուականին, որ կարգեցաւ ի Յովհաննէս վարդապետէ Հաղբատացւոյ, որ Սարկաւազ կոչեցաւ: Սա արար անշարժ տոմար ըստ այլոց ազգաց»: Հասկա-նալի է, որ Մխիթար Այրիվանեցու բնագրում եղել է ՇԼԴ թվական, որը հրատարակիչը վեր է ածել ներկա 1085 թվականի: Հայոց 534 թվականից հանենք 533, ինչպես կանոնել է Սարկա-վազը, կստանանք Սարկավազադիր մեկ թվականը, որը համարժեք է ներկա 1085 թվականին: Հետագայում ապրած հեղինակները համարյա ոչինչ չեն ավելացնում հիշյալ տեղեկություննե-

1 Տե՛ս Հովհաննէս Իմաստասերի մատենագրությունը, էջ 121:  
2 Սամուելի քառագայի Անցեցոյ, Հաւաքմունք ի գրոց պատմագրաց, էջ 129:  
3 Կիրակոս Գանձակեցի, Պատմութիւն Հայոց, էջ 113-115:  
4 Տե՛ս Մխիթարայ Այրիվանեցոյ Պատմութիւն Հայոց, էջ 60:

րի վրա: Մնացած վկայությունները քաղել ենք Հովհաննես Սարկավազի ստեղծած բնագրերից, որոնց մի մասը հրատարակել է Աշ. Աբրահամյանը, իսկ մյուս բնագրերը առկա են 1999, 1973, 2001, 3082 և այլ թվահամարների գրչագրերում: Հեղինակի իսկ վկայությունների համաձայն նա գրել է. «բովանդակ պա[տ]ճէն տումարի»<sup>1</sup>, այսինքն՝ Հայոց շարժական տոմարի և իր իսկ կողմից ստեղծած Հայոց անշարժ տոմարի կանոններն ու նրանց մեկնությունները, ինչպես և քննել է 15 ազգերի անշարժ տոմարների պատճենները:

Մեկ այլ հատվածում, իր իսկ բնորոշմամբ, ստեղծել է «զԱզնուականոնն՝ որ անմուլար ունի զամենայն սահմանեալսն վասն տաւնի և յեղանակաց տարոյ և լրմանց լուսնոյ զատկաց, վերադրաց և եւթներեկաց, և զառաջաւորաց պահոց և զայլոց ամենեցունց»<sup>2</sup>: Սարկավազը նկատի է ունեցել իր խմբագրած ՇԼԲ-ն, 19-ամյակի աղյուսակները լուսնի ծննդեան և լրման համար, ինչպես և «ազգաց կանոն»<sup>3</sup>: Աշ. Աբրահամյանը գրում է. «Տոմարական բարեփոխութ-յունը Իմաստասերը կատարել է 1116 թ., սկսել է 1084 թ.՝ շարունակելով նախկին ՇԼԲ աղյու-սակները»<sup>4</sup>:

Այս տեսակետն ընդունելություն է գտել: Տեսնենք Հովհաննես Սարկավազի բնագրերում ինչ տեղեկություններ կան այդ հարցի կապակցությամբ:

2001 թվահամարի գրչագրում որտեղ մի զգալի մաս են կազմում նրա բնագրերը «Սար-կաւազ վարդապետէ ասացեալ» վերնագրի տակ կարդում ենք. «... Քանզի ոչ գտաւ առ նախ-նեաւք բոլորակդ այդ (խոսքը էասյան ՇԼԲ-ի մասին է - Ռ. Վ.) մինչև յԼԴ ամն Յուստիանոսի կայսեր յորմէ մինչև ի գիր մատենիդ այդորիկ լինի ամք ՇԼԲ...»<sup>5</sup>: Էասյան ՇԼԲ-ի առիթով տե-սանք, որ նրա ստեղծման տարին Հուստինիանոսի 34-րդ տարին է ընկալվել և ներկա 562 թվականը, որին գումարելով 532 կստանանք 1094 թվական, որն էլ Հովհաննես Սարկավազի «Պատճեն տոմարի» մեկնության գրման տարին է, և նրա 10-րդ թվականը, որից սկսել է իր տո-մարական հաշվումները, թեև սկիզբ է ընտրել 1085 թվականը, ինչպես էասյանները 553 թվա-կանը, բայց տոմարական հաշվումները սկսել են 562 թվականից: Այս թվականը հաստատվում է Հովհաննես Սարկավազի «Առ Սարգիս» գրած նամակի տվյալներով ևս: Նա վկայում է. «Զքո՛ ո՛վ պատուականդ ինձ և փափագելի, լուեալ և յոյժ ախորժեալ զխնդիր հրամանի՝ վերստին երկրորդել զառ ի յինէն գրեալ վասն հայկական ամսոց զշարժութեան պատճառս...»: Իսկ երբ է վերստին «երկրորդել զառ ի յինէն գրեալ»-ն երևում է նոյն բնագրի այլ հատվածից: Նա գրում է. «Յորժամ անարուեստ պատճէն այն կարգեցաւ ասի հասարակ լինել զարնանայնոյն յահկի ամսոյ ժԳ (13): Եւ ըստ փոփոխման թուոյ աւուրքն ամսոյ՝ անցանել աւուրս ի միւս ամն յա-միսն Նաւասարդի, որ առ մեւք ձէ(107) ամ»<sup>6</sup>:

Հայոց 452 թվականից հետո Գարնանային Գիշերահավասարի օրը՝ Մարտի 20-ը, հա-մարժեք դարձավ Նավասարդի 1-ին (553 թվականի Ահեկանի 13-ի փոխարեն), որից մինչև Սարկավազի գրելու ժամանակն անցել է 107 տարի, ուստի 452+107=559 կամ 559-533=26 - Սարկավազադիր թվական: Պարզ է, որ այդ նամակը գրվել է 1110 թվականին (=հայոց 559 թ-վականին և սարկավազադիր 26 թվականին): Հասկանալի է դառնում, որ Հովհաննես Սարկա-

1 Տե՛ս Հովհաննէս Իմաստասերի մատենագրությունը, էջ 262:  
2 Անդ, էջ 263:  
3 Անդ, էջ 281:  
4 Տե՛ս Աշ. Աբրահամյան, Հայոց գիր և գրչություն, էջ 106:  
5 Ձեռ. № 2001, 159ա-բ, տե՛ս նաև Հովհաննէս Իմաստասերի մատենագրությունը, էջ 237, այլ վերնագրի տակ:  
6 Հովհաննէս Իմաստասերի մատենագրությունը, էջ 262-263:

վազը Հայոց տոմարների մեկնությունը մինչև 1110 թվականը արդեն գրել էր և այդ թվականին կրկին երկրորդում էր որոշ հարցեր Սարգսի պատվերով:

Ի դեպ 1116 թվականը ևս գալիս է Հովհաննես Սարկավագից: Նա գրում է. «... Վասն զի լինի յաւելուած թիւ մի ի ժողովմանէ նահանջիցն յետ ՌՆԿ (1460) ամաց, որով այլայլեալ ապականէ կանոնն: Եւ ոչ այսքան և եթ, այլ և յամենայն լրմունս իննևտասներեկացն ամաց, և յարեգակնայինսն ըստ չորից, որովք լինի յաւելումն և պակասութիւն վերադրաց, որ ըստ հայուս: Յայնպիսոյ սահմանէ անգիտանան բազումք, մանաւանդ յորժամ դիպեսցի յեղանակին գարնանայնոյ զանցեալ յետ աւուրցն աւելեացն, յամիսն առաջին կոչեցեալ նաւասարդի: Վասն որոյ տգէտք արուեստիս, կանխեն ասել նահանջի ոչ զէն, այլ զոչն ամ յառաջ քան զնա: Եւ մոլորեալ յածին ստութեամբ կարկատել զպատճառս, որպէս կարասցեն հաստատել զստութիւնն: Եւ են այժմ ամբ այդպիսի սխալման ճժԳ (113): Վասն որոյ զաւելեացն թիւն պակասեցուցաք ի կոչելոյն թուական»<sup>1</sup>:

Վերահիշյալ նույն երևույթի մասին է խոսում, ուստի կատարենք նույն գործողությունը՝ 452+113=565-533=32: Հայոց 565 և Սարկավագի 32 թվականները համարժեք են 1116 թվականին: Այսպիսով Սարկավագի իսկ բերած թվերով, ստացանք նրա Պատճեն տոմարի մեկնությունն ստեղծման թվականը, այն է՝ 1094 թ., ինչպես և նրանց շարունակությունը կազմող 1100 թ. և 1116 թ., որոնց ժամանակ ևս նա աշխատել է տոմարի մեկնության վրա ոչ միայն բացատրելու, այլև կրկին վերլուծելու մեկնելու այն խրթին տեղերը, որոնք անհասկանալի են եղել շատերի համար: Ասենք, որ էսայան ՇԼԲ-ն ավարտել էր իր մեկ պտույտը 1084 թվականին սկզբի 1093 թվականի հաշվման իմաստներով: Նրա նոր սկիզբը սկսելու էր 1085 թվականին և 1094 թվականին տոմարական հաշվումների տեսանկյունից: Այդ շատ լավ հասկանում էր Հովհաննես Սարկավագը: Դրա համար նա նոր ՇԼԲ-ի սկիզբը ընտրեց 1085 թվականը, իսկ տոմարական հաշվումների համար սկիզբը ընդունեց 1094 թվականը, այսինքն Սարկավագի 1 և 10 թվականները և վերջինից սկսեց դնել իր վերադիրների հնգանիցների, շաբաթվա և վեցանիցների համակարգերը: Նրա 1-ին տարում վերադիր 11 էր նախկին 9-ի փոխարեն, ինչպես տեսանք Անանիա Շիրակացու վերադիրների համակարգը քննելիս: ՇԼԲ-ն սկսեց իր երկրորդ շրջապտույտը, այնպես որ Զատիկի և մյուս շաբաթական տոների հարցերը լուծված էին: Հովհաննես Սարկավագը նախորդ ՇԼԲ-ի մեջ կատարել է մի շարք հավելումներ: Նա վերադիրների նախորդ համակարգը փոխել է և դրել իր վերադիրների համակարգը սկսած 10 թվականից (11, 22 և այլն): Ավելացրել է տանուտերների համակարգը: Առաջավորի Բարեկենդանի օրը բացակայում է նախորդ ՇԼԲ-ում, որը Սարկավագի խմբագրման արդյունք է: Նա ավելացրել է նաև Պենտեկոստի և Վարդավառի տոների օրերի հուլյան տոմարի ամիս-ամսաթվերը յուրաքանչյուր տարում:

Անանիա Շիրակացու Լուսնացույցի քննության ընթացքում ցույց տվեցինք, որ Հովհաննես Սարկավագը ևս կազմել է Լուսնի ծննդեան և լրման 19-ամյա աղյուսակներ: Ստորև կբերենք մեր վերականգնած Հովհաննես Սարկավագի Լուսնացույցը: Միայն նշենք, որ այն հաշվարկելու ժամանակ՝ ստուգելով հանդերձ ամբողջությամբ պահպանել ենք Լուսնի ծննդեան ամիս-ամսաթվերը, որոնք առկա են Սարկավագի ստեղծած Ազնվականոններում կամ Ազգաց կանոններում: Վերջինիս մեջ յուրաքանչյուր ամսվա աղյուսակի սկիզբի սյունակի մեջ տալիս է վերադիրները, որոնք հիմնականում 19-ն են, իսկ երբեմն նույն տեղում կրկնվում են վերադիրներից ոմանք, որոնց դիմաց առանձին սյունակների մեջ դրված են Լուսնի ծննդեան ամսաթվերը տարբեր տոմարական համակարգերով: Ազնվականոններում հետևաբար Լուսնացույցերում վերականգնել ենք երկու վերադիր (հետևաբար երկու Լուսնի ծննդեան ամսաթիվ), այն է՝ 27-ը՝

16-րդ տարվա վերադիրը, երկրորդ անգամ, որպես 13-րդ Լուսնի տարվա վերադիրը՝ Մայիս 31-ի դիմաց և 30-ը, որպես 19-րդ տարվա վերադիր՝ Հոկտեմբեր 23-ի դիմաց, որը անուշադրություն հետևանքով չի փաստագրվել:

Ինչ վերաբերվում է 19-ամյակի Լուսնի լրումների աղյուսակներին, ապա այն վերականգնել ենք ինչպես Լուսնի ծնունդների, այնպես էլ տոմարական կանոնների ու Լուսնացույցի համառոտ խմբագրության (որում տեղ գտած սխալները նույնպես ուղղել ենք) հիման վրա:

Վերականգնված Լուսնացույցի գիշերվա և ցերեկվա ժամերն ու մասերը որոշել ենք նկատի ունենալով առկա տոմարական կանոնները, որոնց քննությունը կատարեցինք Շիրակացուն նվիրված գլխում: Նշենք, որ գիշերվա և ցերեկվա ժամերն ու մասերը հաշվել ենք, ինչպես հին, այնպես էլ նոր հնգանիցների համակարգերով, որովհետև մի կողմից Սարկավագն օգտագործել է հին հնգանիցների արժեքները, ինչպես տեսանք նրա արևի խավարման մասին տված տվյալների վերլուծությունից: Մյուս կողմից տպագիր Լուսնացույցի աղյուսակներում կիրառված ենք գտնում նոր հնգանիցների համակարգի հիման վրա ստացված տվյալներ, որոնց հեղինակը կարող է լինել Հովհաննես Սարկավագը: Այս տեսակետը չի բացառվում քանի որ 1973 թվահամարի գրչագիրն ստեղծող հեղինակներն արդեն սկզբնական էջերում (էջ 58բ և 81ա) արտագրել են Լուսնի զատկական լրումների 19-ամյա աղյուսակներ, որտեղ լրումների ամսաթվերի դիմաց դրված են նոր հնգանիցների համակարգը և նրանցից հետևող գիշերվա ու ցերեկվա ժամերը և մասերը: Ինչևէ Հովհաննես Սարկավագի Լուսնացույցը վերականգնել ենք հին և նոր հնգանիցների հիման վրա տալով երկուսին պատշաճող գիշերվա և ցերեկվա ժամերն ու մասերը:

Ներկայացնենք Սարկավագի Լուսնացույցը:  
Հովհաննես Սարկավագ «Լուսնացույց»  
(19-ամյա աղյուսակներ Լուսնի ծննդեան և լրումների)

1.

Ծնունդն Լուսնի	Քա- Աիք	Տի Գիշ	Ժամ	Մա- սրն	Ծանոթ.	Ծնունդն լուսնի	Քա- Աիք	Տի Գիշ	Ժամ	Մա- սրն	Ծանոթ.
Յունուար	19	Տ	2	3	հնգեակն՝ 45	Յունուար	19	Տ	10	3	հնգեակն՝ 5
Փետրուար	18	Գ	2	3	վեցեակն՝ 54	Փետրուար	18	Գ	10	3	վեցեակն՝ 6
Մարտ	19	Տ	2	1	վերադիրն՝ 11	Մարտ	19	Տ	10	1	վերադիրն՝ 11
Ապրիլ	18	Գ	2	1	լրումն՝ ապրիլ 4	Ապրիլ	18	Գ	10	1	լրումն՝ ապրիլ 4
Մայիս	17	Տ	1	4	ԲԺ-ան լուսնի	Մայիս	17	Տ	9	4	ԲԺ-ան լուսնի
Յունիս	16	Գ	1	4		Յունիս	16	Գ	9	4	
Յուլիս	15	Տ	1	2		Յուլիս	15	Տ	9	2	
Աւգոստոս	14	Գ	1	2		Աւգոստոս	14	Գ	9	2	
Սեպտեմբ	12	Տ	12	5		Սեպտեմբ	12	Տ	8	5	
Հոկտեմբ	12	Տ	12	5		Հոկտեմբ	12	Գ	8	5	
Նոյեմբեր	10	Գ	12	3		Նոյեմբեր	10	Տ	8	3	
Դեկտեմբեր	10	Տ	12	3		Դեկտեմբեր	10	Գ	8	3	

<sup>1</sup> Աճռ., էջ 281-282:



Լրումն Լուսնի	Քա- նիք	Տի Գիշ	Ժամ	Մա- սըն	Ծանոթ.	Լրումն լուսնի	Քա- նիք	Տի Գիշ	Ժամ	Մա- սըն	Ծանոթ.
Յունուար	4	Գ	8	3	հնգեակն՝ 45	Յունուար	4	Տ	4	3	հնգեակն՝ 5
Փետրուար	3	Տ	8	3	վեցեակն՝ 54	Փետրուար	3	Գ	4	3	վեցեակն՝ 6
Մարտ	4	Գ	8	1	վերադիրն՝ 11	Մարտ	4	Տ	4	1	վերադիրն՝ 11
Ապրիլ	4	Տ	8	3	լրումն՝ ապրել 4	Ապրիլ	4	Գ	4	3	լրումն՝ ապրել 4
Մայիս	2	Գ	7	4	ԲԺ-ան լուսին	Մայիս	2	Տ	3	4	ԲԺ-ան լուսնի
Յունիս	1 30	Տ Գ	7 7	4 2		Յունիս	1 30	Գ Տ	3 3	4 2	
Յուլիս	30	Տ	7	2		Յուլիս	30	Գ	3	2	
Աւգոստոս	28	Գ	6	5		Աւգոստոս	28	Տ	2	5	
Սեպտեմբ	27	Տ	6	5		Սեպտեմբ	27	Գ	2	5	
Հոկտեմբ	26	Գ	6	3		Հոկտեմբ	26	Տ	2	3	
Նոյեմբեր	25	Տ	6	3		Նոյեմբեր	25	Գ	2	3	
Դեկտեմբեր	24	Գ	6	1		Դեկտեմբեր	24	Տ	2	1	

2.

Ծնունդն Լուսնի	Քա- նիք	Տի Գիշ	Ժամ	Մա- սըն	Ծանոթ.	Ծնունդն լուսնի	Քա- նիք	Տի Գիշ	Ժամ	Մա- սըն	Ծանոթ.
Յունուար	8	Գ	12	1	հնգեակն՝ 50	Յունուար	8	Տ	8	1	հնգեակն՝ 10
Փետրուար	7	Տ	12	1	վեցեակն՝ 60	Փետրուար	7	Գ	8	1	վեցեակն՝ 12
Մարտ	8	Գ	11	4	վերադիրն՝ 22	Մարտ	8	Տ	7	4	վերադիրն՝ 22
Ապրիլ	7	Տ	11	4	լրումն՝ Մարտ 24	Ապրիլ	7	Գ	7	4	լրումն՝ Մարտ 24
Մայիս	6	Գ	11	2	ԲԺ-ան լուսին	Մայիս	6	Գ	3	2	ԲԺ-ան լուսնի
Յունիս	5	Տ	11	2		Յունիս	5	Գ	7	2	
Յուլիս	4	Գ	10	5		Յուլիս	4	Տ	6	5	
Աւգոստոս	3	Տ	10	5		Աւգոստոս	3	Գ	6	5	
Սեպտեմբեր	1	Գ	10	3		Սեպտեմբեր	1	Տ	6	3	
Հոկտեմբեր	1 30	Տ Գ	10 10	3 1		Հոկտեմբեր	1 30	Գ Տ	6 6	3 1	
Նոյեմբեր	29	Տ	10	1		Նոյեմբեր	29	Գ	6	1	
Դեկտեմբեր	28	Գ	9	4		Դեկտեմբեր	28	Տ	5	4	

Լրումն Լուսնի	Քա- նիք	Տի Գիշ	Ժամ	Մա- սըն	Ծանոթ.	Լրումն լուսնի	Քա- նիք	Տի Գիշ	Ժամ	Մա- սըն	Ծանոթ.
Յունուար	23	Տ	6	1	հնգեակն՝ 50	Յունուար	23	Գ	2	1	հնգեակն՝ 10
Փետրուար	22	Գ	6	1	վեցեակն՝ 60	Փետրուար	22	Տ	2	1	վեցեակն՝ 12
Մարտ	24	Տ	6	1	վերադիրն՝ 22	Մարտ	24	Գ	2	1	վերադիրն՝ 22
Ապրիլ	22	Գ	5	4	լրումն՝ Մարտ 24	Ապրիլ	22	Տ	1	4	լրումն՝ Մարտ 24
Մայիս	21	Տ	5	2	ԲԺ-ան լուսին	Մայիս	21	Գ	1	2	ԲԺ-ան լուսնի
Յունիս	20	Գ	5	2		Յունիս	20	Տ	1	2	
Յուլիս	19	Տ	4	5		Յուլիս	19	Տ	12	5	
Աւգոստոս	18	Գ	4	5		Աւգոստոս	18	Տ	12	5	
Սեպտեմբեր	16	Տ	4	3		Սեպտեմբեր	16	Տ	12	3	
Հոկտեմբեր	16	Գ	4	3		Հոկտեմբեր	16	Գ	12	3	
Նոյեմբեր	14	Տ	4	1		Նոյեմբեր	14	Տ	12	1	
Դեկտեմբեր	14	Գ	4	1		Դեկտեմբեր	14	Գ	12	1	

3.

Ծնունդն Լուսնի	Քա- նիք	Տի Գիշ	Ժամ	Մա- սըն	Ծանոթ.	Ծնունդն լուսնի	Քա- նիք	Տի Գիշ	Ժամ	Մա- սըն	Ծանոթ.
Յունուար	27	Տ	9	4	հնգեակն՝ 55	Յունուար	27	Գ	5	4	հնգեակն՝ 15
Փետրուար	26	Գ	9	4	վեցեակն՝ 66	Փետրուար	26	Տ	5	4	վեցեակն՝ 18
Մարտ	27	Տ	9	2	վերադիրն՝ 3	Մարտ	27	Գ	5	2	վերադիրն՝ 3
Ապրիլ	26	Գ	9	2	լրումն՝ Ապրել 12	Ապրիլ	26	Տ	5	2	լրումն՝ Ապրել 12
Մայիս	25	Տ	8	5	ԳԺ-ան լուսին	Մայիս	25	Գ	4	5	ԳԺ-ան լուսնի
Յունիս	24	Գ	8	5		Յունիս	24	Տ	4	5	
Յուլիս	23	Տ	8	3		Յուլիս	23	Գ	4	3	
Աւգոստոս	22	Գ	8	3		Աւգոստոս	22	Տ	4	3	
Սեպտեմբեր	20	Տ	8	1		Սեպտեմբեր	20	Գ	4	1	
Հոկտեմբեր	20	Գ	8	1		Հոկտեմբեր	20	Տ	4	1	
Նոյեմբեր	18	Տ	7	4		Նոյեմբեր	18	Գ	3	4	
Դեկտեմբեր	18	Գ	7	4		Դեկտեմբեր	18	Տ	3	4	

Լրումն Լուսնի	Քա- նիք	Տի- գիշ	Ժամ	Մա- սրն	Ծանոթ.	Լրումն լուսնի	Քա- նիք	Տի- գիշ	Ժամ	Մա- սրն	Ծանոթ.
Յունուար	12	Տ	3	4	հնգեակն՝ 55	Յունուար	12	Տ	11	4	հնգեակն՝ 15
Փետրուար	11	Գ	3	4	վեցեակն՝ 66	Փետրուար	11	Գ	11	4	վեցեակն՝ 18
Մարտ	12	Տ	3	2	վերադիրն՝ 3	Մարտ	12	Տ	11	2	վերադիրն՝ 3
Ապրիլ	12	Գ	3	4	լրումն՝ Ապրիլ 12	Ապրիլ	12	Գ	11	4	լրումն՝ Ապրիլ 12
Մայիս	10	Տ	2	5	ԲԺ-ան լուսին	Մայիս	10	Տ	10	5	ԲԺ-ան լուսին
Յունիս	9	Գ	2	5		Յունիս	9	Գ	10	5	
Յուլիս	8	Տ	2	3		Յուլիս	8	Տ	10	3	
Աւգոստոս	7	Գ	2	3		Աւգոստոս	7	Գ	10	3	
Սեպտեմբեր	5	Տ	2	1		Սեպտեմբեր	5	Տ	10	1	
Հոկտեմբեր	5	Գ	2	1		Հոկտեմբեր	5	Գ	10	1	
Նոյեմբեր	3	Տ	1	4		Նոյեմբեր	3	Տ	9	4	
Դեկտեմբեր	3	Գ	1	4		Դեկտեմբեր	3	Գ	9	4	

4.

Ծնունդն Լուսնի	Քա- նիք	Տի- գիշ	Ժամ	Մա- սրն	Ծանոթ.	Ծնունդն լուսնի	Քա- նիք	Տի- գիշ	Ժամ	Մա- սրն	Ծանոթ.
Յունուար	16	Տ	7	2	հնգեակն՝ 60	Յունուար	16	Գ	3	2	հնգեակն՝ 20
Փետրուար	15	Գ	7	2	վեցեակն՝ 72	Փետրուար	15	Տ	3	2	վեցեակն՝ 24
Մարտ	16	Տ	6	5	վերադիրն՝ 14	Մարտ	16	Գ	2	5	վերադիրն՝ 14
Ապրիլ	15	Գ	6	5	լրումն՝ Ապրիլ 1	Ապրիլ	15	Տ	2	5	լրումն՝ Ապրիլ 1
Մայիս	14	Տ	6	3	ԲԺ-ան լուսին	Մայիս	14	Գ	2	3	ԲԺ-ան լուսին
Յունիս	13	Գ	6	3		Յունիս	13	Տ	2	3	
Յուլիս	12	Տ	6	1		Յուլիս	12	Գ	2	1	
Աւգոստոս	11	Գ	6	1		Աւգոստոս	11	Տ	2	1	
Սեպտեմբեր	9	Տ	5	4		Սեպտեմբեր	9	Գ	1	4	
Հոկտեմբեր	9	Գ	5	4		Հոկտեմբեր	9	Տ	1	4	
Նոյեմբեր	7	Տ	5	2		Նոյեմբեր	7	Գ	1	2	
Դեկտեմբեր	7	Գ	5	2		Դեկտեմբեր	7	Տ	1	2	

Լրումն Լուսնի	Քա- նիք	Տի- գիշ	Ժամ	Մա- սրն	Ծանոթ.	Լրումն լուսնի	Քա- նիք	Տի- գիշ	Ժամ	Մա- սրն	Ծանոթ.
Յունուար	1	Տ	1	2	հնգեակն՝ 60	Յունուար	1	Տ	9	2	հնգեակն՝ 20
Փետրուար	1	Գ	1	4	վեցեակն՝ 72	Փետրուար	1	Գ	9	4	վեցեակն՝ 24
Մարտ	1	Տ	12	5	վերադիրն՝ 14	Մարտ	1	Տ	8	5	վերադիրն՝ 14
Ապրիլ	1 30	Գ Տ	1 12	2 3	լրումն՝ Ապրիլ 1	Ապրիլ	1 30	Գ Տ	9 8	2 5	լրումն՝ Ապրիլ 1
Մայիս	29	Տ	12	3	ԲԺ-ան լուսին	Մայիս	29	Գ	8	3	ԲԺ-ան լուսին
Յունիս	28	Գ	12	3		Յունիս	28	Տ	8	3	Մարտի 31-ի
Յուլիս	27	Տ	12	1		Յուլիս	27	Գ	8	1	լրումն հաշվի
Աւգոստոս	26	Գ	12	1		Աւգոստոս	26	Տ	8	1	պետք է տեսել
Սեպտեմբեր	24	Տ	11	4		Սեպտեմբեր	24	Գ	7	4	19-տարիների հաշվարկում,
Հոկտեմբեր	24	Գ	11	4		Հոկտեմբեր	24	Տ	7	4	իսկ տվյալ
Նոյեմբեր	22	Տ	11	2		Նոյեմբեր	22	Գ	7	2	դեպքում ան-
Դեկտեմբեր	21	Գ	10	5		Դեկտեմբեր	22	Տ	6	5	տեսել:

5.

Ծնունդն Լուսնի	Քա- նիք	Տի- գիշ	Ժամ	Մա- սրն	Ծանոթ.	Ծնունդն լուսնի	Քա- նիք	Տի- գիշ	Ժամ	Մա- սրն	Ծանոթ.
Յունուար	5	Տ	4	5	հնգեակն՝ 65	Յունուար	5	Տ	12	5	հնգեակն՝ 25
Փետրուար	4	Գ	4	5	վեցեակն՝ 78	Փետրուար	4	Տ	12	5	վեցեակն՝ 30
Մարտ	5	Տ	4	3	վերադիրն՝ 25	Մարտ	5	Տ	12	3	վերադիրն՝ 25
Ապրիլ	4	Գ	4	3	լրումն՝ Մարտ 21	Ապրիլ	4	Գ	12	3	լրումն՝ Մարտ 21
Մայիս	3	Տ	4	1	ԲԺ-ան լուսին	Մայիս	3	Տ	12	1	ԲԺ-ան լուսին
Յունիս	2	Գ	4	1		Յունիս	2	Գ	12	1	
Յուլիս	1 31	Տ Գ	3 3	4 4		Յուլիս	1 31	Տ Գ	11 11	4 4	
Աւգոստոս	29	Տ	3	2		Աւգոստոս	29	Տ	11	2	
Սեպտեմբեր	28	Գ	3	2		Սեպտեմբեր	28	Գ	11	2	
Հոկտեմբեր	27	Տ	2	5		Հոկտեմբեր	27	Տ	10	5	
Նոյեմբեր	26	Գ	2	5		Նոյեմբեր	26	Գ	10	5	
Դեկտեմբեր	քո	Տ	2	3		Դեկտեմբեր	25	Տ	10	3	

Լրումն Լուսնի	Քա- նիք	Տի Գիշ	Ժամ	Մա- սըն	Ծանոթ.	Լրումն լուսնի	Քա- նիք	Տի Գիշ	Ժամ	Մա- սըն	Ծանոթ.
Յունուար	20	Տ	10	5	հնգեակն՝ 65	Յունուար	20	Գ	6	5	հնգեակն՝ 25
Փետրուար	19	Գ	10	5	վեցեակն՝ 78	Փետրուար	19	Տ	6	5	վեցեակն՝ 30
Մարտ	21	Տ	10	5	վերադիրն՝ 25	Մարտ	21	Գ	6	5	վերադիրն՝ 25
Ապրիլ	19	Գ	10	3	լրումն՝ Մարտ 21	Ապրիլ	19	Տ	6	3	լրումն՝ Մարտ 21
Մայիս	18	Տ	10	1	ԲԺ-ան լուսնի	Մայիս	18	Գ	6	1	ԲԺ-ան լուսնի
Յունիս	17	Գ	10	1		Յունիս	17	Տ	6	1	
Յուլիս	16	Տ	9	4		Յուլիս	16	Գ	5	4	
Աւգոստոս	15	Գ	9	4		Աւգոստոս	15	Տ	5	4	
Սեպտեմբեր	13	Տ	9	2		Սեպտեմբեր	13	Գ	5	2	
Հոկտեմբեր	13	Գ	9	2		Հոկտեմբեր	13	Տ	5	2	
Նոյեմբեր	11	Տ	8	5		Նոյեմբեր	11	Գ	4	5	
Դեկտեմբեր	11	Գ	8	5		Դեկտեմբեր	11	Տ	4	5	

6.

Ծնունդն Լուսնի	Քա- նիք	Տի Գիշ	Ժամ	Մա- սըն	Ծանոթ.	Ծնունդն լուսնի	Քա- նիք	Տի Գիշ	Ժամ	Մա- սըն	Ծանոթ.
Յունուար	24	Գ	2	3	հնգեակն՝ 70	Յունուար	24	Գ	10	3	հնգեակն՝ 30
Փետրուար	23	Տ	2	3	վեցեակն՝ 84	Փետրուար	23	Տ	10	3	վեցեակն՝ 36
Մարտ	24	Գ	2	1	վերադիրն՝ 6	Մարտ	24	Գ	10	1	վերադիրն՝ 6
Ապրիլ	23	Տ	2	1	լրումն՝ Ապրիլ 9	Ապրիլ	23	Տ	10	1	լրումն՝ Ապրիլ 9
Մայիս	22	Գ	1	4	ԳԺ-ան լուսնի	Մայիս	22	Գ	9	4	ԳԺ-ան լուսնի
Յունիս	21	Տ	1	4		Յունիս	21	Տ	9	4	
Յուլիս	20	Գ	1	2		Յուլիս	20	Գ	9	2	
Աւգոստոս	19	Տ	1	2		Աւգոստոս	19	Տ	9	2	
Սեպտեմբեր	17	Տ	12	5		Սեպտեմբեր	17	Գ	8	5	
Հոկտեմբեր	17	Տ	12	5		Հոկտեմբեր	17	Տ	8	5	
Նոյեմբեր	15	Տ	12	3		Նոյեմբեր	15	Գ	8	3	
Դեկտեմբեր	15	Գ	12	3		Դեկտեմբեր	15	Տ	8	3	

Լրումն Լուսնի	Քա- նիք	Տի Գիշ	Ժամ	Մա- սըն	Ծանոթ.	Լրումն լուսնի	Քա- նիք	Տի Գիշ	Ժամ	Մա- սըն	Ծանոթ.
Յունուար	9	Տ	8	3	հնգեակն՝ 70	Յունուար	9	Գ	4	3	հնգեակն՝ 30
Փետրուար	8	Գ	8	3	վեցեակն՝ 84	Փետրուար	8	Տ	4	3	վեցեակն՝ 36
Մարտ	9	Տ	8	1	վերադիրն՝ 6	Մարտ	9	Գ	4	1	վերադիրն՝ 6
Ապրիլ	9	Գ	8	3	լրումն՝ Ապրիլ 9	Ապրիլ	9	Տ	4	3	լրումն՝ Ապրիլ 9
Մայիս	7	Տ	7	4	ԳԺ-ան լուսնի	Մայիս	7	Գ	3	4	ԳԺ-ան լուսնի
Յունիս	6	Գ	7	4		Յունիս	6	Տ	3	4	
Յուլիս	5	Տ	7	2		Յուլիս	5	Գ	3	2	
Աւգոստոս	4	Գ	7	2		Աւգոստոս	4	Տ	3	2	
Սեպտեմբեր	2	Տ	6	5		Սեպտեմբեր	2	Գ	2	5	
Հոկտեմբեր	2	Գ	6	5		Հոկտեմբեր	2	Տ	2	5	
	31	Տ	6	3			31	Գ	2	3	
Նոյեմբեր	30	Գ	6	3		Նոյեմբեր	30	Տ	2	3	
Դեկտեմբեր	29	Տ	6	1		Դեկտեմբեր	29	Գ	2	1	

7.

Ծնունդն Լուսնի	Քա- նիք	Տի Գիշ	Ժամ	Մա- սըն	Ծանոթ.	Ծնունդն լուսնի	Քա- նիք	Տի Գիշ	Ժամ	Մա- սըն	Ծանոթ.
Յունուար	13	Տ	12	1	հնգեակն՝ 75	Յունուար	13	Գ	8	1	հնգեակն՝ 35
Փետրուար	12	Գ	12	1	վեցեակն՝ 90	Փետրուար	12	Տ	8	1	վեցեակն՝ 42
Մարտ	13	Տ	11	4	վերադիրն՝ 17	Մարտ	13	Գ	7	4	վերադիրն՝ 17
Ապրիլ	12	Գ	11	4	լրումն՝ Մարտ 29	Ապրիլ	12	Տ	7	4	լրումն՝ Մարտ 29
Մայիս	11	Տ	11	2	ԲԺ-ան լուսնի	Մայիս	11	Գ	7	2	ԲԺ-ան լուսնի
Յունիս	10	Գ	11	2		Յունիս	10	Տ	7	2	
Յուլիս	9	Տ	10	5		Յուլիս	9	Գ	6	5	
Աւգոստոս	8	Գ	10	5		Աւգոստոս	8	Տ	6	5	
Սեպտեմբեր	6	Տ	10	3		Սեպտեմբեր	6	Գ	6	3	
Հոկտեմբեր	6	Գ	10	3		Հոկտեմբեր	6	Տ	6	3	
Նոյեմբեր	4	Տ	10	1		Նոյեմբեր	4	Գ	6	1	
Դեկտեմբեր	4	Գ	10	1		Դեկտեմբեր	4	Տ	6	1	

Լրումն Լուսնի	Քա- նիք	Տի Գիշ	Ժամ	Մա- սըն	Ծանոթ.	Լրումն լուսնի	Քա- նիք	Տի Գիշ	Ժամ	Մա- սըն	Ծանոթ.
Յունուար	28	Գ	6	1	հնգեակն՝ 75	Յունուար	28	Տ	2	1	հնգեակն՝ 35
Փետրուար	27	Տ	6	1	վեցեակն՝ 90	Փետրուար	27	Գ	2	1	վեցեակն՝ 42
Մարտ	29	Գ	6	1	վերադիրն՝ 17	Մարտ	29	Տ	2	1	վերադիրն՝ 17
Ապրիլ	27	Տ	5	4	լրումն՝ Մարտ 29	Ապրիլ	27	Գ	1	4	լրումն՝ Մարտ 29
Մայիս	26	Գ	5	2	ԲԺ-ան լուսին	Մայիս	26	Տ	1	2	ԲԺ-ան լուսնի
Յունիս	25	Տ	5	2		Յունիս	25	Գ	1	2	
Յուլիս	24	Գ	4	5		Յուլիս	24	Տ	12	5	
Ազոստոս	23	Տ	4	5		Ազոստոս	23	Տ	12	5	
Սեպտեմբեր	21	Գ	4	3		Սեպտեմբեր	21	Գ	12	3	
Հոկտեմբեր	21	Տ	4	3		Հոկտեմբեր	21	Տ	12	3	
Նոյեմբեր	19	Գ	4	1		Նոյեմբեր	19	Գ	12	1	
Դեկտեմբեր	19	Տ	4	1		Դեկտեմբեր	19	Տ	12	1	

8.

Ծնունդն Լուսնի	Քա- նիք	Տի Գիշ	Ժամ	Մա- սըն	Ծանոթ.	Ծնունդն լուսնի	Քա- նիք	Տի Գիշ	Ժամ	Մա- սըն	Ծանոթ.
Յունուար	2	Տ	9	4	հնգեակն՝ 80	Յունուար	2	Գ	5	4	հնգեակն՝ 40
Փետրուար	1	Գ	9	4	վեցեակն՝ 96	Փետրուար	1	Տ	5	4	վեցեակն՝ 48
Մարտ	2	Տ	9	2	վերադիրն՝ 28	Մարտ	2	Գ	5	2	վերադիրն՝ 28
Ապրիլ	1 30	Գ Տ	9 8	2 5	լրումն՝ Ապրիլ 17	Ապրիլ	1 30	Տ Գ	5 4	2 5	լրումն՝ Ապրիլ 17
Մայիս	30	Գ	8	5	ԳԺ-ան լուսին	Մայիս	30	Տ	4	5	ԳԺ-ան լուսնի
Յունիս	28	Տ	8	3		Յունիս	28	Գ	4	3	
Յուլիս	28	Գ	8	3		Յուլիս	28	Տ	4	3	
Ազոստոս	26	Տ	8	1		Ազոստոս	26	Գ	4	1	
Սեպտեմբեր	25	Գ	8	1		Սեպտեմբեր	25	Տ	4	1	
Հոկտեմբեր	24	Տ	7	4		Հոկտեմբեր	24	Գ	3	4	
Նոյեմբեր	23	Գ	7	4		Նոյեմբեր	23	Տ	3	4	
Դեկտեմբեր	22	Տ	7	2		Դեկտեմբեր	22	Գ	3	2	

Լրումն Լուսնի	Քա- նիք	Տի Գիշ	Ժամ	Մա- սըն	Ծանոթ.	Լրումն լուսնի	Քա- նիք	Տի Գիշ	Ժամ	Մա- սըն	Ծանոթ.
Յունուար	17	Գ	3	4	հնգեակն՝ 80	Յունուար	17	Գ	11	4	հնգեակն՝ 40
Փետրուար	16	Տ	3	4	վեցեակն՝ 96	Փետրուար	16	Տ	11	4	վեցեակն՝ 48
Մարտ	17	Գ	3	2	վերադիրն՝ 28	Մարտ	17	Գ	11	2	վերադիրն՝ 28
Ապրիլ	17	Տ	3	4	լրումն՝ Ապրիլ 17	Ապրիլ	17	Տ	11	4	լրումն՝ Ապրիլ 17
Մայիս	15	Գ	2	5	ԳԺ-ան լուսին	Մայիս	15	Գ	10	5	ԳԺ-ան լուսնի
Յունիս	14	Տ	2	5		Յունիս	14	Տ	10	5	
Յուլիս	13	Գ	2	3		Յուլիս	13	Գ	10	3	
Ազոստոս	12	Տ	2	3		Ազոստոս	12	Տ	10	3	
Սեպտեմբեր	10	Գ	2	1		Սեպտեմբեր	10	Գ	10	1	
Հոկտեմբեր	10	Տ	2	1		Հոկտեմբեր	10	Տ	10	1	
Նոյեմբեր	8	Գ	1	4		Նոյեմբեր	8	Գ	9	4	
Դեկտեմբեր	8	Տ	1	4		Դեկտեմբեր	8	Տ	9	4	

9.

Ծնունդն Լուսնի	Քա- նիք	Տի Գիշ	Ժամ	Մա- սըն	Ծանոթ.	Ծնունդն լուսնի	Քա- նիք	Տի Գիշ	Ժամ	Մա- սըն	Ծանոթ.
Յունուար	21	Գ	7	2	հնգեակն՝ 85	Յունուար	21	Տ	3	2	հնգեակն՝ 45
Փետրուար	20	Տ	7	2	վեցեակն՝ 102	Փետրուար	20	Գ	3	2	վեցեակն՝ 54
Մարտ	21	Գ	6	5	վերադիրն՝ 9	Մարտ	21	Տ	2	5	վերադիրն՝ 9
Ապրիլ	20	Տ	6	5	լրումն՝ Ապրիլ 6	Ապրիլ	20	Գ	2	5	լրումն՝ Ապրիլ 6
Մայիս	19	Գ	6	3	ԲԺ-ան լուսին	Մայիս	19	Տ	2	3	ԲԺ-ան լուսնի
Յունիս	18	Տ	6	3		Յունիս	18	Գ	2	3	
Յուլիս	17	Գ	6	1		Յուլիս	17	Տ	2	1	
Ազոստոս	16	Տ	6	1		Ազոստոս	16	Գ	2	1	
Սեպտեմբեր	14	Գ	5	4		Սեպտեմբեր	14	Տ	1	4	
Հոկտեմբեր	14	Տ	5	4		Հոկտեմբեր	14	Գ	1	4	
Նոյեմբեր	12	Գ	5	2		Նոյեմբեր	12	Տ	1	2	
Դեկտեմբեր	12	Տ	5	2		Դեկտեմբեր	12	Գ	1	2	

Լրումն Լուսնի	Քա- նիք	Տի Գիշ	Ժամ	Մա- սրն	Ծանոթ.	Լրումն լուսնի	Քա- նիք	Տի Գիշ	Ժամ	Մա- սրն	Ծանոթ.
Յունուար	6	Գ	1	2	հնգեակն՝ 85	Յունուար	6	Գ	9	2	հնգեակն՝ 45
Փետրուար	5	Տ	1	2	վեցեակն՝ 102	Փետրուար	5	Տ	9	2	վեցեակն՝ 54
Մարտ	6	Տ	12	5	վերադիրն՝ 9	Մարտ	6	Գ	8	5	վերադիրն՝ 9
Ապրիլ	6	Տ	1	2	լրում՝ Ապրիլ 6	Ապրիլ	6	Տ	9	2	լրում՝ Ապրիլ 6
Մայիս	4	Տ	12	3	ԲԺ-ան լուսն	Մայիս	4	Գ	8	3	ԲԺ-ան լուսնի
Յունիս	3	Գ	12	3		Յունիս	3	Տ	8	3	
Յուլիս	2	Տ	12	1		Յուլիս	2	Գ	8	1	
	31	Գ	11	4			31	Տ	7	4	
Աւգոստոս	30	Տ	11	4		Աւգոստոս	30	Գ	7	4	
Սեպտեմբեր	29	Գ	11	4		Սեպտեմբեր	29	Տ	7	4	
Հոկտեմբեր	29	Տ	11	4		Հոկտեմբեր	29	Գ	7	4	
Նոյեմբեր	27	Գ	11	2		Նոյեմբեր	27	Տ	7	2	
Դեկտեմբեր	26	Տ	10	5		Դեկտեմբեր	26	Գ	6	5	

10.

Ծնունդն Լուսնի	Քա- նիք	Տի Գիշ	Ժամ	Մա- սրն	Ծանոթ.	Ծնունդն լուսնի	Քա- նիք	Տի Գիշ	Ժամ	Մա- սրն	Ծանոթ.
Յունուար	9	Գ	4	3	հնգեակն՝ 90	Յունուար	9	Գ	12	3	հնգեակն՝ 50
Փետրուար	8	Տ	4	3	վեցեակն՝ 108	Փետրուար	8	Տ	12	3	վեցեակն՝ 60
Մարտ	9	Գ	4	1	վերադիրն՝ 21	Մարտ	9	Գ	12	1	վերադիրն՝ 21
Ապրիլ	8	Տ	4	1	լրում՝ Մարտ 25	Ապրիլ	8	Տ	12	1	լրում՝ Մարտ 25
Մայիս	7	Գ	3	4	ԲԺ-ան լուսն	Մայիս	7	Գ	11	4	ԲԺ-ան լուսնի
Յունիս	6	Տ	3	4		Յունիս	6	Տ	11	4	
Յուլիս	5	Գ	3	2		Յուլիս	5	Գ	11	2	
Աւգոստոս	4	Տ	3	2		Աւգոստոս	4	Տ	11	2	
Սեպտեմբեր	2	Գ	2	5		Սեպտեմբեր	2	Գ	10	5	
Հոկտեմբեր	2	Տ	2	5		Հոկտեմբեր	2	Տ	10	5	
	31	Գ	2	3			31	Գ	10	3	
Նոյեմբեր	30	Տ	2	3		Նոյեմբեր	30	Տ	10	3	
Դեկտեմբեր	29	Գ	2	1		Դեկտեմբեր	29	Գ	10	1	

Լրումն Լուսնի	Քա- նիք	Տի Գիշ	Ժամ	Մա- սրն	Ծանոթ.	Լրումն լուսնի	Քա- նիք	Տի Գիշ	Ժամ	Մա- սրն	Ծանոթ.
Յունուար	24	Գ	10	3	հնգեակն՝ 90	Յունուար	24	Տ	6	3	հնգեակն՝ 50
Փետրուար	23	Տ	10	3	վեցեակն՝ 108	Փետրուար	23	Գ	6	3	վեցեակն՝ 60
Մարտ	25	Գ	10	3	վերադիրն՝ 21	Մարտ	25	Տ	6	3	վերադիրն՝ 21
Ապրիլ	23	Տ	10	1	լրում՝ Մարտ 25	Ապրիլ	23	Գ	6	1	լրում՝ Մարտ 25
Մայիս	22	Գ	9	4	ԲԺ-ան լուսն	Մայիս	22	Տ	5	4	ԲԺ-ան լուսնի
Յունիս	21	Տ	9	4		Յունիս	21	Գ	5	4	
Յուլիս	20	Գ	9	2		Յուլիս	20	Տ	5	2	
Աւգոստոս	19	Տ	9	2		Աւգոստոս	19	Գ	5	2	
Սեպտեմբեր	17	Գ	8	5		Սեպտեմբեր	17	Տ	4	5	
Հոկտեմբեր	17	Տ	8	5		Հոկտեմբեր	17	Գ	4	5	
Նոյեմբեր	15	Գ	8	3		Նոյեմբեր	15	Տ	4	3	
Դեկտեմբեր	15	Տ	8	3		Դեկտեմբեր	15	Գ	4	3	

11.

Ծնունդն Լուսնի	Քա- նիք	Տի Գիշ	Ժամ	Մա- սրն	Ծանոթ.	Ծնունդն լուսնի	Քա- նիք	Տի Գիշ	Ժամ	Մա- սրն	Ծանոթ.
Յունուար	28	Տ	2	1	հնգեակն՝ 95	Յունուար	28	Տ	10	1	հնգեակն՝ 55
Փետրուար	27	Գ	2	1	վեցեակն՝ 114	Փետրուար	27	Գ	10	1	վեցեակն՝ 66
Մարտ	28	Տ	1	4	վերադիրն՝ 2	Մարտ	28	Տ	9	4	վերադիրն՝ 2
Ապրիլ	27	Գ	1	4	լրում՝ Ապրիլ 13	Ապրիլ	27	Գ	9	4	լրում՝ Ապրիլ 13
Մայիս	26	Տ	1	2	ԳԺ-ան լուսն	Մայիս	26	Տ	9	2	ԳԺ-ան լուսնի
Յունիս	25	Գ	1	2		Յունիս	25	Գ	9	2	
Յուլիս	24	Տ	1	5		Յուլիս	24	Տ	8	5	
Աւգոստոս	23	Տ	12	5		Աւգոստոս	23	Գ	8	5	
Սեպտեմբեր	21	Գ	12	3		Սեպտեմբեր	21	Տ	8	3	
Հոկտեմբեր	21	Տ	12	3		Հոկտեմբեր	21	Գ	8	3	
Նոյեմբեր	19	Գ	12	1		Նոյեմբեր	19	Տ	8	1	
Դեկտեմբեր	19	Տ	12	1		Դեկտեմբեր	19	Գ	8	1	

Լրումն Լուսնի	Քա- նիք	Տի Գիշ	Ժամ	Մա- սրն	Ծանոթ.	Լրումն լուսնի	Քա- նիք	Տի Գիշ	Ժամ	Մա- սրն	Ծանոթ.
Յունուար	13	Գ	8	1	հնգեակն՝ 95	Յունուար	13	Տ	4	1	հնգեակն՝ 55
Փետրուար	12	Տ	8	1	վեցեակն՝ 114	Փետրուար	12	Գ	4	1	վեցեակն՝ 66
Մարտ	13	Գ	7	4	վերադիրն՝ 2	Մարտ	13	Տ	3	4	վերադիրն՝ 2
Ապրիլ	13	Տ	8	1	լրումն՝ Ապրիլ 13	Ապրիլ	13	Գ	4	1	լրումն՝ Ապրիլ 13
Մայիս	11	Գ	7	2	ԲԺ-ան լուսնի	Մայիս	11	Տ	3	2	ԲԺ-ան լուսնի
Յունիս	10	Տ	7	2		Յունիս	10	Գ	3	2	
Յուլիս	9	Գ	6	5		Յուլիս	9	Տ	2	5	
Աւգոստոս	8	Տ	6	5		Աւգոստոս	8	Գ	2	5	
Սեպտեմբեր	6	Գ	6	3		Սեպտեմբեր	6	Տ	2	3	
Հոկտեմբեր	6	Տ	6	3		Հոկտեմբեր	6	Գ	2	3	
Նոյեմբեր	4	Գ	5	1		Նոյեմբեր	4	Տ	2	1	
Դեկտեմբեր	4	Տ	5	1		Դեկտեմբեր	4	Գ	2	1	

12.

Ծնունդն Լուսնի	Քա- նիք	Տի Գիշ	Ժամ	Մա- սրն	Ծանոթ.	Ծնունդն լուսնի	Քա- նիք	Տի Գիշ	Ժամ	Մա- սրն	Ծանոթ.
Յունուար	17	Տ	9	4	հնգեակն՝ 5	Յունուար	17	Տ	7	4	հնգեակն՝ 60
Փետրուար	16	Գ	9	4	վեցեակն՝ 6	Փետրուար	16	Գ	7	4	վեցեակն՝ 72
Մարտ	17	Տ	9	2	վերադիրն՝ 13	Մարտ	17	Տ	7	2	վերադիրն՝ 13
Ապրիլ	16	Գ	9	2	լրումն՝ Ապրիլ 2	Ապրիլ	16	Գ	7	2	լրումն՝ Ապրիլ 2
Մայիս	15	Տ	8	5	ԲԺ-ան լուսնի	Մայիս	15	Տ	6	5	ԲԺ-ան լուսնի
Յունիս	14	Գ	8	5		Յունիս	14	Գ		5	
Յուլիս	13	Տ	8	3		Յուլիս	13	Տ	6	3	
Աւգոստոս	12	Գ	8	3		Աւգոստոս	12	Գ	6	3	
Սեպտեմբեր	10	Տ	8	1		Սեպտեմբեր	10	Տ	6	1	
Հոկտեմբեր	10	Գ	8	1		Հոկտեմբեր	10	Գ	6	1	
Նոյեմբեր	8	Տ	7	4		Նոյեմբեր	8	Տ	5	4	
Դեկտեմբեր	8	Գ	7	4		Դեկտեմբեր	8	Գ	5	4	

Լրումն Լուսնի	Քա- նիք	Տի Գիշ	Ժամ	Մա- սրն	Ծանոթ.	Լրումն լուսնի	Քա- նիք	Տի Գիշ	Ժամ	Մա- սրն	Ծանոթ.
Յունուար	2	Տ	3	4	հնգեակն՝ 5	Յունուար	2	Տ	1	4	հնգեակն՝ 60
Փետրուար	1	Գ	3	4	վեցեակն՝ 6	Փետրուար	1	Գ	1	4	վեցեակն՝ 72
Մարտ	2	Տ	3	2	վերադիրն՝ 13	Մարտ	2	Տ	1	2	վերադիրն՝ 13
Ապրիլ	2 30	Գ Տ	3 2	4 5	լրումն՝ Ապրիլ 2	Ապրիլ	2 30	Գ Տ	1 12	4 5	լրումն՝ Ապրիլ 2
Մայիս	30	Գ	2	5	ԲԺ-ան լուսնի	Մայիս	30	Տ	12	5	ԲԺ-ան լուսնի
Յունիս	29	Տ	2	5		Յունիս	29	Տ	12	5	
Յուլիս	28	Գ	2	3		Յուլիս	28	Տ	12	3	
Աւգոստոս	27	Տ	2	3		Աւգոստոս	27	Գ	12	3	
Սեպտեմբեր	25	Գ	2	1		Սեպտեմբեր	25	Տ	12	1	
Հոկտեմբեր	25	Տ	2	1		Հոկտեմբեր	25	Գ	12	1	
Նոյեմբեր	23	Գ	1	4		Նոյեմբեր	23	Տ	11	4	
Դեկտեմբեր	22	Տ	1	2		Դեկտեմբեր	22	Գ	11	2	

13.

Ծնունդն Լուսնի	Քա- նիք	Տի Գիշ	Ժամ	Մա- սրն	Ծանոթ.	Ծնունդն լուսնի	Քա- նիք	Տի Գիշ	Ժամ	Մա- սրն	Ծանոթ.
Յունուար	6	Տ	7	2	հնգեակն՝ 12	Յունուար	6	Տ	5	2	հնգեակն՝ 78
Փետրուար	5	Գ	7	2	վեցեակն՝ 10	Փետրուար	5	Գ	5	2	վեցեակն՝ 65
Մարտ	6	Տ	6	5	վերադիրն՝ 24	Մարտ	6	Տ	4	5	վերադիրն՝ 24
Ապրիլ	5	Գ	6	5	լրումն՝ Մարտ 22	Ապրիլ	5	Գ	4	5	լրումն՝ Մարտ 22
Մայիս	4	Տ	6	3	ԲԺ-ան լուսնի	Մայիս	4	Տ	4	3	ԲԺ-ան լուսնի
Յունիս	3	Գ	6	3		Յունիս	3	Գ	4	3	
Յուլիս	2	Տ	6	1		Յուլիս	2	Տ	4	1	
Աւգոստոս	1 30	Գ Տ	6 5	1 4		Աւգոստոս	1 30	Գ Տ	4 3	1 4	
Սեպտեմբեր	29	Գ	5	4		Սեպտեմբեր	29	Գ	3	4	
Հոկտեմբեր	28	Տ	5	2		Հոկտեմբեր	28	Տ	3	2	
Նոյեմբեր	27	Գ	5	2		Նոյեմբեր	27	Գ	3	2	
Դեկտեմբեր	26	Տ	4	5		Դեկտեմբեր	26	Տ	2	5	



Լրումն Լուսնի	Քա- նիք	Տի Գիշ	Ժամ	Մա- սրն	Ծանոթ.	Լրումն լուսնի	Քա- նիք	Տի Գիշ	Ժամ	Մա- սրն	Ծանոթ.
Յունուար	21	Գ	1	2	հնգեակն՝ 10	Յունուար	21	Տ	11	2	հնգեակն՝ 65
Փետրուար	20	Տ	1	2	վեցեակն՝ 12	Փետրուար	20	Գ	11	2	վեցեակն՝ 78
Մարտ	22	Գ	1	2	վերադիրն՝ 24	Մարտ	22	Տ	11	2	վերադիրն՝ 24
Ապրիլ	20	Տ	12	5	լրումն՝ Մարտ 22	Ապրիլ	20	Գ	10	5	լրումն՝ Մարտ 22
Մայիս	19	Տ	12	3	ԲԺ-ան լուսին	Մայիս	19	Տ	10	3	ԲԺ-ան լուսնի
Յունիս	18	Գ	12	3		Յունիս	18	Գ	10	3	
Յուլիս	17	Տ	12	1		Յուլիս	17	Տ	10	1	
Աւգոստոս	16	Գ	12	1		Աւգոստոս	16	Գ	10	1	
Սեպտեմբեր	14	Տ	11	4		Սեպտեմբեր	14	Տ	9	4	
Հոկտեմբեր	14	Գ	11	4		Հոկտեմբեր	14	Գ	9	4	
Նոյեմբեր	12	Տ	11	2		Նոյեմբեր	12	Տ	9	2	
Դեկտեմբեր	12	Գ	11	2		Դեկտեմբեր	12	Գ	9	2	

14.

Ծնունդն Լուսնի	Քա- նիք	Տի Գիշ	Ժամ	Մա- սրն	Ծանոթ.	Ծնունդն լուսնի	Քա- նիք	Տի Գիշ	Ժամ	Մա- սրն	Ծանոթ.
Յունուար	25	Գ	4	5	հնգեակն՝ 15	Յունուար	25	Գ	2	5	հնգեակն՝ 70
Փետրուար	24	Տ	4	5	վեցեակն՝ 18	Փետրուար	24	Տ	2	5	վեցեակն՝ 84
Մարտ	25	Գ	4	3	վերադիրն՝ 5	Մարտ	25	Գ	2	3	վերադիրն՝ 5
Ապրիլ	24	Տ	4	3	լրումն՝ Ապրիլ 10	Ապրիլ	24	Տ	2	3	լրումն՝ Ապրիլ 10
Մայիս	23	Գ	4	1	ԳԺ-ան լուսին	Մայիս	23	Գ	2	1	ԳԺ-ան լուսնի
Յունիս	22	Տ	4	1		Յունիս	22	Տ	2	1	
Յուլիս	21	Գ	3	4		Յուլիս	21	Գ	1	4	
Աւգոստոս	20	Տ	3	4		Աւգոստոս	20	Տ	1	4	
Սեպտեմբեր	18	Գ	3	2		Սեպտեմբեր	18	Գ	1	2	
Հոկտեմբեր	18	Տ	3	2		Հոկտեմբեր	18	Տ	1	2	
Նոյեմբեր	16	Գ	2	5		Նոյեմբեր	16	Տ	12	5	
Դեկտեմբեր	16	Տ	2	5		Դեկտեմբեր	16	Տ	12	5	

Լրումն Լուսնի	Քա- նիք	Տի Գիշ	Ժամ	Մա- սրն	Ծանոթ.	Լրումն լուսնի	Քա- նիք	Տի Գիշ	Ժամ	Մա- սրն	Ծանոթ.
Յունուար	10	Տ	10	5	հնգեակն՝ 15	Յունուար	10	Տ	8	5	հնգեակն՝ 70
Փետրուար	9	Գ	10	5	վեցեակն՝ 18	Փետրուար	9	Գ	8	5	վեցեակն՝ 84
Մարտ	10	Տ	10	3	վերադիրն՝ 5	Մարտ	10	Տ	8	3	վերադիրն՝ 5
Ապրիլ	10	Գ	10	5	լրումն՝ Ապրիլ 10	Ապրիլ	10	Գ	8	5	լրումն՝ Ապրիլ 10
Մայիս	8	Տ	10	1	ԳԺ-ան լուսին	Մայիս	8	Տ	8	1	ԳԺ-ան լուսնի
Յունիս	7	Գ	10	1		Յունիս	7	Գ	8	1	
Յուլիս	6	Տ	9	4		Յուլիս	6	Տ	7	4	
Աւգոստոս	5	Գ	9	4		Աւգոստոս	5	Գ	7	4	
Սեպտեմբեր	3	Տ	9	2		Սեպտեմբեր	3	Տ	7	2	
Հոկտեմբեր	3	Գ	9	2		Հոկտեմբեր	3	Գ	7	2	
Նոյեմբեր	1	Տ	8	5		Նոյեմբեր	1	Տ	6	5	
Դեկտեմբեր	1	Գ	8	5		Դեկտեմբեր	1	Գ	6	5	
	30	Տ	8	3			30	Տ	6	3	

15.

Ծնունդն Լուսնի	Քա- նիք	Տի Գիշ	Ժամ	Մա- սրն	Ծանոթ.	Ծնունդն լուսնի	Քա- նիք	Տի Գիշ	Ժամ	Մա- սրն	Ծանոթ.
Յունուար	14	Գ	2	3	հնգեակն՝ 20	Յունուար	14	Տ	12	3	հնգեակն՝ 75
Փետրուար	13	Տ	2	3	վեցեակն՝ 24	Փետրուար	13	Գ	12	3	վեցեակն՝ 90
Մարտ	14	Գ	2	1	վերադիրն՝ 16	Մարտ	14	Տ	12	1	վերադիրն՝ 16
Ապրիլ	13	Տ	2	1	լրումն՝ Մարտ 30	Ապրիլ	13	Գ	12	1	լրումն՝ Մարտ 30
Մայիս	12	Գ	1	4	ԲԺ-ան լուսին	Մայիս	12	Տ	11	4	ԲԺ-ան լուսնի
Յունիս	11	Տ	1	4		Յունիս	11	Գ	11	4	
Յուլիս	10	Գ	1	2		Յուլիս	10	Տ	11	2	
Աւգոստոս	9	Տ	1	2		Աւգոստոս	9	Գ	11	2	
Սեպտեմբեր	7	Տ	12	5		Սեպտեմբեր	7	Տ	10	5	
Հոկտեմբեր	7	Տ	12	5		Հոկտեմբեր	7	Գ	10	5	
Նոյեմբեր	5	Տ	12	3		Նոյեմբեր	5	Տ	10	3	
Դեկտեմբեր	5	Գ	12	3		Դեկտեմբեր	5	Գ	10	3	

Լրումն Լուսնի	Քա- նիք	Տի Գիշ	Ժամ	Մա- սըն	Ծանոթ.	Լրումն լուսնի	Քա- նիք	Տի Գիշ	Ժամ	Մա- սըն	Ծանոթ.
Յունուար	29	Գ	8	3	հնգեակն՝ 20	Յունուար	29	Գ	6	3	հնգեակն՝ 75
Փետրուար	28	Տ	8	3	վեցեակն՝ 24	Փետրուար	28	Տ	6	3	վեցեակն՝ 90
Մարտ	30	Գ	8	3	վերադիրն՝ 16	Մարտ	30	Գ	6	3	վերադիրն՝ 16
Ապրիլ	28	Տ	8	3	լրումն՝ Մարտ 30	Ապրիլ	28	Տ	6	1	լրումն՝ Մարտ 30
Մայիս	27	Գ	7	4	ԲԺ-ան լուսնի	Մայիս	27	Գ	5	4	ԲԺ-ան լուսնի
Յունիս	26	Տ	7	4		Յունիս	26	Տ	5	4	
Յուլիս	25	Գ	7	2		Յուլիս	25	Գ	5	2	
Աւգոստոս	24	Տ	7	2		Աւգոստոս	24	Տ	5	2	
Սեպտեմբեր	22	Գ	6	5		Սեպտեմբեր	22	Գ	4	5	
Հոկտեմբեր	22	Տ	6	5		Հոկտեմբեր	22	Տ	4	5	
Նոյեմբեր	20	Գ	6	3		Նոյեմբեր	20	Գ	4	3	
Դեկտեմբեր	20	Տ	ձ	խ		Դեկտեմբեր	20	Տ	4	3	

16.

Ծնունդն Լուսնի	Քա- նիք	Տի Գիշ	Ժամ	Մա- սըն	Ծանոթ.	Ծնունդն լուսնի	Քա- նիք	Տի Գիշ	Ժամ	Մա- սըն	Ծանոթ.
Յունուար	3	Տ	12	1	հնգեակն՝ 25	Յունուար	3	Տ	10	1	հնգեակն՝ 80
Փետրուար	2	Գ	12	1	վեցեակն՝ 30	Փետրուար	2	Գ	10	1	վեցեակն՝ 96
Մարտ	3	Տ	11	4	վերադիրն՝ 27	Մարտ	3	Տ	9	4	վերադիրն՝ 27
Ապրիլ	2	Գ	11	4	լրումն՝ Ապրիլ 18	Ապրիլ	2	Գ	9	4	լրումն՝ Ապրիլ 18
Մայիս	1 31	Տ Գ	11 11	2 2	ԳԺ-ան լուսնի	Մայիս	1 31	Տ Գ	9 9	2 2	ԳԺ-ան լուսնի
Յունիս	29	Տ	10	5		Յունիս	29	Տ	8	5	
Յուլիս	29	Գ	10	5		Յուլիս	29	Գ	8	5	
Աւգոստոս	27	Տ	10	3		Աւգոստոս	27	Տ	8	3	
Սեպտեմբեր	26	Գ	10	3		Սեպտեմբեր	26	Գ	8	3	
Հոկտեմբեր	25	Տ	10	1		Հոկտեմբեր	25	Տ	8	1	
Նոյեմբեր	24	Գ	10	1		Նոյեմբեր	24	Գ	8	1	
Դեկտեմբեր	23	Տ	9	4		Դեկտեմբեր	23	Տ	7	4	

Լրումն Լուսնի	Քա- նիք	Տի Գիշ	Ժամ	Մա- սըն	Ծանոթ.	Լրումն լուսնի	Քա- նիք	Տի Գիշ	Ժամ	Մա- սըն	Ծանոթ.
Յունուար	18	Գ	6	1	հնգեակն՝ 25	Յունուար	18	Գ	4	1	հնգեակն՝ 80
Փետրուար	17	Տ	6	1	վեցեակն՝ 30	Փետրուար	17	Տ	4	1	վեցեակն՝ 96
Մարտ	18	Գ	5	4	վերադիրն՝ 27	Մարտ	18	Գ	3	4	վերադիրն՝ 27
Ապրիլ	18	Տ	6	1	լրումն՝ Ապրիլ 18	Ապրիլ	18	Տ	4	1	լրումն՝ Ապրիլ 18
Մայիս	16	Գ	5	2	ԳԺ-ան լուսնի	Մայիս	16	Գ	3	2	ԳԺ-ան լուսնի
Յունիս	15	Տ	5	2		Յունիս	15	Տ	3	2	
Յուլիս	14	Գ	4	5		Յուլիս	14	Գ	2	5	
Աւգոստոս	13	Տ	4	5		Աւգոստոս	13	Տ	2	5	
Սեպտեմբեր	11	Գ	4	3		Սեպտեմբեր	11	Գ	2	3	
Հոկտեմբեր	11	Տ	4	3		Հոկտեմբեր	11	Տ	2	3	
Նոյեմբեր	9	Գ	4	1		Նոյեմբեր	9	Գ	2	1	
Դեկտեմբեր	9	Տ	4	1		Դեկտեմբեր	9	Տ	2	1	

17.

Ծնունդն Լուսնի	Քա- նիք	Տի Գիշ	Ժամ	Մա- սըն	Ծանոթ.	Ծնունդն լուսնի	Քա- նիք	Տի Գիշ	Ժամ	Մա- սըն	Ծանոթ.
Յունուար	22	Գ	9	4	հնգեակն՝ 30	Յունուար	22	Գ	7	4	հնգեակն՝ 85
Փետրուար	21	Տ	9	4	վեցեակն՝ 36	Փետրուար	21	Տ	7	4	վեցեակն՝ 102
Մարտ	22	Գ	9	2	վերադիրն՝ 8	Մարտ	22	Գ	7	2	վերադիրն՝ 8
Ապրիլ	21	Տ	9	2	լրումն՝ Ապրիլ 7	Ապրիլ	21	Տ	7	2	լրումն՝ Ապրիլ 7
Մայիս	20	Գ	8	5	ԲԺ-ան լուսնի	Մայիս	20	Գ	6	5	ԲԺ-ան լուսնի
Յունիս	19	Տ	8	5		Յունիս	19	Տ	6	5	
Յուլիս	18	Գ	8	3		Յուլիս	18	Գ	6	3	
Աւգոստոս	17	Տ	8	3		Աւգոստոս	17	Տ	6	3	
Սեպտեմբեր	15	Գ	8	1		Սեպտեմբեր	15	Գ	6	1	
Հոկտեմբեր	15	Տ	8	1		Հոկտեմբեր	15	Տ	6	1	
Նոյեմբեր	13	Գ	7	4		Նոյեմբեր	13	Գ	5	4	
Դեկտեմբեր	13	Տ	7	4		Դեկտեմբեր	13	Տ	5	4	

Լրումն Լուսնի	Քա- նիք	Տի Գիշ	Ժամ	Մա- սրն	Ծանոթ.	Լրումն լուսնի	Քա- նիք	Տի Գիշ	Ժամ	Մա- սրն	Ծանոթ.
Յունուար	7	Գ	3	4	հնգեակն՝ 30	Յունուար	7	Գ	1	4	հնգեակն՝ 85
Փետրուար	6	Տ	3	4	վեցեակն՝ 36	Փետրուար	6	Տ	1	4	վեցեակն՝ 102
Մարտ	7	Գ	3	2	վերադիրն՝ 8	Մարտ	7	Գ	1	2	վերադիրն՝ 8
Ապրիլ	7	Տ	3	4	լրումն՝ Ապրիլ 7	Ապրիլ	7	Տ	1	4	լրումն՝ Ապրիլ 7
Մայիս	5	Գ	2	5	ԲԺ-ան լուսն	Մայիս	5	Տ	12	5	ԲԺ-ան լուսնի
Յունիս	4	Տ	2	5		Յունիս	4	Տ	12	5	
Յուլիս	3	Գ	2	3		Յուլիս	3	Տ	12	3	
Աւգոստոս	2	Տ	2	3		Աւգոստոս	2	Գ	12	3	
	31	Գ	2	1			31	Տ	12	1	
Սեպտեմբեր	30	Տ	2	1		Սեպտեմբեր	30	Գ	12	1	
Հոկտեմբեր	30	Գ	2	1		Հոկտեմբեր	30	Տ	12	1	
Նոյեմբեր	28	Տ	1	4		Նոյեմբեր	28	Գ	11	4	
Դեկտեմբեր	27	Գ	1	2		Դեկտեմբեր	27	Տ	11	2	

18.

Ծնունդն Լուսնի	Քա- նիք	Տի Գիշ	Ժամ	Մա- սրն	Ծանոթ.	Ծնունդն լուսնի	Քա- նիք	Տի Գիշ	Ժամ	Մա- սրն	Ծանոթ.
Յունուար	11	Գ	7	2	հնգեակն՝ 35	Յունուար	11	Գ	5	2	հնգեակն՝ 90
Փետրուար	10	Տ	7	2	վեցեակն՝ 42	Փետրուար	10	Տ	5	2	վեցեակն՝ 108
Մարտ	11	Գ	6	5	վերադիրն՝ 19	Մարտ	11	Գ	4	5	վերադիրն՝ 19
Ապրիլ	10	Տ	6	5	լրումն՝ Մարտ 27	Ապրիլ	10	Տ	4	5	լրումն՝ Մարտ 27
Մայիս	9	Գ	6	3	ԲԺ-ան լուսն	Մայիս	9	Գ	4	3	ԲԺ-ան լուսնի
Յունիս	8	Տ	6	3		Յունիս	8	Տ	4	3	
Յուլիս	7	Գ	6	1		Յուլիս	7	Գ	4	1	
Աւգոստոս	6	Տ	6	1		Աւգոստոս	6	Տ	4	1	
Սեպտեմբեր	4	Գ	5	4		Սեպտեմբեր	4	Գ	3	4	
Հոկտեմբեր	4	Տ	5	4		Հոկտեմբեր	4	Տ	3	4	
Նոյեմբեր	2	Գ	5	2		Նոյեմբեր	2	Գ	3	2	
Դեկտեմբեր	2	Տ	5	2		Դեկտեմբեր	2	Տ	3	2	
	31	Գ	4	5			31	Գ	2	5	

Լրումն Լուսնի	Քա- նիք	Տի Գիշ	Ժամ	Մա- սրն	Ծանոթ.	Լրումն լուսնի	Քա- նիք	Տի Գիշ	Ժամ	Մա- սրն	Ծանոթ.
Յունուար	26	Տ	1	2	հնգեակն՝ 35	Յունուար	26	Գ	11	2	հնգեակն՝ 90
Փետրուար	25	Գ	1	2	վեցեակն՝ 42	Փետրուար	25	Տ	11	2	վեցեակն՝ 108
Մարտ	27	Տ	1	2	վերադիրն՝ 19	Մարտ	27	Գ	11	2	վերադիրն՝ 19
Ապրիլ	25	Տ	12	5	լրումն՝ Մարտ 27	Ապրիլ	25	Տ	10	5	լրումն՝ Մարտ 27
Մայիս	24	Գ	12	3	ԲԺ-ան լուսն	Մայիս	24	Գ	10	3	ԲԺ-ան լուսնի
Յունիս	23	Տ	12	3		Յունիս	23	Տ	10	3	
Յուլիս	22	Գ	12	1		Յուլիս	22	Գ	10	1	
Աւգոստոս	21	Տ	12	1		Աւգոստոս	21	Տ	10	1	
Սեպտեմբեր	19	Գ	11	4		Սեպտեմբեր	19	Գ	9	4	
Հոկտեմբեր	19	Տ	11	4		Հոկտեմբեր	19	Տ	9	4	
Նոյեմբեր	17	Գ	11	2		Նոյեմբեր	17	Գ	9	2	
Դեկտեմբեր	17	Տ	11	2		Դեկտեմբեր	17	Տ	9	2	

19.

Ծնունդն Լուսնի	Քա- նիք	Տի Գիշ	Ժամ	Մա- սրն	Ծանոթ.	Ծնունդն լուսնի	Քա- նիք	Տի Գիշ	Ժամ	Մա- սրն	Ծանոթ.
Յունուար	30	Տ	4	5	հնգեակն՝ 40	Յունուար	30	Տ	2	5	հնգեակն՝ 95
Փետրուար					վեցեակն՝ 48	Փետրուար					վեցեակն՝ 114
Մարտ	1	Գ	4	5	վերադիրն՝ 30	Մարտ	1	Գ	2	5	վերադիրն՝ 30
	30	Տ	4	3			30	Տ	2	3	
Ապրիլ	29	Գ	4	3	լրումն՝ Ապրիլ 15	Ապրիլ	29	Գ	2	3	լրումն՝ Ապրիլ 15
Մայիս	28	Տ	4	1	ԳԺ-ան լուսն	Մայիս	28	Տ	2	1	ԳԺ-ան լուսնի
Յունիս	27	Գ	4	1		Յունիս	27	Գ	2	1	
Յուլիս	26	Տ	3	4		Յուլիս	26	Տ	1	4	
Աւգոստոս	25	Գ	3	4		Աւգոստոս	25	Գ	1	4	
Սեպտեմբեր	23	Տ	3	2		Սեպտեմբեր	23	Տ	1	2	
Հոկտեմբեր	[23]	Գ	3	2		Հոկտեմբեր	[23]	Գ	1	2	
Նոյեմբեր	21	Տ	2	5		Նոյեմբեր	21	Տ	12	5	
Դեկտեմբեր	21	Գ	2	5		Դեկտեմբեր	21	Տ	12	5	

Լրումն Լուսնի	Քա- նիք	Տի Գիշ	Ժամ	Մա- սըն	Ծանոթ.	Լրումն լուսնի	Քա- նիք	Տի Գիշ	Ժամ	Մա- սըն	Ծանոթ.
Յունուար	15	Գ	10	5	հնգեակն՝ 40	Յունուար	15	Գ	8	5	հնգեակն՝ 95
Փետրուար	14	Տ	10	5	վեցեակն՝ 48	Փետրուար	14	Տ	8	5	վեցեակն՝ 114
Մարտ	15	Գ	10	3	վերադարձն՝ 30	Մարտ	15	Գ	8	3	վերադարձն՝ 30
Ապրիլ	15	Տ	10	5	լրումն՝ Ապրիլ 15	Ապրիլ	15	Տ	8	5	լրումն՝ Ապրիլ 15
Մայիս	13	Գ	10	1	ԳԺ-ան լուսնի	Մայիս	13	Գ	8	1	ԳԺ-ան լուսնի
Յունիս	13	Տ	10	3		Յունիս	13	Տ	8	3	
Յուլիս	11	Գ	9	4		Յուլիս	11	Գ	7	4	
Ագոստոս	10	Տ	9	4		Ագոստոս	10	Տ	7	4	
Սեպտեմբեր	8	Գ	9	2		Սեպտեմբեր	8	Գ	7	2	
Հոկտեմբեր	8	Տ	9	2		Հոկտեմբեր	8	Տ	7	2	
Նոյեմբեր	6	Գ	8	5		Նոյեմբեր	6	Գ	6	5	
Դեկտեմբեր	6	Տ	8	5		Դեկտեմբեր	6	Տ	6	5	

Ներկայացնենք նաև Լուսնացույցի Համառոտ տարբերակը, որի հեղինակը հետևել է Հովհաննես Սարկավազին կենտ ամիսների կտրվածքով, իսկ զույգ ամիսների հաշվարկը կատարել է տոմարական նույն կանոններով: Համառոտ Լուսնացույցի մեջ ուղղել ենք գրչագրական և ակնհայտ վրիպումները, իսկ կեսերը հավասարման նշանով ամբողջացրել ենք դեպի առաջիկա ամբողջ թիվը, իսկ երբեմն՝ հավասարման նշանից հետո վերացրել ենք ելնելով Լուսնացույցի ներքին օրինաչափությունից: Լուսնացույցի Համառոտ խմբագրությունը ուղղագրվել է նաև նրանով, որ տպագիր Լուսնացույցի հեղինակը կամ հեղինակները օգտվել են նրանից, միաժամանակ ընդօրինակելով այն իրենց կազմած ժողովածուում:

Այն ակնհայտորեն ստեղծվել է Սարկավազից հետո և 1342 թվականից առաջ, ամենայն հավանականությամբ 12-րդ դարի 2-րդ կեսին:

Ներկայացնենք Լուսնացույցի Համառոտ տարբերակի բնագիրը մեր ուղղումներով հանդերձ: Համեմատությունը հեշտացնելու համար զուգահեռաբար տանք առկա բնագրի Համառոտ տարբերակը:

Լուսնի ծնունդներն ըստ Լուսնացույցի Համառոտ խմբագրության

Ու- կետ	1 10	2 11	3 12	4 13	5 14	6 15	7 16	8 17	9 18	10 19	11 1	12 2	13 3	14 4	15 5	16 6	17 7	18 8	19 9
գիր	A 4	M 24	A 12	A 1	M 21	A 9	M 29	A 17	A 6	M 25	A 13	A 2	M 22	A 10	M 30	A 18	A 7	M 27	A 15
վե- րադ արձ	11	22	3	14	25	6	17	28	9	21	2	13	24	5	16	27	8	19	30
հուն	19	8	27	16	5	24	13	2	21	9	28	17	6	25	14	3	22	11	30
փտ	17, 5 =18	6,5 =7	25, 5=2 6	14, 5=1 5	3,5 =4	22, 5=2 3	11,5 =12	0,5 =1	19, 5=2 0	7,5 =8	26, 5=2 7	15, 5=1 6	4,5 =5	23, 5=2 4	12, 5=1 3	1,5 =2	20, 5=2 1	9,5 =10	
մրտ	19	8	27	16	5	24	13	2	21	9	28	27? [17]	6	25	15? [14]	3	22	11	1/3 0
ապ	17, 5 =18	6,5 =7	25, 5=2 6	14, 5=1 5	3,5 =4	22, 5=2 3	11,5 =12	0,5 =1/ 30	19, 5=2 0	7,5 =8	26, 5=2 7	30? [16] 15, 5	4,5 =5	12, 5? =13	12, 5=1 3	1,5 =2	20, 5=2 1	9,5 =10	28, 5=2 9
մայ	17	6	25	14	3	22	11	30	19	7	26	15	4	23	12	1/3 1	20	9	28
հուն	15, 5=1 6	4,5 =5	23, 5=2 4	12, 5=1 3	1,5 =2	20, 5=2 1	9,5= 10	28, 5=2 8	17, 5= 18	5,5 =6	24, 5=2 5	13, 5=1 4	2,5 =3	21, 5=2 2	10, 5=1 1	29	18, 5=1 9	7,5 =8	26, 5=2 7
հուլ	15	4	23	12	1/3 1	20	9	2? [28]	17	5	24	13	2	21	10	29	18	7	26
օգ	13, 5=1 4	2,5 =3	21, 5=2 2	10, 5=1 1	29, 5	18, 5=1 9	7,5= 8	26, 5=2 6	15, 5 [16]	3,5 =4	22, 5=2 3	11, 5=1 2	0,5 =1 30, 5=3 0	19, 5 20	8,5 =9	27, 5 27	16, 5 17	5,5 =6	24, 5=2 5
սեպ	12	1	20	9	29? 28	17	[1]6	25	14	2	21	10	29	18	7	26	15	4	23
հոկ	11, 5(= 12)	30, 5=3 1 0,5 =1	19, 5=2 0	8,5 =9	27, 5=2 7	16, 5=1 7	5,5= 6	24, 5 24	13, 5=1 4	1,5 =2/[ 3]1	20, 5 =10	9,5 =10	28, 5 28	17, 5 18	6,5 =7	25, 5 25	14, 5=1 5	3,5 =4	22, 5 23
նոյ	10	29	18	7	26	15	4	23	12	30	19	8	27	16	5	24	13	2	21
դեկ	9,5 =10	28, 5=2 8	17, 5=1 8	6,5 =7	25, 5=2 5	14, 5=1 5	3,5= 4	22, 5=2 2	11, 5=1 2	29, 5=2 9	18, 5=1 9	7,5 =8	26, 5=2 6	15, 5=1 6	4,5 =5	23, 5=2 3	12, 5 13	1,5 =2/ 31	20, 5 21

Հուլիսի լրումներն ըստ Հուլիանացույցի Համառոտ խմբագրության

Ու- կտ	1 10	2 11	3 12	4 13	5 14	6 15	7 16	8 17	9 18	10 19	11 1	12 2	13 3	14 4	15 5	16 6	17 7	18 8	19 9
գիր	A 4	M 24	A 12	A 1	M 21	A 9	M 29	A 17	A 6	M 25	A 13	A 2	M 22	A 10	M 30	A 18	A 7	M 27	A 15
վե- րադ	11	22	3	14	25	6	17	28	9	21	2	13	24	5	16	27	8	19	30
հուն	4	23	12	1	20	9	28	17	6	24	13	2	21	10	29	18	7	26	1 [15]
փտ	2,5 =3	21, 5=2 2	10, 5=1 1	1,5 =1	18, 5 19	7,5	26, 5 27	15, 5 16	4,5 5	22, 5 23	[11, 5] 11= 12	0,5 =1	19, 5 20	8,5 8? =9	27, 5 28	16, 5 17	5,5 6	24, 5 6	14, 5 15? [13, 5 14]
մրտ	4	*24	12	1	*21	9	*29	17	6	*25	16? 13	2	*22	10 13?	*30	18	7	*27 (26)	1? 15
ապ	*4	21, 5=2 2	*12	*1/ 30	18, 5 19	*9	26, 5 27	*17	*6	22, 5 23	*13	*2 1/3 1	19, 5 20	*10 (8,5 =9)	27, 5=2 8	*18 (16, 5 =17)	*7 (5,5 6")	24, 5 =25	*15 [13, 5=1 4]
մայ	2	21	10	29	18	7	26	15	4	22	11	30	19	8	27	[16]	=5 7?	24	13
հուն	1/3 0	19, 5 20	8,5 =9	27, 5=2 8	16, 5 17	7,5 [5, 5]	[24, 5] 25	13, 5 14	12, 5 13	20, 5=2 1	9, 5 10	28, 5=2 9	17, 5 18	6,5 =7	25, 5 26	14, 5=1 5	3,5 4	22, 523	11, 5
հուլ	30	19	8	27	16	5	24	13	2/3 1	20	9	28	17	6	25	14	3	22	11 27?
օգ	28, 5=2 8	17, 5=1 8	6,5 =7	25, 5=2 6	14, 5=1 5	3,5 =4	22, 5 23	11, 5 12	0,5 1/3 0 or3 1	22, 5? (18, 5)= 19	7,5 =8	26, 5 27	15, 5 15? =16	4,5 =5	23, 5 24	12, 5=1 3	1,5 =2/ 31	20, 5 21	9,5 10
սեպ	27" 28	16	5	24	13	2	21	10	29	17	6	25	14	3	22	11	1? 30	19	8
հոկ	26, 5 26	15, 5 16	4,5 =5	23, 5=2 4	12, 5 13	1,5 =2/ 31	20, 5 21	9,5 =10	29, 5? 28, 5 29	16, 5=1 7	5,5 =6	24, 5=2 5	13, 5 14, 5? =14	2,5 =3	21, 5=2 2	10, 5=1 1	29, 5 30	18, 5 19	7,5 =8
նոյ	25	14	3	22	11	30	19	8	27	15	4	23	12	1	20	9	28	17	6
դեկ	24, 5=2 4	13, 5=1 4	2,5 =3	21, 5=2 2	10, 5 11	29, 5=2 9	18, 5 19	7,5 =8	26, 5=2 6	14, 5=1 5	3,5 =4	22, 5 22	11, 5 12	15? 1/3 0	19, 5 20	8,5 =9	27, 5=2 7	16, 5=1 7	5,5 =6

Հուլիսի ծնունդներն ըստ ներկա բնագրի (14-րդ դ.)

Ու- կտ	1 10	2 11	3 12	4 13	5 14	6 15	7 16	8 17	9 18	10 19	11 1	12 2	13 3	14 4	15 5	16 6	17 7	18 8	19 9
գիր	A4	M2 4	A 12	A 1	M 21	A 9	M 29	A 17	A 6	M 25	A 13	A 2	M 22	A 10	M 30	A 18	A 7	M 27	A 15
վե- րադ	11	22	3	14	25	6	17	28	9	21	2	13	24	5	16	27	8	19	30
հուն	4	23	12	1	20	9	28	17	6	24	13	2	21	10	29	18	7	26	1 [15]
փտ	2,5 =3	21, 5=2 2	10, 5=1 1	1,5 =1	18, 5 19	7,5	26, 5 27	15, 5 16	4,5 5	22, 5 23	[11, 5] 11= 12	0,5 =1	19, 5 20	8,5 8? =9	27, 5 28	16, 5 17	5,5 6	24, 5 6	14, 5 15? [13, 5 14]
մրտ	4	*24	12	1	*21	9	*29	17	6	*25	16? 13	2	*22	10 13?	*30	18	7	*27 (26)	1? 15
ապ	*4	21, 5=2 2	*12	*1/ 30	18, 5 19	*9	26, 5 27	*17	*6	22, 5 23	*13	*2 1/3 1	19, 5 20	*10 (8,5 =9)	27, 5=2 8	*18 (16, 5 =17)	*7 (5,5 6")	24, 5 =25	*15 [13, 5=1 4]
մայ	2	21	10	29	18	7	26	15	4	22	11	30	19	8	27	[16]	=5 7?	24	13
հուն	1/3 0	19, 5 20	8,5 =9	27, 5=2 8	16, 5 17	7,5 [5, 5]	[24, 5] 25	13, 5 14	12, 5 13	20, 5=2 1	9, 5 10	28, 5=2 9	17, 5 18	6,5 =7	25, 5 26	14, 5=1 5	3,5 4	22, 523	11, 5
հուլ	30	19	8	27	16	5	24	13	2/3 1	20	9	28	17	6	25	14	3	22	11 27?
օգ	28, 5=2 8	17, 5=1 8	6,5 =7	25, 5=2 6	14, 5=1 5	3,5 =4	22, 5 23	11, 5 12	0,5 1/3 0 or3 1	22, 5? (18, 5)= 19	7,5 =8	26, 5 27	15, 5 15? =16	4,5 =5	23, 5 24	12, 5=1 3	1,5 =2/ 31	20, 5 21	9,5 10
սեպ	27" 28	16	5	24	13	2	21	10	29	17	6	25	14	3	22	11	1? 30	19	8
հոկ	26, 5 26	15, 5 16	4,5 =5	23, 5=2 4	12, 5 13	1,5 =2/ 31	20, 5 21	9,5 =10	29, 5? 28, 5 29	16, 5=1 7	5,5 =6	24, 5=2 5	13, 5 14, 5? =14	2,5 =3	21, 5=2 2	10, 5=1 1	29, 5 30	18, 5 19	7,5 =8
նոյ	25	14	3	22	11	30	19	8	27	15	4	23	12	1	20	9	28	17	6
դեկ	24, 5=2 4	13, 5=1 4	2,5 =3	21, 5=2 2	10, 5 11	29, 5=2 9	18, 5 19	7,5 =8	26, 5=2 6	14, 5=1 5	3,5 =4	22, 5 22	11, 5 12	15? 1/3 0	19, 5 20	8,5 =9	27, 5=2 7	16, 5=1 7	5,5 =6

Լուսնի լրումներն ըստ ներկա բնագրի (14-րդ դ.)

Ու կէ	1 10	2 11	3 12	4 13	5 14	6 15	7 16	8 17	9 18	10 19	11 1	12 2	13 3	14 4	15 5	16 6	17 7	18 8	19 9
գիր	A4	M 24	A12	A1	M 21	A9	M 29	A17	A6	M 25	A13	A2	M 22	A10	M 30	A18	A7	M 27	A 15
վե րադ	11	22	3	14	25	6	17	28	9	21	2	13	24	5	16	27	8	19	30
հուն	(4)	22	(11)	(1) 30	19	(9)	28	16	(5)	24	(13)	(2)	20	(10)	28	17	(6)	25	(14)
փտ	2	21	10	-	18	8	26	15	4	22	11	-	18	8	27	16	6	24	13
մրտ	4	*24	12	1	21	9	*29	16	5	*25	13	2	*22	10	*30	17	7	*27	14
ապ	*4	21	*12	*1/ 29	18	*9	26	*17	*6	22	*13	*2/ 30	18	*10	27	*18	*7	24	*15
մայ	2/3 1	20	10	28	17	7	26	14	3	22	11	29	18	8	26	15	5	23	12
հուն	30	18	8	27	16	6	24	13	2	20	9	27	16	6	25	14	3	22	11
հուլ	- (29)	18	8	26	15	5	23	12	1/3 1	20	9	27	15	6	24	13	3	21	10
օգ	29? 28	16?	6	25	14	4	23?	11	29	18	7	25	14	4	23	12	1/3 1	20	9
սեպ	26	15	5	23	12	2	20	9	28	17	6	24	13	3	21	10	29	18	8
հոկ	26	14?	4	23	12	31	20	9	27	16	5	23	12	2	21	10	29	18	7
նոյ	24	13	3	21	10	30	18	7	26	15	4	22	11	1/3 0	19	8	27	16	7
դեկ	24	12	2	21	10	29	18	7	25	14	3	21	10	30	19	8	27	16	6
հուն		11	1		9			5		13	2		10			6		14	5

Հովհաննես Սարկավազը ստեղծել է Ջատկական լուսնի լրման 19-ամյա աղյուսակ՝ Հայոց անշարժ տոմարի ամսաթվերով: 1973 թվահամարի գրչագրում (էջ 53բ, տե՛ս նաև 79ա) բերված է հետևյալ աղյուսակը.

19-ամյակի տարին	Առաջավոր	Բան Բարեկ.	Վերադիր	Լրումն
1.	Արաց ԺԷ	Մեհեկի Ը	ԺԶ	Արեգ ԻԷ(Ապրիլ 4)
2.	Արաց Զ	Արաց ԻԷ	ԻԷ	Արեգ ԺԶ (Մարտ 24)
3.	Արաց ԻԵ	Մեհեկի ԺԶ	Ը	Ահեկի Ե (Ապրիլ 12)
4.	Արաց ԺԴ	Մեհեկի Ե	ԺԹ	Արեգ ԻԴ (Ապրիլ 1)
5.	Արաց Գ	Արաց ԻԴ	Լ	Արեգ ԺԳ (Մարտ 22)
6.	Արաց ԻԲ	Մեհեկի ԺԳ	ԺԱ	Ահկի Բ (Ապրիլ 9)
7.	Արաց ԺԱ	Մեհեկի Բ	ԻԲ	Արեգ ԻԱ (Մարտ 29)
8.	Արաց Լ	Մեհեկի ԻԱ	Գ	Ահկի Ժ (Ապրիլ 17)
9.	Արաց ԺԹ	Մեհեկի Ժ	ԺԴ	Արեգ ԻԹ (Ապրիլ 6)
10.	Արաց Է	Արաց ԻԸ	ԻԶ	Արեգ ԺԷ (Մարտ 25)
11.	Արաց ԻԶ	Մեհեկի ԺԷ	Է	Ահեկի Զ (Ապրիլ 13)
12.	Արաց ԺԵ	Մեհեկի Զ	ԺԸ	Արեգ ԻԵ (Ապրիլ 2)
13.	Արաց Դ	Արաց ԻԵ	ԻԹ	Արեգ ԺԴ (Մարտ 22)
14.	Արաց ԻԳ	Մեհեկի ԺԴ	Ժ	Ահեկի Գ (Ապրիլ 10)
15.	Արաց ԺԲ	Մեհեկի Գ	ԻԱ	Արեգ ԻԲ (Մարտ 30)
16.	Մեհեկի Ա	Մեհեկի ԻԲ	Բ	Ահեկի ԺԱ (Ապրիլ 18)
17.	Արաց Ի	Մեհեկի ԺԱ	ԺԳ	Արեգ Լ (Ապրիլ 7)
18.	Արաց Թ	Արաց Լ	ԻԴ	Արեգ ԺԹ (Մարտ 27)
19.	Արաց ԻԸ	Մեհեկի ԺԹ	Ե	Ահեկի Ը (Ապրիլ 15)

Միաժամանակ աղյուսակներում գրված է.

«Զմուտ ինն և ժ երրեկ խորանաց բոլորիս Սարկաւագին այսպէս արա. կալ գթու(ականն) Սարկաւագի Թ ի բաց երթ և զայլն երթ ժԹ ժԹ, որ ի խոնարհ մնայ, ի միակէն յառաջ տուր, ուր դադարէ այն է խորան տարւոյն, յորում գտանես զառաջաւոր, և զբուն բարեկենդան, զվերադիր և զլրումն, աւագիւտ արա և տուր կիրակէ), թէ ի կիրակէ)... բայց յառաջաւորին և ի բուն Բարեկենդանին ի նահանջի ամի թիւ մի յաւել» (էջ 53բ): Սարկավազը ունեցել է վերադիրների երկու համակարգ, որոնցից մեկը դրել է իր ստեղծած Հայոց 19-ամյակի լրման համապատասխան օրերի, ինչպես վերը բերված աղյուսակի մեջ, իսկ մյուսը՝ ՇԼԲ-ի մեջ, որը սկսել է 10-րդ տարով 11-ով, որը քննել ենք Շիրակացու վերադիրների համակարգի կապակցութեամբ: Հայոց ՇԼԲ-ի մեջ առաջացել էր մեկ հավելադիր տարի՝ Գարնանային Գիշերահավասարի օրը, որը ավանդութեան համաձայն տարվա սկիզբ է ընդունվել: Այն նավասարդի 1 գալու հետևանքով, որը արդյունք էր 1460-ամյա պարբերաշրջանի շրջապտույտի (365×4), որովհետև հուլյան 1460 տարին = է Հայոց 1461 տարվա չորս տարին մեկ օրվա ավել ունենալու պատճառով:



Այս հավելագիր տարին ՇԼԲ-ի մեջ կարգավորելու համար Սարկավազը առաջարկեց միանգամից ետ գնալ ոչ թէ 532 տարի, այլ 533, որով կանոնավորում էր ՇԼԲ-ի լրման օրերը գտնելը:

Հաջորդ հարցը այն է, թե ինչո՞ւ Հովհաննես Սարկավազը Հայոց անշարժ տոմարի ամա- նորը՝ Նավասարդի 1-ը համարժեք ընդունեց հուլյան տոմարի Օգոստոս 11-ին: Այս խնդրի մա- սին գրել են սկսած Մ. Օրմանյանից մինչև է. Աղայան (Լ. Սիմյոնով, Ն. Ակինյան, Աշ. Աբրա- համյան, Լ. Բաղալյան, Բ. Թումանյան և այլն), սակայն մինչև օրս չարունակվում է բանավե- ճը տարբեր հարցերի կապակցությամբ, թեև առաջադրված հարցը կարծես թե լուծվել է սկզբունքորեն: Մենք առաջարկում ենք նոր, ամփոփիչ տարբերակ ելնելով Հայոց տոմարական և տոնացույցային եղանակների ընձեռած հնարավորություններից, որոնք հստակություն են մտցնում առաջադրված խնդիրների մեջ և պարզ պատկերացում տալիս Սարկավազի մտածելա- կերպի մասին՝ հենվելով նրա իսկ բնագրերի տվյալների վրա:

Նա ձեռնարկեց Հայոց շարժական տոմարը վերածելու անշարժի, որի համար կար երկու ճանապարհ ՇԼԲ-ի նախորդ շրջանի վերջին տարին դարձնել անշարժ, որը հարմար չգտավ, քանի որ 1084 թ. Նավասարդը ընկել էր Փետրվարի 29-ին իբրև նահանջ տարի: Նա ընտրեց հետադարձ հաշվումների ճանապարհը: Հարկ է նշել, որ Հայոց ՇԼԲ-ում առկա է երկու անշարժ օրերի նշում, որի միջոցով Հայ տոմարագետները կատարել են հետադարձ հաշվարկներ: Դրան- ցից առաջինը Քրիստոսի Ծննդեան և Աստուածայայտնութեան օրն էր, որը նաև Հայոց եկեղե- ցական տարվա սկիզբն էր՝ Հունվար 6-ը, իսկ մյուսը Գարնանային Գիշերահավասարի օրը՝ Մարտի 20-ը, որոնց միջոցով Հայոց շարժական տոմարի ամսաթիվերը վեր են ածվում նաև տա- րեթիվերի: Բնական է, որ Հովհաննես Սարկավազը պետք է ընտրեր դրանցից մեկն ու մեկը: Նա Քրիստոսի Ծննդեան և Աստուածայայտնութեան օրը բացառեց այն պատճառով, որ մյուս ժո- դովրդների տոմարական համարժեքները չէր կարող տալ, քանի որ մյուսները Քրիստոսի Ծնուն- ղը կատարում էին Դեկտեմբերի 25-ին: Մնաց միայն գարնանային գիշերահավասարի օրը, որն ընդհանուր էր և ընդունված ոչ միայն վաղ շրջանում, այլ և Սարկավազի ժամանակ: Պակաս կարևոր չէր լուսնի լրման և Զատիկի օրերի որոշման խնդիրը, որոնք անմիջականորեն առնչվում էին գարնանային գիշերահավասարի օրվա հետ: Պարզ է, որ վերջինիս ընտրությունը ոչ թե ե- լակետ էր, այլ միջոց ավելի հին ժամանակի Հայոց շարժական տոմարի ամսաթիվեր ընտրելու համար, որոնց թվում գարնանային գիշերահավասարի և ամանորի օրերը և դրանք վերածելու անշարժի: Տեսնենք թե ինչ է գրում Հովհաննես Սարկավազը.

«Իսկ որպէս այժմ կանոնեալ ունի յամենայն եկեղեցիս հաւատացելոց երից ազգաց՝ ի քսան յառաջագոյն ասացելոցդ ամսոց դիւստրոսի և ադարայ և մարտի ամսոյ, որ լինի ԻԴ (24) պեմենովթայ ըստ եգիպտացւոց, և աւել աւուրցն եբրայեցոցն ի չորսն, ուր և գերկոտասան ու- թերորդի (արեգ) ամսոյն ըստ հայում կանոնեցաք պատահել, ոչ առանց վկայութեան առաջնոց և հնոց արաց իմաստնոց, որպէս վերագոյնն ասացաւ»<sup>1</sup>:

Կանոնը սահմանել է նախորդ շրջանի տեղեկությունների հիման վրա: Նա շարունակում է. «Յիշատակէ զնմանէ ժամանակագիրն Եւսեբի յեկղէստիաստիկէ գիրսն յԵթներորդ դարու- թեանն: Եւ ասէ այսպէս. բազում խաւսս եղեալ է Անատոլիայ մեծաւ և բացում փութով պնդութեամբ, քանզի կորովի է նա բանիւք իւրովք. մանաւանդ վասն զատկի, զի ի նոցանէն արժան է մեզ յիշեցուցանել սակաւ մի այժմ: Եւ ապա, ասէ, այս ի կանոնաց անտի գոր եղ Ա- նատոլիս վասն զատկի: Արդ ի նմին ասէ՝ ի տարւոջ անդ է նախ ամսագլուխ առաջին ամսոյ, զի

նա է սկիզբն ԺԲ (12) ամսոց, որ ըստ համարոյ եգիպտացւոց է նա ԻԶ (26) պեմենովթայ, իսկ ըստ թուոյ ամաց ասորոց ԻԲ (22) ադարայ, այսինքն մետասաներորդ արեգ ամսոյ...»<sup>1</sup>:

Մեր մի աշխատություն մեջ ցույց ենք տվել, որ հիշյալ հատվածը Սարկավազը վերցրել է Եվսեբիոս Կեսարացու «Եկեղեցույ պատմութիւն» աշխատությունից, որը հայերեն է թարգման- վել ասորերենից և նրա թարգմանիչներն են եղել Հովսեփ Պաղնացին կամ Եզնիկ Կողբացին: Հայոց տոմարական եղանակի կիրառմամբ ցույց ենք տվել, որ քննարկվող հատվածում Նիսան 1=Պեմենովթ 26 = Ադար 22 = Մարտի 22 = Արեգ 11: Վերջին, այսինքն՝ Հայոց ամիս-ամսաթի- վը ավելացրել են Հայ թարգմանիչները, որի շնորհիվ որոշվում է թարգմանության ժամանակը, այն է՝ Նիսան 1= Պեմենովթ 26= Ադար 22 = Մարտի 22= Արեգ 11, որտեղից Արեգ 1 = Մարտ 12= Ադար 26= Ադար 12= 416-419 թթ: Միաժամանակ պարզվում է, որ այդ քառամյակում Հայոց շարժական տոմարի Արեգ 9= Մարտ 20-ին: Այս օրինակը ցույց է տալիս, որ Հովհաննես Սարկավազը Արեգ 12 = Մարտի 20 համարժեքությունը ընտրելիս առաջնորդվել է մոտավոր հաշվարկի սկզբունքով, մանավանդ նա գիտեր, որ տվյալ տարիների քառամյակի կտրվածքում Մարտի 22 = Արեգ 11-ից հետո գալիս է Մարտ 23 = Արեգ 12, այսինքն՝ երեք օրվա տարբերու- թուն է տալիս իր ընտրած օրվա համեմատ: Այդ հասկանալով նա մեր մատենագրության մեջ փնտրել է նոր տվյալներ: Բերենք դրանք: Նա գրում է. «Բայց այրն աստուծոյ Կիւրղոս Երու- սաղեմի եպիսկոպոսն ի թղթին՝ որ առ թագաւորն Կոստանդին վասն պատուական խաչին գրէ, երևեալ է գլուխ ահեկանի ամսոյ, որ է մայիս ամսոյ ևթն: Եւ ըստ այսմ հանդիպի հասարակա- ւորութիւն գանանային յերկոտասան արեգ ամսոյ, ըստ որում և մեք զկանոն կարգեցաք և զբո- վանդակ պա[տ]ճեն տումարի: Այլ ոմանք զինն կարգեցին նորին ամսոյ լինել զհասարակաւո- րութիւն գարնանոյ: Եւ ըստ այսմ ամենեցուն և սոցունց համաձայնից գոյ ուսանել թէ այժմուս կարգ ոչ է հեռի յանպատեհութենէ»<sup>2</sup>:

Հովհաննես Սարկավազը քննարկվող հատվածը վերցրել է «Կանոնք ընթերցուածոց»-ից, այսինքն՝ Հայոց տոնացույցից: Սահակ կաթողիկոսը հունարենից հայերեն թարգմանեց և խըմ- բագրեց Երուսաղեմի տոնացույցը. ինչպես ցույց ենք տվել, 417-428 թթ. սահմաններում: Դժվար է պնդել, որ Սահակ կաթողիկոսը գլուխ Ահեկանի ասելով հասկացել է սկիզբը, թե վեր- ջը, որովհետև գլուխ բառը երկու իմաստներով էլ գործածվել է, սակայն հստակ է, որ Մայիսի 7-ը համարժեք է ընդունվել Ահեկանին, այսինքն 1-ից 30-ին, որը տալիս է 312/5-428/31 թթ: Պարզ է որ Հովհաննես Սարկավազը տալով Արեգ 12= Մարտ 20 հասկացել է 428-431 թթ. քա- ուամյակի դրությունը: Այդ իմաստով Հայոց շարժական տոմարի Արեգ 12= Մարտ 20 համարժե- քը մոտավոր հաշվարկից դարձել է բացարձակ ամսաթիվ, որն էլ դրել է իր անշարժ տոմարի հիմքում:

Մեկ այլ տեղ Հովհաննես Սարկավազը գրում է. «Այդ՝ որպէս վերագոյնդ յիշեցաք ըստ եբրայեցոց հնագիտակաց և մարգարէիցն ոմանց, ի յերկոտասան արեգ ամսոյ հանդիպի հասա- րակաւորութիւն տուրնջեան և գիշերոյ, ըստ յեղանակին գարնայնոյ: Ըստ որում, գտանի ի գիրս Եգրի, քանզի ասէ՝ Յամին վեցերորդի Դարեհի կատարեցաւ տաճարն սուրբ ի քսաներորդի երրորդի ամսոյն ադար, որ է մեհեկանի ԻԳ (23): Իսկ ի Զաքարիայ մարգարէութեանն՝ թէ ի քսաներորդի և ի չորրորդի Մետասաներորդ ամսեանն, որ է ինքն արաց, յերկրորդ ամի Դարեհին, եղև բան առ Զաքարիա մարգարէ Բարեքիայ որդի Ադովայ: Այդ ըստ այսմիկ գտցես զչորրորդ աւր աւելեացն եբրայեցոց կշիռ զոյգ հանդիպեալ երկոտասան արեգ ամսոյ, յորում սկիզբն է յե- դանակին գարնայնոյ: Ունէի և այլս զմարգարէից յիշատակել զմերոց ամսոց՝ թէ ո՞յք, որո՞ց

<sup>1</sup> Հովհաննես Իմաստասերի Մատենագրություն, էջ 240:

<sup>1</sup> Հովհաննես Իմաստասերի Մատենագրություն, էջ 241:

<sup>2</sup> Աճղ, էջ 261-262:

նոցայոցն զոյգ հանդիպեն: Բայց բաւական են այսոքիկ, իսկ ըստ այլոց՝ այլազգաց ոմանց, անշարժապես կարգողաց»<sup>1</sup>:

Հովհաննես Սարկավազը վերոհիշյալ հատվածները վերցրել է Աստվածաշնչի հնագույն թարգմանությունից, որտեղ կատարվել են հայերեն ամսանունների մուծումներ, որը իրականացրել են 5-րդ դարի սկզբներին:

Ձաքարիայի մարգարեության հատվածի համար, ինչպես ցույց ենք տվել, ստանում ենք հետևյալ համարժեքությունը Շբաթ 24 = Փետրվար 8 = Արաց 1-30 = 305/8-4214 թթ: 421-424 թթ. կտրվածքով, որտեղ Արաց 30 = Փետրվար 8-ին, Արեգ 10 = Մարտ 20: Պարզ է, որ այս օրինակում ևս առկա է մոտավոր հաշվարկ և տալիս է երկու օրվա տարբերություն Սարկավազի ընդունածի համեմատ: Ինչ վերաբերում է Եզրի հատվածին, ապա Ադար 23 = Մարտ 9, իսկ Մեհեկան 23-ի ամսաթիվը կամ բառացի թարգմանություն է Ադար 23-ի (կամ Մեհեկի 23-ի ամսաթիվը գրչական սխալ է և պետք է լինի Մեհեկի 26, որպես Գ-ի և Զ-ի սխալ): Առաջին տարբերակի դեպքում ստանում ենք Ադար 23 = Մարտ 9 = Մեհեկան 1-30 - 30811-424/27 թթ.: Վերջին քառամյակը ընդունելու դեպքում ստանում ենք Արեգ 11=Մարտ 20, որը տալիս է մեկ օրվա տարբերություն Սարկավազի ընդունած Արեգ 12 = Մարտ 20-ից: (Ադար 23 = Մարտ 9= Մեհեկի 26 ընդունելու դեպքում ստանում ենք Մեհեկի 1 = Փետրվար 22 = 409-412 թթ., որտեղ Արեգ 7 = Մարտ 20-ի):

Այս օրինակները բավական են որպեսզի ցույց տրվի, որ Հովհաննես Սարկավազը մոտավոր հաշվարկով է սահմանել Մարտ 20= Արեգ 12, որպես հայոց անշարժ տոմարի ելակետ, որից և ստացել է Օգոստոս 11-ը: Բայց մի բան պարզ է, որ նա իր հաշվումները կատարելու համար օգտագործել է 5-րդ դարի թարգմանական բնագրերում առկա այլ ժողովուրդների անշարժ տոմարների համարժեքները հայոց շարժական տոմարի ամսաթիվերին, հետևապես վերականգնել է 5-րդ դարի սկզբների հայոց շարժական տոմարի Արեգի 9-12 = Մարտ 20 համարժեքները և ընդունելով Արեգ 12 = Մարտ 20 հավասարությունը փաստորեն փաստել է 428-431 թթ. քառամյակի վիճակը: Նա նաև 1085 թ. ընդունելով որպես ՇԼԲ-ի կամ սարկավազադիր 1 թվական 164 օր տարեսկիզբն առաջ է շարժել, որպեսզի ստանա 5-րդ դարի սկզբների ավելի ստույգ 428/431 թթ. հայոց շարժական տոմարի դրությունը: Նա հին և նոր տարեսկզբների օրերը համարժեք դարձնելու համար սահմանել է կանոն:

Հովհաննես Սարկավազը բացի այդ հաշվի է առել էասյան ՇԼԲ-ի 10-րդ տարվա լուսնի լրման օրը, այն է՝ Նիսան 14 = Ապրիլ 4, որը տոմարական հաշվումների սկիզբն էր: Նա գրում է. «... Բայց խոստովանեցին (էասյանները - Ռ. Վ.) գլուխ բոլորին զԺԴ նիսանայ հրամայելոյն ի Տեառնէ, որում մեք հետևեսցուք...»<sup>2</sup>:

Նա մեկ այլ տեղ գրում է. «Զի եթէ լուսինն մետասանաւրեայ ստեղծաւ ըստ Եփրեմի ի մարտի Ի-նն, ի մարտի ԻԵ-ն գտանի վեշտասանաւրեայ, որ է նիսան չորս և արեգ եւթնևտասան, եթէ միաշաւիղ ընթանան և ստեղծան արեգակն և լուսինն, յապրիելի չորս լինի լրումն: Եթէ իշխել տուրնջեան և գիշերոյ ստեղծայ ի մարտի ԻԵ (25): Արդ՝ յաւուր ուրբաթու եղև ելանել նոցա յԵգիպտոսէ՝ խորհրդաբար ազատեալք ի չար ծառայութենէն, յորում աւուր նախահայրն գայթակղեցաւ լպրծող մեղաւք ի ծառայութիւն ապականութեան: Գեղեցկապէս ի նմին աւուր փրկեցաք արեամբ գառինն, որպէս նոքա՝ յԵգիպտոս արեամբ գառինն: Զի որպէս վերագոյն ասացաք, միևնոյն աւր հանդիպի արարչութեանն, և աւետեացն և մկրտութեանն, սոյնպէս և յանցանցն Ադամայ, և չարչարանաց փրկչին, և ելիցն Իսրայելի, և արարչութեանն, և յարութեանն փրկչին: Եւ ելիցն ի ծովէն Մովսէսի միևնոյն աւր հանդիպի, զոր գուշակեաց Եսայի, թէ

որ եհան յերկ(ր)է զհովիւն հաւտից, որ է Մովսէս, և մեծն արեամբ ուխտին ըստ առաքելոյ, որ է Քրիստոս...»<sup>1</sup>:

Աստվածաբանական և տոմարական տեսանկյունից հիմնավորելուց բացի Հովհաննես Սարկավազը հաշվի էր առնելու նաև Հայոց եկեղեցական տարվա սկիզբի խնդիրը, որը Հունվարի 6-ին էր: Ինչևէ ելակետի խնդիրը նա լուծեց հայոց շարժական տոմարի Արեգ 12-ը համարժեք ընդունելով Մարտ 20-ին և անշարժացնել տարին:

Հովհաննես Սարկավազի հաջորդ քայլն այն էր, որ ստացած տարվա կտրվածքով որոշեր նահանջ տարվա ավելադիր օրվա տեղը: Հետևենք նրա բնագրերին: 1999 թվահամարի «Պատճէն տոմարի հայոց մեծաց» բնագրից հետո, որն անկասկած Սարկավազի մեկնությունն է մեծ տոմարի գալիս է «Պատճէն տոմարի հայոց Սարկավազին» բնագիրը, որտեղ գրված է. «Իսկ ի նահանջի ամի ամիսն Մեհեկի ԼԱ (աւր) լինի և յաւելու թիւ մի յեթներեակն որպէս այլոց ազգաց»<sup>2</sup>:

2001 թվահամարի գրչագրում նույնպես առկա է Սարկավազի կողմից մեկնած հայոց մեծ և փոքր տոմարների պատճենները, որտեղ «Պատճէն տոմարի հայոց, որ կոչի սարկավազի» բնագրում կարդում ենք. «Ի նահանջի ամիսն ամիսն Մեհեկի ԼԱ աւր լինի և յաւելու յէ երեկն թիւ մի որպէս այլոց ազգաց»<sup>3</sup>:

3082 թվահամարի բնագրում «Ս(ա)րկ(աւազ) Յովհաննու քահանայի յաղագս մեծ թուականին» վերնագրի տակ կարդում ենք. «Էբրրեակ այսպէս արա, կալ զթուականն թուով մի պակաս և երթ ԻԸ ԻԸ որ ի խոնարհ մնա չորիցն ԱԱ թիւ յաւել և երթ էէ որ ի խոնարհ մնայ է երէակ է: Իսկ ի նըհանջի ամի Մեհեկի ամիս ԼԱ աւր լինի և յաւելու յեթներեակն թիւ մի որպէս յայլոց ազգաց»<sup>4</sup>:

Ազգաց կանոններում Արեգի 1-ից առաջ գրված է. «Հայք զավելորդ նահանջին աստ դնեն»<sup>5</sup>, այսինքն՝ Մեհեկի 31-ին: Պարզ է դառնում, որ Հովհաննես Սարկավազը նահանջ տարում Մեհեկան 30-ը դարձրել է 31 օր: Բայց ինչպես է դասավորել օրերը չի ասվում: Հասկանալի է, որ Փետրվարի 28-ը համարժեք է Մեհեկանի 22-ին, իսկ Փետրվարի 29-ը դրվել է Մեհեկան 23-ին: Հասարակ տարում Մարտ 1-ը համարժեք է Մեհեկանի 23-ին, որը տեղափոխվել է Մեհեկան 24-ը: Ունենում ենք հետևյալ շարքը.

Հասարակ տարի	Նահանջ տարի
Փետրվար 28 = Մեհեկան 22	Փետրվար 28 = Մեհեկան 22
Մարտ 1 = Մեհեկան 23	Փետրվար 29 = Մեհեկան 23
— " — 2 = — " — 24	Մարտ 1 = Մեհեկան 24
— " — 3 = — " — 25	— " — 2 = Մեհեկան 25
— " — 4 = — " — 26	— " — 3 = — " — 26
— " — 5 = — " — 27	— " — 4 = — " — 27
— " — 6 = — " — 28	— " — 5 = — " — 28
— " — 7 = — " — 29	— " — 6 = — " — 29
— " — 8 = — " — 30	— " — 7 = — " — 30
— " — 9 = Արեգ 1	— " — 8 = — " — 31

1 Հովհաննես Իմաստասերի Մատենագրությունը, էջ 227:  
 2 Ձեռ. № 1999, էջ 203ա:  
 3 Ձեռ. № 2001, էջ 39բ:  
 4 Ձեռ. № 3082, էջ 386բ-387ա:  
 5 Հովհաննես Իմաստասերի Մատենագրությունը, էջ 165:

1 Աճո, էջ 281:  
 2 Աճո, էջ 275:

Մարտ 9 = Արեգ 1

Ստանանք Սարկավագի տարին.

Նավասարդ 1 = Օգոստոս 11

Հոռի 1 = Սեպտեմբեր 10

Սահմի 1 = Հոկտեմբեր 10

Տրէ 1 = Նոյեմբեր 9

Քաղոց 1 = Դեկտեմբեր 9

Արաց 1 = Հունվար 8

Մեհեկի 1 = Փետրվար 7

Մեհեկի 22 = Փետրվար 28

Մեհեկի 23 = Մարտ 1 (հասարակ տարի)

Մեհեկի 23 = Փետրվարի 29 (նահանջ տարի)

Մեհեկի 30 = Մարտ 8 (հասարակ տարի)

Մեհեկի 31 = Մարտ 8 (նահանջ տարի)

Արեգ 1 = Մարտ 9

Ահեկան 1 = Ապրիլ 8

Մարերի 1 = Մայիս 8

Մարգաց 1 = Հունիս 7

Հրոտից 1 = Հուլիս 7

Աւելեաց 1 = Օգոստոս 6

Այդպես էլ համարդրվել է Ազնվականոններից մեկում՝ Ազգաց կանոններում, միայն նահանջ տարվա համար տրվել է բացատրություն: Պարզ է, որ նահանջի օրը պետք է դրվեր Արեգից և Ահեկանից առաջ, այլապես 19-ամյակը կազմելիս կընկներ անորոշ վիճակի մեջ քանի որ լուսնի լրման ամսաթիվերը պետք է լինեին կայուն օրեր:

Ուշագրավ է նաև այն, որ Ազնվականոնները կազմելիս հիմք է ընդունել 1094 թ. վիճակը, ինչպես ՇԼԲ-ի 10 թվի համարժեք, որից սկսել է տոմարական հաշվումները, թեև ՇԼԲ-ի սկիզբ է ընտրել 1085 թ...: Բավական է նայել միայն շաբաթագրի կանոնը:

1973 թվահամարի գրչագրում բերվել է Յօթներրեակների 28 ամյա տարբեր կանոններ, որի մեջ գրված է «է Սարկավագի» և թվարկում է՝ Զ, է, Ա, Գ, Դ, Բ, Զ, Ա, Բ, Գ, Դ, Զ, է, Ա, Բ, Դ, Ե, Զ, է, Բ, Գ, Դ, Ե, է, Ա, Բ, Գ, Ե, 1: Ազգաց կանոնները 1094 թ. Քրիստոսի Մննդեան և - Յայտնութեան օրը Քարոզ 29-ն (=Հունվարի 6), որը ուրբաթ է, իսկ շաբաթագիրը՝ Զ, ինչպես Յօթներրեակի կանոնի Ա տարում, որը 28 տարի մեկ կրկնվում էր, ինչպես և է:

Համադրենք ազնվականոնների և ՇԼԲ-ի տվյալներն ըստ 1094 թվականի կամ Սարկավագի 10 թվականի:

- Քաղոց 24 = Հունվար 1 = կիրակի (Շաբաթագիր Ա)
- Յայտնություն Քաղոց 29 = Հունվար 6 = ուրբաթ (Շաբաթագիր Զ)
- Արաց 1 = Հունվարի 8 = կիրակի (Շաբաթագիր Ա)
- Առաջավոր Արաց 22 = Հունվարի 29 = կիրակի (Շաբաթագիր Ա)
- Մեհեկի 1 = Փետրվար 7 = երեքշաբթի (Շաբաթագիր Գ)
- Բուն Բարեկենդան Մեհեկի 13 = Փետրվար 19 = կիրակի (Շաբաթագիր Ա)

- Արեգ 1 = Մարտ 9 = հինգշաբթի (Շաբաթագիր Ե)
- Հրումն Արեգ 27 = Ապրիլ 4 = երեքշաբթի (Շաբաթագիր Գ)
- Չատիկ Ահեկան 1 = Ապրիլ 8 = շաբաթ (Շաբաթագիր է)
- Չատիկ Ահեկան 2 = Ապրիլ 9 = կիրակի (Շաբաթագիր Ա)
- Պենտեկոստէ Մարերի 1 = Մայիս 8 = երկուշաբթի (Շաբաթագիր Բ)
- Պենտեկոստէ Մարերի 21 = Մայիս 28 = կիրակի (Շաբաթագիր Ա)
- Վարդավառ Մարգաց 1 = Հունիս 7 = չորեքշաբթի (Շաբաթագիր Դ)
- Վարդավառ Հրոտից 1 = Հուլիս 7 = ուրբաթ (Շաբաթագիր Զ)
- Վարդավառ Հրոտից 15 = Հուլիս 16 = կիրակի (Շաբաթագիր Ա)
- Վարդավառ Ավելեաց 1 = Օգոստոս 6 = կիրակի (Շաբաթագիր Ա)
- Վարդավառ Նավասարդ 1 = Օգոստոս 11 = ուրբաթ (Շաբաթագիր Զ)
- Վարդավառ Հոռի 1 = Սեպտեմբեր 10 = կիրակի (Շաբաթագիր Ա)
- Վարդավառ Սահմի 1 = Հոկտեմբեր 10 = երեքշաբթի (Շաբաթագիր Գ)
- Վարդավառ Տրէ 1 = Նոյեմբեր 9 = հինգշաբթի (Շաբաթագիր Ե)
- Վարդավառ Քաղոց 1 = Դեկտեմբեր 9 = շաբաթ (Շաբաթագիր է)
- Վարդավառ Քաղոց 23 = Դեկտեմբեր 31 = կիրակի (Շաբաթագիր Ա)

Ինչպես նկատելի է երկու ազնվականոնների կամ աղյուսակների տվյալները նույնական են: Հետևությունը պարզ է, թեև Հովհաննես Սարկավագը սկսել է Սարկավագադիր Ա թվականով (=1085 թ.), այսինքն նախորդ ՇԼԲ-ի առաջին տարին, բայց հաշվումների համար հիմք է ընդունել Սարկավագադիր 10 թվականը, այն է՝ նախորդ ՇԼԲ-ի 10 թվականը: Այս հաշվի ապացույցները բազմաթիվ են Հովհաննես Սարկավագի գրած կանոններում: Այսպես, նրա 10-րդ տարում վերադիրը 11 է, որը և հայտնի է նրա բնագրերից: 19-ամյակի կանոնը տալիս լրման օրը դրել է Արեգ ի է (= Ապրիլ 4) տակ: Բացի այդ այնտեղ ասվում է. «Ձմուռ ինն և Ժ երեկի խորանաց բոլորիս Սարկավագին այսպէս արա. կալ զթուլականն» Սարկավագի թ ի բաց երթ...» մատնանշելով 10 թվականը իբրև սկիզբ: Ուշագրավ է նաև այն, որ Հովհաննես Սարկավագը տարին սկսել է ոչ թե Օգոստոս 11 = Նավասարդ 1-ից, այլ հայոց եկեղեցական տարվա սկզբից այն է՝ Հունվարի 6-ից (= Քաղոց 29), ինչպես ընդունված էր նախորդ շրջանում և իր ժամանակ: Պատահական չէ, որ ազգաց կանոններում հուլյան տոմարը հիմք ընդունելով, համեմատել է այլ ազգերի տոմարական ամսաթիվերի հետ, որոնց թվում հայոց անշարժ տոմարի ամսաթիվերը Քաղոց 24-ից: Նա ուշադրություն չի դարձրել Նավասարդի 1-ի վրա որպես ավանդական տարեսկզբի, ինչպես հայոց շարժական տոմարի դեպքում: Դրա լավագույն հիմնավորումը Ազնվականոնների սկզբներն են, որտեղ շաբաթական շարքի որոշիչը Հունվարի 6-ի օրն է, լրման և Չատիկի օրերը, իսկ մնացածները դրանցից ածանցվածներն են, այսինքն երկուսն էլ սկսում են եկեղեցական տարվա սկզբից: Այս նորույթը բերում է նաև այն հետևություն, որ Սարկավագադիր թվականները ներկա թվականի վերլուծելիս նա ունեցել է հաստատուն թիվ, այն է՝ 1084-ը, որովհետև Հունվարի 1 = Քաղոց 25, իսկ Դեկտեմբերի 31-ը՝ Քաղոց 23-ին: Հետևապես հայագիտության մեջ ընդունված այն տեսակները, թե Սարկավագադիր թվականը ներկա թվականի վերածելու համար պետք է գումարել 1083 և 1084 կամ 1084 և 1085 կապված Նավասարդի 1-ի հետ, բացահայտ թյուրիմացություն արդյունք են: Որպեսզի հիմնավորենք 1084 իբրև հաստատուն թիվ բերենք երկու օրինակ Նավասարդից առաջ և հետո եկող ամսաթիվերով: Հովհաննես Սարկավագը Արեգակի իր ժամանակ պատահած խավարման կապակցությամբ գրում է. «Յայսմ խաւարման արեգականն էր թուական հոռմայեցոց փոքրըն ՅԼԳ

1 Ձեռն № 1973, էջ 63բ:

(333), և հայոցն նոյնպէս փոքրն ի թ (29), յերկրորդ ժամուն ի քսաներորդ (ուղղել՝ ինն և տասներորդ) մարտի, յաւուր չորեքշաբթի ի սուրբ քառասնորդացն, ի հինգերորդ շաբաթին խաւարեցաւ արեգակն: Եւ էր շինութիւն քաղաքին Հոռոմայ ՌՊԿԷ (1867) ամ, իսկ ի Դէոկղետիանոսի ՊԼ (830) ամ: Եւ Անտիոք քաղաքի շինութեան ՌԿԳ (1063) (պետք է լինի ՌՃԿԳ (1163)): Եւ Կիւրղոս քաղաքի՝ ՌՆԻԵ (1425): Իսկ ի գալստենէ տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի՝ ՌՃԺԵ (1115) ամ ըստ հաստատուն և ճշմարիտ համարոյ: Եւ յԱդամայ՝ ՅՅԺԳ (6313) ամ ըստ և թանսանիցն թարգմանութեան (թերևս՝ թուականութեան), արեգ ամսոյ ի մետասան կամ որպէս առեւտ կարգն ունի նաւասարդի ի և թն (պետք է ուղղել՝ ի և և թն (= 27), միով աւուրբ յառաջ քան զհասարակաւորութիւն տունջեան և գիշերոյ, ի ՆՀԳ (473) ոլումպիադին՝ յառաջնումն ամին ըստ համարոյ յունաց: Եւ էր բուն թուական հայոց ՇԿԲ (562)»<sup>1</sup>:

1113 թ. Բուն Բարեկենդանից հետո եկող 5-րդ շաբաթի չորեքշաբթին, երբ խավարել է արեգակը, եղել է հայոց անշարժ տոմարով Արեգ 11-ին = հայոց շարժական տոմարի Նավասարդի 27-ին = հուլյան տոմարի Մարտի 19-ին՝ մեկ օրով առաջ քան գարնանային գիշերահավասարը, որը ըստ հեղինակի Մարտի 20-ին էր: Ինչևէ վկայված տարեթվերը կունենան հետևյալ տեսքը աղյուսակի մեջ.

№	Չուգաֆեռ թվականները	թվականներից ստացված մն.	19-ամյակի հմպտ տարվա լուսնի լր.	19-ամյակի 1-ին տարվա լուսնի լր.
1	333 (հոռոմեական փոքր թվ.)	10	A 4	A 13
2	29 (հայոց փոքր թվ.)	10	A 4	A 13
3	1867 (Հոռոմ քաղ. շին. թվ.)	5(-4)	A 4	A 4
4	830 (դրոկղ էրա)	13(-1)	A4	A5(6)
5	1163 (Անտիսքի շին թվ.)	4(-3)	A 4	A 4
6	1423 (Կիւրղոս քղ. շին. թվ.)	19(+1)=1	A 4	A 4
7	1115 (քրիստ. հայկ թվ.)	13(-3)	A 4	A 13
8	6313 (արարչ. 70-ից թվ.)	5(-4)	A 4	A 4
9	562 (հայոց մեծ թվ.)	11(-1)	A 4	A13
10	1889(473 օլ. 1-ին տարի)	8	A 4	A2
11	1113 (Քրիստ. Աերկա թվ.)	11(-1)	A 4	A13

Ներկա թվականի և Սարկավագադիր թվականի տարբերությունը 1084 է (1113-29), Հայոց մեծ և Սարկավագադիր թվականինը՝ 533 (562-29), ինչպես հեղինակն է կանոնել, Հոռոմեականի փոքր թվականի և Սարկավագադիր թվականինը՝ 304 (333-29) և այլն:

Սարգիս փիլիսոփան, որը գրել է հայոց տոմարի մասին կազմել է ՇԼԲ աղյուսակ հայոց շարժական տոմարով, տոմարի հիշատակարանում գրում է.

«Բայց գրեցաւ ի թվիս Մեծ հայոց ՊԼԳ (1384), իսկ Սարկավագին 3(300), ի Հոռոմին ՌՃԼԷ (1137, և յերբայեց[ուց] ՋԼԵ (995), յաւգոստոս իէ (27), ահկի ժՁ (16) Մեծ Հայ[ոյն], և երբ[անցուց] իլուլ թ (9), և Սարկ[ավագի] նաւասարդ ժէ (17), արեգակն ի կենդանակերպս ի կոյս, աւուր թ (9), ի գաւտիսն՝ յարեգակն աւուրս թ (9), ի գիրն ՇԳ աւր, աստիճանն՝ իԲՌՆ (22400),

<sup>1</sup> Հովհաննէս Իմաստասերի Մատենագրութիւնը, էջ 278:

հուլովն՝ 32 Գ (383), ժամք տվ[ընջեան] ժԲ (12) և մասն՝ իԱ (21) և ժամք գիշ(երոյ) ժԱ (11), մասն թ (9)»<sup>1</sup>:

Հիշատակարանը գրվել է 1384 թվականի Օգոստոսի 27-ին ըստ հուլյան տոմարի, որը համարժեք է հայոց շարժական տոմարի Ահեկի 16-ին, իսկ երբայական իլուլ 9-ին, վերջապես Սարկավագադիր անշարժ տոմարի Նավասարդի 17-ին: Նա օգտվել է Սարկավագի Ազնվականոններից: Կրկին ներկա թվականի և Սարկավագադիր թվականի տարբերությունը 1084 է (1384-300), Հայոց մեծ և Սարկավագադիր թվականինը՝ 533 (833-300) և այլն: Ակնհայտ է, որ ինչպես 1-ին դեպքում, այնպես էլ 2-րդ դեպքում Սարկավագադիր թվականը կապ չունի իր իսկ ստեղծած Նավասարդի 1-ի հետ, այլ առնչվում է հայոց տոնական տարվա սկզբի, այն է Հունվարի 6-ի հետ, որի հետևանքով Սարկավագադիր թվականի և ներկա թվականի տարբերությունը միշտ կլինի 1084: Այնպես որ Սակավագադիր թվականի ցանկացած տվյալ, որը գրչական սխալ չէ, պետք է վերածել ներկա թվականի նրան գումարելով 1084:

Հովհաննէս Սարկավագը Ազնվականոններում առանձնապես Ազգաց կանոններում տվել է հայոց տոնացույցի հիմնականում անշարժ և մասամբ շարժական տոնական օրերը, իսկ ՇԼԲ-ում՝ շարժական հիմնական տոները կապված Ջատկի հետ, ինչպես Քրիստոսի Մանդեան և Աստուածայայտութեան տոներ նաև որպես տոնական տարվա սկիզբ 1094 թվականի կտրվածքով:

Այսպես Տեառնըդառաջն Փետրվար 14-ին = Մեհեկի 8, Ավետումն Աստուածածնի՝ Ապրիլ 6 = Արեգ 29, Երևումն Խաչին՝ Մայիս 7 = Ահեկանի 30, որը դրված է Ջատկից հաջված 5-րդ կիրակի օրը կամ Ջատկից հետո եկող 4-րդ կիրակին, ինչպես ընդունված էր հնագույն տոնացույցում: Ջաքարիա մարգարեի հիշատակի տոնի օրը դրել է Հունիս 10-ի տակ (= Մարգաց 4), շաբաթ օրը, մինչդեռ հնագույն տոնացույցում այն այդ տարի դրվել է Հուլիս 1-ի շաբաթ օրը, իսկ Հունիս 10-ը նրա անշարժ տոնի օրն էր վաղ շրջանում: Անհասկանալի է, ինչպես այս դեպքի, այնպես էլ այլ սրբերի օրերի հնագույն հուլյան տոմարի ամսաթվերի վկայումը: Նա կարող էր դնել 1094 թ. նրանց տոնական օրերը հայոց գործող տոնացույցի տվյալներով: Եղիա մարգարեի հիշատակի օրը, դրվել է Հունիս 14 (= Մարգաց 8-ի) տակ: Այդ օրը անշարժ ձևով դրված է «Կանոնք ընթերցուածոցում» եղիս մարգարեի հիշատակի օրը:

Եսայա մարգարեի հիշատակի օրը, դրել է Հուլիս 6-ի (= Մարգաց 30) հինգշաբթի տակ անշարժ տոնը նկատի ունենալով մինչդեռ այդ տարի եղել է Հուլիս 20-ի հինգշաբթի օրը: Թերևս հետագայում է կատարվել այդ տեղափոխությունը, որովհետև հուլիս 6-ն էլ է հինգշաբթի: Հուլիս 11-ի (= Հրոտից 5-ի) տակ դրված «ձնունդ Յովհաննու Մկրտչի» օրը նորություն է և վաղ շրջանի բնագրերից հայտնի չէ:

«Փոխումն Սուրբ Աստուածածնին» տոնի օրը այդ տարի ընկել է Օգոստոս 13-ին, կիրակի, որն արտացոլվել է Ազնվականոններում:

«Խաչի վերացումն» տոնի օրը պետք է տեղադրել Սեպտեմբեր 17-ի, կիրակի օրը, որը տպագրման սխալի հետևանքով անհասկանալի է թէ որտեղ է դրված:

«Սուրբ Գէորգայ բարեկենդան»-ը և «տաւն Վարագա Խաչի» ուշ շրջանի միջամտութիւններ են, որովհետև Գեորգեա կամ Վարագա Խաչի պահքը Խաչվերացից հետո է տեղափոխվել 14-րդ դարի ընթացքում, իսկ ավելի վաղ Գեորգեա հիշատակի օր է տոնվել Աստուածածնից հետո եկող շաբաթ օրը, Վարագա Խաչի տոնը՝ կիրակի: «Խաչի գիւտ»-ի տոնը պետք է լիներ Հոկտեմբեր 29-ի, կիրակի օրը կամ Սահմի 20-ի տակ և ոչ ավելի վերև երկու օրվա: Այստեղ ևս առկա է տպագրական սխալ տեղադրման առումով: Յիսնակամուտը եղել է Նոյեմբեր 19-ին կիրակի օրը, թվում է որ դրված է Նոյեմբեր 18-ի տակ, շաբաթ օրը, որը տպագրական սխալի

<sup>1</sup> Լ. Խաչիկյան, ԺԳ դ. ձեռագիր հիշատակարաններ, էջ 551:

հետևանք է, հանրահայտ է, որ Յիսնակամուտը միշտ կիրակի է ընկել, որը շատ լավ գիտեք Սարկավազը:

Սուրբ Յակոբա բարեկենդանը եղել է նրա պահքից առաջ, որը կատարվել է Դեկտեմբեր 11-ից, երկուշաբթիից սկսած:

Իսկապես Յայտնութեան բարեկենդանը եղել է Դեկտեմբերի 29-ին, որովհետև Դեկտեմբերի 30-ին Մննդեան պահքն էր: Քննությունից պարզ դարձավ, որ Հովհաննես Սարկավազը Ազնվականոնները, այսինքն Ազգաց կանոնները, և ՇԼԲ-ն համարժեք է դարձրել հաշվելով 1094 թվականի տոնական տարվա կտրվածքով, սրբերի հիշատակի օրերի համար օգտագործելով նաև հնագույն «Կանոնքն»-ը, որոնք սկսել են Հունվարի 6-ից՝ հայոց եկեղեցական տարվա սկզբից: Այսպիսով, Հովհաննես Սարկավազը մեկնեց հայոց շարժական տոմարը ստեղծեց հայոց անշարժ տոմարը և համադրեց 15 ժողովուրդների անշարժ տոմարներին և ՇԼԲ-ի երկրորդ շրջապտույտի, հետևապես հայոց եկեղեցական տոնական տարվա անխափան հիմքերը ստեղծեց՝ 11-րդ դարի վերջերի 17-րդ դ. սկզբների համար: Ուշագրավ է, որ համարյա նույն ժամանակահատվածում Գրիգոր Վկայասերը խմբագրեց հայոց ճաշոցը և Հովհաննես Սարկավազը գրեց Ազնվականոնը, որոնց մոտ տարին սկսում էր Հունվարի 1-ից: Դա ըստ էության հայոց եկեղեցական տարվա դրսևորումներն էին (որոշ շեղմամբ), որոնց արմատները կապվում են Սահակ կաթողիկոսի «Կանոնք ընթերցուածոց»-ի հետ:

Սարկավազադիր տոմարն ու թվականությունը հետագայում կիրառություն գտան հայոց մեջ: Ուշագրավ է, որ 1154/5 թթ. ընդօրինակված ճաշոցը՝ ստեղծված հայոց անշարժ տոմարի հիմունքով, իսկ Յայտնութեան մի քանի խմբագրություններ, հետևեցին Հովհաննես Սարկավազի ստեղծած անշարժ տոմարին Նավասարդի 1 = Օգոստոս 11-ից սկսելով սրբերի հիշատակի օրերի և պատմությունների գիրքը, թեև Սարկավազը հատուկ ուշադրություն չէր դարձրել դրան: Հայոց հետագա պատմիչներն ու հիշատակագիրներն սկսեցին կիրառել Սարկավազադիր թվականը կամ զուգահեռ դնել այլ թվականության համակարգերին, իհարկե ոչ այն չափով ինչ որ հայոց մեծ թվականն էր, որը շարունակեց իր ընթացքը: Որոշ հեղինակներ հետևել են Հովհաննես Սարկավազի առաջարկած կանոնին կապված հայոց թվականի խանգարման հետ:

Մենք նպատակահարմար չգտանք հատուկ անդրադառնալ Ղ. Ալիշանի, Մ. Օրմանյանի, Ն. Ակինյանի, Լ. Սիմյոնովի, Աշ. Աբրահամյանի, Ս. Բաղալյանի, Բ. Թումանյանի, է. Աղայանի և այլոց կատարած մի շարք սխալներին և արտահայտած կարծիքներին՝ կապված Հովհաննես Սարկավազի տոմարի հետ, որոհետև դա առանձին քննարկման նյութ է: Բացի այդ մեր տեսանկյունը տվյալ դեպքում կապված էր Հովհաննես Սարկավազի գործունեությանը, կապված հատկապես հայոց տոնացույցի պատմության հետ:

ԳԼՈՒԽ ԺԶ

ԳՐԻԳՈՐ ՎԿԱՅԱՍԵՐԻ ՏՕՆԱՆԱՄԱԿԸ

Հայագիտության մեջ մինչև օրս հստակ պատկերացում չկա Գրիգորի Վկայասերի, նրա համախոհ ու ազգական Գրիգորիսի, ինչպես և նրա աշակերտ Կիրակոսի Տօնանամակ անվանվող հայոց տոնացույցի վրա կատարած աշխատանքների մասին:

Բարեբախտաբար պահպանվել են Գրիգորի Վկայասերի ու Կիրակոսի հիշատակարանները, ինչպես և ժամանակակցի վկայություն, որոնց միջոցով լիովին վերականգնվում են նրանց կատարած աշխատանքները հիշյալ բնագավառում, հնարավորություն է ստեղծվում գտնել նրանց բնագրերի ընդօրինակությունները, որոշել Տօնանամակի բերած նորությունները և այլն: Նախ տեսնենք ինչ ժողովածուներ - բնագրեր են խմբագրել վերոհիշյալ հեղինակները: Բերենք մի հիշատակարան - հիշատակագրության վկայությունը, որն առաջին անգամ հրատարակել է Գարեգին Հովսեփյանը, այն՝ «...Իսկ կաթողիկոսն (Բարսեղը - Ռ. Վ.) առնու ընդ իւր վարդապետս և եպիսկոպոստնս, և այլ եւս ոմանս յիշխանացն և յընտիր տանուտերացն և գայ յողջոյն իշխանաց իշխանին Վասլի ունելով ընդ իւր զգլխաւոր վարդապետսն Մեղրիկ Սեւանցին, որ զ Դրագարկի սահման է կարգեալ, և զ Կիրակոս, շատ տօնս և յիշատակս սրբոց ի մարտիրոսոցս (՝մարտիրոսոցի) ճաշագրոցն է յաւելեալ»<sup>1</sup>:

Վերոհիշյալ տեղեկությունը ցույց է տալիս, որ Կիրակոսը բնականաբար նաև Գրիգոր Վկայասերն ու Գրիգորիսը Վկայաբանական ժողովածու - Յայտնութեան և ճաշոց գրքերն են խմբագրել, նրա մեջ ավելացնելով «շատ տօնս և յիշատակս սրբոց»: Այդ հաստատվում է Գրիգոր Վկայասերի և Կիրակոսի հիշատակարաններով, որոնք հրատարակվել են տարբեր հեղինակների (Մ. Ավգերյան, Ն. Ակինյան, Մ. Ավդալբեգյան, Ա. Մաթևոսյան) կողմից, սակայն ըստ էության վերլուծության չեն ենթարկվել, որի հետևանքով պարզություն չի մտցվել նրանց Տօնանամակ-ճաշոցի մասին, ինչպես և ցույց չեն տրվել նրանց բնագրերի ընդօրինակությունները: Շ. Ռընուկն անդրադառնալով Քահանայապետական Լեոնյան հայ վարժարանի 2 թվահամարի ձեռագրին, որտեղ առկա են Գրիգոր Վկայասերի և Կիրակոս Դրագարկեցու հիշատակարանները իրար ետևից մեկ ամբողջական բնագրում, գրել է, որ հիշատակարանները դրված են ձեռագրի երկու տարբեր մասերի, այսինքն՝ հոռոմադիր և հայադիր ճաշոցների միջև: Այնուհետև շարունակում է, որ Հայադիր ճաշոցի բոլոր 46 սրբերի տոները չեն, որ մուծվել են Գրիգոր Վկայասերի կողմից: Նա կարծել է, որ հայադիր ճաշոցի հեղինակը - խմբագիրը Գրիգոր Վկայասերն է, թեև ենթադրել է, որ Գրիգոր Վկայասերը համապատասխան տոներ կարող էր ավելացնել նաև Հոռոմադիր ճաշոցում<sup>2</sup>: Քիչ հետո պարզ կդառնան, որ թե Գրիգոր Վկայասերը, թե Կիրակոս Դրագարկեցին Շ. Ռընուկի արտահայտությունում հոռոմադիր ճաշոցն, այսինքն՝ «Կանոնք ընթերցուածոց»-ն են միայն խմբագրել և ավելացրել 76 սրբերի տոներ հուլյան ամսաթվերով:

Մ. Ավդալբեգյանը 832 թվահամարի գրչագիրը քննելիս գրում է, որ ձեռագրի առաջին մասում Նավասարդից մինչև Հրոտից ամսվա վերջը ընդգրկող տոների թիվը հասնում է 46-ի: Նա հիշում է Կիրակոսի հիշատակարանի թվերը, որ 46 տոն Գրիգոր Վկայասերն է կարգել, իսկ

1 Գարեգին Ա կաթողիկոս, Յիշատակարանք Ձեռագրաց, Բատոր Ա (Ե դարից միգչև 1250 թ.), 1951, Անթիլիաս, էջ 305, տե՛ս նաև Ն. Ակինյան, Կիրակոս Վ. Գիտնական 1050-1127, Մատենագրական հետազոտություններ, քննություն և բնագրեր, Բ. Ե, Վիեննա, 1953, էջ 295:  
2 Տե՛ս Շ. Ռընուկ, «Ճաշոց» գրքի ծագումն ու զարգացումը, ՊԲՀ, № 2, 1987, էջ 40:



30-ը՝ Կիրակոսը: Այնուհետև նույն ձեռագրի 2-րդ հատվածում, որտեղ տոները նշվել են հռոմեական ամսաթվերով հաշվել է 30 տոն: Նա պատահականություն է համարում 832 թվահամարի ձեռագրի երկու հատվածների տոների քանակը՝ այն է՝ 46 և 30: Նա եզրակացնում է, որ Գրիգոր Վկայասերը կազմել է ոչ միայն 832 ժողովածուի նախագաղափար Տոնանամակ ժողովածուի ճաշոցային ընթերցվածները, այլ նաև իբրև սրա գարգացման հաջորդ փուլ կամ բաղկացուցիչ մաս բոլորովին նոր Տոնանամակ ժողովածու, որտեղ փոխվել է նաև ընթերցվածների սիստեմը<sup>1</sup>: Այնուհետև շարունակում է այլ դատողություններ անել և փաստորեն գտնում է, որ Գրիգոր Վկայասերը Հայադիր Ճաշոցի հեղինակն է: Տեսանք, որ 832 թվահամարի Հռոմադիր ճաշոցն Ատոմ Վարագեցու խմբագրությունն է, իսկ Հայադիր Ճաշոցն ստեղծվել է Հովհաննես Սարկավազի անշարժ տոմարի ամիս-ամսաթվերով 11-րդ դարի վերջին - 12-րդ դարի սկզբներին, եթե ոչ 1154/5 թթ. ընդօրինակության ժամանակ և ոչ մի կապ չունի վերոհիշյալ հեղինակների հետ, մանավանդ թե Գրիգոր Վկայասերը, թե Կիրակոս Դրագարկեցին իրենց հիշատակարաններում պարզ գրում են, որ Տոնանամակը կազմել են Հուլյան ամսաթվերով: Ն. Ակինյանը հայտնել է հակասական կարծիքներ, որովհետև մի դեպքում կարծես Հռոմադիր Ճաշոցն է համարում հիշյալ հեղինակներինը, մյուս դեպքում՝ Հայադիր ճաշոցը:

Նախ ներկայացնենք հիշատակարանները. «Այս ինչ կայ գիրս

Եւ այս է յիշատակարան տաւնից տէրունականաց եւ սրբոց Աստուծոյ, ցուցմամբ աւուրց Հռոմի ամսոց, ըստ իւրաքանչիւր սրբոց՝ հանդիպմամբ չարչարանաց կատարման, եւ կամ ըստ խաղաղական ելից հանգստեան մարտիրոսաց եւ հայրապետաց սրբոց, որք հաճոյացան Աստուծոյ, նեղ եւ անձուկ ճանապարհաւն Քրիստոսի: Զոր ես Գրիգորիս ծառայ Աստուծոյ և դիտապետ Հայաստան ազգիս, համարձակեալ վասն սիրոյ վկայիցի Քրիստոսի, յաւելի ի նախակարգեալ տաւնան Հռոմի ամսոց, ընդրեալ ի Տաւնամակաց յոքունց զսակաւս, որ ի բազմաց անփոյթ էր լեալ: Եւ մեք աշխատեալ զայսպիսի համառատահաւայ Տաւնամակս գրեցաւ ի պայծառութիւն եկեղեցւոյ, զոր ցանկ ընթերցցի ի նմա ի ժամու սոսկալի պատարագին, զոր մի ոք աւելորդ վարկցի՝ զորոց զվարս քաղաքավարական պատմութեանց, զոր ոչ գոյր առ մեզ հայ գրով մեք աշխատութեամբ թարգմանեցաք ի յունականէն ի մեր գիր և բառ:

Վասն որոյ աղաչեմ սրբովք վկայիւքս զամենեսեան առհասարակ, մի անփոյթ առնել զմեր արէտանջ երկս աշխատութեան, այլ ընդաւրինակեալ գաղափար և գրով պահել յամենայն սուրբ եկեղեցիս, եւ անխափան առանց յերկուանալոյ կատարել զկանոն ընթերցուածիս ի տաւնս յիշատակի սրբոցն: Եւ որ ոք գրէ գիրս զայս, աղաչեմ գրել ի գլուխս գրոցն և զգոյզն բան յիշատակի մերոյ, եւ աղաւթիւք յիշել ի Քրիստոս զարարող գրոցս: Եւ զԳրիգորիս համանունն իմ եւ համագգի, որ եւ գրիչ եւ յաւրինիչ գրոցս, յիշեսջիք ի Քրիստոս եւ որք յիշեք՝ յիշեալ լիջիք աւրինութեամբ ի Տէր եւ ողորմեա:

Ես Կիրակոս տրուպ գիտնական եւ անարժան ծառայ Աստուծոյ, ծանուցանեմ ձեզ վասն սուրբ կտակիս՝ Տաւնամակի եկեղեցւոյ սրբոյ եւ աստուածայնոյ յիշատակի: Որպէս գիտէիդ ի սկզբանէ հաւատոց մերոց, մեր ուղղադաւան ազգիս Արամեան որդիացեալք աշակերտութեամբ Սրբոյն Գրիգորի աստուածունման լուսաւորչին մերոյ, համալրէն ամենայն սրբովք, որ եղեն յազգս մեր հաճոյ Աստուծոյ զայս գրոյ եկեղեցւոյ անփոյթ արարին վասն ժամանակին, եւ մեծ եւ աստուածային տաւնն խաչի կամ Աստուածածնի. վկայիցն եւ սուրբ հայրապետացն, հարցն եւ ճգնաւորացն եւ կուսանացն վկայիցն, անճառավոր եւ անկատար եւ անյարմար լինէր առանց այս գրոց: Ապա Հոգին Սուրբ ազդեաց սուրբ հայրապետին Գրիգորիս աստուածասիրի եւ վկայասիրի, եւ նոր սկսեալ յաւրինեաց զսա՝ ըստ ամենայն տաւնիք արժանապէս ի դէպ սաղմոսիւք եւ ընթերցուածովք աստուածախաւսիւք:

<sup>1</sup> Տես Մ. Ավդալբեգյան, Եզվ. աշխ. էջ 47-48:

Բայց ոչ ի գլուխ աւարտեաց զամենայն՝ զոր պարտ եւ արժան էր տաւնելոյ: Ապա ինձ, որ միշտ ընդ նմա էի, եւ յամենայն իրս աստուածայինս կցորդ եւ յորդորիչ, եւ փոյթ յաշխատութիւն հոգեւորաց եւ Աստուծոյ սիրելաց, հոգ եզ ի վախճանելն իւրում մի անփոյթ առնել զամանէ, այլ յանկել ընթերցուածովք ըստ արժանին, զոր եւ արարի: Զի հարկ եղեալ է մեզ յԱստուծոյ տաւնել զսոսա:

Եւ է այսպէս քառասուն եւ վեց տաւն սուրբ հայրապետն կարգեաց, եւ երեսուն ես տրուպ յաւելի, որ լինին եւթանասուն եւ վեց, զորս բոլոր տարւոյն բաւական համարեցաք ընթերցուածովքն եւ մատիրող(ոգ)աւքն: Իսկ եթէ տարւոյ աւուրքն չլինին բաւական, զի է տարի որ գերկոտասան լուսին լինի, եւ է որ երեքտասան. եւ տաւնքն կարճ տարին յաւելուն՝ դու գերկուսն ի մի տաւնեցէք. Գ եւ Դ. եւ այսպէս զբնաւն ի գլուխ տարէք, զի ըստ հաւատոց մերոց եւ տաւնքն սրբոցն պարտ է որ կատարին: Իսկ զի սկիզբն ի սրբոց և աստուածասիրաց գրեցի, զի մի հայիցիք ի ծոյլ եւ յորովայնամոլ կրաւնաւորսն, եւ ընդ նոսին կորընչիցիք ի կենացն Աստուծոյ, այլ սրբոց նմանել՝ մեծ փափագմամբ տաւնեսջիք: Մեք ընթերցուածքն առատապես որ ոչ որիչ եղաք ըստ ամսոյն, զի մի աղքատ եղիցի կարգք եկեղեցւոյ: Հարկ եւ հրաման ունիք յԱստուծոյ, զսակաւ յիշատակարանս խրատու ի գիրսն՝ զոր նորոգիցէք յաւրինակել, որպէս եւ զհոգեւոր տեառն յիշատակ ի նոր գիր եւ ի վերայ ամենայնի զմեզ ցերեքեանս ի նոյն, զսուրբ Կաթողիկոսն, եւ զհամանուն կարեւոր իւր Գրիգորիս, եւ զիս զԿիւրակոս յիշեսջիք առաջի Քրիստոսի ի սուրբ խորհրդին, եւ ի խորոց սրտէ խաղաղութիւն խնդրեցէք ի Քրիստոսէ եւ նոյն ինքն Յիսուս Քրիստոս ամենեցուն ողորմեցի եւ արժանի արասցէ արքայութեան երկնից, որում փառք յաւիտեանս»:

Քննարկվող հիշատակարանում պարզ ասվում է, որ Գրիգոր Վկայասերը, Գրիգորիսը և Կիրակոսը կազմել են Տոնանամակ, այսինքն խմբագրել ճաշոց-Տոնացույցը, ընդգրկելով Տերունական տոները, սրբերի, մարտիրոսների և հայրապետների հիշատակի օրերը իրենց «զԿանոն ընթերցուածոցիս ի տաւնս յիշատակի սրբոցն»՝ «ցուցմամբ աւուրց Հռոմի ամսոց», այսինքն՝ ըստ Հուլյան տոմարի: Կիրակոսը ավելացնում է. «մեք ընթերցուածքն առատապես որիչ որիչ եղաք ըստ ամսոյն, զի մի աղքատ եղիցի կարգք եկեղեցւոյ», այն է՝ սկսած Հունվարի 1-ից յուրաքանչյուր ամսվա տոների համար տվել են իրենց կանոն ընթերցվածները: Այլ խոսքով Տոնանամակ-Տոնացույցների մեջ Գրիգոր Վկայասերի, Գրիգորիսի և Կիրակոսի կազմածը, Հուլյան ամսաթվերով այն էլ՝ Հունվարի 1-ից սկսվող ճաշոց-տոնացույցներն են: Դրանցից մեկը առկա է նաև այն ձեռագրում, որից արտագրել են քննարկվող հիշատակարանը: Այդպիսի տոնանամակ-տոնացույցներ են նաև հետագայում օգտագործված մեր Մատենադարանի 979, ինչպես և հավանաբար Վիեննայի 241 և այլ գրչագրերի ընդօրինակությունները: Գրիգոր Վկայասերը միաժամանակ ասում է, որ ինքը օգտվել է նախորդ շրջանում ստեղծված տոնանամակներից, այսինքն՝ «Կանոնք ընթերցուածոց» - ճաշոցներից, որոնք նույնպես կազմված էին Հուլյան տոմարով, հավանաբար և շաբաթվա շարքի հիման վրա խմբագրված, որոնք անուշադրություն էին մատնվել: Այդպիսի «Կանոնք ընթերցուածոց»-ների տարբերակների մենք ծանոթացանք վերևում:

Գրիգոր Վկայասերը և Կիրակոսն իրենց հիշատակարաններում միաժամանակ ասում են, որ նրանք տոնանամակում ոչ միայն մտցրել են սրբերի հիշատակի օրերը, այլև հունարենից հայերեն թարգմանել են սրբերի վարքերը և կազմել են նաև «Յայսմաւուրք» ժողովածու, որի մասին կխոսենք այլ տեղ:

Կիրակոսի հիշատակարանը շարունակություն է Գրիգոր Վկայասերի, միայն ավելացնում է, որ նախորդ տոնացույցների եղած տոնական օրերին ավելացրել են 76 տոնի օր, որից 46-ը՝ Գրիգոր Վկայասերն ու Գրիգորիսը, իսկ 30-ը՝ Կիրակոսը: Վերջինս ավելացնում է, որ այս տոնները նախորդների հետ միասին տոնական տարում կարող էին շատ լինել, որովհետև շարժական



տոները 19-ամյա ցիլիի շարժողունակութեան հետեանքով տարվա կտրվածքով մերթ սկսում էին ավելի վաղ, մերթ ավելի ուշ և քանի որ Տոնանամակում տոնները տրված էին անշարժ սկզբունքով, Կիրակոսը առաջարկում է, որ կարճ օրեր ունեցող տարում անշարժ սկզբունքով շարված սրբերի տոնները միավորել՝ երկուսը, երեքը և նույնիսկ չորսը կամ տեղափոխել տարվա վերջը: Այն վերաբերվում է տարվա ընթացքում հատկապես հունվարի կեսերից, տոնվող սրբերի հիշատակի օրերին և շարժական տոններին կից սրբերի տոններին: Բացի այդ Կիրակոսի այն հաղորդումը, թէ «գայս գրոց եկեղեցւոյ ամփոյթ արարին վասն ժամանակին, եւ մեծ եւ աստուածային տաւնն ինչչին կամ Աստուածածնին, վկայիցն եւս սուրբ հայրապետացն, հարցն եւ ճգնաւորացն եւ կուսանաց վկայիցն» վերաբերում է շաբաթական շարքի հիման վրա գործող տոնացույցերին, որտեղ տոնական օրերը կատարվում էին շաբաթվա օրերի հիման վրա: Այսպես, Աստուածածնի տոնը տոնվել է ոչ թէ Օգոստոսի 15-ին, այլ Օգոստոս 15 ± 3 օր, կիրակի, այսինքն Օգոստոսի 12-18-ին ընկնող որևէ կիրակի նայած տարի: Իսկ Սուրբ Խաչի տոնը կատարել են ոչ թե Սեպտեմբերի 14-ին, այլ Սեպտեմբերի 14 ± 3 օր, կիրակի, այն է՝ Սեպտեմբեր 11 - 17-ին ընկնող որևէ կիրակի, նայած տարի և այլն:

Այս փաստերը խոսում են այն մասին, որ տոնական օրերը կատարվել են «Տաւնացոյց ըստ շաբաթուց»-ի կարգի համաձայն, այսինքն՝ հիմնականում շարժական սկզբունքով, այլապես Կիրակոս վարդապետը չէր զգուշացնի, անշարժ սկզբունքով կարգված սրբերի տոների միացման կամ տարվա վերջ տեղափոխելու մասին: Ի դեպ, այդպիսի ճաշոց-տոնացույցերի ընդօրինակութիւններ հայտնի են, որտեղ կամ սրբերի օրերը շարված են իրար ետևից, առանց հուլյան ամսաթվերի կամ այդ ամիս-ամսաթվերը ներմուծվել են շաբաթական շարքի մեջ կամ երկուսն էլ կան խառն սկզբունքով, որոնք անշուշտ հետեանք էին մի կողմից Տոնանամակ-Ճաշոցի, մյուս կողմից Ջատիկի կատարման օրվանից իբրև շարժական տոն, որից էլ հիմնականում կախված էր, թե սրբերի օրերը պետք է միացնել, թե տեղափոխել այլ տեղ:

Գրիգոր Վկայասերն ու Կիրակոս վարդապետը կրելով նախորդ «Կանոնք ընթերցուածոց»-ների խմբագրութիւնների ազդեցութիւնը իրենց Տոնանամակ-Ճաշոցի հիշատակարանում գրել են, որ «...եւ անխափան առանց յերկուանալոյ կատարել զկանոն ընթերցուածիս ի տաւնս յիշատակի սրբոցն»: Նրանք պարզապես ավելացրել են իրենց կողմից ներմուծված սրբերի հիշատակի օրերին կատարվող կանոն ընթերցուածները, որոնք վերցրել են Աստվածաշնչից:

Վերոհիշյալ վերլուծութիւնը ցույց է տալիս, որ Գրիգոր Վկայասեր-Գրիգորիս-Կիրակոսի Տոնանամակ-Ճաշոցը խմբագրվել է այն հաշվով, որ տոնական տարին սկսի հուլյան տոմարի Հունվարի 1-ից և ավարտի Դեկտեմբերի 31-ով: Դժվար չէ գտնել այդպիսի ճաշոց-տոնացույցեր, որոնք Տոնանամակի հետագա խմբագրութիւններ են: Դրանց թվում է 979 թվահամարի գրչագիրն, որն ընդօրինակվել է 1286/7 թթ.:

Որպեսզի կարողանանք Տոնանամակ-Ճաշոցի մասին պատկերացում կազմել և տեսնել թե նրանք ինչպիսի խմբագրութիւններ են կատարել նախորդ «Կանոնք ընթերցուածոց»-ների խմբագրութիւնների համեմատ, ներկայացնեք վերոհիշյալ գրչագիրը: Տալիս ենք նույնութեամբ տոնական շարքերը սկսած տարվա սկզբից մինչև վերջ, բաց չթողնելով նախորդ խմբագրութիւններից հայտնի շարժական և անշարժ տոնական շարքի այն տոնները, որոնք ընդհանուր են բոլոր ճաշոց-տոնացույցների համար: Սկսենք Տոնանամակի տոնական տարվա սկզբից և բերենք տոնների շարքը:

Յուրեղարի Ա. Բարսղի հայրապետի Կիսարու (Պահպանվել է գրչագրի ցանկում միայն):

Նորին Բ. Վարք սրբոյն Սեղբեստրոսի Հոռովմայ հայրապետի...

Նորին Գ. Ժողովումն իւթանասուն (ցանկում՝ եւթանասուն) և երկու առաքելոցն...

Յունուարի Ե. Յայտնութեան Տեառն մերոյ Յիսուս Քրիստոսի (ցանկում՝ Նորին Ե. ճրագալոյց)...

Նորին Զ. Յայտնումն Քրիստոսի (ցանկում)

Երկրորդ աւուրն առաւաւտուն...

Ճաշոյն. Յիշատակ սրբոյն Ստեփանոսի

Երրորդ աւուրն առաւաւտուն...

Չորրորդ աւուրն առաւաւտուն...

Հինգերորդ աւուրն առաւաւտուն...

Վեցերորդ աւուրն առաւաւտուն...

Եւթներորդ աւուրն առաւաւտուն...

Ութերորդ աւուրն առաւաւտուն...

Ճաշոյն. ութաւրեայ. թլփատութեան Տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի...

(Երկրորդ աւուրն մինչև Ը աւուրն-ցանկում)

Նորին Թ. Պողոթտիոսի (Պաւղոթտիոսի՝ ցանկում)...

Նորին ԺԱ. Պետրոսի հայրապետի և Աբիսողովմայ (Աբիսողովմայ՝ ցանկում)

Նորին ԺԵ. Վարք Յովհաննու կամաւոր աղքատին

Նորին ԺԶ. Սրբուհի կուսին Եւգինեայ և հաւրն նորա Փիլիպոսի Եպիսկոպոսի և այլոցն

Նորին ԺԷ. Վարք Անտոնի անապատականի

Նորին ԺԸ. Յիշատակ սրբոց հայրապետացն Աղեքսանդրի, Աթանասի և Կիւրղի...

Նորին ԺԹ. Վկայութիւն Թեոպոլիտի (ցանկում՝ Թեոպոլիտի) Եպիսկոպոսի և Թեոփնայ կախարդի և չորից զինուորացն և այլոցն...

Նորին Ի. Թեոդոսի թագաւորին...

Նորին ԻԱ. Տիմոթեոսի առաքելոյ և Նեոփիտոսի վկայի...

Նորին ԻԲ. Վկայութիւն Եւգինիանց (ցանկում՝ Եւգինեանցն) ի Տրապիզոն, կատարումն Եւգենիոսի, Կանտիտոսի, Վաղենտինոսի...

Նորին ԻԵ. Վարք Գրիգորի Աստուածաբանի...

Նորին ԻԸ. Վարք Եփրեմի ասորոց վարդապետի...

Նորին ԼԱ. Վկայութիւն Սարգսի զաւրաւարի և որդւոյ նորա Մարտիրոսի...

Ամիս Փետրուարի աւուրս ունի ԻԸ:

Նորին Ա. Վկայութիւն Տրիփոնի և Կալիոայ (ցանկում՝ Կալիսպա ÷ Կալիստրատոսի):

Նորին Ը. Յիշատակ սուրբ Մարգարէիցն Չաքարիա և Անկեա (ցանկում՝ Անգեա):

Նորին Ժ. Վկայութիւն Թագէտոսի առաքելոյ ի Հայք...

Գալստեան Տեառն քառասնաւրեայ ի տաճարն (ցանկում՝ Նորին ԺԴ. Տեառնընդառաջ է):

Նորին ԺԵ. Վկայութիւն սրբոյն Ոնէսիմայ և Արքիպպա...

Նորին ԺԶ. Յիշատակ սուրբ Եպիսկոպոսաց Մարութայի և սուրբ ոսկերացն, զոր ժողովեաց, որք ՄԶԹ վկայից նշխարք...

Բուն Բարեկենդանին շաբաթն աւուրն սուրբ ժողովոյն Կոստանդինուպոլսի ՃԾ սուրբ հարցն...

Բուն Բարեկենդանին կիւրակէին առաւաւտան... (ցանկում՝ նորին Ա Կիր[ակէ]: Բուն Բարեկենդան):

Յառաջնում շաբաթու պահոցն չորեքշաբաթի ակր ի տասներորդ ժամու ժողովին ի սուրբ Սիրովն և այս կանոն կատարի...

Յառաջնումն շաբաթու պահոցն ուրբաթի ակ[ուր] ի տասներորդ ժամու ժողովին ի սուրբ Սիրովն և այս կանոն կատարի...

Շաբաթ ակր. Թեոդոսի զակրակարի ...

Երկրորդ Կիւրակէին առաւաւտուն...

Յեկրորդում շաբաթու Պահոցն երկ(ու)շաբաթի ակր ժողովին ի տասներորդ ժամու ի սուրբ Յարութեանն և այս կանոն կատարի...

Երեքշաբաթի ակր ժողովին ի սուրբ Յարութեան ի տասներորդ ժամու և այս կանոն կատարի...

Չորեքշաբաթի ակր ժողովին ի տասներորդ ժամու ի սուրբ Սիրովն և այս կանոն կատարի...

Հինգշաբաթի ակր ի տասներորդ ժամու ժողովին ի սուրբ Յարութեանն և այս կանոն կատարի...

Ուրբաթի ակր ժողովին ի սուրբ Սիրովն ի տասներորդ ժամու և այս կանոն կատարի...

Շաբաթն ակուր. Յիշատակ Կիւրղի Երուսաղէմի Հայրապետի...

Երրորդ Կիւրակէին առաւաւտուն...

Երրորդ շաբաթու պահոցն չորեքշաբաթի ակր ի տասներորդ ժամու ժողովին ի սուրբ Սիրովն և այս կանոն կատարի...

Ուրբաթի ակր ի տասներորդ ժամու ժողովին ի սուրբ Սիրովն և այս կանոն կատարի...

Շաբաթ ակր. Յիշատակ Յովհանու Երուսաղէմացոյ և այս կանոն կատարի...

Չորրորդ Կիւրակէին առաւաւտուն

Ի չորրորդում շաբաթու քառասնորդացն չորեքշաբաթի ակր ի տասներորդ ժամու ժողովին ի սուրբ Սիրովն և այս կանոն կատարի...

Ուրբաթ ակր ի տասներորդ ժամու ժողովին ի սուրբ Սիրովն և այս կանոն կատարի...

Շաբաթ ակրն. Յիշատակ սրբոց քառասնիցն...

[Հինգերորդ Կիւրակէին առաւաւտուն...]

Ի հինգերորդ շաբաթուն քառասնորդացն չորեքշաբաթի ակր ի տասներորդ ժամու ժողովին ի սուրբ Սիրովն և այս կանոն կատարի...

Ուրբաթի ակրն ի տասներորդ ժամու ժողովին ի սուրբ Սիրովն և այս կանոն կատարի...

[Վեցերորդ Կիւրակէին առաւաւտուն ...]

Ի վեցերորդ շաբաթու քառասնորդացն չորեքշաբաթի ակր տասներորդ ժամու ժողովին ի սուրբ Սիրովն և այս կանոն կատարի...

Ուրբաթի ակր ի տասներորդ ժամու ժողովին ի սուրբ Սիրովն և այս կանոն կատարի...

Ղազարու առաւաւտուն...

Արմաւենեացն առաւաւտուն...

Մեծի երկուշաբաթի առաւաւտուն...

Մեծի երեքշաբաթին առաւաւտուն...

Մեծի չորեքշաբաթին առաւաւտուն...

Մեծի հինգշաբաթին առաւաւտուն...

Կանոն Մեծի հինգշաբաթին ոտնալուստին...

Մեծի ուրբաթին գիշերն...

Շաբաթ ակր առաւաւտուն...

Ճրագալուցին երկուուն սուրբ Ջատկին...

Մեծի կիւրակեի Ջատկին առաւաւտուն...

Երկուշաբաթի ակր Յիշատակ ննջեցելոց...

Երեքշաբաթի ակր...

Չորեքշաբաթի ակր...

Հինգշաբաթի ակր...

Ուրբաթ ակր...

Եւթներորդ ակուրն շաբաթն ակուրն...

Նոր կիւրակէին առաւաւտուն...

Համբարձմանն առաւաւտուն և ճաշոյն կարգն գրեալ է ի Մայիս ամիս ԿԵ Համարն գիտ և կարգա և մի մեղադրեր, զի զգործքս յետոյ գրեցի և ի Յինանցն ի կարգն դրի:

(Յանկում առկա են Հետևյալ նորույթները նորին (փետրուարի) ԺԷ. Թէոդորոսի զակրավարի)

Երկրորդ կիրակեին աղուհ(հացից)

Նորին ԻԳ. Պաղիկարպոսի

Մարտի Գ. Կիւրղի եպիսկոպոսի

Երրորդ կիւրակէ աղուհ(հացից)

Նորին (ամսաթիվը բացակայում է) Յովհանու Երուսաղէմի Հայրապետի

Չորրորդ կիւրակեին աղուհ(հացից):

Նորին Զ. Գիւտ Խաչին

Նորին Թ. Քառանիցն

Հինգ(երրորդ) կիրակէն աղուհ(հացից)

Նորին ԺԲ. Պիոնի քահանայի

Նորին ԻԳ. Մարկոսի եպիսկոպոսի

Նորին ԻԴ Աբղայի եպիսկոպոսի

Շաբաթն ակրն. Գրիգորի Լուսավորչի, որը բնագրում բացակայում է:

Վեց կիրակէն աղուհ(հացից)

Շաբաթն ակրն Ղազարու յար(ութեան):

Եւթն կիրակէն Գալուստ Տեառն...

Նոր կիրակէն մինչ(և) ի Պենտակոստեն): Այստեղ վերջանում է ցանկի նորույթները:

Ամիս Ապրիլ ակուր ունի Լ:

Նորին Ա. Վարք երանելոյն Մարիամու Եգիպտացւոյն (ցանկում բացակայում է):

Ապրիլ Զ. Աւետիք Աստուածածնին Գարրիելէ յորժամ ասաց ցնա...

Նորին ԺԶ. Վկայութիւն Շմաւոնի եպիսկոպոսի և այլ բազմութեան վկայիցն որ ի Պարս կատարեցան...

Նորին ԻԳ. Վկայութիւն սրբոյն Գեորգեա զաւրավարի...

Առաջին կիրակէն հետ Նոր կիրակէին Աշխարհամատրան (ցանկում երեք կիրակէ) Յին- [անց]. Աշխարհամատ(րան):

Նորին Լ. Վկայութիւն սուրբ առաքելոցն Յակովբայ Զերեղեա...

Ամիս Մայիս աւուրս ունի ԼԱ.

Նորին Ա. Երեմիայի մարգարէի:

Յայսմ աւուր վկայութիւն սուրբ վկային Կողրատոսի եւ ընկերաց:

Նորին Զ. Վերափոխումն Յովբայ արդարոյ եւ վկայութիւն սրբոյն Ակակիոսի բիւզանդացւոյ...

Նորին Թ. Եսայայ մարգարէի և վկայութիւն Քրիստափորի շանագլխի և Բ պոռնիկ կանացն և այլոցն:

Նորին ԺԱ. Մովկիմայ քահանայի եւ Երիանոսի եպիսկ(ոպոսի)...

Նորին ԺԲ. Յիշատակ երանելոյն Եպիփանու Կիպրացւոյ եպիսկ(ոպոսի):

Չորրորդ կիրակէին Յինանցն Երեման Սուրբ Խաչին ի յերկնից եւ այս կանոն կատարի...

Նորին ԻԱ. Յիշատակ Կոստանդիանոսի թագաւորի եւ մաւր նորա Հեղինէ...

Նորին ԻԲ. վկայութիւն Թեոդոտոնի Գաղատացւո եւ Լթն կուսանացն...

Նորին ԻԳ. Թալելեա բժշկի եւ ընկերաց նորին

Նորին ԻԹ. Սուրբ և առաջին ժողովոյն Նիկիայ ՅԺԸ սուրբ հարցն...

(Յանկում՝ Համբարձմանն Քրիստոսի Աստուծոյ մերոյ

Եւթն(երորդ) կիրակէ). Մաղկազարդ

Եւթն(երորդ) կիրակէն. Պենտակոստէ (Հասկացիր Զատկից հետո եկող Նոր կիրակիից հաշված 7-րդ կիրակին):

Երկրորդ աւուրն մինչև ի միւս կիրակէ):

Ի նմին աւուր կիրակէին (= Պենտակոստէի) ի տասներորդ ժամուն ժողովին ի սուրբ լեռն Ձիթենեաց եւ այս կանոն կատարի: Կանոն եւթն աւուրցն սրբոյ Պենտակոստէին, որ Գալուստ Հոգւոյ սրբոյ ի դասս առաքելոցն, զոր կարգեաց սուրբ հայրապետն հայոց Ներսես կաթողիկոսն):

Երկ(ու) շաբաթին...

Կանոն երրորդ աւուրն...

Կանոն չորրորդ աւուրն...

Կանոն հինգերորդ աւուրն...

Կանոն վեցերորդ աւուրն հոգւոյն գալստեանն

Կանոն եւթներորդ աւուրն հոգւոյ գալստեանն):

Կանոն ութերորդ աւուրն հոգւոյն գալստեանն):

Ամիս Յունիս աւուրն Լ:

Նորին Ա. Սրբուհի կուսանացն Հռիփսիմեայ և ընկերաց նորա...

Նորին Բ. Սրբուհույն Գայիանեա և ընկերացն նորա

Նորին Զ. վկայութիւն սրբուհի կուսանացն Մարիամու, Մարթայի, Թեկլի և Եմեի...

Նորին Ը. Թեոդորոսի (ցանկում՝ ստրատ(ելատի)) և այլ վկայիցն որ ընդ նմա

Նորին Թ. Յիշատակ Եփեսոսի սուրբ քաղովոյն...

Նորին ԺԱ. Բառնաբայ և Մատթեա

Նորին ԺԳ. Հանգիստ սուրբ Մարգարէին Եղիսեի

Նորին ԺԵ Երկոտասան Մարգարէիցն. Ովսեի, Ամովսայ, Միքեի, Յովելեայ, Աւղիու, Յովնանու, Նաուսայ, Ամբակումայ, Սափոնիա, Անդեա, Զաքարիա, Մաղաքիայ...

Նորին ԻԳ. Ծնունդ Յովհաննու Մկրտչի ի ծնողացն եւ յիշատակ հաւր նորա

Զաքարիա եւ մաւր նորա Եղիսաբեթի...

Նորին ԻԵ. Վկայութիւն բազմաչարչար կուսին Փերրոնեայ

(Նորին ԻԹ. Պետրոսի և Պաւղոսի՝ ցանկում)

Նորին Լ. Հաւաքումն ԺԲ առաքելոցն, վասն զի յայսմ աւուր եղև...

Ամիս Յուլիս աւուրս ունի ԼԱ:

Բ. Տապանակին Աստուծոյ, որ ի Կարիթարիմ

Ի մեծի տաւնի Վարդավառին առաւաւտուն...

Երկրորդ աւուրն Վարդավառին...

Երրորդ աւուրն...

Նորին Ժ. Խէ (ցանկում ԽԵ) վկայիցն, որ[ք] ի Նիկաւպոլիս հայոց կատարեցան

Նորին ԺԵ. Վկայութիւն սրբոյն Կիրակոսի և մաւր նորա Յ(ու)ղիտեա

Նորին ԺԶ. Աթանազինէ եպիսկ(ոպոսի) և Ժ աշակերտացն որք ի Փիլաքթովէ (կատարեցան):

Նորին ԺԸ. Նունեայ եւ Մանեայ...

Նորին Ի. Վերացումն սուրբ Մարգարէի Եղիայի

Նորին ԻԱ. Յիշատակ Մարգարէին Եզեկէլի

Նորին ԻԲ. Վկայութիւն Մարթի ԻՈԼ և հանգիստ Մարիամու Մագդաղէնացւոյ...

Նորին ԻԳ. Վկայութիւն սրբուհի կուսին Քրիստինեա

Նորին ԻԵ. Վկայութիւն սրբոյն Պանտալէոնի և Երմոզեա քահանայի)...

Նորին ԻԸ. Վկայ(ութիւն) սրբոյն Կալիսիկոսի

Նորին Լ. Վկայ(ութիւն) սրբոյն Աբղիմսեհի և այլոցն...

Ամիս Աւգոստոս աւուրս ունի ԼԱ:

Նորին Ա. Կատարումն Մակաբայեցոցն...

Նորին Գ. Վկայ(ութիւն) Աուեայ (ցանկում՝ [Ս]ափեա) (Սոփեա) և երից դստերացն...

Ի Նորին Թ. վկայութիւն սուրբ առաքելոյն Մատթայի (ցանկում՝ Մատթեայ)

[ցանկում՝ Նորին Ժ. Անտոնիոսի մար(տիրոսի):

Նորին ԺԲ. Շողակաթինն

Նորին ԺԵ. Փոխման Աստուածածնի

Երկրորդ աւուրն և երրորդ

Նորին ժ/Բ. Ստեփանոսի Ուլն(ա)ցոյն և ընկերաց նորա  
Նորին ժԹ. Անդրէի ստրատէլատին և Բանակի նորա  
Նորին ԻԱ. Սամուէլի մարգարէի և Թաղեոսի առաքելոյ և Աղղեի  
Նորին ԻԵ/ԲՆ՝ Իէ). Վկայութիւն սուրբ առաքելոյն Տիտոսի  
Նորին ԻԶ. Վկայութիւն սրբոյն Աղրիանոսի և կնոջ նորա Անատաւեա և այլ սրբոցն որ  
ընդ նորա  
Նորին ԻԹ. Գլխատումն Կարապետին Յովհաննու  
Ամիս Սեպտեմբեր աւուրս ունի Լ:  
Նորին Բ. Վկայութիւն սրբոյն Մամասայ  
Նորին Գ. Վկայութիւն Անթիմոսի Նիկոմիդեայ եպիսկոպոսի) և Վասիլուհեա կուսի  
Նորին Դ. Վկայութիւն Բաբիղայ Հայրապետի Անտիոքայ) և Գ մանկանացն եւ Բաբի-  
ղեայ Հայրապետի Նիկոմիդեայ և ԶԴ աշակերտացն...  
Նորին Ը. Ծնունդ սուրբ Աստուածածնի ի ծնողացն և յիշատակ ծնողացն Յովակիմայ եւ  
Աննայի...  
Նորին ժԳ. Նաւակատիք սրբոյ Յարութեանն Երուսաղէմի մեծի եկեղեցւոյն...  
Նորին ժԴ. Տաւն պատուական և սուրբ Խաչին Քրիստոսի Աստուծոյ մերոյ...  
Երկրորդ աւուրն...  
Երրորդ աւուրն...  
Չորրորդ աւուրն...  
Հինգերորդ աւուրն...  
Ի վեցերորդ աւուրն ժողովին ի սուրբ Գողգոթա...  
Եւթներորդ աւուրն...  
(Յանկում՝ երկրորդ աւուրն և մինչև ի միւս կիրակէն տաւն է):  
Ի նորին ժԶ. Վկայութիւն սրբուհի կուսին Եւփիմեա (ցանկում՝ և փեմիայ և յոթ ընկե-  
րացն...)  
Նորին ժԸ. Հանգիստ փառավոր մարգարէին Մովսեսի և յիշատակ Ահարոնի և Յետովայ  
պաշտաւնեին Մովսեսի...  
Նորին Ի. Վկայութիւն սրբոյն Եւստաթեի (ցանկում՝ և ստաթեոսի) և կնոջ նորա և որդոցն...  
Նորին ԻԲ. Հանգիստ սուրբ մարգարէի Յովնանու եւ վկայութեան սրբոյն Փոկասու (ցան-  
կում՝ Յոկասու) եպիսկոպոսի  
Նորին ԻԴ. Վկայութիւն սրբոյ կուսին Թեկղի  
Նորին ԻԶ. Հանգիստ սուրբ աւետարանչին Յովհաննու...  
Նորին ԻԷ. Վկայութիւն սրբոյն Կալիստրատոսի և ԽԹ ընկերաց նորա  
Նորին Լ. Գիւտ նշխարաց սրբոյն Գրիգորի Լուսաւորչի և Հայրապետի Հայոց մեծաց...  
Եւ յիշատակ սրբոց Հռիփսիմեանց...  
Նորին Լ (կրկնվում է ընթերցվածներով)  
Ամիս Հոգտեմբեր (ցանկում՝ Հոկտեմբեր) աւուրս ունի ԼԱ՛  
Նորին Ա. Վկայութիւն սուրբ առաքելոյն Անանիայի Դամասկացւոյ...

Նորին Բ. Վկայութիւն սրբոյ եպիսկոպոսին Կիպրիանոսի եւ Յուստինեայ սրբուհոյ կու-  
սին...  
Նորին Գ. Սուրբ եպիսկոպոսի Դիոնեսիոսի Արիսպագացւոյ և յիշատակ Կիւրակոսի ճգն(ա-  
ւորի)  
Նորին Զ. Սուրբ առաքելոյն Թովմայի  
Նորին Է. Վկայութիւն Սարգսի և Բագոսի և ընկերաց նոցա...  
Նորին Թ. սուրբ առաքելոյն Յակովբայ Աւփէան և Հանգիստ Աբրահամու արղարոյ...  
Նորին ժԲ. Վկայութիւն սրբոցն Տարագ(ր)ոսի, Պրոբոսի և Անդրոնիկոսի  
Նորին ժԵ. Սրբուհի կուսին Երմոնեայ եւ վկայութիւն սուրբ քահանային Ղուկիանոսի  
Անտիոքացւոյ...  
Նորին ժԶ. Վկայութիւն Ղուկիանոսի Հարիւրապետի, որ ի խաչին Հաւատաց...  
Նորին ժԷ. Հանգիստ Ովսեի մարգարէի եւ վկայութիւն Թեոդորիտեա քահանայի Անտի-  
քացւոյ  
Նորին ժԸ. Հանգիստ սուրբ աւետարանչին Ղուկասու եւ յիշատակ սուրբ աւետարանչին  
Մարկոսի...  
Նորին Ի. Վկայութիւն սրբոցն Ար(տ)եմեա (ցանկում՝ Արտեմայ) և Խարեթայ) և ժՌՄ  
վկայիցն որ ընդ նոսա կատարեցան...  
Նորին ժԲ. Վկայութիւն սրբոյն Մելի եպիսկոպոսի) և Բ աշակերտացն և Բորայ քահանա-  
յի և Շենոյի Սարկաւագի...  
Նորին ժԳ. Վարք սրբոյ Յովհաննու Ոսկեբերանի և տիեզերաց լուսաւորչի  
Նորին ժԴ. Վկայութիւն սուրբ առաքելոյն Փիլիպոսի (ցանկում՝ Փիլիպպոսի) առաք(ելոյն)  
որ յերկոտասանիցն  
Նորին ժԶ. Վկայութիւն սուրբ աւետարանչին Մատթեոսի  
Նորին ժԷ. Վկայութիւն սուրբ խոստովանողացն Գուրիասայ, Սամոնասայ եւ Արիբա  
սարկաւագի  
Նորին ժԸ. Վարք սուրբ Հայրապետին Գրիգորի սքանչելագործի...  
Նորին ժԹ. Հանգիստ սուրբ Մարգարէին Աբղիու եւ վկայութիւն սրբոյն Ռոմանոսի միայ-  
նակեցի և մանկանն խոստովանողի)...  
Նորին ԻԴ. վկայութիւն սրբուհի կուսին Նեքտառինեայ և ԳԺ-ան (13) մարտիրոսացն  
Նորին ԻԵ. Վկայութիւն) սուրբ Հայրապետին Կղեմայ առաքելոյն Հռովմայ և Պետրոսի  
Աղէքսանդրու (ցանկում նաև Բագրատայ):  
Նորին ԻԲ. Վկայութիւն Վարոսեանց սրբոց վկայիցն...  
Նորին ԻԳ. Վկայութիւն սուրբ առաքելոյն Յակովբայ և Շմաւոնի ազգականի նորա  
Նորին ԻԴ. Յարութե(ան) է Մանկանց Եփեսոսի...  
Նորին ԻԶ. վկայութիւն սքանչելագործ վկային Դեմետրիոսի և այլոցն  
Նորին ԻԷ. Հեպերիքեայ և ընկերաց նորա (ցանկում՝ Հիւպերիքեանց).  
Դարձեալ ԻԷ (ցանկում՝ նորին ԻԵ, բայց Հիպերիքեանցից հետո) Վկայութիւն սրբոյ Սու-  
քիասանցն, որք ի Հայք կատարեցան...  
[Ն]որին ԻԹ. Վկայութիւն սրբոյն Ստեփանոսի Հռովմայ Հայրապետի եւ որոց ընդ նոսա  
Ամիս Նոյեմբեր աւուրս ունի Լ:

- Նորին Ա. Սքանչելագործ բժշկացն Կողմայի և Դամիանոսի
- Նորին Զ. Վկայութիւն սուրբ Հայրապետացն Կոստանդինապոլսի, Պաւղոսի խոստովանողի, Աղեքսանդրի եւ Մետրոփանոսի
- Նորին Ը. Տաւն է փառաւոր հրեշտակապետացն Միքայելի և Գաբրիէլի և ամենայն երկաւոր զաւերացն...
- Նորին ԻԶ. Վկայութիւն սքանչելագործ վկային Մերկեռիոսի...
- Նորին ԻԷ. (բնագրի՝ ԻԵ). վկայութիւն բազմաչարչար վկային Յակովկայ թագաւորազնոյ եւ Իրաւ(բն. Ի) ափառայ
- Նորին Լ. (ցանկում՝ ԻԷ). Վկայութիւն սուրբ առաքելոյն Անդրեի (ցանկում՝ Անդրէի): Ամիս Դեկտեմբեր աւուրս ունի ԼԱ:
- (Յանկում՝ Դեկտեմբեր Ա. Յիշատակ Պաւղոսի, Պաւղեա, Մակարայ և այլոցն) և Նառամ մարգարէի):
- Նորին Գ. Հանգիստ սուրբ Մարգարէին Սոփոնիս եւ վկայութիւն սուրբ Հայրապետին Աղեքսանդրու թեղուլի (ցանկում՝ Թեոդուլի):
- Նորին Դ. Վկայութիւն սրբուհի կուսին Վառվառեայ և Յուլիանեա
- Նորին Զ. (բնագրում՝ Գ). Վարք և Հանգիստ սքանչելագործ Հայրապետ Նիկողայոսի...
- Նորին Ժ. Վկայութիւն սքանչելագործ, սուրբ վկայիցն Մինասայ, Երմոզենի (ցանկում՝ Երմոզինէ), և Գրափոսի
- Նորին ԺԱ. Վկայութիւն սուրբ առաքեալ Բարդողոմեոսի
- Նորին ԺԳ. Վկայութիւն փառաւորեալ և սուրբ վկայիցն Քրիստոսի Եւստոատիոսեանց
- Նորին ԺԵ. Վարք և Հանգիստ Յակովբայ սուրբ Հայրապետին Մծբնայ եւ Մարգարէի (ցանկում՝ Մարուգեի) ճգնաւորի:
- Նորին ԺԷ. Վկայութիւն սուրբ մարգարէի Դանիէլի և յիշատակ երից մանկանց (բնագրում այս հատվածը կրկնվում է):
- Նորին Ի. Իգնատիոսի Անտիոքայ սուրբ Հայրապետի
- Նորին ԻԱ. Վկայութիւն սրբուհի կուսին Յուլիանեայ և Ո(600) վկայիցն ընդ նմա
- Նորին ԻԲ. Վկայութիւն սրբուհոյն Անաստասայ և որոց ընդ նմա սրբուհի կուսանացն:
- Նորին ԻԳ. Յիշատակ Նախահարցն սրբոց Ադամայ, Նոյի, Աբրահամու, Սահակայ, Յակովբայ և այլոցն
- Նորին ԻԵ. Յիշատակ Դաւթի մարգարէի և Յակովբայ առաքելոյ եղբորն Տեառն...
- Նորին ԻԸ. Վկայութիւն սրբոյն Դոմնայի եւ Ինդոսի և Գղերիկոսի քահանայի եւ երկուց բիւրուցն, որք ի Նիկովմիդայ (կատարեցան):
- Նորին ԻԹ. Տղայոցն Բեթղէեմի սպանելոցն ի Հերովդէէ արքայէն
- Նորին Լ. Յիշատակ սուրբ առաքելոցն Յակովբայ և Յովհաննու որդուցն Զեբեդեայ:
- Յանկն ավարտվում է, իսկ բնագրում ավելացրել են Նոյեմբեր 21, Հունվար 3, Փետրվար 11, Օգոստոս 15, Փետրվար 22, ինչպես և Հայոց ամսաթվերով կանոններ, որոնք կապ չունեն Գրիգոր Վկայասերի Տոնանամակի հետ ավելացրել են հետագայում:
- Գրիգոր Վկայասեր-Գրիգորիսի-Կիրակոսի կազմած ճաշոց-տոնացուցի վերոհիշյալ ցանկից (չհաշված հետագայում հիմնականում Հայոց անշարժ տոմարի ամսաթվերով ավելացրած լրացուցիչ 12 տոների օրերը) հանելով նախորդ տոնացուցերից հայտնի սրբերի տոնական օրերը

կատանանք նրանց կազմած Տոնանամակի հիմնական պատկերը: Ըստ ներկայացված ցանկի այդ Տոնացուցը գրանցել է մոտ 300 կանոն, որոնցից մոտ 139-ը սրբերի տոնական օրերն են: Դրանցից ավելի քան 40-ը հայտնի են նախորդ տոնացուցերից: Մնում է մոտ 100 սրբերի տոնական օրեր, որոնցից դժվար է առանձնացնել ավելի քան երկու տասնյակի հասնող տոնական օրեր, որոնք մուծվել են հետագայում մինչև 1286/7 թթ.: Տոնացուցի մեջ տեղ տեղ առկա են հիշատակումներ թե որ տոների օրերը հետագա որ կաթողիկոսն է ավելացրել: Այսպես, Պենտեկոստի օրերի քանակը ավելացրել է Ներսես Շնորհալին (1166-1173 թթ.): Ակնհայտ է, որ որոշ սրբերի հիշատակի օրեր ևս ավելացվել են, սակայն դրանք մեծ քանակ չեն կազմում, ուստի 979 թվահամարի գրչագրերը հանելով նախորդ շրջանում կատարված տոները հիմնականում տալիս են Գրիգոր Վկայասերի - Գրիգորիսի - Կիրակոսի կազմած Տոնանամակի համարյա նախնական վիճակը: Այլ խոսքով կարելի է ասել, որ 979 թվահամարի գրչագիրը Գրիգոր Վկայասերի և նրա համախոհների կազմած Տոնանամակն է հետագայի մասնակի խմբագրումներով: Նրանց կանոնած 76 տոները հեշտությամբ վերականգնվում են, որպես օրինակ վերցնենք հունվարի հատվածը: Այնտեղ նշվել են 17 տոնական օրեր, որից հանելով 5-ը, այն է՝ Ստեփանոսի, Պետրոս Հայրապետի և Աբիսողոմի, Անտոն Անապատականի, Թեոդոս թագավորի, Սարգիս զորավարի, պարզվում է, որ նրանք ավելացրել են Բարսեղ Կեսարացու, Սեղբեստրոսի, 72 առաքյալների, Պողոթիոսի, Հովհանու կամավոր աղքատի, Եվգինեա կույսի և նրա հոր Փիլիպոսի, Աթանաս և Կյուրեղ Ալեքսանդրացիների, Թեոպրոստոսի և Թեոփիլոսի կախարհի, Տիմոթեոս առաքյալի և Նեոփիտոս վկայի, Եվգինեանց, Գրիգոր աստվածաբանի, Եփրեմ ասորու հիշատակի օրերը: Այս օրինակը բերեցինք նաև այն պատճառով, որ հետագա տոնացուցերը՝ հատկապես շաբաթական ցիկլի վրա հիմնված, ներմուծել են հիշյալ սրբերի օրերը և հեշտությամբ կարելի է տարբերել նախագրիգորյան և ետգրիգորյան ճաշոց-տոնացուցերը միմյանցից:

Գրիգոր Վկայասերի կազմած Տոնանամակը էական նշանակություն ունեցավ Հայոց քրիստոնեական տոնացուցի հետագա զարգացման վրա: Այդ երևում է Գրիգոր Վկայասերից հետո կազմած տոնացուցերից, որոնք ներդրել են իրենց մեջ սրբերի տոների օրերը, որոնք տոնացուց էր ներմուծել Գրիգոր Վկայասերը: Այդ տոնացուցերը մի դեպքում պահպանել են Գրիգոր Վկայասերի ընդունած հուլյան կարգը սկսած Հունվարի 1-ից, մյուս դեպքում, շաղկապել են Հայոց ազգային տոնացուցի շաբաթական շարքի հետ: Այլ խոսքով, ուշ շրջանում արտագրված և խմբագրված համարյա բոլոր տոնացուցերը անկախ նրանից թե կազմված են հուլյան տոմարի ամսաթվերով թե շաբաթական շարքով, հիմք են ընդունել Հովհան Օձնեցու տոնացուցը և Գրիգոր Վկայասեր - Գրիգորիսի - Կիրակոսի Տոնանամակը: Ուշագրավ է նաև, որ Գրիգոր Վկայասերը, Գրիգորը և Կիրակոսը ոչ միայն օգտվել են նախորդ շրջանում կազմված Յայսմավուրք ժողովածուներից, այլ կազմել են նոր «Յայսմավուրք» ժողովածու՝ թարգմանելով այն սրբերի վարքերն ու վկայաբանությունները, որոնք չկային հայերեն լեզվով:

Այսպիսով, Գրիգոր Վկայասերը, Գրիգորիսը և Կիրակոս Դրագարկեցին Հնագույն Կանոնը ընթերցումների հիմքի վրա տվեցին սրբերի հիշատակի օրերը իրենց ընթերցվածներով հիմք ունենալով հուլյան տոմարի ամիս-ամսաթվերը, սկսած Հունվարի 1-ից: Այնպես որ նրանց խմբագրած Տոնանամակը հեշտությամբ տարբերակվում է մյուս բնագրերից, որն անհասկանալի պատճառով չփոթել են: Այժմ դժվար չէ ասել, որ հիշյալ հեղինակների հիշատակարանները պարունակող գրչագրի հուլյան ամսաթվերով ճաշոցը, ինչպես և 979 թվահամարի գրչագիրն և այլ գրչագրեր, որոնք առկա են մեր ձեռագրերում, նրանց կազմած Տոնանամակի հետագա ընդօրինակություններն են՝ մասամբ խմբագրված:

«ՅԱՅՍՄԱՎՈՒՐՔ» ԺՈՂՈՎԱԾՈՒԻ ՍՏԵՂԾՈՒՄԸ ԵՎ ՆՐԱ ՀԵՏԱԳԱ  
ՆՄԲԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ (9-15-ՐԴ ԴԴ.)

Հայոց տոնական տարվա առաջացման և զարգացման առնչությամբ անհրաժեշտաբար ուսումնասիրել ենք վկայաբանական ժողովածու-Յայսմավուրքների պատմությունը: Նրանք սերտորեն կապվում են Հայոց տոնացույցի պատմության հետ և նրան օժանդակող մասն են կազմել: Մենք համառոտ կներկայացնենք Յայսմավուրքների առաջացման պատմությունը, որովհետև առանց դրա Հայոց տոնացույցի պատմությունը թերի կմնա, իսկ ընդարձակ հետազոտությունը առաձին մենագրության խնդիր է: Հայոց տոնացույցի հետ է զուգորդվում ինչպես համընդհանուր սրբերի վկայաբանությունների և վարքերի թարգմանությունը, այնպես էլ Հայոց սրբերի վարքերի և վկայաբանությունների ստեղծումը, որոնք սկսվել են 5-րդ դարի սկզբներից: Բավական է հիշել «Վկայք Արեւելից»-ի թարգմանությունը 422 թվականին Եզնիկ Կողբացու կամ Հովսեփ Պաղնացու կողմից, կամ Մաշտոցի «Գրիգորիսի վարքը»՝ ստեղծված 428-435 թթ., կամ Կորյունի «Վարք Մաշտոցի»-ն՝ գրված հավանաբար 446 թվականին: Սակայն դրանք տոնացույցի պահանջները բավարարում էին մասնակիորեն, մանավանդ ոչ բոլոր սրբերին էր հատկացված առանձին հիշատակի օրեր: «Կանոնք ընթերցուածոց»-ի սրբերի տոնելի օրերին նպաստեց նաև Սողոմոն Մաքինացու Տոնական ճառընտիրը:

Տոնացույցի հետագա ընդլայնումն անհրաժեշտություն առաջացրեց ստեղծել առանձին վկայաբանական ժողովածուներ, որոնք ոչ թե ընդարձակ վկայաբանություններ էին նվիրված ընդհանրապես սրբերին, այլ վերաբերվում էին Հայոց տոնացույցում տեղ գտած սրբերին, որոնց մի մասի վարքերն ու վկայաբանությունները նույնիսկ թարգմանված կամ գրված չէին: Այդ պահանջը զգացնել տվեց հատկապես 9-րդ դարի վերջերին 10-րդ դարի սկզբներին: Ասողիկը Սմբատի թագավորության (891-913 թթ) տարիների մասին գրելիս տեղեկացնում է, որ «Յայսմ ժամանակի պայծառանայր առաքինութեամբ հայրն Գագիկ առաջնորդ ուխտին սուրբ Ատոմայ, որ գյիշատակ (Ձեռ. յիշատակ) մարտիրոսացն միայարել ի գիր (ձեռ. ի գիր կամ ի դիր) որ Ատոմայգիր անուանէալ ասի (Ձեռ. որ Ատոմագիրն անուանի)»<sup>1</sup>:

Ասողիկը, որն անկասկած տեսել և օգտագործել է Գագիկի կազմած վկայաբանական ժողովածուն անվանել է Ատոմագիր, որը կարող էր կոչվել նաև Ատոմագիր: Թե ինչ կառուցվածք է ունեցել հիշյալ ժողովածուն սկզբնաաղբյուրներն որևէ տեղեկություն չեն տալիս: Երուսաղեմի մատենադարանի Տոնացույց-ձառընտիրում, որը կազմված է չորս գրքերից և հետագայի ընդօրինակություն է, գտնում ենք հետևյալ տեղեկությունը.

«Պատմութիւն հոգեւոր վարուց սրբոյն Մարութա եպիսկոպոսի քաղաքին Նիրկերտո, որ թարգմանի Մարտիրոսաց քաղաք. — Ով եղբարք իմ և հարք, լուարուք զպատմութիւն սրբոյն Մարութայի... Որոց բարեխաւութեամբ Տէր ԱԾ (Աստուած) և մեզ ողորմեսցի, որ թարգմանեսցաք յասորոց ի հայ լեզու, ես Գագիկ հայր, և Գրիգոր սարկաւազ իմ որ ընդ իս...»<sup>2</sup>:

Կասկած չի կարող լինել, որ հիշյալ Տոնացույց-ձառընտիրը նախօրինակ է ունեցել Գագիկ Հօր «Ատոմագիր»-ը, որից և վերցրել է նրա թարգմանություններից մեկը, թերևս ավելին:

<sup>1</sup> Ստեփանոսի Տարոնեցոյ Ասողկան Պատմութիւն տիեզերական, 2-րդ տպ. Ս. Պետերբուրգ, 1885, էջ 160:  
<sup>2</sup> Մայր ցուցակ ձեռագրաց սրբոյ Յակոբեանց, հատոր առաջին, կազմեց Նորայր եպս. Պողարեան, Երուսաղեմ, 1966, էջ 4:

«Պատմութիւն որդւոյն թագաւորին Հռոմայ, որոյ անուն էր Ներսէզ» բնագրի մեջ կարդում ենք «Ես՝ Հայր Գագիկ, որ թարգմանեցի զՊատմութիւնս զայս զորդւոյ թագաւորացն երկուցունց յասուրոց ի մերս...»<sup>1</sup>:

Գ. Հովսեփյանը հիշյալ թարգմանությունը վերագրում է Ատոմա վանքի վանահայր Գագիկին (Հիշատակարանք, էջ 105):

Այլ խոսքով Գագիկի կազմած Ատոմագիրը տարբերվել է Սողոմոն Մաքինացու Տոնական ճառընտիրից, այսինքն «Կանոնք ընթերցուածոց»-ի սկզբունքը չի եղել, այլապես տարբերակիչ անվանում չէր ունենա և հավանաբար հիմքում ունեցել է «Տաւնացոյց ըստ շաբաթուց»-ի տոնական շաբթը, այսինքն կազմված է եղել Հայոց տոնական տարվա սկզբունքով (թերևս տոմարական տարվա, որը քիչ հավանական է Հայոց շարժական տոմարի պատճառով): Նրա կազմած Ատոմագիրը տարբերվել է նաև Հովսեփ Կոստանդնուպոլսեցու թարգմանած Հռոմ Տաւնացույցնէ» - «Յայսմաւուրք»-ից, որովհետև նրա ամսաթվային նշումներն եղել են ոչ միայն հուլյան տոմարով, այլ հատկապես Հայոց շարժական տոմարի ամիս-ամսաթվերով:

Հովհան Օձնեցու «Կանոնք ընթերցուածոց - Տոնացույցի» խմբագրությունը քննելիս հիմնավորեցինք, որ Մշո Տոնական ճառընտիրում Սուրբ Սարգսի վկայաբանության մեջ, պահանջված Մարերի 20-ը տալիս է 893-896 թթ, այսինքն այդ վկայաբանությունը ասորերենից թարգմանել է Գագիկ վանահայրը և դրել իր կազմած Ատոմագրի մեջ: Ակնհայտ է, որ Մշո տոնական ճառընտիրի ընդօրինակողն օգտագործել է Գագիկ վանահոր կազմած վկայաբանական ժողովածուն: Այս փաստը ևս ցույց է տալիս Ատոմագրի կառուցվածքը, որպես Հայոց տոնական տարվա հիման վրա կազմված ժողովածուի:

Ուշագրավ է, որ Գեորգ զորավարի տոնական օրվա մասին եղած վկայությունները, որը քննել ենք առանձին տեղ, ցույց են տալիս, որ նրա վկայաբանությունը թարգմանվել է հունարենից հայերեն 900-903 թթ. սահմաններում և ստացել Հայոց շարժական տոմարի ամսաթիվ Մեհեկան 23-ը, որը նույնպես կապվում է Գագիկ վանահոր գործունեության շրջանի հետ և ամենայն հավանականությամբ այդ վկայաբանությունը նույնպես մտել է Ատոմագրի մեջ:

Գագիկ վանահոր կազմած ժողովածուի հետագա խմբագրություն ենք համարում նաև Երևանի 8179 թվահամարի գրչագիրը, որը ընդօրինակվել է 13-րդ դարի վերջում և իրենից ներկայացնում է Հայոց տոնական տարվա կառուցվածքով կազմված վկայաբանական ժողովածու: Գրչագրի սկիզբը թերի է, բայց սկսում է Սուքեսասեանց վկայաբանությամբ, այնուհետև գալիս է Ոսկեանց, Սահակ կաթողիկոսի, Վարդանանց, Ղևոնդեանց, Կոստանդնուպոլսի ժողովին (381 թ.) մասնակցած Հայրապետների, Թեոդորոս զորավարի Կյուրեղ և Հովհաննես Երուսաղեմցիների, քառասնից վկայաբանություններն ու վարքերը, այսինքն Առաջավորաց պահքի հաջորդ երեքշաբաթից մինչև Ծաղկազարդ ընկնող շրջանի հիշատակի օրերը, որից հետո շարունակում է Հայոց տոնացույցի կարգով մինչև վերջ: Այն կրում է նաև Գրիգոր Վկայասերի տօնանամակի և Յայսմավուրքի ազդեցությունը ինչպես և Հայոց անշարժ տոմարի ամսաթվեր կան, որոնք հետագա խմբագրության արդյունք են:

Այս կցկտուր տեղեկությունների քննությունն անգամ կասկած չի թողնում, որ Ատոմագիրը, որը կազմել է Գագիկ վանահայրը 9-րդ դարի վերջերին - 10-րդ դարի սկզբներին, եղել է վկայաբանական ժողովածու - Յայսմաւուրք, որի կառուցվածքի հիմքում ընկել է Հայոց տոնական տարին և ունեցել է Հայոց շարժական տոմարի ամսաթվեր: Այդ ժողովածուի հետևում թյամբ ընդօրինակվել են նոր ժողովածուներ, հարստացվել են նոր տոնական և սրբերի հիշատակի օրերի մասին բնագրերով, ինչպիսիք են Երուսաղեմի և Երևանի մատենադարանի հիշյալ

<sup>1</sup> Տե՛ս Հայերեն ձեռագրերի հիշատակարաններ Ե-ԺԳ դարեր, Ե., 1988, էջ 45:



տոնացույց-ճառերնորները: Այսպիսով Ատոմի վանահայր Գագիկը կազմեց առաջին Յայսմավուրքը, որը հիմնված էր Հայոց տոնական տարվա վրա և այդ տարբերակը ունեցավ իր հետևորդները: Այնպես որ, ճիշտ չէ Ն. Ակինյանը, երբ «Հայոց Յայսմավուրքի սկզբնաւորութեան» պատմութիւնը սկսել է Հովսեփ Կոստանդնուպոլսեցու «Հոռոմ տաւնացույցէ» Յայսմավուրքի թարգմանութիւննից<sup>1</sup>:

\*\*\*

1954 թ. Վիեննայի Միխիթարյան մատենադարանը ձեռք բերեց մի գրչագիր, որը ընդօրինակվել էր Սեբաստիայում 1302 թ. և գրանցվեց 1048 թվահամարի տակ: Ն. Ակինյանը նախապես նկարագրել է, իսկ հետագայում գրել ուսումնասիրութիւն, որին կանգրադառնանք քիչ հետո: Այն հանգամանակի, բայց առանց բնագրերի նկարագրել է Հ. Ոսկյանը և հրատարակել Վիեննայի Միխիթարյան Մատենադարանի հայերեն ձեռագրացուցակի 2-րդ հատորում<sup>2</sup>, որը հնարավորութիւն է տալիս ամբողջական պատկերացում կազմել այդ բնագրի մասին: Ն. Ակինյանը 1957 թ. գրել է, որ Վիեննայի Միխիթարյան գրադարանը ստացավ Յայսմավուրք մը (այժմ թ. 1058), որ գրված է 1302-ին ի Սեբաստիա: «Ան բովանդակութեամբ յունական Յայսմավուրք է նախնական վիճակին մեջ» (Անդ. էջ 1-2): Ուսումնասիրութիւնը ցույց է տալիս, որ այդ Տոնացույց-Յայսմավուրքը խմբագրվել է հետագայում: Բավական է նշել, որ այնտեղ առկա է Ներսես Կլայեցի կաթողիկոսի (1166-1173 թթ.) գրած ներբողյանը նվիրված Մարիամ Աստուածածնին, բացի այդ Հայոց անշարժ տոմարի որոշ ամիս-ամսաթիվերը վեր են ածվել հուլյանի և տեղ գտել Տոնացույց-Յայսմավուրքում: Այսպես, Սեպտեմբերի 17-ի կանոնի տակ տրվել է Սահակ Հայրապետի (և Մեսրոբ վարդապետի) հիշատակի օրը, որը նախատեսված էր 30-ի համարժեքն է, իսկ Փետրվարի 22-ի կանոնի տակ՝ Յիզբուզտի հիշատակի օրը, որը Մեհեկանն 16-ի գուգահեռ ամսաթիվն է: Այսպես է նաև Հայոց մյուս սրբերի համար: Այնպես որ, հանելով հետագա խմբագրումները նոր միայն կատանանք Հովսեփ Կոստանդնուպոլսեցու թարգմանութիւն նախնական տարբերակը: Ն. Ակինյանը շարունակում է, որ «թարգմանութիւնս վերնագիր կը կրէ «Տոնացույց». թարգմանիչն է Յովսեփ. թարգմանուած է Կ. Պոլիս 991/2-ին» (Անդ. էջ 1-2):

Բերենք բնագրի հիշատակարանը. «Իցեն եւ այլ Հոռոմ տոնացույցք, յորում չեն այս սուրբք գրեալ, այլ այլ սրբոց պատմութիւնք են եւ եթէ որչափ սուրբք իցեն ընդ ամենայն երկիր, առաւել քան զհազարս հազարաց եւ բիւրս բիւրոց եւ ոչ ոք գիտէ զթիւսն եւ զհամարնն, բայց ոչ միայն ընդող (sic - Հ. Ոսկ.) Հոգոց նոցա Քրիստոս, որ հրաւիրեաց եւ ընդրեաց յորովանէ եւ գրեաց զանունս նոցա յերկինս ի գիրս կենաց եւ կարգեաց ի դասս հիշատակաց ի տեղի ստորանկերցն:

Եւ ես անարժանս եւ տգէտս և մեղաւոր թարգմագրիչս Յովսեփ, ծնեալ եւ սնեալ եւ ծերացեալ յաստուածապահ քաղաքիս Կոստանդնուպալիս եւ զհայերենի լեզու եւ զգիր ի տեղիս ուսեալ ի միոյ Հոռոմ Տաւնացույցէ թարգմանէցի զճառ առաւատի ի թորգոմական բարբառին եւ իս (Ն. Ակինյանը իրավամար ուղղել է բարբառի Ն եւ իս - Ռ. Վ.) թուակ(անութեան) Հայ(ոց) եւ էր յԱղամ(այ) ՁՌՇ անցեալ ամաց եւ յուղարկեցի ի Հայոց եկեղեցիս, որ ընթեռնուն եւ գրեն զիրաքանչիւր սրբոցն զճանութիւնս եւ յիչեն յանուանէ զմեղաւոր Հոգիս եւ վարձս ի վարձատուողէն առցեն ամէն: Եւ վասն զի ծանր եւ անծանաւթ իցեն անուանք սրբոցն, այսպէս գրեցի, յորում գրեալ է թէ վկայաբանութիւն սրբոյն գիտասջիր որ մարտիրոս այր էր եւ յորում գրեալ է վկայութիւն սրբոհուն, գիտասջիր որ մարտիրոս կին է եւ յորում գրեալ է վարք երանելոյն, ոչ

<sup>1</sup> Տե՛ս Ն. Ակինյան, Յովսեփ Կոստանդնուպոլսեցի թարգմանիչ Յայսմավուրքի (991), Հանդես Ամսօրեայ թիւ 1-2, Յուն.-Փետր., ՀԱ տարի, 1957, էջ 1-2:

<sup>2</sup> Տե՛ս Յուցակ հայերեն ձեռագրաց Միխիթարեան Մատենադարանի ի Վիեննա, հատոր Բ, կազմեց Հ. Համազասպ Ոսկեան, Վիեննա, 1963, էջ 692-ից:

է մարտիրոս, այլ առաքինի եւ աստուածահաճոյ վարիւք ճգնեալ վասն անուանն, որ ի Քրիստոս»<sup>1</sup>:

Արարչութիւն և Հայոց թվականների տարբերութիւնը այն է՝ 6060-ը (6500-440) ցույց է տալիս, որ հիշատակարանը գրվել է 992 թվականին: Արարչութիւն թվականը Կոստանդնուպոլսում օգտագործված թվականն է, որի տարբերութիւնը ներկա թվականից 5508 է (6500-992):

Հովսեփ Կոստանդնուպոլսեցին գրել է, որ ավարտել է իր թարգմանութիւնը Հունարենից Հայերեն 992 թվականին: Հիմք է ընտրել «Հոռոմ տաւնացույցք»-ից մեկը հավանաբար Կոստանդնուպոլիս Սուրբ Սոփիայի տաճարում կիրառված տոնացույցը, որը հետագայում Հայերը անվանել են Յայսմավուրք: Այդ երևում է նաև տարեսկզբից: Նա սկսել է բյուզանդական տոնացույցային տարվա սկզբից, այն է՝ Սեպտեմբերի 1-ից: Հովսեփ Կոստանդնուպոլսեցու թարգմանաց Տոնացույց-Յայսմավուրքը ունեցավ հետագա հետևորդներ, որը երևում է ոչ միայն քննարկվող բնագրից, որն ինչպես տեսանք, խմբագրվել է, այլ առկա է Գրիգոր Անավարդեցու տարբերակը: Այդ մասին կխոսենք փոքր ինչ հետո:

Հովսեփ Կոստանդնուպոլսեցու թարգմանած տոնացույց-Յայսմավուրքը ներդրվեց նաև Հայոց Տոնացույցի մեջ, երբ Գրիգոր Վկայասերն և մյուս խմբագիրներն ավելացրեցին սրբերի հիշատակի օրեր Հայոց տոնացույցում: Հովսեփ Կոստանդնուպոլսեցուն հետևեցին նաև Յայսմավուրքի հետագա խմբագիրները ոչ միայն սրբերի պատմութիւնները տեղադրելով իրենց խմբագրութիւնների մեջ, այլ իրենց կանոնների հիմքում դրեցին ամիս-ամսաթիվային սկզբունքը, միայն սկիզբ ընդունեցին մի դեպքում Գրիգոր Վկայասերի և Հովհաննես Սարկավազի տոնական տարին, այն է՝ Հունվարի 1-ը, որն ըստ էութիւն Հայոց եկեղեցական տարվա (= Հունվարի 6) սկիզբն էր փոքր շեղմամբ, մյուս դեպքում Հայոց տոմարական տարին, այն է՝ նավասարդի 1-ը (= Օգոստոս 11), որի անշարժ սկզբունքները մշակել էր Հովհաննես Սարկավազը: Հովսեփ Կոստանդնուպոլսեցու թարգմանած տոնացույցի ազդեցութիւնը 11-րդ դարում չի երևում Տոնացույց ըստ շաբաթուցի վրա մի կողմից նրա համար, որ տոնվող սրբերի հիշատակի օրերը շարժական էր, մյուս կողմից տոնացույցում տոնվող սրբերի հիշատակի օրեր ավելացնելը լայն թափ ստացավ 11-րդ դարի վերջին և 12-րդ դարի սկզբներին, երբ Գրիգոր Վկայասերն ու Կիրակոս Վարդապետն իրենց կազմած Տոնանամակ-ճաշոցում ներմուծեցին 76 սրբերի հիշատակի օրեր:

Վերջապես անշարժ տոնացույցերը և նրանցում տոնվող սրբերի հիշատակը համեմատաբար գայթակղիչ դարձավ, երբ փորձեր էին կատարվում Հայոց տոնացույցը, որը հիմնականում շարժական էր վերածելու գլխավորապես անշարժի հատկապես 13-րդ դարի և 14-րդ դարի սկզբներին:

Սակայն այդ փորձերը ժամանակավոր բնույթ էին կրում, որովհետև Հայոց տոնացույցը այդպես էլ մնաց հիմնականում շարժական և ինչպես Հովսեփ Կոստանդնուպոլսեցու թարգմանած հունական տոնացույցը, այնպես էլ Յայսմավուրքների հետագա խմբագրութիւնները մնացին հիմնական տոնացույցին օժանդակող բնագրեր:

\*\*\*

Գրիգոր Վկայասերն իր Տոնանամակ-ճաշոցի խմբագրումից բացի կազմել է Յայսմավուրք: Նա իր իսկ գրած հիշատակարանի տվյալներում հայտնում է, որ սրբերի «գվարս քաղաքավարական պատմութեանց, զոր ոչ գոյր առ մեզ Հայ գրով, մեք աշխատութեամբ թարգմանեցանք ի յունականէն ի մեր գիր և բառ»: Գրիգոր Վկայասերը հիշատակարանի շարունակու-

<sup>1</sup> Տե՛ս Յուցակ հայերեն ձեռագրաց ... Բ. Բ, էջ 693, Ն. Ակինյան Աշվ. աշխ.: Աճ, էջ 3 և այլն:

թյան մեջ գրում է. «Վասն որոյ աղաչեմ սրբովք վկայիւքս զամենեսեան առ հասարակ, մի անփոյթ առնել զմեր արէտանջ երկս աշխատութեան, այլ ընդաւրինակեալ զաղափար և գրով պահել յամենայն սուրբ եկեղեցիս...»: Այլ խոսքով նա խնդրում է, որ իր «երկս աշխատութեան», այն է՝ Տօնանամակը և վկայաբանական ժողովածու-Յայսմավուրքը զաղափարել և պահել եկեղեցիներում: Գրիգոր Վկայասերին շարունակել են Գրիգորիսը և Կիրակոս Դրազարկեցին: Վերջինս ոչ միայն Գրիգոր Վկայասերի և Գրիգորիսի ընտրած նոր 46 տոնական օրերին ավելացրել է 30-ը, այլ հարստացրել է նրանց վկայաբանական ժողովածու ևս 30 սրբերի վկայաբանութիւններով և վարքերով, այն է՝ «Մարտիրող[օգ]աւքն», ինչպես վկայել է Կիրակոսն իր հիշատակարանում կամ «ի Մարտ[իր]ողոքս», որն առկա է Գ. Հովսեփյանի բերած հիշատակարան-հիշատակագրութեան մեջ: Այդ տվյալները բերեցինք Տօնանամակի քննութեան կապակցութեամբ: Դեռ ավելին, Գրիգորիսը հետագայում ևս շարունակել է թարգմանել վկայաբանութիւններ և վարքեր: Այդ մասին կիսոսենք փոքր ինչ հետո:

Կասկած չի կարող լինել, որ Գրիգոր Վկայասերը, Գրիգորիսը, ինչպես և Կիրակոսը ոչ միայն թարգմանել են վարքեր և վկայաբանութիւններ, գրել նոր ներբողյաններ մեր սրբերի մասին, այլ դրանց և արդեն եղածի հիման վրա կազմել Յայսմավուրք: Հանրահայտ են հատկապես Գրիգոր Վկայասերի, ինչպես և Գրիգորիսի թարգմանութիւնները ու սեփական ստեղծագործութիւնները, որոնք սփռված են տարբեր ճառընտիրներում և Յայսմավուրքներում: Բերենք մի քանի տեղեկութիւններ: «Վկայութիւն սրբոյն Ստեփանոսի Հռոմայ Հայրապետի եւ որոց ընդ նմա» բնագրի մեջ, որը վերցված է 1185-1187 թթ. ընդօրինակութիւնից գրված է. «Յամի հինգհարիւր(եր)որդ(ի) քառասներորդի իններորդի (=1100/1 թթ.) թուականութեանս Հայոց, թարգմանեցաւ Պատմութիւնս հանդերձ այլ բազում ներբողական վկայական ճառիւք, ի յունականէն ի մերս, ի ձեռն սուրբ քահանայապետին Աստուծոյ Տեառն Գրիգորիսի Հայոց կաթողիկոսի»<sup>1</sup>:

«Պատմութիւն վարուց երանելոյն Եփրեմի Ասորւոց վարդապետի» բնագրի մեջ վկայվել է «որ թարգմանեցաւ յասորւոց ի մերս հրամանաւ Գրիգորիսի վկայասիրի Հայոց կաթողիկոսի, ի հինգհարիւր(եր)որդի [յիս]ներորդի (=1101/2 թթ.) թուականութեան մերում»<sup>2</sup>:

Հերթումի ճաշոցի մէջ, որը Գրիգոր Վկայասերի Տօնանամակի խմբագրութիւններից մեկն է, գրված է «Կանոն Մեծի հինգշաբաթին ոտնալուսային, զոր արարեալ է Տեառն Եփրեմի խորին Ասորոյ, զոր թարգմանեաց Սուրբ Դիտապետն Հայոց մեծաց Գրիգոր Վկայասէր»<sup>3</sup>:

«Վասն պատուիրանաց նախահարցն» բնագրի մեջ կարդում ենք. «Խաւսք Գրիգորիսի Հայոց կաթողիկոսի ի նախ Վահրամ առձայնեալ, և յորժամ կաթողիկոս ձեռնադրեցաւ Գրիգորիոս կոչեցաւ, յանուն նախնոյն իւրոյ սրբոյն Գրիգորի Լուսաւորչին, ասացեալ վասն պատուիրանաց նախահարցն»<sup>4</sup>:

«Եփրեմի խորին Ասորոյ ներբողեան պատմագրաբար ասացեալ ի գլխատումն սուրբ Յովհաննու Մկրտչի (կամ ի սուրբ Յովհաննէս Կարապետ)» բնագրի մեջ ասվում է, որ այդ ճառը թարգմանել է Գրիգոր Վկայասերը<sup>5</sup>:

«Վկայութիւն սրբոյն Լաւրենտիոսի» բնագրի մեջ գրված է «Տէր Յիսուս Քրիստոս ողորմեա թարգմանողի ճառիս՝ Տեառն Գրիգորի (Վկայասէր) կաթողիկոսի ամենայն Հայոց և ծնողաց,

և զարմից նորա, և ամենայն հաւատացելոց»<sup>1</sup>:

«Սքանչելիք որ եղեն ի ձեռն սրբոյն և Մեծի վկային Քրիստոսի Գէորգայ» բնագրի մեջ կարդում ենք. «Իրագործեցաւ գործ սքանչելեացս ի ժամանակս Փոկասու Տիւրանոսի կայսերն Յունաց, և թարգմանեցաւ ի հռոմոց ի հայս սուրբ քահայանապետն Հայոց մեծաց Գրիգորիս Վկայասէրն, զոր և պսակակից արասցէ սրբոյն վկային աղաւթիսք ամենայն սրբոց»<sup>2</sup>:

«Վարս ճգնութեան... Յոհաննու Ոսկեբերանի Կոստանդնուպօլսի եպիսկոպոսի» բնագրում առկա է հետևյալ տեղեկութիւնը. «Յաղագս յիշատակարանի գրոցս և թարգմանութեան սորին: Յամի հազարերորդի հարիւրերորդի երկրորդի (=1102 թ.) Աստուծոյ մերոյ և Տեառն Յիսուսի Քրիստոսի գալստեանն և ի հինգ հարիւրերորդի յիսներորդի (= 550) մերում թուականութեանս և յաւթն և ի տասներորդի թագաւորութեան Կոմիտասի Ալեքսի բռնակալի, ես [Գրիգոր՝ որդի Գրիգոր Մագիստրոսի ի հայկազունւոյ ըստ աշխարհի Պարթեւ, ըստ ժառանգութեան Պահլաւիկ, ըստ ցեղընտիր լինելոյ յազգէ Արշակունի, որ և ողորմութեամբն Աստուծոյ կոչեցա ի դիտապետութիւն Ասքանազեանս և Բնիկ աթոռ Հայրապետութեան նախնեաց իմոց, եւ բազում նեղութիւն կրեալ մեր յայլասեռ ազգաց հեթանոսաց և ի յերկաբանակաց: Եւ ապա ի յառաջասացեալ ամդ հասաք ի սուրբ լեռնն, զոր Սեան կոչեն ի մեր սեփական պարգեւական եկեղեցիքն յուխտն սուրբ, զոր ըստ ասորի բարբառոյ Պառլահոյ կոչի, որ թարգմանի «Դրախտ աստուծոյ». եւ անդ յերեսուն և ի վեց ամի մերոյ աթոռակալութեանս՝ թարգմանեցի զվարս ճգնութեան մեծ և սքանչելի առն Աստուծոյ Յովհաննու Ոսկեբերանի Կոստանդնուպօլսի հայրապետի, ի ձեռն առն միոյ, որում անուն էր Թէոփիստէ, ազգաւ յոյն: Եւ ապա ետու վերստին արծարծել զսա ի տարաբան և յաւտարածայն բայից և բառից առաջին թարգմանութեանն, ըստ քերդողացն իմաստից՝ միաշար տողելով ի ձեռն Մա[տ]թեոսի քահանայի, որ սնեալ և վարժեալ էր ընդ մերով ձեռամբ»<sup>3</sup>:

«Պատմութիւն վարուց սուրբ հաւրն մերոյ Գրիգորիսի Աստուածաբանի Նազիազու եպիսկոպոսի, զոր թարգմանեաց ի յունական[էն] սրբազան կաթողիկոսն Հայոց մեծաց Գրիգորիս Վկայասէրն» բնագրի մեջ գրված է. «Թարգմանեցաւ Պատմութիւն սրբոյ և փառաւորեալ հայրապետին Գրիգորի Աստուածաբանի ի հինգ հարիւր(եր)որդի յիսներորդի (= 1101/2 թթ.) թուականութեան մերում, հրամանաւ նախասացեալ սուրբ Վկայասէր կաթողիկոսին Գրիգորիս, ի յիշատակ իւր և ծնողաց իւրոց և ազգի իւրոյ, զոր և մասնակից արասցէ Քրիստոս Աստուած և բազմերջանիկն Գրիգորի Աստուածաբանի»<sup>4</sup>:

«Ներբողեան սուրբ Գրիգորի Լուսաւորչի» բնագրի մեջ կարդում ենք «Թարգմանեցաւ լուսազարդ և վայելչագարդ ճառս այս ի մերս, հրամանաւ երիցս երանեալ հայրապետին Տեառն Գրիգորիսի Հայոց մեծաց կաթողիկոսի ի ձեռն իմաստուն և հանճարեղ թարգմանչին Թէոփիստէի»<sup>5</sup>:

«Վկայաբանութիւն սրբոյն Եւղամբեոսի եւ Ղամբեուհեա ճգնագեաց վկայիցն Քրիստոսի» բնագրի ընդօրինակութեան մեջ գրված է. «Յամի հինգհարիւր(եր)որդի յիսներորդի երկրորդի (=1103/4 թթ) թուականիս Հայոց թարգմանեցաւ վկայաբանութիւն սրբոցս այսոցիկ ի յունականէն ի մերս, ի ձեռն Գրիգորիսի Վկայասիրի սրբազան կաթողիկոսի Հայոց Մեծաց...»<sup>6</sup>:

1 Տե՛ս Բ. Սարգսյան, Յուցակ... Բ. Բ, էջ 494-498, Ա. Մաթևոսյան, Ազգ. աշխ., էջ 132:  
2 Տե՛ս Ե. Պողարյան, Յուցակ... Բ. Ա, էջ 39, Ա. Մաթևոսյան, Ազգ. աշխ., էջ 135:  
3 Տե՛ս Գ. Հովսեփյան, Հիշատակարանք, էջ 285-286, Ա. Մաթևոսյան, Ազգ. աշխ., էջ 135-136:  
4 Տե՛ս Գ. Հովսեփյան, Հիշատակարանք, էջ 283-284, Ե. Պողարյան, Յուցակ... Բ. Գ, էջ 237, Ա. Մաթևոսյան, Ազգ. աշխ., էջ 137:  
5 Տե՛ս Ե. Պողարյան, Յուցակ... Բ. Ա, էջ 281, Ա. Մաթևոսյան, Ազգ. աշխ., էջ 135:  
6 Տե՛ս Ջեռ. Ն° 1522, էջ 226ա, Ա. Մաթևոսյան, Ազգ. աշխ., էջ 138:

1 Տե՛ս ձեռ. Ն° 1522, էջ 208բ, Ա. Մաթևոսյան, Հայերեմ ձեռագրերի հիշատակարանի Ե-ԺԲ դղ., էջ 121:  
2 Տե՛ս Ե. Պողարյան, Յուցակ..., Բ. Գ., էջ 238, Ա. Մաթևոսյան, Ազգ. աշխ., էջ 134:  
3 Տե՛ս ձեռ. Ն° 979, էջ 162ա, Ա. Մաթևոսյան, Ազգ. աշխ., էջ 134:  
4 Տե՛ս Ե. Պողարյան, Յուցակ... Բ. Դ, էջ 533-534, Ա. Մաթևոսյան, Ազգ. աշխ., էջ 135:  
5 Տե՛ս Ե. Պողարյան, Յուցակ... Բ. Ա, էջ 12, Բ. Գ, էջ 449, Ա. Մաթևոսյան, Ազգ. աշխ., էջ 13:

«Պատմութիւն սրբուհոյն Պարասկեւեայ, որ կոչի ուրբաթ» բնագրի մեջ կարդում ենք. թարգմանեցաւ ճառս աստուածախօս պատմութիւն սրբոյ կուսին Ուրբաթ ի լատին լեզուէ, որ է Քուսնգ, ի հայ լեզուս, ի ձեռն սրբազան և աստուածաճանոյ Վկայասիրի Գրիգոր կաթողիկոսի...»<sup>1</sup>:

«Վկայաբանութիւն նահատակութեան սրբուհոյն Վառվառայ կուսին և երանելոյն Յուլիանեայ» բնագրի ընդօրինակութեան մեջ գրված է. «Զթարգմանող և գլաւրինող զպատմութեան սրբոց վկայիցս՝ զՏեր Գրիգորիս Հայոց կաթողիկոս...»<sup>2</sup>:

«Պատմութիւն սուրբ Մամասու ծնընդեան և սնընդեան և վկայութիւն նորին» բնագրի ընդօրինակութեան մեջ կարդում ենք. «... Յաւրինեցաւ ճառ պատմութեան սրբոյ վկայիս Մամասա, մասնաւոր ինչ ըստ հնոց աւրինակաց և բովանդակն ըստ նոր թարգմանութեան սրբազան կաթողիկոսի Հայոց մեծաց՝ Տեառն Գրիգորիսի Վկայասիրի...»<sup>3</sup>:

«Վարք եւ Պատմութիւն սուրբ Հօրն Օնօփրիոսի անապատականի, զոր պատմեաց սուրբ Հայրն Պափնոսի» բնագրի ընդօրինակութեան մեջ կարդում ենք. «Զնորոգող և թարգմանիչ սրբոյ պատմութեանս զտէր Գրիգոր Հայոց կաթողիկոս, յիշեսջիք ի Քրիստոս: Եւ թարգմանեցաւ ի թուականութեանս Հայոց ՇԾԹ (= 1110/1 թթ.) ամի, (յ)աշխարհիս եգիպտացոց...»<sup>4</sup>:

Այստեղ խոսքը գնում է Գրիգոր Վկայասիրի գործընկերոջ մասին, որը նրա քեռորդին էր: Բերենք նաև ուշ ժամանակ ապրած հեղինակներից վկայութիւնները:

Գրիգոր Խլաթեցու խմբագրած Յայսմավուրքի ընդօրինակութիւններից մեկում «Արաց ԻԸ եւ Փետրուար Դ» կանոնի տակ «Յայսմաւուր յիշատակ սրբոց հայրապետացն Հայոց Գրիգորիսի Վկայասիրի և Գրիգորի և Ներսէսի երգեցողի» ենթավերնագրից, որն ամենայն հավանականութեամբ Գրիգոր Խլաթեցու ստեղծածն է, տեղեկանում ենք, որ Գրիգոր Վկայասիրը «նորոգեաց զամենայն կարգս եղծեալս և խանկարէալս, և զի էր սիրող վկայից Քրիստոսի, մեծարէր և առնէր զյիշատակս նոցա անխափան և կարգէր տաւնից նոցա... կամեցաւ գնալ ի Կոստան(տ)ինոպալիս. զի թարգմանեցէ զպատմութիւն սրբոցն և զճառս ներբողականս, որ ոչ գտանիւր առ մեզ հայ լեզուով, և գրով... երբև կատարեայ զգործն յոր երթալն էր»<sup>5</sup>:

Թովմա Մեծոփեցին, որ գրել է Գրիգոր Խլաթեցու կենսագրութիւնը, համեմատում է նրան Գրիգոր Վկայասիրի հետ, իբրև «երկրորդ Վկայասէր անուանեցաւ ի վերջին ժամանակիս»: Նա շարունակում է, որ Գրիգոր Խլաթեցին Գրիգոր Վկայասիրի նման «արար զգիրս Յայսմաւուրաց»<sup>6</sup>:

Առկա է նաև Վարդան Բաղիշեցու տեղեկութիւնը համաձայն որի «Յասմաւուրք եւ այլ ճառք սրբոց թարգմանեալ եղև ի Յունաց եւ, Ասորոց, ձեռամբ սրբոյն Գրիգորի Վկայասիրի...»:

Վերոհիշյալ սկզբնաղբյուրները թեև ուշ շրջանի են, սակայն կասկած չկա, որ Գրիգոր Խլաթեցին, Թովմա Մեծոփեցին և Վարդան Բաղիշեցին իրենց ձեռքի տակ ունեցել են տեղեկութիւններ, որտեղ գրված են եղել, որ Գրիգոր Վկայասիրը կազմել է Յայսմավուրք ժողովածու: Թերևս վերջիններս նկատի են ունեցել Գրիգորի և Կիրակոսի հիշատակարանները ինչպես և վարքերի ու վկայաբանութիւնների հիշատակարանների գրանցումները՝ նրանց թարգմանութիւնների մասին, որոնք բերեցին վերևում:

Այս տեղեկութիւնները կասկած չեն թողնում, որ Գրիգոր Վկայասիրն իր գործընկերների հետ ոչ միայն թարգմանել ու գրել են վարքեր ու վկայութիւններ, ներբողյաններ, այլ եղածի և ստեղծածի հիման վրա կազմել են Յայսմավուրք ժողովածու, որը հետագայում հարստացրել են ոչ միայն Գրիգոր Վկայասիրի գործընկերները, այլև ուրիշները:

Մեր կարծիքով Գրիգոր Վկայասիրի և նրա համախոհների կազմած և հետագայում ավելացրած Յայսմավուրքը իր կառուցվածքով պետք է կրկնէր Տօնանամակը, նման լինէր Յովսեփ Կոստանդնուպոլսեցու թարգմանած տոնացուցին, միայն այն տարբերութեամբ, որ տոնական տարին պետք է սկսած լինէին Հունվարի 1-ից, ինչպես Տօնանամակում է և ընդգրկված նոր վկայաբանութիւններ ու վարքեր, ներբողյաններ: Ըստ երևույթին նրանց հետևել է Տէր-Իսրայելը, երբ կազմեց Յայսմավուրք ժողովածուի նոր խմբագրութիւն և իր տոնական տարին սկսեց հայոց անշարժ տոմարի Քաղոց 24-ից (=Հունվար 1), այսինքն հետևեց Գրիգոր Վկայասիրին և Կիրակոսին ավելացնելով հայոց անշարժ տոմարի ամսաթիվերը և նոր վկայաբանութիւններ ու վարքեր: Նրանց Յայսմավուրք ժողովածուն, թերևս գտնվի Տեր-Իսրայելի խմբագրածի տարբերակների մեջ կամ էլ գտնվի մի ժողովածու, որն սկսել է Հունվարի 1-ից: Ասենք նաև, որ Հայոց Յայսմավուրքներն այնքան են խմբագրվել, որ հնարավոր չէ միանշանակ պնդել ցանկացած Յայսմավուրք ժողովածուի նախանշանակ տարբերակի վրա: Ի դեպ մենք համաձայն ենք Մ. Ավգերյանի հետ, որ Գրիգոր Վկայասիրը կազմել է ճառընտիր, բայց Յայսմավուրք ժողովածուի իմաստով:

Այսպիսով պարզվում է, որ Գրիգոր Վկայասիրը և նրա գործակիցները կազմել են Յայսմավուրքի նոր խմբագրութիւնը, որը մինչև Տեր-Իսրայելի վերստին խմբագրութիւնը հարստացել է Գրիգոր Փոքր Վկայասիրի, Ներսես Շնորհալու, Ներսես Լամբրոնացու կատարած ինչպես թարգմանութիւններով, այնպես էլ սրբերի մասին գրված բնագրերով<sup>1</sup>:

Բերենք ամփոփիչ տեղեկութիւններ 2695 և 7443 թվահամարների Յայսմավուրքների խմբագրութիւններից:

2695 թվահամարի Յայսմավուրքի «Աւելեացն Գ եւ Աւգոստոս Ը» կանոնի տակ «Յայսմաւուր յիշատակ Սուրբ հայրապետացն Գրիգորի և Ներսէսի» վերնագրի տակ գրված է. «Երջանիկ և Սուրբ հայրապետքս Գրիգոր և Ներսէս եղբարք էին հարազատք. յազգէ սրբոյն Գրիգորի և ազգականք տէր Վահրամայ, որ Գրիգորէսն կոչեցաւ, զոր կոչէին վկայասիր. վասն պատուելոյ զվկայս և թարգմանելոյ բազում ճառս ի հայ լեզու և գիր, և տէր Բարսղի: Սոքա պայծառացուցին զեկեղեցիս Հայաստանեաց կարգաւորութեամբ և տաւնիւք և սպասիւք և գիրս թարգմանելով, որ ոչ գտանիւր առ մեզ: Եւ ի փոխեցին զթոռն հայրապետական ի Մովքն և անտի ի Հռոմկլայն՝ գնեալ զնա ի Փռանկ իշխանէ միողէ: Եւ ամրացուցին պարբսպաւք ամրագունիւք, զոր և շրջապատեն Բ գետք՝ Եփրատ և Փարսման: Եւ շինեալ ի նմա եկեղեցի վայելուչ: Եւ կալեալ զհայրապետութիւն սուրբ Գրիգոր ամս ՄԳ (53), վախճանի բարիոք: Եւ յաջորդէ զաթոռն Տէր Ներսէս ամս է: Եւ առաւել պայծառացոյց զկարգ եկեղեցոյ. զի այր իմաստուն և գիտնական էր: Եւ եհաս համբաւ իմաստութեան նորա յամենայն ազգս, և Մանիլ կայսրն Յունաց, և փեսայ նորին Ալեքսն: Խնդրեցին ի նմանէ դաւանութիւն հաւատոյ և գրեաց գեղեցիկ յաւրինուածով լի ուղղափառութեամբ: Եւ յոյժ գովեցաւ ի նոցունց: Եւ իմաստասեր Յունաց լուեալ զհամբաւ նորա առաքեցին զոմն իմաստուն թերիանէ անուն երթեալ տեսանել, թէ է որպէս համբաւն է զնմանէ: Եւ նորա եկեալ եկաց առ նմա աւուրս բազումս, և յոյժ իմաստուն եգիտ զնա յամենայն: Եւ իբրև գնաց ի Կոստանդինուպալիս ի հարցանել զնա իմաստասիրացն ասեր.

1 Տե՛ս Ձեռ. № 7357, էջ 534բ, Ա. Մաթևոսյան, Գշվ. աշխ., էջ 138:  
2 Տե՛ս Ձեռ. № 2825, էջ 470բ, Ա. Մաթևոսյան, Գշվ. աշխ., էջ 138:  
3 Տե՛ս Ն. Պողարյան, Ցուցակ... հ. Ա., էջ 27:  
4 Տե՛ս Ձեռ. № 3208, էջ 470բ, Ա. Մաթևոսյան, Գշվ. աշխ., էջ 141:  
5 Տե՛ս Ձեռ. № 7433, էջ 221ա-222ա:  
6 Տե՛ս Ձեռ. № 7468, էջ 174ա:

1 Տե՛ս Ձեռ. № 2680, էջ 120բ, 4477, էջ 64բ, 1522, էջ 246բ, 1912, էջ 45բ, 3276, էջ 73բ, 1418, էջ 125ա և 6, Փարիզի 178 թվահամարի ձեռ. (միկրոֆիլմ 879) ԽԲ համարի տակ, Ն. Պողարյան, Ցուցակ ... հ. Ա., էջ 251, 256 և 6, Բ, էջ 169 և 6, Ա. Մաթևոսյան, Գշվ. աշխ., էջ 156, 160-161, 178-179, 188, 228-229, 230 և այլն:

նոր ոմն Գրիգոր Աստուածաբան յարուցեալ է: Եւ զաւր հանգըստեան նորա տաւն կարգեցին ընդ այլ հայրապետաց և վարդապետաց եկեղեցոյ: Սայ արար շարական բազումս քաղցր եղանակաւ, և տաղս, և գանձս ըստ գրոյ անուան իւրոյ: Արար և համառաւտ Մատթէոսի աւետարանին լուսաւոր ճառիւք և այլ թարգմանութիւն և քերթողութիւնս: Եւ բարիոք կենցաղավարեալ հանգեաւ խաղաղական մահուամբ ի Քրիստոս յԱւելեաց Գ և աւգոստոս Ը, որ պսակեալ զսուրբ քո Քրիստոս Աստուած և փառաւորես զսիրելիս քո ողորմութեամբդ և քեզ փառք յաւիտեանս ամեն»<sup>1</sup>:

7433 թվահամարի Յայսմավուրքի մեջ կարդում ենք, որ Գրիգոր վկայասերից հետո «զթարգմանեալ զգիրսն ի քերթողի իւր ի հոմանուն Գրիգորիս» կամ «եւ տէր Գրիգորիս առեալ զթարգմանեալ զգիրսն Եկեղեցեսոն ի Կարմիր վանք և անտի կացեալ յոլով ժամանակս...» կամ «եւ սա ևս ետ թարգմանել գիրս բազումս...»<sup>2</sup>:

Իսկ ներսես Շնորհալու մասին գրում է. «... արար շարական և երգս հոգևորս գեղեցիկ, և քաղցր եղանակաւ, տաղս մեղեդիս ըստ գրոյ անուան իւրոյ Գանձս և հովիղ անուամբ ոտանաւորս գեղեցկայարմարս գհին և զնոր կտակարանս ի միասին հաւաքեալ. երկհազարեան տամբ հնչական. խոստովանութիւնս հաւատս էձ տունս ճշմարիտ խոստովանութիւն ուղղափառութեամբ և աստուածաբանութեամբ ըստ Հայաստան եկեղեցեացս կարգի առ թագաւորն յունաց Մանիլ և սա փեւաս նորին Ալէքս ի վերա այբենիցս Հայոց զանազան ոճաւ և անդրադարձութեամբ բնախաւսութեամբ, եւ մեկնութեամբ Աւետարանիւ Մատթէոսի և ճառս ներբողականս հրեշտակապետացն և թուղթ բազումս ազգի ազգի յաւրինուծովք»<sup>3</sup>:

Հրոտից Ը և Յուլիս ԺԴ կանոնի տակ «ի սմին աւուր տաւն է սրբոյ ներսէսի Տարսոնու եպիսկոպոսին» ենթավերնագրի մեջ գրում է. «... թարգմանեաց սա ի յունական լեզուէ ի հայ լեզու զգիրս պատմութեան Գրիգորի հոռոմ պապու, որ վասն սուրբ հարցն է... և կանոնական գիրս սուրբ հաւրն Բենեդիկտի... և մեկնութիւն տեղեանն Յոհաննու աւետարանչի: Արար և ինքի մեկնութիւն Սաղմոսացն Դաւթի...: Մեկնեաց և զքարոզս եկեղեցոյ և զպատարագմատոյցն... և ճառս ներբողականս ի տաւնս Տիրամաւրն և Աստուածածնին Մարիամու և ի Սուրբ Խաչն ոտանաւոր չափով, մեկնեաց և զաղաւթս Յոհաննու աւետարանչի... կարգաւորեաց և յամենայն աւուր առնել զտաւնս ուրում և պատահի ըստ աւանդութեան հարցն Սրբոց, որ ի ծուլութենէ և յայնգիտութենէ անոյթ լեալ էր. վասն որո բանբաս լիներ ի տգիտաց...»<sup>4</sup>:

\*\*\*

Յայսմավուրքի հաջորդ խմբագրութիւնը կատարեց Տեր-Իսրայելը հետեւելով Գրիգոր Վկայասերին, Կիրակոսին ինչպես և Հովհաննես Սարկավագին:

Մեզ է հասել Տեր-Իսրայելի Յայսմավուրքի հավանաբար նախնական խմբագրութեան մոտ ընդօրինակութիւն, Վենետիկի 631 թվահամարի գրչագրով, որի հիշատակարանը հրատարակել են համարյա բոլոր ուսումնասիրողները, որոնք առնչվել են Յայսմավուրք ժողովածունների հետ: Մենք ևս բերենք այդ հիշատակարանի տեղեկութիւնները: Այնտեղ գրված է. «...վասն երանաւէտ կենացն, որ կա(յ) պատմութիւն սոցա ի լիակատար ճառս սոցա, զոր յետոյ կարգեալ եղեւ բովանդակ տաւնք սոցա՝ աշխատութեամբ Տէր Իսրայելի, ի խնդրոյ Զալա(լ) - Դաւլային՝ տեառն Խաչենոյ, հրամանաւ Վանական վարդապետի եւ հարազատին Գրիգորոյ Տեր Իսրայելի: Զի նոքա հրամայեցին նմա, հայելով ի համբերութիւն եւ ի հնարիմաց գիտութիւն նորա, զի

ջանս եղեալ գտցէ զաւր նահատակութեան սրբոցն, որ գրեալ կա(յ) ի լիակատար պատմութիւն նոցա, համառաւտելով նմա զսքանչելի կատարումն սոցա, եղ ընդ այլ կարգի եւ զԱյսմաւուրս, զոր միաշունչ եղեալ անսխալ զտարին կատարեն...»

Տաւնք ըստ Հայոց եւ ըստ Հոռոմոց ամսոց, յիշատակ եւ վարք եւ վկայութիւնք ամենայն սրբոց, զոր կատարէ եկեղեցի ի փառս Քրիստոսի: Բայց գիտել պարտ է, թէ այն որ ասէ յիշատակ՝ միայն յիշատակ է սրբոց, զոր պատմութիւնն յիշէ վասն պիտոյից, իսկ այն որ ասէ վարք՝ զայն յայտ առնէ թէ առաքինութեամբ եւ հաճոյական վարուք ճգնեալ սուրբքն հանգեան ի Քրիստոս, իսկ որ ասէ վկայաբանութիւն՝ յայտ է թէ արեամբ նահատակեալ սուրբքն վկայութեամբ կատարեցան ի Քրիստոս...»

Արդ եղեւ կատարումն սուրբ գրոցս ի թվ ՊԶԶ (= 1426/7 թթ.), ի յանապատս Տրապիզոնու, ընդ հովանեաւ սուրբ Փրկչիս եւ Սուրբ Յովաննիսի, ձեռամբ անարժան եւ մեղաւք մեռեալ ոգոյ Ղազարի Ղրիմեցոյ...»<sup>1</sup>:

Վերը բերվածից պարզ է դառնում, որ ընդօրինակողն օգտվելով նախնական հիշատակարանից շարադրել է նրա բովանդակութիւնը, որը երևում է նաև մեկ այլ հիշատակարանի տեղեկութիւններից, որը կներկայացնենք քիչ հետո:

Այստեղ միայն նշենք, որ հիշատակարանի «Բայց գիտել պարտէ»-ից մինչև «կատարեցան ի Քրիստոս» հատվածը վերցվել է Հովսեփ Կոստանդնուպոլսեցու Տոնացուցից՝ բացատրելու համար վարքերի և վկայաբանութիւնների տարբերութիւնը:

Նկատենք, որ Յայսմավուրքի ընդօրինակութիւնն ամբողջական է, սկսվել է Քաղոց 24 և Հունվար 1-ի կանոնով և ավարտել Քաղոց 23 և Դեկտեմբեր 31-ի կանոնով, ակնհայտորեն սկիզբ ունենալով Հուլյան տոմարական տարին, այսինքն Գրիգոր Վկայասերի Տոնանամակի և Յայսմավուրքի կառուցվածքը:

Երևանի Մատենադարանի 1511 թվահամարի Յայսմավուրքի, որը Գրիգոր Խալաթեցու խմբագրութեան ընդօրինակութիւն է կատարված 1470/1 թթ., հիշատակարանում գրված է «... Արդ այս տաւնացոյց կարգեալ բովանդակ տարոյ աշխատութեամբ Տէր Իսրայելի Խաչենեցոյ եպիսկոպոսի, հրամանաւ Վանական վարդապետի, ի խնդրոյ Զալալ Դօլին՝ տեառն Խաչենոյ և Տէր Գրիգորի եպիսկոպոսի, որք աղաչեցին զՏէր Իսրայել եպիսկոպոսն, հայեցեալ ի կորովութիւն բարուցն եւ նա յանձին կալաւ և ջանս եղ գտանել զաւր նահատակութեան սրբոցն, որ գրեալ կայ ի լիակատար պատմութիւն, համառոտելով նմա զսքանչելի կատարումն սրբոցն, և ընդ այլ կարգեալ Յայսմաւուրսն, զոր կարգ ամսոցն հայիւ և հոռոմիւ միաշունչ եղեալ ա(նսխալ) զտարին կատարեն: Բայց ոմանք յանգեալս եղեալ (հակառակէն այսպիսի գեղեցիկ ընթերցութեամբ, որ աւր ըստ աւրէ զլսելից մեր զարհուրեցուցանէ և դողումն ցաւագին տայ անձայն մերոց: Եւ արդ եթէ այսպիսեացն է արքայութիւն երկնից: Ապա մեզ զինչ լինի ծուլից սև հեղգացելոցս, այլ միայն յայս ապաւինեալ յառաջ ընթանալ յաւժար սրտիւ, և առնել զյիշատակ սրբոցն, և բարեխօս ունել առ Աստուած, զի հաշտեցի ընդ մեզ և բարձցէ յաշխարհէ զպատուհաս մեղաց մերոց, և արժանացէ սրբոցն փառաց՝ հասանել ի Քրիստոս Յիսուս, ի տէր մեր, որում փառք յաւիտեանս ամէն...»<sup>2</sup>:

Հնարավոր ենք համարում, որ հիշյալ հիշատակարանը լինի Գրիգոր Խալաթեցունը, որից վերցրել է գրիչը վերջում դնելով միայն ընդօրինակութեան հետ կապված իրողութիւնները: Եր-

1 Տե՛ս Ձեռ. № 2695, էջ 213ա-բ:  
2 Տե՛ս Ձեռ. № 7433, էջ 221ա-222ա:  
3 Տե՛ս Ձեռ. № 7433, էջ 221ա-222ա:  
4 Տե՛ս Ձեռ. № 7433, էջ 388ա-389ա:

1 Ս. Մեմենյան, Նշվ. աշխ., հ. Ե, էջ 73-74, Մ. Ավգերյան, Լրումն լիակատար վարոց և վկայաբանութեան սրբոց, Վենետիկ, 1814, էջ 27, տե՛ս նաև Paul Peeters. S. 1, Pouz L' Histoire Du Synaxaire Armenien, Extrait des Analecta Bollandiana, tome XXX, Bruxelles, 1911, p. 18, Գ. Սարգսեան, Աշխ. աշխ., Բազմավեպ, 1949, № 3-4, էջ 61, Մ. Ավդալբեգյան «Յայսմաւուրք» ժողովածուները և Արանց պատմական արժեքը և այլն:  
2 Տե՛ս Ձեռ. № 1511, էջ 607բ:

կու հիշատակարանների համարադրումը ցույց է տալիս, որ նրանք օգտվել են ավելի վաղ գրված ընդօրինակությունից:

Երկրորդ հիշատակարանի հեղինակ-գրիչը նույնացրել է Քաղոց 24 և Հունվար 1-ով և Նավասարդ 1-ով և Օգոստոս 11-ով սկսվող Յայսմավուրքները միմեանց հետ, որոնցով տարբերակվում են առկա խմբագրությունները: Նա ըստ էության ճիշտ չի վարվել, որովհետև այդ խմբագրությունները ունենին տարբեր սկիզբ, նյութերի տարբերակումներ ու որոշ կանոնների ոչ համարժեքություն: Սակայն հիշյալ զանազանությունները ըստ երևույթին ուշադրության չի արժանացել հատկապես հայոց անշարժ տոմարի ամսաթվերով կազմված Յայսմավուրքների շրջանակներում, որովհետև 14-րդ դարում ընդօրինակված և խմբագրված 2695 թվահամարի Յայսմավուրքը, որը տոնական տարին սկսել է Քաղոց 24 = Հունվարի 1-ով, այսինքն Տեր-Իսրայելի սկզբունքով իր մեջ ներ է առել Կիրակոս Գետիկցու Յայսմավուրքի խմբագրության շատ կանոններ և նյութեր: Վենետիկի 631 և Երևանի 2695 թվահամարների Յայսմավուրքների համեմատությունը ցույց է տալիս, որ Տեր-Իսրայելի խմբագրության վրա ավելացվել է Կիրակոս Գանձակեցու խմբագրությունից ավելի քան 60 վկայաբանություններ և վարքեր: Դեռ ավելին, վերջինս խմբագրելով ներ են մուծել ավելին քան 10 նոր նյութեր: Այնպես որ Յայսմավուրքների հիշյալ խմբագրությունները տարբերակելով հաղերձ անհրաժեշտ է հատուկ ուսումնասիրության ենթարկել յուրաքանչյուր ընդօրինակություն, որպեսզի պարզվի ոչ միայն նախնական բնագրի, այլ հետագայում նրանց հետ կատարված խմբագրությունները, որն ապագայի խնդիր է: Մի բան պարզ է, որ Տեր-Իսրայելի Յայսմավուրքի նոր խմբագրությունը տարվա սկիզբ ընտրելիս և նյութերը տալիս հիմնականում հիմնվել է Գրիգոր Վկայասերի կազմած Յայսմավուրքի վրա ավելացնելով ոչ միայն հայոց անշարժ տոմարի ամսաթվերը, այլ նաև նոր նյութեր՝ քաղված այլ ժողովածուներից: Հարկ է նշել, որ թերևս վաղ շրջանից է գալիս և հետագայում շարունակվում է վկայաբանական ժողովածուների-ճառընտիրների կազմումը, որոնք հավանաբար անվանվել են «Մարտիրոզք գրոց» հունարեն հնչմամբ և որևէ սկզբունքի վրա հիմնված չէին և պարունակում էին վարքերի և վկայաբանությունների որոշակի քանակ կապված հանգամանքների հետ: Այսպես Փարիզի 178 թվահամարի վկայաբանական ժողովածուն, որը թվագրում է 12-րդ դարով կազմված է 168 վարքերից և վկայաբանություններից: Այն համակարգված չէ որևէ ձևով, որովհետև սկզբից ունի Ստեփանոս Նախավկայի, Աթանաս Ալեքսանդրացու, Յակոբ Մծբնայա, Մարութայի, Փոկսաի, Կիպրիանոսի և այլոց մասին գրված վարքերն ու վկայաբանությունները, ներբողյաններ, պատմություններ և այլն, որոնց հիշատակի օրերը գտնվում են տոնացույցի տարբեր տեղերում անկախ նրանից այն եղել է շարժական, թե անշարժ սկզբունքով: Մի ստվար խումբ են կազմում վկայաբանությունների խմբերը, որոնք զետեղվել են ժողովածուների մեջ, այսինքն այդ ճառընտիրները մասնագիտացված թեքում չունեն:

\*\*\*

Յայսմավուրքի հաջորդ խմբագրությունը կապվում է Կիրակոս Գանձակեցու, Արևելցու, Գետիկցու կամ պարզապես Կիրակոս վարդապետի անվան հետ: Առկա բնագրերի ընդօրինակությունները ցույց են տալիս, որ Կիրակոս Գանձակեցին Յայսմավուրքը խմբագրել է երկու անգամ երկար տարիներ աշխատելով նրա հարստացման վրա, մի դեպքում նախորդ Յայսմավուրքի վրա ավելացրել է 112 ճառ, իսկ հետագայում հասցրել է 170-ի: Բերենք նրա խմբագրությունների ընդօրինակությունների մեջ պահպանված տեղեկությունները:

7433 թվահամարի գրչագրի մեջ, որը ընդօրինակվել է 1466/7 թթ., Աւելեաց 5 և Օգոստոս 10 կանոնի «Յիշատակ է Կիրակոս վարդապետին» վերնագրի տակ գտնում ենք հետևյալ տեղեկությունը.

«Յուսով որ առ Աստուած և վասն սիրոյ վկայիցս Քրիստոսի, և քարոզողաց բանին կենաց առաջնորդացն և լուսաւորչաց եկեղեցոյ և խաչակրաւն միանձնաց ճգնաւորաց Քրիստոսի համարձակեալ ես նուաստ ծառա Քրիստոսի Կիրակոս վարդապետ, ի թուականիս Հայոց ՋԲ (= 1253/4 թթ.), աշխատասիրեալ յաւելի ի նախակարգեալ տաւնս ճառս համառաւտ ձժԲ (112), ի ձեռն Ստեփաննոսի և Վահրամա վարդապետացն, հաւաքեալ յԱստուածաշ[ունչ] գրոց, ի պայծառութիւն կաթողիկէ եկեղեցու, և մեզ տաւնողացս ի բարեխոսութիւն: Եւ աղաչեմ զամենեւսան սիրովն Քրիստոսի ոչ բառնալ զայս յիշատակ բանի, այլ գրեալ յամենայն գիրս, որ գրին ի ոմանք, զի և ձերն գրեսցի յիշատակ ի դպրութիւն կենաց, և որք բառնան՝ բարցի նոցայն ի դպրութենէն կենաց: Աւրենեալ է ամէնասուրբ երրորդութիւն հայր և որդի և հոգին սուրբ յաւիտեանս ամէն»<sup>1</sup>:

Վենետիկի 189 թվահամարի գրչագրում, որն ընդօրինակվել է 1434/5 թթ., գրված է. «Յուսովն Աստուծոյ եւ սիրով սրբոց նորա, նուաստ ոգի Կիրակոս վարդապետ Արևելցի, ի միասին հաւաքեցի գտաւնս սրբոցս Աստուծոյ, ըստ իւրաքանչիւր յիշատակի աւուրց: Գրեցի եւ պատմութիւնս նոցա, որոց ոչ էր եղեալ ի գիրս Յայսմաւուրացն եւ խառնեցի ընդ նախակարգսրն, եւ աղաչեմ գտաւնողսդ եւ զգրողսդ՝ գրել եւ զայս յիշատակ բանի. զի եւ դուք գրեսցիք ի գիրն կենաց. եւ որ բառնայ զմերս՝ ջնջեսցի եւ ինքն ի դպրութենէն կենաց: Եւ եղեւ իրակութիւնս այս ի թվիս ՋԺԸ (= 1269/70 թթ.) յաշխարհիս Կիլիկեցոց, ի Սիս մայրաքաղաքի, ի թագաւորութեան որդւոյն նորին Լեւոնի, ԿԶ (66) ամի կենաց պանդխտութեան մերոյ, յորում աւարտ եղեւ ի փառս Աստուծոյ, յաւիտեանս ամէն: Եւ ճառք, որ յաւելաք մեք ընդ հինն խառնեալ հարիւր եւ եօթանասուն. անուամբն և շնորհօքն Աստուծոյ ամէն»<sup>2</sup>:

Մ. Ավգերյանը, Ղ. Ալիշանը և Պ. Պետերսը բերել են մի վկայություն, որտեղ «գիրակոս վարդապետ Արևելցի, ի վանաց Գետիկցի, գյարմարիչ և զլուսաւորիչ այսմ կրտակիս և ստացող սորա...»<sup>3</sup>: Հիշյալ տեղեկությունները կասկած չեն թողնում, որ Կիրակոս Գանձակեցին նախապես 1253/4 թթ. Ստեփաննոս և Վահրամ վարդապետների հետ համատեղ կազմել են Յայսմավուրքի նոր խմբագրություն նախորդի մեջ ներմուծելով 112 ճառ, իսկ 1269/70 թթ. միայնակ այդ Յայսմավուրքի ճառերի թիվը հասցրել է 170-ի:

Ինչպես նախորդ, այնպես էլ այս դեպքում չունենք վաղ շրջանի ընդօրինակություններ, որպեսզի համեմատենք և գտնենք Կիրակոս Գանձակեցու խմբագրության նախնական բնագիրը, միայն առկա են 1267 թ. և 1292 թ. ընդօրինակված Յայսմավուրքների համառոտ տարբերակներ, այն է՝ 3082 և 179 գրչագրերը, որոնց միջոցով վերականգնվում է Կիրակոս Գանձակեցու Յայսմաւուրքի ոչ միայն նախնական բնագիրը, այլև 1292 թ. կատարած Ստեփանոս Գուլյենրիցանցի խմբագրությունը իհարկե կանոնների մակարդակով:

Կիրակոս Գանձակեցու Յայսմավուրքի խմբագրության մեջ կանոններն սկսում են հայոց անշարժ տոմարի տոմարական տարվա սկզբից, այն է՝ Նավասարդի 1 (= Օգոստոս 11) և շարունակվում մինչև Ավելեաց 5 (= Օգոստոս 10): Տեր-Իսրայելի Յայսմավուրքի համեմատ Կիրակոս Գանձակեցու Յայսմավուրքի խմբագրությունը ունի սկզբունքային տարբերություն մի կողմից որ 1-ինը սկիզբ է ընտրել Գրիգոր Վկայասերի տոնացույցային տարին, այն է՝ Քաղոց 24 ÷ Հունվարի 1, իսկ 2-րդի դեպքում հիմնվել է Հայոց անշարժ տոմարի տարվա վրա, այն է՝ Նավասարդի 1 = Օգոստոս 11: Մյուս կողմից Տեր-Իսրայելից խմբագրության մեջ մուծվել է սկզբից

1 Տե՛ս Ձեռ. № 7433, էջ 428բ, տե՛ս նաև Ղ. Ալիշան, Հայապատում, Ա, էջ 107, Ա. Ն. Սրապյան, Բանասիրական ճշգրտումներ, ՊԲՀ, № 4, էջ 139:

2 Ս. Մեսճեսյան, ԳՂՎ. աշխ. Բ. Ե, Ղ. Ալիշան, Հայապատում, Բ, էջ 472, P. Peeters. S. 1, Pouz L'Histoire Du Synaxaire Armenien, p. 15, Ա. Սրապյան, ԳՂՎ. աշխ., էջ 140, Ավդալբեգյան, ԳՂՎ. աշխ., Ն. Պողարյան ԳՂՎ. աշխ. Ա, էջ 260, Գ. Սարգսյան ԳՂՎ. աշխ., 1949, էջ 61:

3 P. Peeters, ԳՂՎ. աշխ., էջ 14, Մ. Ավգերյան, Լրումն վարուց..., էջ 22:



112 ճառ, իսկ հետագայում ավելացրել և հասցրել է 170-ի: Առկա Յայսմավուրքների խմբագրությունների համեմատությունը ցույց է տալիս, որ Տեր-Իսրայելի խմբագրություն համեմատ հստակորեն տարբերակվում են ավելի քան 70 ճառեր, մյուսների հարցը հետագա ուսումնասիրություն է պահանջում: Բացի այդ, մի խումբ կանոններ կամ նոր ձևակերպում են ստացել կամ որոշ սրբերի հիշատակի օրերը դրվել են տոնական տարբեր օրերի կանոնների տակ: Սրանց անդրադարձման համար պետք են տասնյակ էջեր, որոնք մեր խնդրից դուրս է: Մի բան պարզ է, որ Կիրակոս Գանձակեցին տասնյակ տարիներ հավաքել է վկայաբանություններ և վարքեր, խմբագրել և գրել չեղածը և ներմուծել հատկապես Տեր-Իսրայելի խմբագրության մեջ և ստեղծել իր տարբերակը, որի գրչագրերն ու նրա խմբագրությունները բազմաթիվ են մեր ձեռագրերում, որոնց թվում 3082, 179, 9585, 7529, 7530, 4741, 7433 և այլ գրչագրերը:

\*\*\*

Ասենք, որ Հովսեփ Կոստանդնուպոլսեցու տոնացույցին հետևեց Գրիգոր Անավարզեցին, որի մասին ուշագրավ տեղեկություններ են բերել Գ. Սարգսյանը և Ն. Ակիլյանը: Ըստ Գ. Սարգսյանի Սսի Մաշտոցի մեջ՝ ընդօրինակված 1345-ին Գ. Անավարզեցու մասին գրված է. «Եւ բազում պատմութիւն վկայից թարգմանեաց ի հռովմայեցոց եւ ի յունաց եւ յասորոց ի մերս, եւ պայծառացոյց կարգօք զեկեղեցիս Հայոց»<sup>1</sup>:

Ըստ Ն. Ակիլյանի բերված տեղեկության Վարդան Բաղիչեցին, որ խոսում է նաև Յայսմավուրքի մասին, գրել է. «Յայսմաւուրք եւ այլ ճառք սրբոց թարգմանեալ եղեւ ի Յունաց եւ յԱսորոց ձեռամբ սրբոյն Գրիգորի վկայասերի, իսկ յետոյ Գրիգոր Անաւարզեցի ձեռն արկեալ բազում ինչ այլ արեալ և յետո Գրիգոր Խլաթեցի (Մերենց)»<sup>2</sup>:

Գ. Սարգսյանը Վենետիկի 710 թվահամարի գրչագիրը, որը Յայսմավուրքի է ընդօրինակված ըստ Գ. Սարգսյանի 1310-1320 թթ.-ին, ըստ Ս. Ճեմճեմյանի 1308-1309-ին, որը վերջերս հրատարակել է նրա հիմնական բովանդակությունը<sup>3</sup> հնարավորություն է տալիս համեմատել Վիեննայի 1048 թվահամարի գրչագրի հետ: Պարզվում է, որ Գ. Անավարզեցին հետևել է նույն սկզբունքին տոնական տարին սկսել Սեպտեմբերի 1-ից տեղ տեղ ավելացնելով Հայոց անշարժ տոմարի համարժեքները, իսկ բովանդակության մեջ ներ է առել Հովսեփ Կոստանդնուպոլսեցու սրբերի ցուցակն ու բնագրերը իր կողմից ավելացնելով լրացուցիչ տվյալներ ոչ միայն հունաց ու լատինաց, այլև Հայոց կողմից տոնվող սրբերի:

Մենք չենք ուզում ծավալվել այս առիթով, որովհետև այն առանձին ուսումնասիրություն է պահանջում, միայն նշենք որ Գրիգոր Անավարզեցին լրացուցիչ լուրջ աշխատանք է կատարել խմբագրելով նախորդը: Ասենք նաև, որ Գրիգոր Անավարզեցին այն ուղղության ներկայացուցիչ էր, որը փորձում էր Հայոց շարժական տոները վերածել անշարժ և տոնել Յայսմավուրքային սկզբունքով: Դեռ ավելին, հավանաբար նրա կազմած բնագրում 1307 թ. Մարտի 19-ին՝ «ի Մեծի ողորմեան տօնին» Սսում ժողով հրավիրեց «Սահմանադրութիւն Հայոց» կանոններով հանդերձ: «Սահմանադրութիւն Հայոց ընդհանուր Սսոյն ժողովոյն, որ եղև հրամանաւ Տեառն Գրիգորի կաթողիկոսի եւ Հայոց արքային Լեւոնի, ի թուին ծննդեան Քրիստոսի ՌՅԷ, եւ Հայոց ՉՄՁ սակս միաբանութեան Հայոց ընդ եկեղեցոյն Հռոմա» բնագրի մեջ սահմանվել է հետևյալ փոփոխությունները կատարել.

<sup>1</sup> Տե՛ս Գ. Սարգսեան, Գրիգոր Անաւարզեցի Բայրապետ եւ գրիչ, Բազմավէպ, 1947, № 9-10, սեպտեմբեր-հոկտեմբեր, էջ 201-202, 1948, № 1-2 հունվար-փետրվար, էջ 4-9, 1949, № 3-4, մարտ-ապրիլ, էջ 58-66, տվյալ վկայությունը՝ էջ 58:

<sup>2</sup> Ն. Ակիլյան, Յովսեփ Կոստանդնուպոլսեցի թարգմանիչ Յայսմաւուրքի (991): Աճ, էջ 12:

<sup>3</sup> Տե՛ս Ս. Ճեմճեմյան, Մայր ցուցակ Հայերէն ձեռագրաց Մատենադարանին Մխիթարյանց ի Վենետիկ, հատոր Ե, Վենետիկ, 1995, էջ 2-28:

1. «Կարգեաց նա պահէ Մննդեան Տեառն ի Դեկտեմբերի ԺԹ (Դեկտեմբերի 30-ի փոխարեն) - Ռ. Վ.) եւ ճրագալոյցն ձկամբ եւ ձիթով միայն քաւականալ»:

2. «Նա եւս աւանդեաց տօնեալ, զտէրունական տօնան, հանգիստ վերոյգրեալ սուրբ եւ ուղղափառ եկեղեցեացս Քրիստոսի՝ զտօն Աւետեացն առնել մեծաւ հանդիսիւ ի Մարտ ամսոյ ին օրն (Ապրիլ 6-ի փոխարեն - Ռ. Վ.), ըստ պատկերի աւուրն ուր եւ պատշաճ է արասցուք: Եւ զտօն ծննդեանս Քրիստոսի ի Դեկտեմբերի ԻԵ (Հունվարի 6-ի փոխարեն - Ռ. Վ.) ըստ պատկերի աւուրն արասցուք: Եւ զքառասնօրեայ գալոստն ի տաճար ի Փետրուար ամսոյ Բ (Փետրվար 14-ի փոխարեն - Ռ. Վ.) արասցուք: Եւ զայլ եւս սրբոցն տօնս ըստ յայմաւուրացն (այսինքն՝ անշարժ - Ռ. Վ.) արասցուք, որպէս եւ այլ Քրիստոնեայք առնին: Եւ աւանդութեամբք տօնքն, զոր ունի եկեղեցիս հարց զոր այժմ տօն է ուրեք ուրեք, նմանապես մնացէն...»:

«... եւ եղև կանոնադրութիւն եւ սահման սուրբ ժողովոյս ի մեծ թուականիս Հայոց ՉՄՁ (=1307 թ.) յամսեան Մարտի ԺԹ ի մեծի ողորմեան տօնին, ի սուրբ Սոփիա եւ ի մեծ եկեղեցին մայրաքաղաքին Սսոյ»<sup>1</sup>: Հիշյալ կարգադրությունը Գրիգոր Անավարզեցին ներառել է նաև իր կազմած «Յայսմավուրքի» խմբագրություն մեջ, որը ևս ցույց է տալիս, որ այդ խմբագրությունը կատարել է Գրիգոր Անավարզեցին: Այն միայն ժամանակավոր և սահմանափակ կիրառություն ունեցավ թեև մինչ այդ էլ որոշ տեղեր Կիրիկիայում: Իսկ նրա սահմանափակ կիրառությունը երևում է Հայոց տոնացույցերի ընդօրինակություններից, որոնք կատարվել են ոչ միայն նրա կաթողիկոսության շրջանում, այլ նրանից հետո:

\*\*\*

Յայսմավուրքի ամփոփիչ խմբագրությունը կապված է Գրիգոր(իոս) Խլաթեցու կամ Գրիգոր Մերենցի անվան հետ: Նրա Յայսմավուրքի խմբագրությունները բազմաթիվ են, միայն 15-րդ դարի գրչագրեր են 7468, 7543, 8913, 6338, 1511, 4806 և այլ թվահամարների ձեռագրերը:

7468 (15-րդ) և 1511 (ընդօրինակված Հայոց 920 թ = 1470/1 թթ.) թվահամարների, ինչպես և այլ գրչագրերում Քաղոց ԻԷ և Յունուարի Դ կանոնի «Յայսմ աւուր յիշատակէ տիեզերալոյս վարդապետին Գրիգորի Խլաթեցոյ» հատվածի մեջ տրված է Գրիգոր Խլաթեցու կենսագրությունը, որը գրել է Թովմա Մեծփեցին: Այսպես 7468 թվահամարի գրչագրի ստորին լուսանցքում գրչի կողմից գրված է. «Ջայս ճառս մեծ վարդապետն և քաջ հոնտորն է արարել Թովմա վարդապետն» (էջ 173բ), իսկ 1511 թվահամարի գրչագրում ճառի վերջում գրիչը տալիս է «... Որոյ յիշատակն (Գրիգոր Խլաթեցու - Ռ. Վ.) աւրհնութեամբ եղիցի, և աղաւթք նորա ի վերա ամենայն աշխարհի և մաղթանաւք նորա տէր մեզ ողորմեացի և Թովմայի վարդապետին, որ զայսչափ գիծս շարագրեաց...» (էջ 265ա): Ըստ այդ բնագրի Գրիգոր Խլաթեցին «սնեալ և վարժեալ ի գործ քահանայութեան առ սուրբ ճգնաւորի միոյ Վարդան կոչեցեալ» և «Ձ ամ սպասաւորեալ նմա»: Այնուհետև գնում է «առ մեծ վարդապետն Յոհաննէս Որոտնեցին՝ մականուն Կախիկ կախեալ ի սէր Յիսուսի» և «Ը ամ վարժեալ և սիրեցեալ ի նմանէ»: Նրա ուսման ընկերն է եղել Գրիգոր Տաթևացին՝ «զերկրորդ լուսաւորիչն Հայոց սուրբ առաքելոյն Ստաքէոսի»: Ուսուցչի մահից և Լենկ Թեմուրի ավերումներից հետո վերադարձել է «ի բրնիկ գաւառն իւր առ մեծ վարդապետն Սարգիս. յերկիրն Քաղբերունոյ ի հռչակաւոր և յԱստուածաբնակ ուխտն Աստուածածնին որ Սուխարա վանք վերակոչի: Այնտեղ վարժվել և աշխատել է ընկերակից ունենալով «զՄեծ ճգնաւոր վարդապետի Վարդան Հոգեց վանաց, որ յետոյ յաջորդեաց զաթոռ վարդապետութեան երանելոյն Սարգսի»: 10 տարի Վարդանի մոտ է մնացել և

<sup>1</sup> Տե՛ս Պատմութիւն կաթողիկէ վարդապետութեան ի հայս և միութեան Անցա ընդ հոռոմէական եկեղեցոյ ի Փլորենտեան Սինոդոսի, գրեց Ա. Վ. Պալմեան, Վենետիկ, 1878, էջ 273-280:



«ընկալեալ ի նմանէ զաստիճան վարդապետութեան»: Այդ ընթացքում «լուսաւորէր առ հասարակ գամենեսեան իմաստութեամբ և ընթերցմամբ գրելով և կարդալով, գանձով ու տաղով...»: Նրանից հետո Գրիգորը «առեալ հրաման ի վարժապետէն իւրմէ դաս ասել և աշակերտ ժողովել: Եւ նա ելեալ ի Բգնունեաց քաղաքն Արծկէ ի սուրբ Ուխտն Ստեփաննոսի եւ ժողովեցան անդ բազումք ի կրանաւորաց և յուսումնասէր եղբարց և մխիթարէր զնոսա անճառելի և անպատմելի ուրախութեամբ Աստուածաշունչ գրոց գիտութեամբ և հնոց և նորոց իմաստութեամբ... և անհանգիստ տքնութեամբ ի գիշեր և ի տուրնջեան ձեռաւք իւրովք վաստակեր ի գիրս գրչութեան և ի տնանկս կարկառէր... Այլ և երկրորդ Վկայասեր անուանեցաւ ի վերջին ժամանակիս և յետին դարուս, զի ժողովեաց գիրս բազումս ի մերոց և յաւտարաց, զհնացեալս և զեղծեալս, զծածուկ և զանյայտ պատմութիւնս ամենայն սրբոց, ի խաւարէ ի լոյս ածեալ և արար զգիրս Յայսմաւուրաց՝ յուրախութիւն և ի ցնծութիւն ամենայն եկեղեցւոց մանկանց»:

Նա «հասեալ ի բարւոք ծերութեան աւելի քան զշ (70) ամ կամեցաւ զնալ ի սուրբ քաղաքն Երուսաղէմ՝ վարդապետօք և աշակերտօք...»: Նա Բ ամ յամեալ յերուսաղէմ և ապա անտի եկեալ ուրախութեամբ և ցնծութեամբ ի բնին գաւառն իւր...»: «Եւ ի վերա այս ամի առաքինութեան ցանկայր մարտիրոսութեան հասանել և վկայից պըսակացն ժամանել»:

Թովմա Մեծոփեցին շարունակում է. «Զի մինչդեռ յուրախութեան և ի ցնծութեան վայելեաք, ահա եհաս յանկարծակի մրրիկ թշուառութեան, ի նենգաժուլ և յանհաւատ ազգէն Մարաց, զի հասին սուսերաւք և տիգօք ի վերա Արծկէ քաղաքի և բազումս պանին եւ այլք ի նոցա զնացեալ գաղտագողի յԱստուածաբնակ ուխտն Յիպնա՝ կամէին զսուրբ եղբարս սրոյ ճարակ տալ և նոցա զնացեալ փախստական եղեն ի տեղոջէն: Իսկ զերջանիկ և զերանելի այրն Գրիգորիոս ոչ կարացին հանել ի վանացն, այլ ասէր «աստ կացից և աստ մեռայց»:...

Եւ հեղին զարին նորա իբրև զգառն անմեղ... եւ աւրհնութեամբ աւանդեաց զհոգին իւր:

Թովմա Մեծոփեցին շարունակում է. «Իսկ յետոյ եկեալ հրեղէն լեզու և ճգնաւոր վարդապետն Յակոբ Ղրիմեցին աշակերտաւք իւրովք և ազգականօք և բազում ժողովրդովք, եղին զնա ի տապանի և կոծ մեծ՝ արարին վերա նորա: Այլ վայ և եղուկէ մեզ հոգևոր որդիք հոգևոր հաւրն մերոյ խրատեալք, եկայք ի միասին ողբ ասացուք զհօրն զվրտանկ...»:

«Կատարեցաւ նահատակութեամբ Մեծ վարդապետն Գրիգորիոս ՊՇԴ թուականին մեր, Թ մայիս ամսոյ, յաւուր կիրակէի մեծի Պենտէկոստէին գալստեան հոգևոյն Աստուծոյ ի փառս Քրիստոսի Աստուծոյ մերոյ...»:

«Պատմութիւն Լանկ-Թամուրայ և յաջորդաց իւրոց արարեալ Թովմա վարդապետի Մեծօրեցւոյ» աշխատութեան մեջ, որը հեղինակը ավարտել է ավելի ուշ 1441-1446 թթ. սահմաններում հետևյալ տվյալներն է ավելացնում Գրիգոր ինքն իր խոսքով մասին, Վարդան վարդապետի մահից հետո (= հայոց 855 թ. = 1405/6 թթ.) Գրիգորը «յաջորդեաց զաթոռ նորա» (էջ 41): Այնուհետև շարունակում է. «... զերից ժամանակաց պատմութիւնս ի լոյս ածէր ի հարցանելն և ի պատասխանատրութիւնս և զգիրս սրբոց մարտիրոսաց և վկայիցն որ կոչի Յայսմաւուրաց՝ սակաւաբան և անվթար շարադրեալ ի սրբոց հնոց և նորոց վարդապետացն ի լոյս էած» (էջ 42): Գրիգոր «50 ամ գիրս գրեաց»: Նա «բազում երգս Գանձաց և տաղից յիշատակ թողեալ ինքեան՝ յոյժ տօնասէր եւ պատուող սրբոց»: Գրիգոր ինքն իր խոսքով «հասեալ ի բարւոք ծերութիւն աւելիք քան զ 75 ամ և յ 874 ամի թուականիս մերում եկ պիղծ ազգն Մարաց ի յԱրծկէ քաղաք Հայոց և զնաց յանապատն Յիպնայ և ըմբռնել զնա անօրինացն» (էջ 43): Թովմա Մեծոփեցին շարունակում է. «Եւ եհաս մարտիրոսական պսակի յոյժ մարտիրոսասէր գոլով և եղին զնա ի սուրբ ուխտն Յիպնայ Նախավկային Ստեփաննոսի անուամբ կոչեցեալ: Եւ հոգևոր հարազատն իւր վարդապետն Յակոբ ճգնաւոր՝ այրն ցանկալի, եկն ամփոփեաց զնա հանդերձ հարա-

զատ որդւովք իւրովք Ստեփաննոս եպիսկոպոսաւ և աշակերտաւ եւ նստաւ սպասաւոր նորա գերեզմանին ամ մի:

Եւ տկարացաւ, որպէս սահման է բնութեանս. և ի Համբարձմանն յաւառուր վերացման ի բանն յայն զոր ասացին քահանայք «Համբարձաւ Տէրն մեր յերկինս» աւանդեաց զհոգին ի փառս Քրիստոսի Աստուծոյ մերոյ» (էջ 43):

Սկսած Մ. Չամչյանից մինչև մեր օրերը Գրիգոր ինքն ինքն նահատակութեան տարին դրել են հայոց 874 թվականին, ինչպես Թովմա Մեծոփեցին է տվել և վերածում ներկա 1425 թվականի, թեև նշված ամսաթիվը և տոնի օրը նկատի չունենալու դեպքում պետք է դրվեր 1424-1425 թթ.:

Սակայն առկա է Գրիգոր ինքն ինքն մահվան ամսաթիվը Մայիս 9 շաբաթվա օրը՝ Կիրակի և տոնի անունը՝ Պենտեկոստէ կամ Համբարձում (ըստ նույն հեղինակի):

Ակնհայտ է, որ հիշյալ տվյալների օգնությամբ կարող ենք հաստատել կամ հերքել հայոց 874 թվականը, այսինքն ստուգել և ճշգրտել Գրիգոր ինքն ինքն նահատակութեան տարին:

Համբարձումը և Պենտեկոստեն եղել են հետևյալ ամսաթվերին տարիների կտրվածքով

ՇԼԲ-ի տարի	ՇԼԲ-ի թվական	Հայոց թվական	Ներկա թվական	Համարձակում օրը հուլյան ամսաթվով և շաբաթվա օրով	Պենտեկոստեի օրը հուլյան ամսաթվով և շաբաթվա օրով
340	872	873	1424	Հունիս 1 հինգշաբթի	Հունիս 11 կիրակի
341	873	874	1425	Մայիս 17 հինգշաբթի	Մայիս 27 կիրակի
342	874	875	1426	Մայիս 9 հինգշաբթի	Մայիս 19 կիրակի
343	875	876	1427	Մայիս 29 հինգշաբթի	Հունիս 8 կիրակի

Պարզվում է, որ Թովմա Մեծոփեցին թույլ է տվել երկու սխալ. մեկը ամսաթվի մեջ Մայիսի 19-ի փոխարեն գրելով Մայիս 9, երկրորդը՝ հայոց 875 թվականի փոխարեն տվել է հայոց 874 թվականը: Մենք ՇԼԲ-ի թվականը մտածված ենք տվել հաստատուն պահելով 552 տարբերությունը, մտածելով որ Թովմա Մեծոփեցին կարող էր հաշվել այդ ձևով, այսինքն ՇԼԲ-ի թվականով թեև քիչ հավանական է, որովհետև Հայոց թվականը նույնն է ինչ ՇԼԲ-ի թվականը միայն մեկ տարվա հավելվածով՝ հայոց շարժական տոմարի հետևանքով: Բնագրում վկայված կիրակի օրը ցույց է տալիս, որ խոսքը գնում է Պենտեկոստեի տոնի մասին և ոչ թե Համբարձման, որովհետև վերջինս միշտ կատարվել է հինգշաբթի օրը, որը հայտնի էր Թովմա Մեծոփեցուն: Այսպիսով, Գրիգոր ինքն ինքն վախճանվել է 1426 թվականի Մայիսի 19-ին՝ Պենտեկոստեի կիրակիին, որը համարժեք է հայոց 875 թվականին: Թովմա Մեծոփեցին տվել է մեկ տարվա սխալով: Այլ խոսքով Գրիգոր ինքն ինքն եղեռնական մահը տեղի է ունեցել մեկ տարի ուշ՝ 1426 թվականին: Ինչ վերաբերվում է Գրիգոր ինքն ինքն տարիքին, ապա առաջին տարբերակում Թովմա Մեծոփեցին կարծես թե տալիս է ավելի քան 72 տարի, որովհետև Երուսաղեմ զնացել է ավելի քան 70 տարեկան հասակում և երկու տարի հետո վերադարձել է և կատարվել են այդ դեպքերը, այսինքն՝ 73 տարեկան հասակում, իսկ ավելի քան 75 տարեկան էր, երբ սպանեցին: Այդ հաշվով Գրիգոր ինքն ինքն ծնունդն ընկնում է 1351 թվահամարին (1426-75), իսկ մյուս տարբերակով 1353 թվականին (1426-73): Պարզ է, որ պետք է վերանայել նրա ծննդյան թվականը և դնել ոչ թե 1344-ին կամ 1350-ին, այլ 1351-ին:

Թովմա Մեծոփեցին գրում է, որ ժամանակակիցները Գրիգոր ինքն ինքն համարել են 15-րդ դարի երկրորդ Գրիգոր Վկայասեր, որովհետև «արար զգիրս Յայսմաւուրաց»: 4866 թվահամարի գրչագրում կարդում ենք «իսկ ի մերումս ժամանակի, որ էր թուական հայկազեան տօմա-

ըրս ՊԾ (= 1400/1 թթ.) երանաշնորհ վարդապետ Գրիգոր Խլաթեցին, ըստ նախնեացն Մերենց կոչեցեալ, ոչինչ նուազ գտեալ քան զառաջին հոգի ընկալ վարդապետսն, այլ առաւելեալ քան զնոսին, սա յաւել ի վերայ առաջնոց գրելոցն յոլով բանս շահաւետս և աւգտակարս յամենայն պատմագրաց և վկայաբանութիւնս յինքենէ նորոց վկայից սրբոց որք եղեն ի մերումս ժամանակի և հարստացոյց ըզգիրքս»<sup>1</sup>:

Վենետիկի ձեռագրատանը պահպանուող Յայսմավուրքի 1490/1 թվականներին կատարված ընդօրինակութեան մեջ ավելի մանրամասնում է Գրիգոր Խլաթեցու Յայսմավուրքի խմբագրութեան աշխատանքների, հատկապես աղբյուրների մասին: Այնտեղ գրված է. «... Այլև ըստ այսմ յարուցողի՝ ամենագովելի, երջանիկ ընտրեալ՝ պատուելի և Աստուածահաճոյ, ամենայն գովութեանց արժանաւորեալ, արի և քաջ սուրբ վարդապետն Գրիգոր, սիրելի գտեալ ամենայն սրբոց ի տօնախմբութիւն...կատարեալ և յընտիր օրինակէ առաջին սուրբ վարդապետքն փարթամացուցեալ էին, և յետոյ սուրբ և պատուելի աստուածահաճոյ վարդապետն Գրիգոր Մերենցն՝ մեծաւ աշխատութեամբ իբրև գմեղու ժրաջան գտեալ՝ յԱստուածաշունչ գրոց մեկնչաց, ի Տօնական գրոց, ի գավազանագրոց, ի հարանց վարուց, ի Մարտիրոզոք գրոց, զոր և յինքենէ նորահրաշ պատմութեամբ սրբոց, և զարդարեաց զամենայն տօնս տերունական զաւետեացն՝ զձննդեանն, զտեառնընդառաջի, զարարչութեան աւուրքն, զայլակերպութեան, զԱստուածածնին, զսուրբ Խաչին և զխաչ գիւտն, և զամենայն տօնս սրբոց զարդարեաց...»

Արդ գրեցաւ սա ի թվաբերութեանս հայկազեան տումարի՝ Զ և Խ, ձեռամբ մեղապարտ և փծուն գրչի՝ Վրթանէս մեղսաներկ կրօնաւորի ի գաւառս Արարադեան ի յանապատիս յՈւրծայ, որ կոչի Արջառէրեկք<sup>2</sup>:

Գրիգոր Խլաթեցին Յայսմավուրքի խմբագրութեանը, ինչպես երևում է 4866 թվահամարի գրչագրի հիշատակարանից, ավարտել է 1400/1 թվերին, սակայն մյուս գրչագրերից երևում է, որ նա շարունակել է աշխատել նրա վրա հետագայում: Այսպես, 1511 թվահամարի գրչագրում տեղեկություն է տրված 1402/3 թվերին նահատակված նոր վկաների մասին:

Ասենք նաև, որ Գրիգոր Խլաթեցու կազմած Յայսմավուրքի հետագա խմբագրությունների մեջ ավելացվել են նոր նյութեր: Բավական է հիշել Գրիգոր Խլաթեցու կենսագրությունը գրված թովմա Մեծփեցու կողմից և զետեղված նրա խմբագրած Յայսմավուրքում: Գրիգոր Խլաթեցին հետևել է Գանձակեցուն սկիզբ ընդունելով հայոց անշարժ տոմարի տարեսկիզբը՝ Նավասարդ 1 (= Օգոստոս 11): Ս. Մարաբյանը<sup>3</sup> Գրիգոր Խլաթեցու կազմած Յայսմավուրքի խմբագրության մեջ հաշվել է ավելի քան 700 միավոր նյութ, իսկ Կիրակոս Գանձակեցու Յայսմավուրքի խմբագրության մեջ, ըստ 1466/7 թթ. Կաֆայում ընդօրինակված 7433 թվահամարի գրչագրի, որը 3082 թվահամարի գրչագրի հետ համեմատած մուծել է շուրջ 660 միավոր նյութ, որից հետևում է, որ նա ավելացրել է շուրջ 100 միավոր նյութ:

Գրիգոր Խլաթեցին ոչ միայն նոր նյութեր է խմբագրել և ավելացրել նախորդներին այլև գրել է ինքնուրույն բնագրեր տարբեր տոնական օրերի համար և սրբերի հիշատակի օրերի մեջ փոփոխություններ է կատարել՝ տեղափոխելով այլ կանոնների տակ:

Գրիգոր Խլաթեցու խմբագրած Յայսմավուրքը կարծես թե ամփոփեց նախորդներին և նրանից հետո ընդօրինակված Յայսմավուրքների մեջ զետեղվել են միայն ավելի քան մեկ

տասնյակ նյութեր, որոնք հիմնականում վերաբերվում են նոր վկաներին կամ ուշ շրջանում տոնացույց մտած սրբերին:

1 Տե՛ս Ձեռ. № 4866, էջ 544, ԺՂ դարի հայերեն ձեռագրերի հիշատակարաններ, կազմեց Լ. Խաչիկյան հատոր Ա, Ե., 1955, էջ 593, Ս. Մարաբյան: Գրիգոր Խլաթեցու պատմագրական երկերը, ՊԲՀ № 2, 1977, էջ 124:

2 Տե՛ս Լրումն լիակատար վարուց եւ վկայաբանութեանց սրբոց, Բ. ԺԱ, Վեներիկ, 1814, էջ ԼԸ-ԼԹ:

3 Տե՛ս Ս. Մարաբյան, Նշվ. աշխ. անդ, էջ 131-132:

ՆՈՐԱԳՈՒՅՆ ՄԵԹՈԴՆԵՐԸ ԵՎ ՍԱՐԿԱՎԱԳԱԴԻՐ ՈՒ ԱՅԼ ԾԱՇՈՑՆԵՐԻ,  
ՏՕՆԱՑՈՒՅՑԵՐԻ, ՅԱՅՍՄԱՎՈՒՐՔՆԵՐԻ ԱՄՍԱԹՎԵՐԻ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆԸ

832 թվահամարի գրչագիրը, որ թվագրվում է 1154/5 թթ. ձառոց է և կազմվել է Հայոց անշարժ տոմարի ամիս-ամսաթվային կազմով: Այդ բնագիրն ստեղծվել է կամ ձեռագրի ընդօրինակողը կամ վերցրել է մի ձառոց-Տոնացույցից, որը գրվել է 1094 թվականից հետո, որովհետև Հայոց անշարժ տոմարի ամիս-ամսաթվերի կարգով դասավորված ձառոցը չէր կարող գոյություն ունենալ Հովհաննես Սարկավազի կողմից ստեղծված Հայոց անշարժ տոմարից առաջ: Ուստի քննարկվող ձառոց-Տոնացույցը կազմվել է 1094-1154/5 թթ. սահմաններում:

Ներկայացնենք Հայոց անշարժ տոմարի ամիս-ամսաթվերի կարգով տրված ձառոցը և փորձենք բացատրել առկա ամիս-ամսաթվերի առաջացումը հիմնվելով Հայոց տոնացույցային և տոմարական եղանակների վրա: Հասկանալի կդառնա նաև այն, թե հիշյալ ձառոցը ինչ նպատակի է ծառայել:

Քննարկվող ձառոց-Տոնացույցը սկսվում է Նավասարդի 1-ով (= Օգոստոս 11) և ավարտում Հրոտից 30-ով (= Օգոստոս 5), յուրաքանչյուր տոնի համար տալով ընթերցվելիք նյութերը, այն է՝ կանոնները:

ձառոց-Տոնացույցը ունի հետևյալ տոները (Հին և Նոր Կտակարանի համապատասխան ընթերցվածները չենք ներկայացնում):

Նաւասարդի Ա (= Օգոստոսի 11). Յիշատակ Յովհաննու Մկրտչի:

Նաւասարդի Թ (= Օգոստոս 19). Սրբոյ Ատոմեանցն:

Նաւասարդի(ի) ԺԵ (= Օգոստոս 25). Սրբոյ Աստուածածնին Աւետեացն:

Ի Նաւասարդի ԺԷ (= Օգոստոս 27). Սրբոց քաւչիցն Սրբիսոս (Սրբոց Սուքեասեանցն):

Նաւասարդի Լ (=Սեպտեմբեր 9). Սրբոց Սահակայ Պարթեւի:

Հոռի առաջի կիրակէն. Աշխարհամատրանն:

Երկրորդ կիրակէն. Ար(բ)ոց Ոսկեանցն

Կարգ սրբոյ Եղիայի:

Հոռի ԻԶ (= Հոկտեմբեր 5). Սրբոց Հռիփսիմեանցն:

Հոռի ԻԷ (= Հոկտեմբեր 6). Սրբոյն Գայիանեա(յ):

Ի Վարդավառի տաւնին:

Սահմի Է (= Հոկտեմբեր 16). Յովհաննու Մկրտչի եւ Աթանազինէ

Սահմի Ժ (= Հոկտեմբեր 19). Սրբոյն Գրիգորի Ելն ի Վիրապէն:

Սահմի Ի (= Հոկտեմբեր 29). Նունէ, որ ի Վիրս եւ որք ի Վարագ եկեալք եւ Մանեա, որք եին յընկերաց սրբոյ Հռիփսիմեանց:

Սահմի Լ (= Նոյեմբեր 8). Սրբոյ Սարգսի եւ Բագոսի:

Տրէ Ժ (= Նոյեմբեր 18). Գիւտ ոսկերաց սրբոյն Գրիգորի:

Տրէ ԺԱ (= Նոյեմբեր 19). Սրբոյն Ներսիսի եւ Խաղա(յ):

Տրէ ԺԵ. (= Նոյեմբեր 23). Դանիելի եւ երից մանկանցն:

Տրէ ԺԷ (= Նոյեմբեր 25). Սահակայ եւ Մեսրոբա(յ)եւ այլոց թարգմանչացն:

Տրէ Ի (= Նոյեմբեր 28). Նաւակատիք կաթողիկէ եկեղեցւոյ:

Տրէ ԻԱ (= Նոյեմբեր 29). Տրդատայ եւ Աշխէն տիկնոջ եւ Խոսրովիդիտոյ:

Տրէ ԻԲ (= Նոյեմբեր 30). Ռստակիսի, Վրթանիսի, Յուսկանն, Գրիգորիսի եւ Դանիէլի:

Տրէ Լ (= Դեկտեմբեր 8). Աբրահամու խոստովանողի եւ Խորենա(յ):

Քաղոց Բ (= Դեկտեմբեր 10). Սրբոյն Յիզտրուզտեա(յ):

Քաղոց Ը (= Դեկտեմբեր 16). Սրբոյն Սանդիտոյ.

Քաղոց Ժ (= Դեկտեմբեր 18). տեսիլ սրբոյն Գրիգորի զոր ետես ի վերայ հիման կաթողիկէ եկեղեցոց:

Քաղոց ԺԳ (Դեկտեմբեր 21). Թադեոսի առաքելոյ:

Քաղոց ԺԷ (Դեկտեմբեր 25). Սրբոյն Շուշանկան դստեր սրբոյն Վարդանա(յ):

Արաց Ե (Հունվար 12). Սրբոյն Կիպրիանոսի եւ Յուստինեա(յ) կուսի:

Արաց Ժ (Հունվար 17). Աբրահամու, Սահակա(յ), Յակովբա(յ), Յովսեփա(յ), Մովսեսի, Ահարոնի, Յեսուայ, Սամուէլի եւ այլոց նախահարցն:

Արաց ԺԵ. (Հունվար 22). Սրբոյ Սահակայ եւ Յովսեփա(յ), որ ի Կարնոյ քաղաքի (կատարեցան):

Արաց Ի (= Հունվար 27). Երկոյտասան Մարգարէից:

Արաց Լ (= Փետրվարի) Եփեսոսի սուրբ ժողովոյն, որ ի ձեռն Թեոդոսի թագաւորի:

Մեհեկի Ե (Փետրվար 11). Սրբոյն Քրիստափորի:

Մեհեկի ԺԳ (Փետրվար 19). Մեսրոբա(յ) վարդապետի:

Մեհեկի Ի (= Փետրվար 26). Վարագա Սուրբ Խաչին:

Մեհեկի ԻԱ (= Փետրվար 27). Սրբոյն Եղիշաի վարդապետի:

Մեհեկի ԻԳ (= Մարտի 1) Սրբոյն Գեորգա(յ) զաւրավարի:

Արեգ Ե (= Մարտ 13). Եզեկիէլի մարգարէի

Արեգի Ժ (= Մարտ 18). Նիկիա սուրբ ժողովոյն, որ ի ձեռն մեծին Կոստանդիանոսի ժողովեցան եպիսկոպոսք ՅԺԸ:

Արեգ ԻԳ (= Մարտ 31). Դաւթի, որ ի Դուին կատարեցաւ:

Ահկի Բ (= Ապրիլ 9). ՀԲ առաքելոցն:

Մարերի Ժ (= Մայիս 17). Գիւտ Սրբոյ Խաչին, որ Երուսաղէմ:

Մարերի ԻԳ (= Մայիս 30). Սրբոյն Սարգսի զաւրավարի:

Մարգաց ԻԵ (Հուլիս 1). Վահանայ Գողթան Տեառն:

Հրոտից ԺԵ (Հուլիս 21). Սրբոյն Կիւրակոսի եւ մաւր նորա Յ(ու)ղիտայ:

Հրոտից ԻԷ (= Օգոստոս 2) Սրբոց Ղեւոնդեանցն:

Հրոտից Լ (= Օգոստոս 5) Սրբոց Վարդանացն:

Սարկավագադիր տոմարով և համապատասխան Աստվածաշնչային ընթերցումներով գրված ձառոցը ծառայել է հիմնական տոնացույցի, այսինքն՝ շաբաթական շարքի հիման վրա կատարվող տոների համար իբրև մի օժանդակ ուղեցույց, որովհետև Հայոց քրիստոնեական տոնացույցի տոնական տարին, թեև սկսվում էր անշարժ սկզբով՝ Հունվարի 6-ով, բայց հիմք ունենալով Ջատիկի կիրակին, տոները տեղաբաշխվում էր երկու ուղղութիւններով թե ետ և թե առաջ շաբաթական շարքի (ցիկլի) կիրառմամբ, իսկ մյուս հատվածներում տոների օրերը կարգավորվում էին Հոգեգալստի, Վարդավառի, Աստուածածնի, Սուրբ Խաչի, Յիսնակամտի կիրակիներից ելնելով, այնպես որ նախատեսվող տոնական օրերը, ինչպես կտեսնենք տարբեր էին քննարկվող ձառոց-Տոնացույցի մեջ Հայոց անշարժ տոմարի ամսաթվերով տրված օրերից: Բացի այդ այն տոնացույցերում, որոնք ունեն Հայոց անշարժ տոմարի ամսաթվերի նշումներ դրված

են հիմնական տոնացույցի տոնելի օրերին: Այլ խոսքով, հիշյալ Ճաշոց-Տոնացույցը ծառայել է հիմնական տոնացույցի տոներին օժանդակող ձեռնարկ՝ ընթերցվելիք նյութերը շուտ գտնելու համար:

Հիշյալ Ճաշոց-Տոնացույցի առաձևահատկությունն այն է, որ տոնական տարվա ամսաթվերը գրանցել է Սարկավագադիր տոմարի կառուցվածքային կտրվածքով, թեև նշված տոները կատարվել են տոնացույց ըստ շաբաթուցի տոնելի օրերին:

Հայոց տոնացույցային և տոմարական եղանակների (մեթոդներ) կիրառմամբ և համապատասխան խնդիրների լուծմամբ հատկապես ամսաթվային նյութերի վերլուծությամբ, ստորև ցույց կտանք, որ քննարկվող Ճաշոց-Տոնացույցում, ինչպես և այլ բնագրերում բացի որոշ խումբ հայոց անշարժ տոմարի ամսաթվերից կան մի ստվար խումբ ամիս-ամսաթվերի նշումներ, որոնք գալիս են հայոց շարժական տոմարից և պահպանվել ու մեզ են հասել շնորհիվ այս և մասամբ այլ բնագրերի: Նրանք Հնարավորություն են տալիս ոչ միայն թվագրել տոնական օրերի կիրարկության ժամանակը և տոնացույցային տարվա ընդլայնման հետ կապված ժամանակագրական խնդիրներ, այլև տոների օրերի հետ կապված վկայաբանությունների, մեկնությունների գրման կամ թարգմանության տարբերակների պարզաբանումներ, որոնք էական նշանակություն ունեն ոչ միայն հայոց տոնացույցի ծագման և զարգացման հարցերի, այլև հայագիտության տարբեր խնդիրների լուծման համար:

\*\*\*

Հայոց Ճաշոցներում, Տոնացույցերում և Յասմավուրքներում վկայվել են ամիս-ամսաթվեր, որոնք վերլուծությունը ցույց է տալիս, որ նրանք առաջացել են տարբեր ուղիներով: Դրանք են՝

1. Վկայված ամիս-ամսաթվերը հայոց անշարժ տոմարով են, որոնք զուգադրվել են այլ անշարժ տոմարների համարժեքներով:

2. Գրանցված ամիս-ամսաթվերը հուլյան և այլ անշարժ տոմարներով են և զուգահեռներն ունեն հայոց շարժական և անշարժ տոմարներով:

3. Հայոց տոմարների ամիս-ամսաթվերը, որոնք առկա են բնագրերում համադրելի են անշարժ տոմարների ամսաթվերին, որոնք ընդմիջարկվել են այլ լեզուներից կատարված թարգմանությունների մեջ կամ դրվել են ինքնուրույն ստեղծված բնագրերում:

4. Հայոց շարժական տոմարի ամիս-ամսաթվերն առաջացել են գործող տոնացույցի հիման վրա տարբեր ժամանակներում և հանդիսանում են տվյալ տոնի կամ հիշատակի օրվա նշումները, որոնց հուլյան կամ այլ անշարժ տոմարների համարժեքները գտնվում են տոնացույցային եղանակի հիման վրա:

Հայոց անշարժ տոմարի ամիս-ամսաթվերի և նրանց հուլյան համարժեքների հարցը հիմնականում չենք քննարկում, որովհետև դրանք չեն պարունակում ժամանակը որոշող տվյալներ, այլ տալիս են միայն Սարկավագադիր տոմարի սկզբնական վիճակը, այն է՝ 428-431 թթ. փաստող թվեր, ինչպես կտեսնենք հետագայում բերված որոշ օրինակներից:

Հայոց շարժական տոմարի և հուլյան կամ որևէ անշարժ տոմարի համարժեք ամիս-ամսաթվերի ստացման մեթոդի բացատրությունը և համապատասխան խնդիրների լուծումը տվել են մեր «Հայոց տոմարական եղանակը. թարգմանական բնագրերի ժամանակը» ուսումնասիրության մեջ և հարկ չենք համարում կրկին անդրադառնալ: Ասենք, որ հիշյալ մեթոդը կիրառել ենք տոնացույցային տարվա անշարժ ամսաթվերով վկայված տեղեկությունների ժամանակը որոշելիս և նրա տեսական բացատրությունը ընթերցողը կարող է գտնել այդ գրքում:

Այդպես, 832 թվահամարի Ճաշոցում գրված է. «Նաւասարդի ԺԵ (= Օգոստոս 25). Սրբոյ Աստուածածնին Աւետեացն...»: Ակնհայտ է, որ Ավետեաց Աստուածածնի տոնը երբեք Օգոստոսի 25-ին չի կատարվել, այլ միշտ վաղ շրջանում Ապրիլ 6-ին, իսկ ուշ շրջանում՝ Ապրիլ 7-ին: Պարզ է, որ հիշյալ Ճաշոցում բերված ընթերցվելիք նյութերը կարդացել են Ավետեաց Աստուածածնի տոնի օրը, իսկ Նաւասարդի 15-ը հայոց շարժական տոմարի ամիս-ամսաթիվ է:

Ի դեպ «Հայոց Դիցարանի տոները» հոդվածաշարում Վարդավառի տոնին նվիրված բնագրի ընդօրինակությունների մի հատվածի հիման վրա, որը հրատարակել են Ղ. Ալիշանը, Ֆ. Կոնիբերը և Ն. Պողարյանը, այն է՝ «Եւ (իՆաւասարդի) ի Ժ եւ Են Աւետեաց Աստուածածնի» ցույց ենք տվել, որ Նավասարդի 15-ը Հայոց շարժական տոմարի ամիս-ամսաթիվ է: Հիշյալ Ճաշոցում ու Յասմավուրքներում գրանցված Նավասարդի 15-ը վերցվել է վաղ շրջանի բնագրերից և համարժեք է հուլյան տոմարի Ապրիլ 6-ին, երբ կատարվել է Ավետեաց Աստուածածնի տոնը, ուստի ստանում ենք հիշյալ ամսաթվի ստեղծման ժամանակը, այն է՝ Նավասարդի 15 = Ապրիլ 6, որտեղից Նավասարդի 1 = Մարտի 23 = 992-995 թթ.: Այդ հոդվածում ցույց ենք տվել, որ հիշյալ չորս տարիներից նախընտրելի է 992 թվականը: Ակնհայտ է, որ Վարդավառի տոնին նվիրված բնագրերը գրվել է 992 թ.: Նավասարդի 15-ը գալիս է 10-րդ դարի վերջերից: Այն հետագայում գրանցվել է իբրև Հայոց անշարժ տոմարի ամիս-ամսաթիվ համարժեք դառնալով Օգոստոս 25-ին, դրանով իսկ կորցնելով իր ամսաթվային նախնական իմաստը մանավանդ Ավետեաց Աստուածածնի տոնը, երբեք Օգոստոսի 25-ին չի կատարվել:

Այժմ բացատրենք Հայոց տոնացույցային եղանակը (մեթոդը), երբ հայոց գործող տոնացույցի հիման վրա առաջացել են բնագրերից մեզ հայտնի ամիս-ամսաթվային տվյալները:

Ընդունում ենք վերոհիշյալ Ճաշոցում կամ այլ բնագրերում վկայված տվյալները որպես գործածող տոնացույցի գրանցում Հայոց շարժական տոմարի ամիս-ամսաթվերով, որոնք արտացոլել են տոների կամ սրբերի հիշատակի օրերի համարժեքները տվյալ տարում կամ տարիների խմբերում: Միայն մեկ տարի ստացվում է բացառիկ դեպքերում, որովհետև ինչպես Հայոց շարժական տոմարի ամսաթվերն, այնպես էլ շաբաթական շաբթի (ցիկլի) վրա գործող տոնացույցի տարիները, կրկնվում են որոշակի պարբերությամբ՝ 120 կամ 28 տարվա սահմաններում: Վերցնում ենք Հայոց տոմարի ամիս-ամսաթիվը, որպես համարժեք տվյալ տոնի կամ հիշատակի օրվա և գործող տոնացույցային տարվա շարժական տոներով (Առաջավորաց Բարեկենդան, Բուն Բարեկենդան, Զատիկ, Պենտեկոստէ, Վարդավառ, Աստուածածին, Սուրբ Խաչ, Յիսնակամուտ) գտնում (որոշում) տվյալ տարին կամ տարիների սահմանափակ խումբը, երբ եղել է տվյալ տոնը հայոց շարժական տոմարի ամսաթվին և շաբաթվա օրը:

Քննարկվող մեթոդի կիրառման դեպքում մնում է հաստատուն Հայոց տոմարի ամիս-ամսաթիվն և տոնի շաբաթվա օրը, իսկ հուլյան ամսաթվերի համարժեքները լինում են տարբեր՝ տոնական օրվա շարժվող ամիս-ամսաթվերի սահմաններում, այսինքն հիմնականում ելնում ենք Հայոց շարժական տոմարի ամսաթվերից, Հայոց շարժական տոներից, և ստանում նրանց հուլյան տոմարի համարժեքները կամ հակառակը: Բերենք մի քանի ամսաթվային տվյալներ և կիրառենք հայոց տոնացույցային եղանակը: 832 թվահամարի Հայոց Ճաշոցում գրված է. «Տրէի Ի (Նոյեմբեր 28). Նաւակատիք կաթողիկէ եկեղեցոյ...»:

Ըստ 4139 թվահամարի (1267 թ.) «Տոնապատճառի» բնագրի՝ «Յաղագս նաւակատեաց եկեղեցոյ, որ զկնի Պենտակոստէին Ի-ն (20) Տրէ ամսոյ, զոր Հայաստանեացս տօնէ եկեղեցի, ի Դաւթայ շարագրէալ զաւանդից իմաստնոց»<sup>1</sup> (էջ 270ա):

<sup>1</sup> Տե՛ս նաև Փ. Անթապյան, Վարդան Արևելցի, Գիրք Ա, Ե., 1987, էջ 229:

Տրէ 20-ը վկայվել է Վենետիկի 639 և Երևանի 6235 թվահամարների ճաշոցներում, ինչպես և տոնապատճառների ընդօրինակութունների մեջ՝ բերվելով նավակատեաց տոնին նվիրված մեկնության նույն բնագրի ընդօրինակութունները<sup>1</sup>: Թարգմանված տոնացույցում և տարբեր խմբագրություններում Ցայսմավորքներում Տրէ 20-ի տակ չի գրանցված «Նաւակատիք եկեղեցոյ» տոնի կանոնը: Ասենք, որ Հայոց անշարժ տոմարի Տրէ 20-ին (=Նոյեմբեր 28) երբեք եկեղեցու նավակատիքի տոն չի կատարվել, ուստի վերանում է Նոյեմբեր 28 համարժեքը և Տրէ 20-ը անկասկած դառնում է Հայոց շարժական տոմարի ամսաթվային նշում, որի հուլյան համարժեքը կարող ենք գտնել կիրառելով Հայոց տոնացույցային եղանակը: Հայոց հնագույն տոնացույցերից հայտնի է, որ եկեղեցու նավակատիքի տոնը կատարել՝ են Պենտեկոստից (Հոգեգալստից) հաշված 8-րդ օրը, Կիրակի, ուստի հիշյալ տոնը Հայոց շարժական տոմարի Տրէ 20-ին կարող էր լինել ըստ «Հայոց տոնացույց» ծրագրի հաշվումների հետևյալ տարիներին:

Ներկա թվական	Հուլյան ամիս	Հուլյան ամսաթիվ	Ծաբաթվա օր	Հայոց թվական	Հայոց ամիս	Հայոց ամսաթիվ	Ծաբաթվա օր
1090	6	16	1	539	4	20	1
1104	6	12	1	553	4	20	1
1118	6	9	1	567	4	20	1
1132	6	5	1	581	4	20	1

Ի դեպ, եկեղեցու նավակատիքի տոնը կատարվել է հուլյան տոմարի Մայիսի 17-Հունիս 20-ի սահմաններում: Պարզ է դառնում, որ Տրէ 20-ի Հայոց շարժական տոմարի ամիս-ամսաթիվը հետագայում ընդօրինակված ճաշոցներն ու Տոնապատճառները քաղել են 1090 թ. կամ 1104 թ. գրված բնագրից: Միաժամանակ հասկանալի է, որ վերոհիշյալ Տոնապատճառի մեջ հիշված Դավիթը Քոբայրեցին է, որը 1090 թվին կամ 1104 թ. գրել է մեկնություն եկեղեցու նավակատեաց տոնի հիշյալ օրվա կապակցությամբ, որն էլ մեզ է հասել Տոնապատճառի հետագա ընդօրինակութուններով:

Բերենք հաջորդ օրինակը. Գ. Տեր-Մկրտչյանը վկայել է մի (Երևանի 1522 թվահամարի - Ռ. Վ.) ճառընտիրի հիշատակարաններից մեկը, որտեղ գրված է. «Մինչ յայս ճառեի, յամսեանն Հրոտից, որ աւր Ա եր և առաջին ծնընդեան պահոցն...»<sup>2</sup>: Նա շարունակել է. «Այս խոսքերից հետևում է, որ ճառընտիրս և նրա գրիչների գերավարության ձմեռը («գի ժամ էր ձմեռահին») մի այնպիսի տարի էր, որ ծննդյան պատի առաջին օրը ընկնում էր Հրոտից ամսի մեկին»<sup>3</sup>: Գ. Տեր-Մկրտչյանը նավասարդի 1-ի միջոցով գտնում է 1185-1188 թթ. քառամյակը և եզրակացնում. «ուրեմն և այդ թվերին միայն կարող էր գրված լինել այս ճառընտիրը՝ Հայոց Ուր-Ուրէ թվերին»<sup>4</sup>: Մենք «Տոմար» ծրագրի օգնությամբ վերահաշվարկեցինք վերոհիշյալ վկայության տվյալները ոչ թե նավասարդի 1-ը գտնելով, այլ հենց Մենդեան Պահքի առաջին օրը, որը եղել է Հրոտից մեկին:

1 Տե՛ս Ձեռ. № 1324, էջ 83բ-85բ, 5561 էջ 201բ, 3082 էջ 222բ, 2195 էջ 356ա, 1979, էջ 275ա:  
 2 Գ. Տեր-Մկրտչյան, Ազաթանգեղոսի աղբյուրներից, Բ. Ա. էջ 322:  
 3 Աճղ, էջ 322:  
 4 Աճղ, էջ 324:

Հայոց Ուր-Ուր թվականներին, որոնք զուգադրելի են ներկա 1184-1187 թթ., Հրոտից 1-ը համարժեք է Դեկտեմբերի 30-ին, որն անշարժ կարգով ընդունվել է Քրիստոսի Մենդեան տոնին նախորդող պահքի սկիզբ կամ առաջին օր:

Վերականգնենք Քրիստոսի Մենդեան պահքի օրերը Հայոց Ուր-Ուր թվականների համար: Ստանում ենք հետևյալ արդյունքները:

Հայոց Ուր թվական (= 1184 թ.)

- Հրոտից 1 = Դեկտեմբեր 30 = Կիրակի = Պահք Մենդեան Քրիստոսի
- Հրոտից 2 = Դեկտեմբեր 31 = Երկուշաբթի = Պահք — „ —
- Հրոտից 3 = Հունվար 1 = Երեքշաբթի = Պահք — „ —
- Հրոտից 4 = Հունվար 2 = Չորեքշաբթի = Պահք — „ —
- Հրոտից 5 = Հունվար 3 = Հինգշաբթի = Պահք — „ —
- Հրոտից 6 = Հունվար 4 = Ուրբաթ = Պահք — „ —
- Հրոտից 7 = Հունվար 5 = Շաբաթ = Ճրագալույց

Հայոց Ուր թվական (= 1185 թ.)

- Հրոտից 1 = Դեկտեմբեր 30 = Երկուշաբթի = Պահք Մենդեան Քրիստոսի
- Հրոտից 2 = Դեկտեմբեր 31 = Երեքշաբթի = Պահք — „ —
- Հրոտից 3 = Հունվար 1 = Չորեքշաբթի = Պահք — „ —
- Հրոտից 4 = Հունվար 2 = Հինգշաբթի = Պահք — „ —
- Հրոտից 5 = Հունվար 3 = Ուրբաթ = Պահք — „ —
- Հրոտից 6 = Հունվար 4 = Շաբաթ = Բարսեղի և այլոցն
- Հրոտից 7 = Հունվար 5 = Կիրակի = Ճրագալույց

Հայոց Ուր թվական (= 1186 թ.)

- Հրոտից 1 = Դեկտեմբեր 30 = Երեքշաբթի = Պահք Մենդեան Քրիստոսի
- Հրոտից 2 = Դեկտեմբեր 31 = Չորեքշաբթի = Պահք — „ —
- Հրոտից 3 = Հունվար 1 = Հինգշաբթի = Պահք — „ —
- Հրոտից 4 = Հունվար 2 = Ուրբաթ = Պահք — „ —
- Հրոտից 5 = Հունվար 3 = Շաբաթ = Պահք — „ — Բարսեղի և այլոցն
- Հրոտից 6 = Հունվար 4 = Կիրակի
- Հրոտից 7 = Հունվար 5 = Երկուշաբթի = Ճրագալույց

Հայոց Ուր թվական (= 1187 թ.)

- Հրոտից 1 = Դեկտեմբեր 30 = Չորեքշաբթի = Պահք Մենդեան Քրիստոսի
- Հրոտից 2 = Դեկտեմբեր 31 = Հինգշաբթի = Պահք — „ —
- Հրոտից 3 = Հունվար 1 = Ուրբաթ = Պահք — „ —
- Հրոտից 4 = Հունվար 2 = Շաբաթ = Պահք — „ — Բարսեղի և այլոցն
- Հրոտից 5 = Հունվար 3 = Կիրակի = Պահք — „ —
- Հրոտից 6 = Հունվար 4 = Երկուշաբթի = Պահք — „ —
- Հրոտից 7 = Հունվար 5 = Երեքշաբթի = Ճրագալույց — „ —

ՈԼԳ թվականին (= 1184 թ.) իսկապես Հրոտից 1-ը համարժեք է Դեկտեմբերի 30-ին և կանոնի համաձայն Քրիստոսի Մենդեան Պահքի սկիզբ, սակայն Կիրակի ընկնելու պատճառով Պահքի առաջին օրն ընկել է Հրոտից 2-ին (= Դեկտեմբեր 31), քանի որ պահքը հինգ օրից պլե-լին չէր կարող լինել, ուստի այդ տարին դուրս է գալիս մրցակցությունից: Այլ խոսքով, Հայոց շարժական տոմարի Հրոտից 1 (= Դեկտեմբեր 30)-ին է ընկել Քրիստոսի Մենդեան Պահքի առա-ջին օրը Հայոց ՈԼԳ-ՈԼԳ թվերին (= 1185-1187 թթ.): Պարզվում է, որ քննարկվող ճառընտիրը գրվել է 1185-1187 թթ.: Այդ ճառընտիրն այժմ կրում է Երևանի Մատենադարանի 1522 թվա-համարը:

Ասենք, որ Երևանի Մատենադարանի 3777 թվահամարի ճառընտիրը ևս օգտվել է 1185-1187 թթ. գրված գրչագրից: Այնտեղ Մարկոսը գրում է. «Մինչ յայս ճառէի, յամսեան Հրոտից, որ աւր Ա էր, եւ առաջին Մենդեան Պահոցն, էհաս բարկութիւն սաստիկ յԱստուծոյ ի վերա մեք՝ յաղագս ծովացեալ մեղաց մերոց: Զի արք համբ > համբարիշտք շարախաւսեցին զմենջ ի Դուին, եթէ գողի հացին տուեալ, եւ յանկարծ էհաս զաւրք հեծելոց ի վերաց մեր, որ եաք հինգ հոգի բնակեալ Ե խցի ի փախուցեալ յաշխարհի սբաղմանց, բնակեալ յանապատ. ոչ գործելով զգործ անապատի, հալածեալ եղեաք, որոյ] ձերբակալ արարեալ զՄիսիթար, զԿիրակոս, զՊաւ-ղոս, զՍտեփաննոս յիւրաքանչիւր խցերսն: Զի ժամ էր ձմերաին, եւ զամենայն կենաց մեր զպատճառ, աւարի առեալ տարան ի Դուին: Զիս միայն թողլով՝ յաղագս տկարութեան իմոյ], զի Ա ոտս կարծեալ էր, եւ ոչ կարեի ընթանալ...»<sup>1</sup>: Այստեղ ևս Քրիստոսի Մենդեան Պահքի օրը գտնելով, ինչպես վերևում, կարող ենք պնդել, որ քննարկվող գրչագիրն ընդօրինակվել է 1185-1187 թթ. գրված նախնական օրինակից, ինչպես 1522 թվահամարի գրչագիրը:

Քննարկվող ձաշոցում և այլ բնագրերում հանդիպում են Հայոց շարժական տոմարի ամ-սաթվային նշումներ, որոնք ակնհայտորեն կապ չունեն տոնացույցային եղանակով առաջացած ամսաթվերի հետ: Նրանց վրա պետք է կիրառել միայն Հայոց տոմարական եղանակը: Այսպես «Վկայաբանութիւն Ս. Թաղ[ե]ղեայ» բնագրի ընդօրինակությունից մեջ կարդում ենք, որ նա նա-հատակվել է «յառաջ քան զինն կաղանդացն [Յունիսի] (=Մայիս 24) յամսեանն Հոռի, որ օր ԻԳ (23) էր ամսոյն»<sup>2</sup>:

Մայիսի 24-ը Թալելեա բժշկի հիշատակի օր են վկայել Գրիգոր Վկայասերի Տօնանամակի խմբագրությունների մեջ<sup>3</sup>, 940 թվահամարի ձաշոցում, Հայոց Յայսմավուրքների (մինչև Գրի-գոր Խլաթեցու) խմբագրությունները<sup>4</sup>:

Այնպես որ հիմնավորվում է «Յունիսի» վերականգնումը, քանի որ Մայիս 24-ը Հունիսի կաղանդից կամ 1-ից հաշված առաջ էր «քան զինն» օր: Այստեղ գործ ունենք Հայոց շարժա-կան տոմարի Հոռի 23-ի և հուլյան անշարժ տոմարի Մայիս 24-ի համարժեքների հետ: Հաս-կանալի է, որ կիրառելի է Հայոց տոմարական եղանակ: Այն գործադրելով ըստ «Տօմար» ծրագրի հաշվումների ստանում ենք, Հոռի 23 = Մայիս 24 (որտեղից Հոռի 1 = Մայիս 2) = 952-955 թթ.: Հաշվումները ցույց են տալիս, որ Թալելեա բժշկի վկայաբանությունը հունարենից հայերեն է թարգմանվել 10-րդ դարի 50-ական թվականների սկզբներին և Հայոց թարգմանիչը բերել է ոչ միայն նրա նահատակության հուլյան ամիս-ամսաթիվը, այլև դրել է նրա Հայոց շարժական տոմարի համարժեքը, որով հնարավորություն է տվել թվագրման: Հայոց տոնացույցերի և ճա-շոցների խմբագրությունների մեջ Թալելեա բժշկի և Թեոդոտոն Գաղատացու հիշատակի օր են

սահմանել Հոգեգալստեան կիրակիից հաշված 26-րդ օրը՝ Հինգշաբթի: Այդ կանոնին 14-րդ դա-րի սկզբներից ավելացրել են Անկյուրիայում նահատակված 7 կույսերի հիշատակի օրը, որոնց մասին խոսք կգնա հետագա քննությունից մեջ:

Բերենք հաջորդ օրինակը: Հայոց բոլոր տոնացույցերի խմբագրությունների ընդօրինա-կությունների մեջ Կալիստրատոսի և նրա 49 ընկերների հիշատակի օր են կանոնել ինչպես կիրակիից հաշված 28-րդ օրը՝ շաբաթ, որն ընկնում է Հոկտեմբեր 11 ± 3 օր կամ Հոկտեմբեր 8-ից 14-ն լինող շաբաթ օրը: Բնագրերում հանդիպում են Կալիստրատոսի և նրա 49 ընկերների հիշատակի օրվա հուլյան տոմարի Սեպտեմբերի 27-ը (և մասամբ Սեպտեմբերի 20-ը):

Իսկ «Վկայաբանութիւն սրբոյն Կաղիստրատոսի եւ որք ընդ նմա» վերնագիրը կրող բնագրում գրված է. «Եւ կատարեցան սուրբքն յամսեան Հոռի, որ աւր ԻԸ (28) էր...» (Փարիզի 178 թվահամարի գրչագիր, ՃԼԸ համարի տակ): Մյուս տեղեկությունները կերենք նրանց հի-շատակի օրվա քննությունից մեջ: Այլ խոսքով ունենք Կալիստրատոսի և նրա 49 ընկերների վկայման օրը մի դեպքում Հայոց շարժական տոմարի Հոռի 28-ը, մյուս դեպքում՝ հուլյան տո-մարի ամիս-ամսաթվեր, այն է՝ Սեպտեմբերի 27 (մասամբ Սեպտեմբեր 20) և Հոկտեմբեր 11 ± 3 օր: Հայոց շարժական տոմարի Հոռի 28-ը չի առաջացել տոնացույցային եղանակով, որովհետև տալիս է 4-րդ դարի վերջի և 5-րդ դարի սկզբների տարեթվեր, երբ Կալիստրատոսի և նրա 49 ընկերների հիշատակի օրը նշել են անշարժ տոնական օրով: Կիրառենք Հայոց տոմարական ե-ղանակը, ըստ «Տօմար» ծրագրի հաշվումների. ստանում ենք հետևյալ արդյունքները.

ա) Հոռի 28 = Սեպտեմբեր 27 (որտեղից Հոռի 1 = Օգոստոս 31) = 468-471 թթ.:

բ) Հոռի 28 = Սեպտեմբեր 20 (որտեղից Հոռի 1 = Օգոստոս 25) = 492-495 թթ.:

Նախընտրում ենք Ա տարբերակը, որովհետև Կալիստրատոսի և նրա ընկերների վկայու-թյան օրը, ինչպես փաստել են տարաբնույթ բնագրերի ճշող մեծամասնությունը, որոնք կվկայվեն հետագայում, Սեպտեմբեր 27-ն է և նրանց հիշատակը նշել են այդ օրը՝ անշարժ տոնական օրով: Հետևում է, որ Կալիստրատոսի և նրա 49 ընկերների վկայաբանությունը հու-նարենից հայերեն է թարգմանվել 468-471 թթ. քառամյակում և թարգմանիչը հուլյան տոմարի Սեպտեմբերի 27-ը փոխարինել է Հոռի 28-ով, վերջինս պահպանվել է նրանց վկայաբանության հետագա ընդօրինակությունների մեջ: Հաշվումները ցույց են տալիս, որ «Վկայաբանութիւն սրբոյն Կաղիստրատոսի եւ որք ընդ նմա» բնագրի հավանական թարգմանիչը կամ թարգմա-նություն պատվիրողը կարող էր լինել Գյուլտ կաթողիկոսը:

Հիշյալ սրբերի տոնական օրերի քննությունը կատարել ենք ուսումնասիրության մեջ: Այստեղ միայն նշենք, որ Կալիստրատոսի և նրա ընկերների հիշատակը վաղ շրջանում տոնել են անշարժ օրով՝ Սեպտեմբերի 27-ին: Հետագայում, դժվար է ասել Հովհան Օձնեցու ձաշոց-Տոնացույցում թե նրա խմբագրություններից մեկում, Կալիստրատոսի և նրա 49 ընկերների հի-շատակի օրը վերածվեց շարժական տոնի և դրվեց ինչպես կիրակիից հաշված 28-րդ օրը, շաբաթվա կանոնի տակ, որը գտնում ենք 13-րդ դարի հնագույն տոնացույցերի խմբագրու-թյունների մեջ:

Բերված օրինակները բավարար են, որպեսզի պարզ դառնա, որ Հայոց տարաբնույթ բնագրերում, որոնց թվում Հայոց անշարժ տոմարի կառուցվածքով գրված ձաշոցներում, ամիս-ամսաթվերն առաջացել են տարբեր ճանապարհներով, ուստի յուրաքանչյուր ամիս-ամսաթվա-յին նշում պետք է վերլուծել առանձին-առանձին և գտնել դրանց ստեղծման ընդունելի տար-բերակը, վկայակոչելով ոչ միայն տվյալ ձաշոցի, այլ նաև այլ բնագրերի մեջ փաստագրված տեղեկությունները: Սկսենք 832 թվահամարի ձաշոցի մեջ գրանցված տվյալներից, որոնք բեր-վել են Հայոց անշարժ տոմարի տոնական տարվա կտրվածքով:

1 Տե՛ս Ձեռ. № 3777, էջ 319ա, տե՛ս նաև Ա. Մաթևոսյան, Գշվ. աշխ., էջ 285-286:

2 Վարք և Վկայաբանութիւն սրբոց, Վեճեփիկ, 1874, Բ. Ա, էջ 503:

3 Տե՛ս Ձեռ. № 979, էջ 366ա-367ա:

4 Տե՛ս Վեճեփիկի 1048 թվահամարի գրչագիրը, 3082, էջ 396ա-բ, 179, 2695, էջ 132ա-133բ, 9585, էջ 228ա-229ա, 4741, էջ 295բ-297բ, 7433, էջ 328բ-330ա և այլն:



Ըստ 832 թվահամարի գրչագրի՝ «Նաւասարդի Ա (= Օգոստոս 11). Յիշատակ Յովհաննու Մկրտչի»: Այդպիսին են նաև Վենետիկի 639 և Երևանի 4977 թվահամարների ճաշոցների տվյալները:

Ըստ Յայսմավուրքի Տեր-Իսրայելի խմբագրութեան. «Նաւասարդի ամսոյն ի մինն և Աւգոստոսի ԺԱ. Տաւն է Յովաննու Կարապետին (Մկրտչին). կարգեալ սրբոյն Գրիգորի Լուսաւորչէն մերոյ»<sup>1</sup>:

Ըստ Յայսմավուրքի Կիրակոս Գանձակեցու խմբագրութեան տարբերակների.

Ա. «Նաւասարդի Ա, որ է Աւգոստոս ԺԱ (լուս.). Յովաննու Մկրտչի(ի) և Աթանագին...»<sup>2</sup>:

Բ. «Նաւասարդի Ա եւ Աւգոստոս ԺԱ.

Տաւն է Յովաննու Մկրտչին...»<sup>3</sup>:

Գ. «Նաւասարդի ամսոյ Ա եւ Աւ ԻԳ եւ Աւգոստոս ԺԱ. Տաւն է Յովհաննու Կարապետին, զոր կարգեաց սուրբն Գրիգոր Հայոց Լուսաւորչին յԱշտիշատ»<sup>4</sup>:

Դ. «Նաւասարդի ամսոյ ի մինն եւ Աւ Եփրայեցոց ԻԳ եւ Հոռմայեցոց Աւգոստոս ԺԱ. Տաւն է Աթանագին է Եպիսկոպոսին, զոր Սուրբ Գրիգոր Լուսաւորչին մեր երբերի ի Հայս»<sup>5</sup>:

Ըստ Յայսմաւուրքի Գրիգոր Խլաթեցու խմբագրութեան «եւ ի սոյն աւուր ի Նաւասարդի ի Ա, որ տօնէին Հայք, այնմ բազնացն օր անդ էին և պղծոյն Արամազդայ գնոյն փոխեաց Լուսաւորչին: Եւ ի նոյն կարգեաց ամ յամէ տօն կատարել սուրբ Կարապետին մեծաւ Հանդիսի ի Նաւասարդի ի Ա»<sup>6</sup>:

Հովհաննես Մկրտչին կամ Կարապետին նվիրված տոնական օրերի քննութեան մեջ, որը դրվել է առանձին վերնագրի տակ, երևում է, որ Նավասարդի մեկը հետագա բնագրերը կարող էին վերցնել 7-րդ դարի սկզբներից, ավելի ստույգ 620-623 թթ. բնագրից, երբ Հովհաննես Մկրտչի տոնը Հունիս 24-ին էր և կատարվել է անշարժ ամսաթվով, ինչպես և 8-րդ դարի սկզբների բնագրերից, երբ նրա և Աթանագին էի տոնը տեղափոխվել է Պենտեկոստեից Հաշված 12-րդ օրը հինգշաբթի իբրև շարժական տոն: Վերջպես 9-րդ դարի 2-րդ կեսի բնագրերից, երբ Հովհաննես Մկրտչի տոնը տոնել են Ջատիկից հետո եկող շաբաթ օրը նույնպես իբրև շարժական տոն: Այլ խոսքով Հովհաննես Մկրտչի (մասամբ Աթանագին էի) հիշատակը տոնել են տարբեր օրերի՝ տոնական տարվա կտրվածքով և տարբեր ժամանակներում նրա հիշատակի օրը համընկել է Նաւասարդի 1-ին, դեռ ավելին Նաւասարդի 1-ը հիմք է դարձել Հովհաննես Մկրտչի նոր տոնական օրերի առաջացմանը նույնիսկ 13-րդ դարում, որոնց թվում Հայոց անշարժ տոմարի Նավասարդի 1-ին (= Օգոստոս 11):

Վերը բերված բնագրերի մեջ խոսքը գնում է Հայոց անշարժ տոմարի հիման վրա առաջացած տոնի օրվա մասին, որը սկիզբ է առել 11-րդ դարի վերջերից և տոնվել հետագայում ժամանակի մի որոշակի հատվածում անշարժ կերպով Հովհաննես Մկրտչին նվիրված շարժական տոների հետ միասին: 14-րդ դարից հետո բացի Յայսմավուրքային տվյալներից, որևէ վկայություն չենք գտնում Հովհաննես Մկրտչի Նավասարդի 1 (= Օգոստոս 11)-ին կատարվելիք տոնի մասին:

1 Վեներտիկի 631 թվ. ձեռագիր, Երևան 2695 թվահամարի ձեռագիր, էջ 214բ:  
2 Ձեռ. № 3082, էջ 389ա:  
3 Ձեռ. № 179:  
4 Վեներտիկ 189 թվ. ձեռագիր:  
5 Ձեռ. № 7433, էջ 1գ:  
6 Յայսմաւուրք Կ. Պօլիս, 1706 (1708), էջ 14, ձեռ. № 6338, 3ա:

Հայոց անշարժ տոմարի Նավասարդի 9-ին համարժեք Հուլյան տոմարի Օգոստոսի 19-ին է վկայվել Ատոմեանց հիշատակի օրը:

832 թվահամարի ճաշոցում գրված է. «Նաւասարդի Թ (= Օգոստոս 19). Սրբոց Ատոմեանցն»: Նույնարժեք տեղեկություններ ենք գտնում Վենետիկի 693, Երևանի 6235, 3266, 4916 թվահամարների ճաշոցներում: Իսկ 4514 թվահամարի ճաշոցը գրանցել է. «Նոյ[եմբերի] Թ (փոխանակ Նաւասարդի). Ատոմե[ախցն... (ներքին լուսանցքում՝ «Երկուշաբթի. Սրբոց Ատոմեանցն») (էջ 36 ա):

Վերոհիշյալ բնագրի Նոյեմբեր 9-ի համարժեքը գրչական սխալ է և պետք է լիներ Նաւասարդի Թ, քանի որ Նաւասարդի 9 = Նոյեմբերի 9, որտեղից Նաւասարդի 1 = Նոյեմբերի 1 = 100 - 103 թթ., համարժեքութեամբ ստացված տարիներով Նոյեմբերի 9-ի առավել ևս Նավասարդի 9-ի հետադարձ Հաշիվը բացառում ենք: Հայոց տոնացույցում Ատոմեանց հիշատակի օր է սահմանվել Առաջավորաց Բարեկենդանի կիրակիին հաջորդող կիրակիից հետո եկող երկուշաբթի օրը, այսինքն Առաջավորի կիրակիից Հաշված 9-րդ օրը, որն ընկնում է Հուլյան տոմարի Հունվարի 20-ից մինչև Փետրվարի 23-ը կամ Ջատիկից ետ Հաշված 63-րդ օրը, այսինքն Ատոմեանց հիշատակի օրը եղել է Նավասարդի 9-ին, իսկ Ջատիկը Սահմի 13: Այն ըստ «Հայոց Տոնացույց»-ի Հաշվումների եղել է.

Ներկա թվական	Հուլյան ամիս	Հուլյան ամսաթիվ	Օարաթվա օր	Հայոց թվական	Հայոց ամիս	Հայոց ամսաթիվ	Օարաթվա օր
1241	1	28	2	690	1	9	2
1255	1	25	2	704	1	9	2
1269	1	21	2	718	1	9	2

Նավասարդի 9-ի ամսաթիվը չի առաջացել Ատոմեանց տոնի օրվա նշումից, քանի որ Նավասարդի 9-ը վկայվել է 1154/5 թթ. գրված ճաշոցում, իսկ ըստ տոնական օրվա ստացվում է 13-րդ դարի 40-60-ական թվերից երեքը, ինչպես գտանք վերևում: Ակնհայտ է, որ Ատոմեանց հիշատակի օրվա նշումը՝ Նավասարդի 9-ը Հայոց անշարժ տոմարի ամիս-ամսաթիվ է: Այդպես էլ գրանցվել են թե ճաշոցների, թե Յայսմավուրքների տարբեր խմբագրությունների մեջ:

940 թվահամարի ճաշոց-Տոնացույցում գրված է. «Աւգոստոս ԺԹ և Նաւասարդ Թ. Ատոմեանց...» (ձեռ համարի տակ):

Տեր-Իսրայելի խմբագրած Յայսմաւուրքում կարդում ենք, «Նաւասարդի Թ և Աւգոստոս ԺԹ. Սրբոց Ատոմեանցն և որդոյ նորին և Վարսա[յ] և Ներսեհի և Վարձաւորին և ընկերացն...»<sup>1</sup>: Կիրակոս Գանձակեցու Յայսմաւուրքի խմբագրութեան մեջ գտնում ենք՝

ա. «Նոր[ին][Նաւասարդի] Թ. Ատոմեանց... ԺԹ ([Աւգոստոս])»<sup>2</sup>:

բ. «[Նաւասարդի] Թ.... Յայսմ աւուր վկայութիւն սրբոց Ատոմեանց ի Հայք. ԺԹ (Աւգոստոս)»<sup>3</sup>:

1 Ձեռ. № 2695, էջ 226ա:  
2 Ձեռ. № 3082, էջ 389ա:  
3 Ձեռ. № 179:

գ. «Նաւասարդի Թ. եւ յԱւգոստոս ԺԹ եւ Իլուլ Ա... եւ վկայութիւն սրբոց Ատոմեանցն...»<sup>1</sup>:

դ. «Նաւասարդ Թ եւ յԱւգոստոս ԺԹ. վկայութիւն սրբոյն Ատոմա[յ] և որդոյ նորին եւ Վարսա[յ]եւ Ներսէհի և Վարսաւորին և ընկերացն»<sup>2</sup>:

Գրիգոր Խլաթեցու խմբագրած Յայսմավուրքների տարբերակներն՝ «Նաւասարդի Թ եւ Օգոստոսի ԺԹ. վկայարանութիւն սրբոց Ատոմեանց[ն] [նահատակացն]»<sup>3</sup>:

Նավասարդի 9 = Օգոստոսի 19-ով ստանում ենք Սարկավագադիր տոմարի սկզբնավորման տարին, ուստի այն ժամանակագրական կտրվածքով որևէ բան չի ավելացնում:

Ատոմեանց նահատակութեան հուլյան համարժեքը հայտնի չէ, իսկ Հայոց Նավասարդի 9-ը գալիս է Հայոց անշարժ տոմարի ամիս-ամսաթվերից: Հայոց տոնացույցային եղանակը բացառում է Նավասարդի 9-ը կապել Ատոմեանց հիշատակի օրվա հետ, որը կատարվել է Հունվար 20 - Փետրվար 23-ի սահմաններում: Մնում է սպասել սկզբնաաղբյուրների նոր հաղորդումների, որոնք հնարավորություն տան որոշելու Ատոմեանց նահատակութեան անշարժ տոնի օրվա հուլյան համարժեքը: Ըստ երևույթին Ատոմեանց նահատակութեան օրը վաղ շրջանում տոնել են լոկալ ձևով անշարժ տոմարի համարժեքով, որը մեզ չի հասել: Համենայն դեպս 8-րդ դարից սկսած, երբ Ատոմեանց տոնը նշել են շարժական ձևով, նույնպես որևէ ամիս-ամսաթվային տվյալ չի պահպանվել: Մեզ է հասել Նավասարդի 9-ը որպես Հայոց անշարժ տոմարի ամիս-ամսաթիվ գրանցված 12-րդ դարի կեսերից: Եթե Նավասարդի 9-ը հայոց շարժական տոմարի ամսաթիվ է, ապա նրա հուլյան համարժեքը գտնված չէ, իսկ վերը նշված հուլյան համարժեքներից Օգոստոսի 19-ը գալիս է հայոց անշարժ տոմարից:

Նավասարդի 9-ը ընդունելով հայոց շարժական տոմարի ամիս-ամսաթիվ, իսկ Օգոստոսի 1-ը նրա անշարժ տոմարի համարժեք ստանում ենք Ատոմեանց հիշատակի օրվա տարիները քառամյա կտրվածքով, այն է՝ Նավասարդի 9 = Օգոստոս 1, որտեղից Նավասարդի 1 = Հուլիս 24 = 500-503 թթ.:

Բյուզանդարան պատմությունների հեղինակը գրում է, որ պատերազմի նահատակների համար, որոնք զոհվել էին հանուն քրիստոնեության, դեռևս Վրթանես կաթողիկոսը սահմանել էր հիշատակի օր: Այդ հիշատակի օրը 5-րդ դարի սկզբների հեղինակները համարել են Մակարայեցոց օրվա հետ, որը «Կանոնք ընթերցուածոց»-ում Օգոստոսի 1-ին է: Ահա այդ է պատճառը, որ հնարավոր է դառնում ենթադրել Ատոմեանց հիշատակի օրվա հուլյան համարժեքը և Նավասարդի 9-ը դիտելով հայոց շարժական տոմարի ամսաթիվ որոշել այն տարիների քառամյակը, երբ նշել են նրանց հիշատակի օրը անշարժ ձևով: Այս մի տարբերակ է, որը լրացուցիչ հիմնավորման կարիք ունի, թեև տեսականորեն Ատոմեանք պատերազմի նահատակներ էին, որոնք զոհվեցին հանուն քրիստոնեության: Եթե մեր առաջարկած տարբերակն ընդունվի, ապա կունենան Ատոմեանց հիշատակի օրվա՝ Օգոստոս 1-ի, հայոց շարժական տոմարի նավասարդի 9-ի համարժեքը՝ 6-րդ դարի սկզբների կտրվածքով:

\*\*\*

Նավասարդի 15-ը, որն առաջացել է Հայոց շարժական տոմարից և համարժեք էր Ապրիլ 6-ին որպես Աւետեաց Աստուածածնի տոնական օրվա նշում, վերլուծեցինք վերը և ցույց տվեցինք, որ այդ ամսաթիվը գալիս է 992 թվականին գրված Վարդավառի տոնի մասին բնագրից:

1 Ձեռ. № 189 (Վեներիկ):

2 Ձեռ. № 7433, էջ 10բ:

3 Տպագիր, էջ 33-35, Ձեռ. № 6338, էջ 19ա, 7468 և այլն:

\*\*\*

832 թվահամարի ձաշոցը Սուքիասեանց հիշատակի օրվա առթիվ գրանցել է.

«Նաւասարդի Ժէ (= Օգոստոս 27). Սրբոց քաւչիցն Սրբիսուս» (վերջին բառն աղավաղված է, թերևս եղել է Սուքեասեանց):

Վենետիկի 639 թվահամարի նույնատիպ ձաշոցը նշել է. «Նաւասարդի Ժէ. Սրբոց քաւչիցն...»:

Գրիգոր Վկայասերի Տօնանամակի (979 թվահամարի ձեռագիր) խմբագրության բնագրի ցանկի մեջ գրված է «Նորին (Հոկտեմբեր) ԻՅ Սուքիասանցն» (էջ 5ա), իսկ հիմնական բնագրի մեջ Սուքիասանց հիշատակի օրվա նշումը ձևակերպվել է այսպես. «Դարձեալ Իէ (= Հոկտեմբեր). Վկայութիւն սրբոց Սուքիասանցն, որք ի Հայք կատարեցան...» (էջ 399ա):

940 թվահամար ճաշոցը ձժԴ (114) համարի տակ վկայել է. «Աւգոստոս Իէ եւ Նաւասարդի Ժէ. Սրբոց Սուքիասանցն, [ո]րք Սուկաւ լերինն...»:

6235 թվահամարի (1325 թ.) ձաշոցը Առաջավորաց Բարեկենդանի և Բուն Բարեկենդանի միջև ընկած հատվածում տալիս է. «Նաւասարդի Ժէ. Քաւչիցն Սուկաւ...» (113բ):

7741 թվահամարի (1360 թ.) ձաշոցը Առաջավորաց Բարեկենդանի կիրակին հաջորդ կիրակիից հետո եկող երեքշաբթի օրվա կանոնը ձևակերպել է այսպես. «Գշ (= երեքշաբթի). Սրբոց Սուքիասեանց...» (ներքին լուսանցքում՝ «Գշ. Սրբոց Սուքիասեանց») (էջ 51ա):

Այդպիսին են նաև 4107 թվահամարի ձաշոցի տվյալները (էջ 93): 3266 թվահամարի ձաշոցն ունի՝ «Նաւասարդի Ժէ. Սրբոց քաւչիցն...» (146ա):

4515 թվահամարի (1323 թ.) ձաշոցը վկայել է. «Նաւասարդի Ժե. Սուքիասեանցն... (ներքին լուսանցքում՝ երեքշաբթի. Սրբոց Սուքիասեանցն...)» (էջ 36բ):

Նավասարդի Ժե են տալիս նաև 4916 և 936 թվահամարների գրչագրերը (էջ 74ա-բ և 61բ):

4977 թվահամարի բնագիրն ունի՝ «Նաւասարդի Ժէ. Սրբոց քոչիցն...» (էջ 51բ):

Հայոց տոնացույցերը միանշանակ Առաջավորի կիրակին հաջորդող կիրակիից հետո եկող երեքշաբթի դրել են Սուքիասեանց հիշատակի օրը. «Գշ. Սուքիաս[ե]անց[ն]»<sup>1</sup>:

Յովսեփ Կոստանդնուպոլսեցու Տոնացույց-Յայսմավուրքի խմբագրությունը Հոկտեմբեր 27-ի կանոնի տակ գրել է. «Իէ. Սուքիասեանք ի Սուքաւետ լերին...»<sup>2</sup>:

Վենետիկի 710 թվահամարի Գրիգոր Անավարզեցու խմբագրած Յայսմավուրքը, որը հիմնականում հուլյան և հայոց անշարժ տոմարի ամսաթվերով են, վկայել է. «Սեպտեմբեր 2... - Սուքիասանց...»: Չի պահպանվել կամ չի գրվել հայոց անշարժ տոմարի համարժեքը:

Ըստ Տեր-Իսրայելի Յայսմավուրքի խմբագրությունների «(Տաւն է) սրբոց Սուքիասեանցն որ[ք] [վկայեցին] ի Սուկաւետ լերինն ի Հայս»<sup>3</sup>: Ըստ Կիրակոս Գանձակեցու Յայսմավուրքի խմբագրությունների՝

1. «Նոր[ին] [Նաւասարդի] Ժէ. Սրբոցն քաւչիցն...»<sup>4</sup>:

2. «Վկայութիւն սրբոց քաւչիցն, որք կատարեցան ի Բագրեանդ գաւառի Սուկաւետ լերինն]... Իէ [Աւգոստոս]»<sup>5</sup>:

1 Ձեռ. № 759, էջ 179բ, 179, էջ 539ա-540բ, 752, էջ 153ա-բ, 767, էջ 129ա, 2092, էջ 231ա-բ («ի Գաւասարդի Ժե» հավելումը), 5667, էջ 101բ-102ա, 7203, էջ 24ա, 9838, էջ 155ա, 4164, էջ 136բ և այլն:

2 Ոսկ., էջ 696:

3 Ձեռ. № 2695, էջ 233բ, 4741, էջ 10բ:

4 Ձեռ. № 3082, էջ 389ա:

5 Ձեռ. № 179:

3. «Նաւասարդի ժէ եւ Օգոստոս ԻԶ (ուղղել՝ Իէ) եւ Իլուլ Թ. վկայութիւն սրբոց Սուքիասանցն»:

4. «Նաւասարդի ժէ եւ յԱւգոստոս Իէ. վկայութիւն սրբոց Սուքիասանցն, որք վկայեցին ի Հայք ի լեառն Սուկաւետ»<sup>1</sup>:

Ըստ մի վկայաբանական ժողովածուի, որը կազմվել է տոնացույցային սկզբունքով, գրված է. «Վկայաբանութիւն սրբոց Սուքիասանցն, որք վկայեցին ի Հայք ի լեառն Սուկաւետ» վերնագրից հետո բովանդակութեան մեջ. «Գլխատեցին՝ յամսեան Նաւասարդի ժէ...» (էջ 2ա):

Ըստ Գրիգոր Խլաթեցու Յայսմաւուրքի խմբագրութեանը. «Նաւասարդի ժէ եւ Օգոստոս Իէ. վկայաբանութիւն սրբոց Սուքիասանց [Սուքիասանցն]»<sup>2</sup>:

Ե. Ավգերյանի տրամադրութեան տակ եղած Հայոց Յայսմաւուրքների ընդօրինակութեանը Սուքիասանց հիշատակի օրեր են գրանցել նաև Սեպտեմբերի 19-ը և Հոկտեմբեր 26-ը<sup>3</sup>:

Վերոհիշյալ բնագրերի մեջ փաստագրված Հայոց տոմարի ամիս-ամսաթիվերից նախընտրելի է Նաւասարդի ժէ (17) -ը, իսկ Նաւասարդի ժէ (15)-ը գրչական սխալի արդյունք է, որպես Ե-ի և Է-ի սովորական Համարվող գրչական սխալ, քանի որ Նաւասարդի 17-ը Հայոց անշարժ տոմարի ամիս-ամսաթիվ է, որի հուլյան Համարժեքն է Օգոստոսի 27-ը:

Հնարավոր է մտածել, որ վաղ շրջանում Նաւասարդի 17-ը գրանցվել է իբրև Հայոց շարժական տոմարի ամիս-ամսաթիվ, որը հետագայում վեր է ածվել անշարժի: Եթե այդպես է, ապա Նաւասարդի 17-ը պետք է տա դրական արդյունք, երբ կիրառենք Հայոց տոնացույցային կամ տոմարական մեթոդները:

Այսինքն տոնացույցային եղանակից: Վերոհիշյալ բնագրերից Հայտնի դարձավ, որ Սուքիասանց հիշատակի օր է սահմանվել Առաջավոր Բարեկենդանի կիրակիից հետո եկող կիրակիին Հաջորդող երեքշաբթի օրը կամ Զատիկից ետ Հաշված 62-րդ օրը, ուստի հիշյալ տոնը Նաւասարդի 17-ին կարող էր լինել, երբ Զատիկը Սահմի 18-ին էր: Այդպիսի տարիներ, ըստ «Հայոց տոնացույց»-ի Հաշվումների, եղել են.

Ներկա թվական	Հուլյան ամիս	Հուլյան ամսաթիվ	Շաբաթվա օր	Հայոց թվական	Հայոց ամիս	Հայոց ամսաթիվ	Շաբաթվա օր
1185	2	19	3	634	1	17	3
1199	2	16	3	648	1	17	3
1213	2	12	3	662	1	17	3
1227	2	9	3	676	1	17	3

Քանի որ քննարկվող ամսաթիվը արդեն գրանցված ենք գտնում 1154/5 թթ. գրված Ճաշոցում, ուստի Նաւասարդի 17-ի ամիս-ամսաթիվը չի առաջացել տոնացույցային ճանապարհով: Ասենք, որ Սուքիասանց նահատակության հիշատակի օրը Հայոց տոնացույցում շարժական էր, որի հետևանքով նրանց տոնի հուլյան Համարժեքներն էին Հունվարի 21-Փետրվար 24-ի ամսաթիվերից որևէ մեկը նայած տարի:

1 Ձեռ. № 7433, էջ 19ա:  
2 Տպագիր, էջ 52-56, Ձեռ. № 6338, էջ 31ա, 7468, 8913 և այլն:  
3 Լիակատար Վարք և վկայաբանություն Սրբոց, Բ. Բ, էջ 90-120:

Այժմ կիրառենք Հայոց տոմարական եղանակը: Նաւասարդի 17-ը Համարժեք ընդունելով Օգոստոս 27-ին, Սեպտեմբեր 6-ին և 19-ին, Հոկտեմբեր 25-ին, 26-ին և 27-ին, որոնք Սուքիասանց հիշատակի օրվա Համարժեքներ են գրանցվել Հայոց Յայսմաւուրքներում և Տոնացույցներում: Ըստ «Տոմար» ծրագրի Հաշվումների ստանում ենք հետևյալ արդյունքները.

1. Նաւասարդ 17 = Օգոստոս 27, որտեղից Նաւասարդ 1 = Օգոստոս 11 = 428-431 թթ.: Այս տարեթիվերը ցույց են տալիս Սարկավագադիր տոմարի սկզբնավորման վիճակը:

2. Նաւասարդ 17 = Սեպտեմբեր 6, որտեղից Նաւասարդ 1 = Օգոստոս 21 = 388-391 թթ.: Ինչպես այս, այնպես էլ հետագա տարեթիվերի Համար բացառում ենք հետագարձ Հաշիվները: Պարզ է, որ այս Հաշվարկը ևս ընդունելի չէ:

3. Նաւասարդ 17 = Սեպտեմբեր 9, որտեղից Նաւասարդ 1 = Սեպտեմբեր 3 = 336-339 թթ.: Ակնհայտ է, որ այս Հաշվարկը ևս ընդունելի չէ:

4. Նաւասարդ 17 = Հոկտեմբեր 25, 26 և 27, որտեղից Նաւասարդ 1 = Հոկտեմբերի 9, 10 և 11 = 192-195 թթ., 188-191 թթ. և 184-187 թթ.: Այս Հաշվարկներից ստացված տարեթիվերը ևս մերժելի են:

Ստեփանոս Սյունեցու մի վկայութեանից՝ երևում է, որ նրան Հայտնի են Բարդուղիմեոս և Թադէոս առաքյալների, ինչպես և «Սուկաւեանքն» վկայաբանութեանը և նրանք Հայոց սրբերի շարքում են, ուստի տոնել են նրանց հիշատակի օրը մինչև 8-րդ դարը: Հայոց «Կանոնք ընթերցուածոց»-ների տարբեր խմբագրութեաններում բացակայում է Սուքիասանցի անհատացված հիշատակի օրվա նշումը, հուլյան տոմարի Համարժեքով:

Հավանական է ընդունել, որ նրանց հիշատակի օրը տոնել են այլ սրբերի հետ անշարժ կերպով կամ Հունվարի 13-ին կամ Մարտի 9-ին կամ Օգոստոսի 23-ին: Կրկին կիրառելով Հայոց տոմարական եղանակը ստանում ենք միակ ընդունելի արդյունքը Նաւասարդ 17 = Օգոստոս 23-ի դեպքում, որը տալիս է 444-447 թթ.: Հնարավոր է մտածել, որ Սուքիասանց հիշատակի օրը տոնել են այլ սրբերի հետ անշարժ կերպով Օգոստոսի 23-ին մինչև 8-րդ դարի սկզբները և Նաւասարդի 17-ը արտացոլում է նրան՝ տոնի կամ վկայաբանութեան գրման 444-447 թթ. ամսաթիվը Հայոց շարժական տոմարով:

8-րդ դարից սկսած Սուքիասանց հիշատակի օրը մտավ «Տաւնացոյց ըստ շաբաթուց»-ի մեջ Առաջավոր Բարեկենդանի կիրակիին Հաջորդող կիրակիից հետո եկող երեքշաբթի օրը, այսինքն՝ Առաջավոր Բարեկենդանից Հաշված 10-րդ օրը և նրանց հիշատակը տոնվեց Հունվար 21-Փետրվար 24-ի օրերից մեկում նայած տարի, սակայն չի պահպանվել շարժական տոնացույցից առաջացած որևէ ամիս-ամսաթիվ:

Այսպիսով Հայտնի է Սուքիասանց հիշատակի օրվա Հայոց անշարժ տոմարի ամիս-ամսաթիվը, այն է՝ Նաւասարդի 17-ը: Եթե ընդունվի մեր առաջարկած տարբերակը, որ վերոհիշյալ ամիս-ամսաթիվը գալիս է Հայոց շարժական տոմարից ապա կունենանք սուքիասանց վկայաբանութեան գրման կամ հիշատակի օրվա հուլյան Համարժեքը, այսինքն՝ Օգոստոս 23-ը և Հայոց շարժական տոմարի Նաւասարդի 17-ի Հայոց շարժական տոմարի 444-447 թթ. քառամյակը:

Եթե գտնվի Սուքիասանց վկայաբանութեան բնագիր գրված մինչև անշարժ տոմարի ստեղծումը, որտեղ լինի Նաւասարդի 17-ը, ապա այդ Հարցը կարելի կլինի լուծված Համարել:

1 Գիրք թղթոց, էջ 323:

\*\*\*

832 թվահամարի ծաշոցը գրանցել է. «Նաւասարդի Լ (= Սեպտեմբեր 9). Սրբոյ Սահակայ Գարթեի»: Այսպես են փաստագրել մեզ Հայտնի բոլոր ճաշոցների խմբագրութիւնները ի որոշ Տոնացույցների (2092-ը՝ Նաւասարդի) և Յայսմաւուրքների բոլոր խմբագրութիւնները: Միայն մի քան բնագրեր ավելացրել են Մեսրոպ վարդապետին: Դրանց մեջ բացառութիւն է կազմում Հովսեփի Կոստանդնուպոլսեցու Տոնացույց-Յայսմաւուրքի մեզ հասած խմբագրութիւնը (1048 Վենետիկյան ձեռագրեր), որտեղ գրված է. «(Սեպտեմբեր) Ժէ. Յայսմաւուր յիշատակ է երանելոյն Սահակայ) և Մեսրոբայ վարդապետի»:

Նավասարդի 30-ը վկայված է Սահակ կաթողիկոսի մահվան օր իբրև Հայոց շարժական տոմարի ամսաթիվ 5-րդ դարից սկսած, իսկ վերոհիշյալ հուլյան համարժեքները կապ չունեն նրա մահվան օրվա հետ: Այսպես,

Նավասարդի 30 = Սեպտեմբերի 9, որտեղից Նավասարդի 1 = Օգոստոս 11 = 428-431 թթ.: Հայոց անշարժ տոմարի հուլյան համարժեքը Սարկավազադի տոմարի սկզբնակետին: Նավասարդի 30 = Սեպտեմբերի 17, որտեղից Նավասարդի 1 = Օգոստոս 19 = 396-399 թթ.: Այս թվականները կոմենտարների կարիք չեն զգում, որովհետև Սահակ կաթողիկոսը, ինչպես ցույց ենք տվել<sup>1</sup>, վախճանվել է 441 թ. Նավասարդի 30-ին (= Սեպտեմբերի 6): Հայոց շարժական տոմարի Նավասարդի 30-ը վեր է ածվել Հայոց անշարժ տոմարի ամսաթվի ստանալով Սեպտեմբերի 9-ի հուլյան համարժեքը:

Նավասարդի 30-ը չի առաջացել նաև տոնացույցային ամսաթվից, որովհետև Սահակ կաթողիկոսի հիշատակի օր էր սահմանվել Ջատիկից ետ հաշված 58-րդ օրը կամ Բուն Բարեկենդանի կիրակիից ետ հաշված 9-րդ օրը, այն է՝ շաբաթ օրը, որը կատարում էին Հունվարի 25 - Փետրվարի 28-ի սահմաններում նայած տարի, իսկ Սահակ կաթողիկոսի հիշատակի օրը Նավասարդի 30-ին կատարվել է, երբ Ջատիկը եղել է Սահմի 27-ին, որն ընկնում է 1204 թ. և 1295 թ., այսինքն այն ժամանակ երբ հիշյալ ծաշոցում այդ ամսաթիվն արդեն վկայվել է 1154/5 թթ., էլ չենք խոսում ավելի վաղ եղած վկայութիւնների մասին:

Այսպիսով պարզ է դառնում, որ Սահակ կաթողիկոսի հիշատակի օրվա նշումը, այն է՝ Նավասարդի 30-ը գալիս է Հայոց շարժական տոմարից և հետագայում վեր է ածվել անշարժ տոմարի ստանալով Սեպտեմբերի 9-ի հուլյան համարժեքը, որը կապ չունի նրա մահվան օրվա հուլյան համարժեքի, այն է՝ Սեպտեմբերի 6-ի հետ: Սահակ կաթողիկոսի հիշատակի օրը նախօրոք տոնվել է անշարժ Սեպտեմբերի 6-ին, իսկ 8-րդ դարից հետո Հայոց շարժական տոնացույցում դարձել է շարժական տոն և տոնվել շաբաթ օրը, Հունվար 25 - Փետրվար 28-ի սահմաններում նայած Ջատիկի օրվա:

\*\*\*

832 թվահամարի ծաշոցը տալիս է հետևյալ տեղեկութիւնը. «Հոռի առաջի կիրակէն Աշխարհամատրանն»: Նույն վկայութիւնը գրանցվել է նաև 3266 թվահամարի ծաշոցի ընդօրինակութիւն մեջ:

Աշխարհամատրան տոնը միշտ շարժական էր և ընկնում էր Ջատիկից հաշված 15-րդ օրը: Այդ տոնի օրվա հուլյան համարժեքները գտնվել են Ապրիլ 5 - Մայիս 9-ի սահմաններում նայած տարի: Աշխարհամատրան կիրակին Հոռի առաջին կիրակին է ընկել, երբ Ջատիկը կատարվել է Նավասարդի 24-30-ի օրերին, որը տեղի է ունեցել 976 թ. և 1095 թ. միջև ընկած բազմաթիվ տարիների, ուստի Հոռի առաջին կիրակին իբրև Աշխարհամատրան տոնի օրեր առա-

ջացել է 10-րդ դարի 70-ական թվականների և 11-րդ դարի վերջի սահմաններից ոչ ուշ և փոխանցվել 12-րդ դարի կեսերին գրված ճաշոցին: Ասենք, որ «Հոռի առաջին կիրակէն» Հայոց շարժական տոմարի տոնացույցային համարժեք է, որը հետագայում վեր է ածվել անշարժ տոմարի և պահպանվել հետագա ճաշոցներում:

\*\*\*

832 թվահամարի ծաշոցը Ոսկեանց օրվա կապակցութիւնը գրում է. «[Հոռի] երկրորդ կիրակէն. Սրբոց Ոսկեանցն»: Այսպես է ձևակերպել նաև 3266 թվահամարի ծաշոցը (էջ 152աբ): Վենետիկի 639 թվահամարի ծաշոցն ունի՝ «Հոռի Բ կիրակէն Ոսկեանց»<sup>1</sup>: Այսպես է տրված նաև 4977 թվահամարի ծաշոցում (էջ 53բ): Անհասկանալի են հիշյալ վկայութիւնները, որովհետև տոնացույցում կիրակի օր երբեք որևէ սրբի օր չեն նշել: Հնարավոր է մտածել, որ Ոսկեանց նահատակութիւնը տեղի է ունեցել կիրակի օրը: Հետևենք բնագրերին:

Գրիգոր Վկայասերի Տօնանամակի հետագա խմբագրութիւն մեջ գրված է. «Հոռի Բ. Սրբոց Ոսկեանցն ի Հայք...»<sup>2</sup>:

940 թվահամարի ծաշոցն ունի՝ «[Սեպտեմբեր ԺԹ եւ Հոռի Ժ]. Սրբոց Ոսկեանցն...» (ՃԼԱ համարի տակ է, որը գալիս է Սեպտեմբերի 18-ից հետո):

Հնագույն տոնացույցերը և ճաշոցները Ոսկեանց հիշատակի օրը գրանցել են հինգշաբթի օրվա տակ՝ «Եշ[հինգշաբթ]. Ոսկեանցն»<sup>3</sup>:

Երբեմն պատահում է, որ ավելացվում է Հայոց տոմարի ամիս-ամսաթիվ: Այսպես 2092 թվահամարի ձեռագիրն ունի «Եշ. Ոսկեանցն... Հոռի Բ» (էջ 231 բ): Իսկ 4916 թվահամարի ծաշոցն ունի. «Հոռի Բ. Սրբոցն Ոսկեանցն...» (էջ 76 ա): Ծաշոցների մեջ պատահում են դեպքեր, երբ Ոսկեանց հիշատակի օրը տրվել է երեքշաբթի: Այսպես 936 թվահամարի ձեռագիրը գրանցել է. «Յերեքշաբթ աւր: Սրբոց Ոսկեանց...» (էջ 145բ-146բ): Այստեղ շփոթվել է Սուքեսանց և Ոսկեանց հիշատակի շաբաթվա օրերը՝ երեքշաբթի և հինգշաբթի:

6235 թվահամարի ծաշոցն ունի՝ «Հոռի ԺԴ. Սրբոց Ոսկե[ա]նցն...» (էջ 114բ):

4514 թվահամարի ծաշոցում գրված է. «Հոռի Ժ. Ոսկեանցն... (ներքին լուսանցքում՝ «Հինգշաբթի. Ոսկեանցն»)» (էջ 37բ): Այդ ամսաթվի և շաբաթվա օրվա տակ է գրանցել նաև 939 թվահամարի ծաշոցը (էջ 63աբ):

Յայսմաւուրքների բոլոր խմբագրութիւնները Ոսկեանց նահատակութիւն օր են դրել Հոռի 10-ը համարժեք Սեպտեմբերի 19-ին կամ հակառակ Հաջորդականութիւնը<sup>4</sup> և ձևակերպել են տարբեր կերպ այն է՝ «Ի սմին աւուր կատարեցան Հայք աշակերտք Սուրբ առաքելոյն Թադէոսի», «վկայութիւն Սրբոց Ոսկեանց՝ աշակերտացն Թադէոսի առաքելոյն», «Սրբոց Ոսկեանցն», «Վկայութիւն սրբոց Ոսկեանցն և այլ ընկերաց նոցին, որ վկայեցին և Սուկաւ լերինն», «Տաւն է Սրբոց Ոսկեանց [և ընկերաց նոցա]» և այլն:

Այն տպավորութիւնն է ստացվում, որ Սուքեսանց և Ոսկեանց նահատակութիւն օրը նույնն են համարել, թեև Սուքեսանց նահատակութիւն օրը դրել են Նավասարդ 17 (= Օգոստոս 27)-ին: Այսպիսով Ոսկեանց հիշատակի օրեր են վկայվել Հոռի 2-րդ կիրակին, Հոռի 2-ը, Հոռի 10 (= Սեպտեմբերի 19) և Հոռի 14-ը: Տեսնենք վերոհիշյալ ամսաթվերից, որոնք կարող էին

1 Ս. Մեմենյան, Աշխ. աշխ., էջ 617-618:  
2 Ձեռ. № 979, էջ 441բ:  
3 Ձեռ. № № 759, էջ 179բ, 179, էջ 540բ, 752, էջ 153բ, 767, էջ 129ա, 2092, էջ 231բ, 5667, էջ 102բ, 7203, էջ 22ա-24ա, 9838, էջ 155ա, 4164, էջ 138ա, 4874, 5388, էջ 112ա, 7741, էջ 52բ, 4107, էջ 95 և այլն:  
4 Տե՛ս Վեճետիկի 710 և 631 թվահամարների ձեռագրերը, Երևանի 2695 թվ. ձեռագիր էջ 257ա, 3083, էջ 390ա, 179, 7433, էջ 45ա, 4741, էջ 34ա, 9585, էջ 3ա, 6338, էջ 72 բ և այլն:

<sup>1</sup> Հայոց տոմարական եղանակը, էջ 60-65:

առաջանալ Հայոց տոնացույցային եղանակով և որոնք Հայոց անշարժ տոմարի համարժեքներն էին: Ակնհայտ է, որ Հոռի 10-ը Հայոց անշարժ տոմարի ամիս-ամսաթիվ է գուգադիր սեպտեմբերի 19-ին: Այնուամենայնիվ քննարկենք մեզ հասած բոլոր ամսաթիվերը:

Հայոց տոնացույցում Ոսկեանց հիշատակի օր է սահմանվել հինգշաբթի Առաջավոր Բարեկենդանից հաշված 12-րդ օրը, Բուն Բարեկենդանից ետ հաշված 11-րդ օրը, իսկ Ջատիկից՝ 60-րդ օրը:

Ոսկեանց տոնը Հոռի 2-րդ կիրակին, այսինքն՝ Հոռի 8-15 օրերին կարող էր լինել, երբ Ջատիկը Տրէ 7-14-ի օրերից մեկում էր: Այդպիսի տարիներ են եղել

Տրէ 7 - 1264 թ., 1278 թ. և այլն

Տրէ 8 - 1319 թ. և այլն

Տրէ 9 - 1283 թ., 1997 թ., 1311 թ. և այլն

Տրէ 10 - 1261 և այլն

Տրէ 11 - 1330 թ. և այլն

Տրէ 12 - 1280 թ., 1308 թ., 1322 թ.

Տրէ 13 - 1272 թ. և այլն

Տրէ 14 - 1294 թ., 1313 թ. և այլն

Վերոհիշյալ տարեթվերից պարզ է դառնում, որ Հոռի 2-րդ կիրակին չի առաջադրել տոնացույցային ամսաթվերից, քանի որ հիշյալ վկայությունը գրանցվել է 1154/5 թթ. Ճաշոցում, իսկ տոնացույցային օրերը տալիս են 13-14-րդ դարերի տարեթվեր, ուստի այն Հայոց անշարժ տոմարի անհասկանալի ամսաթվային նշում է: Ի դեպ Ոսկեանց հիշատակի օրը շարժական էր և ընկնում էր Հունվարի 23 - Փետրվար 26-ի ամսաթվերից մեկում նայած տարին:

Ոսկեանց հիշատակի օրվա նշումը Հոռի 2-ը առաջացել է տոնացույցային օրվա հիման վրա նրանց հիշատակի օրը Հոռի 2-ին էր, հինգշաբթի, երբ Ջատիկը Տրէ 1-ին էր, Կիրակի:

Ըստ «Հայոց տոնացույց» ծրագրի հաշվումների, եղել են ներքոհիշյալ տարիներին.

Ներկա թվական	Հուլյան ամիս	Հուլյան ամսաթիվ	Ծաբաթվա օր	Հայոց թվական	Հայոց ամիս	Հայոց ամսաթիվ	Ծաբաթվա օր
1242	2	20	5	691	2	2	5
1256	2	17	5	705	2	2	5
1270	2	13	5	719	2	2	5
1284	2	10	5	733	2	2	5
1298	2	6	5	747	2	2	5

Ակնհայտ է, որ Հոռի 2-ը առաջացել է տոնացույցային օրվա հիման վրա հիշյալ տարեթվերից մեկում և վկայվել Տոնանամակի խմբագրության մեջ 1286/7 թթ.:

Հոռի 10-ի ամիս-ամսաթիվը Հայոց անշարժ տոմարից է գալիս համարժեք Սեպտեմբերի 19-ին, քանի որ Ոսկեանց հիշատակի օրը Հոռի 10-ին կհանդիպեր, երբ Ջատիկը Տրէ 9-ին էր, իսկ այդպիսի տարիներ էին 1283 թ., 1297 թ. և 1325 թ., իսկ Տրէ 10-ը վկայված ունենք 1154/5 թթ.:

Հոռի 14-ի ամսաթիվն ևս իբրև Ոսկեանց հիշատակի օրվա նշում առաջացել է տոնացույցային տարվա հիման վրա և վկայվել 1325 թ. ընդօրինակված Ճաշոցում: Ոսկեանց տոնի օրը

Հոռի 14-ին էր, երբ Ջատիկը Տրէ 13-ին էր: Ըստ «Հայոց տոնացույց» ծրագրի հաշվումների, հետևյալ տարիներին են եղել.

Ներկա թվական	Հուլյան ամիս	Հուլյան ամսաթիվ	Ծաբաթվա օր	Հայոց թվական	Հայոց ամիս	Հայոց ամսաթիվ	Ծաբաթվա օր
1272	2	25	5	721	2	14	5
1365	2	2	5	812	2	14	5
1377	1	29	5	826	2	14	5
1391	1	26	5	840	2	14	5

Պարզ է, որ 1325 թ. ընդօրինակված Ճաշոցի համար հիմք է եղել մի ճաշոց, որն իր հերթին ընդօրինակվել է 1272 թվականին, երբ գրանցվել է Հոռի 14-ը իբրև Ոսկեանց հիշատակի օրվա նշում:

Այսպիսով, Ոսկեանց հիշատակի օրվա Հոռի 2 և 14 ամիս-ամսաթվերն առաջացել են տոնացույցային եղանակով, իսկ Հոռի 10-ը և Հոռի 2-րդ կիրակին Հայոց անշարժ տոմարի ամիս-ամսաթվային նշումներ են, որոնք գալիս են 12-րդ դարի սկզբներից: Յայտնավորքները գրանցել են Հոռի 10-ը և նրա հուլյան համարժեք Սեպտեմբերի 19-ը, թեև Ոսկեանց հիշատակի օրը տոնացույցում միշտ նշվել է Հունվար 23-Փետրվար 26-ի ամսաթվերից մեկում, որն ընկել է Հայոց շարժական տոմարի տարբեր ամսաթվերում:

Հնարավոր է մտածել, որ Հոռի 10-ը նախապես եղել է Հայոց շարժական տոմարի ամսաթիվ և ունեցել է հուլյան այլ համարժեք, որը կարելի է գտնել Հայոց տոմարական եղանակով: Մանավանդ Բյուզանդարան պատմությունների մեջ Մաղկոտն գավառի Ոսկիք վայրի հետ կապված տեղեկությունը, կարծես թե, հուշում է Ոսկեանց ավանդույթյան գոյություն մասին, ուստի նրանց հիշատակի օրը կարող էին նշել արդեն 5-րդ դարում և հետագայում՝ անշարժ տոմարի ամիս-ամսաթիվով: Կարելի է ենթադրել որ Ոսկեանց հիշատակի օրը տոնել են մյուս սրբերի հետ ընդհանուր օրով, որոնք «Կանոնք ընթերցուածոց»-ում եղել են Հունվարի 13-ին, Մարտի 9-ին և Օգոստոսի 23-ին, և Հոռի 10-ը դրանցից մեկի համարժեք ամիս-ամսաթիվն է, որպես Հայոց շարժական տոմարի նշում տարիների կտրվածքով: Կիրառենք Հայոց տոմարական եղանակը՝ Հոռի 10 = Հունվար 13-ի, Հոռի 10 = Մարտի 9-ի և Հոռի 10 = Օգոստոսի 23-ի նկատմամբ: Պարզվում է, որ միակ դրական արդյունքն ունենում ենք վերջին դեպքում, երբ Հոռի 10 = Օգոստոսի 23-ին, որտեղից Հոռի 1 = Օգոստոսի 10 = 535-539 թթ.: Եթե ընդունելի համարվի քննարկվող տարբերակը, ապա Ոսկեանց հիշատակի օրը նշել են Օգոստոսի 23-ին մյուս սրբերի հետ միասին և Հոռի 10-ը արտացոլում է 535-539 թթ. վիճակը, իսկ նավասարդի 17-ը համարժեք Օգոստոսի 23-ին իբրև Սուբիասեանց հիշատակի օրվա նշում՝ 444-447 թթ. կտրվածքով, այսինքն՝ հիշյալ սրբերի տոները տոնացույցում վաղ շրջանում՝ 5-7-րդ դարերում, անհատականացված չէին և տոնել են ընդհանուր սրբերի հետ միասին:

\*\*\*

Մեկնաբանենք Հոռի փոսիմեանց և Գայանեանց հիշատակի օրերի տվյալները, որոնք վկայվել են Հայոց Ճաշոցների, Տոնացույցների, Յայտնավորքների տարբեր խմբագրություններում, ինչպես և թարգմանական բնագրերում: Նախ բերենք սկզբնաղբյուրների տվյալները: 832 թվահամարի Հայոց Ճաշոցում գրված է. Ա. «Հոռի ԻԶ (= Հոկտեմբեր 5). Սրբոց Հոռիփոսիմեանցն»

Բ. «Հոռի ԻԷ (= Հոկտեմբեր 6). Սրբոյն Գայիանեա»

Վենետիկի 639 թվահամարի նույնատիպ ձաշոցը վկայել է. 1. «Հոռի ԻԶ. Սրբոց Հոփսիմեանց»

2. «Հոռի ԻԷ. Գայանէ...»:

979 թվահամարի գրչագրից, որը Գրիգոր Վկայասերի Տօնանամակի խմբագրութուններից է ունենք հետևյալ տվյալները:

Ա. «Ամիս Յունիս աւուրս ունի Լ: Նորին Ա. Սրբուհին Կուսանանցն Հոփսիմեայ և ընկերաց նորա...: Նորին Բ. Սրբուհոցն Գայանեա[յ] և ընկերացն նորա... (էջ 320-321բ):

Բ. «Նորին (Սեպտեմբեր) Լ... եւ յիշատակ սրբոց Հոփսիմեանց»:

940 թվահամարի ձաշոցն ունի. (ՃԽԱ համարի տակ) «Հոգտեմբեր Ե եւ Հոռի ԻԶ. Սրբոց Հոփսիմեանց Ի Հայք...» ՃԽԲ համարի տակ՝ «Հոգտեմբ[եր] Զ եւ Հոռի ԻԷ. Սրբոյն Գայանեա[յ] և ընկերաց...»:

936 թվահամարի ձաշոցում գրված է.

1. «Երկուշաբթի. Սրբոց Հոփսիմեանց...»

2. «Ի նոյն երեքշաբթի աւր. Գաիանե» (էջ 64ա-68բ): 6535 թվահամարի ձաշոցն ունի՝

1. «Հոռի ԻԶ. Սրբոյն Հոփսիմեա[յ]...»

2. «Հոռի ԻԵ (ուղղել՝ ԻԷ). Գայիանէ...» (էջ 17բ-19ա):

7741 թվահամարի ձաշոցում գրված է.

Ա. «Երկուշաբթի աւր. Յիշատակ է սրբոց Հոփսիմեանցն (ներքին լուսանցքում՝ «Երկուշաբթի Սրբոյն Հոփսիմէ և ընկերաց նորա»):

Բ. «Գշ. Յիշատակ է սրբոյն Գայանէ...» (ներքին լուսանցքում՝ «Երեքշաբթի աւր. Գայանէ կուսին եւ ընկերաց նորին») (էջ 301ա-302ա):

4107 թվահամարի ձաշոցն ունի՝

1. «Երկուշաբթի աւր. Հոփսիմեայ» (ներքին լուսանցքում՝ «Երկուշաբթի աւր. Սրբոց Հոփսիմեանցն»):

2. «Երեքշաբթի աւր. Գայիանեայ...» (ներքին լուսանցքում՝ «Երեքշաբթի աւր. Սրբոց Գայիանեանց») (էջ 548-549):

3266 թվահամարի Հայոց ամսաթվերով ձաշոցում գրված է.

Ա. «Հոռի ԻԶ. Սրբոց Հոփսիմեանցն...»

Բ. «Հոռի ԻԷ. Սրբոց Գայիանեանցն...» (էջ 155ա-157բ)

4514 թվահամարի ձաշոցը ունի՝

1. «Հոռի [Ի]Զ. Հոփսիմեանց (ներքին լուսանցքում՝ «Երկուշաբթի. Սրբոց Հոփսիմեանցն»)

2. «Հոռի[Ի] ԻԷ. Գայանէ...» (ներքին լուսանցքում՝ «Երեքշաբթի. Սրբոց Գայիանեանցն») (էջ 250բ-251ա):

5455 թվահամարի ձաշոցն տալիս է՝

1. «Երկուշաբթի. Սրբոցն Հոփսիմեանցն...»

2. «Երեքշաբթի աւր. Գայիանեանցն...» (էջ 190բ-191ա):

4977 թվահամարի ձաշոցում գրված է.

Ա. «Հոռի ԻԶ. Սրբոց Հոփսիմեա...»

Բ. «Հոռի ԻԷ. Սրբոյն Գայիանէ...» (էջ 55ա-56բ)

939 թվահամարի ձաշոցն ունի՝

1. «Հոռի [Ի]Զ. Հոփսիմեանց» (ներքին լուսանցքում շաբաթվա օրվա նշումով):

2. «Հոռի [Ի]Է (բնագրում՝ Ե, ուղղումը մերն է). Գայանէ...» (ներքին լուսանցքում շաբաթվա օրվա նշումով) (էջ 332բ-333բ):

4437 թվահամարի ձաշոցն ունի՝ «Հոռի [Ի]Է. Սրբոց Գայիանեանցն» (էջ 92 բ):

Ազաթանգեղոսի արաբերեն թարգմանության մեջ Հոփսիմեի նահատակության օրը դրվել է 26 Հոկտեմբեր, իսկ Գայանեինը՝ 28 Հոկտեմբեր<sup>1</sup>: Հայոց տոնացույցերում միանշանակ Պենտեկոստի հաջորդ կիրակիի՝ Եկեղեցու Նավակատիքի տոնից հետո երկուշաբթի օրը դրել են Հոփսիմեանց հիշատակի օրը, իսկ երեքշաբթի՝ Գայանեանց<sup>2</sup>: Միայն 2092 թվահամարի Տոնացույցում գրված է.

1. «Գշ (երեքշաբթի): Հոփսիմեանցն... Ի Հոռի ԻԶ»

2. «Եշ (հինգշաբթի). Գաիանեանցն... Ի Հոռի ԻԷ» (էջ 225բ)

Այն թյուրիմացության արդյունք է կամ էլ հեղինակը փորձել է ավանդական երկուշաբթի օրվա տեղը տեղադրել այլ սրբի օր, իսկ երեքշաբթի և հինգշաբթի տեղափոխել այդ սրբերին:

Տեսնենք ինչ տվյալներ են հաղորդում Յայսմավուրքների տարբեր խմբագրութունները:

Վենետիկի 1048 թվահամարի Յայսմավուրք-Տոնացույցը, որը Յովսեփ Կոստանդնուպոլսեցու 992 թ. թարգմանած հունական տոնացույցի հետագա խմբագրութունն է (1302 թ.) գրված է. «(Սեպտեմբեր) Լ... Յայսմաւուր կատարի տաւն սրբուհի կրաւնաւորացն եւ կոյս վկայիցն Քրիստոսի Հոփսիմեայ եւ Գայիանեայ, որք Ի Տրդատայ Հայոց արքայէն մարտիրոսացան Ի Մեծ Հայք: Կատարեցաւ սրբուհին Հոփսիմէ Ի Սեպտեմբեր ԻԶ եւ սրբուհի Գայանէ Ի Սեպտեմբեր ԻԷ»:

Վենետիկի 710 թվահամարի Յայսմավուրքը, որը վերահիշյալ տոնացույցի մեկ այլ խմբագրութունն է տալիս է.

«Սեպտեմբեր Լ եւ Հոռի ԻԱ... Յայսմաւուր կատարի տաւն Հոփսիմեայ եւ Գայիանեայ...»:

Վենետիկի 631 թվահամարի և Երևանի Մատենադարանի 2695 թվահամարի գրչագրերը, որոնք Տեր-Իսրայելի խմբագրած Յայսմաւուրքի տարբերակներն են, վկայում են.

1. «Հոռի ԻԶ եւ Հոկտեմբեր Ե. վկայութիւն [առաքելուհի և] սրբուհոյ կուսին Հոփսիմեայ և նորին ընկերացն»

2. «Հոռի ԻԷ եւ Հոկտեմբեր Զ... Յայսմ աւուր վկայութիւն սրբուհոյն Գայիանեայ և Բ ընկերացն [նորա] (էջ 271ա-272ա):

Կիրակոս Գանձակեցու (Արևելցու) Յայսմաւուրքում և նրա հետագա խմբագրութուններում տալիս են հետևյալ տեղեկութունները.

1. Ըստ 3082 թվահամարի Յայսմաւուրքի համառոտ խմբագրության. «Նոր[ին] [Հոռի] ԻԶ. Կուսին Հոփսիմեայ և Լ Գ ընկեր[աց] [Հոկտեմբեր] Ե»:

«Նոր[ին] [Հոռի] ԻԷ. Գայիանեա[յ] և ընկեր[աց] [Հոկտեմբեր] Զ» (էջ 390բ):

2. Ըստ 179 թվահամարի համառոտ Յայսմավուրքի Ստեփանոս Գույներիցանցի խմբագրության

1 Տե՛ս Н. Мара, Крещ., стр. 91.

2 Տե՛ս Ձեռ. № № 759, 179, 752, էջ 166ա, 5667, էջ 126բ, 7203, էջ 66բ, 9838, էջ 171ա-բ, 4164, էջ 182ա, 4874, էջ 186բ:



Ա) «[Հոռի] ԻԱ... և յիշատակ սրբուհւոյ Հռիփսիմէ և Գայիանէ... [Սեպտեմբեր] Լ»:  
 Բ) «[Հոռի] ԻԶ. վկայութիւն սրբուհւոյ կուսին Հռիփսիմեայ և Լ և է ընկերացն... [Հոկտեմբեր] Ե»

Գ) «[Հոռի ԻԷ... Յայսմաւուր] սրբուհւոյ Գայանէ և ընկերաց նորա [Հոկտեմբեր] Զ»:  
 Վենետիկի 189 թվահամարի գրչագրի Յասմաւուրքի խմբագրութեան մեջ գրված է.

1. «Հոռի ԻԱ եւ Սեպտեմբեր Լ եւ Թշրին ԺԳ. Յայսմաւուր կատարի տաւն սրբուհի կրաւնաւորացն ես կոյս վկայիցն Քրիստոսի Հռիփսիմեայ] եւ Գայիանեայ, որք ի Տրդատայ Հայոց արքայէն մարտիրոսացան ի Հայք»:

2. «Հոռի ԻԶ եւ Հոկտեմբեր Ե եւ Թշրին ԺԸ. վկայութիւն սրբոց Հռիփսիմեանց, որք ի Հայս կատարեցան...»:

3. «Հոռի ԻԷ եւ Հոկտեմբեր Զ եւ Թշրին ԺԹ» (ըստ Ճեմճեմյանի՝ կը պակաս ի Գայանեանց վկայաբանութիւնը):

7433 թվահամարի Յայսմաւուրքի խմբագրութեան մեջ գրված է.

1. «Հոռի ԻԶ եւ Հոկտեմբեր Ե. վկայաբանութիւն սրբոց Հռիփսիմեանց, որ ի Հայք կատարեցան»:

2. «Հոռի ԻԷ եւ Հոկտեմբեր Զ... Յայսմաւուր վկայաբանութիւն սրբուհոյն Գայիանեայ] և ընկերացն» (էջ 64բ-66բ):

9585 թվահամարի Յայսմավուրքի խմբագրութեան մեջ կարդում ենք.

1. «Հոռի ԻԷ և ի Հոկտեմբեր Զ... Յայսմաւուր վկայաբանութիւն սրբոյն Գայանէ և ընկերաց նորա»:

2. «Հոռի ԻԶ եւ ի Հոկտեմբեր Ե. վկայաբանութիւն սուրբ և առաքելուհի կուսին Հռիփսիմէ և ընկերաց նորին (էջ 6բ-14ա):

8179 թվահամարի վկայաբանական ժողովածու՝ Յայսմավուրքում, որտեղ սրբերի վկայաբանութիւնները բերված են տոնացույցի կարգով, նրանց վկայաբանութեան մեջ գրված է. «կատարեցաւ սուրբ Հռիփսիմէ սուրբ ընկերաւքն յամսեան Հոռի ԻԶ: Կատարեցաւ [սուրբ Գայանէ սուրբ ընկերաւքն] ի Քրիստոս [յամսեան] ի Հոռի ԻԷ» (էջ 139ա-բ):

7529 թվահամարի Յայսմաւուրքի խմբագրութեան մեջ կարդում ենք.

1. «Հոռի ԻԶ. Հոկտեմբեր Ե. վկաբանութիւն սրբոյ] կուսին Հռիփսիմեայ] և ընկերաց նորա»:

2. «Հոռի ԻԷ. ի Հոկտեմբ(ե)ր Զ... Յայսմաւուր վկաբանութիւն) սրբոյն Գայիանեայ] և ընկերաց նորա» (էջ 10ա-12ա):

4741 թվահամարի Յայսմավուրքի խմբագրութիւնը տալիս է.

1. «Հոռի ԻԶ և Հոկտեմբեր Ե. վկաբանութիւն սուրբ եւ առաքելուհի Հռիփսիմեայ] և ընկերացն»

2. «Հոռի ԻԷ և Հոկտեմբեր Զ... Յայսմաւուր վկայութիւն սրբոյն Գայիանեայ և ընկերաց նորին» (էջ 50ա-52բ):

6338 թվահամարի գրչագրում, որը Գրիգոր Խլաթեցու Յայսմավուրքի խմբագրութիւններից է, կարդում ենք

1. «Հոռի ԻԶ. Հոկտեմբեր Ե. վկայաբանութիւն սրբոց Հռիփսիմեանց կուսաց»

2. «Հոռի ԻԷ եւ Հոկտեմբեր Զ. վկայաբանութիւն սրբոց կուսանացն Գայիանեանց» (97բ-100բ, տպագրում՝ էջ 147-151):

Հ. Ավգերյանը Հռիփսիմեի և Գայանեի հիշատակի օրեր է տալիս ըստ Հայոց Յայսմավուրքի Հոկտեմբերի 5-ին և 6-ին, ըստ Յունաց և Լատինացոց տոնացույցերի Սեպտեմբեր 30 և Սեպտեմբեր 29՝:

Բերված վկայութիւններից երևում է, որ Հռիփսիմեի և Գայանեի հիշատակի օրեր են եղել ըստ Հայոց անշարժ տոմարի Հոռի 26 և 27 (համարժեք հուլյան տոմարի Հոկտեմբեր 5 և 6-ին): Հուլյան տոմարի Հունիս 1-ին և 2-ին, ինչպես և Սեպտեմբերի 30-ին, Պենտեկոստից հետո եկող եկեղեցու նավակատեաց տոնի կիրակիին հաջորդող երկուշաբթի և երեքշաբթի օրերին, այսինքն՝ Պենտեկոստից հաջված 9-րդ և 10-րդ օրերին, Հուլյան տոմարի Հոկտեմբերի 26-ին և 28-ին, Հուլյան տոմարի Սեպտեմբերի 26-ին և 27-ին և Սեպտեմբերի 30-ին (համարժեք Հայոց անշարժ տոմարի Հոռի 17-ին, 18-ին և 21-ին): Վերջապես ըստ Յունաց տոնացույցի Սեպտեմբերի 30-ին, իսկ ըստ Լատինացոց՝ Սեպտեմբերի 29-ին: Ասենք նաև, որ Հռիփսիմեի և Գայանեի հիշատակի օրերը 5-րդ (թերևս 4-րդ դարից) - 8-րդ դարի սկզբները, տոնել են անշարժ օրով, բայց նրանց նահատակութեան օրերի հուլյան համարժեքները վաղ շրջանի բնագրերից հայտնի չեն, իսկ 8-րդ դարից հետո տոնել են շարժական օրերով, որոնց հայոց շարժական և հուլյան անշարժ տոմարների համարժեքները բազմաթիվ են եղել, նրանց տոնների օրերը ընկել են Մայիս 18-19-ից-Հունիս 21-22-ի օրերից որևէ երկուսում նայած տարի: Այլ խոսքով Հռիփսիմեի և Գայանեի հիշատակի օրերի հարակցումն ավելի բարդ է, քան առաջին հայացքից թվում է, ուստի այն կարող է պազաբանվել միայն հայոց տոմարական և տոնացույցային եղանակները կիրառելով, որպեսզի գտնվի հայոց շարժական տոմարի ամիս-ամսաթիվերը տարիների կտրվածքով, ինչպես և նրանց համարժեքները հուլյան տոմարով: Վերջիններս, ինչպես նկատելի է, բազմաթիվ արժեքներ ունեն: Ասենք նաև, որ սկզբնաղբյուրներում վկայված Հայոց անշարժ տոմարի Հոռի 26-ին և 27-ին, որոնց հուլյան տոմարի համարժեքներն են Հոկտեմբերի 5-ը և 6-ը, Հռիփսիմեի և Գայանեի հիշատակի տոները երբևէ չի կատարվել, այլ նրանց հիշատակի օրերը 8-րդ դարերից հետո նշել են Պենտեկոստից հաջված 9-րդ և 10-րդ օրերին, երկուշաբթի և երեքշաբթի: Հայոց տոմարական եղանակը կիրառելով կստանանք Հոռի 26-ի և 27-ի (= Հոկտեմբեր 6 և 7) տարիները, այն է՝ Հոռի 26 և 27 = Հոկտեմբեր 5 և 6, որտեղից Հոռի 1 = Սեպտեմբեր 10 = 428-431 թթ.: Պարզվում է, որ այդ տարիների Հայոց անշարժ տոմարի սկզբնակետն է, այսինքն, երբ Հովհաննես Սարկավազը Հայոց շարժական տոմարը վերածեց անշարժի՝ հիմք ընդունեց 5-րդ դարի 428-431 թթ. հաստատուն վիճակը: Ստացված տարիները միայն բացահայտում են Սարկավազադիր տոմարի սկիզբը և ոչինչ չեն տալիս Հռիփսիմեի և Գայանեի տոնական օրերի բացահայտման համար: Միայն պարզ դարձավ, որ Հոռի 26 և 27-ը հայոց շարժական տոմարի ամիս-ամսաթիվերն են: Բերված վկայութիւններից երևում է, որ Հռիփսիմեի և Գայանեի հիշատակները, համեմայն դեպս 8-րդ դարից սկսած, տոնել են Հոգեգալստից հաջված 9-րդ և 10-րդ օրերին՝ երկուշաբթի և երեքշաբթի: Ակնհայտ է, որ Հոռի 26-ը և 27-ը իրար հարաբերում են այնպես, ինչպես երկուշաբթիին, երեքշաբթիին: Այս վերլուծութիւնը ցույց է տալիս, որ Հոռի 26-ը և 27-ը նախապես եղել են հայոց շարժական տոմարի ամիս-ամսաթիվեր որոշակի տարիների սահմաններում: Կիրառելով մեր կողմից առաջադրվող տոնացույցային եղանակը ըստ «Հայոց տոնացույց» կոմպյուտերային ծրագրի ստանում ենք հետևյալ արդյունքները.

Ներկա թվական	Հուլյան ամիս	Հուլյան ամսաթիվ	Ծաբաթվա օր	Հայոց թվական	Հայոց ամիս	Հայոց ամսաթիվ	Ծաբաթվա օր
865	6	18	2	314	2	26	2
970	5	23	2	419	2	26	2
984	5	19	2	433	2	26	2

1 Տե՛ս վարք և վկ. սրբոց, Բ. Գ., 1812, էջ 5-55:

Ներկա թվական	Հուլյան ամիս	Հուլյան ամսաթիվ	Ծարաթվա օր	Հայոց թվական	Հայոց ամիս	Հայոց ամսաթիվ	Ծարաթվա օր
865	6	19	3	314	2	27	3
970	5	24	3	419	2	27	3
984	5	20	3	433	2	27	3

Պարզ է դառնում, որ Հռիփսիմեանց և Գայանեանց հիշատակի օրերը, երբ տոնել են Հոգեգալստից հաշված 9-րդ և 10-րդ օրերին, երկուշաբթի և երեքշաբթի, Հոռի 26-ին և 27-ին, առաջացել են 865 թ. կամ 970 թ. կամ 984 թ. գրված բնագրերից և փոխանցվել հետագա սերունդներին: Ակնհայտ է, որ Ագաթանգեղոսի Պատմության մեջ վկայված Հոռի 26 և 27 ամսաթվերը՝ Հռիփսիմեի և Գայանեի նահատակության հետ կապված, ընդմիջարկվել են 865 թվից (կամ 970 և 984 թվից) հետո:

Այժմ անցնենք Հունիս 1-ին և 2-ին, որոնք փաստագրվել են Գրիգոր Վկայասերի Տօնանամակի խմբագրության մեջ: Տեսանք, որ Հռիփսիմեի և Գայանեի հիշատակի օրը տոնել են Հոգեգալստից հաշված 9 և 10-րդ օրերին: Պարզ է, որ Հունիս 1-ի և 2-ի ամսաթվերն, որոնք նրանց հիշատակի օրվա նշումներն են հուլյան տոմարով, առաջացել են տոնացույցային տվյալների հիման վրա: Քանի որ նրանց հիշատակը տոնվում էր Մայիս 18-19-ից Հունիս 21-22-ի օրերից որևէ երկուսում, ապա Հունիս 1-ը և 2-ը վերահաշվարկել են Տոնացույցի հիման վրա այն օրերի հաշվով, երբ Ձատիկը տոնել են Ապրիլ 5-ին, իսկ Պենտեկոստեն Մայիս 24-ին, հետևապես Հռիփսիմեի և Գայանեի հիշատակի օրերն ընկել են Հունիս 1-ին և 2-ին: Գրիգոր Վկայասերի կաթողիկոս դառնալու ժամանակից (1066 թ.) մինչև վերոհիշյալ բնագրի ընդօրինակության թվականը (1286/7 թթ.) այդպիսի տարիներ են եղել 1075 թ., 1086 թ., 1097 թ., 1108 թ., 1170 թ., 1192 թ., 1265 թ., 1271 թ. և 1276 թ.: Վերոհիշյալ տարեթվերից պարզ է դառնում, որ Հունիս 1-ի և 2-ի ամսաթվերը ընդօրինակողի միջամտության արդյունք չեն, ուստի այդ հաշվարկը կատարել և վեր են ածել հուլյան ամիս-ամսաթվերի Տօնանամակի հեղինակները՝ Գրիգոր Վկայասերը, Գրիգորիսը և Կիրակոս Դրագարկեցին կամ 1086 թ. կամ 1097 թ. կամ 1108 թ., երբ նրանք ստեղծում էին Տօնանամակը: Ելնելով վերոհիշյալ տարեթվերից կարելի է ընդունել, որ Գրիգոր Վկայասերը Տօնանամակը գրել է 1097 թ., որովհետև որոշ սրբերի վկայաբանությունների ամսաթվեր, որոնք թարգմանվել են 1103 թվականին կամ նրանից հետո չեն մտել Տօնանամակի ամսաթվերի շարքի մեջ, ինչպես են Ղամբեոսի և Պարասկեալի վկայաբանությունների ամիս-ամսաթվերը: Հարկ է նշել, որ Հռիփսիմեի և Գայանեի հիշատակի տոները կատարել են 5-րդ դարի 30-ական թվականներից, թերևս 4-րդ դարի վերջերից լուրջ ձևով Վաղարշապատում, ինչպես վկայել են Ագաթանգեղոսի Պատմության և Բյուզանդարան պատմությունների հեղինակները, սակայն տարվա որ օրերին առայժմ հայտնի չէ: Որպեսզի կողմնորոշվենք վերոհիշյալ հուլյան ամսաթվերի, որոնք թվում մի կողմից Սեպտեմբերի 26, 27, և 30-ի Հոկտեմբերի 26-ի և 28-ի, այնպես էլ Հունվարի 13-ի, Մարտի 9-ի և Օգոստոսի 23-ի, երբ հայոց անշարժ տոնացույցում տոնում էին բոլոր մարտիրոսների հիշատակը, որոնք տոնացույցում չունեին անհատական հիշատակի օրեր, մյուս կողմից Հայոց անշարժ տոմարի ամսաթվերը Հոռի 17, 18, 26 և 27, որոնք հայտնի են Հռիփսիմեի և Գայանեի հիշատակի օրերի կապակցությամբ վերածենք հայոց շարժական տոմարի ամսաթվերի և կիրառենք հայոց տոմարական եղանակը, կստանանք հետևյալ տարբերակները.

1. Հոռի 26 = Հունվար 13, որտեղից Հոռի 1 = Դեկտեմբեր 19 = 18-31 թթ.  
Հոռի 26 = Մարտ 9, որտեղից Հոռի 1 = Փետր. 12 = 1270-1273 թթ.

- Հոռի 26 = Օգոստոս 23, որտեղից Հոռի 1 = Հուլիս 29 = 600-603 թթ.  
Հոռի 26 = Սեպտեմբեր 26, որտեղից Հոռի 1 = Սեպտ. 1 = 464-467 թթ.  
Հոռի 26 = Սեպտեմբեր 29, որտեղից Հոռի 1 = Սեպտ. 4 = 452-454 թթ.  
Հոռի 26 = Սեպտեմբեր 30, որտեղից Հոռի 1 = Սեպտ. 5 = 448-451 թթ.  
Հոռի 26 = Հոկտեմբեր 26, որտեղից Հոռի 1 = Հոկտ. 1 = 344-347 թթ.

2. Հոռի 27 = Հունվար 13, որտեղից Հոռի 1 = Դեկտ. 20 = 24-7 թթ.  
Հոռի 27 = Մարտ 9, որտեղից Հոռի 1 = Փետր. 13 = 1273-1276 թթ.  
Հոռի 27 = Օգոստոս 23, որտեղից Հոռի 1 = Հուլիս 30 = 596-599 թթ.  
Հոռի 27 = Սեպտեմբեր 27, որտեղից Հոռի 1 = Սեպտ. 1 = 464-467 թթ.  
Հոռի 27 = Սեպտեմբեր 29, որտեղից Հոռի 1 = Սեպտ. 5 = 448-451 թթ.  
Հոռի 27 = Սեպտեմբեր 30, որտեղից Հոռի 1 = Սեպտ. 6 = 444-447 թթ.  
Հոռի 27 = Հոկտեմբեր 28, որտեղից Հոռի 1 = Հոկտ. 2 = 340-343 թթ.
3. Հոռի 17 = Հունվար 13, որտեղից Հոռի 1 = Դեկտ. 28 = մ.թ.ա.  
Հոռի 17 = Մարտ 9, որտեղից Հոռի 1 = Փետր. 21 = 1234-1237 թթ.  
Հոռի 17 = Օգոստոս 23, որտեղից Հոռի 1 = Օգ. 7 = 564-567 թթ.  
Հոռի 17 = Սեպտեմբեր 26, որտեղից Հոռի 1 = Սեպտ. 10 = 428-431 թթ.  
Հոռի 17 = Սեպտեմբեր 29, որտեղից Հոռի 1 = Սեպտ. 13 = 416-419 թթ.  
Հոռի 17 = Սեպտեմբեր 30, որտեղից Հոռի 1 = Սեպտ. 14 = 412-415 թթ.  
Հոռի 17 = Հոկտեմբեր 26, որտեղից Հոռի 1 = Հոկտ. 10 = 308-311 թթ.
4. Հոռի 18 = Հունվար 13, որտեղից Հոռի 1 = Դեկտ. 29 = մ.թ.ա.  
Հոռի 18 = Մարտ 9, որտեղից Հոռի 1 = Փետր. 22 = 1237-1240 թթ.  
Հոռի 18 = Օգոստոս 23, որտեղից Հոռի 1 = Օգ. 8 = 560-563 թթ.  
Հոռի 18 = Սեպտեմբեր 27, որտեղից Հոռի 1 = Սեպտ. 10 = 428-431 թթ.  
Հոռի 18 = Սեպտեմբեր 29, որտեղից Հոռի 1 = Սեպտ. 14 = 412-415 թթ.  
Հոռի 18 = Սեպտեմբեր 30, որտեղից Հոռի 1 = Սեպտ. 15 = 408-411 թթ.  
Հոռի 18 = Հոկտեմբեր 28, որտեղից Հոռի 1 = Հոկտ. 11 = 304-307 թթ. մրցույթում հաղթողի հավակնություն ունեն 1-ին տարբերակում Հոռի 26 = Օգ. 23, Սեպտ. 26, 29 և 30-ը  
2-րդ տարբերակում Հոռի 27 = Օգ. 23, Սեպտ. 27, 29 և 30-ը  
3-րդ տարբերակում Հոռի 17 = Օգոստոս 23, Սեպտ. 26, 29 և 30-ը  
4-րդ տարբերակում Հոռի 18 = Օգոստոս 23, Սեպտ. 27, 29 և 30-ը

Դրանցից Սեպտեմբերի 29 և 30-ը դուրս են գալիս, որովհետև լատինական և հունական տոնացույցերից վերցրած ամսաթվեր են: Մնում են Օգոստոս 23-ը և Սեպտեմբեր 26-ը և 27-ը, որոնցից մեկն էլ եղել է Հռիփսիմեի և Գայանեի հիշատակի օրվա հուլյան համարժեքը V-VIII - դարերում:

Հռիփսիմեանց և Գայանեանց հիշատակի օրվա համար Օգոստոս 23-ը կիրառելու դեպքում ունենում ենք նաև Հայոց շարժական տոմարի համարժեքները տարիների կտրվածքով, այն է՝ Հոռի 17-ը 564-567 թթ. համար, Հոռի 18-ը՝ 560-563 թթ., Հոռի 26-ը՝ 600-603 թթ. և

Հոռի 27-ը 596-599 թթ., այսինքն ստացվում է, որ Հռիփսիմեն և Գայանեն չեն ունեցել անհատականացված տոնական օրեր, այլ նրանց հիշատակը տոնել են այլ սրբերի հետ ընդհանրացված ձևով, որն անընդունելի է՝ նկատի ունենալով նրանց հզոր դերը Հայաստանում քրիստոնեության տարածման և պաշտոնական կրոն ընդունելու ժամանակ, հատկապես Ագաթանգեղոսի և Բյուզանդարան պատմությունների հեղինակների վկայությունները:

Հռիփսիմեանց Հիշատակի օրվա համար Սեպտեմբերի 26-ը կիրառելու դեպքում ստանում ենք Հայոց շարժական տոմարի համարժեքները հետևյալ տարիների համար Հոռի 17-ը՝ 428-431 թթ. Հոռի 18-ը՝ 412-415 թթ. և Հոռի 26-ը՝ 464-467 թթ., որոնցից ընդունելի է Հոռի 17-ը: Գայանեանց հիշատակի օրվա համար Սեպտեմբերի 27-ը կիրառելու դեպքում ստանում ենք Հայոց շարժական տոմարի համարժեքները հետևյալ տարիների համար, Հոռի 18-ը՝ 428-431 թթ. և Հոռի 27-ը՝ 464-467 թթ., որոնցից ընդունելի է Հոռի 18-ը: Այլ խոսքով ունենում ենք Սեպտեմբերի 26-ը և 27-ը որպես Հռիփսիմեանց և Գայանեանց հիշատակի անհատականացված օրերը հուլյան տոմարի ամսաթվերով, երբ նրանց տոները նշում էին Վաղարշապատում և նրանց Հայոց շարժական տոմարի համարժեքները՝ Հոռի 17-ը և 18-ը 428-431 թթ. համար, երբ գրավեց նրանց վկայաբանությունները: Կարելի է մտածել, որ Ագաթանգեղոսի պատմության նախնական տարբերակի մեջ Հռիփսիմեի հիշատակի օր է գրանցվել Սեպտեմբերի 26-ը, որի հայոց շարժական տոմարի համարժեքն է Հոռի 17-ը 428-431 թթ. համար, իսկ Գայանեինը՝ Սեպտեմբերի 27-ը, որի հայոց շարժական տոմարի համարժեքն է Հոռի 18-ը՝ 428-431 թթ. համար և այդ ամիս-ամսաթվերը հասել են մեզ ուշ շրջանի գրանցումներով: Հարկ է նշել, որ Հռիփսիմեանց և Գայանեանց տոնական օրերը համահայկական բնույթ ստացան «Տաւնացոյց ըստ շաբաթուց»-ի միջոցով և 865 թվականին ստացան Հոռի 26 և 27 հայոց շարժական տոմարի ամսաթվերը (այս դեպքում համարժեք հուլյան տոմարի Հունիս 18-ին և 19-ին), որոնք հետագայում վերածվեցին Հայոց անշարժ տոմարի ամիս-ամսաթվերի ստանալով հուլյան տոմարի Հոկտեմբերի 5-ի և 6-ի համարժեքները:

\*\*\*

Հովհաննես Մկրտչի տոնական օրերի վերլուծության մեջ քննել ենք Սահմի 5, 6 և 7 ամսաթվերի առաջացման ընթացքը և ցույց տվել, որ Սահմի 5-ը գալիս է 992 թվին գրված Վարդավառի տոնի մեկնությունից և Հայոց տոնացույցային եղանակով ստեղծված ամսաթիվ է: Սահմի 6-ը հայոց անշարժ տոմարի ամսաթիվ է և համարժեք հուլյան տոմարի Հոկտեմբերի 15-ին: Հովհաննես Մկրտչի տոներից և ոչ մեկը երբևէ այդ ժամանակ չի կատարվել: Վերջապես Սահմի 7-ը ստեղծվել է 620-623 թթ. և համարժեք է եղել Օգոստոսի 29-ին, երբ անշարժ հիմքի վրա կատարել են Հովհաննես Մկրտչի հիշատակի օրը սկսած 5-րդ դարից, թերևս ավելի վաղ:

\*\*\*

Գրիգոր Լուսավորչի տոների քննության առիթով ցույց ենք տվել, որ Սահմի 10-ը, որը փաստագրվել է իբրև հայոց անշարժ տոմարի ամիս-ամսաթիվ, գալիս է հայոց շարժական տոմարից և առաջացել է տոնացույցային եղանակով 10-րդ դարի առաջին կեսին, երբ Գրիգոր Լուսավորչի ելքը Վիրապից տոնը կատարել են Հոգեգալստի տոնից հաշված 14-րդ օրը: Այդ ամիս-ամսաթվի առաջացումը կապված էր Գրիգոր Լուսավորչի նոր տոնական օրվա ստեղծման հետ սկսած 9-րդ դարի 4-րդ քառորդից, որն և վկայվել է հայկական սկզբնաաղբյուրներում սկսած 10-րդ դարի 1-ին կեսից:

Բերենք Նունեի և Մանեի հիշատակի օրերի մասին պահպանված մատենագրական տեղեկությունները: Ըստ 832 թվահամար ծառուցի՝ «Սահմի Ի (= Հոկտեմբեր 29). Նունէ, որ ի Վիրս եւ որք ի Վարագ եկեալք եւ Մանեա[յ] որք եին յընկերաց սրբոյ Հռիփսիմեանց»:

Ըստ Վենետիկի 639 թվահամարի գրչագրի՝

«Սահմի Ի. Նունէ եւ Մանէ»:

Ըստ Գրիգոր Վկայասերի Տօնանամակի խմբագրության (Ձեռ. N<sup>o</sup> 979). «Նորին (= Յուլիս) ի ԺԸ. Նունեայ եւ Մանեայ...» (էջ 356բ):

Ըստ 936 թվահամարի ծառուցի՝ «Երկուշաբթ աւր. Նաւնեա[յ] եւ Մանեայ». (էջ 74բ):

Ըստ 6235 թվահամարի ծառուցի. «Սահմի Ի. Նունեա[յ] և Մանեայ...» (էջ 26ա):

Ըստ 7741 թվահամարի ծառուցի «Գշ (երեքշաբթի) աւր. Սրբոց կուսանացն...» (ներքևի լուսանցքում՝ «Երեքշաբթ աւր. Սրբոց կուսացն Նունէ և Մանէ») (էջ 306բ-307ա): Այդպիսի ձևակերպումներ ունեն նաև 4107 (էջ 559) և 5455 (էջ 196բ) ճառոցները, իսկ 4514 (էջ 256ա), 4977 (էջ 160բ), 939 (էջ 339բ) և 4506 (էջ 265բ) ճառոցներն ավելացրել են. «Սահմի Ի»-ն:

Ըստ 3266 թվահամարի ծառուցի. «Սահմի Ի. Նունեա[յ] եւ Մանեա[յ] ընկերաց սրբոյ Հռիփսիմեա[յ]» (էջ 167ա): Այսպիսով ճառոցների ընդօրինակությունները Նունեի և Մանեի հիշատակի օրերը վկայել են մի քանի տարբերակներով և տարաբնույթ ձևակերպումներով:

Մեզ հասած Հնագույն տոնացույցերը Նունեի և Մանեի հիշատակի օր են սահմանել Պենտեկոստից հաշված 3-րդ կիրակիից հետո եկող երկուշաբթին<sup>1</sup>, ինչպես վերը հիշատակված 936 թվահամարի ծառուցը, իսկ 14-րդ դարի սկզբներից հետո նրանց հիշատակի օրը տեղափոխել են երեքշաբթի օրը<sup>2</sup>, ինչպես վերը բերված ճառոցների ընդօրինակությունները: Միայն 2092 թվահամարի Տոնացույցի ընդօրինակության մեջ գրված է. «Եշ (հինգշաբթի). Նունէ և Մանեա[յ]... ի Սահմի Ի» (էջ 226ա): Այն օրվա տեղափոխման անհաջող փորձ է:

940 թվահամարի ճառոցը (ՃՄԷ համարի տակ) գրել է. «Հոկտեմբեր ի Թ եւ Սահմի Ի. Նունէա եւ Մանէ...»: Այն արձագանքն է Յայսմավուրքների տարբեր խմբագրությունների, թեև զանազան ձևակերպումների, Նունեի և Մանեի հիշատակի օր են կանոնել Սահմի 20 = Հոկտեմբեր 29-ի տակ: Այսպես, 2695 թվահամարի Յայսմավուրքում կարդում ենք. «Սահմի Ի եւ Հոքտեմբեր ի Թ. Տաւն է սրբոցն Նունէա և Մանէ» (էջ 294բ):

3082 թվահամարի համառոտ Յայսմավուրքում գրված է. «Նորին [Սահմի] Ի. Նունէ և Մանեայ... (Հոկտեմբեր) ի Թ» (էջ 391ա): Այդպիսի ձևակերպում ունի 179 թվահամարի համառոտ Յայսմավուրքը:

7433 թվահամարի Յայսմավուրքը ձևակերպել է. «Սահմի Ի եւ Հոկտեմբեր ի Թ. Վկայաբանութիւն Սրբուհեացն Նունէ եւ Մանէ» (էջ 94 ա):

9585 թվահամարի Յայսմավուրքում կարդում ենք. «Սահմի Ի և Ի Հոկտեմբեր ի Թ. Պատմութիւն ընգերացն սրբոյն Հռիփսիմէի Նոյնէ և Մանեա[յ] սուրբ վկայցն և առաքեալուհեացն Վրաց» (էջ 31բ):

7529 թվահամարի Յայսմավուրքը վկայում է. «Սահմի Ի. ի Հոկտեմբեր ի Թ. Սուրբ Հռիփսիմէի ընկերացն Նունէ և Մանեա[յ] առաքելուհեացն» (էջ 27ա): Նույնպիսի ձևակերպում ունի 4741 թվահամարի Յայսմավուրքը (էջ 63ա):

1 Ձեռ. N<sup>o</sup> N<sup>o</sup> 759, էջ 169բ, 179, էջ 539ա:  
2 Ձեռ. N<sup>o</sup> N<sup>o</sup> 752, էջ 166բ, 5667, էջ 126բ, 7203, էջ 66բ, 9838, էջ 171ա-բ, 4164, էջ 183բ և այլն:

6338 թվահամարի Յայտնամուրհուրում, որը Գրիգոր իսթեցու խմբի է, կարգում ենք. «Սահմի Ի և Հոկտեմբեր ԻԹ. Տաւն է սրբոց կուսանացն Նուենայ և Մանեայ» (էջ 132բ, տպագիր, էջ 201-203):

Այսպիսով Նուենի և Մանեի հիշատակի օրվա համար ունենք Սահմի 20 (= Հոկտեմբեր 29) հայոց անշարժ տոմարի ամսաթիվը և նրա համարժեքը հուլյան տոմարով, ինչպես և Տոնանամակի վկայած Հուլիս 18-ի հուլյան ամսաթիվը, որը ոչ մի կապ չունի Տոնացույցի ամսաթիվերի հետ. այն է՝ Մայիս 25 - Հունիս 28-ի, այսինքն՝ Պենտեկոստեից հաշված 3-րդ կիրակիից հետո եկող երկուշաբթիի (14-րդ դարից հետո մեկ օրվա տարբերությամբ, երբ նրանց հիշատակի օրը տեղափոխվեց երեքշաբթի) հուլյան համարժեքները նայած տարի: Ընդունենք Սահմի 20-ը իբրև Նուենի և Մանեի հիշատակի օրվա հայոց շարժական տոմարի ամսաթիվ, որովհետև նրանց հիշատակի օրը երբեք չի նշվել Սահմի 20 = Հոկտեմբեր 29-ին և կիրառենք հայոց տոմարական և տոնացույցային եղանակները գտնելու այն տարիները, երբ առաջացել է վերոհիշյալ ամսաթիվը:

Ըստ հայոց տոմարական եղանակի, նկատի ունենալով վկայված Հուլիս 18-ը, ստանում ենք, Սահմի 20 = Հուլիս 18, որտեղից Սահմի 1 = Հունիս 29 = 840-843 թթ.

Պենտեկոստեն կատարվել է Սահմի 5-ին, իսկ Նուենի և Մանեի հիշատակի օրը, եղել է Սահմի 20-ը, այսինքն Պենտեկոստեից հաշված 16-րդ օրը, երկուշաբթի: «Հայոց Տոնացույց» ծրագրի հաշվարկներից ստանում ենք հետևյալ արդյունքները.

Ներկա թվական	Հուլյան ամիս	Հուլյան ամսաթիվ	Ծաբաթվա օր	Հայոց թվական	Հայոց ամիս	Հայոց ամսաթիվ	Ծաբաթվա օր
974	6	15	2	423	3	20	2
988	6	11	2	437	3	20	2
1002	6	8	2	451	3	20	2
1016	6	4	2	465	3	20	2
1030	6	1	2	479	3	20	2

Դժվար է նախապատվություն տալ ստացված թվերից մեկին: Ստացվում է, որ մինչև 9-րդ դարի կեսերը Նուենի և Մանեի հիշատակի օրը տոնել են անշարժ կերպով Հուլիս 18-ին, իսկ դրանից հետո նրանց հիշատակի օրը մտել է հայոց տոնացույցի մեջ վեր է ածվել շարժական տոնի: Նախապատվությունը տալիս ենք տոնացույցային եղանակով ստացված տարիներին, այն է՝ 10-րդ դարի վերջին քառորդի և 11-րդ դարի սկզբների տարեթիվերին, որոնք տալիս են Սահմի 20-ի տոնացույցային հուլյան արժեքները, այսինքն՝ Մայիս 25 - Հունիս 28-ի կոնկրետ տարիների համարժեքները: Այդ տարիների նրանց հիշատակի օրը ստացել է Սահմի 20 ամսաթիվը, սակայն պարզ չէ թե այն գալիս է Հովհան Օձնեցու Տոնացույցից, թե նրա հետագա խմբագրություններից: Այդ հարցը լուծելու համար անհրաժեշտ են լրացուցիչ տվյալներ:

\*\*\*

Անցնենք Սարգսի և Բագոսի հիշատակի օրվա քննությանը:

Հայոց անշարժ տոմարի տոնական տարվա կտրվածքով շարադրված 832 թվահամարի ձառոցը գրանցել է. «Սահմի Լ (= Հոկտեմբեր 29). Սրբոցն Սարգսի և Բագոսի»:

Սահմի 30-ի ամսաթիվն ունեն Վենետիկի 639 թվահամարի գրչագիրը, ինչպես և Երևանի Մատենադարանի 4514 (էջ 257ա), 4977 (էջ 61ա-բ), 939 (էջ 341ա) և 4506 (էջ 270բ) ճա-

ռոցների ընդօրինակությունները: Վերջիններս միաժամանակ ունեն Հինգշաբթի օրվա նշումները: Ձառոցների մի խումբ ունի միայն Հինգշաբթի օրվա հիշատակությունը: Այսպես 7741 թվահամարի գրչագրում գրված է. «Եշ [հինգշաբթի] աւր. Յիշատակ է Սարգսի եւ Բագոսի...»: Նույնը ունի ներքին լուսանցքում (էջ 308ա-բ): Այդպիսի գրանցում ունի նաև 4107 թվահամարի ձառոցը (էջ 563):

Գրիգոր Վկայասերի Տոնանամակի խմբագրության մեջ կարգում ենք.

ա) «Նորին (Հոկտեմբեր) է. Սարգսի և Բագոսի» (ցանկի մեջ, էջ 5ա):

բ) «Նորին (Հոկտեմբեր) է. վկայութիւն Սարգսի և Բագոսի և ընկերաց Նոցա» (բնագրում՝ էջ 387բ):

940 թվահամար ձառոցը գրանցել է (ՃԽԳ համարի տակ). «Հոկտեմբեր է եւ Հոռի ԻԸ. Սարգսի եւ Բագոսի և ընկ(երաց նոցա)...»: Իսկ 936 թվահամարի ձառոցը պարզապես «Սարգսի եւ Բագոսի» (էջ 78ա):

Վերջապես 6235 թվահամարի ձառոցում գրված է. «Սահմի է. Սարգսի և Բագոսի» (էջ 23ա):

Հայոց տոնացույցերը հիմնականում միանշանակ Սարգսի և Բագոսի հիշատակի օր են նշել Հոգեգալստից հաշված երրորդ կիրակիից հետո եկող հինգշաբթի օրը, այսինքն՝ Պենտեկոստեից հաշված 19-րդ օրը: Այսպես, 759 թվահամարի տոնացույցի ընդօրինակությունները մեջ գրված է. «Եշ [հինգշաբթի]. Սարգսի և Բագոսի» (էջ 169բ): Նույն սահմանումն ունեն նաև 179, 752 (էջ 166բ), 5667 (էջ 126բ), 7203 (էջ 66բ), 9838 (էջ 172ա), 164 (էջ 183բ) և 4874 (էջ 187) թվահամարների տոնացույցերի ընդօրինակությունները: Միայն 2092 թվահամարի տոնացույցի ընդօրինակության մեջ երկուշաբթի նշվել է Սարգսի և Բագոսի հիշատակի օրը, իսկ հինգշաբթի՝ Նուենի և Մանեի (էջ 225բ-226ա), որը տոների օրերը փոխելու անհաջող փորձ է, որովհետև հետագա տոնացույցերի ընդօրինակությունները, ինչպես նշվեց վերևում, շարունակել են հիշյալ տոնի օրը դնել հինգշաբթի:

Հայոց Յայտնամուրհի խմբագրությունները նույնպես միանշանակ Սարգսի և Բագոսի հիշատակի օրը դրել են Հոռի 28 = Հոկտեմբերի 7 կանոնի տակ, տալով տարբեր ձևակերպումներ: Այսպես, Վենետիկի 1048 թվահամարի Յայտնամուրհի ընդօրինակության մեջ կարգում ենք. «(Հոկտեմբեր) է. վկայաբանութիւն սրբոցն Սարգսի եւ Բագոսի»: Այդպիսի ձևակերպում ունեն 7529 թվահամարի Յայտնամուրհի խմբագրության մեջ (էջ 12ա): Վենետիկի 631, Երևանի 2695 (էջ 272ա) և 7433 թվահամարների Յայտնամուրհի խմբագրությունների մեջ գրված է. «Հոռի ԻԸ և Հոկտեմբեր է. վկայութիւն սրբոցն Սարգսի և Բագոսի»:

3082 (էջ 390բ) և 179 թվահամարի համառոտ Յայտնամուրհի Հոռի 28-ի (= Հոկտեմբերի 7) տակ գրանցել են «վկայութիւն Սարգսի և Բագոսի»:

9585 թվահամարի Յայտնամուրհի ունի. «Հոռի ԻԸ (և) Հոկտեմբերի (է). Սարգսի և Բագոսի և այլ վկայիցն» (էջ 16ա):

Վերջապես Գրիգոր իսթեցու Յայտնամուրհի խմբագրությունների մեջ կարգում ենք. «Հոռի ԻԸ եւ Հոկտեմբերի է. վկայաբանութիւն սրբոցն Սարգսի և Բագոսի» (Ձեռ. № 6338, էջ 104ա, տպագիր, էջ 154-156):

Այսպիսով Սարգսի և Բագոսի հիշատակի օրվա համար առկա են Սահմի 30 = Հոկտեմբերի 29: Քանի որ Հոկտեմբերի 29-ին երբեք Սարգսի և Բագոսի հիշատակի օր չի կատարվել, այլ այն եղել է Մայիս 28-ի - Հուլիս 1-ի սահմաններում նայած տարի, ուստի Սահմի 30-ը հայոց շարժական տոմարի ամսաթիվ է: Այնուհետև Հոկտեմբերի 7-ը = Հոռի 28: Վերջինս Հոկտեմբերի 7-ի հայոց անշարժ տոմարի Հոռի 28-ի համարժեքն է, ուստի Հոռի 28-ը քննության չենք են-

Թարկում: Իսկ Հոկտեմբերի 7-ը վկայված է ոչ միայն Հայոց Յայտմավորքներում և Ճաշոցներում այլ Յունաց և Լատինացոց Տոնացույցերում: Վերջապես Սահմի 7-ի ամսաթիվը: Հիշյալ ամսաթիվերի ժամանակը կարող ենք որոշել մեզ հայտնի երկու՝ Հայոց Տոմարական և Տոնացույցային եղանակներով: Սկսենք Հայոց տոմարական եղանակի կիրարկումից: Ըստ Տոմար ծրագրի ստանում ենք.

1.

Ներկա թվական	Հուլյան ամիս	Հուլյան ամսաթիվ	Ծաբաթվա օր	Հայոց թվական	Հայոց ամիս	Հայոց ամսաթիվ	Ծաբաթվա օր
464	10	7	4	–	3	7	4
465	10	7	5	–	3	7	5
466	10	7	6	–	3	7	6
467	10	7	7	–	3	7	7

2.

Ներկա թվական	Հուլյան ամիս	Հուլյան ամսաթիվ	Ծաբաթվա օր	Հայոց թվական	Հայոց ամիս	Հայոց ամսաթիվ	Ծաբաթվա օր
556	10	7	7	5	3	30	7
557	10	7	1	6	3	30	1
558	10	7	2	7	3	30	2
559	10	7	3	8	3	30	3

Հիշյալ Հայոց ամսաթիվերից Սահմի 30-ը կարող էր առաջանալ երբ թարգմանել են Սարգսի և Բագոսի վկայաբանությունը կամ էլ Հոկտեմբերի 7-ին համարժեք Հայոց շարժական տոմարի ամսաթիվերից, երբ նրանց հիշատակի օրը նշել են անշարժ տոնական օրով: Ավելի հակված ենք մտածելու, որ հիշյալ ամսաթիվերից մեկը Սահմի 30-ը դրվել է Հոկտեմբերի 7-ի համարժեքը, երբ թարգմանվել է նրանց վկայաբանությունը, որից հետո նրանց հիշատակը տոնել են մինչև «Տաւնացոյց ըստ շաբաթուցի» մեջ մտցնելը, երբ նրանց հիշատակի օրը վերածվեց շարժականի և տոնվեց Մայիս 28 - Հուլիս 1-ի սահմաններում նայած տարի:

Հայոց Տոնացույցային եղանակը տալիս է հետևյալ արդյունքները: Տեսանք, որ Սարգսի և Բագոսի հիշատակի օր է սահմանվել Հոգեգալստից հաշված 19-րդ օրը, հիգլաթի, հետևաբար «Հայոց տոնացույց» ծրագրի հաշվումներին տալիս են.

1.

Ներկա թվական	Հուլյան ամիս	Հուլյան ամսաթիվ	Ծաբաթվա օր	Հայոց թվական	Հայոց ամիս	Հայոց ամսաթիվ	Ծաբաթվա օր
906	6	19	5	355	3	7	5
920	6	15	5	369	3	7	5
934	6	12	5	383	3	7	5
948	6	8	5	397	3	7	5
962	6	5	5	411	3	7	5

2.

Ներկա թվական	Հուլյան ամիս	Հուլյան ամսաթիվ	Ծաբաթվա օր	Հայոց թվական	Հայոց ամիս	Հայոց ամսաթիվ	Ծաբաթվա օր
960	6	28	5	409	3	30	5
1051	6	6	5	500	3	30	5
1065	6	2	5	514	3	30	5
1079	5	30	5	528	3	30	5

Հաշվումները ցույց են տալիս, որ Սարգսի և Բագոսի հիշատակի օրը, երբ վերածվեց շարժական տոնի Հայոց շարժական տոմարի Սահմի 7 ամսաթիվը համարժեք դարձավ Հուլյան տոմարի Հունիսի վերահիշյալ ամսաթիվերին: Պարզ է, որ 6235 թվահամարի ճաշոցը Սահմի 7-ի ամսաթիվը վերցրել է 10 -րդ դարի առաջին կեսի նախագաղափար գրչագրից: Հնարավոր է մտածել, որ քննարկվող Հայոց շարժական տոմարի ամսաթիվերից Սահմի 30-ը առաջացել է Հայոց տոմարական եղանակով նրանց վկայաբանության Հոկտեմբերի 7-ի համարժեք ամսաթիվից: Հետևում է, որ Սարգսի և Բագոսի վկայաբանությունը թարգմանվել է 556-559 թթ. քառամյակում, նրանց հիշատակը տոնել են անշարժ տոնի օրվա՝ Հոկտեմբերի 7-ով, իսկ 10-րդ և 11-րդ դարերում հիշյալ ամսաթիվը կրկնվել է տոնացույցի և տոմարի շարժական ամսաթիվերի կրկնման օրինաչափության հիման վրա, իսկ Սահմի 7-ը առաջացել է տոնացույցային եղանակով և փոխանցվել 6235 թվահամարի ճաշոցին:

\*\*\*

832 թվահամարի ճաշոցը վկայել է. «Տրէ Ժ (= Նոյեմբեր 18). Գիւտ ոսկերաց սրբոյն Գրիգորի»:

Գրիգոր Լուսավորչի տոներին նվիրված հետազոտության մեջ, որը դրել ենք առանձին վերնագրի տակ, ցույց ենք տվել, որ Տրէ 10-ը նախապես եղել է Հայոց շարժական տոմարի ամսաթիվ և առաջացել է տոնացույցային եղանակով 11-րդ դարի առաջին կեսին: Այն վեր է ածվել Հայոց անշարժ տոմարի ամսաթիվի և փոխանցվել հետագայում ընդօրինակված ճաշոցներին, Տոնացույցերին և Յայտմավորքներին, որոնց թվում վերահիշյալ ճաշոցին: Ասենք, որ Գրիգոր Լուսավորչի նշխարաց հիշատակի օրը, իբրև առանձին տոնական օր, առաջացել է 9-րդ դարի 4-րդ քառորդից ոչ շուտ և անմիջապես մտել է Հայոց տոնացույց, ուստի վաղ շրջանում այդ տոնի օրը չէր կարող ունենալ ինչպես Հայոց շարժական տոմարի ամսաթիվ, այնպես էլ Հուլյան կամ որևէ անշարժ տոմարի համարժեք ամիս-ամսաթիվ: Բացի այդ Գրիգոր Լուսավորչի բոլոր տոներն էլ եղել են շարժական սկսած վաղ շրջանից մինչև այժմ: Իսկ այն ամսաթիվերն, որոնք հայտնի են, ինչպես Սեպտեմբերի 30-ը, գալիս են Հունաց և Լատինացոց տոնացույցերից, որոնք անշարժ կերպով տոնել են Գրիգոր Լուսավորչի հիշատակի օրը, որպես Հայաստանի առաջին քրիստոնեություն տարածողի և պետական կրոն հաստատողներից մեկի:

\*\*\*

832 թվահամարի ճաշոցը գրանցել է. «Տրէ ԺԱ (=Նոյեմբեր 19). Սրբոյն Ներսիսի եւ Խաղա[յ]» (էջ 39ա-բ): Այդ ամսաթիվն են տվել նաև 3266 (էջ 170ա) և 4977 (էջ 63բ) ճաշոցները:



Հայոց ճաշոցներն ու որոշ տոնացույցեր ներսեսի և Խաղի հիշատակի օր են վկայել նաև այլ ամսաթվերի, այն է՝ Տրէ 10<sup>1</sup>, Տրէ 12<sup>2</sup>, Տրէ 15<sup>3</sup>, Տրէ 18<sup>4</sup>, միաժամանակ երկուշաբթի օրվա տակ են գրանցել որոշ գրչագրեր (4514, 939, 4437, 4507): Միայն երկուշաբթի օրվա նշումն ունեն հետևյալ ճաշոցները՝ 7741 (էջ 315ա), 4107 (էջ 578), 5455 (էջ 207բ): Վերջապես 940 թվահամարի ճաշոցը նրանց հիշատակի օր է վկայել Հայոց անշարժ տոմարի Մեհեկի 13-ը և նրա հուլյան համարժեքը՝ Փետրվարի 19-ը: Հայոց տոնացույցերը միանշանակ «Ձկնի Հոգևոյ գալստեան չորրորդ կիրակի»-ից հետո եկող «Բշ (երկուշաբթ), Սրբոյ ներսեսի հայրապետի և Խաղա[յ] եպիսկոպոսի» հիշատակի օր են սահմանել<sup>5</sup>:

Հայոց Յայսմավուրքները երկու խմբի են բաժանվում. հուլյան կամ հուլյան ու Հայոց անշարժ տոմարի ամսաթվերի զուգահեռներով տրված: Յայսմավուրքները միայն «ներսեսի հայոց եպիսկոպոսապետի» կամ «հայրապետի առաջնոյ» հիշատակի օր են դրել Փետրվարի 19-ը կամ Փետրվարի 19 և Մեհեկի 13-ը (Վենետիկյան 1048 և 710 թվահամարների գրչագրեր), իսկ Հայոց անշարժ տոմարի և հուլյան ամսաթվերով գրված Յայսմավուրքները վկայել են «Տրէ ԺԱ և Նոյեմբեր ԺԹ. վկայաբանութիւն սրբոյն ներսեսի հայոց կաթողիկոսի եւ Խաղա[յ] եպիսկոպոսի»<sup>6</sup>: Այսպես ունեն նաև հետևյալ Յայսմավուրքների գրչագրերը (3082, էջ 391բ, 179, Վենետիկի 189-ը, 7433, էջ 123բ, 9585, էջ 58ա, 7530, էջ 28բ-29ա, 4741, էջ 94բ, 6338, էջ 173ա և այլն):

Հ. Ավգերյանը բերել է Վենետիկի ճաշոցների տեղեկությունները: Նա գրել է. «Մեծն ներսես... Փոխեցաւ... յամսեանն Հրոտից՝ որպէս սաի ի ճառնտիրս, որ օր հինգ էր ամսոյն յաւուր հինգշաբթի... այլք ի Տրէի ԺԱ, կամ ի Նաւասարդի Լ ասեն»: Միաժամանակ ծանոթագրութեան մեջ գրել է. «Այսպէս է ի ճառնտիրս» այն է՝ ի Հրոտից Ե. յաւուր հինգշաբթոց, զոր չգիտեմ զի արդ Մեսրոպ երեց զնէ «յերեսունն Նաւասարդի ամսեան և յօգոստոս ամսեան իԹ. յաւուր հինգշաբթոջ. թերևս շփոթեալ է ըստ աւուր ծննդեան և փոխման մեծին Սահակայ որդւոյ ներսեսի: Թող ճաշոցս. որք զնեն ի Տրէ ամսոյ ԺԱ ըստ որոյ եղեալ է ի Յայսմավուրք Նոյեմբեր 19»: Վերջապես նա բերել է տվյալներ, որտեղ ներսեսի նշխարաց գյուտը դրվել է Հայոց 721 թվականին, նրա Տեսիլքը հինգշաբթի, 26 Հունվարի և Նշխարաց տոնը՝ Փետրվար 1 = Արաց 25 ըստ Հայոց անշարժ տոմարի<sup>7</sup>:

Ներսես հայրապետի և Խաղ եպիսկոպոսի հիշատակի օրվա համար վկայված Հայոց և հուլյան անշարժ տոմարների ամիս-ամսաթվերի զուգահեռները, այն է՝ Տրէ 11 = Նոյեմբերի 19, Փետրվարի 19 = Մեհեկի 13 և Փետրվարի 1 = Արաց 25, բացառենք, որովհետև ժամանակի իմաստով, ինչպես բազմիցս նշել ենք որևէ ինֆորմացիա չեն տալիս: Վերանում են նաև ներսեսի տեսիլքի և նշխարաց գյուտին վերաբերվող հինգշաբթի և Հունվարի 26-ը, որովհետև նրանք տեղի են ունեցել ուշ շրջանում:

Փաստորեն մնում են Հայոց շարժական տոմարի ամսաթվերը, որոնց թվում Նավասարդի 30 և Օգոստոսի 29-ի համարժեքը:

Հայոց տոմարական եղանակով ստանանք վերոհիշյալ ամսաթվերի տարիները. Նավասարդի 30 = Օգոստոս 29, որտեղից Նավասարդի 1 = Օգոստոս 2 = 464-467 թթ.: Պարզ է դառնում,

1 Ձեռ. N° 979, էջ 440բ:  
 2 Ձեռ. N° N° 4514, էջ 263բ, 939, էջ 350ա, 4507, էջ 277բ:  
 3 Ձեռ. N° N° 6235, էջ 28բ, 2092, էջ 226ա:  
 4 Ձեռ. N° 4437:  
 5 Ձեռ. N° N° 759, էջ 178բ, 179, 752, էջ 167ա, 767, էջ 169ա, 2092, էջ 226ա, 5667, էջ 127ա, 7203, էջ 67ա, 9838, էջ 171բ, 4164, էջ 185ա, 4876, էջ 188ա և այլն:  
 6 Ձեռ. N° 2695, էջ 321բ:  
 7 Տե՛ս Հ. Ավգերյան, Լիակատար վարք և վկայաբանութիւն սրբոցն, հ. Գ, էջ 393-394, 410 և այլն:

որ Մեսրոպ երեցի կողմից վկայված ամիս-ամսաթվերի զուգահեռները ոչ ներսեսի մահվան հետ է կապված, ոչ նրա հիշատակի օրվա, քանի որ Օգոստոսի 29-ը վաղ շրջանում Հովհաննես Մկրտչի հիշատակի օրվա անշարժ տոմարի պատկերն է և ոչ էլ կապ ունի Սահակի մահվան հայոց շարժական տոմարի օրվա հետ, ինչպես ենթադրել է Հ. Ավգերյանը: Ուշագրավ է, որ Բյուզանդական պատմությունների հեղինակը, որը փաստորեն գրել է ներսեսի վարքի և Խաղի մասին, ոչ մի ամսաթվային տվյալ չի հաղորդում նրանց մահվան օրվա կապակցությամբ: Փաստորեն առկա են Հայոց շարժական տոմարի բազմաթիվ ամսաթվեր ներսեսի և Խաղի հիշատակի օրվա կապակցությամբ և ոչ մի հուլյան ամսաթիվ, որպեսզի հնարավոր դառնար համադրելով այդ ամսաթվերը որոշել նրանց հիշատակի օրը վաղ շրջանում:

Միաժամանակ ակնհայտ է, որ ներսես հայրապետի և Խաղ եպիսկոպոսի հիշատակի օրվա համար փաստագրված Հայոց շարժական տոմարի ամիս-ամսաթվերը, որոնք բազմաթիվ են, առաջացել են կամ Հայոց տոմարական կամ տոնացույցային եղանակներով: Սկսենք վերջին եղանակի կիրառմամբ: Հայոց տոնացույցերից և ճաշոցների բազմաթիվ ընդօրինակություններից հայտնի է դառնում, որ ներսես հայրապետի և Խաղ եպիսկոպոսի հիշատակի օր է կանոնվել Հոգեգալստից հաշված 4-րդ կիրակիից հետո եկող երկուշաբթի օրը, այն է՝ Պենտեկոստեից հաշված 30-րդ օրը, որը հուլյան տոմարով ընկել է Հունիս 8 - Հուլիս 12-ի սահմաններում նայած տարի:

Դժար չէ գտնել վկայված Հայոց շարժական տոմարի ամսաթվերի առաջացման տարիները օգտագործելով «Հայոց տոնացույց» ծրագիրը, այն է՝

1.

Ներկա թվական	Հուլյան ամիս	Հուլյան ամսաթիվ	Ծաբաթվա օր	Հայոց թվական	Հայոց ամիս	Հայոց ամսաթիվ	Ծաբաթվա օր
960	7	9	2	409	4	11	2
1051	6	17	2	500	4	11	2
1065	6	13	2	514	4	11	2
1079	6	10	2	528	4	11	2

2.

Ներկա թվական	Հուլյան ամիս	Հուլյան ամսաթիվ	Ծաբաթվա օր	Հայոց թվական	Հայոց ամիս	Հայոց ամսաթիվ	Ծաբաթվա օր
1001	6	30	2	450	4	12	2
1015	6	27	2	464	4	12	2
1029	6	23	2	478	4	12	2
1043	6	20	2	492	4	12	2
1057	6	16	2	506	4	12	2

3.

Ներկա թվական	Հուլյան ամիս	Հուլյան ամսաթիվ	Ծաբաթվա օր	Հայոց թվական	Հայոց ամիս	Հայոց ամսաթիվ	Ծաբաթվա օր
998	7	4	2	447	4	15	2
1012	6	30	2	461	4	15	2
1026	6	27	2	475	4	15	2
1040	6	23	2	489	4	15	2
1054	6	20	2	503	4	15	2



Ներկա թվական	Հուլյան ամիս	Հուլյան ամսաթիվ	Ծաբաթվա օր	Հայոց թվական	Հայոց ամիս	Հայոց ամսաթիվ	Ծաբաթվա օր
995	7	8	2	444	4	18	2
1009	7	4	2	458	4	18	2
1023	7	1	2	472	4	18	2
1037	6	27	2	486	4	18	2

Կարելի է պնդել, որ Ներսես կաթողիկոսի և Խաչատուրի հիշատակի օրվա կապակցությամբ սկզբնաաղբյուրներում գրանցված վերոհիշյալ ամիս-ամսաթվերը առաջացել են 10-րդ դարի 2-րդ կեսին՝ 11-րդ դարում: Ակնհայտ է, որ 4437 թվահամարի գրչագիրն ընդօրինակվել է 10-րդ դարի վերջի - 11-րդ դարի սկզբների նախագաղափար բնագրից, իսկ 832, 3266 և 4977 ճառերը հատկապես 832 թվահամարի գրչագիրն իր նյութերն առանձնապես Տրէ 11 ամսաթիվը, քաղել է 960 թ. կամ 1051-1079 թթ. գրված բնագրերից:

Վերջապես 4514, 939 և 4507 ճառերի, ինչպես և 6235, 2092 թվահամարների գրչագրերի նախագաղափարները ևս գալիս են 10-11-րդ դարերից:

Ինչ վերաբերում է Նավասարդ 30-ին, ապա նրա համար կարելի է կիրառել Հայոց տոմարական եղանակը, ընդունելով, որ Ներսես Հայրապետը և Խաչատուրը վաղ շրջանում չեն ունեցել անհատականացված Հիշատակի օրեր և նրանց հիշատակը տոնել են այլ սրբերի հետ ընդհանրացված ձևով հնագույն «Կանոնք Ընթերցուածոց»-ների խմբագրությունների մեջ վկայված Հունվարի 13-ին, Մարտի 9-ին և Օգոստոսի 23-ին: Հայոց տոմարական եղանակի կիրառությամբ ստանում ենք արդյունքներ, որից ընդունելի է միայն մեկը, այն է՝ Նաւասարդ 30 = Օգոստոս 23, որտեղից Նավասարդ 1 = Հուլիս 25 = 496-499 թթ.:

Նավասարդի 30-ը կարելի է ընդունել Ներսես Հայրապետի և Խաչատուրի հիշատակի օրվա նշում Հայոց շարժական տոմարով 496-499 թթ. քառամյակի սահմաններում, երբ նրանք չունեին անհատականացված հիշատակի օրեր և 5-8-րդ դարում կատարվում էին այլ սրբերի հետ միասին անշարժ ձևով՝ Օգոստոսի 23-ին, իսկ 8-րդ դարի սկզբներից նրանց հիշատակի օր սահմանեց Հովհան Օձնեցիի Պենտեկոստից հաշված 30-րդ օրը, երկուշաբթի: Դրանից հետո նրանց տոնի օրը վերածվեց շարժականի Հուլյան համարժեքներ ունենալով Հունիս 8 - Հուլիս 12-ի ամսաթվերը նայած տարի: Այդպես էլ տոնվեց հետագայում ունենալով Հայոց շարժական տոմարի վերոհիշյալ համարժեքները տարիների որոշակի խմբերում, որոնք հետագա հեղինակների հաշվման արդյունք էին:

\*\*\*

Հայոց անշարժ տոմարի կառուցվածքի հիման վրա գրված 832 թվահամարի ճառերը գրանցել է. «Տրէ ԺԵ (= Նոյեմբեր 23). Դանիէլի և երից մանկանցն»: Տրէ ԺԵ-ի ամսաթիվն են տալիս Վենետիկի 639 թվահամարի գրչագիրը, ինչպես և Երևանի մատենադարանի ճառերների հետևյալ գրչագրերը՝ 3266 (էջ 171բ), 4977 (էջ 64բ) և 4506 (էջ 278բ): Վերջինս ունի նաև երեքշաբթի օրվա հիշատակություն:

940 թվահամարի ճառերը ձՁՁ համարի տակ գրել է. «Դեկտեմբեր/ ԺԵ և Տրէ ԺԵ. Դանիէլի մարգարէին և երից մանկանցն...»: Փաստորեն տվել է երկու տարբեր ամսաթվային տվյալներ Դեկտեմբերի 17-ը Հուլյան տոմարով, որի հայոց անշարժ տոմարի համարժեքն է Քաղոց 9-ը և Տրէ 15-ով, որը հայոց շարժական տոմարի ամսաթիվ է:

Ճառոցների մի խումբ Դանիէլի և երից մանկանց հիշատակի օր են վկայել Տրէ 17-ը: Այդ բնագրերն են Երևանի մատենադարանի հետևյալ գրչագրերը՝ 6235 (էջ 29բ), 4514 (էջ 264 ա), 939 (էջ 351 բ) և 4437 (էջ 107բ): Տրէ 17-ի ամսաթիվ ունի նաև 2092 թվահամարի տոնացույցի ընդօրինակությունը (էջ 226ա): Ասենք նաև, որ վերոհիշյալ ճառոցներից շատերը և վերոհիշյալ տոնացույցն ունեն նաև երեքշաբթի օրվա նշումներ:

7741 թվահամարի ճառոցն ունի. «Գշ (երեքշաբթի) աւր. Յիշատակ է Դանիէլ մարգարէի և երից մանկանցն...» (էջ 315 բ. 316ա): Այդպես են գրանցել նաև 4107 և 5455 թվահամարների գրչագրերը (էջ 579 և 208ա): Ասենք նաև, որ որոշ գրչագրեր ավելացրել են երեք մանկանց անունները՝ Անանիա, Ագարիա և Միսայել:

Գրիգոր Վկայասերի Տօնանամակի խմբագրությունը՝ 979 թվահամարի գրչագիրը, Դեկտեմբերի 17-ի կանոնի տակ ներկայացրել է. «Նորին (Դեկտեմբեր) ԺԵ. վկայութիւն սուրբ մարգարէին Դանիէլի և յիշատակ երից մանկանց...» (էջ 422բ):

Հայոց բոլոր տոնացույցերի խմբագրությունները «Դանիէլ Մարգարէի և երից մանկանց» հիշատակի օր են սահմանել Հոգեգալստեան տոնից (Պենտեկոստից) հաշված 4-րդ կիրակիից հետո եկող երեքշաբթին, այն է՝ Պենտեկոստից հաշված 31-րդ օրը, որը շարժական տոն լինելու հետևանքով տատանվել է Հունիս 9 - Հուլիս 13-ի սահմաններում նայած տարի: Բերենք մի խումբ տոնացույցերի համարներն ու էջերը, այն է՝ 759 (էջ 170ա), 179, 752 (էջ 167ա), 767 (էջ 169ա), 5667 (էջ 127բ), 7203 (էջ 67 բ), 9838 (էջ 171բ), 4164 (էջ 185ա), 4874 (էջ 189ա-բ) և այլն:

Հայոց Յայսմավուրքների վաղ խմբագրությունները «Դանիէլի և երից մանկանց» հիշատակի օրը կանոնել են Դեկտեմբերի 17-ի կամ Դեկտեմբերի 17 = Քաղոց 9-ի կամ Քաղոց 9 = Դեկտեմբեր 17-ի տակ: Բերենք մի խումբ գրչագրերի համարները՝ Վենետիկի 1048 և 710 թվահամարների ձեռագրերը, ինչպես և Երևանի մատենադարանի 2695 (էջ 362), 3082 (էջ 392բ), 179, 7433 (էջ 171), 9585 (էջ 94բ), 7530 (էջ 67 ա), 474 1(էջ 137բ) և այլն:

Բացառություն են կազմում Գրիգոր Խլաթեցու խմբագրած Յայսմավուրքի խմբագրությունները, որտեղ Նավասարդ 14 = Օգոստոս 24-ի կանոնի տակ տվել են «Դանիէլ մարգարէի» հիշատակի օրը, իսկ Արեգ 7 = Մարտի 15-ի՝ Դանիէլի և երից մանկանց<sup>1</sup>:

Ասենք նաև, որ Յունաց տոնացույցը գրանցել է «Դանիէլի և երից մանկանց» հիշատակի օրը Դեկտեմբերի 17-ին, իսկ Լատինացոցը՝ Հուլիս 21-ին և Դեկտեմբերի 16-ին: Ակնհայտ է, որ Հայոց Յայսմավուրքում վկայված Դեկտեմբերի 17-ի ամսաթիվը հունաց տոնացույցի ազդեցությամբ հետևանք է: Վերոհիշյալ վկայություններից պարզ է դառնում, որ Դանիէլի և երից մանկանց հիշատակի օրվա Քաղոց 9 (= Դեկտեմբերի 17), Արեգ 7 (= Մարտի 15) և Նավասարդի 14 (= Օգոստոս 24) հայոց անշարժ տոմարի ամիս-ամսաթվեր են, ուստի քննարկման ենթակա չեն հասկանալի պատճառներով: Մնում է պարզել Տրէ 15-ի կամ 17-ը, որպես հայոց շարժական տոմարի ամսաթվերի առաջացման ժամանակը, որը հնարավոր է դառնում հայոց տոնացույցային և տոմարական եղանակների կիրառման շնորհիվ: Հայոց տոմարական եղանակը տալիս է հետևյալ արդյունքները՝

1. Տրէ 15 = Դեկտեմբեր 17, որտեղից Տրէ 1 = Դեկտեմբեր 3 = 332-335 թթ.
2. Տրէ 17 = Դեկտեմբեր 17, որտեղից Տրէ 1 = Դեկտեմբեր 1 = 340-343 թթ.

Ստացված թվերից պարզ է դառնում, որ Դանիէլի և երից մանկանց հիշատակի առանձին օր չի եղել հայոց մեջ վաղ շրջանում, այլապես նրանց հիշատակի օրվա կանոն կունենայինք «Կանոնք Ընթերցուածոց»-ի խմբագրությունների մեջ: Հնարավոր է մտածել, որ նրանց հիշատակի օրը հայտնի է եղել հայոց մեջ վաղ շրջանում, այլապես նրանց հիշատակի օրվա կանոն կունենայինք «Կանոնք Ընթերցուածոց»-ի խմբագրությունների մեջ:

1 Ձեռ. № 6338, էջ 27ա և 393 ա և այլն:

տակը նշել են մյուս սրբերի հետ ընդհանուր ձևով Հունվարի 13-ին, Մարտի 9-ին կամ Օգոստոսի 23-ին և Տրէ 15-ը կամ 17-ը արտացոլում են այդ օրերի վիճակը որոշ տարիների կտրվածքով: Պարզվեց, որ միայն Տրէ 15 կամ 17-ը համարժեք Օգոստոսի 23-ին տալիս է դրական արդյունք, այն է՝

1. Տրէ 15 = Օգոստոսի 23, որտեղից Տրէ 1 = Օգոստոսի 9 = 796-799 թթ.

2. Տրէ 17 = Օգոստոսի 23, որտեղից Տրէ 1 = Օգոստոս 7 = 804-807 թթ.:

Այս արդյունքը ևս ընդունելի է: Ավելի հավանական, որ Դանիելի և երից մանկանց հիշատակի օրվա համար վկայված հայոց շարժական տոմարի Տրէ 15 և Տրէ 17 ամսաթվերն առաջացել են հայոց տոնացույցի հիման վրա, երբ նրանց հիշատակի օրը եղել է Պենտեկոստեից հաշված 31-րդ օրը, երեքշաբթի: Վերոհիշյալ երկու ամսաթվերի համար ստանում ենք հետևյալ տարիները, ըստ «Հայոց տոնացույց»-ի տվյալների.

1.

Ներկա թվական	Հուլյան ամիս	Հուլյան ամսաթիվ	Ծաբաթվա օր	Հայոց թվական	Հայոց ամիս	Հայոց ամսաթիվ	Ծաբաթվա օր
1048	6	21	3	497	4	15	3
1062	6	18	3	511	4	15	3
1076	6	14	3	525	4	15	3

2.

Ներկա թվական	Հուլյան ամիս	Հուլյան ամսաթիվ	Ծաբաթվա օր	Հայոց թվական	Հայոց ամիս	Հայոց ամսաթիվ	Ծաբաթվա օր
976	7	11	3	425	4	17	3
990	7	8	3	439	4	17	3
1004	7	4	3	453	4	17	3
1095	6	12	3	544	4	17	3

Պարզ է դառնում, որ Տրէ 15 և 17 ամսաթվերը առաջացել են տոնացույցային եղանակով, երբ Դանիելի և երից մանկանց հիշատակի օրը նշել են Պենտեկոստեից հաշված 31-րդ օրը և հայ հեղինակներից մեկը հաշվարկել է Տրէ 15-ի, մյուսը Տրէ 17-ի հայոց շարժական տոմարի ամիս-ամսաթվերը և գրանցել են ճաշոցներից մեկի և մյուսի մեջ 10-րդ դարի վերջում - 11-րդ դարում, որից փոխանցվել են հետագա ընդօրինակություններին: Մենք նախապատվություն չենք տալիս այդ երկու ամսաթվերից որևէ մեկին ոչ միայն նրա համար, որ այդպիսի հաշվարկ հնարավոր չէ բացառել, այլ նաև նրա համար, որ բնագրերի անկախ խմբեր են գրանցել դրանք, որոնցից էլ փոխանցվել են Տրէ 15 և 17 արժեքները, մեկը 832 թվահամարի գրչագրին, որը հնագույն փոխանցումն է, իսկ մյուսը՝ այլ բնագրերի, որոնց ակունքները գալիս են 10-րդ դարից:

Այսպիսով, Դանիել մարգարեի և երից մանկանց հիշատակի առանձին օր չի եղել հնագույն տոնացույցում և նրա խմբագրությունների մեջ: Այն կարող էր առաջանալ միայն Տոնացույց ըստ շաբաթուցների գործադրությունից սկսած, այսինքն՝ 8-րդ դարից հետո: Դանիելի և երից մանկանց հիշատակի օրվա հայոց շարժական տոմարի Տրէ 15-ի և 17 ամսաթվերը 10-11-րդ դարերում հաշվարկվել և գրանցվել են բնագրերում, որոնցից էլ հետագայում օգտվել և փոխանցել են սերնդից սերունդ:

832 թվահամարի գրչագրերը Տրէ 17-ի ամսաթվի տակ կանոնել է. «Տրէի ժէ (= Նոյեմբեր 25). Սահակայ եւ Մեսրոբա(յ) եւ այլոց թարգմանչացն» (էջ 43ա) Տրէ 17-ի տակ է ձևակերպված թարգմանչաց հիշատակի օրը նաև Վենետիկի 639 թվահամարի գրչագրում<sup>1</sup>, Գրիգոր Վկայասերի Տոնանամակի խմբագրությունից հավելվածի մեջ<sup>2</sup>, 6235 թվահամարի ձառնուցում (էջ 31ա) և 4977 թվահամարի գրչագրում (էջ 65բ):

940 թվահամարի ձառնուցը (ձի համարի տակ) գրանցել է, «Սեպտեմբեր թ եւ Նաւասարդ Լ. Սահակայ հայրապետի եւ այլոց սրբոց թարգմանչացն...»: Տրէ Ժ-ի կանոնի տակ են գրանցել թարգմանչաց հիշատակի օրը ճաշոցների մի խումբ, այն է՝ 4514 (էջ 265բ), 939 (էջ 352բ), 4437 (էջ 109ա), 4506 (էջ 279բ-280ա), որոնք ներքին լուսանցքում սկզբից կրկնել են հինգշաբթի օրվա նշումը, միաժամանակ ավելացնելով վերևի կանոնի բովանդակությունը: Միայն հինգշաբթի օրվա նշումով են ձևակերպել կանոնը 7741 (էջ 317ա), 4107 (էջ 584-585), 5455 (էջ 20բ) և այլ ճաշոցներ:

Հայոց տոնացույցերի համարյա բոլոր ընդօրինակությունները թարգմանչաց կանոնը տվել են հինգշաբթի օրվա տակ: Բերենք մի խումբ տոնացույցերի համարներ ու էջերը, 759, էջ 170ա, 179, 752, էջ 167ա, 767, էջ 163ա, 5667, էջ 127բ, 7203, էջ 67բ, 9838, էջ 172ա, 4874, էջ 188ա-բ: Բացառություն է կազմում 2092 թվահամարի Տոնացույցը, որը բացի հինգշաբթի օրվա նշումից ավելացրել է նոր ամսաթիվ, այն է՝ «ի Տրէի ժէ» (էջ 226ա):

Յայտնավորքների բոլոր խմբագրությունները, որոնք սկզբից ունեն հայոց անշարժ տոմարի ամսաթիվը այնուհետև հուլյանը, թարգմանչաց հիշատակի օրը տալիս են Տրէ 17 և Նոյեմբեր 25 կանոնի տակ: Բերենք մի խումբ ձեռագրերի համարներն ու համապատասխան էջերը. 2695, էջ 332, 3082 էջ 392ա, 179, Վենետիկի 189 թվահամարի ձեռագիր, 7433, էջ 134ա, 9585, էջ 67ա, 7529, էջ 62ա, 7530, էջ 39բ, 4741, էջ 106ա, 6338, էջ 185ա և այլն: Վենետիկի 1048 թվահամարի Յայտնավորքը Սեպտեմբերի 17-ի տակ է գրանցել Սահակ հայրապետի և Մեսրոբ վարդապետի հիշատակի օրը, իսկ Վենետիկի 710 թվահամարի Յայտնավորքը Սեպտեմբերի 17-ին ավելացրել է հայոց անշարժ տոմարի Հոռի 8-ը նույն ձևակերպմամբ:

Այլ խոսքով թարգմանչաց հիշատակի օրվա համար ունենք Տրէ 17-ը, որը համարժեք է դրվել Նոյեմբերի 25-ին: Ասենք, որ թարգմանչաց տոնը երբեք Նոյեմբերի 25-ին չի կատարվել, այլ Հոգեգալստեան 4-րդ Կիրակիից հետո եկող հինգշաբթի օրը, այն է՝ Պենտեկոստեից հաշված 33-րդ օրը, որը ընկել է Հունիս 11-Հուլիս 15-ի օրերից մեկում նայած տարի, ուստի Տրէ 17-ը, ինչպես և Տրէ 10-ը և 18-ը գալիս են հայոց շարժական տոմարից, որոնք հետագայում են վերածվել հայոց անշարժ տոմարի ամսաթվերի և ստացել հուլյան առկա համարժեքները:

Սեպտեմբերի 17-ը Հոռի 8-ի հայոց անշարժ տոմարի համարժեքն է և առանձին չի օգտագործվել, որպեսզի հնարավորություն տար հաշվումների համար: Այլ խոսքով թարգմանչաց տոնի հին ամսաթիվը հայոց շարժական տոմարի ամիս-ամսաթվով հայտնի չէ, որովհետև Տրէ 10, 17 և 18-ը հայոց տոմարական եղանակի կիրառմամբ և Հունիս 28-ի համադրմամբ, որը թարգմանչաց տոնի հուլյան համարժեքն է, քանի որ թարգմանչաց տոնը տեղադրվել է Տիր աստծու տոնի փոխարեն, որը կատարվում էր Հունիս 28-ին տալիս են 11-րդ դարի 2-րդ կեսից հետո եկող տարեթվեր: Կորյունի վկայությունից հայտնի է, որ թարգմանչաց տոնը տոնել են 5-րդ դարի սկզբներից: Այն անշարժ տոն է եղել մինչև Տոնացույց ըստ շաբաթուցի մեջ մտնելը, այսինքն մինչև 8-րդ դարը, սակայն այդ տոնի օրվա հայոց շարժական տոմարի հին ամսաթվեր

1 Ս. Մեսճեմյան, Աշխ., էջ 612-620:  
2 Ձեռ. № 979, էջ 442ա-բ:

առայում Հայտնի չեն, ուստի տվյալ դեպքում մենք կարող ենք օգտագործել միայն Հայոց տոնացույցային եղանակը:

Վերը տեսանք, որ թարգմանչաց տոնը կատարվել է Պենտեկոստից հաշված 33-րդ օրը, հինգշաբթի: Տեղադրենք Տրէ 17, 10 և 18 ամսաթվերը, վերոհիշյալ տոնի մեջ օգտագործելով «Հայոց տոնացույց» ծրագիրը, կստանանք այդ ամսաթվերի առաջացման տարիները և նրանց հուլյան համարժեքները որոշակի ամիս-ամսաթվերի սահմաններում: Բերենք կոմպյուտերային ծրագրի հաշվումները.

1.

Ներկա թվական	Հուլյան ամիս	Հուլյան ամսաթիվ	Ծաբաթվա օր	Հայոց թվական	Հայոց ամիս	Հայոց ամսաթիվ	Ծաբաթվա օր
957	7	9	5	406	4	10	5
971	7	6	5	420	4	10	5
985	7	2	5	434	4	10	5
999	6	29	5	448	4	10	5
1013	6	25	5	462	4	10	5

2.

Ներկա թվական	Հուլյան ամիս	Հուլյան ամսաթիվ	Ծաբաթվա օր	Հայոց թվական	Հայոց ամիս	Հայոց ամսաթիվ	Ծաբաթվա օր
1048	6	23	5	497	4	17	5
1062	6	20	5	511	4	17	5
1076	6	16	5	525	4	17	5

3.

Ներկա թվական	Հուլյան ամիս	Հուլյան ամսաթիվ	Ծաբաթվա օր	Հայոց թվական	Հայոց ամիս	Հայոց ամսաթիվ	Ծաբաթվա օր
998	7	7	5	447	4	18	5
1012	7	3	5	461	4	18	5
1026	6	30	5	475	4	18	5
1040	6	26	5	489	4	18	5
1054	6	23	5	503	4	18	5

Ակնհայտ է, որ վերոհիշյալ ամիս-ամսաթվերն ստեղծվել են իբրև Հայոց շարժական տոմարի ամսաթվեր 10-րդ դարի կեսերի - 11-րդ դարի 70-ական թվերի սահմաններում, իսկ հետագայում վեր են ածվել Հայոց անշարժ տոմարի ամսաթվերի ստանալով հուլյան տոմարի այնպիսի համարժեքներ, որոնց ժամանակ երբևէ թարգմանչաց տոնի չի կատարվել, մանավանդ Հայոց տոնացույցում Պենտեկոստէ-Վարդավառ հատվածը միշտ հաստատուն է եղել և սահմանված տոները միշտ կապվել են շաբաթվա նույն օրերին շարժվելով Զատիկի կիրակիի հետ միասին:

\*\*\*

832 թվահամարի ծաշոցում, ինչպես և Վենետիկի 639 և Երևանի 6235 գրչագրերում Տրէ 20-ի տակ է կանոնվել Հայոց Կաթողիկե Եկեղեցու Նավակատիքի տոնական օրը: Այն, ինչպես

ցույց տվեցինք վերևում, հաշվարկվել է 1090 կամ 1104 թվականներին: Տրէ 20-ի ստացող հեղինակը Դավիթ Քոբայրեցին է: Վերջինս Հայոց Կաթողիկե Եկեղեցու Նավակատիքի տոնի կապակցությամբ գրել է մեկնություն և Տրէ 20-ը գրանցել իբրև այդ տոնի օր 1090 թվականին կամ 1104 թվականին:

Հայոց եկեղեցու նավակատիքի տոնը կատարել են Հոգեգալստեան տոնի կիրակիից հետո եկող կիրակի, այն է՝ Պենտեկոստից հաշված 8-րդ օրը: Պարզ է, որ Հոգեգալուստը եղել է Հայոց շարժական տոմարի Տրէ 13-ին, իսկ Հայոց կաթողիկե եկեղեցու Նավակատիքի տոնը՝ Տրէ 20-ին: 1090 կամ 1104 թվականից հետո Հայոց շարժական տոմարի այդ ամսաթիվը Դավիթ Քոբայրեցու գրած մեկնությունից անցել է Տոնապատճառների խմբագրություններին և մնացել իբրև Հայոց շարժական տոմարի ամսաթիվ, իսկ ճաշոցներին, հատկապես գրված Հայոց անշարժ տոմարի կառուցվածքով, փոխանցվելով վեր է ածվել Հայոց անշարժ տոմարի ամիս-ամսաթվի, որը ոչ մի կապ չունի Տրէ 20 = Նոյեմբերի 28-ի՝ Հայոց անշարժ տոմարի և նրա հուլյան համարժեքի հետ, որովհետև այդ ժամանակ Հայոց մեջ կաթողիկե եկեղեցու նավակատիքի տոն երբևէ չի կատարվել: Այսպիսով, Հայոց տոնացույցային եղանակի կիրառման շնորհիվ բացահայտվում է ոչ միայն Տրէ 20-ի ստեղծման ժամանակը, այլ և նրա հաշվարկող հեղինակը և նրա մեկնության գրման թվականը, այն է՝ 1090 կամ 1104 թվականներից մեկը:

\*\*\*

832 թվահամարի ծաշոցում կարգում ենք. «Տրէ ԻԱ (= Նոյեմբեր 29). Տրդատայ եւ Աշխէն տիկնոջ եւ Խոսրովիդիտոյ» (էջ 47բ-49ա): Մի խումբ ճաշոցներ և մեկ տոնացույց միանշանակ Տրէ 21-ի կանոնի տակ են տվել Տրդատ թագավորի, նրա տիկնոջ և քրոջ հիշատակի օրը, միաժամանակ նշելով երկուշաբթին: Դրանք հետևյալ գրչագրերն են՝ 6235 էջ 34ա, 4514 էջ 268ա, 4977 էջ 66բ, 936 էջ 356բ, 4437 էջ 112ա 2092 էջ 226բ և այլն: Միայն երկուշաբթի օրվա մասին են վկայել 7441 (էջ 320ա), 4107 (էջ 590), 5455 (էջ 212բ) ճաշոցները: 940 թվահամարի ճաշոցը գրանցել է. «Նոյեմբեր ԻԹ[եւ Տրէ ԻԱ]. Տրդատայ թագաւորի և Աշխէն տիկնոջ եւ Խոսրովիդիտոյ...» (ՃՀԳ համարի տակ):

Հայոց բոլոր տոնացույցերը Հոգեգալստեան տոնից հաշված 5-րդ կիրակիից հետո եկող երկուշաբթիի կանոնի տակ են դրել հիշյալ սրբերի հիշատակի օրը, այսինքն՝ Պենտեկոստից հաշված 37 օրը, որը ընկել է Հունիս 15-Հուլիս 19-ի սահմաններում նայած տարի: Բերենք այդ տոնացույցերի թվահամարներն ու էջերը, այն է՝ 759 (էջ 170ա-բ), 179, 752 (էջ 167ա), 767 (էջ 163ա-բ), 5667 (էջ 127բ), 7203 (էջ 68ա), 9838 (էջ 172ա-բ), 4874 (էջ 188ա-բ) և այլն:

Հայոց Յայսմավուրքների բոլոր խմբագրությունները միանշանակ Տրդատ թագավորի, Աշխեն տիկնոջ և Խոսրովիդիտի հիշատակի օրը կանոնել են Տրէ 21 և Նոյեմբեր 29-ին կամ Նոյեմբեր 29-ին և Տրէ 21-ին: Վկայենք այդ Յայսմավուրքների գրչագրերը Վենետիկի 710 թվահամարը, Երևանի 2095-ը (էջ 337բ), 3082-ը (էջ 392ա), 179-ը, 7433-ը (էջ 139բ), 9585-ը (էջ 70բ), 7529-ը (էջ 67ա), 7530-ը (էջ 45բ), 4741-ը (էջ 112ա), 6338-ը (էջ 193ա) և այլն:

Տրդատ թագավորի, նրա տիկնոջ և Խոսրովիդիտի հիշատակը երբեք Նոյեմբերի 29-ին չի եղել, ուստի Տրէ 21-ը Հայոց շարժական տոմարից առաջացած ամսաթիվ է: Ստանանք նրա ստեղծման տարիները կիրառելով Հայոց տոնացույցային եղանակը:

Ներկա թվական	Հուլյան ամիս	Հուլյան ամսաթիվ	Ծաբաթվա օր	Հայոց թվական	Հայոց ամիս	Հայոց ամսաթիվ	Ծաբաթվա օր
1048	6	27	2	497	4	21	2
1062	6	24	2	511	4	21	2
1076	6	20	2	525	4	21	2

Հաշվումները ցույց են տալիս, որ Տրէ 21-ի ամսաթիվը հաշվարկվել է կամ 1048 թ. կամ 1062 թ. կամ 1076 թ և փոխանցվել հետագայում ընդօրինակված այն ճաշոցներին և տոնացույցներին, որոնք ունեն հիշյալ ամսաթիվը, ինչպես և Յայսմավուրքների տարբեր խմբագրությունների և վեր է ածվել հայոց անշարժ տոմարի ամսաթվի ստանալով Նոյեմբերի 29-ի համարժեքը:

Ասեմք, որ Տրդատ Թագավորի հիշատակը տոնվում էր Գրիգոր Լուսավորչի հետ միասին, ինչպես վկայել է Ստեփանոս Սյունեցին, Բուն Բարեկենդանից հաշված 5-րդ կիրակիից հետո եկող շաբաթ օրը, 5-րդ դարի 80-ական թվականներից: Վերոհիշյալ հաշվումներից երևում է, որ նրանց տոնը արդեն առանձնացվել է 11-րդ դարի կեսերին ստացել է հայոց շաբաթական տոմարի ամսաթիվ: Այդ առանձնացումը կատարվել է 9-րդ դարի 4-րդ քառորդից, երբ Գրիգոր Լուսավորչի տոնական օրերի քանակը ավելացավ և ստացան տարբեր որակումներ:

\*\*\*

832 թվահամարի գրչագրում գրված է. «Տրէ ԻԲ (= Նոյեմբերի 30). Ռստակիսի, Վրթանիսի Յուսկանն, Գրիգորիսի եւ Դանիէլի» (էջ 51ա-52ա): Տրէ 22-ի ամսաթիվն ունեն ճաշոցների հետևյալ գրչագրերը՝ Վենետիկի 639-ը, Երևանի 6235-ը (էջ 35բ), 4514-ը (էջ 268բ), 4977-ը (էջ 66ա), 939-ը (էջ 357ա), 4437-ը (էջ 113բ) և 2092 (էջ 226բ) տոնացույցի խմբագրությունը, որոնցից մի մասը ներքին լուսանցքում ունեն նաև երեքշաբթի օրվա նշումը: Գրիգոր Վկայասերի Տոնանամակի հավելվածում կարդում ենք. «Տրէ ԻԵ. Առիստակիսի, Վրթանեսի, Յուսկանն, Գրիգորիսի և Դանիէլի...»<sup>1</sup>:

940 թվահամարի ճաշոցի ձևը համարի տակ կարդում ենք. «Դեկտեմբեր] դարձեալ Ա եւ Տրէ ԻԲ. Սուրբ հայրապետացն Հայոց՝ Ռըստակիսի, Վրդանիսի, Յուսկանն, Գրիգորիսի, Դանիէլի...»: Տրէ 22-ը վերցրել է նախորդ բնագրերից և դրել է Դեկտեմբերի 1-ի տակ, որը համարժեք է հայոց անշարժ տոմարի Տրէ 23-ին:

4506 թվահամարի ճաշոցը վերոհիշյալ սրբերի հիշատակի օրը դրել է «Տրէ ԺԲ» կանոնի տակ, միաժամանակ ստորին լուսանցքում նշել երեքշաբթի օրը (էջ 283ա):

Վերջապես մի խումբ ճաշոցներ վերոհիշյալ սուրբ հայրապետների հիշատակի օրը կանոնել են երեքշաբթի օրվա տակ<sup>2</sup>:

Հայոց բոլոր տոնացույցների ընդօրինակությունները «Զկնի հոգևոյ գալստեան հինգերորդ կիրակէ»-ից հետո եկող երեքշաբթի օրվա կանոնի տակ գրել են. «Գշ. Սրբոց հայրապետացն Ռստակիսի, Վրթանիսի, Յուսկանն, Գրիգորիսի և Դանիէլի...»<sup>3</sup>:

Վերոհիշյալ որոշ ձեռագրերում ձևակերպումներն որոշ տարբերություններ են տալիս: Այլ խոսքով, Գրիգոր Լուսավորչի որդիների և թոռների հիշատակի օր են սահմանել Պենտեկոստեից հաշված 38-րդ օրը, երեքշաբթի, որը տատանվում էր Հունիս 16 - Հուլիս 20-ի սահմաններում նայած տարի:

Երևանի 179 թվահամարի Յայսմավուրքի համառոտ խմբագրությունը Տրէ ԻԲ-ի և Նոյեմբերի 30-ի տակ է գրանցել «Սրբոց հայրապետաց Հայոց Առիստակիսի Վրթանիսի, Յուսկանն, Գրիգորիսի և Դանիէլի» հիշատակի օրը, իսկ Վենետիկի 710 թվահամարի գրչագիրը՝ Նոյեմբերի 30-ի տակ:

յեմբեր 30 և Տրէ 22 հաջորդականությամբ: Յայսմավուրքների մյուս խմբագրությունները վերոհիշյալ սրբերի հիշատակի օր են կանոնել Տրէ 23 և Փետրվար 1-ին<sup>1</sup>:

Մ. Ավգերյանը հիշատակել է Դեկտեմբերի 1-ը միաժամանակ փակագծում տվել Մարտի 6-ի և Սեպտեմբերի 30-ի ամսաթիվերը<sup>2</sup>: Փետրվարի 1-ի ամսաթիվը հասկանալի է, իսկ Մարտի 6 և Սեպտեմբերի 30 ամսաթիվերը կապվում են Գրիգորիսի վկայաբանության և հատկապես նշխարաց գյուտի հետ, որը կքննարկվի առանձին:

Այսպիսով վերոհիշյալ սրբերի հիշատակի օրվա համար ունենք Տրէ 22, 25, 12 և 23 ամսաթիվերը, որոնցից Տրէ 22-ը և 23-ը հետագայում վերածվել են հայոց անշարժ տոմարի համարժեքների ունենալով Նոյեմբեր 30-ը և Փետրվար 1-ը: Վերը նշված օրերին երեք նրանց հիշատակները չեն կատարել, այլ Պենտեկոստեից հաշված 38-րդ օրը, երեքշաբթի, որը համարժեք է Հունիս 16 - Հուլիս 20-ին նայած տարի: Դատելով բնագրերից կարելի է մտածել, որ Տրէ 23-ը առաջացել է հետագայում Տրէ 22-ից, իսկ Տրէ ԺԲ-ն կարող է գրչական սխալ լինել առաջացած ԻԲ-ից, բայց հաստատուն հիմքեր չունենք դրանց համար, ուստի վերոհիշյալ բոլոր ամսաթիվերի ստեղծման տարիները որոշենք կիրառելով հայոց տոնացույցային եղանակը.

1.

Ներկա թվական	Հուլյան ամիս	Հուլյան ամսաթիվ	Ծաբաթվա օր	Հայոց թվական	Հայոց ամիս	Հայոց ամսաթիվ	Ծաբաթվա օր
976	7	7	3	423	4	12	3
988	7	3	3	437	4	12	3
1002	6	30	3	451	4	12	3
1016	6	26	3	465	4	12	3
1030	6	23	3	479	4	12	3

2.

Ներկա թվական	Հուլյան ամիս	Հուլյան ամսաթիվ	Ծաբաթվա օր	Հայոց թվական	Հայոց ամիս	Հայոց ամսաթիվ	Ծաբաթվա օր
1048	6	28	3	497	4	22	3
1062	6	25	3	511	4	22	3
1076	6	21	3	525	4	22	3

3.

Ներկա թվական	Հուլյան ամիս	Հուլյան ամսաթիվ	Ծաբաթվա օր	Հայոց թվական	Հայոց ամիս	Հայոց ամսաթիվ	Ծաբաթվա օր
998	7	12	3	447	4	23	3
1012	7	8	3	461	4	23	3
1026	7	5	3	475	4	23	3
1040	7	1	3	489	4	23	3
1054	6	28	3	503	4	23	3

1 Ձեռ. № 979, էջ 444բ-445ա:

2 Ձեռ. № № 7741, էջ 321ա-բ, 4107, էջ 591, 5455, էջ 213ա, 936, էջ 86ա և այլն:

3 Ձեռ. № № 759, էջ 170բ, 179, 752, էջ 167ա, 767, էջ 163բ, 5667, էջ 127բ, 7203, էջ 68ա, 9838, էջ 172ա, 4874, էջ 188ա-բ և այլն:

1 Տես՝ Ձեռ. № № 2695, էջ 341բ, 3082, էջ 392ա, Վեներիկի 189-ը, 7433, էջ 144ա, 9585, էջ 75ա, 7529, էջ 71ա, 4741, էջ 114ա, 6338, էջ 197ա և այլն:

2 Տես՝ Մ. Ավգերյան, Վարք եւ վկայաբանութիւն սրբոց, Բ. Գ., էջ 481-499:

Ներկա թվական	Հուլյան ամիս	Հուլյան ամսաթիվ	Ծաբաթվա օր	Հայոց թվական	Հայոց ամիս	Հայոց ամսաթիվ	Ծաբաթվա օր
1031	7	6	3	480	4	25	3
1045	7	2	3	494	4	25	3
1059	6	29	3	508	4	25	3
1073	6	25	3	522	4	25	3
1087	6	22	3	536	4	25	3

Ակնհայտ է, որ Տրէ 22, 25, 12 և 23 ամսաթիվերը հաշվել և գրանցել են 10 -րդ դարի վերջին կամ 11-րդ դարի բնագրերում և փոխանցել հետագա ընդօրինակված ձառյուղներին, Տոնացույցերին և Յայսմավուրքներին:

\*\*\*

Անցնենք միայն Գրիգորիսին վերաբերվող տոնական օրվա քննությանը: Հայոց տոնացույցերի խմբագրություններ միանշանակ Սուրբ Խաչից հաշված 5-րդ կիրակիից հետո եկող երկուշաբթի օրը կամ Սուրբ Խաչին հաջորդ կիրակիից հաշված 4-րդ կիրակիից հետո երկուշաբթի օրն են կանոնել Աղվանից կաթողիկոս Գրիգորիսի նշխարների գյուտի հիշատակի օրը, այն է՝ Սուրբ Խաչից հաշված 30-րդ օրը, որն ընկել է Հոկտեմբերի 10-16-ի որևէ մեկի երկուշաբթի օրը, այսինքն՝ Հոկտեմբերի 13 ± 3: Այսպես, 759 թվահամարի Տոնացույցի ընդօրինակության մեջ կարդում ենք. «Ձկնի Խաչին հինգերորդ կիրակիէ... բշ. Գիւտ նշխարաց սրբոյն Գրիգո [173բ] ըրսի Աղուանից կաթողիկոսի...» (174ա): Նույն կանոնը գտնում ենք նաև հետևյալ տոնացույցերի խմբագրությունների գրչագրերում, 179, 752 (էջ 173բ), 5667 (էջ 139ա), 7203, 9838 (էջ 179բ), 4164 (էջ 206բ), 4874 (էջ 196բ) և այլն:

Հայոց ձառյուղների ընդօրինակությունները բաժանվում են տարբեր խմբերի: Մի խմբում Գրիգորիսի նշխարաց գյուտի օրը կանոնվել է երկուշաբթի օրվա տակ, ինչպես տոնացույցերում է<sup>1</sup>:

Մյուս խմբում գրված է. «Սեպտեմբեր] Լ. Գիւտ նշխարացն Գրիգորի[սի]» (ստորին լուսանցքում տալով երկուշաբթի օրվա նշումը)<sup>2</sup>: Վերջապես 4406 թվահամարի ձառյուղի խմբագրությունը Մարերի Ժ-ի կանոնի տակ է դրել և ներքին լուսանցքում գրել է. «Երկուշաբթի. Գյուտ նշխարաց սրբոյն Գրիգորի Աղուանից կաթողիկոսի» (էջ 375բ):

Հայոց Յայսմավուրքի խմբագրությունների մի մասի մեջ կամ Գրիգորիսի վկայաբանության օր է գրանցվել «Մեհակի ԻԸ և Մարտի Զ»-ի տակ (2695 էջ 57ա) կամ «Գիւտ նշխարաց սրբոյ Գրիգորիսի Աղուանից կաթողիկոսի...» (179 գրչագիր և Վենետիկ 189 -ը 7530 էջ 114ա): Մյուս խմբում «Հոռի ԻԱ և Սեպտեմբերի Լ»-ի կանոնի տակ բնագրի մեջ գրված է. «... եւ յաւուրս Վաչագանու թագաւորին Աղուանից յայտնեցան նշխարքն Գրիգորիսի և որոց ընդ նմայ, ի բազում բժշկութիւնս կատարէին...» (4741 էջ 46բ, 7433, էջ 60բ):

<sup>1</sup> Տե՛ս Ձեռ. N° N° 7741, էջ 413բ-414ա, 4107 էջ 777, և այլն:  
<sup>2</sup> Ձեռ. N° N° 4514, էջ 360բ, 939, էջ 478ա-բ, 4698, էջ 286-ում «Բշբի. Սեպտեմբեր Լ...», երկուշաբթի - Գաւ Աերքի լուսանցքում:

Մյուս կողմից գրված է «Մեհակի ԻԸ և Մարտի Զ» կանոնի տակ գրված է. «Յայսմաւուր Գիւտ նշխարաց Գրիգորիսի Աղուանից կաթողիկոսի...»<sup>1</sup>, իսկ մյուս՝ «Մեհակի ԻԸ և Մարտի Զ. - Վարքի և վկայութիւն Գրիգորիսի Աղուանից կաթողիկոսի...» (4741, էջ 219բ): 6338 գրչագիրը «Հոռի ԻԱ և Սեպտեմբերի Լ»-ի տակ տոն է կանոնել Գրիգորիսին՝ Աղուանից կաթողիկոսին (էջ 91ա), իսկ Մեհակի 28-ի և Մարտի 6-ի տակ հասկացել է նահատակության օրը (էջ 377ա): Այսպիսով Գրիգորիսի նշխարաց գյուտի օրվա համար ունենք Մարերի 10, Մեհակի 28 = Մարտի 6-ին, որտեղից վերջին ամսաթիվը դուրս է գալիս, որովհետև Մարտի 6-ին երբևէ Գրիգորիսի նշխարաց Գյուտի օր չեն նշել տոնացույցերում: Վերջապես Հոռի 21-ը և նրա հայոց անշարժ տոմարի համարժեքը՝ Սեպտեմբերի 30-ը:

Հիշյալ ամսաթիվերից տոնացույցային եղանակով առաջացել են Մարերի 10-ի և Մեհակի 28-ի ամսաթիվերը, որոնք եղել են ըստ «Հայոց տոնացույց» ծրագրի հաշվումների, հետևյալ տարիներին.

1.

Ներկա թվական	Հուլյան ամիս	Հուլյան ամսաթիվ	Ծաբաթվա օր	Հայոց թվական	Հայոց ամիս	Հայոց ամսաթիվ	Ծաբաթվա օր
1285	10	15	27	734	10	10	2
1292	10	13	27	741	10	10	2
1299	10	12	27	748	10	10	2
1306	10	10	27	755	10	10	2

2.

Ներկա թվական	Հուլյան ամիս	Հուլյան ամսաթիվ	Ծաբաթվա օր	Հայոց թվական	Հայոց ամիս	Հայոց ամսաթիվ	Ծաբաթվա օր
993	10	16	2	442	7	28	2
1000	10	14	2	449	7	28	2
1007	10	13	2	456	7	28	2
1014	10	11	2	463	7	28	2

Պարզվում է, որ 4506 թվահամարի ձառյուղի, որը 15-րդ դարի ընդօրինակություն է, նախագաղափար գրչագիրը գրվել 1285, 1292, 1299 և 1306 թվականներից մեկում: Իսկ 2695, 7433, 4741, 179, 7530 և Վենետիկի 189 թվահամարի «Յայսմավուրք» ժողովածուների մեջ գրանցված Մեհակի 28-ը գալիս է Կիրակոս Գանձակեցու խմբագրությունից: Վերջինս Գրիգորիսի նշխարաց գյուտի հայոց շարժական տոմարի Մեհակի 28 ամսաթիվը վերցրել է 10-րդ դարի վերջի-11-րդ դարի սկզբի մի բնագրից և վեր է ածվել հայոց անշարժ տոմարի ամսաթվի, դրանով իսկ տալով հուլյան տոմարի մարտի 6-ի համարժեքը:

Այսպիսով Գրիգորիսի նշխարաց գյուտի քննարկվող հայոց շարժական տոմարի ամսաթիվերն առաջացել են տոնացույցային եղանակով, որոնցից մեկը Կիրակոս Գանձակեցին վեր է ածել հայոց անշարժ տոմարի ամսաթվի և արտացոլվել Յայսմավուրքի ընդօրինակությունների մեջ:

Գրիգորիսի հիշատակի կամ նշխարաց գյուտի օրվա հուլյան անշարժ տոմարի համարժեք վաղ շրջանից հայտնի չէ, իսկ հայոց շարժական տոմարի ամսաթիվերը և նրանց հուլյան զուգահեռները գտանք 10-րդ դարի վերջի - 11-րդ դարի սկզբի վիճակով միայն:

<sup>1</sup> Ձեռ. N° 7433, էջ 252բ:

\*\*\*

832 թվահամարի ձառնը ունի՝ «Տրէ Լ (= Դեկտեմբեր 8), Աբրահամու խոստովանողի եւ Խորենայի...»:

Տրէ 30-ի կանոնի տակ են տվել Աբրահամի և Խորենի հիշատակի օրը Վենետիկի 639 թվահամարի գրչագիրը<sup>1</sup>, ինչպես և Երևանի 6235 (էջ 37ա), 4514 (էջ 287ա), 4977 (էջ 69ա), 939 (էջ 381բ), 4437 (էջ 134ա) ճառոցների ընդօրինակությունները, որոնցից 4514 և 939 թվահամարի ձեռագրերի համապատասխան տեղերի ստորին լուսանցքներում կան երկուշաբթի օրվա նշումները և նրանց անունները: Միայն երկուշաբթի օրվա կանոնի տակ են ձևակերպել նրանց հիշատակի օրը 7791 (էջ 341ա-բ) և այլ ճառոցներ:

Հայոց տոմարացույցերը միանշանակ երկուշաբթի օրվա կանոնի տակ են դրել Աբրահամի և Խորենի հիշատակի օրը, ավելացնելով նաև այլ սրբեր: Այսպես, 759 թվահամարի Տոնացույցում կարգում ենք. «ԲՇ (երկուշաբթի). Աբրահամու և Խորենայ և անարծաթ բռնկաց Կուզմայի և Դամիանոսի, որ է Յուլիս Ա» (էջ 170-171ա): Ի դեպ Լուլիս 1-ի ամսաթիվը վերաբերում է Կուզմայի և Դամիանոսի հիշատակի օրվան: Նույն ձևակերպումն ունեն առանց Լուլիս 1-ի հետևյալ տոնացույցների ընդօրինակությունները՝ 179-ը 752 (էջ 168ա-բ), 5667 (էջ 130ա), 7203 (էջ 71բ-72ա), 4874 (էջ 189բ) և այլն, միայն 752 և 5667 գրչագրերը սկզբից տվել են Վարդավառի 2-րդ օրվա կանոնը գումարած վերոհիշյալ սրբերի հիշատակի օրվանը: Ասենք, որ Աբրահամի և Խորենի հիշատակի օր է սահմանվել Վարդավառի 2-րդ օրը՝ երկուշաբթի, որը տատանվել է Լուսինս 29 - Օգոստոս 2-ի սահմաններում նայած տարի:

Հայոց Յայսմավորքների բոլոր խմբագրությունները, որոնք ունեն Աբրահամի և Խորենի հիշատակի օրվա կանոնը, դրել են Տրէ Լ և Դեկտեմբեր Ը-ի տակ<sup>2</sup> հիմնականում նույն ձևակերպմամբ, իսկ երբեմն տարբեր:

Այսպիսով, ունենք Հայոց անշարժ տոմարի Տրէ 30-ը և նրա հուլյան համարժեքը՝ Դեկտեմբերի 8-ը Աբրահամի և Խորենի հիշատակի օրվա առթիվ, սակայն քանի որ Դեկտեմբերի 8-ին վաղ շրջանում երբեք նրանց հիշատակի օր չեն կատարել, ուստի Տրէ 30-ը դառնում է Հայոց շարժական տոմարի ամսաթիվ:

Հայոց տոնացույցերում Աբրահամի և Խորենի հիշատակի օր է սահմանվել, ինչպես տեսանք, Վարդավառից հետո եկող երկուշաբթին, ուստի Վարդավառը կատարել են Տրէ 29-ին, իսկ նրանց հիշատակի օրը Տրէ 30-ին: Այդպիսի տարիներ են՝ ըստ «Հայոց տոնացույց»-ի հաշվումների.

Ներկա թվական	Հուլյան ամիս	Հուլյան ամսաթիվ	Օարաթիվ օր	Հայոց թվական	Հայոց ամիս	Հայոց ամսաթիվ	Օարաթիվ օր
1018	7	14	2	467	4	30	2
1032	7	10	2	481	4	30	2
1046	7	7	2	495	4	30	2
1060	7	3	2	509	4	30	2

Պարզ է, որ հիշյալ ամսաթիվն առաջացել է տոնացույցային տարվա հիման վրա 11-րդ դարի առաջին կեսին և փոխանցվել հետագա բնագրերին դառնալով Հայոց անշարժ տոմարի ամսաթիվ:

<sup>1</sup> Ս. Մեմենյան, Ազգ. աշխ., էջ 621-622:  
<sup>2</sup> Ձեռ. № № 2695, 3082 (էջ 392ա), 179, 7433 (էջ 154բ), 9585 (էջ 83ա), 7529 (էջ 78ա-բ), 7530 (էջ 56ա), 4741 (էջ 124ա) և այլն:

Վաղ շրջանի բնագրերը (հատկապես Եղիշեն) Աբրահամի և Խորենի մահվան կապակցությամբ որևէ ամսաթվային նշում չունեն: Նրանց հիշատակի օրվա հուլյան համարժեքը հայտնի չէ: Հնարավոր է մտածել, որ նրանք չեն ունեցել անհատականացված հիշատակի օր մինչև տոնացույց մտնելը և տոնել են ընդհանուր սրբերի հետ միասին Լուսինար 13-ին, Մարտ 9-ին, Օգոստոսի 23-ին, Օգոստոս 1-ին կամ Լուսինս 25 (27)-ին, որը համադրելով Տրէ 30-ին ստանում ենք բացասական արդյունքներ, ուստի Տրէ 30-ը արտացոլում է միայն տոնացույցային եղանակի ամսաթիվը, իսկ նրանց տոնի անշարժ օրվա վաղ շրջանի համարժեքները գտնված չեն:

\*\*\*

Հայոց ճառոցները Յիզտբուզտի հիշատակի օր են կանոնել Քաղոց 2-ին<sup>1</sup> կամ Վարդավառից հետո եկող երեքշաբթի օրը<sup>2</sup>: Միայն 939 թվահամարի ձառնը (էջ 382բ) երեքշաբթին փոխարինել է երկուշաբթիով, որը շաբաթվա օրվա տեղափոխման անհաջող փորձ է:

Հայոց տոնացույցների խմբագրությունները Վարդավառից հետո եկող երեքշաբթիվա կանոնի տակ են դրել Յիզտբուզտի հիշատակի օրը<sup>3</sup>: Միայն 2092 թվահամարի Տոնացույցը (էջ 226բ) փաստագրել է երկուշաբթին և Քաղոց 2-ը:

Հայոց Յասմավորքների բոլոր խմբագրությունները Յիզտբուզտի վկայության օրը դրել են Փետրվարի 22 և Մեհեկանի 16 կամ Մեհեկան 16 և Փետրվարի 22-ի կանոնի տակ<sup>4</sup>: Վերոհիշյալ ամսաթիվերը հանում ենք քննությունից իբրև Հայոց և հուլյան անշարժ տոմարի համարժեքների: Մնում է Քաղոց 2-ը, որի վրա կիրառենք Հայոց տոնացույցային եղանակը:

Հայոց տոնացույցում, ինչպես տեսանք, Յիզտբուզտի հիշատակի օր է սահմանվել Վարդավառից հետո եկող երեքշաբթին, որը տատանվել է Լուսինս 30 - Օգոստոս 2-ի սահմաններում նայած տարի, ուստի Վարդավառը կատարել են Տրէ 30-ին, իսկ Յիզտբուզտի հիշատակի օրը Քաղոց 2-ին: Այդպիսի համապատասխանություններ եղել են հետևյալ տարիներին, ըստ «Հայոց տոնացույց»-ի հաշվումների.

Ներկա թվական	Հուլյան ամիս	Հուլյան ամսաթիվ	Օարաթիվ օր	Հայոց թվական	Հայոց ամիս	Հայոց ամսաթիվ	Օարաթիվ օր
968	7	28	3	417	5	2	3
982	7	25	3	431	5	2	3
996	7	21	3	445	5	2	3
1010	7	18	3	459	5	2	3
1021	7	14	3	473	5	2	3

Ինչպես նկատելի է, Հայոց շարժական տոմարի Քաղոց 2-ը, հուլյան վերոհիշյալ համարժեքներով տոնացույցային եղանակով կարող էր հաշվարկվել 10-րդ դարի 2-րդ կեսին - 11-րդ դարի սկզբներին: Ասենք, որ Քաղոց 2-ի ամսաթիվը վկայված ենք գտնում Յիզտբուզտի վկայաբանության ընդօրինակությունների մեջ ավելի վաղ, միայն հուլյան այլ համարժեքներով,

<sup>1</sup> Ձեռ. № № 832, էջ 54ա-56ա, Վեճետիկի 639 (էջ 621-622), 6235, էջ 43բ, 4977, էջ 70ա, 4437, էջ 135ա և այլն:  
<sup>2</sup> Ձեռ. № № 7441, էջ 341բ-342ա, 4514, էջ 287բ, 5455, էջ 237ա, և այլն:  
<sup>3</sup> Տե՛ս Ձեռ. № № 759, էջ 171ա, 752 էջ 169բ, 5667, էջ 131ա, 7203, էջ 71բ-72ա, 9838, էջ 172բ, 4874, էջ 198ա և այլն:  
<sup>4</sup> Տե՛ս Ձեռ. № № Վեճետիկի գրչագրեր 1048 և 710, Երևանի՝ 2695, էջ 95ա, 3082, էջ 394ա, 179, 7433, էջ 241ա, 9585, էջ 155ա, 8179, էջ 167ա-168ա, 4741, էջ 203ա և այլն:



որի մասին կխոսենք քիչ հետո: Այստեղ միայն նշենք, որ վերոհիշյալ տոնացույցային տվյալները ցույց են տալիս, որ Յիզտբուզտի հիշատակի օրն արդեն տոնացույց էր մտել և դարձել շարժական տոն 10-րդ դարի 2-րդ կեսից առաջ, երբ Քաղոց ամիսը համարժեք էր հիմնական հուլյանի Հուլիս ամսին:

Տեսնենք Յիզտբուզտի վկայության օրվա մասին ինչ տեղեկություններ են տալիս մյուս սկզբնաղբյուրները:

«Վկայաբանութիւն սրբոյն Յիզտիբուզտեայ» բնագրի մեջ կարդում ենք. «Եւ այսպէս քաջութեամբ վկայեաց սուրբն Յիզտիբուզտի ի քսաներորդի երրորդի ամին Խոսրովու թագաւորի, որ օր երկու էր քաղոց ամսոյ. յաւուր կիւրակէի յերրորդ ժամու»<sup>1</sup>:

Անանիա Շիրակացու ժամանակագրության մեջ գրված է. «Եւ ի սորին (Յուստիանոս 2-րդի (565-578 թթ.) - Ռ. Վ.) աւուրս ձեռնադրեցաւ Աբղիշու եպիսկոպոս ի ներսիսէ Հայոց կաթողիկոսէ. եւ յետ սակաւուց եւ եւ մարտիրոսացաւ ի Հայս սուրբն Յիզտբուզտ ի պարսիկ մագպանաց»<sup>2</sup>:

Մեջ բերենք Հովհաննես Դրասխանակերտցու վկայությունը. «Ի ժամանակին աստ Խոսրով արքայ Պարսից զօր բազում գումարեալ՝ առաքէ հրոսակս Վարդանայ, և լինի պատերազմ սաստիկ ի դաշտին Խաղամախայ, և ի մշտաջան աղօթից սրբոյն Ներսեսի անհնարին հարուածովք մաշեն զօրքն Վարդանայ զՊարսիկս: Յաւուրս սորա Մախոժ, որ էր ի Բեշապուհ գաւառէ ի Քունարասեան գեղջէ և յազգէ մոգ, եւ ըստ սուրբ աւագանի (տարբերակ՝ Ավետարանին) ի մկրտութեանն Յիզտբուզտ անուանեալ, որ թարգմանի «աստուած ապրեցոյց», բազում չարանս կրեալ ի մարդպանէ Վշնասն Վահրամայ՝ ի Դվին քաղաքի պսակի մարտիրոսական մահուամբ (տարբ. պսակովն) ի Քրիստոսէ: Զոր բարձեալ զսուրբ մարմինն սրբոյ մարտիրոսին մեծի հայրապետին Ներսեսի բովանդակ եպիսկոպոսօք և կղերիւք եկեղեցոյ եղին մերձ ի սուրբ եկեղեցին կաթողիկոսարանի յարեւելիցն կողմանէ, շինեալ ի վերայ վկայարան սուրբ կոփածոյ քարամբք» (էջ 64):

Ըստ Գրիգոր Խլաթեցու Յայսմավուրքի. «Կատարեցաւ սուրբն Աստուածատուր Իզտիբուզտ յառաջին ամի թուականութեան հայոց, ի կաթողիկոսութեան տէր Մովսէսի, և ես Ներսես չարչարակից և ընկեր սրբոյն Իզտբուզտի Աստուածատրոյ արարի պատմութիւնս»<sup>3</sup>:

Այլ խոսքով Յիզտբուզտի նահատակությունը տեղի է ունեցել Քաղոց 2-ին կիրակի, որը եղել է Պարսից Խոսրով թագավորի (531-579 թթ.) 23-րդ տարում, բյուզանդական կայսր Յուստիանոսի (565-578 թթ.) ժամանակ, Ներսէս (551-560 թթ.) կամ Մովսէս (577-604 թթ.) կաթողիկոսների օրոք. «Ի մարդպանի Վշնասն Վահրամայ», Հայոց մեկ թվականին: Բերված տեղեկությունների մեջ կան ակնհայտ հակասություններ: Գալուստ Տեր-Մկրտչյանը նախընտրել է 553 թ. Քաղոց 2 (= Նոյեմբեր 9), կիրակին, այսինքն՝ Հայոց 2 թվականը, իսկ Ֆ. Կոնիբերը՝ 574 թ., այսինքն՝ Հայոց 23 թվականը, որտեղ Քաղոց 2 (= նոյեմբեր 4), կիրակի: Մ. Ավգերյան՝ 552 տարին Քրիստոսից հետո, այն է՝ Հայոց մեկ թվականը:

Սկզբնաղբյուրների ակնհայտ հակասությունները կլուծվեն, եթե բացառենք Ներսես կաթողիկոսի գոյությունը փոխարինելով Ներսեսով՝ ընկերակցին Յիզտբուզտի և հավատ ներշնչողին, նախապատվությունը տալով Մովսէս կաթողիկոսին: Խոսրովի ԻԳ-ը տարին սրբագրենք ԽԳ, այսինքն Խ-ի և Ի-ի սխալ կամ բացթողում նկատենք: Վերջապես Դրասխան-

<sup>1</sup> Վարք եւ Վկայաբանութիւնք սրբոց, հատընտիր քաղեալ ի ճառընտրաց, հատոր Բ, Վեճեփիկ, 1874, էջ 130, տե՛ս նաև , Peters, p. 213, Հայր Պողոս Անանեան, Պատմական յիշատակարան մը Դուիճի Բ ժողովի մասին, Բագմավէպ, 1957, մայիս-հուլիս, թիւ 5-6, էջ 120 և այլն:

<sup>2</sup> Անանիա Շիրակացու մատենագրությունը, էջ 397:

<sup>3</sup> Յայսմավուրք, էջ 554-556:

նակերտցու հիշատակած «Վշնասն Վահրամայ»-ն դիտենք Սեբեոսի մոտ վկայված «Վարդան Վշնասպ ոմն»-ին, որը փոխարինել էր Սուրեն մարզպանին նրա մահից հետո, հավանաբար 574 թվականին՝ մեկ տարի: Այլ խոսքով Յիզտբուզտի նահատակության օրվա համար ընդունելի է 574 թվականի Քաղոց 2-ը (= Նոյեմբեր 4), կիրակի:

Ի դեպ Յիզտբուզտի վկայության, իսկ հետագայում նրա հիշատակի անշարժ օրվա հուլյան համարժեքներն են, թեև հայոց շարժական տոմարի Քաղոց 2-ի, հետևյալ հավանողներ՝ 553 թ. Նոյեմբեր 9, 560 թ. Նոյեմբեր 7, 567 թ. Նոյեմբեր 6, 574 թ. Նոյեմբեր 4, 587 թ. Նոյեմբեր 2, որոնցից մեկն էլ հետագայում եղել Յիզտբուզտի հիշատակի օրը, երբ նշել են նրա հիշատակը անշարժ ամսաթիվով: Այն հետագայում մոռացության տրվեց, որովհետև տրվել էր միայն հայոց շարժական տոմարի Քաղոցի 2 ամսաթիվը, բացի այդ երբ մտավ հայոց տոնացույց տոնվեց Հունիս 30 - Օգոստոս 2-ի սահմաններում նայած տարի, երբ Քաղոց 2-ի հուլյան նույնիսկ համարժեքը արդեն փոխվել էր, իսկ նոր համարժեքները գալիս էին և՛ 10-րդ դարի 2-րդ կեսին և՛ 11-րդ դարի սկզբներին: Քաղոց ամիսը հիմնականում գուգադրելի էր հուլիսի ամսվա օրերին: Այսպիսին է պատկերը Յիզտբուզտի հիշատակի օրվա, երբ այն նշել են անշարժ կերպով և երբ հետագայում վերածվեց շարժական տոնի պահելով Քաղոց 2-ի հայոց շարժական տոմարի ամիս-ամսաթիվը:

\*\*\*

Սանդուխտ կույսի և Թադեոս առաքյալի հիշատակի օրերին, այն է՝ Քաղոց 7-ին և 13-ին, կանդրադառնանք հետագա շարադրանքում:

832 թվահամարի գրչագրում գրված է. «Քաղոց Ժ (= Դեկտեմբեր 18). Տեսիլ Սրբոյն Գրիգորի, զոր ետես ի վերայ հիման կաթողիկէ եկեղեցոց...»: Գրիգոր Լուսավորչին նվիրված տոնական օրերի քննության մեջ ցույց ենք տվել, որ Քաղոց 10-ի ամսաթիվն առաջացել է 10-րդ դարում, երբ էջմիածնի կաթողիկե եկեղեցու տոնի օր է սահմանվել Աստուածածնից առաջ ընկնող շաբաթ օրը: Պարզ է, որ Հայոց եկեղեցուն նվիրված տոներից մեկը, որը վերագրվել է Գրիգոր Լուսավորչին տոնվել է 10-րդ դարից առաջ, քանի որ տոնական օրվա նշումը գալիս է այդ դարից:

\*\*\*

Մինչև Թադեոս առաքյալի և Սանդուխտ կույսի հիշատակի օրվա ամսաթիվերին անդրադառնալը համառոտ ներկայացնենք նրանց վկայաբանության հետազոտման վիճակը:

Դեռևս 1784 թ. Մ. Չամչյանը գրել է Թադեոս առաքյալի և Սանդուխտ կույսի վկայաբանության մասին և նրանց նշխարաց գյուտի ժամանակը գրել է Սահակ կաթողիկոսի նախորդները՝ Շահակի կամ Զավենի օրոք կամ Հովհան Մանդակունու և Վահան Մամիկոնյանի ժամանակ՝:

1813 թ. Մ. Ավգերյանը «Լիակատար վարք և վկայաբանութիւն սրբոց որք կան ի հին Տօնացույցի եկեղեցոյ Հայաստանեայց» Բազմահատորյակի 4-րդ հատորում հրատարակել է «Վկայաբանութիւն Սրբոյն Թադէոսի առաքելոյն, և Սանդխտոյ կուսին, և որոց ընդ նոսա» և «Գիւտ նշխարաց սրբոյն Թադէոսի առաքելոյն և Սանդխտոյ կուսին» վերտառություններով բնագրերի վերաշարադրությունը՝ հիմնված Վենետիկի մատենադարանում եղած գրչագրերի ընդօրինակությունների վրա:

<sup>1</sup> Տե՛ս Մ. Չամչյան, Պատմութիւն Հայոց, Բ. Ա, Վեճեփիկ, 1784, էջ 583-587:

Մ. Ավգերյանը ծանոթագրութունները մեջ անդրադարձել է հիշյալ բնագրերի թվագրմանը: Նա հետևել է Մ. Չամչյանին<sup>1</sup>:

1853 թ. Ղ. Ալիշանը «Սոփերք Հայկականք»-ի 8-րդ հատորում հրատարակեց Թաղեոս առաքյալի և Սանդուխտ կույսի մասին եղած բնագրերը՝ հիմք ունենալով Վենետիկի 12-րդ դարի գրչագիրը: Դրանք կրում են հետևյալ վերնագրերը.

1. «Վկայաբանութիւն Թաղէոսի առաքելոյն քարոզութեանն եւ զալստեան ի Հայս եւ կատարման որ ի Քրիստոս» (էջ 9-58):

2. «Պատմութիւն Թաղէոս առաքելոյն և Սանդխտոյ կուսին» (էջ 59-75):

3. «Վկայութիւն սրբոյն Սանդխտոյ դստերն Սանատրկոյ արքայի» (էջ 77-83):

4. «Գիւտ նշխարաց Թաղէոսի առաքելոյ եւ Սամուելի եւ Իսրայելի եւ այլոց որ բազում ժամանակս կային ծածկեալ եւ էին ամբողջ. եւ յայտնեցան առն ուրումն ճգնավորի եւ սքանչելատեսի որ ի մանկութեան վարժեալ էր արժանաւոր կարծեք Կիւրակոս անուն» (էջ 85-99):

Ղևոնդ Ալիշանը կատարել է իր դիտողութունները վկայաբանութեան ժամանակի մասին: Թաղեոս Առաքյալի և Սանդուխտ կույսի վկայաբանութեան մեջ հիշատակված Սամուել եպիսկոպոսին, որպես թարգմանչի, նա համադրել է Շմուել ասորի եպիսկոպոսի հետ, որն ըստ Խորենացու ժամանակագրության 432-437 թթ. կաթողիկոս էր ի հակակշիռ Սահակ կաթողիկոսի: Նրանց նշխարաց գյուտի ժամանակը, հետևելով Մ. Չամչյանին, դրել է Հովհան Մանդակունի Կաթողիկոսի և Վահան Մամիկոնյանի մարզպանութեան ժամանակ 485 կամ 486-ին<sup>2</sup>: 10-11-րդ դարերով թվագրվող Վենետիկյան գրչագրի հիման վրա Թաղեոս առաքյալի և Սանդուխտ կույսի վկայաբանութեան որոշ հատվածներ հրատակել է Հ. Տաշյանը: Թաղեոս առաքյալի և Սանդուխտ կույսի վկայաբանութեան ուսումնասիրությունը հիմնականում կատարել են Հ. Ն. Անդրիկյանը և Ն. Ակինյանը, ինչպես և այս կամ այն առիթով նրանց վկայաբանութեան անդրադարձել են Հ. Գաթրճյանը, Ն. Զարբհանյանը, Հ. Վ. Հացունին, Հ. Ֆէրհատյանը, Հ. Տաշյանը, Ա. Կարիբերը, Հ. Գ. Մենէվեջյանը, Յ. Մարկվոլուտը, Մ. Օրմանյանը, Ստ. Մալխասյանը և ուրիշներ<sup>3</sup>:

Վերոհիշյալ հեղինակների կարծիքներին հատուկ չենք անդրադառնում, իսկ նրանց որոշ դիտողություններ, որոնք հարմար կնկատենք, կօգտագործենք շարադրանքի մեջ: Միայն նշենք, որ ուսումնասիրողները Հայտնել են հակասական կարծիքներ: Տեսակետներն ավելի են հստակեցվում, երբ սկզբնաղբյուրների տվյալները համադրվում են բնագրերում առկա ամիսամսաթվերի վերլուծության հիման վրա ստացված արդյունքների հետ:

Այլ խոսքով մեր կարծիքով առաջին հերթին հարկավոր է պարզել, թե երբ են սկսել կատարել Թաղեոս առաքյալի և Սանդուխտ կույսի հիշատակի օրերը՝ անշարժ տոնական օրով՝ առանձին-առանձին և երբ նրանց տոնական օրը տոնվեց միասին՝ մեկ օրով, դառնալով շարժական տոն: Որպեսզի այդ հարցադրումները պարզաբանվեն բերենք բնագրերում առկա տվյալները և քննենք դրանք:

Սկսենք ճաշոցներից:

832 թվահամարի բնագիրը, որը տոնական օրերը տվել է Սարկավագադիր տարվա կտրվածքով ունի հետևյալ տվյալները.

1. «Քաղոց Ը (= Դեկտեմբեր 16). Սրբոյն Սանդխտոյ...» (էջ 57ա):

2. «Քաղոց ԺԳ (= Դեկտեմբեր 21). Թաղեոսի առաքելոյ...» (էջ 61ա):

Քաղոց 8-ի ամսաթիվն է տալիս Գրիգոր Վկայասեր Տօնանամակի խմբագրության հավելվածում, այն է՝ «Քաղոցը Ը. Սրբոյն Սանդխտոյ կուսին...»<sup>1</sup>:

Վերոհիշյալ ամսաթվերն առաջացել են 12-րդ դարի առաջին կեսին և արտացոլում են Սարկավագադիր տոմարի ամսաթվային զուգահեռները: Միայն նշենք, որ Քաղոց 13-ը վերցվել է Թաղեոս առաքյալի վկայաբանությունից: Այն տվյալ բնագրում զուգահեռ է դրվել Դեկտեմբերի 21-ին, դրանով իսկ Հայոց շարժական տոմարի ամսաթվից վեր է ածվել Հայոց անշարժ տոմարի համարժեքի:

Վենետիկի 639 թվահամարի ճաշոցը, որը նույնպես Հայոց ամսաթվերի օրերի կարգով է դասավորված, տեղեկացնում է.

1. «Քաղոց է. Սանդխտոյ...»

2. «Քաղոց ԺԳ. Թաղեոսի առաքելոյն»<sup>2</sup>:

Վերը բերված ամսաթվային նշումները, ինչպես կտեսնենք, գալիս են Թաղեոս առաքյալի և Սանդուխտ կույսի վկայաբանությունից, թեև այնտեղ ևս՝ որոշ վկայաբանությունների մեջ, Հայոց շարժական տոմարի ամսաթվերը վեր են ածվել Հայոց անշարժ տոմարի ամսվա օրերի:

Գրիգոր Վկայասերի Տօնանամակի խմբագրության մեջ Թաղեոս առաքյալի հիշատակի օրերն են սահմանված Փետրվարի 10-ը<sup>3</sup> և օգոստոսի 21-ը<sup>4</sup>, իսկ Սանդուխտ կույսի հիշատակի օրը, ինչպես տեսանք վերևում, ավելացվել է հավելվածի մեջ՝ Քաղոց 8-ի կանոնի տակ:

Բերված հուլյան ամսաթվերին ենք հանդիպում նաև այլ բնագրերում, որոնց թվում 940 թվահամարի ճաշոցում: Այստեղ նշվել են երկու հակասական ամիսներ և ամսաթվեր: Այսպես, ԻԱ համարի տակ կարդում ենք «Փետրուար. Քաղոց. [Թ]աղէոսի [ա]ռաքելոյ որ ի Հայք կատարեցաւ», իսկ ՃԶԵ համարի տակ՝ «Դեկտեմբեր ԺԶ եւ Քաղոց է. Սրբոյ կուսին Սանդխտոյ...»: Ակնհայտ է, որ հեղինակը Թաղեոս առաքյալի հիշատակի հիշյալ օրվա համար տված Փետրվարը վերցրել է Տօնանամակից, իսկ Քաղոցը՝ վկայաբանությունից առանց ամսաթվի նշման: Ինչ վերաբերվում է Սանդուխտ կույսի հիշատակի օրվա համար բերված Դեկտեմբերի 16 և Քաղոց 7 ամսաթվերին, ապա հեղինակը վերցրել է տարբեր տեղերից, որովհետև Դեկտեմբերի 16-ը համարժեք է Քաղոց 7-ին այլ Քաղոց 8-ին է զուգահեռելի: Այդ ամսաթվերին կհանդիպենք նաև որոշ Յայսմավուրքների խմբագրությունների մեջ, որոնք կհիշատակենք քիչ հետո:

6235 թվահամարի ճաշոցը վկայել է.

1. «Քաղոց Ե. Սրբոյն Սանդխտոյ» (էջ 45ա)

2. «Քաղոց ԺԴ. Թաղէոսի առաքելոյ» (էջ 47բ)

Քաղոց Ե-ի կանոնի տակ է տվել Սանդուխտ կույսի հիշատակի օրը նաև և 4977 թվահամարի ճաշոցը (էջ 71 բ), իսկ Քաղոց ԺԳ-ի տակ՝ Թաղեոս առաքյալինը (էջ 72բ): Հարկ է նշել, որ Քաղոց Ե-ն գրչական սխալի արդյունք է: Այն պետք է սրբագրել Քաղոց է, իբրև է-ն Ե-ի

<sup>1</sup> Տե՛ս Մ. Ավգերյան, Լիակատար վարք եւ վկայաբանութիւն սրբոց..., Բ. 4, Վեճեսիկ, 1813, էջ 58, 59-62:

<sup>2</sup> Տե՛ս Ղ. Ալիշան, Սոփերք Հայկականք, Բատոր 8-րդ, Վեճեսիկ, 1853, էջ 101-102:

<sup>3</sup> Տե՛ս Հ. Ն. Անդրիկյան, Տեղեկութիւններ Սանդխտի վկայաբանութեան վրա, Բազմավէպ, Բ. 4Գ, Վեճեսիկ, 1905, էջ 552-555, Գույնի Սանդխտի վկայաբանութեան թարգմանիչը, Բազմավէպ, 1907, էջ 60-61: Ն. Ակինյան (Թրատ. Հ. Պ. Տեր - Պ-ի), Մատենագրական հետազոտութիւններ, Վկայաբանութիւն Ս. Թաղեոսի եւ Սանդխտոյ կուսի եւ կանոնք Թաղէոսի, Հանդէս ամսօրեայ, 29 տարի, 1969, հոկտեմբեր, թիվ 10-12, էջ 402-426, 1970, ԶԴ տարի թիվ 1-3, էջ 2-14: Հ. Վ. Հացունի, Հայաստանեայց եկեղեցից Լուսատրչէն յառաջ, Բազմավէպ, օգոստոս, 1926, էջ 225-229, սեպտեմբեր, էջ 257-262, հոկտեմբեր, էջ 289-294: Ստ. Մալխասյան, Ժամանակագրական խնդիրներ հայոց հին մատենագրության մեջ, Տեղեկագիր ՀՍՍՌ ԳԱ, № 6-7, 1944, էջ 7-24 և այլն:

<sup>1</sup> Ձեռ. № 979, էջ 442բ:

<sup>2</sup> Ս. Շեմճեմյան, Աշխ., էջ 621-623:

<sup>3</sup> Ձեռ. № 979, էջ 3բ և 57ա-բ:

<sup>4</sup> Անդ, էջ 4, պահպանվել է միայն ցանկի մեջ:

փոխվելու սովորական համարվող գրչական սխալ, քանի որ է-ն նախնականն է և նոր ամսաթիվ ստանալու որևէ անհրաժեշտություն չի եղել: Քաղոց ԺԴ-ն, ինչպես կտեսնենք հետագա շարադրանքի մեջ, հայոց անշարժ տոմարի ամսաթիվ է համարվել հուլյան տոմարի Դեկտեմբերի 22-ին: Վերջապես Քաղոց ԺԴ-ն գալիս է Թաղեոս առաքյալի վկայաբանությունից և տվյալ դեպքում հանդես է գալիս իբրև հայոց շարժական տոմարի ամսաթիվ:

Հայոց ճաշոցների մի սովոր խումբ Վարդավառից հետո եկող շաբաթ օրվա կանոնի տակ են դրել Թաղեոս առաքյալի և Սանդուխտ կույսի հիշատակի օրը<sup>1</sup>:

4514 և 939 թվահամարի գրչագրերում Թաղեոս առաքյալի և Սանդուխտ կույսի հիշատակի օրվա մեջ ավելացրել են Զարմանդուխտին կամ «որոց ընդ(նմա)» արտահայտությունը:

Հայոց տոնացույցների ընդօրինակությունները միանշանակ Վարդավառից հետո եկող շաբաթ, այն է՝ Վարդավառից հաշված 7-րդ օրվա կանոնի տակ են սահմանել Թաղեոս առաքյալի և Սանդուխտ կույսի հիշատակի օրը: Թվենք որոշ գրչագրերի համարներն ու էջերը՝ 759, էջ 171ա, 179, 752, էջ 168բ, 5667, էջ 131ա, 7203, էջ 72ա, 9838, էջ 173բ, 4164, էջ 189բ, 4874, էջ 190 ա-բ և այլն: Ի դեպ 4874 թվահամարի Տոնացույցը ավելացրել է նաև Թաղեոս առաքյալի աշակերտների անունները (Զաքարիա, Զարմանդուխտ, Իսրայել):

Հայոց տոնացույցում Թաղեոս առաքյալի և Սանդուխտ կույսի հիշատակի օրը վերածվեց շարժական տոնի 8-րդ դարից հետո և նրանց հիշատակը կատարվել է Հուլիս 4 - Օգոստոս 3-ի սահմաններում նայած տարի:

Ասենք նաև, որ միայն 2092 թվահամարի Տոնացույցն է բերել հակասական տվյալներ, այն է՝ 1. Գշ (երեքշաբաթ). Սանդուխտ կույսին... Քաղոց է» 2. «ՇԲ (Շաբաթ). Թաղեոսի առաքելոյ... ի Քաղոց ԺԳ» (էջ 226բ-227ա): Երեքշաբթի օրվա կանոնը նորամուծություն է, որը չի ընդունվել հետագայում, ինչպես երևում է վերը թվարկված տոնացույցների ընդօրինակության համարներից, որոնցից մի քանիսը գրվել են ավելի ուշ, քան վերոհիշյալ բնագրերը:

Հայոց Յայսմավուրքների տարբեր խմբագրություններ Թաղեոս առաքյալի և Սանդուխտ կույսի վկայության օրերի համար տալիս են տարբեր տվյալներ: Վենետիկի 710 թվահամարի գրչագրերը Դեկտեմբերի 17-ի և Քաղոց 9-ի կանոնի տակ է գրանցել Սանդուխտ կույսի վկայաբանությունը, իսկ Դեկտեմբերի 22-ի և Քաղոց 14-ի տակ գրել է. «... եւ տաւն սուրբ առաքելոյն Թաղէոսի...» երկու դեպքում էլ հուլյան տոմարի ամսաթվերի համարժեքներն են Քաղոց 9-ը և Քաղոց 14-ը ըստ Հայոց անշարժ տոմարի:

Հայոց Յայսմավուրքների խմբագրությունների մի զգալի մասը Սանդուխտ կույսի հիշատակի կամ վկայաբանության օրը սահմանել են Քաղոց է և Դեկտեմբեր ԺԵ կանոնի տակ, իսկ Թաղեոս առաքյալի վկայության կամ քարոզության կամ հիշատակի օրը դրել են Քաղոց ԺԴ և Դեկտեմբերի ԻԲ կանոնի տակ: Բերենք մի խումբ Յայսմավուրքների համարներն ու էջերը, այն է՝ 2695, էջ 359բ և 366ա, 3082, էջ 392բ, 179-ը (միայն քաղոց է-ի տակ, չունի քաղոց ԺԴ-ն), Վենետիկի 189 թվահամարի ձեռագրում, 7433, էջ 164բ և 175ա, 9585, էջ 91բ և 99ա, 7529, էջ 86բ և 91բ, 7530, էջ 64բ և 71ա, 4741, էջ 134բ և 141բ և այլն:

179 թվահամարի համառոտ Յայսմավուրքի Ստեփանոս Գույներիցանցի խմբագրության մեջ, որը կատարվել է 1292 թվականին, Նավասարդի 11 (= Օգոստոս 21) և Մեհակի 4 (= Փետրվարի 10) կանոնների տակ է սահմանել Թաղեոս առաքյալի հիշատակի օրերը, իսկ Քաղոց 7 (= Դեկտեմբեր 15) և Քաղոց 30 (= Հունվար 7) կանոնների տակ՝ Սանդուխտ կույսի հիշատակի օրերը: Առաջին երկու ամսաթվերը հեղինակը վերցրել է Գրիգոր Վկայասերի Տոնանամակի

<sup>1</sup> Տե՛ս Ձեռ. N° N° 7741, էջ 344բ, 4107, էջ 637, 4514, էջ 290ա, 5445, էջ 239բ, 939, էջ 386ա, 4438, էջ 138ա և այլն:

խմբագրություններից, 3-րդը՝ Վկայաբանության բնագրերից, իսկ վերջինը հեղինակի կողմից ստացած ամսաթիվ է:

Թաղեոս առաքյալի հիշատակի օրվա Մեհակի 4 և Փետրվարի 10 ամսաթվերի համարժեքները գրանցվել են նաև Վենետիկի 189, Երևանի 7433 (էջ 225բ) թվահամարների Յայսմավուրքների խմբագրությունների մեջ:

Վերջապես Գրիգոր Խլաթեցու խմբագրած Յայսմավուրքի ընդօրինակությունները Քաղոց ԺԵ և Դեկտեմբերի ԻԳ կանոնի տակ տալիս են. «Վկայաբանութիւն Թաղէոսի առաքելոյ և որոց ընդ նմա կատարեցան», իսկ Մարերի ԻԳ և Մայիս Լ-ի տակ՝ «...Յայսմ աւուր գիւտ նշխարաց սուրբ Թաղէոս առաքելոյ և Սանդխտոյ կույսին և այլոց որք ընդ նմա կատարեցան ի Քրիստոս»<sup>2</sup>:

Բերենք նաև նրանց վկայաբանությունների տվյալները, որպեսզի ամբողջական պատկերացում տանք վկայված ամիս-ամսաթվերի մասին:

«Վկայաբանութիւն Թաղէոսի առաքելոյն քարոզութեանն եւ գալստեան ի Հայս եւ կատարման, որ ի Քրիստոս» վերնագիրը կրող բնագրի ընդօրինակության մեջ գրված է. «Կատարեցաւ սուրբ առաքեալն Թաղէոս ի Քաղոց ամսոյ երեքտասան, յիններորդ ժամու և սուրբն Սանդուխտ յեւթն նորին ամսոյն»<sup>3</sup>:

Համարյա համարժեք տեղեկություններ ենք գտնում Փարիզի 178 (Երևանում գտնվող միկրոֆիլմի համարն է 879, որից օգտվել ենք) թվահամարի գրչագրի ընդօրինակության ձԼԵ համարի տակ տեղադրված. «Վկայութիւն սրբոյ առաքելոյն Թաղեոսի եւ սրբոյ Սանդխտոյ եւ ընկերաց նորայ» վերնագիրը կրող բնագրում վկայվել է. «Կատարեցաւ սուրբ առաքեալն (Թաղեոս - Ռ. Վ.) յամսեանն Քաղոց ի տասն եւ երեքն, յիններորդ ժամու, իսկ սուրբն Սանդուխտ որ աւուր եւթն էր նմին ամսոյ»:

«Վկայութիւն սրբոյն Սանդխտոյ դստերն Սանատրկոյ արքայի» վերնագիրը կրող բնագրի ընդօրինակության մեջ կարդում ենք. «... որ վկայեացն (Սանդուխտ կույսն - Ռ. Վ.) ի Քաղոց ամսոյ յեւթն կատարեալ վկայութեամբ»<sup>4</sup>:

«Պատմութիւն Թաղէոսի առաքելոյն եւ Սանդխտոյ կույսին» վերտառությունը կրող բնագրի ընդօրինակության մեջ վկայված է. «Կատարեցաւ սուրբն Սանդուխտ ի Դեկտեմբերի հնգետասան և յետ ութ աւուր (= Դեկտեմբեր 23 - Ռ. Վ.). զսուրբն առաքեալն Թաղեոս զլիսատեցին»<sup>5</sup>:

13-րդ դարի վերջում ընդօրինակված 8179 թվահամարի գրչագիրը, որտեղ վկայաբանությունները դասավորված են տոնացույցային կարգով, տալիս է հետևյալ տեղեկությունը. «Նահատակեցաւ սուրբ առաքեալն (Թաղեոսը - Ռ. Վ.) ի Քաղոց ԺԴ (14), որ է Դեկտեմբեր ԻԲ (22)»<sup>6</sup>:

Կարելի է շարունակել տեղեկությունները, սակայն, կարծում ենք, բերված վկայությունները բավարար են առաջադրված խնդիրները լուծելու համար:

Որպեսզի կարողանանք պարզաբանել հիշյալ ամսաթվերի էությունը հարկ է կիրառել Հայոց տոնացույցային և տոմարական եղանակները: Սկսենք Հայոց տոնացույցային եղանակից: Վերոհիշյալ բնագրերից պարզ դարձավ, որ Թաղեոս առաքյալի և Սանդուխտ կույսի հիշատակի

1 Ձեռ. N° 6338, էջ 239բ և այլն:  
2 Ձեռ. N° 6338, էջ 538բ և այլն:  
3 Ղ. Ալիշան, Աշխ. աշխ., էջ 58:  
4 Ղ. Ալիշան, Աշխ. աշխ., էջ 83:  
5 Ղ. Ալիշան, Աշխ. աշխ., էջ 75:  
6 Ձեռ. N° 8179, էջ 171ա:

որ է սահմանվել Վարդավառից հաշված 7-րդ օրը, չաբաթ: Այդ տոնը կատարել են 8-րդ դարից հետո Հուլիս 4 - Օգոստոս 3-ի օրերից մեկում նայած տարի: Ուստի վերոհիշյալ հայոց շարժական տոմարի ամսաթիվերը տարիների կտրվածքով կարող էին արտացոլել Թադեոս առաքյալի և Սանդուխտ կույսի հիշատակի օրը համարժեք ունենալով հուլյան տոմարի Հուլիս 4 - Օգոստոս 3-ի որևէ ամսաթիվ կամ ամսաթիվեր, սակայն հատկապես հայոց ճաշոցներն ու մասնավորապես որոշ տոնացույցեր տվել են նրանց հիշատակի օրը ոչ թե մեկ ամսաթվի տակ այլ երկու իրարից անկախ հայոց շարժական տոմարի ամսաթիվերով, այն է՝ Սանդուխտ կույսինը Քաղոց 7 (նաև 8 և 9, որոնք հայոց անշարժ տոմարի ամսաթիվեր են) և Թադեոս առաքյալինը՝ քաղոց 13 (նաև 14 և 15, որոնք հայոց անշարժ տոմարի ամսաթիվեր են) տվյալներով, մինչդեռ նրանց հիշատակի օրվա ամսաթիվը պետք է լիներ դրանցից միայն մեկը կամ Քաղոց 7-ը կամ Քաղոց 13-ը, որովհետև Թադեոս առաքյալի և Սանդուխտ կույսի հիշատակի օրը մեկն է եղել հայոց տոնացույցում: Ակնհայտ է, որ հայոց ճաշոցները քննարկվող ամսաթիվերը վերցրել են նրանց վկայաբանության ավելի վաղ ստեղծված բնագրերից և տվել առանձին կանոնների տակ, թեև տոնը կատարել են մեկ օրվա մեջ: Հայոց տոնացույցային եղանակի կիրառության դեպքում ստանում ենք տարբերակների երկու շարք, այն է՝

1.

Ներկա թվական	Հուլյան ամիս	Հուլյան ամսաթիվ	Ծաբաթվա օր	Հայոց թվական	Հայոց ամիս	Հայոց ամսաթիվ	Ծաբաթվա օր
1031	7	24	7	480	5	13	7
1045	7	20	7	494	5	13	7
1059	7	17	7	508	5	13	7
1073	7	13	7	522	5	13	7
1087	7	10	7	536	5	13	7

2.

Ներկա թվական	Հուլյան ամիս	Հուլյան ամսաթիվ	Ծաբաթվա օր	Հայոց թվական	Հայոց ամիս	Հայոց ամսաթիվ	Ծաբաթվա օր
960	8	4	7	409	5	7	7
1051	7	13	7	500	5	7	7
1065	7	9	7	514	5	7	7
1079	7	6	7	528	5	7	7

Քանի որ ոչ մի բնագիր Քաղոց 13-ի տակ չի գրանցել Սանդուխտ կույսի հիշատակի օր, իսկ Քաղոց 7-ին Թադեոս առաքյալի հիշատակի օր, որը հիմնավորում է վերոհիշյալ հաշվարկի ստացած թիվերով, ուստի հիշյալ մեթոդով ստացված արդյունքներն ընդունելի չեն: Այլ խոսքով, Հայոց տոնացույցային եղանակը կիրառելի չէ հիշյալ ամսաթիվերի համար: Պարզ է, որ այդ ամսաթիվերն առաջացել են ավելի վաղ, քան Թադեոս առաքյալի և Սանդուխտ կույսի հիշատակի օրը կմտներ Հայոց շարժական տոնացույց, այսինքն՝ 8-րդ դարից առաջ:

Այս դեպքում մեզ օգնության գալիս Հայոց տոմարական եղանակը, որպեսզի պարզվեն Թադեոս առաքյալի և Սանդուխտ կույսի հիշատակի օրերի համարժեքները, իբրև անշարժ տոնվող տոնական օրերի, ինչպես հատկապես հուլյան տոմարի ամսաթիվերով, այնպես էլ հայոց շարժական տոմարի ամսաթիվերով, սակայն տարիների սահմանափակ ժամանակահատվածով:

Նախ բացառենք վկայված բոլոր այն ամսաթիվերը, որոնք Հայոց անշարժ տոմարով են և նրա հուլյան համարժեքներով, այն է՝

1. Քաղոց 7 = Դեկտեմբեր 15, որտեղից Քաղոց 1 = Դեկտեմբեր 9 = 428-431 թթ.
2. Քաղոց 8 = Դեկտեմբեր 16, որտեղից Քաղոց 1 = Դեկտեմբեր 9 = 428-431 թթ.
3. Քաղոց 9 = Դեկտեմբեր 17, որտեղից Քաղոց 1 = Դեկտեմբեր 9 = 428-431 թթ.
4. Քաղոց 13 = Դեկտեմբեր 21, որտեղից Քաղոց 1 = Դեկտեմբեր 9 = 428-431 թթ.
5. Քաղոց 14 = Դեկտեմբեր 22, որտեղից Քաղոց 1 = Դեկտեմբեր 9 = 428-431 թթ.
6. Քաղոց 15 = Դեկտեմբեր 23, որտեղից Քաղոց 1 = Դեկտեմբեր 9 = 428-431 թթ.
7. Նավասարդի 11 = Օգոստոս 21, որտեղից Նավասարդ 1 = Օգոստոս 11 = 428-431 թթ.
8. Մեհեկի 4 = Փետրվար 10, որտեղից Մեհեկի 1 = Փետրվարի 7 = 428-431 թթ.
9. Մարերի 23 = Մայիս 30, որտեղից Մարերի 1 = Մայիս 8 = 428-431 թթ.

Բոլոր ամսաթիվերն էլ, որոնք բերեցինք վերևում, հանգում են Սարկավագաղի տոմարի սկզբնավորման ժամանակի հետ, այսինքն՝ բոլորն էլ առաջացել են Հայոց անշարժ տոմարի հիման վրա, որոնք ընդունելի չեն: Բացառելով վերոհիշյալ զուգահեռները, միաժամանակ դժվար չէ Թադեոս առաքյալի վկայաբանության մեջ փաստագրված Դեկտեմբեր 23-ը համադրել Քաղոց 13-ին, որից կստանանք նաև Սանդուխտ կույսի հիշատակի օրվա հայոց շարժական և - հուլյան տոմարի համարժեքները, այն է՝ Քաղոց 7, որը վկայված է բնագրերում և Դեկտեմբեր 17, որը հայոց անշարժ տոմարի համարժեք դառնալու պատճառով դարձել է Դեկտեմբերի 15: Այլ խոսքով, Դեկտեմբերի 23-ը հարաբերում է Դեկտեմբերի 17-ին այնպես ինչպես Քաղոց 13-ը՝ Քաղոց 7-ին: Ուշագրավ է, որ Գրիգոր Նյաթեցին, որը տոմարներին լավատեղյակ անձնավորություն էր, Թադեոս առաքյալի հիշատակի օր է սահմանել դեկտեմբերի 23-ին, որը նախապես գրանցվել էր նրա վկայաբանության մեջ և համադրել ոչ թե հայոց շարժական տոմարի Քաղոց 13-ին, այլ հայոց անշարժ տոմարի Քաղոց 15-ին, այսինքն՝ ԺԳ-ն փոխել է ԺԵ-ի: Հարկ է նշել, որ վկայաբանության կրկնօրինակողներից մեկը Սանդուխտ կույսի հիշատակի օր է տվել Դեկտեմբերի 15-ը, կարծես թե, նկատի է ունեցել Քաղոց 7-ը, իբրև հայոց անշարժ տոմարի համարժեք, իսկ Թադեոս առաքյալի գլխատումը դրել է 8 օր հետո, այսինքն՝ Դեկտեմբերի 23-ին, որը համարժեք է հայոց անշարժ տոմարի Քաղոց 15-ին, մինչդեռ հայոց շարժական տոմարի ամսաթիվով եղել է Քաղոց 13-ին: Վերոհիշյալ վերլուծությունից հետևում է, որ Թադեոս առաքյալի հիշատակի օրը հուլյան անշարժ տոմարով եղել է Դեկտեմբերի 23-ին, որը տարիների կտրվածքում համադրվել է հայոց շարժական տոմարի Քաղոց 13-ին, իսկ Սանդուխտ կույսի հիշատակի օր է սահմանվել Դեկտեմբերի 17-ին, որի հայոց շարժական տոմարի համարժեքն է գրանցվել Քաղոց 7-ը և փոխանցվել սերնդից սերունդ:

Այժմ դժվար չէ որոշել այն ժամանակը, երբ հուլյան համարժեքի փոխարեն դրվել են հայոց շարժական տոմարի ամսաթիվերը: Ըստ «տոմար» ծրագրի ստանում ենք հետևյալ արդյունքները.

1.

Ներկա թվական	Հուլյան ամիս	Հուլյան ամսաթիվ	Ծաբաթվա օր	Հայոց թվական	Հայոց ամիս	Հայոց ամսաթիվ	Ծաբաթվա օր
420	12	23	5	-	5	13	5
421	12	23	6	-	5	13	6
422	12	23	7	-	5	13	7
423	12	23	1	-	5	13	1

Ներկա թվական	Հուլյան ամիս	Հուլյան ամսաթիվ	Ծախսված օր	Հայոց թվական	Հայոց ամիս	Հայոց ամսաթիվ	Ծախսված օր
420	12	17	6	-	5	7	6
421	12	17	7	-	5	7	7
422	12	17	1	-	5	7	1
423	12	17	2	-	5	7	2

Տոմարական զուգահեռներով բացահայտվում և հիմնավորվում է, որ Թաղեոս առաքյալի և Սանդուխտ կույսի հիշատակի օրեր են եղել և անշարժ տոնվել են Դեկտեմբերի 17-ին և 23-ին: Հայոց շարժական տոմարի ամսաթիվերը հաշվել և գրանցել են 420-423 թթ. քառամյակում, երբ նրանց վկայաբանության նախնական բնագիրն են ստեղծել: Այդ ամսաթիվերը հետագայում փոխանցվել են սերնդից սերունդ: Թաղեոս առաքյալի և Սանդուխտ կույսի հիշատակի օրը մտել է Հայոց տոնացույց 8-րդ դարից հետո և վեր է ածվել շարժական տոնի ու մեկ միասնական օրով տոնել են Վարդավառից հետո եկող շաբաթ օրը, որն ընկել է Հուլիս 4 - Օգոստոս 4-ի ամսաթիվերից որևէ մեկում նայած տարի, սակայն այն չի կարողացել փոխել նախօրոք գրանցված Քաղոց 13 և Քաղոց 7 ամսաթիվերը, որոնք իրենց տեղն են գտել Հայոց ճաշոցներում և որոշ տոնացույցներում՝ Վարդավառից հետո եկող շաբաթ օրվա կանոնի հետ զուգահեռ կամ Հայոց անշարժ տոմարի համակարգով գրված ճաշոցներում:

Քանի, որ Հայագիտության համար խիստ հետաքրքրություն է ներկայացնում Թաղեոս առաքյալի և Սանդուխտ կույսի վկայաբանությունը, տեսնենք անկախ սկզբնաղբյուրներով հնարավոր է հիմնավորել վերոհիշյալ թվագրումը: Դեռևս 1905 թ. Հ. Ն. Անդրիկյանը վկայակոչել և հիմնավորել է, որ Թաղեոս առաքյալի և Սանդուխտ կույսի վկայաբանությունից օգտվել ու բառացի մեջբերումներ ունեն «Յաճախապատում ճառք»-ի, գրված 422-428 թթ. և «Ագաթանգեղայ պատմութեան», գրված 428-435 թթ., ինչպես և «Բիւզանդարան պատմութիւնք»-ի գրված 435-445 թթ. հեղինակները: Մեկ այլ առիթով կփորձենք հիմնավորել, որ առաջին երկու աշխատանքները գրվել են հիշյալ թվականներին, իսկ նրանց հեղինակն է Մեսրոպ Մաշտոցը: Վերջինի հավանական հեղինակն է Մուշե Տարոնացին:

Քննարկվող վկայաբանության բովանդակությունը, ինչպես նշել են ուսումնասիրողները, բերել է Մովսես Խորենացին «Պատմութիւն Հայոց»-ի մեջ:

Վերոհիշյալ տվյալները լիովին բավարար են, որ լրացուցիչ կերպով հիմնավորվի Թաղեոս առաքյալի և Սանդուխտ կույսի վկայաբանության մեր առաջարկած թվագրումը:

Կարծում եմ, որ Թաղեոս առաքյալի և Սանդուխտ կույսի վկայաբանության նախնական բնագիրը կարելի է համարել հայերեն գրված առաջին ինքնուրույն երկը, որն առանց բավարար հիմքի վերագրվել է Կորյունի «Վարք Մաշտոց»-ին (գրված 446 թ.): Ի դեպ ասենք, որ «Թուղթ Աբգարու թագաւորի և Վարդապետութիւն Ադէի առաքելոյ» բնագրի թարգմանության մեր կողմից առաջարկված թվականների այն է՝ 416-429 թթ., ավելի է ճշգրտվում: Պարզ է, որ Հովսեփ Պաղնացին կամ Եզնիկ Կողբացին այդ աշխատանքը ասորերենից թարգմանել են 416-419 թթ. սահմաններում, քանի որ, ինչպես նշել են ուսումնասիրողները, Թաղեոս առաքյալի և Սանդուխտ կույսի վկայաբանության հեղինակը գրել է վերոհիշյալ թարգմանության ազդեցության տակ և օգտվել է «Թղթից»: Եթե Թաղեոս առաքյալի և Սանդուխտ կույսի վկայաբանության հիշատակարանում չչեղտվեր, որ այն գրել է (թարգմանեցան հասկանում ենք այդ իմաստով - Ի. Վ.) Սամուել եպիսկոպոսը, ապա մենք վստահությամբ այդ բնագիրը կարող էինք

վերագրել Հովսեփ Պաղնացուն կամ Եզնիկ Կողբացուն, որոնք ասորերեն մի խումբ բնագրերի հետ թարգմանեցին նաև «Աբգարի թուղթը»: Սակայն առկա հիշատակարանը, թեև որոշ վերապահություններ, որովհետև մեկ այլ ընդօրինակության մեջ, որը բերել է Մ. Ավգերյանը եպիսկոպոսի անունը չի գրանցվել, ցույց է տալիս, որ այդ երկի հեղինակը Սամուել եպիսկոպոսն է, որին Հ. Ն. Անդրիկյանը նույնացրել է Վիրքի նույնանուն եպիսկոպոսի հետ: Այլ խոսքով, ամենայն հավանականությամբ Սահակ կաթողիկոսի և Մաշտոց վարդապետի հանձնարարությամբ Հովսեփ Պաղնացին կամ Եզնիկ Կողբացին թարգմանեցին «Թուղթ Աբգարու թագաւորի և վարդապետութիւն Ադէի առաքելոյ»-ն, իսկ Սամուել եպիսկոպոսը գրեց Թաղեոս առաքյալի և Սանդուխտ կույսի վկայաբանությունը դրանով իսկ ստեղծվեց Հայաստանի քրիստոնեության պատմության նախնական հատվածը մինչև Գրիգոր Լուսավորիչ, այսինքն «Բիւզանդարան պատմութիւնք»-ի հեղինակի վկայակոչված առաջին դպրութիւնը (= առաջին գիրքը):

Աբգարի թուղթը և քննարկվող վկայաբանությունը ամբողջացրին Թաղեոս առաքյալի գործունեությունը ոչ միայն Ասորիքում, այլ նաև Հայաստանում, ինչպես և Կապադովկիայում ու Աղվանքում:

Հարկ է նշել, որ Մովսես Խորենացու տվյալները ուշագրավ են ոչ միայն Թաղեոս առաքյալի և Սանդուխտ կույսի վկայաբանության նախնական ամբողջական բնագրի գոյությունը փաստելու, այլև նրանց հիշատակի օրվա կատարման մասին: Բերենք Խորենացու տեղեկությունները:

«Յաղագս վկայութեան առաքելոցն մերոց» ենթավերնագիրը կրող ԼԴ գլխում նա գրում է. «Յետ մահուանն Աբգարու բաժանի թագաւորութիւնն Հայոց յերկուս, քանզի Անանուն որդի նորա կապեաց թագ՝ թագաւորեալ յԵդեսիայ, և քեռորդի նորա Սանատրուկ ի Հայս: Գտանի որ ինչ առ սոցա ժամանակաւ՝ յառաջագոյն գրեալ յայլոց, զգալուստ առաքելոյն Թաղէի ի Հայս, և հաւատալն Սանատրուկոյ, և թողուլ զհավատսն յերկիւղէ նախարարաց Հայոց և կատարումն առաքելոյն և որք ընդ նմա՝ ի գաւառին Շաւարչան, որ այժմ կոչի Արտագ, և պատառումն քարին և յիրեարս գալ և ընդունել զմարմին Առաքելոյն, և առնուլ անտի աշակերտացն և թաղել ի դաշտին և մարտիրոսանալ դատերն արքայի Սանդխտոյ հուպ ի ճանապարհին և աստ ուրումն յայտնել նշխարաց երկոցունց, և փոխել յասապարն: Այս ամենայն, որպէս ասացաք, յայլոց պատմեալ յառաջագոյն քան զմեզ՝ ոչ ինչ կարևորագոյն համարեցաք ոճով երկրորդել» (էջ 157):

Մովսես Խորենացու ակնարկներն անգամ հուշում են, որ վաղ շրջանում Թաղեոս առաքյալի և Սանդուխտ կույսի հիշատակի օրերը կատարվել են, որի մասին ավելի հստակ տրվել է վկայաբանության մի տարբերակի մեջ, այն է՝ «Եւ եղև գիւտ նշխարացն և շնորհաց սուրբ հոգւոյն յաւուրս հոգեգարդ աստուածասէր և ճգնազգեաց տեառն Յովհաննու Հայոց կաթողիկոսի և քաջանուն և նախանձախնդիր աստուածային պատուիրանացն Վահանայ Մամիկոնեից տեառն Հայոց Մարգարանի և սպարապետի, որք եկին աշխարհախումբ բազմութեամբ եպիսկոպոսիւք, քահանայիւք և սարկաւազօք և այլ բազմութեամբ ազատաց և խառնիճաղանճ ամբոխիւ և տօնեցին սաղմոսիւք և օրհնութեամբ զիշատակ սրբոցն բազում աւուրս և ուխտ եղեալ կատարել զիշատակ նոցա»: Կարծում ենք, որ այս հատվածում խոսքը գնում է ոչ այնքան նշխարների գոյության, որի մասին մինչ այդ հայտնում է Խորենացին, այլ նրանց հիշատակի օրերի, այն է՝ Դեկտեմբերի 17-ի և 23-ի կատարման մասին, որը տեղի էր ունենում նաև Հովհան Մանդակունի կաթողիկոսի և Վահան Մամիկոնյանի մարգարանության շրջանում:

Հայոց եկեղեցին ընդունել է Թաղեոսին, իբրև իր բաժին ընկած առաքյալներից մեկը, թերևս գլխավորը: Պատահական չէ, որ Գրիգոր Լուսավորիչը Թաղեոս առաքյալի հաջորդն էր,

1 Ղ. Ալիշան. Աղվ. աշխ., էջ 96-97:



ինչպես վկայված են Հովհաննես Գաբրիելացու (560-577 թթ.) թղթի մեջ ուղղված Վրթանես Սյունյաց եպիսկոպոսին<sup>1</sup>, Վրթանես Քերթոզի (604-607 թթ.) Աղվանք գրած թղթի մեջ, Աբրահամ կաթողիկոսի (607-610 թթ.) շրջաբերական թղթի մեջ<sup>2</sup>, ինչպես և Ստեփանոս Սյունյաց եպիսկոպոսի Անտիոքի եպիսկոպոսին գրած թղթի մեջ<sup>3</sup>, որտեղ Թադեոսը հանդես է գալիս իբրև գլխավոր առաքյալներից մեկը: Այս ակնարկներն անգամ հուշում են, որ Թադեոս Առաքյալի հիշատակը տոնել են անշարժ օրով, այն է՝ Դեկտեմբերի 23-ին, նաև 6-8-րդ դարերում: Իսկ Հետագայում, ինչպես տեսանք, մտավ հայոց տոնացույցի մեջ և դարձավ շարժական տոն:

Քննարկենք մեկ հարց ևս: Հետադոտողները ենթադրում են, որ Թադեոս առաքյալի և Սանդուխտ կույսի վկայաբանությունը սոսկ թարգմանություն է ասորերենից կամ հունարենից, սակայն այդ ենթադրությունը հիմք չունի, քանի որ Թադեոս առաքյալի գործունեությունը Հայաստանում, առավել ևս նրա աշակերտների հատկապես Սանդուխտ կույսի վկայությունը հիմնված պետք է լիներ տեղական քրիստոնեական ավանդության վրա, որը հավանաբար ստեղծվել էր 4-րդ դարում: Ուսումնասիրողներից և ոչ մեկին չի հաջողվել ցույց տալ հիշյալ վկայաբանության զուգահեռները ասորերենում և հունարենում և այս տեսակետից Ն. Ակինյանի կատարած փորձը կարելի է համարել ձախողված: Թադեոս առաքյալի և Սանդուխտ կույսի վկայաբանության ստեղծմանը կարող էին նպաստել հատկապես ասորերեն և հունարեն գրված նույնատիպ վկայաբանությունները, որոնցից մի մասը համադրել է Ն. Ակինյանը, սակայն այն գրվել է Հայաստանում 420-423 թթ. քառամյակում՝ հիմնվելով քրիստոնեական տեղական ավանդությունների վրա: Ասենք նաև, որ ասորերենից թարգմանած Աբգարի թուղթը հող է նախապատրաստել և գրելով վկայաբանությունը ամբողջացվել է Թադեոս առաքյալի քարոզչությունը ոչ միայն Ասորիքում, այլև Հայաստանում, Աղվանքում և Կապադովկիայում, ինչպես և նրա աշակերտների վկայությունները, որոնք ոչ մի կերպ չեն կապվում դրսի հետ:

Այսպիսով հիմնավորվեց, որ Թադեոս առաքյալի և Սանդուխտ կույսի վկայաբանությունը գրվել է 420-423 թթ.: Նրա հավանական հեղինակն է Սամուել եպիսկոպոսը: Հիշյալ վկայաբանությունը հայերեն առաջին ինքնուրույն երկն է, որն ստեղծվեց գրերի գյուտից (408 թ.) մոտ 12-15 տարի հետո: Այն Սահակ կաթողիկոսի և Մաշտոց վարդապետի կողմից ծրագրված Հայոց քրիստոնեության պատմության առաջին դպրությունն էր, ինչպես վկայել է «Բիզանդարան պատմությունը»-ի հեղինակը, որը «Թուղթ Աբգարու...»-ի հետ միասին ամփոփեց Թադեոս առաքյալի քարոզչության գործունեությունը (Ասորիք, Կապադովկիա, Հայաստան, Աղվանք) և նրա աշակերտների հավատալն ու վկայությունը:

Հաջորդ դպրությունը, որը թվով 2-րդն էր, ինչպես վկայել է «Բիզանդարան պատմությունը» -ի հեղինակը, գրել սկսեց Մաշտոց վարդապետը (428-435 թթ.), որը կոչվեց Գրիգորիսի գիրք կամ Ագաթանգեղոյ (= Ավետարանի = Գրիգոր Լուսավորչի) պատմությունը», որին կանդորադոնանք այլ առիթով:

\*\*\*

Սկսենք Շուշանիկի տոնական օրվա քննությունը: Հայոց ճաշոցները հիշյալ օրվա կապակցությամբ տալիս են տարբեր տեղեկություններ:

Ըստ 832 թվահամարի ճաշոցի՝ «Քաղոց ժէ (= Դեկտեմբեր 25). Սրբոյն Շուշանկան դստեր սրբոյն Վարդանայ...» (էջ 63բ):

Քաղոց ժէ կանոնի տակ են գրանցել Շուշանկան (Շուշանայ) հիշատակի օրը նաև 4514 (էջ 291բ) և 9474 (էջ 73բ) թվահամարների գրչագրերը: 4514 թվահամարի բնագրի ստորին լուսանցքում միաժամանակ տվել է՝ «Երկուշաբաթի. Սրբոյն Շուշանայ(յ) դստեր սրբոյ Վարդանայ»: Իսկ 2092 թվահամարի Տոնացույցը գրել է. «Բշ. Շուշանկան... Քաղոց ժէ» (էջ 227ա):

Վենետիկի 639 թվահամարի ճաշոցը Շուշանիկի հիշատակի օրը վկայել է Քաղոց ժէ-ի կանոնի տակ<sup>1</sup>: Այսպես են վարվել նաև Երևանի 939 (էջ 387բ), 4437 (էջ 145բ) և 4506 (էջ 301ա) գրչագրերը, միաժամանակ ներքին լուսանցքում գրանցել են երկուշաբթի օրվա նշումը: Հավանական է, բայց դժվար է պնդել, որ Քաղոց ժէ-ն գրչական սխալ է Քաղոց ժէ-ի, թեև Հայոց Յայնավուրքների տարբեր խմբագրությունները և Շուշանիկի վկայաբանության առաձին ընդօրինակությունները փաստագրել են Քաղոց ժէ-ն:

Հայոց ճաշոցների մի խումբ<sup>2</sup> Վարդավառից հաջված երկրորդ կիրակիից հետո եկող երկուշաբթի օրվա կանոնի տակ են դրել Շուշանիկ-Շուշանկան-Շուշանայ հիշատակի օրը:

Հայոց տոնացույցերի խմբագրությունները միանշանակ վկայել են «Ձկնի Վարդավառին երկրորդ կիրակի է»-ի կամ Վարդավառից հետո եկող առաջին կիրակիից հետո եկող. «Բշ (երկուշաբաթ). Շուշանկան (Շուշանայ) դստեր Վարդանայ»: Բերենք որոշ տոնացույցերի թվահամարներն ու նրանց համապատասխան էջերը, այն է՝ 759 (էջ 171ա), 179, 752 (էջ 168բ), 767 (էջ 164ա-168ա), 5667 (էջ 131ա) 9838 (էջ 173բ), 4164 (էջ 190ա), 4574 (էջ 190բ) և այլն:

Հայոց Յայնավուրքները բաժանվում են երկու խմբի: Տեր-Իսրայելի Յայնավուրքը Քաղոց ԻԱ և Դեկտեմբեր ԻԹ կանոնի տակ գրել է. «Յայնավուր վկայութիւն սրբոյն Շուշանայ»:

Կիրակոս Գանձակեցու Յայնավուրքի խմբագրությունները Քաղոց ժէ և Դեկտեմբեր ԻԵ կանոնի տակ են տվել Շուշանկան-Շուշանայ վկայության օրը: Բերենք որոշ Յայնավուրքների թվահամարները և նրանց համապատասխան էջերը, այն է 2695, էջ 371բ, 3082, էջ 392 բ, 179, Վենետիկի 189 ձեռագիրը, 7433, էջ 179ա, 9585, էջ 103բ, 7530, էջ 74ա-բ, 4741, էջ 147ա և այլն: Վենետիկի 710 թվահամարի Յայնավուրքի խմբագրությունը Դեկտեմբեր 25 և Քաղոց 17-ի կանոնի տակ է գրել Շուշանիկի հիշատակի օրը, այսինքն՝ ամսաթվերի տեղերը փոխել է:

Գրիգոր Խլաթեցու Յայնավուրքի խմբագրությունները ևս հետևել են Կիրակոս Գանձակեցու որոշած օրվան և գրել. «Քաղոց ժէ և Դեկտեմբեր ԻԵ. Յայնավուր յիշատակ սուրբ Շուշանայ դստեր Վարդանայ»<sup>1</sup>:

Շուշանիկի վկայաբանության առանձին ընդօրինակությունները պահպանել են Քաղոց 17-ի ամսաթիվը: Այսպես, Փարիզի 178 (միկրոֆիլմի Երևանի համարը 879) թվահամարի վկայաբանական ժողովածուի ՀԴ (74) համարի տակ «Վկայութիւն սրբոյն Շուշանկանն, որ կատարեցաւ ի Վիրս... ի Քաղոց ի տասն եւ եւթն» երկարաշունչ վերնագիրը կրող ընդօրինակության մեջ թե վերնագրում, թե բնագրում տալիս է նրա վկայության ամիս-ամսաթիվը, այն է՝ «... եւ ապա պատարագ մատուցանեն եւ տաւն մեծ կատարին զաւր հանգստեան սրբոյն ի տասն եւ եւթնն Քաղոց ամսոյ ամ յամէ կատարելով...»:

Հարկ է նշել, որ Մ. Ավգերյանին հայտնի է եղել վենետիկյան մի Յայնավուրք, որտեղ Շուշանիկի հիշատակի օր է սահմանվել Մայիսի 30-ին: Վենետիկյան ձեռագիր Յայնավուրքների նկարագրությունների մեջ այդ նշումը բացակայում է: Մեզ դեռևս այդ Յայնավուրքի ընդօրինակություն չի հանդիպել Երևանի հավաքածուի մեջ:

1 Տե՛ս Ս. Ծեմճեմյան, Աշխ., էջ 621-622:

2 Տե՛ս Ձեռ. № № 7741, էջ 346ա-բ, 4107, էջ 640, 5455, էջ 241ա և այլն:

1 Տե՛ս Ձեռ. № 6338, էջ 245բ և այլն:

1 Գիրք թղթոց, Թիֆլիս, 1901, էջ 78:

2 Գիրք թղթոց, էջ 189, 416-418:

3 Գիրք թղթոց, էջ 323:



Շուշանիկի վկայության հայոց շարժական տոմարի Քաղոց 17-ի հուլյան համարժեքը հայտնի չէ, քանի որ Քաղոց 17 և Դեկտեմբերի 25, Քաղոց 21 և Դեկտեմբերի 29 համարժեքները հայոց տոմարական եղանակի կիրառմամբ տալիս են Սարկավագադիր տոմարի սկզբի տարիները, այն է՝ 428-431 թթ., երբ Շուշանիկը երևի նոր էր ծնվել: Այլ խոսքով Շուշանիկի հիշատակի օրվա անշարժ տոնի հուլյան ամսաթիվը գտնված չէ: Հնարավոր է մտածել, որ վաղ շրջանում (5-8-րդ դդ.) նրա հիշատակը կատարել են այլ սրբերի հետ միասին հունվար 13-ին, Մարտի 9-ին և Օգոստոս 23-ին ըստ «Կանոնք ընթերցուածոց»-ի նշումների: Սակայն այդ ամսաթվերը համադրելով Քաղոց 17-ի հետ դրական արդյունք չեն տալիս: Մնում է կիրառել հայոց տոնացույցային եղանակը: Հայոց տոնացույցերից, ինչպես տեսանք, հայտնի է, որ Շուշանիկի հիշատակի օր է սահմանվել Վարդավառի երկրորդ կիրակիից հետո եկող երկուշաբթի օրը, այսինքն՝ Վարդավառից հաշված 9-րդ օրը, որը եղել է Հուլիս 6 - Օգոստոս 5-ի ամսաթվերից որևէ մեկում նայած տարի: Եթե ընդունենք, որ Քաղոց 17-ը (մյուս տարբերակով Քաղոց 15-ը) առաջացել է տոնացույցային տվյալների հիման վրա, ապա Վարդավառը կատարել են Քաղոց 9-ին (մյուս տարբերակով Քաղոց 7-ին), իսկ Շուշանիկի հիշատակի օրը՝ Քաղոց 17-ին (մյուս տարբերակով Քաղոց 15-ին): Այդպիսի տարիներ են եղել ըստ «Հայոց տոնացույց»-ի հաշվումների:

1.

Ներկա թվական	Հուլյան ամիս	Հուլյան ամսաթիվ	Ծաբաթվա օր	Հայոց թվական	Հայոց ամիս	Հայոց ամսաթիվ	Ծաբաթվա օր
1092	7	12	2	541	5	17	2
1106	7	9	2	555	5	17	2

2.

Ներկա թվական	Հուլյան ամիս	Հուլյան ամսաթիվ	Ծաբաթվա օր	Հայոց թվական	Հայոց ամիս	Հայոց ամսաթիվ	Ծաբաթվա օր
1031	7	26	2	480	5	15	2
1045	7	22	2	494	5	15	2
1059	7	19	2	508	5	15	2
1073	7	15	2	522	5	15	2
1087	7	12	2	536	5	15	2

Այլ խոսքով, եթե հիշյալ ամսաթիվը կամ ամսաթվերն ստեղծվել են հայոց տոնացույցային եղանակով, ապա նրանք չէին կարող առաջանալ ավելի վաղ քան 11-րդ դարը: Ավելի հավանական է, որ 5-8-րդ դդ. Շուշանիկի հիշատակի օրը նշել են լոկալ ձևով և նրա անշարժ տոնվող օրը չի հասել մեզ ոչ հուլյան և ոչ հայոց շարժական տոմարի ամիս-ամսաթվերով: Իսկ 8-րդ դարից հետո Շուշանիկի տոնական օրը մտել է հայոց տոնացույց իբրև շարժական տոն և նրա հիշատակի օրը նշել են Հուլիս 6 - Օգոստոս 5-ի սահմաններում նայած տարի: Այդ շարժական տոնի հիման վրա 11-րդ դարում հաշվել են և ստացել հայոց շարժական տոմարի Քաղոց 17 (15) ամսաթիվը կամ ամսաթվերը, որոնք փոխանցվել են հետագա սերունդներին: Քաղոց 17-ը իբրև հայոց շարժական տոմարի ամսաթիվ վերածվեց հայոց անշարժ տոմարի ամսաթվի ստանալով հուլյան տոմարի Դեկտեմբերի 25-ի համարժեքը: Վերջինս, ինչպես նկատելի է, կապ չունի Հուլիս 6 - Օգոստոս 5 -ի հուլյան ամսաթվերի հետ, որի օրերից մեկում էլ նայած տարի ընկնում էր Շուշանիկի հիշատակի օրը: Ասենք նաև, որ Շուշանիկի հիշատակի օրը չեն նշել ոչ

Դեկտեմբերի 29-ին և ոչ էլ Դեկտեմբերի 25-ին, ինչպես և Մայիսի 30-ին: Ակնհայտ է դառնում, որ Քաղոց 17-ը, իբրև Շուշանիկի հիշատակի օրվա հայոց շարժական տոմարի ամսաթիվ, ստեղծվել է հայոց տոնացույցային ճանապարհով 11-րդ դարում և փոխանցվել հետագայում ընդօրինակված ճաշոցներին ու Յայսմավուրքներին՝ վերածվելով հայոց անշարժ տոմարի ամսաթվի: Համենայն դեպս առկա տվյալները Շուշանիկի հիշատակի օրվա առիթով բերում են միայն վերոհիշյալ եզրակացություններին:

\*\*\*

Անցնենք Կիպրիանոս եպիսկոպոսի կամ հայրապետի և Յուստինեա կուլյսի հիշատակի օրվա վերլուծությանը:

Նախ բերենք ճաշոցներում տեղ գտած տեղեկությունները: 832 թվահամարի գրչագիրը գրանցել է. «Արաց Ե (= Հունվար 12). Սրբոյն Կիպրիանոսի եւ Յուստինեայ կուլսի» (էջ 65ա):

Կիպրիանոսի և Յուստինեա կուլյսի տոնական օրը Արաց 5-ի կանոնի տակ են դրել նաև Վենետիկի 639 թվահամարի գրչագիրը, ինչպես և Երևանի մատենադարանի 6235 (էջ 49բ), 4977 (էջ 74բ), 939 (էջ 388բ), 4506 (էջ 308ա) գրչագրերը: Արաց Ե-ի նշում ունի նաև 2092 թվահամարի Տոնացույցի ընդօրինակությունը (էջ 227ա): Միաժամանակ երեքշաբթի օրվա նշում ունեն 939 և 4506 թվահամարների ճաշոցների ընդօրինակությունները, ինչպես և 2092 թվահամարի Տոնացույցը:

Արաց Ե-ի կանոնի տակ են գրանցել Կիպրիանոսի և Յուստինեա կուլյսի տոնական օրը 4514 (էջ 292ա) և 4437 (էջ 196ա) ճաշոցների ընդօրինակությունները, զուգահեռաբար ստորին լուսանցքում բերելով նաև երեքշաբթի օրվա նշումները: Ճաշոցների մյուս խումբը Կիպրիանոսի և Յուստինեայ կուլյսի տոնական օրը տվել են միայն երեքշաբթի օրվա կանոնի տակ<sup>1</sup>: Ինչպես նկատելի է կատարվել է Ե-ն Ե-ի փոխվելու սովորական գրչական սխալ:

Գրիգոր Վկայասերի Տոնանամակի խմբագրության ցանկում պահպանվել է. «(Հոկտեմբեր) Բ. Կիպրիանոսի եպիսկոպոսի և Յուստինեայ կուլսի» (էջ 4բ), իսկ բնագրում բացակայում է էջերի կորուստի հետևանքով: 940 թվահամարի ճաշոցը ձևով համարի տակ վկայել է. «Հոկտեմբեր Բ. Կիպրիանոսի եպիսկոպոսի և Յուստինայ կուլսին»:

Հայոց տոնացույցերի խմբագրությունները միանշանակ «Զկնի Վարդավառին երկրորդ (կամ Վարդավառից հետո եկող առաջին) կիրակի»-ից հետո եկող «Գշ (երեքշաբթի). Կիպրիանոսի և Յուստինեայ կուլսի» կանոնի տակ են գրանցել նրանց հիշատակի օրը<sup>2</sup>, այսինքն՝ Վարդավառից հաշված 10-րդ օրը, որն ընկնել է Հուլիս 7 - Օգոստոսի 5-ի ամսաթվերից մեկում նայած տարի:

Հայոց Յայսմավուրքները տալիս են հետևյալ տեղեկությունները: Վենետիկի 1048 թվահամարի գրչագիրը, որը Հովսեփ Կոստանդնուպոլսեցու տոնացույցի խմբագրությունն է, գրել է. «(Հոկտեմբեր) Բ. Վկ. Կիպրիանոսի եպիսկոպոսի և սրբուհի կուլսի Յուստինեայ»: Իսկ մյուս Յայսմավուրքների խմբագրությունները<sup>3</sup> «Հոռի ԻԳ և Հոկտեմբերի Բ» կանոնի տակ են բերել «Վկայութիւն սրբոյն Կիպրիանոսի եպիսկոպոսի և Յուստինեայ կուլսին»: Բացառություն են կազմում Գրիգոր Խլաթեցու խմբագրած Յայսմավուրքի ընդօրինակությունները, որոնք Կիպրիանոսի և Յուստինեա կուլյսի՝ հիշատակի օրը տեղափոխել են Հոռի 24 և Հոկտեմբերի 3 կա-

1 Ձեռ. № № 7741, էջ 347ա-բ, 4107 էջ 641 և այլն:  
 2 Տե՛ս Ձեռ. № № 759 (էջ 171ա), 179, 752 (էջ 168բ), 767 (էջ 164բ-168ա), 5667 (էջ 131ա), 4838 (էջ 173բ), 4164 (էջ 190ա) և այլն:  
 3 Տե՛ս Ձեռ. № № 2695, էջ 269ա, 3082, էջ 390բ, 179, 7433, էջ 61բ, 9585, էջ 12ա, 7529, էջ 7բ, 4741, էջ 47ա, Վեճեստիկի 631 գրչագիրը և այլն:

նունի տակ<sup>1</sup>: Մ. Ավգերյանը այս վերջին տվյալն է նկատի ունեցել, երբ Կիպրիանոսի և Յուստինեան կույսի հիշատակի օրը դրել է ըստ Հայոց Յայտմավորքի Հոկտեմբերի 3-ի տակ, իսկ ըստ Յուստինեանց՝ Հոկտեմբերի 3-ի և վերջապես ըստ Լատինացիոց՝ Սեպտեմբերի 26 և 14-ի տակ<sup>2</sup>:

Հայոց տոմարական և տոնացույցային եղանակի կիրառմամբ գտնենք նրանց օրվա առաջացման ժամանակը Հայոց մեջ: Ակնհայտ է, որ պետք է բացառել Հայոց շարժական տոմարի Արաց 5-ի ամսաթվի հուլյան տոմարի Հունվար 12-ի համարժեքը, ինչպես և Հուլի 23 և 24-ի Հայոց անշարժ տոմարի համարժեքները:

Ըստ Հայոց տոմարական եղանակի ստանում ենք. Արաց 5 = Հոկտեմբեր 2, որտեղից Արաց 1 = Սեպտեմբեր 28 = 836-839 թթ.:

Կիրառենք Հայոց տոնացույցային եղանակը: Քանի որ Կիպրիանոսի և Յուստինեան կույսի տոնական օր է սահմանվել Վարդավառից հաշված 16-րդ օրը, երեքշաբթի, ուստի Վարդավառը եղել է Քաղոց 26-ին, իսկ նրանց հիշատակի օրը՝ Արաց 5-ին, որն ըստ «Հայոց տոնացույց» ծրագրի հաշվարկների ընկնում է.

Ներկա թվական	Հուլյան ամիս	Հուլյան ամսաթիվ	Ծարաթվա օր	Հայոց թվական	Հայոց ամիս	Հայոց ամսաթիվ	Ծարաթվա օր
1096	7	29	3	545	6	5	3
1110	7	26	3	559	6	5	3
1124	7	22	3	573	6	5	3
1138	7	19	3	587	6	5	3
1152	7	15	3	601	6	5	3

Վերահիշյալ տարեթվերից մեկի կամ մյուսի առաջացումը դժվար չէ բացատրել: Կարծում ենք, որ 836-839 թթ. քառամյակում հունարենից Հայերեն է թարգմանվել Կիպրիանոսի և Յուստինեան կույսի վկայաբանությունը և նրանց վկայության օրվա ամիս-ամսաթիվը, այն է՝ Հոկտեմբերի 2-ը համարժեք է ստացել Հայոց շարժական տոմարի Արաց 5-ը, իսկ դրանից հետո նրանց հիշատակի օրը մտել է Հայոց տոնացույց, որը սահմանել են Վարդավառից հաշված 10-րդ օրը, երեքշաբթի և 11-րդ դարի վերջում - 12-րդ դարի առաջին կեսին Արաց 5-ը համարժեք է դարձել կամ Հուլիս 29-ին (1096 թ.) կամ Հուլիս 26-ին (1110 թ.), կամ Հուլիս 22-ին (1124 թ.) կամ Հուլիս 19-ին (1138 թ.) կամ Հուլիս 15-ին (1152 թ.): Այլ խոսքով Կիպրիանոսի եպիսկոպոսի և Յուստինեան կույսի վկայաբանությունը Հայոց մեջ մուտք է գործել 9-րդ դարի 30-ական թվականների վերջերին, իսկ տոնացույց է մտել 11-րդ դարի վերջին - 12 դարի առաջին կեսին:

\*\*\*

Քննարկենք նախահարց հիշատակի օրվա խնդիրը: Սկսենք ճաշոցների տվյալներից:

832 թվահամարի բնագրում կարդում ենք. «Արաց Ժ (Հունվար 17). Աբրահամու, Սահա-կա[յ] (տարբերակ՝ Իսահակայ), Յակովբա[յ], Յովսեփա[յ], Մովսէսի, Ահարոնի, Յեսուայ, Սամուէլի եւ այլոց նախահարցն» (էջ 66բ-73բ):

Արաց 10-ի կանոնի տակ են տվել նախահարց հիշատակի օրը նաև 940 թվահամարի ճաշոցը, որի ճշ համարի տակ է դրված՝ տեղադրված Դեկտեմբերի 22-ի և 24-ի միջև, այսինքն՝ դեկտեմբերի 23-ին, ինչպես և 6235 թվահամարի գրչագրում (էջ 50բ), 4977-ում (75բ): Սրանք ավելացրել են Ադամի, Աբելի, Նոյի անունները:

Նախահարց տոնական օրը շաբաթ օրվա կանոնի տակ են տվել 7741 (էջ 350ա-352բ), 4107 (էջ 647-650), 5455 (էջ 245ա-բ) գրչագրերը:

Արեգ 13-ի կանոնի տակ են դրել նախահարց օրը 4514 (էջ 294բ) և 939 (էջ 391բ) բնագրերը, միայն վերջինս ստորին լուսանցքում ունի նաև շաբաթ օրվա նշումը:

979 թվահամարի ճաշոցը, որը Գրիգոր Վկայասեր Տոնանամակի խմբագրություն է, Դեկտեմբերի 23-ի տակ է դրել «Յիշատակ նախահարցն...» (էջ 5բ և 426ա):

Հայոց տոնացույցերի խմբագրությունները նախահարց հիշատակի օրը սահմանել են «Ջկնի Վարդավառին երկրորդ (կամ Վարդավառից հետո եկող առաջին) կիրակէից» հետո եկող «էջ (Շաբաթ). Սրբոցն նախահարցն՝ Ադամայ, Աբելի, Սեթայ, Ենովսայ, Ենովքայ, Նոյի, Մելքիսեդեկի, Աբրահամու, Սահակայ (տարբերակ՝ Իսահակայ), Յակովբայ, Մովսէսի, Ահարոնի, Սամուէլի և այլոց սրբոց նախահարցն»<sup>1</sup>:

Միայն 2092 թվահամարի Տոնացույցը նախահարց հիշատակի օրը տեղափոխել է հինգշաբթի, միաժամանակ նշելով Արաց Ժ-ն (էջ 227ա), որը իբրև կանոն չի ընդունվել հետագայում: Բանն այն է, որ Վարդավառից - Աստուածածին հատվածում հաստատուն շաբաթվա օրերը կարող էին փոխել, որովհետև 16 հիշատակի օրերի համար երբեմն մեկ շաբաթ էր մնում, այսինքն չորս օր, որի հետևանքով սրբերը հիշատակները տոնել են զույգ զույգ, երեք-երեք կամ տեղափոխել այլ տեղ: Ասենք նաև, որ Հայոց Յայտմավորքների և ոչ մի խմբագրություն նախահարց հիշատակի օրը առանձին օրվա կանոնի տակ չունի, այլ նրանք տեղադրված են տոնական տարվա տարբեր օրեր, բայց ոչ Արաց Ժ-ի և ոչ էլ Արեգի ԺԳ-ի տակ: Այնպես որ, նախահարց հիշատակի օրը փաստագրել են միայն ճաշոցներն ու տոնացույցերը:

Հնագույն ճաշոցների և ոչ մի խմբագրություն չունի նախահարց հիշատակի օրը առանձին կանոնի տակ, ուստի նրանց հիշատակի օրը կարող էին նշել ընդհանուր ձևով Հունվար 13-ին, Մարտ 9-ին և Օգոստոս 23-ի ամսաթվերից մեկում, թեև քիչ հավանական ենք համարում:

Նախահարց հիշատակի օրվա Հայոց շարժական տոմարի ամսաթվերը ստեղծվել են տոնացույցային ճանապարհով, թեև դրանցից մեկը՝ Արաց 10-ը հետագայում վեր է անվել Հայոց անշարժ տոմարի ամիս-ամսաթվի և ստացել Հունվարի 17-ի հուլյան տոմարի համարժեքը:

Նախահարց տոնական օրերի տարիները որոշելու համար կիրառենք Հայոց տոնացույցային եղանակը: Հայոց տոնացույցում նախահարց տոնական օր է սահմանվել Վարդավառից հաշված 14-րդ օրը՝ շաբաթ օրվա կանոնի տակ, որն ընկել է Հուլիս 12 - Օգոստոս 4-10-ի օրերից մեկում նայած տարի, թեև նրանց տոնական օրը հաստատուն չի եղել և տեղափոխվել է տոնական տարվա այլ տեղ: Երբ Վարդավառ - Աստուածածնի հատվածում, բնականոն կատարվել են սրբերի հիշատակի օրերը, Վարդավառը եղել է Քաղոց 27-ին, իսկ նախահարց հիշատակի օրը տոնել են Արաց 10-ին, իսկ Արեգ 13-ի դեպքում Վարդավառն ընկել է Մեհականի 30-ին: Բերենք «Հայոց տոնացույց»-ի հաշվարկները.

<sup>1</sup> Տե՛ս Ձեռ. № № 6338, էջ 95ա, 1511, էջ 87ա և այլն:  
<sup>2</sup> Տե՛ս Վարք եւ վկայաբանութիւն... և. 4-րդ, էջ 68-105:

<sup>1</sup> Տե՛ս Ձեռ. № № 759, էջ 171ա, 179, 752, էջ 168բ-169ա, 767, էջ 168ա, 5667, էջ 130բ-131ա, 7203, էջ 72ա-74ա, 4838, էջ 174ա, 4164, էջ 190ա, 4874, էջ 190ա-191ա և այլն:

1.

Ներկա թվական	Հուլյան ամիս	Հուլյան ամսաթիվ	Ծաբաթվա օր	Հայոց թվական	Հայոց ամիս	Հայոց ամսաթիվ	Ծաբաթվա օր
1074	8	9	7	532	6	10	7
1088	8	5	7	537	6	10	7
1102	8	2	7	551	6	10	7

2.

Ներկա թվական	Հուլյան ամիս	Հուլյան ամսաթիվ	Ծաբաթվա օր	Հայոց թվական	Հայոց ամիս	Հայոց ամսաթիվ	Ծաբաթվա օր
1340	8	5	7	789	8	13	7
1354	8	2	7	803	8	13	7
1368	7	29	7	817	8	13	7
1382	7	26	7	831	8	13	7
1396	7	22	7	845	8	13	7

Ակնհայտ է, որ Արաց 10-ի ամսաթիվն առաջացել է 11-րդ դարի 3-րդ քառորդի և 12-րդ դարի սկզբի տարիներին, այսինքն նախահարց հիշատակի օրը տոնացույց է մտել 11-րդ դարի 2-րդ կեսից ոչ շուտ, իսկ 12-րդ դարի կեսերին Սարկավազադի ձաշոցի հեղինակը վերցնելով Արաց 10-ը անշարժացրել է, և տվել հուլյան տոմարի Հունվարի 17-ի համարժեքը, թեև նրանց տոնը երբեք անշարժ տոմարի հիշյալ ամսաթիվին չի կատարվել:

Վերը բերված հաշվումներից պարզ է դառնում, որ Արեգի 13-ի դեպքում ստանում ենք ոչ օրինաչափ արդյունք, քանի որ Վարդավառը պետք է կատարեն Մեհականի 30-ին, իսկ նախահարց տոնը Արեգի 13-ին 1322/3 թթ. առաջ, որովհետև այդ ամսաթիվն է գրանցել 4514 թվահամարի ձաշոցը, մինչդեռ ստացվում է 1340-1396 թթ.: Պարզ է դառնում, որ 1322/3 թթ. առաջ, երբ Զատիկն ընկել է Ապրիլ 22-25-ի միջոցին Վարդավառ - Աստուածածնի միջև մեկ շաբաթ է եղել և այդ տոնը տեղափոխել են տարվա այլ հատված, որի հետևանքով ստացել են Արեգի 13-ի ամսաթիվը: Դժբախտաբար պարզ չէ, թե տարվա որ հատված են տեղափոխել, ուստի հնարավոր չէ որոշել այս ամսաթիվի առաջացման տարիները:

\*\*\*

Անցնենք Սահակ և Հովսեփ վկաների հիշատակի օրվա քննությանը:

832 թվահամարի ճաշոցում կարդում ենք. «Արաց Ժե (Հունվար 22). Սրբոյ Սահակայ եւ Յովսեփայ, որ ի Կարնոյ քաղաքի (կատարեցան)» (էջ 74ա): Արաց Ժե կանոնի տակ են գրանցել Սահակ և Հովսեփ վկաների տոնական օրը նաև Վենետիկի 639 թվահամարի և Երևանի Մատենադարանի 4977 թվահամարի (էջ 76բ) ճաշոցները:

6235 թվահամարի ձաշոցն ունի՝ «Յարանց Ժէ. Սահակայ և Յուսիփու, որ ի Կարնոյ քաղաք» (էջ 55ա): Արաց Ժէ-ի կանոնի տակ են տվել նաև 4506 թվահամարի ձաշոցը (էջ 304բ) և 2092 թվահամարի Տոնացույցը (էջ 227), միաժամանակ ունենալով երկուշաբթի օրվա նշումը:

940 թվահամարի ձաշոցը ԺԳ համարի տակ գրել է. «Յունուար ԻԲ. Սահակայ և Յովսեփայ, որ ի Կարնոյ քաղաք (կատարեցան)»:

7741 (էջ 354ա-բ), 4107 (էջ 653-657) և 5455 (էջ 244բ) թվահամարների ճաշոցները Սահակի և Հովսեփի հիշատակի կանոնը տվել են երկուշաբթի օրվա տակ:

4514 և 939 թվահամարների ճաշոցները (էջ 298ա և 397ա) Սահակի ԻԲ-ի կանոնի տակ են տվել Սահակի և Հովսեփի հիշատակի օրը, միաժամանակ ստորին լուսանցքում ունենալով երկուշաբթի օրվա նշումները: Հայոց տոնացույցերի խմբագրությունները միանշանակ վկայել են «Զկնի Վարդավառի երրորդ կիրակի»-ից (կամ Վարդավառից հետո եկող երկրորդ կիրակիից) հետո «Բշ (երկուշաբթ). Սահակայ և Յովսեփայ, որ ի Կարնոյ քաղաք կատարեցան»<sup>1</sup>:

Հայոց Յայսմավուրքների խմբագրությունները, որոնք ունեն Սահակի և Հովսեփի հիշատակի օրը գրել են Արաց 15-ի և Հունվարի 22-ի կանոնի տակ<sup>2</sup>: Մ. Ավգերյանը Սահակի և Հովսեփի վկայության օրը գրել է «Յունվարի 22, որ է Արաց Ժե կամ Ժէ»-ի տակ<sup>3</sup>:

Արաց 15-ը վեր է ածվել Հայոց անշարժ տոմարի և ստացել Հունվարի 22-ի հուլյան համարժեքը, որը չի համապատասխանում Սահակի և Հովսեփի նահատակության ժամանակին, որը տեղի ունեցավ 9-րդ դարի սկզբներին, Հայոց շարժական տոմարի հուլյան համարժեքին, սակայն նրանց վկայության ամսաթիվն, որը եղել է կամ Արաց 15-ը կամ 17-ը փոխանցվել է հետագա բնագրերին, ինչպես և առաջացել է նոր ամսաթիվ՝ Սահակի 22-ը: Հայոց տոմարական եղանակը հնարավոր չէ կիրառել տվյալ դեպքում, քանի որ ստույգ հայտնի չէ Սահակի և Հովսեփի վկայության հուլյան համարժեքը:

Հայոց տոնացույցային եղանակը կիրառենք: Քանի որ Սահակի և Հովսեփի հիշատակի օր է սահմանվել Վարդավառից հաշված 16-րդ օրը, երկուշաբթի, որը տատանվել է Հուլիս 13 - Օգոստոս 7-ի ամսաթվերում նայած տարի: Միաժամանակ Վարդավառ - Աստուածածնի հատվածում տոնական օրեր չլինելու պատճառով սրբերի օրերը, որոնց թվում նրանցը, տեղափոխել են տարվա այլ ամսին: Ինչևէ Հայոց տոնացույցային եղանակը տալիս է հետևյալ արդյունքները ըստ «Հայոց տոնացույց»-ի հաշվումների. այն է՝

1.

Ներկա թվական	Հուլյան ամիս	Հուլյան ամսաթիվ	Ծաբաթվա օր	Հայոց թվական	Հայոց ամիս	Հայոց ամսաթիվ	Ծաբաթվա օր
1190	7	16	2	639	6	15	2

2.

Ներկա թվական	Հուլյան ամիս	Հուլյան ամսաթիվ	Ծաբաթվա օր	Հայոց թվական	Հայոց ամիս	Հայոց ամսաթիվ	Ծաբաթվա օր
1118	8	5	2	567	6	17	2
1132	8	1	2	581	6	17	2

3.

Ներկա թվական	Հուլյան ամիս	Հուլյան ամսաթիվ	Ծաբաթվա օր	Հայոց թվական	Հայոց ամիս	Հայոց ամսաթիվ	Ծաբաթվա օր
748	8	12	2	197	3	22	2
762	8	9	2	211	3	22	2
766	8	5	2	225	3	22	2
790	8	2	2	239	3	22	2

1 Տե՛ս Ձեռ. № № 759, էջ 171ա-բ, 179, 752, էջ 169ա, 767, էջ 168ա, 5667, էջ 131ա, 7203, էջ 72ա-74ա, 9838, էջ 174ա, 4164, էջ 190բ, 4874, էջ 190ա-191ա և այլն:  
 2 Տե՛ս Վեճեստիկի 631 թվահամարի գրչագիրը, ինչպես և Երևանի Մատենադարանի 2695 (էջ 8բ), 3082 (էջ 393ա), 179, 7433 (էջ 204ա), 7529 (էջ 116բ), 4741 (էջ 173ա), 6338 (էջ 302բ), 1511 (էջ 300ա) և այլն:  
 3 Տե՛ս Վարք եւ վկայաբանութիւն... Գ. Դ, էջ 293-303:

Ակնհայտ է, որ Սահմի 22-ի ամսաթիվը Սահակի և Հովսեփի հիշատակի օրվա տեղափոխման հետևանքով առաջացած ամսաթիվ է, որի հուլյան ամսաթիվը դժվար է գտնել, քանի որ հայտնի չէ, թե տարվա որ ժամանակ են տեղափոխել նրանց հիշատակի օրը այն ժամանակ, երբ վարդավառ - Աստուածածին հատվածում չի բավականացրել սրբերի օրերը տոնելը: Բայց անկասկած է, որ Սահմի 22-ի ամսաթիվը առաջացել է այդ կարգի հիման վրա: Արաց 15-ը կամ 17-ը առաջացել է 12-րդ դարում, երբ Սահակի և Հովսեփի հիշատակի օրը մտել էր տոնացույց և տոնվում էր Վարդավառից հաշված 16-րդ օրը, Երկուշաբթի, ստանալով հուլյան տոմարի այլ համարժեքներ, եթե Արաց 15-ը կամ 17-ը գալիս է վաղ շրջանից:

\*\*\*

Սկսենք տասներկու (փոքր) մարգարեների հիշատակի օրվա քննությունը: Նախ նշենք, որ մի խումբ բնագրեր թվարկել են հիշյալ մարգարեներին, այն է՝ Ովսէ, Ամովս, Միքիա, Յովել, Աբդիու, Յունան, Նաուս, Ամբակում, Սոփոնեա, Անգեա, Զաքարիա, Մաղաքիա:

832 թվահամարի ձառնը տալիս է. «Արաց Ի (Հունվար 27). Երկոյտասան մարգարէից» (էջ 75ա): Երկոտասան մարգարեների հիշատակի օր Արաց 20-ի կանոնի տակ են տվել 6235 (էջ 55բ) և 4977 (էջ 77բ) թվահամարների ճաշոցները, ինչպես և 2092 թվահամարի Տոնացույցը (էջ 227բ): Վերջինս միաժամանակ կատարել է երեքշաբթի օրվա նշումը:

Վենետիկի 639 թվահամարի ձառնը 12 մարգարեների հիշատակի օրը տվել է Արաց 22-ի կանոնի տակ: Հայոց ճաշոցների մի խումբ երեքշաբթի կանոնի տակ են տվել 12 մարգարեների տոնական օրը<sup>1</sup>:

939 թվահամարի ձառնը տալիս է. «Յարեգ ԺԲ. Երկոտասան մարգարէից...», իսկ ստորին լուսանցքում՝ «երեքշաբթի. Սրբոց երկոտասան մարգարէիցն» (էջ 397բ):

Հայոց տոնացույցների բոլոր խմբագրությունները «Զկնի Վարդավառի երրորդ կիրակէ»-ից (կամ Վարդավառից հետո եկող երկրորդ կիրակիից հետո եկող «Գշ (երեքշաբթի). Երկոտասան մարգարէից» տոնական օրն սահմանել հաճախ թվարկելով նրանց անունները<sup>2</sup>:

Հայոց Յայսմավուրքների որևէ խմբագրություն հիշյալ տոնական օրը չունի, այլ տվել է առանձին-առանձին, բայց ոչ հիշյալ ամսաթվերի տակ:

Հայոց տոմարական եղանակը հնարավոր չէ կիրառել, քանի որ հուլյան միակ ամսաթիվը, այն է՝ Հունվար 27-ը, դուրս է գալիս քննությունից, որպես հայոց անշարժ տոմարի համարժեք, մնում են հայոց շարժական տոմարի Արաց 20, 23 և Արեգի 12 ամսաթվերը: Ինչպես տեսանք 12 մարգարեների հիշատակի օր է սահմանվել Վարդավառից հաշված 17-րդ օրը, որը եղել է Հուլիս 14 - Օգոստոս 7-ի ամսաթվերից մեկում նայած տարի կամ տեղափոխվել է տարվա այլ ժամանակ, երբ Վարդավառ - Աստուածածին հատվածը դարձել է մեկ շաբաթ: Տեսնենք ինչ արդյունքների է բերում հայոց տոնացույցային եղանակը.

1.

Ներկա թվական	Հուլյան ամիս	Հուլյան ամսաթիվ	Ծաբաթվա օր	Հայոց թվական	Հայոց ամիս	Հայոց ամսաթիվ	Ծաբաթվա օր
1165	7	27	3	614	6	20	3

1179	7	24	3	628	6	20	3
1193	7	20	3	642	6	20	3

2.

Ներկա թվական	Հուլյան ամիս	Հուլյան ամսաթիվ	Ծաբաթվա օր	Հայոց թվական	Հայոց ամիս	Հայոց ամսաթիվ	Ծաբաթվա օր
1170	7	28	3	619	6	22	3
1184	7	24	3	633	6	22	3
1198	7	21	3	647	6	22	3
1212	7	17	3	661	6	22	3

3.

Ներկա թվական	Հուլյան ամիս	Հուլյան ամսաթիվ	Ծաբաթվա օր	Հայոց թվական	Հայոց ամիս	Հայոց ամսաթիվ	Ծաբաթվա օր
1407	7	19	3	856	8	12	3
1421	7	15	3	870	8	12	3

Հաշվումները ցույց են տալիս, որ Արաց 20-ը հայոց անշարժ տոմարի ամսաթիվ է, որովհետև հայոց շարժական տոմարի Արաց 20-ին 12 Մարգարեների տոնը կատարվել է 1165 թ., 1179 թ. և 1193 թ., իսկ Արաց 20-ը փաստագրվել է 1154/5 թթ. ընդօրինակված ձառնում: Ուշագրավ է, որ Արաց 22-ին 12 մարգարեների հիշատակի օր է եղել 1170 թ., 1184 թ., 1198 թ. և 1212 թ.: Այս ամսաթիվն է գրանցել Վենետիկի 639 թվահամարի հայոց ամսաթվերով կազմված ձառնը, որն սկզբնական հատվածում ունի հուլյան ամիս-ամսաթվերով տրված ձառնը, այսինքն դրանք մեկ ամբողջական ընդօրինակություն են: Ս. Ճեմճեմյանը հիշյալ գրչագիրը թվագրել է 12-րդ դարով: Հաշվումներից պարզվում է, որ Գէորգ գրիչն իր ընդօրինակությունը կատարելիս ավելացրել է Արաց 22-ը իբրև 12 մարգարեների հիշատակի օրվա ամսաթիվ: Դրանով իսկ հնարավորություն ընձեռելով թվագրել գրչագիրը: Ինչպես տեսանք 12 մարգարեների հիշատակի օր է եղել Արաց 22-ին 1170 թ., 1184 թ., 1198 թ. և 1212 թ., ուստի այդ գրչագիրը գրվել է այդ թվականներից որևէ մեկում, ամենայն հավանականությամբ 12-րդ դարի վերջերին: Ս. Ճեմճեմյանի թվագրումը, որը եղել է միայն գրչության ձեռք ստանում է ավելի հստակ պատկեր և առանց վարանելու կարելի է պնդել, որ Վենետիկի 639 թվահամարի ձեռագրի ընդօրինակությունը կատարվել է 12-րդ դարի վերջերի վերոհիշյալ տարիներից մեկում նախագաղափար օրինակներ ունենալով Գրիգոր Վկայասեր-Կիրակոսի Տոնանամակը և հայոց ամսաթվերով ձառնը, որոնք գալիս են 11-րդ դարի վերջից - 12-րդ դարի սկզբներից:

Վերջապես Արեգի 12-ի ամսաթիվն է ստացել 14-րդ դարի սկզբին և փոխանցվել 939 թվահամարի ձառնին, որն ընդօրինակվել է 1441/2 թթ.:

Այսպիսով 12 մարգարեների հիշատակի օրը վերոհիշյալ ամսաթվերն են ստացել հայոց տոնացույցային եղանակով, ուստի այդ տոնը տոնացույց է մտել ոչ ավելի վաղ, քան 12-րդ դարը:

\*\*\*

Քննենք եփեսոսի ժողովի և նրան մասնակցած 200 հայրապետների - եպիսկոպոսների տոնական օրվա խնդիրը: Սկսենք ճաշոցներից:

1 Տե՛ս Ձեռ. N° N° 7741, էջ 354բ-357բ, 4107, էջ 657, 5455, էջ 250ա և այլն:

2 Տե՛ս Ձեռ. N° N° 759, էջ 171բ, 179, 752, էջ 169ա, 767, էջ 168ա, 5667, էջ 131ա, 7203, էջ 72ա-74ա, 9838, էջ 174ա, 4164, էջ 190բ, 4874, էջ 190ա-191ա և այլն:

832 թվահամարի գրչագիրը վկայել է. «Արաց Լ (Փետրվար 6). Եփեսոսի սուրբ ժողովոյն, որ ի ձեռն Թեոդոսի թագաւորի...» (էջ 78բ-79բ): Արաց Լ-ի կանոնի տակ ունեն եփեսոսի ժողովի տոնական օրը Վենետիկի 639 թվահամարի գրչագիրը, Երեւանի Մատենադարանի 4977 թվահամարի ընդօրինակութիւնը (էջ 78ա), ինչպես և Յայսմավուրքների որոշ խմբագրութիւններ, որոնց կանգրադառնանք քիչ հետո: Ասենք նաև, որ 6235 թվահամարի Ճաշոցի ընդօրինակութիւնը գրել է. «Արաց Լ. Եփեսոսի սուրբ ժողովոյն...» (էջ 64 ա): Կարծում ենք, որ Արաց Լ-ն պետք է սրբագրել Արաց Լ: Կատարվել է Լ-ն Լ-ի փոխվելու գրչական սխալ:

940 թվահամարի ճաշոցը ԺԹ համարի տակ գրանցել է «Փետրուար 2. Յիշատակ սուրբ Բ ժողովոյն Եփեսոսի Մ հարցն...»:

979 թվահամարի Ճաշոց-Տոնացուլցի խմբագրութեան մեջ կարդում ենք. «Նորին (Յունիս) Թ. Յիշատակ Եփեսոսի սուրբ ժողովոյն...» (էջ 322բ-323ա): Ճաշոցների մի խումբ շաբաթ օրվա կանոնի տակ են գրանցել Եփեսոսի ժողովի ու նրա մասնակիցների տոնական օրը<sup>1</sup>:

Ճաշոցների հաջորդ խումբը Արեգ Լ-ի կանոնի տակ տվել են «Եփեսոսի սուրբ ժողովոյն», միաժամանակ ստորին լուսանցքում ունեն շաբաթ օրվա նշումները<sup>2</sup>:

Հայոց տոնացուլցի խմբագրութիւնները միանշանակ վկայել են «Ձկնի Վարդավառին երրորդ կիրակէ»-ից (կամ Վարդավառից հետո եկող երկրորդ կիրակիից) հետո «էջ (Շաբաթ). Եփեսոսի սուրբ ժողովոյն...» միաժամանակ տալով որոշ մանրամասնութիւններ կապված ժողովի հետ<sup>3</sup>:

Հայոց Յայսմավուրքները նույնպես տալիս են տարաբնույթ տեղեկութիւններ, որոնք բաժանվում են առանձին խմբերի:

Վենետիկի 1048 թվահամարի Յայսմավուրքը, որը Հովսեփ Կոստանդնուպոլսեցու տոնացուլցի խմբագրութիւններից է, գրել է. «(Յունիս) ԻԶ. ... Յայսմ աւուր եղև ժողով յԵփեսոս, առաջին սիւնհոգոսն ընդդէմ ամբարիշտ եւ մարդադաւան Նեստորի»:

2695 թվահամարի Յայսմավուրքը, որը Տեր-Իսրայելի Յայսմավուրքի խմբագրութիւնների թվին է դասվել, գրել է. «Մարգաց Ի և Յունիս ԻԶ. ... Յայսմ աւուր եղև երրորդ ժողովն յԵփեսոս, առաջին սիւնհոգոսն ընդդէմ ամբարիշտ և մարդադաւան Նեստորի» (էջ 165ա): Ի դեպ Տեր-Իսրայելի Յայսմավուրքի հայտնի բնագրում վերոհիշյալ հատվածը բացակայում է: Կիրակոս Գանձակեցու Յայսմավուրքի խմբագրութիւնները Մարգաց Ի և Յունիս ԻԶ-ի կանոնի տակ են տալիս Եփեսոսի ժողովի և նրա մասնակիցների տոնական օրը<sup>4</sup>: Վենետիկի 710 թվահամարի Յայսմավուրքի խմբագրութիւնը մեկ օրով ետ է տեղափոխել հիշյալ տոնական օրը, որն է՝ «Յունիս Իէ եւ Մարգաց ԻԱ. Տաւն է մեծահանդէս Եփեսոսի առաջին սուրբ ժողովոյն»:

Յայսմավուրքների հաջորդ խումբը, ինչպես ճաշոցների մի մասը, Արաց Լ և Փետրվարի 2-ի կանոնի տակ է տվել Եփեսոսի ժողովի և նրա մասնակիցների տոնական օրը<sup>5</sup>: Միաժամանակ 4741 թվահամարի գրչագիրը վկայել է. «Արաց Լ. Փետրվար 2. Եփեսոսի ժողովոյն, զոր այլ ազգիք տօնեն և ոչ մեք» (էջ 192բ): Գրիգոր Խլաթեցու Յայսմավուրքի խմբագրութիւնները մեկ օր առաջ են տարել և Եփեսոսի ժողովի և 200 հայրապետների տոնական օրը դրել են «Ա-

րաց ԻԹ և Փետրուարի Ե» կանոնի տակ<sup>1</sup>: Ասենք, որ Եփեսոսի ժողովը նախատեսված է եղել սկսել 431 թ. Հունիս 7-ին՝ Պենտեկոստի օրը, ինչպես գրում են ուսումնասիրողները<sup>2</sup>, բայց սկսել է ուշացումով Հունիս 22-ին և տևել է մինչև Հուլիս 31-ը: Հուլիս 26-ին եղել է Հովհան Անտիոքեցու ժողովը<sup>3</sup>: Ինչ վերաբերվում է փետրվարի 6-ին, ապա այն կարող էր լինել Թեոդոս փոքրի նեստորականների դեմ ուղղված հրամանի ամսաթիվը, որը եղել է 448 թ.<sup>4</sup>, քանի որ Եփեսոսի 2-րդ ժողովը պետք է սկսեր, ըստ Թեոդոս փոքրի Մարտի 30-ի հրամանի, Օգոստոսի 1-ից, բայց այն ևս ուշացումով բացվել է Օգոստոսի 8-ին<sup>5</sup>:

Այժմ տեսնենք Եփեսոսի ժողովի և նրա մասնակիցների տոնական օրը կատարվել է հայոց մեջ անշարժ օրով մինչև 8-րդ դարի սկզբները և շարժական օրով՝ 8-րդ դարից հետո ու երբ են առաջացել բնագրերում մեջ բերված հայոց ամսաթիվերը: Ասենք որ, հայոց անշարժ տոմարի Արաց 30 = Փետրվարի 6, նրա տարբերակ Արաց 29 = Փետրվար 5, ինչպես և Մարգաց 20 = Հունիս 26 և նրա տարբերակ Մարգաց 21 = Հունիս 27 համարժեքներից մեկը արտացոլում է Եփեսոսի առաջին ժողովի ժամանակի իրողութիւնը, քանի որ բացառութեան կարգով Սարկավագադիր տոմարի սկզբի տարեթիվերը, այն է՝ 428-431 թթ. քառամյակի վերջին տարին եղել է Եփեսոսի ժողովի տարին: Վերը տեսնենք, որ Փետրվարի 6-ի և նրա տարբերակ Փետրվարի 5-ի ամսաթիվերը կապ չունեն Եփեսոսի ժողովի օրերի հետ, այլ առնչվում են Թեոդոս փոքրի 448 թ. հրամանի օրվա հետ, ուստի հիշյալ ամսաթիվերը բացառում են իբրև Եփեսոսի ժողովի իրողութիւնը վկայող Հուլյան համարժեքների: Մնում են Մարգաց 20 = Հունիս 26-ը և նրա տարբերակ Մարգաց 21 = Հունիս 27-ը, որպես Սարկավագադիր տոմարի ամսաթիվ և նրա Հուլյան համարժեքներ:

Հայոց տոմարական եղանակը տալիս է հետևյալ արդյունքները:

1. Արաց 30 = Հունիս 26, որտեղից Արաց 1 = Մայիս 28 = 1328 - 1331 թթ.

2. Արեգ 30 = Հունիս 26, որտեղից Արեգ 1 = Մայիս 28 = 1568-1571 թթ.

Պարզ է դառնում, որ ինչպես Արաց 30-ը, այնպես էլ Արեգ 30-ը վկայվել են մինչև հիշյալ տարեթիվերի քառամյակը, ուստի նրանք չեն կարող լինել Եփեսոսի ժողովի և նրա մասնակիցների տոնական օր կատարված տոնացուլցի մեջ իբրև անշարժ տոնի օր: Ակնհայտ է, որ Հունիս 26-ը ընդունել են անշարժ տոնի օր և նշել 5-8-րդ դարերում: Մեզ չի հասել հայոց շարժական տոմարի որևէ ամսաթիվ այդ կապակցությամբ, այլ միայն Սարկավագադիր տոմարի ամսաթիվը և նրա Հուլյան համարժեքը, այն է՝ Մարգաց 20 Հունիս 26:

Տեսնենք ինչ արդյունքների է բերում հայոց տոնացուլցային եղանակը: Վերը հիշատակեցինք, որ ճաշոցներն ու տոնացուլցերը ժողովի մասնակիցների տոնական օր են սահմանել Վարդավառից հաշված 3-րդ (կամ Վարդավառից հետո եկող կիրակիից հաշված 2-րդ) կիրակիից հետո եկող շաբաթ օրը, այն է՝ Վարդավառից հաշված 21-րդ օրը, որը տատանվել է Հուլիս 18 - Օգոստոս 8-ի ամսաթիվերից մեկում կամ երբեմն տեղափոխվել տարվա այլ ժամանակ նայած տարի: Պարզ է, որ Արաց 30-ը և Արեգ 30-ը իբրև հայոց շարժական տոմարի ամսաթիվ կարող էին առաջանալ տարիների որոշակի խմբում, երբ.

1. Արաց 10-ին կատարվել է Վարդավառը, իսկ Արաց 30-ին՝ Եփեսոսի ժողովի և նրա մասնակիցների տոնի օրը, որն ըստ «Հայոց տոնացուլցի» հաշվումների եղել է.

1 Տե՛ս Ձեռ. № № 6338, էջ 323ա, 1511, էջ 318բ և այլն:

2 Տե՛ս Մ. Յ. Поснов, История Христианской Церкви, Киев, 1991, стр. 391 և այլն:

3 Աճո, էջ 393:

4 Աճո, էջ 405:

5 Աճո, էջ 410:

1 Տե՛ս Ձեռ. № № 7741, էջ 359բ-360բ, 4107, էջ 679, 5455, էջ 261ա և այլն:

2 Տե՛ս Ձեռ. № № 4514, էջ 303բ, 939, էջ 404ա, 4437, էջ 153բ, 4506, էջ 315դ և այլն:

3 Տե՛ս Ձեռ. № № 759, էջ 171բ, 179, 752, էջ 169ա, 767, էջ 168ա, 2092, էջ 227բ, 5567, էջ 131ա, 7203, էջ 74ա, 9838, էջ 174ա, 4164, էջ 191 բ, 4874, էջ 191ա և այլն:

4 Տե՛ս Ձեռ. № № 3082, էջ 397ա, 179, Վենետիկի 189 թվահամարի գրչագիր, 7433, էջ 365 ա, 4741, էջ 331ա և այլն:

5 Տե՛ս Ձեռ. № № 9585, էջ 142ա, 7529, էջ 130ա, 4741, էջ 192բ և այլն:



Ներկա թվական	Հուլյան ամիս	Հուլյան ամսաթիվ	Ծախսված օր	Հայոց թվական	Հայոց ամիս	Հայոց ամսաթիվ	Ծախսված օր
1159	8	8	7	608	6	30	7
1173	8	4	7	622	6	30	7

\*\*\*

Անցնենք Քրիստոսափոր վկայի կամ Քրիստոսափոր շնագլխի տոնական օրվա վերլուծութայնը: Սկսենք ճաշոցների տվյալներից, որոնք բաժանվում են առանձին խմբերի:

832 թվահամարի գրչագիրը վկայել է. «Մեհեկի Ե (Փետրվար 11). Սրբոյն Քրիստոսափորի...» (էջ 80ա-81ա): Քրիստոսափորի՝ հիշատակի օրը Մեհեկի 5-ի կանոնի տակ են տալիս Վենետիկի 639 թվահամարի բնագիրը և Երևանի 4977 թվահամարի ձաշոցը (էջ 78բ), ինչպես և 2092 թվահամարի Տոնացուցում (էջ 131բ):

4437 թվահամարի ձաշոցի ընդօրինակությունը Մեհեկի Է-ի կանոնի տակ է տվել Քրիստոսափորի տոնի օրը, միաժամանակ ստորին լուսանցքում ունի հինգաբաթի օրվա նշումը (էջ 166բ): Ակնհայտ է, որ կատարվել է Ե-ն է-ի փոխվելու և սովորական համարվող գրչական սխալ: Գրիգոր Վկայասերի Տոնանամակի խմբագրություն մեջ կարդում ենք. «Նորին (Մայիսի) Թ. ... և վկայութիւն Քրիստոսափորի Շնագլխի և Բ պոռնիկ կանանց և այլոցն...»<sup>1</sup>:

940 թվահամարի ձաշոցը ՄԲ համարի տակ ունի՝ «Մայիս Թ. եւ Մարերի Բ. ... և վկայութիւն Քրիստոսափորի...»: Պարզ է, որ Մարերի 2-ը հայոց անշարժ տոմարի համարժեքն է Մայիս 9-ի:

6235 թվահամարի ձաշոցի մեջ գրված է. «Սահմի Ե. Սրբոյն Քրիստոսափոր...» (էջ 67ա): ձաշոցների մի խումբ հինգաբաթի օրվա կանոնի տակ են տվել Քրիստոսափորի հիշատակի օրը: Այսպես, 7741 թվահամարի ձաշոցում կարդում ենք. «Եշ (հինգաբաթ). Սրբոյն Քրիստոսափորի» միաժամանակ ստորին լուսանցքում ունի՝ «Քրիստոսափորի վկայի, որ է ազգաւ Շանագլուխ» (էջ 363բ-364ա): 4107 թվահամարի ձաշոցը ձևակերպել է. «Հինգաբաթ աւր. Քրիստոսափորի Շնագլխոյ» (էջ 677), իսկ 5455 թվահամարի ձաշոցը՝ «Հինգաբաթի. Սրբոյն Քրիստոսափորի» (էջ 259բ): 4514 թվահամարի ձաշոցի խմբագրությունը վկայել է. «Տրէ ԻԴ. Քրիստոսափորի...». միաժամանակ ներքին լուսանցքում ունի՝ «Հինգաբաթի. Սրբոյն Քրիստոսափորի» (էջ 306բ): ձիշտ նույն ձևակերպումն է տվել 939 թվահամարի ձաշոցը (էջ 408բ):

Հայոց տոնացույցների խմբագրությունները միաժամանակ տեղեկացրել են «Ձկնի Վարդավառի Չորրորդ կիրակէ»-ից (կամ Վարդավառից հետո եկող կիրակիից հաշված երրորդ կիրակիից) հետո եկող «Եշ (հինգաբաթ). Քրիստոսափորի վկայի (Շնագլխոյ)...»<sup>2</sup>:

Հովսեփ Կոստանդնուպոլսեցու Յայսմավուրքի խմբագրությունն, որն առկա է Վենետիկի 1048 թվահամարի ձեռագրում տալիս է. «(Մայիս) Թ. ... Յայսմ աւուր վկայութիւն սրբոյն Քրիստոսափորի եւ երկու կանանցն Կալինիկեա[յ] եւ Ակեղինեա[յ] եւ այլ զաւրականացն»: Համարժեք կամ մոտավորապես այդպիսի ձևակերպում ունեն մյուս Յայսմավուրքների խմբագրությունները միայն Մարերի Բ և Մայիս Թ համարժեքներով<sup>3</sup>:

8179 թվահամարի ձեռագիրը, որը վկայաբանական ժողովածու է դասավորված տոնացույցային կարգով, Քրիստոսափորի հիշատակի օր է գրանցել Մայիս 9-ին (էջ 185ա):

Միայն Գրիգոր Խլաթեցու Յայսմավուրքի որոշ խմբագրություններ տալիս են. «Մարերի Դ և Մայիս ԺԱ. վկայաբանութիւն սրբոյն Քրիստոսափորի Շնագլխոյ»<sup>4</sup>: Փաստորեն Մարեր 2 (Մայիս 9)-ը տեղափոխել են Մարեր 4 (Մայիս 11)-ը:

2. Արեգ 10-ին նշել են Վարդավառի տոնը, իսկ Արեգ 30-ին՝ Եփեսոսի ժողովի տոնի օրը: Այն ընկել է 1414 թ., 1428 թ., և 1456 թ.:

Վերոհիշյալ քննության առաջին արդյունքից պարզ է դառնում, որ Արաց 30-ը իբրև Հայոց շարժական տոմարի ամսաթվային նշում, որպես Եփեսոսի ժողովի տոնական օր առաջացել է 12-րդ դարի 2-րդ կեսին և վերածվել Հայոց անշարժ տոմարի ամսաթվի՝ ստանալով Փետրվարի 6-ի հուլյան համարժեքը առաջին անգամ 1154/5 թթ. գրված ձաշոցում, որը հաշվարկվել է մեկ քառամյակի սխալով և փոխանցվել հետագա սերունդներին իբրև այդպիսին:

Վերոհիշյալ երկրորդ արդյունքից երևում է, որ Արեգ 30-ը, որպես Հայոց շարժական տոմարի ամսաթվային նշում Եփեսոսի ժողովի և 200 եպիսկոպոսների տոնական օրվա, առաջացել է 15-րդ դարի 1-ին կեսին և գրանցվել 4514, 939, 4437 և 4506 ճաշոցների ընդօրինակություններում: Ի դեպ ասենք, որ 939 թվահամարի ձաշոցի ընդօրինակությունը կատարվել է 1441/2 թթ., ըստ հիշատակարանի: Հնարավոր է մտածել, որ հիշյալ հաշվարկը կատարել է 939 թվահամարի ձաշոցի ընդօրինակողը, եթե այն չի վերցրել 1414 թ. կամ 1428 թ. գրված ձաշոցից, ուստի 4437 և 4506 թվահամարների ճաշոցների ընդօրինակությունները կատարվել են 15-րդ դարի երկրորդ կեսին: Վերջիններս թվագրվել են 15-րդ դարով: Բացի այդ 4514 թվահամարի ձաշոցում, որը արտագրվել է 1322/3 թթ., ուշ շրջանում կատարվել է ընդմիջարկություն կամ ընդօրինակվել է 15-րդ դարի 2-րդ կեսին պահպանելով նախորդ ընդօրինակության հիշատակարանը:

Այսպիսով, ուսումնասիրությունները ցույց են տալիս, որ Եփեսոսի ժողովի և նրան մասնակցած 200 եպիսկոպոսների տոնական օր է սահմանվել Հունիս 26-ին և տոնվել է 5-8-րդ դարերում, սակայն Հայոց շարժական տոմարի որևէ ամսաթիվ չի հասել մեզ: 8-րդ դարից հետո, երբ Եփեսոսի ժողովի և նրա մասնակիցների տոնի օրը վերածվեց շարժական տոնի և տոնվեց Վարդավառից հաշված 21-րդ օրը հիմնականում Հուլիս 18 - Օգոստոսի 7-ի օրերից մեկում նայած տարի, ստացավ Հայոց տոմարի Արաց 30-ի ամսաթիվը 12-րդ դարում և հետագայում վերածվեց Հայոց անշարժ տոմարի ամսաթվի ստանալով Փետրվարի 6-ի հուլյան համարժեքը, ինչպես և գրանցվեց Արեգ 30-ի ամսաթիվը 15-րդ դարի առաջին կեսին, ավելի հավանական 1442 թվականին, որոնք մեզ են հասել վերոհիշյալ ճաշոցների ընդօրինակությունների միջոցով:

Դժվար է պնդել, որ Եփեսոսի ժողովի և նրա մասնակիցների տոնական օրը սահմանվել է Հունիս 26-ին և անշարժ կերպով տոնվել է 431 թվականից անմիջապես հետո, մանավանդ Հայտնի է, որ այդ ժողովի կանոնները բերվեց 435/6 թվականներին: Այն թարգմանվեց ինչ խոսք ավելի ուշ հավանաբար 460-ական թվականներին՝ Նիկիայի ժողովի վավերագրերի թարգմանություն հետ միասին: Դժբախտաբար Եփեսոսի ժողովի կանոնները չունեն որևէ ամսաթվային նշում, որպեսզի հնարավոր լիներ թվագրել կամ որոշել Հունիս 26-ի տոնական օրվա առաջացումը կապելով նրա հայերեն թարգմանություն հետ, սակայն անկասկած է, որ Եփեսոսի ժողովի տոնական օր է սահմանվել և տոնվել անշարժ կերպով Հունիս 26-ին 5-8-րդ դարերի սահմաններում, իսկ հետագայում վեր է ածվել շարժական տոնի և տոնվում է մինչև այժմ:

1 Տե՛ս Ձեռ. N° 979, էջ 4ա, և 300բ-301ա:  
 2 Տե՛ս Ձեռ. N° 759, էջ 171բ, 179, 752, էջ 169ա, 767, էջ 168ա-169ա, 5667, էջ 131ա, 7203, էջ 74ա, 9838, էջ 174ա, 4164, էջ 191բ, 4874, էջ 191ա և այլն:  
 3 Տե՛ս Վեճեթիկի 631 և 189 թվահամարների գրչագրերը, ինչպես և Երևանի 2695 (էջ 120բ), 3082 (էջ 396ա), 179, 7433 (էջ 314բ), 9584 (էջ 215ա), 7529 (էջ 152ա), 7530 (էջ 157բ) և այլն:  
 4 Տե՛ս Ձեռ. N° 1511, էջ 482ա և այլն:



Մ. Ավգերյանը Քրիստափորի վկայաբանության կապակցությամբ բերել է հետևյալ ամսաթվերը՝

1. Յայսմավուրք ձեռագիր՝ Մայիս 11, որն ինչպես տեսանք գալիս է Գրիգոր Խլաթեցու խմբագրություններից,

2. Տեր-Իսրայել՝ Մայիս 9-ը, որը վերցրել է Յովսեփ Կոստանդնուպոլսեցու թարգմանած Հունաց Տոնացույց-Յայսմավուրքից:

3. Տպագրած Յայսմավուրք՝ Յունիս 14, որն ուշ շրջանում ստացված ամսաթիվ է:

4. Հունաց մոտ՝ Մայիս 9, իսկ 5. Լատինացոց՝ Յունիս 24 և 25<sup>1</sup>:

Քննությունից դուրս ենք թողնում Մարերի 2 և 4 ամսաթվերը, որպես հայոց անշարժ տոմարի համարժեքներ Մայիս 9-ի և Մայիս 11-ի: Մնում են Մեհեկանի 5-ը, Սահմի 5-ը և Տրէ 24-ը որպես հայոց շարժական տոմարի ամսաթվեր, որոնց վրա կիրառենք հայոց տոմարական և տոնացույցային եղանակները գտնելու համար դրանց առաջացման ժամանակը իբրև Քրիստափորի տոնական օրվա կամ վկայաբանության ստեղծման ժամանակի ամսաթիվ:

Հայոց տոմարական եղանակը տալիս է հետևյալ արդյունքները:

1. Մեհեկանի 5 = Մայիս 9, որտեղից Մեհեկանի 1 = Մայիս 5 = 1545-1543 թթ.: Քանի որ Մեհեկանի 5-ը վկայվել է ավելի վաղ, ուստի այն չի առաջացել Մայիս 9-ից:

2. Սահմի 5 = Մայիս 9, որտեղից Սահմի 1 = Մայիս 5 = 1060-1063 թթ.: Պարզ է դառնում, որ Սահմի 5-ը ծագել է Մայիս 9-ից, որպես հայոց շարժական տոմարի համարժեք և ամենայն հավանականությամբ Քրիստափորի վկայաբանության բնագրից է գալիս, այսինքն՝ նրա վկայաբանությունը հավանաբար հունարենից թարգմանվել է հայերեն 1060-1063 թթ. քառամյակում, երբ գրանցվել է Սահմի 5-ը:

3. Տրէ 24 = Մայիս 9, որտեղից Տրէ 1 = Ապրիլ 16 = 1256-1259 թթ.: Դժվար է այս ամսաթիվը միանշանակ ընդունել: Այն առաջացել է հիշյալ տարիների քառամյակում, որովհետև հայոց տոնացույցային եղանակով ևս, ինչպես կտեսնենք, ստանում ենք դրական պատասխան:

Տեսնենք ինչ արդյունքներ է տալիս հայոց տոնացույցային եղանակը: Վերը բերված սովյալները ցույց են տալիս, որ Քրիստափորի հիշատակի օր է սահմանվել Վարդավառից հաշված 26-րդ օրը՝ Հինգշաբթի, որը տատանվել է Հունիս 23 - Օգոստոս 7-ի սահմաններում, իսկ որոշ տարիների այդ տոնի օրը տեղափոխվել է տարվա այլ ժամանակ: Մեհեկանի 5-ը չի տալիս դրական արդյունք: Հնարավոր է մտածել, որ այն կամ հայոց անշարժ տոմարի համարժեք է կամ որ ավելի հավանական է տոնը տեղափոխվել է տարվա այլ հատված և այդ ամսաթիվն առաջացել է տոնի տեղափոխության ժամանակ: Նույնը կարելի է ասել Սահմի 5-ի կապակցությամբ, որովհետև տալիս է 7-րդ դարի վերջերի տարեթվեր: Քանի որ 7-րդ դարում գործում էր անշարժ ամսաթվերում կազմած սրբերի տոնացույց, ուստի այն ընդունելի է: Սահմի 5-ը առաջացել է տոմարական եղանակով և ինչպես տեսանք, տալիս է 1060-1063 թթ. քառամյակը, որպես Մայիս 9-ի համարժեք հայոց շարժական տոմարի ամսաթիվով: Տրէ 24-ի համար ստանում ենք հայոց 393 (= 943 թ.), երբ կատարվել է Քրիստափորի հիշատակի օրը Վարդավառից հաշված 26-րդ օրը Հինգշաբթի (= Տրէ 24 = Օգոստոս 9):

Տրէ 24-ը փաստագրած ճաշոցները<sup>2</sup> միաժամանակ տալիս են Հինգշաբթի օրվա նշումը, ուստի հնարավոր է նախապատվությունը տալ ոչ թե հայոց տոմարական եղանակով առաջացած 1256-1259 թթ. քառամյակին, այլ 943 թվականին և մտածել որ հայոց տոնացույցում

Քրիստափորի հիշատակի օրը մտավ կամ 10-րդ դարի 70-ական թվականներին, տոնացույցային եղանակով ստացան Տրէ 24-ի հայոց շարժական տոմարի ամսաթիվը: Այս հարցի վերջնական լուծումը լրացուցիչ փաստարկներ է պահանջում, որը ապագայի խնդիր է:

Այսպիսով, Քրիստափորի հիշատակի օրվա հայոց շարժական տոմարի ամսաթվերի քննությունից պարզ դարձավ, որ Մեհեկանի 5-ը հաշվարկվել է հիշատակի օրը տեղափոխելիս և փոխանցվել 1154/5 թթ. գրված ճաշոցին՝ վերածվել հայոց անշարժ տոմարի ամսաթվի և բնականորեն ստացել հուլյան տոմարի Փետրվարի 11-ի համարժեքը:

Քրիստափորի տոնական օրվա համար վկայված Սահմի 5-ը առաջացել է Մայիս 9-ի համարժեքից: Քրիստափորի վկայաբանությունը հավանաբար հունարենից թարգմանվել է հայերեն 1060-1063 թթ. քառամյակում և թարգմանիչը Մայիս 9-ը փոխարինել է հայոց շարժական տոմարի Սահմի 5-ով:

Վերջապես Տրէ 24-ը կարող էր առաջանալ կամ 1256-1259 թթ. քառամյակում, իբրև Քրիստափորի հիշատակի օրվա, այն է՝ Մայիս 9-ի, հայոց շարժական տոմարի համարժեք, կամ 943 թվականին, իբրև շարժական տոնի ամսաթիվ, որը միշտ կատարվում էր Վարդավառից հաշված 26-րդ օրը կամ - տեղափոխում տարվա այլ ժամանակ: Վերջին իրողությունը թույլ չի տալիս վերջնական եզրակացություն գալ 943 թվականի կապակցությամբ:

\*\*\*

Սկսենք Մեսրոպ վարդապետի հիշատակի օրվա քննությունը:

832 թվահամարի ճաշոցում գրած է. «Մեհեկի ԺԳ (Փետրվար 19). Մեսրոպայ վարդապետի» (էջ 81բ-82ա): Մեսրոպ վարդապետի հիշատակի օրը Մեհեկանի 13-ի կանոնի տակ են դրել Վենետիկի 639 թվահամարի ճաշոցը<sup>1</sup>, ինչպես և Երևանի 6235 (էջ 69բ), 4877 (էջ 79ա-բ), 4437 (էջ 169ա) ճաշոցների խմբագրությունները: Վերջինս ստորին լուսանցքում ունի Երկուշաբթի օրվա նշումը: 2092 թվահամարի Տոնացույցում կարդում ենք. «Բշ (երկուշաբթի). Մեսրոպ վարդապետի... ի Մահեկի ԺԳ» (էջ 228ա): Ճաշոցների մի խումբ երկուշաբթի օրվա կանոնի տակ է տվել Մեսրոպ վարդապետի հիշատակի օրը, նրան ավելացնելով Եղիշէի, Մովսես քերթողազոր, Դավիթ Անհաղթ փիլիսոփայի անունները: Թվենք այդ ճաշոցներից մի քանիսի թվահամարներն ու համապատասխան էջերը, այն է՝ 7741, էջ 381բ-382ա, 4107, էջ 711, 5455, էջ 283 և այլն:

4514 թվահամարի ճաշոցը տալիս է այլ սովյալներ: Այնտեղ գրված է. «Մեհեկի Գ. Մեսրոպայ...», միաժամանակ ներքին լուսանցքում ունի. «Երկուշաբթի. Մեսրոպայայ եւ Եղիշէի եւ Մովսեսի Քերթողազար եւ Դավիթ անյաղթ փիլիսոփայի» (էջ 326ա): Թերևս մտածելիք, որ Մեհեկի ԺԳ-ն կամ ԻԳ-ն է նկատի ունեցել ընդօրինակողը, սակայն թվականի համար նախատեսված նշանը դրված է Գ-ի վրա, բացի այդ, ինչպես կտեսնենք, այդպիսի հաշվարկը չի բացառվում:

939 թվահամարի ճաշոցը գրանցել է. «Մեհեկի ԻԳ. Մեսրոպայ...», միաժամանակ ստորին լուսանցքում վկայել է երկուշաբթի օրը և տվել նաև վերը նշված հեղինակությունների անունները (էջ 432բ): Այդպես է վարվել նաև 4506 թվահամարի ճաշոցի գրչագրի ընդօրինակողը բնագրում ավելացնելով «Թարգմանչացն» (էջ 338ա) բառը: Վերջապես 4698 թվահամարի ճաշոցի ընդօրինակողն ունի. «Բշբի (երկուշաբթի). Մեհեկի ԻԳ. Մեսրոպայ և Եղիշէի և Մովսէս քերթողազար և Դավիթ անյաղթ փիլիսոփայի» (էջ 260ա): Թվում է կատարվում է ԻԳ-ն ԻԴ-ի

<sup>1</sup> Տե՛ս Վարդ... հ. Դ, էջ 406-428:

<sup>2</sup> Ձեռ. № № 4514, 939:

<sup>1</sup> Տե՛ս Ս. Ժեմճեմյան, Գշվ. աշխ., էջ 623-624:

փոխվելու գրչական սխալ, սակայն ինչպես կտեսնենք, այդպիսի հաշվարկ ևս հնարավոր է, որ կատարել են նախորդ շրջանում և փոխանցվել է հիշյալ ձառնոցին:

Հայոց տոնացույցերը միանշանակ «Ձկնի Աստուածածնի երրորդ կիրակի»-ից (կամ Աստուածածնից հետո եկող երկրորդ կիրակիից) հետո սահմանել են «Բշ (երկուշաբթ), Սրբոց վարդապետաց՝ Մեսրոպայ և Եղիշէի»<sup>1</sup>: Հետագա տոնացույցերը նույն կանոնի տակ ավելացրել են նաև Մովսես քերթողահոր, Դավիթ Անհաղթի, Գրիգոր Նարեկացու, Ներսես Կլայեցու, Ստեփանոս Սյունյաց եպիսկոպոսի, Եզնիկի, Մամբրեի, Ներսես Լամբրոնացու և «Գրիգորիսեանցն» անունները<sup>2</sup>:

Հայոց Յայսմավուրքների խմբագրությունների մեծ մասը Մեսրոպ վարդապետի հիշատակի օր է սահմանել «Մեհականի ԺԳ և Փետրուարի ԺԹ» կանոնի տակ: Այսպես 2695 թվահամարի գրչագիրը (ինչպես և Վենետիկի 631 թվահամարի ձեռագիրը) գրել է. «Մեհակի ԺԳ և Փետրուարի ԺԹ. Վարք և կատարումն սուրբ հաւրն մեր և Վարդապետին Մեսրոպայ» (էջ 42բ): Համարյա նույն կամ ավելի համառոտ ձևակերպում ունեն հետևյալ Յայսմավուրքների խմբագրությունները<sup>3</sup>:

7433 թվահամարի (էջ 32բ) Յայսմավուրքների խմբագրությունը և 8179 թվահամարի (էջ 3բ) տոնացույցային կարգով դասավորված վկայաբանական ժողովածուն նավասարդի 30 և Սեպտեմբերի 9-ի կանոնի տակ են ձևակերպել Սահակ Հայրապետի և «Մեսրոպայ(յ) վարդապետին» հիշատակի օրը, որն ինչպես հայտնի է, Սահակ կաթողիկոսի հիշատակի օրն է հայոց անշարժ տոմարի և նրա հուլյան տոմարի ամսաթվերի համարժեքներով:

Մեհակի 13-ը գալիս է վաղ շրջանի բնագրերից (Կորյուն, Խորենացի, Փարպեցի և այլն) և մատնանշել է Մաշտոցի մահվան օրը, որն ինչպես ցույց ենք տվել, ունեցել է Փետրվար 16-ի հուլյան տոմարի համարժեքը 442 թվին, երբ մահացավ Մեսրոպ Մաշտոցը<sup>4</sup>: Սակայն հետագայում Մեհական 13-ը վերածվեց հայոց անշարժ տոմարի ամսաթվի և ստացավ Փետրվարի 19-ի համարժեքը: Ասենք նաև, որ Մեհական 13 (= Փետրվար 19)-ին Մեսրոպի հիշատակը երբեք չեն կատարել, այլ Աստուածածնից հաշված 16-րդ օրը, երկուշաբթի, ինչպես և թարգմանչաց օրը՝ Հինգշաբթի: Մեհականի 13-ի ամսաթիվը դրվել է Աստուածածնից հաշված երրորդ կիրակիից հետո երկուշաբթի նաև այն պատճառով, որ 11-րդ դարի սկզբներին կրկնվեց այն: Հայոց տոնացույցային եղանակի տվյալներով Արաց 28-ին եղել է Աստուածածնի օրը, իսկ Մեհականի 13-ին Մեսրոպ Վարդապետի հիշատակի նշումը հետևյալ տարիներին, ըստ «Հայոց տոնացույց»-ի հաշվումների.

Ներկա թվական	Հուլյան ամիս	Հուլյան ամսաթիվ	Շաբաթվա օր	Հայոց թվական	Հայոց ամիս	Հայոց ամսաթիվ	Շաբաթվա օր
1113	9	1	2	562	7	13	2
1120	8	30	2	569	7	13	2
1127	8	29	2	576	7	13	2
1134	8	27	2	583	7	13	2

1 Ձեռ. N° N° 759, էջ 172բ և 179:

2 Տե՛ս Ձեռ. N° N° 752, էջ 171ա, 767, էջ 173բ, 5667, էջ 134բ, 7203, էջ 74ա-81ա, 9838, էջ 176բ, 4164, էջ 198ա, 4874, էջ 193ա-196ա և այլն:

3 Տե՛ս Ձեռ. N° N° 3082, էջ 394ա, 179, Վենետիկի 189 թվահամարից, 9585, էջ 153ա, 4741 էջ 200բ, 6338, էջ 344ա, 1151, էջ 340բ և այլն:

4 Տե՛ս Ռ. Վարդանյան, Հայոց տոմարական եղանակը թարգմանական բնագրերի ժամանակը, էջ 62-65:

ինչև է հայոց շարժական տոմարի Մեհականի 13-ը վեր է ածվել հայոց անշարժ տոմարի ամսաթվի և փոխանցվել սերնդից սերունդ Մեհական 13-ը Մաշտոցի մահվան տարում, այն է՝ 442 թ. ունեթ Փետրվար 16-ի համարժեքը, իսկ հայոց տոնացույց մտնելով ստացավ նաև հուլյան տոմարի այլ համարժեքներ (Սեպտեմբեր 1, Օգոստոս 29, 30 և 27) 12-րդ դարի սկզբներին: Իսկ վերածվելով հայոց անշարժ տոմարի ամսաթվի ստացավ նաև Փետրվարի 19-ի համարժեքը, որը մատնանշում է 428-431 թթ. ըստ հայոց տոմարական եղանակի կիրառման, որը ոչ մի կերպ կապ չունի Մաշտոցի մահվան օրվա հուլյան համարժեքի հետ:

Հայոց տոնացույցային եղանակի կիրառությունը ցույց է տալիս, որ Մեհականի 3, 23 և 24 ամսաթվերը նույնպես առաջացել են տոնացույցային ճանապարհով 11-րդ դարի վերջերին 12-րդ դարի ընթացքում: Այսպես Մեհականի 3-ին Մեսրոպի տոնական օրն է եղել, իսկ Արաց 18-ին՝ Աստուածածնի: Բերենք «Հայոց տոնացույց» ծրագրի հաշվումների արդյունքները:

Ներկա թվական	Հուլյան ամիս	Հուլյան ամսաթիվ	Շաբաթվա օր	Հայոց թվական	Հայոց ամիս	Հայոց ամսաթիվ	Շաբաթվա օր
1074	9	1	2	523	7	3	2
1081	8	30	2	530	7	3	2
1088	8	28	2	537	7	3	2
1095	8	27	2	544	7	3	2

Այստեղից հետևում է, որ 4514 թվահամարի ձառնոցի ընդօրինակությունը կատարվել է 11-րդ դարի վերջին քառորդի նախագաղափար օրինակի հիման վրա:

Մեհականի 8-ին եղել է Աստուածածինը, իսկ Մեհականի 23-ին Մեսրոպի տոնական օրը, ըստ «Հայոց տոնացույցի» հաշվարկների հետևյալ տարիներին:

Ներկա թվական	Հուլյան ամիս	Հուլյան ամսաթիվ	Շաբաթվա օր	Հայոց թվական	Հայոց ամիս	Հայոց ամսաթիվ	Շաբաթվա օր
1152	9	1	2	601	7	23	2
1159	8	31	2	608	7	23	2
1166	8	29	2	615	7	23	2
1173	8	27	2	622	7	23	2

Պարզ է դառնում, որ 939 և 4506 թվահամարների ճառնոցների ընդօրինակությունները կատարվել են 12-րդ դարի 3-րդ քառորդի ձառնոցի նախագաղափար օրինակների հիման վրա: Վերջապես Մեհականի 9-ին կատարվել է Աստուածածնի տոնը, իսկ Մեհականի 24-ին՝ Մեսրոպի հիշատակը:

Բերենք հաշվումների արդյունքները.

Ներկա թվական	Հուլյան ամիս	Հուլյան ամսաթիվ	Շաբաթվա օր	Հայոց թվական	Հայոց ամիս	Հայոց ամսաթիվ	Շաբաթվա օր
1158	9	1	2	607	7	24	2
1165	8	30	2	614	7	24	2
1172	8	28	2	621	7	24	2
1179	8	27	2	628	7	24	2

Ակնհայտ է, որ 4698 թվահամարի ձառնի ընդօրինակությունը կատարվել է 12-րդ դարի 50-70-ական թվերին գրված ձառնից:

Այսպիսով, ուսումնասիրությունները ցույց են տալիս, որ Մաշտոցի հիշատակի օրը անշարժ տոնական օրով տոնվել է հուլյան տոմարի Փետրվարի 16-ին, որի հայոց շարժական տոմարի համարժեքն է եղել Մեհեկանի 13-ը՝ Մաշտոցի մահվան տարում, սկսած նրա մահվան հաջորդ տարիներից տոնը կատարել են հատկապես Օշականում: Պատահական չէ, որ այդ տոնական օրը հիշում է Ղազար Փարպեցին: 8-րդ դարի սկզբներից հետո Մեսրոբի հիշատակի օրը տեղափոխվեց Աստուածածնից հաշված 16-րդ օրը, երկուշաբթի, այսինքն Օգոստոսի 30-ին (Աստուածածինը՝ Օգոստոս 15-ին), իսկ 10-11-րդ դարում Աստուածածնի տոնը, շարժական դառնալու հետևանքով (Օգոստոս 12-18-ի, կիրակի) Մաշտոցի հիշատակի օրը նույնպես վերածվեց շարժականի և տոնվեց Օգոստոսի 27 - Սեպտեմբեր 2-ի սահմաններում ընկնող երկուշաբթին, այսինքն Աստուածածնից հաշված 16-րդ օրը: Այդ տոնի օրը 11-րդ դարի 1-ից 3-րդ քառորդին - 12-րդ դարի երրորդ քառորդին հաշվարկեցին և ստացան Մեհեկանի 3, 23 և 24-ը, որը մտավ հետագայում ընդօրինակված ճառոցներ և հասավ մեզ:

\*\*\*

Անցնենք Վարազա Սուրբ ինչի տոնի օրվա քննությանը: Սկսենք Հայոց տոնացույցերի սովորներից: Հնագույն տոնացույցի խմբագրությունները Վարազա ինչի տոնը կանոնել են Փոխման Աստուածածնի կիրակիին հաջորդող կիրակի, այն՝ Փոխման Աստուածածնից հաշված 8-րդ օրը, այսինքն՝ Օգոստոս 19-25-ի ընկնող կիրակիներից մեկում կամ Օգոստոսի 22 ± 3 օր: Բերենք այդ վկայությունները: 759 թվահամարի Տոնացույցում գրված է. «Կիրակէն. Վարազա Սուրբ ինչի» (էջ 172ա-բ): Համարժեք տեղեկություն ենք գտնում նաև 179 թվահամարի տոնացույցում (էջ 539բ):

1337 թ. կամ 15-րդ դարով թվագրված Տոնացույցի ընդօրինակության մեջ Փոխման Աստուածածնի հաջորդ կիրակի օրվա կանոնի տակ կարդում ենք. «Յայս կիրակէ Վարազա ինչին տօն է, բայց այլք պահեն և զկնի Ը օրէից ինչին տօնէն»<sup>1</sup>: Այս վկայությունից պարզ է դառնում, որ նախապես, հավանաբար 11-14-րդ դարերի սկզբներին, Վարազա ինչի տոնը նշել են Փոխման Աստուածածնի հաջորդ կիրակի օրը, սակայն 14-րդ դարի սկզբներից այդ տոնի օրը տեղափոխել են Ս. ինչից, այսինքն ինչվերացից հաշված երրորդ կիրակին (կամ ինչվերացից հետո եկող կիրակիից հաշված երկրորդ կիրակի օրը), այն է՝ ինչվերացից հաշված 15-րդ օրը, որն ընկնում է Սեպտեմբեր 25 - Հոկտեմբեր 1-ի կիրակիներից մեկում կամ Սեպտեմբեր 28 ± 3 օր: Այսպիսի տեղեկություններ գտնում ենք Հայոց տոնացույցի 14-րդ դարի սկզբների և հետագայի խմբագրությունների մեջ: 752 թվահամարի գրչագրում գրված է. «Բ (երկրորդ) կիրակէ. Վարազա Սուրբ ինչին...» (էջ 173ա), իսկ 5667 թվահամարի բնագրում կարդում ենք. «Երրորդ կիրակէ. Վարազա Սուրբ ինչին...» (էջ 138ա-բ): Համարժեք տեղեկություններ գտնում ենք 2092 (էջ 228բ), 4164 (էջ 205ա) 4874 (էջ 196ա) և այլն տոնացույցերի խմբագրությունների մեջ:

Հայոց ճառոցները թողել են բազմաբնույթ տեղեկություններ: 832 թվահամարի գրչագրում գրված է. «Մեհեկի Ի (Փետրվար 26). Վարազա Սուրբ ինչին» (էջ 82բ-84ա): Վարազա ինչի օրը Մեհեկանի 20-ի կանոնի տակ են տալիս նաև Վենետիկի 639 և Երևանի 6235 (էջ 75) թվահամարների ճառոցների ընդօրինակությունները, ինչպես և 2092 թվահամարի Տոնացույցը, այն է՝ «Կիրակէ. Վարազա ինչին... Մեհեկի Ի» (էջ 228), 7741 (էջ 402բ-403ա), 936 (էջ 98բ-100ա), 4107 (էջ 753), 4698 (էջ 279ա) և այլ ճառոցների խմբագրություններ ինչվերացից հաշ-

ված երրորդ կիրակիի կանոնի տակ են տվել Վարազա Սուրբ ինչի տոնի օրը: 4977 թվահամարի ձառնի ունի՝ «Մեհեկի Ժ. Վարազա ինչին...» (էջ 80ա): 4514 թվահամարի ձառնում գրված է. «Մեհեկի ԻԳ. Վարազա Սուրբ ինչին...», իսկ ստորին լուսանցքում՝ «Երրորդ կիրակէն. Վարազա Սուրբ ինչին» (էջ 351ա): Համարժեք տեղեկություն է տալիս նաև 939 թվահամարի գրչագիրը (էջ 465բ): 3266 թվահամարի գրչագրում գրված է. «Վարազա ինչին եւ ինչագիւտին Ի դիրհ է գրած գիտ և կարդա. զՎարազայն՝ Ի Մեհեկի ԻԳ և ինչագիւտին Ի Մարերի Ժ» (էջ 137բ): 4506 թվահամարի ձառնի խմբագրությունը կանոնել է. «Մեհեկի Գ. Վարազա...», միաժամանակ ներքին լուսանցքում՝ «Կիրակէ. Վարազա Սուրբ ինչին» (էջ 363բ):

940 թվահամարի ձառնը ԼԱ համարի տակ գրել է. «Փետրուար ԻԶ եւ Մեհեկի Ի», որից հետո առանց նշելու տոնի օրը բերել է ընթերցվելիք նյութերը, որից հասկացվում է որ խոսքը գնում է Վարազա Սուրբ ինչի տոնի օրվա մասին:

Հայոց Յայսամավորների խմբագրությունները «Մեհեկի Ի և Փետրվարի ԻԶ» կանոնի տակ են տալիս Վարազա Սուրբ ինչի տոնական օրը, միաժամանակ տալով նրա պատմությունը<sup>1</sup>: Ըստ ավանդույթյան Վարազա ինչի տոնը տոնվել է 7-րդ դարի 2-րդ կեսից, սակայն տոնի օրվա հուլյան համարժեքը հայտնի չէ: Ինչ վերաբերվում է Փետրվարի 26-ին, ապա այն Հայոց անշարժ տոմարի Մեհեկանի 20-ի համարժեքն է, որը ոչնչով չի օգնում վաղ շրջանի հուլյան համարժեքը գտնելու, քանի որ տալիս է 428-431 թթ. քառամյակը, այսինքն Սարկավագադիր տոմարի սկիզբը խորհրդանշող տարիները: Այդ տոնը լոկալ ձևով տոնվել է մինչև Հայոց տոնացույց մտնելը, որը տեղի է ունեցել 10-11-րդ դարում, որը ցույց է տալիս Աստուածածնից հետո եկող կիրակիի կանոնը: Ըստ պատմական ավանդույթյան Վարազա ինչի գյուտը կապվել է Պատրոնիկէ - Լուսինի և ոչ Լեղինէի հետ, որի պատճառով Վարազա ինչի տոնի օրը դրել է Աստուածածնի հաջորդ կիրակին, իսկ 14-րդ դարի սկզբներին տեղափոխվել ինչի գլխավոր տոնից՝ ինչվերացից հետո եկող կիրակի, այն է՝ ինչվերացից հաշված 15-րդ օրը: Բնագրերում առկա են Մեհեկանի 20, 23, 10 և 3 ամսաթվերը, որպես Վարազա ինչի տոնի Հայոց տոմարի համարժեքներ, որոնցից Մեհեկանի 20-ը Հայոց անշարժ տոմարի ամսաթիվ է առաջացած 12-րդ դարի սկզբներից հետո և առաջին անգամ գրանցված 832 թվահամարի ձառնում: Այն քննության ենթակա չէ հասկանալի պատճառով, իսկ մյուս ամսաթվերի համար կիրառենք Հայոց տոնացույցային եղանակը: Ասենք, որ վերոհիշյալ ամսաթվերը թեև գրանցվել են ինչվերացի 3-րդ կիրակի կանոնի տակ, բայց չեն կապվում ինչվերացից հաշված երրորդ կիրակիի տոնական օրվա հետ, որովհետև այն առաջացավ 14-րդ դարի սկզբներից, իսկ տոնացույցային եղանակով ստացված տարեթվերը տալիս են 10-րդ դարի վերջին քառորդի - 11-րդ դարի առաջին կեսի ժամանակահատվածը, երբ այդ տոնը, ինչպես տեսանք, տոնվել է Աստուածածնից հետո եկող կիրակի օրը: Բերենք «Հայոց տոնացույց»-ի հաշվումների արդյունքները.

1.

Ներկա թվական	Հուլյան ամիս	Հուլյան ամսաթիվ	Շաբաթվա օր	Հայոց թվական	Հայոց ամիս	Հայոց ամսաթիվ	Շաբաթվա օր
1186	8	24	1	635	7	23	1
1193	8	22	1	642	7	23	1
1200	8	20	1	649	7	23	1
1207	8	19	1	656	7	23	1

<sup>1</sup> Տե՛ս Ձեռ. № № 2695, էջ 48բ, 3082, էջ 394ա, 179, 4741, էջ 207ա, Վենետիկի 189 թվահամարի գրչագիրը, 7433, էջ 244ա, 9585, էջ 138բ, 8179, էջ 243բ-246ա, 6338, էջ 354բ, 1511, էջ 352ա և այլն:

<sup>1</sup> Ձեռ. № 767, էջ 173ա:

2.

Ներկա թվական	Հուլյան ամիս	Հուլյան ամսաթիվ	Ծաբաթվա օր	Հայոց թվական	Հայոց ամիս	Հայոց ամսաթիվ	Ծաբաթվա օր
1101	8	25	1	550	7	3	1
1108	8	23	1	557	7	3	1
1115	8	22	1	564	7	3	1
1122	8	20	1	571	7	3	1

3.

Ներկա թվական	Հուլյան ամիս	Հուլյան ամսաթիվ	Ծաբաթվա օր	Հայոց թվական	Հայոց ամիս	Հայոց ամսաթիվ	Ծաբաթվա օր
1129	8	25	1	578	7	10	1
1136	8	23	1	585	7	10	1
1143	8	22	1	592	7	10	1
1150	8	20	1	599	7	10	1

Պարզ է դառնում, որ Հայոց շարժական տոմարի Մեհեկանի 23, 10 և 3 ամսաթվերն առաջացել են 12-րդ դարում:

Միաժամանակ հասկանալի է, որ Մեհեկանի 23-ը գրանցած ճաշոցները (3266 (ԺԳ դար), 4514 (1322/3 թթ.), 939 (1441/2 թթ.) թվահամարների գրչագրերը, որոնք թվագրում են 13-15-րդ դարերով, ընդօրինակվել են 12-րդ դարի վերջի - 13-րդ դարի սկզբի նախօրինակներից: Դեռ ավելին, 3266 թվահամարի ճաշոցը, որը թվագրվել է միայն գրչագրից ելնելով 13-րդ դարով կարելի է առանց դժվարության տեղափոխել 12-րդ դարի վերջ - 13-րդ դարի սկիզբ, այսինքն այդ գրչագրի ներքին սահմանը համարել 1186 թվականը, իսկ վերին սահմանը՝ 1207 թվականը, ընդունելով, որ Վարագ Խաչի տոնի օրը Հայոց շարժական տոմարի Մեհեկանի 23-ի առաջին անգամ հաշվել և ներ է դրել 3266 թվահամարի ճաշոցի ընդօրինակողը: Բացի այդ Մեհեկանի 3 գրանցած 4506 թվահամարի 15-րդ դարով թվագրվող ճաշոցը իր հիմքում ունեցել է 1101 թ. կամ 1122 թ. գրչագիր: Վերջապես 4977 թվահամարի ճաշոցը, որը թվագրվել է 15-րդ դարով (1427-ից առաջ), իր հիմքում ունեցել է Հայոց շարժական տոմարի ամսաթվով գրված ճաշոց, որը ստեղծվել է 12-րդ դարի 29-50 թթ., որը Վարագա Խաչի տոնի համար դեռևս չուներ Մեհեկանի 20-ի Հայոց անշարժ տոմարի ամսաթիվը: Այն, ինչպես հայտնի է առաջին անգամ գրանցված ենք գտնում 832 թվահամարի ճաշոցում, որը գրվել է 1154/5 թթ. և տվել է Սարկավագադիր տոմարի կառուցվածքով: Ինչպես նկատելի է, Վարագա Խաչի տոնական օրվա Հայոց շարժական տոմարի ամսաթիվերը հնարավորություն են ստեղծում ոչ միայն որոշել 3266 թվահամարի ճաշոցի ընդօրինակության, այլև մյուս ճաշոցների նախատիպերի ժամանակները:

Այսպիսով, հետազոտությունները ցույց են տալիս, որ Վարագա Սուրբ Խաչի տոնը նշվել է անշարժ օրվա 7-րդ դարի 2-րդ կեսից սկսած և այդպես շարունակվել մինչև 10-րդ դարի վերջ - 11-րդ դարի սկզբները, թերևս Աստուածածնի անշարժ տոնից (= Օգոստոս 15) հետո եկող որևէ օր: 10-րդ դարի վերջում - 11-րդ դարի սկզբում Աստուածածնի տոնի օրը կանոնվեց Օգոստոսի 15 ± 3 օր, կիրակի, որի հետևանքով Վարագա Սուրբ Խաչի օրը դրվեց Աստուածածնից

հետո եկող կիրակին, այն է՝ Օգոստոս 22 ± 3 օր: Այդպես տոնվեց մինչև 14-րդ դարի սկզբները, որից հետո տոնացույցում կատարվեց փոփոխություն և Վարագա Խաչի օրը տեղափոխվեց Խաչվերացից հաշված 15-րդ օրը և իր հաստատուն կիրակիով շարունակեց տոնվել մինչև այժմ:

Հստ Պատմական ավանդության Վարագա Խաչի գյուտը կապված է Պատրոնիկե - Հռիփսիմեի հետ և ոչ Հեղինեի, որի համար նրա տոնական օրը վաղ շրջանում դրվել են Խաչի տոններից առաջ, իսկ հետագայում տեղափոխվեց գլխավոր տոնից՝ Խաչվերացից հետո եկող երրորդ կիրակին, որպես Խաչի տոնական օրերը շարքի հերթական տոն, որը նույնպես Խաչգյուտից առաջ էր:

\*\*\*

Անցնենք եղիշե վարդապետի հիշատակի օրվա վերլուծությանը: Սկսենք ճաշոցների տվյալներից:

832 թվահամարի գրչագիրն ունի՝ «Մեհեկի ԻԱ (Փետրվար 27). Սրբոյն Եղիշայի վարդապետի» (էջ 85ա-բ): Մեհեկանի 21-ի կանոնի տակ են տվել Եղիշեի տոնական օրը նաև Վենետիկի 639 թվահամարի ճաշոցը (էջ 623/4), ինչպես և Երևանի մատենադարանի 6235 (էջ 72ա) և 4977 (էջ 81բ) թվահամարների գրչագրերը: 2092 թվահամարի ճաշոցում գրված է. «Բշ - (Երկուշաբթի). Եղիշեի վարդապետի ... Մեհեկի ԻԱ» (էջ 228ա): Մի խումբ ճաշոցներ երկուշաբթի օրվա կանոնի տակ են դրել Եղիշե Վարդապետի հիշատակի օրը. նրա անունը տվել են Մեսրոբ վարդապետից հետո<sup>1</sup>: Կան ճաշոցներ, որոնք ստորին լուսանցքում երկուշաբթի օրվա նշումով բերել են նաև Եղիշեի անունը<sup>2</sup>: 4698 թվահամարի գրչագրի ընդօրինակողը գրել է. «Բշբի (երկուշաբթի). Մեհեկի ԻԳ. Մեսրոպայ և Եղիշեի և Մովսես քերթողահալը և Դաւիթ անյաղթ Փիլիսոփայի» (էջ 260ա): Մեհեկի 24-ի ամսաթվի առաջացումը տվել ենք Մեսրոբ վարդապետի հիշատակի օրվա քննության մեջ: Վերջապես 940 թվահամարի ճաշոցի խմբագրության մեջ կարդում ենք. «Փետրվար ԺԷ եւ Մեհեկի ԻԱ. Եղիշեի վարդապետի»: Թվում է կատարվել է ԻԷ-ն ԺԷ-ի փոխվելու սխալ, սակայն այլ առիթներով տեսանք, որ հիշյալ ճաշոցն ընդօրինակողը տարբեր տեղերից վերցրել է ամսաթվեր և տեղադրել նույն կանոնի տակ անկախ նրանից, թե այն Հայոց անշարժ տոմարի ամսաթվերի հետ համապատասխանություններ ունեն, թե չունեն: Այնպես որ հեղինակը Փետրվարի 17-ը վերցրել է այլ բնագրից, որը մեզ անծանոթ է, իսկ Մեհեկանի 21-ը այլ տեղից, որը մեզ ծանոթ է, թեև այդքան էլ պարզ չէ, թե Մեհեկանի 21-ը տվյալ դեպքում Հայոց շարժական, թե անշարժ տոմարի ամսաթիվ է: Վաղ շրջանից Հայտնի Հայոց տոնացույցերը Աստուածածնից հաշված երրորդ կիրակիից հետո եկող երկուշաբթի օրվա կանոնի տակ են դրել Մեսրոբ և Եղիշե վարդապետների տոնական օրը<sup>3</sup>: Իսկ հետագա տոնացույցերի ընդօրինակությունները կամ Աստուածածնի հաշված երրորդ կամ Աստուածածնից հետո եկող կիրակիից հաշված երկրորդ կիրակիից հետո եկող երկուշաբթի օրվա տակ են սահմանել վերոհիշյալ սրբերի հիշատակի օրը, ավելացնելով նաև Մովսես Խորենացու, Դավիթ Անհաղթի, Գրիգոր Նարեկացու, Ներսես Շնորհալու, Ստեփաննոս Սյունեցու, Եզնիկ Կողբացու, Մամբրե Վերծանողի, Ներսես Լամբրոնացու և «Գրիգորիսեանցն» անունները<sup>4</sup>:

Հայոց Յայսմավուրքների խմբագրություններում, որոնցում առկա են Եղիշեի հիշատակի կանոններ են «Մեհեկանի ԻԱ և Փետրվարի ԻԷ»-ի տակ ձևակերպելով՝ «Վարք սրբոյն Եղիշեի վարդապետի» կամ «Վարք Եղիշեի Վարդապետի» կամ պարզապես «Եղիշեի վարդապետի» և

<sup>1</sup> Տե՛ս Ձեռ. № № 7741, էջ 381բ-382ա, 4107, էջ 711, 5455, էջ 283բ և այլն:

<sup>2</sup> Տե՛ս Ձեռ. № № 4514, էջ 326ա, 939, էջ 432բ, 4506, էջ 338ա և այլն:

<sup>3</sup> Տե՛ս Ձեռ. № № 759, էջ 172բ և 179:

<sup>4</sup> Տե՛ս Ձեռ. № № 752, էջ 171ա, 767, էջ 173բ, 5667, էջ 134բ, 7203, էջ 74ա-81ա, 9838, էջ 176բ, 4164, էջ 198ա, 4874, էջ 193ա-196ա և այլն:

այլն<sup>1</sup>: Հարկ է նշել, որ Մեհեկան 21 = Փետրվար 27-ին երբեք է եղիչի հիշատակի օր չի կատարվել: Հայոց տոնացույցերը նրա տոնը կատարել են Մեսրոպ վարդապետի հետ միասին Աստուածածնից հաշված 16-րդ օրը, երկուշաբթի, որն ընկել է Օգոստոս 27 - Սեպտեմբեր 2-ի երկուշաբթիներից մեկում: Ակնհայտ է, որ Մեհեկան 21-ը եղել է Հայոց շարժական տոմարի ամսաթիվ, որը 12-րդ դարից հետո վեր է անվել Հայոց անշարժ տոմարի ամսաթիվի և ստացել Փետրվարի 27-ի հուլյան համարժեքը: Միաժամանակ «Կանոնք ընթերցուածոց»-ների խմբագրութուններից հայտնի է, որ 5-8-րդ դարերում սրբերի հիշատակը, որոնց թվում էր Եղիշինը տոնվել է անշարժ ամսաթիվով, որն ըստ 940 թվահամարի ճաշոցի տվյալների կատարվել է փետրվարի 17-ին: Փաստորեն ունենք Եղիշի հիշատակի օրվա հայոց տոմարի ամսաթիվն, այն է՝ Մեհեկանի 21-ը, նրա շաբաթվա օրը՝ երկուշաբթի և անշարժ տոնի հուլյան ամսաթիվը՝ Փետրվար 17-ը: Կիրառենք հայոց տոմարական եղանակը գտնելու համար հուլյան ամսաթիվերի և շաբաթվա օրվա առաջացման տարբերակների քառամյակը և տարբերակը: Ստանում ենք հետևյալ արդյունքները:

Մեհեկան 21 = Փետրվար 17, որտեղից Մեհեկան 1 = Հունվար 28 = 469-472 թթ.: Քանի որ ունենք նաև երկուշաբթի օրվա նշումը, ուստի գտնում ենք նաև տարբերակը, այն է՝

469 թ. Մեհեկան 1 = Հունվար 28, երեքշաբթի, Մեհեկան 21 = Փետրվար 17 = երկուշաբթի

470 թ. Մեհեկան 1 = Հունվար 28, չորեքշաբթի, Մեհեկան 21 = Փետրվար 17 = երեքշաբթի

471 թ. Մեհեկան 1 = Հունվար 28, հինգշաբթի, Մեհեկան 21 = Փետրվար 17, չորեքշաբթի

472 թ. Մեհեկան 1 = Հունվար 28, ուրբաթ, Մեհեկան 21 = Փետրվար 17, հինգշաբթի

Պարզվում է, որ Մեհեկան 21 = Փետրվար 17 = երկուշաբթի = 469 թվական: Ակնհայտ է, որ ոչ հայոց շարժական տոմարի Մեհեկանի 21-ը, ոչ հուլյան տոմարի Փետրվարի 17-ը և ոչ էլ երկուշաբթի օրվա նշումը պատահական զուգահեռություններ չեն վկայված Եղիշի հիշատակի օրվա կապակցությամբ, այլ նրա մահվան տարվա համարժեքները պահպանված ուշ շրջանի բնագրերում:

Ահա վերահիշյալ փաստերը նկատի ունենալով մեկ այլ առիթով ծանոթագրել ենք, որ Եղիշին վախճանվել է 469 թվականի Մեհեկանի 21-ին = Փետրվար 17 = երկուշաբթի դեռևս վերջնականորեն չավարտած «Վասն Վարդանանց և Հայոց պատերազմին» երկը<sup>2</sup>, քանի որ նա այնտեղ նշել է, որ պետք է անդրադառնա նախարարների վերադարձի պատմությանը, բայց այդպես էլ չի գրել հիշյալ հատվածը: Մեհեկանի 21-ը իբրև հայոց շարժական տոմարի ամսաթիվ պահպանվեց նաև այն պատճառով, որ որոշակի տարբերակների կրկնվեց Եղիշի տոնի առիթով, այս անգամ իբրև շարժական տոն: Տեսանք, որ Եղիշի հիշատակի օր է սահմանվել Աստուածածնից հաշված 16-րդ օրը, երկուշաբթի, որն ընկել է Օգոստոս 27 - Սեպտեմբեր 2-ի ամսաթիվերից մեկում նայած տարի:

Կիրառենք հայոց տոնացույցային եղանակը, և բերենք «Հայոց տոնացույցի» հաշվումները.

Ներկա թվական	Հուլյան ամիս	Հուլյան ամսաթիվ	Շաբաթվա օր	Հայոց թվական	Հայոց ամիս	Հայոց ամսաթիվ	Շաբաթվա օր
1140	9	2	2	589	7	21	2
1147	9	1	2	596	7	21	2
1154	8	30	2	603	7	21	2
1161	8	28	2	610	7	21	2

<sup>1</sup> Տե՛ս Վեճեպիկի 631 թվահամար գրչագիր, ինչպես և Երևանի 2695 (էջ 51ա), 3082 (էջ 394ա), 179, 7433 (էջ 245բ), 9585 (էջ 158բ), 7530 (էջ 108բ), 4741 (էջ 209բ), 6338 (էջ 357ա), 1511 (էջ 354բ) թվահամարների բնագրերը և այլն:

<sup>2</sup> Տե՛ս Ռ. Վարդանյան, Հայոց տոմարական եղանակը..., էջ 77-78:

Հիշյալ տարբերակներն Եղիշի տոնական օրը ընկել է հայոց շարժական տոմարի Մեհեկանի 21-ին: 832 թվահամարի ճաշոցը արդեն գրանցել է Մեհեկանի 21-ը, որպես հայոց անշարժ տոմարի ամսաթիվ, որը փաստորեն ստացել է հուլյան տոմարի փետրվար 27-ի համարժեքը: Դրանք տալիս են 428-431 թթ., որոնք միայն նշանակում է Սարկավագադիր տոմարի սկիզբ և ոչ մի կապ չունի ոչ Եղիշի անշարժ տոնական օրվա և ոչ էլ շարժական տոնի հետ:

Այսպիսով, հետազոտությունները հիմնավորում են, որ Եղիշի հիշատակի օրը տոնել են անշարժ տոնական օրվա Փետրվարի 17-ին, որի հայոց շարժական տոմարի ամսաթիվը նրա մահվան տարում եղել է Մեհեկանի 21-ը: Այդ ամսաթիվերը ինչպես և շաբաթվա օրը երկուշաբթի պահպանվել են և փոխանցվել հետագա սերունդներին: Եղիշի տոնը կատարել են Փետրվար 17-ին անշարժ տոնական օրով 5-8-րդ դարերում, իսկ դրանից հետո նրա տոնը տեղափոխվեց Աստուածածնից հետո հավանաբար պահելով միայն երկուշաբթի օրվա նշումը: 11-րդ դարում՝ Աստուածածնի տոնի օրը շարժական դառնալու պատճառով, Եղիշի հիշատակի օրը նույնպես վերածվեց շարժականի և նշվեց Օգոստոս 27 - Սեպտեմբեր 2-ի սահմաններում ընկնող երկուշաբթին: 12-րդ դարի 40-50-ական թվականներին Եղիշի հիշատակի օրվա Մեհեկանի 21-ի ամսաթիվը կրկնվեց իբրև շարժական տոնի՝ Օգոստոս 27 - Սեպտեմբեր 2-ի համարժեք և այդ նույն ժամանակահատվածում հայոց շարժական տոմարի Մեհեկան 21-ը վերածվեց հայոց անշարժ տոմարի ամսաթիվի և ստացավ Փետրվարի 27-ի համարժեքը: Վերջինս մտավ հայոց ճաշոցների և Յայսմավուրքների ընդօրինակությունների մեջ և հասավ մեր օրերը: Իսկ Եղիշի հիշատակի օրը հայոց տոնացույցում շարունակվեց տոնվել Աստուածածնից հետո, որը կատարվում է այժմ ևս:

\*\*\*

Անցնենք Գեորգ զորավարի հիշատակի օրվա քննությունը: Սկսենք հայոց տոնացույցերի տվյալներից, որոնք բաժանվում են երկու խմբի:

Վաղ տոնացույցերը Գեորգ զորավարի տոնական օր են կանոնել Աստուածածնից հետո եկող շաբաթ օրը, այսինքն Աստուածածնից հաշված 7-րդ օրը, որն ընկել է Օգոստոսի 21 ± 3 օր: Այսպես, 759 և 179 թվահամարների տոնացույցերը միանշանակ վկայել են. «էջ (Շաբաթ). Գեորգեա[յ] գաւրավարին»<sup>1</sup>: Գեորգ զորավարի հիշատակի օրը, ամենայն հավանականությամբ 11-րդ դարից և Աստուածածնից հետո եկող շաբաթ օրը տոնեցին մինչև 14-րդ դարի կեսերը: 13-րդ դարի վերջերից մինչև 14-րդ դարի կեսերը տոնում էին նրա տոնը խառը մի մասն ընդունված կարգով, իսկ մյուս մասը, ինչպես կտեսնենք հետագա շարադրանքից, ինչպես ցուցաբերեց հետո: 14-րդ դարի սկզբներից Գեորգ զորավարի տոնը տեղափոխվել էր Սուրբ Խաչից կամ Խաչվերացից հաշված 14-րդ օրը, նույնպես շաբաթ և տոնը արդեն կատարվել է Սեպտեմբեր 27 ± 3 օր: 752 թվահամարի տոնացույցում գրված է. «Շաբ[աթ]... Գեորգեա[յ] գաւրավարի» (էջ 173ա): Նույն կամ փոքր ինչ այլ. այն է՝ «Շաբ[աթ]. Տաւն սրբոյն Գէորգեա[յ] գաւրավարին... Մեհեկի ԻԳ», «Շաբ[աթ]. Սրբոյն Գէորգեայ զօրավարին», ձևակերպումներն ունեն հետագա ընդօրինակված բոլոր տոնացույցերի խմբագրությունները<sup>2</sup>:

Ի դեպ Վարագա Խաչի տոնը և Գեորգ զորավարի հիշատակի օրը տեղափոխվել է նույն ժամանակ և 767 թվահամարի գրչագրի վկայությամբ, որը բերվեց վերևում, հավասարապես վերաբերվում է նաև Գեորգ զորավարի հիշատակի օրվան:

<sup>1</sup> Տե՛ս հմայտ. էջ 172 և 539ա-540բ:

<sup>2</sup> Տե՛ս Ձեռ. № 2092, էջ 228ա-229ա, 5667, էջ 138ա, 7203, էջ 81բ-82ա, 9838, էջ 179ա, 4164, էջ 265ա, 4874, էջ 193ա-195բ և այլն:



Հայոց ճաշոցների տեղեկությունները նույնպես տարաբնույթ են, միայն սկզբից ևեթ նշենք, որ սրանց մոտ եղած շաբաթ օրվա նշումը վերաբերում է ինչպիսիք հետո եկող շաբաթին:

832 թվահամարի գրչագիր ունի՝ «Մեհեկի ԻԳ (Մարտի 1). Սրբոյն Գեորգայ(յ) զորաւորի» (էջ 86ա-87ա), Վենետիկի 639 և Երևանի 6235 (էջ 74բ), 4977 (էջ 82ա) թվահամարների ճաշոցները նույնպես Մեհեկանի 23-ի կանոնի տակ են դրել Գեորգ զորավարի օրը:

Գրիգոր Վկայասերի Տօնանամակի խմբագրությունը գրել է «Նորին (Ապրիլ) ԻԳ. Վկայու-թիւն սրբոյն Գեորգեայ(յ) զաւրավարի...»: 940 թվահամարի ճաշոցը ինչ համարի տակ կրկնել է վերոհիշյալ վկայությունը ավելացնելով Հայոց անշարժ տոմարի համարժեքը, այն է՝ «Ապրիլ ԻԳ եւ յԱհեկի ԺԶ. Գէորգեայ(յ) զաւրավարի»: 7741 և 4107 թվահամարի ճաշոցները Գեորգ զորավարի հիշատակի օրը դրել են շաբաթ օրվա տակ (տե՛ս էջ 402ա-402բ և էջ 751):

Գեորգ զորավարի տոնական օրը «յԱհեկի Ա» կանոնի տակ են տվել 4514 (էջ 350բ), 939 (էջ 464բ) և 4506 (էջ 363ա) ճաշոցների խմբագրությունները, միաժամանակ ներքին լուսանցքում կատարելով շաբաթ օրվա նշումները: 4698 թվահամարի ճաշոցն ունի՝ «Շաբաթ, Ահեկի Ի ԻԱ. Գեորգեայ(յ) զաւրավարի» (էջ 172ա):

Հայոց Յայսմավուրքները նույնպես տալիս են երկու խումբ տեղեկություններ: Վենետիկի 1048 թվահամարի Տոնացույց - Յայսմավուրքի խմբագրությունը տալիս է երկու տեղեկություն, որոնցից մեկը հետևյալն է. «(Նոյեմբեր) Գ. ... և Գեորգայ զաւրավարին»: Իսկ 7433 թվահամարի գրչագիրը ձևակերպել է.

«Սահմի ԻԵ և Նոյեմբեր Գ. ... եւ է սքանչելիք Սրբոյն Գէորգեայ(յ)...» (էջ 100ա): 7529 թվահամարի գրչագիրը գրել է. «Սահմի ԻԵ. Նոյեմբեր Գ. Յիշատակ սքանչելեացն Գէորգեայ(յ), որ Ի Լիբիա...» (էջ 33ա): Վերջապես նույն կանոնի տակ 7530 թվահամարի ձևակերպել է. «... եւ է տաւն սքանչելեաց Գեորգեայ զաւրավարի» (էջ 5բ): Վենետիկի 1048 թվահամարի գրչագիրը վկայել է. «(Ապրիլ) ԻԳ. վկ. փառաւորեալ եւ մեծ վկային Ս. Գէորգեայ(յ)»: «Ահեկի ԺԶ և Ապրիլի ԻԳ» կանոնի տակ են դրել Գեորգ զորավարի վկայաբանությունը Վենետիկի 631, ինչպես և Երևանի 2695 (էջ 105բ), 3082 (էջ 395բ), 179, Վենետիկի 189, 7433 (էջ 297ա), 9585 (էջ 200բ), 7530 (էջ 143բ), 6338 (էջ 479ա) և այլն Յայսմավուրքների խմբագրություններ: Ասենք նաև, որ Փարիզի 178 թվահամարի վկայաբանական ժողովածուի ՀԳ համարի տակ ունի «Վկայութիւն սրբոյն Գեորգեայ(յ)» բնագիրը, որտեղ գրված է. «Կատարեցաւ Ի տէր սուրբ վկայն Քրիստոսի Գեորգիէ, յամսենանն Մեհեկի Ի քսան եւ երեքն, յաւուրն ուրբաթու, յեթներորդ ժամու...»:

Անցնենք Գեորգ զորավարի տոնական օրվա կապակցությամբ վկայված ամսաթվերի վերլուծությանը: Հասկանալի պատճառներով քննությունից դուրս են գալիս Մարտի 1-ի, ինչպես և Ահեկանի 26 և Սահմի 25 ամսաթվերը, որպես Հայոց և Հուլյան անշարժ տոմարների համարժեքներ, մնում են Մեհեկանի 23, Ահեկանի 1 և 21, ինչպես և Հուլյան տոմարի ապրիլ 23 և Նոյեմբեր 3 ամսաթվերը, որոնց նկատմամբ էլ կկիրառենք Հայոց տոմարական և տոնացույցային եղանակները: Մեհեկան 23-ի համար Հայոց տոնացույցային եղանակը տալիս է հետևյալ արդյունքները.

Ներկա թվական	Հուլյան ամիս	Հուլյան ամսաթիվ	Ծաբաթվա օր	Հայոց թվական	Հայոց ամիս	Հայոց ամսաթիվ	Ծաբաթվա օր
1185	8	24	7	634	7	23	7
1192	8	22	7	641	7	23	7
1199	8	21	7	648	7	23	7
1206	8	19	7	655	7	23	7

Քանի որ Մեհեկանի 23-ի ամսաթիվը վկայված է ավելի վաղ (տե՛ս 832 թվահամարի գրչագիր), ապա ստացված հիշյալ տարեթվերն ընդունելի չեն: Ավելի վաղ տարեթվեր է տալիս, երբ Մեհեկանի 23-ը տեղադրում ենք ինչպիսիք հետո, սակայն ավելի վաղ Գեորգ զորավարի տոնը կատարել են Աստուածածնից հետո, ուստի Հայոց տոնացույցային եղանակով ստացված արդյունքները մերժելի են: Մեհեկի 23-ի և Ապրիլ 23-ի ու Նոյեմբերի 3-ի համար օգտագործենք Հայոց տոմարական եղանակը: Ստանում ենք հետևյալ արդյունքները.

1. Մեհեկան 23 = Ապրիլ 23, որտեղից Մեհեկան 1 = Ապրիլ 1 = 216 - 219 թթ.:
2. Մեհեկան 23 = Նոյեմբեր 3, որտեղից Մեհեկան 1 = Հոկտեմբեր 12 = 900-903 թթ.:

Ակնհայտ է, որ ստացված արդյունքներից ընդունելին 2-րդ տարբերակն է: Հասկանալի է դառնում, որ Գեորգ զորավարի վկայաբանությունը հունարենից թարգմանվել է հայերեն և Նոյեմբերի 3-ի համարժեքն է դրվել Հայոց շարժական տոմարի Մեհեկանի 23-ը 10-րդ դարի սկզբներին, որտեղից և փոխանցվել է հետագա բնագրերին: Պարզ է, որ Գեորգ զորավարի վկայաբանությունը թարգմանվել է 900-903 թթ. քառամյակում և ստացել Հայոց շարժական տոմարի Մեհեկանի 23-ի համարժեքը: Այդ վկայության թարգմանիչը ամենայն հավանականությամբ Գագիկն է Ատոմի վանքի վանահայրը: Ուշագրավ է նաև այն, որ Հովհաննես Դրասխանակերտցին մեր Մատենագրության մեջ առաջիններից մեկն է, եթե ոչ առաջինը, որ գրել է Գեորգ զորավարի մասին: Վկայաբանության թարգմանությունից հետո նրա հիշատակը հավանաբար տոնել են անշարժ տոնական օրով մինչև 11-րդ դարի սկզբները, որից հետո մտել է Հայոց տոնացույց և դրվել է Աստուածածնից հետո եկող շաբաթ օրը, քանի որ Աստուածածնի տոնի օրը ևս անշարժ տոնական օրերից վերածվեց շարժականի 10-րդ դարի վերջերից - 11-րդ դարի սկզբներից: Այդպես տոնվեց Գեորգ զորավարի հիշատակի օրը մինչև 14-րդ դարի կեսերը տեղ-տեղ, նույնիսկ 15-րդ դարի 1-ին կեսը: 13-րդ դարի վերջում մինչև 14-րդ դարի կեսերը տոնել են Աստուածածնից հետո որոշ վերապահություններով, քանի որ 14-րդ դարի սկզբներից արդեն տեղափոխվել էր նրա տոնը ինչպիսիք հետո: Այդ միջանկյալ հատվածում Գեորգ զորավարի տոնը ոմանք կատարել են Աստուածածնից հետո, իսկ ոմանք ինչպիսիք հետո, իսկ 15-րդ դարի կեսերից հետո ինչպիսիք հետո: Ի դեպ այդ է վկայում նաև Ահեկանի 1-ի վերլուծությունը, որն առաջացել է տոնացույցային ճանապարհով: Այսպես, Աստուածածինը նշել են Արեգ 25-ին, իսկ Գեորգ զորավարի տոնը կատարել են Հայոց շարժական տոմարի Ահեկանի 1-ին ըստ Հայոց տոնացույց»-ի հետևյալ տարիներին՝

Ներկա թվական	Հուլյան ամիս	Հուլյան ամսաթիվ	Ծաբաթվա օր	Հայոց թվական	Հայոց ամիս	Հայոց ամսաթիվ	Ծաբաթվա օր
1336	8	24	7	785	9	1	7
1343	8	23	7	792	9	1	7
1350	8	21	7	799	9	1	7
1357	8	19	7	806	9	1	7

Հիշյալ տարեթվերից մեկում էլ հաշվարկել և գրանցել են Ահեկանի 1-ը, որից և վերցրել են 4514, 939, 4506 թվահամարների ճաշոցները: Ասենք, որ Ահեկի 1-ը չէր կարող առաջանալ ինչպիսիք հետո հաշված 14-րդ օրից, որովհետև այն տալիս է ավելի վաղ տարիները, երբ տոնը կատարվում էր Աստուածածնից հետո եկող շաբաթ օրը:

Լուծենք Ահեկանի 21-ի ամսաթվի առաջացման ժամանակը, թերևս կարելի է մտածել որ գրչական սխալի հետևանքով Ահեկանի մեկը դարձել է քսան մեկ, քանի որ Գեորգ զորավարի

1 Տե՛ս Ձեռ. № 979, էջ 295ա, նույն նշումը համառոտ կա սկզբի ցանկում՝ էջ 4ա:



տոնական օրվա համար մի դեպքում Աստուածածնից հաշված 7-րդ օրը դնելով Ահեկանի 21-ը ստանում ենք.

Ներկա թվական	Հուլյան ամիս	Հուլյան ամսաթիվ	Ծաբաթվա օր	Հայոց թվական	Հայոց ամիս	Հայոց ամսաթիվ	Ծաբաթվա օր
1421	8	23	7	870	9	21	7
1428	8	21	7	877	9	21	7
1435	8	20	7	884	9	21	7
1442	8	18	7	890	9	21	7

Այդ տոնը արդեն տեղ տեղ կատարվում է Աստուածածնից հետո: Ուշագրավ է, որ 5667 թվահամարի Տոնացույցը, որն ընդօրինակվել է 1440 թ. Աստուածածնից հաշված 7-րդ օրվա տակ, գրել է «և այլք ոմանք Գէորգեա[յ] զօրավարին» (էջ 134բ), այսինքն Գեորգ զորավարի տոնը տոնում են ոմանք Աստուածածնի շաբաթ օրը: Միաժամանակ, հաշվերացից հաշված 14-րդ օրվա տակ տվել է Գեորգ զորավարի հիշատակի օրը (էջ 138ա): Մյուս դեպքում հաշվերացից հաշված 14-րդ օրը դնելով Ահեկանի 21-ը գտնում ենք 1274 թ., 1281 թ. և 1295 թ.: Այն ժամանակ, երբ 1314 թվից գտնում ենք վկայված տոնացույցում Գեորգ զորավարի օրը հաշվերացից հետո կատարելը: Նախընտրելին, իհարկե, առաջին տարեթիվերն են: Կարելի է պնդել, որ Գեորգ զորավարի տոնը տեղ-տեղ կատարել են Աստուածածնից հետո 15-րդ դարի 1-ին կեսին ևս և 4698 թվահամարի Ճաշոցը, որ թվագրվել է 15-րդ դարով, պետք է թվագրել 15-րդ դարի 20-40-ական թվերով: Ինչպես նշվեց, այդ միջանկյալ հատվածում՝ 1314 թվից հետո մինչև 15-րդ դարի կեսերը տոնը կատարում էին մի մասը ըստ ավանդույթյան՝ Աստուածածնից հետո, իսկ մյուս մասը՝ նոր ձևով հաշվերացից հետո: Ասենք նաև, որ Գեորգ զորավարի տոնի օրը հաշվերացից հետո տեղափոխվելուց, այսինքն՝ 14-րդ դարում առաջացավ «Պահք սուրբ Գեորգեա[յ]»<sup>1</sup>: 4164 թվահամարի Տոնացույցի խմբագրությունը տալիս է ուշագրավ տեղեկություն: Այնտեղ գրված է. «Յետ Ը օրիէից Սուրբ Խաչին, յայս կիրակիս հանապազ զայս հարցն ասայ եւ ապա պահք Վարագա[յ] Սուրբ Խաչին, որ ասի Սուրբ Գէորգայ, բայց տօնք լինի»<sup>2</sup>: Վերոհիշյալ վկայությունները ցույց են տալիս, որ հաշվերացի հաջորդ կիրակիից հետո եկող երկուշաբթից ուրբաթ եղել են պահքի օրեր, թեև միաժամանակ սրբերի հիշատակներն են տոնել և այդ պահքը անվանել են երկու անվամբ «Սուրբ Գէորգայ» և «Վարագա[յ] Սուրբ Խաչին»:

Այսպիսով, ուսումնասիրությունից երևում է, որ Գեորգ զորավարի վկայություններից մեկը թարգմանվեց 900-903 թթ. ամենայն հավանականությամբ Գագիկ վանահոր ձեռքով: Ավելի ուշ Գրիգոր Վկայասերը հավանաբար հնին ավելացրել է նոր նյութեր՝ ամբողջացնելով Գեորգ զորավարի վկայաբանությունը: 1874 թ. հրատարակված «Վարք և վկայաբանություններ սրբոց»-ի (հ. Ա) հեղինակները հիշյալ վկայաբանությունը համարել են Գրիգոր Վկայասերի թարգմանությունը, որն ինչ խոսք մասամբ է ճիշտ, որովհետև Մեհեկան 23 ամսաթիվ Վկայասերը չէր կարող դնել: Գեորգ զորավարի տոնը 11-րդ դարից մտավ Հայոց տոնացույց և սահմանվեց Աստուածածնի հաջորդ շաբաթը, որն ստացավ Հայոց շաբաթական տոմարի ամսաթիվ, իսկ 14-րդ դարի սկզբներից Գեորգ զորավարի հիշատակի օրը տեղափոխեցին հաշվերացից հաշված 14-րդ օրը, նույնպես շաբաթ, թեև տեղ-տեղ մինչև 15-րդ դարի կեսը տոնվեց Աստուածածնից հետո: Իսկ 14-րդ դարից սկսած հաշվերացից հետո: Այդ շաբաթը կատարել են պահք, որը կրկնակի անվանում է ունեցել Սուրբ Գեորգի և Վարագ Սուրբ Խաչի:

1 Ձեռ. № 2092, էջ 229ա-բ:  
2 Ձեռ. № 4164, էջ 204 էջ:

\*\*\*

Ասենք մարգարեներ եղեկիելի, Եզրի և Զաքարիայի՝ Հովհաննես Մկրտչի հոր հիշատակի օրվա մեկնությունը:

832 թվահամարի Ճաշոցը գրել է. «Արեգ Ե (Մարտ 13). Եղեկիելի մարգարէի...» (էջ 88ա-89ա): Արեգի 5-ի կանոնի տակ է տվել հիշյալ մարգարեների տոնական օրը Վենետիկի 639 թվահամարի Ճաշոցը<sup>1</sup>: Այդպես են վարվել նաև 6235 (էջ 77ա) և 4977 (էջ 83 բ) ճաշոցների խմբագրությունները ինչպես և 2092 թվահամարի Տոնացույցը (էջ 228ա-229ա), միայն 6235 թվահամարի գրչագրում կատարվել է Ե-ն է փոխելու գրչական սխալ: 940 թվահամարի Ճաշոցում Լ է թվահամարի տակ կարդում ենք. «Մարտի ԺԳ եւ յԱրեգ Զ (ուղղել Ե). Եղեկիելի, Եզրի և Զաքարիայի հաւրն Յովհաննու»:

7741 (էջ 382բ-353բ) և 4107 (էջ 712) և այլ թվահամարների ճաշոցները վերոհիշյալ մարգարեների հիշատակի օրը դրել են երեքշաբթի օրվա կանոնի տակ: 4514 (էջ 326բ) և 4698 (էջ 260ա) թվահամարների ճաշոցները եղեկիելի, Եզրի և Զաքարիայի հիշատակի օրը տվել են Արեգ 15-ի կանոնի տակ, միաժամանակ ստորին լուսանցքում ունեն երեքշաբթի օրվա նշումը: Վերջապես 939 (էջ 433ա), 4437 (էջ 174ա), 4506 (էջ 238ա-239ա) և 4698 (էջ 260ա) թվահամարների գրչագրերը հիշյալ սրբերի հիշատակի օրը սահմանել են Արեգ 17-ի կանոնի տակ, միաժամանակ ներքին լուսանցքում բերել են երեքշաբթի օրվա նշումները: Հնարավոր է մտածել, որ Արեգ ԺԵ կամ ԺԵ-ից մեկը գրչական սխալ է, սակայն նախ տարբեր ձեռագրեր են վկայել այդ ամսաթիվերը, բացի այդ, ինչպես կոտեսները, այդպիսի հաշվարկ կատարել են:

Հայոց տոնացույցների խմբագրությունները «Զկնի Աստուածածնի երրորդ կիրակիէից» կամ Աստուածածնից հետո եկող երկրորդ կիրակիից հետո դրել են «Գշ (երեքշաբաթ). Սրբոց մարգարէիցն Եղէկիէլի, Եզրի և Զաքարիայի հաւրն Յովհաննու»<sup>2</sup>:

Միայն 2092 թվահամարի Տոնացույցի խմբագրությունը անհաջող փորձ է կատարել և վերոհիշյալ մարգարեների հիշատակի օրը տեղափոխվել է հաշվերացից հետո Վարագա Խաչի կիրակիից հետո՝ եկող երկուշաբթին (էջ 228ա-229ա):

Հայոց Յայսմավուրքների խմբագրությունները հիշյալ սրբերի հիշատակի օր են սահմանել. «Մարտ ԺԳ եւ Արեգի Ե» կամ «Արեգի Ե և Մարտի ԺԳ» կանոնի տակ<sup>3</sup>:

Միայն Գրիգոր Խլաթեցու Յայսմավուրքների խմբագրությունները օրը փոխել են դնելով «Արեգ Դ և Մարտի ԺԲ» կանոնի տակ<sup>4</sup>: «Արեգ Ե և Մարտ ԺԳ» ամսաթիվերը չենք վերլուծում, որպես Հայոց և Հուլյան անշաբթ տոմարների համարժեքներ, մնում են Արեգի 15 և 17-ը, որոնք առաջացել են Հայոց տոնացույցային ճանապարհով: Տեսնենք, որ Եղեկիելի, Եզրի և Զաքարիայի հիշատակի օր է սահմանվել Աստուածածնից հաշված 17-րդ օրը, երեքշաբթի, որն ընկել է Օգոստոսի 31 ± 3 օր, այսինքն՝ Օգոստոս 28 - Սեպտեմբեր 3-ի ամսաթիվից մեկում, երեքշաբթի օրը: Ստանում ենք հետևյալ արդյունքները, ըստ «Հայոց տոնացույցի» հաշվարկների.

1.

Ներկա թվական	Հուլյան ամիս	Հուլյան ամսաթիվ	Ծաբաթվա օր	Հայոց թվական	Հայոց ամիս	Հայոց ամսաթիվ	Ծաբաթվա օր
1236	9	2	3	685	8	15	3
1243	9	1	3	692	8	15	3
1250	8	30	3	699	8	15	3
1257	8	28	3	706	8	15	3

1 Ս. Շեմճեմյան, Աշխ., էջ 623-624:  
2 Ձեռ. № № 759, էջ 172բ, 179, էջ 539ա-540բ, 752, էջ 171ա, 767, էջ 174ա, 7203, էջ 80ա-81ա, 9838, էջ 176բ, 4164, էջ 198բ, 4874, էջ 193ա-195ա և այլն:  
3 Տե՛ս Վեճեռիկի 710 և 189 թվահամարների գրչագրերը, ինչպես և Երևանի ճեղքայալ բնագրերը՝ 2695, էջ 67ա, 3082, էջ 394բ, 179, 7433, էջ 257բ, 4741, էջ 226բ և այլն:  
4 Տե՛ս Ձեռ. № № 6339, էջ 386ա, 1511, էջ 375բ և այլն:

Ներկա թվական	Հուլյան ամիս	Հուլյան ամսաթիվ	Ծաբաթվա օր	Հայոց թվական	Հայոց ամիս	Հայոց ամսաթիվ	Ծաբաթվա օր
1241	9	3	3	690	8	17	3
1248	9	1	3	697	8	17	3
1255	8	31	3	704	8	17	3
1262	8	29	3	711	8	17	3

Պարզ է դառնում, որ Եգեկիելի, Եզրի և Զաքարիայի հիշատակի օրը հաշվել են տոնացույցի հիման վրա 13-րդ դարի վերոհիշյալ տարիներից մեկում, որոնք փոխանցվել են հետագա ճաշոցներին:

Հայոց տոմարական եղանակը տվյալ դեպքում կիրառելի է, քանի որ հիշյալ մարգարեները հավանաբար ունեցել են անշարժ տոնական օրեր առանձին-առանձին: Նրանց տոնական օրը միասնաբար մտավ Հայոց տոնացույց հավանաբար 11-րդ դարից հետո և հաստատուն իր տեղն ունեցավ Աստուածածնից հաշված 17-րդ օրը, երեքշաբթի, որն էլ հիմնականում վերարտադրել են Հայոց Յայսմավուրքների ու ճաշոցների խմբագրությունները:

\*\*\*

Հայկական սկզբնաղբյուրները պահպանել են ուշագրավ վկայություններ Նիկիայի ժողովի և նրա մասնակիցների մասին: Նիկիայի ժողովի վավերագրում գրած է. «Յիշխանութեանն Պաղղոսի եւ Յուդիանոսի փառաւորաց և լուսաւորաց, յամաց Աղեքսանդրի ՈւՋ (636) (= 325 թ.) յամսեանն Մարերի իբրև ԻԲ (22) (տարբերակ՝ ԺԹ (19)) էր ամսոյն, յառաջ քան զԺԳ-ն (13) կաղանդին Յունիսի) (= Մայիս 20 տարբերակ՝ Յունուարի) Ի Նիկիայ, մայր քաղաքաց բիւթանացոց, եղաւ հաւատս: Հաւատամք ի մի Աստուած հայր ամենակալ: Այս են հաւատք, զոր եղին սուրբ հարքն»<sup>1</sup>: Մեկ այլ առիթով ցույց են տվել, որ Մայիս 20-ը Նիկիայի ժողովի բացման օրվա նշումն է, որը հիմնավորում է Սոկրատի եկեղեցական պատմության մեջ բերված տեղեկությունները, ինչպես և այլ վկայություններով: Մարերի 22-ը Հայոց շարժական տոմարի ամսաթիվ է, որովհետև այն առկա է 11-րդ դարի ընդօրինակությունների մեջ, այսինքն մինչև Հայոց անշարժ տոմարի ստեղծումը, ուստի Մայիս 20 = Մարեր 22, որտեղից Մարերի 1 = Ապրիլ 29 = 464-467 թթ.: Պարզ է, որ Նիկիայի ժողովի վավերագրերը թարգմանել են հունարենից հայերեն 464-467 թթ. և նրա հավանական թարգմանիչ Գյուտ կաթողիկոսը բնագրում ավելացրել է Հայոց շարժական տոմարի Մարերի 22-ի ժամանակի համարժեքը Մայիս 20-ին:

Ուշ շրջանում «Կանոնագիրք Հայոց»-ի 2-րդ խմբի բնագրի մեջ Մարերի 22-ը փոխել են Մարերի 19, իսկ «Յառաջ քան զԺԳ-ն կաղանդին Յունիսի-ն՝ Յունուարի, որով Մարերի 19-ը համարժեք է դառնում Դեկտեմբերի 20-ին: Իսկ այդ զուգադրությունը եղել է 1056-1059 թթ. ուստի «Կանոնագիրք Հայոց»-ի 2-րդ խմբի խմբագրությունը և ամսաթվերի այդ փոփոխությունը կատարվել է 11-րդ դարի ընդօրինակության մեջ: Հայոց Յայսմավուրքները պահել են Մարերի 22-ը և նրա տարբերակը՝ Մարերի 21-ը՝ Հայոց անշարժ տոմարի համարժեքներով, այն է՝ Մայիս 29 և 28, իբրև Նիկիայի ժողովի ամիս-ամսաթվեր, որոնցից Մայիս 29-ը գալիս է հունական տոնացույցից: Նրանք տոնում էին այդ հիշատակի օրը Համբարձումից հետո եկող կիրակիին համարժեք մի ամսաթվում, որը տարիների որոշակի պարբերությամբ, երբ Զատիկն ընկնում էր Ապրիլ 17-ին հիշյալ կիրակին ընկնում էր Մայիս 29-ին: Ասենք որ 325 թ. Զատիկը եղել է Ապրիլ 18-ին, իսկ հիշյալ կիրակին ընկել է Մայիս 30-ին, եթե այդ ժամանակ առանձնացել էին հրեաներից և Զատիկը տոնում էին առանձին: Ինչևէ, ուշ հունական ավան-

դույթը Նիկիայի ժողովի մասնակիցների հիշատակի օրը կապել է Մայիսի 29-ի օրվա հետ, որը Հայոց մեջ ընդունվել է Հոգեգալստեան նախորդող կիրակիին կամ Համբարձումից հետո եկող կիրակիին, որը Հայոց մոտ երկրորդ Մաղկազարդ անունն է ստացել ուշ շրջանում:

Հովսեփ Կոստանդնուպոլսեցու հունական Տոնացույցի թարգմանության մեջ Մայիս 29-ի կանոնի տակ կարդում ենք «Յայսմաուր եղև առաջին ժողով ի Նիկիա քաղաքին Բիւթանացոց ՅձԺԸ (318) եպիսկոպոսացն հրամանաւ սրբոյն Կոստանդիանոսի մեծի արքային: Եւ տաւնն կատարի անփոփոխելի ի Կիւրակէ աւր յետ Համբարձմանն Քրիստոսի, որ է յառաջ քան զսուրբ Պենտակոստն, քանզի եւ յայն Կիւրակէն ժողովեցան եւ էր Մայիս ամսոյ ԻԹ»:

179 թվահամարի համառոտ Յայսմավուրքում գրված է. «(Մարերի) ԻԲ. Սուրբ ժողովոյն Նիկիայի ՅԺԸ եպ[իսկոպոսացն], և տաւնս կատարվի յետ Համբարձմանն Քրիստոսի ի կիրակէն, զի յայն աւր ժողովեց. և էր ամսոյն (Մայիսի) ԻԹ...»:

7433 թվահամարի Յայսմավուրքում կարդում ենք. «Մարերի ԻԲ եւ Մայիս ԻԹ. Տաւն է Նիկիո առաջին սուրբ ժողովոյն ՅԺԸ եպիսկոպոսացն՝ հրամանաւ սրբոյն Կոստանդիանոսի մեծի արքայի: Եւ տաւն կատարի անփոփոխ ի Կիւրակէ աւր յետ Համբարձմանն Քրիստոսի քանզի յայն կիւրակէն ժողովեցան եւ էր Մարերի ամսոյ Իբ եւ Մայիս ԻԹ...» (էջ 335ա):

Վենետիկի 710 թվահամարի գրչագրում գրված է . «Մայիս ԻԹ եւ Մարեր ԻԲ. Տաւն սուրբ եւ առաջի ժողովոյն Նիկիայ...»:

940 թվահամարի ճաշոցի Կ (60) համարի տակ կարդում ենք. «Մայիս ԻԹ եւ Մարերի ԻԱ. Սուրբ և առաջին ժողովոյ Նիկիայ ՅԺԸ Սուրբ հարցն...»: Ձեռագիրն ընդօրինակողն շփոթել է, որովհետև Մայիսի 29-ը համարժեք է Հայոց անշարժ տոմարի Մարերի 22-ին, իսկ Մարերի 21-ը՝ Մայիս 28-ին: Այլ խոսքով հետագա բնագրերը Մարերի 22-ը պահել են, բայց համարժեք են դարձրել Հայոց անշարժ տոմարի Մայիս 29-ին և ոչ Մայիսի 20-ին, ինչպես վկայված է վաղ շրջանի բնագրերում: Դրան նպաստել է նաև հունական տոնացույցի Մայիս 29-ի նշումը, երբ հույներն էին կատարում այդ տոնը: Հարկ է ընդգծել, որ Պենտեկոստեից առաջ ընկնող կիրակիին Հայոց մեջ վաղ շրջանում մասամբ են տոնել Նիկիայի ժողովի մասնակիցների տոնը, որի մասին կխոսենք փոքր ինչ հետո:

3082 թվահամարի համառոտ Յայսմավուրքում գրված է . «Նոր[ին Մարեր] ԻԱ. ՅԺԸ Հայրապետացն... (Մայիս) ԻԸ» (էջ 396բ):

4741 թվահամարի Յայսմավուրքում կարդում ենք. «Մարերի ԻԱ. Մայիս ԻԸ... Յայսմ [աւուր] եղև ժողովն Նիկիա ՅԺԸ հայր[ապետացն] և էր օր կիրակի երկրորդ Մաղկազարդին, զկնի Համբարձման Տեառն մերոյ» (էջ 301ա): Մարերի 21-ի և Մայիսի 28-ի նշումներն ունեն վենետիկի 631 և Երևանի 2695 (էջ 137ա), ինչպես և Գրիգոր Խլաթեցու Յայսմավուրքների խմբագրությունները: Ամսաթվի մեկօրյա փոփոխությունը տոնի տեղափոխության արդյունք է և տարբերակը Մարեր 22-ի:

Հայոց հնագույն տոնացույցերը Նիկիայի ժողովի 318 Հայրապետների հիշատակի օր են սահմանել Աստուածածնից հաշված 3-րդ կիրակիից հետո եկող հինգշաբթի օրը, այն է՝ Աստուածածնից հաշված 19-րդ օրը:

759 թվահամարի Տոնացույցում կարդում ենք. «Եւ (հիգչաբաթ). Նիկիա սուրբ ժողովոյն ՅԺԸ-իցն» (էջ 172բ): Համարժեք նշումներ ունեն 179, (էջ 539ա-բ), 752, (էջ 171ա), 767, (էջ 174ա), 5667, (էջ 135ա), 7203, (էջ 80բ-81ա), 9838, (էջ 176ա-բ) թվահամարների տոնացույցերի խմբագրությունները: 16-րդ դարի տոնացույցերի խմբագրությունները (4164, էջ 198ա, 199ա, 4874, էջ 192-196բ, 5419, էջ 213բ-214ա, 5440, էջ 213ա-բ, 5436, էջ 186բ և այլն) Նիկիայի ժողովի մասնակիցների հիշատակի օրը տեղափոխել են շաբաթ օր, միաժամանակ 4874 թվահամարի գրչագիրն ընդօրինակողը բացատրում է, որ ոմանք հինգշաբթի են տոնում: Այլ խոսքով

<sup>1</sup> Կանոնագիրք Հայոց, Բ. Ա., էջ 133:

այդ տոնը տեղափոխվել է Աստուածածնից հաշված 21-րդ օրը, սակայն 16-րդ դարում Աստուածածնի տոնական օրերի ընդլայնման հետևանքով, երբ երեք օրից վերածվեց 9 օրեայի, հիշյալ տոնի օրը փաստորեն ընկել է Աստուածածնից հաշված և 21-րդ և 28-րդ օրը, շաբաթ:

Ասեմք նաև, որ 2092 թվահամարի Տոնացույցը դրել է Սուրբ Խաչից հաշված 17-րդ օրը, այն է՝ Վարագա Խաչի տոնից հետո եկող երեքշաբթին: Այնտեղ գրված է. «Գշ (երեքշաբթի). Նիկիա սուրբ ժողովոյն ՅժԸ Հայրապետացն. ... յԱրեգ ժ» (էջ 229ա): Այն տոնի տեղափոխման փորձ է, որը կրկններ Սեպտեմբեր 30 ± 3 օր: Սակայն այդ փորձը հնարավոր է, որ մասնակի կիրառություն ունենա և հետագա տոնացույցերը չեն ձայնակցել դրան: Ի դեպ Մ. Ավգերյանը «Տօն Նիկիա սուրբ ժողովոյն՝ ՅժԸ Հայրապետացն» կանոնի տակ տվել է չորս հուլյան ամսաթվեր, որոնցից մեկը հունաց Յայսմավուրքներից, այն է՝ Մայիս 29-ը իսկ Հայոցի համար Մայիս 27 կամ 28 և Սեպտեմբեր 7, որոնցից Մայիս 27-ը մեզ չի հանդիպել, իսկ Սեպտեմբերի 7-ը Աստուածածնից հաշված 19 կամ 21 կամ 28-րդ օրերի նշումներից մեկն է, որովհետև այդ տոնը ընկնում էր Սուրբ Խաչի պահքից առաջ:

Նիկիայի ժողովի մասնակիցների տոնի համար Հայոց ճաշոցները տալիս են հետևյալ տեղեկությունները: 979 թվահամարի ճաշոցի խմբագրությունը Մայիս 29-ի կանոնի տակ՝ Պենտեկոստից առաջ տալիս է. «Նորի Իթ. Սուրբ և առաջին ժողովոյն Նիկիայ ՅժԸ Սուրբ Հայցն. ...» (էջ 307բ-308բ): Վերը տեսանք, որ հնագույն տոնացույցերի խմբագրությունները (1277/8 թթ. և 1292 թ.), որոնք ժամանակամերձ են վերոհիշյալ ճաշոցի խմբագրությանը (1286/7 թթ.) Նիկիայի ժողովի մասնակիցների հիշատակի օրը սահմանել են Աստուածածնից հաշված 19-րդ օրը՝ հինգշաբթի, իսկ այստեղ Պենտեկոստից առաջ: Այն հունական տոնացույցերի ազդեցությունից հետևանք է, որ հետագա ճաշոցները չեն ընդունել:

4514 թվահամարի ճաշոցն (1323 թ.) տալիս է. «Յարաց ժ. Նիկիա սուրբ ժողովոյն)...) (ներքին լուսանցքում՝ հինգշաբթի. Նիկիայի Սուրբ ժողովոյն ՅժԸ-իցն) (էջ 328բ): 7741 թվահամարի ճաշոցում Աստուածածնից հաշված 19-րդ օրվա տակ գրված է. «Եշ. (հինգշաբթի). Նիկիա սուրբ ժողովոյն ՅժԸ Հայրապետացն (նույնը ներքին լուսանցքում)» (էջ 384 բ):

4107 թվահամարը ճաշոցում (1420 թ.) Աստուածածնից հաշված 21-րդ օրվա տակ կարդում ենք. «Շաբաթ աւր. Հայրապետացն... (ներքին լուսանցքում՝ Շաբաթ աւր... Նիկիոյ սուրբ ժողովոյն ԳՃ ու ժԸ Հայրապետացն)» (էջ 720-721): Ակնհայտ է, որ Աստուածածնի 3-րդ կիրակիից հետո եկող հինգշաբթիից շաբաթ տեղափոխումը կատարվել է 15-րդ դարի սկզբներից սկսած, թեև ըստ տոնացույցերի տվյալների դեռևս 16-րդ դարում, ոմանք շարունակել են կատարել հինգշաբթի օրը:

939 թվահամարի ճաշոցն (1441/2) ունի. «Յարաց ժ. Նիկիայի սուրբ ժողովոյն) (ներքին լուսանցքում՝ Հինգշաբթի Նիկիայի սուրբ ժողովոյն ՅժԸ-իցն) (էջ 435բ):

4437 թվահամարի ճաշոցում կարդում ենք. «Յարացի ժ. Նիկիայ սուրբ ժողովոյն... (ներքին լուսանցք՝ հիգշաբթի նշումով) (էջ 176ա):

4698 թվահամարի ճաշոցն ունի. «Եշբի (հինգշաբթի). Արաց ժ. Նիկիոյ սուրբ ժողովոյն» (էջ 262ա):

Այսպիսով 14-15-րդ դարերի ճաշոցներն ունեն ոչ միայն հինգշաբթիի նշումը, այլ Արաց 10-ի ամիս-ամսաթիվը, որը հնարավորություն է տալիս թվագրման: Ակնհայտորեն այդ ամիս-ամսաթիվն առաջացել է տոնացույցային ճանապարհով և Արաց 10-ին եղել է Նիկիայի Հայրապետների հիշատակի օրը Աստուածածնից հաշված 19-րդ օրը, հինգշաբթի: Տեսնենք ինչ արդյունքների է բերում «Հայոց տոնացույց» ծրագրի հաշվումները, այն է՝

Ներկա թվական	Հուլյան ամիս	Հուլյան ամսաթիվ	Ծարաթվա օր	Հայոց թվական	Հայոց ամիս	Հայոց ամսաթիվ	Ծարաթվա օր
967	9	5	5	416	6	10	5
974	9	3	5	423	6	10	5
981	9	1	5	430	6	10	5
988	8	30	5	437	6	10	5

Պարզ է դառնում, որ Աստուածածնից հաշված 19-րդ օրը, հինգշաբթի Հայոց տոնացույց է մտել 10-րդ դարի 60-80-ական թվականներին, երբ Նիկիայի ժողովի մասնակիցների հիշատակն են նշել: Միաժամանակ հիմնավորվում է, որ Աստուածածնի տոնը կիրակի տեղափոխվեց 10-րդ դարի 2-րդ կեսին և իր արմատավորումը գտավ 11-րդ դարում:

Արեգի 10-ի ամսաթվային նշումներն ունեն մի խումբ ճաշոցներ: 832 թվահամարի ճաշոցում կարդում ենք. «Արեգ ժ. Նիկեա սուրբ ժողովոյն, որ ի ձեռն մեծին Կոստնդինոսի, ժողովեցան Եպիսկոպոսք ՅժԸ...» (էջ 89բ):

Վենետիկի 639 թվահամարի ճաշոցում գրված է. «Արեգ ժ. Նիկիայ սուրբ ժողովոյն» (Ս. Ճեմճեմյան, նշվ. աշխ, Հ. Դ. էջ 623-624):

6235 թվահամարի ճաշոցը հավանաբար Սուրբ Խաչից և Վարագա տոնից հետո գրել է. «Յարեգի ժ. Նիկիայ սուրբ ժողովոյն» (էջ 78ա):

Արեգի 10-ի ամիս-ամսաթիվն են տալիս 4977 (էջ 84ա), 4506 (էջ 390ա) և այլ թվահամարների գրչագրեր:

Հայոց տոնացույցային եղանակն Աստուածածնից հաշված 19-րդ և հինգշաբթի օրվա Արեգ 10-ի համար տալիս են՝ 1208 թ., 1222 թ. և 1229 թ., որը ցույց է տալիս այդ ամիս-ամսաթվի ոչ տոնացույցային եղանակով առաջանալը, քանի որ Արեգ 10-ը փաստագրվել է Հայադիր. ճաշոցներում 12-րդ դարում: Պարզ է, որ այն Հայոց անշարժ տոմարի ամսաթիվ է:

Այսպիսով Նիկիայի ժողովի և նրան մասնակից 318 Հայրապետների հիշատակի օր է սահմանվել Մայիս 20-ին և Հայոց շարժական տոմարի Մարերի 22-ի ամիս-ամսաթվային նշումն է ստացել 464-467 թթ.: Այդ տոնը տոնել են անշարժ տոնական օրով մինչև 10-րդ դարի վերջերը, որից հետո տոնը վեր է ածվել շարժականի և տոնվել Աստուածածնից հաշված 19-րդ օրը, հինգշաբթի, մինչև 16-րդ դարի սկզբները: 15-րդ դարի 20-ական թվականներից տոնը տեղափոխվեց շաբաթ, որը Աստուածածնից հաշված 21-րդ օրն էր: Հավանաբար 12-րդ դարում փորձ է արվել տոնը տեղափոխել Պենտեկոստից առաջ ընկնող կիրակի, երկրորդ Մաղկազարդի օրը, որը հաջողություն չունեցավ: Նույնպիսի անհաջողություն ունեցավ տոնի տեղափոխումը Վարագա Խաչից հետո եկող երեքշաբթին: Թեև երկու դեպքում էլ հնարավոր է, որ առանձին դեպքերում տոնել են այդ օրերին: 16-րդ դարում Նիկիայի ժողովի մասնակիցների հիշատակի օրը նոր փոփոխություն կրեց և տոնվեց Աստուածածնից հաշված 28-րդ օրը, շաբաթ: Այն արդյունք էր նրան, որ Աստուածածնի օրերն ընդլայնվեցին դառնալով 9 օր, որի հետևանքով քննարկվող տոնական օրը մեխանիկորեն տեղափոխվեց ավելի հետ: Թեև Նիկիայի մասնակիցների հիշատակի օրը շաբաթ տեղափոխվեց 15-րդ դարի սկզբներից, սակայն ոմանք հինգշաբթի էին տոնում 16-րդ դարում հետևելով հին ավանդույթներին, այսինքն 15-16-րդ դդ. հիշյալ տոնը տոնել են Աստուածածնից հաշված 19-րդ և 21-րդ օրերին, սակայն 16-րդ դարում փաստորեն տոնը հաստատուն կերպով տեղադրվեց Սուրբ Խաչի պահքից առաջ ընկնող շաբաթ օրը: Սիմեոն Երևանցին հիշյալ տոնը դրեց Աստուածածնից հաշված 21-րդ օրը՝ շաբաթ, բայց այն տեղափոխվում է նաև 28-րդ օրը, նայած տարեգրի, այսինքն երբ Աստուածածին - Սուրբ Խաչի պահքի միջև

չորս շաբաթ էր տոնում էին 21-րդ օրը, երբ 5 շաբաթ՝ 28-րդ օրը: Վերջինս կախված էր նաև նրանից որ Աստուածածնի ծննդեան օրը չընկնի շաբաթ և սեպտեմբերի 8-ին: Այլապես նախապատվութունը տրվում էր Աստուածածնի Ծննդեան տոնին, իսկ Նիկիայի ժողովի և նրա մասնակից 318 հայրապետների տոնը մնում էր նախորդ շաբաթ օրը: Այլ խոսքով այդ տոնը տոնել են կամ Աստուածածնից հաշված 21-րդ կամ 28-րդ օրը:

\*\*\*

Դավիթ Դվնեցու վկայաբանության հիմնական դրվագները գտնում ենք հայ մատենագիրների մոտ: Հովհաննես Դրասխանակերտցին<sup>1</sup> գրում է.

1. «Բայց Դաւիթ, որ էր ի պարսիկ տոհմէ՛ յազգէ թագաւորաց՝ աստանոր եկեալ առ իշխանն մեծ Գրիգոր՝ խնդրէ առ ի նմանէ տալ իւր զքրիստոսական դրոշմն, զոր և խնդութեամբ իսկ զնա ընկալեալ՝ հրամայէ կաթողիկոսին Անաստասայ տալ նմա զկնիք մկրտութեանն սրբոյ:

Եւ վասն զի յառաջագոյն Սուրահ անուանիւր. ապա իշխանն մեծ՝ ընկալեալ զնա ի ջրոյ սուրբ աւազանին, Դաւիթ զնա յորջորջէ յանուն հօր իւրոյ, և տայ բնակութիւն նմա զգիւղն Ձագ ի նահանգին Կոտայից, որ զկնի ամաց իսկ ի Դվին քաղաքի ընկալաւ զմարտիրոսական պսակն»:

2. «Այս Աբղլլահ զնորահաւատն Դաւիթ, որ յառաջագոյն յիշատակեցաւ առ ի մէնջ՝ ըմբռնեալ չարաչար հարուածովք և կապանօք և բանտիւ զնա խոշտանգէր վասն առ ի Քրիստոս հաւատոցն, յիւր կորստական խորխորատն զնա հրապուրէր արկանել. որում ոչ հաւանեալ և քաջապէս ընդդէմ վառեալ սուրբ ծերունին՝ ի փայտի զնա բեռակապ պնդէր, և նետածիգ ի սիրտ սրբոյն արարեալ՝ ի Քրիստոս զհոգին աւանդէր: Ջոր տարեալ եպիսկոպոսաց քահանայից՝ հանգուցին զմարմին նորա մերձ ի վկայարան սրբոյն Յիզտուղտի»:

Ասողիկի<sup>2</sup> մոտ գտնում ենք Հ. Դրասխանակերտցու պատմածի համառոտ տարբերակը, այն է՝

1. «Ի սորա (Անաստաս կաթողիկոսի - Ռ. Վ.) աւուրս հաւատաց սուրբ Դաւիթ»:

2. «Եւ եկեալ ոստիկան ի Հայս Աբղլլայ անուն՝ կալաւ զիշխանսն Հայոց և խաղացոյց ի Դամասկոս: Ի սմանէ մարտիրոսացաւ սուրբն Դաւիթ ի Դուին քաղաքի: Եւ ի սոյն աւուրս լինի կռիւն ի Վարդանակետի, յորում բնաջինջ սպառեցաւ զօրն Իսմայիլի»:

Կիրակոս Գանձակեցին<sup>3</sup> ավելի համառոտ է գրում Դավիթ Դվնեցու մկրտության և նահատակության մասին, այն է՝ «Ի հինգերորդ ամի Անաստասայ եղև շինուած կաթողիկէին՝ որ յաւանն Արուծ, զոր շինեաց Գրիգոր Պատրիկն, յորում մկրտի նահատակն Քրիստոսի Դաւիթ, ազգաւ պարսիկ, որ յառաջ Սուրհան կոչէր, և վասն վկայութեանն Քրիստոսի կախեցաւ զփայտե ի Դուին»:

Վերոհիշյալ տեղեկութիւններից պարզ է դառնում, որ Դավիթ Դվնեցին նահատակվել է 701-703 թթ.: Ավելի հավանական տարեթիվը 703 թվականն է:

Վերոհիշյալ հեղինակներից և ոչ մեկը չունի ամիս-ամսաթվային նշում, սակայն պարզ է, որ նրա հիշատակը հետագայում նշվել է:

8179 թվահամարի գրչագրում, որը վկայաբանական ժողովածու է հայոց տոնացույցի կարգով դասավորված. «վկայաբանութիւն Դաւիթի, որ ի Դվին կատարեցաւ» բնագրի մեջ կարդում ենք. «Եւ կատարի տաւն սրբոյն Դաւիթ յԱրեգ ԻԳ (23)»<sup>4</sup>:

Հայոց անշարժ տոմարի կարգով դասավորված որոշ ճաշոցների մեջ Դավիթ Դվնեցու հիշատակի օրը նույնպես դրված է Արեգ 23-ի կանոնի տակ<sup>2</sup>:

940 թվահամարի ճաշոցը ԽԲ (42) համարի տակ գրել է. «Մարտն ԼԱ եւ յԱրեգ ԻԳ (ուղղել՝ ԻԳ). Դաւիթի, որ ի Դվին կատարեցաւ.»:

Արեգ ԻԳ-ի կանոնի տակ է բերել Դավիթ Դվնեցու հիշատակի օրը 6235 թվահամարի ճաշոցը (էջ 79ա):

Հայոց Յայսմավուրքների համառոտ և ընդարձակ խմբագրութիւնները նույնպես Արեգ ԻԳ և Մարտ ԼԱ կանոնի տակ են տվել Դավիթ Դվնեցու վկայաբանութիւնը<sup>3</sup>:

Հայոց հնագույն տոնացույցերը վկայել են. «Բշ (երկուշաբաթ). Դաւիթ Դրւնեցուց և Յովսեփայ»<sup>4</sup>: Դավիթ Դվնեցու և Հովսեփի նոր վկայի հիշատակի օրը կատարել են Սուրբ Խաչից կամ Խաչվերացից հաշված 16-րդ օրը կամ Սուրբ Խաչից հաշված երրորդ կիրակիից հետո եկող երկուշաբթի օրը: Հովսեփի վկայի հիշատակի օրը դուրս է գալիս 14-րդ դարի սկզբների տոնացույցերից և նրան փոխարինում են այլ սրբերով: Այսպես 752 թվահամարի տոնացույցում գրված է. «Բշ Դաւիթ Դվնեցու և սուրբ վկայից Լամբէոսի և Լամոսի» (էջ 173ա): Համարժեք վկայութիւններ ենք գտնում նաև 5667 (էջ 138բ), 9838 (էջ 179ա), 4164 (էջ 205բ), 7203, 5436 (էջ 188բ-189ա) գրչագիր տոնացույցերի մեջ: Միայն 2092 թվահամարի Տոնացույցում գրված է. «Շբ (Շաբաթ). Դաւիթ Դվնեցույն... յԱրեգ ԻԳ» (էջ 229ա), որը տոնի տեղափոխման անհաջող փորձ է, քան որ հետագա տոնացույցերում շարունակվում է երկուշաբթի օրվա նշումը: Ասենք նաև, որ հայոց որոշ ճաշոցներ, թեև պահել են երկուշաբթի օրվա նշումները, սակայն տվել են այլ ամսաթվային նշումներ: 4514 թվահամարի ճաշոցում գրված է. «ՅԱրեգ Ժէ. Դաւիթ Դվնեցոյն... (ներքին լուսանցքում՝ «երկուշաբթի, Սրբոյն Դաւիթ որ ի Դվին կատարեցաւ») (էջ 351 բ): 7741 թվահամարի ճաշոցն ունի միայն երկուշաբթի օրվա նշումը (էջ 403բ): 939 թվահամարի ճաշոցում Արեգ ԺԵ (15)-ի կանոնի տակ է տվել Դավիթ Դվնեցու հիշատակի օրը, միաժամանակ ներքին լուսանցքում ունի երկուշաբթի օրվա նշումը (էջ 466ա):

4698 թվահամարի ճաշոցում կարդում ենք. «Բշբի (երկուշաբթի). Յարեգ ԺԵ. Դաւիթ Դվնեցոյն...» (էջ 279բ):

4437 թվահամարի ճաշոցն ունի. «յԱրեգի Իէ. Դաւիթի, որ ի Դվին կատարեցաւ. ... (ներքին լուսանցքում՝ երկուշաբթիի նշումով)» (էջ 194բ):

4506 թվահամարի ճաշոցում կարդում ենք. «Արեգ ԺԳ. Դաւիթ... (ներքին լուսանցքում՝ «երկուշաբաթ. Դաւիթ Դունեցուն»)» (էջ 364ա): Այլ խոսքով Դավիթ Դվնեցու հիշատակի օր է սահմանվել Սուրբ Խաչից հաշված 16-րդ օրը՝ երկուշաբթի, սակայն ստացել է հայոց տոմարի Արեգի 23, 27, 17, 15 և 14 ամսաթվերը:

Հարկ է նշել, որ Հովսեփի նոր վկայի հիշատակի օրը միացվել է Դավիթ Դվնեցու տոնին ներսես Շնորհալու կարգադրությամբ, բայց 14-րդ դարի սկզբներից դուրս եկավ տոնացույցից և

1 Հովհաննու կաթողիկոսի Դրասխանակերտցեոյ Պատմութիւն հայոց, Թ. 1912, էջ 91-95:

2 Ստեփանոս Տարոնացոյ Ասողկան Պատմութիւն Տիեզերական, էջ 99-101

3 Կիրակոս Գանձակեցի, Պատմութիւն հայոց, Ե. 1961, էջ 62-63:

1 Ձեռ. № 8179, էջ 253ա-բ:

2 Տե՛ս Ձեռ. № 832, էջ 91բ-92բ, Վեճեփիկի 639 թվահամարի գրչագիր (տե՛ս Վեճեփիկի ձեռագրացուցակ Ռ. Դ, էջ 605-628), 4977 էջ 85բ:

3 Տե՛ս Ձեռ. № № 3082, էջ 395ա, 179, Վեճեփիկի 189 թվահամարի գրչագիր, 2695, էջ 85բ, 9585, էջ 184ա 7529, էջ 147ա, 4741, էջ 246ա, 7433, էջ 275բ և այլն:

4 Ձեռ. № 759, էջ 173ա-բ, 179 էջ 540ա-բ:

պահպանման միջոցով Յայտմամբներում: Ըստ երևույթին նրա տոնը նշվել է Հավուց Թառում՝ տեղայնացված ձևով:

2695 թվահամարի Յայտմամբների մեջ գրված է. «Մարգարի ժԲ և Յունիս ի ԺԸ. Վկայություն սրբոյն Դուրիաի և Յովսեփայ նոր վկայի»: Իսկ վակայաբանություն մեջ կարդում ենք. «Յայտմ առուր վկայություն Յովսեփայ նոր վկայի, որ կա նշխարքն ի վանքն ի Հաուց Թառ մերձ առ գեղաքաղաքն Գառնի», ապա նրա վկայության պատմությունն է շարադրում, որտեղ նշում է. «... և ապա չոգալ (Յովսեփը - Ռ. Վ.) աղաթականութեան աղագալ առ մեծ կաթողիկոսն Հայոց Ներսէս իմաստասէր եղբայր Գրիգորիսի, որ նստեր ի Հոռմէական Կլայն, և ընկալելալ ի նմանէ աւրհնութիւն և քաջալերութիւն. և թէ վախճանիս, ասէ, յանաւրինաց կարգեցից զյիշատակս քո ընդ առաջին վկայիցն և ապա չոգալ յերուսաղէմ...», այնուհետև գրված է. «կատարեցաւ սուրբն Յովսեփ ի թուականին Հայոց ՈժԹ (619) և Յունիսի ԺԸ (= 1170թ.)...»: Պարզ է, որ Ներսէս կաթողիկոսը տոնը սահմանել է այդ թվականից հետո մինչև 1173 թ. և մտցրել տոնացույց:

9585 (էջ 258բ), 4731 (էջ 322ա), 7433 (էջ 357ա) թվահամարների Յայտմամբների խմբագրությունները Յովսեփի նոր վկայի կանոնը նույնպես տվել են Մարգար 12 և Հունիս 18-ի տակ, իսկ Գրիգոր Նլաթեցիին տեղափոխել է Մարգար 13 և Յունիս 19-ի կանոնի տակ:

Բերված տեղեկությունները ցույց են տալիս, որ Դավիթ Դվնեցու հիշատակի օրը վերահիշյալ ամիս ամսաթվերն է ստացել, երբ նրա տոնը դրվել է Սուրբ Խաչից Հաշված 16-րդ օրը երկուշաբթի: Ասենք նաև, որ Արեգ 23, 27, 17, 15 և 14 ամսաթվերը Հայոց շարժական տոմարի ամիս-ամսաթվեր են և նրանցից և ոչ մեկը հնարավոր չէ Հաշվի չառնել, որովհետև վկայված ենք գտնում տարբեր բնագրերում: Բացի այդ Արեգ 23-ի ամսաթիվը վեր է ածվել Հայոց անշարժ տոմարի ամսաթվի և ստացել Մարտի 31-ի համարժեքը: Տեսնենք թե ինչ արդյունքներ է տալիս «Հայոց տոնացույց»-ի Հաշվումները՝ նկատի ունենալով Սուրբ Խաչից Հաշված 16-րդ օրը: Բերենք այդ Հաշվումների արդյունքները:

1.

Ներկա թվական	Հուլյան ամիս	Հուլյան ամսաթիվ	Օարաթվա օր	Հայոց թվական	Հայոց ամիս	Հայոց ամսաթիվ	Օարաթվա օր
1150	10	2	2	599	8	23	2
1157	9	30	2	606	8	23	2
1164	9	28	2	613	8	23	2
1171	9	27	2	620	8	23	2

2.

Ներկա թվական	Հուլյան ամիս	Հուլյան ամսաթիվ	Օարաթվա օր	Հայոց թվական	Հայոց ամիս	Հայոց ամսաթիվ	Օարաթվա օր
1128	10	1	2	577	8	17	2
1135	9	30	2	584	8	17	2
1142	9	28	2	591	8	17	2
1149	9	26	2	598	8	17	2

3.

Ներկա թվական	Հուլյան ամիս	Հուլյան ամսաթիվ	Օարաթվա օր	Հայոց թվական	Հայոց ամիս	Հայոց ամսաթիվ	Օարաթվա օր
1116	10	2	2	565	8	15	2
1123	10	1	2	572	8	15	2
1130	9	29	2	579	8	15	2
1137	9	27	2	586	8	15	2

4.

Ներկա թվական	Հուլյան ամիս	Հուլյան ամսաթիվ	Օարաթվա օր	Հայոց թվական	Հայոց ամիս	Հայոց ամսաթիվ	Օարաթվա օր
1167	10	2	2	616	8	27	2
1174	9	30	2	623	8	27	2
1181	9	28	2	630	8	27	2
1188	9	26	2	637	8	27	2

5.

Ներկա թվական	Հուլյան ամիս	Հուլյան ամսաթիվ	Օարաթվա օր	Հայոց թվական	Հայոց ամիս	Հայոց ամսաթիվ	Օարաթվա օր
1117	10	1	2	566	8	14	2
1124	9	29	2	573	8	14	2
1131	9	28	2	580	8	14	2
1138	9	26	2	587	8	14	2

Հաշվումները ցույց են տալիս, որ բոլոր ամսաթվերն առաջացել են 12-րդ դարում: Արեգ 23-ի ամսաթիվը Հաշվել են 1150 թ. և 832 թվահամարի գրչագիրն (ընդօրինակված 1154/5 թթ.) ոչ միայն վերցրել է այդ ամսաթիվն, այլև վեր է ածել Հայոց անշարժ տոմարի ամսաթվի և փոխանցել հետագա ձառնումներին և Յայտմամբներին: Ակնհայտ է, որ Հայոց անշարժ տոմարի Արեգ 23 և նրա հուլյան համարժեքը (= Մարտ 31) կապ չունեն Դավիթ Դվնեցու տոնական օրվա հետ: Բացի այդ ընդունենք, որ Արեգ 23-ը գալիս է 701-703 թթ. ապա այն այդ ժամանակ է ընկել Հունվարի 2-րդ տասնամյակի օրերից մեկում, որը բնագրերով չի հիմնավորվում: Այլ խոսքով մենք չունենք Դավիթ Դվնեցու հիշատակի օրվա ոչ Հայոց շարժական տոմարի և ոչ էլ նրա հուլյան համարժեքը, որոնք վերաբերվեն վաղ շրջանի: Կասկած չի կարող լինել, որ Դավիթ Դվնեցու վկայաբանությունը խմբագրելու կամ ընդօրինակելու ընթացքում, որը տեղի է ունեցել 1150 թ., Արեգ 23-ի ամսաթիվն է եղել նրա հիշատակի օրը և գրիչը փաստել է այդ իրողությունը, որը փոխանցվել է հետագա սերունդներին:

4514 թվահամարի ձառնում Արեգ 17-ի ամսաթիվը վերցրել են 12-րդ դարի 1-ին կեսի բնագրերից, երբ Դավիթ Դվնեցու հիշատակի օրը համընկել է Հայոց շարժական տոմարի Արեգ 17-ին համարժեք հուլյան տոմարի Հոկտեմբերի 1-ին, Սեպտեմբերի 30-ին, 28-ին և 26-ին: Թերևս կարելի է մտածել, որ Արեգ 15 և 17 ամսաթվերից մեկն ու մեկը գրչական սխալ է է-ի և Ե-ի, սակայն դժվար է նախապատվություն տալ մեկին կամ մյուսին, որովհետև երկու ամսաթվերն էլ առկա են անկախ բնագրերում: 939 և 4698 թվահամարների ձառնումներն Արեգ 15-ի նշումը քաղել են 12-րդ դարի 10-ական - 30-ական թվականների մի բնագրից, որտեղ Դավիթ



Դվինեցու հիշատակի օրն էր Արեգ 15-ը և նրա հուլյան համարժեքներն էին Հոկտեմբեր 2-ը և 1-ը, ինչպես և Սեպտեմբեր 29-ը և 27-ը:

4437 թվահամարի ծառուցն Արեգ 27 ամսաթիվը վերցրել է 12-րդ դարի 2-րդ կեսի որևէ բնագրից թերևս ծառուցից, որտեղ գրանցվել է Արեգ 27-ը, որը համարժեք էր հուլյան տոմարի Հոկտեմբեր 2-ին և Սեպտեմբեր 30, 28 և 26-ին:

Վերջապես 4506 թվահամարի ճառուցն իր նյութերը նույնպես քաղել է 12-րդ դարից սկզբների մի ծառուցից, որտեղ Դավիթ Դվինեցու հիշատակի օրը ընկել է Արեգ 14-ին համարժեք հուլյան տոմարի Հոկտեմբեր 1-ին, ինչպես և Սեպտեմբեր 29, 28 և 26-ին: Այսպիսով Դավիթ Դվինեցու հիշատակի օրը հաստատապես տոնվել է վաղ շրջանում, բայց նրա տոնական օրվա մասին չունենք որևէ ամսաթվային նշում: Հավանաբար 11-րդ դարում Դավիթ Դվինեցու տոնական օրը մտավ տոնացույց և դրվեց Սուրբ Խաչից հաշված 16-րդ օրը, Երկուշաբթի, իսկ 12-րդ դարի ընթացքում ստացավ Արեգ 23, 17, 15, 27 և 14 ամսաթվերը, որոնք փոխանցվեցին հետագայում ընդօրինակված Տոնացույցերին, ծառուցներին և Յայսմավուրքներին ու հասան մեր օրերը:

Ինչ վերաբերվում է Յովսեփի նոր վկայի հիշատակի օրվան, ապա նա նահատակվել է 1170 թ. Հունիս 19-ին, որը ստացել է Հայոց անշարժ տոմարի Մարգար 12-ի համարժեքը: Սակայն նրա հիշատակի օրը ներսես Շնորհալիս միացրել է Դավիթ Դվինեցու տոնի օրվա հետ և նշել են Ս. Խաչից հաշված 16-րդ օրը մինչև 14-րդ դարի սկզբները: Այդ ընթացքում Հունիս 19-ի ամսաթիվը կորցրել է իր նախնական իմաստը, որովհետև տոնվել է Սեպտեմբեր 29 ± 3 օր երկուշաբթի: Իսկ հետագայում հանել են տոնացույցից: Յովսեփի հիշատակի օրը պահպանվել է Յայսմավուրքի խմբագրությունների մեջ: Հետագայում Հովսեփի վկայի հիշատակի օրը տեղայնացվեց և նշվեց միայն Հավուց Թառում:

\*\*\*

Հայոց հնագույն տոնացույցերը Քրիստոսի 72 աշակերտների հիշատակի օր են սահմանել Սուրբ Խաչից կամ Խաչվերացից հաշված 20-րդ օրը, այն է՝ Սուրբ Խաչից 3-րդ կիրակիից հետո եկող շաբաթ օրը և ձևակերպել են հետևյալ ձևով.

«էջ (շաբաթ). իւթանասուն և Բ առաքելոցն, Յակովբայ եղբաւրն Տեառն և Կղէոպեայ ազգականին Տեառն և այլոցն»<sup>1</sup>:

Հայոց տոնացույցերի հետագա խմբագրություններում ևս 72 առաքյալների հիշատակի օրը փոփոխություններ չի կրել<sup>2</sup>:

2092 թվահամարի գրչագրում ավելացվել է Ահեկանի 2-ի ամսաթիվը, այն է՝ «Շաբաթ. ՀԲ առաքելոցն... Յահկի Բ» (էջ 229ա): Միայն շաբաթ օրվա նշումով ունեն 72 առաքյալների հիշատակի օրը մի խումբ ճառուցներ<sup>3</sup>:

Հայոց անշարժ տոմարի կառուցվածքով կազմված ճառուցներն ունեն հետևյալ ձևակերպումները. «Ահկի (Ահեկի) Բ. ՀԲ առաքելոցն»<sup>4</sup>: Իսկ 940 թվահամարի ծառուցը 72 առաքյալների հիշատակի օրը կանոնել է. «Ապրել Թ եւ յահեկի Բ»-ի՝ իսկ (45) համարի տակ: Հայոց Յայսմավուրքների խմբագրությունների մեծ մասը 72 առաքյալների հիշատակի օր է սահմանել Ա-

հեկանի 2 և Ապրիլ 9-ը կանոնի տակ<sup>1</sup>: Միայն Գրիգոր Անավարզեցու խմբագրած Յայսմավուրքի մեջ 72 առաքյալների հիշատակի օրը դրել է Հունվար 4 և Քաղոց 27-ի տակ: Ասենք նաև, որ Մ. Ավգերյանը «կատարումն սուրբ ՀԲ աշակերտաց Քրիստոսի» ձևակերպմամբ բերել է Ապրիլ 9 կամ Մեհկի 2-ը՝ հայոց համար, իսկ հունաց՝ Հունվար 4-ի նշումները<sup>2</sup>:

Հայոց առանձին ճառուցներ 72 առաքյալների համար ունեն տարբեր ամսաթվային տվյալներ: Այսպես, 4514 թվահամարի ծառուցը տվել է. «Յահկի ԻԲ. Սուրբ ՀԲ առաքելոյն (ներքին լուսանցքում շաբաթ օրվա նշումով)» (էջ 354բ): Այսպիսին են նաև 939 թվահամարի գրչագրի տվյալները (էջ 470բ): 4698 թվահամարի ծառուցն ունի. «Շաբաթ. Ահկի Ի Բ. Սուրբ առաքելոցն...» (ներքին լուսանցքում՝ եօթանասունից) (էջ 282ա): Այն կամ Ահեկանի 22 է կամ 2: Վերջինս ավելի հավանական է որովհետև թվանշանին վերաբերվող նշանը դրվել է միայն 2-ի վրա: 6235 թվահամարի գրչագիրը վկայել է. «Ահկի Գ. ՀԲ առաքելոց...» (էջ 80բ): Իսկ 4977 (էջ 86բ), 4506 (էջ 367բ), թերևս 4698 (էջ 282ա) գրչագրերն ունեն Ահեկանի 2-ի նշումները ինչպես և ներքին լուսանցքում շաբաթ օրվա:

Այսպիսով 72 առաքյալների հիշատակի օրվա համար ունենում ենք երեք ամսաթվային նշում այն է՝ Ահեկի 2, 3 և 22, որոնցից Ահեկանի 2-ը հայոց անշարժ տոմարի ամիս-ամսաթիվ է համարժեք Ապրիլ 9-ին: Այն տոնացույցային եղանակով չի առաջացել, որովհետև Ահեկանի 2-ը համադրելով Սուրբ Խաչից հաշված 20-րդ օրվա հետ ստանում ենք 1167 թ., 1174 թ., 1181 թ. և 1188 թ. մինչդեռ Ահեկանի 2-ը գրանցվել է ավելի վաղ գրված ճառուցներում, որոնք տրվել են հայոց անշարժ տոմարի կառուցվածքով:

Ահեկի 3 և 22 ամսաթվերն առաջացել են հայոց տոնացույցային եղանակով: Ահեկի 3-ը գալիս է 12-րդ դարի վերջերից և 6235 թվահամարի գրչագիրն այդ տվյալը թերևս, իր նյութերի մի զգալի մասը քաղել է 12-րդ դարի վերջերին գրված ճառուցից: Իսկ 4514 և 939 թվահամարների ճառուցներն իրենց նյութերը հատկապես Ահեկանի 22-ի ամսաթիվը վերցրել են 13-րդ դարի բնագրերից, որովհետև «Հայոց տոնացույցի»-ի հաշվարկները տալիս են հետևյալ արդյունքները.

Ներկա թվական	Հուլյան ամիս	Հուլյան ամսաթիվ	Շաբաթվա օր	Հայոց թվական	Հայոց ամիս	Հայոց ամսաթիվ	Շաբաթվա օր
1245	10	7	7	694	9	22	7
1252	10	5	7	701	9	22	7
1259	10	4	7	708	9	22	7
1266	10	2	7	715	9	22	7

\*\*\*

Սուրբ Խաչի հետ կապված տոնական օրերի քննությունը կատարել ենք առանձին գլխի տակ: Այստեղ ներկայացնենք որոշ տեղեկություններ Խաչգիւտի մասին:

Հայոց հնագույն տոնացույցերը տալիս են հետևյալ վկայությունները.

ա) «Զկնի Խաչին է երորդ կիրակէ]. Խաչգիւտ է և կամ ուր ամիսն բերէ, Մարերի փէ»<sup>3</sup>:

բ) «Եւթներորդ] կիրակէ]. Խաչգիւտ է կամ ուր ամիսն բերէ, Մարերի Ի փ»<sup>4</sup>:

1 Ձեռ. № № 759, էջ 173բ, 179, էջ 539ա-բ:

2 Տե՛ս Ձեռ. № № 752, էջ 173ա, 5667, էջ 138բ, 7203, էջ 82ա-բ, 9838, էջ 179ա, 4164, էջ 206ա և այլն:

3 Տե՛ս Ձեռ. № № 7741, էջ 407ա, 4107ա, 4107, էջ 762, 4628, էջ 282ա և այլն:

4 Տե՛ս Ձեռ. № 832, էջ 93բ, Վեճեսիկի 639 թվահամարի գրչագիր, Ս. Ընթացիկ, Եջ. աշխ., էջ 623-624:

1 Տե՛ս Ձեռ. № 3082, էջ 395ա, 179, Վեճեսիկի 189 գրչագիր, 2695, էջ 93բ, 7530, էջ 131բ, 7433, էջ 284ա և այլն:

2 Տե՛ս Մ. Ավգերյան, Լիակատար Վարք և վկայություն սրբոց, Բ. Չ, էջ 346-375:

3 Ձեռ. № 759, էջ 174բ:

4 Ձեռ. № 179, էջ 539բ:



1.

Ներկա թվական	Հուլյան ամիս	Հուլյան ամսաթիվ	Ծաբաթվա օր	Հայոց թվական	Հայոց ամիս	Հայոց ամսաթիվ	Ծաբաթվա օր
1284	10	15	1	733	10	10	1
1291	10	14	1	740	10	10	1
1298	10	12	1	747	10	10	1
1305	10	10	1	754	10	10	1

2.

Ներկա թվական	Հուլյան ամիս	Հուլյան ամսաթիվ	Ծաբաթվա օր	Հայոց թվական	Հայոց ամիս	Հայոց ամսաթիվ	Ծաբաթվա օր
1256	10	29	1	705	10	17	1
1263	10	28	1	712	10	17	1
1270	10	26	1	719	10	17	1
1277	10	24	1	726	10	17	1

3.

Ներկա թվական	Հուլյան ամիս	Հուլյան ամսաթիվ	Ծաբաթվա օր	Հայոց թվական	Հայոց ամիս	Հայոց ամսաթիվ	Ծաբաթվա օր
1228	10	29	1	677	10	10	1
1235	10	28	1	684	10	10	1
1242	10	26	1	691	10	10	1
1249	10	24	1	698	10	10	1

Հաշվումները ցույց են տալիս, որ Հայոց 727 թվականին ընդօրինակված 759 թվահամարի Տոնացույցը Մարերի 17-ի ամսաթիվը քաղել է 1256 թ., 1263 թ., 1270 թ. և 1277 թ. գրված նախագաղափար մի տոնացույցից կամ պարզապես գրչագրում այդ մոլծուկը կատարել է գրիչը նկատի ունենալով Հայոց 726 թ. (1277 թ.) հաշվարկի տոնի օրը, երբ Մարերի 17 (= Հոկտեմբեր 24) = Կիրակի:

Այդ ամիս-ամսաթիվը տալիս է հաշվերացի 7-րդ կիրակին համարժեք Հայոց շարժական տոմարի տվյալ: Միաժամանակ Հայոց անշարժ տոմարի (= Մարերի 10-ի) ամիս-ամսաթվային իրողությունն է բացահայտվում, երբ «Հայոց տոնացույց»-ի միջոցով հաշվարկված տվյալները համադրում ենք 12-րդ դարում գրված ճառագանքների վկայությունների հետ: Հաշվումները ցույց են տալիս, որ հաշվերացից հաշված 7-րդ և 5-րդ կիրակիներին Մարերի 10-ը համընկել է համապատասխանորեն 1228 թ., 1235 թ., 1242 թ., ու 1249 թ., ինչպես և 1284 թ. 1291 թ., 1298 թ. ու 1305 թ., երբ Մարերի 10-ը արդեն գրանցվել էր 12-րդ դարի կեսերին գրված ճառագանքում, իբրև Հայոց անշարժ տոմարի ամիս-ամսաթիվ համարժեք հուլյան տոմարի Մայիսի 17-ին:

հաշվարկի տոնը հայոց տոնացույց մտավ հավանաբար 11-րդ դարում և դրվեց հաշվերացից հաշված 7-րդ կիրակի, թեև 5-րդ կիրակին ևս փաստագրված է և վերածվեց շարժական տոնի: 12-րդ դարի բնագրերը վկայում են Մարերի 10-ը և նրա հուլյան համարժեքը Մայիսի 17-ը, իբրև անշարժ տոնական օր, իսկ 13-րդ դարի տոնացույցում առկա է Հայոց շարժական տոմարի Մարերի 17-ը, որը համադրվել է Հոկտեմբերի 29, 28, 26 և 24-ի կիրակիներին:

գ) «Զ կիրակի է. հաշվարկ է»<sup>1</sup>: Հասկացիր հաշվերացից հաշված 7-րդ կիրակին: Հետագայում ընդօրինակված բոլոր տոնացույցերը հաշվարկի տոնի օրը դրել են Սուրբ հաշից հաշված 7-րդ կիրակի, միաժամանակ ունեն ամսաթվային նշումներ և տարբեր խմբագրություններ: Այսպես, 5667 թվահամար գրչագիրը գրել է. «Եւթն(երորդ) կիրակի է, Մարերի Ժ եւ Մայիս ի Ժ է, հաշվարկ է» (էջ 146ա): Նույն ձևակերպումն ենք գտնում 5436 թվահամարի Տոնացույցի խմբագրության մեջ (էջ 190ա):

9838 թվահամարի ձեռագրում կարդում ենք. «է կիրակի է. Մարերի Ժ, հաշվարկ է» (էջ 180ա): Իսկ 2031 թվահամարի գրչագրում գրված է. «Վեցերորդ կիրակի՝ հաշվարկ է, Մարերի Ժ և Հոկտեմբեր Ի է (27)» (էջ 116ա): Այստեղ բերվել է Հայոց անշարժ տոմարի Մարերի 10-ը և - Հոկտեմբերի 27-ը, որոնք անկասկած իրար համարժեք չեն և Մարերի 10-ին և նրան համադրելի Հոկտեմբերի 27-ին երբեք հաշվարկի տոնը չի համընկել: Սեպտեմբերի 27-ին խաչգիտի տոնն էր, երբ հաշվերացի տոնը կատարել են Սեպտեմբերի 15-ին ընկնող կիրակին: 4164 (էջ 208ա), 4874 և 8112 (էջ 69ա) թվահամարների տոնացույցերը այդ տոնի համար ունեն միայն 7-րդ կամ 6-րդ, որի տակ հասկացել են 7-րդ կիրակին: Այլ խոսքով բոլոր տոնացույցերն խաչգիտի տոնը դրել են հաշվերացից հաշված 7-ից կիրակին, որը ընկել է Հոկտեմբեր 26 ± 3 օր, այն է՝ Հոկտեմբեր 23-29-ի կիրակիներից մեկը նայած տարի: Բացառություն է կազմում 2092 թվահամարի Տոնացույցի խմբագրությունը:

Այնտեղ գրված է. «Մարերի Ժ. հաշվարկ է. ... եւ ապա կիրակի է հաշվարկ է» (էջ 229ա): Բայց այդ տողերը գրել է Վարագ հաշից հաշից հաշից կիրակին, որը փաստորեն 4-րդ կիրակին է հաշվերացից հաշված: Այն տոնի տեղափոխման անհաջող փորձ է, որովհետև Հետագա գրված տոնացույցերը չեն արձագանքել նրան, թեև ճառագանքի մի խումբ հաշվարկի տոնը դրել է հաշվերացից հաշված 5-րդ կիրակի: Այսպես 4514 և 939 թվահամարների գրչագրերը նշել են. «Մարերի Ժ. Գիւտ Սուրբ հաշին», իսկ ներքին լուսանցքում՝ «Հինգերորդ կիրակի է Գիւտ Սուրբ հաշին» (էջ 360ա և 103բ-104բ): 7741 թվահամարի ճառագանքն ունի «Կիրակի է. Գիւտ հաշին, որ յերուսաղէմ», իսկ ներքին լուսանցքում՝ «Մարերի Ժ. հաշվարկ է: Այս տեղս խառն է, տարոյն շրջանն (ա) իւր կու բերէ, դու յանսխալ յամսոյ... (եւ ի ) կիրակի տաւնէ» (էջ 413ա-բ): Բացառությունը անորոշ է, սակայն հասկանալի: Այնտեղ փաստորեն ասվում է, որ հաշվերացից հաշված 5-րդ կիրակիի ամսաթիվերին, այն է՝ Հոկտեմբեր 12 ± 3 օր պետք է տոնել նայած տարի: հաշվարկից հաշված 5-րդ կիրակի են փաստել նաև 4977 (էջ 88ա), 4107 (էջ 775), 939 (էջ 477բ), 4698 (էջ 286ա) գրչագրերն երբեմն տալով նաև Մարերի 10-ը: Հայոց անշարժ տոմարի ամիս-ամսաթիվերով տրված ճառագանքն ունեն հետևյալ ձևակերպումները: Ըստ 832 թվահամարի ճառագանքի. «Մարերի Ժ. Գիւտ Սուրբ հաշին որ յերուսաղէմ. ...» (էջ 95բ-96բ): Համարժեք տեղեկություն է տալիս Վենետիկի 639 թվահամարի գրչագիրը: 940 թվահամարի ճառագանքը ՄՁ համարի տակ գրել է. «Մայիս Ժե (ուղղել՝ Ժ է) եւ Մարերի Ժ. Գիւտ Սուրբ հաշին յերուսաղէմ, ձեռն դշխոյ Հեղինեայ»: Իսկ 2948 և 6235 (էջ 83ա) թվահամարի ճառագանքն ունեն «Մարերի ի տասնն. Գիւտ Սուրբ հաշին որ յերուսաղէմ»: Վերջապես 3266 թվահամարի ճառագանքը ձևակերպել է. «հաշվարկին ի Մարերի Ժ» (էջ 137բ):

Հայոց Յայսմավուրքների խմբագրությունները հաշվարկի օրը միանշանակ դրել են Մարերի 10-ին և Մայիսի 17-ին կամ հակառակը<sup>2</sup>: Այլ խոսքով հաշվարկի տոնի կապակցությամբ ունենք Հայոց անշարժ տոմարի Մարերի 10-ը և Հայոց շարժական տոմարի Մարերի 17-ը: Այն

1 Ձեռ. № 752, էջ 174ա:

2 Տե՛ս Ձեռ. № № 3082, էջ 396ա, 179, 2695 էջ 127բ, 9585, էջ 223ա, 7433, էջ 322բ և այլն:

Սուրբ Սարգսի հիշատակի օրվա մասին հայկական սկզբնաղբյուրների տված տեղեկությունները բազմաբնույթ են և հնարավորություն են տալիս լուծել մի քանի խնդիրներ, որոնք կարևոր են ինչպես Հայոց տոնացույցի զարգացման պատկերը պարզելու, այնպես էլ նրա վկայաբանության թարգմանության ժամանակը որոշելու տեսանկյուններից: Բերենք այդ վկայությունները և վերլուծենք նորագույն մեթոդների ընձեռած հնարավորություններով:

Հայոց հնագույն ճաշոց-տոնացույցերի խմբագրությունները չունեն Սուրբ Սարգսի տոնի կանոնը: Բացառություն է կազմում 5479 թվահամարի Ճաշոցը, որը Հայոց ճաշոցների 2-րդ խմբագրության ուշ շրջանի ընդօրինակություն է, որտեղ առկա է Հայոց շարժական տոնացույցի հետևյալ կանոնը. «Յուրաքանչյուրի պահոցն շաբաթ աւր. Յիշատակ է սրբոյն Սարգսի գաւրաւարի և այս կանոն կատարի...» (էջ 22բ-23բ): Այս կանոնը հնագույն ճաշոցի խմբագրություններից մեկի մեջ է անցել, ինչպես կտեսնենք, 8-րդ դարից հետո խմբագրված տոնացույցերից:

Ուշագրավ է, որ Սուրբ Սարգսի հիշատակի օրը Հովհան Օձնեցու Ճաշոց-Տոնացույցում դրվել է Առաջավորի Բարեկենդանի կիրակիից հետո եկող շաբաթ օրը, իբրև շարժական տոն, և հետագայում ոչ մի փոփոխություն չկրեց, միայն ստացավ Հայոց շարժական տոմարի ամսաթիվը:

Հնագույն Տոնացույցեր ունեն հետևյալ տվյալները: 759 թվահամարի տոնացույցում գրված է. «էջ (շաբաթ). Սրբոյն Սարգսի գաւրաւար և որդւոյ նորա Մարտիրոսի»: Նկատի է ունեցել Առաջավորի կիրակիից հետո եկող շաբաթ օրը կամ Բուն Բարեկենդանից ետ հաշված 16-րդ օրը: 179 թվահամարի գրչագիրը տվել է նույնարժեք տեղեկություն միայն ավելացրել է Հունվարի 30-ի հուլյան ամիս-ամսաթիվը (էջ 540բ): Համարժեք տեղեկություններ են տալիս մեզ Հայտնի բոլոր տոնացույցերի հետագա խմբագրությունները<sup>1</sup>:

Միայն 2092 թվահամարի Տոնացույցի խմբագրությունը ավելացրել է Հունվար 31-ի ամսաթիվը:

Հայոց անշարժ տոմարի ամսաթիվերի շարքով կազմված ճաշոցներն ունեն հետևյալ տվյալները. «Մարերի ԻԳ. Սարգսի գաւրաւարի...» (էջ 97ա-99ա): Զուգահեռ վկայություն ունի Վենետիկի 639 և 6235 (էջ 109բ) թվահամարների գրչագրերը: Ասենք որ Հայոց անշարժ տոմարի Մարերի 23-ին համարժեք Մայիս 30-ին երբեք Սարգիս զորավարի հիշատակի օր չեն կատարել, ուստի այդ ամսաթիվը մեխանիկորեն վեր է ավելում Հայոց շարժական տոմարի ամիս-ամսաթիվի, որը կարելի է համադրել Սարգսի հիշատակի օրվա հետ, ինչպես անշարժ օրվա, այն է՝ Հունվարի 31-ի, այնպես էլ Առաջավորի կիրակիից հետո եկող շաբաթ օրվա հետ, որպես նրա շարժական տոնի օրվա Հայոց շարժական տոմարի ամիս-ամսաթիվ:

Գրիգոր Վկայասերի Տոնանամակի խմբագրությունը Սարգիսի զորավարի և նրա որդի Մարտիրոսի հիշատակի օր է սահմանել Հունվարի 31-ը<sup>2</sup>: Նույնարժեք վկայություն կա 940 թվահամարի Ճաշոցի ԺԷ (17) համարի տակ: Հետագայում ընդօրինակված ճաշոցների խմբագրությունները Սարգիս զորավարի հիշատակի օրը կանոնել են Առաջավորի Բարեկենդանի կիրակիից հետո եկող շաբաթ օրը<sup>3</sup>: Միայն 4977 թվահամարի գրչագրի Հայոց ամսաթիվերով Ճաշոցում տալիս է նոր ամսաթվային տվյալ, այն է... «Մարերի ԺԴ (14). Սրբոյն Սարգսի...» (էջ 89ա): Այս ամսաթվային նշումը ևս Հայոց շարժական տոմարից է գալիս ակնհայտորեն:

Հայոց Յայսմավուրքի համառոտ խմբագրություններից մեկը գրում է. «Նոր(ին Արաց) ԻԳ. Սարգսի գաւրաւարի... ԼԱ (Յունուարի)»<sup>1</sup>:

Ըստ երևույթին 940 թվահամարի Ճաշոցի հուլյան ամսաթվային տվյալը վերցրել է 3082 թվահամարի Յայսմավուրքի խմբագրությունից: Հայոց Յայսմավուրքի մյուս խմբագրությունները Սարգսի հիշատակի օրը կանոնել են Արաց 24 (= Հունվար 31) կանոնի տակ<sup>2</sup>:

Ակնհայտորեն Արաց 24-ը Հայոց անշարժ տոմարի ամիս-ամսաթիվ է, որի հուլյան համարժեքը իսկապես Հունվարի 31-ն է:

Փարիզի 178 թվահամարի (միկրոֆիլմ N° 879) ժողովածուի ԽԲ (42) համարի տակ գրված Սարգսի վկայաբանության մեջ ասվում է. «Յամսեանն Յունուարի ի կատարման աւուրն ԼԱ»:

Մշո տոնական ճաշոցների ՀԲ (72) թվահամարի վերնագրի տակ կարդում ենք. «Մարերի Ի Ի (20). վկայաբանութիւն սրբոյն Սարգսի գաւրաւարի եւ որդւոյն նորա, որոյ անուն կոչի Մարտիրոս, որ թարգմանի վկայ և այդոց գինուորաց, որք ընդ նոսա վկայեցին» (էջ 278): Այստեղ մենք գործ ունենք նոր ամսաթվային տվյալների հետ, որը համադրելի է կամ նրա տոնի հետ կամ վկայության օրվա՝ Հունվարի 31-ի:

Մ. Ավգերյանը բերել է Սարգսի վկայաբանության որոշ ամսաթվային տվյալներ, այն է՝ ըստ Հայոց Յայսմավուրքների՝ Հունվարի 31, ըստ Յունաց՝ Հունվարի 2 և ըստ Լատինացոց՝ Փետրվար 2Գ:

Այսպիսով ունենք Սարգիս զորավարի նահատակության ամիս-ամսաթիվը, այն է՝ Հունվար 31-ը և նրա տարբերակը՝ Հունվարի 30-ը, ինչպես և Հայոց շարժական տոմարի Մարերի 23, 20 և 14-ը, որոնք կսկսենք քննարկել քիչ հետո: Իսկ այժմ տանք Հայոց անշարժ տոմարի ամսաթիվը Արաց 24-ը, որը համարժեք է դրվել Հունվարի 31-ին, իսկ Արաց 23-ը՝ Հունվարի 30-ին: Ակնհայտ է, որ Հայոց բնագրերի տվյալները պետք է համադրել կամ Սարգսի նահատակության կամ տոնի օրերի հետ՝ կիրառելով Հայոց տոմարական և տոնացույցային եղանակները և դրանցից ընտրել հավանական տարբերակը, որոնք չեն հակասում բնագրերի տեղեկություններին: Ասենք, որ Հունվարի 30-ի տարբերակը չենք նայում, որովհետև այն առաջացել է Հունվարի 31-ից 13-րդ դարում: Կիրառենք Հայոց տոմարական եղանակը.

- 1. Արաց 24 = Հունվար 31, որտեղից Արաց 1 = Հունվար 8 = 429-432 թթ.: Հիշյալ ամսաթիվը Հայոց անշարժ տոմարից է գալիս և ցույց է տալիս Սարկավազադի տոմարի սկզբնական տարիները, որի հետևանքով հիշյալ Հայոց տոմարի ամսաթիվը դուրս ենք գցում քննությունից:
- 2. Մարերի 23 = Հունվար 31, որտեղից Մարերի 1 = Հունվար 9 = 905-908 թթ.
- 3. Մարերի 20 = Հունվար 31, որտեղից Մարերի 1 = Հունվար 12 = 893-896 թթ.
- 4. Մարերի 14 = Հունվար 31, որտեղից Մարերի 1 = Հունվար 18 = 869-872 թթ.

Քննարկված Հայոց շարժական տոմարի ամսաթիվերը կարող էին առաջանալ հիշյալ տարիներին, եթե Սուրբ Սարգսի հիշատակի օրը տոնեին անշարժ տոնական օրով: Սուրբ Սարգսի հիշատակի օր է սահմանվել Առաջավորի Բարեկենդանի կիրակիից հետո եկող շաբաթ օրը, որը համադրելով Մարերի 23-ի, 20-ի և 14-ի հետ կստանանք ըստ «Հայոց տոնացույց» ծրագրի հաշվումների հետևյալ տարբերակը.

1 Տե՛ս Ձեռ. N° 3082, էջ 393բ:  
2 Տե՛ս Ձեռ. N° 179, 2695, էջ 22բ, 9585, էջ 135ա, 7529, էջ 125ա, 4741, էջ 186ա, 7433, էջ 216բ և այլն:  
3 Մ. Ավգերյան, Լիակատար Վարք և վկայութիւն սրբոց Բ. Բ, էջ 3-65:

1 Տե՛ս Ձեռ. N° N° 752, էջ 153ա, 767, էջ 128բ, 2092, էջ 231ա, 5667, էջ 106բ, 7203, էջ 22ա-բ, 9838, էջ 155ա-բ, 4164, էջ 137բ, 4874, էջ 169ա-բ, 5398, էջ 112ա և այլն:  
2 Ձեռ. N° 979, էջ 3բ և 54ա-բ:  
3 Տե՛ս Ձեռ. N° N° 4514, էջ 34բ, 936, էջ 141ա, 7741, էջ 49ա, 4916, էջ 70բ, 4107, էջ 87, 4438, էջ 47բ, 4698, էջ 35ա, 4459, էջ 69բ, 4962, էջ 130ա-բ, 5436, էջ 155ա և այլն:

1.

Ներկա թվական	Հուլյան ամիս	Հուլյան ամսաթիվ	Ծաբաթվա օր	Հայոց թվական	Հայոց ամիս	Հայոց ամսաթիվ	Ծաբաթվա օր
882	2	3	7	330	10	20	7
896	1	31	7	344	10	20	7
910	1	27	7	358	10	20	7
924	1	24	7	372	10	20	7

2.

Ներկա թվական	Հուլյան ամիս	Հուլյան ամսաթիվ	Ծաբաթվա օր	Հայոց թվական	Հայոց ամիս	Հայոց ամսաթիվ	Ծաբաթվա օր
879	2	7	7	327	10	23	7
893	2	3	7	341	10	23	7
903	1	31	7	355	10	23	7
921	1	27	7	369	10	23	7
935	1	24	7	383	10	23	7

3.

Ներկա թվական	Հուլյան ամիս	Հուլյան ամսաթիվ	Ծաբաթվա օր	Հայոց թվական	Հայոց ամիս	Հայոց ամսաթիվ	Ծաբաթվա օր
797	2	18	7	245	10	14	7
902	1	23	7	350	10	14	7
916	1	20	7	364	10	14	7

Մարերի 20-ի ամիս-ամսաթիվը թե Հայոց տոմարական եղանակով, թե Հայոց տոնացույցային եղանակի մի տարբերակով տալիս է 896 թվականը: Քանի որ այդ ամիս-ամսաթիվը վկայվել է Մշո տոնական ճառընտիրի Սուրբ Սարգսի վկայաբանության վերնագրի մեջ, ապա կարելի է պնդել, որ այդ վկայաբանությունը թարգմանել է Ատոմի վանքի վանահայր Գագիկը և մտքրել իր Ատոմագրի մեջ, որից և վերցրել է Մշո տոնական ճառընտիրի ընդօրինակողը: Միաժամանակ ակնհայտ է, որ Սողոմոն Մաքինացու Տօնականի ներկա տարբերակը գալիս է 9-րդ դարի վերջի - 10-րդ դարի սկզբների խմբագրությունից: Մարերի 23-ի ամիս-ամսաթիվը, թե Հայոց տոմարական եղանակով, թե Հայոց տոնացույցային եղանակի տարբերակով Համարժեք են 907 թվականին, ուստի Հայոց անշարժ տոմարի կարգով գրված ճառացիները Մարերի 23-ի Հայոց շարժական տոմարի ամիս-ամսաթիվը քաղել են 9-րդ դարի վերջերի - 10 -րդ դարի սկզբներին գրված ճառացից և վեր են ածել Հայոց անշարժ տոմարի ամիս-ամսաթիվի, մանավանդ ինչպես նշել ենք վերևում, Հայոց անշարժ տոմարի Մարերի 23-ի Համարժեք Մայիս 30-ին, երբևէ Սարգիս զորավարի հիշատակի օր չեն կատարել: Պակաս կարևոր է Մարերի 14-ի Հայոց շարժական տոմար ամիս-ամսաթիվը, որը Հայոց տոմարական եղանակով տալիս է 869-872 թթ., իսկ Հայոց տոնացույցային եղանակի մի տարբերակով 8-րդ դարի վերջերը, իսկ երկու տարբերակով 10-րդ դարի սկզբները: Այն ինչպես և մյուս ամիս - ամսաթիվերով ստացված տարբերակները, ցույց են տալիս, որ Սուրբ Սարգսի հիշատակի օրը Հայոց ճառացի-Տոնացույց է մտքրել և անշարժ տոնից վեր է ածել շարժականի դնելով Առաջավոր կիրակիից հետո եկող շաբաթ օրը Հով-

հան Օձնեցին, քանի որ 8-րդ դարի վերջին տոնացույցի նոր խմբագրությունն չի նշմարվում: Այսպիսով Սուրբ Սարգսի հիշատակի օրը մինչև 8-րդ դարի սկզբները հավանաբար նշել են անշարժ տոնական օրով Հունվարի 31-ին, իսկ 8-րդ դարի 20-ական թվականներին Հովհան Օձնեցին Սուրբ Սարգսի հիշատակի օրը մտքրեց Հայոց տոնացույց և վերածեց շարժական տոնի: Սուրբ Սարգսի վկայաբանությունը թարգմանեց Ատոմի վանքի վանահայր Գագիկը, որը նրա հիշատակի օրը վերածեց Հայոց շարժական տոմարի Մարերի 20-ի: Հայոց ճառացիների հնագույն խմբագրություններից է գալիս նաև Մարերի 23-ը և 14-ը, որոնք հաշվել են վաղ շրջանում Հայոց շարժական տոմարի ամիս-ամսաթիվերով և փոխանցվել ուշ շրջանում ընդօրինակված ճառացիներին և հասել մեր օրերը:

\*\*\*

Հայոց սրբերի մեջ իր ուրույն տեղն ունի Վահանը՝ Գողթնի իշխանը: Ըստ Հայոց սկզբնաաղբյուրների տեղեկությունների նրա նահատակությունը տեղի է ունեցել Հայոց 186 թվականին (= 738 թ.), Ռուժուփ քաղաքում «ի մեծու շաբաթին Զատիկին երեքշաբթի»<sup>1</sup>:

Գրիգոր Նյաթեցու խմբագրած Յայսմավուրքում առկա է երկուշաբթի օրվա տարբերակը: Քանի որ հիշյալ ժամանակ Զատիկը կատարվել է Մարերի կամ Մարգաց որևէ ամսաթիվում, ուստի Հայոց թվականին պետք է գումարել 552: Վահան Գողթնեցու հիշատակի օրը Յայսմավուրքներում կանոնվել են Հայոց անշարժ տոմարի Արեգ 20 = Մարերի 28-ին, որին կանոնադառնանք փոքր ինչ հետո: Այժմ ներկայացնենք Հայոց տոնացույցերի և ճառացիների տվյալները:

Հայոց հնագույն տոնացույցերի խմբագրությունները Վահան Գողթնեցու հիշատակի օրը կանոնել են Հունվարի 13-ի և Առաջավորի Բարեկենդանի կիրակիի միջև դնելով սրբերի թվարկման շաբթի 5-րդ Համարի տակ, իսկ հետագայում, երբ Հովհաննես Մկրտչի Նոր տոնական օր սահմանվեց այդ Հատվածում հիմնականում տեղափոխվեց 6-րդ Համարի տակ, թեև երբեմն պատահում է նաև 5-րդը, որը հետևանք է նախորդ սրբի կանոնի տեղափոխմանը 6-րդ կանոնի տակ<sup>2</sup>:

Մեզ հանդիպած տոնացույցերի խմբագրությունների մեջ միայն 2031 թվահամարի գրչագիրն ունի ամսաթվային նշում, այն է՝ «Ապա Վահանայի Գողթնացույնի Յ(ո)ւնվ(ար) ԺԶ» (էջ 16բ):

Ասենք, որ Վահան Գողթնեցու հիշատակը սովորաբար կատարվել է Հունվարի 21-24-ի ամսաթիվերից մեկում, երբ Հունվար 13 - Առաջավորի կիրակիի միջև տոնելի օրերը բավարարում էին սրբերի հիշատակները առանձին առանձին տոնելու: Տվյալ դեպքում Հունվարի 16-ը այն ամսաթիվերից է, երբ հիշյալ Հատվածում տոնելի օրերը եղել են քիչ և սրբերի հիշատակի երեք կանոն միացրել են և տոնել մեկ օրվա տակ և Վահան Գողթնեցու հիշատակը նշել են 2-րդ օրվա կանոնով:

832 թվահամարի ճառացը գրել է. «Մարգաց Իե. Վահան Գողթան Տեառն...» (էջ 99ա): Համարժեք ամսաթիվ է գրանցել նաև 4438 թվահամարի ճառացը, միայն ներքին լուսանցքում ունի երկուշաբթի օրվա նշումը (էջ 31ա): Վահան Գողթնեցու հիշատակի օրվա համար Մարգաց 27-ի նշումն ունի Վենետիկի 639 թվահամարի ճառացի խմբագրությունը: Նույնարժեք տեղեկություն է տալիս 4916 թվահամարի ճառացը (էջ 51ա-բ):

1 Ձեռ. № № 2695, էջ 83, 4741 էջ 243ա:

2 Տե՛ս Ձեռ. № № 759, էջ 178բ, 179, 752, էջ 151բ, 767, էջ 123բ, 5667, էջ 98բ, 7203, էջ 18ա, 9838 էջ 155ա, 2031, էջ 16բ, 4164, էջ 134ա-բ, 4874, էջ 162ա-բ, 4441, էջ 231բ-232ա, 8112, էջ 63ա-բ, 508, էջ 212բ-213ա և այլն:

Վահան Գողթնեցու հիշատակի օրվա համար Մարերի 25-ի ամիս-ամսաթիվն է տալիս 6235 թվահամարի ծաշոցը, որը դրել է Հունվար 13-ից հետո և Առաջավորի կիրակիից առաջ տոնվող սրբերի տոնելի օրերի 4-րդ կարգում՝ չունենալով Հովհաննես Մկրտչի հիշատակի օրվա նշումը (էջ 99ա): Մարգաց 7-ի նշումն ունի 4977 թվահամարի ծաշոցը (էջ 92 բ):

Միայն Հունվարի 13 - Առաջավոր կիրակիի միջև են դրել՝ 6-րդ շաբթի մեջ Վահան Գողթնեցու հիշատակի օրը 7741 (էջ 36ա), 4107 (էջ 69), 939 (էջ 43ա-բ), 4698 (էջ 28բ) և այլ ճաշոցների խմբագրությունները: 4698 թվահամարի ծաշոցը ունի նաև երեքշաբթի օրվա նշումը: Այլ խոսքով ճաշոցները ունեն հայոց շաբաթական տոմարի ամսաթիվեր, որոնց մի մասը հետագայում վեր են անվել անշաբթի ամիս-ամսաթիվի, որի օրերին երեք Վահան Գողթնեցու հիշատակի օր չի նշվել: Նրա հիշատակի օրը, ինչպես նշվեց, դրվել է Հունվարի 13-ի և Առաջավորի կիրակիի միջև, հիմնականում 5-րդ կարգի տակ, իսկ ուշ շրջանում՝ 6-րդ և կատարվել Հունվար 21-24-ի օրերից մեկում նայած տարի, ուստի վերոհիշյալ ամսաթիվերն արտացոլում են հիմնականում այդ օրվա հայոց շաբաթական տոմարի համարժեքները: Հնարավոր է ենթադրել Մարգաց 7-ի մի տարբերակի դեպքում նաև Վահան Գողթնեցու նահատակության օրվա համարժեք, որի մասին կիսուս ենք քիչ հետո: Հայոց տոմարական և տոնացույցային եղանակը կիրառելի է Միայն Մարգաց 7-ի համար, որը կքննարկենք ստորև: Իսկ այժմ հայոց տոնացույցային եղանակով գտնենք քննարկվող հայոց շաբաթական տոմարի ամսաթիվերի առաջացման ժամանակը:

Վահան Գողթնեցու հիշատակի օրը դնելով Հունվարի 13-ի և Առաջավորի կիրակիի միջև ընկնող 5-րդ կանոնի տակ օրինաչափորեն տոնելու դեպքում Մարերի 25-ը տալիս է՝

ա) 949 թ. (= Հայոց 397 թ.) Հունվար 22 (= Մարերի 25), երկուշաբթի:

բ) 951 թ. (= Հայոց 399 թ.) Հունվար 21 (= Մարերի 25), հինգշաբթի:

Պարզ է, որ Վահան Գողթնեցու հիշատակի օրվա համար Մարերի 25-ն է գրանցվել 949 թ. կամ 951 թ. ուստի 6235 թվահամարի ծաշոցն իր նյութերը քաղել է 10-րդ դարի կեսերի բնագրերից: Բացի այդ հասկանալի է, որ Վահան Գողթնեցու հիշատակի օրը տոնվում էր Հունվարի 13-ի և Առաջավորի կիրակիի միջև 10-րդ դարի կեսերին, ուստի նրա հիշատակի օրը այդ հատվածում դնելը Տոնացույցի 2-րդ խմբագրության արդյունք է, որը կատարվեց 9-րդ դարի 4-րդ քառորդին:

Վահան Գողթնեցու հիշատակի օրը Մարգաց 7-ի նշում է ստացել 998 թ. (= Հայոց 446 թ.) = Հունվար 22 (= Մարգաց 7) = շաբաթ: Պարզ է, որ 4977 թվահամարի ծաշոցն այդ ամսաթիվը վերցրել է 998 թ. գրված մի բնագրից հավանաբար նրա վկայաբանությունից կամ ճաշոցից:

Մարգաց 25-ի և Մարգաց 27-ի ամիս-ամսաթիվերից մեկն ու մեկը 5-րդ կարգի տակ կարող էին առաջանալ իրարից, որպես է-ի և Ե-ի սովորական համարվող գրչական սխալ, բայց հիշյալ ամսաթիվերը տալիս են տարբեր ճաշոցներ և այդ երկու ամսաթիվերի անկախ առաջացումը չի բացառվում, ուստի բերում ենք այդ երկուսի արդյունքները և նրանցից որևէ մեկի ընտրությունը թողնում ընթերցողներին:

Բերենք հաշվումների արդյունքները.

1. ա) Մարգաց 25 = Հունվար 22 = հինգշաբթի = 1069 թ. (= Հայոց 517 թ.):

բ) Մարգաց 25 = Հունվար 22 = երեքշաբթի = 1071 թ. (= Հայոց 519 թ.):

գ) Մարգաց 25 = Հունվար 21 = երեքշաբթի = 1074 թ. (= Հայոց 522 թ.):

2. ա) Մարգաց 27 = Հունվար 22 = երկուշաբթի = 1078 թ. (= Հայոց 526 թ.):

բ) Մարգաց 27 = Հունվար 21 = հինգշաբթի = 1081 թ. (= Հայոց 529 թ.):

գ) Մարգաց 27 = Հունվար 21 = շաբաթ = 1083 թ. (= Հայոց 531 թ.):

Հասկանալի է, որ Վահան Գողթնեցու հիշատակի օրը Մարգաց 25 և 27-ին են եղել 11-րդ դարի 2-րդ կեսի որոշակի տարիների, որտեղից 832 թվահամարի ծաշոցը վերցրել է Մարգաց 25-ը և անշաբթացել տալով բոլորովին այլ հուլյան համարժեք, որի ժամանակ երեք նրա հիշատակի օրը չեն նշել, իսկ Վենետիկի 639 թվահամարի գրչագիրը վերցրել է Մարգաց 27-ը և կրկին անշաբթացրել: Պարզ է, որ Վահան Գողթնեցու հիշատակի օրը շարունակել են տոնել նաև 11-րդ դարում՝ նույն 5-րդ կանոնի տակ:

Հայոց Յայսմավուրքների խմբագրությունները Վահան Գողթնեցու հիշատակի օրը կանոնել են Արեգի 20-ի և Մարտի 28-ի տակ հավանաբար նկատի ունենալով նաև վկայաբանություն այն հաղորդումը, որ նա վկայեց Ջատկին նախորդող երեքշաբթի օրը<sup>1</sup>: Հարկ է նշել, որ 940 թվահամարի ծաշոցը ԽԱ (41) համարի տակ Վահան Գողթնեցու հիշատակի օրը տվել է Մարտի 28 և Արեգի 21 (ուղղել՝ 20) կանոնի տակ: Հայոց անշաբթ տոմարի Արեգի 20-ը հասկանալի պատճառով դուրս ենք գցում քննությունից, իսկ Մարտի 28-ին կամ նրան մոտ ամսաթիվը կարող էր գրանցված լինել իբրև Վահան Գողթնեցու նահատակության օր, որովհետև Ջատկից առաջ ընկնող երեքշաբթին պարբերաբար համընկել է Մարտի 28-ի կամ նրան մոտ ամսաթիվում: Այս դատողությունները հնարավորություն են տալիս բնագրում վկայված Մարգաց 7-ը համարել ինչպես տոմարական, այնպես էլ տոնացույցային եղանակներով:

Հայոց տոմարական եղանակի հաշվումներն են.

1. Մարգաց 7 = Մարտ 28, որտեղից Մարգաց 1 = Մարտ 22 = 736-739 թթ.: Այս թվերից մեկում Վահան Գողթնեցին նահատակվել է:

2. Մարգաց 7 = Մարտ 27, որտեղից Մարգաց 1 = Մարտ 21 = 740-743 թթ.: Այս թվերից մեկում գրվել է նրա վկայաբանությունը:

Բերենք հայոց տոնացույցային եղանակի տվյալները. Ջատկից առաջ ընկնող երեքշաբթի Մարգաց 7-ին եղել են հետևյալ տարիներին՝ հայոց 176 թ. (=728 թ.), հայոց 190 թ. (= 742 թ.) և հայոց 204 թ. (= 756 թ.): Այս տարեթիվերից միայն 190 թ. =742 թ. = Մարգաց 7 (= Մարտի 27) = Ջատկից առաջ ընկող երեքշաբթի: Հնարավոր է, որ Մարգաց 7 (= Մարտի 27 = 742 թ.)-ը գալիս է նախնական բնագրից, երբ նրա վկայաբանությունը թարգմանվեց հայերեն: Այդ մասին առկա է մատենագրական վկայություններ հատկապես Վահան Գողթնեցու վկայաբանության հիշատակարանը և նրա վկայություն կապված Ջատկից առաջ ընկնող երեքշաբթին:

Բերենք այդ տվյալները, որը միատեղել է Ա. Մաթևոսյանը, 5-12-րդ դարերի հիշատակարանների մեջ<sup>2</sup>:

Փարիզի 178 թվահամարի գրչագրում (12-րդ դ.) գրված է. «Գործացաւ այս (Վահան Գողթնեցու վկայաբանությունը - Ռ. Վ.) յաւուրս Շամայ յամիր ումն (կարգա՝ «Մուսնէ» - Ա. Մ), յայնկոյս Եփրատայ գետոյ, ի Ռուծափ քաղաքի: Իսկ յետ եւթն ամի, կրաւնաւորահայրն Աբրահամ, որ եւ Արտավազդ, առնոյր ընդ իւր ոմանս յեղբարցս, եւ իջեալ յԱսորեստանս, հասանէր ի քաղաքն Կաղինիկոս: Անդ ի քաղաքին էջ եւ աւթեւանս արարեալ ի կրաւնաւորանոցին, որ կոչէր Դերման Ջաքէ, որ բազում սիրով ընկալաւ զմեզ: Եւ խրատ տայր որպէսզի մեծ զգուշութեամբ երթիցուք ի տեղին զի մի բուռն անկեալ ի թշնամեացն պատիժս կրեսցուք եւ մահ: Ապա զեղբարս եւ զգրաստոսն անդ թողեալ առեալ ընդ իւր զմի ոմն, եւ զտիւն եւ զգիշերն անցեալ մեծաւ աշխատութեամբ: Ապա ընդ արշալուռսն առաւաւտուն հասանէր ի տեղի կա-

1 Տե՛ս Ձեռ. № № 179, 2695, էջ 83ա, 7530, էջ 123բ, 4741, էջ 243ա, 7433, էջ 273ա և այլն:

2 Հայերեն Ձեռագրերի հիշատակարաններ Ե-ԺԲ դդ., էջ 28-31:

տարմանն: Եւ մտեալ ի վկայարանս սրբոյ նահատակին, երկրպագութիւն եւ գոհութիւն մատուցան Քրիստոսի:

Եւ Աբրահամն (պետք է լինի «Թէոփիլէն» - Ա. Մ.) այն, որ եւ Աբու Ստեփան է, Բագում գթով եւ սիրով ընդառաջեալ մեզ եւ հանգոյց զմեզ ի ձեռն նորա արար մեզ Աստուած մտանել ի սուրբսն: Եւ երկրպագեալ Տեառն ի վկայարանս Սրբոյն Սարգսի: Եւ տեսեալ զեպիսկոպոսն՝ այր ճշմարիտ եւ երկիրդած յԱստուծոյ, եւ բագում սիրով եւ հիացմամբ ընկալաւ զմեզ: Եւ ապա կոչեցեալ զամենայն գիտուն մարդիկն, որք երեւելիք էին ի դրան արքունի որք քաջ տեղեակք էին վկայութեան սրբոյն, յորոց ուսալ հաւաստապէս հոռոմ գրով ետուն մեզ զվկայութիւն քաջ նահատակին:

Եւ սիրով մեծարեալք հրաժարեցաք յեպիսկոպոսէն եւ յայդոցն, եւ աղաւթեալք ի վկայարանի սրբոյ Վահանայ գոհացաք, զողորմութենէն Քրիստոսի: Եւ անտի դարձեալ ընդ գետն եփրատ, եւ առեալ զեղբարսն եկաք ի քաղաքն Ուռհայ, եւ աղաչեալ զեպիսկոպոսն, թարգմանեցաք զգիրսն ի հայ լեզու: Եւ անտի գնացեալք եկաք ի Հայս, մերձ ի տաւն Յայտնութեան եւ գտեալ զեղբարս մեր ողջ եւ խաղաղութեամբ գոհացաք զԱստուծոյ, որ զանարժանութիւնս մեր արժանի արար հանդիպիլ այսմ շնորհի:

Եւ ապա սկսաք պատմագրել սկիզբն առնելով ուստի արժան իսկ էր: Ի նոյն յարելով զվկայութիւն սրբոյ Վահանայ վկայի, ի յորդորումն հաւատացելոց ի փառս եւ ի գովեստ Աստուծոյ, որում պատիւ եւ զաւրութիւն յաւիտեանս յաւիտենից ամէն: Արդ յետ ըմպելոյ զբաժակ պատուհասի աշխարհիս Հայոց ի հարիւր յիսուն եւ երկուք թուականին Հայոց՝ այս գործեցաւ: Եւ զերեսուն եւ զչորք ամս կային ի գերութեանն, մինչեւ ի հարիւր եւ ութսուն եւ վեց ամ թուականին յորում հանդիպեալ վկայութիւն սրբոյ Վահանայ, խոստանալով զտէր Յիսուս Քրիստոս զորդին Աստուծոյ:

Արդ ի ձեռն այս զվկայութեանց, ձեզ հարց եւ եղբարց, ես տառապեալ անձս, եւ հանապազահիւսեալք եւ խորհրդապահ սրբոյ վկային, եւ վերստին պատճառաւ յորդորմամբ գրոցս վկայութեան աղաւթս առնել ի վերայ իմ աղաչեմ, որ զիմ անարժանութիւնս արժանի արար գրել եւ տալ զայս Պատմութիւնս վերջնոց, զի թերևս ձեզ աղաւթիւք գտայց զերծեալ ի վատթարաց դասուէ, եւ որոց ասեն, եթե «եկայք աւրհնեալք Հաւր իմոյ», նոցա արժանի եղելոցն հանդիպիլ արասցէ Քրիստոս Յիսուս, եւ զմեզ զամենայն հաւատացեալքս անուանն իւրոյ, յորում փառք եւ երկրպագութիւն ընդ Հաւր եւ սուրբ Հոգւոյն, յաւիտեանս յաւիտենից, ամէն»:

Երևանի 4803 թվահամարի գրչագրում առկա է վերոհիշյալ բնագրի մի այլ տարբերակ, այն է՝ «գործեցաւ այս յաւուրս ամիր Մուսնէին Շամա, յայնկոյս եփրատ գետոյ, յՌուծափ քաղաքի: Իսկ ետ է ամի հայր վանացն Երաշխաւորի, որոյ անուն Աբրահամ կոչի, առ ընդ իւր եղբարց եւ զառաջացեալ պատանին, որ էր սպասաւոր սրբոյ, և իջեալ յԱսորեստան, և գնացեալ հասեալ ի քաղաքն Ռուծափ, և ի ձեռն Թէոփիլոսին այն, որ և Աբու-Ստեփան կոչէին, երկրպագեալ Աստուծոյ ի վկայարան սուրբ նահատակին: Եւ առեալ գրով զՊատմութիւն սուրբ վկայիս, և եկաք յՈւռհայ, և աղաչեցաք զեպիսկոպոսն թարգմանել զճառս ի հոռոմ գրոց ի հայ գիր: Եւ անտի յարուցեալ եկաք ի վանս Երաշխաւոր յաւուր տաւնի Յայտնութեանն, և ապա սկսեցաք պատմագրեալ զվկայարանութիւն սրբոյն Վահանայ յորդորումն ամենայն հաւատացելոց ի փառս և գովութիւն Աստուծոյ, յորում պատիւ և զաւրութիւն յաւիտեանս, ամէն»:

Արդ յորժամ բաժակն պատուհասի ընգալաւ աշխարհս Հայոց, էր թիւն ի ՃՄԲ և ի ՃՁՁ հանդիպեցաւ վկայութիւն սրբոյն Վահանայ, խոստովանելով յՅիսուս Քրիստոս որդի Աստուծոյ:

Արդ, ի ձեռն այս զվկայութեանց, ձեզ հարց և եղբարց տառապեալ անձս Աբրահամ երեսն անգեալ աղաչեմ առնել վասն իմ աղաւթս առ Տէր, որ զիմ անարժանութիւնս արժանի արար Աստուած, գրել և տալ զայս Պատմութիւն յիշատակի վերջնոց, զի թերևս ձերով աղաւթիւքը

արժանի եղէց հասնել մասին ժառանգութեան սրբոցն ի լոյս, ի Քրիստոս Յիսուս, ի Տէր մեր, որում փառք յաւիտեանս»:

Ըստ 3658 թվահամարի գրչագրի Վահան Գողթնեցու վկայարանությունը «Թարգմանեցաւ ի Յունաց ի մերս ի թուին Հայոց ի ՃՁ» (էջ 257բ): Երուսաղեմի 120 թվահամարի Տոնապատճառն ունի համարժեք վկայություն, միայն թարգմանված է համարում ասորերենից: Ակնհայտ է, որ վկայարանությունը գրվել և թարգմանվել է Վահան Գողթնեցու վկայությունից հետո, որը տեղի ունեցավ հայոց 186 թվականին (= 738 թ.), ուստի վերոհիշյալ բնագրերի մեջ վկայված հայոց թվական ՃՁ-ն պետք է սրբագրել ՃՂ: Հայոց ՃՂ (= 742 թ.) թվականն է տալիս նաև Մարգաց 7-ի միջոցով և հայոց տոնացույցային եղանակով ստացած արդյունքը: Կարելի է պնդել, որ Երաշխավորի վանահայր Աբրահամ-Արտավազը Վահան Գողթնեցու վկայարանությունը թարգմանելու և խմբագրելու ժամանակ, այն է՝ Հայոց 190 թվականին (= 742 թ.) Մարգաց 7-ը դրել է նկատի ունենալով Ջատկից ետ հաշված երեքշաբթին որպես Վահան Գողթնեցու նահատակության համարժեք օրը, որը նրա թարգմանության և խմբագրության ժամանակ ընկել է Մարգաց 7-ը (= Մարտ 27), երեքշաբթի: Մարգաց 7-ը կրկնվեց հուլյան տոմարի այլ համարժեքով, երբ Վահան Գողթնեցու հիշատակի օրը տեղափոխվեց Հունվարի 13 Առաջավորի կիրակիի միջև:

Այսպիսով Վահան Գողթնեցին նահատակվել է Հայոց 186 թվականին (= 738 թ.) Ջատկից ետ հաշված մեծ երեքշաբթիին է դրվել նրա նահատակության օրը, որը վկայարանության թարգմանության և խմբագրության տարում համընկել է Մարտ 27 և Մարգաց 7-ին: Այդ հատվածում ընդհանրապես սրբերի հիշատակի օր չի կատարվել, որի հետևանքով հավանաբար տոնացույցի 2-րդ խմբագրության ժամանակ Վահան Գողթնեցու հիշատակի օրը տեղափոխել են Հունվարի 13-ի և Առաջավորի Բարեկենդանի կիրակիի միջև դնելով 5-րդ կանոնի տակ: Դրանից հետո Վահան Գողթնեցու հիշատակի օրը ստացավ հայոց շարժական տոմարի վերը քննարկված ամիս-ամսաթիվերը: Կրկնվեց նաև Մարգաց 7-ը՝ հուլյան նոր համարժեքներով իբրև շարժական տոն: 14-րդ դարի սկզբներին Վահան Գողթնեցու հիշատակի օրվա կանոնը տեղափոխվեց 6-րդ կարգ և շարունակվեց տոնվել նույն հատվածում: Այն դեպքում, երբ Հունվար 13 - Առաջավորի Բարեկենդանի կիրակիի միջև օրեր չէին մնում, տոներ չէին կատարում կամ տեղափոխում էին այլ տեղ, իսկ երբ տոնելի օրերը քիչ էին լինում այդ հատվածի տոները կատարում էին խումբ խումբ, որի հետևանքով նրա տոնի օրը ստացել է նաև Հունվար 16-ը: Միմեռն Երևանցու տոնացույցում Վահան Գողթնեցու հիշատակի օրը դրվել է 6-րդ կանոնի տակ, բայց տարեգրի փոփոխության հետևանքով տոնել են տարբեր կերպ:

\*\*\*

Թեոդորոս զորավարի հիշատակի օրը, ինչպես տեսանք, Հովհան Մանդակունին սահմանեց Ճաշոց-Տոնացույցի 2-րդ խմբագրության մեջ և դրեց Բուն Բարեկենդանի կիրակիից հետո եկող շաբաթ օրը, իբրև շարժական տոն: Այդ հիշատակի օրը հետագայում ոչ մի փոփոխություն չկրեց, միայն որոշ բնագրերում գրանցվեց հայոց շարժական տոմարի ամիս-ամսաթիվ, որն առաջնահատուկ հետաքրքրություն է ներկայացնում:

Վենետիկի 169 թվահամարի «Կանոնք ընթերցուածոց»-ի խմբագրության մեջ Բուն Բարեկենդանի շաբաթ օրվա տակ գրված է: «Մարգաց ԻԳ. Թեոդորոսի զաւրավարի...» (էջ 49ա): Այս ամիս-ամսաթիվն են տալիս Վենետիկի 639 թվահամարի Ճաշոցը, ինչպես և Երևանի 2092 թվահամարի Տոնացույցը: Վենետիկի 639 թվահամարի Ճաշոցի մեջ գրված է. «Մարգաց ԻԳ.

1 Տե՛ս Ս. Շմճեմյան, Մայր ցուցակ... Բ. Գ, էջ 567-588:



Թէոդորոսի զաւրավարին...»<sup>1</sup>: Իսկ 2092 թվահամարի տոնացույցը ձևակերպել է. «Առաջին շաբաթին շաբաթ աւրն. Թէոդորոսի զաւրավարին տաւն է. ... Ի Մարգաց ԻԳ-ն» (էջ 232ա-բ):

Ստորև ճաշոցների դասակարգման մեջ ցույց տվեցինք, որ Հայոց շաբաթական տոմարի Մարգաց 23-ի նշումը կատարվել է 898 թվականին և գալիս է Վենետիկի 169 թվահամարի գրչագրի նախագաղափար օրինակից: Այն փոխանցվել է Հետագայում ընդօրինակված ճաշոցների և Տոնացույցերին: Միաժամանակ պարզ է դառնում՝ որ Վենետիկի 639 թվահամարի ճաշոցն իր նյութերը տալիս նկատի է ունեցել 9-րդ դարի վերջի կամ 10-րդ դարի վերջի մի ճաշոց:

Հայոց Հնագույն տոնացույցերը վկայել են «Աղուհացիցն առաջին շաբաթն աւրն. Թեոդորոսի զաւրավարի [տաւն է]»<sup>2</sup>:

Հետագայում ընդօրինակված բոլոր տոնացույցերի խմբագրութունները չնչին փոփոխութուններով կրկնում են նախորդներին, երբեմն «զաւրավարի»-ն դարձնելով «զինաւորի»<sup>3</sup>: Միայն 2031 թվահամարների Տոնացույցում առկա է հուլյան տոմարի ամիս-ամսաթվային նշում, այն է՝ «Շաբաթ. Յիշատակ է Թէոդորոսի, Փետր[ուար] Ժէ» (էջ 27բ):

Գրիգոր Վկայասերի Տօնանամակի խմբագրութունը տալիս է. «Նորին (փետրուարի) Ժէ. Թէոդորոսի զաւրավարի...»<sup>4</sup>: Իսկ 940 թվահամարի ճաշոցում ԻԵ (25) համարի տակ կարդում ենք. «Փետրուարի Ժէ. Թէոդորոսի զաւրավարի, որոյ տաւնն կատարի աղուհացսն յառաջին շաբաթն աւրն...»:

Հուլյան տոմարի Փետրվարի 17-ը գալիս է Հունական տոնացույցից, որի առաջին գրանցումը կատարել է Հովսեփ Կոստանդնուպոլսեցու թարգմանած Տոնացույց-Յայսմավուրքում: Թեև այդ ամիս-ամսաթիվը կարող էր առաջանալ պարբերաբար այն ժամանակ, երբ Զատիկը կատարվել է Ապրիլ 1-ին, իսկ Թեոդորոս գորավարի Հիշատակի օրը կրկնի Փետրվարի 17-ին՝ Բուն Բարեկենդանի կիրակիից հետո եկող շաբաթ օրը: Նույնարժեք տեղեկութուններ ենք գտնում Հետագայում ընդօրինակված ճաշոցների խմբագրութունների մեջ, որոնք Թեոդորոսի գորավարի Հիշատակի օրը կանոնել են Բուն Բարեկենդանի կիրակիից հետո եկող շաբաթ օրը<sup>5</sup>:

Վենետիկի 1048 թվահամարի Յայսմավուրքի ընդօրինակութան մեջ, որը Հովսեփ Կոստանդնուպոլսեցու թարգմանած տոնացույցի հետագա խմբագրութուն է կարդում ենք. «(Փետրուար) Ժէ. վկայաբանութիւն) սրբոյն Թէոդորոսի մեծ վկային Քրիստոսի, որ թարգմանի աստուածապարգև եւ տաւնն կատարի յԱղուհացից առաջին շաբաթ աւուրն... (էջ 228բ)<sup>6</sup>: Ի դեպ «եւ տաւնն կատարել յԱղուհացիցն առաջին շաբաթ աւուր» նախադասութունը հետագա խմբագրութան արդյունք է կամ էլ հեղինակի բացատրութունը տոնի կատարման մասին իբրև շաբաթական տոն, քանի որ հուլյանը Թեոդորոսի Հիշատակի օրը տոնել են անշարժ տոնական օրով: Հայոց Յայսմավուրքների խմբագրութունները Թեոդորոսի Հիշատակի օրը կանոնել են Մեհակն 11 և Փետրվար 17-ի տակ կամ հակառակ հաջորդականությամբ և միշտ նշել, որ նրա տոնը կատարվում է «յառաջին շաբաթ Աղուհացից», ինչպես բերել է նրա վկայաբանութունը<sup>7</sup>:

Մեհակնի 11-ը հայոց անշարժ տոմարի ամսաթիվ է համարժեք Փետրվարի 17-ին, ուստի այն չի կապվում Թեոդորոս գորավարի Հիշատակի օրվա շաբաթական տոնի հետ:

Այսպիսով, Թեոդորոս գորավարի տոնական օրը կանոնել է Հովհան Մանդակունի կաթողիկոսը Բուն Բարեկենդանի կիրակիին հաջորդող շաբաթ օրը և հետագայում ոչ մի փոփոխութուն չի կրել և միշտ տոնվել է իբրև շաբաթական տոն:

\*\*\*

Հայոց Հնագույն տոնացույցերը Կիրակոսի և նրա մոր Յուզիտայի Հիշատակի օր են սահմանել Հունվարի 13-ի և Առաջավորի կիրակիի միջև 7-րդ կարգի տակ: Բերենք այդ տեղեկութունը. «Կիրակոսի և մաւր նորա Յուզիտա և Աբղլմսեհի. Յունու[արի] Լ»<sup>1</sup>: 179 թվահամարի գրչագրին չունի Հունվարի 30-ի նշումը: Հետագայի ընդօրինակված տոնացույցերը դրել են նույն հատվածում, միայն տեղափոխել են հիմնականում 5-րդ կանոնի, երբեմն պատահում է 4-րդ կանոնի տակ<sup>2</sup>:

Հայոց անշարժ տոմարի կարգով գրված ճաշոցների խմբագրութուններն ունեն տարբեր ձևակերպումներ: Այսպես 832 թվահամարի գրչագրին վկայել է. «Հրոտից ԺԵ. Սրբոյն Կիրակոսի եւ մաւր նորա Յ[ու]զիտայ...» (էջ 100բ-101բ): Այս ամսաթիվն ունեն 6235 (էջ 100ա), 4977 (էջ 93բ), 939 (էջ 42ա), 4438 (էջ 31բ) և այլ գրչագրեր: Միայն 4916 թվահամարի ճաշոցը գրանցել է Հրոտից ԺԵ-ի տակ, որը կարծում ենք գրչական սխալի արդյունք է՝ ԺԵ-ն փոխվել է ԺԵ-ի: Մի խումբ ճաշոցների խմբագրութուններ փաստագրել են Հունվար 13-ի և Առաջավորի կիրակիի միջև 5-րդ, 6-րդ և 7-րդ կարգի տակ, իսկ երբեմն պատահում է երկուշաբթի օրվա նշումը<sup>3</sup>:

Հայոց Յայսմավուրքների խմբագրութունները Կիրակոսի և նրա մոր Յուզիտայի Հիշատակը կանոնել են մի դեպքում Հուլիս 15-ի կարգի տակ (Վենետիկի 1048 և 710 թվահամարների գրչագրեր), մյուս դեպքում՝ Հրոտից 9 և Հուլիս 15-ի տակ<sup>4</sup>:

Մ. Ավգերյանը բերել է երեք ամիս-ամսաթվային նշում այդ սրբերի Հիշատակի օրվա կապակցությամբ, այն է՝ Հայոց՝ Յուլիս 15, Տեր-Իսրայելի՝ Մարտ 15, Յունաց՝ Յուլիս 15 և Լատինացոց՝ Յունիս 16<sup>5</sup>: Ի դեպ Մարտի 15-ի ամսաթվային նշում մեզ չի պատահել: Այսպիսով Կիրակոսի և նրա մոր Յուզիտայի Հիշատակի օրվա համար ունենք հուլյան տոմարի Հունվար 30, Հայոց շաբաթական տոմարի Հրոտից 15-ը, որը վեր է ածվել Հայոց անշարժ տոմարի և ստացել Հուլիս 21-ի համարժեքը: Վերջինս դուրս ենք գցում քննութունից, որովհետև Հուլիս 21-ին երբեք Հիշյալ սրբերի Հիշատակի օր չեն նշել, այլ հուլյանը անշարժ տոնական օրվա Հուլիս 15-ին, որը համարվել են Հայոց անշարժ տոմարի Մարգաց 9-ի հետ, ինչպես և Հունվարի 24-25-ին, երբ տոնել են Հունվար 13 - Առաջավորի կիրակիի միջև 7-րդ կանոնի տակ: Այլ խոսքով մնում է Հունվարի 30-ի, Հունվարի 24-25-ի և Հայոց շաբաթական տոմարի Հրոտից 15-ը: Սրանցից Հունվար 30 = Հրոտից 15, որտեղից Հրոտից 1 = Հունվար 18 = 1109-1112 թթ., իսկ

- ա) Հրոտից 15 = Հունվար 25 = Երկուշաբթի = Հայոց 585 թվական = 1137 թ. = 7-րդ կանոն
- բ) Հրոտից 15 = Հունվար 25 = Հինգշաբթի = Հայոց 588 թվական = 1140 թ. = 7-րդ կանոն:

1 Տե՛ս Ձեռ. № № 759, էջ 178ա-բ, 179 էջ 540ա:  
2 Տե՛ս Ձեռ. № № 752, էջ 151բ, 767, էջ 123բ, 5667, էջ 98բ, 7203, էջ 17ա, 9838, էջ 152ա-153ա, 2031, էջ 17ա-19ա, 4164, էջ 134ա-բ, 4874, էջ 162բ, 4441, էջ 231-232ա, 8112, էջ 62բ-6բ, 508, էջ 212 բ-213ա և այլն:  
3 Տե՛ս Ձեռ. № № 7741, էջ 35բ-36ա, 4107, էջ 68, 4698, էջ 28բ և այլն:  
4 Տե՛ս Ձեռ. № № 3082, էջ 397 բ, 179, Վենետիկի 189 թվահամարի գրչագիր, 2695, էջ 186բ, 9585, էջ 277բ, 4741, էջ 352ա, 7433, էջ 390ա, Գրիգոր Խլաթեցու տարբերակի խմբագրութունները:  
5 Տե՛ս Լիակատար Վարդ և վկայութիւն սրբոց, Բ. Ա, էջ 170-187:

1 Տե՛ս Մ. Մանուկյան, Աղ. աշխ., Բ. Դ, էջ 625-626:  
2 Տե՛ս Ձեռ. № № 759, էջ 180բ, 179, էջ 528բ և 540բ:  
3 Տե՛ս Ձեռ. № № 752, էջ 154ա, 767, էջ 130, 2092, էջ 232ա-բ, 5667, էջ 103ա, 7203, էջ 24ա-բ, 9838, էջ 156ա, 2031, էջ 27բ, 4164, էջ 140ա, 4874, 5419 էջ 177բ, 4459, էջ 70բ-71ա, 5436, էջ 156ա-բ և այլն:  
4 Տե՛ս Ձեռ. № № 979, էջ 3բ և 72ա-բ:  
5 Տե՛ս Ձեռ. № № 1028, էջ 98բ, 6235, էջ 124 ա, 7741, էջ 67ա, 4916, էջ 99ա, 4107, էջ 124, 939, էջ 80բ և այլն:  
6 Տե՛ս Հ. Ոսկանյանի Աղ. աշխ., Բ. Բ:  
7 Տե՛ս Ձեռ. № № 3082, էջ 394ա, 179, Վենետիկի 189 թվահամարի գրչագիր, 2695, էջ 40ա, 8179, էջ 20ա, 9585, էջ 151ա, 4741, էջ 198ա, 7433, էջ 235ա, ինչպես և Գրիգոր Խլաթեցու Յայսմավուրքի խմբագրութունները:



Պարզ է դառնում, որ Կիրակոսի և նրա մոր Յուդիտայի հիշատակի օրվա կանոնից է առաջացել Հրոտից 15-ը կամ 1137 թ. կամ 1140 թ. և որոշ ժամանակ հետո գրանցվել է 832 թվահամարի ճաշոցում և վեր է ածվել հայոց անշարժ տոմարի ամսաթվի:

Հայոց շարժական տոմարի Հրոտից 15-ը դնելով համարժեք Հուլիս 15-ին ստանում ենք 452-455 թթ. քառամյակը, որը կարող էր լինել հիշյալ սրբերի վկայաբանության թարգմանության տարիները, սակայն քիչ հավանական ենք համարում, քանի որ Հրոտից 15-ը առաջացել է տոնական օրվա հիման վրա:

\*\*\*

Վարդանանց պատերազմը հատկապես Ավարայրի ճակատամարտը տեղի ունեցավ 451 թվականի Մայիսի 26-ին՝ Հոգեգալստեան (Պենտեկոստի) կիրակիին նախորդող շաբաթ օրը, ինչպես վկայել է Ղազար Փարպեցին, այսինքն Հազկերտ 2-րդի 12-րդ տարվա վերջերին: Սակայն Վարդանանց նահատակության օրը՝ Մայիս 26-ը չդարձավ նրանց հիշատակի օր, մանավանդ 5-րդ դարում, ինչպես երևում է «Կանոնք ընթերցուածոցի»-Տոնացույցի խմբագրություններից, սրբերի հիշատակի տոնական օրով՝ նկատի ունենալով հիմնականում նահատակության օրը:

Վարդանանց հիշատակի օրը դրվեց Օգոստոսի 1-ին, որտեղ տոնում էին Մակարայեցոց և Վաչե Մամիկոնյանի և նրա զինակիցների հիշատակը, որպես Քրիստոնեության համար կոռիպներում զոհվածների, վերջինս ըստ ավանդության կանոնել էր Արիստակես կաթողիկոսը Պարսից պատերազմներում զոհվածների համար: Այլ խոսքով Վարդանանց հիշատակի օրը տոնվեց Մակարայեցոց և Վաչեյանների հետ միասին, անշարժ տոնական օրով մինչև 8-րդ դարի 20-ական թվականները:

Հովհան Օձնեցին Վարդանանց հիշատակի օրը կանոնեց Բուն Բարեկենդանից առաջ ընկնող երեքշաբթի, այն է՝ Բուն Բարեկենդանի կիրակիից ետ հաշված 4-րդ օրը և անշարժ տոնի օրը վերածվեց շարժականի: Նա նույնպես չվերականգնեց Մայիս 26-ը, որովհետև նրա ճաշոց-Տոնացույցում մի կողմից դասավորված էին շաբաթական շարքի հիման վրա, մյուս կողմից Ջատիկ-Պենտեկոստե հատվածում արգելվում էր սրբերի հիշատակի օր կանոնելը, ըստ ավանդության, որը վերագրվում է Հովհան Մանդակունի կաթողիկոսին: Բերենք հայոց հնագույն տոնացույցերի տեղեկությունները: Ըստ 759 թվահամարի գրչագրի «Գշ (երեքշաբթի). Սրբոց Վարդանանցն» (էջ 179բ): Համարժեք վկայություն ունի նաև 179 թվահամարի գրչագիրը (էջ 540բ): 2092 թվահամարի Տոնացույցը ունի ամսաթվային նշում, այն է՝ «Գշ (երեքշաբթի) աւր. Վարդանանց, ի Հրոտից Լ» (էջ 232ա): Այլ խոսքով Վարդանանց հիշատակի օրը կանոնվել է Առաջավորի կիրակիից հաշված 3-րդ կիրակիից հետո եկող երեքշաբթի կամ Բուն Բարեկենդանից ետ հաշված 6-րդ օրը: 14-րդ դարի ինչպես և հետագայի տոնացույցերի խմբագրություններում Վարդանանց տոնի օրը տեղափոխված ենք տեսնում նույն շաբաթի հինգշաբթի օրը, որտեղ նախորդ տոնացույցերում կանոնվել է Ղևոնդեանց հիշատակի օրը: Հիշյալ խմբագրության պատճառը մեզ անհասկանալի է: Ինչևէ, 752 թվահամարի գրչագրում գրված է. «Եշ (հինգշաբթի). Վարդանանց...» (էջ 153բ): Նույնարժեք տեղեկություններ են տալիս հետագայի տոնացույցերի խմբագրությունները<sup>1</sup>:

Հայոց անշարժ տոմարի կարգով տրված ճաշոցների խմբագրություններ ունեն «Հրոտից Լ. Սրբոց Վարդանանցն»<sup>2</sup>: Նույնարժեք տեղեկություն է տալիս նաև Գրիգոր Վկայասերի Տօնա-

նամակի շարունակության մեջ՝ հայոց ամսաթվերով տրված մասում<sup>3</sup>, ինչպես և 4977 թվահամարի ճաշոցը (էջ 95բ): Իսկ 940 թվահամարի ճաշոցը ՂԹ (99) համարի տակ Վարդանանց հիշատակի օրը դրել է «Աւգոստոս Ե եւ Հրոտից Լ» կանոնի տակ:

936 և 7741 թվահամարների ճաշոցները Վարդանանց տոնի օրը տվել են երեքշաբթի կանոնի տակ, ինչպես վաղ շրջանի տոնացույցերում է, 4514 և 939 թվահամարիների ճաշոցներն ունեն «Հրոտ Լ. սրբոց Վարդանանց (իսկ ներքին լուսանցքում առկա է հինգշաբթի օրվա նշումը)» (էջ 42ա և 69բ): Հիշյալ բնագրերը ցույց են տալիս, որ մինչև 14-րդ դարի 60-ական թվականները Վարդանանց տոնը տոնել են երեքշաբթի կամ հինգշաբթի, որովհետև 752 թվահամարի Տոնացույցն (1314 թ.), ինչպես տեսանք, արդեն ունի հինգշաբթի օրվա նշումը, իսկ 14-րդ դարի 60-ական թվերից հետո ընդօրինակված և ոչ մի բնագրում չի հանդիպում երեքշաբթի: Հարկ է նշել, որ Եղիշեի Վարդանանց պատմության գրչագրերում հատկապես ճառընտիրներում, որոնց համառոտ նկարագրությունը տվել է Ե. Տեր-Մինասյանը, առկա է երեքշաբթի և հինգշաբթի օրվա նշումները, որոնք գալիս են տոնացույցերից և ճաշոցներից: Ուստի երեքշաբթի նշում ունեցող ճառընտիրների ընդօրինակությունների նախագաղափար գրչագրերը գալիս են 13-րդ և ավելի վաղ դարերից:

Հայոց Յայսմավուրքների խմբագրությունները Վարդանանց հիշատակի օրը կանոնել են «Հրոտից Լ և Աւգոստոս Ե»-ի տակ<sup>2</sup>, իսկ Գրիգոր Խլաթեցու խմբագրությունների մեջ գտնում ենք Աւելեաց Բ-ի (= Օգոստոս 7) տակ, որը հետագա տեղափոխման արդյունք է:

Մ. Ավգերյանը վկայել է Օգոստոս 7-ը նկատի ունենալով միայն Գ. Խլաթեցու տարբերակը<sup>3</sup>: Փաստորեն առկա է Վարդանանց տոնի օրը՝ Բուն Բարեկենդանից ետ հաշված 6-րդ և 4-րդ օրերը, երեքշաբթի և հինգշաբթի, ինչպես և Հրոտից 30-ը: Քանի որ Հրոտից 30-ը գալիս է 12-րդ դարի բնագրերից, ուստի հիշյալ տոնի օրը և ամսաթիվը համադրելի է միայն 1-ին տարբերակով, այն է՝ Բուն Բարեկենդանից ետ հաշված 6-րդ օրը, երեքշաբթի և Հրոտից 30-ը:

Բերենք «Հայոց տոնացույց» ծրագրի հաշվումների արդյունքները.

Ներկա թվական	Հուլյան ամիս	Հուլյան ամսաթիվ	Ծաբաթվա օր	Հայոց թվական	Հայոց ամիս	Հայոց ամսաթիվ	Ծաբաթվա օր
1074	2	25	3	522	12	30	3
1088	2	22	3	536	12	30	3
1193	1	26	3	641	12	30	3

Վերոհիշյալ աղյուսակից պարզ է դառնում, որ Հրոտից 30-ը առաջացել է 1074 թ. կամ 1088 թ. գուգահեռ ունենալով Փետրվարի 25 և 22-ը և փոխանցվել հետագա ընդօրինակություններին, հատկապես 832 թվահամարի (նաև Վենետիկի 639 թվահամարի գրչագրին) ճաշոցին, որի հեղինակը Հրոտից 30-ի հայոց տոմարի ամիս-ամսաթիվը՝ առաջացած տոնացույցային եղանակով վեր է ածել հայոց անշարժ տոմարի Հրոտից 30-ի համարժեք դնելով Հուլյան տոմարի Օգոստոսի 5-ի, որը և փոխանցվել է հետագա ճաշոցներին և տոնացույցերին, մինչդեռ Օգոստոս 5-ին երբևէ Վարդանանց տոնը չի կատարվել: Ակնհայտ է, որ Հրոտից 30-ը համարվել է Բուն Բարեկենդանից առաջ ընկնող երեքշաբթի օրվա հետ 11-րդ դարի 70-80-ական

<sup>1</sup> Տե՛ս Ձեռ. N° N° 5667, էջ 102ա, 767, էջ 129ա, 7203, 9838, էջ 155ա-բ, 4164 էջ 138ա, 4874, 5398, էջ 112ա-բ, 4459, էջ 69բ-70բ և այլն:

<sup>2</sup> Տե՛ս Ձեռ. N° N° 832, էջ 102ա-103ա, Վենետիկի 639 թվահամարի գրչագիր, 6235, էջ 117բ և այլն:

<sup>3</sup> Տե՛ս Ձեռ. N° N° 979, էջ 438ա-բ:

<sup>2</sup> Տե՛ս Ձեռ. N° N° 3082, էջ 398ա, 179, Վենետիկի 189 թվահամարի գրչագիր, 2695, էջ 202բ, 7433, էջ 423բ և այլն:

<sup>3</sup> Տե՛ս Մ. Ավգերյան, Լիակատար Վարք և վկայություն սրբոց, Բ. Բ, էջ 278-339:

Թվականներին, իսկ ավելի վաղ շրջանի ամիս-ամսաթվեր հայտնի չեն: Հրոտից 30-ը չի առաջացել Օգոստոս 1-ից, երբ վաղ շրջանում տոնել են Վարդանանց տոնը:

\*\*\*

Եղիշեի «Վասն Վարդանանց և հայոց պատերազմին» երկի մեջ վկայված է Ղևոնդեանց նահատակության տարին և ամիս-ամսաթիվը, այն է՝ Հազկերտ 2-րդի 16-րդ տարին Հրոտից 25 (տարբերակ՝ 27): Այդ ամսաթիվն է տալիս Ղազար Փարպեցին, ուստի Ղևոնդեանք նահատակվել են 455 թ. Հրոտից 25 = Հուլիս 25 (տարբերակ՝ Հրոտից 27 = Հուլիս 27, չորեքշաբթի) = Երկուշաբթի օրը: Ասողիկը վերահաշվարկել է և դրել 453 թվականի Հրոտից 26-ին, կիրակի օրը: Մի խումբ ճառերնորներ 7-րդ եղանակի մեջ, որտեղ պատմվում է փաստորեն Ղևոնդեանց վկայաբանությունը իբրև վերնագիր, ինչպես նշել է Ե. Տեր-Մինասյանը, ունեն՝ «Վկայաբանություն սկզբից Ղևոնդեանցն», ոմանք ավելացնում են՝ «քահանայից» կամ սրբից՝ «Բարեկենդանի երեքշաբթի օր» կամ «ի Հրոտից ի իէ. յիշատակ սրբոց քահանայիցն Ղևոնդեանց»<sup>2</sup>: Վերոհիշյալ տվյալները հասկանալի կդառնան՝ երբ տանք տոնացույցերի և ճաշոցների տեղեկությունները:

5-8-րդ դարի 10-ական թվականներին Ղևոնդեանց հիշատակը, տոնել են անշարժ տոնական օրով՝ Հուլիս 25-ին (տարբերակ՝ 27-ին): Սակայն 8-րդ դարի 20-ական թվականներին Ղևոնդեանց հիշատակի օրը կանոնվեց Առաջավորի Բարեկենդանի կիրակիից հաշված 3-րդ կիրակիից հետո եկող հինգշաբթի օրը կամ Բուն Բարեկենդանից ետ հաշված 4-րդ օրը և վերածվեց շարժական տոնական օրվա:

Տեսնենք ինչ տեղեկություններ են պահպանվել հնագույն տոնացույցերի խմբագրությունների մեջ: 759 թվահամարի գրչագրում գրված է. «Եշ (հինգշաբթի). Ղևոնդեանց» (էջ 179բ): Համարժեք վկայություն է տալիս 179 թվահամարի Տոնացույցը (էջ 540բ):

936 թվահամարի Ճաշոցը գրել է. «Յետին (Առաջավորի Բարեկենդանի վերջին շաբաթ - Ռ. Վ.) հինգշաբթին. ր Ղևոնդեանց...» (էջ 154ա): 14-րդ դարի և հետագա տոնացույցերի խմբագրությունների մեջ փոփոխություն է կատարվում Վարդանանց տոնը տեղափոխվում է նույն շաբաթի հինգշաբթի, իսկ Ղևոնդեանցը՝ երեքշաբթի:

752 թվահամարի Տոնացույցի խմբագրության մեջ կարդում ենք. «Գշ (երեքշաբթի). Ղևոնդեանց քահանայից...» (էջ 153 բ): Համարժեք տեղեկություններ են թողել նաև մյուս տոնացույցերը<sup>3</sup>: Միայն 2092 թվահամարի Տոնացույցի խմբագրությունն է տալիս միանգամայն այլ տեղեկություն, այն է՝ «Բշ (երկուշաբթի). Ղևոնդեանց... ի Հրոտից իէ» (էջ 232ա): Այն խմբագրման նոր փորձ է կամ վերահաշվարկված 455 թ. Հրոտից 25-ի երկուշաբթին, սակայն այս դեպքում սխալ է Հրոտից 27-ի նշումը: Այլ խոսքով այն նոր խմբագրման անհաջող փորձ է: Երեքշաբթի օրվա նշումներ ունեն նաև մի խումբ ճաշոցներ<sup>4</sup>:

Հայոց անշարժ տոմարի ամսակարգով գրված ճաշոցները բաժանվում են երկու խմբի. մի խումբը Ղևոնդեանց հիշատակի օրը կանոնել են Հրոտից 27-ին կամ Օգոստոս 2 և Հրոտից 27<sup>5</sup>, իսկ մյուս խումբը՝ Հրոտից 25-ին և երեքշաբթի<sup>6</sup>:

Հայոց Յայսմավուրքների խմբագրությունների մեջ ևս առկա են Հրոտից 25-ը և նրա համարժեքը՝ Հուլիս 31-ը<sup>1</sup>, ինչպես և Հրոտից 27-ը և նրա համարժեքը՝ Օգոստոս 2-ը<sup>2</sup>:

Մ. Ավգերյանը բերել է միայն Հուլիս 31-ը, որպես Ղևոնդեանց քահանայից վկայաբանության օր<sup>3</sup>: Ղևոնդեանց հիշատակի օրվա համար վկայված Հրոտից 25 և 27-ը սկզբից հայոց շարժական տոմարի ամիս-ամսաթվեր են եղել բոլորովին այլ հուլյան համարժեքներով:

Ղևոնդեանց հիշատակի օրը մտավ տոնացույց և դրվեց Բուն Բարեկենդանից ետ հաշված 4-րդ օրը (հետագայում 6-րդ, սակայն նկատի ենք ունեցել 4-րդ օրը, որովհետև Հրոտից 27-ը վկայված է ավելի վաղ քան 14-րդ դարի սկիզբը): Հրոտից 25 և 27 ամիս-ամսաթվերը կրկնվեցին Ղևոնդեանց տոնական օրվա առիթով, ուստի հնարավոր է նախապատվություն տալ դրանցից որևէ մեկին, թեև հնագույնը Հրոտից 25-ն է:

Բերենք «Հայոց տոնացույց» ծրագրի հաշվումների արդյունքները.

1.

Ներկա թվական	Հուլյան ամիս	Հուլյան ամսաթիվ	Ծաբաթվա օր	Հայոց թվական	Հայոց ամիս	Հայոց ամսաթիվ	Ծաբաթվա օր
1102	2	13	5	550	12	25	5
1130	2	6	5	578	12	25	5
1144	2	3	5	592	12	25	5

2.

Ներկա թվական	Հուլյան ամիս	Հուլյան ամսաթիվ	Ծաբաթվա օր	Հայոց թվական	Հայոց ամիս	Հայոց ամսաթիվ	Ծաբաթվա օր
1044	3	1	5	492	12	27	5
1149	2	3	5	597	12	27	5
1163	1	31	5	611	12	27	5

Հաշվումները ցույց են տալիս, որ Ղևոնդեանց հիշատակի օր շարժական տոնով կրկնվել է Հրոտից 25-ի հին համարժեքը միայն հուլյան տոմարի այլ համարժեքներով 1102 թ., 1130 թ., 1144 թ. և պահպանվել հետագայի ընդօրինակված բնագրերում, իսկ Հրոտից 27-ը առաջացել է 11-րդ դարից ոչ շուտ և գրանցել մի խումբ գրչագրերում, ինչպես և փոխանցվել Եղիշեի բնագրի ընդօրինակությունների մեջ:

\*\*\*

Հայոց տոնացույցերի խմբագրությունները նիկոպոլսում նահատակված 45 (47) վկաների, ինչպես և Եւփիմեա և Քրիստինեա կույսերի հիշատակի օր են սահմանել Վարդավառից հաշված 12-րդ օրը, հինգշաբթի օրվա կանոնի տակ:

759 թվահամարի Տոնացույցի խմբագրության մեջ գրված է. «Եշ (հինգշաբթի). Քառասուն և հինգ վկայիցն, որ է Յուլի(ի) Ժէ և սուրբ կուսանացն Եւփիմիա և Քրիստինա» (էջ 171ա): 45 (47) վկաների հիշատակի օրվա համար գրանցված հուլյան տոմարի Հուլիս 17-ը առաջացել է տոնացույցային ճանապարհով: Երբ Ջատիկը կատարել են Մարտի 30-ին Վարդավառից հաշված 12-րդ օրն ընկել է Հուլիս 17-ի հինգշաբթին: Այդպիսի տարիներ են եղել հիշյալ տոնացույցի ընդօրինակման հարյուրամյակում 1225 թ. և 1236 թ.: Այդ տարեթվերից մեկում էլ

1 Տե՛ս Եղիշեի Վասն Վարդանանց և հայոց պատերազմին, Ե, 1957, էջ 182:

2 Տե՛ս Եղիշե, Վասն Վարդանանց և հայոց պատերազմին, էջ 141:

3 Տե՛ս Ձեռ. № № 5667, էջ 102ա, 767, էջ 129ա, 7203, 9838, էջ 155ա-բ, 4164, էջ 138ա, 4874, 5398, էջ 112ա-բ, 4459, էջ 69բ-70բ և այլն:

4 Տե՛ս Ձեռ. № № 7741, էջ 55բ-56ա, 4916, էջ 81ա և այլն:

5 Տե՛ս Ձեռ. № № 832, էջ 102ա-103ա, 940, 95 համարի տակ, 4977, էջ 94բ և այլն:

6 Տե՛ս Ձեռ. № 639 (Վեճետիկ), 979, էջ 438ա-բ, 6235, էջ 116բ, 939, էջ 68ա և այլն:

1 Տե՛ս Ձեռ. № № 3082, էջ 398ա, 2695, էջ 202բ, 710, (Վեճետիկ), 4741, էջ 369ա, Գրիգոր Նյախեցու խմբագրություններ և այլն:

2 Տե՛ս Վեճետիկի 189 թվահամարի գրչագիրը, ձեռ. № 7433, էջ 415բ և այլն:

3 Տե՛ս Մ. Ավգերյան, Արշ. աշխ. հ. Բ, էջ 225-227:

հաշվարկել են, որից վերցրել է հիշյալ տոնացույցը: Այդ ամսաթիվը չի առաջացել 45 (47) վկաների նահատակության օրվա ամսաթվից, որովհետև ինչպես կտեսնենք այն տարբեր է վերոհիշյալից:

179 թվահամարի Տոնացույցը գրանցել է «ԵՂ (հինգշաբթի). ԽՆ վկայիցն և սուրբ կուսանացն Եւփիմայ և Քրիստինեայ» (էջ 539ա): Համարժեք տեղեկություններ են տալիս հետագայում ընդօրինակված տոնացույցների և որոշ ճաշոցների խմբագրությունները<sup>1</sup>:

Վենետիկի 639 թվահամարի Տոնանամակի ոչ ամբողջական տարբերակում կարգում ենք. «Սեպտեմբերի ԺԶ. Սրբոյն Եւփիմա եւ ընկերաց...»: Իսկ Տոնանամակի ավելի ամբողջական բնագրի խմբագրության մեջ (979 թվահամարի գրչագիր) առկա են հետևյալ տեղեկություններ.

ա) «Նորին [Յուլիս] Ժ. ԽՆ վկայիցն» (ցանկ էջ 4ա-բ) կամ «Նորին [Յուլիս] Ժ. ԽՆ վկայիցն, որ ի Նիկաևպոլիս հայոց կատարեցան» (էջ 349ա):

բ) «Նորին [Յուլիս] ԻԴ. Քրիստոնեա կուսի» (ցանկ էջ 4ա-բ) կամ «Նորին [Յուլիս] ԻԴ. Վկայութիւն սրբուհի կուսին Քրիստինայ» (էջ 353ա):

գ) «Նորին [Սեպտեմբեր] ԺԶ Եւփիմայ կուսի» (ցանկ էջ 4ա-բ): Իսկ բնագրում չի պահպանվել էջերի կորուստի հետևանքով:

940 թվահամարի Ճաշոցում կարգում ենք ԶԶ (86) համարի տակ՝ «Յուլիս Ժ և Հրոտից Դ. ԽՆ վկայիցն, որք ի Նիկոյալալիս հայոց կատարեցան»:

ՂԱ (91) համարի տակ՝ «Յուլիս ԻԴ եւ Հրոտից ԺԸ. Սրբուհոյ կուսին Քրիստինայ և Ոլոմպիայ»:

ՃԻԹ (129) համարի տակ՝ «Սեպտեմբեր ԺԶ. Սրբուհի կուսին Եւփիմեա և ԽԹ ընկերացն»:

4514 թվահամարի Ճաշոցն ունի. «Տրէ Ժէ. Եւփիմեա եւ Քրիստոնեա (ներքին լուսանցքում՝ «Հինկչաբթի. Եւփիմա եւ Քրիստոնեա և ԽՆ վկայիցն, որք ընդ նոսա») (էջ 293ա):

939 թվահամարի Ճաշոցը գրանցել է. «Տրէ ի ԺԵ. Եւփիմեա... ներքին լուսանցքում՝ «Հինկչաբթի. Եւփիմեա եւ Քրիստինեա և ԽՆ վկայիցն, որք ընդ նոսա կատարեցան») (էջ 390ա): Հայոց Յայսմավուրքների համառոտ և ընդարձակ խմբագրությունները ևս տալիս են տարաբնույթ տեղեկություններ:

3082 և 179 թվահամարի համառոտ Յայսմավուրքների խմբագրությունների մեջ Հրոտից Դ-ի (վերջում՝ Յուլիս ԺԱ) կանոնի տակ տալիս են 45 մարտիրոսների հիշատակի օրը, Հրոտից Ե-ի (վերջում՝ Յուլիս ԺԱ) կանոնի տակ Եւփիմեա կուսի հիշատակի օրը, իսկ Հրոտից ԺԸ-ի (վերջում՝ Յուլիս ԻԴ) կանոնի տակ սրբուհիներ Քրիստինեայի և Օլիմպիայի հիշատակի օրերը: Յայսմավուրքների ընդարձակ խմբագրությունների մի խմբում առկա են չորս կանոններ, որոնցից երկուսը Եւփիմեա կուսի հիշատակի օրվա համար: Վենետիկի 1048 թվահամարի տոնացույց-Յայսմավուրքի խմբագրության մեջ առկա է՝

1. Սեպտեմբերի ԺԶ (16). Եւփիմեայ.
2. Յուլիս Ժ (10). ԽՆ Մարտիրոսացն...
3. Յուլիս ԺԱ (11). Վկայաբանութիւն Եւփիմեա, միաժամանակ նշել է, որ մյուս տոնը կատարվում է Սեպտեմբեր ԺԶ (16)-ին:
4. Յուլիս ԻԴ (24). Վկայաբանութիւն Քրիստինեա:

Վենետիկի 710 թվահամարի Յայսմավուրքը պահպանել է վերոհիշյալ կանոնները. 2695, 9585, 4741 և 7433 թվահամարների Յայսմավուրքների խմբագրությունները տվել կամ պահպանել են հիշյալ չորս (կամ երեք՝ նշելով 4-րդի գոյությունը) կանոնները հայոց անշարժ տոմարի ամիս-ամսաթվերով և նրանց հուլյան տոմարի համարժեքներով, այն է՝ 1. Հրոտից Դ և Յուլիս Ժ. ԽՆ (ԽՆ) վկայիցն, 2. Հրոտից Ե և Յուլիս ԺԱ. վկ. Եւփիմեա, միաժամանակ հիշելով (Հոռի 7) և Սեպտեմբեր ԺԶ կանոնը:

3. Հրոտից ԺԸ և Յուլիս ԻԴ. վկ. Քրիստինեա

4. Հոռի է և Սեպտեմբեր ԺԶ. Եւփիմեա և այստեղ է բերված նրա վկայաբանությունը<sup>1</sup>:

Վենետիկի 189 և 710 թվահամարների, ինչպես և Երևանի որոշ գրչագրերում պահպանվել են համարժեք վկայություններ, բայց առանձին կանոններով և ոչ ամբողջական՝ կորստի կամ խմբագրման հետևանքով: Գրիգոր Խլաթեցին փոխել է Վերոհիշյալ ամիս-ամսաթվերը մեկ օրվա տարբերությամբ ու Հրոտից Զ և Յուլիս ԺԲ կանոնի տակ տվել է ԽՆ (ԽՆ) վկաների հիշատակի օրը, Հրոտից Ժէ և Յուլիս ԻԳ կանոնի տակ՝ Քրիստոնեա կուսի հիշատակի օրը, իսկ որոշ գրչագրեր Հոռի Զ (= Սեպտեմբեր 15) կանոնի տակ ունեն Եւփիմեա կուսի հիշատակի օրը (տե՛ս 1511 թվահամարի գրչագիրը):

Մ. Ավգերյանը բերել է հետևյալ ամիս-ամսաթվային տվյալները.

1. 45 (47) վկաների համար հայոց մեջ՝ Յուլիս 9 կամ 10 կամ 12, որոնցից Հուլիս 9-ը մեզ չի հանդիպել, իսկ Հուլիս 12-ը Գրիգոր Խլաթեցու խմբագրության արդյունքն է: Հունաց և Լատինացոց համար Հուլիս 10-ը:

2. Եւփիմեա կուսի վկայաբանության համար հայոց մեջ Սեպտեմբերի 15 և Տեր-Իսրայել՝ Սեպտեմբեր 16: Սեպտեմբեր 16-ը գալիս է Հովսեփ Կոստանդնուպոլսեցու Թարգմանած Տոնացույց-Յայսմավուրքից, իսկ Սեպտեմբերի 15-ը Գրիգոր Խլաթեցու խմբագրության արդյունք է: Յունաց և Լատինացոց մեջ Սեպտեմբերի 16 և մասնավորապես Յունաց մեջ՝ Հուլիս 11:

3. Քրիստոնեա կուսի վկայաբանության համար տալիս է հայոց մեջ Հուլիս 24-ը ըստ Վենետիկի ձեռագրերի նյութերի և Հուլիս 23՝ ըստ տպագրվածի:

Վերևում պարզ դարձավ, որ Հուլիս 24-ը բոլոր Յայսմավուրքների տվյալներից է գալիս, իսկ Հուլիս 23-ը՝ Գրիգոր Խլաթեցու խմբագրությունից<sup>2</sup>:

Վերջապես «Վկայաբանութիւն սրբոյ կուսին Քրիստովնեայ (բնագրի մեջ՝ Քրիստինեայ, ներքին լուսանցքում՝ Քրիստինէ ձեւակերպումներով)» բնագրի ընդօրինակություններից մեկում գրված է. «Կատարեցաւ սուրբն Քրիստինէ յամսեանն Նաւասարդի, որ աւր եւթն էր» (Փարիզ 178 թվահամարի ՃԼԲ համարի տակ, Երևան պատճեի համար է 879-ը):

Այսպիսով, քննությունից դուրս գցելով Հոռի 6 և 7, Հրոտից 4, 5 և 6, ինչպես և Հրոտից 17 և 18 ամսաթվերն իբրև հայոց անշարժ տոմարի ամիս-ամսաթվեր, ունենում ենք Նավասարդի 7-ը (միայն Քրիստինեա կուսի համար) և Տրէ 17 ու 15-ը որպես հայոց շարժական տոմարի ամիս-ամսաթվեր, որոնք առաջացել են կամ հայոց տոմարական եղանակով կամ տոնացույցային: Վերլուծենք այդ ամիս-ամսաթվերն առանձին-առանձին: Տեսանք որ Հայոց տոնացույցում Քրիստինեա կուսի և մյուս վերոհիշյալ սրբերի հիշատակի օր է սահմանվել Վարդավառից հաշված 12-րդ օրը, հինգշաբթի, միաժամանակ նրա վկայաբանությունից հայտնի է, որ նա նահատակվել է Նավասարդի 7-ին: Եթե վերջին ամսաթիվն առաջացել է տոնացույցային եղանակով, ապա Վարդավառը կատարվել է Աւելեաց 1-ին, իսկ Քրիստինեա կուսի և այլոց հիշա-

<sup>1</sup> Տե՛ս Ձեռ. N° N° 752, էջ 168բ, 767, էջ 168ա, 5667, էջ 131ա, 9838, էջ 173բ, 4164 էջ 190ա, 4874, էջ 190ա-191ա, 7741, էջ 348ա-բ, 5455, էջ 243բ, 4107, էջ 644 և այլն:  
<sup>2</sup> Տե՛ս Ս. Ծննդեմայն, Գշվ. աշխ., էջ 605-628:

<sup>1</sup> Տե՛ս Ձեռ. N° N° 2695, էջ 177ա, 178ա, 195ա, 9585, էջ 271ա-բ, 284բ, 4791, էջ 30բ, 344ա, 361ա, 7433, էջ 42բ, 382բ, 386ա, 403ա և այլն:  
<sup>2</sup> Տե՛ս Մ. Ավգերյան, Լիակատար Վարք և վկայություն սրբոց, Բ. Դ, էջ 106-133, 134-161, 162-184:

տակի օրն ընկել է Նավասարդի 7-ին: Հաշվումները տալիս են 560 թ. և 574 թ.: Սակայն Տոնացուցային եղանակով ստանացած այս տարեթվերը ընդունելի չեն, որովհետև մինչև 8-րդ դարի 20-ական թվականները սրբերի հիշատակի օրերը կատարել են անշարժ տոնական օրով:

Տվյալ դեպքում Քրիստինե կույսի հիշատակի օրը՝ Նավասարդի 7-ը պետք է համընկներ Հուլիս 24-ին, իսկ 560 թ. Ջատիկը կատարվել է Մարտի 28-ի (= Ահեկան 23), Վարդավառը՝ Հուլիս 4-ին (= Աւելեաց 1), իսկ Քրիստինե կույսի հիշատակի օրը՝ Հուլիս 15-ին (Նավասարդ 7): 574 թ. Ջատիկը կատարվել է Մարտի 25-ին (= Ահեկան 23), Վարդավառը՝ Հուլիս 1-ին (= Աւելեաց 1), իսկ Քրիստինե և այլոց հիշատակի օրը՝ Հուլիս 12 (= Նավասարդի 7): Պարզ է, որ Նավասարդի 7-ը չի առաջացել տոնացուցային եղանակով:

Այժմ կիրառենք Հայոց տոմարական եղանակը: Քննարկված տեղեկություններից պարզ դարձավ, որ Քրիստինե կույսի հիշատակի օր է սահմանվել կամ նահատակության օր է ընդունվել Հուլիս 24-ին, որն համարնկել է Հայոց շարժական տոմարի Նավասարդի 7-ին: Այդպիսի համարժեքություն եղել է 524-527 թթ. քառամյակում, քանի որ Նավասարդ 7 = Հուլիս 24, որտեղից Նավասարդ 1 = Հուլիս 18 = 524-527 թթ.:

Ակնհայտ է, որ Քրիստինե կույսի վկայաբանությունը թարգմանվել է հունարենից Հայերեն 6-րդ դարի 20-ական թվականների վերոհիշյալ քառամյակում և թարգմանիչը Քրիստինե կույսի նահատակության հուլյան ամիս-ամսաթիվը՝ Հուլիս 24-ը փոխարինել է Հայոց շարժական տոմարի Նավասարդի 7-ով, որը պահպանվեց նրա վկայաբանության ընդօրինակության մեջ:

8-րդ դարի 20-ական թվականներից, երբ Հովհան Օձնեցին խմբագրեց Հայոց ճաշոց-Տոնացուցը, Քրիստինե կույսի հիշատակի օրը կանոնեց Վարդավառից հաշված 12-րդ օրը Հինգշաբթի, այսինքն՝ Քրիստինե կույսի հիշատակի օրը անշարժ տոնական օրից վեր ածվեց շարժականի և Ջատիկ տոնի 35 օրյա շարժունակության հետևանքով այդ տոնն էլ կորցրեց Հուլիս 24-ի ամսաթվային նախնական իմաստը, թեև երբ Ջատիկը կատարվել է Ապրիլ 6-ին Վարդավառը՝ Հուլիս 13-ին, Քրիստինե կույսի հիշատակի օրը համընկել է Հուլիս 24-ին: Նրա հիշատակի շարժական օրը ստացավ Հայոց շարժական տոմարի այլ ամիս-ամսաթվային համարժեք, այն է՝ Տրէ 17 և 15: Հարկ է նշել, որ Տրէ 15 և 17-ը կարող էին առաջանալ մեկը մյուսից ժէ-ն ժե-ի կամ հակառակը, որպես է-ի և ե-ի սովորական համարվող գրչական սխալ, սակայն որևէ մեկն ընդունելու համար չունենք բավարար հիմքեր, ինչպես կտեսնենք, երկուսի հաշվարկներն էլ հնարավոր է: Այստեղ բարդությունը Տրէ 17-ը կամ 15-ը չէ, այլ այն որ Հայոց տոնացուցային և տոմարական եղանակները տալիս են դրական արդյունքներ և դժվար է որևէ մեկին նախապատվություն տալ, մանավանդ Քրիստինե կույսի հիշատակի օրվա կանոնի տակ ավելացվել են Եւփիմեա կույսինը, ինչպես և 45 (47) վկաներինը, որոնց անշարժ տոնական օրվա համարժեքները ևս տարբեր են և դրված Սեպտեմբեր և Հուլիս ամիսների տարբեր ամսաթվերում: Վերջապես Վարդավառ-Աստուածածնի հատվածի մեջ տոնվող սրբերի հիշատակի օրերը դրվել են 1-ին շաբաթի մեջ երեք կանոնով, երբ Վարդավառ-Աստուածածնի պահքի կիրակիի միջև մնացել է մեկ շաբաթ: Այն ևս բարդացնում է հաշվարկը, սակայն ստացված տարիներից կհանենք դրանք և նկատի չենք ունենալ:

Բերենք Հայոց տոնացուցային և տոմարական եղանակներով ստացված տարեթվերը Տրէ 17-ի և 15-ի համար: Ասենք նաև, որ Հայոց տոմարական եղանակը կիրառելիս նկատի ենք ունեցել վերոհիշյալ սրբերի հուլյան ամիս-ամսաթվերը, այն է՝ Հուլիս 10-ը, 11-ը, 24-ը և Սեպտեմբեր 16-ը, որոնցից վերջինը տալիս է բացասական արդյունք, որովհետև Եւփիմեա կույսի հիշատակի օրը Հայոց մեջ, եթե նախապես տոնվել է, ապա Հուլիս 11-ին է տոնվել, իսկ Սեպտեմբերի 16-ը՝ Յունաց տոնացուցի ազդեցության հետևանք է: Ընդհանրապես Եւփիմեա կույ-

սի հիշատակի օրվա կիրառության համար ունենք միայն Վարդավառից հաշված 12-րդ օրվա, հիգշաբթի տոնացուցային տվյալները:

Հայոց տոնացուցային եղանակով Տրէ 15-ը կարող էր առաջանալ այն տարիներին, երբ Վարդավառը տոնել են Տրէ 4-ին, իսկ Քրիստինե կույսի հիշատակի օրը Տրէ 15-ին՝ Վարդավառից հաշված 12-րդ օրը, իսկ այդպիսի տարիներ են եղել 854 և 868 թվեր: 854 թվականը թեական է, որովհետև Ջատիկը ընկել է Ապրիլ 22-ին (Աւելեաց 1-ին) (= Հայոց 302 թ.), Վարդավառը Հուլիս 29-ին (= Տրէ 4), Քրիստինե կույսի հիշատակի օրը՝ Օգոստոս 9-ին (= Տրէ 15 = 303 թվին Հայոց), իսկ Աստուածածնի տոնը այդ ժամանակ կատարվել են անշարժ տոնական օրով Օգոստոս 15-ին (= Տրէ 21, չորեքշաբթի) և կարող էր տոնը տեղափոխվել նախորդ շաբաթվա մեջ ղենելով երկուական կանոնով, եթե կատարում էին: Իսկ 868 թ. Ջատիկը կատարել են Ապրիլ 18-ին (Աւելեաց 1 = 316 Հայոց թվական), Վարդավառը՝ Հուլիսի 25-ին (= Տրէ 4). Քրիստինե կույսի հիշատակի օրը՝ Օգոստոս 5-ին (= Տրէ 15 = 317 Հայոց թվական), իսկ Աստուածածինը լինում է Օգոստոս 15-ին, կիրակի (= Տրէ 25-ին), որը Վարդավառից հաշված 4-րդ կիրակին էր և Վարդավառից հետո եկող երկու շաբաթվա տոները տոնում էին առանց փոփոխության: Այնտեղ ինչպես նկատելի է 12 օրվա տարբերություն ունի Քրիստինե կույսի հիշատակի օրվա անշարժ տոմարի համարժեքը՝ Հուլիս 24-ը: Հայոց տոնացուցային եղանակով Տրէ 17-ը իբրև Քրիստինե կույսի հիշատակի օր կարող էր ընկնել հետևյալ տարիներին՝ 873 թ., 889 թ., 901 թ., 915 թ., 929 թ. և 943 թ.: Այս տարիների տվյալները կասկածի տակ են ղնում Քրիստինե կույսի հետ մյուս սրբերի հիշատակի օրերի առկայությունը այդ ժամանակի տոնացուցերի խմբագրությունների մեջ: Միաժամանակ հիշյալ տարեթվերը՝ ստացած թե Տրէ 15-ով, թե Տրէ 17-ով, հիմնավորում են, որ Քրիստինե կույսի հիշատակի օրը սահմանել է Հովհան Օձնեցին, որովհետև տոնացուցի 2-րդ խմբագրությունը տեղի ունեցավ 9-րդ դարի 4-րդ քառորդին, իսկ հիշյալ թվերից ոմանք այդ ժամանակից առաջ են: Այժմ տանք Հայոց տոմարական եղանակով ստացված արդյունքները, ինչպես Տրէ 15-ի, այնպես էլ Տրէ 17-ի համար, նկատի ունենալով քննարկվող սրբերի անշարժ տոմարի համարժեքները այն է՝ Հուլիս 10, 11 և 24 -ը:

ա) Տրէ 15 = Հուլիս 10, որտեղից Տրէ 1 = Հունիս 26 = 972-975 թթ.:

բ) Տրէ 17 = Հուլիս 10, որտեղից Տրէ 1 = Հունիս 24 = 980-983 թթ.:

ա) Տրէ 15 = Հուլիս 11, որտեղից Տրէ 1 = Հունիս 27 = 968-971 թթ.:

բ) Տրէ 17 = Հուլիս 11, որտեղից Տրէ 1 = Հունիս 25 = 976-979 թթ.:

ա) Տրէ 15 = Հուլիս 24, որտեղից Տրէ 1 = Հուլիս 10 = 916-919 թթ.:

բ) Տրէ 17 = Հուլիս 24, որտեղից Տրէ 1 = Հուլիս 8 = 924-927 թթ.:

Հաշվումներից երևում է, որ Տրէ 15-ը կամ 17-ը չէին կարող առաջանալ Հայոց տոմարական եղանակով, որովհետև այդ ամսաթվերը գրանցվել են 4514 և 939 թվահամարների ճաշոցներում, որտեղ հիշյալ սրբերի հիշատակի օրը մեկն է: Բացի այդ 45 (47) մարտիրոսների և Եւփիմեա կույսի վկայաբանությունները, որքան մեզ հայտնի է, թարգմանել է Հովսեփ Կոստանդնուպոլսեցին 992 թվականին:

Սա կարող է նշանակել մի կողմից, որ Քրիստինե կույսի հիշատակի օրը կանոնված է եղել և մյուս սրբերին միացրել են այդ կանոնին թերևս 10-րդ դարում, որի վերջին թարգմանվեցին նրանց վկայաբանությունները, մյուս կողմից Տրէ 17 կամ 15 ամսաթվերն արտացոլել են Քրիստինե կույսի հիշատակի օրը, որը շարժական էր դարձել 8-րդ դարի 20-ական թվականներից և 9-11-րդ դարերում ստացել էր Հայոց շարժական տոմարի հիշյալ ամիս-ամսաթվերը: Համենայն դեպս Հայոց տոմարական եղանակի տված նույնիսկ դրական արդյունքները կասկածելի են թեկուզ այն պատճառով, որ Հայոց շարժական տոմարի Տրէ 17 կամ 15-ը վկայել են միայն ճաշոցները, որոնք թե 45 մարտիրոսների, թե Եւփիմեա, թե Քրիստինե կույսերի հիշա-

տակի օրերը միացրել են մեկ կանոնի տակ, այսինքն հուշում են այդ ամսաթվերը տոնացույցային ճանապարհով առաջանալու ավելի հավանական վարկածը: Այսպիսով 524-527 թթ. թարգմանվեց Քրիստինեա կույսի վկայաբանությունը, որի թարգմանիչը Հուլիս 24-ի փոխարեն դրեց Հայոց շարժական տոմարի նավասարդի 7-ը: Նրա տոնը տոնվեց անշարժ տոնական օրով՝ Հուլիս 24-ին և մինչև 8-րդ դարի սկզբները ունեցավ Հայոց շարժական տոմարի այլ համարժեքներ, սակայն նրա վկայաբանության մեջ պահպանվեց նախնական ամսաթիվը՝ նավասարդի 7-ը: 8-րդ դարի 20-ական թվականներին Հովհան Օձնեցին Քրիստինեա կույսի հիշատակի օրը դրեց Վարդավառից հաշված 12-րդ օրը՝ հինգշաբթի: Այդ տոնական օրը 9-10-րդ դարերում ստացավ Հայոց շարժական տոմարի այլ ամսաթիվեր՝ Տրէ 17 և 15 կամ դրանցից մեկը: 9-10-րդ դարերում Հայոց տոնացույցում հիշյալ կանոնի տակ ավելացրին սրբերի նոր անուններ, այն է՝ 45 /47/ մարտիրոսների, որոնք նիկոպոլսում էին վկայվել և Եւփիմեա կույսին հավանաբար նկատի ունենալով նրանց վկայություն-ամիս-ամսաթիվերը՝ Հուլիս 10 և 11-ը, որոնք, երբեմն համընկնում էին տոնական օրվա հետ: Այդ կանոնը հետագայում չկրեց փոփոխություն:

\*\*\*

Հայոց տոնացույցների բոլոր խմբագրությունների ընդօրինակություններում, որոնք կատարվել են 13-17-րդ դարերում, Կալիստրատոսի և 49 ընկերների հիշատակի օր են կանոնել ինչպիսիք հաշված 28-րդ օրը, չաբաթ կամ ինչպիսիք կիրակիից հաշված 4-րդ կիրակիից հետո ընկնող շաբաթ օրը, կամ ինչպիսիք հաշված 5-րդ կիրակիին նախորդող շաբաթ, որն ընկնում է Հոկտեմբերի 11 ± 3 օր կամ Հոկտեմբերի 8-ից 14-ն ընկնող շաբաթ օրը: 759 թվահամարի Տոնացույցում գրված է. «էշ (շաբաթ). Սրբոյն Կալիստրատոսի և իմ ընկերաց» (էջ 173բ): Համարժեք տեղեկություն է տալիս նաև 179 թվահամարի գրչագիրը: 752 թվահամարի Տոնացույցի մեջ վերոհիշյալ սրբերի հիշատակի օրվա վրա ավելացվել է Ղուկկիանոս քահանայի տոնական օրը (էջ 173բ): Նույնարժեք տեղեկություններ են տալիս նաև հետագայում ընդօրինակված տոնացույցեր<sup>1</sup>: Միայն 2092 թվահամարի Տոնացույցի խմբագրության մեջ կարդում ենք. «Բշ (երկուշաբաթ). Կալիստրատոսի եւ ընկերացն... ի. Սեպտեմբեր 15» (էջ 229ա): Այս գրչագրի հեղինակը Սեպտեմբերի 27-ը քաղել է նրա վկայաբանությունից և տոնը փորձել է տեղափոխել ինչպիսիք հետո եկող երկուշաբթի, որը անհաջող փորձ է և այն չի ընդունվել հետագայում, ինչպես երևում է վերը բերված տոնացույցների տվյալներից: Գրիգոր Վկայասերի Տօնանամակի խմբագրությունների մեջ Կալիստրատոսի և 49 ընկերների հիշատակի օր է սահմանվել Սեպտեմբերի 27-ը<sup>2</sup>: Իսկ 940 թվահամարի գրչագիրը 116 համարի տակ գրանցել է Սեպտեմբերի 28-ը, որը Սեպտեմբերի 27-ից 28-ը տեղափոխվելու մի անհաջող փորձ է: Ծաշոցների մի խումբ հաստատում է տոնացույցների տեղեկությունները և Կալիստրատոսի ու 49 ընկերների հիշատակի օրը տալիս է շաբաթ օրվա կանոնով<sup>3</sup>: Իսկ ճաշոցների մի այլ խումբ ոչ միայն նշել է շաբաթ օրը, այլ ավելացրել Սեպտեմբեր 1-ն (20-ը): Թերևս կարելի է մտածել, որ Կալիստրատոսի վկայաբանության մեջ հանդիպող Սեպտեմբերի 15-ի է-ն ընկել է կամ բաց են թողել, սակայն հաշվի ենք առել նաև վերոհիշյալ Հուլիան ամիս-ամսաթիվը, թեև կասկած չունենք, որ այն առաջացել է վկայության օրվա նշումից՝ Սեպտեմբեր 27-ից:

1 Տե՛ս Ձեռ. № № 5667, էջ 139ա, 9838, էջ 178ա-179ա, 4164, էջ 206բ, 4874, էջ 196ա-բ, 5419, էջ 219ա-բ և այլն:  
2 Տե՛ս Ձեռ. № 979, էջ 4բ և 381ա-բ, Վեճեփիկի 639 թվահամարի գրչագիր:  
3 Տե՛ս Ձեռ. № № 7741, էջ 412բ-413ա, 4107, էջ 773-775 և այլն:  
4 Տե՛ս Ձեռ. № № 4514, էջ 359ա, 939, էջ 476բ, 4698, էջ 285բ և այլն:

Հայոց Յայսմավուրքների բոլոր խմբագրությունները Կալիստրատոսի և նրա 49 ընկերների հիշատակի օրը կանոնել են Հոռի ԺԸ և Սեպտեմբեր 15 կամ Սեպտեմբեր 15 և Հոռի ԺԸ կամ միայն Սեպտեմբեր 1-ի տակ<sup>1</sup>:

Մ. Ավգերյանը բերել է Կալիստրատոսի և նրա 49 ընկերների վկայության Հուլյան ամիս-ամսաթիվերը ըստ որի Հայոց և Հունաց մեջ այն նշել են Սեպտեմբերի 27-ին, իսկ Լատինացոց մեջ՝ Սեպտեմբերի 28-ին<sup>2</sup>:

Վերջապես «Վկայաբանությունն սրբոյն Կալիստրատոսի եւ որք ընդ նմա» վերնագիրը կրող բնագրում գրված է. «Եւ կատարեցան սուրբքն յամսեան Հոռի, որ աւր ԻԸ էր...»<sup>3</sup>:

Այսպիսով, Կալիստրատոսի և նրա 49 ընկերների հիշատակի անշարժ օրվա և շարժական տոնական օրվա համար ունենք Հայոց շարժական տոմարի Հոռի 28-ը և Հայոց անշարժ տոմարի Հոռի 18-ը: Վերջինս դուրս ենք գցում քննությունից հասկանալի պատճառով: Ինչպես և ունենք Հուլյան տոմարի հետևյալ ամիս-ամսաթիվերը՝ Սեպտեմբերի 27, Սեպտեմբերի 20 և Հոկտեմբերի 11 ± 3 օր, չաբաթ: Սրանցից Սեպտեմբերի 28-ը տոնի տեղափոխման տարբերակ է, որը նույնպես չենք քննարկում, իսկ Սեպտեմբերի 20-ը կամ տոնի տեղափոխման տարբերակ է կամ Սեպտեմբերի 27-ի գրչական սխալի արդյունք, որտեղ բաց է թողնվել միավորը՝ 7-ը: Վերջինս ավելի հավանական է, թեև հաշվումները կատարել ենք Սեպտեմբեր 20-ով ևս:

Այլ խոսքով ունենք Կալիստրատոսի և նրա 49 ընկերների վկայման օրը մի դեպքում Հայոց շարժական տոմարի Հոռի 28-ը, մյուս դեպքում Հուլյան տոմարի ամիս-ամսաթիվերը, այն է՝ Սեպտեմբեր 27 (20) և Հոկտեմբեր 11 ± 3 օր, այսինքն՝ Հոկտեմբեր 8-14-ը:

Որպեսզի պարզենք, թե Հայոց շարժական տոմարի Հոռի 28-ը ինչպես է առաջացել, այսինքն տոնացույցային թե տոմարական ճանապարհներով, կիրառենք երկու մեթոդներն էլ:

1. Հոռի 27 = Հոկտեմբեր 8-11 (միջին՝ 11), որտեղից ա) Հոռի 1 = Սեպտեմբեր 18 = 396-399 թթ., բ) Հոռի 1 = Սեպտեմբեր 15 = 408-411 թթ., գ) Հոռի 1 = Սեպտեմբեր 12 = 420-423 թթ.: Պարզ է, որ Հոռի 28-ը Հայոց տոնացույցային ճանապարհով չի առաջացել, որովհետև 4-րդ դարի վերջերին - 5-րդ դարի սկզբներին սրբերի հիշատակի օրերը տոնել են անշարժ տոնական օրերով:

- Հայոց տոմարական եղանակով ստանում ենք հետևյալ արդյունքները.  
ա) Հոռի 28 = Սեպտեմբերի 27, որտեղից Հոռի 1 = Օգոստոս 31 = 468-471 թթ.:  
բ) Հոռի 28 = Սեպտեմբերի 20, որտեղից Հոռի 1 = Օգոստոս 25 = 492-495 թթ.:

Նախընտրում ենք Ա տարբերակը, որովհետև Կալիստրատոսի և նրա 49 ընկերների վկայության օրը, ինչպես փաստել են բնագրերի ճշող մեծամասնությունը, Սեպտեմբեր 27-ն է և նրանց հիշատակը անշարժ ձևով տոնել են այդ օրը: Այստեղից հետևում է, որ Կալիստրատոսի և նրա 49 ընկերների վկայաբանությունը Հունարենից Հայերեն է թարգմանվել 468-471 թթ. քառամյակում և թարգմանիչը Հուլյան տոմարի Սեպտեմբերի 27-ը փոխարինել է Հոռի 28-ով իբրև Սեպտեմբերի 27-ի համարժեք Հայոց շարժական տոմարի ամիս-ամսաթիվ, որը պահպանվել է նրանց վկայաբանության հետագա ընդօրինակությունների մեջ: Կալիստրատոսի վկայաբանության հավանական թարգմանիչը կամ թարգմանության պատվիրողը կարող է լինել Գյուլտ կաթողիկոսը: Հաշվումները ցույց են տալիս, որ Կալիստրատոսի և նրա ընկերների հիշա-

1 Տե՛ս Ձեռ. № № 3082, էջ 390ա, 179, 2695, էջ 264բ, Վեճեփիկի 1048, և 710 թվահամարների գրչագրեր, 9585, էջ 8ա, 7529, էջ 3ա, 4741, էջ 43բ, 7433, էջ 54բ, ինչպես և Գրիգոր խաթեցու Յայսմավուրքի խմբագրությունները:  
2 Տե՛ս Մ. Ավգերյան, Լիակատար Վարք և վկայութիւն սրբոց, Բ. Ջ, էջ 570-594:  
3 Փարիզի 178 թվահամարի գրչագիր. ԸԼԷ համարի տակ, Երևանի միկրոֆիլմ համարն է 879:



տակը վաղ շրջանում տոնել են անշարժ կերպով Սեպտեմբերի 27-ին: Հետագայում դժվար է ասել Հովհան Օձնեցու ծառայող-Տոնացույցում, թե նրա հետագա խմբագրություններից մեկում Կալիստրատոսի և նրա 49 ընկերների հիշատակի օրը վերածվեց շարժական տոնի և դրվեց իսազվերացից հաշված 28-րդ օրը, շաբաթ: Այն համընկնում է Հոկտեմբեր 11 ± 3 օր, շաբաթ օրվա հետ, որը Սեպտեմբերի 27-ից որոշակիորեն տարբերվում է: Առայժմ մեզ հայտնի է տոնացույցային ճանապարհով հաշվարկված հայոց շարժական տոմարի որևէ ամսաթիվ, որը հնարավորություն տար որոշելու Կալիստրատոսի և նրա ընկերների հիշատակի օրվա տոնացույց մտնելու տարիները և դրանով հնարավորություն կտար որոշելու թե տոնացույցի որ խմբագրության ժամանակ է կանոնվել Կալիստրատոսի և նրա ընկերների հիշատակը իսազվերացից հաշված 28-րդ օրը: Մի բան պարզ է, որ 13-րդ դարում վերոհիշյալ սրբերի հիշատակի օրը հաստատուն մտած էր հայոց տոնացույց:

\*\*\*

Հայոց տոնացույցերի բնագրերը Անտոնինոսի և Թէոփիլոսեանց հիշատակի օր են սահմանել Վարդավառից հաշված 4-րդ կիրակիից հետո եկող շաբաթ կամ Վարդավառից հաշված 28-րդ օրը: 759 թվահամարի գրչագրում գրված է «էջ (շաբաթ). Անտոնինոսի և Թեոփիլոսեանց. յԱւգ[ոստոս] ժ» (էջ 171բ): 179 թվահամարի տոնացույցի խմբագրությունը չունի Օգոստոսի 10-ի նշումը:

752 թվահամարի Տոնացույցում կարդում ենք. «Շաբ[աթ]. Անտոնինոսի և Թէոփիլոսի, Անիկոսի և Փոտինոսի» (էջ 169ա): Համարժեք տեղեկություններ են տալիս նաև հետագայում ընդօրինակված տոնացույցերի խմբագրությունները<sup>1</sup>: Շաբաթ օրվա նշում ունի նաև 7741 թվահամարի ծառայողը (էջ 365ա): Գրիգոր Վկայասերի ծառայող խմբագրություններից մեկի միայն ցանկում է պահպանվել հետևյալ վկայությունը. «Նորին (Աւգոստոս) ժ. Անտոնինոսի»<sup>2</sup>: Իսկ 940 թվահամարի ծառայողն ձԱ համարի տակ ունի՝ «Աւգոստոս ժ. Անտոնինոսի Աղէկսանդրացոյ»:

4514 թվահամարի ծառայողն գրված է «ՅԱրեգ ժէ. Անտոնինոսի... (ներքին լուսանցքում՝ Շաբաթ աւր. Անտոնինոսի, Անիկոսի, Փոտինոսի եւ Թէոփիլեանցն եւ Ներսէսի Կլայեցոյն. ՅԱւգ[ոստոս] ժԳ» (էջ 308ա): Արեգի ժէ-ի նշումն ունի նաև 4698 թվահամարի ծառայողը (էջ 247բ):

939 թվահամարի ծառայողն ունի այլ ամսաթվային նշում, այն է՝ «յԱրեգ ժԵ. Անտոնինոսի... (ներքին լուսանցքում. «Շաբաթ աւր. Անտոնինոսի, Անիկոսի եւ Թէոփիլեանցն եւ Փոտինոսի եւ Ներսէսի Կլայեցոյն»)» (էջ 410ա): Համարժեք տեղեկություններ են պահպանվել 4437 և 4506 թվահամարի ծառայողներում<sup>3</sup>:

Հայոց Յայսմավորքների խմբագրությունները վկայել են հիմնականում երեք ամիս-ամսաթվային նշումներ յուրաքանչյուր սրբերի խմբերի համար առանձին-առանձին:

Վենետիկի 1048 թվահամարի գրչագրում գրված է.

ա) «(Յունուար) Ը. ... եւ յայսմ աւուր սրբոյն Թէոփիլոսի սարկավագի»:

բ) «(Աւգոստոս) ժ. Վկայաբանութիւն սրբոյն Անտոնինոսի»

գ) «(Աւգոստոս) ժԲ. Վկայաբանութիւն սրբոց վկայիցն Անիկոսի եւ փոտի[ն]ոսի

3082 և 179 թվահամարի համառոտ Յայսմավորքներն ունեն՝

ա) «Նորին (Նաւասարդի) Բ. Անիկոսի և Փոտինոսի (Աւգոստոս) ժԲ»:

բ) «Նորին (Աւելեաց) Ե. Վկային Անտոնինոսի (Աւգոստոս) ժ»:

գ) Արաց Ա... և յիշատակ Թեոփիլոսի[սի]սարկ[ավագի] (Յունուար) Ը»<sup>1</sup>:

Նույնարժեք տեղեկություններ են տալիս Յայսմավորքների հետագա խմբագրությունները, թեև չեն պահպանվել որոշ կանոններ: Ամբողջական բնագրերը Նաւասարդի 2- և Օգոստոսի 12-ի տակ տալիս են Անիկոսի և Փոտինոսի հիշատակի օրը, Ավելեաց 5- և Օգոստոս 10-ի տակ՝ Անտոնինոսի, իսկ Արաց 1- և Հունվար 8-ի՝ Թէոփիլոսի սարկավագի<sup>2</sup>: Միայն Գրիգոր իլաթեցին Անտոնինոսի հիշատակի օրը տեղափոխել է Ավելեաց 4 և Օգոստոս 9 (Ավելեաց 5 և Օգոստոս 10 փոխարեն)<sup>3</sup>:

Մ. Ավգերյանը բերել է չորս խումբ վկայաբանություններ, որոնք են.

1. Անտոնինոսի Ալեքսանդրացու հիշատակի օրը ըստ Հայոց՝ Օգոստոս 9 կամ 10, ըստ Յունաց Օգոստոս 8 կամ 9

2. Թէոփիլոսի հիշատակի օրը ըստ Հայոց, Յունաց և Լատինացոց՝ Յունուարի 8

3. Թէոփիլոսի և այլոցն հիշատակի օրը՝ առանց ամսաթվերի:

4. Անիկոսի և Փոտինոսի հիշատակի օրը ըստ Հայոց՝ Օգոստոս 12, Յունաց՝ Օգոստոս 11, Լատինացոց՝ Օգոստոս 12<sup>4</sup>:

Հայոց անշարժ տոմարի ամիս-ամսաթվերը դուրս են գալիս քննությունից հասկանալի պատճառով: Մնում է Արեգ ժէ (ժԵ)-ն որպես հայոց շարժական տոմարի նշում և հայոց տոնացույցի մեջ վկայված Վարդավառից հաշված 28-րդ օրվա համարժեքները, ինչպես և Օգոստոս 12-ը, 10-ը և Հունվարի 8-ը: Արեգի 17-ի և Վարդավառից հաշված 28-րդ օրվա համարժեքներով ստանում ենք հետևյալ արդյունքները.

Ներկա թվական	Հուլյան ամիս	Հուլյան ամսաթիվ	Շաբաթվա օր	Հայոց թվական	Հայոց ամիս	Հայոց ամսաթիվ	Շաբաթվա օր
1280	8	24	7	729	8	17	7
1294	8	21	7	743	8	17	7
1308	8	17	7	754	8	17	7

Հաշվումները ցույց են տալիս, որ Արեգ 17-ը չի առաջացել տոնացույցային ճանապարհով, որովհետև ստանում ենք Օգոստոս 24, 21 և 17 համարժեքները, որոնք փոխման Աստուածածնից հետո եկող ամիս-ամսաթվեր են: Նույն օրինաչափությունը կրկնվում է Արեգի 15-ի հետ: Բացասական արդյունք են տալիս նաև Արեգ 17 (15)-ի համադրությունները Օգոստոս 12 և 10-ի հետ, այսինքն՝ այդ ամսաթվերը գրանցվել են բնագրում ավելի վաղ, քան նրանց համարժեքների տարիները: Պարզ է դառնում, որ Արեգ 17 կամ 15-ի նշումները վերաբերում են տոնի տեղափոխմանը: Դժբախտաբար հայտնի է, թե տոնական տարվա որ հատվածում են տե-

1 Տե՛ս Ձեռ. № 3082, էջ 289ա և 398ա:

2 Տե՛ս Ձեռ. № 2695, էջ 214բ, 218բ, Վեճեփիկի 189 և 631 թվահամարների գրչագրեր, 7433, էջ 2ա և 193բ, առանձին կանոններով՝ Վեճեփիկի 710 թվահամարի գրչագիր, 9585, էջ 118բ, 7530, էջ 90ա, 4741, էջ 163բ, նաև Գրիգոր իլաթեցու Յայսմավորքի խմբագրությունները, տպագիր, էջ 15-17, 429-432:

3 Տե՛ս տպ. տեքստ էջ 1015-1017:

4 Տե՛ս Ն. Ավգերյան, Լիակատար վարք և վկայաբանութիւն սրբոց... Բ. Դ., էջ 369-362, 363-364, 365-372, 373-382:

1 Տե՛ս Ձեռ. № № 767, էջ 169ա, 5667, էջ 131բ, 7203, էջ 74ա, 9838 էջ 174ա, 4164, էջ 191ա, 4874, էջ 191ա և այլն:

2 Տե՛ս Ձեռ. № 979, էջ 4բ:

3 Տե՛ս Ձեռ. № № 4437, էջ 157ա-159ա, 4506, էջ 321ա:



ղափոխել հիշյալ սրբերի հիշատակի կանոնը, երբ Վարդավառ-Աստուածածին հատվածում տոնելի օրերը կրճատվում էին, թերևս Հունվարի 13 - Առաջավոր Բարեկենդանի միջև, սակայն որ կանոնի տակ հայտնի է: Այլ խոսքով Արեգ 17 կամ 15-ի ամսաթիվն առաջացել է այն ժամանակ, երբ հիշյալ սրբերի տոնի օրը տեղափոխվել է տարվա այլ տեղ:

\*\*\*

Հայոց «Կանոնք ընթերցուածոց»-ների հնագույն խմբագրութունները Բուն Բարեկենդանից հաշված երրորդ կիրակիից հետո եկող շաբաթ օրը կամ Բուն Բարեկենդանի երրորդ շաբաթվա շաբաթ օրը կամ Զատիկից ետ հաշված 30-րդ օրը կանոնել են Հովհաննես Երուսաղեմցու հիշատակի օրը, որին, ինչպես կտեսնենք, որոշ ամիս-ամսաթիվերի վերլուծութունից 8-րդ դարի 20-ական թվերից ավելացրել են նաև Աբղայի (Աբղիշոյի), Շմավոնի, Որմզդանայի, Սայենի, Բենիամինի և այլ անթիվ բազում վկաների, որոնք Պարսկաստանում են նահատակվել:

Բերենք որոշ տվյալներ տոնացույցերի և ճաշոցների հետագա խմբագրութուններից:

759 և 179 թվահամարների տոնացույցերում կարդում ենք. «Երրորդ շաբաթն. Յովհաննու Երուսաղեմի հայրապետի և Աբղիշոյ և Շմաւոնի եպիսկոպոսի և այլ անթիվ բազում վկայից, որ ի Պարսս կատարեցան» (էջ 180ա և 540բ):

7203 թվահամարի Տոնացույցում գրված է. «Շաբ[աթ]. Յովհաննու Երուսաղեմայ հայր[ապետի] և Աբղիշոյի եպ[իսկոպոսի]» (էջ 27ա): Տոնացույցերի մի զգալի մասը ունեն միայն Հովհաննես Երուսաղեմցու նշումը:

Գրիգոր Վկայասերի Տոնանամակի խմբագրության ցանկի մեջ առկա է. «Նորին (Մարտի) ԻԴ. Աբղայի եպիսկոպոսի» (էջ 3բ): 940 թվահամարի ճաշոցի ԼԹ (39) համարի տակ գրված է. «Մարտի ԻԴ եւ յԱրեգ Ժէ (ուղղել՝ ԺԶ). Աբղայ եպիսկոպոսի եւ Որմզդանայ եւ Սայենի եւ Բենիամինի սարկավագի»:

4514 թվահամարի ճաշոցն ունի՝ «Շաբաթ աւր. Յովհաննու Երուսաղեմայ եւ Շմաւոնի հայրապետի (ներքին լուսանցքում՝ «Շաբաթ աւր. Յովհաննու Երուսաղեմայ հայրապետի եւ Աբղիշու եպիսկոպոսի եւ Շմաւոնի հայրապետի եւ ամենայն արևելեան մարտիրոսացն»)» (էջ 71ա):

939 թվահամարի ճաշոցում կարդում ենք «Շաբաթ աւր. Յովհաննու Երուսաղեմայ հայրապետի... (ներքին լուսանցքում՝ «Շաբաթ աւր. Յովհաննու Երուսաղեմայ հայրապետի և Աբղիշոյի եպիսկոպոսի եւ Շմաւոնի հայրապետի»)» (էջ 107 ա-բ): Ճաշոցներից շատերն ևս չունեն վերոհիշյալ սրբերի հիշատակի նշումները:

Հայոց Յայսմավուրքների խմբագրութունների մեջ Մարտի 24-ի կամ Արեգի 16-ի և Մարտի 24-ի կամ Մարտի 24-ի և Արեգի 16-ի կանոնների տակ տվել են վկայաբանութունը՝ Աբղայի, Որմզդանայի, Սայենի և Բենիամինի և նրանց որոնք Պարսկաստանում նահատակվեցին<sup>1</sup>:

Գրիգոր Խլաթեցու Յայսմավուրքի մեջ կատարվել է տեղափոխութուն և վերոհիշյալ սրբերի հիշատակի օրը դրվել է Ահեկի 7 և Ապրիլի 14 կանոնի տակ<sup>2</sup>:

Վերջապես «Վկայաբանութիւն սրբոյն Աբղայի եպիսկոպոսի եւ Որմզդանայ եւ Սայենի եւ Բենիամինի սարկավագի, որ ի Պարսս կատարեցան» վերնագիրը կրող բնագրում գրված է. «Աւանդեաց զհոգին ի ձեռն հրեշտակաց ի Մարերի ամսոյ ի քսան եւ չորսն...»<sup>3</sup>:

Մ. Ավգերյանը հիշյալ սրբերի հիշատակի օրվա համար տալիս է ըստ Հայոց՝ Ապրիլ 14, որը վերցրել է Գրիգոր Խլաթեցու գրչագրերից, իսկ Յունաց և Լատինացոց համար բերել է Մարտի 31-ը<sup>1</sup>:

Աբղայի, Որմզդանայի, Սայենի, Բենիամինի և այլոց՝ նրանց հետ Պարսկաստանում նահատակվելու օրվա համար ունենք Հայոց անշարժ տոմարի Արեգի 16-ը և Ահեկի 7-ը, ինչպես և Ապրիլ 14-ը, որոնք քննության չենք ենթարկում, մնում է Հայոց շարժական տոմարի Մարտի 24-ը, հուլյան տոմարի Մարտ 24-ը, ինչպես և վերոհիշյալ սրբերի հիշատակի օրվա շարժական տոնը, որը ունեցել է հուլյան տոմարի տարբեր համարժեքներ՝ կապված Զատիկի օրվա 35 օրյա տատանման հետ: Բացահայտենք Մարտի 24-ի ժամանակները կիրառելով Հայոց տոնացույցային և տոմարական եղանակներ: Ըստ «Տոմար» ծրագրի Մարտի 24 = Մարտ 24, որտեղից Մարտի 1 = Մարտ 1 = 700-703 թթ.:

Բերենք «Հայոց տոնացույց» ծրագրի հաշվումների տվյալները.

Ներկա թվական	Հուլյան ամիս	Հուլյան ամսաթիվ	Շաբաթվա օր	Հայոց թվական	Հայոց ամիս	Հայոց ամսաթիվ	Շաբաթվա օր
710	3	22	7	158	10	24	7
724	3	18	7	172	10	24	7
738	3	15	7	186	10	24	7
752	3	11	7	200	10	24	7
756	3	8	7	214	10	24	7

Հաշվումները ցույց են տալիս, որ Աբղայի և նրա հավատակիցների վկայաբանութունը թարգմանվել է 700-703 թթ. քառամյակում, իսկ Հովհան Օձնեցին նրանց հիշատակի օրը ավելացրել է Հովհաննես Երուսաղեմցու կանոնի մեջ 724 թ., ստացել է հուլյան տոմարի նոր համարժեք Մարտի 18-ը, որը Հայոց շարժական տոմարի Մարտի 24-ի տոնացույցային արժեքն էր տվյալ տարում: Ասենք նաև, որ Մարտի 24-ը Հայոց տոնացույցի մեջ կորցրեց իր նախնական ամիս-ամսաթվային նշումը վերածվելով շարժական տոնի, թեև Մարտի 24-ը պահպանվեց հետագա ընդօրինակված բնագրերում և ստացված Հայոց անշարժ տոմարի Արեգի 16-ի համարժեքը: Հայոց տոնացույցային եղանակով ստացված տարիները ցույց են տալիս, որ Հովհան Օձնեցու ճաշոց-Տոնացույցից է գալիս վերոհիշյալ սրբերի հիշատակի օրը շարժական տոնի վերածելը և այն հնագույն ճաշոց-Տոնացույցի խմբագրման մի նոր ապացույց է, որը հնարավոր դարձավ հիմնավորել կիրառելով նորագույն մեթոդները:

\*\*\*

Հայոց տոնացույցերի խմբագրութունները Յակովկա և Իրավափառա հիշատակի օր են կանոնել Յիսնակամտից հաշված 2-րդ կիրակիից հետո եկող երեքշաբթին կամ Յիսնակամարտից հաշված 17-րդ օրը, որն ընկնում է Նոյեմբեր 3 ± 3 օր, կամ Հոկտեմբեր 31 - Նոյեմբեր 6-ին ընկնող յուրաքանչյուր տարվա երեքշաբթի:

759 թվահամարի Տոնացույցում կարդում ենք. «Գշ (երեքշաբթ). Սրբոյն Յակովկայ և Իրաւափառայ. Նոյ[եմբեր] ԻԸ» (էջ 176ա): Առանց ամսաթվային նշման երեքշաբթի օրվա կանոնի տակ են տվել հիշյալ սրբերի հիշատակի տոնը մի խումբ տոնացույցերի և ճաշոցների խմբագրութունները<sup>2</sup>: Ասենք, որ որոշ բնագրեր Յակովկա փոխարեն ունեն Յակոբա տարբերա-

<sup>1</sup> Տե՛ս Վեճեփիկի 1048 և 710 գրչագրերը, 3082, էջ 395ա, 179, 2695, էջ 78ա, 9585, էջ 178բ, 7529, էջ 136բ, 4741, էջ 238ա, 7433, էջ 268բ և այլն:

<sup>2</sup> Տե՛ս տպագիրը՝ էջ 738-790:

<sup>3</sup> Փարիզի 178 թվահամարի ձեռագրի ԾԺ համարի տակ, միկրոֆիլմի համարն է 879:

<sup>1</sup> Տե՛ս Մ. Ավգերյան, Լիակատար Վարք և վկայութիւն սրբոց, Բ. Բ, էջ 214-221:

<sup>2</sup> Տե՛ս Ձեռ. N° N° 179, 752 էջ 175բ, 5667, էջ 142բ, 7203, 9838, էջ 181բ, 4164, էջ 212ա, 4874, 7741, էջ 450բ-451ա, 4107, էջ 854 և այլն:

կը: Նոյեմբեր 28-ը Իրավափառի հիշատակի օրվա նշում է, ինչպես կտեսնենք հետագայում: Գրիգոր Վկայասերի Տօնանամակի խմբագրություններում գտնում ենք ամսաթվային նշումներ: 979 թվահամարի ձառնում ցանկի մեջ գրված է. «Նորին (Նոյեմբեր) Ի՛ն. Յակովկայ և Իրաւափառայ» (էջ 5բ), իսկ բնագրում՝ «Նորին (Նոյեմբեր) Ի՛ն. Վկայու(թիւն) բազմաչարչար վկային Յակովկայ թագաւորազնոյ եւ Իրաւ(բնագրում՝ ք) ասիառայ վկայի...» (էջ 313բ-314ա): Այն կանոնված է Նոյեմբեր 26-ից հետո, ուստի Ի՛ն-ն պետք է սբագրել Ի՛ն, ինչպես առկա է նաև ցանկում: Վենետիկի 639 թվահամարի գրչագրում կարդում ենք. «Նոյեմբեր Ի՛ն. Սրբոյն Յակովբայ վկայի...»<sup>1</sup>:

Նոյեմբերի 27-ի կանոնի տակ է տվել միայն Յակովկա հիշատակի օրը 940 թվահամարի ձառնում (ՃՀԲ (172) համարի տակ):

4514 թվահամարի ձառնում ունի. «Հոկտեմբեր Ի՛Գ. Յակովկա... (ներքին լուսանցքում «Երեքշաբթի. Սրբոյն Յակովկա եւ Իրաւափառա եպիսկոպոսի»)» (էջ 390):

Նույն ամսաթիվը և շաբաթվա օրն են տվել որոշ ճառոցներ ևս<sup>2</sup>: Իսկ 4506 թվահամարի ձառնում գրում է. «Հոկտեմբեր Ի՛Գ. Յակովկա և Իրաւափառա» (ներքին լուսանցքում ունի նաև երեքշաբթի օրվա նշումը) (էջ 403ա): Հոկտեմբերի Ի՛Գ-ն պետք է սբագրել Ի՛Գ, ինչպես վերևում բերված բնագրերում են, իսկ 939 թվահամարի ձառնում «Յակովբայ» անվանումը հուշում է, որ Հոկտեմբեր 23-ի նշումը վերցվել է Հակոբ Տեառնաեղբոր հիշատակի անշարժ օրվա համար վկայված ամսաթվից և Յակովկան փոխել են Յակովբայի:

Հայոց Յայսմավուրքների խմբագրությունները Յակովկա պարսկի հիշատակի օրը կանոնել են «Տրէ ԺԹ և Նոյեմբեր Ի՛ն»-ի տակ<sup>3</sup>: Իսկ Հովսեփ Կոստանդնուպոլսեցու Տօնացույց--Յայսմավուրքի թարգմանություն խմբագրության մեջ (Վենետիկի 1048 թվահամարի գրչագիր) բերել է Նոյեմբերի 27-ի տակ:

Գրիգոր Խլաթեցին Յակովկա պարսկի հիշատակի օրը տեղափոխել է. «Տրէ Ի՛ն և Դեկտեմբեր Գ» կանոնի տակ<sup>4</sup>:

«Վկայաբանութիւն Ս. Յակովկայ» բնագիրը տալիս է Հետևյալ տեղեկությունը. «Կատարեցաւ սուրբ և մեծ վկայն Քրիստոսի Յակովիկ, որ օր քսան և եօթն էր քաղոց ամսոյ, յաւուր շաբաթու յերրորդ ամի Վռամա, որդւոյ Յազկերտի Պարսից արքայի»<sup>5</sup>: Այլ խոսքով Յակովկա պարսկի հիշատակի օրվա համար ունենք Հայոց անշարժ տոմարի Տրէ 19 և 25-ը, որոնք քննության չենք ենթարկում հասկանալի պատճառով, ինչպես և Հայոց շաբաթական տոմարի Քաղոց 27-ը, որը կարող էր առաջանալ Հայոց տոնացույցային կամ տոմարական եղանակներով: Հուլյան ամիս-ամսաթվերից ունենք Նոյեմբեր 27-ը և 28-ը, Հոկտեմբեր 23-ը և 24-ը, ինչպես և Դեկտեմբեր 3-ը: Այս ամիս-ամսաթվերից միայն ընդունելի է Նոյեմբերի 27-ը, որի համար բերեցինք բազմաթիվ տեղեկություններ, Նոյեմբեր 28-ը Իրավափառի հիշատակի օրվա հուլյան ամիս-ամսաթվային նշում է: Յակովկա տոնական շաբաթական օրը տատանվել է Հոկտեմբեր 31 - Նոյեմբեր 6-ի սահմաններում, իսկ Դեկտեմբեր 3-ը Գրիգոր Խլաթեցու ստացած ամիս-ամսաթիվն է՝ նրա հիշատակի օրվա տեղափոխման հետևանքով:

Մ. Ավգերյանը բերել է Դեկտեմբերի 3-ը իբրև Յակովկա, վկայի հիշատակի օրվա նշում, որը ինչպես տեսանք գալիս է Գրիգոր Խլաթեցուց: Նոյեմբեր 27-ը, երբ տոնում էին Յակովկա

պարսկի տոնը անշարժ տոնական կանոնով ասորիները, արարները, քաղղեացիները, ղպտացիները և այլն<sup>1</sup>: Իսկ Իրավափառ վկայի համար Դեկտեմբեր 30-ը իբրև Հայոց Յայսմավուրքների տեղեկություններ, որը նույնպես գալիս է Գրիգոր Խլաթեցու Յայսմավուրքի խմբագրությունների որոշ բնագրերից: Իսկ Յուլյան և Լատինացուց մեջ վկայված Դեկտեմբերի 21-ը չի պահպանվել Հայոց բնագրերում: Մ. Ավգերյանը բերել է վենետիկյան մի ճառընտրի (ըստ նրա՝ Ա-ն), որտեղ Իրավափառի հիշատակի օրը փաստվել է Նոյեմբեր 28-ը<sup>2</sup>:

Այն, ինչպես տեսանք, առկա է 759 թվահամարի Տոնացույցի խմբագրության մեջ: Այսպիսով Յակովկա հիշատակի օրվա համար ունենք Հայոց շաբաթական տոմարի Քաղոց 27-ը, և հուլյան անշարժ տոմարի Նոյեմբերի 27-ը ինչպես և Յակովկա և Իրավափառա տոնական օրվա Նոյեմբեր 3 ± 3 օր, երեքշաբթին:

Կիրառենք Հայոց տոնացույցային և տոմարական եղանակները բացահայտելու համար Քաղոց 27-ի համարժեքները:

Տեսանք, որ Յակովկա հիշատակի օրը կանոնել են Յիսնակամտից Հաշված 17-րդ օրը: Այդ տվյալներով Քաղոց 27-ը տալիս է 6-րդ դարի սկզբների տարեթիվը: Այն ընդունելի չէ, որովհետև այդ ժամանակներում սրբերի տոները նշել են անշարժ տոնական օրով: Կիրառենք Հայոց տոնացույցային եղանակը: Յակովկա հիշատակի օր է սահմանվել անշարժ տոնական օրով Նոյեմբեր 27-ը, որը համադրելով Քաղոց 27-ին ստանում ենք Քաղոց 1 = Նոյեմբեր 1 = 580-583 թթ.: Պարզվում է, որ Յակովկա վկայաբանությունը թարգմանվել է 6-րդ դարի 80-ական թվականների սկզբներին և թարգմանիչը Նոյեմբեր 27-ը փոխարինել է Հայոց շաբաթական տոմարի Քաղոց 27-ով: Նրա տոնական օրով համար չունենք Հայոց շաբաթական տոմարի ամիս-ամսաթիվ և միայն կարող ենք ասել, որ Յակովկա և Իրավափառա հիշատակի օրը արդեն առկա է Հայոց տոնացույցում 13-րդ դարում: Պարզ չէ, թե նրանց հիշատակի օրը երբ է մտցվել տոնացույց և վերածվել շաբաթական տոնի: Մի բան հստակ է, որ Վկայաբանության թարգմանությունից հետո Յակովկա հիշատակի օրը Հայոց մեջ տոնվել է անշարժ տոնական օրով Նոյեմբերի 27-ին, իսկ շաբաթական տոնի վերածվելուց հետո Նոյեմբեր 3 ± 3 օր, որով կորցրել է նախնական ամիս-ամսաթվի իմաստը, թեև այն պահպանվել է հետագա բնագրերում:

\*\*\*

Հայոց Հնագույն տոնացույցների խմբագրությունները Թեոդոտոնի Գաղատացու և Թալբեւա բժշկի հիշատակի օր են կանոնել Հոգեգալստեան (Պենտեկոստի) կիրակիից Հաշված 3-րդ - կիրակիից հետո եկող Հինգշաբթի կամ Հոգեգալստեան կիրակիից Հաշված 26-րդ օրը, որը տատանվել է Զատիկի օրերի փոփոխման հետ համընթաց:

759 և 179 թվահամարի գրչագրերում գտնում ենք համարժեք տեղեկություններ, այն է՝ «Եշ (Հինգշաբթի). Թեոդոտոնի Գաղատացու և Թալբեւա բժշկի»<sup>3</sup>:

14-րդ դարից հետո հիշյալ կանոնին ավելացվում է Անկյուրիայում նահատակված 7 կույսերի հիշատակի օրը: Այսպես, 752 թվահամարի Տոնացույցի մեջ գրված է. «Եշ (Հինգշաբթի). Թէոդոտոնի Գաղատացոյ և Թալիլա բժշկին և է կուսանացն, որ յԱնկուրիա կատարե-

1 Տե՛ս Ս. Ծեմճեմյան, Գշվ. աշխ., էջ 605-628:  
2 Տե՛ս Ջեռ. N° N° 939, էջ 519բ, 4698, էջ 311ա:  
3 Տե՛ս Ջեռ. N° N° 3082 էջ 392ա, 2695, էջ 334բ, 7529 էջ 63ա, 7530, էջ 42ա, 4741, էջ 108բ, 7433, էջ 136ա և այլն:  
4 Տե՛ս տպ. տեսք էջ 312-315:  
5 Վարք և վկայաբանութիւն, 1874, Վենետիկ, Բ. Ա., էջ 122:

1 Տե՛ս Մ. Ավգերյան, Լիակատար Վարք և վկայութիւն սրբոց, Բ. Թ., էջ 203-227:  
2 Տե՛ս Մ. Ավգերյան, Լիակատար Վարք և վկայութիւն սրբոց, Բ. Թ., 228-236:  
3 Տե՛ս Ջեռ. N° N° 759, էջ 171ա և 179:

ցան» (էջ 166բ): Նույնարժեք տեղեկություններ ունեն հետագա ընդօրինակված տոնացույցերի և որոշ ճաշոցների խմբագրությունները<sup>1</sup>:

Հայոց ճաշոցների որոշ բնագրեր ունեն ոչ միայն հինգշաբթի օրվա, այլև ամիս-ամսա-թվալի նշումներ: 4514 թվահամարի գրչագրում գրված է. «Մայիս ԻԳ. Թէոդորիտոնի... (ներքին լուսանցքում՝ «Հինգշաբթի. Թէոդորիտոնի Գաղատացոյ եւ Թալիւա բժշկի և է կուսանացն)» (էջ 216ա):

Համարժեք վկայություններ են թողել 939 և 4506 թվահամարների ձեռագրերը (էջ 347ա և 275ա): Իսկ 4437 թվահամարի ձաշոցն արձանագրել է. «Մայիսի ԻԴ. Թէոդորիտոնի Գաղա-տացոյ... (ներքին լուսանցքում՝ «Հինգշաբթի. Թէոդորիտոնի եւ Թալիւա բժշկի և է կուսանացն)» (էջ 104ա): Մայիսի 24-ը Թալիւա բժշկի հիշատակի օրվա անշարժ տոնի հուլյան տոմարի ամիս-ամսաթիվն է, իսկ Մայիսի 23-ը մի օրվա տարբերություն ունի, ինչպես Թալիւա բժշկի հիշատակի, այնպես էլ Թեոդորոն Գաղատացու ու 7 կուսանաց հիշատակի օրից, որը Մայիսի 22-ին էր:

Գրիգոր Վկայասերի Տօնանամակի խմբագրության մեջ գրված է. 1. «Նորին (Մայիսի) ԻԲ. Թեոդոտոնի Գաղատացոյ և Լթն կուսանացն...», 2. «Նորին (Մայիսի) ԻԴ. Թալիւա բժշկին և ընկերաց Նորին»<sup>2</sup>: Այդպես է նաև գրչագրի ցանկում (էջ 4ա): Իսկ 940 թվահամարի ձաշոցը հիշյալ սրբերի հիշատակի օրը բերել է ՄԸ և ՄԹ համարների տակ Մայիսի 22 և Մարբրի 14-ի (ուղղել՝ 15) և Մայիսի 24 և Մարբրի 18-ի (ուղղել՝ 17) կանոնների մեջ: Հայոց Յայսմավուրքների խմբագրությունները Թեոդոտոնի Գաղատացու և Անկյուրիայում վկայված 7 կուսերի հիշատակի օրը դրել են Մայիս 22-ի կամ Մարբրի 15 և Մայիս 22-ի համարժեքներով, իսկ Թաղիղա բժշկինը՝ Մայիսի 24-ի կամ Մարբրի 17 և Մայիսի 24-ի զուգահեռներով<sup>3</sup>: Իսկ Գրիգոր Խլաթեցին Թալիւա բժշկի հիշատակի օրը տեղափոխել է Մարբրի 13 և Մայիս 20-ի կանոնի տակ<sup>4</sup>:

«Վկայաբանութիւն Ս. Թաղ[ե]ղեայ» բնագրի մեջ կարդում ենք, որ նա նահատակվել է «յառաջ քան զինն կաղանդացն [Յունիսի] (= Մայիս 24)՝ յամսեանն Հոռի, որ օր ԻԳ (23) էր ամսոյն»<sup>5</sup>: Ինչպես տեսանք Թալիւա բժշկի հիշատակի օր է սահմանվել Մայիս 24-ին, որը իսկապես Հունիս 1-ից առաջ էր «քան զինն»:

Մ. Ավգերյանը Թալիւա բժշկի վկայաբանության մեջ բերել է Մայիս 20-ը, իբրև Հայոց, Հունաց և Լատինացոց Յայսմավուրքների տվյալներ, սակայն այդ նշումն ունի Գրիգոր Խլաթեցին միայն: Իսկ Թեոդորիտոնի Գաղատացու և 7 կուսանաց վկայաբանության մեջ տալիս է հետևյալ ամիս-ամսաթիվերը՝ Հայոց համար Մայիս 22-ը, իսկ Հունաց՝ Մայիս 18-ը և Հունիս 7-ը, վերջապես Լատինացոց համար՝ Մայիս 18-ը<sup>6</sup>:

Հանելով քննությունից Հայոց անշարժ տոմարի Մարբրի 17-ը և նկատի ունենալով Թալիւա բժշկի վկայաբանության և մյուս բնագրերի Մայիսի 24-ը և նրա Հայոց շարժական տոմարի համարժեք Հոռի 23-ը Հայոց տոմարական եղանակով ստանում ենք հետևյալ արդյունքները, այն է՝ Հոռի 23 = Մայիս 24, որտեղից Հոռի 1 = Մայիս 2 = 925-955 թթ.:

Այս հաշվումներից պարզ է, որ Թալիւա բժշկի վկայաբանությունը հունարենից թարգմանվել է Հայերեն 10-րդ դարի 50-ական թվականների սկզբներին և Հայ թարգմանիչը Մայիսի 24-ի համարժեք է դրել Հոռի 23-ը, որով հնարավորություն է տվել որոշելու թարգմանության տարիների քառամյակը: Հայոց տոնացույցային եղանակը թեև տալիս է դրական արդյունք, բայց տվյալ դեպքում կիրառելի չէ:

<sup>1</sup> Տե՛ս Ձեռ. № № 767, էջ 168բ, 56667, էջ 127ա, 7203, էջ 67ա, 9838, էջ 176ա-բ, 4164, էջ 184բ, 4459, էջ 89ա, 7741, էջ 132ա-բ, 5455, էջ 204բ, 4107, էջ 547 և այլն:

<sup>2</sup> Ձեռ. № 979, էջ 366ա-307ա:

<sup>3</sup> Տե՛ս Վեճեփիկի 1048 թվահամարի գրչագիր, 3082, էջ 396ա-բ, 179, 2695, էջ 132ա և 133բ, 9585, էջ 228ա և 229ա, 4741, էջ 295բ և 297ա, 7433, էջ 328բ և 330ա և այլն:

<sup>4</sup> Տե՛ս տպագիրը, էջ 847-845 և 842-844:

<sup>5</sup> Վարք և վկայաբանութիւն, 1874, Վեճեփիկ, Բ. Ա, էջ 503:

<sup>6</sup> Տե՛ս Մ. Ավգերյան, Լիակատար Վարք և վկայութիւն սրբոց, Բ. Գ, էջ 274-286 և 289-320:

**ՀԱՅՈՑ ՏՈՆԱԳՈՒՅՑԵՐԻ ԵՎ ԾԱՇՈՑՆԵՐԻ ՏՈՆԱԿԱՆ ՕՐԵՐԸ ԵՎ ՆՐԱՆՑՈՒՄ ԿԱՏԱՐՎԱԾ ԽՄԲԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՔՆՆՈՒԹՅՈՒՆԸ (9-18-ՐԳ ԴԱՐԵՐ)**

Հովհան Օձնեցու խմբագրած «Կանոնք ընթերցուածոց» - «Տոնացոյց ըստ շաբաթուոց»-ի հնագույն բնագրեր չեն պահպանվել: Ամենահնագույն գրչագրերը 13-րդ դարից են գալիս: Երևանի Մատենադարանի Տոնացույցերի հնագույն ընդօրինակութիւնները, որոնք հիմնականում համարժեք են, 1278 թ. և 1292 թ. գրչագրեր են: Սրանք հիմք ընդունելով ցույց կտանք հատկապես տոնացույցերում, ինչպես և ճաշոցներում կատարված խմբագրութիւնները, սկսած Հովհաննես Օձնեցու Տոնացույց-ձաշոցի 2-րդ խմբագրութիւնից՝ 9-րդ դարի 4-րդ քառորդից մինչև 1287-1292 թթ. և դրանից հետո՝ 18-րդ դարի 4-րդ քառորդը. Սիմեոն Երևանցու Տոնացույցի խմբագրութիւնը ներառյալ:

Նպատակահարմար է սկսել տոնական տարվա սկզբից, որպեսզի Տոնացույցում կատարված փոփոխութիւնների պատկերը ամբողջական լինի, թեև դրանով կխախտվի ժամանակագրական կտրվածքը: Այն կտանք տոնացույցային տարվա փոփոխութիւնների հետ, որով կլուծվի նաև այդ խնդիրը:

Նախ մի քանի խոսք պահպանված բնագրերի մասին:

759 թվահամարի գրչագրի հիշատակարանում գրված է. «... Գրեցաւ առաջարանս և - տետրակս մանր ուսման ի թուիս Հայոց Չիէ (727), ի Հայրապետութեան Տեառն Յակովբայ, և ի թագաւորութեան Լեոնի որդւոյ Հեթմոյ, ի հռչակաւոր անապատս Սկեռայ ընդ Հովանեաւ Սուրբ Փրկչի և Մաւր լուսոյ Աստուածածնի և կենսակիր Սուրբ Նշանի. մերձ յանմատոյց դղեակս Համբրուների, որ է գլուխ Տարսոնի և ի ստորոտ մեծ լերին Տաւրոսի, ի լաւ և յընտիր աւրինակաց, ձեռամբ բազմեղ քահանայի և անպիտան գրչի Ստեփանոսի...» (էջ 181ա): «Լաւ և յընտիր աւրինակաց» ընդօրինակված գրչագիրը կրում է «Տ(աւ) նացոյց եւ հարցնացոյց բովանդակ տարոյ զհայ և զհռոմ ամսոցն...» վերնագիրը (էջ 168բ):

Տոնացույցը սկսվում է. «Զկնի Զատիկն երկուշաբթ աւրն...» սկսվածքով և ավարտվում հիշատակարանով: Թեև վերջինիս մեջ տոնացույցի անունը առանձին չի տրվել: Բնագրի մեջ առակա է Հովհաննես Մկրտչի տոնի օրը Հայոց շարժական տոմարի Նավասարդի 1-ի նշումով, որը հնարավորութիւն է տալիս մի կողմից, որոշել նախագաղափար օրինակի, մյուս կողմից Հովհաննես Մկրտչի այդ տոնի տոնացույց ներմուծելու ժամանակը: Այնտեղ գրված է. «Նաւասարդի Ա. Յովհաննու Մկրտչին տաւն է» (էջ 178բ): Այդ տոնը տեղադրվել է Հունվարի 13-ից հետո և Առաջավոր Բարեկենդանից առաջ տոնվող սրբերի շարքում 8-րդ կանոնի տակ: Քննարկվող տոնի տոնացույց ներդնողը նախագաղափար օրինակի հեղինակն է: Բանն այն է, որ Հունվարի 13-ից հետո և Առաջավոր Բարեկենդանից առաջ տոնվող սրբերի 8-րդ կանոնի տակ հիշյալ տոնը կարող էր մուծվել տոնացույց հետևյալ տարեթվերից մեկում

- ա) 1215 թ. Նաւասարդ 1 = Հունվար 27 = երեքշաբթի = 8-րդ կանոն = Հովհաննես Մկրտչի տոնի օր = 8-րդ տոնելի օրը:
- բ) 1219 թ. Նաւասարդի 1 = Հունվար 26 = շաբաթ = 8-րդ կանոն = Հովհաննես Մկրտչի տոնի օր = 8-րդ տոնելի օրը:

Ի դեպ սրբերի տոները զույգ զույգ մի կանոնի տակ տոնելու դեպքում «Կիրակոսի և Մաւր նորա Յուդիտեա և Աբղիմսեհի» տոնին գումարվել է Հովհաննես Մկրտչի հիշատակի օրը, որը եղել է 1247 թ. Նավասարդ 1 = Հունվար=19 = շաբաթ = 4-րդ կանոն (7 և 8-ը միասին) =

4-րդ տոնելի օրը: Հաշվումներից պարզ է դառնում, որ Հովհաննես Մկրտչի այդ տոնի օրը, որը գրանցել է Հայոց շարժական տոմարի նավասարդի 1-ը, տոնացույց է մտել 1215 թ. կամ 1219 թ.: Միաժամանակ հասկանալի է, որ 759 թվահամարի գրչագիրն ընդօրինակվել է 1215 թ. կամ 1219 թ. գրված նախագաղափար օրինակից, երբ նկատի ենք ունենում, որ Հովհաննես Մկրտչի այդ տոնը Հայոց շարժական տոմարի Նավասարդի 1-ի նշումով, Հունվարի 13 - Առաջավորի Բարեկենդանի հատվածում ուրիշ որևէ ժամանակ չէր կարող ներդրվել տոնացույցի մեջ:

Հարկ է նշել, որ 179 թվահամարի գրչագրում (1292 թ.), որի մասին կխոսենք քիչ հետո, կրկին Հովհաննես Մկրտչի այդ տոնի օրը արդեն ավանդույթ դարձած Նաւասարդի 1-ին է (8-րդ կանոնի տակ), իսկ 752 թվահամարի գրչագրում (1314 թ.) տեղափոխվել է 6-րդ կանոնի տակ (էջ 151բ), թեև պահպանել է Նավասարդի 1-ը: 767 թվահամարի գրչագրում, որը «Տաւնացույց տարոյն» վերնագիրն է կրում և գրիչը ավարտել է 1337 թ. Հոկտեմբերի 13-ին, երկուշաբթի, Հովհաննես Մկրտչի տոնը տեղափոխվել է առաջին կանոնի տակ և ունի Նաւասարդ 1 = Օգոստոս 11 համարժեքը: Հետագա տոնացույցերը Հովհաննես Մկրտչի տոնի օրը առաջին տեղում դնելը դարձրել են կանոն, երբեմն պահելով, երբեմն չպահպանելով Նավասարդի 1-ը: Այնպես որ 14-րդ դարի 30-ական թվականներից սկսած Հովհաննես Մկրտչի հիշյալ տոնի օրը տեղափոխել էն Պետրոս Հայրապետի և Աբիսողոմա Սարկավագի տոնից առաջ ըստ տոնացույցերի տվյալների: Ասենք նաև, որ Հովհաննես Մկրտչի այդ տոնի օրը առաջին կանոնի տակ են տվել ճաշոցների մի խումբ ընդօրինակութիւններ:

2948 թվահամարի ձաշոցը ձեռագրացուցակի հեղինակները թվագրել են ընդհանրապես 13-րդ դարով: Գրչագրում առակա է Հայոց շարժական տոմարի ամսաթիվ, որը հնարավորութիւն է տալիս ստույգ թվագրել այն, ինչպես և տեսնել երբ է կատարվել առաջին փորձը Հովհաննես Մկրտչի տոնը տեղափոխելու առաջին կանոնի տակ:

2948 թվահամարի բնագրում Քրիստոսի ծննդեան ութ օրերից հետո և Առաջավորի Բարեկենդանից առաջ տրված է տոնելի սրբերի հետևյալ շարքը. «Նավասարդի ի Ան. Յովհաննու Մկրտչի...»

- Պետրոսի և Աբիսողոմա...
- Սրբոյն Անդոնի անապատականի...
- Թէոդոսի թագաւորին...
- Վահանա Գողթան Տեառն...
- Կիրակոսի և մաւր նորա Յուդիտեա (էջ 142բ-143բ)

Գրիչը Հովհաննես Մկրտչի հիշատակի օրը տեղափոխել է առաջին կանոնի տակ, որպեսզի ստանա Նավասարդի 1-ը, իսկ այդ կարող էր կատարել 1260-ական թվականների ընդօրինակութիւն ժամանակ, երբ Նավասարդի 1 = Հունվար 14 կամ 15-ին: Ուշագրավ է, որ սրբերի շարքից բերել է ընդամենը վեց կանոն, որովհետև այդ տարի առկա է տոնելի երկու օր և յուրաքանչյուր օրվա տակ տոնել են երեք կանոնի տակ տեղադրված սրբերի հիշատակը: Այնպես որ գրչագիրն ընդօրինակվել է 1266 թվականին: Սա ճաշոցների մեջ մեզ հայտնի հնագույն փորձ է, որ Հովհաննես Մկրտչի հիշատակի օրը տեղափոխել են 1-ին կանոնի տակ: Բայց այն կարծում ենք բացառութիւնների շարքից է, որովհետև իբրև կանոն Հովհաննես Մկրտչի հիշատակի օրը տեղափոխվեց առաջին կանոն 14-րդ դարի 20-30-ական թվականներից: 4514 թվահամարի ձաշոցը, որն ընդօրինակվել է 1322/3 թթ., առաջին կանոնի տակ է տալիս քննարկվող տոնի օրը հետևյալ ձևակերպմամբ. «Նաւասարդի Ա. Յովհաննու Մկրտչին...» ստորին լուսանցքում «Յովհաննու Կարապետին» (էջ 15 բ): Իսկ 7741 թվահամարի ձեռագիրը, որն ընդօրինակվել է 1360 թվականին, տալով առաջին կանոնի տակ, միաժամանակ ներքին լուսանցքում բացատրում է. «Յովհաննու ծննդեան տօնդ յայս ժամս ի հօս կու տաւնուեր վասն այն այստեղս գրեցա»

(էջ 32բ): Այնպես որ Հովհաննես Մկրտչի հիշյալ տոնի օրը տեղափոխվել է առաջին կանոնի տակ 14-րդ դարի սկզբներից և հետագա տոնացույցերի և ճաշոցների համար դարձել է կանոն: Այդպես է նաև Միմեոն Երևանցու խմբագրած տոնացույցում: Շարունակենք 759 թվահամարի գրչագրի մասին տեղեկությունները: Այնտեղ կարդում ենք. «Ձկնի խաչին էերրորդ կիրակէ). ինչգիւտ է, և կամ ուր ամիսն բերէ, Մարերի ժէ (17)» (էջ 174բ): Այդ տվյալների համադրումը կունենա հետևյալ տեսքը՝ «Հայոց տոնացույց» ծրագրի հաշվումների.

Ներկա թվական	Հուլյան ամիս	Հուլյան ամսաթիվ	Ծաբաթվա օր	Հայոց թվական	Հայոց ամիս	Հայոց ամսաթիվ	Ծաբաթվա օր
1256	10	29	1	705	10	17	1
1263	10	28	1	712	10	17	1
1270	10	26	1	719	10	17	1
1277	10	24	1	726	10	17	1

1277 թ. Մարերի 17 = Հոկտեմբեր 24 = կիրակի = Գիւտ խաչի տոնի օրը: Պարզ է դառնում, որ Հայոց շարժական տոմարի Մարերի 17-ի ամսաթիվը գրչի ներմուծումն է տոնացույց և Ստեփանոսը տվել է իր ժամանակի իրողությունը: Գրչագրում ուրիշ ոչ մի նշում չկա Հայոց շարժական տոմարի ամսաթվերով, թեև վերնագրում գրել է, որ տոները տալիս է Հայոց և հուլյան ամսաթվերով: Մնացած տոների ամսաթվերը հուլյան տոմարով են, որոնցից միայն մեկն է գրչի հավելումը, իսկ մնացածները վերցրել են վաղ շրջանի Տոնացույց-Տոնանամական-րից և Յայսմավուրքներից: Ըստ 759 թվահամարի գրչագրի՝ «Չորրորդ տաւն. Յովհաննու և Յակովբայ. Դեկտեմբերի ԻԹ (29), և ի նոյն աւուրս բարեկենդան է Յայտնութեան Տեառն» (էջ 177բ): 1278 թ., երբ ավարտել է գրչագիրը Դեկտեմբերի 29-ին է ընկել հիշյալ տոնը, որը եղել է հինգշաբթի, իսկ հաջորդ օրը՝ Դեկտեմբերի 30-ին սկսել է Ծննդեան պահքը (ուրբաթ), որը Հայոց Չիէ թվականի վերջին օրերն էին:

179 թվահամարի ձեռագիրը (1292 թ.) Ստեփանոս Գուլբերիցանցի ինքնագիրն է: Այն բովանդակության ցանկի մեջ մեզ հետաքրքրող տեսանկյունից ունի հետևյալ վերնագրերը.

Ա. Խրատ ընթերցման բովանդակ տարւոյն:

Բ. Տաւնացոյց շաբաթով:

Գ. Տաւնացոյց այսմաւուրք:

Ա-ն սկսվում է վերնագրից, այն է՝ «Աստուածայայտնութեան ժամակարգութիւն. այլև բովանդակ տարւոյն ըստ ընթերցուածին եւ ըստ այլ կարդացմանցն», իսկ ստորին լուսանցքներում ունի՝ «Խրատ ժամատեղեաց» նշումները: Սկիզբն է. «Յունուարի Ե. Սրբոյ ճրագալուցին...», ավարտվում է Պենտեկոստի կանոնով: Բ-ն սկսում է հետևյալ վերնագրով. «Տաւնացոյց ըստ շաբաթուց և սակավ մի հարցնացոյց»: Տոնացույցի սկիզբն է. «Ձկնի Ձատկին...», ավարտը՝ «Շաբաթ. Ղազարու յարուլթեան»: Ի նոյն կիրակէ Ծառագարդ և Գալուստ Տեառն յերուսաղէմ դիմեալ կամաւոր ի չարչարանս, որ է աւրհնեալ յաւիտեանս ամէն» (էջ 540բ): Գ-ն, որը Տոնացույց-Յայսմավուրք է, սկսում է Նաւասարդ 1-ով (= Օգոստոս 11): Համառոտ (առանց բնագրերի) ներկայացրել է սրբերի և տոների կանոնները:

752 թվահամարի գրչագիրն (1314 թ.) ունի «Տաւնացոյց կարգաւ» վերնագիր: Այն սկսում է «Աստուածայայտնութեան» աւուրն գիշերն առաջին կանոնագլխին...» (էջ 149 գ) ավարտը՝ «Կիրակէ, թէ պահքն հանդիպի Հ. ԴԶ. միածին որդի» (էջ 176բ): Տոնացույցը շաբաթվա օրերով է կանոնված: Ամսաթվեր ունեն միայն Ավագ տոները:

767 թվահամարի գրչագիրն (1337 թ.) ունի «Տաւնացոյց տարւոյն» վերնագիրը: Բնագիրը կիսատ է: Ավարտվում է ինչպիսիք տոնի սկզբով:

2092 թվահամարի գրչագիրը (ԺԴ դար) վերնագրվել է. «Տաւնացոյց եւ հարցնացոյց ըստ Հալյոց մեծաց բօանդակ տարւոյն...» (էջ 295ա): Տոնացույցը տրված է շաբաթվա կարգով, բայց ավելացվել են ամսաթվեր (հայոց և հուլյան տոմարներով):

5667 թվահամարի տոնացույցն ըստ հիշատակարանի ավարտել է Մեծոփա վանքում Հայոց ՊՂ (890) թվականի ձմռանը, ուստի 1440 թվականին, իսկ 7203 թվահամարի գրչագիրը գրվել է նույն թվականին Կաֆայում: Քանի որ ամսաթվային նշում չունի ներկա թվականների կվերածվի իբրև 1440-1441 թթ.: Վերջինս ունի հետևյալ երկարաշունչ վերնագիրն - «Աւետարանացոյց և Տաւնացոյց և կարգաւորութիւն տերունական տաւնից, զոր եղեալ է հաստատել Սրբոյն Սահակայ Հայոց հայրապետի, զոր ընկեալ ի նմանէ հասուցին առ մեզ նախնիք մեր» (էջ 6ա):

Տոնացույցերի և ճաշոցների նույնիսկ շատ համառոտ նկարագրությունը առանձին ուսումնասիրություն է պահանջում, ուստի բացի վերոհիշյալ գրչագրերից տանք այն ձեռագրերի համարները և ընդօրինակության ժամանակները, որոնք օգտագործել ենք այս կամ այն հարց լուծելու համար:

1. Տոնացույցեր՝ 142 (1269/70 թթ.), 7748 (1470 թ.), 7203 (1440/1 թ.), 8630 (1494/5 թթ.), 7200 (15-րդ դ.), 8633 (15-րդ դ.), 9335 (1503/4 թթ.), 2833 ԺԵ-ԺԶ դ.), 9838 (1526 թ.), 3722, 2031 ( 15550/1 թթ.), 4164 (16-րդ դ.), 4874 (16-րդ դ.), 3668 (16-րդ դ.), 2439 ( ), 4441 (16-րդ դ.) 6952 (16-րդ դ.), 5436 (1619/20 թթ.), 5956 (16-րդ դ.), 8112 (16-րդ դ.), 8598 (1593/4 թթ.), 1519 (1486/7-1500/1 թթ.), 5388(16-րդ դ.), 6337 (16-րդ դ.), 5419 (16-րդ դ.), 5440 (16-րդ դ.), 9046 (16-րդ դ.), 4459 (16-րդ դ.), 4962 (1591/2 թթ.), 587 (1618 թ.), 590 (1627/8-1630/1 թթ.), 2338 (1631 թ.), 2025 (1650/1 թթ.), 510 (1653 թ.), 589 (1662/3 թթ.), 2024 (1662/3 թթ.), 2035 (1664/5 թթ.), 720 (1672/3 թթ.), 754 (1670 թ.), 722 (1678/9 թթ. առաջ), 2030 (1676/7 թթ.), 509 (1618/9 թթ.), 2027 (1679/80 թթ.), 2029 (1696 թ.), 508 (ԺԷ դ.), 2026 (1620-30 թթ. սահմ), 2028 (ԺԷ դ.) և այլ գրչագրեր:

2. Ճաշոցներ՝ 2948 (1266 թ.), 3266 (ԺԳ դ.), 6500 (ԺԳ դար), 202 (1277/8 թթ.), 1028 (1296/7 թթ.), 4514 (1322/3 թթ.), 6235 (1325 թ.), 6301 (1318 թ), 4916 (14-րդ դ.), 5455 (14-րդ դ.), 9361 (1344 թ.), 4614 (ԺԴ դ.), 7741 (1360 թ.), 6501 (14-րդ դ.), 8904 (1400/1 թթ.), 4977 (15-րդ դ.) 939 (1441/2 թթ.), 4438 և 4437 (15-րդ դ.), 4506 (15-րդ դ.), 4698 (15-րդ դ.) և այլ գրչագրեր:

Նկատի ենք ունեցել նաև Երուսաղէմի, Վենետիկի, Վիեննայի և այլ վայրերի գրչագրերը, որոնց նկարագրությունը տրված է ձեռագրացուցակներում: Վերջապես օգտագործել ենք մատենագրական կցկտուր տեղեկությունները:

Վերոհիշյալ բնագրերը, ինչպես և Հայոց տոնացույցային և տոմարական եղանակների կիրառումը Հնարավորություն են ստեղծում տալ Տոնացույցում կատարված փոփոխությունները ժամանակագրական կտրվածքով: Ասենք նաև, որ միայն անհրաժեշտության դեպքում ենք վկայել տոնացույցերում և ճաշոցներում վկայված ամսաթվերը, որովհետև դրանց մի մասը քննել ենք:

Սկսենք տոնական տարվա սկզբից:

759 թվահամարի գրչագրում գրված է «Յունուարի Ե ձրագալոյց է և ի Զ՝ Յայտնութիւն: Ը աւր տաւն է: Եւ եթէ յԱռաջաւորին Պաքն մտանէ յութ աւրէիցն դու գտաւնն արա և մի ուտեր. զի կրկին պաք է: Իսկ զկնի ութ աւրէիցն թէ ուտիք է դու տաւնէ՝ Պետրոսի Աղեքսանդրու հայրապետի և Աբիսողոմայ ս[ա]րկ[աւագի]...: Տալիս է սրբերի տոնելի շաբթը, որը կներկայացնենք աղյուսակի ձևով և շաբաթվա օրերի կանոնները, իսկ վերջում ավելացնում է. «Եւ յայս վերոյ գրեալ շաբաթնիս կու յաւելուն և պակասին» (էջ 178ա-179ա):

179 թվահամարի գրչագիրը հիմնականում կրկնում է նախորդին միայն որոշ ավելացումներով, այն է՝ «... Իսկ գլխի ութ աւրէիցդ տես թէ ուտիք է դու տաւնէ յառաջ Պետրոսի Աղեքսանդրու հայրապետի) և Աբիսողոմայ սարկաւազի). եւ ապա Անտոնի անապատակ(անի)...» կամ «եւ այս վերոյ գրեալ շարաթնիս կու յաւելուն և պակասին դու տաւներդ ի վերայ ուտիք աւուրց չափէ...»:

752 թվահամարի Տոնացույցում տրվում է Քրիստոսի Ծննդեան և Աստուածայայտութեան 8 օրերի կանոնները, որից հետո բացատրում է «Տաւնք ըստ Ը աւրէիցն որ լինի յայս միջոցս կա որ յաւելու և կա որ պակասի, թէ շատ է դու ԱԱ տաւնեա և թէ նուազ՝ ԲԲ և ԳԳ, որ վճարի: Յետ Ը աւրէիցն՝ Պետրոսի հայրապետի) և Աբիսողոմայ սարկաւազին, ապա Անտոնի անապատական... (էջ 515 բ): Նման կարգի բացատրություններ ունեն 767 (էջ 123ա), 5667 (էջ 98ա), 9838 (էջ 152ա-154ա), 2031 (էջ 16ա-բ), 3668 (էջ 9բ-10ա), 4874 (էջ 162ա-բ), 5388 (էջ 110ա-բ), 5419 (էջ 171ա), 5436 (էջ 152ա) թվահամարների տոնացույցերում և այլ գրչագրերի մեջ:

Ճաշոցներն արձանագրել են միայն կանոնները և բացատրություն չեն տալիս այս կապակցությամբ:

Տեսանք, որ Քրիստոսի Ծննդեան և Աստուածայայտութեան տոնական ութ օրերը անշարժ տոնական օրերով՝ Հունվար 6-13, կատարում էին հնագույն շրջանից սկսած և շարունակվեց նաև հետագայում, չհաշված որոշ ժամանակավոր ընդհատումները: Հունվարի 6-ը համարվել է տոնական տարվա սկիզբը և ոչ մի փոփոխություն չի ենթարկվել:

Այլ է Քրիստոսի Ծննդեան 8 օրերից հետո եկող և Առաջավորի Բարեկենդանի միջև ընկնող տոնական օրերի հարցը: Բանն այն է, որ Հովհան Օձնեցին իր խմբագրած Տոնացույցում քննարկվող հատվածում նախորդ շրջանում անշարժ օրերով տոնվող սրբերի օրերը վերածեց միայն շարժականի:

Այդ սրբերը հետևյալներն էին

1. Պետրոս հայրապետը և Աբիսողոմ սարկավազը
2. Անտոն անապատականը
3. Թեոդոս թագավորը

Հիշյալ սրբերի հիշատակի օրերը տվյալ հատվածում չէին կարող կատարել միայն այն դեպքերում, երբ Ջատիկը ընկնում էր Մարտի 22-25-ի օրերից մեկում (Ջատիկը Մարտի 25-ին նահանջ տարում կատարելու դեպքում մեկ օր կա այդ հատվածում), որովհետև Առաջավորաց Բարեկենդանը համընկնում էր Քրիստոսի Ծննդեան օրերի հետ և տոնի օրեր չէին մնում և տեղափոխվում էին տոնական տարվա այլ հատված, իսկ Ջատիկի մյուս օրերին տոները կատարվում էին: Դեռ ավելին տոնական օրեր էին ավելանում, որտեղ տոներ չէին կատարում: Հետագայում հավանաբար Հովհան Օձնեցու Տոնացույցի 2-րդ խմբագրության ժամանակ քննարկվող հատվածում ավելացրի միայն երկու տոն, այն է՝

ա) Վահան Գողթնեցու:

բ) Կիրակոսի և նրա մոր Յուդիտեայի:

Հունվարի 13-ից հետո և Առաջավորաց Բարեկենդանից առաջ տոնվող սրբերը բազմացան, երբ Գրիգոր Վկայասերի Տոնանամակում սահմանվեց սրբերի հիշատակի օրեր, որոնք, հասկանալի է չէին կարող տեղավորվել այդ հատվածում: Պատահական չէ, որ Կիրակոս վարդապետն իր հիշատակարանում, ինչպես տեսանք, առաջարկել է տոնվող սրբերի երկու, երեք և նույնիսկ չորս կանոններ միավորել մեկ օրվա մեջ, իսկ եթե այդ էլ չբավարարի՝ տեղափոխել այլ տեղ տվյալ տարվա տոնական շարքի մեջ: Այլ խոսքով 12-րդ դարի սկզբների հետ է կապվում ինչպես սրբերի հիշատակների օրերի շեշտակի ավելացումը Հունվարի 13 - Առաջավորաց Բարեկեն-

դան հատվածում, ինչպես և սրբերի մի քանի կանոններ միացնել մեկ օրվա տակ, միայն այն տարբերությամբ, որ տոնացույցերը երեք սրբերի կանոնների են առաջարկել մեկ օրվա մեջ տոնելու բացառելով Կիրակոս Վարդապետի առաջարկած չորս կանոնների միացումը մեկ օրվա մեջ:

Այժմ տեսնենք տվյալ հատվածում ո՞ր սրբերի հիշատակի օրերն են կատարել ըստ տոնացույցերի և ճաշոցների տվյալների, ինչպես և քննենք սրբերի հիշատակի օրեր տեղափոխությունները ժամանակագրական կտրվածքով: Ներկայացնենք այն աղյուսակների տեսքով:

Հունվարի 13-ից և Առաջավորաց Բարեկենդանից առաջ տոնվող սրբերի կարգը տարբեր բնագրերի տվյալների հիման վրա (Տոնացույցեր)

Տոնի անվանումը	759 (1278 թ.)	179 (1292 թ.)	752 (1314 թ.)	767 (1337 թ.)	2092 (14-րդ դ.)	5667 (1440 թ.)	7203 (1440 /1 թ.)	9838 (1526 թ.)	4164 (16-րդ դ.)	4874 (16-րդ դ.)	4441 (16-րդ դ.)	Միմ Եր. Տոն
Ա. Պետրոսի և Աբիսողոմայ	1	1	1	2	2	2	2	1	2	2	2	2
Բ. Անտոնի անապատականի	2	2	2	3	3	3	3	2	3	3	3	3
Գ. Թեոդոս թգ (և Մանկանց Եփեսոսի)	3	3	3	4	4	4	4	3	4	4	4	4
Դ. Գորգիոսի և Պողոթսիոսի (և Գրիգորիսի)	4	4	12	12		12	13	12	12	13	12	9
Ե. Վահան Գողթնեցու	5	5	5	6	-	6	6	5	6	6	6	6
Զ. Աթանասի և Կիրողի	6	6	7	7	-	7	7	7	7	7	7	8
Է. Կիրակոսի և Յուդիտեայի և Աբղյուսեհի	7	7	4	5	-	5	5	4	5	5	5	5
Ը. Յովհաննու Մկրտչի	8	8	6	1	1	1	1	6	1	1	1	1
Թ. Եղեմեայի և Փիլիպ (և Բաս.)	9	9	13	13	-	13	8	13	13	12	13	10
Ժ. Մարութայի	10	10	14	15	-	15	15	15	15	15	15	-
ԺԱ. Եղ, Մակ., Ակղ., Վաղ և Կանդիտոսի	11	11	15	16	-	16	16	16	16	16	16	12
ԺԲ. Գրիգորի Աստուածաբանի	12	12	8	8	-	8	9	8	8	8	8	11
ԺԳ. Տրիփոնի և Բարսումայի և Վլաս (և Ուեստմա)	13	13	9-10	9-10	-	9-10	10-11	9-10	9-10	9-10	9-10	7
ԺԴ. Սեդր. և Կոստ. թգ.	-	-	11	11	-	11	12	11	11	11	11	-
ԺԵ. Կուռնելիոսի, Շմափոնի և Պողիկարպոսի և Արեւելեան վկայիցն	-	-	13	14	-	14	14	14	14	14	14	-
ԺԶ. Գոհարիան և Ռամանոսի և Ծամիդե և Տուրիկոսի և Թեոդոսի կրոնավորի	-	-	-	-	-	-	-	-	-	17	-	-



Հունվարի 13-ից հետո և Առաջավորաց Բարեկենդանից առաջ տոնվող սրբերի կարգը տարբեր բնագրերի տվյալների հիման վրա (ճաշոցներ)

Տօնի անվանումը	2948 (1266 թ.)	4514 (1344 թ.)	936 (1344 թ.)	7741 (1360 թ.)	4916 (14-9դ)	939 (1441/2թ.)	4438 (15-9դ)	4868 (15-9դ)	4107 (1419 թ.)			
1	2	3	4	5	6	7	8	9	10	11	1	13
Ա. Յոհան Մկրտչի	1	1	-	1	1	1	1	1	1			
Բ. Պետրոսի և Աբիստի	2	2	1	2	2	2	2	2	2			
Գ. Անտոնի անապատակ	3	3	2	3	3	3	3	3	3			
Դ. Թորոս թգ. և Մանկանց Եփեսոսի	4	4	3	4	4	4	4	4	4			
Ե. Վահան Գողթնացու	5	-	-	6	6	10	6	6	7			
Զ. Կիրակոսի և Յուդիտեայ	6	-	-	5	8	7	7	5	6			
Է. Աթանասի և Կիրղի	-	5	-	14	7	5	10	7	5			
Ը. Եղեմիոսի Մակ. Վաղ. Կանդ. Ակ.	-	6	-	15	11	11	12	-	11			
Թ. Գրիգոր Աստուածաբանի	-	7	-	8	12	12	13	8	9			
Ժ. Պարսամա ճգն.	-	8	-	-	-	13	13	-	9			
ԺԱ. Վյասա Եպ. և Ուեսիմա	-	9	-	10	13	14	14	10	-			
ԺԲ Տրիփոնի, Փիլիպոսի և Արքիպա	-	-	-	-	-	14	-	-	-			
ԺԳ. Պողոսիկարպոսի և Ըմալոնի	-	10	-	12	14	15	15	-	-			
ԺԴ Կուսմեդիոսի Ը ապետի և Կողրատ ց.	-	11	-	12	15	16	16	-	10			
ԺԵ Եղեմեայ Կուսմ. Փիլ.	-	-	-	7	9	8	11	12	8			
ԺԶ Տրիփոնի և Պարս. ճգն	-	-	-	9	-	-	-	9				
ԺԷ. Սեդր հյր և Կոստ թգ.	-	-	-	11								
ԺԸ Գորդ. Պողոս. և Գրիգ.	-	-	-	12	5	6	5	11				
ԺԹ. Մարութայի	-	-	-	13	10	9	8,9	-	12			

Նախ ասենք, որ բերված աղյուսակներից հետո, երբ տանք Գրիգոր Վկայասերի Տօնանամակում տեղ գտած սրբերի շարքը՝ Հունվար-Փետրվար ամիսներին, որոնք առկա են վերը բերված աղյուսակներում բացառյալ նախորդ շրջանից փոխանցվածները, ապա պարզ կդառնա Տոնացույցերում և Ճաշոցներում կատարած փոփոխությունները: Բերենք միայն Տօնանամակի 979 թվահամարի գրչագրի ցանկը.

- Յունուարի Թ. Պաղոքտիոսի
- Նորին ԺԶ. Եղեմեայ կուսին և Հոր նորա Փիլիպոսի եպիսկ (և այլն)
- Նորին ԺԸ. Հայրապետացն Աթանասի և Կիրղի Աղեքսանդրի
- Նորին ԻԲ. Եղեմեայն...

- Նորին ԻԵ. Գրիգորի Աստուածաբանի
- Փեպրուարի Ա. Տրիփոնի և Կալիստա
- Նորին ԺԵ. Ուեսիմոս և Արքիպ
- Նորին ԺԶ. Մարութայի եպ. և այլ եպ-աց
- Նորին ԻԳ. Պաղոսիկարպոսի (էջ 3բ)

Բացատրություններն ավելորդ են: Միայն նշենք, որ վկայված ամսաթվերը տոնացույցերում հիմնականում կորցրին իրենց նախնական իմաստը, տոները դարձան շարժական և ստացան նոր ու տարբեր ամսաթվեր:

Վերը բերված աղյուսակների տվյալներից երևում է, որ Հունվար 13-ից հետո և Առաջավորի կիրակիից առաջ տոնվող սրբերի հիշատակի օրերի կարգը փոփոխվել է ժամանակի ընթացքում, որի հետևանքով ընդհանուր շարքը խախտվել է: Այսպես, Հնագույն տոնացույցերում Պետրոս Հայրապետի և Աբիստոս սարկավազի հիշատակի օրը առաջին կանոնի տակ է, իսկ 14-րդ դարի սկզբներից տեղափոխել են երկրորդ կանոնի տակ, իսկ առաջին կարգի մեջ դրել են Հովհաննես Մկրտչի հիշատակի օրը, որը նախորդ շրջանում 8-րդ կամ 6-րդ շարքում էր: Տույց տվեցինք, որ Հովհաննես Մկրտչի հիշատակի օրը տվյալ հատվածում դրվեց 13-րդ դարի սկզբներից, ըստ երևույթին հունական տոնացույցերի ազդեցության տակ:

Հայոց տոնացույցերի բացատրություններից պարզ է դառնում, որ քննարկվող հատվածում տոնելի օրերի քանակից էր կախված, թե սրբերի տոները պետք է կատարել առանձին, թե միացնել երկու կամ երեք սրբերի հիշատակի կանոններ մեկ օրվա մեջ, այն էլ սահմանված հերթականությամբ: Այս կարգը պահպանվեց մինչև 18-րդ դարի 4-րդ քառորդը: Միմեոն Երևանցին Տոնացույցում բերել է սրբերի տոների մեկ շարք, բայց նրա հերթականությունը չի պահպանել նախորդի պես, այլ զատկի 35 տոնելի օրերի համաձայն ըստ տարեգրի, իր իսկ շարքի հերթականությունը փոխել է կամայականորեն առանց բացատրությունների և դրանք բաժանվում են առանձին խմբերի, իսկ տոնելի օրեր չլինելու ժամանակ տեղափոխվել են տարվա տոնելի շարքի այլ տեղեր:

Քննարկվող հատվածում Թեոդոս թագավորի հիշատակի օրվա կանոնին ավելացրել են Մանկանց Եփեսոսի հիշատակը, ըստ էության երկրորդ տոնական օր սահմանելով նրանց համար, որովհետև Հնագույն տոնացույցերի խմբագրությունների մեջ Մանկանց Եփեսոսի տոնի օրը դրվել է Խաչգիւտից հետո եկող շաբաթ օրը, որը այդպես էլ տոնել են մինչև Միմեոն Երևանցու Տոնացույցի խմբագրումը, որը այդ տոնի օրը թողեց միայն հիշյալ հատվածում:

Գորդիոսի և Պողոքտիոսի կանոնին 14-րդ դարում ավելացրին Գրիգորիսի հիշատակի օրը:

Հնագույն տոնացույցերի խմբագրություններն ունեն նույն կանոնի տակ Կիրակոսի և նրա մոր Յուդիտեայի և Աբղիմսեհի հիշատակի օրը, որից 14-րդ դարի սկզբներին Հանել են Աբղիմսեհի հիշատակի օրը և տեղափոխել Աստուածածնից հաշված 2-րդ կիրակիից հետո եկող երկուշաբթի օրվա կանոնի տակ: Այդպես էլ վկայված են հետագա տոնացույցերում, իսկ 16-րդ դարում Աբղիմսեհի հիշատակի օրը տեղափոխել են: Միմեոն Երևանցին նույնպես Աբղիմսեհի հիշատակի օրը տեղադրել է Բուն Բարեկենդանից առաջ երկուշաբթի օրվա կանոնի տակ հետևելով 16-րդ դարի և նրանից հետո եկող տոնացույցերին:

Ասենք նաև, որ «վկայաբանությունն սրբոյն Աբղիմսեհի, որ թարգմանի ծառայ Քրիստոսի» բնագրի հիշատակարանում, որ հրատարակել են Գ. Հովսեփյանը և Ա. Մաթևոսյանը՝ գրված է. «Ազնականութեամբ Յիսուսի Քրիստոսի, թարգմանեցաւ վկայաբանութիւն ծառայի Քրիստոսի յասորի գրոց ի հայս, հրամանաւ աստուածապահ տեառն Գուրգենայ Արծրունոյ Անձաւացեաց»

1 Տե՛ս Գ. Հովսեփյան, Հիշատակարանք, էջ 71-73, Ա. Մաթևոսյան, Ձեռ. հիշ., էջ 37:

տեառն, [յ] ՅԻԲ (873) թուականութեանն Հայոց ի բարեխոսութիւն և յաւգնականութիւն անձին իւրոյ և ամուսնոյ իւրոյ Հեղինէի աստուածասիրի և Ատովմայ: Եւ աւանդեաց նոյն ինքն տէր Գուրգեն տաւնախմբել զաւր յիշատակի սրբոյս, որ աւր երեսուն էր արեգ ամսոյ՝ ի փառս ամենասուրբ երրորդութեան այժմ և միշտ և յաւիտեանս...»:

Հայոց 322 թվականը համարժեք է 873 թ., իսկ Արեգ 30 = Դեկտեմբեր 17 = Հինգշաբթի: Պարզ է դառնում, որ Գուրգեն Արծրունին՝ Անձեացեաց տերը, հրամայել է Աբղիմսեբի հիշատակի տոն կատարել տեղայնացված ձևով: Հասկանալի է, որ մինչև այդ հայոց մեջ Աբղիմսեբի հիշատակի օրը էր նշվում: Վերջինիս հիշատակի օրը հայոց տոնացույցում սահմանվել է ինչպես տեսանք՝ բոլորովին այլ տեղ շարժական տոնական օրվա տակ, որը ոչ մի կապ չունի անշարժ տոնական օրով ավանդված Արեգ 30-ի հետ, որը համարժեք է Դեկտեմբեր 17-ին:

Յայնմավուրբում Աբղիմսեբի հիշատակի օրը դրվել է Հրոտից 8 = Հուլիս 14-ի, իսկ Գրիգոր իլաթեցին տեղափոխել է Հրոտից 7 = Հուլիս 13-ի կանոնի տակ, որոնք նույնպես ոչ մի կապ չունեն Արեգ 30 = Դեկտեմբեր 17-ի հետ:

Հնագույն տոնացույցերի խմբագրությունների մեջ Եւգենեա կուլսի և այլոց հիշատակի օրերի կանոնի տակ է և Բասիլեա կամ Վասիլուհի կուլսի հիշատակի օրը, որը 14-րդ դարի սկզբներից տեղափոխվեց Յիսնակամտից հաշված 2-րդ կիրակիից հետո եկող երկուշաբթի օրվա կանոնի տակ: Սիմեոն Երևանցու տոնացույցում երկու կանոնի տակ էլ առկա է այդ սրբի հիշատակի օրը:

Հնագույն տոնացույցերում Տրիփոնի և Բարսուլմայի և Վլասա հիշատակի օրերը մեկ կանոնի տակ են, իսկ 14-րդ դարի սկզբներին Տրիփոնի և Բարսուլմայի հիշատակի օրերը մնացել են նույն կանոնի տակ, իսկ Վլասայ եպիսկոպոսին ավելացրել են Ոնեսիմային՝ Պողոսի աշակերտին և առանձնացրել դարձվել է երկու կանոն, որոնք Սիմեոն Երևանցու տոնացույցում ունեն մեկ կանոն հետևյալ ձևակերպմամբ «Ձգնաւորացն Տրիփոնի, Պարսամայ և Ոնոփրիոսի»: Իսկ Ոնեսիմայի հիշատակի օրը տեղափոխեց Յիսնակամտից հաշված 2-րդ կիրակիից հետո եկող երեքշաբթի:

Սեղբեստրոսի Հռոմա հայրապետի և Կոստանդիանոսի թագավորի տոնական նոր կանոնը (միասին) տոնացույց մուտք գործեց 14-րդ դարի սկզբներին, փաստորեն որպես նրանց երկրորդ տոնական օր, որը բացակայում է Սիմեոն Երևանցու Տոնացույցում:

«Կուռնելիոսի հարիւրապետի և Շմաւոնի... և Պաւղիկապոսի հայրապետի և Արևելյան վկայիցն» կանոնը տոնացույց մտավ 14-րդ դարի սկզբներին, և շարունակվեց տոնվել քննարկվող հատվածում մինչև Սիմեոն Երևանցու Տոնացույցը, որը հիշյալ կանոնը տեղափոխեց Հակոբ Մծբնացու պահպանեց երեքշաբթի օրը:

Ինչ վերաբերվում է 16-րդ դարում տոնացույց մտած Գոհարինի և այլոց տոնական կանոնին, ապա Սիմեոն Երևանցին տեղափոխեց Վերափոխման Աստուածածնի երրորդ կիրակիից հետո եկող երկուշաբթի օրը:

Քննենք ևս մեկ հեղինակի հարց, որի անունը կապված է ինչպես այս հատվածի տոների կարգավորման, այնպես էլ հաջորդ տոնական օրերի հետ:

Գեորգ վարդապետը (նաև Սկևռացին, Լամբրոնացին, Դրագարկեցին) մահացել է հայոց ՉԾ թվին (= 1301 թ): Նրա աշակերտ Մովսեսը գրել է. «Դրուատ բանի սուղ ինչ պատմաբար բար յերջանիկ բարունապետն և ի քաղցրաբարբառ վարդապետն Գեորգ Լամբրունեցի», որում ասվում է, որ նա «... գծեր և կանոնս կարգաւորս...»<sup>1</sup>: Մովսեսի ակնարկն ըստ երևույթին վերաբերվում է Տոնացույցի մեջ Գեորգ վարդապետի կատարած կարգավորումներին թեև 1-ին հեր-

<sup>1</sup> Տե՛ս Ջարդրանյան, Գ2Վ. աշխ., էջ 700-701:

թին նկատի է ունեցել «Կանոնագիրք Հայոց»-ի Բ խմբի խմբագրությունը՝ 41-78 կանոնախմբերի սահմաններում:

Պողարյանը Երուսաղեմի ձեռագրացուցակի 6-րդ հատորում համառոտ նկարագրել է 1946 թվահամարի ձեռագիրը, որտեղ նա գրում է. Տոնացոյց (կանոնագրով) (Գէորգ վրդ. Սկևռացի)

էջ 763 բ — Տաւնք Տէրունականք հոռոմ ամսաւք որք կան յընթերցուածն.— Յունուար Զ Մնունդ եւ Յայտնութիւն տեառն...

— Տաւնացոյց Հայոց ամսաւք որ ի մարտիրոզոգն... — նաւասարդ Ա. Յովհաննու Մկրտչին)...

էջ 766ա. — Տաւնացոյց Հոռոմ ամսաւք — Յունուար. Վարք մեծին Բասդի...

էջ 783ա. — Դեկտեմբեր Ա. Վարք Պաւղոսի՝ առաջին միայնակեցի թերայեցոյ...:

Յիշատակարան եւ Բացատրական Գէորգ վարդապետի — 1300

էջ 784ա. — Բագմամեղս Գեորգ, մաշեալ ժամանակի ծնունդ, Չիթ թուականիս գրեցի զՏաւնացոյցս կանոնական գլխովքս, որ սահմանեն զտօն Մննդեան եւ զՅայտնութեան Տեառն յորում աւուր և դիպեսցի տաւնել, աւր ըստ նմին եւ զքառասնաւրեայսն նորին: Իսկ զյիշատակս սրբոցն՝ զչորեքշաբթիուն ի հինգշաբթի անցուցանել, եւ զուրբաթս ի շաբթ. զներկայ աւուրն ոչ խափանել. այլ՝ եւ զանցեալ աւուրն ընդ նմին տաւնել. եւ զքառասնորդաց պահոցն՝ զհինգ աւուրց տաւնսն՝ ի շաբթ եւ ի կիրակէ տանել:

Գիտեր զի գոն եւ այլ կանոնական հրամանք՝ որ յաւր կատարմանն հրամայեն զյիշատակ սրբոցն: Այլ քանզի ոմանք ի պատճառս տաւնիցն՝ զտիրաւանդ եւ զառաքելադիր կանոնց պահոցն լուծանեին, զոր եւ ի մեր աւուրս՝ յայտնի եւ համարձակ տեսաք լուծեալ, ստուգեալ գիտակցաք՝ թէ Վասն այսր պատճառի հարկեցան Հարքն Սուրբք, յաւուրցս յայսցանէ՝ յառաջիկայս փոխել զսրբոց տաւնս:

Այսպէս եւ Հարքն Սուրբք, վասն վերասացեալ լուծմանն, զտաւնս վկայիցն ի պահոցն աւուրց՝ յարձակ աւուրսն փոխեցին, ոչ հեռի, այլ միով աւուրք. եւ յաղուհացսն՝ հնգիւք եւ ի խոնարհ:

Զի աւուրս պահոցն՝ սգոյ եւ տրտմութեան հոգացուք, խոկալով, զի ի հանդիսէ...

Նա եւ ի սմին իսկ Տաւնացուցի, վասն պատճառի իրիք՝ սրբոց ոմանց յիշատակքն ի կատարմանն աւրէ՝ յայլ աւուրս փոխեցան:

Ի հին Տաւնացոյցսն՝ խառնեալ է զհոռոմ եւ զհայ ամսոցն տաւնսն. եւ գովելի է...»<sup>1</sup>:

Դժբախտաբար ձեռագրի նկարագրությունը շատ համառոտ է, որի հետևանքով դժվար է ամփոփիչ խոսք ասել: Միայն նշենք, որ Գեորգ վարդապետը 1300 թվականին ընդօրինակել է երեք տեսակ տոնացույց, որոնցից առաջինը, ըստ նկարագրության, շաբաթական շարքի վրա հիմնված տոնացույց է, որտեղ առկա են Հուլյան ամսաթվեր անշարժ տոների համար և տոնական տարին սկսվել է Հունվար 6-ով՝ Քրիստոսի Մննդեան և Աստուածայայտնութեան տոնով, ինչպես ընդունված էր: 2-րդ տոնացույցը Հայոց անշարժ տոմարի ամսաթվերով է:

3-րդ տոնացույցը Գրիգոր Վկայասերի Տօնանամակի համառոտ խմբագրությունն է: Սակայն այստեղ բոլորն էլ ամբողջական բնագրեր չեն, այլ հատվածներ, որոնցից մեկն ունեցել է հիշատակարան-բացատրություն, որի մեջ Գեորգ վարդապետն (հավանաբար 1-ին տոնացույցը նկատի ունենալով) ասում է, որ անշարժ տոները, ինչպես օրինակ Քրիստոսի Մննդեան և Տեառնընդառաջի տոները սահմանել են ամսաթվերով և տոնել են շաբաթվա ինչ օր էլ որ ընկնի, իսկ

<sup>1</sup> Ն. Պողարյան, Գ2Վ. աշխ., հ. 2, էջ 300-301:

որոշ սրբերի հիշատակի օրերը չեն համընկնում անշարժ օրերի հետ ոչ տոնելի օրերին, դրա համար փոխել է տոնելի օր, իսկ եթե ոչ տոնելի օր է եղել կարելի է երկու օրն էլ տոնել, թեև գիտի որ հրաման կա սրբերի հիշատակի օրերը տոնել նրանց իսկ վկայման, մահվան, և նշխարների օրը: Հիշատակարանում հատկապես խոսքը գնում է Հունվարի 13 - Ջատկի հատվածի մասին, թեև հնարավոր է վերաբերի նաև տարվա այլ տոներին: Այս դատողությունները կլինեն ավելի կոնկրետ, եթե ձեռքի տակ ունենային Երուսաղեմի 1946 թվահամարի տոնացույցերի բնագրերը: Առայժմ բավարարվենք այսքանով:

Հ. Աճառյանը Թավրիզի հայերեն ձեռագրացուցակի մեջ նկարագրել է Ճաշոց, ավելի շուտ բերել է գլխավոր հիշատակարանը: Նրա մեջ ասվում է, որ այն ավարտել է հայոց ՊՀ թվականին (= 1420/1 թթ.): Հիշատակարանի, ինչպես և Ճաշոցի հիմքում ընկել է մի գրչագիր, որը ընդօրինակվել է Տարոնի գավառի Իննականեան վանքում, որը սուրբ Կարապետի անունն էր կրում: Նկատել է, որ 13-րդ դարի վերջին նախագաղափար օրինակից է ընդօրինակել: Քանի որ ասվում է, որ «կարգեալ է գայս (Ճաշոց - Ռ. Վ.) սրբոց հարանց, եւ սուրբ վարդապետին Գէորգեայ ի սուրբ ուխտն որ կոչի Դրազարկ. ի սահմանս կիւլիկեայ՝ յերկրին Սըսայ. գոր ընկալեալ լուսաւորեցան եկեղեցիք Հայաստանեայց ի պայծառ տաւնակարգութիւնս...»<sup>1</sup>:

Բարեբախտաբար Երեւանի մատենադարանում գտնվեց նույն Ճաշոցի կրկնօրինակը, որի հիման վրա հնարավորություն է ստեղծվում դատել Ճաշոցում Գեորգ վարդապետի ներդրման մասին:

Նախ հիշատակարանից բերենք քաղվածքներ «... աւարտեցաւ Քրիստոսահիմն, առաքելաշէն, մարգարէխաւս այս կտակ յամի ութհարեւորդի վացսնորդի և իննբորդի թըւակաւնութեան հայկազեան ազգիս տոմարի, յամսեան Հրոտից ԻԱ, պատկեր աւուրս Եշթի (հինգշաբաթի). ձեռամբ յոգնապայծառ և ջահաւորեալ տէր Սարգսի և ներգեւեալ և մեղսամակարթ և փծուն գրչի Յունանի, որպէս և գիրդ ցուցանի ի ԻԲ տետրիցն ի վեր...» (էջ 920): Հայոց 869 թվական = 1420 թ. = Հրոտից 21 = Նոյեմբեր 21 = Հինգշաբթի: Հիշատակարանը շարունակում է. «... Եւ քանզի ունի սա (Ճաշոցը - Ռ. Վ.) գրուոր մասունս տօնից տէրունականաց, գոր սուրբ հարքն հաստատեցին. զընթերցածսն Յակոբոսի Տեառն եղբարն և զԿիւրղի Երուսաղեմացւոյն, և զգործս առաքելոցն, կաթողիկէից թղթովքն, և Յովհաննու աւետարանաւ, եւ զՏաւնանամակս՝ սրբոց առաքելոցն, մարգարէից, վարդապետաց, մարտիրոսաց, ճգնաւորաց, կուսանաց, զկիրակէի, զչորեքշաբաթի և զուրբաթի. յի սկզբանէ տարւոյն մինչև ցկատարումն տարւոյն. ամենայն աւուր ըստ պատշաճի իւրում ունի յինքեան զգիրք և զաւետարան: Եւ վասն տօնիցս կարգելոց մի ոք յերկրւասցի: Զի կարգել է զսա սրբոց հարանցն, և սուրբ վարդապետին Գէորգեայ ի սուրբ ուխտն, որ կոչի Դրազարկի, ի սահմանս կիւլիկեցւոց: Զօր ընկալեալ լուսաւորեցան սուրբ եկեղեցիք:...» (էջ 922): Սկզբնական հատվածում փաստորեն խոսքը գնում է հնագույն «Կանոնք ընթերցուածոց»-ի մասին:

4107 թվահամարի Ճաշոցը հիմքում ունի «Տօնացոյց ըստ շաբաթուցը», այսինքն՝ գալիս է Հովհան Օձնեցու խմբագրած տարբերակից: Չունի ոչ մի ամսաթվային նշում, բացառյալ սկզբի հատվածում ընդմիջարկված «Ապրիլէ ամսոյն է և Արեգի Ը. Տաւն է Աւետեացն Աստուածածնի...», որը ձեռագրի ընդօրինակման ժամանակի իրողությունն է:

Համադրելով մեզ հայտնի ճաշոցների հետ պարզվում է, որ Գեորգ վարդապետը կարող էր խմբագրել Հունվար 13 - Առաջավորաց Բարեկենդանի հատվածը և Պենտեկոստի 8 օրյա կանոններից վերջին չորս օրերը: Վերջինիս մասին առկա է հիշատակություն, որին կանդրադառնանք Պենտեկոստի տոնական օրերը քննելիս: Ինչ վերաբերվում է Հունվար 13-ից հետո և Առաջավոր Բարեկենդանից առաջ ընկնող սրբերի տոնական շաբթին, ապա նա դրել է շաբաթա-

կան շաբթի մեջ և կանոնել համապատասխան ընթերցվածները: Գրչագրում առկա են հետևյալ տոները հիմնված շաբաթական շաբթի վրա:

Վերջինս տրված է հատվածաբար, սակայն մենք վերականգնում ենք ամբողջապես թերի մասերը տալով փակագծերի մեջ:

(Շաբաթ). Յովհաննու Կարապետի...

(Կիրակէ գկնի ութաւրեայցն)...

Ստորին լուսանցքում՝ Այս կիրակէիս առաւօտուն աւետարան ի Ղուկաս կարդայ:

(Բշ.). Պետրոս հայրապետի և Արիստղոմայ սարկաւագի (ստորին լուսանցքում, իսկ բնագրի մեջ միայն Պետրոսի հայրապետի...)

(Գշ.). Սրբոյն Անտոնի անապատականի (ստորին լուսանցքում, իսկ բնագրի մեջ՝ Անտո...):

Չորեքշաբաթ...

(Եշ.). Թեոդոսի թագաւորի եւ մանկանց Եփեսոսի... (ստորին լուս., իսկ բն. մեջ՝ Թեոդոսի թգր...):

Ուրբաթի ...

(էշ.). Աթանասի և Կիւրղի... (ստորին լուսանցքում՝ Շաբաթ աւր. Սրբոց հայրապետաց Կիւրղի եւ Աթանասի)

Կիրակի ... (ստորին լուսանցքում՝ Երկրորդ կիրակէին գկնի ութաւրեայցն):

(Բշ.). Կիրակոսի և մօր նորա... (ստորին լուսանցքում՝ երկուշաբաթ աւր. Սրբոցն Կիրակոսի եւ մօր նորա Յուդիտայ, Գորդիոսի և Ապղըլմսեհի)

(Գշ.). Վահանա Գողթնեցւոյն...

(Դշ.). (ներքին լուսանցքում՝ Չորեքշաբաթի աւր կարդաց):

Հինգշաբաթ աւր. Եւգենեա կուսին (ստորին լուսանցքում՝ Հինգշաբաթի աւր. Եւգենեայ կուսին եւ հաւր նորա Փիլիպոսի եւ մաւրն Կղաւղիայ և երկու եղբարցն Սերգեայ և Ապիտոնի):

Ուրբաթ...

(էշ.). Գրիգորի... (ներքին լուսանցքում՝ Գրիգորի Աստուածաբանի և Պարսամ[յ] ճգնաւորի):

Կիրակի ճաշոյն... (ստորին լուսանցքում՝ Երկրորդ (ուղղել Երրորդ) կիրակէին գնի ութաւրեայցն):

Երկուշաբաթ աւր ... (տոնի անունը բացակայում է):

Երեքշաբթի Կուռնելիոս հարիւրապետի... (ստորին լուսանցքում՝ Երեքշաբաթ աւր. Կուռնելիոսի հարիւրապետի) եւ Շմաւոնի ազգականի Քրիստոսի):

Չորեքշաբաթ...

Երեքշաբաթի (ուղղել՝ Հինգշաբթի)... (ներքին լուսանցքում՝ Հինգշաբթի աւր. Սեղբեստրոսի Հոռմայ հայրապետին, Եւգինէոսի եւ Մակարիոսի...):

Ուրբաթի ճաշոյն)...

Շաբաթ օր. Մարութայի եպիսկոպոսին (ստորին լուսանցքում՝ շաբաթ աւր. Մարութայի եպիսկոպոսին, որ զմարտիրոսաց քաղաքն շինեաց

Կիրակի... (ներքին լուսանցքում՝ Առաջավորաց կիրակին) (էջ 54-85):

Ինչպես նկատել է գրչագիրը ունի թերություններ, սակայն այն չի խանգարում վերականգնելու նախնական տեսքը:

Հիշյալ հատվածի խմբագիրը կարող էր լինել Գեորգ վարդապետը, որովհետև Աբղղմսեհի հիշատակի օրը գրանցել են միայն 1278 թ. և 1292 թ. տոնացույցերը, իսկ 14-րդ դարի սկզբներին այն տեղափոխվեց այլ տեղ, ինչպես տեսանք վերևում:

<sup>1</sup> Յուզակ Ռայերեն ձեռագրաց Թավրիզի, կազմեց Հրաչեայ Յ. Աճառեան, Վիեննա, 1910, էջ 111-113:

Հիշյալ շաբաթական շարքը կարող էր լիարժան գործել երբ Զատիկի տոնի օրը ընկնում էր Ապրիլ 18-25-ին: Այդ է պատճառը, որ այդ Հաստատուն կարգը հաճախ խախտվում էր և տոնացույցերը նախ և ապա-ով սրբերի տոները թվարկում են առանց շաբաթվա օր նշելու, որովհետև քննարկվող հատվածի օրերը հաճախ քիչ էին լինում և սրբերի տոները միացվում էին (երկու, երեք) ու շաբաթվա օրերը չէին համընկնում: Ինչևէ այդ կարգը պահպանվեց մի շարք ճաշոցներում և Տոնացույցերի մեջ: Վերջինիս մեջ տրված է միայն շաբաթվա օրերը: Այն կրում էր հիմնականում տեսական բնույթ և պահպանվել է տվյալ սրբի ընթացիկի և նյութերի կարգը պահպանելու համար:

Գնորդ վարդապետի մասնակցությունը Ճաշոցի խմբագրությունը փաստվել է նաև Պենտեկոստի տոնական օրերի կապակցությամբ, որի մասին կգրենք հետագայում:

Միմեոն Երևանցին քննարկվող հատվածում թողեց միայն 12 տոների օրվա կանոններ, այսինքն՝ երեք շաբաթվա, մյուս սրբերի հիշատակի օրերը տեղափոխեց տոնացույցի այլ օրեր, որոնց մասին խոսեցինք վերևում:

759 թվահամարի ձեռագրում գրված է. «Փետրվար ԺԴ. Տեսունընդամասը է...» (էջ 179ա): Այս կանոնը բացի անվան տարբերակներից որևէ փոփոխության չի ենթարկվել և տոնը կատարվել է անշարժ ձևով միշտ Փետրվար 14-ին շաբաթվա որ օրն էլ ընկներ և շարժական ինչ տոնի օրն էլ հանդիպեր: Նշենք միայն որ Տեսունընդամասը տոնի ծեսի մեջ է փոփոխություններ կատարվել: Ս. Երևանցին Տեսունընդամասը օրը հանդիպող սրբերի հիշատակի օրերը տեղափոխել է այլ օր:

Հնագույն տոնացույցերը առաջավորաց սկզբի համար փաստել են հետևյալ կարգը.

Առաջադրին կիրակի

Բշ (Երկուշաբթ). Պահք Առաջադրին

Գշ (Երեքշաբթ). — „ —

Դշ (Չորեքշաբթ). — „ —

Եշ (Հինգշաբթ). — „ —

Ուրբաթ. — „ — և Նինեացուցն

Շաբաթ. Սրբոյն Սարգսի զաւրավորի և որդւոյ նորա Մարտիրոսի<sup>1</sup>:

14-րդ դարի սկզբներից սկսած «Առաջադրին կիրակին» ձևակերպել են «Առաջադրին բարեկենդանի կիրակին» ձևով, «Նինեացուցը»՝ «Յունանու մարգարեին որ առ Նինուէ» կամ «Յունանու մարգարէին» կամ «Նինուէացոցն» և «Յունանու մարգարէին» կամ «Յովնանու մարգարէին որ առ Նինուէացիսն» կամ «Յովնանու մարգարէին որ առ Նինուէ», իսկ Շաբաթ օրվա կանոնին պատահում է ավելացրած «և չորեքթան զինուորացն»<sup>2</sup>:

2092 թվահամարի գրչագիրը «Պահք առաջադրին»-ից հետո ընդմիջարկել է. «որ և Սրբոյն Սարգսի անուանեցո[ւալ]» (էջ 231ա):

Մեզ հայտնի տոնացույցերից և ոչ մեկը չի բացատրում, թե ուրբաթ օրը պահքը շարունակվել է թե ոչ: Միմեոն Երևանցու Տոնացույցում Առաջադրի Պահքի մասին գրել է. «եւ ապա պահք առաջադրին և տօնք ոչ գոն ի չորս աւուրսն այս պահոց», այնուհետև՝ «ուրբաթ օրն՝ յիշատակ է Յօնանու մարգարէի»: Ստացվում է, որ պահքը տևել է չորս օր, բայց պահքը և տոնը միաժամանակ են կատարել: Ինչպես տեսանք Առաջավորաց Բարեկենդանի և Պահքի օրերը սահմանել է Հովհան Մանդակունին 480-ական թվականներին: Ստեփանոս Սյունեցուց գի-

տենք, որ Առաջադրի պահոց օրերը ինչպես վաղ շրջանում, այնպես էլ իր ժամանակ՝ 8-րդ դարի սկզբներին եղել են հինգ օր<sup>1</sup>: Բնական է նկատել, որ Նինուէացուց հիշատակի օրը դրված է եղել շաբաթ օրը, թեև հնարավոր է, որ միաժամանակ լինի պահքի և տոների օր: Վերջին տարբերակը հավանական է: Սարգիս գորավարի և նրա որդու Մարտիրոսի հիշատակի օրը շաբաթ սահմանելուց հետո Նինուէացոց հիշատակի օրը տեղափոխել են ուրբաթ: Բարեբախտաբար առայժմ ստույգ գիտենք, որ այդ փոփոխությունը կատարեց Հովհան Օձնեցին: Հայտնի է միայն, ըստ Սամուել Կամրջաձորեցու Տոնապատճառի «Պատճառ առաջադրին» ենթավերնագրի տվյալների որ Առաջավորի պահքը ունեցել է ևս երկու անուն՝ «Նինուէացոցն ի հնումն եւ սրբոյն Սարգսի ի նորումս»<sup>2</sup>: Նա մի այլ տեղ ասում է. «Ոմանք Սուրբ Սարգսի Պահս ասեն, ըստ այսմ իմասցիս զաւանդ մերոյ ազգիս» (էջ 108ա): Ակնհայտ է, որ Պահք Առաջավորին զուգահեռ անվանել են Պահք Նինուէացոց մինչև սուրբ Սարգսի մուտքը տոնացույց, որոնց ավելացել է Պահք Սուրբ Սարգսի դուրս մղելով պահք Նինուէացոցը. Սամվել Կամրջաձորեցուն մոտ ժամանակներում համենայն դեպս 10-րդ դարի վերջերից - 11-րդ դարի սկզբներից առաջ: Միաժամանակ գիտենք, որ Սուրբ Սարգսի տոնը տոնվում էր 893-896 թթ. սահմաններից առաջ, որովհետև ինչպես տեսանք նրա վկայաբանություն մեջ հայ թարգմանիչը՝ Գաբրիլ վանահայրը ավելացրել է հայոց շարժական տոմարի ամիս-ամսաթիվ:

Հնագույն տոնացույցերն ու ճաշոցները Առաջավոր Բարեկենդանի հաջորդ կիրակի և նրանից հետո եկող շաբաթվա համար հաստատել են հետևյալ կարգը.

Կիրակի

Բշ. Ատոմեանց

Գշ. Սուքիասեանց

Դշ. Պահք

Եշ. Ոսկեանց

Զշ. Պահք

էշ. Սրբոյն Սահակայ Հայոց հայրապետի:

Այսուհետև չորեքշաբթի և ուրբաթ օրերին կատարվող պահքի օրերը չենք տալու:

Այս կանոնները, որ սահմանել էր Հովհան Օձնեցին փոփոխության չենթարկվեց հետագայում: Այնուհետև գալիս է հետևյալ շարքը.

Կիրակի

Բշ. Պիոնայ քահանայի և Մարկոսի Արեթուսայ եպիսկոպոսի

Գշ. Սրբոց Վարդանանց

Եշ. Ղևոնդեանց

Շաբաթն աւրն. Սրբոց հայրապետացն Կոստանդինապոլսի Սուրբ ժողովոյն ճԾ-իցն<sup>3</sup>:

179 գրչագիրը երկուշաբթի օրվա կանոնի տակ ավելացրել է. «և Որմզդանա և Սաէնի և - Բենիամինի սարկաւալգի», իսկ 752 թվահամարի տոնացույցում ավելացված է «Կիւրղի սարկավագի» (էջ 153բ) անունը բաց թողնելով նախորդը: Այդպես է նաև 767 (էջ 129ա-բ), 5667 (էջ 102ա-բ), 9838 (էջ 155ա-բ), 5398 (էջ 112ա) և այլ գրչագրերում: 7203 թվահամարի գրչագրում վերականգնվել է «Որմզդանա...» հատվածը (էջ 23ա-բ), իսկ 4164 թվահամարի գրչագրում ավելացվել է «Արդեա եպիսկոպոսի և ամենայն արևելեան մարտիրոսաց, որ ի պարսից թագաւո-

1 Ձեռ. № 759, էջ 179ա և ձեռ. № 179:

2 Տե՛ս Ձեռ. № 752, էջ 157ա, 767, էջ 128ա-բ, 2092, էջ 231ա, 5667, էջ 101բ, 7203, էջ 21բ-22ա, 9833, էջ 155ա, 4164, էջ 137ա-բ, 5398, էջ 112ա, 5419, էջ 174բ և այլն:

1 Գիրք թղթոց, էջ 333:

2 Տե՛ս Ձեռ. № 1007 էջ 101բ:

3 Ձեռ. № 759, էջ 179բ-108ա:

րաց կատարեցան» (էջ 138ա): Փոքր ինչ այլ ձևակերպումով նույնն է տալիս նաև 4874 զրչա-  
գիրը:

4459 և 5436 թվահամարների տոնացույցերը ավելացրել են Աբղլմսեհի անունը (էջ 70ա-  
բ և 155ա): 4514 և 939 թվահամարի ճաշոցներն երկուշաբթիի կանոնի տակ ստորին լուսանց-  
քում տվել են Պիոն քահանայի, Մարկոս Արեթուս եպիսկոպոսի, Աբղայի, Աբսենի, Որմզդանա,  
Կիւրղի և Բենիամինը (էջ 39ա-43բ և 65բ-71ա), իսկ 7741 թվահամարի ճաշոցը տվել է՝ «Պիոնի  
քահանային եւ Մարկոսի Արեթուս եպիսկոպոսի եւ Կիւրղի սակավագի» (էջ 55ա-բ), 4916 թը-  
վահամարի ճաշոցը բերել է. «Մակոսի եպիսկոպոսին եւ Աբղայի» (էջ 79ա-85բ) անունները:  
Վերջապես Սիմեոն Երևանցին կանոնել է. «Երկուշաբթի. սրբոցն Մարկոսի եպիսկոպոսին, Պիոն  
քահանային, Կիւրղի և Բենիամինի սարկավագայ և սրբոց վկայիցն Աբղլմսեհի, Որմզդանայ և  
Սայինի»: Ինչպես նկատելի դարձավ հիշյալ կանոնը աստիճանաբար ընդգրկել է սրբերի նոր  
անուններ, որոնց մի մասը մերթ բացակայում է տոնացույցերում և ճաշոցներում, մերթ էլ ա-  
վելանում սկսած 13-րդ դարի վերջերից:

14-րդ դարի սկզբներից Ղևոնդեանց հիշատակի օրը հինգշաբթիից տեղափոխել են երեք-  
շաբթի կանոնի տակ, իսկ Վարդանանցը՝ երեքշաբթիից հինգշաբթի<sup>1</sup>: Այս փոփոխությունն ըն-  
դունել է նաև Սիմեոն Երևանցին:

Շաբաթ օրվա կանոնը պահպանել են բոլոր տոնացույցերն ու ճաշոցները բացառությամբ  
7741 թվահամարի ճաշոցի, որը ունի «Շաբաթ. սրբոց Հայրապետացն Նիկիայ Սուրբ ժողովոյն»,  
իսկ ստորին լուսանցքում՝ «Բուն Բարեկենդանին շաբաթ աւրն. յիշատակ է ՅժԸ Հայրապետացն  
Նիկիայ Սուրբ ժողովոյն» (էջ 54ա-58բ): Այն չի ընդունվել, որովհետև հիշյալ կանոնը դրված է  
Աստուածածնից հիշված 3-րդ կիրակիից հետո եկող հինգշաբթի, իսկ հետագայում տեղափոխվեց  
շաբաթ օրը: Ասենք նաև, որ կանոնը «Սրբոց Հայրապետացն Կոստանդնուպոլսի Սուրբ ժողո-  
վոյն ճԾ-իցն» ձևակերպումն ստացել է Ատոմ Վարագեցու Հոռոմազիրից հետո, որովհետև այն-  
տեղ կանոնված է միայն «Բարեկենդանին շաբաթ աւրն. Սրբոց Հայրապետացն...» ձևով և Գրի-  
գոր Վկայասերի Տօնանամակից առաջ կամ նրա ազդեցությամբ, որովհետև այնտեղ ունենք  
հետևյալ ձևակերպումը. «Բուն Բարեկենդանին շաբաթ աւուրն. Սուրբ ժողովոյն Կոստանդնու-  
պալսի ճԾ սուրբ հարցն»: Հարկ է նշել, որ մինչ 10-րդ դարի վերջը հիշյալ կանոնի տակ  
տոնել են 4-5-րդ դարերի Հայրապետների և Վարդապետների հիշատակի օրը: Կանոնն ունի  
հետևյալ բովանդակությունը. «Յիշատակ Աթանասի և Բարսղի և Գրիգորեանց՝ Աստուածաբա-  
նի, Նիւացւոյ, Սքանչելագործի և Յովհաննու, Կիւրղի, Պրոկղի, Երանոսի, Եպիփանու, Եփրեմի  
և Մելիտոսի և որ[ք] սոցին նման են»:

Հնագույն Տոնացույցի ընդօրինակությունը Բուն Բարեկենդանի և նրա շաբաթվա օրերին  
կատարվող սրբերի հիշատակի օրերը տալիս է հետևյալ ձևակերպմամբ. Բուն Բարեկենդանի  
կիրակէին... Աղուհացիցն առաջին շաբաթն աւրն. Թեոդորոսի զաւրավարի

ի նոյն կիրակէ...

Երկրորդ շաբաթն աւրն. Կիւրղի Ե[րուսաղէ]մի Հայրապ[ետի] և մաւր նորա և դաբա  
նոյն կիրակէ)...

Երրորդ շաբաթն. Յովհաննու Ե[րուսաղէ]մի Հայրապ[ետի] և Աբղիշոյ և Շմաւոնի եպիսկ-  
ոպոսի) և այլ անթիւ բազում վկայից, որ ի պարս կատարեց[ան]:

ի նոյն կիրակէ)...

Չորրորդ շաբ[աթ]. Սրբոց քառասնիցն, որք ի Սեբաստիա [կատարեցան]...

ի նոյն կիրակէ)...

Հինգերորդ շաբաթն աւրն. Գրիգորի Լուսաւորչի մուտն ի Վիրապն

ի նոյն կիրակէ)...

վեցերորդ շաբաթն աւրն. Ղազարու յարութիւնն<sup>1</sup>:

Բուն Բարեկենդան անունը մտել է «Կանոնք ընթերցուածոց»-«Տոնացոյց» 480-ական  
թվականներից և շարունակել են տոնել նաև հետագայում: Թեոդորոս զորավարի հիշատակի օրը  
տոնացույց մտավ 5-րդ դարի 80-ական թվականներից և անփոփոխ տոնվեց նաև հետագայում:  
Նշենք, որ (Թեոդորոս) զորավարի փոխարեն ուշ շրջանի որոշ տոնացույցեր ունեն «զինաւորին»<sup>2</sup>  
ձևակերպումը:

Վաղ Կանոնք ընթերցուածոց-Տոնացույցերում դրվել է միայն Կյուրեղ Երուսաղեմացու հի-  
շատակի օրը, որին հնագույն տոնացույցի խմբագրությունը ավելացրել է «և մաւր նորա և դա-  
բա»: Վերջինս Տոնացույց է մուտք գործել Հավանաբար 13-րդ դարի սկզբներից: Հետագա բո-  
լոր տոնացույցերն «և դաբա»-ն փոխարինել են «Աննայի»<sup>3</sup>:

Սիմեոն Երևանցու Տոնացույցում կանոնվել է. «Շաբաթ. Տօն է սրբոյն Կիւրղի Երուսաղէ-  
մայ Հայրապետին և միւս Կիւրղի եպիսկոպոսին և մօր նորա Աննայի»: 179 թվահամարի Տոնա-  
ցույցը ունի «և այլոց սրբոց վկայիցն», որը հետագա տոնացույցերում բացակայում է:

Հնագույն «Կանոնք ընթերցուածոց»-ի խմբագրությունները Հովհան Երուսաղեմացու հի-  
շատակի օրը սահմանել են առանձին: Հնագույն Տոնացույցը ունի հավելում այն է՝ «և Աբ-  
ղիշոյի և Շմաւոնի եպիսկոպոսի և այլ անթիւ բազում վկայիցն որ ի պարս կատարեցան»: Այս  
հավելումն տոնացույց է մտել 8-րդ դարի սկզբներին նախագաղափար օրինակում: Հետագա  
տոնացույցերում այն բացակայում է, միայն 7203 թվահամարի տոնացույցն ունի վերոհիշյալ  
սրբերի անունները (էջ 24ա-ից): 4514 թվահամարի ճաշոցում գտնում ենք այդ հատվածը  
հետևյալ ձևակերպմամբ «Շաբաթ աւր. Յովհաննու Երուսաղեմայ և Շմաւոնի Հայրապետի»,  
իսկ ստորին լուսանցքում ավելացվել է Աբղիշու եպիսկոպոսի և ամենայն արևելեան մարտիրո-  
սաց» (էջ 71ա): Քննարկվող հատվածը կա նաև 939 թվահամարի զրչագրում (էջ 107ա), որից  
հետո այն չենք գտնում և ոչ մի բնագրում: Պարզ է դառնում, որ հիշյալ հավելումը գործել է  
մերթ ընդ մերթ մինչև 15-րդ դարի կեսերը: Սիմեոն Երևանցին այս կանոնի տակ ավելացրել է.  
«և սրբոց Հայրապետացն մերոց Յօհաննու Օձնեցւոյն, Յօհաննու Որոտնեցւոյն և Գրիգորի  
Տաթևացւոյն»:

«Սրբոց Քառասնիցն, որք ի Սեբաստիա կատեցան» կանոնի մեջ բնագրերում որևէ փոփո-  
խություն չենք նկատում:

Տեսնենք ինչ խմբագրություններ են կատարվել Գրիգոր Լուսավորչի հիշատակի օրվա  
հետ: Նախ ներկայացնենք տոնացույցերի տվյալները: Հնագույն և հետագա տոնացույցերից  
շատերը ձևակերպել են Կանոնը այսպես. «Գրիգորի Լուսաւորչի մուտն ի Վիրապն»<sup>4</sup>: Թեև եր-  
բեմն Հանդիպում է Հնագույն ձևակերպմամբ առանց բնորոշման այն է՝ «Սրբոյն Գրիգորի Լու-  
սավորչին» կամ «տաւն սրբոյն Գրիգորի Հա[յ]ոց Լուսաւորչի»:

1 Ձեռ. № 759, էջ 108ա-180բ:

2 Ձեռ. № 4164, էջ 139ա-142ա և 4874:

3 Ձեռ. № № 179, 752, էջ 153բ-155բ, 2092, էջ 232ա-233բ, 5667, էջ 102բ-104բ, 7203, էջ 24ա-ից, 9838, էջ  
155բ-157ա, 4164, էջ 139ա և այլն:

4 Ձեռ. № № 759, էջ 180ա-բ, 179, 752, էջ 153բ-155բ, 2092, 7203 էջ 24ա, 4164, էջ 139ա, 4514, էջ 44բ-96ա,  
7741, էջ 112ա, 939, էջ 73ա-143բ և այլն:

1 Ձեռ. № № 752, էջ 153, 767, էջ 129ա-բ, 5667, էջ 102ա-բ, 7203, էջ 23ա-բ, 9838, էջ 153ա-բ, 4164, էջ 138ա,  
4874, 5398, էջ 112ա, 4459, էջ 70ա-բ, 5436, էջ 155ա, 4514, էջ 39ա-43բ, 7741, էջ 54ա-58բ, 4916, էջ 79ա-  
85բ, 939, էջ 65բ-71ա և այլն:



14-րդ դարի 30-ական թվականներին - 16-րդ դարերի որոշ գրչագրերում «Գրիգոր Լուսավորչի մուտն ի Վիրապին» ավելացվել է «Գիւտ նշխարացն ի Կոստանդնուպոլիս»<sup>1</sup>: Սակայն հետագայում այն հանվել է մնալով նախորդը: Միմեոն Երևանցին կանոնել է. «Շաբաթ. Տօն է սրբոյն Գրիգորի Լուսավորչին մերոյ սոսկալի չարչարանացն և մտին ի Վիրապն»:

Գրիգոր Լուսավորչի տոնական օրերի քննության մեջ, որը կատարել ենք առանձին վերնագրի տակ, ցույց ենք տվել, որ քննարկվող կանոնը սահմանել է Հովհան Մանդակունի կաթողիկոսը 5-րդ դարի 80-ական թվականներին իբրև Գրիգոր Լուսավորչի հիշատակի օր, որը սկսել է տոնվել և 8-րդ դարի սկզբներին Ստեփանոս Սյունեցին այն ներկայացնում է իբրև Գրիգոր Լուսավորչի և Տրդատ թագավորի հիշատակի օր: 9-րդ դարի 4-րդ քառորդից Տոնացույցի 2-րդ խմբագրության ժամանակ Գրիգոր Լուսավորչի հիշատակի օրերը բազմացան և ստացան տարբեր որակումներ, ինչպես և առանձնացվեց Տրդատ թագավորի հիշատակի օրը: Քննարկվող կանոնի տակ գտնում ենք ոչ միայն վերը նշված որակումները, այլև «Գրիգոր Լուսավորչի չարչարանաց» և «ելն ի վիրապն»: Վերջինս ակնհայտորեն ընդմիջարկություն է կատարված 10-րդ դարում, որովհետև նրա այդ տոնը կատարվել է առանձին կանոնի տակ՝ Պենտեկոստեից հաշված 14-րդ օրը նույնպես շաբաթ և դեռևս 933 թվականին ստացվել է հայոց շարժական տոմարի Սահմի 10 ամսաթվային նշումը: Հիշյալ կանոնը վերջնականորեն ձևակերպում է ստացել իբրև Գրիգոր Լուսավորչի չարչարանքների և մուտն ի Վիրապն բնորոշումներով, որպեսզի տարբերակվի տոնացույցի մեջ նրա անվան հետ կապված մյուս տոնական օրերից:

Սկսած հնագույն շրջանից մինչև մեր օրերը Ջատիկն նախորդող կիրակին եղել է տօնական օր, որը շարժվել է Ջատիկի հետ միասին: Այդ տոնի ծիսակարգն է փոխվել, հատկապես ավելացել է Դոնբացեքի ծեսը<sup>2</sup> սկսած 15-րդ դարից: Ուշագրավ է այդ կիրակիին տված անվանումները: Ըստ հնագույն «Կանոնք ընթերցուածոցի»՝ «ի կիրակեի աւուրն. Արմաւենեաց Ողոգոմին»<sup>3</sup>: Կրկնակի անվանում է: Մեկ այլ բնագրում կարդում ենք. «Ողոգոմեանն մեծ, որ թարգմանի բարբառնեալ աւր»<sup>4</sup>: Մյուս բնագրերը հիմնականում տալիս են «Արմաւենեաց» անվանումը<sup>5</sup>:

7741 թվահամարի գրչագիրը վերնագրել է. «ի Մեծի աւուր Արմաւենեացն՝ Գալստեան Տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի յերուսաղէմ» (էջ 124բ), իսկ 939-ը՝ «Մեծի և Հրաշափառ Գալստեան տեառն յերուսաղէմ» (էջ 144բ): Վերջապես 4438 թվահամարի Ճաշոցը տալիս է կրկնակի վերնագիր, այն է՝ «Արմաւենեաց կիրակին» և «Մաղկազարդին» (էջ 125ա-126ա): Պակաս հետաքրքրական չեն տոնացույցերի անվանումները, այն է՝ «Գալուստ Տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի յերուսաղէմ դիմեալ ի կամաւոր չարչարանս»<sup>6</sup>, «Մառազարդ և Գալուստ Տեառն յերուսաղէմ»<sup>7</sup>, «Արմաւենեաց»<sup>8</sup>, «Մաղկազարդին»<sup>9</sup>: 2092 թվահամարի Տոնացույցն

1 Ձեռ. № № 767, էջ 129բ-132ա, 5667, էջ 102բ-104բ, 7203, էջ 24ա-ից, 9838, էջ 155բ-152ա, 4874, 5436 և այլն:  
2 Տե՛ս Ձեռ. № № 8633, էջ 30ա, 31բ, 5419, էջ 181ա, 5440, էջ 195ա-197ա, 5436, էջ 160ա և այլն:  
3 Ձեռ. № 985, էջ 92բ:  
4 Կանոնագիրք հայոց, հ. Ա, էջ 397-402:  
5 Վեճեփոկի 169, 832, էջ 138բ, 979 էջ 138ա, 5356, էջ 173ա, 1028, էջ 127ա-բ, 3266, էջ 61ա, 936, էջ 44բ և այլն:  
6 Ձեռ. № 759, էջ 180բ:  
7 Ձեռ. № 179, էջ 540բ:  
8 Ձեռ. № № 179, 3722:  
9 Ձեռ. № № 752, էջ 155բ, 767, էջ 133ա, 5667, էջ 104բ, 7203, 4838, էջ 157բ-158ա, 4164, էջ 142բ, 5398, էջ 113բ-114ա, 5419, էջ 181ա, 5440, էջ 195ա-197ա, 8633, էջ 30ա-31բ, 8598, էջ 32բ, 6377, էջ 234, 4459, 5436 էջ 160ա, 2026, էջ 33բ-38ա և այլն:

արձանագրել է «Կիրակէն աւր. Մառազարդար, որ է Գալուստն Տեառն յերուսաղէմ» (էջ 133բ): Իսկ 4874 թվահամարի Տոնացույցը տվել է կրկնակի վերնագիր. «Մաղկազարդի Արմավենեաց»: Ըստ Տօնացույցի Միմեոն Երևանցու խմբագրության. «Եւ զոմանս ևս եթէ դնեն ի մեր տօնելի աւուրսն, ծաղրական անուամբ և կատակելով, որպէս զտէրընտասն, զարգարդարն և այլս այսպիսիս: Զորս ի յոմանց պարզամիտ գեօղականաց մերոց առնել ի հասարակ ազգս մեր վերաբերեալ գրեն անամօթաբար» (էջ 15):

Մաղկազարդից հետո գալիս է հետևյալ տոնելի շարքը:

- Մեծի երկուշաբաթի աւր
- Մեծի երեքշաբաթի աւր
- Մեծի չորեքշաբաթի աւր
- Մեծի հինգշաբաթի աւր
- Մեծի ուրբաթի աւր
- Մեծի շաբաթի աւր
- Ջատիկ
- Երկուշաբաթի աւր
- Երեքշաբաթի աւր
- Չորեքշաբաթի աւր
- Հինգշաբաթի աւր
- Ուրբաթի աւր
- Շաբաթն աւր. Յովաննու Մկրտչի նոր կիրակէ՛

Հիշյալ կարգը գալիս է հնագույն շրջանից, միայն ծեսերի մեջ որոշ ավելացումներ են կատարվել: Մեծի երկուշաբթին հազվագյուտ վերանվանվել են «աւագ երկուշաբթին»<sup>2</sup>: Մեծի հինգշաբթի աւր-ն հնագույն «Կանոնք»-ները ձևակերպել է. «Հինգշաբթի աւր՝ հին Ջատիկին»<sup>3</sup>, որը պահպանվել է նաև ուշ ընդօրինակված որոշ ճաշոցներում<sup>4</sup>:

Գրիգոր Վկայասերի Տօնանամակում Ջատիկի կիրակին անվանել են կրկնակի վերնագրով. այն է՝ «Մեծի կիրակէի՝ Ջատիկի»<sup>5</sup>, իսկ նրան հաջորդող երկուշաբթի օրը ձևակերպել են՝ «Երկուշաբթի աւր. յիշատակ ննջեցելոց» (էջ 213բ), որը հետագա տոնացույցերում գրանցվել է. «Բշ - (Երկուշաբթի). Մեռելոց է» անվան<sup>6</sup>:

Ջատիկին հաջորդող շաբաթ օրը տոնել են Հովհաննես Մկրտչի կամ Կարապետի հիշատակի օրը: Տոնացույցերի և ճաշոցների մեծ մասը Հովհաննես Մկրտչի հիշատակի օրը տալիս է առանց բնորոշման-որակման, իսկ մի մասը ձևակերպել է. «Շաբաթ աւրն Յովաննու գլխատմանն»<sup>7</sup>: Այդպես է նաև 7203, 4164, 4459 թվահամարների տոնացույցերում և 939 թվահամարի Ճաշոցում:

1 Ձեռ. № № 179, էջ 529-531ա:  
2 Ձեռ. № 3266, էջ 61ա  
3 Ձեռ. № 985, էջ 121ա, Վեճեփոկի 169 էջ 156ա, 5356, էջ 194բ  
4 Ձեռ. № 4514, էջ 116ա, 939 էջ 165բ:  
5 Ձեռ. № 979, էջ 211ա:  
6 Ձեռ. № № 752, էջ 161բ, 767, էջ 147ա, 5667, էջ 116ա, 7203, 9838, էջ 164ա, 2031, էջ 58ա, 4164, էջ 159ա և այլն:  
7 Ձեռ. № 2092, էջ 225ա:



Ասեմք, որ Հնագույն ճաշոցները չունեն Հովհաննես Մկրտչի հիշյալ տոնի տվյալ կանոնը: 992 թվականին գրված Վարդավառի տոնին նվիրված մեկնություն մեջ Արամազդի տոնը համադրվել է Հովհաննես Մկրտչի հիշյալ տոնի հետ, որը կատարվել է Նավասարդի 1-ին: Բնագրի մեջ Նավասարդի 1-ը գրանցվել է իբրև հայոց շարժական տոմարի ամսաթիվ, ուստի քննարկվող տոնի և ամսաթվի համադրությունը ստանում ենք այդ տոնի կատարման ժամանակը տարիների կտրվածքով: Հովհաննես Մկրտչի տոնը Չատուկի հաշված 7-րդ օրը, շաբաթ, Նավասարդի 1-ին կատարվել է հետևյալ տարիներին

862 թ.	Նավասարդ 1 = Ապրիլ 25 = շաբաթ
876 թ.	— „ — = Ապրիլ 21 = — „ —
890 թ.	— „ — = Ապրիլ 18 = — „ —
904 թ.	— „ — = Ապրիլ 14 = — „ —
918 թ.	— „ — = Ապրիլ 17 = — „ —
932 թ.	— „ — = Ապրիլ 7 = — „ —

Պարզ է դառնում, որ Նավասարդի 1-ին և Չատուկի հետո եկող շաբաթ օրը՝ Հովհաննես Մկրտչի տոնելի օրը տոնացույց է մտել 862 թվահամարից հետո 932 թվականից առաջ, այսինքն տոնացույցի հետագա այն է՝ երկրորդ խմբագրություն արդյունք է, որը կատարվեց 876 թվականին: Ըստ վերոհիշյալ տվյալների Հովհաննես Մկրտչի հիշյալ տոնի օրվա Տոնացույց ներդրողների հավանորդներ են Չաքարիա, Գեորգ, Մաշտոց և Հովհաննես կաթողիկոսներից մեկը: Սակայն Գրիգոր Լուսավորչի տոնական օրերի ընդլայնման թվականի հետ պետք է կապել Հովհաննես Մկրտչի այդ տոնի ավելացումը Տոնացույցի 2-րդ խմբագրության մեջ:

Ասեմք նաև, որ Մաղկազարդին և նրանից հետո եկող շաբաթվա օրերին (ներառյալ կիրակին) են հանդիպել Լուսնի լրման 19-ամյա պարբերաշրջանի ամսաթվերը, որոնցով որոշվել են Չատուկի օրերը, ինչպես և նրան նախորդող և հաջորդող շարժական տոները: Չատուկի օրերը որոշելու համար, եթե ՇԼԲ-ի ամբողջական շրջանի ստեղծման համար չէ, հարկավոր է իմանալ լրման օրերի հետևյալ կարգը.

1. Ապրիլ 13, 2. Ապրիլ 2, 3. Մարտ 22, 4. Ապրիլ 10, 5. Մարտ 30, 6. Ապրիլ 18, 7. Ապրիլ 7, 8. Մարտ 27, 9. Ապրիլ 15, 10. Ապրիլ 4, 11. Մարտ 24, 12. Ապրիլ 12, 13. Ապրիլ 1, 14. Մարտ 21, 15. Ապրիլ 9, 16. Մարտ 29, 17. Ապրիլ 17, 18. Ապրիլ 6 (այլ 19-ամյակները Ապրիլ 5) և 19. Մարտ 25: Որից հետո ձեր որոնելի թվականը բաժանում եք 19-ի մնացորդից հանում մեկ ստանում 19 ամյակի համարը և հետևապես լրման օրը հուլյան տոմարի ամսաթվով, որից գնում ենք առաջիկա կիրակին և ստանում Չատուկի օրը: Եթե լրման օրը կիրակի է ընկել Չատուկը կլինի առաջիկա կիրակի օրը: Այդպես է նաև հայոց մեծ թվականների մի մասի համար, որոնց Չատուկն ընկել է Նավասարդից հետո, իսկ վերջինիցս առաջ ընկած օրերի համար 19-ամյակի մնացորդից մեկ միավոր չի հանվում: Այս կանոնը հայոց մեջ օգտագործվեց մինչև 1924 թ., երբ անցան նոր տոմարի, թեև օրինաչափությունը շարունակել է գործել և եթե ուզում եք հին տոմարով ստանալ Չատուկի օրը պետք է կատարեք նույն գործողությունը: Միայն տվյալ թվերի բաժանումից ստացած գերո մնացորդը նշանակում է 19, որից հանենք մեկ կատանանք 18 համարը: Իսկ նոր տոմարի համար գործում է հետևյալ կանոնը: Տվյալ թվականին գումարում եք մեկ բաժանում 19-ի և ստացված մնացորդի թիվը տալիս է 19-ամյակի համարը և լրման ամսաթիվը, որից գնում եք առաջիկա կիրակին: Տվյալ թվի բաժանումից ստացված գերո մնացորդը հավասար է 19-ի: Եթե լրման ամսաթիվ կիրակի է գնում եք հաջորդ կիրակի և գտնում Չատուկի օրը:

Նոր տոմարով գտնենք 1996 թվականի Չատուկի օրը:  $1996 + 1 = 1997 : 19 = 2$  մնացորդ: 19-ամյակի 2-րդ համարում լուսնի լրումը Ապրիլ 2-ին է, որը ընկել է երեքշաբթի, նշանակում է Չատուկը եղել է Ապրիլ 7-ին, կիրակի:

Հարկ է նշել, որ հին լրումներն ընդունելուց հետո այդ օրերը պահել են հաստատուն ձևով, թեև լրումների օրերն ունեցել են նվազման տենդենց և 312 տարին մեկ օրով պակասել են: Բայց քանի որ լրումների օրերը 19-ամյակի բոլոր տարիների համար պահել են կայուն ձևով Չատուկը կատարել են այդ հաստատուն լրման օրվանից հետո հաջորդ կիրակին կամ եթե լրումն ընկել է կիրակի հաջորդ կիրակի են տոնել Չատուկը: Տվյալ դեպքում լրման օրերի նվազման տենդենցը հաշվի չեն առել, որովհետև իրական լրումն ընկել է ընդունված լրումից առաջ:

Նոր տոմարում ևս օգտագործվում են հին 19-ամյակի լրման օրերը, սակայն նոր տոմարում նրանք աճման տենդենց ունեն, այսինքն՝ հին լրման օրերից մեկ, երկու նույնիսկ երեք օր հետո է իրական լրումը, ուստի Չատուկի օրը որոշելու համար պետք է օգտագործել Հ. Բադալյանի կազմած նորալուսնի և լիալուսնի օրացույցը (1-4000 թթ.), որտեղ պետք է գտնել լրման կամ լիալուսնի օրը, որից հետո որոշել Չատուկի կիրակին: Հին 19-ամյակով առաջնորդվելիս երբեմն սխալ կլինի Չատուկի օրը: Այսպես, 1997 թ. համար լրման օր է Մարտի 22-ը՝ համաձայն հին 19-ամյակի, իսկ իրականում լրման օրը Մարտի 24-ին է: Մարտի 22-ից հետո Մարտի 23-ին ընկնում է կիրակի, որը կարող են Չատուկի օր ընդունել, որը կընկնի իրական լրումից առաջ: Մինչդեռ Չատուկը պետք է դնել իրական լրումից հետո, այն է՝ Մարտի 30-ին: Այդպիսի դեպքերը կլինեն ապագայում, ուստի պետք է ստուգել իրական լրման օրը, որից հետո որոշել Չատուկի կիրակին:

Նոր կիրակի տոնը տոնվել է Հնագույն շրջանից, իսկ այդ կիրակիին տրված անվանումների մասին խոսեցինք վերևում:

179 թվահամարի տոնացույցերում նոր կիրակիից հետո (տարբեր ձևակերպումներով) գրված է. «Չորեքշաբթի. Աւետեաց Աստուածածինն...» և «Զկնի Նոր կիրակէին. չորեքշաբթի. Աւետեաց Աստուածածինն...» (էջ 531 բ): Համարյա նույն ձևակերպումներն ունեն հետևյալ գրչագրերը. 142 (էջ 310ա-բ), 752 (էջ 163բ), 767 (էջ 151ա), 7203, 3722, 590 (էջ 44ա) և այլն, իսկ մյուս Տոնացույցերի գրչագրերը միաժամանակ ունեն Ապրիլ 7-ի նշումները<sup>1</sup>:

Մյուս տոնացույցերն Աստուածածնի տոները, որոնց թվում Աւետեաց Աստուածածինը տալիս են ինչպես տոնացույցերի սկզբից, այնպես էլ բուն տոնացույցերի մեջ՝ Չորեքշաբթի, Ապրիլ 6-ի և 7-ի նշումներով: Այդպիսի Հնագույն տոնացույցերից մեկում՝ 8630 գրչագրում տոնացույցի սկզբից ունի հետևյալ ձևակերպումը. «Արեգի ԻԹ և Ապրիել Ի Զ և Նիսան ԺԶ. - Նախատանակ է Աւետեաց Սուրբ Աստուածածինն Մարիամու, զոր երկնային դասք հրեշտակաց տանեցին... Արեգ ամսոյ հայոց և, Ապրիել հոռմայցոց է և Նիսան ԺԷ. Տօն է մեծապայծառ ամենասրբուհոյ Աստուածածնի Մարիամու (էջ 4ա): Նման ձևակերպում ունեն նաև հետևյալ գրչագրերը՝ 4874 (էջ 158ա և 179ա), 2439 (էջ 50ա), 5440 (էջ 184բ-185ա), 4962 (էջ 123ա և 146ա), 587 (էջ 162բ-163բ և 213բ) 1338 (էջ 1ա-5ա), 2025 (էջ 2ա-7ա), 510 (էջ 298ա), 2024 - (էջ 3ա-8ա), 2028 (էջ 5ա-8ա), 720 (էջ 230բ), 754 (էջ 174ա-198բ), 2030 (էջ 1ա-6ա), 509 (էջ 370բ), 2027 (էջ 8ա-12ա), 2029 (էջ 5ա-12ա) և այլն:

Միայն 2092 թվահամարի Տոնացույցն ունի «Երկրորդ շաբաթ շաբաթ օրս. Աւետեաց Աստուածածինն... տանս յԱպրիլի վեցն գտիր» (էջ 225ա):

<sup>1</sup> Տե՛ս Ձեռ. №N° 5667, էջ 119ա, 9838, էջ 166ա, 4164, էջ 163ա-բ, 5398, էջ 121ա, 5419, էջ 197 բ, 4459, 5436, էջ 174ա:

Ճաշոցների հաղորդումների բնույթը և տարբեր է: Գրիգոր Վկայասերի Տօնանամակի մեջ գրված է. «Ապրիլ 2. Աւետիք Աստուածածնին Գարրիէլէ» (էջ 293ա): Այդպիսի ձևակերպում ունի 940 թվահամարի գրչագիրը միայն Ապրիլ 7-ի կանոնի տակ:

832 թվահամարի հայոց անշարժ տոմարի ամսաթվերով Ճաշոցն ունի՝ «Նաւասարդի ԺԵ. Սրբոյ Աստուածածնի աւետեացն» (էջ 7բ-9բ): 6235 թվահամարի գրչագիրը տվել է. «Սրբոյ Աստուածածնի (աւետեացն)...» (էջ 3բ): Տօնացույցերի ձևակերպումն ունեն որոշ ճաշոցներ: 7741 թվահամարի գրչագրում գրված է. «Չորեքշաբթի զկնի նոր կիրակէին, Աւետեաց Աստուածածնի...» (էջ 217բ): Այդպես է նաև 4972 թվահամարի Ճաշոցում (էջ 22բ): 939 թվահամարի գրչագիրն ունի հնագույն ձևակերպումը. «Ապրիլ 2. Աւետեաց Աստուածածնին», իսկ ստորին լուսանցքում ունի՝ «Յայս չորեքշաբթիս. Աւետեաց Աստուածածնի տաւն է» (էջ 238բ): Այդպես է նաև 4437 թվահամարի Ճաշոցում (էջ 13բ): Վերջապես 938 թվահամարի Ճաշոցը 2092 թվահամարի Տօնացույցի նման տվել է հետևյալ կանոնը. «Յետ Նոր կիրակէին շաբթ աւր. Աւետեաց Աստուածածնին...» (էջ 50բ-52ա): Աստուածածնի տոները, որոնց թվում Աւետեաց Աստուածածնի տոնը քննել են առանձին: Այստեղ ասենք այսքանը, որ 5-րդ դարից սկսած Աւետեաց Աստուածածնի տոնը տոնել են անշարժ տոնական օրով Ապրիլ 6-ին (Անդրեաս, Անանիա Շիրակացի, Ստեփանոս Սյունեցի) և հնագույն «Կանոնք ընթերցուածոց»-ում այդ օրը չի ունեցել առանձին ընթերցումներ, ինչպես նշել է Ստեփանոս Սյունեցին, այլ վերցրել են Ծննդեան և Յարութեան կանոններից ընթերցվելիք նյութերը: Հավանաբար Հովհան Օձնեցին, մտքեց Տօնացույցի մեջ չորեքշաբթի օրվա կանոնը: Վերջինս էական նշանակութունը չունեցա՞վ, որովհետև շարունակեց տոնվել Ապրիլ 6-ին անշարժ տոնական օրով և միայն որոշ տարիների էր Համընկնում Ապրիլ 6-ին չորեքշաբթի օրը: Ավետեաց Աստուածածնի տոնը այդպես տոնվեց մինչև 13-15-րդ դարերը: Այն երբեմն պատահում է Ապրիլ 7-ի կանոնի տակ: Այսինքն այս միջանկյալ հատվածում ոմանք տոնել են Ապրիլ 6-ին, ոմանք ապրիլ 7-ին: Կիրակոս վարդապետը Թովմա Մեծոփեցու մասին գրում է. «Նույնպէս և սա առնէր զբանս նոցա և հանապազ չարչարէր զինքն ի յուսացանել զմանկունս եկեղեցոյ. ի սաղմոսն, ի յաղօթքն, ի շարական, ի գրագրութիւն, ի ժամանակագրութիւն. զի գրեաց ընտիր և անսղալ աղաւթամատուցի և մեկնիչք և տաւնացոյց և լաւ օրինակաց և ուսոյց Ի Դ ընտիր գրագիր: Եւ ասաց սուրբ վարդապետս մեր, թէ պարտ է աւետեաց աստուածածնին Բ աւր տօն կատարել, ի յապրիլի 2 և ի նիսան ի Ժ 2 նախատոնակ առնել և յապրիլի է և նիսան ի Ժ է տաւն աւետեաց աստուածածնին կատարել. մին վասն երկնաւորաց և միւսն վասն երկրաւորաց: Զի Բ հետ աւետիք ետ Գարրիէլ Հրեշտակապետն կուսին Մարիամու աստուածածնին զմին ի Գ ժամն ի վերայ Աղբերն և զմինն ի Զ ժամն ի սենեկին»<sup>1</sup>: 15-րդ դարի 40-ական թվականներին ընդօրինակված տոնացույցերի տվյալները և Կիրակոս վարդապետի վկայութունը թույլ է տալիս պնդել, որ Թովմա Մեծոփեցին է երկու օր տոն սահմանել Ավետեաց Աստուածածնի օրվա կապակցութեամբ և մտքեց տօնացույցի կանոն: Ասենք նաև, որ մինչ Թովմա Մեծոփեցին և հավանաբար նրանից հետո վեճեր են եղել Ավետայց Աստուածածնի տոնը Ապրիլ 6-ին, թե Ապրիլ 7-ին կատարելու խնդրում և վերջապես համաձայնվել են, որ Ապրիլ 6-ին նախատոնակ լինի, իսկ Ապրիլ 7-ին տոն Ավետեաց Աստուածածնի: Այս տեսակետից ուշագրավ են տոնացույցերի բացատրութունները. «Այլ այս գիտելի է: Բազում հակառակութիւն կրէ մերո եկեղեցին վասն տօնի Աւետեաց Աստուածածնին. ոմանք ի 2 յԱպրիլ առնեն և ոմանք՝ յէ, և երկուք ճիշտ են, ի 2 նախատոնակ է զոր երկնայինքն տօնեցին Գ դասք հրեշտակացն վերնոց. զի նոցա յայտնեցաւ փրկութիւն մարդկան: Եւ յէ տօն է մերս եկեղեցի, զի կուսին Մարիամու յայտնեցաւ փրկութիւն մեր...»<sup>2</sup>: Այլ խոսքով

Համաձայնութիւնը կայացա՞վ և տոնացույցի մեջ փաստորեն Ավետեաց Աստուածածնի տոնը տեղափոխվեց Ապրիլ 7: Այն շարունակեց իր հաստատուն տեղը գտնել հետագայում ընդօրինակված տոնացույցերում: Միմեռն Երևանցին «Տօնացոյցում» գրում է. «Կանօն Աւետեաց Սրբուհոյ կուսին Մարիամու Սուրբ Աստուածածնի Աւետեաց տօնն աստ Եդաւ, որ կատարի յԱպրիլի է: Բայց յերեկոյին, որ է Ապրիլ 2, յորում աւր և պահեսցի, յետ աւուր պատճէին՝ նախատօնակ արա» (էջ 124): Քննարկվող կանոնը գործում է նաև այժմ:

Բոլոր տոնացույցերն ու ճաշոցները Չատկից հաշված երրորդ կիրակի են կանոնել Աշխարհամատրան տոնը: Վերջինս գալիս է Հովհան Օձնեցու խմբագրած տոնացույցից և շարունակել է տոնվել անփոփոխ մինչև այժմ:

Երևման Խաչի տոնը Հնագոյն բոլոր «Կանոնք ընթերցուածոց»-ների խմբագրութունները կանոնել են Մայիսի 7-ին տակ, այսինքն այն նշվում էր անշարժ տոնական օրով: Հետագայում այդ կանոնը խմբագրութեան ենթարկվեց:

Բերենք տոնացույցերի և ճաշոցների տվյալները: 759 թվահամարի Տօնացույցում կարգում ենք. «Ի չորրորդ կիրակի(է) կամ ուր ամիսն բերէ. Երևան Խաչին, ի Մայիս է» (էջ 169ա): Այդպես է նաև 179, 752 (էջ 164ա), 5419 (էջ 198ա) թվահամարների տոնացույցերում:

767 թվահամարի Տօնացույցում գրված է. «Չորրորդ կիրակէ կամ Ե կամ ուր ամիսն բերէ, Մայիս է. Երևման Սուրբ Խաչն տօն է» (էջ 152բ): Համարյա նույն ձևակերպումն ունեն հետևյալ տոնացույցերը, այն է՝ 5667 (էջ 120ա) և 9838 (էջ 166բ) թվահամարների գրչագրերը:

2092 թվահամարի Տօնացույցն ունի՝ «երրորդ (ուղղել՝ Ե երրորդ) կիրակի(է) Երևման Խաչին տաւն է: Ի Մայիսի է-ն է ի յայսմաօրին» (էջ 225): Չատկից հաշված 5-րդ կիրակիի կանոնի տակ են բերել տոնացույցերի հետևյալ գրչագրերը՝ 7203, 4164 (էջ 169բ), 4459, 508 (էջ 221ա): Գրիգոր Վկայասերի Տօնանամակում գրված է 4-րդ կիրակիի կանոնի տակ<sup>1</sup>, իսկ մյուս ճաշոցները կանոնել են 5-րդ կիրակիի տակ<sup>2</sup>: Պարզ է Երևման խաչի տոնի կանոնի փոփոխման ժամանակը այն է՝ 11-րդ դ. ինչպես և հասկանալի է նրա խմբագրման շարժառիթները: Բանն այն է, որ երբ Չատկը կատարվում էր Մարտի 22-ին, 23-ին, 24-ին և 25-ին Մայիս 7-ը գալիս էր Պենտեկոստից առաջ 2-րդ Մաղկազարդից և Համբարձումից հետո, իսկ Մարտի 27-ին, 28-ին և 29-ին Չատկը կատարելու ժամանակ Մայիսի 7-ը ընկնում էր Համբարձումից հետո կամ Համընկնում էր (վերջին ամսաթվի դեպքում), իսկ երբ Չատկը կատարում էին Ապրիլ 25-ին, 24-ին և 23-ին Մայիսի 7-ը գալիս էր Աշխարհամատրան տոնից առաջ (վերջին ամսաթվում Համընկնում էր): Պարզ է 4-րդ և 5-րդ կիրակիի կանոնի առաջացման պատճառը: 4-րդ կամ 5-րդ կիրակիի խմբագրումը ժամանակագրական սանդղակի մեջ տեղավորվում են 11-րդ դարում 2-րդը՝ 14-րդ, թեև բնագրերի ժամանակագրական տվյալները հակասական են: Ստույգ հաշվումները ցույց են տալիս, որ 4-րդ կիրակիի տակ հասկացել են Չատկից հաշված 5-րդ կիրակին Չատկից հետո եկող 4-րդ կիրակին կամ 4-րդ կիրակին վերաբերվում է այն տարիներին, երբ Չատկը կատարվում էր Ապրիլ 25-16-ն ընկնող ամսաթվերին, որպեսզի Խաչի երևման տոնի օրերը չանցնեն Մայիս 16-ից այն կողմ և աստիճանաբար մոտենան Մայիս 7-ին: Իսկ Չատկից հաշված 5-րդ կիրակին սահմանողը նկատի է ունեցել Չատկի Մարտ 22-ից և հետո սկսվող օրերը, երբ Երևման Խաչի օրերը Ապրիլ 19-ից սկսած մոտենում էին Մայիս 7-ին: Ինչևէ ունենք երկու օրինակ, որոնք վերաբերում են տարբեր ժամանակների, բայց միևնույն արդյունքն են տալիս: Բերենք այդ տվյալները:

1 Գ. Հովսեփյան, Թովմա Մեծոփեցու կյանքը, Վաղարշապատ, 1914, էջ 4-5:  
2 Ձեռ. № 4874, էջ 158ա, տե՛ս նաև 5440, էջ 184բ-185բ, 4962, էջ 123ա և այլն:

1 Տե՛ս Ձեռ. № 979, էջ 303ա:  
2 Տե՛ս Ձեռ. № 936, էջ 54բ, 7441, էջ 246 ա, 5455, էջ 136ա, 6501, էջ 48ա:

Հովհաննես Սարկավազը, ինչպես տեսանք, Ազգաց կանոնները տվել է 1094 թվականի տոնական տարվա կտրվածքով, որտեղ երևման իսաչին տոնը տեղադրված է Մայիսի 7 = ԱՀե-կան 30 = կիրակի: Պարզվում է, որ այն Ջատկից հաշված 5-րդ կիրակին է:

Թովմա Մեծոփեցին վախճանվել է «ի թուականութեանս Հայոց ՊՂԵ», «ի մայիսի ժե, յաւուր կիրակէին երեման խաչին»<sup>1</sup>:

Իսկապես Հայոց ՊՂԵ թվականին (= 1446 թ.) Ջատկին ընկել է Ապրիլի 17-ին, իսկ երե-ման իսաչին օրը՝ Մայիսի 15-ին, կիրակի, այսինքն՝ Ջատկից հաշված 5-րդ կիրակին: Սրանով մի կողմից հաստատվում է Տոնացույցերի 5-րդ կիրակիի կանոնը, մյուս կողմից բացառվում են Թովմա Մեծոփեցու վախճանվելու հետ կապված Հայոց մյուս տարեթվերը, այն է՝ ՊՂԵ և ՊՂԶ:

Վերջինս առկա է նրա տապանաքարի վրա, որը միայն նշանակում է թե տապանաքարը դրվել է մեկ տարի հետո, այն է՝ ՊՂԶ թվականին, այսինքն Թովմա Մեծոփեցին վախճանվել է ՊՂԵ թվականին, իսկ տապանաքարը տեղադրվել է ՊՂԶ թվականին: Սիմեոն Երևանցին նա-խընտրել է. «Հինգերորդ կիրակէ. Տօն է Երեման Սրբոյ իսաչին» (էջ 145-146): Այսպիսով երե-ման իսաչի օրը վաղ շրջանում դրվել է անշարժ կանոնի տակ և կատարվել Մայիս 7-ին: Հայոց տոնացույցերի խմբագրութունների ժամանակ հատկապես այդ կանոնը փոխել են և դրվել Ջատկից հաշված 4-րդ և 5-րդ կիրակիներին, որոնք երբեմն համընկնում էին Մայիս 7-ին և վերջնականում նախընտրել են 5-րդ կիրակին, որով և առաջնորդվում են մինչև այժմ:

Համբարձման տոնը հնագույն «Կանոնք»-ներում կարգված է Ջատկից հաշված 40-րդ օրը, որը փոփոխության չի ենթարկվել, միայն հետագա տոնացույցներն ու ճաշոցները ձև-կերպել են Ջատկից հաշված 6-րդ կիրակիից հետո եկող հինգշաբթի օրը, որոնք համարժեք են:

Հայոց ճաշոցներն ու տոնացույցերը Ջատկից հաշված 7-րդ կիրակին կանոնել են որպես երկրորդ Ծաղկազարդի տոն, որը հնագույն «Կանոնք»-ներում բացակայում է: Մեզ համար պարզ է, թե այդ տոնը տոնացույց է մտցրել Հովհան Օձնեցին, թե նրա տոնացույցի հետագա խմբագիրները: Հավանականը վերջին տարբերակն է: Միայն մի բան է պարզ, որ մեզ հասած տոնացույցերում արդեն սահմանված է երկրորդ Ծաղկազարդի տոնը:

1314 թ. խմբագրված Տոնացույցում Պետկոստեից առաջ ընկնող շաբաթ օրվա տակ գտնում ենք հետևյալ տեղեկությունը. «Շաբաթն աւրն. Կատարումն է ամենայն աւետարան(չ-լանցն)»<sup>2</sup>: Այն կրկնել են 5667 (էջ 121ա-բ) և 7203 (էջ 62ա-63բ), և 9838 (էջ 167բ), 5419 (էջ 199բ), 5404 (էջ 206ա) և 5436 (էջ 175բ): Թվահամարների գրչագրերը, բայց բացակայում է մի շարք բնագրերում և չայն չունի նաև Սիմեոն Երևանցին: Փաստորեն այդ տոնը կատարել են 14-17-րդ դարերի ընթացքում, այն էլ սահմանափակ վայրերում:

Հնագույն «Կանոնք ընթերցուածոց»-ներում Պենտակոստեից օրը տվել են մեկ օրվա կա-նոնի տակ հետևյալ ձևակերպմամբ. «Յաւուր Սրբոյ Պենդակոստէին կիւրակէն աւր...»<sup>3</sup> կամ «Մեծի և հրաշափառ Գալստեան Սուրբ Հոգոյն...»<sup>4</sup>:

Մեզ հասած Հնագույն տոնացույցերի մեջ վկայվել է. «Եւթներորդ կիրակ(է) Պենտեկոս-տեէ... և շաբաթն պա(հ)ք...: Շաբաթն աւրն. Երեմիայ մարգար(էի), ի Մայիս Ա: Կիրակ(է). Եկե-ղեցոյ...»<sup>5</sup>: 179 թվահամարի Տոնացույցի տվյալները նույնն են միայն «Ը կիրակ(է). Պենտե-կոստ...» է տված: 7-րդ կամ 8-րդ կիրակիի նշումը սխալ է, այլ հաշվման արդյունք: Այն հե-

ղինակները, որոնք Ջատկի կիրակիից են հաշվում Պենտեկոստեն ընկնում է 8-րդ կիրակի, իսկ այն հեղինակները, որոնք Ջատկի հաջորդ կիրակիից են հաշվում Պենտեկոստեն ընկնում է 7-րդ կիրակիին: 752 թվահամարի Տոնացույցն սկսել է. «Պենտեկոստեն գիշերն հսկումն է... Ապա պահք եղիա(յ)ի և տաւն ոչ լինի:

Շաբ(աթ) Երեմիայ մարգարէին

Ա կիրակին, որ զկնի եղիայի պահոցն. «եկեղեցո(յ) տաւն է»<sup>1</sup>:

Մյուս տոնացույցերի և ճաշոցների տվյալներին կանոնադառնանք քիչ հետո: Այստեղ նախ վերականգնենք տոնական տարվա քննարկվող հատվածի պատկերը, այն է՝

Կիրակի. Պենտակոստէ

Երկուշաբթի. Պահք կամ Պահք եղիայի

Երեքշաբթի. — „ —

Չորեքշաբթի. — „ —

Հինգշաբթի. — „ —

Ուրբաթ. — „ —

Շաբաթ. Երեմիայ Մարգարէի

Կիրակի. տօն Եկեղեցու

Դժվար է պնդել, որ հիշյալ կարգը գալիս է Հովհան Օձնեցու Տոնացույցից, սակայն առկա են որոշ տվյալներ, որոնք ցույց են տալիս հիշյալ կարգի վաղ ծագումը: Այսպես, Սամվել Կամրջաձորեցու Տօնապատճառում գտնում ենք ընդհանրապես պահքերի, որոնց թվում հիշյալ պահքի մասին հետևյալ տեղեկությունը. «... որպէս պահեմք զԵ (գրչագրում է, ուղղել ենք այլ բնագրերի հիման վրա - Ռ. Վ.) աւր զկնի Պենտեկոստէին, Ե՝ Վարդավառին, Ե՝ Փոխման Աս-տուածածնին, Ե՝ Վերացման իսաչին, յորժամ ի վերնատանէն ի յարութիւն փոխեցին, Ե՝ Յայտ-նութեան եւ Մննդեան Քրիստոսի»<sup>2</sup>:

Ակնհայտ է, որ Պենտեկոստեից հետո հնգօրեա պահքը գոյութիւն ուներ 10-րդ դարի վերջերից - 11-րդ դարի սկզբներից առաջ: Իսկ Եղիայի պահոց մասին հիշատակություն ենք գտնում Մաթևոս Ուռհայեցու մոտ: Նա գրում է, որ Հայոց 561 թվականին (=1112 թ.) Մամ-տուտը նորից գորահավաք անելով շարժվեց Ուռհա քաղաքի վրա: Նա Ջատկի հաջորդ օրը՝ մե-ռելոցին, անակընկալ հարձակվեց քաղաքի վրա: Սահմի ամսի սկիզբն էր (Ջատկը 1112 թ. Ապրիլ 21 = Հոռի 30, Կիրակի իսկ մեռելոցը՝ Ապրիլ 29 = Սահմի 1, երկուշաբթի): Այնուհետև շարունակում է, որ նույն տարի կոմս Ճոսլին մտավ Աբուճ քաղաքը, որի վրա թուրքերը արշա-վեցին Եղիայի շաբաթ օրը (= Պենտեկոստեն եղել է Հունիս 9-ին, իսկ նրա շաբաթ օրը՝ Հունիս 15-ին: Վերջինս ճիշտ հաշվել է Հ. Բարդիկյանը<sup>3</sup>:

Պարզ է, որ Եղիայի անվամբ պահքը արդեն փաստվել է 12-րդ դարում: Թերևս գալիս է 11-րդ դարից:

Ուշագրավ է եկեղեցու տոնի մասին տեղեկությունը, որը քննարկեցին այլ առիթով: Այս-տեղ միայն ասենք, որ 1090 թ. կամ 1104 թ. այդ տոնը արդեն ստացել է Հայոց շարժական տո-մարի ամսաթիվ Դավիթ Քոբայրեցու կողմից: Նշանակում է, որ Եկեղեցու տոնը արդեն 11-րդ դարում տոնում էին: Այլ խոսքով, հիշյալ կարգով Հայերը տոնում էին առնվազն 9-րդ դարի 4-րդ քառորդից, եթե ոչ 8-րդ դարի սկզբներից՝ Հովհան Օձնեցի կաթողիկոսի ժամանակներից:

1 Գ. Հովսեփյան, Թովմա Մեծոփեցու կյանքը, Վաղարշապատ, 1914, էջ 4:

2 Ձեռ. № 752, էջ 164բ-165ա:

3 Ձեռ. № 985, էջ 248ա-251ա:

4 Վեճետիկի 169 թվ. ձեռ էջ 267ա:

5 Ձեռ. № 759, էջ 169ա-բ:

1 Ձեռ. № 752 էջ 165ա-166բ:

2 Ձեռ. № 1007, էջ 108բ:

3 Տե՛ս Մատթեոս Ուռհայեցի, Ժամանակագրություն, աշխ., թրգմ. և ծան. Հ. Բարդիկյանի, Ե. 1973, էջ 214-215:

Պենտեկոստի տոնական օրերը ավելացան Ներսես Շնորհալի կաթողիկոսի ժամանակ (1166-1173 թթ.): Գրիգոր Վկայասերի Տօնանամակի խմբագրութան մեջ Պենտեկոստի առաջին օրվա կանոնը և ընթերցվելիք նյութը տալուց հետո գրվում է. «Կանոն եւթն աւուրցն Սրբոյ Պենտեկոստէին, որ է գալուստ Հոգւոյ Սրբոյ ի դաս առաքելոցն, զոր կարգեաց Սուրբ Հայրապետն Հայոց Ներսես կաթողիկոսն»<sup>1</sup>:

Այնուհետև բերվում են կանոնները և ընթերցուածները, որոնք չենք տալիս: Ստանում ենք հետևյալ պատկերը.

Կիրակի Պենտեկոստէ կամ Հոգեգալուստ

Երկուշաբթին...

Կանոն երրորդ աւուրն (= Երեքշաբթի)

Կանոն չորրորդ աւուր (= Չորեքշաբթի)

Կանոն հինգերորդ աւուրն (= Հինգշաբթի)

Կանոն վեցերորդ աւուրն Հոգւոյն Գալստեանն (= Ուրբաթ)

Կանոն եւթներորդ աւուրն Հոգւոյն գալստեանն. (= շաբաթ):

Կանոն ութերորդ աւուրն Հոգւոյն Գալստեանն. (= կիրակի):

Հետագայում գրված ճաշոցները բացատրութիւնն չեն տալիս, այլ միայն բերում են վերոհիշյալ երկու կանոնները հաճախ զուգահեռաբար և կիրակի օրվա նախատեսված եկեղեցու տոնը տեղափոխել են հաջորդ կիրակի հաշվելով 2-րդ կամ 3-րդ կիրակի<sup>3</sup>: Վերջինս գրչական սխալի արդյունք է: Այն հեղինակները, որոնք Հոգեգալուստեան կիրակիից են հաշվում եկեղեցու տոնը ընկնում է 3-րդ կիրակի, իսկ որոնք Հոգեգալուստեան կիրակիին չեն հաշվում այդ տոնը ընկնում է երկրորդ կիրակի: Ասենք նաև որ 7741 թվահամարի Ճաշոցը Պենտեկոստեին հաջորդող կիրակի նախատեսել է Եղիա մարգարեի հիշատակի օրը այն է «Կիրակէ աւուրն կարգն Եղիայի մարգարէին», որը բացակայում է այլ ճաշոցների մեջ:

Տոնացույցերի խմբագրութիւնները այդ կապակցութեամբ տալիս են բացատրութիւններ:

767 թվահամարի Տոնացույցի խմբագրութիւնը սկսում է. «Պենտեկոստէի գիշերն հսկումն է...» այնուհետև բերում է հնագույն կանոնները, որից հետո գրում է. «Այլ խրատ Տեառն Ներսեսի Հայոց կաթողիկոսի Կլայեցոյ. նույն և երգ շարականացդ, զոր կարգեաց լինել յեկեղեցիս Հայաստանեաց որպէս և յամենայն ազգաց քրիստոնէից եկեղեցիս Ը օր տօն Գալստեան Սուրբ Հոգոյն» (էջ 156բ): Որից հետո բերում է ութօրյա 2-րդ խումբ կանոնները և ավելացնում. «Իսկ եթէ զայս Ը աւուր տօն չառնես դու Եղիայի Պահոց սկիզբն արա ապաշխարութեան հարցերուն և ասա կարգաւ» (էջ 160ա-բ): Վերջապես Պենտեկոստեից հետո եկող հաջորդ կիրակիի համար գրում է. «Առաջին կիրակին, որ զկնի Եղիայի Պահոցն տօն է Եկեղեցոյ անպատճառ» (էջ 161ա): Այդպիսին է նաև 2031 (էջ 74բ), 3668 (էջ 55բ-62բ) և այլ գրչագրերի տվյալները:

5667 թվահամարի Տոնացույցի խմբագրութեան մեջ բերվել է Պենտեկոստի առաջին օրվա կանոնը. «Պենտեկոստէի Գիշերն հսկումն է...» սկսվածքով, որից հետո գրում է. «Այլ խրատք Տեառն Ներսիսի Հայոց կաթողիկոսի Կլայեցոյ. նոյն և երգ շարականաց, զոր կարգեաց լինել յեկեղեցիս Հայաստանեաց ամենայն և յամենայն ազգաց քրիստոնէից եկեղեցիս Ը աւուր տօն գալստեանն»:

1 Ձեռ. N° 979, էջ 313ա-բ:

2 Աճ. էջ 313բ-319բ:

3 Տե՛ս Ձեռ. N°N° 3266, էջ 125ա, 4514, էջ 229ա-246բ, 6235, էջ 8ա, 936, էջ 60բ, 7741, էջ 285ա-300բ, 939, էջ 294ա-330ա, 4437, էջ 56բ-90ա և այլն:

տեան Սուրբ Հոգոյն, զորս և պայծառացոյց շարականաւ և ընթերցուածովք և վասն առաջ չճանճրանալոյ ուսումնասիրեց Դ աւուր միայն կարգեաց զշարականսն, զի յորժամ վճարի ի կրկնեսցին մինչև ի լրումն Ը աւուրն սահմանեց: Զի ի Համբարձմանէն մինչև ի Պենդակոստն պահեսցին և թէ ծանր թուի զբովանդակն պահել զչորեքշաբթին և զուրբաթ պահոց են: Բայց այս Ը աւուր. որ տօնել սահմանած է տօնեսցի, բայց պահքն մի լուծի. զի կրկին պահք է» (էջ 122բ-123ա): Այնուհետև տալիս է 2-րդ-ից 8-րդ օրվա կանոնները, իսկ 7-րդ օրվա տակ նաև «շաբաթ աւուր. Երեմիայի մարգարէին...» (էջ 125ա): Վերջինս կրկնելով Պենտեկոստեի հաջորդ կիրակիից առաջ, 8-րդ օրվա կանոնից հետո: Վերջապես գրում է. «Առաջի կիրակին, որ զկնի Եղիայի պահոցն տաւն է [Եկեղեցոյ] անպատճառ» (էջ 126ա):

Այդպիսի կարգով և բացատրութեամբ են տրված նաև 4164 (էջ 179ա), 4441 (էջ 248ա), 5436 (էջ 177ա), 8598 (էջ 73բ-179ա), 5419 (էջ 201բ) թվահամարների տոնացույցերում և այլ գրչագրում:

Ուշագրավ են 4874 թվահամարի Տոնացույցի տվյալները: Այնտեղ սկսվածքն ավանդական է, այսինքն՝ «Պենտեկոստէի գիշերն հսկումն է», որից հետո՝ «Այլ խրատք Տեառն Ներսեսի Հայոց կաթողիկոսի Կլայեցոյն...» և կանոնները, որտեղ արդեն գրված է. «Ութներորդ աւուրն, որ է կիրակի անպատճառ տօն է Սուրբ Հոգւոյն...» (էջ 186ա): Որից հետո շարունակում է. «Ով տօնասեր, թէ կամիցիս տօնել Հոգւոյն խրատով գրբեցաւ, որպէս Գէորգայ վարդապետին մեծի Լամբրոնացոյ և կարի հարուստ լեալ ի նմանէ: Այլ զկիրակէս զայս ոմանք հետ Հոգոյ Գալստեանն Եկեղեցոյ տօնեն, զոր լուսաւորիչն մեր սուրբն Գրիգոր կարգեաց: Բայց թէ Ը օր տօնեսցի Սուրբ Հոգւոյն զառաջիկայ կիրակին տօն է Եկեղեցոյ: Եւ դարձեալ թէ ոչ կամիս զՀոգոյ Գալուստն տօնել Ը օրէից, զօրն ի լման կատարել. դու գիշերն տօնէ և ի ճաշուն ի վեր պահոց կարգն կատարէ, որպէս և գրեալ է: Եւ թէ այլ խստապարանիս և ոչ կամիս տօնել զութ օրն դու Եղիայի պահոց սկիզբն արա ապաշխարութեան հարցերոյն...»

Շաբաթ. Երեմիայ մարգարէին...

Առաջին կիրակին, որ զկնի Եղիայի պահոցն...

Երկրորդ կիրակին. տօն է Եկեղեցոյ և Գէորգայն այն է, որ ի վերոյ գրեցաք...» (էջ 186ա-187բ):

Պարզ է դառնում, որ Գեորգ վարդապետը՝ Լամբրոնացին Պենտեկոստեի Ներսես Շնորհալու ութօրյա կանոններն է խմբագրել և հատկապես եկեղեցու տոնը տեղափոխել է Հոգեգալուստյան 8 օրյա տոներից հետո եկող հաջորդ կիրակի 13-րդ դարի վերջում: Պատահական չէ, որ 14-րդ դարի և հետագայի տոնացույցերը եկեղեցու տոնը տեղափոխել են Պենտեկոստեից հաշված 3-րդ կիրակին կամ Պենտեկոստեից հետո եկող կիրակիից հետո եկող 2-րդ կիրակին<sup>1</sup>:

Հետաքրքրական է նաև որոշ տոնացույցերի հետևյալ հաղորդումը. «Ութերորդ աւուրն. Նոր Կիրակի (կամ Կիրակին կամ Կիրակէին)»<sup>2</sup>: Պարզվում է, որ Պենտեկոստեին հաջորդող կիրակին հավանաբար Զատիկից հետո եկող Նոր Կիրակիի ազդեցութեան տակ անվանել են Նոր Կիրակի: Այլ խոսքով Ներսես Շնորհալուց հետո զուգահեռաբար և կամավոր սկզբունքով կամ տոնել են հին կարգով կամ տոնել են Հոգեգալուստեան ութ օրերը պահելով նաև կրկնակի պահքը: Այս տեսակետից ուշագրավ են 8598 թվահամարի (1593/4 թթ.) տոնացույցի բացատրութիւնները: Այնտեղ բերված են Պենտեկոստեի 8 օրյա կանոնները, որից հետո գրված է. «Ով եղբայր, յայս կիրակիս թէ Սուրբ Հոգւոյն գալուստ տօնէս, նա այս է որ գրեցաւ...: Իսկ ի հին աւուրնայն յայս շաբաթս ապաշխարութեան էր գրած» և բերում այդ կանոնները, որից հետո շարունակում է. «Ի

1 Տե՛ս Ձեռ. N°N° 2092, էջ 225ա-բ, 9838, էջ 167բ-171ա, 4164, էջ 177բ-182բ, 4441, էջ 248ա, 5398, էջ 122ա-124բ, 6337, էջ 240ա-241ա, 5419, էջ 200ա-205ա, 4962, էջ 147բ-150բ և այլն:

2 Տե՛ս Ձեռ. N°N° 5419, էջ 200ա-205ա, 4962, էջ 147բ-150բ, 5436, էջ 176ա-179ա և այլն:

Հին աւրինակն այսպէս էր գրած կամք քո է» (էջ 70բ-82ա): Այսինքն՝ երկու տարբերակներից մեկի ընտրութիւնը և տոների կատարումը կամավոր սկզբունքի վրա էր հիմնված:

Միմեոն Երեւանցու Տոնացուցի մեջ կարգն արդեն այսպիսինն է. «Կանօն Հոգւոյ Սրբոյ Գալստեանն: Հոգւոյն Սրբոյ Գալստեան կիրակէ [որ ասի Պենտէկոստէ, այն է՝ յիսներորդ օր ի Զատիկէն] ի գիշերի հսկումն է...

Երկուշաբթ օրն ...

Երեքշաբթ օրն ...

Չորեքշաբթ օրն ...

Հինգշաբթ օրն ...

Ուրբաթ օրն ...

Շաբաթ օրն ...

առաջին կիրակէ Յարութեան...

Երկրորդ կիրակէ զկնի Հոգւոյ Գալստեան. Տօն է կաթողիկէ եկեղեցւոյ Սրբոյն էջմիածնի, զոր կարգեց Սուրբն Գրիգոր Լուսավորչն մեր, յելանելոյն ի Վիրապէն...» (էջ 167-188):

Միմեոն Երեւանցու սահմանած կարգն, որն հիմնված է Ներսես Շնորհալու կանոնների և նրա հետագա խմբագրութեան վրա, գործում են մինչև այժմ արդեն իբրև պարտադիր կանոններ:

759 թվահամարի տոնացուցը բերել է հետևյալ սրբերի տոնական շարքը:

Բշ. Սրբոց Հռիփսիմեանց

Գշ. Գայանէ և ընկերաց նորա

Եշ. Հովհաննու Մկրտչի և Աթանազիսի եպիսկոպոսի

էշ. Սրբոյն Գրիգորի Ելն ի Վիրապին

Երկրորդ կիրակի

Սրբերի հիշյալ շարքն ունեն համարյա բոլոր տոնացուցերն ու ճաշոցներն<sup>1</sup>:

Միայն 2092 թվահամարն ունի սրբերի տոները այլ հերթականութեան (էջ 225բ), որը քննարկել ենք նախորդ գլխում:

4874 թվահամարի Տոնացուցը Հինգշաբթի օրվա տակ ավելացրել է. « Եւ Ֆրանկն յայս աւուր մարմնոյ և արեան Տեառն տօնեն» (էջ 186բ-187ա):

Ինչպես տեսաք, եկեղեցու տոնը Պենտեկոստեից հաշված 2-րդ կիրակիից տեղափոխվեց 3-րդ կիրակի: Ի դեպ 759 թվահամարի և այլ տոնացուցերում 2-րդ կիրակի ասելով հասկացել են 3-րդ կիրակի: Վերոհիշյալ կարգը պահպանվեց նաև Միմեոն Երեւանցու Տոնացուցում (էջ 179-185):

Այնուհետև 759 թվահամարի գրչագիրը բերում է սրբերի տոների հետևյալ շարքը.

Բշ. Նունեա և Մանեա

Գշ. Մանականց Բեդդէմի

Եշ. Սարգսի և Բագոսի

էշ. Մովկիմա քահանայի

Զկնի Հոգ[ւոյ] գալստ[եան] երրորդ կիրակի և ապա պահ[չ] սրբոյն Գրիգորի, բայց տաւնք լինի (էջ 169բ-170ա):

Միայն 936 թվահամարի ճաշոցն է վերարտադրել 759 թվահամարի տոնացուցի տվյալները (էջ 74բ-79բ): Իսկ 752 թվահամարի Տոնացուց խմբագրել է նախորդ կարգը և տվել.

Բշ. Մանկանց Բեդդէմի և Ակակիա վկայի

Գշ. Նունեա և Մանեա

Եշ. Սարգսի և Բագոսի

Շաբ. Մովկիմա քահանայի և Կողբատիոս զինաւորին (էջ 166բ)

767 թվահամարի գրչագիրը Կիրակիից հետո ավելացրել է «Ապա պահչ Սրբոյն Գրիգորի և է Միջինք ամուսն Յիսնակացն, բայց տօն լինի» (էջ 162 ա-բ):

Այսպես են ներկայացրել հետագայում ընդօրինակված տոնացուցերն ու ճաշոցներն<sup>1</sup>:

Փաստորեն 14-րդ դարի սկզբներից վերը քննարկված երկուշաբթի օրվա կանոնը տեղափոխել են երեքշաբթի, իսկ երեքշաբթիները՝ երկուշաբթի և ավելացրել Ակակիոս վկայի հիշատակի օրը: Իսկ շաբաթ օրվա կանոնին ավելացրել են «Կողբատիոս զինաւորի» հիշատակի օրը:

Միմեոն Երեւանցին նույնպես մասամբ հետևել է 14-րդ դարից հետո եկող տոնացուցերին, բայց խմբագրել է հետևյալ ձևով.

Երկուշաբթի. Սրբոց Մանկանցն Բեդդէմի և Ակակիոսի վկայի, Մովկիմայ քահանայի և Կոտրատիոսի զինաւորին

Երեքշաբթի. Սրբոց կուսանացն Նունեայ և Մանեայ

Հինգշաբթի Սրբոց իշխանացն Սահակայ և Յովսեփայ և սրբոց վկայիցն Սարգսի և Բագոսի

Շաբաթ. Սրբոյն Ներսիսի մեծի Հայրապետին մերոյ և Խաթայ եպիսկոպոսին:

Երրորդ կիրակէ՝ զկնի Հոգւոյ Գալստեան եւ ապա պահչ Սրբոյն Գրիգորի Լուսաւորչի մերոյ, բայց տօնք լինին (էջ 188-192):

Փաստորեն Միմեոն Երեւանցին երկուշաբթի կանոնի տակ է դրել նախորդ տոնացուցի շաբաթ օրվա կանոնի տակ եղած սրբերի հիշատակի օրը: Հինգշաբթի օրվա տակ ավելացրել է Սահակ և Յովսեփ իշխանների հիշատակի օրը, որը նախորդ տոնացուցերում սահմանված ենք գտնում Վարդավառից հաշված 3-րդ կիրակիից հետո եկող երկուշաբթի օրը, այսինքն՝ տեղափոխութիւն է կատարել: Բացի այդ շաբաթ օրվա կանոնի տակ է տվել Ներսես կաթողիկոսի և Խաղ եպիսկոպոսի հիշատակի օրը, որը նախորդ տոնացուցերում դրված է Պենտեկոստեից հաշված 5-րդ կիրակիից հետո եկող երկուշաբթի օրը:

Հիշյալ փոփոխութիւնների իմացութիւնը կարևոր է ոչ միայն պատկերացում կազմելու տոնացուցերի խմբագրութիւնների մասին և ամբողջացնելու այն, այլև պատմական տեղեկութիւնների տվյալները վերականգնելու համար:

Ըստ 759 թվահամարի տվյալների Սուրբ Գրիգորի պահչին զուգահեռ տոնվել են հետևյալ սրբերի հիշատակի օրերը

Բշ. Եպիփանու Կիպրացւոյ

<sup>1</sup> Տե՛ս Ձեռ. N°N° 752, էջ 166ա-բ, 5667, էջ 126բ, 7203, էջ 63ա-66բ, 9838, էջ 171ա, 2031, էջ 81ա, 4164, էջ 182ա-բ, 4874, էջ 186բ-187ա, 8598, էջ 83ա, 5419, էջ 204բ-205ա, 4459, էջ 88բ, 5436, էջ 179ա-բ, 4514, էջ 250բ-253բ, 936, էջ 64ա-72ա, 7741, էջ 300բ-305ա, 5455, էջ 190բ-194բ, 939, էջ 332բ-337բ, 4437, էջ 92ա-96ա, 4698, էջ 201ա-202ա և այլն:

<sup>1</sup> Տե՛ս Ձեռ. N°N° 5667, էջ 126բ-127ա, 7203, էջ 66բ, 9838, էջ 171ա-բ, 4164, էջ 183 բ, 4874, էջ 187ա, 5419, էջ 205 բ, 4459, էջ 88բ, 5436, էջ 180ա, 4514, էջ 255բ-258բ, 7741, էջ 306ա-310բ, 5455, էջ 196ա-200բ 939, էջ 339ա-343բ և այլն:



Գշ. Կոստանդինոսի թագաւորի և մաւր նոր Հեղինեա

Եշ. Թէոդոտոսի Գաղատացւոյ և Թալելա բժշկի

Էշ. Արբոյն Գրիգորի Լուսաւորչի գիւտ նշխարաց (էջ 170ա):

Քննարկվող խմբի մեջ հետագայում ընդօրինակված տոնացույցերում և ճաշոցներում գտնում ենք հետևյալ փոփոխութիւնները: Հինգշաբթի օրվա կանոնի տակ ավելացվել է. «է կուսանացն, որ յԱնկիւրիա կատարեցան», իսկ Շաբաթ օրվա կանոնը ձևակերպվել է. «Գիւտ նշխարաց Արբոյն Գրիգորի Լուսաւորչին», որոշ տոնացույցեր ավելացրել են՝ «ի լեառն Սեպուհոյ»<sup>1</sup>:

Միմեոն Երևանցին երկուշաբթի օրվա կանոնի տակ ավելացրել է նաև «Բաբելայ Հայրապետին և երից աշակերտաց նորին» հիշատակի օրը: Վերջինս, ինչպես կտեսնենք, Հնագույն տոնացույցի խմբագրութիւնը տվել է Սուրբ Խաչի տոնից հաշված 2-րդ կիրակիից հետո եկող շաբաթ օրվա կանոնի տակ:

759 թվահամարի Տոնացույցի խմբագրութեան մեջ հաջորդում է հետևյալ տոնական օրերը. «Զկնի Հոգւոյ Գալստեան չորրորդ կիրակի...»

Բշ. Արբոյն Ներսեսի Հայոց Հայրապետի և Խաչապետի և Խաչապետի

Գշ. Դանիէլի և Երից մանկանց

Գշ. Սահակայ և Մեսրոպայ և այլոց թարգմանչացն

Էշ. Արբոյն Չաբարիայի մարգարէին (էջ 170ա):

Հետագայի ընդօրինակված տոնացույցերն ու ճաշոցները պահպանել են վերոհիշյալ կարգը միայն շաբաթ օրվա կանոնի տակ ավելացրել են «Աւնափրիոսի (Օնոփրիոսի) հաւրն (հօրն)» փաստորեն 14-րդ դարի սկզբներից սկսած<sup>2</sup>:

Միմեոն Երևանցին երկուշաբթի օրվա կանոնի տակ տվել է «Արբոց վկայից Անտոնիոսի. Թէոփիլոսի. Անիքստոսի և Փոտինոսի», իսկ շաբաթ օրվա տակ՝ «Տրդատա թագաւորին մերոյ և Աշխէն տիկնոջն և Խոսրովիդիստոյն»:

Հնագույն Տոնացույցի խմբագրութեան մեջ վերջին տոնը դրված է Պենտեկոստից հաշված 5-րդ կիրակիից հետո եկող երկուշաբթի օրը: Իսկ «Անտոնիոսի և Թեոփիլոսեանց»-ը դրված է Վարդավառից հաշված 4-րդ կիրակիից հետո եկող շաբաթ օրը, ինչպես կտեսնենք քիչ հետո:

759 թվահամարի Տոնացույցի խմբագրութիւնը հաջորդ տոնական օրերը ներկայացրել է այսպէս.

«Զկնի Հոգւոյ Գալստեան հինգերորդ կիրակի...»

Բշ. Տրդատայ թագաւորի և Աշխէն տիկնոջն և Խոսրովիդիստոյ

Գշ. Արբոց Հայրապետացն Ռատակիսի, Վրթանիսի, Յուսկանն, Գրիգորիսի և Դանիէլի

Եշ. Եղիսէի մարգարէին

Էշ. Սուրբ առաքելոյն Պետրոսի և Պաւղոսի գլխատմանն (էջ 170ա-բ):

<sup>1</sup> Տե՛ս Ձեռ. N°N° 752, էջ 166բ, 767, էջ 162բ, 5667, էջ 127ա, 7203, էջ 66բ-67բ, 9838, էջ 171բ, 2031, էջ 82բ, 4164, էջ 184ա-բ, 4874, էջ 188ա-բ, 5419, էջ 205բ, 4459, էջ 89ա, 5436, էջ 180բ, 4514, էջ 259բ-262բ, 7741, էջ 310բ-313բ, 5455, էջ 204բ-205բ, 939, էջ 344բ-348բ, 4437, էջ 102ա-105ա և այլն:

<sup>2</sup> Տե՛ս Ձեռ. N°N° 752, էջ 167ա, 767, էջ 162բ-163ա, 2092, էջ 226ա, 5667, էջ 127ա-բ, 7203, էջ 67բ, 9838, էջ 171բ, 2031, էջ 83ա, 4874, էջ 188ա-բ, 5419, էջ 206ա, 4459, էջ 89ա-բ, 7741, էջ 314ա-319ա, 5455, էջ 207բ-210բ, 939, էջ 349ա-355բ, 4437, էջ 107ա-110բ, 4506, էջ 277բ-281ա և այլն:

Այս կանոնները պահպանել են հետագայի ընդօրինակված տոնացույցերը, միայն 7203 թվահամարի գրչագիրը շաբաթ օրվա վրա ավելացրել է «ԲԺ-ան առաքելոցն»<sup>1</sup>:

Ճաշոցներն ևս պահպանել են հիշյալ կարգը: Շաբաթ օրվա կանոնի տակ տվել են միայն «Երկոտասան առաքելոցն» հիշատակ օրը<sup>2</sup>:

Երկուշաբթի օրվա կանոնի տակ Տրդատ թագաւորի և այլոց հիշատակը Հովհան Օձնեցու Տոնացույցի 2-րդ խմբագրութեան արդյունք է, որը կատարվեց 9-րդ դարի 4-րդ քառորդին՝ առանձնացնելով Տրդատ թագաւորի հիշատակի օրը Գրիգոր Լուսաւորչի հիշատակի օրվանից:

14-րդ դարի սկզբներից ճաշոցներում շաբաթ օրվա կանոնի տակ տոնել են երկոտասան առաքյալների հիշատակի օրը, որը առանձին տոնացույցեր են միայն արձանագրել:

Միմեոն Երևանցու Տոնացույցում սահմանել է հետևյալ կարգը.

Հինգերորդ կիրակէ՝ զկնի Հոգւոյն գալստեան, Տօն Արբուհւոյն Աստուածածնի Տփոյ Գտմանն

Երկուշաբթի. Արբոցն Կալիստրատոսի և Խթ վկայիցն և Ղուկիանոսի քահանային

Երեքշաբթի. Տօն սրբոյն Չաբարիայի մարգարէին

Հինգշաբթի. Տօն է սրբոյն Եղիսէի մարգարէին

Շաբաթ. Տօն է Արբոց երկոտասան առաքելոցն Քրիստոսի և սրբոյն Պողոսի երեքտասան առաքելոցն (էջ 199-202):

Կիրակի օրը սահմանվել է Աստուածածնի նոր տոնական օր: Ինչպես տեսանք Միմեոն Երևանցին Տրդատ թագաւորի և այլոց հիշատակի օրը երկուշաբթիից տեղափոխեց նախորդ շաբաթ օրը, իսկ երկուշաբթի օրվա կանոնի տակ դրեց այս սրբերի հիշատակի օր, որոնք Հնագույն Տոնացույցում սահմանել են Սուրբ Խաչի 4-րդ կիրակիից հետո շաբաթ օրը, իսկ Ղուկիանոս քահանային՝ Սուրբ Խաչի 6-րդ կիրակիից հետո եկող երկուշաբթին: 14-րդ դարի տոնացույցերում Ղուկիանոս քահանայի հիշատակի օրը փոխադրել են Սուրբ Խաչից հաշված 5-րդ կիրակիից հետո եկող շաբաթ օրը:

Հնագույն տոնացույցում ինչպես տեսանք, Չաբարիա մարգարեի հիշատակի օրը սահմանվել է Պենտեկոստից հաշված 5-րդ կիրակիից հետո եկող շաբաթ օրը, որը Ս. Երևանցին տեղափոխեց Պենտեկոստից հաշված 6-րդ կիրակիից հետո եկող երեքշաբթի օրը: Վերջապես ընտրեց 14-րդ դ. սկզբներից ճաշոց մտած շաբաթ՝ 12 առաքյալների հիշատակի օրվա կանոնը ավելացնելով «Արբոյն Պողոսի երեքտասան առաքելոյն»: Այս փոփոխութիւններով հանդերձ հիշյալ տոնները տոնվում են այժմ:

759 թվահամարի գրչագիրն արձանագրել է. «Զկնի Հոգւոյն Գալստեան վեցերորդ կիրակիի և ապա պահլք վարդավառին և տաւնք ոչ լինին»:

Էշ. Տապանակին Աստուծոյ, որ ի Կարիթարիմ» (էջ 170բ):

Ի դեպ սա Հոգեգալստեան կիրակիից հաշված 7-րդ կիրակին է կամ Հոգեգալստեան 2-րդ կիրակիից հաշված 6-րդ կիրակին:

Հայոց հետագա տոնացույցերն ու ճաշոցները հիմնականում տալիս են համարժեք տեղեկութիւններ<sup>3</sup>:

<sup>1</sup> Տե՛ս Ձեռ. N°N° 752, էջ 167ա, 767, էջ 163ա-բ, 2092, էջ 226բ, 5667, էջ 127բ, 7203, էջ 67ա-բ, 9838, էջ 171բ-172ա, 2031, էջ 83բ, 4874, էջ 188ա-բ, 5419, էջ 206ա և այլն:  
<sup>2</sup> Տե՛ս Ձեռ. N°N° 4514, էջ 267ա-271ա, 6235, էջ 34ա-37բ, 7741, էջ 320ա-324ա, 5455, էջ 213ա-216ա, 939, էջ 356բ-360բ, 4437, էջ 112ա-115բ, 4506, էջ 283ա-281ա և այլն:  
<sup>3</sup> Տե՛ս Ձեռ. N°N° 752, էջ 167ա-բ, 767, էջ 163բ-164ա, 2092, էջ 226ա-227բ, 5667, էջ 128ա, 7203, էջ 68ա, 9838, էջ 172ա, 2031, էջ 84ա-85ա, 4164, էջ 186բ, 4874, էջ 188բ-189ա, 4164, էջ 186բ, 4874, էջ 188բ-189ա, 5419, էջ 206բ, 5436, էջ 180ա, 7741, էջ 324բ-338բ, 5455, էջ 217բ-222ա, 939, էջ 362ա-367ա, 4437, էջ 116բ-121բ, 4506, էջ 290բ և այլն:



Միայն որոշ ճաշոցների Հոգեգալստեան 7-րդ կիրակին բնորոշել են «Բարեկենդան Վարդավառի Պահոցն» (7741 և 931 և այլն), որը վերցրել է Սիմեոն Երևանցին: Վերջինս տոնացույցի խմբագրութան մեջ շաբաթ օրվա կանոնում ավելացվել է «և տօն նորոյս սրբոյ եկեղեցւոյ» (էջ 205-206):

Ասենք, որ Վարդավառի Պահոցը գործում էր 10-րդ դարի վերջում, որը նշանակում է թե հիշյալ կարգը գալիս է դրանից առաջ թերևս Հովհան Օձնեցու տոնացույցից 2-րդ խմբագրութունից: Տապանակի տոնը վաղ «կանոնք»-ները տոնել են անշարժ օրով Հուլիս 2-ին, իսկ Հետագայում վեր է անցել շաբաթական տոնի:

759 գրչագիրը փաստել է. «Եւթներորդ կիրակէ. Վարդավառ է  
Բշ. Աբրահամու և Խորենայ և անարծաթ բժշկաց կողմայի և Դամիանոսի...

Գշ. Յիզատուզտէ վկայի

Եշ. Դիր Եսայեայ մարգարէի...

էշ. Թաղեոսի առաք(ելոյն) և Սանդխտոյ կուսի (էջ 170բ-171ա):

6-րդ դարի սկզբներից մինչև 10-րդ դարի վերջերը Վարդավառը տոնում էին մեկ տոնական օրով: Թեև այդպիսի տպավորություն են թողնում նաև Հնագույն տոնացույցերի ընդօրինակությունները (759 և 179 թվահամարների գրչագրերը), սակայն Գրիգոր Վկայասերի Տոնանամակի մեջ արդեն փաստվել է Վարդավառի տոնի օրերը երեք օր կատարելու մասին: Այնտեղ գրված է. «Ի մեծի տաւնի Վարդավառին...

Երկրորդ աւուրն Վարդավառին...

Երրորդ աւուրն Վարդավառին...»<sup>1</sup>: Այդպիսին են նաև 14-րդ դարի և Հետագայի ընդօրինակված ճաշոցների տվյալները<sup>2</sup>: Բացի այդ Վարդավառի 2-րդ և 3-րդ օրերի կամ երկուշաբթի և երեքշաբթի կանոնների տակ ավելացվել են վերոհիշյալ սրբերի հիշատակի նշումները, որպես զուգահեռ տոնվող օրեր: Պարզ է, որ Վարդավառի տոնական օրերի ընդլայնումը կատարվել է կամ Գրիգոր Վկայասերի Տոնանամակում կամ էլ 11-րդ դարում: Վերջինս ավելի հավանական է, որովհետև Տոնանամակի հիշատակարանում ոչ մի խոսք չի ասվում Վարդավառի օրերի ընդլայնման մասին: 14-րդ դարի սկզբներին և Հետագայում ընդօրինակված տոնացույցերի խմբագրությունների մեջ արդեն փաստվել է Վարդավառի երեք տոնական օրերը և նրանց զուգահեռ երկուշաբթի և երեքշաբթի կանոնների տակ հիշյալ սրբերի հիշատակի գրանցումները<sup>3</sup>:

4874 և 5436 թվահամարների գրչագրերում երկուշաբթի և երեքշաբթի տոնվող սրբերի հիշատակների կապակցությամբ տալիս են բացատրություն, այն է՝ «բայց դու Հետ ասմաւուրացն տօնեա» (էջ 184ա-բ և էջ 181բ-182ա), իսկ 5440 թվահամարի Տոնացույցի խմբագրութան մեջ Վարդավառի 2-րդ և 3-րդ օրերի կապակցությամբ գրում է. «[Բ]այց թէ տօն ոչ առնես դու մարտիրոսաց տաւնեա» (էջ 212ա-բ): Մի կողմից երևում է, որ Վարդավառի մյուս օրերը տոնելու ընթացքում այդ օրերին տոնվող սրբերի հիշատակը առաջարկվում է տոնել ըստ Յայսմավորքի օրերի, այսինքն՝ այլ տեղ անշարժ օրով, մյուս կողմից Վարդավառի 2-րդ և 3-րդ օրերը չտոնելու դեպքում այդ սրբերի հիշատակի օրերը տոնել: Պարզվում է, որ այդ օրերին մեկի կամ մյուսի տոնելը կամավորութան սկզբունքի վրա է հիմնվել: Այլ խոսքով, քննարկվող տոները տոնվել են կամ զուգահեռաբար կամ առանձին-առանձին կամ դրանցից մեկն ու մեկը:

<sup>1</sup> Տե՛ս Ձեռ. N° 979, էջ 334ա-349ա:

<sup>2</sup> Տե՛ս Ձեռ. N°N° 4514, էջ 283ա-290ա, 7741, էջ 330ա-344բ, 5455, էջ 223բ-239բ, 939, էջ 368բ-86ա և այլն:

<sup>3</sup> Տե՛ս Ձեռ. N°N° 752, էջ 168ա-բ, 767, էջ 164բ, 5667, էջ 128բ-130բ, 7203, էջ 71բ-72ա, 9838, էջ 172բ-173ա, 2031, էջ 86ա-90բ, 4164 էջ 187ա-189բ, 4874, էջ 189ա-բ, 8598, էջ 88ա-93ա, 5419, էջ 202ա-209ա, 5440, էջ 212ա-բ, 5436, էջ 118բ-182ա, 508, էջ 224բ և այլն:

Հինգշաբթի և շաբաթ օրերի համար փոփոխություն չի նկատվում: Միայն նշենք, որ 4874 թվահամարի գրչագրում շաբաթ օրվա կանոնի տակ տոնվող սրբերին ավելացրել է Թաղեոս առաքյալի աշակերտների անունները՝ «և աշակերտացն՝ Զաքարիայի, Զարմանդխտոյ և Իսրայելի» ձևակերպմամբ:

Ասենք նաև, որ 7203 թվահամարի գրչագիրը քննարկվող շաբաթվա օրերի մեջ է տվել «Յովաննու ծննդեանն» տոնը տալով հետևյալ բացատրությունը. «Յայս միջոցս յետ և յառաջ կու լինի, բայց յոր աւր և գայ՝ թէ պաք, թէ ուտիք, ի պատկեր աւրն տօնեա Յուլիս ԺԱ. զինչ որ գ՛րիստոսի ծնունդն ԺԲ աւուր յետոյ կառնես նոյնպէս և այս...» (էջ 71բ-72ա):

Սիմեոն Երևանցին նախընտրել է հետևյալ կարգը և ձևակերպել՝ «Կանօն Պայծառակերպութեան Քրիստոսի աստուծոյ մերոյ ի Թափոր լերինն»:

Վարդավառի կիրակէ ի Գիշերն հսկումն է...

Երկրորդ աւուր

Երրորդ աւուր

Չորեքշաբթի

Հինգշաբթի՝ տօն է Եսայեայ մարգարէին...

Ուրբաթ...

Շաբաթ. Տօն է սրբոցն Թաղէոսի առաքելոյն մերոյ և Սանդխտոյ կուսին... (էջ 207-214):

Նախորդ շրջանում երկուշաբթի և երեքշաբթի օրերին տոնվող սրբերի հիշատակի օրերը նույնությամբ տեղափոխել է Յիսնակամտից հաշված 6-րդ կիրակիից հետո եկող երկուշաբթի և երեքշաբթի օրերի կանոնների տակ: Իսկ Թաղեոս առաքյալի և Սանդուխտ կուսի հիշատակի օրը տեղափոխվել է Հունվար 13 - Առաջավորի Բարեկենդանի կիրակիի միջև, երբ Տարեգիրը Բ, Յ, Ի և Փ էր, այսինքն Զատիկը կատարվել է Ապրիլ 22, 23, 24 և 25-ին և Վարդավառի հատվածում տոնների օրեր են մնացել մեկ շաբաթ կամ 4 օր: Այսպիսով Վարդավառի և նրան հաջորդող շաբաթ տոնական օրերը մի կողմից հարստացվել են և ավելացել, մյուս կողմից խմբագրվել և հատկապես որոշ սրբերի հիշատակի օրերը տեղափոխվել են այլ տեղ՝ տարվա տոնական շարքի մեջ:

759 թվահամարի Տոնացույցն այնուհետև բերել է տոնների հետևյալ կարգը. «Զկնի Վարդավառին երկրորդ կիրակին՝

Բշ. Շուշանկան դստեր Վարդանայ

Գշ. Կիպրիանոսի և Յուստինեայ կուսի

Եշ. Քառասուն և հինգ վկայիցն... և սուրբ կուսանացն Եւփիմիա և Քրիստինա

էշ. Սրբոց նախահարցն՝ Աղամայ Աբելի, Սեթայ, Ենովսայ, Ենովքայ, Նոյի, Մելքիսեդեկի, Աբրահամա, Սահակայ, Յակովբայ, Մովսեսի, Ահարոնի, Սամուելի և այլոց սրբոց նախահարցն» (էջ 171ա):

Տոնացույցերի և ճաշոցների հետագա խմբագրությունները հիմնականում պահպանել են վերոհիշյալ կարգը<sup>1</sup>:

Միայն 5419 և 5436 գրչագրերն երկուշաբթի օրվա տակ ավելացրել են «Դաւթի և Յակոբա» հիշատակի նշումը:

<sup>1</sup> Տե՛ս Ձեռ. N°N° 179, էջ 539ա, 752, էջ 168բ, 767, էջ 168ա, 5667, էջ 130բ-131ա, 7203, էջ 71բ-72ա, 9838, էջ 172բ-174ա, 2031, էջ 90բ, 4164, էջ 190ա-բ, 4874, էջ 190բ, 5419, էջ 209բ, 5436 էջ 182բ, 5414, էջ 291բ-294բ, 6235, էջ 49ա-50բ, 7741, էջ 346ա-350ա, 5455, էջ 241ա-245ա, 939, էջ 387բ-3.91բ, 4437, էջ 138բ-146բ և այլն:

Միմեոն Երևանցին քննարկվող հատվածում փոփոխություններ է կատարել տալով հետևյալ կարգը. «Երկրորդ կիրակի գկնի Վարդավառին Երկուշաբաթի Սրբոցն Կիպրիանոսի եպիսկոպոսին և ին վկայիցն և սրբոց կուսանացն Յուստինեայ, Եւփիմեայ և Քրիստինեայ

Երեքշաբաթի. Սրբոյն Աթանազենեայ եպիսկոպոսին և տասն աշակերտացն և Հինգ վկայիցն

Հինգշաբաթի Սրբոց նախահարցն՝ Աղամայ, Աբէլի, Սեթայ, Ենովսայ, Ենովքայ, Նոյի, Մելքիսեթեկի, Աբրահամայ, Իսահակայ, Յակոբայ, Յովսեփայ, Մովսիսի, Ահարոնի, Եղիազարու, Յեսուայ, Սամուէլի, Սամփսոնի, Յեփաթայեայ, Բարակայ, Գեղէօնի և այլոց նախահարցն

Շաբաթ. սրբոց որդւոց և թոռանց Սրբոյն Գրիգորի Լուսավորչի մերոց, Արիստակիսի, Վարդանիսի, Յուսկանն, Գրիգորիսի և Դանիէլի» (էջ 215-218): Նա «Շուշանայ Դստերն մեծին Վարդանայ» հիշատակի օրը տեղափոխել է ինչպէս Կիրակիից հաշված երկրորդ կիրակիից հետո եկող երեքշաբթի օրը կամ ինչպէս Կիրակիից հաշված 10-րդ օրը:

Նույն շաբաթվա երեքշաբթի և հինգշաբթի տոնվող սրբերին տեղափոխել է երկուշաբթի օրը, իսկ նախահարց հիշատակի օրը՝ շաբաթից հինգշաբթի:

Երեքշաբթի օրվա կանոնի տակ տվել է Աթանազիսի և այլոց հիշատակի օրը, որը նախորդ տոնացույցերում դրված է Վարդավառից հաշված երրորդ կիրակիից հետո եկող հինգշաբթի օրը կամ Վարդավառից հաշված 17-րդ օրը:

Հին տոնացույցերում Արիստակիսի և այլոց հիշատակի օրը ինչպես տեսանք սահմանվել էր Հոգեգալստեան կիրակիից հաշված 6-րդ կիրակիից հետո եկող երեքշաբթի օրը կամ Հոգեգալստեան կիրակիից հաշված 38-րդ օրը, որը Միմեոն Երևանցին տեղափոխեց Վարդավառից հաշված 14-րդ օրը:

Վարդավառի տոնելի օրերի քանակը կրճատվելու հետևանքով վերոհիշյալ շաբաթվա սրբերի հիշատակի օրը տեղափոխել են այլ տեղ տոնական տարվա մեջ:

759 թվահամարի Տոնացույցը հաջորդող շաբաթների տոնական շարքը ներկայացրել է հետևյալ կարգով. «Զկնի վարդավառին երրորդ կիրակի...»

Բշ. Սահակայ և Յովսեփայ, որ ի Կարնո քաղաք [կատարեցան]

Գշ. Երկոտասան Մարգարէիցն՝ Ովսեփի, Ամովսայ, Միքիայ, Յովելայ, Ամբակումայ, Սոփոնեայ, Անգէի, Յուսկանու, Չաքարիայ, Մաղաքիայ, Աբդիու, Նաւումայ

Եշ. Աթանազիսի և Եպիսկոպոսի և Ժ աշակերտացն և է(ե) վկայիցն...

էշ. Եփեսոսի սուրբ ժողովոյն (էջ 171ա-բ)

Զկնի Վարդավառին չորրորդ կիրակի

Բշ. Մակարայեցոցն

Գշ. Սոփեա և երից դստերացն՝ Ագապի, Ելպիսի և Պիստի

Եշ. Քրիստափորի վկայի

էշ. Անտոնինոսի և Թեոփիլոսեանց

Հիշյալ կարգն են փաստագրել հետագայում ընդօրինակված տոնացույցերի և ճաշոցների բնագրերը<sup>1</sup>:

<sup>1</sup> Տե՛ս Ձեռ. №№ 179, էջ 539ա-բ, 752, էջ 169ա, 767, էջ 168ա-169ա, 5667, էջ 131ա-բ, 7203, էջ 73ա-74ա, 4164, էջ 190բ-192ա, 4874, էջ 191ա, 5436, էջ 183ա, 4514, էջ 297ա-308բ, 7741, էջ 353ա-365բ, 5455, էջ 250ա-261ա, 939, էջ 397ա-410ա, 4437, էջ 153բ-159ա, 4506, էջ 309բ-327ա և այլն:

Որոշ գրչագրեր «Եփեսոսի Սուրբ ժողովոյն» ավելացրել են «ԲՃ Հայրապետացն» հավելումը, իսկ «Մակարայեցոցն» թվարկել են՝ «Եղիազարու և է որդեացն և մաւր նորա Շ(ա)մու-նէ» Քրիստափորի անվան վրա ավելացրել են «Շնագլխոյ» մականունը:

Վերջապես «Թեոփիլոսեանց»-ը թվարկել են՝ Թեոփիլոսի, Անիկտոսի և Փոտինոսի»:

5455 թվահամարի Ճաշոցի մեջ «Եփեսոսի սուրբ ժողովոյն»-ը տեղափոխվել է հաջորդ շաբաթ օրը, իսկ այդ շաբաթ օրվա կանոնի տակ տվել է. «Շաբաթ աւր. Ներսիսի Հայրապետի Կլայեցոյ և Անտոնինոսի», իսկ ներքին լուսանցքում թվարկում է և մյուս սրբերի անունները: Այդպես է դրված նաև 4164 թվահամարի Տոնացույցի խմբագրութեան մեջ, միայն բացակայում է Ներսես Շնորհալու հիշատակությունը:

4874 գրչագիրը շաբաթ օրվա կանոնի տակ բերելով Անիկտոսի և այլոց հիշատակի նշումը միաժամանակ ավելացնում է. «Եւ ոմանք այս շաբաթ օրս տօնեն Եփեսոսի սուրբ ժողովոյն», որը նշանակում է թե հիշյալ կանոնը տեղափոխել են Աստուածածնի պահքից առաջ: Այս փոփոխությունը կատարվել է 14-րդ դարում ընդօրինակված Ճաշոցի մեջ և հետագայում որոշ տոնացույցեր արձագանքել են նրան, սակայն բնագրերի մեծ մասը տալիս է Հնագույն կանոնով: Միմեոն Երևանցին վերջին շաբաթվա սրբերի շարքը չունի, այսինքն սահմանափակվել է երեք շաբաթով, իսկ 4-րդ նախատեսվել է պահքի համար: Վարդավառից հետո եկող չորս շաբաթվա կարգը և սրբերի հիշատակի օրերը բերելուց հետո շատ տոնացույցերի խմբագրություններ տվել են բացատրություններ: Բերենք դրանցից մի քանիսը: Նրանք ունեն տարբեր ձևակերպումներ: Ըստ 759 թվահամարների գրչագրի՝ «Թէ քան զչորք շաբաթն այլ ուտուի դու յԱպրիլելի և ի Մարտի տաւներոյն տաւնեա և թէ պակաս ուտի դու գերկու տաւնն ընդ մին տաւնէ, որ դորդ գայ» (էջ 171բ):

Ըստ 179 թվահամարի տոնացույցի, «Թէ քան զՊ շաբաթն աւելի ուտիք կենայ դու յԱպրիլէլի և ի Մարտի տաւներոյն տաւնէ, և թէ պակաս՝ Դու զԲ տաւնն և զԳ ընդ մի տաւնէ և ի վերայ (ուտիք) աւուրցն չափէ զտաւնսդ...»:

752 թվահամարի գրչագրում կարդում ենք «Յայս մէջս յաւելու և նուազի, թե շատ ուտիք է ԱԱ տաւն(է) և թէ քիչ՝ ԲԲ...» (էջ 169ա):

767 թվահամարի Տոնացույցում գրված է. «Ի Վարդավառէն ի վեր հաշւեայ, թէ քան զՊ շաբաթ պակաս է դու ԲԲ տօնէ...» (էջ 169ա):

2092 թվահամարի տոնացույցը բացատրում է. «Թէ յայս էջս քանզ երկուշաբաթն աւելի լինի դո(ւ) յայսմօւրքն տաւնէ» (էջ 227ա-բ):

5667 թվահամարի Տոնացույցի խմբագրութեան մեջ կարդում ենք. «Ի Վարդավառէն ի վեր հուշեայ և տես թէ քան զՊ շաբաթն պակաս է դու ԲԲ տաւնէ ըստ մի, որ ուղիղ գայ: Զի յայս միջոցս յաւելու նուազէ և թէ քան զՊ շաբաթն աւելի է Դու յաւելորդացն տօնէ» (էջ 131բ-132ա): Մոտ այդպես է նաև 7203 թվահամարի գրչագրում (էջ 74բ): 2031 թվահամարի Տոնացույցը Հունվար 13 - Առաջավորաց Բարեկենդանի սրբերի տոները թվարկելուց հետո բացատրում է. «Զայսչափ տաւներս, թէ ուտիք կա տօնէ, թէ չկայ դու ի միտ պահէ որ Վարդավառի ու Աստուածածնին, կամ Աստուածածնին ու ինչին միջոց շաբաթ աւելի կու հանդիպի, յայն տեղն տօնէ աւելորդաց (էջ 18բ-19ա):

4164 թվահամարի Տոնացույցում գրված է. «Իսկ ի Վարդավառէն մինչև ի սուրբ Աստուածածին յայս միջոցս հանապազ կայ որ կաւելանայ և կայ որ կու նուազի, դու հաշուեայ և տես զուտիքն և զտօներն ի վերա աւուրցն, թէ պակաս է ուտիքն քան զտօներն դու ԲԲ և ԳԳ - տօնեաց ընդ մի որ ուղիղ գայ, եւ թէ ուտիքն քան զՊ շաբաթն աւելի է դու յաւելորդացն տօնէ, բայց հանց արար, որ Բարեկենդանի շաբաթն օրն ԲՃ Հայրապետացն տօնես անպատճառ (էջ 192ա):

4874 թվահամարի Տոնացույցի մեջ կարդում ենք. «Վարդավառէն մինչև Աստուածածինն շաբաթներն յաւելու և պակասի, վասն այն չէ հնար անշարժ սահմանել զտօնիցդ կատարումն: Այլ յաւելման և պակասման սահմանեալ են զմարտիրոսաց տօներդ և զապաշխարութեան կարգն. զերկուքն պինդ կալ, որ ուղիղ գա» (էջ 190ա):

Ըստ 4441 թվահամարի գրչագրի. «Բայց ի Վարդավառէն մինչև Աստուածածինն յայս միջոցս կայ որ կու աւելնոյ և կա որ կու պակասի. դու հաշուեայ զուտիքն և զտաւներս ի վերա աւուրց սահմանեա, որ ուղիղ գայ թէ պակաս է տաւնքն դու ԲԲ տաւնեայ և թէ շատ է ուտիքն դու յաւելորդաց տաւնեայ, որ Բարեկենդանի շաբաթ զհանապազ տաւնն կատարես...» (էջ 353բ): 5436 թվահամարի տոնացույցը տալիս է հետևյալ տեղեկութիւնը. «Ի Վարդավառն ի վեր հաշուեց տես թէ քան զ՛ շաբաթն պակաս է դու ԲԲ տօնեա ընդ մի, որ ուղիղ գայ, և թէ աւել է դու աւելորդացն տօնէ: Զի յայս միջոցս հանապազ աւելու և նուազի» (էջ 184ա):

Ինչպես նկատելի է տոնացույցերի խմբագրութիւնները Վարդավառ-Աստուածածին հատվածի համար տալիս են ինչպես մասնակի, այնպես էլ ընդհանրացնող բացատրութիւններ: Այժմ նկատի ունենալով բնագրերի տվյալները հստակեցնենք պատկերը և տեսնենք ինչ է կատարվել Վարդավառ-Աստուածածին հատվածի տոնական օրերի հետ:

Տոնացույցում, երբ Վարդավառը տոնել են Հուլիս 28-30-ին, նախատեսված տոնական և սրբերի հիշատակի օրերը կատարել են ամբողջությամբ, այսինքն չորս շաբաթ (= 16 օր), մնացել է 8 տոնելի օրեր սրբերի համար, այն է՝ երկու շաբաթ, չհաշված Աստուածածնի պահքի շաբաթն, որոնք օգտագործել են «ավելորդաց»-ն տօնելու համար, այսինքն Հունվար 13 - Առաջավոր Բարեկենդանի միջև ընկնող սրբերի հիշատակի օրերը, որոնք տոնելի օրերի պակասութեան պատճառով չէին տոնել կամ եթե նրանց տոները տոնելուց հետո օրեր էին ավելանում Յայսմավորքի համապատասխան օրերի տոները կարող էին տօնել:

Տոնացույցում, երբ Վարդավառը կատարվել է Հուլիս 1-7-ին, նախատեսված սրբերի հիշատակի օրերը տօնել են ամբողջությամբ: Դեռ ավելին, մնացել է 4 տոնելի օր կամ մեկ շաբաթ, որը նույնպես օգտագործել են «ավելորդաց» տոները նշելու համար:

Տոնացույցում, երբ Վարդավառը կատարվել է Հուլիս 8-14-ին, նախատեսված տոները կատարել են ամբողջությամբ և տոնելի այլ օրեր չեն միացել. սկսվել է Աստուածածնի պահքը:

Տոնացույցում, երբ Վարդավառը տոնել են Հուլիս 15-21-ին, նախատեսված սրբերի տոների օրերի քանակը պակասել է, որի հետևանքով վերջին շաբաթվա սրբերի հիշատակի օրերը ավելացրել են նախորդ շաբաթվա սրբերի օրերի հետ և վերջին երկու շաբաթվա սրբերի հիշատակի օրերը տոնել են երկու երկու վերջին մեկ շաբաթվա մեջ, որից հետո սկսվել է Աստուածածնի պահքը:

Տոնացույցում, երբ Վարդավառը տոնել են Հուլիս 22-28-ին, նախատեսված սրբերի հիշատակի օրերը ավելացել են, որի հետևանքով հերթականությամբ երկու սրբերի հիշատակի կանոն միացրել են մեկ տոնական օրվա մեջ բոլոր տոնելի օրերում:

Վերջապես Տոնացույցում, երբ Վարդավառը կատարվել է Հուլիս 29 - Օգոստոս 1-ին, ապա տոնելի չորս շաբաթվա կամ 16 օրվա փոխարեն մնացել է ընդամենը չորս տոնելի օր կամ մեկ շաբաթ, որի հետևանքով մեկ տոնական օրվա մեջ տօնել են հերթականությամբ երեք օրերի սրբերի հիշատակի նշումները, բայց այդ էլ չի բավարարել և վերջին շաբաթվա սրբերի հիշատակի օրերը տեղափոխել են տարվա այլ ժամանակ մնացած տոների օրերը: Պարզ է դառնում, որ Վարդավառ-Աստուածածնի հատվածում խախտել է սրբերի շաբաթվա օրերին սահմանված կանոնները: Ուստի պատմական տեղեկությունները քննելիս պետք է անպայման տվյալ տոնական տարվա կտրվածքը պարզել գտնել, տվյալ սրբերի հիշատակի օրը, որից հետո կատարել համապատասխան եզրակացություններ:

Միմեոն Երևանցին սրբերի տոների համար նախատեսել է երեք շաբաթ և նախորդ տոնացույցերի 3-րդ և 4-րդ շաբաթվա սրբերի տոնելի շարքը տվել է այսպես. «Երրորդ կիրակի գկնի Վարդավառին Երկուշաբաթի. Սրբոց Մակարայեցոցն, Եղիազարու քահանային և Շամունեայ և եօթն որդւոյն նորին

Երեքշաբաթի Սրբոց երկուտասան մարգարէիցն Ովսեայ, Ամովսայ, Միքիայ, Յովելեայ, Արդիա, Նաուամայ, Ամբակումայ, Յօնանու, Սոփոնիայ, Անգեայ, Զաքարիայ և Մաղաքիայ

Հինգշաբաթի, Սրբոցն Սոփայ և երից դասերաց Պիստոսի, Ելպիոսի և Ագապի: Իսկ ի Բարեկենդանի շաբաթ օրն միշտ տօն է Եփեսոսի սուրբ ժողովոյն ԲՃ հայրապետացն» (էջ 218, 221):

Փաստորեն Մակարայեցոց հիշատակի օրը տեղափոխել է նախորդ երկուշաբաթի օրը պահելով երկուշաբթի օրվա կանոնը: Երեքշաբթի օրվա տակ դրել է Երկուտասան մարգարէից հիշատակի օրը, ինչպես նախորդ տոնացույցերում: Սոփեա և երից դասերց հիշատակի օրը տեղափոխել է հինգշաբթի օրվա կանոնի տակ, երբ նախորդ տոնացույցում դրված է Վարդավառից հաշված 4-րդ կիրակիից հետո եկող երեքշաբթի օրը, իսկ Եփեսոսի ժողովի 200 հայրապետների հիշատակի օրը թողել է շաբաթ օրվա կանոնի տակ և միշտ կատարվել է Աստուածածնի պահքից առաջ՝ անկախ տոնելի օրերի քսակից: Մնացած սրբերի հիշատակի օրերը տեղափոխել են տարբեր տեղեր: Ինչպես տեսանք Սահակա և Յովսեփա հիշատակի օրը տեղափոխեց Պենտեկոստից հաշված 4-րդ կիրակիից հետո եկող հինգշաբթի, Անտոնինոսինը և Թեոփիլոսեանցը՝ Պենտեկոստից հաշված 5-րդ կիրակիից հետո եկող երկուշաբթի, Աթանագինեինը՝ Վարդավառից հաշված 2-րդ կիրակիից հետո եկող երեքշաբթի, իսկ Քրիստափորինը՝ Նազվիրացից հաշված 6-րդ կիրակիից հետո եկող հինգշաբթին:

Ինչպես նշվեց Միմեոն Երևանցին Վարդավառ-Աստուածածնի հատվածում նախատեսել է 4 շաբաթ, որից վերջին շաբաթը Աստուածածնի պահքի օրերն էին: Երբ Վարդավառի տօների օրերը կրճատվել են Միմեոն Երևանցին վերջին երկու շաբաթվա տոնելի օրերը տեղափոխել է տարվա այլ հատվածներ: Նա չի հետևել հին կանոններին: Նշվեց, որ Թադեոս առաքյալի և Սանդուխտ կույսի հիշատակի օրը տեղափոխել է Հունվար 13 - Առաջավոր Բարեկենդանի միջև, իսկ նրանց տեղը սահմանել է. «Իսկ ի Բարեկենդանի շաբաթ օրն. միշտ տօն է Եփեսոսի սուրբ ժողովոյն ԲՃ հայրապետացն» (էջ 221-226): Փաստորեն երբ Վարդավառը կատարվել է Հուլիս 29 - Օգոստոս 1-ի օրերին Թադեոս առաքյալի և Սանդուխտ կույսի օրվա տեղը դրվել է Եփեսոսի ժողովի տոնը: Երկրորդ շաբաթվա սրբերի հիշատակի օրերը սկսած «Կիպրիանոսի եպիսկոպոսի և Նե վկայիցն և սրբոց կուսանաց Յուստիանեայ, Եւփիմեայ և Քրիստինեայ»-ից «Սրբոց որդւոյ և թոռանց Սրբոյն Գրիգորիսի լուսավորչի մերոյ, Արիստակիսի, Վարդանիսի, Յուականն, Գրիգորիսի և Դանիէլի» տեղափոխել է Հունվար 13 - Առաջավոր Բարեկենդանի կիրակիից առաջ, երբ Զատիկն ընկել է Ապրիլ 22 - 25-ին իսկ Վարդավառը՝ Հուլիս 29 - Օգոստոս 1-ին: Երրորդ շաբաթվա սրբերը հիշատակի օրերը սկսած «Մակարայեցոց» - «Սոփիա...» փոխադրել է Հունվար 13 - Առաջավոր Բարեկենդանի կիրակիից առաջ, երբ Զատիկը կատարել են Ապրիլ 15 - 21-ին, իսկ Վարդավառը՝ Հուլիս 22-28-ին:

Հնագույն տոնացույցերի տոնական շարքը շարունակվում է այսպես.

«Զկնի Վարդավառի հինգերորդ կիրակի և ապա (Պահք) Աստուածածնին... էջ. Շողակաթին...» (էջ 171բ-172ա):

Աստուածածնի Պահքի մասին ինչպես տեսանք գրել է Սամուել Կամրջաձորեցին, ուստի այն գործում էր 10-րդ դարի վերջում - 11-րդ դարի սկզբներին: Պարզ է, որ քննարկվող կանոնը տոնացույց է մուտք գործել այդ ժամանակներից և շարունակել իր գոյությունը հետագայում:

Տոնացույցերի և ճաշոցների ընդօրինակություններն ու խմբագրությունները անփոփոխ պահել են այդ կանոնը մինչև այժմ:

Տոնացույցերը ունեն բացատրություններ և լրացումներ:

752 թվահամար գրչագրում նշելով պահքը ավելացնում է «և տաւնք ոչ լինի», իսկ շաբաթ օրվա կանոնը ձևակերպել է. «Շաբաթ. Շողակաթին տեսւեան Սրբոյն Գրիգորի Լուսաւորչին» (էջ 169ա-բ): Այդպիսի նշումներն ունեն նաև մյուս տոնացույցերի խմբագրություններ<sup>1</sup>:

Որոշ տոնացույցեր շաբաթվա օրվա տակ արձանագրել են միայն «Նավակատիք է»<sup>2</sup>: Սիմեոն Երևանցու Տոնացույցի տվյալները կարելի է ներկայացնել այսպիսի տեսքով. «Ի Կիրակէին որ է Բարեկենդան սուրբ Աստուածածնի պահոցն

Երկուշաբթի Պահք Աստուածածնի

Երեքշաբթի Պահք Աստուածածնի

Չորեքշաբթի Պահք Աստուածածնի

Հինգշաբթի Պահք Աստուածածնի

Ուրբաթ Պահք Աստուածածնի

Շաբաթ. Կանօն սրբոյ Շողակաթին, այսինքն Սրբոյ էջմիածնի կամ

Շաբաթ. Տօն է Շողակաթին Սրբոյն էջմիածնի ըստ տեսւեան սրբոյ Գրիգորի մերոյ Լուսավորչին» (էջ 221-227):

Ըստ էության նույն կանոններն են, միայն ձևակերպումների մեջ են տարբերությունները:

Հնագույն «Կանոնք ընթերցուածոց»-ում և նրա հետագա խմբագրություններում Մարիամ Աստուածածնի համար սահմանել են մեկ օրվա տոնական կանոն և դրել անշարժ օրվա տակ Օգոստոսի 15-ին: 985 թվահամարի գրչագրում կարդում ենք. «Ազգուստոս ամսոյ, որ աւր ժե. Մարեմայ Աստուածածնին...» (էջ 269ա-270ա): Այդպես է նաև մյուս «Կանոնք»-ների խմբագրություններում<sup>3</sup>:

Ատոմ Վարագեցու Հռոմադիրի մեջ, հավանաբար Հովհան Օձնեցու «Կանոնք»-Տոնացույցի ազդեցության տակ, տոնի անվան մեջ փոփոխություն է կատարվել, այն է՝ «Ազգուստոս ժե. Փոխման Աստուածածնին»<sup>4</sup>: Ասողիկը ձևակերպել է. «... ի տօնի փոխման ամենասուրբ կուսի Աստուածածնի...» և նշել, ինչպես կտեսնենք, ամենայն հավանականությամբ Օգոստոսի 15-ի տակ: Այսպիսի նշումով ենք գտնում Գրիգոր Վկայասերի Տոնանամակի ցանկում (բնագրում այդ հատվածը պակասում է). «Նորին (Ազգուստոս) ժե. Փոխման Աստուածածնին»<sup>5</sup>: Ի դեպ Օգոստոսի 15-ը, ինչպես կտեսնենք, այդ շրջանում հանդիպում էր որոշակի հաճախականությամբ, որովհետև տոնը տեղափոխվել էր կիրակի:

Հովհաննես Սարկավազը 1110 թ. գրված մի բնագրում ունի՝ «զտաւն հանգստեան Աստուածածնին Մարիամու»: Որոշ «Կանոնք»-ներ ուղ շրջանի ազդեցությունը կրելով, այսինքն՝ խմբագրվելով, տալիս են. «Ազգուստոս ամսոյ ժե. Աստուածածնին Ննջմանն»<sup>6</sup>:

<sup>1</sup> Տե՛ս Ձեռ. N° 767, էջ 169ա, 5667, էջ 132ա, 7203, էջ 74բ-75ա, 9838, էջ 174բ, 4164, էջ 192ա, 5419, էջ 112ա և այլն:

<sup>2</sup> Տե՛ս Ձեռ. N° 2092, էջ 227ա, 4874, էջ 191ա:

<sup>3</sup> Տե՛ս Ս. Ծեմճեմյան, Գշվ. աշխ., էջ 567-588, 589-594 և այլն:

<sup>4</sup> Տե՛ս Ձեռ. N° 832, էջ 212բ-214ա, տե՛ս Գալս ձեռ N° 3266, էջ 134ա-137ա:

<sup>5</sup> Ձեռ. N° 979, էջ 4բ:

<sup>6</sup> Տե՛ս Ձեռ. N° 5356, էջ 243բ, տե՛ս Գալս Ս. Ծեմճեմյան, Գշվ. աշխ., էջ 605-628:

Ուղ շրջանում գրված ճաշոցների տվյալներին կանգնողականք հետագա շարադրանքի ընթացքում: Այլ խոսքով վաղ շրջանում գրված բնագրերում ունենք «Մարեմայ Աստուածածնին», «Փոխման Աստուածածնին», «Հանգստեան Աստուածածնի» և «Ննջման Աստուածածնի» բնորոշումները:

5-րդ դարից մինչև 10-րդ դարի վերջերը - 11-րդ դարի սկզբները Աստուածածնի տոնը նշել են անշարժ օրվա՝ Օգոստոսի 15-ին անկախ նրան թե շաբաթվա ինչ օր է ընկել: Ունենք Ասողիկի, թեև ոչ միանշանակ, վկայությունը համաձայն որի «ի սոյն ամի, որ էր ՆԼԸ թուականին նիզակաւոր աստղն կրկին անգամ երևեցաւ յամենայնն Քաղոց, որ օր ժե էր ամսոյն, ի տօնի փոխման ամենասուրբ կուսի Աստուածածնին...» (Ասողիկ, էջ 250):

Հայոց ՆԼԸ (= 989 թ.) թվականի Քաղոց 1 = Հուլիս 22, Երկուշաբթի, Քաղոց 15 = Օգոստոս 5, Երկուշաբթի, Քաղոց 25 = Օգոստոս 15, Հինգշաբթի: Վերոհիշյալ հաշվումներից պարզ երևում է, որ Քաղոց ժե-ն պետք է սրբագրել՝ Ին կամ Քաղոցը փոխարինել Օգոստոսով: ուստի «ի տօնի փոխման ամենասուրբ կուսի Աստուածածնին» եղել է Օգոստոսի 15 = Քաղոց 25 = Հինգշաբթի: Ակնհայտ է, որ Աստուածածնի տոնի օրը տեղափոխվել է Օգոստոսի 15 ± 3 օր, կիրակի 10-րդ դարի վերջից - 11-րդ դարի սկզբներից հետո: Դրան նպաստել է Աստուածածնի պահքի ներդրումը տոնացույց, որի մասին տեղեկություն է տալիս Սամուել Կամրջաձորեցին: Սակայն մեզ հայտնի է միայն Հովհաննես Սարկավազի վկայությունը: Նա գրել է. «... յորում ամի թուականն Հայոց ՇԾԹ (559) էր աւզոստոս ամսոյ Գժ-անն, որ է նույն ինքն իղոս, միով աւուրբ յառաջ քան զտաւն հանգստեան Աստուածածնինն Մարիամու, յաւուր շաբաթու, ընդ առաւոտանալն, մինչդեռ կային եղբարքն ամենայն ի սուրբ պաշտմանն և թագաւորն Դաւիթ որդի Կիւրիկ է ընդ նոսա՝ ի վանսն կողեցեալ Սանահին...»<sup>1</sup>:

Հայոց 559 թվականի (= 1110 թ.) Օգոստոսի 13-ը շաբաթ է, իսկ Օգոստոս 14-ը՝ կիրակի. Աստուածածնի տօնի օրը: Այս փաստը ցույց է տալիս, որ Աստուածածնի տոնը կատարել են ոչ թե Օգոստոսի 15-ին, ինչպես նախատեսել է նախորդ կանոնքը և շաբաթվա ցանկացած օր, այլ կիրակի Օգոստոս 15 ± 3 օր, այսինքն Օգոստոս 12-18-ին ընկնող կիրակիներից մեկում նայած տարի: Տոնացույցում հիշյալ փոփոխությունը տեղի է ունեցել հավանաբար 11-րդ դարի սկզբներին, որոշ տոնացույցեր և ճաշոցներ հետագայում ևս պահպանել են Օգոստոսի 15-ի ամսաթիվը իբրև Աստուածածնի տոնի օր, որովհետև որոշ հաճախականությամբ Օգոստոսի 15-ը կրկնվում էր, տոնը արդեն տեղափոխվել էր կիրակի և դարձել շաբաթական: Տեսնենք ինչ տվյալներ են տալիս հնագույն տոնացույցերը: 759 թվահամարի գրչագրում գրված է. «Կիրակէն. Փոխումն է ամէնաւարինեալ Աստուածածնին. յԱզգուստոս ժե: Երեք աւր տաւն է: Զկնի երրորդ աւուրն տաւնիս Դշ [չորեքշաբաթի]. ապ[աշխարութեան]... էջ. Գեորգեա զաւրավարի

Կիրակէն. Վարագայ Սուրբ Խաչին (էջ 171բ-172ա): Այսպես է նաև 179 թվահամարի Տոնացույցում: Այլ խոսքով ունենք հետևյալ տոնական շարքը.

Կիրակի. Փոխման Աստուածածնի

Երկուշաբթի, երկրորդ աւուրն. Փոխման Աստուածածնի

Երեքշաբթի, երրորդ աւուրն Փոխման Աստուածածնի

Չորեքշաբթի. ապաշխարութեան (Պահք)

Հինգշաբթի...

Ուրբաթ... (Պահք)

Շաբաթ. Գեորգեա զաւրավարի

<sup>1</sup> Հովհ. Իմ. Մատ., էջ 136:

**Կիրակի. Վարագ Սուրբ Խաչին**

Աստուածածնի եռօրեա տոնական կարգը կարող էր առաջանալ 12-րդ դարի կեսից հետո, կապված Ներսես Շնորհալու հետ, որպես նրա ներդրողի: Գեորգ զորավարի և Վարագա Խաչինը՝ 11-րդ դարի սկզբներից: Վերջինս գործեց մինչև 14-րդ դարի սկզբները, թեև հիշյալ կարգով, որը հայտնի է դառնում տոնացույցերի բացատրություններից: Այսպես 767 թվահամարի գրչագիրը գրում է. «Ա կիրակի... (նկատի ունի Փոխման Աստուածածնի հաջորդ կիրակին): Յայս կիրակի, Վարագայ Խաչին տօն է, բայց այլք պահեն և զկնի Ը օրէրից Խաչին տօնէն» (էջ 170ա-բ): Ըստ 5667 թվահամարի գրչագրի. «Շաբաթ օր... : եւ այլք ոմանք Գէորգեա զօրավարին (տօնէն)» (էջ 132բ-134բ): Այդպիսին են նաև 5419 և 5436 թվահամարների գրչագրերի տվյալները (էջ 213ա-բ, 185ա-բ): Այլ խոսքով հին կարգով տոնել են 1337 թ. և նույնիսկ 16-րդ մասամբ 17-րդ դարի սկզբներին, իհարկէ, մասնավոր կարգով առանձին տեղերում:

Քննարկվող տոնական շարքում խմբագրություններ են կատարվում 14-րդ դարի սկզբներին: 752 թվահամարի Տոնացույցում սահմանվել է հետևյալ կարգը.

«Փոխման Աստուածածնի գիշ(երն) հսկումն է...

Երկրորդ աւուրն...

Երրորդ (աւուրն)...

Դշ (Չորեքշաբթի).

Եշ (Հինգշաբթի). Բաբելա հայրապետին և երից աշակերտացն և Գրիգորի Ակուականդացո.

Շաբ(աթ). Յովակիմա և Աննաի ծնողաց Աստուածածնին և կանանց Եղաբերից

Ա կիրակի...» (էջ 169բ-170բ):

Ասենք, որ հինգշաբթիի տակ եղած սրբերի հիշատակի օր առկա է նախորդ տոնացույցերի խմբագրությունների մեջ, բայց Սուրբ Խաչից հաշված 14-րդ օրվա տակ: Իսկ Շաբաթ օրվա կանոնի տակ զբված «Հովակիմա և Աննայի ծնողաց Աստուածածնին»-ը բացակայում է նախորդ տոնացույցերում: Վերջապես «կանաց իւղաբերից» հիշատակի օրը նախորդ տոնացույցերում տեղադրված է Սուրբ Խաչից հաշված 6-րդ կիրակիից հետո եկող Երեքշաբթի օրը:

Հետագայում ընդօրինակված տոնացույցերի և ճառոցների գրչագրերը հաստատուն կերպով բերել են նույն կարգը<sup>1</sup>:

Ասենք նաև, որ ճառոցների ընդօրինակությունների մեջ շաբաթ օրվա կանոնի տակ «Կանաց իւղաբերից» հիշատակի օրվա փոխարեն տալիս են «Սուրբ Աւետարանչացն՝ Մաթէոսի, Մարկոսի և Ղուկասու»<sup>2</sup>: Իսկ 5455 թվահամարի ճառոցը ձևակերպել է. «... և Սուրբ Աւետարանչացն չորից» (էջ 268ա-277ա):

Հնագույն տոնացույցերում «Սրբոց Աւետարանչացն՝ Մաթէոսի, Մարկոսի և Ղուկասու...» հիշատակի օրը դրված է Սուրբ Խաչից հաշված հինգերորդ կիրակիից հետո եկող շաբաթ օրը: Նույնը կրկնում են հետագա տոնացույցերում միայն ավելացվել է «և Ղուկկիանոս քահանայի» հիշատակի օրը: Որոշ տոնացույցեր «Բաբելա հայրապետի և երից աշակերտացի» փոխարեն

տալիս են «ՉԴ աշակերտաց»<sup>1</sup> կամ «ՃԴ աշակերտաց»<sup>2</sup>: Վերջինս գրչական սխալի հետևանք է, իսկ վերոհիշյալ տոնը դրված է այլ տոնական օր, ինչպես կտեսնենք հետագա քննության ժամանակ:

Ակսած 15-րդ դարի 40-ական թվականներից տոնացույցերը արձանագրել են Աստուածածնի տոնական օրերի ընդլայնման մասին, որոնց կատարումը սկզբնական շրջանում հիմնված էր կամավորության սկզբունքի վրա: 7203 թվահամարի Տոնացույցում գրված է. «Բայց թ աւր տաւնեա Սուրբ Աստուածածնին և Գ աւր միայն նախատաւնակ առնջիր..., իսկ եթէ Գ աւր միայն տաւնես» (էջ 74բ-75ա) բերում է նախորդ կանոնները:

3668 թվահամարի Տոնացույց շաբաթ օրվա տակ պահպանել է «Յովակիմայ և Աննայի ծնողաց Աստուածածնի և կանանց իւղաբերից» հիշատակի օրը սակայն հաջորդ կիրակի օրվա կանոնը ձևակերպել է. «Ա կիրակին աստուածածնին տաւնէ» (էջ 76ա-79բ), որից երևում է, որ այդ տոնը կատարել են 9 օրյա կանոններով:

4164 թվահամարի տոնացույցում բերել է նախորդ շրջանի կանոնները՝ «փոխման Աստուածածնի Գիշերն հսկում է», այնուհետև երկրորդ և երրորդ օրվա կանոնները, միաժամանակ ավելացնում է. «Բայց պարտ է թ օր տօնել Սուրբ Աստուածածնին Փոխմանն և նախատանակ առնել» և տալիս է 9 օրյա կանոնները, որից հետո ավելացնում է. «Իսկ Գշի (երեքշաբթի). տօն է Յովակիմա և Աննայի ծնողաց Աստուածածնին և կանանց իւղաբերից

Եշբի (հինգշաբթի). Բաբելա հայրապետի և երից աշակերտացն և Գրիգորի Ակուականդացոյ

Շաբ(աթ). Երեմիա Մարգարէին (էջ 192բ-197ա):

Ակնհայտ է, որ 16-րդ դարում վերահիշյալ կանոնները նոր խմբագրության են ենթարկվել: Ուշագրավ են նաև 4459 թվահամարի Տոնացույցի տվյալները: Այնտեղ բերվել է ավանդական ձևով. «Փոխման Սուրբ Աստուածածնի գիշերն հսկումն է..., որից հետո տալիս է 2-րդ և 3-րդ օրվա կանոնները և շարունակում. «Բայց պարտ է գիտել թ օր տօնել Սուրբ գԱստուածածնին փոխմանն, նախատանակ առնելով...

Ով եղբայր գիտասջիր, զի Աստուածածնինն ի յինն օր տօնեմք և Բշի (երկուշաբթի) աւարտի և Գշի (երեքշաբթի) Աստուածածնին ծնողացն տօն է, որ ուղիղ գայ... Իսկ գիշեր տօն է Յովակիմա և Աննայի ծնողացն Սուրբ Աստուածածնին և կանաց իւղաբերից»: Այնուհետև շարունակում «Եշի (Հինգշաբթի). Բաբելու հայրապետի և երից աշակերտաց (տողատակում՝ Եշի (հինգշաբթի). ոմանք Գրիգորի Ակուականդացոյ հիշէն» (էջ 93ա-94ա): Նույն ժամանակին ընդօրինակված մեկ այլ տոնացույց կարծես թեական և կամավորության սկզբունքի վրա է հիմնել իր շարդրանքը: Այնտեղ տալով ավանդական ձևով Աստուածածնի երրորդ օրվա կանոնից հետո գրում է. «Բայց պարտ է Աստուածածնի փոխման թ օր տօնել և ամէն պատկեր Գ անգամ աւել... Ապա եթէ ոչ տօնես թ օր», որից հետո ավանդական կարգով: Հետագա շարդրանքում ավելացնում է «Թէ թ օր տօնես Աստուածածնինն յայս Գ շաբթի (երեքշաբթի). Յովակիմայ և Աննայի տօնեա և թէ չտօնես Յովակիմայ նա տօն է Անդրէի զօրավարին և բանակի նորին և Դէմիդեայ բժշկին...»<sup>3</sup>:

17-րդ դարի տոնացույցերի խմբագրությունները ավելի հստակ են իրենց ձևակերպումների մեջ: 2025 թվահամարի գրչագրում կարդում ենք: «Ով եղբայր գիտացիր, զի Աստուածածնի

<sup>1</sup> Տե՛ս Ձեռ. N° 5667, էջ 132բ-134բ, 7203, էջ 74բ-75ա, 3668, էջ 76ա-79բ, 9838, էջ 175ա-176ա, 8112, էջ 68ա, 6337, էջ 242բ, 5419, էջ 213ա-բ, 5440, էջ 214ա-215ա, 4459, էջ 93ա-94ա, 5436, էջ 185ա-բ, 508, էջ 227բ 4514, էջ 316ա-320ա, 7741, էջ 370բ-375բ, 5455, էջ 268ա-277ա, 4977, էջ 31բ-39ա, 939, էջ 406բ-424ա, 4437, էջ 104բ, 4506, էջ 325բ-333ա, 4698, էջ 251բ-257ա և այլն:

<sup>2</sup> Տե՛ս Ձեռ. N° 4514, էջ 313ա-320ա, 7741, էջ 370բ-375բ, 939, էջ 406բ-424ա և այլն:

<sup>1</sup> Տե՛ս Ձեռ. N° 5667, էջ 132բ-134բ, 5419, էջ 213ա-բ:

<sup>2</sup> Տե՛ս Ձեռ. N° 5436, էջ 185ա-բ:

<sup>3</sup> Տե՛ս Ձեռ. N° 4874, էջ 191բ-192բ:



Թ օր տօնեմք և Բշի (երկուշաբթի) աւարտի և Գշի (երեքշաբթի). Աստուածածնի ծնողացն սօ-  
նեա, օր ուղիղ գայ» (էջ 119բ):

2024 թվահամարի գրչագրում կարդում ենք. «Բայց պարտ է Թ օր տօնել Սուրբ զԱս-  
տուածածնինն փոխման, իսկ Գշբի (երեքշաբթի) տօն է Յովակիմա և Աննացի ծնողաց սուրբ  
Աստուածածնինն և կանանց իւղաբերից» (էջ 113ա-119ա):

Այլ խոսքով ստանում ենք Աստուածածնի տոնական շարքի հետևյալ պատկերը.  
Կիրակի. Աստուածածնի Փոխման

Երկուշաբթի, երկրորդ աւուրն Աստուածածնի Փոխման

Երեքշաբթի, երրորդ աւուրն Աստուածածնի Փոխման

Չորեքշաբթի, չորրորդ աւուրն — „ —

Հինգշաբթի հինգերորդ աւուրն — „ —

Ուրբաթ, վեցերորդ աւուր — „ —

Շաբաթ, եւթներորդ աւուրն — „ —

Կիրակի, ութերորդ աւուրն — „ —

Երկուշաբթի, իններորդ աւուրն — „ —

Երեքշաբթի. Տօն Յովակիմայ և Աննայի ծնողաց Աստուածածնի և կանանց իւբերից:  
Պարզ է, որ նախորդ կանոնների հետ համեմատած էապես փոխվել է Աստվածածնի տոնական օ-  
րերի պատկերը: Հանվել են սրբերի հիշատակի օրերը և տեղափոխվել հաջորդ շաբաթվա մեջ  
կամ այլ տեղ: Շաբաթ օրվա կանոնը տեղափոխվել է երեքշաբթի:

Միմեոն Երևանցին հետևել է ուշ շրջանի տոնացույցերին և այդ փոփոխություններով էլ  
կանոնել է Վերափոխման Աստվածածնի 9 օրյա տոնական շարքը և երեքշաբթի օրը դրել վերո-  
հիշյալ սրբերի հիշատակի օրը (էջ 229-235): Այնպես որ 4-12-րդ դարերում Աստուածածնի տո-  
նը տոնել են մեկօրյա կանոնով, անշարժ սկզբունքով՝ Օգոստոսի 15-ին: 12-րդ դարից մինչև  
15-րդ դարի կեսերը, տեղ-տեղ ավելի ուշ մինչև 16-րդ դարի սկզբները երեքօրյա կանոններով  
և այլ սրբերի հիշատակի օրերով: 15-րդ դարի կեսերից մինչև 16-րդ դարի սկզբները Աստուա-  
ծածնի տօները շարունակվել են տոնվել և եօրյա և 9 օրյա կանոններով և փոխվել են տոնվող  
սրբերի կանոնները, իսկ 16-րդ դարի սկզբներից ու հետագայում Աստուածածնի տոները կատա-  
րել են 9 օրյա կանոններով՝ կրկին փոխելով սրբերի տոների օրերը: Վերջին կանոնները ընդունել  
է Միմեոն Երևանցին, որը տոնվում է մինչև օրս:

Ասենք նաև, որ Փոխման Աստուածածնի տոնը կատարել են Օգոստոս 15 ± 3 օր, կիրակի,  
այսինքն Օգոստոս 12-18-ի կիրակիներից մեկում նայած տարի 11-րդ դարից մինչև այժմ:

Հնագույն տոնացույցերը Փոխման Աստվածածնից հաշված Երկրորդ կիրակիից հետո տվել  
է հետևյալ տոնական շարքը.

Բշ. Մեկնիոս քահանայի և Ստեփանոսի Ուլնացոյն և ընկերաց նորա...

Գշ. Անդրէի զաւրավարի և Բանակի նորա և Կալինիկոսի վկայի Դիոմիդեա բժշկի...

Եշ. Աղրիանոսի և կնոջ նորա Անատաւեա և Թեոդորոսի ստրատելատի Առակեցոյ և  
Թևրոսի վկայի...

էշ. Բարդուղիմէոսի առաք[ելոյ] և Յուդայի<sup>1</sup>:

179 թվահամարի Տոնացույցը շաբաթ օրվա կանոնի տակ տվել է «Թումայի առաքելոյ»  
հիշատակի օրը, որը հետագա տոնացույցերում կանոն է դարձել: Բարդուղիմեոսի և Յուդայի  
հիշատակի օրը 179 թվահամարի գրչագիրը տեղափոխել է Սուրբ Հակոբի պահքի երեքշաբթի  
օրը, որին նույնպես հետևել են հետագայում ընդօրինակված տոնացույցերը: Իսկ Սուրբ Հակոբի  
պահքի երեքշաբթի հնագույն տոնացույցն ունի «Տարագրոսի, Պրոբոսի և Անդրոնիկոսի» հիշա-  
տակի օրը: Թովմա առաքյալի հիշատակի օրը բացակայում է հնագույն տոնացույցերում: Վեր-  
ջինիս հիշատակի օրը հնագույն ճաշոց-տոնացույցերից է վերցրել խմբագիրը: Այնտեղ Թովմա  
առաքյալի հիշատակի օրը դրվել է Օգոստոս 23-ի կանոնի տակ անշարժ տոնական օրով: Տո-  
նացույցում տեղադրելով այդ օրը վեր է ածվել շարժական տոնի մասամբ կորցրել Օգոստոսի  
23-ի նախնական իմաստը: Բանն այն է, որ Փոխման Աստուածածնի օրը Օգոստոսի 17-ի կիրա-  
կի ընկնելու դեպքում է միայն, որ Թովմա առաքյալի հիշատակի օրը համապատասխանում է  
Օգոստոսի 23-ին՝ շաբաթ օրը, իսկ մնացած դեպքերում, երբ փոխման Աստուածածնի տոնը  
տոնվել է Օգոստոս 15 ± 3 օր կիրակի, Թովմա առաքյալի հիշատակի օրը, քանի որ դրված է  
շաբաթ օրվա կանոնի տակ, տատանվում է մեկ շաբաթվա սահմաններում: Միայն Օգոստոսի  
18-ին Փոխման Աստուածածնի տոնը տոնելիս Թովմա առաքյալի հիշատակի օրը ընկնում է Օ-  
գոստոս 24-ին, իսկ մյուս դեպքերում Օգոստոսի 18-ից - 22-ն ընկնող օրերին, այլ խոսքով Օ-  
գոստոսի 23-ի փոխարեն Օգոստոսի 18-24-ի օրերին:

752 թվահամարի Տոնացույցի խմբագրությունում մեջ երկուշաբթի օրվա կանոնի տակ դրված  
Մեկնիոս կամ Տեկնիոս քահանայի փոխարեն դրվել է Պիոն քահանայի հիշատակի օրը: Ի դեպ  
այս անունները փոխարինվում են մեկը մյուսով տոնացույցի և ճաշոցի տարբեր ընդօրինա-  
կությունների մեջ: Բացի այդ ավելացել է Աբդիմսեհի հիշատակի օրը<sup>1</sup>: Վերջապես գրված է.  
«և ոմանք Ծնընդեան Աստուածածնին տաւնեն ի ծնաւդացն», որը նախորդ տոնացույցերում  
բացակայում է ինչպես և չկա հետագա տոնացույցերում:

752 թվահամարի Տոնացույցի խմբագրությունում մեջ երեքշաբթի օրվա տակ նախ ավելաց-  
րել է «Յորժամ տարան զԱստուածածնի երից ամաց ի տաճարն» կանոնը, որը հետագա ընդօ-  
րինակված տոնացույցերում չկա, ապա շարունակել է հիշել նախորդ տոնացույցերի մեջ եղած  
սրբերի հիշատակի տոնը: Վերջապես շաբաթ օրվա կանոնի տակ տվել է Թովմա առաքյալի հի-  
շատակի օրը: Չհաշված 752 թվահամարի Տոնացույցի այն խմբագրությունները, որոնք հետա-  
գայում բացակայում են, այդ շաբաթվա շարքը պահպանել են տոնացույցերի և ճաշոցների  
ընդօրինակությունները<sup>2</sup>:

Սկսած 16-րդ դարից փոխման Աստուածածնի տոները 9 օր կատարելու հետևանքով  
քննարկվող շաբաթվա տոնական օրերի կարգը փոխվել է, այն է

Երեքշաբթի. Տօն է Յովակիմայ և Աննայի ծնողաց Աստուածածնի

Հինգշաբթի. Բաբելայ Հայրապետի և երից աշակերտաց

Շաբաթ. Երեմիա մարգարէի

Քննարկվող շաբաթվա կարգը առանց փոփոխությունների տեղափոխել են հաջորդ շա-  
բաթ:

14-րդ դարի սկզբներից խմբագրված տոնացույցերը հետևելով «Բաբելա Հայրապետի և ե-  
րից աշակերտաց» հիշատակի օրը նախորդ շաբաթվա հինգշաբթիից տեղափոխել են հաջորդ

1 Ձեռ. № 752, էջ 171ա:

2 Տե՛ս Ձեռ. № № 767 էջ 173ա, 5667, էջ 134բ, 3668, էջ 79բ, 9838, էջ 176ա, 4459, էջ 94ա, 5436, էջ 185բ, 4514,  
էջ 321բ-324բ, 7741, էջ 377ա-380բ, 5455, էջ 279ա-282ա, 939, էջ 426բ-430ա և այլն:

3 Տե՛ս Ձեռ. № № 4146, էջ 197ա-198ա, 4874, էջ 192բ-193բ, 4459, էջ 94ա, 2025, էջ 119բ և այլն:

<sup>1</sup> Ձեռ. № 759, էջ 172ա-բ:



չաբաթվա Հինգշաբթի, այսինքն Փոխման Աստուածածնի կիրակիից հաշված 12-րդ օրը, իսկ Երեմիա մարգարեինը՝ 14-րդ օրը, որը նախորդ տոնացույցերում կանոնված էր Պենտեկոստից հետո եկող շաբաթ օրը:

Սիմեոն Երևանցին հետևել է հիմնականում 16-րդ դարի տոնացույցերին, մասամբ նախորդ տոնացույցերի կարգին և քննարկվող շաբաթվա մեջ սրբերի հիշատակի օրերը տվել է հետևյալ կարգով.

Երկուշաբաթի 9-րդ օր վերափոխման Աստուածածնի

Երեքշաբաթի աւուրն. Տօն է Յովակիմայ և Աննայի ծնողաց Աստուածածնի և կանանց իւղաբերեց

Հինգշաբաթի. Երեմիա մարգարէի

Շաբաթ. Սրբոց առաքելոցն Թօմայի, Յակոբայ և Շմաւոնի (էջ 235-237):

Փաստորեն Երեմիա մարգարեի հիշատակի օրը նույն շաբաթվա շաբաթ օրից տեղափոխել է Հինգշաբթի, վերականգնել է 13-րդ դարի վերջից եկող Թովմա Առաքյալի հիշատակի օրը շաբաթ օրվա կանոնի տակ, ինչպես նախորդ շրջանում էր և ավելացրել Հակոբի ու Շմավոնի հիշատակի օրը, որը հնագույն տոնացույցերի խմբագրությունների մեջ կանոնվել է Յիսակիմայի կիրակիից հաշված 2-րդ կիրակիից հետո եկող երեքշաբթի օրը: Այսպիսով հիշյալ շաբաթվա կարգը խմբագրության է ենթարկվել չորս անգամ: Իսկ այժմ տոնվում է Սիմեոն Երևանցու սահմանած կարգի համաձայն:

759 թվահամարի գրչագիրն Աստուածածնից հաշված երրորդ կիրակին և նրանից հետո եկող շաբաթվա տոնվող սրբերի շարքը ներկայացրել է. «Ձկնի Աստուածածնին երրորդ կիրակի...

Բշ. Սրբոց վարդապետացն Մեսրոպայ և Եղիշէի

Գշ Սրբոց մարգարէիցն Եղեկիէի, Եզրի և Զաքարիայի հաւրն Յովաննու

Եշ. Նիկիա սուրբ ժողովոյն ՅժԸ-իցն

Էշ. Յովհաննու Մկրտչի...» (էջ 172բ):

Նույն կարգն է տալիս 179 թվահամարի գրչագիրը: Սակայն 14-րդ դարի սկզբներից տոնացույցերի և ճաշոցների մեջ նկատվում են փոփոխություններ ոչ թե կարգի այլ լրացումների իմաստով:

752 թվահամարի Տոնացույցը (էջ 171ա) երկրորդ կիրակի է փաստել, որը նկատվում է հետագա տոնացույցերի մեջ, սակայն դա հաշվման արդյունք է, այսինքն չեն հաշվում Փոխման Աստուածածնի կիրակին: Երկուշաբթի կանոնի տակ ավելացրել է «Մովսիսի Քերթողի և Դաւթի անյաղթ փրկիստփայի և Գրիգորի Նարեկացի[ոյ]» հիշատակի օրերը: Իսկ շաբաթ օրվա կանոնի տակ ավելացրել է «և յիշատակ Յոբա արդարոյ»:

Հետագա Տոնացույցերն ու ճաշոցները կրկնում են 14-րդ դարի սկզբներին խմբագրված տարբերակը<sup>1</sup>:

Որոշ տոնացույցեր և ճաշոցներ ունեն անունների ավելացումներ և ձևակերպումների մեջ են տարբերվում: Այսպես 5667 և 9838 թվահամարներից գրչագրերը ավելացրել են «Ներսեսի Կլայեցոյ»-ն, 7203-ը՝ «Ստեփանոսի Սիւնեաց եպիսկոպոսի», 4874-ը, 5419-ը և 5436-ը «Ներսեսի Լամբրոնացոյ և սրբոց Գրիգորիսէանցն», 4164-ը՝ «Եղեկի և Մամբրէի»-ի անունները: 7741 և 4506 թվահամարների ճաշոցները բնագրի մեջ երկուշաբթի օրվա կանոնը տվել են

«Թարգմանչացն» Ձևակերպման տակ, իսկ ստորին լուսանցքում թվարկել անունները: 2031 թվահամարի Տոնացույցը ավելացրել է՝ «և այլոց թարգմանչաց և վարդապետաց հայոց»: Այն տպավորություն է ստացվում, որ հիշյալ ընդօրինակող հեղինակները թարգմանչաց տոնի կանոնը փորձել են տեղափոխել այստեղ, թեև Պենտեկոստից հետո եկող տոնի կանոնում նույնպես առկա է «թարգմանչաց» ձևակերպումը:

4164 թվահամարի Տոնացույցում հիշյալ տոնական օրերը տեղափոխված ենք տեսնում չորրորդ կիրակիից հետո շաբաթվա մեջ, այսինքն այն տեղերում, որտեղ Փոխման Աստուածածնի տոնը կատարել են 9 օր քննարկվող շաբաթվա տոնական օրերը տեղափոխել են հաջորդ շաբաթ: Երբ Փոխման Աստուածածնի տոնը կատարել են Օգոստոսի 12-14-ին մեկ շաբաթ ավելացել է Աստուածածին - Սուրբ Խաչի հատվածում: Այդ դեպքերում կարող էին տոնել հիշյալ սրբերի հիշատակի օրերը չորրորդ կիրակիից հետո եկող շաբաթվա օրերում: Սակայն երբ Աստուածածինը տոնել են Օգոստոս 15-18-ին չորրորդ կիրակիից հետո սկսել է Սուրբ Խաչի Պահքը և օրեր չեն մնացել այդ շաբաթ տեղափոխված սրբերի հիշատակի համար: Դժբախտաբար տոնացույցերը այդ կապակցությամբ որևէ բացատրություն չեն տալիս: Պարզ է, որ քննարկվող սրբերի հիշատակի օրերը կամ չպետք է տոնեին, կամ պետք է տեղափոխեին տոնական տարվա այլ հատված կամ պետք է տեղափոխեին նախորդ շաբաթվա տակ և երկու կանոն միացնելով տոնեին մեկ օրվա մեջ: Վերջինս հավանական է, որովհետև 16-րդ դարի տոնացույցերը, որոնք տեղափոխել են չորրորդ կիրակիից հետո որևէ բացատրություն չեն տալիս:

Որոշ տոնացույցեր, նույնպես սկսած 16-րդ դարից, նույն շաբաթվա մեջ փոփոխություններ են կատարել: Այսպես 4874 թվահամարի Տոնացույցում Հինգշաբթի օրվա կանոնի տակ է տեղափոխել «Յովանու կարապետին և Յոբայ արդարոյ»-ն միաժամանակ տալով բացատրություն, այն է՝ «Եւ ոմանք Նիկիոյ սուրբ ժողովոյն տօնեն յայս հինգշաբթիս եւ զՅովաննուն շաբաթ աւր» (էջ 192բ-193ա): Իսկ շաբաթ օրվա կանոնի տակ տվել է «Նիկիոյ սուրբ ժողովոյն Յ և ԺԸ հայրապետացն»: Այդպես են վարվել նաև 5419 և 5436 թվահամարների տոնացույցերի խմբագրությունները (էջ 213բ և 186ա-բ):

Սիմեոն Երևանցին վերափոխման Աստուածածնից հաշված երրորդ կիրակի սահմանել է տոնական օր այն է՝ «Երրորդ կիրակի գկնի Սուրբ Աստուածածնի՝ տօն է գիւտի գոտոյ սրբուհւոյ Աստուածածնի» (էջ 237-238): Դրանցից հետո տալիս է հետևյալ շարքը.

Երկուշաբաթի՝ տօն է սրբոյն Ստեփաննոսի Ուլնացւոյն և սրբոյց վկայիցն Գոհարինեաց՝ Ծամիդեսի, Տուքիկոսի և Ռատիկոսի

Երեքշաբաթի սրբոց մարգարէից Եղեկիէի, Եզրի և Զաքարիայի հօրն Յովհաննու Մկրտչի Հինգշաբաթի՝ տօն է Յովհաննու կարապետին և Յոբայ արդարոյն

Շաբաթ. տօն է Նիկիոյ սուրբ ժողովոյն ՅժԸ հայրապետացն:

Երկուշաբթի օրվա կանոնը տեղափոխել է Սուրբ Խաչից չորրորդ կիրակիից հետո եկող շաբաթ օրը հետևյալ ձևակերպմամբ. «Շաբաթ՝ սրբոց թարգմանչաց վարդապետացն մերոց՝ Մեսրոպայ, Եղիշէի, Մովսէսի Քերթողին, Դաւթի Անյաղթ փրկիստփային, Գրիգորի Նարեկացւոյն և Ներսիսի Կլայեցւոյն»: Այս ձևակերպման մեջ ևս այն տպավորություն է թողնում, որ թարգմանչաց տոնը տեղափոխվել է տվյալ տեղը, սակայն Պենտեկոստից հետո եկող տոնի մեջ ևս թարգմանչացը պահպանվել է:

Երեքշաբթի օրվա կանոնը պահպանել է հնագույն և հետագայում ընդօրինակած տոնացույցերի սահմանմամբ, իսկ Հինգշաբթի և շաբաթ օրվա կանոնների համար նախընտրել է 16-րդ դարի խմբագրությունը:

Հիշյալ տոնական օրերը բերելուց հետո Սիմեոն Երևանցին տալիս է հետևյալ բացատրությունը. «Ծանիր ով տօնասէր: Ուտիք միջոցիս՝ եթէ Գ շաբաթ իցէ, տօնքն դոքա են որք Ե-

<sup>1</sup> Տե՛ս Ձեռ. № № 767, էջ 173բ-174ա, 5667, էջ 134բ, 7203, էջ 80ա-բ, 3668, էջ 80ա-բ, 9838, էջ 175ա-բ, 2031, էջ 101ա-102բ, 4459, էջ 94ա-բ, 4514, էջ 325ա-330բ, 7741, էջ 382ա-386բ., 5455, էջ 283բ-284բ, 939, էջ 432բ-436բ, 4437, էջ 173ա-177բ, 4506, էջ 338ա-341բ, 4698, էջ 260ա-262բ և այլն:

դան մինչև ցատտ, և Չորրորդ կիրակէն լինի Բարեկենդան Սուրբ Խաչի պահոցն յայնժամ և ներքոյ եղեալ տօնքոյ յայլում տեղուղ տօնին: Իսկ եթէ չորք շաբաթ լինիցի ուտիքն, աստ յաւելանի շաբաթ մի. յորում տօնին ներքոյ եղեալ տօնքոյ, և Հինգերորդ կիրակէն լինի Բարեկենդան: Եւ յայսպիսի տարիս, երբեմն ևս Յակոբ և Շմաւօն առաքելքն բաժանելով ի Թօմային. յայս շաբաթի օրս տօնին: Չայս ամենայն ցուցանի քեզ տարեգիրն» (էջ 241): Դրանից հետո տալիս է հետևյալ տոնական օրերը. «Չորրորդ կիրակէ՛ գկնի սուրբ Աստուածածնին...

Երկուշաբաթ՝ սրբոյն, Անդրէի զօրավարին և Բանակի նորին Կալինիկոսի և Դոմետեայ վկայիցն...

Երեքշաբաթ՝ սրբոցն, Անդրիանոսի, և կնոջ նորա Անատոլայ, Թէոդորոսի և Ելէթիւրոսի վկայիցն...

Հինգշաբաթ՝ սրբոցն Աբրահամու. և Խորինայ և անարծաթ բժշկացն Կոզմայի և Դամիանոսի և Աստուածատրո վկային: (Չպատճէսն սոցա ի վերջն նախքան զաւագտօսան տեսցես):

Շաբաթ՝ տօն սուրբ Աստուածածնի ծննդեան ի յԱննայէ և կամ Նիկիոյ Սուրբ ժողովոյն: (Չի յայս շաբաթ օրս, յայսց երկուց տօնից մինն տօնի ի հարկէ, ըստ ցուցման տարեգրին) (էջ 242-243):

Ասենք, երբ Վերափոխման Աստուածածնի տոնը կատարվել է Օգոստոսի 12-ին և 13-ին և վերոհիշյալ տոները եղել են նույն տեղում, իսկ այն առկա է հետևյալ տարեգրերում՝ Դ, Ե, Ի, Լ, Ղ, Ճ, Չ, Պ, Բ, Յ: Իսկ երբ Փոխման Աստուածածնի տոնն ընկել է Օգոստոսի 14-ին, 15-ին, 16-ին, 17-ին և 18-ին հիշյալ տոները տեղափոխվել են տոնական տարվա այլ տեղեր:

Տարեգիրն Ա-ի (= M22) դեպքում Փոխման Աստուածածնի տոնը կատարվել է Օգոստոսի 16-ին և քննարկող տոները տեղափոխել են Վարդավառի վերջին տոնելի շաբաթ: Իսկ այդ շաբաթվա մեջ տոնվող Աբրահամու և այլոցն տեղափոխել է Ավագ տոներից առաջ:

Տարեգիրը Բ-ի (= M23) դեպքում Վերափոխման Աստուածածնի տոնը ընկել է Օգոստոսի 17-ին և այդ տոները կրկին տեղափոխել են Վարդավառի վերջին տոնելի շաբաթ: Ավագ տոներից առաջ են տեղափոխվել նաև Աբրահամու և այլոց հիշատակի օրերը: Նույնն է կրկնվել Գ (= M24) տարեգրի ժամանակ, երբ Վերափոխման Աստուածածնի տոնը ընկել է Օգոստոսի 18-ին, միայն ամսաթվերի փոփոխությամբ: Իսկ Աբրահամու և այլոց հիշատակի օրը դրվել է Յիսնականարտից հետո եկող շաբաթ օրը:

Տարեգիրը Զ-ի (M27) դեպքում հիշյալ սրբերի հիշատակի կանոնները տեղափոխվել են Յիսնականարտից առաջ ընկնող Երկուշաբթի, Երեքշաբթի և Հինգշաբթի: Տարեգիրն է (M28)-ի դեպքում նույն պատկերն է կրկնում: Տարեգիրն, երբ լինում է Ը (M29) վերադառնում են Ա-ի օրինաչափությանը: Տարեգիրն Թ (M30)-ի դեպքում կրկնվում է Ա-ի, ինչպես և Ը-ի կանոնները: Նույնն է նաև Ժ (M31) տարեգրի դեպքում: Միայն Աբրահամու և այլոց հիշատակի օրը դրվել է Յիսնականարտից հաջված 2-րդ կիրակիից հետո եկող երկուշաբթի օրը:

Տարեգիրը Խ (A 3)-ում ընկնելու ժամանակ կրկնվում է Զ-ի օրինաչափությունը: Իսկ Ծ-ի (A 4) դեպքում՝ Խ-ի կանոններն են գործում:

Տարեգիրը Կ (A 5)-ի ժամանակ կրկնվում է Ա-ի օրինաչափությունը:

Տարեգիրը Զ (A 6)-ի դեպքում հիշյալ տոներից երկու կանոն տեղափոխվել է Վարդավառի վերջին շաբաթվա երեքշաբթի և Հինգշաբթի մեջ, իսկ Աբրահամու և այլոցն՝ Ավագ տոներից առաջ՝ երկուշաբթի օրը: Այսպես է նաև Չ (A 7) տարեգրի դեպքում, միայն Աբրահամու և այլոց հիշատակի օրը տեղափոխվել է Յիսնականարտից հետո ինչպես Ժ-ի ժամանակ:

Տարեգիրը Մ (A 10)-ի ժամանակ հիշյալ տոները տեղափոխվել են Յիսնականարտից առաջ ընկնող շաբաթվա Երկուշաբթի, Երեքշաբթի և Հինգշաբթի օրերը: Այդ պատկերն է կրկնվում Յ (A 11) տարեգրի դեպքում:

Ն (A 12) տարեգրի ժամանակ նշված տոները տեղադրվել են հունվարի 13 - Առաջավոր Բարեկենդանի միջև. բացառությամբ Աբրահամու և այլոց, որոնք տեղափոխվել են ավագ տոներից առաջ: Ծ-ն (A 13) կրկնում է Ն-ին: Ռ-ն (A 14) վերադառնում է Ծ-ն. միայն Աբրահամու և այլոցն դրել է Յիսնականարտի 1-ին կիրակիից հետո եկող երկուշաբթի: Տարեգիրը Զ-ի (A 17) ժամանակ հիշյալ սրբերի հիշատակի օրերը տեղափոխվել են Յիսնականարտից առաջ ընկնող ազատ շաբաթվա մեջ: Տարեգիրը Թ-ի (A 18) դեպքում կրկնվում է Զ-ն: Երբ Տարեգիրը Ս (A 19) է հիշյալ տոները տեղափոխվել են հունվար 13 - Առաջավոր Բարեկենդանի կիրակիի միջև, բացառությամբ Աբրահամու և այլոցն որոնց հիշատակը կատարել են Ավագ տոնից առաջ: Վ-ն (A 20) կրկնում է Ս-ն: Տ-ն (A 21) կրկնում է Վ-ն, միևնույն Աբրահամու և այլոցը տեղափոխվել է Յիսնականարտից հաջված 1-ին կիրակիից հետո եկող երկուշաբթի:

Լ-ի (A 24) ժամանակ հիշյալ սրբերը տեղադրվել են Յիսնականարտից առաջ ընկնող շաբաթվա առաջին երեք տոները: Փ-ի (A 25)-ի դեպքում կրկնվում է Լ-ի օրինաչափությունը:

759 թվահամարի Տոնացույցը տալիս է հերթական տոների շարքը.

«Զկնի Աստուածածնին չորրորդ կիրակի յարութեան... և ապա Պահ(հ)ք Խաչին և տաւն ոչ լինի:

էշ. Նաւակատեաց Խաչին» (էջ 172բ-173ա):

179-ը կրկնում է նույնությամբ, միայն հիշում է, որ մեկ կիրակի ավելանում է այս հատվածում, որից հետո պետք է սկսել Պահքը: Մի խումբ տոնացույցեր և ճաշոցներ կրկնում են հնագույն կանոնները<sup>1</sup>: Միայն առանձին տոնացույցեր և ճաշոցներ տալիս են նորույթներ: Այսպես Գ կիրակի ասելով հասկացել են 4-րդ կիրակին (752, 767 և այլն): Այն տոնացույցերում, որոնք Փոխման Աստուածածնի տոնը կատարել են 9 օր 5-րդ կիրակիից հետո են տվել պահքը և Շաբաթ օրվա Նաւակատեաց Խաչի օրը (7203, 4164, 4874 և այլն):

7741 թվահամարի ճաշոցը գրել է. «Չորրորդ կիրակէին Բարեկենդան է Խաչի Պահոցն», իսկ 2092 թվահամարի Տոնացույցը նախորդ շաբաթ օրն է արձանագրել «Սրբոյ Խաչին Բարեկենդան է» ձևով: Բացի այդ որոշ ճաշոցներ շաբաթ օրվա կանոնը ձևակերպել են ոչ թե Նաւակատեաց Խաչին, այլ «Նաւակատիք սուրբ տեղեացն Երուսաղեմի» (7741, 939, 4437 և այլն), որը հնագույն «Կանոն»-ների ազդեցութեան հետևանք է:

Ասենք նաև, որ Գրիգոր Վկայասերի Տոնանամակում և նրանից հետո ընդօրինակված որոշ ճաշոցներում նրա ազդեցութեան տակ Սեպտեմբեր 8-ի կանոնի տակ դրել են. «Մնունդ Սուրբ Աստուածածնի ի ծնողացն և յիշատակ ծնողացն Յովակիմայ եւ Աննայի...»<sup>2</sup>: Միայն 15-րդ դարի 40-ական թվականների և 16-րդ դարի որոշ տոնացույցեր արձագանքել են այդ կանոնին դնելով Փոխման Աստուածածնի քննարկվող 4-րդ կամ 5-րդ կիրակիից առաջ նշելով ամսաթիվը կամ հենց կիրակի օրը նույնպես վկայելով ամսաթիվը: Իսկ 16-րդ դարի որոշ տոնացույցեր այն կանոնն են տոնացույցը սկսելուց առաջ Աստուածածնի տոների մեջ, թեև նշել են նաև տոնացույցում: Բերենք այդ վկայությունները: 7203 թվահամարի գրչագիրն Սուրբ Խաչի պահքից առաջ գրում է.

1 Տե՛ս Ձեռ. N° N° 752, էջ 171բ, 767, էջ 174ա-բ, 2092, էջ 228ա, 5667, էջ 135ա-բ, 7203, էջ 81ա, 2833, էջ 222բ, 9838, էջ 176բ, 4164, էջ 199բ, 4874, էջ 193ա-բ, 5419, էջ 214ա, 4454, էջ 94ա-բ, 5436, էջ 186բ, 509, էջ 416բ, 7741, էջ 387ա-391բ, 5455, էջ 285ա-291բ, 939, էջ 438բ-443բ, 4437, էջ 179բ-182բ և այլն:

2 Տե՛ս Ձեռ. N° N° 979, էջ 4բ և 366բ - 367ա, 940, ԸԺԹ համարի տակ

«Յայս միջոցս տաւն է Սուրբ Աստուածածնին ծննդեան, որ է Սեպտեմբեր Ը: Բայց յոր աւր և գայ անպատճառ Սեպտեմբեր Ը տաւնեա և պատարագ մատոյ, զի տերունի է տօնս: Բայց են ոմանք որ զպատկեր աւուր ոչ տաւնեն, այլ ի կիրակի ձգեն» (էջ 81ա):

4164 թվահամարի Տոնացույցը հինգերորդ կիրակի օրվա կանոնը տալիս է և շարունակում. «Յայս կիրակիս Սուրբ Աստուածածնին ծննդեան տօն է: Իսկ եթէ յարութեան տօնես նայ զԱստուածածնին Սեպտեմբեր Ը յինչ օր որ հանդիպի կատարեայ և իրիկունն որ է Սեպտեմբեր է նախատօնակ առնիջիր անպատճառ: Սեպտեմբեր Ը. Տօն է ծննդեան ամէնաաւրեանալ Սուրբ կուսին Մարիամու Աստուածածնին ծնողաց իւրոց Յովակիմայ և յԱննայէ: Բայց գիտացիր, ով եղբայր, զի տերունի է տօնս և յոր օր որ գայ կատարեայ և պատարագ մատոյի անպատճառ (էջ 199ա): Այսպես են ներկայացել նաև 4459 (էջ 94բ-95ա), 4454 (էջ 94ա-բ) և այլ գրչագրերը:

4874 թվահամարի Տոնացույցում 5-րդ կիրակիից առաջ գրված է. «Յայսմ վայրը Սեպտեմբերի Ը. նախատօնակ է ծննդեան Աստուածածնին...: Եւ ի յինն՝ տօն է ծննդեան Աստուածածնին ի ծնողացն» (էջ 192բ-193ա): Այսպես է նաև 6337 (էջ 243ա), 6952 (էջ 283ա), 5419 (էջ 214ա) 4962 (էջ 122ա և 157ա), 587 (160բ-161ա), 5436 (էջ 186բ) և այլ գրչագրերում:

5440 թվահամարի Տոնացույցի սկզբում՝ Աստուածածնի տոների մեջ գրված է. «Նաւասարդի ԻԹ և Սեպտեմբերի Ը, Իլուլ ԻԱ. նախատաւնակ է ծննդեան ամէնասրբուհոյ Աստուածածնին ի Յովակիմայ և յԱննայ է... Նաւասարդի Լ և Սեպտեմբերի Ի Թ, Իլուլ (Ի)Բ. տաւն է մեծապայծառ հրաշափառ և փառաւորեալ ամենասուրբ Աստուածածնին, որ ծնաւ յԱննայէ և Յովակիմայ և յիշատակ ծնողաց իւրոց... (էջ 184ա): Աստուածածնի հիշյալ և այլ կանոններ տոնացույցի սկզբից են տվել նաև հետևյալ գրչագրերը՝ 587 (էջ 160բ-161ա), 2025 (էջ 2ա-բ), 2024 (էջ 3ա-8ա), 759 (էջ 194ա-բ), 2030 (էջ 1ա-6ա և 141բ-142ա), 509 (էջ 369ա և 417ա), 2027 (էջ 8ա-11բ), 2029 (էջ 5ա-11բ), 2028 (էջ 5ա-7բ) և այլն:

Փոխման Աստվածածնի տոնը Օգոստոսի 18-ին հանդիպելու դեպքում հիշյալ տոնը ընկնում է չորրորդ կիրակիին՝ Սեպտեմբերի 8-ին, իսկ մյուս դեպքերում չորրորդ կիրակիից ընկնող շաբաթվա այլ օրերը, իսկ Սեպտեմբերի 9-ը ընկնում է և հինգերորդ կիրակի օրը, եթե Փոխման Աստվածածնի տոնը լինում էր Սեպտեմբերի 12-ին, մյուս դեպքերում 5-րդ կիրակիից հետո ընկնող շաբաթվա օրերին: Այլ խոսքով եթե տոնել են կիրակի օրը Սեպտեմբերի 8-ը կամ 9-ը դարձել է շաբաթական և տատանվել մեկ շաբաթվա սահմաններում, իսկ եթե տոնել են ամսաթվով շաբաթվա օրերն են փոխվել, իսկ ամսաթիվը մնացել է հաստատուն: Քննությունից պարզ է դառնում, որ Գրիգոր Վկայասերի Տոնանամակի ազդեցություն տակ հետագա որոշ ճաշոցներ 13-14-րդ դարերում, իսկ տոնացույցերը 15-րդ դարի 40-ական թվերին և հատկապես 16-րդ դարում իրենց կանոնների մեջ են ներառել և տոնել հիշյալ տոնը կամ դնելով 4-րդ և 5-րդ կիրակի կամ ամսաթվի տակ Սեպտեմբերի 8-ին կամ 9-ին:

Ըստ Սիմեոն Երևանցու՝ Շաբաթ՝ տօն սուրբ Աստուածածնի ծննդեանն ի յԱննայէ և կամ Նիկիոյ սուրբ ժողովոյն [զի այս շաբաթ օրս. յայսց երկուց տօնից մինն տօնի ի հարկ է. ըստ ցուցման տարեգրին]:

Իսկ ի Բարեկենդանի կիրակէին...

Կանօն Մննդեան սուրբ Կուսին

Իսկ տօն ծննդեան սրբուհոյ կուսին Մարիամու Աստուածածնին ի յԱննայէ, աստ եղաւ որ կատարի միշտ ի սեպտեմբերի ութն: Ի յերեկոյի նախատօնակ արա: [Եւ ապա պահք սրբոյ ինչին, յօրս տօնք ոչ գոն]:...

Շաբաթ՝ տօն է սրբոյ եկեղեցոյ՝ ի նաւակատիս սրբոյ խաչին» (էջ 244):

Հնագույն «Կանոնք ընթերցուածոց» տալիս է հետևյալ տեղեկությունը.

Եւ ի վաղիւ անդր յերկրորդում աւուրն ժողովին ի սուրբ Մարտրանն եւ նույն կանոն կատարի: Եւ ի նմին աւուր ցուցանեն զպատուական կենսատու Սուրբ ինչն ամենայն ժողովոյն»<sup>1</sup>:

Յույց տվեցին, որ Սահակ կաթողիկոսը թարգմանեց և խմբագրեց Երուսաղեմի կանոնքը վերցնելով միայն երկու օրվա կանոնները, որտեղ Սուրբ ինչի տոնը չի առանձնացված, այլ մտել է նավակատեաց երկրորդ օրվա կանոնի տակ:

Այդպես շարունակվեց տոնվել հավանաբար մինչև Հովհան Օձնեցու ժամանակ, երբ նա խմբագրեց տոնացույցը և Սուրբ ինչի օրը առանձնացրեց: Այդ երևում է Ատոմ Վարագեցու Հոռոմադիբից, որտեղ նախատեսվել է. «Սեպտեմբերի ԺԳ. Նաւակատիք է սուրբ տեղեաց Երուսաղեմի», իսկ «Սեպտեմբեր ԺԴ. Սրբոյ ինչին»<sup>2</sup>:

Վենետիկի 169 թվահամարի «Կանոնք»-ում, որն ընդօրինակվել է 994 թվականին, հիշյալ կանոններում փոփոխություն է կատարվել, թեև հետևել է Հնագույն կանոնքների ձևակերպումներին: Այնտեղ գրված է. «Սեպտեմբերի ամսոյ որ աւր ԺԳ. նաւակատիք սուրբ տեղեացն Երուսաղէմի, Յայուլթեանն, եւ այս կանոն կատարի...»

Սեպտեմբերի ամսոյ, որ աւր ԺԴ (ըստ Ս. Ճեմճեմյանը՝ երկու բառ անընթեռնելի վերականգնում ենք՝ երկրորդ աւուրն) կիրակէին ժողովին ի սուրբ Մարտրանն եւ ցուցանեն զպատուական փայտ ինչին ամենայն մարդկանն եւ այս կանոն կատարի...»<sup>3</sup>:

Թեև Սեպտեմբերի 14-ի ամսաթիվը պահպանվել է, սակայն կանոնը կատարվել է Կիրակի օրը, այսինքն հաստատուն օր է ընդունվել շաբաթվա օրը, իսկ ամսաթիվը դարձել է շաբաթական, այլ խոսքով տոնը տեղափոխվել է Սեպտեմբերի 14 ± 3 օր կիրակի: Բայց շարունակվել է ավանդաբար տոնվել 11-րդ դարում, ինչպես վկայել է Արիստակես Լաստիվերտցին:

Սուրբ ինչի մեկօրյա կանոնը վերածվեցին ութօրյա կանոնների 11-րդ դարում: Այդ երևում է Վենետիկի 285 թվահամարի կանոնքից, որտեղ տարվա վերջից ավելացվել են ութօրյա կանոնները: Բնագրում բացակայող կանոնները հեշտությամբ վերականգնվում են: Բերենք դրանք վերականգնելով պակասները (փակագծերի մեջ)

(Շաբաթ աւր). Նավակատիք սուրբ եկեղեցոյն Երուսաղէմի...

(Կիրակէ աւր. Սրբոյ ինչին)

Երկուշաբթի աւր... (սրբոյ ինչին)...

Երեքշաբթի աւր (սրբոյ ինչին)...

Չորեքշաբթի աւր (Սրբոյ ինչին)...

Հինգշաբթի աւր (սրբոյ ինչին)...

(Ուրբաթի աւր) (Սրբոյ ինչին)

(Շաբաթի աւր) (Սրբոյ ինչին):

Գրիգոր Վկայասերի Տոնանամակում բերվել են հիշյալ կանոնները փոքր ինչ այլ ձևակերպմամբ, այն է՝

1 Ձեռ. № 985, էջ 275ա-276բ:

2 Ձեռ. № 832, էջ 221ա-225ա:

3 Վեճետիկի 169 թվահամարի գրչագիր էջ 293բ-294բ, տե՛ս Ս. Ծեմճեմյան, Ազվ. աշխ., էջ 567-588:

4 Վեճետիկի 285 թվահամարի գրչագիր, տե՛ս Ս. Ծեմճեմյան, Ազվ. աշխ., էջ 595-606:

Նորին (Սեպտեմբերի) ԺԳ-ն. Նաւակատիք սրբոյ Յարութեանն...

Նորին (Սեպտեմբերի) ԺԴ. Տաւն պատուական և Սուրբ Խաչին Քրիստոսի Աստուծոյ մե-  
րոյ...

Երկրորդ աւուրն...

Երրորդ աւուրն...

Չորրորդ աւուրն...

Հինգերորդ աւուրն...

Ի վեցերորդ աւուրն...

Եւթներորդ աւուրն...<sup>1</sup>:

940 թվահամարի ճաշոցը ՃԻԱ-ՃԻԸ համարների տակ տալիս է հետևյալ կարգը. «Սեպ-  
տեմբեր ԺԳ. Նաւակատիք սրբոյ Յարութեան Երուսաղէմի մեծ եկեղեցոյն...

Սեպտեմբեր ԺԴ. Տաւն է մեծահոգի վերացման սուրբ և պատուական Խաչին Քրիստոսի  
Աստուծոյ...

Ապա բերում է «Երկրորդ աւուրն...» մինչև «Եւթներորդ աւուրն...»:

Հետագայում ընդօրինակված ճաշոցները կրկնում են նախորդների կանոնները տալով եր-  
բման հնագույն ձևակերպումներով կամ նորագույն կամ խառն, նաև ամսաթվերով<sup>2</sup>:

Հնագույն տոնացույցերում գտնում ենք հետևյալ տեղեկությունները. «Էջ. Նաւակա-  
տեաց սրբոյ Խաչին...»

Կիւրակէն սրբոյ խաչին, տաւնս ութ աւր և զչորեքշաբաթի և զուրբաթ մի ուտեր: Իսկ  
զկնի ութ աւուրն ի նոյն կիւրակէն՝ յարութեան»<sup>3</sup>:

Նույնարժեք վկայություններ են բերվում 179 թվահամարի Տոնացույցի խմբագրության  
մեջ: Պարզ է դառնում, որ 11-13-րդ դարերում տոնվել է միայն Սուրբ Խաչի տոնը ութօրյա  
կանոններով:

14-րդ դարի սկզբներին ութօրյա կանոնները վեր են ածվում Սուրբ Խաչի և Եկեղեցու տո-  
նական օրերի որոշակի հերթականությամբ: Ըստ 752 թվահամարի տոնացույցի. «Շաբաթի).  
Նաւակատեաց Խաչին...»

Խաչվերացին գիշերն հսկումն է... Այս շաբաթս ի բուն Խաչի և Եկեղեցու տաւն է»: Այ-  
նուհետև տվել է Երկուշաբթի-Շաբաթվա կանոնները<sup>4</sup>:

Ինչպես նկատելի է, շրջանառության մեջ է մտնում Խաչվերաց տերմինը:

Հետագայում ընդօրինակված տոնացույցերի խմբագրությունները հիմնականում կրկնել  
են վերոհիշյալ բնագրի տվյալները, թեև չեն տարբերակել թե որ օրերն են հատկացվել Խաչի և  
որ օրերը Եկեղեցու տոներին<sup>5</sup>:

Սիմեոն Երևանցին բերել է նախորդ կանոնները, բայց հստակեցրել է Խաչի և Եկեղեցու  
տոնական օրերի կարգը: Նա գրում է. «Շաբաթ՝ տօն է սրբոյ եկեղեցոյ՝ ի Նաւակատիս սրբոյ  
խաչին:

Կանօն վերացման սրբոյ խաչին:

Սրբոյ խաչի վերացման կիւրակիէ. ի գիշերի հսկումն է...

Երկուշաբաթ՝ Տօն է եկեղեցոյ...

Երեքշաբաթ՝ Տօն է եկեղեցոյ...

Չորեքշաբաթ՝ Տօն է եկեղեցոյ...

Հինգշաբաթ՝ տօն է եկեղեցոյ...

Ուրբաթ՝ Տօն է խաչի...

շաբաթ՝ Տօն է խաչի ...» (էջ 246-261):

Այս կարգը կատարվում է այժմյան տոնացույցում:

Այսպիսով հետազոտությունները ցույց են տալիս, որ Խաչի գյուտը եղել է 4-րդ դարի  
սկզբներին, ըստ Կյուրեղ Երուսաղեմցու թղթի, որից հետո այն իբրև տոնական օր մտել է Երու-  
սաղեմի տոնացույցի մեջ և նշել են նաւակատեաց եկեղեցու ութօրյա տոնաշարքի երկրորդ օրվա  
կանոնի մեջ, իբրև անշարժ տոն, որը կատարվել է Սեպտեմբեր 14-ին: Հիշյալ տոնացույցում  
դեռևս չի առանձնացվել Սուրբ Խաչի տոնի օրը:

5-րդ դարի 20-ական թվականներին Երուսաղեմի տոնացույցից փոխառնվեց նավակա-  
տեաց եկեղեցու տոնը միայն երկուօրյա կանոններով: Սուրբ Խաչի տոնը հավանաբար վերածվեց  
առանձին տոնական կանոնի 8-րդ դարի 20-ական թվականներին՝ Հովհան Օձնեցու խմբագրած  
«Կանոնք ընթերցուածոց» - «Տոնացոյց ըստ շաբաթուց»-ի մեջ:

10-րդ դարի վերջերից Սուրբ Խաչի տոնը սկսեց անշարժից վերածվեց շարժականի և տոն-  
վեց Սեպտեմբեր 14 ± 3 օր կիրակի, այսինքն Սեպտեմբեր 11-17-ի օրերից մեկում կիրակի նայած  
տարի, իսկ վերջնականապես 11-րդ դարի վերջերից:

11-13-րդ դարերում Սուրբ Խաչի տոնը Հայոց մեջ տոնվեց ութօրյա կանոններով, որպես  
միայն Խաչի տոներ, իսկ 14-րդ դարի սկզբներից՝ թե Խաչի, թե Եկեղեցու: Այս կարգը պահպան-  
վեց հետագայում և փոխանցվեց Սիմեոն Երևանցու «Տօնացոյց»-ին ու հասավ մեր օրերը:

Հնագույն Տոնացույցը սուրբ Խաչից հետո եկող սրբերի տոնական շարքը տվել է հետևյալ  
կերպ՝

«Բշ. Սրբոյն Մամասայ և Փիլիկտիմոնի և Սիմէոնի Սիւնակեցոյ...

Գշ. Փերրոնեա կուսի և Երմոնեա կուսի դստեր Փիլիպոսի առաքելոյ և Նեքտառինեա կու-  
սի...

Եշ. Սրբոց Հայրապետացն Անթիմոսի և Երինոսի

Էշ. Բարելայ Հայրապետի և Հրից մանկանց և յիշատակի Գրիգորի Ակոականդացոյ ե-  
պիսկոսպոսի» (էջ 173ա):

Նույն կարգն է գրանցվում նաև 179 թվահամարի Տոնացույցում:

14-րդ դարի սկզբներից Տոնացույցում խմբագրություն է կատարվում: 752 թվահամարի  
տոնացույցը բերել է հետևյալ կարգը. Ա կիրակիէ...

Բշ. Մամասա և Փիլիկտիմոնի և Սիմէոնի Սիւնակեցո

Գշ. Փերրոնեա կուսին և Մարիանէի

Եշ. Հայրապետացն Անթիմոսի և Երանոսի

1 Տե՛ս Ձեռ. N° N° 979, էջ 367բ-374ա:  
2 Տե՛ս Ձեռ. N° N° 5414, էջ 334բ-346ա, 6235, էջ 73ա, 936, էջ 94ա-97բ, 7741, էջ 391ա-397բ, 939, էջ 443բ-  
459բ, 4437, էջ 182բ- 189բ, 4698, էջ 267ա-267բ և այլն:  
3 Տե՛ս Ձեռ. N° 759, էջ 173ա:  
4 Տե՛ս Ձեռ. N° 752, էջ 171բ-172բ:  
5 Տե՛ս Ձեռ. N° N° 767, էջ 174բ-175բ, 2092, էջ 228ա-բ, 9838, էջ 177ա-178բ, 4164, էջ 200ա-204բ, 8598, էջ  
106բ, 5419, էջ 215ա, 5440, էջ 215բ-217ա, 4459, էջ 95ա-բ, 5436, էջ 187ա, 509, էջ 417բ-418ա և այլն:

Շաբաթ. Աղոթողի և Ռամանոսի երգեցողի և Գեորգա զաւրավարի և յիշատակ Գրիգորի Ակուականդացոյ»:

Երկուշաբթի օրվա կանոնը մնացել է նույնը: Երեքշաբթի օրվա կանոնից հանվել է «Երմոնեա կուսի դատեր Փրիպոսի առաքելոյ և Ներքտառինա կուսի» հիշատակի օրը ու տեղափոխվել Սուրբ Խաչից հաշված երրորդ կիրակիից հետո եկող երեքշաբթի: Հինգշաբթի օրվա կանոնը մնացել է նույնը: «Բաբելա, հայրապետի և երից մանկանց» հիշատակի օրը տեղափոխվել է Փոխման Աստուածածնի կիրակիից հետո եկող հինգշաբթի օրը՝ «երից մանկանց» փոխարեն ունի «երից աշակերտացն» ձևակերպումը: Ասենք նաև, որ հետագա որոշ տոնացույցեր և ճաշոցներ Գրիգոր Ակուականդացու հիշատակի օրը նույնպես տեղափոխել են նույն կանոնի տակ:

Հետագայում ընդօրինակված տոնացույցերն ու ճաշոցները հիմնականում կրկնել են 752 թվահամարի ձաշոցը նույն տեղափոխություններով հանդերձ<sup>1</sup>: Միայն նշենք, որ որոշ տոնացույցեր և ճաշոցներ ունեն ավելացումներ և որոշ փոփոխություններ: Այսպես 5667 թվահամարի Տոնացույցում կարդում ենք. «Երկրորդ կիրակի... եւ ապա պահք Վարագա Խաչին, բայց տաւն լինի»: Միայն «երից աշակերտացը»-ը փոխարինվել է «ՁԴ աշակերտաց»-ով: 7203 թվահամարի Տոնացույցում Շաբաթ օրվա կանոնի տակ տվել է միայն Գեորգ զորավարի հիշատակի օրը: Այդպես է նաև 4514, 7741, 939, 4506 և այլ թվահամարների ճաշոցներում, ինչպես և որոշ տոնացույցերում:

4164 թվահամարի գրչագրում գրված է. «Երկրորդ կիրակի... եւ ապա Պահք Վարագա Սուրբ Խաչին, որ ասի Սուրբ Գէորգայ, բայց տօնք լինի» կամ ըստ 4437 թվահամարի ձաշոցի «Պահք Սրբոյ Գէորգեա եւ տօնք լինի»: Իսկ 4506 թվահամարի ձաշոցը երկրորդ օրվա կանոնի տակ գրել է «Պահք է և տաւն»: Որոշ ճաշոցներ և տոնացույցեր երեքշաբթի օրվա կանոնի տակ ավելացրել են «Բրոնիա» անունը կամ ավելացրել «և ընկերաց իւրեանց» և «ընկերացն» արտահայտություններն ու բառերը: Այլ խոսքով 14-րդ դարի սկզբից հնագույն տոնացույցը խմբագրվեց և Շաբաթ օրը տեղափոխվեց սուրբ Գեորգի հիշատակի օրը, ինչպես կտեսնենք հետագա քննության մեջ նաև Վարագա Խաչի օրը դրվեց դրա հաջորդ կիրակի, որի հետևանքով այդ շաբաթ և պահք էր և տոն ու վերանվանվեց երկու անվամբ «Պահք Վարագա խաչին» և «Պահք սուրբ Գեորգեա», հինգ օր՝ երկուշաբթիից ուրբաթ:

Միմեոն Երևանցին պահպանեց հիշյալ կարգը միայն պահքը համարել է «Վարագայ սրբոյ Խաչին», երեքշաբթի օրվա վրա ավելացրեց նաև «Շուշանայ դատերն մեծին Վարդանայ», իսկ հինգշաբթի օրվա կանոնի մեջ նաև «Բարաղամու»: Վերջապես Շաբաթ օրվա տակ վերականգնեց «Անդակտոսի և Ռոմանոսի երգեցողին» հիշատակի օրերը (էջ 261-264):

Հնագույն Տոնացույցը շարունակել է հետևյալ կարգով.

«Ջկնի Խաչին Երրորդ կիրակէին յարութեան

Բշ. Դաւթի Դընեցւոյ և Յովսեփայ

Գշ. Եւստաթեա և կնոջ նորա և Բ որդւոցն...

Եշ. Սրբոց իշխանացն Սահակայ և Համագասպայ

էշ. Իւթանասուն և Բ առաքելոցն, Յակովբայ եղբաւր Տեառն և Կղէոպեա ազգականին Տեառն և այլոցն» (էջ 173ա-բ):

Այս կարգը պահպանել է նաև 179 թվահամարի գրչագիրը:

14-րդ դարի սկզբներին հիշյալ կարգը խմբագրվեց և ունեցավ հետևյալ տեսքը.

<sup>1</sup> Տե՛ս Ձեռ. N° N° 5667, էջ 138ա, 7203, 9838 էջ 178բ-179ա, 4164, էջ 204բ-205ա, 4874, 5436 էջ 189բ, 4514, էջ 347ա-350բ, 7741, էջ 398բ-402բ, 939, էջ 459բ-464բ, 4437, էջ 190բ, 4506, էջ 359ա-363ա և այլն:

Բ. կիրակի. Վարագա Սուրբ Խաչին...

Բշ. Դաւթի Դվնեցո և սուրբ վկայիցն Դամբէոսի և Դամոսի

Գշ. Եւստաթէի և կնոջ նորա և Բ որդեացն, Երմոնեա և Նեքտառինեա...

Եշ. Իշխանացն Սահակա և Համագասպա

Շաբաթ. ՀԲ առաքելոցն... (էջ 173ա):

Ինչպես նկատելի է Վարագա Խաչի տոնի օրը Փոխման Աստուածածնի հաջորդ կիրակիից տեղափոխել է Սուրբ Խաչի երրորդ կիրակին: Երկուշաբթի օրվա կանոնի տակ ավելացել է Դամբեոս և Դամոսի հիշատակի օրը: Բացակայում է «Յովսեփայ» հիշատակի նշումը, որը հանդիպում է հետագայում ընդօրինակված միայն մեկ գրչագրում (4874): Ասենք նաև որ ճաշոցներում նշված է միայն Դավիթ Դվնեցու հիշատակի օրը: Մյուս տոնացույցերում Դամոսի փոխարեն տալիս են Դամբոսի, Դամբէուհայ Դամիանոսի ձևերով: Երեքշաբթի օրվա տակ ավելացել է. «Երմոնեա և Նեքտառինա» հիշատակի օրը, որի մասին խոսել ենք: Շաբաթ օրվա տակ վկայած «Յակովբայ եղբաւր Տեառն և Կղէոպեա ազգականին Տեառն և այլոց» հետագա բոլոր տոնացույցերում և ճաշոցներում բացակայում է: Այլ խոսքով հիմնականում պահպանվեց 752 թվահամարի Տոնացույցի խմբագրության կարգը<sup>1</sup>:

Միմեոն Երևանցին պահպանեց 14-րդ դարի սկզբներին խմբագրված Տոնացույցի կարգը: Նրա մոտ նույնպես բացակայում է Յովսեփի հիշատակի օրը, որը տոնացույց էր մտել Ներսես Շնորհալու կարգադրությամբ:

759 թվահամարի գրչագիրը հաջորդ կարգը տալիս է հետևյալ հաջորդականությամբ. «Ջկնի Խաչին չորրորդ կիրակէ յարութեան...

Բշ. Փոկասու հայրապետի և Երինիոսի հետևողի առաքելոցն

ԳՇ. Սուրբ կուսանացն Թեկղի և Վառվառեայ...

Եշ. Պանտալեոնի բժշկի և Երմողայ քահանայի...

էշ. Սրբոյն Կալիստրատոսի և Խթ ընկերաց [նորայ]

179 թվահամարի Տոնացույցը հիմնականում կրկնում է վերոհիշյալ շարքը:

Քննարկվող կարգը հիմնականում պահպանվել է 14-րդ դարի սկզբներին և հետագայում ընդօրինակված տոնացույցերում ու ճաշոցներում<sup>2</sup>:

Կատարվել են հետևյալ լրացումները:

14-րդ դարի սկզբներից սկսած ճաշոցները Երեքշաբթի օրվա կանոնի տակ ավելացրել են «մեծ վկային Դեմետրիանոսի», «Դեմետրիա վկայի, որ ի Թեսաղոնիկէ կատարեցաւ», «մեծ վկային Քրիստոսի Դեմետրիանոս» և այլ ձևակերպումներով:

14-րդ դարի սկզբներից սկսած Տոնացույցերը Հինգշաբթի օրվա կանոնում ավելացրել են «Եպրաքսա կուսի» հիշատակի օրը: Իսկ շաբաթ օրվա կանոնի տակ դրել են «Ղուենկիանոս քահանայի» հիշատակի օրը:

Ի դեպ Ղուենկիանոսի հիշատակի օրը չունի միայն 4514 թվահամարի ձաշոցը:

<sup>1</sup> Տե՛ս Ձեռ. N° N° 5667 էջ 138ա-բ, 7203, 9838, 4878, 5419, էջ 218ա, 5444, էջ 217ա, 4459, 5436, էջ 188բ, 4514, էջ 351ա-354բ, 6235, էջ 75բ-80ա, 936, էջ 98բ-100ա, 7741, էջ 402բ-407բ, 939, էջ 465բ-470բ, 4437, էջ 194բ-196բ, 4506, էջ 363ա-367ա և այլն:

<sup>2</sup> Տե՛ս Ձեռ. N°N° 752, էջ 173ա-բ, 5667, էջ 138բ, 7203, 9838 էջ 179ա, 4164, էջ 206ա-բ, 4874, 5436, էջ 188բ-189ա, 4514, էջ 355բ, 7741, էջ 408ա-413ա, 939, էջ 471ա-476բ, 4437, էջ 213բ-215բ, 4506, էջ 391բ-395ա, 4698, էջ 283ա-285բ և այլն:



Ասեմք որ Հնագույն տոնացույցը չունի միայն Եպրաքսեայի անվան հիշատակութիւնը, իսկ Ղուենկիանոսի հիշատակի օրը դրված է Սուրբ Խաչից հաշված 6-րդ կիրակիից հետո եկող երկուշաբթիի կանոնի տակ, իսկ Դեմետրիայի հիշատակի օրը Սուրբ Խաչից հաշված 7-րդ կիրակիից հետո եկող երկուշաբթի: Այսպիսի տեղափոխութիւններ են կատարվել տոնացույցերում և ճաշոցներում:

Միմեոն Երեւանցին պահպանել է մի քանի կանոններ միայն, երեքշաբթի օրվա մեջ ավելացրել է «Պեղեգա» անունը, որը Հնագույն տոնացույցում դրված է Սուրբ Խաչից հաշված 6-րդ կիրակիից հետո երկուշաբթի օրվա տակ: Նա փոխել է Շաբաթ օրվա կանոնը և «Կալիստրատոսի և Խթ վկայիցն և Ղուենկիանոսի քահանայի» հիշատակի օրերը տեղափոխել է Հոգեգալուստից հաշված 6-րդ կիրակիից հետո եկող երկուշաբթի օրը, իսկ այստեղից տեղափոխել է «Սրբոց թարգմանչաց վարդապետացն մերոյ...»-ը, որի մասին խոսել ենք վերևում: Միմեոն Երեւանցու ձեռքի տակ եղել է նաև 14-րդ դարից հետո խմբագրված տոնացույցի օրինակներ:

Սուրբ Խաչից հաշված հինգերորդ կիրակիից հետո եկող տոնական շաբթը 759 թվահամարի Տոնացույցը ներկայացրել է այսպես. «Զկնի Խաչին հինգերորդ կիրակէ...»

Բշ. Գիւտ նշխարաց սրբոյն Գրիգորիսի Աղուանից կաթողիկոսի և սուրբ հաւրն Թաթլոյ և Վարոսի և Թումայի և Անտոնի և Կրանիդեա և Լթն խոտաճարակացն, որք կատարեցան յիննականեան վանսն:

Գշ. Անանիայի առաքելոյ Դամասկացոյ և երկոտասան վարդապետացն և սուրբ առաքելոցն Մատթիայի և Բառնաբայ և Փիլիպոսի որ յԵթանցն և Շիղայի և Սիղուիանոսի գործակցացն Պաւղոսի առաքելոյ

Եշ. Դիոնէսիոսի և այլոց աշակերտաց Պաւղոսի առաքելոյ...

Էշ. Սրբոց աւետարանչացն Մատթոսի, Մարկոսի և Ղուկասու... (էջ 173բ-174ա): Այսպես է ձևակերպել նաև 179 զրչագիրը, միայն հինգշաբթի օրվա տակ տվել է նաև Տիմոթեոսի անունը:

Ի տարբերութիւն տոնացույցերի, որոնք ինչպես կտեսնենք, Խաչգիւտի տոնը դրել են Սուրբ Խաչից հաշված 7-րդ կիրակի, ճաշոցներում այն սահմանված է 5-րդ կիրակի:

4874 թվահամարի Տոնացույցում Խաչգիւտի տոնը դրել է Սուրբ Խաչից հաշված 6-րդ (իմացիր 7-րդ) կիրակի, միաժամանակ 4-րդ (իմացիր 5-րդ) կիրակիի տակ բացատրել է. «... Ոմանք յայս կիրակիս գիւտ Խաչին տօնեն ի հետ տարէն զրոցն, և ոմանք այլ: Զոր կամիս արա և Մարերի ամսոյ ի ժ տաւնե» (էջ 196բ):

4514 թվահամարի զրչագրում գրված է. «Մարերի ժ. Գիւտ Սուրբ Խաչին», իսկ ստորին լուսանցքում՝ «Հինգերորդ կիրակէն Գիւտ Սրբոյ Խաչին» (էջ 360ա-364ա):

7741 թվահամարի Ճաշոցի ընդօրինակութեան մեջ կարդում ենք. «[Հինգերորդ] կիրակ է Գիւտ Խաչին, որ յերուսաղէմ», իսկ ստորին լուսանցքում տալիս է ամսաթվով և բացատրել. «Մարերի ժ. Խաչգիւտ է: Այս տեղս խառն է տարոն շրջանն. (ա)ռաջ կու բերէ: Դու յանսխալ յամսոյ... կիրակէ տաւնէ» (էջ 413ա-417բ):

Տարբեր ձևակերպումներով նույն միտքն են հայտնում նաև այլ ճաշոցներ:

Ասեմք նաև, որ որոշ տոնացույցերը հինգերորդ կիրակիի փոխարեն գրել են չորրորդ կիրակի, որը սխալ է, այլ հաշվման ձև է, ինչպես բացատրեցինք այլ առիթներով:

Հետագայում խմբագրված տոնացույցերը պահել են երկուշաբթի օրվա կանոնը<sup>2</sup>:

Միայն ունեն որոշ հավելումներ: Այսպես 752 թվահամարի զրչագիրը տալով կանոնը վերջում Իննականեան վանքի կապակցութեամբ գրել է. «որ յանուն սուրբ Կարապետին շինեցաւ»: իսկ 4164 թվահամարի և այլ զրչագրում թվարկել են 7 խոտաճարակների անունները:

Որոշ ճաշոցներ խմբագրութեան են ենթարկվել և երկուշաբթի օրվա կանոնը բաժանել են երկու մասի և տվել երկուշաբթի և երեքշաբթի օրվա կանոնների տակ: Այսպես 4514, 939 և 4698 զրչագրերն երկուշաբթի օրվա կանոնի տակ տվել են գիւտ նշխարաց Գրիգորի (Գրիգորիսի) Աղվանից կաթողիկոսի և սուրբ Հօրն Թաթլոյ (Թաթուլ) հիշատակի օրը ամիս ամսաթվային նշումով, իսկ Վարոսի, Թումասի, Անտոնի և Կրոնիդի և 7 խոտաճարակների հիշատակի օրը տեղափոխել են երեքշաբթի նույնպես կատարելով ամսաթվային նշումներ:

Երեքշաբթի օրվա կարգը պահպանել են հետագա տոնացույցերի ընդօրինակութիւնները, բայց Մաղաթիայից ու Բառնաբայից հետո եկող սրբերի անունները հանվել են կանոնից: Որոշ տոնացույցեր ավելացրել են 12 վարդապետների անունները:

Հետագա տոնացույցերը պահպանել են հինգշաբթի օրվա կարգը, միայն ավելացրել են Տիմոթեոսի և Տիտոսի անունները, իսկ 7741 թվահամարի ճաշոցում կա նաև «Նեսիմա» անունը: 4514, 939 և 4698 թվահամարների ճաշոցների ընդօրինակութիւնների մեջ Անանիա Դամասկացու և 12 վարդապետների հիշատակի օրը տեղափոխել են հինգշաբթի օրը և ունեն ամսաթվային նշում: իսկ 4506 թվահամարի ճաշոցում այն տեղափոխվել է շաբաթ օրը:

Տոնացույցերը շաբաթ օրվա կանոնը պահպանել են: Միայն որոշ տոնացույցեր ավելացրել են Յովհաննես ավետարանչի, Լուսկիանոս քահանայի և Պեղեգի կույսի հիշատակի օրերը: իսկ 752 և այլ տոնացույցեր՝ «և սուրբ վկայիցն Տարագրոսի Պրոբոսի և Անդրանիկոսի»: Վերջապես 4164, 4874 և 5436 թվահամարների տոնացույցերը շաբաթ օրվա կանոնի տակ տվել են նոր վկաների անուններ: Այսպես, 4164 թվահամարների զրչագրերում գրված է. «Դարձեալ նոր նահատակացն Սուրբ Յովանես հայրապետին և Սարգիս եպիսկոպոսի և Դաւթայ կրօնաւորի, որ նըւիրակ առիցն յէջմիածնա և նահատակուեցան ի Կոստանդնուպօլիս զլիստամամբ սրոյ, թվին հայոց ԶԾԷ (957) (= 1507/8)» (էջ 207բ):

Ճաշոցներում այդ շաբաթվա պատկերն այսպիսին են: 4514 թվահամարի ճաշոցի բնագրի մեջ գրված է. «Սէպ[տեմբեր] ժ. Սուրբ առաքելոցն» (ստորին լուսանցքում՝ «Շաբաթ աւր. Մատթեոս եւ Բառնաբա եւ Փիլիպոսի, որ յԷ (70-իցն) եւ Շիղայի եւ Սիւղիանոսի եւ Տիմոթէի եւ Տիտոսի»: Այդպես է նաև 939 և 4506 թվահամարի զրչագրերում: 7741 թվահամարի ճաշոցում բնագրի մեջ շաբաթ օրվա կանոնի տակ տվել է «Լուսկիանոս քահանայի» հիշատակի օրը, միաժամանակ ներքին լուսանցքում ունի հետևյալ բացատրութիւնը. «Շաբ[աթ]. Լուսկիանոս քահանայի: Եւ ոմանք Մատթեա և Բառնաբայ առաքելոցն տաւնեն այս շաբ[աթ]»: Այսպիսով եթե տոնացույցերը հիմնականում պահպանել են նախորդ կարգը ավելացնելով կամ պակասեցնելով որոշ սրբերի հիշատակի օրեր, ապա ճաշոցները խմբագրել են այդ շաբաթվա տոնական կարգը և կանոնները տեղափոխել տարբեր օրեր՝ նույն շաբաթվա սահմաններում: Միմեոն Երեւանցին պահպանել է տոնացույցերի կարգը որոշ խմբագրութեամբ, այն է՝ «Հինգերորդ կիրակէ զկնի սրբոյ Խաչին»

Երկուշաբաթ՝ գիւտ նշխարաց սրբոյն Գրիգորիսի Աղուանից կաթողիկոսի և սրբոց հարցն Թաթլոյ՝ Վարոսի և Թումասու, Անտոնի և Կրոնիդայ և է խոտաճատակացն, որ ի յիննականայ վանսն վկայեցին

Երեքշաբաթ՝ Սրբոց Առաքելոցն Անանիայի, Մատթէի, Բառնաբայ, Փիլիպոսի, Յոհաննու, Շիղայի և Սիւղիանոսի

Հինգշաբաթ՝ Սրբոյն Դիոնէսիոսի արիսպագացոյն և սրբոց Առաքելոցն Տիմոթէոսի և Տիտոսի

1 Տե՛ս Ձեռ. N°N° 939, էջ 477բ-482ա, 4437, էջ 218ա, 4506, էջ 369ա-370ա, 4698, էջ 286ա-288ա և այլն:  
2 Տե՛ս Ձեռ. N°N° 752, էջ 173բ, 5667, էջ 139ա-բ, 7203, 9838, էջ 179բ, 4164, էջ 206բ-207բ, 4874, 4459, 5436, էջ 189բ և այլն:



Շաբաթ. տօն է սրբոց Աւետարանաչացն Մատթէոսի, Մարկոսի, Ղուկասու և Յոհանու» (էջ 271-274): Միմեոն Երեւանցին փաստորեն հնագույն Տոնացույցի կանոններն է վերականգնել, միայն հանել է երեքշաբթի օրվա կանոնի տակ տված «երկոտասան վարդապետացն» և տարել 6-րդ կիրակիից հետո եկող շաբաթ օրը: Նա այդտեղ ավելացրել է «Յոհաննու» անունը: Հետագա խմբագրութուններից վերցրել է Հինգշաբթի օրվա կարգի տակ թվարկված անունները, իսկ Շաբաթ օրվա համար՝ «Յոհաննու» անունը:

Միմեոն Երեւանցին, ինչպես տեսանք, Պեղեգեայ կոյսի հիշատակի օրը տեղափոխել է Սուրբ Խաչից հաշված 4-րդ կիրակիից հետո եկող երեքշաբթի օրվա կանոնի տակ:

Հնագույն Տոնացույցը հետագա շաբաթվա համար բերել է հետևյալ կարգը.

«Զկնի Խաչին վեցերորդ կիրակէի...

Բշ. Ղուկկիանոսի քահանայի Անտիոքացւոյ և Պեղեգեայ կուսի և սրբոց վկայիցն, որ ի Պարսս կատարեցան...

Գշ. Ղուկկիանոսի Հարիւրապետի և Յովսեփայ Արիմաթացւոյ և Յովսեփայ Աստուածա-հաւրն և կանացն իւղաբերից...

Եշ. Թեոդորիտոսի քահանայի Անտիոքացւոյ և սրբոցն Եւդոքսիա, Ռոմելի, Զենոնի և Մա-կարա...

Էշ. Սրբոց խարիթանց ժնի և Մ վկայիցն...

179 թվահամարի գրչագիրը պահպանել է նույն շաբթու միայն «սրբոց վկայիցն, որ ի պարսս կատարեցան»-ը տեղափոխել է Բուն Բարեկենդանի երրորդ շաբաթվա կանոնի տակ: Դրա փոխարեն ավելացրել է «Սրբոց վկայիցն՝ Տարագրոսի, Պրոբոսի և Անդրոնիկոսի», որը հնագույն տոնացույցում, ինչպես կտեսնենք, կանոնված է Յիսնակամտից հաշված չորրորդ կիրակից հետո եկող երեքշաբթի: Վերոհիշյալ սրբերի հիշատակի օրը 752 թվահամարի և այլ տոնացույցերում, ինչպես տեսանք տեղափոխվել է նախորդ այսինքն 6-րդ կիրակիից առաջ ընկնող շաբաթ օրվա կանոնի տակ:

14-րդ դարի սկզբներից տոնացույցերում ու ճաշոցներում կատարվում է խմբագրութուններ:

Հնագույն տոնացույցում երկուշաբթի օրը կանոնած Ղուկկիանոս քահանայի, Պեղեգեայ կուսի, ինչպես և հետագայում նույն կանոնի տակ ավելացրած Տարագրոսի, Պրոբոսի և Անդրոնիկոսի հիշատակի օրերը տեղափոխվում և ավելացրած են նախորդ շաբաթ օրվա կանոնին: Հնագույն Տոնացույցի երեքշաբթի օրվա կանոնը տեղափոխել են երկուշաբթի, հինգշաբթիներ՝ երեքշաբթի, շաբաթիներ՝ հինգշաբթի, իսկ շաբաթ օրվա կանոնի տակ դրվել է «Դեմետրեայ վկայի, որ Թեսաղոնիկէ կատարեցաւ և Բասիլիսկոսի քահանայի, որ յԱմասիա կատարեցաւ» հիշատակի օրերը, որը հնագույն տոնացույցում հաջորդ երկուշաբթի կանոնի տակ է: Միաժամանակ հինգշաբթիի վրա ավելացրել են Արտեմա վկայի հիշատակի օրը, որը չունի 7741 թվահամարի ճաշոցը, իսկ 939 թվահամարի ճաշոցում 15-րդ դարի 40-ական թ. երկուշաբթի օրվա կանոնի տակ ավելացվել է «Ղազարու եւ քերց նց (ուղղել՝ նորա)»: Այլ խոսքով 14-րդ դարից հետո ունենում ենք հետևյալ կարգը.

Վեցերորդ կիրակի

Բշ. Ղուկկիանոս Հարյուրապետի և Հովսեփի Արիմաթացու և Հովսեփի Աստուածաձօրն կանաց յուղաբերից (և Ղազարի և նրա քույրերի)

Գշ. Թեոդորոս քահանայի և Եւդոքսիոսի, Ռոմելի, Զենոնի, Մակարի

Եշ. Խարիթեանց 1200 վկայիցն և Արտեմի

Էշ. Դեմետրի վկայի և Բասիլիսկոս քահանայի<sup>1</sup>:

Միմեոն Երեւանցին հիմնականում պահել է 14-րդ դարից հետո խմբագրված տոնացույցերի շաբթու.

Վեցերորդ կիրակէ գկնի Սրբոյ Խաչին

Երկուշաբաթ. Սրբոցն Ղուկկիանոսի Հարիւրապետին որ հաւատաց ի խաչելութիւնն Քրիստոսի և Յովսեփայ Աստուածաձօրն և Յովսեփայ Արեմաթացւոյ և բարեկամին Քրիստոսի Ղազարու և քերցն նորա Մարթայի և Մարիամու:

Երեքշաբաթ՝ սրբոցն Թէոդորիտոսի քահանային և Զենոնի զինաւորին և Մակարայ, Եւդոքսիայ և Ռոմելայ:

Հինգշաբաթ՝ Սրբոց խարիթեանցն և Սրբոց վկայից Արտեմայ և Քրիստափորի և երկուց կանանցն Կաղինիկեայ և Ակիլիինեայ

Շաբաթ՝ Տօն է սրբոց երկոտասանից վարդապետացն Ռեթէոսի, Դիոնէսիոսի, Սեղբեստրոսի, Աթանասի, Կիւրղի Երուսաղէմացւոյն, Եփրեմի խորին Ասորւոյ, Բարսղի Կեսարացւոյն, Գրիգորի Նիւսացւոյն, Գրիգորի Աստուածաբանի, Եպիփանու Կիպրացւոյն, Յօհաննու Ոսկեբերանի և Կիւրղի Աղեքսանդրացւոյն (էջ 274 - 278):

Ինչպես նկատելի է երկուշաբթի օրվա կանոնը ամփոփում է նախորդ տոնացույցերի տվյալները: Երեքշաբթի օրվա կանոնը մնացել է նույնը: Հինգշաբաթի օրվա կանոնի տակ տեղափոխել և ավելացրել է «Քրիստափորի և երկուց կանանցն Կաղինիկեայ և Ակիլիինեայ» հիշատակի օրերը: Նաև շաբաթ օրվա կանոնը ստեղծել է նախորդ շաբաթվա երեքշաբաթի օրվա կանոնից առանձնացնելով «երկոտասան վարդապետացն»: Այն հիշեցնում է նաև հնագույն կանոնների մեջ եղած Բուն Բարեկենդանից առաջ ընկնող շաբաթ օրվա կանոնը, որտեղ նույնպես հիշյալ հեղինակներից շատերը կան: Փաստորեն հիշյալ վարդապետները բացի անհատական հիշատակի օրերից ունեցել են երկրորդ հիշատակի օրը ընդհանրացած ձևով:

759 թվահամարի Տոնացույցը տալիս է Սուրբ Խաչից հաշված 7-րդ կիրակին և նրան հետևող շաբաթի հետևյալ կարգը. «գկնի Խաչին Էերրորդ կիրարէ Խաչգիւտ է և կամ ուր ամիսն բերէ, Մարերի ժէ:

Բշ. Սրբոյն Դեմետրեայ, որ Թեսաղոնիկէն և Բասիլի քահանայի յԱմասիա...

Գշ. Սրբոցն Վարոսի և Անաստասայ. վարք և ճգնութիւն և կատարումն և սրբոյն Թեոդորիտեայ և որդւոց նորա և որք ընդ նմա...

Եշ. Սրբոց Հիպերիքեանց և Սևերիանոսի Սեբաստացւոյ և Բաբիղայ Հայրապետի և ԶԳ աշակերտացն նորա...

Էշ. Բարդամու Անտիոքացւոյ և սրբոց մանկանց Եփեսոսի, որ ի Յողթա լեառն՝ Մաքսիմիանոսի, Տատիանոսի, Դիմոնեսիոսի, Ամղիքոսի, Մարտիանոսի, Յովհաննու և Հեսիքիանոսի... (էջ 174բ-175ա):

Նույն կարգն է տալիս 179 գրչագիրը (էջ 539բ), աննշան խմբագրումներով:

Ճաշոցներն, ինչպես տեսանք, Խաչգիւտի տօնի օրը դրել էին, հինգերորդ կիրակիին, իսկ տոնացույցերը 7-րդ կիրակի:

14-րդ դարի սկզբներից սկսած տոնացույցերի և ճաշոցների մեջ կատարվում են հետևյալ փոփոխութունները: Հնագույն տոնացույցերի երկուշաբթիի կանոնը տեղափոխվել է նախորդ շաբաթ օրը, երեքշաբթիիներ՝ երկուշաբթի, Հինգշաբթիի կանոնը բաժանել են երկու մասի Հիպե-

<sup>1</sup> Տե՛ս Ձեռ. N°N° 752, էջ 174ա, 5667, էջ 139բ, 7203, 9838, էջ 179բ-180ա, 4164, էջ 207ա-208ա, 4874, 4459, 5436, էջ 190ա, 4514, էջ 364բ-367ա, 7741, էջ 418ա-423ա, 939, էջ 483ա-487բ 4107, էջ 786, 792 և այլն:

րիքեանց հիշատակի օրը տեղափոխել են երեքշաբթի օրվա կանոնի տակ, իսկ «Աւերեանոսի Ան-  
բաստացու և Բարեղա Հայրապետի և ԶԴ աշակերտացն նորա» թողել են հինգշաբթի օրվա կա-  
նոնի տակ: Շաբաթ օրվա կանոնը թողել են նույնը<sup>1</sup>: 16-րդ դարի 4164 և 4874 թվահամարների  
Տոնացուլցերը հինգշաբթի օրվա կանոնի տակ ավելացրել են «Արբոյն Յոհաննու (Յոհանիսի)  
նոր Մարտիրոսին»:

Միմեոն Երևանցին կրկնել է 14-րդ դարից հետո ընդունված կարգը որոշ խմբագրու-  
թյամբ, այն է՝

Եօթներորդ կիւրակէ, իսաչ գիւտ է

Երկուշաբաթ՝ սրբոցն Անաստասայ քահանայի և Վարոսի և Թեոդորիտեայ և որդւոց նորա  
և որք ընդ նմա կատարեցան

Երեքշաբաթ՝ սրբոց Հիպիրիքեանցն, որք ի Սամուսատ կատարեցան

Հինգշաբաթ՝ սրբոցն Աւետիանոսի Սեբաստացւոյն և Բաբելաց ծերոյն և ԶԴ աշակերտաց  
նորին

Շաբաթ՝ սրբոյն Յոհաննու Ոսկեբերան Հայրապետին (էջ 278-281):

Ինչպես նկատելի է միայն շաբաթ օրվա կանոնն է փոխել: Այդ կանոնում նախատեսված  
Բարդամու Անտիոքացու հիշատակի օրը բացակայում է նրա տոնացուլցում, իսկ Մանկանց Ե-  
փեսոսի հիշատակի օրը թողել է միայն Հունվար 13-ից հետո և Առաջավորաց Բարեկենդանի  
միջև տոնվող օրը:

Միմեոն Երևանցին երկուշաբթի օրվա կանոնից հետո տալիս է հետևյալ բացատրություն-  
ներ. «Յորժամ ութն շաբաթ լինիցի ուտիք միջոցիս, ընդ կարգին որպես եղեալ են տօն այս շա-  
բաթուս՝ այսպէս տօնեցես: Իսկ եթէ եօթն շաբաթ լինիցի զԱւետիանուն ընդ Հիպիրիքեանցն  
տօնեցես և ի Ե շաբաթի օրն զՅօհան Ոսկեբերանն և ի շաբաթի օրն գտօն ամենայն սրբոցն  
տօնեցես անպատճառ, որպէս ցուցանէ քեզ և տարեգիրն» (էջ 279): Ունենում ենք հիշյալ շա-  
բաթվա հետևյալ կարգը.

Երկուշաբթի՝ սրբոցն Անաստասայ քահանայի և Վարոսի և Թեոդորիտեայ, և որդւոց նորա  
և որք ընդ նմա կատարեցան

Երեքշաբթին՝ Սրբոց Հիպիրիքեանցն, որք ի Սամուսատ կատարեցան և Բաբելա ծերոյն և  
ԶԴ աշակերտաց նորին

Հինգշաբթի՝ սրբոյն Յոհաննու Ոսկեբերան Հայրապետին

Շաբաթ օրն գտօն ամենայն սրբոցն տօնեցես անպատճառ կամ

Շաբաթ՝ տօն է ամենայն սրբոց Հնոց և նորոց, յայտից եւ անյայտից:

Բանն այն է, որ ինչպես Հնագույն տոնացուլցերում, այնպես էլ Միմեոն Երևանցու կազ-  
մած Տոնացուլցում մեկ շաբաթ նախատեսված է տոնել սուրբ իսաչի և եկեղեցու տոնը, իսկ ութ  
շաբաթ սրբերի հիշատակի տոներ, որի առաջին շաբաթվա մեջ տոնել են սրբերի տոներ, բայց  
Վարագա պահքն է, ուստի ուտիք օրերը հաշվել է Վարագա իսաչի տոնից հետո յոթ շաբաթ,  
երբ նայում ենք տարեգրին, այսինքն Զատիկի տոների 35 օրերին, որտեղ 25 օրերին առկա է 9 -  
շաբաթվա տոնելի օրեր, իսկ 10 օրերին՝ 10 շաբաթվա, երբ սուրբ իսաչը կատարել են Սեպտեմ-  
բերի 11 և 12-ին իսկ Յիսնակամուտն ընկել է նոյեմբերի 20 և 21-ին: Դրա հետևանքով մեկ  
շաբաթ ավելացրել է և կատարել են այլ սրբերի հիշատակի օրերը: Այլ խոսքով, Միմեոն Երե-

<sup>1</sup> Տե՛ս Ձեռ. N°N° 752, էջ 174ա-բ, 5667, էջ 140ա-բ, 7203, 9838, էջ 180ա, 2031, էջ 116ա, 4164, էջ 208ա-բ,  
4874, 5436, էջ 190ա, 4514, էջ 367ա-371ա, 7741, էջ 423ա-427բ, 939, էջ 488ա-493ա, 4698, էջ 293ա-297բ և  
այլն:

վանցու բացատրությունը ուտիք օրերի հետ կապվում է Վարագա իսաչից՝ հետո եկող տոնի հետ,  
որի հետևանքով ուտիք օրերը հաշվում է 7 և 8 շաբաթ: Տարեգրերից երևում է, որ Միմեոն Եր-  
ևանցին իսաչուլցից հետո եկող տոնելի շարքը տվել է երեք տարբերակով, այն է՝

1. Բ, Ե, Թ, Լ, Զ, Ծ, Ծ, Պ, Վ, և Ց տարեգրերի դեպքում ինչպես տոնացուլցի կարգն է.

Բչ. Անաստասայ քահանայի...

Գչ. Հիպիրիքեանց

Եչ. Աւետիանոսի...

էչ. Յոհ. Ոսկեբերանի

2. Ա, Գ, Դ, Ը, Թ, Ի, Կ, Զ, Ղ, Ն, Ո, Զ, Ս, Ը և Բ տարեգրերի դեպքում՝

Բչ. Անաստասայ քահանայի...

Գչ. Հիպիրիքեանց և Աւետիանոսի...

Եչ. Հոհ Ոսկեբերանի

էչ. Ամենայն սրբոց Հնոց և նորաց

3. Զ, է, ի, Ծ, Մ, Յ, Զ, Թ, Ի և Փ տարեգրերի դեպքում Յիսնակամուտից առաջ ընկնող շա-  
բաթվա մեջ դրել է «Աւելորդաց» տոները, իսկ շաբաթ օրը՝ Ամենայն սրբոց Հնոց և նորոց:

759 թվահամարի գրչագիրը ներկայացրել է հերթական տոնական շարքը հետևյալ կերպ.  
«Զկնի իսաչին ութ կիրակէին յարութեան

Բչ. Ստեփանոսի Հոռովմայ Հայրապետի և քահանայիցն և սարկավագացն և ժողովրդոցն,  
որ ընդ նմա (կատարեցան):

Գչ. Ակիփսիմայ եպիսկոպոսի և Յովսեփայ քահանայի և Այիաթալայ սակաւագի...

Եչ. Սրբոց Հայրապետացն Կոստանդնուպոլսի Մետրոփանոսի, Աղեքսանդրի և Պաղոսի  
խոստովանողի և սրբոց դպրացն Մարկիանոսի և Մարտիրոսի

էչ. Սրբոց հրեշտակապետացն Գաբրիէլի և Միքայէլի և ամենայն երկնային զաւրացն,  
նոյեմբեր Ը » (էջ 175ա-բ):

Նույն կարգն է տալիս 179 գրչագիրը (էջ 539բ-540ա):

14-րդ դարի սկզբներից հետո եկող տոնացուլցերի և ճաշոցների ընդօրինակությունների  
մեջ պահպանվել են նույն կանոնները<sup>1</sup>: Միայն տոնացուլցերը երեքշաբթի օրվա կանոնի տակ  
ավելացրել են Պղատոնի վկայի հիշատակի նշումը, որը, ճաշոցները ընդօրինակությունների  
մեջ, բացակայում է: Դրան հակառակ 4514 թվահամարի ճաշոցում երեքշաբթի օրվա տակ ա-  
վելացվել է «Ղուկասի քահանայի» հիշատակի օրը, որը բացակայում է թե՛ Տոնացուլցերում, թե՛  
մյուս ճաշոցներում:

Այս շաբաթվա մեջ 4874 և 5436 թվահամարների գրչագրերն ավելացրել են. «Յայսմ  
վայրի նոյեմբերի ամսոյ ի մինն տօն է ամենայն սրբոց երկնաւորաց և երկրաւորաց և դու կա-  
տարեա ի փառս Աստուծոյ»: Պարզ է, որ հիշյալ տոնական օրվա համար սահմանել են անշարժ  
կարգ. այն է՝ նոյեմբերի 1-ը, որը ինչպես նախորդ, այնպես էլ հետագա տոնացուլցերում բա-  
ցակայում է: Միմեոն Երևանցին պահպանել է 14-րդ դարից հետո եկող տոնացուլցերի կարգը  
և այդ կանոններով սրբերի հիշատակն են տոնում մինչև այժմ: Ասենք նաև, որ Պղատոնի վկա-

<sup>1</sup> Տե՛ս Ձեռ. N°N° 752, էջ 174բ, 5667, էջ 140բ-141ա, 9838, էջ 180բ, 4164, էջ 208բ-209ա, 4874, 5440, էջ 219ա,  
4459, էջ 98ա, 5436, էջ 191ա, 4514, էջ 371բ-375բ, 7741, էջ 428ա-423բ, 4107, էջ 807-813, 939, էջ 495ա-  
499բ, 4698, էջ 296բ-298բ և այլն:

յի հիշատակի օրը, ինչպես կտեսնենք քիչ հետո, դրված է հաջորդ շաբաթվա հինգշաբթի օրվա կանոնի տակ, որը փաստորեն տեղափոխվեց նախորդ շաբաթվա երեքշաբթի օրվա կանոնի տակ:

759 թվաճամարի Տոնացույցը Սուրբ Խաչից հաշված 9-րդ կիրակիից հետո տոնվող սրբերի շարքը ներկայացրել է հետևյալ կանոնների տակ. «Զկնի Խաչին Իններորդ կիրակէին յարու- թեան»

Բշ. Մելիտոսի Անտիոքու հայրապետի և Մինասայ Եգիպտացւոյ և Մելի եպիսկոպոսի և Եբերեայ քահանայի և Վլենոյ սարկաւագի...

Գշ. Սրբոյն Յոհաննու Ոսկեբերանի...

Եշ. Գուրիասայ, Սամուէլասայ, և Աբիբայ սարկաւագի և Ռոմանոսի միայնակեցի և ման- կանն խոստովանողի և Հիւսիքոսի զինուորի և Պղատոնի...

Էշ. Փիլիպոսի առաքելոյ... (էջ 175բ):

Նույն կարգն է տվել նաև 179 թվաճամարի գրչագիրը:

752 թվաճամարի Տոնացույցի խմբագրությունը հիշյալ կիրակի անհասկանալի կերպով ու- րակել է որպես «Ա կիրակի», մնացած տոնացույցերն ու ճաշոցները 9-րդ կիրակի: Իսկ 4874 թվաճամարի գրչագիրն՝ 8-րդ կիրակի = (9-րդ կիրակի): Երկուշաբթի օրվա կանոնի մեջ Մելի եպիսկոպոսի փոխարեն ունի «Միւս այլ Մելիտոսի» ձևակերպումը, որը տալիս են նաև հետագա տոնացույցերն ու ճաշոցները: Բացի այդ 752 թվաճամարի Տոնացույցը երկուշաբթի օրվա տակ ավելացրել է Շինու սարկաւագի հիշատակի օրը: Որոշ ճաշոցներ «Եբերեայ» անվան փոխարեն ունեն «Եբրուա», իսկ Սիմեոն Երևանցին «Բուրա» ձևերը:

Երեքշաբթի օրվա կանոնի մեջ հետագայի տոնացույցերի ընդօրինակությունները փոփո- խություններ չունեն, իսկ որոշ ճաշոցների մեջ բացի ամսաթվային նշումից ավելացվել է Պաւ- ղոսի անունը (4514, 939), իսկ 4107 թվաճամարի գրչագիրն՝ «Յոհաննու Ողորմածին»: Ահա այն փոփոխությունները, որոնք կատարվել են տոնացույցերում և ճաշոցներում, իսկ մնացած կանոններում նախորդների հետ համարժեք են, իհարկե, որոշ փոփոխություններով ձևակեր- պումների մեջ<sup>1</sup>:

Սիմեոն Երևանցին պահպանել է 14-րդ դարի սկզբներից եկող տոնացույցերի կարգը որոշ փոփոխություններով, այն է՝

Իններորդ կիրակէ գկնի Սուրբ Խաչին

Երկուշաբթ՝ Սրբոցն Մելիտոսի Անտիոքայ հայրապետին և Մինասայ Եգիպտացւոյն և - միւս Մելիտոսի եպիսկոպոսի, Բուրայ քահանային և Շինու սարկաւագի

Երեքշաբթ. Սրբոցն Դեմետրեայ վկային և Բասիլիսկոսի քահանային

Հինգշաբթ՝ Սրբոցն Գուրիասայ, Սամուէլասայ, և Աբիբայ սարկաւագին, Ռոմանոսի միայնակեցին, Մանկանն խոստովանողի և Հիւսիքոսի զինուորին

Շաբաթ՝ Սրբոց Առաքելոցն Անդրէի և Փիլիպոսի

Սիմեոն Երևանցին նախորդ տոնացույցերի Սուրբ Խաչի 7-րդ կիրակիից հետո եկող երկու- շաբթի օրվա կանոնը տեղափոխել է 9-րդ կիրակիից հետո եկող երեքշաբթի օրվա կանոնի տակ, իսկ Յովհաննու Ոսկեբերանի հիշատակի օրը 7-րդ կիրակիից հետո եկող շաբաթ օրը կամ հինգշաբթի: Հինգշաբթի օրվա կանոնից հանել է Պղատոնի հիշատակի օրը և տեղափոխել Սուրբ Խաչից հաշված ութերորդ կիրակիից հետո եկող երեքշաբթի: Շաբաթ օրվա կանոնի տակ

ավելացրել է Անդրէի առաքյալի հիշատակի օրը նախորդ տոնացույցերում դրված է Յիսնակամ- տից հաշված 2-րդ կիրակիից հետո եկող շաբաթ օրը: Ասենք, որ հիշյալ շաբաթից հետո՝ պար- բերաբար տոնվող Զատիկի 35 օրերից 10-ում, ինչպես նշեցին վերևում, մեկ շաբաթ ավելանում է մինչև Յիսնակամտի կիրակին, որի պատճառով որոշ տոնացույցեր տալիս են բացատրու- թյուններ:

7203 թվաճամարի գրչագրում գրված է. «Իսկ եթէ Ը շաբաթ ուտի, յայս միջոցս և աւելի կիրակի հանդիպի: Դու հարցն մի այլ ասա ԴԿ փառաւորեալ, որ անպատճառ Յիսնակաց Բարե- կենդանին հարցն ԱԶ ասես» (էջ 92ա): Սրանից երևում է, որ 15-րդ դարի 40-ական թվական- ներին այս ավել շաբաթում սրբերի տոներ չեն դրվել, որը երևում է նախորդ տոնացույցերի 8 - շաբաթյա սրբերի կանոններից ևս:

16-րդ դարի ընդօրինակած 4459 թվաճամարի գրչագրում պատկերն այլ է: Այնտեղ գրված է. «Ով եղբայր գիտացիր, զի սրբոց տօն կայր որ ի տեղն կու մնայր մեք գրեցաք ի այս տեղս շաբաթ մի: Թէ տարին բերէ և այս միջոցս ուտիքր Ը լինի և աւելի շաբաթն գա նա տօնէ գոտս, ապա թէ տեղն չբերէ և աւելի չլինի դու ի հետ այլ որ տօնէ, որ ի տեղն չմնայ այս է՝ (երկուշաբաթ). Աբրահամու և Խորենայ և անարծաթ բժշկացն Կողմայի և Դամիանոսի...» (էջ 98բ): Թեև հստակ չի ասվում, բայց հասկացվում է, որ ավելորդ շաբաթում տոներ են տոնական տարվա այլ տեղերից տեղափոխված սրբերի հիշատակի օրերը, ինչպես Վարդավառից հետո եկող սրբերի հիշատակի երկօրյա կանոնները՝ Վարդավառը երեք օր տոներու հետևանքով և չընդու- նելով զուգահեռ տոնվող սրբերի հիշատակները տեղափոխել են հիշյալ հատված: Նույն 16-րդ դարում ընդօրինակված տոնացույցում այդ կիրակին անվանել է «Աւելորդաց կիրակի» և նրա- նից հետո տոնվող սրբերի շարքն.

«Աւելորդաց կիրակի...»

Բշի (երկուշաբթի). Աբրահամու և Խորենայ...

Գշի (երեքշաբթի). Սրբոց անարծաթ բժշկացն Կողմայի և Դամիանոսի

Եշի (հինգշաբթի). Յիզաբելայի վկայի, որ ասի Աստուածատուր

Շաբաթ. Հնոց և նորոց, յայտից և անյայտից և զայլ ով կամիս տօնէ (էջ 210ա-բ):

Ինչպես նկատելի է «Աւելորդաց կիրակի»-ից հետո եկող սրբերի տոնվող շարքը հիմնա- կանում վերցված է Վարդավառից հետո եկող կանոններից, որտեղ երկուշաբթի օրվա կանոնից բաժանել են սրբերի հիշատակի օրերը և դրել երկուշաբթի և երեքշաբթի օրվա կանոնների տակ, իսկ երեքշաբթի օրվա կանոնը տեղափոխել են հինգշաբթի ավելացնելով «ասի Աստուածատուր» հավելումը: Վերջապես շաբաթ օրվա կանոնի տակ սահմանել են սրբերի ընդհանուր տոն, որը փոխառեց, ինչպես կտեսնենք Սիմեոն Երևանցին:

2026 թվաճամարի Տոնացույցում այդ շարքը տրված է փոքր ինչ այլ ձևով. «Յիսնակաց Բարեկենդանի կիրակին»

Բշի (երկուշաբթի). Աբրահամու և Խորենայ և անարծաթ բժշկացն Կողմայի և Դամիանոսի

Գշի (երեքշաբթի). Իզաբելայի վկային, որ թարգմանի Աստուածատուր

Տօնասերք եղբայրք եթէ կամիք Եշք (հինգշաբաթ). Համօրէն առաքելոցն տօն,

շաբաթ. Ամենայն սրբոց և ապա պահք Յիսնակամտին և տօն ոչ լինի» (էջ 93բ-94ա):

7741 թվաճամարի ճաշոցը ներքին լուսանցքում տալիս է հետևյալ ձևակերպումը. «Տաս- ներորդ կիրակէդ բարեկենդան է Յիսնակացն, թէ այլ շաբաթ յաւելնա դու յայսմաւուրացն տաւնէ» (էջ 439ա):

720 թվաճամարի գրչագրում կարդում ենք. «Իններորդ (= 10-րդ) կիրակին Հարցի ԴԿ այ- սօր ցնծան», որից հետո շարունակում է. «Ով եղբայր գիտացիր զի սրբոց տօն կայր որ ի տեղն

<sup>1</sup> Տե՛ս Ձեռ. N°N° 752, էջ 175ա, 7203, էջ 92ա, 9838, էջ 181ա, 4164, էջ 209բ-210ա, 4874, 4459, էջ 98բ, 5436, էջ 191բ, 4514, էջ 376ա-379բ, 7741, էջ 433ա-438ա, 4107, էջ 815-825, 939, էջ 499բ-504բ, 4698, էջ 300ա-302բ և այլն:

կու մնայր: Մեք դրաք ի յայս տեղս շաբաթ մի, թէ տարին բերէ և այս միջոցս Ը շաբաթ ուտիք լինի և աւելի շաբաթ գայ նա տօնէ զսոսա, ապա թէ տեղն չբերէ և աւելի չլինի դու ի հետ այլ սրբոցն տօնէ, որ տեղն չմնա: Այդ է.

Բշ. Աբրահամու և Խորենայ և անարծաթ բժշկաց Կողմայի և Դամիասուի,

Գշքի. Իստբուզտի, որ թարգմանի Աստուածատուր,

Եշ. Գինարիոսի...

Շաբ(աթ). Մարութայի... »<sup>1</sup>:

Սիմեոն Երևանցին Յիսնակամտից առաջ ընկնող ավելորդ շաբաթվա մեջ տեղափոխել է վերափոխման Աստուածածնի վերջին շաբաթվա երեք տոնելի շաբաթը ավելացնելով նաև ամենայն սրբոց օրը: Ըստ տարեգրերի (է, ի, Ծ, Զ, Ռ, Ի և Փ) տվել է.

Բշ. Անդրէի զօրավարի...

Գշ. Անդրիանոսի...

Եշ. Աբրահամու...

էշ. Տօն ամենայն սրբոց Հնոց և նորոց

Իսկ Մ և Յ տարեգրերի դեպքում սրբերին հատկացված նախորդ կարգը փոխել է, այն է՝

Բշ. Աբրահամու...

Գշ. Անդրէի...

Եշ. Անդրիանոսի

էշ. Տօն ամենայն սրբոց Հնոց և նորոց

Սիմեոն Երևանցին վերոհիշյալ շաբաթվա կարգը տալուց հետո բացատրում է. «Տասներորդ կիրակէ գկնի սրբոյ ինչին... Ծանիր ով տօնասերը՝ անցեալ միջոցիս ուտիքն եթէ եօթն շաբաթ իցէ. այս տասներորդ կիրակէս լինի Բարեկենդան Յիսնակի պահոցն միշտ: Իսկ եթէ ութ շաբաթ իցէ, աստ յաւելանի շաբաթ մի՝ տօնիւք հանդերձ, որոց շաբաթի օրն Տօն ամենայն սրբոցն կատարի և ի ներքոյ եղեալ կիրակէդ կոչի մետասաներորդ կիրակէ և Բարեկենդան Յիսնակի պահոյն. զայս ամենայն տարեգրին ցուցանէ քեզ.

Շաբաթ տօն է ամենայն սրբոց Հնոց և նորոց, յայտից եւ անյայտից»:

Վերը բացատրեցինք, որ չհաշված Ս. ինչի և եկեղեցու 8 օրյա տոները 8 շաբաթ սրբերի տոներն են տոնել, որից հետո ավելացել է մեկ շաբաթ, որտեղ ևս նախատեսել են սրբերի տոներ և Սիմեոն Երևանցու բացատրութիւնը ուտիքին 8 շաբաթ տալը այսինքն «ավելորդաց» շաբաթին է վերաբերում:

Սկսած 15-րդ դարի վերջերից Յիսնակամտի օրերից մեկում՝ Նոյեմբերի 21-ին ավելացրել են նոր տոնական օր անշարժ ձևով:

Այսպես, 8630 թվահամարի Տոնացույցում Աստուածածնի տոնական օրերի մեջ կարդում ենք «Տրէի ԺԳ եւ Նոյեմբերի ԻԱ և Քաղսե երբեյեցոց Ե. Տաւն է ամենասրբուհոյ Աստուածածնին, յորժամ երից ամաց տարան գնա ծնողքն նորա ի տաճարն Սողոմոնի եւ յանձնեցին ի սուրբ քահանայապետն Զաքարիա և անուանի տաւնս այս Սրբութիւն Սրբութեան» (էջ 1ա-5ա): Այսպիսի ձևակերպում ունեն նաև հետագայում ընդօրինակված տոնացույցերը<sup>2</sup>: Սիմեոն Եր-

<sup>1</sup> Տե՛ս Ձեռ. N° 720, էջ 342ա-բ:

<sup>2</sup> Տե՛ս Ձեռ. N°N° 5440, էջ 184ա-բ, 4962, էջ 122ա-բ, 587, էջ 161բ, 2338, էջ 1ա-5ա, 590, էջ 81բ-82ա, 2025, էջ 2ա-7ա, 510, էջ 297ա-298ա, 2024, էջ 3ա-8ա, 2032, էջ 3ա-8ա, 720, էջ 228ա-230բ, 754, էջ 194ա-198ա.

ևանցին հիշյալ կանոնը ձևակերպել է. «Իսկ տօն երից ամաց ընծայեցման սուրբ կուսին ի տաճարն, աստ եղաւ, որ կատարի միշտ ի նոյեմբերի ԻԱ. յերեկոեան նախատօնակ արա...»: Ի դեպ հիշյալ տոնը գալիս է Յայսմավուրքներից, որոնք ավելի վաղ շրջանում են գրանցել այն, բայց տոնացույց մտավ 15-րդ դարի վերջից և շարունակեց իր գոյութիւնը մինչև այժմ:

Հնագույն Տոնացույցը շարունակում է տոնական շաբաթը հետևյալ ձևով. «Կիրակէն յառութեան... և ապա Պա(հ)ք Յիսնակին...»

էշ. Գրիգորի սքանչելագործի...»<sup>1</sup>

Նույն կարգն է գրանցել 179 թվահամարի գրչագիրը, միայն ավել ունի «և Պա(հ)ք Յիսնակին և տաւնք ոչ լինին...»:

752 թվահամարի գրչագիրն անհասկանալիորեն արձնագրել է. «Բ կիր(ակի)... եւ ապա Պահք Յիսնակացն և տաւն ոչ լինի...»

Շաբ(աթ). Գրիգորի սքանչելագործի և Նիկաւլաոսի (և) Միւռինոյ եպիսկոպոսի» (էջ 175բ):

2092 թվահամարի Տոնացույցը, որն ընդօրինակվել և խմբագրվել է 14-րդ տարում, գրում է, «Կիրակ(է)... Պահք Յիսնակամտին Բշ (երկուշաբաթ). Յիսնակաց պահքն...»

Ոմանք քամահելով զայս Քրիստափորի Պահք ասեն, բայց Մնրնդեան Յիսնակացն առաջի շաբաթն է ճշմարիտ: Շաբաթ աւրն ոմանք Քրիստափորի տաւնեն եւ ոմանք՝ սրբոց աւետարանչացն» (էջ 229ա-բ): Պարզվում է պահքի տարբեր անվանումները, միաժամանակ հասկանալի է դառնում, որ շաբաթվա օրվա կանոնի տակ նախընտրել են տոնել, ոչ թե Գրիգորի սքանչելագործի կամ հետագայում ավելացրած Նիկողայոս հայրապետի կամ եպիսկոպոսի և - Միւռինոյ եպիսկոպոսի (վերջինս այլ տոնացույցերում և ճաշոցներում տրված է՝ Մեռոնի, Միւռոնա, Մեռինու, Մեռոնայ, Միռոնի տարբերակներով), այլ ոմանք՝ Քրիստափորի, ոմանք սրբոց աւետարանչացն հիշատակի օրերը:

Հետագայում ընդօրինակված տոնացույցերը հիշյալ կիրակին որակել են որպես առաջին կիրակի՝ կամ «Յիսնակաց Բարեկենդանի կիրակին...»<sup>3</sup> և ապա պահք և «Յիսնակամտին», կամ «Յիսնակաց» են անվանել, ինչպես և շաբաթ օրվա տակ թվարկել են 752 թվահամարի մեջ կանոնած սրբերի անունները հազվադեպ բաց թողնելով Նիկողայոսի անունը: Դրան հակառակ Հնագույն ճաշոցները հիշյալ կիրակին բնորոշել են որպես տասներորդ կիրակի կամ պարզապես կիրակի: Այսպես 4514 թվահամարի ճաշոցը քննադրում գրել է «Տասներորդ կիրակէ...», իսկ լուսանցքում՝ «Կիրակէն Բարեկենդան է», ապա «Պահք է Յիսնակաց» և թվարկում է սրբերի կարգն ըստ 752 թվահամարի Տոնացույցի բաց թողնելով «Միւռոնայ» եպիսկոպոսին<sup>4</sup>:

7741 թվահամարի ճաշոցում կարդում ենք. «Տասներորդ կիրակէդ Բարեկենդան է Յիսնակացն», այնուհետև «Երկուշաբաթի աւր. Յիսնակաց պահոցն...», իսկ շաբաթ օրվա կանոնի տակ թվարկում է 752 թվահամարի տոնացույցի սրբերի անունները:

4107 թվահամարի ճաշոցը բնագրում տալիս է Կիրակի, իսկ ստորին լուսանցքում՝ «Տասներորդ կիրակին Յիսնակամուտ է». որից հետո շաբաթվա տակ բերել է միայն երկու սրբերի անունները բաց թողնելով Մյուռոն եպիսկոպոսի անունը (էջ 820-836): Այսպես է նաև 939 (էջ 505բ-510բ) և 4698 (էջ 362բ) թվահամարների ճաշոցների ընդօրինակութիւնների մեջ:

2030, էջ 1ա-6ա, 509, էջ 369ա-բ, 2027, էջ 8ա-12ա, 2029, էջ 5ա-12ա, 2028, էջ 5ա-8ա 4164, էջ 211ա և այլն:

<sup>1</sup> Ձեռ. N° 759, էջ 175բ-176ա:

<sup>2</sup> Ձեռ. N° 5667, էջ 142ա, 7203, էջ 98ա-բ, 9838, 4874, 6337, էջ 245ա, 5436 և այլն:

<sup>3</sup> Ձեռ. N° 4164, էջ 210բ-211ա:

<sup>4</sup> Ձեռ. N° 4514, էջ 380ա-384ա:

Միմեոն Երևանցին պահել է ճաշոցների կարգը տալով «Տասներորդ կիրակի գլխի սրբոյ խաչին», ապա տվել բացատրություն, որը բերեցինք վերևում և ավելացրել «Մետասաներորդ կիրակի...»-ն:

Փոքր ինչ հետո տվել է Յիսնակի պահոց օրերը՝ Երկուշաբթիից ուրբաթ և Շաբաթ օրվա տակ բերել սրբերի անունները հետևյալ ձևակերպմամբ. «Շաբաթ. Տօն է սրբոցն Գրիգորի Աքանչելագործի, Նիկողայոսի Հայրապետին և Միւռոնայ եպիսկոպոսին», այսինքն պահել է 752 տոնացույցի սահմանած կարգը:

759 թվահամարի գրչագիրը շարունակել է Յիսնակամտից հետո եկող տոնական շարքը հետևյալ ձևով.

«Զկնի Յիսնակամտին երկրորդ կիրակի...»

Բշ. Սուրբ կուսանացն Յուլիանեա և Վասիլուհեա

Գշ. Սրբոց առաքելոցն Յակովբայ և Շմաւոնի...

Եշ. Կղեմայ և Բագարատայ աշակերտաց Սուրբ առաքելոց Պետրոսի...

Էշ. Անդրէի առաքելոյն...

Այս կարգն է սահմանված նաև 179 թվահամարի տոնացույցի ընդօրինակություն մեջ:

752 թվահամարի գրչագիրը պահել է նախորդ շարքը, միայն տվել է «Գ կիրակի»-ի տակ և երկուշաբթիվ կանոնում ավելացրել «Վառվառա» անունը (էջ 175բ):

5667 թվահամարի Տոնացույցի խմբագրությունը պահել է Հնագույն տոնացույցի կարգը, միայն հինգշաբթի օրվա տակ ավելացրել է՝ «Գրիգորի Ակուականդացոյն» (էջ 142բ):

Այսպիսի կարգ ունի նաև 7203 թվահամարի գրչագիրն, ինչպես և 9838, 4164 (էջ 211բ), 4874, 5436 և այլ բնագրեր:

Ճաշոցների ընդօրինակությունները նույնպես պահպանել են Հնագույն տոնացույցերի շարքը<sup>1</sup>:

Միայն Վառվառեա հիշատակի օրը 14-15-րդ դդ. որոշ գրչագրեր ավելացվել է երկուշաբթի օրվա կանոնի տակ (4514, 7741, 4698), իսկ որոշ գրչագրերում (4107, 939 և այլն) բացակայում է: Միայն 4107 թվահամարի Ճաշոցը շաբաթ օրվա տակ այն էլ տողատակում ավելացրել է Մաթէի հիշատակի օրը:

Ասեմք, որ Հնագույն տոնացույցերում Վառվառեայ հիշատակի օրը սահմանվել է Սուրբ Խաչից հաշված 4-րդ կիրակիից հետո եկող երեքշաբթի օրը, որը 14-րդ դարում տեղափոխվեց քննարկվող երկուշաբթի, որից հետո վերականգնվեց իր նախկին տեղը: Հնագույն տոնացույցերը Գրիգոր Ակուականդացու հիշատակի օրը դրել են Սուրբ Խաչից հաշված 2-րդ կիրակիից հետո եկող շաբաթ օրը, որը 15-րդ դարի կեսերից տեղափոխվեց վերոհիշյալ հինգշաբթի կանոնի տակ: Միմեոն Երևանցու տոնացույցում հիշյալ շաբաթվա կարգը այսպիսին է. «Առաջին կիրակի Յիսնակի»:

Երկուշաբաթ՝ Սրբոց կուսանաց Յուլիանեայ և Վասիլուհեայ

Երեքշաբաթ՝ սրբոյն Ղուկկիանոս քահանայի և Սրբոցն Տարագրոսի, Պրօպոսի, Անրոնիկոսի և Ռեսսիմեայ և այլոց աշակերտաց Պօղոսի

Հինգշաբաթ՝ Սրբոցն Կղեմայ Հայրապետին և Բագարատայ Տոռոմենոյ եպիսկոպոսին

<sup>1</sup> Տե՛ս Ձեռ. N°N° 4514, էջ 384բ-388ա, 7741, էջ 443բ-448բ, 4107, էջ 837-847, 939, էջ 511բ-516բ, 4698, էջ 306բ-309ա և այլն:

Շաբաթ՝ Սրբոց առաքելոց և առաջին լուսաւորչացն մերոց Թադէոսի և Բարդուղիմէոսի» (էջ 293-296): Ինչպես նկատել է Միմեոն Երևանցին նախկին տեղում պահպանել է միայն երկուշաբթի և հինգշաբթիվ կանոնները, իսկ մյուսները փոխել է: Ինչպես տեսանք Անդրէի առաքյալի հիշատակի օրը տեղափոխեց Ս. Խաչից հաշված 9-րդ կիրակիից հետո եկող շաբաթ օրը, իսկ Յակովբայ և Շմաւոնի հիշատակի օրը՝ Վերափոխման Աստուածածնից հաշված 2-րդ կիրակիից հետո եկող շաբաթ օրը:

Վառվառեայ հիշատակի օրը վերականգնել է իր նախկին տեղում: Իսկ Ռեսսիմեայ հիշատակի օրը նախկինում Հունվար 13 - Առաջավոր Բարեկենդանի միջև, տեղափոխել է հիշյալ երեքշաբթի: Ղուկկեանոս քահանայինը նախապես տեղադրված էր Սուրբ Խաչից հաշված 6-րդ կիրակիից հետո եկող երկուշաբթի, իսկ հետագայում տեղափոխվեց Սուրբ Խաչից հաշված հինգերորդ կիրակիից հետո եկող շաբաթ օրը, վերջապես հիշյալ երեքշաբթի: Տարագրոսի, Պրոքոսի և Անրոնիկոսի հիշատակի օրը նախապես սահմանվել էր Յիսնակամտից հաշված 4-րդ կիրակիից հետո եկող երեքշաբթի, այնուհետև ինչպես տեսանք տեղափոխվեց այլ կանոնի տակ, վերջապես վերադարձավ Յիսնակամտից հաշված 2-րդ կիրակիից հետո եկող երեքշաբթի՝ իր նախկին տեղից դեպի առաջ:

Ինչ վերաբերում է Թադէոս առաքյալին, ապա նրա տոնական օրը Սանդուխտ կույսի հետ միասին պահպանվեց Վարդավառից հետո եկող շաբաթ օրը և փաստորեն 2-րդ տոնական օրը սահմանվեց նրա համար այս անգամ Բարդուղիմեոսի հետ միասին: Վերջինիս տոնը Հնագույն տոնացույցում կատարվում էր Փոխման Աստուածածնից հաշված 2-րդ կիրակիից հետո եկող շաբաթ օրը, որը տեղափոխվեց քննարկող շաբաթ: Այլ խոսքով Ս. Երևանցին հիշյալ շաբաթվա օրերի մեջ կատարեց մի շարք խմբագրումներ, որոնցով Հանդերձ կատարվում է տոները ներկա տոնացույցում:

759 թվահամարի գրչագիրն շարունակում է տալ տոնացույցի հերթական կարգը, այն է՝ «Զկնի յիսնակամտին երրորդ կիրակի...»

Բշ. Գեն(ն)արոսի եպիսկոպոսի և Մեռկեոիոս վկայի...

Գշ. Սրբոյն Յակովկայ և Իրաւափառայ...

Եշ. Սուրբ Հարցն եգիպտացւոց Պաւղայ, Մակարայ, Եւագրի, Արսէնի, Յոհանու գբացւոյ, Յոհաննու կարճահասակի, Նեղոսի, Սիսի, Մարկոսի, Դանիէլի և այլոց սրբոց Հարցն

Էշ. Նիկողայոսի Հայրապետի (էջ 176ա-բ)

Համարժեք տեղեկություններ կան նաև 179 թվահամարի գրչագրում: Հետագայում ընդօրինակված տոնացույցերում և որոշ ճաշոցներում պահպանված է Հնագույն կարգը<sup>1</sup>:

Միայն երբեմն պատահում են Մեռկեոիոս վկայի փոխարեն Մեռկեոիոս զինաւորի, Յակովկա փոխարեն Յակոբա Յակովբա, իսկ 4698 թվահամարի Ճաշոցում այն փոխվում է Յովակիմայ, ձևակերպումները սրբոց Հարց եգիպտացւոց մեջ նոր անունների ընդունում կամ բացակայություն և այլն: Ինչպես և երրորդ կիրակիի փոխարեն 4-րդ կիրակի կամ 2-րդ կիրակի, որ այլ հաշվման արդյունք է և ոչ թէ սխալ:

Ճաշոցների մի խումբ պահպանելով մինչև շաբաթվա կարգը, ինչպես տոնացույցերը, միաժամանակ շաբաթ օրվա ամսաթվային նշումով տալիս են Սուրբ առաքելոցն Բարդուղիմեոսի և Յուդայի հիշատակի օրը<sup>2</sup>, իսկ 4107 գրչագրին ավելացրել է նաև Շմավոնի անունը: Միաժամանակ Նիկողայոս Հայրապետի հիշատակի օրը տեղափոխել են Հաջորդ երկուշաբթի օրվա

<sup>1</sup> Տե՛ս Ձեռ. N°N° 752, էջ 175բ, 5667, էջ 142բ, 7203, 9838 էջ 181բ, 4164, էջ 212ա, 4874, 7741, էջ 449ա-453բ և այլն:

<sup>2</sup> Տե՛ս Ձեռ. N°N° 4514, էջ 388բ-392ա, 4107, էջ 852-861, 939, էջ 517բ-523ա, 4506, էջ 402բ-406ա և այլն:



կանոնի տակ: Ասե՛ք նաև, որ Հնագույն տոնացույցը Բարդուղիմեոսի և Յուդայի Հիշատակի օրը դրել է Փոխման Աստուածածնից հաշված 2-րդ կիրակիից հետո շաբաթ օրվա կարգի տակ:

16-րդ դարից սկսած տոնացույցերը քննարկվող շաբաթվա մեջ անշարժ տոնական օրվա տակ ավելացրել են նոր տոնական օր, այն է՝ «Յայսմ վայրի Դեկտեմբերի Թ, Տօն է Յղութեան Աննայի, որ յղացաւ զՄարիամ կույսն: Երեկոյին նախատօնակ արա»<sup>1</sup>: Այս կանոնը փոքր ինչ այլ ձևակերպմամբ առկա է Աստուածածնի տոների կանոններում, որոնք դրվել են առանձին, տոնացույցերի սկզբի մասում<sup>2</sup>:

Այսպես 5440 թվահամարի Տոնացույցում գրված է. «Քաղոց ի Ա և Դեկտեմբեր ի Թ, Քաղսեւ ի Ի Գ (գրչագրում Ի Դ ուղղել ենք այլ բնագրերի հիման վրա). Աւետիք է Աննայի և Յովակիմայ, յորմէ յղացան զսուրբ կոյսն Մարիամ զամէնաւրհնեալ Տիրամայրն...»:

Սիմեոն Երևանցին պահպանեց Հնագույն տոնացույցերի սահմանված կարգը քննարկվող շաբաթվա մեջ, թեև որոշ անուններ և ձևակերպումներ վերցրել է հետագա տոնացույցերից: Նա պահպանեց նաև 16-րդ դարից եկող Աստուածածնի Հղացման տոնը անշարժ ամսաթվով և դրել է Յիսնակի երրորդ կիրակիից (= 4-րդի) հետո հետևյալ ձևակերպմամբ «Իսկ՝ տօն Յղացման սրբոյ կուսին Մարիամու ի յԱննայէ, աստ եղաւ, որ կատարի ի Դեկտեմբերի Թ: Յերեկոյին նախատօնակ արա» (էջ 300):

759 թվահամարի տոնացույցը շարունակութեան մեջ տալիս է հետևյալ կարգը.  
«Չկնի Յիսնակին չորրորդ կիրակէին յարութեան...»

Բշ. Մինասա, Երմոգին և Գրափոսի...

Գշ. Տարագրոսի, Պրոբոսի և Անդրոնիկոսի, որք մեծք

Եշ. Եւստուատիոսի, Աւքսենտիոսի, Եգենիոսի, Մարդարիոսի և Ուրբաստի...

էշ. Յակովբայ Մծբնայ Հայրապետի և Մարուգէի ճգնաւորի» (էջ 176բ):

179 թվահամարի գրչագիրն ունի որոշ չափով փոփոխված կարգ և նորույթներ, այն է՝ «Չորրորդ կիրակէի յարութեան... և ապա Պա[հ]ք Սրբոյն Յակոբայ, բայց տաւնքս լինին:

Բշ. Մինասայ և Երմոգինի և Գրափոսի

Գշ. Սրբոց առաքելոց Բարթողոմէոսի և Յուդայի

Եշ. Եւստուատիոսի, Աւքսենտիոսի, Եգենիոսի, Մարդարիոսի և Ուրբաստի

էշ. Յակոբայ Մծբնայ Հայրապետի և Մարուգէի ճգնաւորի»: Նախ Ստեփանոս Գույնբրիցանցը Տոնացույցում վկայում է Սուրբ Յակոբի պահքի գոյութիւնը արդեն 1292 թվականին, ապա Հնագույն Տոնացույցի երեքշաբթի օրվա կանոնի տակ տալիս է Բարդուղիմեոսի և Յուդայի Հիշատակի օրը, որը տեղափոխել և Փոխման Աստուածածնից հետո եկող 14-րդ օրից այս երեքշաբթի, իսկ Տարագրոսին և այլոցն փոխադրել է Սուրբ Խաչից հաշված 6-րդ կիրակիից հետո եկող երկուշաբթից: Շաբաթ օրվա տակ ավելացրել է Մեկի եպիսկոպոսի Հիշատակի օրը, որը Հնագույն տոնացույցում գրված է Սուրբ Խաչից հաշված 9-րդ կիրակիից հետո եկող երկուշաբթի կանոնի տակ:

752 թվահամարի գրչագիրը հետևել է 179 թվահամարի Տոնացույցի խմբագրութեանը միայն երկուշաբթի օրվա կանոնի վրա ավելացրել է. «Կամաւոր աղքատացն Յոհաննու և Ալէքսիանոսի» (էջ 176ա) Հիշատակի օրը: Հետագայում ընդօրինակված տոնացույցերը և մասամբ

ճաշոցները հետևել են 752 թվահամարի գրչագրին<sup>1</sup>: Որոշ ճաշոցներ երկուշաբթի օրվա տակ տվել են Նիկողայոսի Հայրապետի Հիշատակի օրը, իսկ երեքշաբթի օրվա կանոնի տակ տեղափոխել են երկուշաբթի օրվա սրբերի Հիշատակի օրը<sup>2</sup>: Իսկ Բարդուղիմեոս և Յուդա առաքյալների Հիշատակի օրը ինչպես նշեցինք վերևում, տեղափոխել են նախորդ շաբաթ օրվա կանոնի տակ, Նիկողայոսին դրել են երկուշաբթի օրվա տակ, իսկ այդ օրվա կանոնը տեղափոխել երեքշաբթի, մնացած կանոններում հետևել են 752 թվահամարի գրչագրին: Վերջինիս կանոններն էլ ընդունել նաև Սիմեոն Երևանցին, միայն երեքշաբթի օրվա կարգից հանել է և տեղը դրել այլ սրբերի Հիշատակի օրեր, այն է՝ «Երեքշաբթի, Սրբոցն Կուռնելիոսի Հայրապետին և Շմաւօնի ազգականին Քրիստոսի, որ խաչեցաւ յԵրուսաղէմ, Պողիկարպոսի Հայրապետին Չմիւնոյ և սրբոյ վկայիցն, որք յԱրևելս կատարեցան»:

Սիմեոն Երևանցին Հիշյալ սրբերի Հիշատակի օրերը միացրել է մեկ կանոնի տակ վերցնելով նախորդ տոնացույցերից հատկապես 752 թվահամարի և նրանից հետո ընդօրինակված գրչագրերից, որտեղ վերոհիշյալ սրբերի Հիշատակի օրը գրված է Հունվարի 13-ից հետո և Առաջավորաց Բարեկենդանից առաջ տոնվող սրբերի մեջ:

759 թվահամարի Տոնացույցում հաջորդ շաբաթ տոնվող սրբերի շարքը ներկայացրել է այսպես. «Չկնի Յիսնակամտի Հինգերորդ կիրակէ յարութեան»

Բշ. Իգնատիոսի Հայրապետի...

Գշ. Թեոպոմպոսի եպիսկոպոսի և Թեոփնայ կախարդի և չորից զինուորացն՝ Բասոսի Եւսեբի, Եւտիքի և Բասիլիդեայ և բազում վկայից ազգականաց նոցա...

Եշ. Ադգէի Հայրապետի աշակերտի Թադէոսի առաքելոց

էշ. Դոմնայի կուսի և Ինդոսի Ներքինոյ և Գղերիկոսի քահանայի և երկույ բիւրոց, որք ի Նիկոմիդա հրով կատարեցան» (էջ 177ա):

179 թվահամարի Տոնացույցի խմբագրութիւնը Հիմնականում համարժեք է նախորդին միայն երեքշաբթի օրվա կանոնի տակ ավելացրել է «և այլ վկայից և Վարք Թէոդորոսի վկայի»:  
Վերջինս հետագայում ընդօրինակված տոնացույցերում բացակայում է: Բացառութիւն է կազմում 4874 թվահամարի գրչագիրը: Հետագայում ընդօրինակված տոնացույցերն ու ճաշոցները հիմնականում պահպանել են վերոհիշյալ կանոնները<sup>3</sup>: Որոշ տոնացույցեր և ճաշոցներ ունեն ավելացումներ: Այսպես 4107 թվահամարի գրչագիրն երկուշաբթի օրվա տակ ավելացրել է Պողիկարպոսի անունը, 4874 թվահամարի Տոնացույցում երեքշաբթի օրվա տակ ավելացրել է «Ղունկիանի և որք ընդ նմա կատարեցան և վարք Թեոդորոս վկային»: 4107 թվահամարի գրչագրին Հինգշաբթի օրվա մեջ ավելացվել է Թադեոս առաքյալի, իսկ 7203 տոնացույցը թերևս Արգար Թագավորի անունը Ադգէ Հայրապետի Հիշատակի կապակցութեամբ Արգարի թղթի կարդալու պատճառով: 4514, 939 և 4698 թվահամարների ճաշոցները շաբաթ օրվա տակ ավելացրել են Մարիանէ կույսի Հիշատակի օրը: 4514 թվահամարի ճաշոցը շաբաթ օրվա կանոնի տակ ունի նաև «Չեննի զինուորի եւ Գորդեոսենցն» հավելումը:

Սիմեոն Երևանցին տվել է հետևյալ կարգով «Չորրորդ կիրակէ (= 5-րդի) Յիսնակին...

Երկուշաբաթ տօն է սրբոց Հայրապետացն Իգնատիոսի և Ադգէի և Մարութայի եպիսկոպոսին

1 Տե՛ս Ձեռ. N°N° 4164, էջ 212ա, 4874, 5436, էջ 192ա և այլն:

2 Տե՛ս Ձեռ. N°N° 5440, էջ 184ա-բ, 9046, էջ 20բ, 4962, էջ 121բ-122ա, 587, էջ 160ա, 2338, էջ 5ա, 2025, էջ 2ա, 510, էջ 297ա, 2024, էջ 3ա, 720, էջ 228ա, 754, էջ 194ա, 2030, էջ 1ա, 509, էջ 369ա, 2027, էջ 8ա, 2029, էջ 5ա, 2028, 5ա և այլն:

1 Տե՛ս Ձեռ. N°N° 5667, էջ 142բ-143բ, 7203, 9838, 4164, էջ 212բ-213ա, 4874, 6952, էջ 292ա-բ, 5440, էջ 220բ, 4514, էջ 393ա-395ա, 7741, էջ 454ա-458բ և այլն:

2 Տե՛ս Ձեռ. N°N° 4107, էջ 862-873, 939, էջ 523բ-528բ, 4506, էջ 407ա-բ, 4698, էջ 314ա-316բ և այլն:

3 Տե՛ս Ձեռ. N°N° 752, էջ 176ա-բ, 5667, էջ 143ա-բ, 7203, 9838, էջ 182ա, 4164, էջ 213ա, 4874, 4514, էջ 395բ-399ա, 7741, էջ 459ա-464ա, 4107, էջ 876-886, 939, էջ 529բ-534բ, 4649, էջ 318ա-320ա և այլն:



Երեքշաբաթ՝ Սրբոյն Թէոպոպայ եպիսկոպոսին և Թէոփնայ վկային և չորից զինուորացն՝ Բասոսի, Եւսեբի, Եւտիքի և Բասիլիդեայ

Հինգշաբաթ՝ Սրբոց կուսանացն Ինդոսի և Դոմնայի և Գղերիկոսի քահանայի և երկուց բերրոցն, որք այրեցան եկեղեցին Նիկոմեդացուոցն

Շաբաթ՝ Տօն է նախավկային և անդրանիկ թագաւորին մերոյ սրբոյն Աբգարու» (էջ 303-307):

Ինչպես նկատելի է երկուշաբթի օրվա կանոնի տակ ավելացրել է Ադդէի և Մարութայի եպիսկոպոսի հիշատակի օրերը, որից առաջինը նույն շաբաթվա հինգշաբթից տեղափոխել է երկուշաբթի, իսկ 2-րդում տեղափոխել է Հունվար 13 - Առաջավոր Բարեկենդանի միջև տոնվող սրբերի հիշատակի օրերից:

Երեքշաբթի օրվա կանոնը թողել է նույնութամբ: Շաբաթ օրվա կանոնը տեղափոխել է հինգշաբթի: Աբգար թագավորի համար սահմանել է առանձին տոն, որը դրել է շաբաթ օրը ըստ երևույթին ազդվելով 7203 թվահամարի և նրան հարող տոնացույցերից, որտեղ Հինգշաբթի օրվա կանոնի տակ ավելացրել էին Աբգար թագավորի հիշատակի օրը: Այլ խոսքով, Սիմեոն Երևանցու կատարած խմբագրութունը ակնհայտ է նախորդ տոնացույցերի համեմատ: Ասենք, որ քննարկվող շաբաթվա որոշ տոներ միացվում էին միմեանց, երբ Յիսնակամուտը ընկնում էր Նոյեմբերի 19-ին, 20-ին և 21-ին: Այսպես, հինգշաբթի և շաբաթ օրերին նախատեսված սրբերի հիշատակը կատարում էին մեկ կանոնի տակ երեքշաբթի կամ հինգշաբթի օրը, որովհետև Ավագ տոներից առաջինը պետք է կատարեին հինգշաբթի կամ շաբաթ օրը, թեև տոնացույցերը այդ կապակցութամբ որևէ բացատրութուն չեն տալիս: Բացի այդ երբ Յիսնակամուտն ընկնում էր Նոյեմբեր 15-ին և 16-ին քննարկվող հատվածից հետո մինչև Ավագ տոները մնում էր մեկ կամ երկու տոնելի օր, որի համար հնագույն տոնացույցերը սրբերի տոները չեն նախատեսել, իսկ Սիմեոն Երևանցին ավելացրել է այդ հաշվածը սրբերի տոներով, այն է «Հինգերորդ (= 6-րդ) կիրակի Յիսնակին...»

Երկուշաբաթ՝ Սրբոցն Աբրահամու և Խորենայ և անարծաթ բժշկացն Կողմայի և Դամիասոսի:

Երեքշաբաթ՝ Սրբոց Աստուածատրոյ վկային»:

Հիշյալ սրբերի հիշատակի օրերը տեղափոխել է Վարդավառից հետո եկող երկուշաբաթի և երեքշաբթի օրերի կանոններից նույնութամբ, որը նա տարել էր Վերափոխման Աստուածածնի 4-րդ կիրակիից հետո եկող շաբաթ: Դրանք առկա են հնագույն և հետագա տոնացույցերում, որոնք կամ տոնվում էին կամ Յայսմաուրքների նշված օրերին էին կատարվում կամ տեղափոխվել են այս հատված:

Տոնացույցերի վերջը տալիս ենք ամբողջութամբ, որովհետև տոների շարքը կախված էր Ճրագալույցի շաբաթվա օրվանից, ինչպես և Յիսնակամուտի կիրակիից: Ասենք, որ Յիսնակամուտի կիրակիից հաշված մինչև Ճրագալույց (ներառյալ) օրերի քանակը տարբեր էր: Այսպես երբ Յիսնակամուտը Նոյեմբերի 15-ին էր ընկնում ճրագալույցը ներառյալ 52 օր էր, Նոյեմբերի 16-ի դեպքում՝ 51 օր, Նոյեմբերի 17-ի դեպքում՝ 50 օր, Նոյեմբերի 18-ի դեպքում՝ 49 օր, Նոյեմբերի 19-ի դեպքում՝ 48 օր, Նոյեմբերի 20-ի դեպքում՝ 47 օր և Նոյեմբերի 21-ի դեպքում՝ 46 օր, այսինքն երկու պահերի և տոների համար մնում էր 6 շաբաթ և երեք օրից մինչև 7 շաբաթ և երկու օր: Իսկ Ավագ տոները, ինչպես կտեսնենք, ոչ միայն Յիսնակամուտից հաշված 6-րդ կիրակիից հետո, այլ տեղափոխվում էին 5-րդ կիրակիից հետո եկող շաբաթվա վերջին երկու տոնելի օրերը:

Տեսնենք ինչ են հաղորդում Տոնացույցերի տարբեր խմբագրութուններ:

759 թվահամարի Տոնացույցում գրված է. «Զկնի Յիսնակամուտին վեցերորդ կիրակի եւ առաքելոցն տաւներն լինին: Քանզի Յարութեան (= Մննդեան) պահէքն յետ Դ աւր ուտիք համարեա, գատի չորեքշաբաթ և յուրբաթէ և ի կիրակիէ:

Առաջին՝ Դաւթի մարգարէի և Յակովբայ առաքելոյ եղբաւրն Տեառն. Դեկտեմբեր) ԻԵ:

Իսկ երկրորդ տաւն. Սրբոյն Ստեփանոսի նախավկայի, Դեկտեմբեր) ԻԷ:

Երրորդ տաւն. Սրբոց առաքելոցն Պետրոսի և Պաւղոսի, Դեկտեմբեր) ԻԸ:

Չորրորդ տաւն. Յովհաննու և Յակովբայ Դեկտեմբեր) ԻԹ: Եւ ի նոյն աւուրս Բարեկենդան է Յայտնութեան Տեառն: Թէ պահէք հանդիպի Բարեկենդանին աւրն հարցն) յԶԲ, որ ապրեցուց: Յարութեան պահոցն շաբաթն աւրն Սրբոյ Բարսղի և եղբաւր նորին Գրիգորի Նիւսացոյ և սրբոյն Սեղբեստրոսի Հռովմայ հայրապետի և արթա Եփրեմի, Յունուարի) Ա:

Կիակէն յարութեան) ... և աւրս ի Յարութեան պահէքն հանդիպի...

Եշ... և ապա գկնի պահոցն.

Յունուարի Ե Ճրագալույց է» (էջ 177ա-բ):

179 թվահամարի տոնացույցում գրված է. «Վեցերորդ կիրակի) յարութեան) հարց) ԶԳ. որ յաւիտեն եւ առաքելոցն տառներն լինի: Քան զՅայտնութեան պահէքն յառաջ Գ (ուղղել՝ Դ) աւր ուտիք համարեա, յոր զտաւնսդ առնես: Յառաջ Դաւթի և Յակովբա, և ապա Ստեփանոս) Նախավկայի), եւ ապա Պետրոսի) և Պաւղոսի, եւ ապա Յովհաննու և Յակոբա, և է ասի Դեկտեմբեր ԻԹ, և ի նույն աւուրս է Յայտնութեան Բարեկենդանն: Պահոց շաբաթն աւրն և է Յունուարի Ա. Բարսղի Կեսարացւոյ) և եղբաւր նորին Գրիգորի Նիւսացւոյ) և Սեղբեստրոսի Հռովմայ հայրապետի) և արթա Եփրեմի ասորւոյ):

Կիրակի յարութեան) հարց) ԳԿ նախայայլիր

Յունուարի Ե Ճրագալույց...»:

752 և 5667 թվահամարների Տոնացույցերում կարդում ենք. «Է կիրակի) (Զ կիրակի) հ. ԳԶ. կամաւորու, ապա յառաջ քան զՅայտնութեան պահէքն Դ աւր համարեա) առանց Դշ և Զշ [և կիրակիէի], յորում արասցես զաւագ տաւներս՝ վկա [ՍԲ] Մննդեան Քրիստոսի Աստուծոյ մերոյ.

Առաջինն՝ Դաւթի մարգարէին և Յակոբա առաքելոյ, զոր այլ ազգիք ծնունդ առնեն), ի Դեկտեմբեր) ԻԵ:

Երկրորդն՝ Ստեփանոսի նախավկայի, ի Դեկտեմբեր) ԻԶ:

Երրորդն՝ Պետրոսի և Պաւղոսի գլխաւորաց առաքելոցն, ի Դեկտեմբեր) ԻԷ:

Չորրորդ՝ Յովհաննու և Յակոբայ որդւոց որոտմանց, Դեկտեմբեր) ԻԹ [ԻԸ] Յայտնութեան Բարեկենդանին կիրակիէ) ... եւ Յայտնութեան պահոցն...

Շաբաթ. Բարսղի Կեսարոյ եպիսկոպոսի) և եղբաւր նորին Գրիգորի Նիւսացո և Սեղբեստրոսի հայրապետի) և Աբրայ) Եփրեմի... Կիրակի) թէ ի պահէքն հանդիպի հ. ԴԶ. միածին որդի» (էջ 176ա-բ և էջ 144ա-բ):

2092 թվահամարի Տոնացույցը տալիս է հետևյալ բացատրութունը. «... ապա յառաջ յայս մեջս Դ աւր համարես առանց կիրակիէին, Դշի, եւ ուրբաթ, որ զմեծ տաւներն տաւնես եւ այսպէս տաւնէ: Եւ յորժամ սկսանիս զմեծ տաւներս, թէ յառաջին աւրն Դեկտեմբեր ԻԵ լինի նա տաւնէ Դավթի մարգարէին եւ Յակոբա առաքելոյն, որ ազգն Հովմայեցուցն, յունաց եւ Վրաց եւ այլ քրիստոնեյայք ծնունդ առնեն: Եւ թէ ամսոյն ԻԵ-ն չլինի նա դու յառաջ նախավկային տաւնէ, որ Դաւթի և Յակովբայ զորդ ի Մննդեալն աւրն գա Դաւթի մարգարէին և Յակովբա առաքելոյն... Դեկտեմբեր ԻԵ, եւ ապա սրբոյն Ստեփանոսի նախավկային զիւր կարգն ասա, ի

Դեկտեմբեր ԻԷ, եւ ապա գլխաւորաց առաքելոցն Պետրոսի եւ Պաւղոսի... եւ է Դեկտեմբեր ԻԸ, եւ ապա Յովաննու եւ Յակովբայ եղբաւր նորին առաքելոյ որդոցն որոտման... Դեկտեմբեր ԻԹ, եւ Բարէկենդան է Արքայ (Յ)այտնութեան:

Կիր(ակիր) թէ ի Բարեկենդանն գա...

Շաբաթ. Բարսղի Հայրապետին... Յունվարի Ա:

Սեղբեստրոսի Հոռմա Հայրապետին Յունվարի Բ տաւնէ: Յունվարի Ե. Ճրագալոյց է և նախատաւնակ Մնընդեանն Քրիստոսի Աստուծոյ, ըստ Հա(յ)ոց մեծաց...» (էջ 230ա-231ա):

7203 թվահամարի Տոնացույցի խմբագրութիւնը բերել է 752-ի Համարժեք տեղեկութիւններ, միաժամանակ բացատրում է.

«Շաբ(աթ) աւր, որ մէջն Հանդիպի Յայտնութեան պահոց Բարսղի տօնեա, և թէ շաբաթ աւր չհանդիպի դու Յունվարի Ա տաւնեա սրբոյն Բասիլիոսի Կեսարացոյն և Սեղբեստրոսի Հոռմայ Հայրապետի և Աբբա Եփրեմի...» (էջ 96 ն-բ):

4164 թվահամարի Տոնացույցի մեջ տալիս է Հետևյալ բացատրութիւնը.

«Ով տօնասեր եղբայր ի մեջ առ, յորժամ Յայտնութեան Բարեկենդանն շաբաթ օր լինի կիրակի պահք կու լինի: Գիտացիր, որ այն տարի Բարսղն ի իւր տեղն չի տօնվիր: Դու քան զաւագ տօներն յառաջ տօնէ, որ ի տեղն չմնայ. ԶԱբղէի ի յետս բեր Հետ Իգնատիոսի տօնէ,

Բշի (երկուշաբթի) օր,

Գշբի (երեքշաբթի) Թէոմպոպայ եպիսկոպոսին

Եշբի (հինգշաբթի) կուսանացն ինդոսի և Դոմնայի տօնէ,

Շաբ(աթ) Բարսղի Կեսարու Հայրապետին տօնէ, որ ի տեղ չմնայ» (էջ 214բ-215ա):

4874 թվահամարի Տոնացույցում գտնում ենք Հետևյալ բացատրութիւնը. «Վեցերորդ կիրակին...: Յայս միջոցս թէ այլ կիրակի Հանդիպի Դու զհարցն կամաւորութեամբն ասա...»

Ապա յառաջ քան զՅայտնութեան պահքն Դ օր Համարեա առանց չորեքշաբթի և ուրբաթ և կիրակէին և արա զաւագ տօներն (թվարկում է բերելով չորս ամսաթիւեր իրար Հաջորդականութեամբ Դեկտեմբեր 25-28)», որից Հետո չորեքշաբթի Հանդիպի Հ. ԲՁ ասա... Հանապազ Յայտնութեան Բարեկենդանն Դեկտեմբերի ԻԹ է, թէ կիրակի Հանդիպի Հ. ԳԿ ասա... Եւ է որ օրապահք Հանդիպի դու մի ուտեր և մի տօներ՝ յառաջն տօն է և զԴեկտեմբեր ԼԱ աւր Համարէ, որ ի պահքն Յայտնութեան պահոցն առաջի օր... Երկրորդ աւուրս... Երրորդ աւուրն, Չորրորդ աւուրն... ուրբաթ... Շաբաթ. Արքայ Բարսղի Կեսարացոյն եպիսկոպոսին և եղբոր նորին Գրիգորի Նիւսացոյն և Սեղբեստրոսի Հոռմայ Հայրապետին և Աբբա Եփրեմի...

Եւ թէ ի պահքն կիրակի Հանդիպի դու Հ. ԴՁ. ասա...» (էջ 199բ-200բ):

752 թվահամարի և նրան Հարող տոնացույցերի նման են տալիս նաև այլ գրչագրեր<sup>1</sup>:

Ճաշոցները տալիս են և ամսաթիւերով և շաբաթվա օրերով և տոնացույցերի նման, բայց Հիմնական տպավորութիւնն այն է, որ փորձել են տալ շաբաթվա օրերի կարգի տակ<sup>2</sup>, թեև շաբաթվա մի քանի օր են նշել, այն էլ ոչ Հաճախ: Այսպես, Հինգշաբթի օրվա տակ են տվել Պետրոսի և Պողոսի Հիշատակի օրը, իսկ Հաջորդ շաբաթվա, այսինքն «Յայտնութեան պահոցն շաբաթի աւրն. Բարսղի Հայրապետի» և այլոցն:

Սիմեոն Երևանցին Հետևում է ավանդական կարգին: Նա գրում է. «Իսկ յառաջ քան զՅայտնութեան պահքն՝ չորս օր Համարեա առանց չորեքշաբթի, ուրբաթի և կիրակէի ըստ ցուցման տարեգրոյն, յորս կատարիցես զաւագ տօնսն ի վկայու ծնընդեան Տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի» (էջ 308): Այնուհետև բերում է Ավագ չորս տօները, որից ավելացնում է «Ի մեջ աւագ տօնից պատահեալ Չորեքշաբթի, ուրբաթ և կիրակէ յառաջ քան զՅայտնութեան պահքն են սոքա» և բերում է այդ օրերի կարգը, որից Հետո՝ «Եւ ապա պահք Մնընդեան և Յայտնութեան Քրիստոսի Աստուծոյ մերոյ և տօնք ոչ լինի: Նա շարունակում է պահքի օրերի կանոնները տալով և «Ի պահոց Շաբաթ օրն՝ տօն է սրբոցն Բարսղի Հայրապետին և եղբոր նորին Գրիգորի Նիւսացոյն, Սեղբեստրոսի Հոռմայ Հայրապետին և արբայ Եփրեմի խորին ասորւոյ» (էջ 313), որից Հետո բացատրում է. «Ի կիրակէն՝ որ ի Յայտնութեան պահոցն Հանդիպիցի Հարց Դ2, և տալիս է «Կանօն ճրագալոցի ծնընդեան Տեառն մերոյ մերոյ Յիսուսի Քրիստոսի» ու ավարտում տոնացույցի տոնական կարգը:

Ասենք Հնագույն «Կանօնք ընթերցուածոց»-ները Դեկտեմբերի վերջին կատարված տօները նշել են ամսաթիւերով սկսած 5-րդ դարից մինչև Հավանաբար 11-րդ դարը, երբ այդ տօներն էլ վերածվեցին շարժականի<sup>1</sup>:

Հիշյալ տօները շարժականի վերածվելուց Հետո փոխվեց Ճրագալույցից առաջ ընկնող շաբաթների կարգը կապված մի դեպքում Ճրագալույցի Հաստատուն օրվա Հունվարի 5-ի և այդ օրվա մեջ տարեցտարի ընկնող շաբաթվա բոլոր օրերի, ինչպես և Յիսնակամտի Նոյեմբեր 15-21-ին ընկնող որևէ կիրակի նայած տարի, որի Հետևանքով տոնական տարվա վերջին շաբաթները տոնվել են 7 տարբերակներով: Դրանք Հետևյալներն են: Երբ Յիսնակամուտն ընկել է Նոյեմբերի 15-ին, նրանից Հաշված 6-րդ կիրակին եղել է Դեկտեմբերի 20-ին, Երկուշաբթի ազատ օրեր են եղել, որը վաղ շրջանում չեն տոնել որևէ սրբի տոն, իսկ ուշ շրջանում տոնել են այլ տեղերից ավելացած սրբերի Հիշատակները այն է՝ Աբրահամու և այլոցն, ինչպես և Աստուածատրոյ վկային, իսկ Հինգշաբթի ընկել է Դավիթ մարգարէի և Յակոբ առաքյալի տոնի օրը, որը եղել է Դեկտեմբերի 24-ին, այնուհետև Դեկտեմբերի 26-ին շաբաթ ընկել է Ստեփանոսի Նախավկայի Հիշատակի օրը, 7-րդ կիրակին եղել է Դեկտեմբերի 27-ին, իսկ Դեկտեմբերի 28-ին, երկուշաբթի տօնել են Պետրոսի և Պողոսի Հիշատակի օրը, Դեկտեմբերի 29-ին, երեքշաբթի ընկել է Յովհաննու և Յակոբա տոնը, ինչպես և Մնընդեան Բարեկենդանը: Դեկտեմբերի 30-ին, չորեքշաբթի սկսել է Մնընդեան Պահքը, իսկ Հունվարի 2-ին, շաբաթ, պահքին զուգահեռ տոնել են Բարսղի և այլոց Հիշատակի օրը: Հունվարի 3-ին ընկել է 8-րդ կիրակին, իսկ Հունվարի 5-ին, երեքշաբթի նշել են ճրագալույցը:

Նոյեմբերի 16-ին Յիսնակամուտն ընկնելու ժամանակ 6-րդ կիրակին ընկել է Դեկտեմբերի 21-ին Դեկտեմբերի 22-ին երկուշաբթի ազատ օր է եղել, և տոնել են Հիշյալ սրբերի տոներն ամբողջութեամբ մի Կանօնի տակ, իսկ Դեկտեմբերի 23-ին, երեքշաբթի ընկել է Դավթի և Յակոբի տոնը, Դեկտեմբերի 25-ին, Հինգշաբթի՝ Ստեփանոս Նախավկայի, որը որոշ Հեղինակներ առաջարկել են տեղափոխութիւն կատարել, որպեսզի ավանդույթի Համաձայն Դավթի և Յակովբի տոները ընկնեն Դեկտեմբերի 25-ին: Դեկտեմբերի 27-ին, շաբաթ Պետրոսի և Պողոսի՝ Դեկտեմբերի 28-ին՝ 7-րդ կիրակին, Դեկտեմբերի 29-ին, երկուշաբթի՝ Յովհաննու և Յակոբա, ինչպես և Մնընդեան Բարեկենդանը, Դեկտեմբերի 30-ին՝ Մնընդեան Պահքը, Հունվարի 3-ին շաբաթ՝ Մնընդեան Պահքի վերջին օրը և Բարսղի և այլոց Հիշատակի օրը: Վերջապես Հունվարի 4-ին՝ 8-րդ կիրակին, իսկ Հունվարի 5-ին, Երկուշաբթի Ճրագալույցը: Նոյեմբերի 17-ին Յիս-

<sup>1</sup> Տե՛ս Ձեռ. №№ 8633, էջ 116բ, 1591, էջ 332ա, 933, էջ 81բ, 9838, էջ 182բ-183ա, 2031, էջ 127ա, 6952, էջ 293ա, 5440, էջ 221ա-223ա, 4962, էջ 163բ-164ա, 5436, էջ 193ա-բ և այլն:

<sup>2</sup> Տե՛ս Ձեռ. №№ 4514, էջ 400ա-402ա, 936, էջ 118բ-134բ, 7741, էջ 464բ-478բ, 4107, էջ 880-918, 939, էջ 535բ-648բ, 4698, էջ 321ա և այլն:

<sup>1</sup> Տե՛ս Ձեռ. № 985, էջ 279ա-288բ, Վեհնետիկի 169 թվահամարի ձեռ., էջ 2989բ-308ա (Ս. Ըմմենցյան, Ազգ. աշխ., էջ 567-588), Վեհնետիկի 285 թվ. ձեռ. (Ա.Ա., էջ 596-606), 832, էջ 231բ-246բ, 5474, էջ 222ա-233ա և այլն:

նակամուտն ընկնելու դեպքում Դեկտեմբերի 22-ին՝ 6-րդ կիրակին, Դեկտեմբերի 23-ին, երկու-  
շաբթի՝ Դավթի և Յակոբի հիշատակի տոնը, Դեկտեմբերի 24-ին, երեքշաբթի Ստեփանոս նա-  
խավկայի, Դեկտեմբերի 26-ին հինգշաբթի՝ Պետրոսի և Պողոսի, Դեկտեմբերի 28-ին շաբաթ՝  
Յովհաննու և Յակոբի, դեկտեմբերի 29-ին, 7-րդ կիրակի և Ծննդեան Բարեկենդանը, Դեկտեմ-  
բերի 30-ին, երկուշաբթի՝ Ծննդեան Պահքը, Հունվարի 4-ին շաբաթ՝ Բարսղի և այլոցի և  
Հունվարի 5-ին, կիրակի՝ Ճրագալոյցն:

Նոյեմբերի 18-ին Յիսնակամուտն ընկնելու դեպքում Բարսղի և այլոց տեղափոխել են  
Դեկտեմբերի 22, շաբաթ, Դեկտեմբերի 23-ին, եղել է 6-րդ կիրակին, Դեկտեմբերի 24-ին, եր-  
կուշաբթի՝ Դավթի և Յակոբի տոնը, Դեկտեմբերի 25-ին երեքշաբթի՝ Ստեփանոս նախավկայի,  
որը նույնպես կարող էին տեղափոխել իրար հետ: Դեկտեմբերի 27-ի, հինգշաբթի՝ Պետրոսի և  
Պողոսի, Դեկտեմբերի 29-ին շաբաթ՝ Յովհաննու և Յակոբի և Բարեկենդան Ծննդեան, Դեկտեմ-  
բերի 30-ին 7-րդ, կիրակի և Բարեկենդան Ծննդեան, Դեկտեմբերի 31-ին երկուշաբթի՝ Պահք  
Ծննդեան: Այս դեպքում պահքի 1-ին օրը ընկնում է Դեկտեմբերի 31-ին: Հունվարի 5-ին, շա-  
բաթ՝ Ճրագալոյց: Վերջինս շաբաթ ընկնելու դեպքում Բարսղի և այլոց տոնը տեղափոխել են:

Նոյեմբերի 19-ին Յիսնակամուտն ընկնելու դեպքում Դեկտեմբերի 17-ին, 5-րդ կիրակին  
է ընկել, Դեկտեմբերի 21-ին, հինգշաբթի միացրել են Ադդէի և Դոմնայ և այլոց հիշատակի օ-  
րերը և տոնել, իսկ Դեկտեմբերի 23-ին, շաբաթ ընկել է Դավթի և Յակոբի հիշատակի տոնը,  
Դեկտեմբերի 24-ին՝ 6-րդ կիրակին, Դեկտեմբեր 25-ին՝ երկուշաբթի՝ Ստեփանոս նախավկայի  
հիշատակի օրը, որը նույնպես կարող էին փոխել մեկը մեկով, դեկտեմբերի 26-ին, երեքշաբթի՝  
Պետրոսի և Պողոսի, Դեկտեմբերի 28-ին, հինգշաբթի՝ Յովհաննու և Յակոբի, Դեկտեմբերի 29-  
ին, ուրբաթ ընկել է Ծննդեան Բարեկենդանը, Դեկտեմբերի 30-ին, շաբաթ՝ Ծննդեան Պահքը և  
Հայտնի է, որ Բարսղի և այլոց համար շաբաթ օր չի մնացել՝ Ճրագալոյցն ուրբաթ ընկնելու  
պատճառով, որի համար հիշյալ օրն են տոնել, Դեկտեմբերի 31-ին՝ 7-րդ կիրակին, իսկ Հունվա-  
րի 5-ին, ուրբաթ՝ Ճրագալոյց:

Նոյեմբեր 20-ին Յիսնակամուտն ընկնելու հետևանքով 5-րդ կիրակին ընկել է Դեկտեմ-  
բերի 18-ին, դեկտեմբեր 22-ին հինգշաբթի տոնել են Ադդէյի և Դոմնայի հիշատակի օրը, վեր-  
ջինիս տեղափոխելով հինգշաբթի, իսկ Դեկտեմբերի 24-ին, շաբաթ՝ Դավթի և Յակոբի, Դեկ-  
տեմբերի 25-ին ընկել է 6-րդ կիրակին, Դեկտեմբերի 26-ին երկուշաբթի՝ Ստեփանոս նախավ-  
կայի հիշատակի օրը, Դեկտեմբերի 27-ին, երեքշաբթի, Պետրոսի և Պողոսի տոնն էր, Դեկտեմբե-  
րի 29-ին, հինգշաբթի՝ Յովհաննու և Յակոբի, ինչպես և Ծննդյան Բարեկենդանը, Դեկտեմբերի  
30-ին ուրբաթ՝ Ծննդեան Պահքը, Դեկտեմբերի 31-ին շաբաթ պահքի հետ միասին Բարսղի և  
այլոցն: Հունվարի 1-ին՝ 7-րդ կիրակին, իսկ Հունվարի 5-ին, հինգշաբթի՝ Ճրագալոյց:

Վերջապես, երբ Յիսնակամուտն ընկել է Նոյեմբերի 21-ին, 5-րդ կիրակին եղել է Դեկ-  
տեմբերի 19-ին, Դեկտեմբերի 20-ին երկուշաբթի տոնել են Իգնատիոսի և այլոցն, իսկ Դեկտեմ-  
բերի 21-ին երեքշաբթի վաղ շրջանում հավանաբար տոնել են Թեոպոմպոսի..., Ադդէի և Դոմն-  
այի... երեք կանոն միացնելով մեկ օրվա մեջ, իսկ ուշ շրջանում՝ Աբգարի Թագավորի հիշատա-  
կը, Դեկտեմբերի 23-ին հինգշաբթի՝ Դավթի և Յակոբի, Դեկտեմբերի 25-ին, շաբաթ՝ Ստեփա-  
նոս նախավկային, որը նույնպես կարող էին փոխարինել մեկը մյուսով: Դեկտեմբերի 26-ին  
ընկել է 6-րդ կիրակին, Դեկտեմբերի 27-ին, երկուշաբթի, Պետրոսի և Պողոսի, Դեկտեմբերի 28-  
ին երեքշաբթի՝ Յովհաննու և Յակոբի Դեկտեմբերի 29-ին չորեքշաբթի Ծննդեան Բարեկենդան,  
Դեկտեմբերի 30-ին հինգշաբթի՝ Ծննդեան պահքը, Հունվարի 1-ին, շաբաթ՝ պահքի հետ միա-  
սին Բարսղի և այլոցն, Հունվարի 2-ին, 7-րդ կիրակի, Հունվարի 5-ին չորեքշաբթի՝ Ճրագա-  
լոյց:

Եթե տոնացույցերն ու ճաշոցները տվել են բացատրություններ միայն որոշ ընդհանրաց-  
նող տարբերակի և մասամբ առանձին դեպքերի համար, ապա Սիմեոն Երևանցու տոնացույցի

ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ առկա է 7 տարբերակ հիշյալ տոնական շաբթի կա-  
տարման համար նայած որ տարին է ընկել: Բացի այդ հնագույն «Կանոնք»-ներում վկայված  
ամսաթվերից մի մասն ընդհանրապես չի կրկնվել, իսկ մյուս մասը որոշ տարիների կրկնվել է,  
իսկ որոշ տարիների փոխվել՝ դառնալով շաբաթական ամսաթիվ:

Այսպիսով, տոնացույցերի և ճաշոցների ուսումնասիրությունը բացահայտում է մի շարք  
օրինաչափություններ, որոնք չեն բացատրվել, սակայն կարևոր են տոնական տարվա կարգը  
պահպանելու և օգտագործելու համար, մանավանդ Սիմեոն Երևանցու խմբագրած տոնացույցը  
գործում է և այսօր և գործելու է հեռանկարում:

Հայոց Հնագույն տոնացույցերի և նրա խմբագրությունների ուսումնասիրությունը ցույց  
է տալիս, որ տոնական տարվա մեջ կատարվել են տեղափոխություններ կախված Զատիկի,  
Փոխման Աստուածածնի, Սուրբ Խաչի, Յիսնակամուտի և Ճրագալոյցի օրերից: Հիմնական փոփո-  
խությունները հետևյալներն են: Զատիկը Մարտի 22-ին, 23-ին, 24-ին կատարելու դեպքում  
տոնական տարվա մեջ մնում էին ազատ օրեր Վարդավառ - Փոխման Աստուածածնի հատվա-  
ծում: Աստուածածնի պահքին նախորդող երկու շաբաթ կամ 8 օր (Սիմեոն Երևանցու «Տօնա-  
ցույց»-ում՝ 12 օր), որտեղ տեղափոխել են Հունվար 13-ից հետո և Առաջավորի Բարեկենդանից  
առաջ տոնվող սրբերի հիշատակի օրերն ամբողջությամբ, մեկ տոնական օրվա մեջ երկու կանոն  
կատարելով, քանի որ Առաջավորի Բարեկենդանի կիրակին ընկնում էր Քրիստոսի Ծննդեան և  
Աստուածայայտությունների ութ օրերի հետ և տոնելի օրեր չէին մնում: Սիմեոն Երևանցու տոնա-  
ցույցում միայն Հովհաննես Մկրտչի տոնը տեղափոխել են Հունվար 17-ին, 18-ին և 19-ին  
Սուրբ Սարգսի տոնի տեղը, իսկ նրան տեղափոխել են հաջորդ երկուշաբթի:

Ասենք նաև, որ Զատիկը Մարտի 22-ին համընկնելու ժամանակ երկու տոնական օր էր  
մնում Ավագ տոներից առաջ, որտեղ վաղ շրջանում տոներ չեն կատարել, իսկ ուշ շրջանում  
տոներ նախատեսվել են տեղափոխելով տարվա այլ հատվածներից հատկապես Վարդավառի  
տոնական օրերը ավելանալուց՝ 3 օր դառնալով հետո երկուշաբթի և երեքշաբթի օրվա կանոն-  
ների տակ տոնվող սրբերի հիշատակի օրը տեղափոխվեց այդ օրերին, որին Սիմեոն Երևանցին  
ավելացրեց Աբգար Թագավորի հիշատակի օրը՝ առանձին կանոնի տակ՝ Դեկտեմբերի 21-ին:

Զատիկը Մարտի 25-ին նահանջ տարում կատարելու ժամանակ մեկ տոնական օր էր  
մնում Առաջավորի Բարեկենդանի կիրակիից առաջ և Հունվարի 13-ից հետո: Սկզբնական շրջա-  
նում սրբերի երեք կանոն միացրել են և տոնել են մեկ օրում, իսկ 14-րդ դարից հետո այն զբա-  
ղեցրեց Հովհաննես Մկրտչի հիշատակի օրը, իսկ մյուս սրբերի կանոններն ամբողջությամբ տե-  
ղափոխվել են Վարդավառ - Աստուածածնի հատված, որտեղ Աստուածածնի պահքից առաջ  
մեկ շաբաթ կամ չորս օր ավելացել է և սրբերի մի մասի հիշատակի օրերը կատարել են այդտեղ,  
իսկ մյուս մասը տեղափոխել են Փոխման Աստուածածնի - Սուրբ Խաչի հատված, որովհետև  
Սուրբ Խաչի Պահքից առաջ ընկնող մեկ շաբաթ կամ չորս օր ավելացրել է: Պարզ է, որ սրբերի  
տոները կատարել են մեկ օրվա մեջ դնելով երկու կանոն:

Նույն օրինաչափությունը առկա է, երբ Զատիկը կատարվել է Մարտի 27-ին, միայն այս  
դեպքում 4 օր կամ մեկ շաբաթ ավելանում էր նաև Յիսնակամուտից առաջ: Վաղ շրջանում այդ  
ավելացած օրերին տոներ չեն նախատեսվել, իսկ հետագայում լրացրել են նաև այդ հատվածը  
«աւելորդաց» տոներով:

Զատիկը Մարտի 28-ին կատարելու ժամանակ Առաջավորի Բարեկենդանի կիրակիից առաջ  
և Հունվարի 13-ից հետո ավելացել է երկու տոնական օր, որը հնագույն շրջանում օգտագոր-  
ծել և տոնել են սրբերի երեքական կանոնները միացնելով մեկ օրվա մեջ, իսկ 14-րդ դարից հետո  
մեկ օրը հատկացվել է Հովհաննես Մկրտչին, իսկ մյուս օրում նույնպես երեք կանոն միացնելով  
տոնել են շաբթի առաջին երեք կանոնների սրբերի հիշատակները: Սրբերի հիշատակի մյուս կա-

նունները տեղափոխվել են, ինչպես Աստուածածնի պահպանից առաջ ընկնող շաբաթը, որը ավելին էր նախատեսված տոններից մեկ շաբաթով կամ 4 օրով, այնպես է Յիսնակամտի կիրակիից առաջ, որտեղ ևս ավելացել է 4 տոնելի օր կամ մեկ շաբաթ. Սիմեոն Երևանցու Տօնացույցում քննարկող շաբաթում նախատեսվել է սրբերի հիշատակի կանոններ:

Չատիկը Մարտի 29-ին կատարելու դեպքում Առաջավորի կիրակիից առաջ և Հունվարի 13-ից հետո ավելացել է երկու տոնելի օր, իսկ նահանջ տարիների համար՝ 3, որոնք իրացրել են նույն սկզբունքով ինչպես Մարտի 28-ի ժամանակ: Մյուս սրբերի հիշատակի օրերը տեղափոխել են Վարդավառ-Աստուածածնի միջև, որտեղ ավելացել է մեկ շաբաթ կամ 4 օր: Հարկ է նշել, որ Չատիկը Մարտի 29-ին կատարելու դեպքում և Յիսնակամուտը Նոյեմբեր 15-ին ընկնելու ժամանակ Ավագ տոներից առաջ երկու տոնելի օր ավելացել է, որը վաղ շրջանում չի օգտագործվել, իսկ ուշ շրջանում տոնել են սրբերի հիշատակներ, ինչպես տեսանք տօնացույցերի և ճաշոցների խմբագրությունները քննարկելիս:

Չատիկը Մարտի 30-ին կատարելու ժամանակ հասարակ տարում երեք տոնելի օր է եղել Առաջավորաց Բարեկենդանի կիրակիից առաջ և Հունվարի 13-ից հետո, իսկ նահանջում՝ 4, որտեղ վաղ շրջանում երեքական կանոն միացրել են մեկ օրվա մեջ, իսկ 19-րդ դարից հետո մեկ օրը հատկացրել են Հովհաննես Մկրտչին, իսկ մյուս երկու (երեք) օրը տոնել են նույն սկզբունքով, իսկ մնացած սրբերի հիշատակի կանոնները տեղափոխել են Աստուածածնի պահպանից առաջ ընկնող ավելացած շաբաթը կամ 4 տոնելի օրերը: Սիմեոն Երևանցու մոտ այդ սկզբունքը չի պահպանվել: Այս դեպքում ևս Ավագ տոներից առաջ ավելացել է երկու տոնելի օր, որը իրացրել են նույն սկզբունքով, որի մասին խոսեցինք վերևում: Չատիկը Մարտի 31-ին և Ապրիլի 1-ին տոնելու դեպքում մեկ շաբաթ կամ 4 օր մնում է Առաջավորի Բարեկենդանի կիրակիից առաջ և Հունվարի 13-ից, իսկ Ապրիլ 1-ի նահանջ տարում՝ 5 օր, որտեղ սրբերի տոները նախապես կարող էին կատարել երեքական կանոնը մեկ օրվա մեջ, իսկ 14-րդ դարից հետո մեկ տոնական օր հատկացվել է Հովհաննես Մկրտչին, իսկ երեք (չորս) օր մյուս սրբերի հիշատակներին: Մնացած սրբերի հիշատակի կանոնները տեղափոխել են Վարդավառ - Աստուածածնի հատված, որտեղ ավելացել է մեկ շաբաթ կամ 4 տոնելի օր: Սիմեոն Երևանցին չի պահպանել այդ սկզբունքը, այլ տվել է մեկական կամ խառը:

Չատիկը Ապրիլի 2-ին տոնելիս Առաջավորի Բարեկենդանի կիրակիի և Հունվարի 13-ի միջև մնացել է հինգ տոնելի օր, որի ընթացքում երեքական կանոն մեկ օրում միացնելուց հետո տոնվում են տոնացույցում նախատեսված բոլոր սրբերի հիշատակի օրերը: 14-րդ դարից հետո հիշյալ դեպքում մեկ օր հատկացվել է Հովհաննես Մկրտչին, որի հետևանքով ավելացել են երկու սրբերի հիշատակի կանոն, որը կարող էին տեղափոխել փոխման Աստուածածնի-Սուրբ Խաչի հատված, որտեղ ավելանում է մեկ շաբաթ կամ 4 տոնելի օր: Հասկանալի է, որ այդտեղ կարող էին տոնել ուրիշ սրբերի հիշատակի օրեր ևս վերցնելով Յայսմավուրից: Սիմեոն Երևանցին չի պահպանել գույգ-գույգ տոնելու կարգը այլ տվել է մեկական կամ խառը: Ասենք նաև, որ Յիսնակամուտը Նոյեմբերի 19-ին ընկնելու պատճառով Ադդեի և Դոմնայի կանոնները տոնվում են միասին հինգշաբթի օրվա տակ, որպեսզի Ավագ տոներից առաջինին տեղ լինի տոնացույցում:

Չատիկը Ապրիլի 3-ին լինելու դեպքում նույն օրինաչափությունն է գործում ինչ Ապրիլ 2-ի ժամանակ Ապրիլ 3-ին 6 տոնելի օր է լինում նահանջ տարիներին, միայն 4 տոնելի օրերը ավելանում են Սուրբ Խաչ-Յիսնակամտի հատվածի վերջին շաբաթում (Սուրբ Խաչը ընկնում է Սեպտեմբեր 11-ին, իսկ Յիսնակամուտը Նոյեմբերի 20-ին), որտեղ կարելի էր տոնել ավելորդ տոները: Այս դեպքում էլ Ավագ տոներից առաջ երկու տոնական կանոն միացվում և կատարվում է մեկ օրվա տակ, այն է՝ Հինգշաբթի, իսկ Շաբաթ օրը թողնվում Դավթի և Յակոբի հիշատակի տոնը կատարելու համար:

Չատիկը Ապրիլ 4-ին կատարելու ժամանակ Հունվարի 13 - Առաջավորի Բարեկենդանի կիրակիի միջև մնում է 6 տոնելի օր, որտեղ մեկ օրում երկուական և երեքական կանոններով տեղավորվում են սրբերի հիշատակի օրերը: Յիսնակամտից առաջ մեկ շաբաթ կամ 4 տոնելի օր է ավելանում, որովհետև Սուրբ Խաչը կատարվում է Սեպտեմբերի 12-ին, իսկ Յիսնակամուտը՝ Նոյեմբերի 21-ին: Այդ օրերը կարող էին օգտագործել Յայսմավուրքներում բերված սրբերի հիշատակները նշելու համար: Ասենք նաև, որ Ավագ տոները տոնելու համար ազատվում են հինգշաբթի և շաբաթ օրերը, իսկ այնտեղ նշված սրբերի հիշատակի օրերը տեղափոխվում են երեքշաբթի՝ երեք կանոններ միավորելով մեկ օրվա տակ:

Չատիկը Ապրիլի 5-ին տոնելիս Հունվար 13 - Առաջավորի Բարեկենդանի կիրակիի միջև մնում էր հասարակ տարում 6, իսկ նահանջ տարում 7 տոնելի օրեր, որտեղ մեկ օրվա տակ երկուական կանոններով տեղավորվում են սրբերի հիշատակի օրերը, իսկ 14-րդ դարից հետո Հովհաննես Մկրտչի տոները առանձին կատարելու հետևանքով վերջին օրերին մեկ օրվա մեջ դրվել են երեքական կանոններ: Այլ խոսքով հիշյալ հատվածում սրբերի հիշատակի օրերը տեղափոխվում են: Յիսնակամուտը Նոյեմբերի 17-ին ընկնելու պատճառով, իսկ Սուրբ Խաչը Սեպտեմբերի 15-ին լինելու հետևանքով նախատեսված սրբերի հիշատակի օրերը ավելանում են, որի համար Յիսնակամտից առաջ երկու կանոն տոնում են մեկ օրում: իսկ Ավագ տոների համար տեղ ստեղծելու նպատակով Ադդեի և Դոմնայի կանոնները միացրել են և տոնել հինգշաբթի օրը՝ շաբաթ օրը թողնելով 1-ին Ավագ տոնին:

Չատիկը Ապրիլի 6-ին ընկնելու դեպքում Հունվար 13 - Առաջավորի Բարեկենդանի կիրակիի միջև առկա են 7 տոնելի օրեր, իսկ նահանջ տարում՝ 8, որտեղ մեկ օրում տոնելով երկուական կանոն տեղափոխվում են սրբերի հիշատակի նշումները, իսկ 14-րդ դարից հետո վերջին օրերում մեկ օրում տոնել են երեքական կանոններով: Ավագ տոներից առաջ մնացել է երկու տոնելի օր, որը վաղ շրջանում չի օգտագործվել, իսկ ուշ շրջանում տոնել են սրբերի հիշատակները հատկապես տեղափոխելով Վարդավառի երկուշաբթի և երեքշաբթի կանոնները՝ Վարդավառի տօնը երեք օր կատարելու հետևանքով:

Չատիկը Ապրիլ 7-ին կատարելու ժամանակ Հունվար 13 - Առաջավորի Բարեկենդանի կիրակիի միջև եղել է 8 տոնելի օր, որտեղ սրբերի հիշատակի օրերը նույնիսկ սկզբնամասում տոնել են մեկական կանոնով, իսկ ընդհանրապես մեկ օրում երկու կանոն միացնելով: Տօնական տարվա մնացած հատվածներում ավել օրեր չեն մնացել և որևէ տեղ կանոնները չեն միացել:

Չատիկը Ապրիլի 8-ին ընկնելու դեպքում Հունվար 13 - Առաջավորի Բարեկենդանի կիրակիի միջև հասարակ տարում՝ 9 և մնացել է 8 տոնելի օր իսկ նահանջ տարում կատարել են նույն օրինաչափությունը, ինչ Ապրիլ 7-ի դեպքում: Վարդավառից մինչև Աստուածածնի պահպանից երեք շաբաթ է եղել, որի հետևանքով նախատեսված 4 շաբաթվա սրբերի հիշատակի կանոնները վերջին շաբաթում մեկ օրվա մեջ նշել են երկուական կանոններով, թեև վաղ շրջանում վերջին շաբաթվա սրբերի կանոնները նույնությամբ կարող էին տեղափոխել Փոխման Աստուածածնի և Սուրբ Խաչի միջև ընկնող հատված, որտեղ Սուրբ Խաչի պահպանից առաջ ավելանում է մեկ շաբաթ կամ 4 տոնելի օր: Հետագայում այս շաբաթվա օրերը զբաղված են, որովհետև Փոխման Աստուածածնի օրերն ընդլայնվել էին և դարձել 9 օր, որի հետևանքով այդ հատվածի սրբերի հիշատակի օրերը նույնությամբ տեղավորվել են մեկ շաբաթով դեպի ետ: Ավագ տոների տեղ մնալու հետևանքով Ադդեի և Դոմնայի կանոնները միացրել են և տոնել հինգշաբթի օրը:

Չատիկը Ապրիլի 9-ին կատարելու ժամանակ Հունվար 13-ի և Առաջավորի Բարեկենդանի կիրակիի միջև եղել է 9 տոնելի օր, որտեղ սրբերի հիշատակի օրերը հիմնականում տոնել են նույն օրինաչափությամբ, ինչպես Ապրիլ 8-ի դեպքում, միայն տոնական շաբթի սկզբնական հատվածում մի քանի կանոններ դրվել են առանձին-առանձին մեկ օրվա տակ, իսկ մնացած



դեպքում երկուական կանոն մեկ օրվա տակ: Վարդավառի հատվածում նույնպես միացրել են և տոնել մեկ շաբաթվա մեջ, թեև Սուրբ Խաչի պահպանից առաջ մեկ շաբաթ կամ 4 տոնելի օրեր ա- վելացրել են և վաղ շրջանում կարող էին տեղափոխել հիշյալ հատված: Ավագ տոներից առաջ նույնպես միացրել են մեկ օրվա տակ սրբերի երկու կանոն:

Ձատիկը Ապրիլ 10-ին տոնելու ժամանակ Հունվարի 13-ի և Առաջավորի Բարեկենդանի միջև հասարակ տարում մնացել է 9 տոնելի օր, իսկ նահանջ տարում՝ 10, որն իրացրել են նա- խորգ օրերի նման: Վարդավառի վերջին երկու շաբաթների տոները նույնպես միացրել և կա- տարել են մեկ շաբաթվա մեջ: Սուրբ Խաչը Սեպտեմբերի 11-ին և Յիսնակամուտը Նոյեմբերի 20-ին ընկնելու պատճառով մեկ շաբաթ կամ 4 տոնելի օր ավելացել է Յիսնակամուտից առաջ, որտեղ կարող էին տոնել ավելորդաց տոները: Այս դեպքում էլ Ադդէի և Դոմնայի կանոնները միացրել են մեկ օրվա տակ՝ Ավագ տոներից 1-ին տեղ հատկացնելու հետևանքով:

Ձատիկը Ապրիլ 11-ին կատարելու ժամանակ Հունվար 13-ի և Առաջավորի Բարեկենդա- նի միջև եղել են 10 տոնելի օրեր, որտեղ տեղավորվել են սրբերի հիշատակի օրերը սկզբնական հատվածում մեկական կանոններով, իսկ ավելի ներքևում մեկ օրվա տակ երկուական կանոննե- րով: Վարդավառի վերջին երկու շաբաթվա սրբերի կանոնները միացրել են մեկ շաբաթվա տակ: Սուրբ Խաչը Սեպտեմբերի 12-ին, իսկ Յիսնակամուտը Նոյեմբերի 21-ին ընկնելու պատճառով Յիսնակամուտից առաջ ավելացել է մեկ շաբաթ կամ 4 տոնելի օր, որտեղ ավելացել են սրբերի հիշատակի օրեր, կամ տեղափոխել Վարդավառի երկուշաբաթվա և երեքշաբթվա կանոնները կամ Յայսմավուրքներից են ընտրել սրբերի հիշատակի օրերը: Այս դեպքում Ավագ տոների հա- մար օրեր առանձնացնելու համար երեք կանոն տեղավորել են մեկ օրվա՝ Երեքշաբաթի տակ:

Ձատիկը Ապրիլ 12-ին ընկնելու դեպքում Հունվար 13 - Առաջավորի Բարեկենդանի կի- րակի միջև հասարակ տարում լինում 10 տոնելի օր, իսկ նահանջում՝ 11, որտեղ Սրբերի հիշա- տակի օրերը սկզբնական օրերին տոնվում է մեկական կանոնի տակ, իսկ հաջորդ օրերը մեկ օրում երկուական կանոնով: Վարդավառից հետո եկող շաբաթների քանակը կրճատվելու հետ- ևանքով վերջին երկու շաբաթվա սրբերի հիշատակի օրերը միացվում են մեկ շաբաթվա մեջ յուրաքանչյուր օր երկուական կանոններով: Իսկ Ավագ տոներից առաջ մնում է երկու տոնելի օրեր:

Ձատիկը Ապրիլ 13-ին կատարելու ժամանակ Հունվար 13 - Առաջավորի Բարեկենդանի կիրակիի մեջ հասարակ տարում մնում են 11 տոնելի օրեր, իսկ նահանջում 12, որի հետևանքով այդտեղ դրված սրբերի հիշատակի օրերը տոնվում են մեկական կանոնների տակ, բացառու- թյամբ վերջին երեք օրերը, որտեղ տոնում են երկուական կանոնով: Վարդավառի վերջին շա- բաթում մեկ օրվա տակ տոնվում է երկուական կանոնով: Իսկ Ավագ տոներից առաջ մնում է մեկ տոնելի օր ավելի:

Ձատիկը Ապրիլի 19-ին լինելու դեպքում Հունվար 13 - Առաջավորի Բարեկենդանի միջև առակա 12 տոնելի օրեր, որտեղ սրբերի հիշատակի օրերը նշվում են մեկական կանոնով, բացա- ռությամբ վերջին երկու օրը, որտեղ մեկ օրվա տակ տոնվում է երկու կանոն: Այստեղ ևս Վար- դավառի վերջին շաբաթում Աստուածածնի պահպանից առաջ երկու շաբաթվա համար նախա- տեսված սրբերի հիշատակի օրերը տոնում են մեկ օրում երկուական կանոնով: Տարվա մեջ մնա- ցած հատվածներում ավելի կամ պակաս օրեր չեն լինում:

Ձատիկը Ապրիլի 15-ին կատարելու ժամանակ Հունվարի 13 - Առաջավորի Բարեկենդանի կիրակիից առաջ հասարակ տարում լինում է 12 տոնելի օր, իսկ նահանջ տարում՝ 13, որի շնոր- հիվ սրբերի հիշատակի օրերը հիմնականում տոնվում են մեկական կանոնով, բացառությամբ նաև է կազմում վերջին երկու օրը, որտեղ երկուական կանոնով են տոները կատարում:

Վարդավառի յուրաքանչյուր օրվա տակ ընկնում է երկու կանոն, որովհետև սրբերի տո- ներին մնում է երկու շաբաթ կամ 8 տոնելի օր: Սուրբ Խաչի պահպանից առաջ մեկ շաբաթ կամ չորս տոնելի օր ավելանում է, որտեղ կարող էին տոնել Վարդավառից հետո եկող որոշ սրբերի հիշատակի օրերը, եթե չէին ուզում տոնել մեկ օրում երկուական կանոնով:

Ձատիկը Ապրիլի 16-ին կատարելու դեպքում Հունվար 13 - Առաջավորի Բարեկենդանի կիրակիի միջև առակա է 13 օր, որտեղ սրբերի հիշատակի օրերը հիմնականում տոնել են մեկական կանոնով, բացառությամբ վերջին օրվա, որտեղ տոնվել է երկու կանոնով: Այս դեպքում էլ Վարդավառի յուրաքանչյուր օր տոնվել է երկուական կանոնով՝ 16 օրվա փոխարեն 8 օր ունե- նալու պատճառով: Թեև հիշյալ որոշ սրբերի հիշատակի օրեր կարող էին տեղափոխել սուրբ Խաչի պահպանից առաջ ընկնող մեկ շաբաթվա մեջ, որն ավելացել է վաղ շրջանում օգտագործ- ված տոնացույցում: Ավագ տոներից առաջ հինգշաբթի օրվա տակ տոնվում է երկու կանոնով:

Ձատիկը Ապրիլ 17-ին լինելու ժամանակ Հունվար 13 - Առաջավորի Բարեկենդանի կիրա- կիից առաջ հասարակ տարում առակա է 13 տոնելի օր, իսկ նահանջ տարում՝ 14, սրբերի հիշա- տակի օրերը տոնվում են մեկական կանոնով, բացառյալ վերջին օրը, որտեղ տոնվել է երկու կանոն: Այս դեպքում էլ Վարդավառի հատվածում մեկ օրում տոնվում է երկուական կանոնով, թեև որոշ տոներ կարող էին տեղափոխել Յիսնակամուտից առաջ ընկնող ավելացված մեկ շաբա- թում կամ չորս տոնելի օրերում: Ավագ տոների համար Ադդէի և Դոմնայի հիշատակի օրերը միացվում է մեկ կանոնի տակ:

Ձատիկը Ապրիլ 18-ին կատարելու դեպքում Հունվարի 13 - Առաջավորի Բարեկենդանի կիրակիի միջև առակա է 14 տոնելի օր, որում ամբողջապես մեկական կանոնի տակ տոնվել է նա- խատեսված սրբերի հիշատակի օրը: Այս դեպքում էլ Վարդավառից հետո նախատեսված սրբերի տոները նշվել են երկուական կանոններով: Թեև Յիսնակամուտից առաջ մեկ շաբաթ կամ չորս տոնելի օրվա մեջ կարող էին տոնել: Ավագ տոներից առաջ ընկնող հիշատակի օրերը տեղա- փոխվում են երեքշաբթի՝ Թեոպոմպոսի և այլոց կանոնի տակ:

Ձատիկը Ապրիլի 19-ին տոնելու ժամանակ Հունվար 13 - Առաջավորի Բարեկենդանի միջև հասարակ տարում ընկնում են 14 օրեր, իսկ մեկական կանոնի տակ նշել են նախատեսված սրբերի հիշատակի օրերը: Այս դեպքում էլ Վարդավառից հետո սրբերի հիշատակի օրերը եր- կուական կանոնով են տոնել: Ավագ տոներից առաջ երկու տոնելի օրեր են ավելանում:

Ձատիկը Ապրիլի 20-ին կատարելու դեպքում Հունվար 13 - Առաջավորի Բարեկենդանի կիրակիի միջև հասարակ տարում առակա է 15 տոնելի օր, իսկ նահանջ տարում՝ 16, որտեղ ոչ միայն մեկական կանոնով տոնել են նախատեսված սրբերի հիշատակի օրերը, այլև մեկ տոնա- կան օր Հնագույն տոնացույցում ավելանում է: Այդ է պատճառը, որ հետագա տոնացույցերում ավելացրել են նոր սրբերի անուններ նշված հատվածում: Այդպես է նաև Ապրիլ 21-25-ի Ձա- տիկի կատարման ժամանակ: Այս դեպքում էլ Վարդավառի հատվածի տոները նշել են երկուա- կան կանոնով: Իսկ Ավագ տոներից առաջ մնացել է ավելի մեկ տոնելի օր:

Ձատիկը Ապրիլի 21-ին կատարելու ժամանակ թե հասարակ, թե նահանջ տարիներում ա- ռակա է 16 տոնելի օր և երկու տոնելի օր ավելացրել է Հունվար 13 - Առաջավորի Բարեկենդա- նի կիրակիի միջև: Այս դեպքում էլ Վարդավառից հետո եկող սրբերի տոները կատարելի են մեկ օրվա տակ երկուական կանոններով: Տոնական տարվա մյուս հատվածներում ավելի կամ պա- կաս օրեր չեն եղել:

Ձատիկը Ապրիլի 22-ին տոնելու դեպքում հասարակ տարում առակա է 16 տոնելի օր, իսկ նահանջ տարում 17, որտեղ նույնպես երկու (3) օր ավելանում է Հունվար 13 - Առաջավորի Բարեկենդանի միջև: Վարդավառից հետո տոնել են մեկ շաբաթվա կամ 4 օրվա սահմաններում սրբերի հիշատակի օրերը երկուական կանոններով, իսկ մնացած սրբերի հիշատակի օրերը կարող

էր տեղափոխվել Սուրբ Խաչի պաշտօնից առաջ ընկնող շաբաթվա մեջ կամ Հունվար 13 - Առաջավոր Բարեկենդանի հատված, որովհետև այնտեղ մեկ շաբաթ կամ չորս տոնելի օր կամ 2 (3) տոնելի օրեր ավելացրել էր: Բացի այդ ավագ տոներից առաջ մեկ տոնական օր ավելացել է:

Ձատիկը Ապրիլի 23-ին նշելիս Հունվար 13 - Առաջավոր Բարեկենդանի կիրակիից առաջ եղել է 17 տոնելի օր և ավելացրել է երեք տոնելի օրեր, որտեղ հետագա տոնացույցերում դրել են սրբերի նոր անուններ: Այստեղ ևս Վարդավառից հետո տոնել են 8 կանոններ չորս տոնելի օրվա մեջ, իսկ մնացած սրբերի հիշատակի օրերը տեղափոխել են Սուրբ Խաչի պաշտօնից առաջ ընկնող շաբաթվա մեջ կամ Հունվար 13 - Առաջավոր Բարեկենդանի կիրակիի միջև, որտեղ ավելացել էին տոնական օրեր: Այստեղ ևս Ավագ տոների համար Ադդեի և Դոմնայի հիշատակի օրերը միացել են մեկ օրվա տակ:

Ձատիկը Ապրիլի 24-ին լինելու ժամանակ հասարակ տարում եղել է 17 տոնելի օր, իսկ նախնային 18, Հունվար 13 - Առաջավոր Բարեկենդանի կիրակիի միջև ավելացել է երեք (4) տոնելի օր: Այս դեպքում ևս Վարդավառի հատվածում մեկ շաբաթվա մեջ երկուական կանոնով տոնել են սրբերի հիշատակները, իսկ մյուս տոները տեղափոխել են Յիսնականատի կիրակիից առաջ կամ Հունվար 13 և Առաջավորի միջև, որտեղ մեկ շաբաթ ավելացել է այդ տոնական տարում: Ավագ տոների համար այստեղ ևս Ադդեի և Դոմնայի հիշատակի օրերը միացրել են:

Ձատիկը Ապրիլ 25-ին կատարելու ժամանակ եղել է 18 տոնելի օր Հունվար 13 - Առաջավոր Բարեկենդանի միջև ավելացել է 4 տոնելի օր, բայց վերջին օրն ընկել է Տեառնընդառաջի օրը, որը ամենայն հավանականությամբ սրբի տոն չի տոնվել: Վարդավառի հատվածում տոնել են միայն 4 տոնելի օր, իսկ մյուս սրբերի տոները տեղափոխել են Հունվար 13 - Առաջավոր Բարեկենդանի կիրակիի կամ Յիսնականատից առաջ: Իսկ ավագ տոների համար երեքշաբթի օրվա տակ տոնել են 3 կանոնում եղած սրբերի հիշատակի օրը:

Սիմեոն Երևանցու «Տօնացոյց»-ի երկրորդ հատորում տոնական օրերը և նրանցում կատարված փոփոխությունները ներկայացվել է Տարեգրքերով, այսինքն Ձատիկի 35 օրերի կանոններով, ինչպես և մյուս հիմնական տոների կտրվածքով: Նա հիմնականում չի պահպանել Հնագույն տոնացույցերի սկզբունքները, որոնք վերաբերում էին օրինաչափությունների խախտումներին: Այն հասկանալու համար պետք է վերլուծել յուրաքանչյուր տարեգրքից ելնող խմբագրությունները:

Ա(Մ 22) տարեգրքի տոնական տարին տալիս, ինչպես և մյուս տարեգրքերի դեպքում Ս. Երևանցին իբրև ընդհանուր կանոն տօնացույցի 2-րդ հատորի նախաբանում նշել է, որ տոնացույցային տարին ներկայացնում է հասարակ տարիների համար, իսկ նախնային տարիներն կուսական օրերի համար, որոնք ընկել են Հունվարի 6-ի - Փետրվարի վերջի սահմաններում, սա-կայն չի պահպանել այդ կանոնը: Այսպես Ա տարեգրքի մեջ նշվել է Հունվար 11, կիրակի, վեցերորդ օր Ծննդեան Քրիստոսի (և Բարեկենդան Առաջավորի պահոցն): Նախնային տարում՝ Ա տարեգրքի դեպքում կլինի Հունվար 12, կիրակի, 7-րդ օր Ծննդեան Քրիստոսի (և Բարեկենդան Առաջավորի պահոցն): Այսպես է նաև բոլոր տարեգրքերի ժամանակ տոնացույցում Հունվար 13 - Առաջավոր Բարեկենդանի կիրակիի միջև նախատեսված տոնական օրերին տեղ չլինելու պատճառով, որովհետև Առաջավոր Բարեկենդանի կիրակին ընկել է Հունվարի 11-ին (կամ 12-ին), տեղափոխել է Վարդավառի հատված Վերափոխման Աստուածածնի պաշտօնից առաջ ընկած և - նախատեսված տոնական օրերից ավելացված վերջին երեք շաբաթները, եղել է ավել 12 տոնելի օրեր նախորդ տոնացույցերի 2 շաբաթվա կամ 8 տոնելի օրերի փոխարեն: Ընդ որում Հովհաննես Կարապետի տոնի օրը հանել է Տօնացույցի մեջ դրված ցանկից և տեղափոխել Սուրբ Սարգսի և այլոց հիշատակի օրվա տեղը՝ Հունվար 17, շաբաթ (նախնային տարվա տարբերակում կլինի Հունվար 18, շաբաթ), իսկ վերջիններս էլ փոխադրել է և միացրել Ատոմեանց զորավարաց տո-

նին, որը եղել է հաջորդ երկուշաբթի օրը՝ Հունվարի 19-ին (նախնային տարվա տարբերակում կլինի Հունվարի 20-ին երկուշաբթի): Փետրվարի 11-ին միշտ կատարվել է Տեառնընդառաջը, որը Ա տարեգրքի հասարակ տարիներին ընկել է Մեծ Պահքի երկրորդ շաբաթ օրը (նախնային տարում կընկնի՝ Փետրվարի 14-ին, բայց ուրբաթ), որի հետևանքով Կիրեղեանց հայրապետացն և մօրն Աննայի հիշատակի օրը տեղափոխվել է հաջորդ շաբաթ՝ տոնելով Յոհաննու Երուսաղեմայ հայրապետի և այլոց հետ: Նախնային տարում հիշյալ տեղափոխությունը չի կատարվի, որովհետև Տեառնընդառաջն ընկնի ուրբաթ:

Վարդավառի երրորդ կիրակիից հետո ընկնող շաբաթ օրը սովորաբար նշվել է «Եփեսոսի սուրբ ժողովոյն, երկուհարիւր հայրապետացն», որը Ա տարեգրքի ժամանակ տեղափոխել է Վերափոխման Աստուածածնի պաշտօնից առաջ ընկնող շաբաթ օրը՝ Օգոստոս 8-ին, իսկ դրա փոխարեն տեղադրել է Պետրոս հայրապետին, Վլասայ եպիսկոպոսին և Աբիսողոմայ սարկավագին նվիրված հիշատակի օրը, այն է՝ Հուլիս 18, շաբաթ, որից հետո տոնելի օրերը դրվել է Հունվար 13 - Առաջավոր Բարեկենդանի միջև եղող մյուս սրբերի շարքը հետևյալ հերթականությամբ.

Անտոնի ճգնավորի (Հուլիս 20, երկուշաբթի)

Թեոդորոսի թագավորի և Մանկանց Եփեսոսի (Հուլիս 21, երեքշաբթի):

Կիրակոսի և Յողիտայի (Հուլիս 23, հինգշաբթի)

Աթանասի և Կիրղի հայրապետացն (Հուլիս 25, շաբաթ):

Վահանայ գումարած Գորդիոսի և այլոց (Հուլիս 27, երկուշաբթի):

Տիփոնի, Պարսամայ և Մնոփրիոսի ճգնավորացն (Հուլիս 28, երեքշաբթի):

Եւգինեաց կուսին և այլոցն (Հուլիս 20, հինգշաբթի):

Գրիգոր Աստուածաբանին (Օգոստոս 1, շաբաթ):

Եւգինէոսի և այլոցն (Օգոստոս 3, երկուշաբթի):

Եթե համեմատենք Տօնացույցի մեջ տված շաբթի հետ կտեսնենք, որ իր իսկ տված շաբթը խախտել է և Աթանասի և Կյուրեղի հիշատակի օրը դրել է Վահանայ Գողթնեցու տեղը, իսկ վերջինիս նույն օրվա տակ ավելացրել է Գորդիոսի և այլոց կանոնը, որոնք տոնացույցի շաբթի մեջ գալիս են Աթանասի և Կյուրեղի կանոնից հետո: Այս փոփոխությունների հետևանքով երկու տոնելի օր է շահել, մեկը՝ Յովհաննես Կարապետի, մյուսը Վահան Գողթնեցու և Գորդիոսի և այլոց օրերի միացման հաշվին:

Այս հատվածում տոնական շաբթը շարունակվել է Վերափոխման Աստուածածնից հետո եկող և վերջին շաբաթվա համար Տօնացույցում նախատեսված երեք տոնական կանոններով, որտեղ տոնելի օրեր չեն մնացել, որի հետևանքով տեղափոխել է հիշյալ հատված, սկսելով

Անդրէի զօրավարի և այլոց (Օգոստոս 4, երեքշաբթի):

Անդրիանոսի և այլոցն (Օգոստոս 6, հինգշաբթի):

Եփեսոսի ժողովի (Օգոստոս 8, շաբաթ):

Իսկ Տօնացույցում նույն շաբաթվա մեջ հինգշաբթի օրը նախատեսված «Աբրահամու և Խորենաց և անարծաթ բժշկացն Կողմայի և Դամիսոսի և Աստուածատրոյ վկայի» հիշատակի օրը, որը նախորդ տոնացույցերում դրվել էր Վարդավառից հետո եկող երկուշաբթի և երեքշաբթի օրերին, բաժանելով երկու կանոնի, ինչպես նախորդ տոնացույցերում էր, ավելացրել է Ավագ տոներից առաջ, որտեղ առկա է երկու տոնելի օր, այն է՝ Դեկտեմբերի 21-ին, երկուշաբթի՝ Աբրահամու և այլոց, իսկ Դեկտեմբերի 22-ին՝ Աստուածատրոյ վկայի: Խաչալուտից հետո եկող շաբաթվա մեջ Հիպիրիբեանց և Սեբոսիանոսի և այլոց հիշատակի օրերը միացրել է մեկ տոնա-



կան օրվա մեջ՝ Հոկտեմբերի 27-ին Երեքշաբթի, իսկ Հոկտեմբերի 31-ին շաբաթ եղել է «տոն ամենայն սրբոց Հնոց և Նորոց»:

Ա տարեգրի դեպքում Նոյեմբերի 21-ին ընկել է շաբաթ և տոնել են «Սուրբ Աստուածածնի երկու ամացն», որն ընկել է Յիսնակամտի Պահքի շաբաթ օրը, իսկ տոնացուլյցում այդտեղ նախատեսված «Գրիգորի սքանչեալագործի, Նիկողայոսի Հայրապետի և Միւռոնայ եպիկոպոսի» հիշատակի օրը տեղափոխել է Սուրբ Հակոբի պահքից առաջ ընկնող շաբաթ օրը այն է դեկտեմբերի 5-ին: Ահա տարբերությունները, որ առակա է Սիմեոն Երեւանցու Տոնացուլյցի Ա տարեգրի դեպքում:

Բ(Մ 23) տարեգրի աղյուսակում նշվել է. Հունվարի 12, կիրակի. է օր ծննդեան Քրիստոսի (Բարեկենդան Առաջավորի պահոցն): Այն հասարակ տարիների համար է: Բ տարեգրի նահանջ տարիների համար կլինի Հունվար 13, կիրակ. 8-րդ օր Ծննդեան Քրիստոսի և Բարեկենդան Առաջավորի պահոցն: Հունվարի 13-ի և Առաջավորի Բարեկենդանի կիրակիի միջև նախատեսված տոնական օրերը Ա տարեգրի նման, միայն ամսաթվի փոփոխությամբ՝ մեկ օր ավելի, ինչպես նշվել է: Սրբերի հիշատակի օրերը տեղափոխել են Վարդավառի հատված: Նույնն է կատարվել Հովհաննես Կարապետի տոնի հետ, միայն դրվել է Հունվար 18-ին (նահանջ տարվա տարբերակում կլինի Հունվար 19-ը), իսկ Սուրբ Սարգսի և այլոցն Ատոմեանց զորավարաց հետ՝ Հունվարի 21-ին): Բ տարեգրի ժամանակ Յիսնակամտից հաշված 3-րդ կիրակիից (կամ Յիսնակամտից հետո եկող 2-րդ կիրակիից, ըստ Սիմեոն Երեւանցու) հետո եկող երկուշաբթի և երեքշաբթի օրերի կանոնները միացրել է երկուշաբթի օրվա տակ, այն է՝ Դեկտեմբերի 1, որտեղ տոնվող «Գենարիոսի և Մեռեկեոսի» հիշատակի օրվա ավելացրել է «Յակովկայ և Իրավափառայ» հիշատակի կանոնը, իսկ երեքշաբթի օրվա տակ՝ Դեկտեմբերի 2-ին դրել է «Կուռնելիոսի և Շմավոնի, Պողիկարպոսի և Արեւելեան վկայիցն, որը տեղադրված է Յիսնակատից հաշված 4-րդ կիրակիից (ըստ Ս. Երեւանցու՝ 3-րդ) հետո ընկնող երեքշաբթի: Բացի այդ Ավագ տոներից առաջ մնացել է մեկ օր, որի հետևանքով Աբրահամու... Աստուածատրոյ վկայի կանոնը կրկին միացրել է:

Գ (Մ 24) տարեգրի ցանկում դրել է Հունվարի 13-ին, կիրակի. Ը օր Ծննդեան և Թշվատու Քրիստոսի (եւ Բարեկենդան Առաջավորի պահոցն), որը հաշված է հասարակ տարիների համար: Գ տարեգրի նահանջ տարիները կընկնեն Հունվար 14-ին, որը կլինի Բարեկենդան Առաջավորի պահոց կիրակին, բայց Ծննդեան օրերն սպառված կլինեն: Հունվարի 13-ի և Առաջավոր Բարեկենդանի կիրակիի միջև նախատեսված տոները դրվել է Ա և Բ տարեգրերի նման, միայն Ա-ից 2 օրվա, իսկ Բ-ից 1 օրվա տարբերությամբ, ինչպես նշել է տոնացուլյցի 2-րդ հատորում:

Նույնն է կատարվել Հովհաննես Կարապետի օրվա հետ, միայն դրվել է Հունվարի 19-ին (նահանջ տարվա տարբերակում՝ Հունվարի 20-ին), իսկ Սուրբ Սարգսի և այլոցը դրել է Ատոմեանց զորավարաց հետ՝ Հունվարի 21-ին (նահանջ տարվա տարբերակում կլինի Հունվարի 22-ին):

Հիպիրիքեանց և Սեւոփանոսի և այլոց տոների օրերը համադրել է մեկ տոնական օրվա մեջ Հոկտեմբերի 29-ին, երեքշաբթի, իսկ Նոյեմբերի 2-ին, շաբաթ դրել է «Տօն ամենայն սրբոց Հնոց և Նորոց»:

Յիսնակամտից հաշված 2-րդ կիրակիից (Ս. Երեւանցու մոտ 1-ին) հետո երկուշաբթի օրը Նոյեմբեր 25-ին «Յուլիանեայ և Վասիլուհու» հիշատակի օրվանը ավելացրել է Աբրահամու և այլոցն կանոնը:

Բ տարեգրի նման Գենարիոսի և այլոց միացրել է մեկ օրվա մեջ և նշել Դեկտեմբերի 2-ին, նույնպես երկուշաբթի, իսկ Երեքշաբթի օրվա կանոնի տակ, որն ընկել է Դեկտեմբերի 3-ին, տեղափոխել է «Մինասայ, Երմոգինեայ և Գրաբոսի և Կամավոր աղքատացն Յոհանու և Ալէք-

սիանոսի» կանոնը, որը տոնացուլյցում սովորաբար նշել է Սուրբ Յակոբի պահքի երկուշաբթի օրը:

Դ (Մ 25) տարեգրի դեպքում Հունվարի 14-ին, կիրակի դրել է Բարեկենդան Առաջավորին (նահանջ տարվա մեջ վերջինս կընկնի Հունվարի 15-ին): Յոհանու Կարապետի օր է սահմանել նախորդ տարեգրերի նման, միայն Հունվարի 20-ին, իսկ Սարգսի և այլոցն՝ Հունվարի 22-ին: Ասենք, որ նահանջ տարվա դեպքում Յոհանու Կարապետի տոնի օրը մնում է իր բնական տեղում ծննդան 8 օրյա տոներից հետո Հունվարի 14-ին շաբաթ, որովհետև Հունվարի 13-ի և 15-ի միջև մեկ տոնելի օր է մնում, որը նկատի չի ունեցել Ս. Երեւանցին և չի նշել իր Տոնացուլյցի մեջ:

Հունվար 13 - Առաջավորի Բարեկենդանի միջև նախատեսված սրբերի հիշատակի օրերը տեղափոխել է Վարդավառից հետո, սակայն Տոնացուլյցի, ինչպես և նախորդ տարեգրերի կարգը չի պահպանվել և տվել հետևյալ ձևով.

Պետրոսի և այլոց (Հուլիս 21, շաբաթ):

Անտոնի ճգնավորի (Հուլիս 23, երկուշաբթի):

Թեոդոս թագավորի և Մանկանց Եփեսոսի (Հուլիս 24, 3):

Կիրակիոսի ... գումարել է Գորգիոսի և այլոցն (Հուլիս 26, 5):

Աթանասի ... ավելացրել է Գրիգորի Աստուածաբանի (Հուլիս 28, 7):

Վահան Գողթնեցուն գումարել է Եւգենեայ կուսին և այլոցն (Հուլիս 30, 2):

Տրիփոնի և այլոցն (Հուլիս 31, 3):

Եւգենէոսի և այլոցն (Օգոստոս 2, 5):

Եփեսոսի սուրբ ժողովոյն՝ 200 Հայրապետացն (Օգոստոս 4, 7):

Հիպիրիքեանց և Սեւոփանոսի և այլոցն տվել է մեկ օրվա տակ՝ Հոկտեմբերի 30-ին, չորեքշաբթի:

Գենարիոսի Իրավափառայ միացրել է մեկ օրվա տակ և դրել Դեկտեմբերի 3-ին երկուշաբթի: Իսկ Դեկտեմբերի 4-ին, երեքշաբթի տեղափոխել է «Աբգարու թագավորի» տոնի օրը, փաստորեն Յիսնակամտից հաշված հինգերորդ կիրակիի (Ս. Երեւանցու մոտ՝ 4-րդ) հետո եկող շաբաթ օրվանից փոխադրելով Յիսնակամտից հաշված երրորդ կիրակիից (Ս. Երեւանցու մոտ՝ 2-րդ) հետո եկող երեքշաբթի, այսինքն Յակոբի պահքից առաջ ընկնող շաբաթ:

Դ տարեգրի մեջ Յիսնակամտից հաշված հինգերորդ կիրակիից (Ս. Երեւանցու մոտ՝ 4-րդ) եկող շաբաթ օրը՝ Դեկտեմբերի 22-ին դրել է Սրբոց Հայրապետացն Բարսղի և այլոցն հիշատակի օրը, որը տոնացուլյցում նախատեսվել է տոնել Ծննդեան պահքի շաբաթ օրը:

Այլ նոսքով Դ տարեգրի մեջ ևս ակնհայտ է տարբերությունը համեմատած Տոնացուլյցի կանոնների հետ:

Ե (Մ 26) տարեգրի դեպքում Հունվար 13 - Առաջավորի Բարեկենդանի կիրակիի միջև մնում է մեկ տոնելի օր, որը հասարակ տարիներին, ինչպես տրվել է Ս. Երեւանցու մոտ, ընկել է Հունվարի 19-ին, շաբաթ, որովհետև Հունվարի 14-ն ուրբաթ է՝ ոչ տոնելի օր: Մյուս սրբերի հիշատակի օրերը տեղափոխել է Վարդավառից հետո Դ տարեգրի հերթական կարգը պահպանելով, սակայն մեկ օրվա տարբերությամբ (Պետրոսի և այլոցն Հուլիսի 21-ի փոխարեն Հուլիսի 22-ին և այլն): Վերափոխման Աստվածածնից հաշված երկրորդ կիրակիից հետո եկող շաբաթ օ-

<sup>1</sup> Այսուհետև շաբաթվա օրերը տալիս ենք թվերով, որտեղ կիրակի՝ 1, երկուշաբթի՝ 2, երեքշաբթի՝ 3, չորեքշաբթի՝ 4, հինգշաբթի՝ 5, ուրբաթը՝ 6 և շաբաթը՝ 7:

ըր. Օգոստոսի 26-ին, թողել է միայն թովմայի առաքյալի հիշատակը, իսկ «առաքելոցն Յակոբայ և Շմաւոնի» տեղափոխել է 3-րդ կիրակիից հետո եկող շաբաթ օրը՝ Սեպտեմբեր 2-ին. նի-կիայի ժողովին մասնակցած 318 հայրապետները հիշատակի օրվա տեղը, իսկ վերջինս տարել է 4-րդ կիրակիից հետո եկող շաբաթ օրը՝ Սեպտեմբերի 9-ին: Գեներալի ... Իրավափառայ հիշա-տակի օրերը միացրել է դրել երկուշաբթի՝ Դեկտեմբերի 4-ին, իսկ Աբգար թագավորի հիշատակի օրը տեղադրվել է երեքշաբթի՝ Դեկտեմբերի 5-ին, ինչպես Դ տարեգրում է, միայն ամսաթվերի մեկօրյա տարբերությամբ: Տարվա վերջին հատվածի մասին գրեցինք փոքր ինչ առաջ:

Զ (M 27) տարեգրի ժամանակ Հունվար 13 - Առաջավորի Բարեկենդանի կիրակիի միջև առկա է մեկ տոնելի օր, որը հասարակ տարիների համար հաշվել և դրել է Հունվար 15-ին, շա-բաթ. Յոհաննու Կարապետին, իսկ նահանջ տարիներին այդ հատվածում լինում է երկու տոնե-լի օր՝ Հունվարի 14-ին հինգշաբթի և Հունվարի 16-ին շաբաթ, որը Ս. Երեւանցին հաշվի չի ա-ռել և Պետրոս հայրապետի և այլոց հիշատակի օրը տեղափոխել է Վարդավառից հետո (նա-հանջ տարում այն դրվելու է Հունվարի 16-ին, իսկ Յոհաննու Կարապետինը՝ Հունվարի (4-ին) և կարգել Դ-ի և Ե-ի նման, միայն վերջինիցս մեկ օրվա տարբերությամբ: Յիսնականտից ա-ռաջ ընկնող շաբաթվա մեջ տեղափոխել է Վերափոխման Աստուածածնի 4-րդ կիրակիից հետո դրված սրբերի հիշատակի օրերը, այն է՝ Անդրէի զորավարի և այլոցն (Նոյեմբեր 14, 2): Անդ-րիանոսի և այլոցն (Նոյեմբեր 15, 3):

Աբրահամու և այլոցն (Նոյեմբեր 17, 5):

Ամենայն սրբոց Հնոց և Նորոց (Նոյեմբեր 19, 7):

Գեներալի և այլոցն ու Աբգարու թագավորինը Ե տարեգրի նման, միայն մեկ օրվա տար-բերությամբ:

Տարվա վերջին մասին գրել ենք ավելի վաղ՝ 7 տարբերակների շրջանակներում:

Է (M 28) տարեգրի աղյուսակում Հունվար 13 - Առաջավորի Բարեկենդանի միջև թե հա-սարակ, թե նահանջ տարիների համար մնում է երկու տոնելի օր, որտեղ դրվել է «Յոհաննու Կարապետի» (Հունվար 14, հինգշաբթի) և «Պետրոսի հայրապետին, Վլասայ եպիսկոպոսին և Ա-բիսողոմայ սարկավագին» (Հունվար 16, շաբաթ): Իսկ մյուս տոները տեղափոխել են Վարդա-վառի հատված հետևյալ կարգով.

Անտոնի ճգնավորի (Հուլիս 24, 7):

Թեոդոս թագավորի և այլոցն (Հուլիս 26, 2):

Կիրակոսի և Յուդիտայի (Հուլիս 27, 3):

Վահան Գողթն. ավելացրած Գորգիոսի և այլոցն (Հուլիս 29, 5):

Հայրապետացն Աթանասի և Կիւրղի գումարած Գրիգորի Աստուածաբանի (Հուլիս 31, 7):

Եւգինեա կուսին և այլոցն (Օգոստոս 2, 2):

Տրիփոնի և այլոցն (Օգոստոս 3, 3):

Եւգինէոսի և այլոցն (Օգոստոս 5, 5):

Եփեսոսի աբ ժողովոյն (Օգոստոս 7, 7):

Ինչպես նկատելի է նախորդ տարեգրերի նման չի կարգավորված:

Յիսնականտի նախորդող շաբաթ օրն է տեղափոխված Վերափոխման Աստուածածնի 4-րդ կիրակիից հետո եկող սրբերի հիշատակի օրերը, ինչպես Զ տարեգրի դեպքում, միայն մեկ օր-վա տարբերությամբ: Յիսնականտից հաշված 2-րդ կիրակիից հետո եկող «Յուլիանեայ և Վա-սիլուհու» հիշատակի կանոնին ավելացրել է Ինդոսի և Դոմնայի (և հավանաբար այլոցն) տոնի օրը: Վերջինս տեղափոխելով Յիսնականտից հաշված 5-րդ կիրակիից հետո եկող հինգշաբթի

օրվա կանոնից: Յիսնականտից հաշված երրորդ կիրակիից (Ս. Երեւանցու մոտ՝ 2-րդ) հետո եկող երկուշաբթվա կանոնին գումարել է երեքշաբթվա կանոնը նշելով Գեներալի... Իրավափառայ տոնը, իսկ երեքշաբթի օրվա տակ դրել է սրբոց հարցն եգիպտացուցն, որը տեղափոխել է նույն շաբաթվա հինգշաբթիից, որովհետև հինգշաբթի է ընկել Դեկտեմբերի 9-ը որտեղ անշարժ տոնվում էր «Յղութեան սրբոց Կուսին ի յԱննայէ»: Յիսնականտից հաշված 5-րդ կիրակիից հե-տո եկող երկուշաբթի օրվա վրա, որտեղ տոնել են «սրբոց հայրապետացն Իգնատիոսի և Ադրէի և Մարութայի եպիսկոպոսի» ավելացրել է երեքշաբթի օրվա տակ դրված «Թէոպոմայ եպիսկո-պոսին և Թէոփանայ վկայի և չորից գինուորացն՝ Բասուսի, Ելսեբի Եւտիգի և Բասիլիդեա» կանոնը երեքշաբթի օրվա համար տեղ հատկացնելով «Աբգարու թագավորին», որի տոնը դրված էր նույն շաբաթ օրը: Իսկ Ինդոսի և այլոցն տոնի տեղափոխումը կապված է «Դավթի և Յակո-բայ» տոնը հինգշաբթի ընկնելու հետ:

Ը (M 29) տարեգրի դեպքում Հունվար 13 - Առաջավորի Բարեկենդանի միջև հասարակ տարիների համար մնում է երկու տոնելի օր, իսկ նահանջ տարիների համար՝ երեք: Այդ է պատճառը, որ Ս. Երեւանցին հասարակ տարվա համար Յոհաննու Կարապետի հիշատակի օրը դնելով Հունվարի 15-ին հինգշաբթի օրը, միաժամանակ Վարդավառի հատվածում Անտոն ճգնավորի օրվան գումարելով Տրիփոնի և այլոցն հիշատակի օրը գրել է. «Յորում նահանջ ամի (ԹԸ) իցեն տարեգիրքն, դու յայս շաբաթի օրս՝ գԱնտոնն մի տօնիցես, զի տօնեցաւ յառաջին գիրն (Թ) յետ Ծննդեանն: Այլ ի շաբաթի օրն՝ զԹեոդոսն. զերկուշաբաթին զԿիրակոսն. յերեք-շաբաթին զՎահանն. և ի հինգշաբաթն զՏրիփոնն տօնիցես իւրեանց ընկերօքն: Իսկ ի հասա-րակ ամս, որպես եղեալքս են այսպէս տօնեա» (էջ 371):

Այլ խոսքով հասարակ տարում Ծննդեան տոներից հետո տոնվել է Յոհաննու Կարապե-տին (Հունվար 15, 5) և Պետրոսի հայրապետի և այլոցն (Հունվար 17, 7), իսկ նահանջ տարում՝ Յոհաննու Կարապետին (Հունվար 14, 3), Պետրոսի հայրապետի և այլոցն (Հունվար 16, 5) և Անտոնի (Հունվար 18, 7): Մինչև Ծննդեան տոներից հետո եկող շաբթը Վարդավառից հետո ներկայացնելն ասեմք, որ Բուն Բարեկենդանից հետո եկող շաբաթ օրը Տեառնընդառաջն ընկ-նելու հետևանքով Թեոդորոսի հիշատակի օրը տեղափոխել է Հունվար 28, 2. Ատոմեաց հիշա-տակի օրվա հետ դնելով:

Վարդավառի հատվածում տվել է հետևյալ կարգը.

Անտոնի գումարած Տրիփոնի և այլոցն (Հուլիս 25, 7):

Թեոդոս թագավորի և այլոցն (Հուլիս 27, 2):

Կիրակոսի և Յուդիտայի ավելացրած Գորգիոսի և այլոցն (Հուլիս 28, 3):

Վահան Գողթնացվոյն գումարած Եւգենիայ կուսին և այլոցն (Հուլիս 30, 5):

Աթանասի և Կիւրղի գումարած Գրիգոր Աստուածաբանին (Օգոստոս 1, 7):

Եւգինէոսի և այլոցն (Օգոստոս 3, 2):

Աստուածածնի հատվածից տեղափոխել է Անդրէի զորավարի և այլոցն (Օգոստոս 4, 3),

Անդրիանոսի և այլոցն (Օգոստոս 6, 5)

Եփեսոսի Սուրբ ժողովոյն երկուհարիւր հայրապետացն (Օգոստոս 8, 7):

Ինչպիսիք հետո եկող երեքշաբթի (Հոկտեմբեր 27) Հիպերիքեանց գումարել է հինգշաբթի դրած Սեւոխանոսի և այլոց հիշատակի օրը, իսկ Շաբաթ՝ «տօն Ամենայն սրբոց Հնուց և Նո-րաց» (Հոկտեմբեր 31):

«Տօն Աստուածածնի քրից ամացն» Յիսնակի պահոց շաբաթ օրն (Նոյեմբեր 21) ընկնելու հետևանքով Գրիգորի սքանչելագործի և այլոցն տեղափոխել է Յիսնականտից հաշված 3-րդ

կիրակիից հետո եկող շաբաթ օրը (Դեկտեմբեր 5) գումարելով «Նիկողայոսի Զմիւռնացւոյ սքանչելագործի» հիշատակի օրվան:

Ավագ տոններից առաջ տեղավորել է Աբրահամու և այլոցն (Դեկտեմբեր 21, 2) և Աստուածատրոյ վկային (Դեկտեմբեր 22, 3):

Տարվա վերջի հաշված դասավորել է նշված 7 տարբերակներից մեկով, որի մասին գրեցինք վերևում:

Թ (M 30) տարեգրի դեպքում հասարակ տարում մնացել է երեք տոնելի օր, իսկ նահանջ տարում՝ 4 տոնելի օր կամ մեկ լրիվ շաբաթ. Հունվար 13 - Առաջավորի Բարեկենդանի միջև:

«Յոհան Կարապետի» հիշատակի օրը 1-ին դեպքում՝ Հունվար 14-ին՝ երկուշաբթի: Այնուհետև տվել է Պետրոս Հայրապետի և այլոցն (Հունվար 16, 5) և Անտոնի ճգնավորի (Հունվար 18, 7): Նահանջ տարվա համար նշել է, որ այս հատվածում պետք է ավելացնել Թեոդոս թագավորի և այլոցն (Հունիսի 19, 7), ինչպես ժ տարեգրում է (էջ 377): իսկ Վարդավառի հատվածում շաբաթ օրը՝ Հունիս 26-ին (ժ տարեգրում՝ Հունիս 27-ն է, շաբաթ) նշվելու է Աթանասի և Կիւրղի հիշատակի օրը, իսկ Գրիգոր Աստվածածնին թողնելով հաջորդ շաբաթ օրվա համար:

Այս բացատրություններից հետո տվել է. Թէոդոսի թագավորին և այլոցն (Յուլիս 26, 7)

Կիրակոսի և Յողիտայի գումարած Գորգիոսի և այլոցն (Հուլիս 28, 2):

Վահան Գողթնացւոյն գումարած Եւզենեայ կուսին և այլոցն (Հուլիս 29, 3)

Տրիփոնի և այլոցն (Հուլիս 31, 5)

Աթանասի և Կիւրղի գումարած Գրիգոր Աստուածաբան (Օգոստոս 2, 7):

Եւզինէոսի և այլոցն (Օգոստոս 4, 2), որից հետո շարունակում է շաբթը Աստուածածնից հետո եկող տոնական կանոններով, այն է՝

Անդրէի զօրավարին և այլոցն (Օգոստոս 5, 3):

Անդրիանոսի և այլոցն (Օգոստոս 7, 5):

Եփեսոսի սուրբ ժողովոյն... (Օգոստոս 9, 7):

Յիսնակամտից հաշված 3-րդ կիրակիից հետո եկող երկուշաբթի կանոնին (Գենարիոսի...) ավելացրել է երեքշաբթի կանոնը (Յակովկայ և Իրավափառայ), իսկ երեքշաբթի օրվա տակ դրել է «Կուռնելիոսի հարյուրապետի, Շմավոնի, Պողիկարպոսի և Արեւելեան վկայիցն»: Վերջիններս տեղափոխել է Սուրբ Յակոբայ պահքի երեքշաբթիից:

Վերջպես Ավագ տոններից առաջ դրել է Աբրահամու և այլոցն (Դեկտեմբեր 22, 2):

Ժ (M 31) տարեգրի թե հասարակ, թե նահանջ տարիներին Հունվար 13 - Առաջավորի Բարեկենդանի միջև մնում է չորս տոնելի օր, թեև Յոհաննու Կարապետի տոնը (և մյուս տոները) հասարակ տարիներին ընկնում է (են) Հունվարի 14-ին երկուշաբթի, իսկ նահանջ տարիներին Հունվարի 15-ին, երկուշաբթի, այսինքն մեկ օրվա տարբերությամբ:

Այդ հատվածում դրվել է.

Հովհաննու Կարապետի (Հունվար 14, 2):

Պետրոսի Հայրապետի և այլոցն (Հունվար 15, 3):

Անտոնի ճգնավորի (Հունվար 17, 5):

Թեոդոս թագավորի և Մանկանց Եփեսոսի (Հունվար 19, 7): իսկ մյուս սրբերի հիշատակի օրերը տեղափոխել է Վարդավառի հատված, տալով հետևյալ կարգով.

Աթանասի և Կիւրղի (Հունիս 27, 7):

Կիրակոսի և Յողիտայի գումարած Գորգիոսի և այլոցն (Հուլիս 29, 2):

Վահան Գողթնացւոյն գումարած Եւզենեայ կուսին և այլոցն<sup>1</sup>:

Տրիփոնի և այլոց (Օգոստոս 1, 5):

Գրիգորի Աստուածածնի (Օգոստոս 3, 7):

Եւզինէոսի և այլոցն (Օգոստոս 5, 2):

Այդտեղ շարունակութեան մեջ ավելացրել է Վերափոխման Աստուածածնի 4-րդ շաբաթվա ընթացքում տոնվող սրբերի հիշատակի օրերը, այն է՝

Անդրէի զօրավարի և այլոցն (Օգոստոս 6, 3):

Անդրիանոսի և այլոցն (Օգոստոսի 8, 5):

Ինչպես միշտ վերջում դրել է.

«Եփեսոսի Սուրբ ժողովոյն երկուհարիւր հայրապետացն» (Օգոստոս 10, 7):

Խաչգիւտից հետո եկող երեքշաբթի օրվա տակ (Հոկտեմբեր 29) Հիպիոսի քանց և Սեբեոսի և այլոցն հիշատակի օրերը միացրել մեկ կանոնի տակ, իսկ շաբաթ օրը (Նոյեմբեր 2) դրել է՝ «Տօն Ամենայն սրբոց Հնոց և Նորոց», փաստորեն ընտրելով երեք տարբերակներից մեկը, որը տօնացույցի սովորական կարգից տարբերվում է:

Յիսնակամտից հաշված 2-րդ կիրակիից հետո եկող երկուշաբթի «սրբոյն Յուլիանեայ և Վասիլուհուհու»-ն ավելացրել է Աբրահամու և այլոց կանոնը: իսկ Յիսնակամտից հաշված 3-րդ կիրակիից հետո եկող երկուշաբթի միացրել է Գենեստիոսի... Իրավափառայ հիշատակի օրերը, իսկ երեքշաբթի դրել է Մինասայ և այլոցն տեղափոխելով Սուրբ Յակոբայ պահքից հետո եկող երկուշաբթիից: Տարվա վերջի տոները դասավորել է յոթ տարբերակներից մեկով, երբ ճրագալույցն ընկնում է Կիրակի:

Ի (A 1) տարեգրի հասարակ տարիներին Հունվար 13- Առաջավորի Բարեկենդանի միջև մնացել են 4 տոնելի օրեր, իսկ նահանջ տարիներին՝ հինգ, որի հետևանքով Ս. Երևանցին առաջարկում է հասարակ տարիներին այդ հատվածում տոնել Յոհաննու Կարապետին (Հունվար 15, 2) (նահանջ տարում կրնկնի Հունվար 14, 7 - Թ. Վ.):

Պետրոսի և այլոցն (Հունվար 16, 3):

Անտոնի գումարած Տրիփոնի և այլոցն (Հունվար 18, 5):

Թեոդորոս թագավորի և Մանկանց Եփեսոսի (Հունվար 20, 7):

Իսկ նահանջ տարում Վարդավառի հատված տեղափոխած Աթանասի և Կիւրղի գումարած Գրիգոր Աստուածաբանի կանոնից առաջին երկու հայրապետների տոնը տեղափոխել Հունվար 13- Առաջավորի Բարեկենդանի կիրակիի միջև (կրնկնի Հունվար 21, 7), իսկ վերջինս թողել Վարդավառից հետո եկող սրբերի մեջ (էջ 388):

Վարդավառի հատվածում առաջարկվել է հետևյալ շաբթը՝

Աթնասի և Կիւրղի գումարած Գրիգոր Աստուածաբանի (Հունիս 28, 7):

Կիրակոսի... գումարած Գորգիոսի և այլոցն (Հունիս 30, 2):

Վահանայ Գողթնացւոյն գումարած Եւզենեայ կուսին և այլոցն (Հունիս 31, 3):

Եւզինէոսի և այլոցն (Օգոստոս 2, 5): Ինչպես և Եփեսոսի սուրբ ժողովոյն երկուհարիւր հայրապետացն (Օգոստոս 4, 7):

<sup>1</sup> Հունիս 30, 3, հրատարակութեան մեջ տպագրական սխալ երեքշաբթի օրվա փոխարեն Բշբթ (երկուշաբթ) տե՛ս էջ 383 - Թ. Վ.:

Աստուածածնից հետո դրվել է.

Անդրիանոսի և այլոցն (Օգոստոս 4, 3):

Աբրահամու և այլոցն (Օգոստոս 6, 5), իսկ Օգոստոսի 8-ին, շաբաթ ընկել է. «Տօն Մննդեան սրբոյ կուսին ի յԱննայէ» անշարժ տոնական օրը:

Գիւտ խաչին հաջորդող շաբաթվա համար նախատեսել է այնպես ինչպես նախորդ տարեգրի մեջ է: Յիսնակամտից հաշված 4-րդ կիրակիից հետո ընկնող շաբաթվա երկուշաբթի օրվա համար նախատեսել է.

Գեներիոսի ... Իրավավառայ հիշատակի օրերը, իսկ երեքշաբթի օրվա համար՝ Աբգարու թագավորին (Դեկտեմբեր 4, 3):

Ավագ տոներից առաջ է տեղափոխել սրբոց Հայրապետացն Բարսղի և այլոցն (Դեկտեմբեր 22, 7), քանի որ ճրագալույցն ընկել է շաբաթ օր:

Լ (A 2) տարեգրի թե հասարակ, թե նահանջ տարիներին Հունվար 13 - Առաջավոր Բարեկենդանի միջև մնում է 5 տոնելի օր, որտեղ տոնվել է նախորդ տարեգրի նահանջ տարվա տարբերակով, իսկ Վարդավառի հատվածում նույնպես գործել է նախորդ տարեգրի կարգը, միայն մեկ օրվա տարբերութամբ: Վերափոխման Աստուածածնից հաշված 2-րդ կիրակիից հետո եկող շաբաթ օրը թողել է թո՛վմայի առաքյալի տոնը նույն տեղում, իսկ Յակոբայ և Շմավոնի առաքելոյն տեղափոխել է 3-րդ շաբաթ, որովհետև այդտեղ դրված «Նիկիոյ սուրբ ժողովոյն ՅԺԸ Հայրապետացն» փոխադրել է 4-րդ կիրակիից հետո եկող շաբաթ օրը:

Յիսնակամտի պահքի շաբաթ օրը նախատեսված Գրիգորի Աքանջելագործի և այլոցն հիշատակի օրվա վրա ավելացրել է «Նիկողայոս Զմիւռնացւոյ Հայրապետին», որը սովորաբար դրվել է Յիսնակամտից հաշված 3-րդ կիրակիից հետո եկող շաբաթ օրը: Մնում է 5 տոնելի օր, որտեղ տոնվել է նախորդ տարեգրի նահանջ տարվա տարբերակով, իսկ Վարդավառի հատվածում նույնպես գործել է նախորդ տարեգրի կարգը, միայն մեկ օրվա տարբերութամբ: Վերափոխման Աստուածածնից հաշված 2-րդ կիրակիից հետո եկող շաբաթ օրը թողել է Թոմայի առաքյալի տոնը նույն տեղում, իսկ Յակոբայ և Շմավոնի առաքելոյն տեղափոխել է 3-րդ շաբաթ, որովհետև այդտեղ դրված «Նիկիոյ սուրբ ժողովոյն ՅԺԸ Հայրապետացն» փոխադրել է 4-րդ կիրակիից հետո եկող շաբաթ օրը:

Յիսնակամտից հաշված 3-րդ կիրակիից հետո եկող երկուշաբթի օրը նախատեսված Գեներոսի և Մեղակեոսին ավելացրել է Յակովկայ և Իրավափառայ հիշատակի օրը, որը դրված է երեքշաբթի, իսկ վերջինիս տեղը սահմանել է Աբգարու թագավորի հիշատակի օրը՝ առաջ տանելով Յիսնակամտի 5-րդ կիրակիից հետո եկող շաբաթ օրվանից, որովհետև այդտեղ դրել է Դավթի և Յակոբայ տոնը:

Խ (A 3) տարեգրի հասարակ տարիներին Հունվար 13 - Առաջավոր Բարեկենդանի միջև մնացել է 5 տոնելի օր, իսկ նահանջ տարիներին՝ 6 տոնելի օր, որի հետևանքով այդ հաշվածում տոնել են հասարակ տարում:

Յովհաննու Կարապետի (Հունվար 15, 7):

Պետրոսի և այլոցն (Հունվար 17, 2):

Անտոնի գումարած Տրիփոնի և այլոցն (Հունվար 18, 3)

Թեոդոսի և այլոցն (Հունվար 20, 5):

Աթանասի և Կիլրդի (Հունվար 22, 7):

Իսկ նահանջ տարիներին՝

Յոհաննու Կարապետի (Հունվար 14, 5)

Պետրոսի և այլոցն (Հունվար 16, 7)

Անտոնի գումարած Տրիփոնի և այլոցն (Հունվար 18, 2)

Թեոդոսի և այլոցն (Հունվար 19, 3)

Կիրակոսի և Յողիտայի (Հունվար 21, 5)

Աթանասի և Կիլրդի (Հունվար 23, 7)

Վարդավառի հատվածում տոնել են.

Գրիգորի Աստուածաբանին (Հուլիս 30, 7)

Կիրակոսի և Յողիտայի (Նահանջ տարում, ինչպես վերը տեսանք տեղափոխվել է)

Գումարած Գորդիոսի և այլոցն (Օգոստոս 1, 2)

Վահանայ Գողթնացւոյն գումարած Եւգենեայ կուսին և այլոցն (Օգոստոսի 2, 3):

Եւգինէոսի և այլոցն (Օգոստոս 4, 5)

Եփեսոսի ժողովոյն երկուհարիւր Հայրապետացն (Օգոստոս 6, 7):

Յիսնակամտից առաջ դրել է.

Անդրէի զօրավարին և այլոցն (Նոյեմբեր 14, 2)

Անդրիանոսի և այլոցն (Նոյեմբեր 15, 3)

Աբրահամու և այլոցն (Նոյեմբեր 17, 5):

Տօն Ամենայն սրբոց Հնոց և Նորոց (Նոյեմբեր 19, 7):

Յիսնակամտից հաշված երրորդ կիրակիից հետո եկող շաբաթվա մեջ տոնել են Լ տարեգրի կարգով:

Մ (A 4) տարեգրի թե հասարակ, թե նահանջ տարիներին Հունվար 13 - Առաջավոր Բարեկենդանի միջև մնացել է 6 տոնելի օր, որի հետևանքով այդ հատվածում նշել են Խ տարեգրի նահանջ տարվա կարգով, իսկ Վարդավառի հատվածում տոները դասավորվել են հետևյալ հերթականութամբ.

Գրիգոր Աստուածաբանի (Յուլիս 31, 7)

Վահանայ Գողթնացւոյն գումարած Գորդիոսի և այլոցն (Օգոստոս 2, 2)

Եւգինեայ կուսին և այլոցն (Օգոստոս 3, 3):

Եւգինէոսի և այլոցն (Օգոստոս 5, 5):

Եփեսոսի սուրբ ժողովոյն երկուհարիւր Հայրապետացն (Օգոստոս 7, 7):

Յիսնակամտից հաշված 2-րդ կիրակիից հետո եկող երկուշաբթի օրվա կանոնում դրված Յուլիանեայ և Վասիլուհւոյն ավելացրել է Ինգոսի և Դոմնայի և այլոցն: Վերջինս տեղափոխելով Յիսնակամտի 5-րդ կիրակիից հետո եկող Հինգշաբթիից, իսկ 3-րդ կիրակիից հետո եկող երկուշաբթվա կանոնում գումարել են Յակովկայ և Իրավափառայ հիշատակի օրը տեղափոխելով երեքշաբթիից, որպեսզի այդ օրը տոնեն Հարցն եգիպտացւոցն, որովհետև նույն շաբաթվա Հինգշաբթի օրն է ընկել «Տօն Յղութեան սուրբ կուսին ի յԱննայէ»:

Յիսնակամտից հաշված 5-րդ կիրակիից հետո երկուշաբթի օրվա կանոնին, որտեղ դրվել է Իգնատիոսի և այլոց հիշատակի օրը ավելացրել է նույն շաբաթվա երեքշաբթի կանոնի տակ դրված Թեոպոմայ եպիսկոպոսի և այլոց տոնի օրը, երեքշաբթի օրվա տակ փոխելով Աբգարու թագավորի հիշատակի օրը (Դեկտեմբեր 21), իսկ Հինգշաբթի նշել են Դաւիթ մարգարէի և Յակոբայ առաքելոյն տոնը:

Կ (A 5) տարեգրի հասարակ տարում Հունվար 13 - Առաջավորի Բարեկենդանի միջև մնացել է 6 տոնելի օր, իսկ նահանջ տարում 7, որի հետևանքով հասարակ տարում այդ հատվածում դրել է.

Յոհաննու Կարապետին (Հունվար 15, 5)

Պետրոսի և այլոցն (Հունվար 17, 7)

Անտոնի գումարած Տրիփոնի և այլոցն (Հունվարի 19, 2)

Թեոդոսի և այլոցն (Հունվար 20, 3)

Կիրակոսի և Յողիտայի գումարած Վահանայ Գողթնացւոյն գումարած Գորդիոսի և այլոցն (Հունվար 22, 5):

Կոստանդնուպոլսոյ Սուրբ ժողովոյն ՃԾ հայրապետացն (Հունվար 24, 7): Վերջինիս տեղը ընկել է Տեառնընդառաջն, որի հետևանքով տոնը տեղափոխել է:

Ս. Երևանցին նկատի չի ունեցել նույն տարեգրի նահանջ տարվա տարբերակը, որտեղ այդ հատվածում առկա է 7 տոնելի օր և Տեառնընդառաջն ընկնում է ուրբաթ, որի հետևանքով Կ. Պողոսի ժողովոյն ՃԾ հայրապետաց տոնը չի տեղափոխվում վերոհիշյալ հատված, այլ տոնվում է Փետրվար 15-ին՝ Բուն Բարեկենդանից առաջ ընկնող շաբաթ:

Որպեսզի ազատվենք հակասությունից Կիրակոսի և Յողիտային պետք է տոնել առանձին կանոնով, իսկ Վարդավառի հատվածից Աթանասի և Կիւրղի հիշատակի օրը պետք է տեղափոխել հիշյալ շաբաթ, այնտեղ թողնելով Գրիգոր Աստուածաբանին:

Վարդավառի հատվածում հասարակ տարում նախատեսել է հետևյալ կարգը.

Աթանասի և Կիւրղի գումարած Գրիգորի Աստուածաբանին (Օգոստոս 1, 7)

Եւգինեայ կուսին և այլոցն գումարած եւգնէոսի և այլոցն (Օգոստոս 3, 2):

Իսկ շարունակութեան մեջ բերել է Վերափոխման Աստուածածնի հատվածի տոները, այն է՝ Անդրէի զօրավարին և այլոցն (Օգոստոս 4, 3)

Անդրիանոսի և այլոցն (Օգոստոս 6, 5)

Եփեսոսի ժողովոյն... (Օգոստոս 8, 7)

Խաչգիւտից հետո եկող երեքշաբթի օրվա Հիպիրիքեանց հիշատակի օրվան ավելացրել է Աւետիանոսի և այլոցն, իսկ Շաբաթ օրը դրել է՝ տօն ամենայն սրբոցն Հնոց և Նորոց:

«Տօն Աստուածածնի երից ամացն» Յիսնակի պահոց շաբաթ օրն ընկնելու պատճառով Նիկողայոս Զմյուռնացու հիշատակի օրը տեղափոխել է Յիսնակամտից հաշված 3-րդ կիրակիից հետո եկող շաբաթ՝ Գրիգորի և այլոցն հետ: Ավագ տոներից առաջ է տեղադրել առանձին կանոններով.

Աբրահամու և այլոցն (Դեկտեմբեր 21, 2) ու Աստվածատրոյ վկային (Դեկտեմբեր 22, 3), իսկ Հինգշաբթի, Դեկտեմբերի 24-ին՝ Դաւթի մարգարէի և Յակոբայ առաքելոյն:

Հ (A 6) տարեգրի հասարակ տարում Հունվար 13 - Առաջավորի Բարեկենդանի միջև մնում է 7 տոնելի օր, իսկ նահանջ տարում՝ 8: Վերջինս նկատի չի ունեցել Ս. Երևանցին տալով հասարակ տարվա կարգը: Որպեսզի հակասությունը վերացվի նրա միացրած երկուական սրբերի հիշատակի օրերից մեկը պետք է առանձնացնել և դնել երկու տոնական օրերում: Նա ներկայացրել է հետևյալ կարգը.

Տօն Յոհաննու Կարապետի (Հունվար 14, 3, նահանջ տարում կլինի նույն ամսաթվին, բայց երկուշաբթի)

Պետրոսի և այլոցն (Հունվար 16, 5, նահանջ տարում կընկնի Հունվար 15, 3)

Անտոնի գումարած Տրիփոնի (Հունվար 18, 7, նահանջ տարում կլինի հունվար 17, 5)

Թեոդոսի և այլոցն (Հունվար 20, 2, նահանջ տարում կլինի Հունվար 19, 7)

Կիրակոսի և Յողիտայի գումարած Գորդիոսի և այլոցն (Հունվարի 21, 3, նահանջ տարում կընկնի նույն ամսաթվին երկուշաբթի)

Վահան Գողթնացւոյն գումարած Եւգինեայ կուսին և այլոցն (Հունվար 23, 5, նահանջ տարում կընկնի նույն ամսաթվին, բայց երեքշաբթի, որի համար Վահան Գողթնացւոյն հիշատակի օրվանից պետք է առանձնացնել Եւգինեայ կուսին և այլոցն ու դնել Հունվարի 24-ին հինգշաբթի, որպեսզի սահմանված կարգը չխախտվի)

Աթանասի և Կիւրղի (Հունվար 25, 7, նահանջ տարում կլինի Հունվար 26, 7):

Վարդավառի հատվածում շարունակել է.

Գրիգորի Աստուածաբանի (Օգոստոս 1, 7)

Եւգինէոսի և այլոցն (Օգոստոս 4, 2)

Դրանից հետո տալիս է Աստուածածնի տոներից այն է՝ Անդրէի զօրավարի և այլոցն (Օգոստոս 5, 3)

Անդրիանոսի և այլոցն (Օգոստոս 7, 5):

Վերջում ինչպես այլ դեպքում դրել է Եփեսոսի Սուրբ ժողովոյն երկուհարիւր հայրապետացն (Օգոստոսի 9, 7):

Յիսնակամտից հաշված 3-րդ կիրակիից հետո եկող երկուշաբթի տվել է Գենարիոսի... Իրավափառայ, իսկ երեքշաբթի՝ Կուռնելիոսի և Շմավոնի և այլոցն: Ավագ տոներից առաջ մեկ կանոնի տակ դրել է Աբրահամու և այլոցն (Դեկտեմբեր 22, 2), իսկ Դեկտեմբերի 23-ին, երեքշաբթի. Դաւթի մարգարէի և Յակոբայ առաքելոյն:

Զ (A 7) տարեգրի թե Հունվար 13 - Առաջավորի Բարեկենդանի միջև առկա է 8 տոնելի օր, միայն նահանջ տարում ամսաթիվը մեկով ավելին է: Ունենք հետևյալ կարգը.

Յոհաննու Կարապետի (Հունվար 14, 2, նահանջ տարում Հունվար 15, 2 և այլն)

Պետրոսի և այլոցն (Հունվար 15, 3)

Անտոնի ճգնավորի (Հունվար 17, 5)

Թեոդոսի թգ. և Մանկանց Եփեսոսի (Հունվար 19, 7):

Կիրակոսի և Յողիտայի գումարած Գորդիոսի և այլոցն (Հունվար 21, 2)

Վահանայ Գողթնացւոյն գումարած Եւգինեայ կուսին և այլոցն (Հունվար 22, 3):

Տրիփոնի և այլոցն (Հունվար 24, 5):

Աթանասի և Կիւրղի (Հունվար 26, 7):

Ի դեպ Տեառնընդառաջն հինգշաբթի ընկնելու պատճառով Վարդանանց հիշատակի օրը տեղափոխել է նույն շաբաթվա երկուշաբթի, իսկ Մարկոսի եպիսկոպոսի և այլոցն հիշատակի օրը փոխադրել է նախորդ երկուշաբթի Աստուածանց հիշատակի օրվա տեղը և տոնել են միասին: Վարդավառի հատվածում շարունակել է Հունվարի 13-ից հետո սրբերի հիշատակի օրերի հետևյալ կարգը.

Գրիգորի Աստուածաբանի (Օգոստոս 3, 7)

Եւգինէոսի և այլոցն (Օգոստոս 5, 2)

Այստեղ տալիս է բացատրություն համաձայն որի «զի եթէ տարին նահանջ պատահիցի և տարեգիրքն (ՂԶ) զԵւգինէոս և զՄակարիոսն աստ մի տօնիցես. զի տօնին դոքա ի յառաջին գիրն (Ղ) յետ ծննդեանն՝ որպէս տեսանես: Այլ ի տեղի դոցա զԱբրահամու և իտրեն և զԻգալի-

բուզտն տօնեսցես որք ի վայրդ եղեալքեն ընդ Յուլիանեայ կուսին: Իսկ յայլ տարիսն որպէս ե-  
ղեալքդ են, տօնեսցես անտարակոյս» (էջ 420): Պարզվում է, որ պետք է Անտոնի ճգնավորի հի-  
շատակի օրվան գումարել Տրիփոնի և այլոցն, իսկ նրանց տեղը դնել Եւգինէոսի և այլոցն: Հիշ-  
յալ տեղն ազատել և տոնել Աբրահամու և այլոցն:

Այնուհետև շարունակում է Աստուածածնից հետո եկող տոների հետևյալ շարքը.

Անդրէի զօրավարի և այլոցն (Օգոստոս 6, 3)

Անդրիանոսի և այլոցն (Օգոստոս 8, 5)

Եփեսոսի ժողովոյն... (Օգոստոս 10, 7):

Խաչգիւտից հետո եկող շաբաթվա մեջ Երեքշաբթի օրվա տակ միացրել է Հիպիրիքեանց և  
Ալեոհանոսի և այլոցն հիշատակի օրերը, իսկ շաբաթ օրը դրել «տօն ամենայն սրբոց Հնոց և -  
Նորաց»:

Յիսնակամտից հաշված 2-րդ կիրակիից հետո եկող երկուշաբթի օրվա կանոնին ավելացրել է  
Աբրահամու և այլոցն, որն ինչպես վերը տեսանք առաջարկել է տոնել այլ տեղ նահանջ տա-  
րում:

Յիսնակամտից հաշված 3-րդ կիրակիից հետո եկող երկուշաբթի օրվա կանոնին ավելացրել  
է Յակովկա և Իրավափառայ հիշատակի օրը տեղափոխելով նույն շաբաթվա երեքշաբթիից, իսկ  
այդ տեղում դրել է Մինասայ և այլոցն տեղափոխելով 4-րդ կիրակիից հետո եկող երկուշաբ-  
թիից, որովհետև այն համընկել էր անշարժ նշվող «Աստուածածնի Յղութեանն ի յԱննայէ»  
տոնին:

Ղ (A 8) տարեգրի դեպքում հասարակ տարում առկա է 8 տոնելի օր, որի հաշվով էլ դա-  
սավորել է Հունվար 13 - Առաջավորի Բարեկենդանի միջև ընկնող բոլոր տոները: Սակայն նա-  
հանջ տարում առկա են 9 տոնելի օրեր, որոնք նկատի չի ունեցել Ս. Երևանցին: Որպեսզի  
տարբերութունը նկատի ունենանք պետք է գույգ-գույգ դրված տոներից մեկն առանձնացնել  
կամ այլ տոն ավելացնել այդ հատվածի օրերից մեկում: Բացի այդ Յոհաննու Կարապետի տոնի  
օրն ընկնում է Հունվար 14, շաբաթ, իսկ մյուսները մեկ օրվա տարբերությամբ: Ինչևէ հիշյալ  
հատվածում տոների կարգը հետևյալն է.

Յոհաննու Կարապետին (Հունվար 15, 2)

Պետրոսի և այլոցն (Հունվար 16, 3)

Անտոնի գումարած Տրիփոնի և այլոցն (Հունվար 18, 5)

Թեոդոս թագավորի և Մանկանց Եփեսոսի (Հունվար 20, 7)

Կիրակոսի և Յօղիտայի գումարած Գորգիոսի և այլոցն (Հունվար 22, 2):

Վահան Գողթնացւոյն գումարած Եւգինեայ կուսին և այլոցն (Հունվար 23, 3):

Եւգինէոսի և այլոցն (Հունվար 25, 5)

Աթանասի և Կիւրղի գումարած Գրիգորի Աստուածաբանի (Հունվար 27, 7):

Խաչգիւտից հետո եկող երեքշաբթի օրվա տակ միացրել է Հիպիրիքեանց և Ալեոհանոսի  
և այլոցն հիշատակի օրերն, իսկ շաբաթ օրը դրել տոն Ամենայն սրբոց Հնոց և Նորոց:

Յիսնակամտից հաշված 3-րդ կիրակիից հետո եկող երկուշաբթի օրվա տակ միացրել է Գե-  
նարիոսի... Իրավափառայ տոները, իսկ երեքշաբթի օրվա մեջ տվել Աբգարու թագավորի հիշա-  
տակի օրը (Դեկտեմբեր 4):

Ճրագալույցը շաբաթ օրն ընկնելու պատճառով Հայրապետացն Բարսղի և այլոցն տեղա-  
փոխել է Ավագ տոներից առաջ (Դեկտեմբեր 22, 7):

Ճ (A 9) Տարեգրի դեպքում թե հասարակ, թե նահանջ տարում առկա են 9 տոնելի օրեր և  
Հունվար 13 - Առաջավորի Բարեկենդանի միջև, միայն մեկ օրվա տարբերությամբ հիշատակի  
օրերը դասավորել են այսպես.

Յոհաննու Կարապետի (Հունվար 14, 7: Նահանջ տարում կլինի Հունվարի 15-ին, 7 և  
այլն):

Պետրոսի Հայրապետին և այլոցն (Հունվար 16, 2):

Անտոնի գումարած Տրիփոնի և այլոցն (Հունվար 17, 3):

Թեոդոսի և այլոցն (Հունվար 19, 5)

Աթանասի և Կիւրղի (Հունվար 21, 7)

Կիրակոսի... գումարած Գորգիոսի և այլոցն (Հունվար 23, 2)

Վահանայ Գողթնացւոյն գումարած Եւգինեայ կուսին և այլոցն (Հունվար 24, 3)

Եւգինէոսի և այլոցն (Հունվար 26, 5):

Գրիգորի Աստուածաբանին (Հունվար 28, 7):

Տեսնելով, որ առաջն երեքշաբթի ընկնելու հետևանքով Առաջավորի Բարեկենդանի կիրակիից  
հաշված 3-րդ կիրակիից հետո եկող երեքշաբթի օրը դրված Ղևոնդեանց հիշատակի օրը տեղա-  
փոխել է նույն կանոնված Մարկոսի և այլոցն հիշատակի օրը տեղափոխել է նախորդ շաբաթվա  
երկուշաբթի և դրել Ատոմեանց հիշատակի հետ միասին: Վերափոխման Աստուածածնի 2-րդ -  
կիրակիից հետո եկող շաբաթ օրը թողել է թոմայի առաքյալի հիշատակի օրը, իսկ Յակոբ և Ծ-  
մավոն առաքյալները հիշատակի օրը տեղափոխել են 3-րդ կիրակիից հետո եկող շաբաթ օրը:  
Իսկ այնտեղ դրված «Նիկիոյ սուրբ ժողովոյն ՅԺԸ-իցն» փոխադրել է Սուրբ Խաչի պահպանից այն  
է՝ Աստուածածնից հաշված 5-րդ կիրակիից առաջ ընկնող շաբաթ օրը (Սեպտեմբեր 9):

Յիսնակամտի պահպանի շաբաթ օրվա Գրիգորի Աբանջելագործի և այլոց հիշատակի օրվան  
ավելացրել է Նիկողայոս Զմյուռնացու հիշատակի օրը, որը տեղափոխել է Յիսնակամտից հաշ-  
ված 4-րդ կիրակիից առաջ ընկնող շաբաթ օրվանից:

Գինարիոսի ... Իրավափառայ հիշատակի օրերը միացրել է Յիսնակամտից հաշված 3-րդ  
կիրակիից հետո եկող երկուշաբթի օրվա կանոնի տակ, իսկ երեքշաբթի դրել է Աբգարու թագա-  
վորի տոնի օրը, որովհետև նրա տեղն է եկել Ավագ տոներից առաջինը՝ Դավիթ մարգարէի և  
Յակոբ առաքելոյ տոնը (Դեկտեմբեր 23, 7):

Մ (A 10) տարեգրի դեպքում հասարակ տարում Հունվար 13 - Առաջավորի Բարեկենդանի  
միջև մնացել է 9 տոնելի օր և Ս. Երևանցին հղում է Ճ տարեգրի, իսկ նահանջ տարում առ-  
կա է 10 տոնելի օր, որի հետևանքով Ճ տարեգրի գույգ դրված տոներից մեկը պետք է առանձ-  
նացնել, որպեսզի հակասութուն չառաջանա: Հասարակ տարում Յոհաննու Կարապետի տոնի օ-  
րը կընկնի Հունվար 15-ին, շաբաթ, իսկ նահանջ տարում՝ Հունվար 14-ին, հինգշաբթի: Մյուս  
տոներում նույնպես կկատարվեն համապատասխան փոփոխութուններ և մեկ օր կավելանա:

Տեսնելով, որ առաջն ընկել է Առաջավորի Բարեկենդանից հաշված 3-րդ կիրակիից հետո  
ընկնող երկուշաբթի, որի հետևանքով Մարկոսի և այլոցն հիշատակի օրը տեղափոխել է նա-  
խորդ երկուշաբթի և դրել Ատոմեանց հիշատակի օրվա հետ միասին: Նահանջ տարում այդ տե-  
ղափոխութունը չի կատարվի, որովհետև Տեսնելով, որ առաջն կընկնի կիրակի օրը, որը Մ տարեգ-  
րում նախատեսված չէ:

Յիսնակամտից առաջ մեկ շաբաթ ավելացել է, որի հետևանքով Վերափոխման Աստուա-  
ծածնի հատվածում նախատեսված ավել տոները բերել է հիշյալ հատված և դրել շաբաթվա օ-  
րերի այլ հերթականությամբ, այն է՝



Աբրահամու և այլոցն (Նոյեմբերի 14, 2)

Անդրէի զորավարի և այլոցն (Նոյեմբեր 15, 3)

Անդրիանոսի և այլոցն (Նոյեմբեր 17, 5)

Տօն ամենայն սրբոց Հնոց և Նորոց (Նոյեմբեր 19, 7)

Գենարիոսի և Մերկեսիոսին ավելացրել է Յակովկայ և Իրավափառայ Հիշատակի օրը, իսկ Երեքշաբթի օրը դրել է Աբգարու թագավորի տոնի օրը (Դեկտեմբեր 6), որովհետև Ավագ տոններից առաջինն ընկել է Դեկտեմբեր 24, շաբաթ:

Յ (A 11) տարեգրի դեպքում թե հասարակ, թե նահանջ տարիներին առակա է 10 տոնելի օր՝ 1 օրյա տարբերությամբ Հունվար 13 - Առաջավորի Բարեկենդանի միջև և կարգել է հետևյալ շաբթը.

Յոհաննու Կարապետի (Հունվար 14, 5, նահանջ տարում՝ Հունվար 15, 5 և այլն):  
Պետրոսի և այլոցն (Հունվար 16, 7):

Անտոնի գումարած Տրիփոնի և այլոցն (Հունվար 18, 2)

Թեոդոսի թգ. և Մանկանց Եփեսոսի (Հունվար 19, 3)

Կիրակոսի... գումարած Գորդիոսի և այլոցն (Հունվար 21, 5)

Աթանասի և Կիւրղի (Հունվար 23, 7)

Վահանայ Գողթնացւոյն (Հունվար 25, 2)

Եւգինեայ կուսին և այլոցն (Հունվար 26, 3)

Եւգինէոսի և այլոցն (Հունվար 28, 5)

Գրիգորի Աստուածածաբանին (Հունվար 30, 7):

Յիսնականտից հաշված 2-րդ կիրակիից հետո եկող Երկուշաբթի օրվա կանոնին, այն է՝ «Յուլիանեայ և Վասիլուհւոյ» գումարել է Ինդոսի և Դոմնայի և այլոց հիշատակի օրը, իսկ Յիսնականտից հաշված 3-րդ կիրակիից հետո եկող երկուշաբթվա կանոնին, որն է՝ Գենարիոսի և Մերկեսիոսի ավելացրել է Յակովկա և Իրավափառայ Հիշատակի օրը, Երեքշաբթի օրը տալով Հարցն եգիպտացւոցն: Վերջապես 5-րդ կիրակիից հետո եկող երկուշաբթի օրվա մեջ տվել է Իգնատիոսի, Ադգէի և Մարութայի, ինչպես և Թեոպոմոսի և այլոցն, իսկ Երեքշաբթի օրվա տակ դրել է Աբգարի թագավորի տոնի օրը:

Ն (A 12) տարեգրի ժամանակ հասարակ տարում մնացել է 10 տոնելի օր, իսկ նահանջ տարում՝ 11, Հունվար 13 - Առաջավորի Բարեկենդանի միջև, որի հետևանքով ըստ Սիմեոն Երևանցու բացատրության «զի յորժամ տարին նահանջիցէ, և գիր տարոյքն (Ն 3), յայս միջոցս՝ զԱնդրէ զօրավարն և զԱնդրիանոսն մի տօնիցես. զի տօնքն սոքա ի յետին գիրն (3) զկնի տասներորդ կիւրակէին: Այլ ի Բ շաբաթին միայն զՎահանն տօնես. ի Գ շաբաթին զԵւգինէ կոյսն. և ի Ե շաբաթին զԵւգինէոս, զՄակարիոս և զայլն: Իսկ յայլ տարիսն, որպէս եղեալքդ են, այդպէս տօնեսցես անտարակոյս» (էջ 445):

Չնայած Ս. Երևանցու առաջարկած երկու տարբերակի խնդիրը չի լուծվել, որովհետև երկու դեպքում էլ նկատի է ունեցել 10 տոնելի օր, բացի այդ նա նկատի չի ունեցել, որ Սահակ կաթողիկոսի հիշատակի օրը նահանջ տարում մնում է իր տեղում, որովհետև Տեառնդառաջն ընկնում է ուրբաթ օր, իսկ շաբաթ լինում է Փետրվար 15-ը: Այլ խոսքով վերոհիշյալ երկու տարբերակին ավելացվում է մի երրորդը, որն իրական հաշվումների հետևանք է:

Բերենք այդ տարբերակները.

Յոհաննու Կարապետին (Հունվար 15, 5, նահանջ տարում՝ Հունվար 14, 3)

Պետրոսի և այլոցն (Հունվար 17, 7, նահանջ տարում՝ Հունվար 16, 5)

Անտոնի գումարած Տրիփոնի և այլոցն (Հունվար 19, 2, նահանջ տարում՝ Հունվար 18, 7)

Թեոդոսի թագավորի և Մանկանց Եփեսոսի (Հունվար 20, 3, նահանջ տարում՝ նույն ամսաթվում, երկուշաբթի)

Կիրակոսի և Յողիտայի գումարած Գորդիոսի և այլոցն (Հունվար 22, 5, նահանջ տարում՝ Հունվարի 21, երեքշաբթի)

Աթանասի, Կիւրղի գումարած Գրիգորի Աստուածաբանի (Հունվար 24, 7, նահանջ տարում՝ Հունվար 23, հինգշաբթի):

Վահանայ Գողթնացւոյն գումարած Եւգինեա կուսին և այլոցն (Հունվար 26, 2, նահանջ տարում՝ Հունվար 25, շաբաթ): (2-րդ տարբերակով միայն Վահան Գողթնացւոյն՝ երկուշաբթի օրը, նահանջ տարում երկուշաբթին ընկնում է Հունվար 27-ին և Հունվարի 25-ի օրը բաց է մնում):

Եւգինէոսի և այլոցն գումարած Անդրէի զորավարին և այլոցն (Հունվարի 27, 3, նահանջ տարում Հունվարի 27-ը երկուշաբթի է, իսկ երեքշաբթին ընկնում է Հունվարի 28-ին (2-րդ տարբերակով միայն Եւգինեա կուսին և այլոցն երեքշաբթի, որը նահանջ տարում ընկնում է Հունվարի 28-ին):

Անդրիանոսի և այլոցն (Հունվար 29, 5, 2-րդ տարբերակով միայն Եւգինէոսի և այլոցն՝ Հինգշաբթի, նահանջ տարում հինգշաբթին ընկնում է Հունվարի 30-ին):

«Իսահակայ Պարթևի Հայրապետին մեծի» (Հունվար 31, 7, նահանջ տարում ինչպես նշվեց, Սահակ կաթողիկոսի տոնի օրը մնում է իր տեղում, որովհետև Տեառնդառաջն ընկնում է ուրբաթ, ուստի բաց է մնում շաբաթ օրվա տոնի տեղը): Նահանջ տարվա համար որպեսզի հակասությունը լուծվի երկուական դրված հիշատակի օրերից Գրիգոր Աստուածաբանի հիշատակի օրը պետք է առանձնացնել և դնել հաջորդ շաբաթ օրը՝ Սահակ կաթողիկոսի տեղը, իսկ Աթանասին և Կիւրղին տեղափոխել նահանջ տարվա շաբաթ: Վերջապես նրա տեղը, այսինքն նահանջ տարվա հինգշաբթի օրվա տեղը դնել կամ Տրիփոնի և այլոցն կամ Գորդիոսի և այլոցն, եթե այլ տոնական հատվածներից որևէ սրբի օր չի տեղափոխվում քննարկվող հատված, որովհետև Սիմեոն Երևանցու «Տօնացոյց»-ում կարգված սրբերի 11 կանոն տեղավորվում է մեկ օրվա տակ, միայն այդ 11-ից 1-ում պետք է գումարել տասներկուսինը: Խաչադուրտից հետո եկող շաբաթվա մեջ Հիպոլիտեանց և Սեբեոսիանոսի և այլոց հիշատակի օրը միացրել է մեկ օրվա տակ՝ երեքշաբթի, իսկ շաբաթ օրը դրել տոն ամենայն սրբոց Հնոց և Նորոց: Ինչպես և Յիսնականտից հաշված 3-րդ կիրակիից հետո եկող շաբաթ օրը գումարել է Գրիգորին և այլոցն Նիկողայոս Զմյուռնացուն: Ավագ տոններից առաջ դրել է Աբրահամու և այլոցն (Դեկտեմբեր 21, 2) և Աստուածատրոյ վկային (Դեկտեմբեր 22, 3)՝ առանձնացնելով իրարից:

Շ (A 13) տարեգրի դեպքում Հունվարի 13 - Առաջավորի Բարեկենդանի միջև հասարակ տարում մնում է 11 տոնելի օր, իսկ նահանջ տարում՝ 12: Նահանջ տարվա տարբերակը նկատի չի ունեցել Սիմեոն Երևանցին:

Հունվարի 13-ից հետո սրբերի հիշատակի օրերը կարգել է հետևյալ ձևով.

Յոհաննու Կարապետի (Հունվար 14, 3, նահանջ տարում ամսաթիվը նույնն է, շաբաթվա օրը՝ երկուշաբթի):

Պետրոսի և այլոցն (Հունվար 16, 5):

Անտոնի գումարած Տրիփոնի և այլոցն (Հունվարի 18, 7, նահանջ տարում հարմար է երկու կանոնի վերածել և տոնել հինգշաբթի և շաբաթ օրերին կամ սրբերի տոնական շաբթը դասավորել Ղ տարեգրին համարժեք):

Թեոդոսի և այլոցն (Հունվար 20, 2):

Կիրակոսի... գումարած Գորգիոսի և այլոցն (Հունվար 21, 3):

Վահան Գողթնացւոյն գումարած Եւզինեայ կուսին և այլոցն (Հունվար 23, 5):

Աթանասի և Կիւրղի (Հունվար 25, 7):

Եւզինէոսի և այլոցն (Հունվար 27, 2):

Անդրէի զորավարի և այլոցն (Հունվար 28, 3):

Անդրիանոսի և այլոցն (Հունվար 30, 5):

Գրիգորի Աստուածաբանի (Փետրվար 1, 7):

Յիսնակամտից հաշված 3-րդ կիրակիից հետո եկող երկուշաբթի միացվել է Գենարիոսի... Իրավափառոց հիշատակի օրերը: Իսկ երեքշաբթի է տեղափոխվել Կուռնէլիոսի, Շմավոնի և այլոցն հիշատակի օրը: Ավագ տոններից առաջ դրվել է Աբրահամու և այլոցն կանոնը (դեկտեմբեր 22, 2):

Ո (A 14) տարեգրի դեպքում թե հասարակ թե նահանջ տարում 12 տոնելի օր կա Հունվարի 13 - Առաջավորի Բարեկենդանի միջև: Այդ հատվածում շաբաթվա օրերը նույնն են, միայն ամսաթվի մեկ օրյա տարբերությամբ:

Սրբերի հիշատակի օրերը դասավորել է հետևյալ կարգով.

Յօհաննու Կարապետի (Հունվար 14, 2, նահանջ տարում՝ Հունվար 15, 2 և այլն):

Պետրոսի և այլոցն (Հունվար 15, 3)

Անտոնի ճգնավորի (Հունվար 17, 5)

Թեոդոս թագավորի և այլոցն (Հունվար 19, 7):

Կիրակոսի... գումարած Գորգիոսի և այլոցն (Հունվար 21, 2)

Վահանաց Գողթնացւոյն գումարած Եւզինեայ կուսին և այլոցն (Հունվար 22, 3):

Տրիփոնի և այլոցն (Հունվար 24, 5):

Աթանասի և Կիւրղի (Հունվար 26, 7):

Եւզինէոսի և այլոցն (Հունվար 28, 2):

Անդրէի զորավարի և այլոցն (Հունվար 29, 3):

Անդրիանոսի և այլոցն (Հունվար 31, 5, վերևի երկու կանոնները տեղափոխել է այստեղ Աստուածածնի հատվածից):

Գրիգորի Աստուածաբանի (Փետրվար 2, 7):

Առաջավորի Բարեկենդանից հաշված 2-րդ կիրակիից հետո եկող և երեքշաբթի օրը կանոնված Սուքիասեանց տոնին ավելացրել է Ոսկեանց հիշատակի օրը, քանի որ Տեառնընդառաջն ընկել է հինգշաբթի: Խաչգիւտից հետո Հիպիրիքեանց և Սեբոխանոսի և այլոցն կանոնները միացվել են մեկ օրվա տակ. իսկ շաբաթ օրը դրվել է «տօն ամենայն սրբոց Հնոց և Նորոց»:

Յիսնակամտից հաշված 2-րդ կիրակիից հետո երկուշաբթի օրվա տակ Յուլիանեայ և Վասիլուհոց հիշատակին ավելացրել է Աբրահամու և այլոցն: Իսկ 3-րդ կիրակիից հետո եկող երկուշաբթի Գենարիոսի և Մերկեոիոսի կանոնին ավելացվել է Յակովկայ և Իրավափառա հիշատակի օրը, իսկ նրանց տեղը՝ Երեքշաբթի դրվել է Մինասայ և այլոցն, որովհետև «Տօն Յղու-թեան սրբոյ Կուսին ի յԱննացէն» ընկել է 4-րդ կիրակիից հետո եկող երկուշաբթի:

Չ (A 15) տարեգրի ժամանակ հասարակ տարում մնում է 12 տոնելի օր, իսկ նահանջ տարում՝ 13 Հունվարի 13 - Առաջավորի Բարեկենդանի միջև: 13 տոնելի օրերի կանոններից վերջինն իր արտահայտությունը չի գտել Ս. Երևանցու Տոնացույցի 2-րդ հատորում. թեև հիշյալ տարեգրի տակ տվել է բացատրություն, այն է՝ «Բայց գիտեա. զի յորժամ տարին նահանջ պատահիցի, և զիր տարոյքն (ՉՈ) այդ վերոյ եղեալ շաբաթուղ չորս տօնան, այսինքն՝ զՄակարայեցիսն և զայլն, աստ մի տօնիցես. զի տօնին դօքա ի յետին գիրն (Ո) զկնի վարդավառին՝ որպէս տեսանես, այլ ի Բ շաբաթին զԵւզինէ կոյսն, ի շաբաթ օրն զԳրիգոր Աստուածաբանն տօնեսցես՝ որք ի վերդ ընդ այլոց եղան, և ի Գ շաբաթին և ի Ե շաբաթին զԱնդրէ զօրավարն և զԱնդրիանոսն, որք ի վայրդ զկնի Աստուածածնին եղեալք են: Իսկ ի յայլ տարիսն՝ որպէս եղեալք են այնպէս տօնես անտարակոյս» (էջ 462):

Տանք երկու տարբերակն էլ և բացահայտենք 13-րդ տոնելի օրը, որը նկատի չի առնվել: Յօհաննու Կարապետի (Հունվար 15, 2, նահանջ տարում՝ Հունվար 14, 7, իսկ երկուշաբթի օրն ընկնում է Հունվար 16-ին, որտեղից և մեկ օրվա տարբերությունը, որտեղ անշուշտ դրվելու է Յօհաննու Կարապետի տոնի օրը, իսկ նրա տոնի օրը նախատեսած երկուշաբթին՝ հաջորդը, բայց վերջնական արդյունքում մեկ տոնելի օր ավելանում է):

Պետրոսի և այլոցն (Հունվար 16, 3)

Անտոնի գումարած Տրիփոնի և այլոցն (Հունվար 18, 5):

Թէոդոսի թագավորի և այլոցն (Հունվար 20, 7)

Կիրակոսի... գումարած Գորգիոսի և այլոցն (Հունվար 22, 2)

Վահանայ Գողթնացւոյն գումարած Եւզինեայ կուսին և այլոցն (Հունվար 23, 3):

Աթանասի և Կիւրղի Գումարած Գրիգոր Աստուածաբանի (Հունվար 27, 7):

Մակարայեցւոցն (2-րդ տարբերակ՝ Եւզինեայ կուսին և այլոցն առանձնացված Վահան Գողթնացու կանոնից) (Հունվար 29, 2):

Երկուտասան Մարգարէիցն... (2-րդ տարբերակ՝ Անդրէի զորավարի և այլոցն) (Հունվար 30, 3):

Սոփիայ և այլոցն (2-րդ տարբերակ՝ Անդրիանոսի և այլոցն) (Փետրվար 1, 5):

Որդւոց և Թոռանց սրբոյն Գրիգորի Լուսաւորչին... (2-րդ տարբերակ՝ Գրիգորի Աստուածաբանի առանձնացնելով Աթանասի և Կիւրղի կանոնից) (Փետրվար 3, 7): Ինչպես նկատելի է երկու տարբերակի դեպքում էլ առկա է 12 տոնելի կանոն, իսկ 13-րդը բացակայում է, որը նահանջ տարիներին կանոնավորելու համար պետք է զույգ զույգ դրված տոներից մեկն առանձնացնել և տանել 13-րդ տոնելի օրը կամ նրան հաջորդ օրը՝ կատարելով մեկ օրյա տեղափոխություն մյուս տոները տալիս կամ Պ տարեգրի կարգը կիրառել: Վերջինս ավելի հարմար է: Վարդավառից հաշված 3-րդ կիրակիից առաջ ընկնող շաբաթ օրը դրել է Եփեսոսի սուրբ ժողովոյն երկուհարիւր Հայրապետացն (Օգոստոս 4), որովհետև Վարդավառից հետո միջոց ուտիքն երկու շաբաթ է: Իսկ 3-րդ կիրակիից հետո սկսվում է Վերափոխման Աստուածածնի պահքը:

Խաչգիւտից հետո եկող երեքշաբթի օրվա կանոնում միացրել է Հիպիրիքեանց և Սեբոխանոսի և այլոցն տոները: Իսկ շաբաթ օրը դրել է. «Տօն ամենայն սրբոց Հնոց և Նորաց»: Յիսնակամտից հաշված 3-րդ կիրակիից հետո եկող երկուշաբթի օրվա տակ միացրել է Գենարիոսի... Իրավափառայ հիշատակի կանոնները, իսկ Երեքշաբթի օրվա տակ դրել է Աբրահամու թագավորի տոնի օրը, որովհետև վերջինիս տեղն է տեղափոխել Հայրապետացն Բարսղի և այլոցն հիշատակի օրը՝ ձրագալույցը շաբաթ ընկնելու հետևանքով:

Պ (A 16) տարեգրի դեպքում թե հասարակ թե նահանջ տարում մնում է 13 տոնելի օր Հունվարի 13 - Առաջավորի Բարեկենդանի միջև:

Ս. Երևանցին ներկայացրել է հետևյալ շարքը:

Յոհաննու Մկրտչի (Հունվար 14, 7, նահանջ տարում՝ Հունվար 15, 7 և այլն):

Պետրոսի և այլոցն (Հունվար 16, 2)

Անտոնի գումարած Տրիփոնի և այլոցն (Հունվար 17, 3):

Թեոդոսի և այլոցն (Հունվար 19, 5)

Աթանասի և Կիրղի (Հունվար 21, 7)

Կիրակոսի և Յողիտացի գումարած Գորգիոսի և այլոցն (Հունվար 23, 2):

Վահանայ Գողթնացւոյն գումարած Եւզինեայ կուսին և այլոցն (Հունվար 24, 3):

Եւզինէոսի և այլոցն (Հունվար 26, 5)

Գրիգորի Աստուածաբանի (Հունվար 28, 7):

Այնուհետև տալիս է Վարդավառի հատվածում ավելացված սրբերի հիշատակի օրերը հետևյալ կարգով.

Մակարայեցւոցն (Հունվար 30, 2):

Երկոտասան Մարգարէիցն (Հունվար 31, 3):

Սոփիայ և այլոցն (Փետրվար 2, 5):

Որդւոց և Թոռանց սրբոյն Գրիգորի Լուսաւորչի... (Փետրվար 4, 7):

Ատոմենայց և Սուքիասեանց տոները միացրել է մեկ օրվա տակ, որովհետև Տեառնընդառաջն ընկել է երեքշաբթի:

Վարդավառի հատվածում միջոց ուտիքն երկու շաբաթ է, որի հետևանքով Եփեսոսի սուրբ ժողովոյն երկուհարիւր Հայրապետն դրել է շաբաթ՝ Բարեկենդան Սուրբ Աստուածածնի պահոցից առաջ:

Վերափոխման Աստուածածնի հատվածում միջոց ուտիքը չորս շաբաթ է, ուստի հիշյալ տոնից հաշված 2-րդ կիրակիից հետո եկող շաբաթվա կանոնը բաժանել է երկու մասի և այդ շաբաթ օրը թողել է Թովմայի առաքյալի հիշատակի օրը, իսկ Յակոբայ և Շմաւոնի տոնը տեղափոխել է հաջորդ շաբաթ: Այդտեղ դրված տոնը այն է՝ «Տօն է Նիկիոյ սուրբ ժողովոյն ՅԺԸ Հայրապետացն» փոխադրել է մյուս շաբաթ՝ Սուրբ Նաչի Պահքից առաջ:

Յիսնակամտից հետո եկող շաբաթ օրվա Գրիգորի և այլոցն կանոնին ավելացրել է Նիկոզայոս Զմյուռնացու հիշատակի օրը, որովհետև «Տօն Յղութեան սրբոյ Կուսին ի Յաննայէոն ընկել է այդ շաբաթ օրը: Յիսնակամտից հաշված 3-րդ կիրակիից հետո եկող երկուշաբթի օրվա կանոնին (Գինարիոսի և Մերկեոիոսի) ավելացրել է Յակովկայ և Իրավափառայ հիշատակի կանոնը, իսկ երեքշաբթի դրել է Աբգար Թագավորի տոնի օրը, որովհետև նրա տեղն է ընկել Ավագ տոներից առաջինը:

Զ (A 17) տարեգրի տարում հասարակ ժամանակ մնացել է 13 տոնելի օր, իսկ նահանջի՝ 14 Հունվարի 13 - Առաջավորի Բարեկենդանի միջև: Ս. Երևանցին կանոնել է 13 օր և նկատի չի ունեցել նահանջ տարվա ավելացած մեկ տոնելի օրը: Որպեսզի հարթվի հակասությունը Պ տարեգրին համարժեք դրված շաբթի մեջ (ամսաթվի մեկ օրյա տարբերությամբ) գուլյգ գուլյգ կանոնված, տոնական օրերից մեկը պետք է առանձնացնել կամ Ռ տարեգրի շաբթն օգտագործել: Ինչպես միշտ սկսել է Յոհաննու Կարապետի տոնով, որը դրել է Հունվարի 15-ին, շաբաթ (նահանջ տարում կրկնի Հունվար 14, հիգշաբթի): Տեառնընդառաջն երկուշաբթի ընկնելու հետևանքով Ատոմեանց և Սուքիասեանց հիշատակի օրերը միացրել է երեքշաբթի օրվա կանոնի տակ:

Վարդավառի հատվածում միջոց ուտիքն երկու շաբաթ լինելու հետևանքով Եփեսոսի սուրբ ժողովոյն երկուհարիւր Հայրապետացն տոնը տեղափոխել է Աստուածածնի պահոցից առաջ ընկնող շաբաթ օրը: Յիսնակամտից առաջ մեկ շաբաթ ավելի է, որի համար Աստուածածնից հետո եկող երեք տոնական կանոններ տեղափոխել է այդտեղ հետևյալ հերթականությամբ.

Անդրէի զօրավարի և այլոցն (Նոյեմբեր 14, 2):

Անդրիանոսի և այլոցն (Նոյեմբեր 15, 3):

Աբրահամու և այլոցն (Նոյեմբեր 17, 5):

Ամենայն սրբոց Հնոց և Նորոց (Նոյեմբեր 19, 7):

Այս տարեգրի դեպքում ևս երկուշաբթի օրվա տակ միացրել է Գինարիոս... Իրավափառայ, իսկ Աբգար Թագավորի տոնը, դրել երեքշաբթի, որովհետև Ավագ տոներից առաջինն ընկել է նրա տեղը՝ շաբաթ:

Ռ (A 18) տարեգրի դեպքում թե հասարակ, թե նահանջ տարում Հունվարի 13 - Առաջավորի Բարեկենդանի միջև մնացել է 14 տոնելի օր և սրբերի շարքը դասավորել է այսպես Յոհաննու Կարապետի (Հունվար 14, 5, նահանջ տարում՝ Հունվար 15, 5 և այլն):

Պետրոսի և այլոցն (Հունվար 16, 7)

Անտոնի ճգնավորի (Հունվար 13, 2)

Թեոդոսի և այլոցն (Հունվար 19, 3):

Կիրակոսի... գումարած Գորգիոսի և այլոցն (Հունվար 21, 5):

Աթանասի և Կիրղի (Հունվար 23, 7)

Վահանայ Գողթնացւոյն գումարած Եւզինեայ կուսին և այլոցն (Հունվար 25, 2):

Տրիփոնի և այլոցն (Հունվար 26, 3):

Եւզինէոսի և այլոցն (Հունվար 28, 5):

Գրիգորի Աստուածաբանի (Հունվար 30, 7):

Վարդավառի հատվածից բերել է հետևյալ տոները.

Մակարայեցւոցն... (Փետրվար 1, 2)

Երկոտասան Մարգարէիցն (Փետրվար 2, 3):

Սոփիայ և այլոցն (Փետրվար 4, 5):

Որդւոց և Թոռանց սրբոյ Լուսաւորչին մերոյ... (Փետրվար 6, 7):

Վարդավառի հատվածում միջոց ուտիքն երկու շաբաթ է, որի համար Եփեսոսի սուրբ ժողովոյն երկուհարիւր Հայրապետացն դրվել է Օգոստոս 7, շաբաթ:

Յիսնակամտից առաջ նույնպես մեկ շաբաթ ավելացել է և այնտեղ դրվել է տոները, ինչպես Զ տարեգրի դեպքում: Յիսնակամտից հաշված 2-րդ կիրակիից հետո երկուշաբթի օրվա կանոնին (Յուլիանեայ և Վասիլուհւոյ) ավելացրել է ինչպես և այլոցն հիշատակի օրը, իսկ 3-րդ կիրակիից հետո եկող երկուշաբթի օրվա տակ դրել է Գինարիոսի... Իրավափառայ և երեքշաբթի օրվա տակ՝ Հարցն եգիպտացւոյն, որովհետև հինգշաբթի օրն ընկել է «տօն Յղութեան սրբոյ Կուսին ի յԱննացէն»: Վերջապես 5-րդ կիրակիից հետո եկող երկուշաբթի օրվա տակ միացրել է Իգնատիոսի, Ադրէի, Մարութայի, ինչպես և Թեոպոմպեայ Թէովմայ և այլոցն հիշատակի օրերը, իսկ երեքշաբթի դրել է Աբգարու Թագավորի տոնի օրը, որովհետև Հինգշաբթի օրվանից սկսել է Ավագ տոները:

Ս (A 19) տարեգրի դեպքում հասարակ տարում առկա է 14 տոնելի օր, իսկ նահանջ տարում՝ 15. Հունվարի 13 - Առաջավորի Բարեկենդանի միջև: Սիմեոն Երևանցին հիշյալ հատվածում

ծում տոնների շարքի համար առաջարկել է երկու տարբերակ, որը կներկայացնենք ներքևում, սակայն կրկին 14 տոնելի օրերով և նահանջ տարվա մեկ ավել օրն անտեսել է: Նա տալիս է բացատրություն. «Բայց գիտես, զի յորժամ տարին նահանջ պատահիցի. և զիր տարոյքն (ՍՌ) - յայս միջոցումս զԱնդրէի զօրավարն և զԱնդրիանոսն մի տօնիցես զի տօնին դոքա ի յետին գիրն (Ռ) զկնի տասներորդ կիւրակէին՝ որպէս տեսանես, այլ ի Բ շաբաթին զՎահանն, ի Գ շաբաթին զԵգիսնէ կոյսն, և ի Ե շաբաթին Եգիսնէոսն տօնեսցես: Իսկ ի յայլ տարիսն որպես Ե-դեալք են այնպէս տօնես անտարակոյս» (էջ 485):

Ներկայացնենք քննարկվող շարքը. Յոհաննու Կարապետին (Հունվար 15, 5 նահանջ տարում՝ Հունվար 14, 3, ահա այս մեկ օրն է, որ հաշվի չի առել: Ծիշտ կլինի նահանջ տարվա առաջնորդվել Վ տարեգրով:

Պետրոսի և ալլոցն (Հունվար 17, 7)

Անտոնի գումարած Տրիփոնի և ալլոցն (Հունվար 19, 2)

Թեոդոսի և ալլոցն (Հունվար 20, 3): Կիրակոսի... գումարած Գորդիոսի և ալլոցն (Հունվար 22, 5):

Աթանասի և Կիւրղի (Հունվար 24, 7):

Վահանայ Գողթնացւոյց Գումարած Եգիսնայ կուսին և ալլոցն (Հունվար 26, 2):

(2-րդ տարբերակի «Բ շաբաթին զՎահանն»)

Եգիսնէոսի և ալլոցն գումարած Անդրէի զօրավարի և ալլոցն (Հունվար 27, 3):

(2-րդ տարբերակով «Ի Գ շաբաթին զԵգիսնէ կոյս»)

Անդրիանոսի և ալլոցն (Հունվար 29, 5) (2-րդ տարբերակով «Ի Ե շաբաթին զԵգիսնէոսն տօնիցես»):

Դրանից հետո գալիս է Վարդավառի հատվածի տոնելի շարքը, այն է՝

Մակարայեցւոցն... (Փետրվար 2, 2)

Երկուտասան մարգարէից (Փետրվար 3, 3)

Սոփիայ և ալլոցն (Փետրվար 5, 5):

Որդւոց և թոռանց սրբոյն Գրիգորի Լուսաւորչին... (Փետրվար 7, 7):

Տեսանլնդառաջն շաբաթ օր ընկնելու հետևանքով Սարգսի և ալլոցն տոնը տեղափոխվել է Երկուշաբթի՝ Ատոմեանց հետ:

Վարդավառի հատվածում միջոց ուտիքն երկու շաբաթ է, որի համար Եփանոսի ժողովի 200 հայրապետների հիշատակի օրը դրվել է Աստուածածնի պահքից առաջ, շաբաթ Օգոստոսի 8-ին:

Խաչգիւտից հետո եկող երեքշաբթվա տակ միասին է դրվել Հիպիոսի քանց և Եկեղեցիանոսի և ալլոցն հիշատակի օրերը, իսկ շաբաթ օրը՝ Ամենայն սրբոց Հնոց և Նորոց:

Յիսնակամտից հաշված 3-րդ կիրակիից հետո եկող շաբաթ է տեղափոխվել և դրվել Նիկո-ղայոս Զմյուռնացու օրվա հետ Գրիգորի և ալլոցն, որովհետև նրանց օրվա տեղը՝ շաբաթ, ընկել է «Տօն Սուրբ Աստուածածնի երից ամացն»:

Ավագ տոներից առաջ ավելացրած երկու օրվա մեջ է դրվել Աբրահամու և ալլոցն (երկու-շաբթի, Դեկտեմբերի 21-ին) և Աստվածատրոյ վկային՝ առանձին (Դեկտեմբեր 22, 3):

Վ (A 20) տարեգրի դեպքում Հունվարի 13 - Առաջավորի Բարեկենդանի միջև հասարակ տարում մնում է 15 տոնելի օր, իսկ նահանջ տարում՝ 16, որը նկատի չի ունեցել Սիմեոն Երե-վանցին: Ներկայացնենք հիշյալ շարքը.

Յոհանն Կարապետին (Հունվար 14, 3, նահանջ տարում՝ Հունվար 14, 3, նահանջ տա-րում՝ Հունվար 14, բայց երկուշաբթի, որով և ավելանում է մեկ տոնելի օր):

Պետրոսի և ալլոցն (Հունվար 16, 5)

Անտոնի գումարած Տրիփոնի և ալլոցն (Հունվար 18, 7):

Թեոդոսի և ալլոցն (Հունվար 20, 2)

Կիրակոսի... գումարած Գորդիոսի և ալլոցն (Հունվար 21, 3)

Վահան Գողթնացւոյն գումարած Եգիսնայ կուսին և ալլոցն (Հունվար 23, 5)

Աթանասի և Կիւրղի (Հունվար 25, 7):

Եգիսնէոսի և ալլոցն (Հունվար 27, 2)

Անդրէի զօրավարի և ալլոցն (Հունվար 28, 3)

Անդրիանոսի և ալլոցն (Հունվար 30, 5):

Գրիգորի Աստուածաբանի (Փետրվար 1, 7):

Մակարայեցւոցն (Փետրվար 3, 2)

Երկուտասան Մարգարէից (Փետրվար 4, 3):

Սոփիայ և ալլոցն (Փետրվար 6, 5):

Որդւոց և թոռանց սրբոյ Լուսաւորչին... (Փետրվար 8, 7):

Տեսանլնդառաջն ուրբաթ ընկնելու պատճառով «յիշատակ Յօնանու Մարգարէին»-ը տեղափոխվել է նույն շաբաթվա հինգշաբթի, որը պահքի օր էր:

Վարդավառի հատվածում միջոց ուտիքն երկու շաբաթ լինելու հետևանքով Եփեսոսի ժո-ղովի 200 հայրապետների տոնի օրն ընկել է Օգոստոս 9-ին շաբաթ: Այն ընկնում է Աստուա-ծածնի պահքից առաջ:

Յիսնակամտից հաշված 3-րդ կիրակիից հետո եկող երկուշաբթի կրկին միացվել է Գենա-րիոսի... Իրավափառայ հիշատակի օրերը, իսկ երեքշաբթի դրվել է Կուռնելիոսի, Շմաւոնի, Պօղի-կարպոսի և ալլոցն հիշատակի օրը, որովհետև նրանց տեղն է ընկել «Յղութեան սրբոյ Կուսին ի յԱննացէ» տոնը:

Ավագ տոներից առաջ մեկ կանոնով տրվել է Աբրահամու և ալլոցն հիշատակի օրերը, ո-րովհետև մեկ օր այդտեղ ավելացել է:

S (A 21) տարեգրի դեպքում թե հասարակ թե նահանջ տարում Հունվարի 13 - Առաջավո-րի Բարեկենդանի միջև առկա է 16 տոնելի օրեր՝ մեկօրյա տարբերությամբ: Բերենք տոնական շարքը.

Յօհաննու Կարապետի (Հունվար 14, 2, նահանջ տարում՝ Հունվար 15, 2 և այլն):

Պետրոսի և ալլոցն (Հունվար 15, 3):

Անտոնի ճգնավորի (Հունվար 17, 5):

Թեոդոսի և ալլոցն (Հունվար 19, 7):

Կիրակոսի... գումարած Գորդիոսի և ալլոցն (Հունվար 21, 2):

Վահան Գողթնացւոյն գումարած Եգիսնայ կուսին և ալլոցն (Հունվար 22, 3):

Տրիփոնի և ալլոցն (Հունվար 24, 5):

Աթանասի և Կիւրղի (Հունվար 26, 7):

Եգիսնէոսի և ալլոցն (Հունվար 28, 2):

Անդրէի զօրավարին և ալլոցն (Հունվար 29, 3):

Անդրբանասի և այլոցն (Հունվար 31, 5):  
Գրիգորի Աստուածաբանի (Փետրվար 2, 7):  
Մակաբայեցւոցն (Փետրվար 4, 2):  
Երկոտասան մարգարէից (Փետրվար 5, 3):  
Սոփիայ և այլոցն (Փետրվար 7, 5):  
Որդւոց և Թոռանց սրբոյ Գրիգորի Լուսաւորչին... (Փետրվար 9, 7):  
Վարդավառի հատվածում կրկին միջոց ուտիքն երկու շաբաթ է, որի հետևանքով «Եփեսոսի սուրբ ժողովոյն երկուհարիւր հայրապետացն» դրվել է Օգոստոս 10 (շաբաթ):  
Խաչգիւտից հետո եկող երեքշաբթի միացվել է Հիպիթիքեանց և Սևեոխանոսի և այլոցն հիշատակի օրերը, իսկ շաբաթ օրը դրվել է «Տօն ամենայն սրբոց Հնոց և Նորոց»:  
Յիսնակամտից հաշված 2-րդ կիրակիից հետո եկող երկուշաբթի օրվա տակ (Յուլիանեայ և Վասիլուհույն) ավելացել է Աբրահամու և այլոցն կանոնը: Իսկ 3-րդ կիրակիից հետո եկող երկուշաբթի գումարվել են Գենարիոսի... Իրավափառայ հիշատակի օրերը, երեքշաբթի դրվել է Մինասայ և այլոցն հիշատակի կանոնը, որը 4-րդ կիրակիից հետո եկող երկուշաբթիից է տեղափոխվել, քանի որ այնտեղ ընկել է «տօն Աստուածածնի Յղութեանն ի յԱննայէ»:  
Բ (A 22) տարեգրի դեպքում Հունվարի 13 - Առաջավորի Բարեկենդանի միջև հասարակ տարում առկա է 16 տոնելի օր, իսկ նահանջ տարում՝ 17: Վերջինս նկատի չի ունեցել Սիմեոն Երևանցին և տոները բերել է երկու տարբերակով, միաժամանակ տվել բացատրություն, այն է՝ «Սակայն յորժամ տարինն նահանջ իցէ և տարեգիրքն (ԲՏ), զայս չորս տօնս, այսինքն՝ զԿիպրիանոսն, զԱթանազիսն, զՆախահարցն և ըզԹադէոս առաքեալն, աստ մի տօնիցես, զի տօնին դոքա ի յետին գիրն (Տ) զկնի Վարդավառին՝ որպէս տեսանես: Այլ ի տեղի Կիպրիանոսին, զԵւզինէ կոյսն տօնեա, և ի տեղի Թադէոսին Գրիգոր Աստուածաբանն, որք ի վերջ ընդ այլոց տօնից եղան: Եւ ի տեղի Աթանազիսեայ և Նախահարցն, զԱնդրէ զօրավարն և զԱնդրիանոսն տօնեա, որք ի վայրդ՝ զկնի Աստուածածնին եղեալք են: Իսկ այլ տարիսն՝ որպէս եղեալք են այնպէս տօնեա ամենատարակոյս» (էջ 503-504):  
Ներկայացնենք այդ տարբերակները.  
Յօհաննու Կարապետին (Հունվար 15, 2, նահանջ տարում՝ Հունվար 14, 7, որով և մեկ օր ավելանում է այս հատվածում)  
Պետրոսի և այլոցն (Հունվար 16, 3, նահանջ տարում՝ Հունվար 16, 3 և այլոցն):  
Անտոնի գումարած Տրիփոնի և այլոցն (Հունվար 18, 5) Թեոդոսի և այլոցն (Հունվար 20, 7)  
Կիրակոսի ... գումարած Գորգիոսի և այլոցն (Հունվար 22, 2)  
Վահան Գողթնացւոյն գումարած Եւզինեայ կուսին և այլոցն (Հունվար 23, 3):  
Եւզինէոսի և այլոցն (Հունվար 25, 5):  
Աթանասի և Կիրղի գումարած Գրիգորի Աստուածաբանին (Հունվար 27, 7):  
Կիպրիանոսի և այլոցն (Հունվար 29, 2):  
(2-րդ տարբերակում՝ Եւզինեայ կուսին և այլոցն):  
Աթանազիսեայ և այլոցն (Հունվար 30, 3) (2-րդ տարբերակում՝ Անդրէի զօրավարին և այլոցն):  
Նախահարցն (Փետրվար 1, 5) (2-րդ տարբերակում՝ Անդրիանոսի և այլոցն):  
Որդւոց և Թոռանց սրբոյ Լուսաւորչին... (Փետրվար 3, 7):  
Մակաբայեցւոցն (Փետրվար 5, 2):

Երկոտասան մարգարէից (Փետրվար 6, 3):  
Սոփիայ և այլոցն (Փետրվար 8, 5):  
Թադէոսի առաքելոյն և Սանդիստոյ կուսին (Փետրվար 10, 7) (2-րդ տարբերակում՝ Գրիգոր Աստուածաբանի):  
Բուն Բարեկենդանից հետո եկող 2-րդ շաբաթվա մեջ Կիրեղեանց կանոնին ավելացրել է Յօհաննու Երուսաղեմացոյ և այլոցն, իսկ 3-րդ շաբաթ օրը դրել է «Տօն սրբոյ Լուսաւորչին մերոց մտմանն ի Վիրապն», որովհետև 5-րդ կիրակիից հետո եկող շաբաթ օրն ընկել է «Տօն Աւետեաց սրբոյ Կուսին» (Ապրիլ 7):  
Վարդավառի հատվածում միջոց ուտիքն մեկ շաբաթ է, որի հետևանքով Եփեսոսի սուրբ ժողովոյն երկուհարիւր Հայրապետացն տոնը դրել է Օգոստոս 4-ին (շաբաթ), իսկ Թադէոս առաքյալի և Սանդուխտ կուսի հիշատակի օրը տեղափոխել Փետրվար 10:  
Խաչգիւտից հետո եկող երեքշաբթի միացրել է Հիպիթիքեանց ինչպես և Սևեոխանոսի ու այլոցն տոները, իսկ շաբաթ դրել է տոն ամենայն սրբոց Հնոց և Նորոց:  
Յիսնակամտից հաշված 3-րդ կիրակիից հետո եկող երկուշաբթի նույնպես միավորել է Գենարիոսի... Իրավափառայ օրերը, իսկ երեքշաբթի դրել է Աբգարու թագավորի տոնը, որովհետև այդ շաբաթ օրը տեղափոխել է Հայրապետացն Բարսղի և այլոցն հիշատակի կանոնը՝ ճրագալուցն շաբաթ ընկնելու հետևանքով:  
Յ (A 23) տարեգիրը ցույց է տալիս 17 տոնելի օր թէ հասարակ, թե նահանջ տարում՝ Հունվարի 13 - Առաջավորի Բարեկենդանի միջև, միայն մեկ օրվա տարբերությամբ:  
Տանք այդ տոնելի շարքը.  
Յօհաննու Մկրտչի (Հունվար 14, 7, նահանջ տարում՝ Հունվար 15, 7 և այլն):  
Պետրոսի և այլոցն (Հունվար 16, 3):  
Անտոնի գումարած Տրիփոնի և այլոցն (Հունվար 17, 3):  
Թեոդոսի և այլոցն (Հունվար 19, 5):  
Աթանասի և Կիրղի (Հունվար 21, 7):  
Կիրակոսի... գումարած Գորգիոսի և այլոցն (Հունվար 23, 2):  
Վահան Գողթնացւոյն գումարած Եւզինեայ կուսի և այլոցն (Հունվար 24, 3):  
Եւզինէոսի և այլոցն (Հունվար 26, 5):  
Գրիգորի Աստուածաբանի (Հունվար 28, 7):  
Կիպրիանոսի և այլոցն (Հունվար 30, 2)  
Աթանազիսեայ և այլոցն (Հունվար 31, 3):  
Անդրէի զօրավարին և այլոցն (Հունվար 29, 3):  
Նախահարցն (Փետրվար 2, 5)  
Որդւոյ և Թոռանց սրբոյ Լուսաւորչին մերոյ (Փետրվար 4, 7):  
Մակաբայեցւոցն (Փետրվար 6, 2):  
Երկոտասան մարգարէից (Փետրվար 7, 3):  
Սոփիայ և այլոցն (Փետրվար 9, 5):  
Թադէոսի և Սանդիստոյ (Փետրվար 11, 7):  
Ինչպես նկատելի է, վերջին երկու շաբաթվա տոները գալիս են Վարդավառի հատվածից, որտեղ միջոց ուտիքն մեկ շաբաթ է, որի հետևանքով շաբաթ օրը դրվել է Եփեսոսի սուրբ ժողո-

վոյն երկուհարիւր Հայրապետացն տոնը, իսկ Թադեոս առաքյալի և Սանդուխտ կույսիւնը տեղափոխվել է:

Վերափոխման Աստուածածնի հատվածում միջոց ուտիքն չորս շաբաթ լինելու պատճառով 3-րդ կիրակիից առաջ ընկնող շաբաթ օրվա կանոնում մնացել է Թովմա առաքյալի հիշատակի օրը, իսկ հաջորդ շաբաթ տեղափոխվել են այդ կանոնի մյուս սրբերը, այն է՝ Յակոբ և Շմավոն առաքյալները:

Վերջապես 3-րդ կիրակիից հետո դրված նիկիոյ սուրբ ժողովոյն ՅԺԸ Հայրապետաց տոնը տեղափոխվել է հաջորդ շաբաթ՝ Սուրբ Խաչի պահպանի անունով:

Յիսնակամտից հետո եկող շաբաթ գումարվել են Գրիգորի և այլոցն ու նիկողայոսի Զմյուռնացու հիշատակի օրերը, որովհետև 3-րդ կիրակիից հետո եկող շաբաթ օրը համընկել է «Յղութեան սրբոյ Կուսին ի յԱննայէ» տոնին: Այդ շաբաթվա երկուշաբթի միացվել է Գենարոսի ... Իրավափառայ օրերը իսկ երեքշաբթի դրվել է Աբգար Թագավորի տոնի օրը, որովհետև Ավագ տոններից առաջինն ընկել է նրա տոնի օրը:

Ի (A 24) տարեգրի ընթացքում հասարակ տարում առկա է 17 տոնելի օր, իսկ նահանջ տարում՝ 18. Հունվարի 13 - Առաջավորի Բարեկենդանի միջև, որը կրկնում է Յ տարեգրի կարգը մեկօրյա տարբերությամբ: Բերենք առաջին կանոնը, այն է՝ Յոհաննու Մկրտչի (Հունվար 15, 7, նահանջ տարում՝ Հունվար 14, 5, որից և ավելացել է մեկ տոնելի օր, որը նկատի չի ունեցել Ս. Երևանցին: Հակասությունը լուծելու համար գույգ գույգ դրված հիշատակի օրերից մեկը պետք է առանձնացնել թեկուզ և տոնական կանոնների սկզբնական հատվածում:

Վարդավառի տոնից հաջված հաջորդ շաբաթ դրվել է «Եփեսոսի սուրբ ժողովոյն երկուհարիւր Հայրապետացն», քանի որ միջոց ուտիքն մեկ շաբաթ է, իսկ այդ շաբաթ նախատեսված Թադեոսի և Սանդուխտի օրը տեղափոխվել է առաջ մեկ ազատ շաբաթ է գոյանում, որի հետևանքով այնտեղ են տեղափոխվել հետևյալ սրբերի հիշատակի օրերը.

- Անդրէի զորավարի և այլոցն (երկուշաբթի):
- Անդրիանոսի և այլոցն (երեքշաբթի):
- Աբրահամու և այլոցն (չինգշաբթի):
- Ամենայն սրբոցն Հնոց և Նորոց (շաբաթ):

Յիսնակամտից հաջված 3-րդ կիրակիից հետո միավորել են Գենարիոսի... Իրավափառայ հիշատակի օրերը երկուշաբթիի կանոնի տակ, իսկ երեքշաբթի դրել են Աբգարու Թագավորի տոնը, որովհետև նրա տեղն էր ընկել Ավագ տոններից առաջինը (շաբաթ, Դեկտեմբեր 24):

Փ (A 25) տարեգրի դեպքում թե հասարակ, թե նահանջ տարում լինում է 18 տոնելի օր՝ Հունվարի 13 - Առաջավորի Բարեկենդանի միջև, միայն մեկ օրվա տարբերությամբ: Ներկայացված կարգը հետևյալն է.

- Յոհաննու Կարապետի (Հունվար 14, 5, նահանջ տարում՝ Հունվար 15, 5 և այլն):
- Գետրոսի և այլոցն (Հունվար 16, 7):
- Անտոնի ճգնավորի (Հունվար 18, 2):
- Թեոդոսի և այլոցն (Հունվար 19, 3):
- Կիրակոսի... գումարած Գորգիոսի ... (Հունվար 21, 5):
- Աթանասի և Կիլրդի (Հունվար 23, 7):
- Վահան Գողթնացոյն գումարած Եւգինեայ կուսին և այլոցն (Հունվար 25, 2):
- Տրիփոնի և այլոցն (Հունվար 26, 3):

- Եւգինէոսի և այլոցն (Հունվար 28, 5):
- Գրիգորի Աստուածասանի (Փետրվար 2):
- Կիպրիանոսի և այլոցն (Փետրվար 1, 2):
- Աթանագինեին և այլոցն (Փետրվար 2, 3):
- Նախահարցն (Փետրվար 4, 5):
- Որդւոց և Թոռանց սրբոյն Գրիգորի Լուսաւորչին մերոյ... (Փետրվար 6, 7):
- Մակարայեցւոցն (Փետրվար 8, 2):
- Երկոտասան մարգարէից (Փետրվար 9, 3):
- Սոփիայ և այլոցն (Փետրվար 11, 5)
- Թադեոսի և Սանդխտոյ (Փետրվար 13, 7):
- Վարդավառի հատվածում նույն կարգն է պահպանված ինչ նախորդ տարեգրում, որովհետև միջոց ուտիքի մեկ շաբաթ է:

Յիսնակամտից հաջված 2-րդ կիրակիից հետո եկող երկուշաբթի օրվա տակ Յուլիանեայ և Վասիլուհույ ավելացրել է Ինդոսի և Դոմնայի և այլոցն հիշատակի օրը, իսկ 3-րդ կիրակիից հետո եկող երկուշաբթի՝ Գենարիոսի... Իրավափառայ, երեքշաբթի՝ Հարցն Եգիպտացւոց, որովհետև հինգշաբթի ընկել է «տօն Յղութեան սրբոյ Կուսին, Աննայէ»: 5-րդ կիրակիից հետո եկող երկուշաբթի միավորվել են Իգնատիոսի ... Թէոպոմպեայ... , իսկ երեքշաբթի դրվել է Աբգարու Թագավորի տոնի օրը, որովհետև հինգշաբթիից սկսել են Ավագ տոները:

Այսպիսով, Սիմեոն Երևանցին «Տօնացոյց»-ում խմբագրության ենթարկեց նախորդ տոնացույցերի և ճաշոցների տոնական կարգը, որը սկզբնական շրջանում հանդիպեց ընդդիմության և հատկապես Կոստանդնուպոլսի պատրիարքության, որոնք տոնում էին հին կարգով, իսկ հետագայում համաձայնություն կայացվեց և ընդունվեց Սիմեոն Երևանցու խմբագրությունը: Սիմեոն Երևանցու «Տօնացոյցը»-ը գործում է այժմ, որտեղ ավելացվել են որոշ նոր տոնական օրեր, որոնք հատկապես կապվում են 1874 թվականից հետո եկող պատմական դեպքերի հետ:



ՄԱՐԻԱՄ ԱՍՏՈՒԱԾԱԾՆԻ ՏՈՆԵՐԸ ՀԱՅՈՑ ՄԵՋ

Միմեոն Երևանցու խմբագրած Տոնացույցում Աստուածամոր ու նրա Հետ կապված տոնները վերջնական ձևակերպումն են ստացել և նախատեսվել են ութ կանոններ: Նրանք տոնական տարվա կտրվածքով տեղաբաշխվել են Հետևյալ կերպ.

1. Կանոն Աւետեաց սրբուհւոյ կուսին Մարիամու: Սուրբ Աստուածածնի Աւետեաց տօնն աստ եղաւ, որ կատարի յԱպրիլի է: Բայց յերեկոյին, որ է Ապրիլ 2, որում աւուր և պահեսցի յետ աւուր պատճէին՝ նախատօնակ արա... (էջ 124):

2. Հինգերորդ կիրակէ՛ զկնի հոգւոյ գալստեան Տօն սրբուհւոյն Աստուածածնի Տփոյ գտմանն ... (էջ 199):

3. Կանոն Վերափոխման Սուրբ Աստուածածնին:

Սուրբ Աստուածածնի Վերափոխման Կիրակէ ի գիշերին հսկումն է... (էջ 229-235):

4. Իսկ զկնի ինն աւուրց Վերափոխման Սուրբ Աստուածածնի՝ յերեքշաբթի աւուրն, տօն է Յովակիմայ և Աննայի՝ ծնողաց Սուրբ Աստուածածնի և կանանցն իւղաբերից (էջ 235):

5. Երրորդ կիրակէ՛ զկնի Սուրբ Աստուածածնի՝ տօն գիւտի Գօտւոյ սրբուհւոյ Աստուածածնի... (էջ 237-238):

6. Չորրորդ կիրակէ՛ զկնի սուրբ Աստուածածնի Շաբաթ՝ տօն սուրբ Աստուածածնի ծննդեան ի յԱննայէ...:

Կանոն ծննդեան Սուրբ կուսին իսկ տօն ծննդեան սրբուհւոյ կուսին Մարիամու Աստուածածնի ի յԱննայէ աստ եղաւ որ կատարի միշտ ի սեպտեմբերի ութն: Ի երեկոյի նախատօնական արա... (էջ 244):

7. Իսկ տօն երից ամաց ընծայեցման սուրբ կուսին ի տաճարն, աստ եղաւ, որ կատարի միշտ ի նոյեմբերի ԻԱ: Յէրեկոյան նախատօնական արա (էջ 291):

8. Իսկ տօն Յղացման սրբոյ կուսին Մարիամու ի յԱննայ, աստ եղաւ. որ կատարի ի Դեկտեմբերի Թ ... (էջ 300):

Վերոհիշյալ տոնական օրերը մտել են Հայոց տոնացույց պատմական տարբեր ժամանակահատվածներում: Դրանց քննությանն ենք անցնում հիմնվելով ինչպես մատենագրական, այնպես տոնացույցային տվյալների վրա:

\*\*\*

Անցնենք Մարիամ Աստուածածնի վերոհիշյալ տոների վերլուծությանը առանձին առանձին՝ տոնացույցային տարվա կտրվածքով, թեև որոշ դեպքերում կրկնենք անախրոնիզմների մեջ պատմական տեսանկյունից: Ընթերցողն այդ տոնական օրերի ծագման ժամանակը կգտնի շարադրանքի մեջ՝ առանձին տոնական օրերի քննության ընթացքում:

Այսինքն Ավետեաց Աստուածածնի տոնից: Եփրեմ Ասորու բնագրում, որը նվիրված է Ավետարանի մեկնությանը, գրված է. «Աւետարանեցաւ Մարիամու, որ օր տասն էր Արեգ ամ-

սեան»<sup>1</sup>: Հիշյալ մեկնությունը, ինչպես ցույց ենք տվել մեկ այլ առիթով, ասորերենից թարգմանել են Հայերեն Եզնիկ Կողբացին կամ Հովսեփ Պաղնացին 416-419 թվականների սահմաններում և նրանք ասորական անշարժ տոմարի Նիսան 10-ը փոխարինել են Հայոց շարժական տոմարի Արեգ 10-ով, որոնք Համարժեք են հուլյան տոմարի Ապրիլ 10-ին: Այս զուգադրությունը ցույց է տալիս, որ Եփրեմ Ասորու ժամանակ (մահը՝ 373 թվին) Ավետեաց Աստուածածնի տոնը կատարել են Ապրիլ 10-ին:

Անդրեասի 200-ամյա տոմար-տոնացույցում, որը նույնպես ասորերենից Հայերեն թարգմանեցին Եզնիկ Կողբացին կամ Հովսեփ Պաղնացին 429 թվականին, գտնում ենք տեղեկություն Ավետեաց Աստուածածնի տոնական օրվա կապակցությամբ: Նրա սահմանած 3-րդ կանոնում կարդում ենք. «Գ. կանոն ցուցանէ՝ թէ ամի ամի եւթնևտասներորդն Մարտի և Հինգերորդն (սրբագրել՝ եւթներորդն կամ վեցերորդն) Ապրիլի, և վեցերորդն Յունուարի, յորում լինի աւրն Յայտնութեան Տեառն մերոյ ի տասներորդ ամսեանն (եբրայական Տիբեթ ամիսն) [քսան եւ մի] մի աւր դիպի»<sup>2</sup>:

Իսկապես Մարտի 17-ը (արարչության 1-ին օրը), Ապրիլ 7-ը (Ավետեաց Աստուածածնի օրը) և Հունվարի 6-ը (Քրիստոսի Մննդեան 1-ին օրը) Հասարակ տարիների կտրվածքով ընկնում էին շաբաթվա նույն օրը. իսկ նահանջ տարիներին՝ Հունվարի 6-ին, Մարտի 16-ին և Ապրիլ 6-ին: Անդրեասի 3-րդ կանոնում հաշվումները կատարված են Հասարակ տարիների համար:

Հիշյալ կանոնի մեկնությունը գտնում ենք Գևորգ Գառնեցու թղթերից մեկում, որտեղ գրված է. «Որպէս սքանչելի Անդրէաս ցուցանէ յերկերիւրեակ բոլորին յերրորդ կանոնին զաւր արարչութեանն և տաւնել Աւետեանցն և զՄննդեանն ամենայն ամի որքանութեան ամսոցն, զՆիսան (սրբագրել՝ զՄարտ) զտասն և զհինգն (սրբագրել՝ զեւթն), և զԱպրիլի զեւթն և զՅունուարի զվեցն, զմի և նոյն պատկեր բերելով աւուրն»<sup>3</sup>: Այսպիսով Անդրեասի մոտ Ավետեաց Աստուածածնի տոնի օրը տեղափոխված ենք գտնում Ապրիլ 7-ին, թեև Ապրիլ 6-ին՝ կապված Աստուածաշնչի վկայությունների հետ, որոնց մասին եղած տեղեկությունները կքննարկենք փոքր ինչ հետո: Հայոց հնագույն տոնացույցում, այն է՝ «Կանոնք ընթերցուածոց»-ում, որը հունարենից Հայերեն է թարգմանել և խմբագրել Սահակ կաթողիկոսը 417-428 թթ. սահմաններում Ավետեաց Աստուածածնի կանոնը, բացակայում է: Այդպես է նաև Հետագա խմբագրություններում, ինչպես կտեսնենք Ստեփանոս Սյունեցու տեղեկություններից: Սակայն Հիշյալ տոնը կատարել են և նրա Համապատասխան ընթերցուածները, որոնք ընթերցում էին տոնի ժամանակ, վերցրել են Քրիստոսի Մննդեան 4-րդ օրվա կանոնից, ինչպես և Մարիամ Աստուածածնի տոնի՝ Օգոստոսի 15-ին դրված առանձին կանոնից: Ավետեաց Աստուածածնի կանոնը մտավ Հայոց Տոնացույց 8-րդ դարի 20-ական թվականներից ոչ շուտ:

Ասենք նաև, որ Եփեսոսի ժողովից (431 թ.) հետո, որպես նրա կանոնների հետևանք, ավելի ընդգծվեցին Աստուածածնի տոները, որոնց թվում՝ Ավետեաց Աստուածածնինը, անշարժ տոնական օրով՝ Ապրիլ 6-ով ըստ Հայոց բնագրերի:

Ուշագրավ է, որ Ավետեաց Աստուածածնի հիշատակի օրվա կապակցությամբ ամենահին հնագույն վկայությունը Հայ ինքնուրույն մատենագրության մեջ գտնում ենք Եղիշեին վերագրվող մի բնագրում, որտեղ հիշյալ տոնի օրը տրվել է Հայոց շարժական տոմարի Արեգ ամ-

1 Սրբոյն Եփրեմի մատենագրութիւնք, Բ. երկրորդ, Վեներիկ, 1836, էջ 18-19:  
2 Աշ. Աբրահամյան, Անդրեասի տոմարագիտական աշխատությունները, էջ 80, Է. Աղայան, Ակնարկներ հայոց տոմարների պատմության, էջ 148:  
3 Գիրք թղթոց, էջ 354:

սով, որը և թվագրելու հնարավորություն է տալիս: Եղիշեի մատենագրության մեջ<sup>1</sup> առկա է «Վարդապետութիւն ըստ Յովհաննու սիրելոյ ի չարչարանս Տեառն» վերնագիր կրող բնագիր: Վերջինիս շարունակությունները չունեն վերնագրեր, բայց հրատարակիչները վերնագրել են՝ «Ի թաղումն [Յիսուսի]», «Ի Յարութիւնն [Քրիստոսի]», «Յերեւումն Տեառն աշակերտաց», «Երեւումն Տեառն առ Տիրերեաց ծովուն», «Ի քարոզութիւն առաքելոց»: Դրանք թարգմանություններ չեն: Հրատարակիչները երկբայելի են համարել հիշյալ բնագրերի պատկանելության հարցը, այսինքն՝ Վարդանանց պատմության հեղինակ Եղիշեինը չեն համարել, թեև հրատարակել են նրա մատենագրության մեջ: Հարկ է նշել, որ բնագրերում տեղ տեղ որպես բնագրի հեղինակ վկայակոչվել է Եղիշե անունը: Քննարկվող բնագրի ժամանակը և հեղինակը ճշտելու միակ եղանակը շարադրանքում տեղ գտած տոմարական զուգահեռների քննությունն է: Բերենք այդ վկայությունները.

1. «... առաջին ամիսս այս, ասէ ձեզ սկիզբն ամսոյ, որ արեգ ամիս» (էջ 242):
2. «... Արդ նոյն Տերն՝ որ զայս ակնարկութիւնս առ ժողովուրդն կատարեաց ի սմին արեգ ամսեան աւետարանեցաւ ի հրեշտակէն սրբոյ կուսին ի Նազարեթ զի գսոյն ամիսս արասցէ սկիզբն նորոյ փրկութեանս...» (էջ 246):

Գտնենք վերոհիշյալ բնագրի գրման տարեթիվերը: Առաջին տեղեկության մեջ եբրայական տոմարի Նիսանի 1-ը, որը նրանց առաջին ամսվա սկիզբն է, համադրվել է հայոց շարժական տոմարի Արեգ ամսվա հետ, հետևաբար Նիսան 1 = Մարտ 22 = Արեգ 1 - 30 = 376/19 - 492/15 թթ.:

Երկրորդ վկայության մեջ Հայոց շարժական տոմարի Արեգ ամիսը համադրվել է Ավետեաց Աստուածածնի օրվա հետ, որը նույնպես զուգահորել է Նիսան ամսվա հետ:

Քանի որ Ավետեաց Աստուածածնի հիշատակի օրը անշարժ էր և վաղ շրջանում միշտ եղել է Ապրիլ 6-ին (ըստ հայկական բնագրերի կամ Ապրիլ 7-ին (ըստ Անդրեասի), որոնք համարժեք են եբրայական Նիսան 16-ին և 17-ին ապա ստանում ենք՝ Նիսան 16 (17) = Ապրիլ 6 (7) = Արեգ 1-30 = 316/319 (312/315) - 432/435 (428-431) թթ.:

Վերոհիշյալ երկու տվյալները այն է՝ Նիսան 1 = Մարտ 22 և Նիսան 16 (17) = Ապրիլ 6 (7) միաժամանակ հայոց շարժական տոմարի Արեգ ամսի համապատասխան օրերին կարող էին լինել 376/379 - 432/435 (428-431) թթ. սահմաններում, այսինքն հաշված տարիների հատման հատվածում միայն ուստի հիշյալ բնագրի գրման վերին սահմանն է 432-435 (428-431) թվերի քառամյակներից մեկը, իսկ ներքին սահմանը՝ հայոց գրերի գյուտից ոչ շուտ: Մենք այդ բնագիրը թվագրում ենք մեր ստացած տարեթիվերի վերջին սահմանով, այն է՝ 432-435 թթ. (կամ 428-431 թթ.):

Ակնհայտ է դառնում, որ մի կողմից քննարկվող բնագրի մեջ առկա է Ավետեաց Աստուածածնի հիշատակի օրվա հնագույն տեղեկությունը, մյուս կողմից պարզ է, որ Վարդանանց պատմության Եղիշեն չէր կարող լինել հիշյալ բնագրի հեղինակը, քանի որ ըստ մատենագրական վկայությունների կրտսեր թարգմանիչները, որոնց թվում Եղիշեն գնացել են ուսումնառության Ալեքսանդրիա և այլ քաղաքներ 435 թ. հետո, այսինքն՝ բնագրի գրման տարիների ընթացքում: Վերը նշեցինք, որ քննարկվող բնագրերի մեջ տեղ տեղ հեղինակ է ճանաչվում Եղիշեն, ուստի բնագրի հեղինակ կարող է ճանաչվել Ամատունեաց եպիսկոպոս Եղիշեն: Հայտնի է, որ վերջինս մասնակցել է Արտաշատի ժողովին, որը տեղի ունեցավ 450 թվականին: Պարզ է, որ Արտաշատի ժողովին մասնակցած եպիսկոպոսները Մաշտոցի առաջին աշակերտներն էին, որոնք գրել են ինքնուրույն աշխատանքներ ինչպես Եզնիկ Կողբացին էր, ուստի ապագա

<sup>1</sup> Տե՛ս Սրբոյ Բորն մերոյ Եղիշեի վարդապետի մատենագրութիւնը, Վեճտիկ, 1859 էջ 242 և 246:

Ամատունեաց եպիսկոպոս Եղիշեն ևս կարող էր գրել հիշյալ աշխատանքը: Այսպիսով «Ի չարչարանս Տեառն» բնագրի մեջ գտնվող տոմարական զուգահեռների քննությունը ցույց է տալիս, որ այդ բնագիրը գրվել է ամենայն հավանականությամբ 432-435 թթ. և նրա հեղինակը Եղիշեն է, որը հետագայում դարձել էր Ամատունեաց եպիսկոպոսը: Ըստ էության հայտնի է դառնում «Ի չարչարանս Տեառն» և անվերնագիր բնագրերի հեղինակ Եղիշեն, որը հավանաբար եղել է վարդապետ, իսկ հետագայում ձեռնադրվել է եպիսկոպոս: Կարծում ենք, որ նրա անունը ևս պետք է մտցնել հայ մատենագիրների ցանկի մեջ իբրև քննարկվող բնագրերի հեղինակ:

Անանիա Շիրակացին «Ի Յայտնութիւն Տեառն եւ Փրկիչին մերոյ» ճառում տալիս է Հունվարի 6-ին, ինչպես և Ապրիլի 6-ին տոների կատարման Աստվածաբանական և տոմարական հիմնավորումը, որը կրկնեցին տարբեր հեղինակներ՝ հարստացնելով հիմնավորումները: Անանիա Շիրակացին գրում է.

«... Եւ արդ մի լիցի մեզ հակառակել եւ վիճաբանել ի ճշմարտութիւն արուեստիս պանծալով, այդ ճշմարտութեանն հաւանեցուք եւ աստուածայնոց գրոց. որպէս եւ յայտնի իսկ եղեւ ի տասն թշրին ամսոյ պապանձումն Չաքարիայի, որ է Իէ Սեպտեմբերի. եւ ի Իթ թշրին ամսոյ մերձաւորութիւն Չաքարիայի, եւ յղութիւն Եղիսաբէթի, եւ թուեալ զաւուրս վեց ամսոյն հարիւր ութսուն աւուր, ցուցանէ ի վեշտասան Նիսան ամսոյ, որ լինի վեց Ապրելի ըստ Հռովմայեցւոցն ուր եղեն Աւետիք սրբոյ կուսին, եւ թուեալ տասնամսեայ աւուրս անդրանկածնի կատարի երկերիւր եւթանասուն եւ վեց աւր ի քսան եւ մի Տեբեթ ամսոյ, որ է վեց Յունուարի ըստ Հռովմայեցւոց...»<sup>1</sup>:

5-րդ դարից սկսած հայոց եկեղեցուն ինչպես նաև հետագայում Անանիա Շիրակացուն ընդունելի չի եղել այն տեսակետը համաձայն որի Չաքարիայի պապանձումը դրել են թշրին 10-ին և այնտեղից հաշվելով ստացել են Մարտի 25-ը իբրև «Աւետիք սրբոյ կուսին» հիշատակի օր, իսկ Դեկտեմբերի 25-ը՝ Քրիստոսի ծննդեան տոնի առաջին օր: Հայոց եկեղեցին և Անանիա Շիրակացին վերը բերված հատվածում պաշտպանել են այն տեսակետը համաձայն որի Եղիսաբէթի հղիությունը եղել է Չաքարիայի պապանձումից 12 օր հետո, այսինքն Քափութեան և Տաղավարաց տոներից հետո՝ թշրին 22-ին, երբ Չաքարիան վերադաձավ տուն: Թշրին 22-ին հեշտություն ստացել են Ապրիլ 6-ը, ինչպես և Հունվարի 6-ը և ընդունել Ավետեաց Աստուածածնի և Քրիստոսի Մննդեան և Յայտնութեան օրերը: Հարկ է նշել, որ Ապրիլ 6-ը տալիս է թշրին 22-ից հաշված, իսկ Ապրիլ 7-ը՝ թշրին 23-ից: Այնպես որ Ավետեաց Աստուածածնի տոնի օրը Ապրիլ 6-ին կամ Ապրիլ 7-ին ընդունելը հաշվման արդյունք է և ոչ սկզբունքի, որի հետևանքով հիշյալ տոնը սկզբում տոնել են Ապրիլ 6-ին, իսկ հետագայում Ապրիլ 7-ին: Հիշյալ տեսակետը համընդհանուր ճանաչում է գտել և հակադրել են Դեկտեմբերի 25-ի և Մարտի 25-ի տոների օրերի տեսակետի դեմ, որն առաջադրում էին Հռոմեացոց և Հունաց եկեղեցիները և պարտադրում մյուսներին: Ստեփանոսը՝ Սյունեաց եպիսկոպոսը հիմնավորել շարունակել է հայոց եկեղեցու տեսակետը բերելով նոր բացատրություններ:

«Ստեփանոսի Սիւնեաց եպիսկոպոսի, մեծի իմաստասիրի պատասխան թղթոյն Անտիոքու եպիսկոպոսի զոր վասն հաւատոյ գրեալն էր» վերնագիրը կրող բնագրում կարդում ենք.

1. «... Դարձեալ ասեք եթէ զԱւետիսն ի Մարտի ի քսան և հինգն ոչ կատարեմք և ոչ զԾնունդն ի Դեկտեմբերի ի քսան և հինգն: Աղաչեմ զի ուսուցես մեզ՝ թէ՛ յոր գիրս կայ, յառաքելոց, թէ՛ յուղղափառ վարդապետաց կամ որով պատճառանաւք եղեալ էր զայդոսիկ յայդմ տեղւոջ: Եթէ զԱրտեմոնին ասեք ոչ ընդունիմք. զի մեք յԵրուսաղէմի գիտեմք զսկիզբն հաւատոյ և առաքեալքն յԵրուսաղէմ կարգեցին զկանոնսն և Յակոբայ Տեառն եղբայրն յԵրուսաղէմ

<sup>1</sup> Տե՛ս Անանիա Շիրակացու մատենագրութիւնը, էջ 289:

կարգեաց զընթերցուածն, և Կիւրեղ Հայրապետն զնոյն դաւանեաց»<sup>1</sup>:

2. «Դարձեալ ասէք և վասն կուսական Աւետեացն, եթէ մեք ոչ տաւնեմք, այլ տաւնեմք և կարի քաջ. որպէս զԾնունդն և զՄկրտութիւնն և զԱւետիսն և եղև այսպէս: Ձի յԱպրիլի ի չորսն Լրումն տէրունական չարչարանացն և ի հինգն թաղումն, ի վեցն Յարութիւն: Արդ նոյն հրեշտակն որ յԱպրիլի ի վեցն զԱւետիսն ետ կուսին նոյն դարձեալ յԱպրիլի ի վեցն զԱւետիսն Յարութեանն: Յաղագս որոյ Աստուածածնին զմեծացուցեն ի Յարութեան աւուր խորհրդաբար ասեմք: Այլ թէ ընդ էր ոչ կարգեաց Յակոբոս ընթերցուածին տաւն Աւետեացն, նաև ոչ Կիւրիլի փոյթ եղեալ: Ձի բազում անգամ դիպէր ի սուրբ պահս չարչարանացն յԱպրիլի ի վեցն, վասն այսորիկ բազում անգամ յամենայն կիւրակէ հրամայեցին ընդ Յարութեան տաւնել զԱւետիսն: Բայց եթէ և տաւնեաք յԱղուհացսն, ոչ ինչ վնաս էր, զի տէրունական տաւն է»<sup>2</sup>:

Ստեփանոս Սյունեցին Հաղորդում է, որ Ավետեաց Աստուածածնի տոնի կանոնը չկա Սահակ կաթողիկոսի թարգմանած և խմբագրած «Կանոնք ընթերցուածոց»-Տոնացույցում, որը վերագրել է Հակոբ Տեառնաեղբորը, մասամբ Կյուրեղին, ինչպես և մինչև ինքն եղած բնագրերում, սակայն տոնը կատարել են Ապրիլի 6-ին և նրա ընթացքում կատարվող տոնածիսական կարգը վերցրել են Քրիստոսի Ծննդեան 4-րդ օրվա, Մեծ շաբաթի օրերի և Մարիամ Աստուածածնի մեկ այլ տոնի կանոններից: Ստեփանոս Սյունեցին հետևում է և պաշտպանում Հայոց եկեղեցու ընդունած տեսակետը, որը շարադրեցինք Անանիա Շիրակացու բնագրերի հատվածների մեջ և Ապրիլ 6-ը ընդունել է իբրև Ավետեաց Աստուածածնի տոնի օր, միաժամանակ վերագրում վաղ շրջանին: Նա խոսում է անշարժ տոնական օրվա՝ Ապրիլ 6-ի և շարժական տոնների՝ Չատկի և Աղուհացից օրերին Ավետեաց Աստուածածնի տոնների համընկնման մասին, ինչպես և հիմնավոր բացատրություն տալիս հատկապես Չատկի և Ավետեաց Աստուածածնի տոնների համընկնման մասին: Հարկ է նշել, որ 5-րդ դարից մինչև Ստեփանոս Սյունեցու ժամանակը 11 անգամ Ապրիլի 6-ին համընկել են Չատկի և Ավետեաց Աստուածածնի տոները, իսկ երեք անգամ 486 թ., 581 թ. և 676 թ. Ապրիլի 4-ին՝ «լրումն տրէունական չարչարանացն» կամ լուսնի լրման 19-ամյակի 1-ին տարում եղել է լրման օրը և ընկել է ուրբաթ, իսկ Չատկի և Ավետեաց Աստուածածնի տոները միաժամանակ տոնել են Ապրիլ 6-ին, Կիրակի: Նա բացատրել է, որ հիշյալ տոները նույն ժամանակ նշելը մեծացնում է ու բարձրացնում Աստուածածնի տոնի խորհուրդը: Ի դեպ Մարտի 25-ի դեպքում էլ առկա է նույն օրինաչափությունը, այնպես որ նույն տոները տոնելը եթե քննադատության հարց կար ապա վերաբերվում էր երկու տեսակետին էլ: Ինչ վերաբերում է Ավետեաց Աստուածածնի և Աղուհացից օրերի համընկնմանը ապա դրանք ընկնում էին տերունական տոների շրջանի մեջ, ինչպես նկատել է հեղինակը: Ի դեպ Ապրիլ 6-ը անշարժ տոն, իսկ Չատկի՝ շարժական տոն լինելու պատճառով Ավետեաց Աստուածածնի տոնը ընկնում էր Չատկի տոնից ետ և առաջ: Երբ Չատկի համընկնում էր Ապրիլ 6-Ապրիլ 12-ի օրերին, ապա Ավետեաց Աստուածածնի տոնը տոնում էին Չատկին և նրան նախորդող Մեծ շաբաթվա օրերին: Երբ Չատկի լինում էր Ապրիլ 13-18-ին քննարկվող տոնը կատարում էին Ծաղկազարդի և նրան նախորդող շաբաթվա օրերին: Վերջապես Չատկի Ապրիլ 20-25 կատարելու ժամանակ Ավետեաց Աստուածածնի տոնը եղել է Ծաղկազարդին նախորդող կիրակիից առաջ ներառյալ այդ շաբաթվա երեքշաբթին: Այնպես, որ Ստեփանոս Սյունեցին նկատի է ունեցել վերոհիշյալ իրողությունները, երբ նշել է, որ Ավետեաց Աստուածածնի տոնական օրերը նայած տարի համընկել են Աղուհացից օրերի հետ, որոնք տերունական տոների շրջանի մեջ էին, իսկ Ավետեաց Աստուածածնի տոնը որպես տերունական տոն կարող էր կատարվել այդ օրերին: Ասենք նաև, որ Չատկի Մարտ 22 - Ապրիլ 5-ի օրերին

<sup>1</sup> Գիրք թղթոց, էջ 325:

<sup>2</sup> Գիրք թղթոց, էջ 327:

տոնելու ժամանակ Ավետեաց Աստուածածնի տոնական օրը համընկել է Չատկից հետո մինչև Աշխարհամատրան երկուշաբթի օրը նայած տարի: Պատահական չէ, որ հետագայում Ավետեաց Աստուածածնի կանոնը դրել են Նոր կիրակիից հետո եկող չորեքշաբթի օրվա տակ:

Հայոց եկեղեցու տեսակետի ներկայացուցիչները Ավետեաց Աստուածածնի տոնը Ապրիլ 6-ին սահմանելը կապել են նաև Ավետարան ըստ Ղուկասի մի հատվածի հետ, որտեղ գրված է. «Եւ յամսեանն վեցերորդի առաքեցաւ Գաբրիէլ հրեշտակն յԱստուծոյ...»: Այն ընկալվել է իբրև Ապրիլ 6:

Ի դեպ հիշյալ հատվածը կարդացվում էր Քրիստոսի Ծննդեան 4-րդ օրվա կանոնի ժամանակ, որը հաճախ համընկնում էր չորեքշաբթի օրվա հետ:

Հավանաբար, Հովհաննես Օձնեցին իր խմբագրած Ճաշոց-Տոնացույցում Ավետեաց Աստուածածնի կանոնը դրեց Նոր կիրակիից հետո եկող չորեքշաբթի օրվա տակ: Դրա հիմնավորումը կարծես թե գտնում ենք Չաքարիա կաթողիկոսի «Մեկնութիւն ընթերցուածոցի» խմբագրության մեջ:

Գրիգոր Արշարունու «Մեկնութիւն ընթերցուածոց»-ում գտնում ենք վկայություններ Ավետեաց Աստուածածնի տոնի մասին: Բնագրի քննությունը, որ կատարել ենք առանձին գլխի մեջ կապված Տօնապատճառների խմբագրությունների հետ, ցույց է տալիս, որ Գրիգոր Արշարունու անվամբ հրատարակած բնագրի 15-րդ գլխի միայն առաջին հատվածն է նրանը, իսկ այդ գլխի զգալի մասը ավելացվել է հետագայում Չաքարիա կաթողիկոսի կողմից 9-րդ դարի 60-ական թվականների վերջերին: Այնտեղ Չաքարիան հիմնավորում է այն տեսակետը, որ «ի հօրէ ի չորեքշաբթուն աւետարանեցաւ Կուսին, ծագեալ մեզ ի նմանէ արեգակն արդարութեան եւ լուսաւոր առեալ զխաւար մեր»<sup>1</sup>: Նա ապացույցներ է գտնում նաև Հայոց ՇԼԲ-ում: Չաքարիա կաթողիկոսը գրում է.

1. «Եւ ի վեց հազարիս ճշմարտապես աւետարանեցաւ ի Գաբրիէլ սրբոյ Կուսին Մարիամու, որպէս յայտնի եւ հինգհարիւրեակ բոլորակէն»

2. «Եւ բովանդակի յԱպրիլի ամսոյ վեցն Աւետիք հրեշտակին առ Մարիամ, որոյ օրն լինի չորեքշաբթի երկերիւր եւթանասուն եւ եւթն (սրբագրել՝ ութն) թուականաւ»<sup>2</sup>:

Չաքարիան Հայոց 313 թվական (= 865 թ.) Ապրիլ 15-ի լրման տարուց (որը լուսնի 19-ամյակի 19-րդ տարին է, դրել է Քրիստոսի չարչարանաց օրը, իսկ Հայոց 314 թվականին (= 866 թ.) Ապրիլ 4-ի լրման տարուց՝ ըստ պարունակութեան (որը լուսնի 19-ամյակի 1-ին տարին է) հանել է 33 (34) տարիներ և հաշվարկելով ստացել է համարժեք տարիներ, երբ Քրիստոսի Ծննդեան առաջին օրը հինգշաբթի էր, իսկ Ավետեաց Աստուածածնի օրը՝ չորեքշաբթի: Ասենք որ Հայոց ՇԼԲ-ի 10 տարբեր տարիներում միաժամանակ Քրիստոսի Ծննդեան առաջին օրը ընկնում է հինգշաբթի, իսկ Ավետեաց Աստուածածնի տոնը չորեքշաբթի: Իսկ Հայոց ՇԼԲ-ի տարիներին Ապրիլի 6-ին՝ Նոր կիրակիից հետո չորեքշաբթի եղել է մեկ տասնյակ տարիներից ավելի և Ապրիլ 6-ը չորեքշաբթի մինչև Չաքարիայի կաթողիկոսության վերջը ավելի քան 40 տարիների որոշակի պարբերությամբ: Կարծում ենք հիշյալ հիմնավորումներն ու հաշվարկները Չաքարիան չէր կատարի, եթե Հովհան Օձնեցու Ճաշոց-Տոնացույցում կանոնված չլինեք Ավետեաց Աստուածածնի տոնական կանոնը չորեքշաբթի օրվա տակ:

Ավետեաց Աստուածածնի տոնի ամսաթվի և շաբաթվա օրվա կապակցությամբ Հայոց եկեղեցու տեսակետն է շարադրված նաև հետագայում գրված բնագրերում: Բերենք դրանցից քաղվածքներ:

<sup>1</sup> Գրիգորիս Արշարունի քրեպիսկոպոս Մեկնութիւն ընթերցուածոց, Վեներաբլ, 1964, էջ 115-118:

<sup>2</sup> ԱճԴ., էջ 115-118:

Գևորգ Գառնեցի կաթողիկոսը ասորոց Հովհաննես պատրիարքին գրած պատասխան թղթում գրում է.

«Եւ վասն այսորիկ ասն լինել զյղութիւն Եղիսաբեթի ի յեթնորորդ ամսեան Թշրին տասն. ի քաւութեան տաւնին, և Սեպտեմբերի ի քսան և Հինգն (սրբագրել՝ եւթն). և անտի մինչև ի քսան և Հինգն Մարտի թուեն ինն ամիս և Հինգ աւր (սրբագրել՝ վեցն ամիս) և անդ ասն զԱւետիսն կուսին անտի մինչև ի քսան և Հինգն Դեկտեմբերի ինն ամիս և Հինգ աւր ժողովն յղութեան կուսին և Մնունդ կատարեն և յետ երկուտասան աւուր ի վեցն Յունուարի Յայտնութիւն...»

Վասն այսորիկ գրէ աւետարանիչն Ղուկաս, թէ յետ աւուրց այնոսիկ. որ են եկոտասան աւուրք երկուց տաւնից այսոսիկ ապա գնաց ի տուն իւր Զաքարիա, և եղև յղութիւն Եղիսաբեթի ի քսան և երեք (սրբագրել՝ երկու) Թշրին ամսոյ, որ լինի ի Հոկտեմբերի յինն, և աստի մինչև յԱւետիս կուսին ի Նիսան ի տասն և Հինգ (սրբագրել՝ եւթ) և յԱպրիլի յեթն վեց ամիս ըստ Գաբրիէլի ձայնին, մինչև ցնոյնդ Յունուարի ի վեցն՝ ինն ամիս և Հինգ օր...»

Որպէս սքանչելի Անդրէաս ցուցանէ, յերկերիւրեակ բոլորին յերրորդ կանոնին զաւր արարչութեանն և տաւնել Աւետեացն և զՄննդեանն ամենայն ամի ըստ որքանութեան ամսոցն, զնիսան (սրբագրել՝ զՄարտ) զտասն և զՀինգն (սրբագրել՝ զեւթն), և զԱպրիլի զեւթն, զյունուարի զվեցն զմի և նոյն պատկեր բերելով աւուրն...»<sup>1</sup>:

3795 թվահամարի գրչագրի, որը Սամուել Կամրջաձորեցու Տոնապատճառի խմբագրությունն է «նորհուրդ սուրբ վարդապետաց ասացեալ վասն հաւատոյ ընդդէմ հերձուածողացն» վերնագրի տակ կարդում ենք. «Արդ ի Թշրին ԻԲ-ն և մինչև Նիսան ԺԷ (սրբագրել՝ ԺԶ) և յԱպրիլի Զ և ի Քաղոց ԺԱ-ն կատարեցաւ Զ ամիս և այս խորհրդաբար: Զի ի Զ աւուրս կերպարանս ընկալաւ եւս և թիւն Զերորդ, յորում առաքեցաւ Գաբրիէլ առ կոյսն Մարիամ. յաւուր Դ շաբաթու (= Չորեքշաբաթու) և զկնի Թ ամսեանն և Ե աւուրն, յորում Յունվարի ի Զ-ն ծնաւ և Տրեթ ԻԱ և Հոռի Ժ և աւրն Ե շաբաթ (= Հինգշաբաթ)...

... Եւ այլ խորհուրդ Զերորդին Յունվարի ըստ առաջին աւուրն արարչութեան պատկերին, որ յէ և ի Ժ (17) Մարտի ունի պատկեր իւր, ըստ ամեն ամի շրջագայութեան, որպէս Անդրթաս յՄ եկին ստուգաբանէ, թէ ամիս մի ի ԺԷ-ն ի Մարտի և յԵ (սրբագրել՝ յԷ) յԱպրիլի և ի Զ - Յունվարի մի պատկեր հանդիպի աւրն...»<sup>2</sup>:

Ասնք, որ բնագրում Քաղոց 11-ը և Հոռի 10-ը հայոց շարժական տոմարի ամսաթվեր են, որոնցով հեղինակը հետադարձ հաշվարկ է կատարել Քրիստոսի ծննդեան և չարչարանքների տարիների համար, որոնք պետք է սրբագրել ճշգրիտ տարիների քառամյակը ստանալու համար: Այս բնագիրն ևս ցույց է տալիս, որ հայոց տոնացույցում Ավետեաց Աստուածածնի տոնը դրված էր Ապրիլ 6-ին և չորեքշաբաթվա կանոնի տակ:

Ներսես Շնորհալին հույների քննադատության առիթով «Թուղթ ընդհանրական...»-ում գրում է. «Ի միում աւուր տօնել մեզ զտօն ծննդեան Քրիստոսի և մկրտութեանն ի վեցն Յունվարի՝ որպէս ընկալաք յառաջին հարցն աւանդից, յայսմ ուղիղ էին գրեալքս. իսկ եթէ ի Հինգն ամսոյն՝ վաղիւն Աւետեաց տօնեմք, լի է այս ամենայն ստութեամբ:

Քանզի Աւետեացն տօն՝ ըստ մերումս ի յեթն (ուշ շրջանի խմբագրությունն է, պետք է սրբագրել՝ վեցն) Ապրիլի է. իսկ Մննդեանն ի վեցն Յունուարի, երկուտասան աւուրք յետոյ քան զոր դուքն տօնէք զինչ հարկ էր ապա զերիսն ի միասին տօնել անխորհրդաբար, քանզի Մննդեան և Մկրտութեան ի միասին տօնելոյ՝ բազումս ունեմք վկայութիւն:

<sup>1</sup> Գիրք թղթոց, էջ 352-354:

<sup>2</sup> Ձեռ. № 3795, էջ 3ա-բ:

Նաք զի՝ յառաջագոյն ամ (= ամենայն) եկեղեցիք սկսեալք յառաքելոցն այսպէս տօնէին և յետոյ բաժանեցին ոմանք վասն Բեթղէհեմի և Յորդանանու, քանզի ոչ կարէին ի միում աւուր յերկուսին ուխտն կատարել զտօնսն՝ հեռի գոլով ի միմեանց, և փոքր փոքր աճամբ ընկալան և այլ եկեղեցիք զնոյնն. իսկ Հայաստանեայք՝ որպէս ընկալան ի սրբոյն Գրիգորէ, անփոփոխ կացին ի նոյն:

Դարձեալ՝ զի և աւետարանիչն Ղուկաս վկայէ այսոցիկ ճշմարիտ լինել, գլուխ Ա, համար 8: Քանզի պատմէ ի տօնի քաւութեանն՝ որ էր ի Թշրինի տասն, և ի Սեպտեմբերի քսան և եօթն, մտանել քահանայետին Զաքարիայ ի տաճարն և արկանել խունկ և տեսանել զտեսիլ հրեշտակին և լսել զԱւետիս յղութեան ամլոյն և կրել պապանձումն լեզուին յոչ հաւատալն և ապա ասէ թէ իբրև լցան աւուրք պաշտման նորա և գնաց ի տուն իւր. և տուն նորա ոչ յերուսաղէմ էր, այլ ի լեռնակողմն Հրէաստանի՝ ուր վողջոյն ետ Մարիամ Եղիսաբեթի և աւուրք պաշտման նորա էին Հինգ օր Քաւութեան տօնի և եօթն օր Տաղաւարահարցն, որ լինի երկուտասան օր:

Արդ՝ զերկուս տօնս զայսոսիկ կոչէ աւետարանիչն աւուրք պաշտման քահանայութեանն Զաքարիայ, զորս ի միասին տօնէին ըստ օրինացն, որ իբրև կատարեցաւ՝ գնաց ասէ ի տուն իւր, և ի Թշրին քսան և երկու և Հոկտեմբերի ինն եղև յղութիւն Եղիսաբեթի:

Արդ որք ի քսան և Հինգ Մարտի կատարեն զտօն Աւետեաց կուսին, զյղութիւնն Եղիսաբեթի ի Թշրին ի տասն ասն յառաջնումն աւուր պապանձման Զաքարիայ, որոց ոչ վկայէ աւետարանիչն Ղուկաս: Իսկ որք ի յօթն (սրբագրել՝ ի վեցն) Ապրիլի տօնեն զտօն Աւետեացն, և յետ երկուտասան աւուրց պաշտման նորա ասն զյղութիւնն Եղիսաբեթի ի Թշրին քսան և երկու ըստ վերագրելոցդ. որում և վկայէ աւետարանիչն:

է և երկրորդ վկայութիւն այսոցիկ ըստ նորուն աւետարանչին պատմութեանն. այն զի ասէ թէ Յիսուս էր ամաց երեսնից սկսեալ ի Մննդենէ անտի, և հարկ լինի ըստ իմաստուն և ուղիղ մտաց՝ ինոյն թիւ ամսոյ եկեալ՝ յորում և Մնունդն ի վեցն Յունվարի հանդիպել և Մկրտութեանն աւուր յետ երեսնից ամաց, թէպէտ և պատկեր աւուրն ոչ նմանապես: Էր և այլ իւր բազումս ասել վասն սորին, այլ սակաւս շատ է իմաստնոյնդ, բայց եթէ այսպէս և եթէ այնպէս ի փառս Աստուծոյ կատարեսցին»<sup>1</sup>:

2021 թվահամարի գրչագրի Տոնապատճառի հեղինակը մեկնել է չորրորդ օրվա կամ չորեքշաբթիի գաղափարը: Նա գրում է.

«Ի չորրորդում աւուր եղեն լուսաւորք... Ասի աւանդութիւն, եթէ յաւուր չորեքշաբաթու աւձն խաւսեցաւ ընդ Եւաի:

... Արդ լոյսն առաջին Քրիստոս յարգանտ կուսին բնակեցաւ, որպէս արեգական լոյսն յամանն յաւուր չորեքշաբաթու, նոյնպէս և չորեքշաբաթի Աւետիք կուսին ընդդէմ պատրանաց աւձին, որպէս Աւետիքի Աբրահամու ի չորրորդ դարուն և կանոն ի Սիոն կատարի<sup>2</sup>:

2040 թվահամարի գրչագրում կարդում ենք.

«... Ասացեալ աւանդութեամբ ի սուրբ հարցն, յաւուր չորեքշաբթի ազդեցութեամբն սատանայի խաւսեցաւ աւձն ընդ Եւայ, որոյ զբանն խմոր չարութեան և զբոլոր զբնութիւնս մեր ապականեաց: Վասն որոյ պարտ էր առաջին չարութեան ընդդէմ երևեր և գերագոյն բարութեան, և ի ձեռն երկրորդ կնոջն վերըստին նորոգել զբնութիւնս մեր: Վասն այսորիկ յայս չորրորդ աւուրս առաքեցաւ Գաբրիէլ առ սուրբ կոյս Մարիամ և Աւետարանեաց զմարմնանալ Միածնին հաւր առ նմանէ: Արդ յիրաւի ի չորրորդ աւուր եղեալ է յիշատակ Աւետեաց Աւ-

<sup>1</sup> Թուղթ ընդհանրական..., 1865, էջմիածին, էջ 126-128:

<sup>2</sup> Ձեռ. № 2021, էջ 36բ:

տուժածանին: Ձի որպէս ի ձեռն առաջին կնոջն կուսին ի արբեաց ի չարիս անկան մարդիկ և ի կենաց ի մահ պատրանաւք աւձին, այսպէս և ի ձեռն երկրորդ կուսին տիրուհոյ ի չարեաց ի կատարեալ բարիս և ի մահուանէ ի կեանս փոխեցան մարդեղութեամբ Քրիստոսի Աստուծոյ մե-  
րոյ... և յայսմ առուր չորրորդի, որ եղեալ է զԱւետիսն Գաբրիէլի առ կոյսն լինել այս ըստ խորհրդոյ հանդիպի և ոչ ըստ ժամանակին, քանզի ժամանակն յեւթն Ապրիլի է: Որպէս ասա-  
ցաք այլ ի յաւանդութենէ սուրբ հարցն, այսպէս ընկալաք, թէ յառուր չորեքշաբաթով աւձն արբանեակ եկաց սատանայի և խաւսեցաւ ընդ Եւայի և նա ընկալաւ զբանս նորա յղացաւ ի սրտին զբանս խորհրդոյ չարին և ծնաւ մեղաւք զմահ ամենայն աշխարհի: Վասն ասորիկ ի նոյն պատկեր առուր, որ է չորեքշաբաթի և եւթներորդ Ապրիլի, առաքեցաւ Գաբրիէլ յԱստու-  
ծոյ առ կոյսն Մարիամ և աւետեաց՝ ուրախ լեր բերկրեալ տէր ընդ [քեզ], և ընկալեալ Մարիա-  
մու ընդ ունկն իւր զմուտ բանին Աստուծոյ յղացաւ ողջութիւն ամենեցուն գեղեցիկ խորհրդով, և ծնաւ զարդարութիւն և զկեանս ամենայն տիեզերաց»<sup>1</sup>:

Ներկայացնենք Հայոց տոնացույցերի տեղեկութիւնները

179 թվահամար գրչագրում, որտեղ Ստեփաննոս Գուլյներիցանցը կրկնօրինակել է «Տաւ-  
նացոյց ըստ շաբաթուց»-ի երկու բնագիր, նոր կիրակիից հետո եկող հատվածում գրել է «Չո-  
րեքշաբաթի. Աւետեաց Աստուածածնին...» և «Ձկնի նոր կիրակէին. չորեքշաբթի. Աւետեաց  
Աստուածածնին»<sup>2</sup>:

Ավետեաց Աստուածածնի տոնի օրը չորեքշաբաթվա կանոնի տակ են տվել հետագայում  
ընդօրինակված տոնացույցերը Համարյա նոյն ձևակերպումներով<sup>3</sup>:

Վերոհիշյալ Տոնացույցերի խմբագրությունների մի խումբ գրչագրեր Ավետեաց Աստուա-  
ծածնի տոնի օրը չորեքշաբթի դնելուց հետո միաժամանակ նշել են Ապրիլ 6-ը<sup>4</sup> և ավելացրել.  
«բայց անպատճառ յԱպրիլ 2. յոր աւր և գա կատարեա և պատարագ մատչի»<sup>5</sup>:

Հետագայում ընդօրինակված տոնացույցերի գրչագրերն Ավետեաց Աստուածածնի հիշա-  
տակը ոչ միայն գրանցել են չորեքշաբաթի օրվա տակ, այլև նշել են Ապրիլի 7-ը, որպես ան-  
շարժ տոնի օր<sup>6</sup>:

Որոշ տոնացույցերի խմբագրություններ Աստուածածնի տոները, որոնց թվում Ավետեաց  
Աստուածածնինը բերել են ինչպես բնագրերի սկզբից, այնպես էլ բուն տոնացույցերի մեջ:  
Նրանք կանոնել են չորեքշաբթի, բայց նախատոնակը նշել են Ապրիլ 6-ի և Ավետեաց Աս-  
տուածածնի տոնը Ապրիլ 7-ի տակ որպես անշարժ տոնական օր: Այդ կարգի Հնագույն տոնա-  
ցույցերից մեկի խմբագրության մեջ, այն է՝ 8630 թվահամարի գրչագրում սկզբից ունի՝ «Արեգի  
ԻԹ և Ապրիլի 2 և Նիսան ԺԶ. Նախատունակ է Աւետեաց Սուրբ Աստուածածնին Մարիամու,  
զոր երկնային դասք հրեշտակաց տաւնեցին...»

Արեգ ամսոյ Հայոց Լ, Ապրիլի Հռոմայեցոց է և Նիսան ԺԷ. Տօն է մեծապայծառ ամե-  
նասրբուհոյ Աստուածածնին Մարիամու»<sup>7</sup>:

Ավետեաց Աստուածածնի տոնի օրվա համար Համարյա նույն ձևակերպումներն են տալիս

1 Ձեռ. № 2040, էջ 88ա-բ:

2 Ձեռ. № 179, էջ 531բ և այլն:

3 Ձեռ. №№ 142, էջ 310ա-բ, 752 էջ 163բ, 767, էջ 151ա, 7203, 3722, 590, 44ա և այլն:

4 Ձեռ. № 752, էջ 163բ, 2092, էջ 225ա, 4164, էջ 163բ և այլն:

5 Ձեռ. № 752, էջ 163բ և այլն:

6 Տե՛ս Ձեռ. № № 5667, էջ 119ա, 9838, էջ 166ա, 5398, էջ 121ա, 5419, էջ 197բ, 4459, 5436, էջ 174ա և այլն:

7 Տե՛ս Ձեռ. № 8630, էջ 4ա:

հետագայում ընդօրինակված գրչագրերը<sup>1</sup>:

2092 թվահամարի տոնացույցի խմբագրությունը ունի. «Երկրորդ շաբաթ շաբաթ օրս.  
Աւետեաց Աստուածածնին... տաւնս յԱպրիլի վեցն գտիր» (էջ 225ա): Քանի որ Ավետեաց Աս-  
տուածածնի տոնը նշել են Ապրիլ 6-ին՝ անշարժ ձևով, բնական է, որ այն պարբերաբար ընկել  
է նաև Ջատկից հաշված երկրորդ շաբաթի, այսինքն նոր կիրակիից հետո եկող շաբաթի շաբաթ  
օրը:

Ճաշոցների խմբագրությունների հաղորդումները ևս բազմազան են:

Գրիգոր Վկայասերի Տօնանամակի խմբագրության մեջ կարդում ենք. «Ապրիլ 2. Աւետիք  
Աստուածածնին Գաբրիէլէ յորժամ ասաց ցնա...»<sup>2</sup>: Համարժեք ձևակերպում ունի 940 թվահա-  
մարի գրչագիրը միայն այլ ամսաթվային նշմամբ:

ԽԴ Համարի տակ գրված է. «յԱպրիլ է. Աւետիք Աստուածածնին աւետեաց ի Գաբրիե-  
լէ...»:

6235 թվահամարի գրչագիրը վկայել է. «Սրբոյ Աստուածածնին [Աւետեացն] և այս կա-  
նոն կատարի...»<sup>3</sup>:

Տոնացույցային սահմանումներ ունեն որոշ ճաշոցների խմբագրություններ: 7741 թվա-  
համարի գրչագրում գրված է. «Չորեքշաբաթ զկնի նոր կիրակէին. Աւետեաց Աստուածածնի...»<sup>4</sup>:  
Համարժեք տեղեկություն ենք գտնում 4977 թվահամարի ճաշոցում (էջ 22բ): 939 թվահամարի  
գրչագիրն ունի Հնագույն տվյալներ: Բնագրում գրված է. «Ապրիլ 2. Աւետեաց Աստուածա-  
ծնին», իսկ ստորին լուսանցքում՝ «Յայս չորեքշաբաթիս Աւետեաց Աստուածածնի տաւն է»<sup>5</sup>: -  
Նույնարժեք տեղեկություն ենք գտնում 4437 թվահամարի ճաշոցում (էջ 13բ): Վերջապես 936  
թվահամարի ճաշոցը 2092 թվահամարի տոնացույցի նման կանոնել է. «Յետ նոր կիրակէին  
շաբաթ աւր. Աւետեաց Աստուածածնին...»<sup>6</sup>:

Հայոց անշարժ տոմարի ամսաթվերի կարգով և Տոնացույցի հիման վրա ընդօրինակված  
որոշ ճաշոցներ, ինչպես և Յայսմավուրքներ Ավետեաց Աստուածածնի տոնի օրը գրանցել են  
Նավասարդի 15-ի կանոնի տակ: 832 թվահամարի գրչագրում գրված է. «Նաւասարդի ԺԵ.  
Սրբոյ Աստուածածնին աւետեացն եւ այս կանոն կատարի...»<sup>7</sup>:

Վենետիկի 639 թվահամարի ճաշոցում կարդում ենք. «Նաւասարդի ԺԵ. Աւետեաց Աս-  
տուածածնին...»<sup>8</sup>:

3082 թվահամարի Համառոտ Յայսմավուրքն արձանագրել է. «Նորին՝ Նաւասարդի/  
ԺԵ. Տաւն Սրբոյ Աստուածածնին, զոր կարգեաց սուրբ Գրիգոր ի յԱշտիշատ ի Հայս... [Աւգոս-  
տոս] ԻԵ»<sup>9</sup>: Իսկ 179 թվահամարի Համառոտ Յայսմավուրքին ունի՝ «[Նաւասարդի] ԺԵ. տաւն  
Աստուածածնին, զոր սուրբ Գրիգոր յԱշտիշատ կարգեաց. ԻԵ [Աւգոստոս]»:

1 Տե՛ս Ձեռ. № № 4874, էջ 158ա և էջ 179ա, 2439, էջ 50ա, 5440, էջ 184բ-185ա, 4962, էջ 123ա և 146ա, 587, էջ 162բ-163բ և 213բ, 2338, էջ 1ա-5ա, 2025, էջ 2ա-7ա, 510, էջ 298ա, 2024, էջ 3ա-8ա, 2028, էջ 5ա-8ա, 720, էջ 230բ, 754, էջ 174ա և 195բ, 2030, էջ 1ա-6ա, 509, էջ 370բ, 2027, էջ 8ա-12ա, 2029, էջ 5ա-12ա և այլն:

2 Ձեռ. № 979, էջ 293ա:

3 Ձեռ. № 6235, էջ 3բ-4բ:

4 Ձեռ. № 7741 էջ 217բ:

5 Ձեռ. № 939, էջ 238բ:

6 Ձեռ. № 936, էջ 50բ-52ա:

7 Ձեռ. № 832, էջ 3բ-9բ:

8 Ս. Մենճեմյան, Աշտիշատ, էջ 605-628:

9 Ձեռ. № 3082, էջ 389ա:



3266 թվահամարի ճաշոցը գրանցել է. «Նաւասարդի ԺԵ. Աւետեաց Աստուածածնին և Այս կանոն կատարի...»<sup>1</sup>:

4741 թվահամարի Յայսմավուրքի խմբագրութեան մեջ ասվում է. «Նաւասարդի ԺԵ և Օգոստոս ԻԵ. Տաւն սրբոյ Աստուածածնի»<sup>2</sup>: 8904 թվահամարի ճաշոցն ունի. «Նորին (Նաւասարդի) ԺԵ. Աւետեաց Աստուածածնին...»<sup>3</sup>:

Հիշյալ բնագրերը Հայոց շարժական տոմարի Նավասարդի 15-ը վեր են ածել Հայոց անշարժ տոմարի ամսաթվի և համարժեք դարձրել Օգոստոս 25-ին: Այդ ամսաթվին երբեք Ավետեաց Աստուածածնի տոն չի կատարվել, ուստի վերանում է Օգոստոս 25-ը և մնում է Նավասարդ 15-ը որպես Հայոց շարժական տոմարի ամսաթիվ, որի հնագույն հիշատակը գտնում ենք 992 թվականին գրված Վարդավառի տոնին նվիրված մեկնութեան մեջ:

«Հայոց դիցարանի տոները» գլխում, ինչպես և դրանից առաջ հրատարակած հոդվածաշարում քննութեան ենք ենթարկել Նավասարդի 15-ի ամսաթվային նշումը, որպես Ավետեաց Աստուածածնի տոնի օր: Կրկին բերենք այդ ունիկալ տեղեկութիւնը.

«... Ի Նաւասարդի Ա-ն տաւնէին Արամազդայ եւ ի ԺԵ-ն Անահտայ... Իսկ սուրբ Գրիգոր ածեալ զմեզ ի լոյս աստուածագիտութեանն... եւ ընդդէմ նորին կարգէր ի Նաւասարդի Ա-ն Յովհանու կարապետին տօնել եւ ի Ժ եւ Ե-ն Աւետեաց Աստուածածնի...»<sup>4</sup>:

Մխիթար Գոշը, ինչպես վերոհիշյալ ճաշոցներն ու Յայսմավուրքները օգտագործել է վերը բերված բնագրի տվյալները և վրացոց համար ամփոփիչ շարադրել է Հայոց եկեղեցու կողմից որդեգրված տեսակետը, այն է՝ «Իսկ զտաւնս Մննդեան Քրիստոսի տանեմք, որպէս գրեալ է յԱւետարանին Ղուկայ եւ ի Կանոնս առաքելոց յունկարի Զ՝ տաւն Մննդեան եւ Յայտնութեան եւ Յակոբա, եւ Կիւրեղ այնպէս կարգեալ են, եւ Ռատակէս ի ժողովոյն Նիկիա ի հայրապետէն Երուսաղեմի այնպէս ընկալաւ զեղեալ ընթերցուածն յառաքելոցն եւ երբ ի Հայս: Նոյնպէս եւ այլ հայրապետք ազգաց: Ըստ այսմ աւրինակի եւ աւետիքն պատահի ի Զ ապրիլի եւ ծնունդն՝ յունկարի Զ: Եւ զկնի Լ ամի մկրտութիւնն դարձեալ ի յունկարի Զ պատահեաց, վասն այն մասին կարգեաց զերկուս տաւնս տաւնել սուրբ առաքեալն Յակոբոս, զի նոյն էր քանիք ամսոյն, թէպէտ եւ ոչ նոյն պատկեր աւուրն, զի ծնունդն յուրբաթու էր եւ մկրտութիւնն ի կիրակէի:

Եւ դարձեալ, զի մի էր խորհուրդ անախտ ծննդեան եւ մկրտութեան, վասն այն ի միասին եղին առաքեալքն: Նոյնպէս Կիւրղոս կարգեաց յընթերցուածին զԱւետարան ծննդեանն, որ ըստ Ղուկայ՝ Եւ հովիւք էին ի տեղւոջն, եւ զՄատթէոսի՝ եւ Յիսուսի Քրիստոսի ծնունդ էր այսպէս, եւ Աւետարան չէ եղեալ մկրտութեան յընթերցուածին առ ի հաստատել, զի միասին տաւնս տաւնել, զի եւ յայտնի է Աւետարան աւուրն, բայց առաքեալ միեւնոյն է երեկոյին եւ ի վաղուեանն եւ սաղմոս՝ Տէր ասաց ցիս՝ որդի իմ ես դու ե՛ւ առաքեալ: Քանզի երեւեցան շնորհքն Աստուածոյ առ ի պատիւ տաւնից՝ զմի ունել խորհուրդ. զի որպէս ծնունդն էր Հոգևով, նոյնպէս եւ մկրտութիւնն Հոգևով, եւ աւետիքն Հոգևով, եւ աւրն չորեքշաբթ:

Յաւետեացն մինչ ի ծնունդն Թ ամիս է և Ե աւր ըստ աւրինակի անդրանկի, այլ Յոյնք եւ Վիրք, որ յայսմանէ բաժանին, ի պապանձմանէ Զաքարիայի թուեն եւ ոչ ի կատարմանէն տաւնին՝ ի Ժ-երորդէ Թշրին ամսոյ եւ ոչ ԻԲ-է նոյն ամսոյ, զի ըստ նոցա ի մարտի ԻԵ աւետիքն է եւ ի դեկտեմբերի ԻԵ ծնունդն:

Արդ, թեպետ եւ պատճառեն վասն սուրբ տեղեացն յԵրուսաղեմի յիւրաքանչիւր տեղիսն կատարել զտաւնսն՝ զծնունդն ի Բեղղազէմ եւ զմկրտութիւնն ի Յորդանան, այլ Կիւրղոս ցուցանէ ի Դաւթի եւ Յակոբայ տաւնն ասելով: Զոր այլ քաղաքս ծնունդ առնեն՝ ուստի յայտ է, թէ յառաջ եղև բաժանումն տաւնից յաղանդոյն Արտեմոնի, եւ վասն յայտրիկ ժողով լինի, գրեալ է ի կանոնս: Զնոյն հաստատէ եւ ժողովն Քաղկեդոնի: Եւ տաւնից բաժանումն ցուցանէ արբա Եփրեմ՝ հարցեալ յաշակերտացն, յայսպէս ասելով, թէ սովոր էին Յոյնք ի դեկտեմբերի ԻԵ տաւն առնել արեգական, յորժամ առնոյր տիւն ի գիշերէն, զոր հարսանիս արեգական անուանէին: Կարգեցին զտաւնն Մննդեան յայնմ տեղւոջ՝ առ ի խափանել զայն սովորութիւն:

Եւ զի թէպետ բամբասեն մեզ չտաւնել զաւետիսն, այնպէս իմասցին, թե զաւետիսն չտաւնեմք, զի ա՞րդ եւ զծնունդն: Այլ զի ոչ ընդ Յոյնս եւ ընդ վիրս տաւնեմք՝ յայտնի է պատճառն. Յակոբոս եւ Կիւրեղ այնպէս կարգեցին, զի ընդ տաւնի Մննդեանն եւ Յայտնութեանն եղին, զի չէր յայտնի աւետիքն մինչ ի կատարումն ծննդեանն, և Կուսին միայն ետ զաւետիսն հրեշտակն, եւ նա ընդ բանսն խոովեցաւ եւ Յոսեփ երկմտեցաւ: Արդ, իբրև խորհուրդ աւետեացն կատարեցաւ, ապա տաւնեցաւ՝ ի չորրորդ աւուրն խորհրդաբար. զի աւետիքն ի չորեքշաբթի էր: Եւ դարձեալ, մեր լուսաւորիչն Գրիգորիոս զաւետեաց տաւնն, առ ի խափանել զմոլորութիւն Հայոց զոր տաւնէին Անահիտ տիկնոջն, անդ եղ ի նաւասարդի ԺԵ, որ է է (ուշ շրջանի խմբագրութիւնն է, պետք է լինի Զ, ինչպես որոշ գրչագրերում, ապրիլի ըստ թուոյ աւուրց եւ ոչ ի մարտի ԻԵ, որպէս կարգեալ է Արտեմոնի եւ հաստատեալ Յոբանայ: Երրորդ անգամ տաւնեմք ի տաւնի փոխման Մարիամու Աստուածածնի յերկրորդ աւուրն: Բայց զիտեմ զի ասէք, թէ որովհետեւ ի է (սրբագրել՝ Զ) է ապրիլի՝ անդ ընդէ՞ր ոչ տաւնէք: Յուցաք զպատճառն՝ զի այնպէս կարգեցաւ ի սրբոյն Յակոբայ եւ ի Կիւրղէ ընդ ծննդեանն, եւ զի որպէս Յոյնք առ ի խափանել զտաւն հարսանեաց արեգականն զծնունդն անդ փոխեցին, նոյն բան է եւ վասն աւետեացն: Եւ թէ հարկաւոր կարծեն զԲԺ աւրն ի մեջ ծննդեան եւ մկրտութեանն՝ արժան էր զկնի Լ ամի տաւնել Մկրտութիւնն: Եւ թէ զայն եւս պատճառեն, թէ նախ Թլպատութիւն էր եւ ապա մկրտութիւնն, այլ զայս գիտացեն, զի մի է խորհուրդ մկրտութեանն եւ Թլպատութեանն: Վասն այն եւ Յեսու Նաւեայ նախ անցուցեալ ընդ Յորդանան զժողովուրդն ի խորհուրդ Մկրտութեան եւ ապա Թլպատէր ի Գաղգաղա, եւ նախ Մովսէս յամպն եւ ի ծովի մկրտէր»<sup>1</sup>:

Հայոց Յայսմավուրքի որոշ խմբագրութիւններ Ավետեաց Աստուածածնի տոնի օրը տվել են Հայոց անշարժ տոմարի ամսաթվերի և նրանց հուլյան զուգահեռներով:

179 թվահամարի համառոտ Յայսմավուրքում գրված է.

1. «(Արեգ) ԻԸ. Նախատաւն Աւետեաց Աստուածածնին. Ե (Ապրիլ)»:
2. «(Արեգի ԻԹ. Աւետիք ամենասուրբ կուսին Մարիամու աստուածածնին ի Գաբրիէլէ. զի ասաց ցնա. Ուրախ լեր բերկրեալդ տէր ընդ քեզ... Զ (Ապրիլ)»:
3. «(Արեգի Լ. վերստին տաւն Աւետեացն... է (Ապրիլ)»:

Ավետեաց Աստուածածնի տոնի համար Ստեփանոս Գուլյանիցանցը փաստորեն նախատեսել է երեք օրվա տոն, թեև նրա ընդօրինակած «Տաւնացոյց ըստ շաբաթուց»-երի մեջ, որը նույն գրչագրի մեջ է հիշյալ տոնին նախատեսել է մեկ օր՝ նոր Կիրակիից հետո եկող չորեքշաբթի օրվա կանոնի տակ:

Մոտ նույն ժամանակի ընդօրինակված 8179 թվահամարի գրչագիրը, որը Հայոց տոնացույցի կարգով դրված Յայսմավուրքի խմբագրութիւնն է, վկայել է միայն մեկ տոնական օրվա

1 Ձեռ. № 3266, էջ 143ա-բ:

2 Ձեռ. № 4741, էջ 8բ:

3 Ձեռ. № 8904, էջ 186բ-189ա:

4 Ղ. Ալիշան, Աշխ. աշխ., էջ 90-91, С. F. Conyleare, Աշխ., էջ 512, Ն. Պողարեան, Աշխ. աշխ., էջ 452:

1 Տե՛ս Մխիթար վարդապետ Գոշ թուրթ առ Վրացիսն՝ յաղագս ուղղափառութեան հաւատոյ, Գանձասար, 1996, հ. 2, էջ 362-364:



մասին, այն է՝ «Արեգ ԻԹ, որ է Ապրիլ 2. Տաւն է Աւետեաց Աստուածածնին»<sup>1</sup>: 7530 թվահամարի Յայտնավորքի խմբագրութեան մեջ նույնպես կարդում ենք. «Արեգի ԻԹ. Ապրիլ 2. - Տաւն է Աւետեաց Աստուածածնին զոր ետ նմա Գաբրիէլ Հրեշտակապետն և յղացօ(=աւ) զբանն Աստուծոյ»<sup>2</sup>:

2695 թվահամարի Յայտնավորքի գրչագիրն ունի հետևյալ կանոնը. «Արեգ ԻԹ և Ապրիլ 2. Տաւն է Աւետեաց Աստուածածնին Մարիամու»<sup>3</sup>:

Մեջ բերված տվյալները ցույց են տալիս, որ 13-15-րդ դարերում Ավետեաց Աստուածածնի տոնը նշել են ոմանք Ապրիլ 6-ին, իսկ ոմանք՝ Ապրիլ 7-ին: Ներկայացնենք 15-րդ դարի 2-րդ կեսին գրված տեղեկությունը, որտեղ թեև Թովմա Մեծոփեցու մասին է գրել նրա աշակերտը, բայց ուշագրավ տվյալներ է տալիս Ավետեաց Աստուածածնի տոնական օրերի մասին: Կիրակոս վարդապետը վկայում է. «Նոյնպէս և սա (Թովմա Մեծոփեցին - Բ. Վ.) առնէր զբանս նոցա և Հանապազ Հարչարէր զինքն ի յուսուցանել զմանկունս եկեղեցւոյ. ի սաղմոսն, ի յաղօթքն, ի շարական, ի գրագրութիւն, ի ժամանակագրութիւն. զի գրեաց ընտիր և անսղալ աղաւթամատոյց և լաւ օրինակաց և ուսոյց ԻԴ ընտիր գրչագիրը: Եւ սասց սուրբ վարդապետս մեր, թէ պարտ է Աւետեաց Աստուածածնին Բ աւր տօն կատարել, ի յապրիլի 2 և ի Նիսան ի Ժ2 նախատաւնակ առնել և յԱպրիլի է և Նիսան ի Ժէ տաւն Աւետեաց Աստուածածնի կատարել. մին վասն երկնաւորաց և միւսն վասն երկրաւորաց: Զի Բ հետ աւետիք ետ Գաբրիէլ Հրեշտակապետն կուսին Մարիամու աստուածածնին զմին ի Գ ժամն ի վերայ աղբերն և զմին ի 2 ժամն ի սենեկին»<sup>4</sup>:

15-րդ դարի 40-ական թվականներին ընդօրինակված տոնացույցերի գրանցումները և կիրակոս վարդապետի տեղեկությունը թույլ է տալիս պնդել, որ Թովմա Մեծոփեցին է երկու օր տոն կանոնել Ավետեաց Աստուածածնի օրվա կապակցությունը և մտցրել տոնացույցի կանոնների մեջ:

Հարկ է նշել, որ մինչև Թովմա Մեծոփեցին և նրանից հետո էլ վեճեր են եղել Ավետեաց Աստուածածնի տոնը Ապրիլ 6-ին, թե Ապրիլ 7-ին կատարելու խնդրում և վերջապես համաձայնվել են Թովմա Մեծոփեցու տարբերակի վրա, որ Ապրիլ 6-ին նախատոնակ կատարեն, իսկ Ապրիլ 7-ին՝ տոն: Այս տեսակետից ուշագրավ են տոնացույցերի բացատրությունները, այն է՝ «Այլ այս գիտելի է: Բազում հակառակութիւն կրէ մերս եկեղեցի վասն տօնի Աւետեաց Աստուածածնին: Ոմանք ի 2 յԱպրիլ առնեն և ոմանք՝ յէ, և երկուք ճիշտ են, ի 2 նախատոնակ է, զոր երկնայինքն տօնեցին Գ դասք Հիշատակացն վերնոց, զի նոցա յայտնեցաւ փրկութիւն մարդկան: Եւ յէ տոնէ մերս եկեղեցի, զի կուսին Մարիամու յայտնեցաւ փրկութիւն մեր...»<sup>5</sup>:

Այլ խոսքով համաձայնությունը կայացավ և Ավետեաց Աստուածածնի նախատոնակը եղավ Ապրիլ 6-ին, իսկ տոնը՝ Ապրիլ 7-ին: Հետագայում ընդօրինակված տոնացույցերում, որոնք բերեցին վերևում, այն արդեն կանոն էր դարձել, որն էլ որդեգրեց Սիմեոն Երևանցին: Նրա սահմանած կանոնը ներկայացրինք հատվածի սկզբում:

Քննարկվող կանոնը գործում է մինչև այժմ:

Հարկ է նշել, որ Ավետեաց Աստուածածնի օրը Ապրիլ 6-ից տեղափոխեցին Մարտի 25-ը եզր կաթողիկոսի և նրա հաջորդների ժամանակ, երբ սկսեցին գործադրել «Արտեմոնադիր ըն-

թերցուածոց»-ը: Սակայն այն կրում էր ժամանակավոր բնույթ և մի մասը նույնիսկ չէր ընդունում: Վերը տեսանք, որ Անանիա Շիրակացին հիմնավորում էր Ավետեաց Աստուածածնի տոնը Ապրիլ 6-ին կատարելը ի հակադրություն Մարտի 25-ի տեսակետի:

Նույն հարցը դրվեց օրակարգի մեջ 14-րդ դարի սկզբներին և 1307 թ. Սսի ժողովը որոշում ընդունեց. «... գտօնն Աւետեացն առնել մեծաւ հանդիսիւ ի մարտ ամսոյ ԻԵ օրն, ըստ պատկերի աւուրն ուր եւ պատահէ արասցուք»<sup>1</sup>:

Սակայն վերոհիշյալ ժողովի որոշումը սահմանափակ ժամանակի մեջ և մասնակի տարածքում միայն ժամանակավոր կիրառություն է ունեցել, իսկ հետագայում ոչ միայն դուրս մղվեց կենցաղից, այլ որոշումը փաստորեն չեղյալ հայտարարվեց: Այդ են վկայում հետագայում ընդօրինակված տարբեր բնույթի բնագրերը, որոնց մի մասը բերվեց վերևում: Ըստ էության բնագրերից միայն Գրիգոր Անավարդեցու Յայտնավորքի խմբագրության մեջ է առկա հիշյալ կանոնը:

Այսպիսով, Ավետեաց Աստուածածնի տոնը նշվել է Ապրիլ 10-ին (4-րդ դար), իսկ 4-րդ դարի վերջից 5-րդ դարի սկզբներից տեղափոխվեց Ապրիլ 7-ը (Անդրեաս), իսկ հայոց բնագրերը փաստագրել են Ապրիլ 6-ը, որը կապված էր հայոց եկեղեցու ընդունած տեսակետի հետ: Այն ներկայացրին շարադրանքի ընթացքում: Միայն նշենք, որ հայոց եկեղեցական տարվա սկիզբը Հունվարի 6-ից սկսելը, որը համընկնում էր Քրիստոսի Ծննդեան և Յայտնութեան տոնի առաջին օրվա հետ մեխանիկորեն Ավետեաց Աստուածածնի տոնը, լինում էր Ապրիլ 6-ին, մասնավորապես Ջաքարիայի պապանձումը և Եղիսաբեթի Հղիությունը կապվում էր Տաղավարաց տոների վերջին օրվա հետ, երբ Ջաքարիան վերադարձավ տուն՝ 12 օրյա տոներից հետո: 7-րդ դարում որոշ ժամանակ մասնակիորեն խախտվեց այս կանոնը և տոնը կատարեցին Մարտի 25-ին: Սակայն հետագայում վերականգնեցին Ապրիլ 6-ի կանոնը: Իսկ 8-րդ դարի 20-ական թվականներից Ավետեաց Աստուածածնի կանոնը դրվեց Նոր կիրակիից հետո եկող չորեքշաբթի օրը. թեև տոնը մնաց անշարժ և տոնվում էր Ապրիլ 6-ին: Հարկ է նշել, որ Ավետեաց Աստուածածնի տոնի օրը հայոց շարժական տոմարի նավասարդի 15-ի նշումը ստացավ 992 թվականին Վարդավառի տոնին նվիրված մեկնության մեջ և այնտեղից փոխանցվեց հետագա բնագրերին: Մինչև 13-րդ դարի վերջերից 15-րդ դարի սկզբները Ավետեաց Աստուածածնի տոնը ոմանք տոնել են Ապրիլ 6-ին, իսկ ոմանք՝ Ապրիլ 7-ին: Ասենք նաև, որ հավանաբար 12-րդ դարից հետո նախատոնակ են կատարել Ապրիլ 5-ին, որի հետևանքով Հուլյաների մոտ այն տպավորությունն է թողել, որ տոնը կատարվել է Ապրիլ 5-ին: Այդ թյուրիմացությունը հերքել է Ներսես Շնորհալին:

Հարկ է նշել, որ հատկապես 14-րդ դարի սկզբներին Ավետեաց Աստուածածնի տոնի օրը տեղափոխվեց Մարտ 25-ը, որը տեղայնացված մասնակիորեն տոնվեց, բայց հետագայում վերադարձան նախկին ամսաթվին, իսկ 15-րդ դարի կեսերից մինչև այժմ ապրիլ 6-ը դարձավ նախատոնակի օր, իսկ Ապրիլ 7-ը՝ տոն:

Բնագրերի տվյալներով պարզվեց Հայոց մեջ Ավետեաց Աստուածածնի տոնի փոփոխությունները սկսած վաղ շրջանից մինչև մեր օրերը:

\*\*\*

Տոնական տարվա կտրվածքով Աստուածածնին նվիրված հաջորդ տոնը Հայոց Տոնացույց մտցրեց Սիմեոն Երևանցին: Նա կանոնել է. «Հինգերորդ կիրակի՝ զկնի հոգւոյ գալստեան. Տօն սրբուհւոյն Աստուածածնի տփոյ գտմանն»: Հայտնի է, որ Հոգեգալստեան կամ Պենտեկոստի

1 Ձեռ. № 8179, էջ 110ա:

2 Ձեռ. № 7530, էջ 129ա:

3 Ձեռ. № 2695, էջ 91ա:

4 Տե՛ս Գ. Հովսեփյան, Թովմա Մեծոփեցու կյանքը, Վաղարշապատ, 1914, էջ 4-5:

5 Տե՛ս Ձեռ. № 4874, էջ 158ա, Գաև 5440, էջ 184բ-185բ, 4962, էջ 123 և այլն:

1 Տե՛ս Պատմութիւն կաթողիկէ վարդապետութեան ի հայս եւ միութեան անցա ընդ հոռմէական եկեղեցւոյ ի Փլորենտեան սիւնհոդոսի, գրեց Ա. Վ. Պալմեան, Վիեննա, 1878, էջ 273-274:

տոնի օրը շարժական է, ուստի նրանից հաշված 5-րդ կիրակին ևս շարժական տոն է և կատարվել է Հոգեգալստեան կիրակիից հաշված 29-րդ օրը, որը տատանվել է Հունիս 7-ից մինչև Հուլիս 11-ը ընկնող որևէ կիրակի նայած տարի:

Թեև վաղ շրջանի տոնացույցերը չունեն հիշյալ տոնի կանոն, սակայն Հայոց Յայսմավուրքների խմբագրությունների մեջ գտնում ենք տեղեկություններ այդ կապակցությամբ: Բերենք Յայսմավուրքների վկայությունները:

3082 թվահամարի գրչագրում գրված է. «Նորին Մարգաց) ԻԶ. Յայսմ աւուր գիւտ տփին, յորում է Աստուածածնին գլխադիրն, գոր տարան Կոստանդինուպաւղ(իւս). Բ (Յուլիս)»<sup>1</sup>:

179 թվահամարի համառոտ Յայսմավուրքի խմբագրության մեջ կարդում ենք. «(Մարգաց) ԻԶ... և գիւտ պատուական տրփին, յորում էր Աստուածածնին գլխադիրն և է այժմ ի Կ(ոստանդնուպաւղիս. Բ (Յուլիս))»:

9585 թվահամարի գրչագիրը, որը Յայսմավուրքի ընդարձակ խմբագրություն է 14-րդ դարի, տրվել է տփի պատմությունը և կանոնը ձևակերպել է հետևյալ կերպ. «Մարգաց ԻԶ և Յուլիս Բ. Գիւտ պատուական տփին, յորում էր ամէնսարբուհոյ(յ) Աստուածածնին գլխադիրն, գոր տարան ի Կոստանդնուպաւղիս»<sup>2</sup>: Համարժեք տեղեկություն ենք գտնում 2695 թվահամարի գրչագրի մեջ, որը նույնպես 14-րդ դարի Յայսմավուրքի ընդարձակ խմբագրություններից է<sup>3</sup>:

Գրիգոր Խլաթեցու Յայսմավուրքի խմբագրության մեջ կարդում ենք. «Մարգաց ԻԶ և Յուլիս Բ. Գիւտ պատուական տփին, յորում եղեալ էր գլխադիրն Մարիամու Աստուածածնին»<sup>4</sup>: Տրված է նաև նրա պատմությունը:

Հիշյալ տեղեկությունները ցույց են տալիս, որ Աստուածածնի տփի գիւտի օր է կանոնվել Հուլիս 2-ը, որը ստացել է հայոց անշարժ տոմարի Մարգաց 26-ի համարժեք, սակայն այն պաշտոնապես չի տոնվել մինչև Սիմեոն Երևանցին: Վերջինս, ինչպես նշվեց, այդ տոնի օրը մտցրեց տոնացույց և անշարժ տոնը վերածվեց շարժականի: Ասենք նաև, որ Աստուածածնի տփի գյուտի օրը համապատասխանել է Հուլիս 2-ի անշարժ ամսաթվին, երբ Հոգեգալստեան տոնը եղել է Հունիս 4-ին: Այն 532-ամյա պարբերաշրջանի տարբեր տարիների կկրկնվի 17 անգամ միայն, իսկ մյուս տարիներին չէր համընկնում Հուլիս 2-ին, այլ տատանվում էր Հունիս 7 Հուլիս 11-ի սահմաններում:

Այսպիսով, Աստուածածնի տփի գիւտի տոնական օրվա կանոնը Սիմեոն Երևանցու տոնացույցի խմբագրման արդյունք է, որը կատարվում է նաև այժմ, իբրև շարժական տոն:

\*\*\*

Անցնենք ըստ տոնացույցային տարվա կտրվածքի, Աստուածածնի հաջորդ տոնի քննությունը: 420-ական թվականներին Սահակ կաթողիկոսի կողմից թարգմանած և խմբագրած «Կանոնք ընթերցուածոց»-ում առկա է Մարիամ Աստուածածնի միակ տոնի մեկօրյա կանոնը, որն ինչպես կտեսնենք, սահմանվել է Օգոստոս 15-ի տակ: Նրա սկզբնավորումը կապվում է 4-րդ դարի հետ իբրև թարգմանված կանոն, ինչպես Ավետեաց Աստուածածնի տոնը, միայն այն տարբերությամբ, որ Մարիամ Աստուածածնի հիշատակը նշվել է անշարժ ձևով միշտ օգոստոսի 15-ին և որևէ փոփոխություն չի կրել սկզբից մինչև 10-րդ դարի վերջը - 11-րդ դարի սկիզբը:

1 Ձեռ. № 3082, էջ 397ա:

2 Ձեռ. № 9585, էջ 264:

3 Ձեռ. № 2695, էջ 170բ:

4 Տե՛ս տպագիր էջ 933-935:

Բերենք դրանց հիմնավորումները: Հնագույն «Կանոնք ընթերցուածոցում»-ում գրված է. «Աւգոստոս ամսոյ, որ աւր ժե. Մարիամայ Աստուածածնի եւ այս կանոն կատարի...»<sup>1</sup>: Համարժեք տեղեկություններ ենք գտնում «Կանոնք»-ների հետագա խմբագրությունների մեջ: Վենետիկի 169 թվահամարի գրչագրում կարդում ենք. «Աւգոստոս ամսոյ, որ աւր ժե. Մարիամու Աստուածածնին...»<sup>2</sup>: Իսկ Վենետիկի 285 թվահամարի ձաշոցում գրված է. «Աւգոստոս ժե. Մարիամայ Աստուածածնին...»<sup>3</sup>:

Ատոմ Վարագեցու Հոռոմադիրում նորույթը տերմինի մեջ է, որին հանդիպում ենք նաև 10-րդ դարից հետո ընդօրինակված և գրված բնագրերում, այն է՝ «Աւգոստոս ժե. Փոխման Աստուածածնի եւ այս կանոն կատարի...»<sup>4</sup>: Ունենք Ասողիկի տեղեկությունը, որը միանշանակ է: Այդ վկայության համաձայն «Ի սոյն ամի, որ էր ՆԼԸ թուականին, նիգակաւոր աստղն կրկին անգամ երևեցաւ. յամսեանն Քաղոց, որ օր ժե էր ամսոյն, ի տօնի փոխման ամենասուրբ կուսի Աստուածածնին...»<sup>5</sup>: Հայոց ՆԼԸ (= 989 թ.) թվականի Քաղոց 1 = Հուլիս 22 = երկուշաբթի, Քաղոց 15 = Օգոստոս 5 = երկուշաբթի, Քաղոց 25 = Օգոստոս 15 = հինգշաբթի: Վերոհիշյալ հաշվումներից պարզ երևում է, որ Քաղոց ժե-ն պետք է սրբագրել՝ ինչ կամ Քաղոցը փոխարինել Օգոստոսով: Ուստի «Ի տօնի փոխման ամենասուրբ կուսի Աստուածածնին» եղել է Օգոստոս 15 = Քաղոց 25 = հինգշաբթի: Այս վերականգնումը ցույց է տալիս, որ Աստուածածնի տոնը դեռևս տոնվում էր անշարժ օրով՝ Օգոստոսի 15-ին: Սակայն Աստուածածնի տոնը աստիճանաբար վեր է ածվում անշարժից շարժական և տոնվում է Օգոստոս 15 ± 3 օր կիրակի 10-րդ դարի վերջում - 11-րդ դարի ընթացքում: Այդ են հիմնավորում Աստուածածնի պահքի ներդրումը տոնացույց, որի մասին տեղեկություն է տալիս Սամուէլ Կամրձաձորեցին: Ինչպես և Աստուածածնի սրբերի տոնաշարքի հետ կապված ամսաթվերի վերլուծությունը, որոնց հայոց շարժական տոմարի ամիս-ամսաթվերի տվյալների առաջացումը կապվում են հիշյալ ժամանակաշրջանի հետ: Մեզ հայտնի է միայն Հովհաննես Սարկավագի տեղեկությունը և 13-րդ դարի սկզբում Օգոստոսի 15-ի վերականգնման փորձը իբրև Աստուածածնի տոնի անշարժ օր:

Հովհաննես Սարկավագը գրել է. «... յորում ամի թուականն Հայոց ՇԾԹ (559) էր աւգոստոս ամսոյ Գժ-անն, որ է նոյն ինքն իղոս, միով աւուրբ յառաջ քան գտաւն հանգստեան Աստուածածնինն Մարիամու, յաւուր շաբաթու, ընդ առաւոտանալն, մինչդեռ կային եղբարք ամենայն ի սուրբ պաշտմանն և թագաւորն Դաւիթ որդի Կիւրիկէ ընդ նոսա՝ ի վանսն կոչեցեալ Սանահին...»<sup>6</sup>:

Հայոց 559 թվականի (= 1110 թ.) Օգոստոսի 13-ը շաբաթ է, իսկ Օգոստոսի 14-ը՝ կիրակի, որը Աստուածածնի տոնի օրն է ըստ Հովհաննես Սարկավագի: Այս փաստը հստակորեն ցույց է տալիս, որ Աստուածածնի տոնը կատարել են ոչ թե Օգոստոսի 15-ին, ինչպես նախատեսել են վաղ շրջանի բնագրերը, այլ Օգոստոս 15 ± 3 օր, կիրակի, այսինքն Օգոստոս 12-18-ին ընկնող կիրակիներից մեկում նայած տարի:

Գրիգոր Վկայասերի Տօնանամակի խմբագրության ցանկում (բնագրում բացակայում է այդ հատվածը) գտնում ենք համառոտ կանոն, այն է՝ «Նորին [Աւգոստոս] ժե. Փոխման Աստուածածնի»<sup>7</sup>: Իսկ նրա մեկ այլ տարբերակը, 12-րդ դարի 2-րդ կեսի գրչագիր է, ունի՝ «յԱւ-

1 Ձեռ. № 985, էջ 269ա-270ա:

2 Ս. Մեմճեմյան, Աշվ. աշխ. էջ 567-588:

3 ԱԱԳ, էջ 595-606:

4 Ձեռ. № 832, էջ 212բ-214ա, Ձեռ. № 3266, էջ 134ա-137ա:

5 Ասողիկ, էջ 250:

6 Հովհաննես Իմաստասեր մատենագրությունը, էջ 136:

7 Ձեռ. № 979, էջ 4բ:

գոստոս ԺԵ. նընջման Աստուածածնին...»<sup>1</sup>: Ինչպես նկատելի է Աստուածածնի տոնը մեկօրյա կանոնով է: Այն թեև դրված է Օգոստոս 15-ին, սակայն բնագրերի ընդօրինակողներն և նախնական բնագրի հեղինակները նկատի են ունեցել Օգոստոս 15 ± 3 օր կիրակիի կարգը. ինչպես հիմնավորում է Հովհաննես Սարկավազի տեղեկությունը:

13-րդ դարի սկզբներին Ջաքարէ ամիրսպասալարը ըստ հուլիանյան փորձեց խմբագրել «Տաւնացոյց ըստ շաբաթուց»-ի շարժական տոները և վերականգնել անշարժ տոների կարգը, որոնց թվում Փոխման Աստուածածնի տոնը: Նրան աջակցեցին Հովհաննես կաթողիկոսը, Կիլիկիայի Լևոն 2-րդ թագավորը և նրա կողմից նոր կաթողիկոս դարձած Դավիթը, որոնք նույնիսկ Սիս մայրաքաղաքում ժողով գումարեցին և կանոններ հաստատեցին, որի 2-րդ կանոնում գրված է: «... Տօնել զտօն Աւետեաց սրբոյ Աստուածածնին ի վեցն ապրիլի ամսոյ. յորում աւուր և հանդիպի, և զտօն փոխման նորին ի հնգետասանն Օգոստոսի ամսոյ, յորում աւուր և հանդիպի, և զտօն սրբոյ խաչին ի չորեքտասանն սեպտեմբերի ամսոյ. յորում աւուր և հանդիպի: Նոյնպէս և զայլ տօնս վկայից, յորում աւուր և անդիպի՝ ըստ իւրաքանչիւր յիշատակի»<sup>2</sup>: Այս կանոններով ոգևորված Ջաքարէ ամիրսպասալարը ժողով հրավիրեց սկզբում Անիում, այնուհետև Լոսէում և փորձեց իրականացնել իր մտահղացումը և անցկացնել այդ կանոնը: Նա հանդիպեց լուրջ դիմադրության: Կիրակոս Գանձակեցիին շարունակում է հայտնել հետևյալը.

1. «Իսկ իշխան Ջաքարէ առաքեաց ի վանօրայս, որ ընդ իւրեանց իշխանութեամբ էին և տայր բռնութեամբ առնել զտօն փոխման Աստուածածնին, և վերացման սուրբ խաչին՝ ոչ ի կիրակի, որպէս սովոր էին, այլ զպատկերն զինչ օր և էր»<sup>3</sup>:

2. Անիի ժողովում «Կէսք հաւանեալ էին առնել զխնդիրն, այնոսիկ որ եպիսկոպոսք էին յիշխանութեանն, զի մի անկցին յաթոռն, և կէսք՝ ոչ»<sup>4</sup>:

3. Ջաքարէն «գժամանակս կենաց իւրոց որչափ եկաց նոյնպես վարեցաւ, որպէս կամէր բայց եկեղեցիքն ամենայն առաջին պաշտմամբ վարեցան»<sup>5</sup>:

Այնպես որ «Տաւնացոյց ըստ շաբաթուց»-ի Ջաքարէի արմատական խմբագրման փորձերը հանդիպեցին լուրջ դիմադրության, թեև այդ տոների նրա կողմից կատարելու և հիշյալ տոները անշարժ դարձնելու փորձերը վերջացան անհաջողությամբ: Փոխման Աստուածածնի և Սուրբ Խաչի տոները կատարեցին կիրակի, ինչպես սովորությունն էր, այսինքն Օգոստոս 15 ± 3 օր կիրակի և Սեպտեմբեր 14 ± օր կիրակի, հետևաբար սրբերի տոները շաբաթվա շարքի հիման վրա:

Կիրակոս Գանձակեցու տեղեկությունները հիմնավորում են հետագայում ընդօրինակված բնագրերը: 5356 թվահամարի գրչագիրն ունի «Աւգոստոս ամսոյ ԺԵ. Աստուածածնին ննջման...»<sup>6</sup>: Համարժեք տեղեկություններ են տալիս 4698 և 936 թվահամարների ճաշոցները (էջ 251բ և էջ 91բ-93ա): 6235 թվահամարի ճաշոցը տալիս է. «Աւգոստոս ԺԵ. Փոխման Աստուածածնին...» (էջ 66ա): Նույնարժեք տեղեկություն է բերել 4506 թվահամարի գրչագիրը (էջ 325 բ): Հիշյալ բնագրերը թեև մեկօրյա կանոնով են տալիս, սակայն Հայոց տոնացույցերի և որոշ ճաշոցների խմբագրություններ ցույց են տալիս, որ Փոխման կամ ննջման Աստուածածնի հիշատակը մեկ օրից վեր է անվել երեքօրյա տոնական շարքի 12-րդ դարի կեսերից հետո, որի մասին տեղեկանում ենք Ներսես Շնորհալու շարականից, սակայն այն չարմատացավ Հայոց

մեջ: Այդ է հուշում Ջաքարէ ամիրսպասալարի խնդրանքով գրված 2-րդ կանոնը, որը մեջ բերեցինք վերևում: Այնտեղ խոսք է գնում փոխման Աստուածածնի մեկ օրյա կանոնի, այն է Օգոստոսի 15-ը անշարժ տոնական օր վերածելու մասին: Սակայն այն նպաստեց Աստուածածնի երեքօրյա կանոնի ներդրմանը տոնացույցի մեջ: Բերենք հնագույն տոնացույցերի և ճաշոցների խմբագրություններում պահպանված տեղեկությունները:

759 թվահամարի տոնացույցի խմբագրության մեջ կարդում ենք. «Կիրակէն Փոխումն է ամէնուաւրհնեալ Աստուածածնին, յԱւգոստոս ԺԵ: Երեք աւր տաւն է»<sup>1</sup>:

179 թվահամարի «Տաւնացոյց ըստ շաբաթուց»-ում նույնարժեք կանոն է տրված միայն հետևյալ ձևակերպմամբ՝ «Կիրակէ. Աստուածածնին փոխմանն», է յԱւգոստոս ԺԵ: Գ աւր տաւն է»:

752 թվահամարի գրչագրում, որը կրում է «Տաւնացոյց կարգաւ» վերնագիրը, Աստուածածնի երեքօրյա տոնական կարգը տալիս է նոր խմբագրությամբ, այն է՝ «Փոխման Աստուածածնի Գիշ[երն] հսկում է...»

Երկրորդ աւուրն...

Երրորդ (աւուրն)...»<sup>2</sup>:

Նույնարժեք վկայություններ են պահպանվել տոնացույցերի հետագա խմբագրությունների մեջ<sup>3</sup>:

14-15-րդ դարերում ընդօրինակված ճաշոցների խմբագրությունների մեջ ևս Փոխման կամ ննջման Աստուածածնի տոնը տալիս են երեքօրյա կանոններով և երբեմն ունեն ամսաթրվային նշումներ, ինչպես հուլյան տոմարի, այնպես էլ Հայոց շարժական տոմարի: 940 թվահամարի գրչագրի ձԴ-ձԷ համարների տակ կարդում ենք. «ՅԱւգոստոս ամսոյ ԺԵ. Պատուական եւ փառաւոր Փոխման Տիրամաւր...»

(Երկրորդ աւուրն)...

Երրորդ աւուրն...»:

5414 թվահամարի ճաշոցում գրված է. «ՅԱրեգ ԺԵ. Նընջումն ամեն աւրհնեալ Աստուածածնին և միշտ կոյս Մարիամու...»

Երկրորդ աւուրն...

Երրորդ աւուրն (ներքին լուսանցքում՝ «Կիրակէ. Փոխումն ամէնաւրհնեալ Աստուածածնին Մարամու»<sup>4</sup>:

7741 թվահամարի գրչագիրն ունի. «Կիրակիէ. Ննջումն է ամէն աւրհնեալ Աստուածածնին...»

Երկրորդ աւուրն

Երրորդ աւուրն...» ձեռագիր 372բ էջի ներքին լուսանցքում գրված է. «Երրորդի աւուրն Աստուածամաւր կուսին»<sup>5</sup>:

Համարյա նույն տեղեկություններն են տալիս մեզ Հայտնի մյուս ճաշոցների խմբագրությունները<sup>6</sup>: Միայն նշենք, որ 939 թվահամարի գրչագիրը տալիս է նաև Արեգ 15-ը, ինչպես 5414 թվահամարի ճաշոցում: Հարկ է նշել, որ Արեգ 15-ը Հայոց շարժական տոմարի ա-

1 Ս. Ծմնճնայան, Աշխ. էջ 605-628:

2 Կիրակոս Գանձակեցի, Պատմություն հայոց, էջ 169:

3 Կիրակոս Գանձակեցի, Պատմություն հայոց, էջ 172-173:

4 Աճղ, էջ 175-176:

5 Աճղ, էջ 177-179:

6 Ձեռ. № 5356, էջ 243բ:

1 Ձեռ. № 759, էջ 171բ:

2 Ձեռ. № 752, էջ 169բ-170բ:

3 Ձեռ. № 767, էջ 170ա, 2092, էջ 227բ, 5667, էջ 133ա-134 և այլն:

4 Ձեռ. № 5414, էջ 313ա-317բ:

5 Ձեռ. № 7741, էջ 370բ-372բ:

6 Տե՛ս Ձեռ. № 5455, էջ 268ա-272ա, 4107, էջ 689-693, 4437, էջ 164բ, 939, էջ 416բ-421բ և այլն:

միս-ամսաթիվ է և հաշվումները ցույց են տալիս, որ այն առաջացել է հետևյալ տարիներից մեկում, այն է՝

1. 1297 թ. Արեգ 15 = Օգոստոս 18 = Կիրակի = Փոխման կամ Ննջման Աստուածածնի տոն առաջին օր:

2. 1304 թ. = Արեգ 15 = Օգոստոս 16 = Կիրակի = Փոխման կամ Ննջման Աստուածածնի տոնի առաջին օր:

3. 1311 թ. = Արեգ 15 = Օգոստոս 15 = Կիրակի = Փոխման կամ Ննջման Աստուածածնի տոնի առաջին օր:

1318 թ. = Արեգ 15 = Օգոստոս 13 = Կիրակի = Փոխման կամ Ննջման Աստուածածնի տոնի առաջին օր:

Պարզ է դառնում, որ 5414 թվահամարի գրչագրի ընդօրինակողը հայոց շարժական տոմարի ամսաթվային նշումը քաղել է 13-րդ դարի վերջին - 14-րդ դարի սկզբներին գրված մի բնագրից, որից և փոխանցվել է 939 թվահամարի ծաշոցին:

Սկսած 15-րդ դարի 40-ական թվականներից տոնացույցերի խմբագրություններն արձանագրել են Փոխման Աստուածածնի տոնական օրերի ընդլայնման մասին, որոնք երեքօրյա տոնից վեր են անվել 9 օրյա: Բնագրերն այն տպավորություն են թողնում, որ սկզբնական շրջանում Փոխման Աստուածածնի 9 օրյա տոնական շարքը հիմնված էր կամավորության սկզբունքի վրա, այսինքն կամ 3 կամ 9 օր, սակայն հետագայում 9 օրյան դառնում է պարտադիր սկզբունք:

7203 թվահամարի Տոնացույցի խմբագրության մեջ նախորդ շրջանի երեքօրյա կանոնները բերելուց հետո բացատրում է. «Բայց թ ար տաւնեա Սուրբ Աստուածածնին և Գ ար միայն նախատաւնակ առնջիր... Իսկ եթէ Գ ար միայն տաւնես»-ից հետո բերվում է այդ շաբաթվա տոնելի սրբերի կանոնները<sup>1</sup>:

3668 թվահամարի Տոնացույցի խմբագրության մեջ Փոխման Աստուածածնի կիրակիից հետո եկող հաջորդ կիրակիի կանոնը ձևակերպել է այսպես. «Ա կիրակին Աստուածածնին տաւն է»<sup>2</sup>: Այստեղից երևում է, որ քննարկվող տոնը կատարել են 9 օրյա կանոններով:

4164 թվահամարի գրչագիրն ընդօրինակել է նախորդ շրջանի կարգը այն է՝ «Փոխման Աստուածածնի գիշերն հսկումն է...», որից հետո երկրորդ և երրորդ օրվա արարողական կարգը, միաժամանակ ավելացրել է. «Բայց պարտ է թ օր տօնել սուրբ Աստուածածնին Փոխմանն և նախատօնական առնել», այնուհետև տալիս 9 օրյա կանոնները<sup>3</sup>:

Ուշագրավ են նաև 4459 թվահամարի Տոնացույցի հաղորդումները: Այնտեղ ընդօրինակել է ավանդական ձևով, այն է՝ «Փոխման Սուրբ Աստուածածնի գիշերն հսկումն է...», որից հետո տալիս է 2-րդ և 3-րդ օրվա կարգը և շարունակում. «Բայց պարտ է գիտել. թ օր տօնել Սուրբ «Աստուածածնին Փոխմանն» նախատօնակ առնելով... Ով եղբայր գիտասջիր, զի Աստուածածնինն ի յինն օր տօնեմք և Բշի (երկուշաբթի) աւարտի...»<sup>4</sup>: 16-րդ դարում ընդօրինակված մեկ այլ Տոնացույցի խմբագրության մեջ հեղինակը նախորդ շրջանի նմանությամբ Փոխման Աստուածածնի կանոնները տալիս շարադրում է այնպես, կարծես թե այդ տոնի եռօրյա և 9 օրյա կատարումը կամավորության և ցանկության հարց է: Այնտեղ ավանդական կառուցվածքով տալով Աստուածածնի եռօրյա կանոնները այնուհետև գրում է. «Բայց պարտ է Աստուածածնի Փոխման թ օր տօնել և ամէն պատկեր Գ անգամ առնել... Ապա եթէ ոչ տօնես թ օր» բերում է սրբերի տոնելի շարքը և կրկին ավելացնում. «Թէ թ օր տօնես Աստուածածնինն յայս Գ շրթի (երեքշաբթի). Յովակիմայ և Աննայի տօնեա, և թէ չտօնես Յովակիմայ նա տօն է Ադրէի գօավարին և բանակին նորին և Դէմիդեայ բժշկին...»<sup>1</sup>:

Համարժեք տեղեկություններ են տալիս 16-րդ դարի այլ գրչագրեր ևս<sup>2</sup>:

17-րդ դարի գրչագրերը հստակ վկայել են, որ Աստուածածնի տոնը կատարվում էր 9 օրյա պարտադիր կարգով: 2025 թվահամարի տոնացույցում կարդում ենք. «Ով եղբայր գիտացիր, զի Աստուածածնի թ օր տօնեմք և Բշի (երեքշաբթի) աւարտի և Գշի (երեքշաբթի). Աստուածածնի ծնողացն տօնեա, որ ուղիղ գայ»<sup>3</sup>:

2024 թվահամարի գրչագրում գրված է. «Բայց պարտ է թ օր տօնել Սուրբ զԱստուածածնինն Փոխման, իսկ Գշրի (երեքշաբթի). տօն է Յովակիմա և Աննայի՝ Ծնողաց սուրբ Աստուածածնին և կանանց իւղաբերից»<sup>4</sup>:

Այլ խոսքով 15-րդ տարի կեսերից Փոխման Աստուածածնի տոնական օրերը ընդլայնվեցին, սակայն սկզբնական շրջանում ոմանք տոնում էին երեք օր, իսկ ոմանք՝ 9-ը:

16-րդ դարից սկսած 9 օրյա կանոնները դարձան պարտադիր, որին և հետևեց Սիմեոն Երևանցին: Այժմ Աստուածածնի տոնական շարքը 9 օրյա է:

Բնագրերի մեջ բերած տեղեկություններից երևում է, որ Աստուածածնի տոնի անվանումներն ևս փոփոխվել են: Վաղ շրջանում այն կրել է «Մարեամայ Աստուածածնի» անվանումը, իսկ 10-րդ դարից սկսած «Փոխման Աստուածածնի»: Ավելի ուշ տվել են նաև «Հանգստեան Աստուածածնի» և «Ննջման Աստուածածնի» անվանումները, իսկ Սիմեոն Երևանցուց հետո՝ «Վերափոխման Աստուածածնի»:

Այսպիսով Աստուածածնի տոնը նշել են մեկօրյա կանոնով անշարժ սկզբունքով Օգոստոս 15-ին 4-րդ դարից սկսած մինչև 10-րդ դարի վերջ - 11-րդ դարի սկիզբը: Մեկօրյա կանոնը պահպանվեց մինչև 12-րդ դար: Սակայն 10-րդ դարի վերջից - 11-րդ դարի ընթացքում Աստուածածնի տոնը վերածվեց շարժականի և տոնվեց Օգոստոսի 15 ± 3 օր, կիրակի, այսինքն Օգոստոս 12-18-ի կիրակիներից մեկում նայած տարի:

13-րդ դարի սկզբներին փորձ արվեց Աստուածածնի տոնը վերածել կրկին անշարժ օրվա և նշել միայն Օգոստոս 15-ին, սակայն հաջողություն չունեցավ: Այն նպաստեց Աստուածածնի եռօրյա կանոնների ամրապնդմանը:

Փաստորեն 12-րդ դարի կեսերից հատկապես Ներսես Ծնորհալու ժամանակ սկիզբ առավ, իսկ ավելի ուշ արմատավորվեց 13-րդ դարի սկզբներից և մինչև 15-րդ դարի կեսերը, տեղ-տեղ մինչև 16-րդ դարերի սկզբները Աստուածածնի տոնական օրերն ընդլայնվեցին և տոնեցին եռօրյա կանոններով:

15-րդ դարի կեսերից մինչև 16-րդ դարի սկզբները Աստուածածնի տոնը ոմանք տոնել են եռօրյա կանոններով, ոմանք՝ 9 օրյա, սակայն 16-րդ դարից հետո 9 օրյա կանոնները պարտադիր դարձան, որը փոխառեց նաև Սիմեոն Երևանցու խմբագրած տոնացույցը և հասավ մինչև մեր օրերը: Պահպանվեց նաև Օգոստոս 15 ± 3 օր կիրակիի կարգը:

Աստուածածնի տոների ընդլայնումն իր հետ բերեց տոնացույցի նոր խմբագրությունների

1 Ձեռ. N° 7203, էջ 74բ-75բ:

2 Ձեռ. N° 3668, էջ 76ա-79բ:

3 Տե՛ս Ձեռ. N° 4164, էջ 192-197ա:

4 Ձեռ. N° 4459, էջ 93ա-94ա:

1 Տե՛ս Ձեռ. N° 4874, էջ 191բ-192բ:

2 Տե՛ս Ձեռ. N° 9838, էջ 175ա-բ, 5419, էջ 211ա-213ա, 5440, էջ 314, 5438, էջ 184ա-185բ և այլն:

3 Ձեռ. N° 2025, էջ 119բ:

4 Ձեռ. N° 2024, էջ 113ա-119ա:

և այդ շաբաթում տոնվող սրբերի հիշատակի օրերը տեղափոխվեցին տարվա այլ տեղերը, որոնց մասին գրել ենք 9-18-րդ դարերում կատարված տոնացույցի խմբագրությունների քննությունների մեջ:

\*\*\*

Մարիամ Աստուածածնի հետ կապված հաջորդ տոնական կանոնը ըստ տոնացույցի կարգի Աստուածածնի ծնողների՝ Հովակիմի և Աննայի հիշատակի օրն է: Այն հնագույն ճաշոցների և տոնացույցների խմբագրությունների մեջ բացակայում է: Առաջին տեղեկությունը գտնում ենք Գրիգոր Վկայասերի Տօնանամակի խմբագրության մեջ: Այնտեղ գրված է. «Նորին (Սեպտեմբերի) Ը. Ծնունդ Սուրբ Աստուածածնի ի ծնողացն եւ յիշատակ ծնողացն Յովակիմայ եւ Աննայի...»<sup>1</sup>:

Ակնհայտ է, որ 11-րդ դարի սկզբներից տոնական կանոն են մտել Աստուածածնի ծննդյան տոնը և Աստուածածնի ծնողների՝ Հովակիմի և Աննայի հիշատակի օրը, որն անշարժ կերպով դրել են Սեպտեմբերի 8-ին:

179 թվահամարի համառոտ Յայսմավուրքի խմբագրության հեղինակը այդ հիշատակի օրը տեղափոխել է Աստուածածնի ծննդյան տոնի 2-րդ օրը՝ Սեպտեմբերի 9-ի տակ: Այնտեղ կարդում ենք. «[Նաւասարդի] Ա. Վերջատաւն ամէնաւրինեալ կուսին Մարիամու և յիշատակ ծնողացն իւր Յովակիմայ և Աննայի... Թ (Սեպտեմբեր)»:

Այսպիսով 12-13-րդ դարերում Աստուածածնի ծնողների հիշատակի օրը դրվել է անշարժ տոնական օրերի տակ՝ Սեպտեմբերի 8-ին կամ 9-ին, որոնք մտնում էին Աստուածածնի ծննդյան տոնական օրերի, 1-ին կամ 2-րդ օրվա տակ, այսինքն՝ այդ երկու տոնն էլ միասին են տոնել:

Հայոց ըստ շաբաթուց տոնացույցների և ճաշոցների 14-րդ դարի սկզբների խմբագրությունների մեջ Աստուածածնի ծնողների Հովակիմի և Աննայի հիշատակի օր է կանոնվել Փոխման Աստուածածնի կիրակիից հետո եկող շաբաթ օրը, որպես շարժական տոն, տատանվել է Օգոստոս 21 ± 3 օր շաբաթ նայած տարի կամ Օգոստոս 18-24-ի սահմաններում: Այդ տոնական օրվա ներդրումը բերեց նրան, որ այդ տեղում դրված Գեորգ զորավարի հիշատակի օրը աստիճանաբար դուրս մղվեց և տեղափոխվեց այլ տեղ: Բերենք տոնացույցների մեջ եղած տեղեկությունները: 752 թվահամարի գրչագրում գրված է. «Շաբ(աթի աւուրն). Յովակիմայ] և Աննայի] ծնողաց Աստուածածնին և կանանց եղաբերից...»<sup>2</sup>:

4514 թվահամարի Ճաշոցի խմբագրության մեջ կարդում ենք. «ՅԱւգ[ոստոսի] Ի. Յովակիմայ... (ներքին լուսանցքում՝ «Շաբաթ աւր. Յովակիմայ] եւ Աննայի ծնողաց Աստուածածնին եւ սուրբ աւետարանչացն Մատթէոսի, Մարկոսի և Ղուկասու.»)<sup>3</sup>:

Ի դեպ Օգոստոսի 20-ը գալիս է գրչագրից: 1322 թ. Օգոստոսի 14-ը Փոխման Աստուածածնի կիրակին է, իսկ Օգոստոսի 20-ը՝ Աստուածածնի կիրակիից հետո եկող շաբաթ օրը, ուստի Ճաշոցի ընդօրինակողն է ավելացրել հիշյալ ամիս-ամսաթիվը:

7741 թվահամարի Ճաշոցը ունի հետևյալ կանոնը «Շաբաթի աւր. Յովակիմայ եւ Աննայի [եւ] սուրբ աւետարանչացնեաց՝ (ներքին լուսանցքում՝ «Շբ(շաբաթ). Յովակիմայ եւ Աննայի ծնաւղաց Աստուածածնին եւ սր(սուրբ) աւետարանչաց Մատթեոսի, Ղուկասու, Յովհաննու.»)<sup>4</sup>:

Ըստ 5667 թվահամարի Տոնացույցի խմբագրության տվյալների՝ «Շրթ (Շաբաթ) օր. Յովակիմայ և Աննայի ծնողաց Աստուածածնին և կանաց իւղաբերից... և այլք ոմանք Գէորգեա զօրավարին...»<sup>1</sup>: Համարժեք տեղեկություններ ենք գտնում նաև 16-րդ տոնացույցների խմբագրությունների մեջ<sup>2</sup>:

Հարկ է նշել, որ 3668 թվահամարի Տոնացույցի խմբագրությունը (16-րդ դար), թեև հիշյալ կանոնը տվել է Փոխման Աստուածածնից հետո եկող շաբաթ օրը, սակայն միաժամանակ արձանագրել է. «Ա կիրակին, Աստուածածնին տաւն է»<sup>3</sup>: Նշանակում է, որ Փոխման Աստուածածնի տոնը կատարել են 9 օր, ուստի նրա ծնողների հիշատակի օրը կամ գրանցել է նախորդ տոնացույցների կարգով կամ այդ տոնը էջը տեղափոխել: Քանի որ 16-րդ դարի սկզբներից Աստուածածնի տոնական օրերը ընդլայնվեցին և նշում էին 9 օրյակում, ինչպես վկայել են տոնացույցերը, որի հետևանքով նրա ծնողների հիշատակի օրը տեղափոխվեց Աստուածածնից հաշված 2-րդ կիրակիից հետո եկող երեքշաբթի կամ Աստուածածնից հաշված 10-րդ օրը, որը տատանվել է Օգոստոսի 21-27-ի, երեքշաբթի նայած տարի: Բերենք որոշ տեղեկություններ: 4441 թվահամարի Տոնացույցի խմբագրության մեջ գրված է. «Այս Թ աւրս Աստուածածնին տօնեա: Գշի (երեքշաբթի): Յովակիմայ և Աննայի ծնողաց սուրբ Աստուածածնին և կանանց իւղաբերից»<sup>4</sup>:

4459 թվահամարի գրչագրում կարդում ենք. «Ով եղբայր գիտացիր, զի Աստուածածնին ի յինն օր տօնեմք և Բշի (երկուշաբթի) աւարտի և Գշի (երեքշաբթի) Աստուածածնին ծընողացն տօնէ, որ յուղիղ գայ: Իսկ Գշի. տօն է Յովակիմայ և Աննայի ծնողաց սուրբ Աստուածածնին և կանանց իւղաբերից»<sup>5</sup>:

4874 թվահամարի Տոնացույցի խմբագրության մեջ առկա է վերոհիշյալ երկու տարբերակը, այն է.

1. «Բայց պարտ է Աստուածածնի Փոխման Թ օր տօնել և ամէն պատկեր Գ անկամ ասել...: Այս եթէ ոչ տօնես Թ օր չօրեքշաբաթի ապաշխարութեան ասա...»

Շաբ(աթ). Յովակիմայ և Աննայի ծնողաց աստուածածնի և կանանցն իւղաբերից»:

2. «Թէ Թ օր տօնես Աստուածածնին յայս Գշթի (երեքշաբթի). Յովակիմայ և Աննայի տօնեա և թէ չտօնես Յովակիմայ, նա տօն է Անդրէի զօրավարին և բանակի նորին և Դէմիդեայ բժշկին»<sup>6</sup>:

Բերենք նաև 9046 թվահամարի գրչագրի տվյալները. «... Իսկ յերեքշաբթի օր գկնի Թ օրէիցն, տօն է Յովակիմայ և Աննայի ծնողաց սուրբ Աստուածածնին և կանանց իւղաբերից»<sup>7</sup>:

Նյութերի ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ 12-13 դարերում Աստուածածնի ծնողների՝ Հովակիմի և Աննայի հիշատակի օրը կանոնվել է անշարժ տոնական օրվա տակ՝ Սեպտեմբերի 8-ին և 9-ին՝ Աստուածածնի ծննդեան տոնի օրերին: 14-րդ դարի սկզբներից հիշյալ սրբերի հիշատակի օրը վեր է ածվել շարժականի և դրվել Փոխման Աստուածածնի կիրակիից հետո եկող շաբաթ օրը և տոնվել Օգոստոս 18-24-ի սահմաններում նայած տարի: 16-րդ դարի սկզբներին փոխման Աստուածածնի տոնը կատարվեց 9 օր, որի հետևանքով տեղափոխվեց Աս-

1 Ձեռ. № 979, էջ 366բ-367ա:  
2 Ձեռ. № 752, էջ 170բ:  
3 Ձեռ. № 4514, էջ 320ա:  
4 Ձեռ. № 7741, էջ 375ա-բ:

1 Ձեռ. № 5667, էջ 134ա-բ:  
2 Տե՛ս Ձեռ. № 6337, էջ 242բ-243ա, 9838, էջ 175ա-176ա և այլն:  
3 Ձեռ. № 3668, էջ 70ա-79բ:  
4 Ձեռ. № 4441, էջ 254ա-255ա:  
5 Ձեռ. № 4459, էջ 94ա-բ:  
6 Ձեռ. № 4874, էջ 191բ-193բ:  
7 Ձեռ. № 9046, էջ 5ա:



տուածածնից հաշված 10-րդ օրը՝ Երեքշաբթի, որը ընկավ Օգոստոսի 21-27-ի սահմաններում նայած տարի և տոնվում է մինչև այժմ:

\*\*\*

Ըստ տոնացույցային կարգի հաջորդ տոնը, որը նվիրված է Մարիամ Աստուածածնի գոտու գյուտին կենցաղավարել է հայոց մեջ, սակայն պաշտոնական տոնը կանոնել է Սիմեոն Երևանցին:

Հարկ է նշել, որ Հիշյալ տոնի մասին տեղեկություններ ենք գտնում դեռևս 10-րդ վերջերից: 992 թ. Հովսեփ Կոստանդնուպոլսեցու թարգմանած Տոնացույց-Յայսմավուրք, որը մեզ է հասել 1302 թ. խմբագրությամբ: Այնտեղ գրված է. «(Աւգոստոսի) ԼԱ. Գիւտ է պատուական գաւտոյն ամէնասրբուհու Աստուածածնին, որ ի Կոստանդնուպալիս, յեկեղեցւոջ փառաւորեալ Աստուածածնին Մարիամու, որ կոչի ինչպէս պաւտիա»<sup>1</sup>:

3082 թվահամարի համառոտ Յայսմավուրքում կարդում ենք. «Նոր (ին Նաւասարդի) ԻԱ. Գիւտ է Աստուածածնին յեկեղեցւոջն, որ կոչի ինչպէս պաւտիա. ԼԱ (Աւգոստոս)»<sup>2</sup>:

Ըստ 179 թվահամարի նույնպես համառոտ Յայսմավուրքի՝ «(Նաւասարդի) ԻԱ. Գիւտ պատուական գաւտոյ սրբուհոյ Աստուածածնին, որ է ի Կոստանդնուպալիս. ԼԱ (Աւգոստոս)»:

4741 թվահամարի Յայսմավուրքի ընդարձակ խմբագրության մեջ վկայվել է. «Նաւասարդի ԻԱ, որ է Օգոստոս ԼԱ. գիւտ է պատուական գոտոյն Տիրամօրն, որ է ի Կոստանդնուպոլիս յեկեղեցւոջ փառաւորեալ Աստուածածնին»<sup>3</sup>:

Նախորդ շրջանի համար, ինչպես նկատելի է, միայն Յայսմավուրքների տարբեր խմբագրություններն են պահպանել տեղեկությունները: Նրանցից երևում է, որ տոնի օրը անշարժ էր և դրել է Օգոստոսի 31-ին, որը համարժեք է հայոց անշարժ տոմարի Նավասարդի 21-ին:

Պարզ է, որ Հիշյալ տոնը հայոց մեջ չի տոնվել մինչև Սիմեոն Երևանցու տոնացույցի մեջ մտցնելը, սակայն հնարավոր է ընդունել, որ լոկալ ձևով կարող էին նշել Աստուածամորը նվիրված եկեղեցիներում:

Սիմեոն Երևանցու Տոնացույցում Հիշյալ տոնի կանոնը ձևակերպել է. «Երրորդ կիրակէ զկնի սուրբ Աստուածածնի՝ տօն գիւտի գոտոյ սրբուհոյ Աստուածածնի»:

Հասկանալի է իբրև շարժական, քանի որ կանոնել է Աստուածածնից հաշված 3-րդ կիրակին կամ Աստուածածնից հաշված 15-րդ օրը, որը ընկնում է Օգոստոսի 29 ± 3 օր նայած տարին և տատանվել Օգոստոս 21 - Սեպտեմբեր 1-ի սահմաններում: Այն որոշ հաճախականությամբ համընկնում էր տոնի օրվա նախնական ամսաթվի հետ, երբ Աստուածածինը լինում էր Օգոստոսի 17-ին, նրա գոտու գիւտ օրը ընկնում էր Օգոստոս 31-ին:

Այսպիսով Աստուածածնի գոտու գիւտի տոնական օր սահմանվեց 18-րդ դարի 3-րդ քառորդի վերջերից՝ Սիմեոն Երևանցու կողմից, թեև այդ տոնի օրը հայոց մեջ հայտնի էր 10-րդ դարից: Այն նախապես եղել է անշարժ տոն և տոնվել է, թեև լոկալ ձևով, Օգոստոսի 31-ին: Իսկ Սիմեոն Երևանցին կանոնեց որպես շարժական տոն, որը տոնվեց Օգոստոս 26 - Սեպտեմբեր 1-ի սահմաններում նայած տարի և միայն Աստուածածինը Օգոստոսի 17-ին կատարելու ժամանակ այդ տոնի օրը համարժեք էր դառնում նախնական օրվա հետ: Հիշյալ տոնի տոնացույց մտնելը անշուշտ կապված է Աստուածածնի պաշտամունքի խորացման հետ հայոց մեջ, որի դրսևորումներից մեկն էլ նոր տոնական օրվա կանոնի մուտքն էր Հայոց Տոնացույց:

1 Վեճեփիկի 1048 թվահամարի գրչագիրը, էջ 426ա:

2 Ձեռ. № 3082, էջ 389բ:

3 Ձեռ. № 4741, էջ 13բ:

\*\*\*

Հայոց Տոնացույցի մեջ հաջորդ տոնը նվիրված է Աստուածածնի Ծննդեան Հիշատակին: Այդ տոնի կանոնը բացակայում է հնագույն ճաշոցներում և տոնացույցերում: Այն գտնում ենք միայն Գրիգոր Վկայասերի Տօնանամակի խմբագրության մեջ:

Այնտեղ կարդում ենք. «Նորին [Սեպտեմբերի] Ը. Ծնունդ սուրբ Աստուածածնի ի ծնողացն և յիշատակ ծնողացն Յովակիմայ եւ Աննայի...»<sup>1</sup>:

Պարզ է դառնում, որ հայոց մեջ քննարկվող տոնը սկսել է կենցաղավարել 11-րդ դարի վերջերից - 12-րդ դարի սկզբներից:

Ճաշոցների մեջ հաջորդ տեղեկությունը գտնում ենք 940 թվահամարի գրչագրում: 119 - համարի տակ գրված է. «Սեպտեմբեր Ը. Ծնունդ Աստուածածնին ի ծնողաց իւրոց Յովակիմայ եւ յԱննայէ...»: Հիշյալ տոնական կանոնը գալիս է հունական տոնացույցերից: Հնագույն վկայությունը առկա է Հովսեփ Կոստանդնուպոլսեցու 992 թվին թարգմանած հունական տոնացույց - Յայսմավուրքի բնագրի մեջ, որտեղ արձանագրված է.

1. «[Սեպտեմբերի] Ը. Ծնունդ է ամենասրբուհի Աստուածածնին եւ ամենաւրհնեալ կուսին Մարիամայ [յ] ի ծնողաց իւրոց Յովակիմայ [յ] եւ յԱննայի: Ի պատմութիւն գրոց սրբոյն Յակովբայ եղբաւրն Տեառն»:

2. «Միւս անգամ (այսինքն՝ Սեպտեմբերի 9-ին). տաւն է ծննդեան ամենասրբուհու մուսին Մարիամու»<sup>2</sup>:

3082 թվահամարի համառոտ Յայսմավուրքի խմբագրության մեջ կարդում ենք.

1. «Նոր[ին՝ Նաւասարդի] ԻԸ. նախատաւնակ է ծննդեան սրբուհոյ Աստուածածնին. է [Սեպտեմբեր]:»

2. «Նո[ին՝ Նաւասարդ]. Ծնունդ է ամէնաւրհնեալ Աստուածածնին... Ը [Սեպտեմբեր]»<sup>3</sup>:

Իսկ 179 թվահամարի համառոտ Յայսմավուրքի խմբագրության մեջ վկայվել է.

1. «(Նաւասարդի) ԻԸ ... նախատաւն ծննդեան Աստուածածնի է [Սեպտեմբեր]»:

2. «(Նաւասարդի) ԻԹ. Ծնունդ է սրբուհոյ Աստուածածնին ի ծնաւղացն իւրոյ Յովակիմայ եւ յԱննայէ. Ը [Սեպտեմբեր]»:

3. «(Նաւասարդի) Լ. վերջատաւն ամէնաւրհնեալ կուսին Մարիամու եւ յիշատակ ծնաւղացն իւր Յովակիմայ եւ Աննայի Թ [Սեպտեմբեր]»:

Հիշյալ բնագրերի տվյալները ցույց են տալիս, որ Ծննդյան Աստուածածնի Հիշատակը տոնել են անշարժ տոնական օրերով: Նախատեսվել է նախատօնակ՝ Սեպտեմբերի 8-ին և 9-ին: Հուլյան տոմարի Հիշյալ ամսաթվերը համարժեք են ստացել Հայոց անշարժ տոմարի Նավասարդի 28, 29 և 30-ը: Վաղ շրջանում ընդօրինակված Հայոց «Տոնացոյց ըստ շաբաթուց»-ները չեն արձանագրել քննարկվող տոնի կանոնները, թեև Ծննդյան Աստուածածնի տոնը կատարվել են անշարժ տոնական կանոններով և նրանց տոնածիսական բնագրերը վերցրել են ճաշոցներից:

14-րդ դարի սկզբներին ոմանց կողմից փորձ է արվել Ծննդյան Աստուածածնի տոնը վերածել շարժական տոնի: Դրա պայցույցը գտնում ենք 752 թվահամարի տոնացույցի խմբագրության մեջ: Այնտեղ Փոխման Աստուածածնի կիրակիից հաշված 2-րդ կիրակիից հետո եկող

1 Ձեռ. № 979, էջ 366բ-367ա:

2 Վեճեփիկի 1048 թվահամարի գրչագիր, էջ 15բ և 17բ:

3 Ձեռ. № 3082, էջ 389բ:



երկուշաբթիի կանոնի տակ կամ Փոխման Աստուածածնից հաշված 9-րդ օրվա մեջ կարողում ենք. «Բշ (երկուշաբթի)... և ոմանք Մննդյան Աստուածածնին տաւենն ի ծնողացն...»<sup>1</sup>: Պարզ է դառնում, որ ոմանք շարունակել են Մննդյան Աստուածածնի տոնը նշել անշարժ տոնական օրով, իսկ ոմանք այն փորձել են վերածել շարժական տոնի և նշել են Օգոստոս 20-26-ի երկուշաբթիներից մեկում նայած տարի: 14-15-րդ դարերում ընդօրինակված տոնացույցերի մեջ հիշյալ տեղեկությունը չենք գտնում: Նշանակում է, որ Մննդյան Աստուածածնի տոնի վերածելը շարժականի անհաջողություն էր կրել: Բայց, ինչպես տեսանք, Աստուածածնի ծնողների՝ Հովակիմի և Աննայի հիշատակի օրը առանձնացվել էր, վեր էր անցվել շարժական տոնի և դրվել էր Փոխման Աստուածածնի կիրակիից հետո եկող շաբաթ օրը:

Հայոց Յայսմավուրքների խմբագրություններում շարունակում են վկայակոչել Մննդյան Աստուածածնի կանոնը իբրև անշարժ տոն: Այսպես, 4741 թվահամարի Յայսմավուրքի խմբագրության մեջ կարդում ենք.

1. «Նաւասարդ ԻԸ և Սեպտեմբեր է. Յայսմաւուր նախատօնակ է ծնընդեան ամենասըրբուհոյ Աստուածածնին»:

2. «Նաւասարդի ԻԹ և սրբոյն Մարիամոյ Մնունդ է ամէսարբուհոյն Մարամայ Աստուածածնին և Յովակիմայ) և ի յԱննայ»<sup>2</sup>: Իսկ Գրիգոր Խլաթեցու կազմած Յայսմավուրքի խմբագրության մեջ գրված է. «Նասարդի ԻԹ եւ սեպտեմբեր Ը. տօն է Մննդյան սուրբ կուսին Մարիամու Աստուածածնին»<sup>3</sup>:

16-րդ դարում ընդօրինակված տոնացույցերի խմբագրությունների մեջ արդեն արձանագրվել են Մննդյան Աստուածածնի կանոնը, թեև կամ դրել է փոխման Աստուածածնի 4-րդ և 5-րդ կիրակիի նայած հաշվման ինչպես և Սուրբ Խաչի պահքից առաջ ընկնող կիրակի կամ անշարժ տոնական օրվա Սեպտեմբերի 8-ի կամ 9-ի տակ, սակայն շաբաթվա օրը հաշվի չի առնվել և տոնվել է անշարժ տոնական օրով և երբեմն համընկել է հիշյալ կիրակիի հետ: Բերենք որոշ վկայություններ:

Ըստ 6337 թվահամարի գրչագրի՝ «Յայսմ վայրի Սեպտեմբերի Ը. նախատաւակ է աւետեաց Աստուածածնին ծնընդեան .... եւ ի Թ. տաւն է ծնընդեան Աստուածածնի ի ծնողացն»<sup>4</sup>:

Ըստ 4164 թվահամարի ընդօրինակության. «Յայս կիրակիս սուրբ Աստուածածնին ծնընդան տօն է: Իսկ եթէ յարութեան տօնես նայ զԱստուածածնին Սեպտեմբեր Ը. ինչ օր հանդիպի կատարեա եւ իրիկուն որ է Սեպտեմբեր է, նախատօնակ առնիջիր անպատճառ»<sup>5</sup>:

Սեպտեմբեր Ը. Տօն է ծնընդեան ամէնասարհնեալ սուրբ կուսին Մարիամու Աստուածածնին ծնողաց իւրոց Յովակիմայ և յԱննայ: Բայց գիտացիր ով եղբայր, զի տերունի է տօնս և որ օր գայ կատարեայ և պատարագ մատչի անպատճառ»<sup>5</sup>:

Ըստ 4441 թվահամարի գրչագրի՝ «...Իսկ թէ կիրակի յարութեան տօնես նա զԱստուածածնի տաւն Սեպտեմբեր Ը յինչ օր որ գայ անպատճառ տօն եւ ապա պահք սուրբ Խաչին և - տօնք ոչ լինի»<sup>6</sup>:

4459 թվահամարի Տոնացույցի խմբագրության մեջ կարդում ենք. «Յայս կիրակի սուրբ Աստուածածնի ծնընդեան տօն է: Իսկ թէ յարութեան տօնես նա զԱստուածածնին Սեպտեմբեր

Ը-ն ինչ օր որ հանդիպի կատարեայ: Երեկուն նախատօնակ առնիջիր անպատճառ: Սեպտեմբերի Ը. Տօն է ծնընդեան ամէնսարհնեալ սուրբ կուսին Մարիամու Աստուածածնին ի ծնողաց իւրոց Յովակիմայ) և յԱննայ: Բայց գիտացիր ով եղբայր, զի տերունի է տօնս և յոր օր որ գայ) կատարեայ և պատարագ մատչի անպատճառ»<sup>1</sup>:

5419 թվահամարի գրչագրում առկա է միայն ներքոհիշյալ հարվածը, այն է՝ «Յայսմ վայրի Սեպտեմբերի Ը. նախատաւակ ծնընդեան Աստուածածնին»<sup>2</sup>: 4874 թվահամարի Տոնացույցի խմբագրության մեջ գտնում ենք համառոտված տարբերակ, այն է՝ «յայսմ վայրի Սեպտեմբերի Ը. նախատօնական է ծնընդեան Աստուածածնին...եւ ի յինն տօն է ծնընդեան Աստուածածնին ի ծնընդօղացն»<sup>3</sup>:

6952 թվահամարի Տոնացույցի խմբագրության մեջ կարդում ենք. « Իսկ ի Սեպտեմբերի Ը. նախատօնական է ծնընդեան սուրբ Աստուածածնին յոր օր որ գայ տոնես մեծաւ հանդիսիւ...»<sup>4</sup>:

Ըստ 5436 թվահամարի գրչագրի՝ «Յայսմ վայրի Սեպտեմբերի Ը. նախատաւակ է ծնընդեան Աստուածածնին և ի Թ. տօն է ծնընդեան սուրբ Աստուածածնին ի ծնողացն»<sup>5</sup>:

4962 թվահամարի ձեռագրում գրված է. «Յայսմ վայրի Սեպտեմբերի Ը. նախատաւակ է ծնընդեան Աստուածածնին... եւ ի Թ. տաւն է ծնընդեան Աստուածածնին ի ծնողացն»<sup>6</sup>:

Ըստ 8598 թվահամարի տոնացույցի խմբագրության՝ «... Իսկ Սեպտեմբերի Ը. տաւն է սուրբ Աստուածածնի ծնընդեանն: Անպատճառ պատարագ մատչի»<sup>7</sup>:

5440 թվահամարի գրչագրի նորույթը ամսաթվային զուգահեռներն են, այն է՝ «Նաւասարդի ԻԹ և Սեպ(թնագիր՝ Մ)տեմբերի Ը. Իլուլ ԻԱ. նախատաւակ է ծնընդեան ամէնասըրբուհոյ Աստուածածնին ի Յովակիմայ և յԱննայէ...»

Նաւասարդի Ը և Սեպտեմբերի Թ, Իլուլ (Ի)Բ. տաւն է մեծապայծառ հրաշափառ և փառաւորեալ ամենասուրբ Աստուածածնին, որ ծնաւ յԱննայէ և Յովակիմայ և յիշատակ ծնաւղաց իւրոց»<sup>8</sup>:

Բերենք որոշ տվյալներ նաև 17-րդ դարի տոնացույցերի ընդօրինակություններից:

Ըստ 587 թվահամարի գրչագրի՝ «(Նաւասարդի ԻԹ) եւ Սեպ(թնագիր՝ Մ)տեմբերի Ը, Իլուլի ԻԱ. նախատաւակ է ծնընդեան ամէնասըրբուհոյ Աստուածածնին ի Յովակիմայ և յԱննայէ...»

(Ն)աւասարդի Ը և Սեպտեմբեր Թ., Իլուլ ԻԲ. տաւն է մեծապայծառ հրաշափառ և փառաւորեալ ամէնասուրբ Աստուածածնի, որ ծնաւ ի յԱննայէ և Յովակիմայ եւ յիշատակ է ծնողաց իւրոց...»<sup>9</sup>:

Ըստ 509 թվահամարի Տոնացույցի խմբագրության.

1. «Նաւասարդի ԻԹ և Սեպտեմբերի Ը. և Իլուլի ԻԱ. նախատօնակ է ծնընդեան ամէնասըրբուհոյ Աստուածածնին ի Յովակիմայ է և յԱննայէ...»:

1 Ձեռ. № 752, էջ 171ա:

2 Ձեռ. № 4741, էջ 20բ:

3 Տե՛ս տպագիր էջ 80-83:

4 Ձեռ. № 6337, էջ 242բ-243ա:

5 Ձեռ. № 4164, էջ 199ա:

6 Ձեռ. № 4441, էջ 256ա:

1 Ձեռ. № 4459, էջ 94բ-95ա:

2 Ձեռ. № 5419, էջ 214ա:

3 Ձեռ. № 4874, էջ 193ա-194բ:

4 Ձեռ. № 6952, էջ 283ա:

5 Ձեռ. № 5436, էջ 186բ:

6 Ձեռ. № 4692, էջ 157ա:

7 Ձեռ. № 8598, էջ 103ա:

8 Ձեռ. № 5440, էջ 184ա-բ:

9 Ձեռ. № 587, էջ 160բ-161ա:

2. «Նոյն Նաւասարդի Լ և Սեպտեմբերի Ի Թ և Իլուլի ԻԲ. Տօն է մեծապայծառ Հրաշափառ և փառաւորեալ յամէնասրբուհոյ Աստուածածնին, որ ծնաւ ի յԱննայէ և ի Յովակիմայ եւ յիշատակ ծնողաց իւրոց»:

3. «Սեպտեմբերի ամսոյ Ը. տօն է ծննդեան ամէնօրհնեալ սուրբ կուսին Մարիամու Աստուածածնին և ծնողաց իւրոց Յովակիմայ և յԱննայէ: Բայց գիտացիր ով եղբայր, զի տերունի է տօնս և յոր օ(ր) գայ կատարեա և պատարագ մատչի անպատճառ... թէ լուր օր հանդիպի որպէս զակն ասա ըստ պատշաճի աւուր զկնի Աւետարանին, թէ կիրակէին՝ նորաստեղծեալ...»<sup>1</sup>:

Այսպիսով, 16-17-րդ դարերում մի դեպքում Սեպտեմբերի 7-ին նախատոնակ են արել և Սեպտեմբերի 8-ին տոն Աստուածածնի Ծննդյան. մյուս դեպքում՝ Սեպտեմբերի 8-ին՝ նախատոնակ, իսկ Սեպտեմբերի 9-ին տոն Ծննդյան Աստուածածնի, այսինքն նախորդ շրջանի անշարժ սկզբունքը պահպանվել է, իսկ տոնի օրը մի խումբ կատարել է Սեպտեմբերի 8-ին, ինչպես նախորդ շրջանում էր, իսկ մյուս խումբը՝ Սեպտեմբերի 9-ին: Երբեմն պատահում է նաև Աստուածածնի ծնողների հիշատակի օրը անշարժ տոնական օրով՝ Աստուածածնի Ծննդյան օրվա զուգահեռ, սակայն նրա ծնողների հիշատակի օրը, ինչպես տեսանք, 16-17-րդ դարերի տոնացույցների խմբագրութունների մեջ տեղափոխվել էր Փոխման Աստուածածնից հաշված 10-րդ օրը՝ շաբաթվա կանոնի տակ:

Միմեոն Երևանցին, թեև պահպանեց նախորդ տոնացույցերի ձևակերպումները, սակայն Աստուածածնի Ծննդյան տոնը սահմանեց Սեպտեմբեր 8-ին, իսկ 7-ին նախատոնակ: Ինչպես նշվեց Սեպտեմբերի 8-ը որոշակի հաճախականությամբ համընկնում էր Փոխման Աստուածածնից հաշված 5-րդ կիրակիին նախորդող շաբաթին կամ սուրբ Խաչի պահքին նախորդող շաբաթին:

Այսպիսով Աստուածածնի Ծննդյան տոնը Հայոց մեջ մուտք գործեց 11-րդ դարի վերջում - 12-րդ դարի սկզբում, երբ Գիրգոր Վկայասերի Տօնանամակը ստեղծվեց և շարունակվեց կենցաղավարել հետագայում: 14-րդ դարում փորձ արվեց Ծննդյան Աստուածածնի անշարժ տոնը վերածել շարժականի, սակայն այն հաջորդություն չունեցավ և շարունակվեց տոնվել անշարժ օրերով կամ Սեպտեմբերի 8-ին կամ Սեպտեմբերի 9-ին, իսկ այժմ տոնվում է Սեպտեմբերի 8-ին:

\*\*\*

Հայոց տոնացույցում Աստուածածնին նվիրված հաջորդ տոնական օրը դրված է Նոյեմբերի 21-ի կանոնի տակ:

Հարկ է նշել, որ հիշյալ տոնը վաղ շրջանում չի կենցաղավարել Հայոց մեջ: Այդ են ցույց տալիս Հայոց ճաշոցների և տոնացույցերի խմբագրութունները, որտեղ բացակայում է Աստուածածնի այդ տոնի կանոնը և նրա ժամանակ կատարվող տոնածիսական ընթերցվածները: Այն տոնացույց մտավ միայն 15-րդ դարի վերջերին: Սակայն այդ տոնի մասին տեղեկություններ են պահպանել Հայոց Յայսմավուրքների տարբեր խմբագրութուններ:

992 թ. Հովսեփ Կոստանդնուպոլսեցու Տոնացույց-Յայսմավուրքի հունարենից Հայերեն կատարած թարգմանության մեջ գրված է. «[Նոյեմբեր] ԻԱ. Տաւն է ամէնասրբուհու Աստուածածնին, յորժամ երից ամաց էր, եւ տարան զնա ծնաւդքն իւր ի տաճարն Աստուծոյ եւ յանձն արարին սրբոյն Ջաքարիա քահանայապետին եւ մարգարէքն: Եւ անուանի տաւնս այս սրբութիւն սրբութեանց, քանզի բնակեցաւ ամէնասրբուհի կոյս Մարիամ ի սրբութիւն սրբութեանց»<sup>2</sup>:

3082 թվահամարի համառոտ Յայսմավուրքի խմբագրության մեջ կարդում ենք. «Նորին՝ Տրէ] ԺԳ. Ամէնասրբուհու Աստուածածնի, յորժամ երից ամաց տարան զնա ծնաւդքն ի տաճարն և յանձնեցին Ջաքարիայ քահանայապետի, և անուանի տաւնս այս սրբութիւն սրբութեանց. ԻԱ [Նոյեմբեր]»<sup>1</sup>:

179 թվահամարի համառոտ Յայսմավուրքի խմբագրության մեջ կանոնված են.

1. «[Տրէ] ԺԲ... Նախատաւն սուրբ կուսին Մարիամու Աստուածածնի. Ի [Նոյեմբեր]»:

2. «[Տրէ] ԺԳ. Տաւն է սուրբ կուսին Մարիամու Աստուածածնին, յորժամ տարան զնա ծնաւդքն նորա Գ ամաց ի տաճարն Տեառն, որ կոչէր Սրբութիւն Սրբութեանց. ԻԱ [Նոյեմբեր]»:

3. «[Տրէ] ԺԴ... և վերջատաւն Աստուածածնին. ԻԲ [Նոյեմբեր]»:

Ըստ 7530 թվահամարի Յայսմավուրքի ընդարձակ խմբագրության տվյալների՝ «Տրէ ԺԳ և Նոյեմբեր[եր] ԻԱ. Տաւն ամէնասրբուհոյ[յ] Աստուածածնին, յորժամ երից ամաց էր և տարան ծնողքն ի տաճարն Տեառն և էկաց անդ ամս (բնագրում՝ ամիս) ԺԱ և (անուանի տաւնս) այս սրբութիւն Սրբութեանց»<sup>2</sup>:

7529 թվահամարի Յայսմավուրքում կարդում ենք. «Տրէ ԺԳ. Նոյեմբ[եր] ԻԱ. Տօն է ամէնասրբուհոյ[յ] Աստուածածնին, յորժամ տարան ծնողքն իւր ի տաճարն Գ ամաց, և յանձն արարին Ջաքարիա քահանայապետին և բնակեցաւ Մարիամ ի սրբութիւն սրբութեանց»<sup>3</sup>:

9585 թվահամարի Յայսմավուրքի խմբագրության մեջ գրված է. «Տրէ ԺԳ եւ Նոյեմբեր ԻԱ. Տաւն ամէնասրբուհոյն Աստուածածնին, յորժամ տարան ծնողքն իւր ի տաճար[ն] Աստուծոյ երից ամացն և յանձն արարին Ջաքարիայ քահանայապետին և բնակեցան Մարեամ ի սրբութեան Սրբութեանց»:

Բերենք 16-17-րդ դարերում ընդօրինակված տոնացույցերի տեղեկությունները: Ըստ 8630 թվահամարի Տոնացույցի խմբագրության (1495 թ.) վկայության. «Տրէ ի ԺԳ և Նոյեմբեր ԻԱ և Քաղսե երրայեցոց [Ի]Ն. Տաւն է ամէնասրբուհոյ Աստուածածնին, յորժամ երից ամաց տարան զնա ծնողքն նորա ի տաճարն Սողոմոնի եւ յանձնեցին ի սուրբ քահանայապետն Ջաքարիայ և անուանի տաւնս այս սրբութիւն սրբութեանց...»<sup>4</sup>:

5440 թվահամարի Տոնացույցի խմբագրության մեջ կարդում ենք. «Եւ յամսեան [Տրէ] ԺԳ և Նոյեմբեր ԻԱ. Տաւն է ամէնասրբուհոյ Աստուածածնին, յորժամ երից ամաց տարան զնա ծնողք նորա ի տաճարն Սողոմոնի և յանձնեցին ի սուրբ քահանայապետն Ջաքարիայ և անուանի տաւնս այս սրբութեան սրբութեանց...»<sup>5</sup>:

9046 թվահամարի գրչագրում գրված է. «Տրէ ի ԺԳ (բնագրում՝ ԺԴ) և Նոյեմբեր ԻԱ և - քաղսե երրայեցոց ԻԵ (բնագրում՝ ԻԷ). Տաւն (բնագրում՝ Տոււն) է ամենասրբուհոյն Աստուածածնին, յորժամ երից ամաց տարան զնա ծնողքն նորա ի տաճարն Սողոմոնի և յանձնեցին ի սուրբ քահանայապետն Ջաքարիայ. եւ անուանի տօնս այս սրբութիւն սրբութեանց, վասն զի բնակեցաւ կոյսն սուրբ ի սրբութիւն սրբութեանց...»<sup>6</sup>:

587 թվահամարի ժամագրքում կարդում ենք. «[Տրէ] ամսոյ ի ԺԳ եւ Նոյեմբեր ԻԱ և - Քաղսե եղբայցոց [Ի]Ն. տաւն է ամէնասրբուհոյ Աստուածածնի, յորժամ երից ամաց տարան զնա ծնողքն ի տաճարն Սողոմոնի եւ յանձնեցին ի սուրբ քահանայապետն Ջաքարիայ, եւ

1 Ձեռ. № 3082. էջ 391բ:

2 Ձեռ. № 7530. էջ 31ա-բ:

3 Ձեռ. № 7529. էջ 55բ:

4 Ձեռ. № 8630. էջ 59ա:

5 Ձեռ. № 5440. էջ 184բ:

6 Ձեռ. № 9046. էջ 19ա-բ:

1 Ձեռ. № 509. էջ 369ա և 416բ-417ա:

2 Վեցնտիկի 1048 թվահամարի գրչագիր, էջ 124ա:

անուանի տօնս այս սրբութիւն սրբութեանց, վասն զի բնակեցաւ կոյս սուրբ ի սրբութիւն սրբութեանց...»<sup>1</sup>:

950 թվահամարի Տոնացուցի խմբագրութիւնը վկայում է. «Յայսմ վայրի նոյեմբերի ԻԱ. Տաւն է ամենաւարճեալ սրբուհոյ Աստուածածնին, յորժամ երից ամաց տարան ի տաճարն և անուանի տօնս այս սրբութիւն սրբութեանց, վասն զի բնակեցաւ կոյս սուրբ ի սրբութիւն սրբութեանց... եւ ապա պահէ յիսնակամիտէն...»<sup>2</sup>:

Միմեոն Երևանցու Տոնացուցի խմբագրութեան տվյալները բ՛րովեցին վերևում:

Բնագրերի վկայութիւնները կասկած չեն թողնում, որ Աստուածածնի Հիշյալ տոնը, թեև Հայտնի էր վաղ շրջանից, սակայն տոնացուց մտավ և սկսեց Հայոց մեջ կենցաղավարել 15-րդ դարի վերջերից միայն, որը կապված էր տոնացուցի մեջ Աստուածածնի տոների ընդլայնման հետ: Այն Հայտնի է եղել իբրև անշարժ տոն և այդպես էլ մտավ տոնացուց և Աստուածածնին նվիրված Հիշյալ տոնը, որը նաև անվանվել է «Սրբութիւն Սրբութեանց», նշվել է նոյեմբերի 21-ին՝ նախատոնակով:

Այդ կարգը գործում է նաև այժմ:

\*\*\*

Ըստ տոնացուցի տոնական տարվա Աստուածածնին նվիրված վերջին տոնը, որը վերաբերում է նրա հղացման հիշատակին, նախորդ տոնի նման, կենցաղավարեց Հայոց մեջ 15-րդ դարի վերջից սկսած, թեև այդ տոնի մասին տեղեկութիւնները Հայտնի են 10-րդ դարի վերջերից: Քննարկվող տոնը նույնպես անշարժ էր և տոնվել է Դեկտեմբերի 9-ին:

Նախ բերենք Յայսմավուրքների տարբեր խմբագրութիւնների վկայութիւնները:

Առաջին անգամ Հիշյալ տոնական օրվա կանոնին ենք հանդիպում Հովսեփ Կոստանդնուպոլսեցու Տոնացուց-Յայսմավուրքի մեջ, այն է՝ «Դեկտեմբեր թ. Տաւն է ամէնասուրբ կուսին «Մարիամայ» Աստուածածնին յղութեան Աւետեաց, զոր ետ հրեշտակապետն Աննայի մաւր նորա... գրեալ ի պատմութիւն յղութեանն սրբուհոյ ի Սեպտեմբերի Ը»<sup>3</sup>:

3082 թվահամարի համառոտ Յայսմավուրքի խմբագրութեան մեջ կարդում ենք.

«Քաղոց Ա. Աւետիքն Աննայի մաւր Աստուածածնին և յղութիւն, զոր տաւնին խնդութեամբ ամենայն Եկեղեցիք. թ [Դեկտեմբեր]»<sup>4</sup>:

179 թվահամարի համառոտ Յայսմավուրքի խմբագրութիւնը վկայում է. «Քաղոց Ա և Դեկտեմբեր թ. տաւնէ սուրբ կուսին Մարիամու Աստուածածնին յղութեան ի ծնաւղացն Յովակիմայ և յԱննայէ. աւետեաւք հրեշտակապետին»:

7530 թվահամարի ընդարձակ խմբագրութեան մեջ գրանցվել է. «Քաղոց Ա և Դեկտեմբեր թ. Աւետիք Աննայի մաւր Աստուածածնին, զոր ետ հրեշտակն Տեառն և յղացաւ ի Յովակիմայ զսուրբ կուսին Մարիամ Աստուածածին»<sup>5</sup>:

7529 թվահամարի Յայսմավուրքի ընդարձակ խմբագրութեան մեջ տեղ է գտել հետևյալ տեղեկութիւնը. «Քաղոց Ա. Դեկտեմբեր թ. Աւետիս հրեշտակապետին Տեառն սրբոյն Աննայի մօր Աստուածածնին»<sup>6</sup>:

9585 թվահամարի Յայսմավուրքի խմբագրութեան մեջ գրված է. «Քաղոց Ա և Դեկտեմբեր թ. Աւետիք հրեշտակապետին Տեառն սրբոյն Աննայի մաւր Աստուածածնին, որ յղացաւ յառնեն իւրմէ Յովակիմայ զամէնասրբուհի Աստուածածինն Մարիամ»<sup>1</sup>:

Յայսմավուրքի Գրիգոր Խլաթեցու խմբագրութեան մեջ տեղեկանում ենք. «Քաղոց Ա և Դեկտեմբեր թ. տօն է Յղութեան Աննայի և Յովակիմայ զամէն օրհնեալն Մարիամ: Ի Սեպտեմբերի Ը գիտ և կարդա»<sup>2</sup>:

Տոնացուց ըստ շաբաթուցների մեջ Աստուածածնի հղացման տոնի կանոնը մտել է 15-րդ դարի վերջին, իսկ հետագայ տոնացուցերի խմբագրութիւնների մեջ իր կայուն տեղն ունեցավ կամ նրա սկզբին կամ բուն բնագրում:

Բերենք տոնացուցերի տվյալները:

8630 թվահամարի գրչագրում (1495 թ.) գրված է. «Քաղոց ամիսս Հայոց ի Ա եւ Դեկտեմբեր Հոռմայեցոց ի Թ (եւ) Քաղսև երրայեցոց ի ԻԳ. Աւետիք է Աննայի և Յովակիմայ, յորմէ յղացան...»<sup>3</sup>:

5440 թվահամարի Տոնացուցի խմբագրութեան մեջ կարդում ենք. «Քաղոց ի Ա և Դեկտեմբեր ի Թ [և] Քաղսև ի ԻԳ (բնագրում ԻԴ). Աւետիք է Աննայի և Յովակիմայ, յորմէ յղացան զսուրբ կոյսն Մարիամ զամէնաւրճեալ տիրամայրն...»<sup>4</sup>:

9046 թվահամարի գրչագիրը տեղեկացնում է. «Քաղոց ամսոյ Հայոց որ Ա և Դեկտեմբեր Հոռմայեցոց ի Թ (և) Քաղս(և) երրայեցոց ի ԻԳ. Աւետիք է Յովակիմայ և Աննայի, յորմէ յղացան զսուրբ կոյսն Մարիամ զամէն ավրճեալ տիրամայրն...»<sup>5</sup>:

Ըստ 4459 թվահամարի բնագրի՝ «Քաղոց ամսոյ Հայոց ի Ա և Դեկտեմբեր Հոռմայեցոց ի Թ (բնագրում՝ Բ), Քաղս(և) երրայեցոց ի ԻԳ. Աւետիք է Յովակիմայ [և] Աննայի...»<sup>6</sup>:

4962 թվահամարի Տոնացուցի խմբագրութեան սկզբում առանձին կանոնի տակ վկայվել է. «Քաղոց ամսոյ Հայոց ի Ա եւ Դեկտեմբեր Հոռմայեցոց ի Թ [եւ] Քաղսև երրայեցոց ի ԻԳ. Աւետիք է Աննայի և Յովակիմայ, յորմէ յղացան զսուրբ կոյս Մարիամ...»<sup>7</sup>:

Որոշ տոնացուցերի խմբագրութիւններ քննարկվող տոնի կանոնը դրել են հիսնակամտից հաշված երրորդ կիրակիից հետո եկող չորեքշաբթի օրվա տակ: Այսպես, 4164 թվահամարի տոնացուցի խմբագրութեան մեջ գրված է. «Դչբի (չորեքշաբթի)... Յայսմ վայրի Դեկտեմբերի թ. տօն է յղութեան Աննայի, որ յղացաւ զՄարիամ կոյսն: Երկուցին նախատօնական արա...»<sup>8</sup>:

16-րդ դարի, ինչպես և 17-րդ դարի տոնացուցերի խմբագրութիւնների մեջ շարունակվում է արձանագրվել նույն կանոնի տարբեր խմբագրութիւնները<sup>9</sup>:

Միմեոն Երևանցու տոնացուցի խմբագրութեան տվյալները բերեցինք վերևում: Միայն նշենք, որ նա «Տօն յղացման սրբոյ կուսին Մարիամու ի յԱննայէ» կանոնը դրել է Յիսնակամտից հաշված երրորդ կիրակիից հետո և սուրբ Հակոբի պահքից առաջ և նախատեսվել է Դեկտեմբերի 9-ին տոն, իսկ նախատոնակը՝ Դեկտեմբերի 8-ի երեկոյան: Այսպիսով, հղացման

1 Ձեռ. № 587, էջ 161ա-բ:

2 Ձեռ. № 590, էջ 81բ-82ա:

3 Վեցետիկի 1048 թվահամարի գրչագիր, էջ 154ա:

4 Ձեռ. № 3082, էջ 392ա:

5 Ձեռ. № 7530, էջ 57ա:

6 Ձեռ. № 7529, էջ 79ա:

1 Ձեռ. № 9585, էջ 84ա:

2 Տապագիր, էջ 329:

3 Ձեռ. № 8630, էջ 59ա:

4 Ձեռ. № 5440, էջ 184բ:

5 Ձեռ. № 9046, էջ 20բ:

6 Ձեռ. № 4459, էջ 101ա:

7 Ձեռ. № 4962, էջ 122ա:

8 Ձեռ. № 4164, էջ 212ա-բ:

9 Տե՛ս Ձեռ. № 4874, էջ 197ա-բ, 587 էջ 83ա, 510 էջ 297ա, 720 էջ 228ա, 509 էջ 369ա և այլն:

Աստուածածնի տոնը Հայոց մեջ սկսել է կենցաղավարել 15-րդ դարի վերջից, թեև Հիշյալ տոնը գրանցվել է 10-րդ դարից սկսած Յայսմավուրքի տարբեր խմբագրություններում: Այն մտել է Հայոց անշարժ տոմարի կանոնի տակ. միշտ տոնվել է Դեկտեմբերի 9-ին, իբրև անշարժ տոն:

\*\*\*

10-14-րդ դարերում խմբագրված Յայսմավուրքներում փաստագրվել են Աստուածածնի Հետ կապված տոնական օրեր, որոնք այդպես էլ չմտան տոնացույցերի և ճաշոցների խմբագրությունների մեջ, այսինքն չկենցաղավարեցին Հայոց մեջ:

1048 թվահամարի Յայսմավուրքի խմբագրության մեջ գրված է. «[Յուլիս] Ի՛ն. Հանգիստ անջման սրբուհույ Աննա[յի] մաւր ամէնասրբուհու[յն] Աստուածածնին Մարիամու»<sup>1</sup>:

Համարժեք տեղեկություններ են տալիս Հետագայում խմբագրված Յայսմավուրքները<sup>2</sup>:

179 թվահամարի Յայսմավուրքների խմբագրությունը վկայել է Աստուածածնի նոր տոնի մասին, այն է՝ «[Հրոտից] ԺԸ... Յայսմ աւուր տաւն է Աստուածածնին պատկերին, որ է Տուկան. ԻԴ [Յուլիս]»:

16-րդ դարի լատինական (Դոմինիկյան) տոնացույցներից մեկի ընդօրինակության մեջ Աստուածածնի և նրա Հետ կապված տոնական օրեր նախատեսել են Հետևյալ օրերին.

1. Մարտ 25. Աւետիք Տեառն:
2. Հուլիս 26. Աննա[յի] կուսի Մարիամու մօրն:
3. Օգոստոս 15. Փոխումն սուրբ Աստուածածնի (8 օր):
4. Սեպտեմբեր 8. Ծնունդ սուրբ կուսին Մարիամու (8 օր):
5. Նոյեմբեր 21. Ընծա[յ]ումն կուսին Մարիամու ի տաճարն
6. Դեկտեմբեր 8. Սրբուհի կուսին Մարիամու (8 օր)<sup>3</sup>:

Հայոց տոնացույցի Հետ համապատասխանություն ունեն միայն չորս տոնական օրեր:

Ուսումնասիրությունները ցույց են տալիս, որ Հայոց տոնացույցն սկզբից ևեթ ունեցել են Աստուածածնին նվիրված երկու տոնական օր, այն է՝ Աւետեաց Աստուածածնի և Մարիամ Աստուածածնի, որոնք, ինչպես տեսանք, տոնվել են անշարժ տոնական օրերով նրանք ունեցան զարգացման տարբեր փուլեր: Հետագայում Հայոց տոնացույցն հարստացավ Աստուածածնի և նրա Հետ կապված տոնական օրերով տարբեր ժամանակներում: Իսկ որոշ տոներ նույնիսկ չմտան տոնացույց:

Այլ խոսքով հայտնի է Աստուածածնի և նրա Հետ կապված 10 տոնական օրեր, որոնք տոնացույցային տարվա մեջ տեղաբաշխվել են Ապրիլ- Դեկտեմբերի տարբեր օրերի և միայն 8-ն են մտել տոնացույց:

1 Ձեռ. № 1048 (Վեճեսիկ), էջ 346ա:  
 2 Տե՛ս Ձեռ. №№ 3082, էջ 397, 179, 2695, էջ 198բ:  
 3 Տե՛ս 7256 թվահամարի ժամագիրք-տոնացույցը էջ 2ա-6բ:

ՍՈՒՐԲ ԽԱՉԻ ՏՈՆԱԿԱՆ ՕՐԵՐԸ ՀԱՅՈՑ ՄԵՋ

Քրիստոսի խաչափայտի երկրպագության մասին ուշագրավ տեղեկություններ են պահպանվել Հայոց ճաշոցների և տոնացույցերի խմբագրությունների մեջ՝ Ավագ կամ Մեծ ուրբաթի կանոնի տակ: Բերենք մի քանի վկայություններ, որոնք առնչվում են տարբեր ժամանակների Հետ:

Հնագույն «Կանոնք ընթերցուածոց»-ում գրված է. «Այգուն ուրբաթուն առաջի սրբոյ Գողգոթայի դնի պատուական փայտ խաչին, եւ ամենայն ժողովեալքն երկրպագեն մինչեւ վեցերորդ ժամ կատարի երկրպագութենն եւ ի վեցերորդ ժամու առաջի սրբոյ Գողգոթայի այս կանոն կատարի...»<sup>1</sup>:

Գրիգոր Վկայասերի Տօնանամակի խմբագրության մեջ կարդում ենք. «Մեծի ուրբաթին գիշերն առաջին գուբաղայն...: Զկնի Աւետարանին դնի խաչն և Աւետարանն առաջի եւ երկրպագեն հաւատացեալք եւ քահանայք: Ասեն խաչի քո Քրիստոս երկիր պագանեմք և ասեն...»<sup>2</sup>:

5667 թվահամարի տոնացույցի 1440 թ. ընդօրինակության մեջ վկայված է. «Մեծի ուրբաթ գիշերն հսկումն է... Յետ այսորիկ ասէ սուրբ Աստուած որ խաչեցար, քարոզ սուրբ խաչիւ աղոթք պահպանեա: Եւ դենն զնաչն և զԱւետարանն ի վերա բեմին և երկրպատեն մինչև ցերիս ժամս և ասեն խաչիւս, աղոթք պահպանեաւ: Իսկ ի Զ ժամն ժողովին և մտանն յեկեղեցի, բայց ոմանք ի ժամատուն ասեն...»<sup>3</sup>:

Համառոտ կամ ընդարձակ շարադրանքով համարժեք տեղեկություններ կան Հայոց ճաշոցների և տոնացույցերի խմբագրությունների մեջ<sup>4</sup>:

Մեծ ուրբաթի օրը չվերածվեց Սուրբ Խաչի առանձին տոնի, որովհետև այն մտնում էր Քրիստոսին նվիրված տոնական շարքի մեջ կապված էր Քրիստոսի խաչելության Հետ, որը սգի օր էր: Սակայն այդ օրը հատուկ ընդգծվել է խաղափայտի երկրպագությանը, որպես Քրիստոնեական գլխավոր սիմվոլներից մեկի:

\*\*\*

Սուրբ Խաչի առաջին տոնական օրը, ըստ տոնացույցի կարգի, նշել են Մայիսի 7-ին, իբրև անշարժ տոն: Բերենք այդ տեղեկությունները: 5-րդ դարի «Կանոնք ընթերցուածոց»-ում գրված է. «Մայիս ամսոյ որ աւր է (7) ժողովին առաջի սրբոյ Գողգոթայի զաւրն երեւելոյ նշանի խաչի յերկնից եւ այս կանոն կատարի. Սաղմոս ԴԶ կցուրդ... ի Գաղատացւոց թղթոյն Պաղոսի առաքելոյ... եւ ապա ընթեռնուն զթուղթ Կիւրղի եպիսկոպոսի Երուսաղեմացւոյ. վասն երեւելոյ նշանի խաչին յերկնից. «Թուղթ Կիւրղի եպիսկոպոսի Երուսաղեմացւոյ առ Կոստանտինոս թագաւոր վասն երեւելոյ լուսոյ խաչին»... Աղեղուիա, Սաղմոս ԴԵ... Աւետարան ըստ Մատթեոսի...»<sup>5</sup>:

1 Ձեռ. № 985, էջ 152բ-171բ:  
 2 Ձեռ. № 979, էջ 168բ-180բ:  
 3 Ձեռ. № 5667, էջ 112ա:  
 4 Տե՛ս Ձեռ. №№ 169 և 285 (Վեճեսիկի գրչագրեր), 179 էջ 530ա, 5356 էջ 224ա-բ, 5479, էջ 135բ-148բ, 4916, էջ 220բ-236բ և այլն:  
 5 Ձեռ. № 985, էջ 237ա-241բ:

Հարկ է նշել, որ Երևման ինչի տոնը փոխառվել է Երուսաղեմի տոնացույցից: Հիշյալ կանոնը իր մեջ ներ է առել նաև Կյուրեղ Երուսաղեմացու թուղթը, որը գրել է Կոստանդ կայսրին: Այն կազմել է այդ կանոնի օրգանական մասը և կարգացվել տոնի ժամանակ: Թղթում ամենահնագույն հիշատակությունն է պահպանվել խաչի գյուտի մասին: Կյուրեղ Երուսաղեմացին գրել է, որ խաչի գյուտը եղել է Կոստանդ կայսեր հօր Կոստանդիանոսի ժամանակ, բայց մանրամասն տեղեկություններ չի բերել այդ կապակցությամբ: Ինչևէ Կյուրեղի թղթից հետևում է, որ խաչի տոնը սկիզբ են առել 4-րդ դարի սկզբներից: Կյուրեղի թղթի ներառնելը հիշյալ կանոնում միաժամանակ ցույց է տալիս, որ Երևման ինչի տոնը՝ կատարված Մայիսի 7-ին, առանձնացվել է 4-րդ դարի 2-րդ կեսին և մտել Երուսաղեմի տոնացույց: Մենք հաստատուն փաստեր չունենք 4-րդ դարի 2-րդ կեսի վերաբերյալ, սակայն 5-րդ դարի սկզբներին այդ տոնը տոնվում էր հայոց մեջ, որի ապացույցը վերահիշյալ կանոնն է բերված հնագույն «Կանոնք ընթերցուածոց»-ի մեջ:

Հետագայում խմբագրված «Կանոնք ընթերցուածոց»-ները ևս քննարկվող տոնը դրել են Մայիս 7-ի կանոնի տակ:

Վենետիկի 169 թվահամարի գրչագիրը կրկնում է հնագույն «Կանոնք»-ի տվյալները, այն է՝ «Մայիս ամսոյ որ աւր է. ժողովին առաջին սրբոյն Գողգոթայ, գաւ[ր] երեւելոյ սրբոյ նշանի խաչին յերկնից եւ այս կանոնն կատարի...»<sup>1</sup>:

Վենետիկի 285 թվահամարի «Կանոնք...»-ում կարդում ենք. «Մայիսի է (բնագրում՝ Ե). ժողովին առաջի սրբոյ Գողգոթայի գաւր երեւելոյ սուրբ խաչին յերկնից...»:

832 թվահամարի գրչագրում, որը Ատոմ Վարագեցու «Հոռոմադիր»-ի ընդօրինակությունն է, վկայել է. «Մայիս է. երթումն սրբոյ խաչին յերկնից եւ այս կանոն կատարի...»<sup>2</sup>:

Վենետիկի 639 թվահամարի ձառնարկում, որը Գրիգոր Վկայասերի Տօնանամակի խմբագրություններից է, գրված է. «Մայիս է (բնագրում՝ Լ). Երևման խաչին...»: Ավելի ուշ ժամանակ ընդօրինակված ձառնարկների մի խումբ պահպանել են Մայիսի 7-ը: 6235 թվահամարի ձառնարկի խմբագրության մեջ նշվել է. «Մայիս է. Երևման խաչին...»<sup>3</sup>:

14-րդ դարում ընդօրինակված ձառնարկում, որը «Կանոնք»-ի խմբագրություններից մեկն է, պահպանել է հնագույն ձևակերպումը, այն է՝ «Մայիս ամսոյ որ աւր է. ժողովին առաջի սրբոյ Գողգոթայի գաւր երեւելոյ նշանի խաչի Տեառն յերկնից...»<sup>4</sup>:

Երևման ինչի տոնի օրվա նշումը՝ Մայիսի 7-ը համադրվել է հայոց անշարժ տոմարի Ահեկանի 30-ին և պահպանվել հայոց Յայսմավուրքների խմբագրությունների մեջ: Վկայակոչենք մի քանի բնագրեր: Ըստ 3082 թվահամարի համառոտ Յայսմավուրքի խմբագրության՝ «Նոր[ին] Ահեկի] Լ(30) Երևումն խաչին սրբոյ յերուսաղէմ. է [Մայիսի]»<sup>5</sup>: Իսկ 179 թվահամարի համառոտ Յայսմավուրքի խմբագրությունն արձանագրել է. «[Ահեկի] Լ. Երևումն սուրբ ինչին յերկնից հանդէպ Երուսաղէմի. է [Մայիսի]»: Համարժեք տեղեկություններ են տալիս հայոց Յայսմավուրքների ընդարձակ խմբագրությունների որոշ գրչագրեր<sup>6</sup>:

8179 բնագրի համաձայն «յԱհեկի Լ եւ ի Մայիս է. տաւն Երեւման սուրբ ինչին»<sup>7</sup>: Զու-

1 Ս. Մեմենյան, ԳՂՎ. աշխ., էջ 567-588:  
2 Ձեռ. № 832, էջ 191բ:  
3 Ձեռ. № 6235, էջ 6բ:  
4 Ձեռ. № 5479, էջ 195բ-199ա:  
5 Ձեռ. № 3082, էջ 396ա:  
6 Տե՛ս Ձեռ. №№ 7529, էջ 150բ, 9585, էջ 213բ:  
7 Ձեռ. № 8179, էջ 112բ:

գաղղբի տեղեկություններ են բերում որոշ Յայսմավուրքների խմբագրություններ<sup>1</sup>:

7530 թվահամարի Յայսմավուրքում կարդում ենք. «Ահեկի Լ. Մայիս է. տաւն Երևման սուրբ խաչին Բրիստոսի, որ ի Գողգոթայ»<sup>2</sup>:

Վերահիշյալ բնագրերում, թեև պահպանվել են Մայիսի 7-ը, իբրև Երևման խաչի անշարժ տոնի օր, սակայն Հայոց «Տաւնացոյց ըստ շաբաթուց»-ների խմբագրություններում, ինչպես և նրանց հիմքի վրա առաջացած ձառնարկների խմբագրությունների մեջ դեռևս 11-րդ դարից այդ տոնի կանոնը փոխվել էր և դրվել Չատկից հաշված 4-րդ կիրակի, ապա տեղափոխվել 5-րդ կիրակի, դրանով իսկ տոնը վեր էր ածվել շաբաթականի: Մայիս 7-ը գոյատևեց ոչ միայն նախորդ շրջանի ավանդույթը փոխանցելու միտումով, այլ նաև այն պատճառով, որ Չատկից հաշված 4-րդ և 5-րդ կիրակիները պարբերաբար համընկնում էին Մայիս 7-ին, երբ Չատկից կատարում էին Ապրիլ 16-ին և Ապրիլ 9-ին: Բնագրերի ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ Երևման ինչի տոնը դրվեց Չատկից հաշված 4-րդ կիրակի 11-րդ դարում, որը երևում է Գրիգոր Վկայասերի Տօնանամակի տվյալներից, իսկ 5-րդ կիրակի տեղափոխվեց 11-րդ դարի վերջերին, որի հիմնավորումը գտնում ենք Հովհաննես Սարկավազի Ազնվականոնում: Այդ նյութերը կբերվեն ստորև: Հարկ է նշել, որ վերահիշյալ երկու տարբերակներն էլ զուգահեռաբար գործեցին մինչև 14-րդ դարի սկզբները, որից հետո վերջնականորեն հաղթեց 2-րդ տարբերակը և հիշյալ տոնը տոնեցին Չատկից հաշված 5-րդ կիրակի մինչև այժմ:

Բերենք հիշյալ տարբերակները հաստատող տվյալներ Հայոց ձառնարկների և տոնացույցների խմբագրություններից: Գրիգոր Վկայասերի Տօնանամակի խմբագրության մեջ կարդում ենք. «Չորրորդ կիրակէին Յինացն՝ Երևման Սուրբ խաչին ի յերկնից եւ այս կանոն կատարի...»<sup>3</sup>:

759 թվահամարի Տոնացույցի խմբագրության մեջ գրված է. «Ի չորրորդ կիրակի(է) կամ ուր ամիսն բերէ. Երևման խաչին ի Մայիս է»<sup>4</sup>: Համարժեք տեղեկություններ ենք գտնում 179 թվահամարի տոնացույցի ընդօրինակության մեջ և 5414 թվահամարի ձառնարկի խմբագրության մեջ<sup>5</sup>:

Ըստ 752 թվահամարի գրչագրի՝ «Դ կիրակէն կամ ուր ամիսն բերէ, Մայիս է. Երևման Սուրբ խաչին տաւն է»<sup>6</sup>:

940 թվահամարի ձառնարկի խմբագրությունը ՄԵ (55) համարի տակ գրանցել է. «Ի չորրորդ կիրակէն. Երևման խաչին...»:

Տոնացույցների որոշ միջանկյալ խմբագրությունների գրչագրեր և նրանց հետագա ընդօրինակությունները բերել են տարբերակիչ տվյալներ: Այսպես, 767 թվահամարի Տոնացույցի խմբագրությունը վկայել է. «Չորրորդ կիրակէ, կամ՝ Ե, կամ ուր ամիսն բերէ. Մայիս է. Երևման սուրբ ինչին տօն է»<sup>7</sup>: Նույնարժեք տեղեկություններ ենք գտնում նաև որոշ գրչագրերում<sup>8</sup>:

Բերենք այն տեղեկությունները, որոնք Երևման ինչի տոնի օրը սահմանել են Չատկից հաշված 5-րդ կիրակին: Հովհաննես Սարկավազը, ինչպես տեսանք, Ազգաց կանոնները տվել է 1094 թվականի տոնական տարվա կտրվածքով, որտեղ Երևման ինչի տոնը տեղադրված է՝

1 Տե՛ս Ձեռ. №№ 2695, էջ 119ա, 4741, էջ 280բ, սպագիր՝ էջ 807-811:  
2 Ձեռ. № 7530, էջ 155բ:  
3 Ձեռ. № 979, էջ 303ա:  
4 Ձեռ. № 759, էջ 168բ-169ա:  
5 Տե՛ս Ձեռ. №№ 179, էջ 539ա, 5414, էջ 198ա:  
6 Ձեռ. № 752, էջ 164ա:  
7 Ձեռ. № 767, էջ 152բ:  
8 Տե՛ս Ձեռ. №№ 5667, էջ 120ա, 9838, էջ 166բ:

Մայիս 7 = Ահեկան 30 = Կիրակի: Պարզվում է, որ այն Չատկից հաշված 5-րդ կիրակին է:

Ըստ 2092 թվահամարի Տոնացույցի խմբագրություն. «(Ե)երրորդ կիրակի(է). Երևման խաչին տաւն է, ի Մայիսի է-ն է ի Յայսմատուրքն...»<sup>1</sup>:

936 թվահամարի Ճաշոցի խմբագրություն մեջ կարդում ենք. «Հինկ կիրակէն. Երևման խաչին...»<sup>2</sup>:

4164 թվահամարի Տոնացույցն ունի՝ «Հինգերորդ կիրակի և կամ ուր ամիսն բերէ, Մայիս է. Երևման սուրբ Խաչին տօն է...»<sup>3</sup>:

4459 թվահամարի գրչագրում գրված է. «Հինգերորդ կիրակէն և կամ իւր ամիսն բերէ Մայիս է. Երևման խաչին տօն է...»<sup>4</sup>:

Համարժեք վկայություններ կան 7203 և 508 թվահամարների տոնացույցերի գրչագրում, ինչպես և 7741 (էջ 246ա), 5455 (էջ 136ա), 650 (էջ 48ա) և այլ ճաշոցների ընդօրինակությունների մեջ: Այս կանոնին է հետևել նաև Սիմեոն Երևանցին. այն է՝ «Հինգերորդ կիրակէ. տօն է Երևման Սրբոյ խաչին»:

Վերոհիշյալ բնագրերի տվյալներից երևում է, որ Երևման Խաչի տոնի կանոնը դրվել է Զատիկից հաշված 4-րդ կիրակի 11-րդ դարում, իսկ 11-րդ դարի վերջում տեղափոխվել 5-րդ կիրակի, որոնք զուգահեռաբար գործել են մինչև 14-րդ դարի սկզբները, որից հետո հաղթել է 5-րդ կիրակիի տարբերակը: Մեզ հասկանալի է դառնում այդ տոնի փոփոխման տարրերակը: Բանն այն է, երբ Զատիկը կատարվել է Մարտի 22, 23, 24 և 25-ին Մայիս 7-ը գալիս է Պենտեկոստից առաջ՝ 2-րդ Մաղկազարդից և Համարաձուլից հետո, իսկ Զատիկը Մարտի 27, 28, և 29-ին կատարելու ժամանակ Մայիս 7-ը ընկնում է Համարաձուլից հետո կամ համընկնում է նրան (վերջին ամսաթվի դեպքում):

Իսկ երբ Զատիկը կատարել են Ապրիլ 25, 24 և 23-ին Մայիս 7-ը գալիս է Աշխարհամատրան տոնից առաջ և համընկնում է նրան (վերջին ամսաթվի ժամանակ): Զատիկից հաշված 4-րդ կիրակի սահմանողը նկատի է ունեցել այն համոզմանքը, որ Երևման Խաչի տոնը չանցնի Մայիսի 16-ից այն կողմ և մոտենա Մայիս 7-ին: Այդպես էր լինում, երբ Զատիկը տոնում էին Ապրիլ 25-16-ին ընկնող ամսաթվերին: Իսկ Զատիկից հաշված 5-րդ կիրակի սահմանողը նկատի է ունեցել Զատիկի Մարտ 27-ից հետո սկսվող օրերը, երբ Երևման Խաչի օրերը Ապրիլ 19-ից մոտենում էին Մայիսի 7-ին: Վերը տեսանք, որ Երևման Խաչի օրը Մայիսի 7-ին էին կատարվում, երբ Զատիկը կատարում էին Ապրիլ 16-ին (4-րդ կիրակի) և Ապրիլ 9-ին (5-րդ կիրակի):

Երևման Խաչի տոնի համար Զատիկից հաշված 4-րդ կիրակիին ընկնելու փաստեր չունենք բնագրերից, իսկ 5-րդ կիրակիի համար ունենք տարբեր ժամանակների:

Տեսանք, որ Հովհաննես Սարկավազը իր Ազգաց կանոններում տոնական տարին տվել է 1094 թ. կտրվածքով, երբ Զատիկը կատարվել է Ապրիլ 9-ին, իսկ Երևման Խաչի տոնը ընկել է Մայիս 7 = Ահեկան 30 = 5-րդ կիրակի:

«Պատմութիւն մեծի Րարունապետին Թումայի, զոր արարեալ է Կիրակոս բանասէր վարդապետն» վերնագիրը կրող բնագրում վկայվել է. «Ի թուականութեանս Հայոց մեծաց ՊՂ երրորդի Ե երրորդի եղև վախճան» Թովմա Մեծոփեցու, միաժամանակ ավելացրել է, որ նրա վախճանը

1 Ձեռ. № 2092, էջ 225ա:

2 Ձեռ. № 936, էջ 55բ:

3 Ձեռ. № 4164, էջ 169բ:

4 Ձեռ. № 4459, էջ 86ա:

եղել է «ի Մայիս ժե յաւուր Կիւակէին Երևման խաչին»<sup>1</sup>:

Գ. Հովսեփյանը գրում է նաև, որ Թովմա Մեծոփեցու վախճանը տապանաքարի վրա տրվել է ՊՂԶ թվականը, իսկ Փիլմաղելյանի մոտ առկա է նաև ՊՂէ թվականը<sup>2</sup>:

Հայոց ՊՂԵ թվականին (= 1446 թ.) Զատիկն ընկել է Ապրիլ 17-ին, իսկ Երևման Խաչի օրը՝ Մայիս 15-ին, Կիրակի, որը համարժեք է Զատիկից հաշված 5-րդ կիրակիին: Մի կողմից հաստատվում է Տոնացույցերի խմբագրությունների 5-րդ կիրակիի կանոնը, որպես Երևման Խաչի շարժական տոնի օր, մյուս կողմից բացառվում են Թովմա Մեծոփեցու վախճանի հետ կապված մյուս Հայոց տարբերակները, այն է՝ ՊՂէ-ն և ՊՂԶ-ն: Հայոց ՊՂԵ թվական (= 1446 թ.) = Ապրիլ 17 Զատիկ = Մայիս 15 Երևման խաչի տոն = Կիրակի՝ Զատիկից հաշված 5-րդ կիրակի հավասարումը ցույց է տալիս, որ Թովմա Մեծոփեցին վախճանվել է 1446 թվականի Մայիս 15-ին, իսկ տապանաքարը դրվել է Հայոց ՊՂԶ թվականին: Վերջապես Հայոց ՊՂէ թվականը գրչական սխալ է և պետք է սրբագրել՝ ՊՂԵ:

Երևման Խաչի տոնի կանոնը, ինչպես տեսանք Սիմեոն Երևանցին փոխ առավ Զատիկից հաշված 5-րդ կիրակին, որը և տոնվում է այժմ:

Այսպիսով Երևման Խաչի տոնը սկիզբ առավ 4-րդ դարի կեսերից հետո կապված Կյուրեղ Երուսաղեմցու թղթի հետ և մտավ Երուսաղեմի Տոնացույցի մեջ: 5-րդ դարի սկզբներին Սահակ կաթողիկոսը թարգմանեց և խմբագրեց Հիշյալ Տոնացույցը: Երևման Խաչի տոնը փոխ առնվեց և Մայիս 7-ին սկսեցին տոնել Հիշյալ տոնը Հայոց մեջ իբրև անշարժ տոն: 11-րդ դարում Երևման Խաչի տոնը վերածվեց շարժականի և սահմանվեց Զատիկից հաշված 4-րդ կիրակի, իսկ 11-րդ դարի վերջերից՝ Զատիկից հաշված 5-րդ կիրակի և Մայիս 7-ը փոխարինվեց ապրիլ-մայիսի ամսաթվերով: Զատիկից հաշված 4-րդ և 5-րդ կիրակիներին տոնվեց Երևման Խաչի տոնը 11-րդ դարի վերջից սկսած մինչև 14-րդ դարի սկզբները, որից հետո վերջնականորեն ընդունեցին Զատիկից հաշված 5-րդ կիրակին: Այդ փոփոխությունը կատարեցին այն պատճառով, որ Երևման Խաչի օրը չհամընկնի Աշխարհամատրան տոնի հետ, ինչպես և առաջ լինի քան Համարաձուլման տոնը: Հիշյալ տոնը որոշ պարբերությամբ տոնվում է անշարժ տոնի օրվա հետ:

\*\*\*

Սուրբ խաչին նվիրված երկրորդ տոնը սկսվում է Սեպտեմբեր 14-ին և կատարվում ութ օր, ըստ տոնացույցի կարգի: Քիչ առաջ տեսանք, որ Կյուրեղ Երուսաղեմցու թղթում գրված Կոստանդ կայսրին Երևման Խաչի օրվա առթիվ ամենահնագույն հիշատակությունն է պահպանվել Խաչի գյուտի մասին: Նա տեղեկացնում է, որ Խաչի գյուտը եղել է Կոստանդ կայսեր հոր Կոստանդիանոսի ժամանակ: Կյուրեղ Երուսաղեմցին այդ կապակցությամբ մանրամասն տեղեկություններ չի տալիս, բայց հետագայում գրված բնագրերից հայտնի է դառնում, որ խոսքը գնում է Խաչի գյուտի օրվա, այն է՝ Սեպտեմբերի 14-ի մասին: Կյուրեղ Երուսաղեմցու թղթից հետևում է, որ քննարկվող տոնը սկիզբ է առել ոչ ավելի վաղ քան 4-րդ դարի սկզբները: Երուսաղեմի տոնացույցի հայերեն թարգմանությունից, ինչպես կտեսնենք քիչ հետո, երևում է, որ այդ տոնը դեռևս առանձնացված չէր և նշվում էր նավակատեաց եկեղեցու 8 օրյա տոնաշարքի 2-րդ օրը: Սուրբ Խաչի օրվա կապակցությամբ պահպանվել են հետագայում գրված ավանդական պատմություններ: Դրանցից մեկն է. «Պատճառ ամենայաղթ սուրբ խաչին Քրիստոսի ի բարձրացուցեքն» վերնագիրը, կրող բնագիրը: Այնտեղ կարդում ենք. «... Յետ կատարման տնաւրինութեան Տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի և Համբառնալոյն յերկինս, փայտ

1 Տե՛ս Գարեգին Վ. Յովսեփեան, Թովմա Մեծոփեցու կյանքը (կենսագրական նոր նյութեր), Վաղարշապատ, 1914, էջ 1 և 11:

2 Աճղ, էջ Դ և ԻԶ:



փրկութեան խնամ թողեալ կայր ի Գողգոթա, իբր զգործի դատապարտելոյ և մահապարտի: Եւ ի ժամանակի բուսաբեր երկրի ծաղկազարդ գարնայնոյ սովոր են մանգունք բաւսնող ի վերա դալարոյ: Յայնմ յեղանակի մանուկ մի կաղ և սողուն ի ծնէ երթեալ ընդ ընգերսն յարեցաւ ի խաչն Աստուածընգալ, և առ ժամայն յարուցեալ գնայր, և վագեր և աւրհներ զԱստուած, և գոհանայր զկեանսակիր նշանեն, զոր տեսեալ հաւատացելոցն տային գոհութիւն Աստուծոյ: Եւ ընթացեալ ի համբաւս յայս կաղք և կոյք և բորոտք առհասարակ բժշկեցան և ոչ գրեցան, որպէս և ոչ տերունիքն ամենայն և ոչ Ստեփանոսին առնու: Ապա Յակորոս եղայր Տեառն առ իւր զխաչն: Իսկ կոյր և խուլ ժողովուրդն հրէից, ըստ Եսայայ, թէ ով է կոյր և խուլ, եթէ ոչ որդին Յակորայ, յափշտակեալ զխաչն կեանսունակ տարեալ եղին ի դրան տաճարին, որ կոչեիր Գեղեցիկ: Անդամալոյժ մի նստեիր անդ, վասն ողորմութեան, յերկարեալ ի տեղոջն նիրհեց քնով, յարեցեալ ի խաչն և առ ժամայն յարուցեալ ոստեալ յանկարծակի հաստատեալ անդամաւքն, յարուցեալ գնայր և փառաւորել զՔրիստոս: Եւ նոյն ժամայն ուրուկ մի յարուցեալ թափեաց զապականել մորթն և յաճախեաց գոհութիւն աստուածաին խաչին: Զայն տեսեալ բարի ատեաց հրէիցն տարան եղին ի գերեզմանին: Եւ վեմն կափարիչ ի վերա, և լոյս հրաշալի ելաներ ընդ ձերպս վիմին: Եւ որ տեսեալ նեղեալքն ուսան գալ և ողջանալ: Եւ կանկնեցին հրեայքն զպատկերն Ափրոզիտեա ի վերայ, զի անդ կարծեսցին սքանչելիքն: Յայսորիկ յաւուրսս հաւատա Պատրոնիկեայ կինն Կղաւղեայ. բանիւ սուրբ առաքելոյն Պետրոսի, և մեծաւ յուսով գա ի Հռոմէ յերուսաղէմ ուստերաւք և դստերաւք: Եւ գտանէ ի գերեզմանին զԱստուածագեն փայտ խաչին եղեալ ընդ աւազակացն, զի իբրև զմի ի նոցանէ կարծեսցի որով մտաւք և զՏերն ընդ աւազակսն խաչեցին: Եւ խնդրեալ տիկինն բարեպաշտ մտանէ ի տեղի սուրբ Յարութեան, և մեռանի դուստրն և յարութեամբ դստերն յայտնի խաչն Քրիստոսի, և պարտաւորեալ ամաչէ սատանա: Ապա խնդրեաց մասն ինչ յառաքելոյն ի կենսունակ խաչէն, և առեալ չոգաւ ի Հռոմ: Իսկ ըստ պայագատութեան քրիստոնեութեան ժառանգեն զմասն մշտապայծառ Հռիփսիմէ և Գայիանէ, որք էին յազգէ Պատրոնիկեա երկոքին: Զի սուրբն Գաիանէ մայր գոլով վանացն Պաւղոսի առաքելոյ և ունեւր ընդ ինքեան Յ (300) կուսանք: Եւ զսուրբ Հռիփսիմէ զազգական և զսան իւր սնուցաներ: Անդ արկեալ ի պարանոց նորա զմասն Պատրոնիկէ մածեալ արեամբ և տուեալ գնա յաղախնութեան Աստուածածնին, եւ ի հասանել վտանգին առնու և փախչի յԱղէքսանդրիայ և գա յերուսաղէմ և Յայրն և ի Գեթսաման ի աղաւթեն: Եւ հրաման առնու ի տեսեան, թէ գնացէք ի վիճակն Թադեոսի առաքելոյ: Եւ գան յեղեսայ, և յուղք մնացին ի տեղոջն ուր պատկերն էր Փրկչին, և այլքն գան յԱյրարադ: Իսկ որք ի տեղլոջն մնացին կոտորեացն ի Դիոկղիտիանոսէ. քոյր Գայիանեա Զոյի անուն և այլ բազումք ընդ նմայ: Եւ այն է վարագա խաչն, զոր ի գալն իւրեանց թողին ի Տոսք գաւառ ի պարգև մեծ Հայաստան աշխարհիս: Եւ ինքեանք մեզ նախաչաւիչք բարեաց և գրաւականք փրկութեան մերոյ, ծնեայցք սրբութեամբ զազգս աւտարացեղս յորդիս Աստուծոյ: Իսկ վախճանեալն Կղաւղեայ առնու զթագաւորութիւն Ներոն և հրեայքն վստահացեալ սպանին զՅակորոս և յետ սպանման նորա առեալ զխաչն տարան թաղեցին ի գագաթան տեղոջ մինչև ի ժամանակս բարեպաշտ թագաւորին Կոստանդիանոսի, որ կոչի նա ամ խաղաղութիւն եկեղեցոյ: Ուր և Քրիստոսասեր Դիսոյն ելեալ յերուսաղէմ ի խնդիր Աստուածընգալ նշանին և գտեալ բազում խուզիւ ի ձեռն Յուզափ, որ կոչեցաւն Կիւրեղ: Եւ այնուհետև հրամանաւ որդոյն իւրոյ սրբոյն Կոստանդիանոսի, մեծափափագ տենչանք շինէ ի սուրբ տեղիսն հրաշագան եկեղեցի և կարգէ տաւն Նաւակատեաց խաչի և եկեղեցոյ ի միասին ամենաժողով ի Սեքտեմբեր ի Դեք տասանն (14), զոր և տաւնեմքս, զոր ինչվերաց անուանեմք, զոր վերացուցանեմք քահանայապետն ի պահպանութիւն հաւատացելոց, զոր և մեք իսկ առնեմք ըստ սովորութեան, կամ թէ մինչև յայս խաչիւ ելանէ պատարագաւղն զկնի արձակման պատարագին յայսմաւրէ վերացուցան: Բայց ասան թէ այս Պատրոնիկէ գիւտն է և ոչ Հեղինին, վասն որոյ ի կիւրակէի տաւնեմք: Զի նա ի կիւրակէի եգիտ, իսկ Հեղինին այն է յետո տաւնեմք: Սակայն տաւն հանդիսաւոր և երևե-

լի կարգեցաւ ի Սեքտեմբերի Դեք տասանն (14)»<sup>1</sup>:

Ի դեպ Մկրտիչ Ավգերյանը տալիս է Սուրբ Խաչի տոնների համառոտ պատմությունը, որն այդ տոնաշարքի ուսումնասիրությունն առաջին փորձն է <sup>2</sup>:

Ներկայացնենք Սուրբ Խաչի օրվա կապակցությունը հնագույն վկայությունները:

«Կանոնք ընթերցուածոց»-ում գտնուում ենք առաջին տեղեկությունը, այն է՝ «Սեպտեմբեր ամսոյ, որ աւր ժԳ. Նաւակատիք սրբոյ տեղեացն Երուսաղէմի, զուրթ աւր լինի:

Զառաջին աւուրն ի սուրբ Յարութեան... Եւ ի վաղիւ անդր յերկրորդում աւուրն ժողովին ի սուրբ Մարտանն եւ նոյն կանոն կատարի: Եւ ի նմին աւուր ցուցանեն զպատուական կենսատու Սուրբ Խաչն ամենայն ժողովոցն»<sup>3</sup>:

Ուսումնասիրությունն մեջ հիմնավորեցինք, որ Սահակ կաթողիկոսը թարգմանեց և խրմբագրեց Երուսաղեմի Կանոնքը և այնտեղից վերցրեց միայն երկու օրվա կանոնները, որտեղ Սուրբ Խաչի տոնը առանձնացված է և մտել է Երուսաղեմի Նավակատեաց եկեղեցոյ տոնաշարքի երկրորդ օրվա կանոնի տակ, որն է Սեպտեմբեր 14-ը: Պարզ է, որ Երուսաղեմի Տոնացուցի մեջ, որը գալիս է 4-րդ դարերից խաչի գյուտի օրը համարել են Սեպտեմբերի 14-ը և Սուրբ Խաչը ցուցադրել են հավատացյալներին: Ակնհայտ է, որ այդ տոնացույցում ևս Սուրբ Խաչի օրը չի անջատվել Նավակատեաց եկեղեցու տոներից: Սուրբ Խաչի տոնը հավանաբար վերածվեց առաձին տոնական կանոնի Հովհան Օձնեցու կողմից խմբագրված Ճաշոց-Տոնացույցի մեջ: Այդ երևում է Ատոմ Վարագեցու Հռոմադիրից, որը ինչպես ցույց տվեցինք կրել է նաև Հովհան Օձնեցու ազդեցությունը և նախատեսել է.

1. «Սեպտեմբերի ժԳ. Նաւակատիք Սուրբ տեղեաց Երուսաղէմի»

2. «Սեպտեմբեր ժԴ. Սրբոյ Խաչին»<sup>4</sup>:

Վենետիկի 169 թվահամարի «Կանոնք...»-ում, որն ընդօրինակվել է 994 թվականին, հիշյալ կանոններում նկատվում է փոփոխություն, թեև հետևել է հնագույն «Կանոնք ընթերցուածոց»-ներին: Այնտեղ գրված է. «Սեպտեմբերի ամսոյ, որ աւր ժԳ. Նաւակատիք սուրբ տեղեացն Երուսաղէմի, Յարութեանն, եւ այս կանոն կատարի... Սեպտեմբերի ամսոյ, որ աւր ժԴ (ըստ Ս. Ճեմճեմյանի՝ երկու բառ անընթեռնելի է, որը վերականգնում ենք՝ «երկրորդ աւուրն») Կիւրակէին ժողովին ի սուրբ Մարտանն եւ ցուցանեն զպատուական փայտ Խաչին ամենայն մարդկանն եւ այս կանոն կատարի...»<sup>5</sup>:

Սուրբ Խաչի տոնի համար նախկին Հուլյան ամիս-ամսաթիվը, այն է՝ Սեպտեմբեր 14-ը, պահպանվել է, տոնի կանոնը կատարել են կիրակի օրը, այսինքն՝ հաստատուն օր է ընդունվել շաբաթվա օրը, իսկ ամսաթիվը դարձել է շաբթական, այլ խոսքով հիշյալ տոնը տեղափոխվել է Սեպտեմբեր 14 ± 3 օր կիրակի և տատանվել է Սեպտեմբեր 11-17-ի սահմաններում նայած տարի: Սուրբ Խաչի տոնը անշարժից վերածվեց շաբթականի 10-րդ դարի վերջերին: Սակայն իր վերջնական հաստատումն ստացավ 11-րդ դարի վերջերից:

Քննենք Արիստակես Լաստիվերտցու տեղեկությունները, որոնք հնարավորություն են տալիս ոչ միայն հստակ պատկերացում կազմել Սուրբ Խաչի տոնի կատարման մասին, այլև վերականգնել նրա բնագրում հետագայում կատարված գրչական սխալները ու տալ ականա-

1 Ձեռ. № 3524, էջ 148բ-150ա:

2 Տե՛ս Մ. Ավգերյան, Լրումն լիակատար վարաց եւ վկայաբանութեանց սրբոց, հատոր ԺԱ, Վեճեսիկ, 1814, էջ 208-214 և այլն:

3 Ձեռ. № 985, էջ 275-ա-276բ:

4 Ձեռ. № 832, էջ 221ա-225ա:

5 Տե՛ս Վեճեսիկի 285 թվահամարի ձեռագիր, տե՛ս Ս. Մեմճեմյան, Աշխ. աշխ., էջ 595-606:

տես հեղինակի կողմից նկարագրած պատմական տեղեկությունների ճշգրիտ պատկերը:

Արիստակես Լաստիվերտցին վկայությունները տալիս է նաև տոնական և շաբաթվա օրերով, որոնց վրա ուսումնասիրողները հարկ եղած ուշադրությունը չեն դարձրել, մինչդեռ դրանց միջոցով տեղեկություններն ստանում են կոնկրետ բովանդակություն և վեր են ածվում բացարձակ տարեթվերի:

Նա սելջուկյան ավարառական արշավանքների կապակցությամբ գրում է.

1. «Եւ ի գալ միւսում ամին ժողովեցան իբրև արծուիք ի վերայ կերակրոյ անհամար բազմութիւնք զօրաց աղեղնաւորաց և սուսերամարտից. և մեծաւ խրախուսանօք ճեպ ի ճեպոյ ելին յաշխարհս մեր յամսեան սեպտեմբերի, ի տօնի սրբոյ ինչիս յաւուր չորեքշաբթու»<sup>1</sup>:

2. «Զկնի այս պատմութեանս, ի գալ տարւոյն էր թուականիս մերոյ ամբ հինգհարիւր երեք: Ի նոյն ամիսն և ի նոյն քանիսն ամսոյն, ուր գառաջին աշխարհս գերի տարան, զԱրծն այրեցին, և զայլ քաղաքս և զաւանս, խաղաց գազանն մահաշունչ արինարբու և մարդախոշոշն սուլտան անհամար զօրօք, փղօք և կառօք և երիվարօք, կանամբք, և որդւովք և բազում պատրաստութեամբ: Զանց արարեալ զԱրծիշաւ և զԲերկրաւ՝ եկեալ բանակեցաւ շուրջ զքաղաքաւն, որ կոչի Մանազկերտ, ի գաւառն Ապահունեաց, և կալաւ բովանդակ զընդարձակ վայրս դաշտացն: Եւ արձակեաց ասպատակս յերեսին կողմանս աշխարհիս, ի հիւսիս՝ միջև ի լեռնն որ կոչի Պարխար և մինչև ցստորոտն Կովկասու, և յարեմուտս մինչև յանտառն Ծանեթոյ, իսկ ի հարաւ մինչև յանտառն Ծանեթոյ, իսկ ի հարաւ մինչև ցՍիմն կոչեցեալ լեռնն. և բովանդակ կալեալ զաշխարհս իբրև հնձօղք ոճոյ ագարակի»<sup>2</sup>: Որոշենք վերոհիշյալ տարիները ելնելով Սուրբ ինչի տոնից, որը կատարել են չորեքշաբթի օրը: Վերջինս ցույց է տալիս, որ Սուրբ ինչի տոնը նշել են ամսաթվով, այսինքն՝ անշարժ տոնական օրով, ավանդական ձևով Սեպտեմբերի 14-ին: Եթե Սուրբ ինչի կիրակի կատարեին, ապա Արիստակես Լաստիվերտցին երկու անգամ չէր կրկնի չորեքշաբթի օրվա նշումը: 2-րդ վկայության մեջ հայոց թվականը՝ ՇԳ-ն զուգահեռ է դրված Սուրբ ինչի օրվան, ուստի հեշտությամբ կստանանք կատարված դեպքի տարին, ամսաթիվը և շաբաթվա օրը:

Պարզվում է, որ սուլթան Տուղրիլ-Բեկը ավարառական արշավանքը սկսել է Հայոց ՇԳ թվականին, որը համարժեք է ներկա 1054 թվականին: Այդ տարի Սեպտեմբերի 14-ը չորեքշաբթի է և Սուրբ ինչի տոնի օրը:

Նա նախորդ գլխում նկարագրել է Կարսի ավերումը, որն ըստ հեղինակի կատարվել է նախորդ տարի, այսինքն՝ Հայոց ՇԲ թվականին: Բայց դեպքերը կատարվել են «ի գալ մեծի յայտնութեան տեառն մերոյ»<sup>3</sup>, ուստի Կարսի ավերումը եղել է 1054 թվականի Հունվար 6-ին, այսինքն՝ Հայոց ՇԲ թվականի վերջին ամիսներին, որն ընկնում է հուլյան հաջորդ տարի:

Առաջին վկայության «ի գալ միւսում ամին»-ը վերաբերում է Հայոց ՆՂԷ թվականին (= 1048թ.), որովհետև հեղինակի նկարագրած նախորդ և հաջորդ գլուխների դեպքերը, այն է՝ Հայոց ՆՂԴ-ՇԳ թվականների ընթացքում, Սուրբ ինչի տոններն ընկել են չորեքշաբթի (Սեպտեմբեր 14) միայն Հայոց ՆՂԷ (=1048 թ.) և ՇԳ (=1054 թ.) թվականներին:

Ելնելով Արիստակես Լաստիվերտցու հիշյալ վկայություններից և մեր կողմից կատարված հաշվումների արդյունքներից կարելի է պնդել, որ հիշյալ տարիներին և առհասարակ Արիստակես Լաստիվերտցու ապրած ժամանակահատվածում Սուրբ ինչի տոնը կատարել են նախորդ շրջանի նման, այսինքն՝ Սեպտեմբերի 14-ին՝ անշարժ տոնական օրով և փոխվել են միայն շա-

<sup>1</sup> Տե՛ս Պատմություն Արիստակեսի Լաստիվերտցու, աշխ. Կ. Յուզբաշյանի, Ե., 1963, էջ 69:  
<sup>2</sup> Տե՛ս Աճ. էջ 84-85:  
<sup>3</sup> Տե՛ս Աճ. էջ 83:

բաթվա օրերը:

Թեև Վենետիկի 169 թվահամարի գրչագիրը քննելիս տեսանք, որ 10-րդ դարի վերջերից ընթացքի մեջ է եղել Սուրբ ինչի օրը Սեպտեմբերի 14 ± 3 օր կիրակի տոնելու խնդիրը: Այլ խոսքով Սուրբ ինչի տոնը անշարժից շարժականի վերածվելու ճանապարհին 10-րդ դարի վերջը 11-րդ դարի 3-րդ քառորդը կարելի է անցման շրջան ընդունել:

Այժմ վերականգնենք Արիստակես Լաստիվերտցու բնագրի նախնական տարեթվերը: «Ի գալ միւսում ամին»-ի. այն է՝ հայոց ՆՂԷ թվականի (= 1048 թ. Սեպտեմբեր 14, չորեքշաբթի) հիմնավորումը հնարավորություն է տալիս վերականգնել նախորդ տարին, այսինքն հայոց ՆՂԶ թվականը: Այլ գրչագրերում գրված է. «Քանզի յամի չորեքհարիւրորդի իննսներորդի եօթերորդի (կամ ութներորդի), որը չի արձանագրել հրատարակողը, բայց ձեռագրերի համարների նշումներով բերել է Գ. Մանուկյանը աշխարհաբար թարգմանության ծանոթագրությունների մեջ) թուականիս մերոյ՝ որ էր երկրորդ ամ գերութեանն մերո...»<sup>1</sup> (տե՛ս, էջ 67):

Որ հիշյալ տեղը պետք է սրբագրել հայոց ՆՂԶ թվական, երևում է մի կողմից «ի գալ միւսում ամին»-ից, այսինքն՝ հայոց ՆՂԷ թվականից հանելով մեկ տարի, մյուս կողմից բյուզանդացիների տիրապետության, որն ըստ հեղինակի եղավ հայոց ՆՂԴ թվականին<sup>2</sup> գումարելով երկու տարի:

Վերոհիշյալ հատվածում Արիստակես Լաստիվերտցին համաժամանակյա թվականներով է ներկայացրել տարեթվերը, իբրև «երկրորդ ամ գերութեան մերոյ», այն է՝ բյուզանդացիների տիրապետության: Հետևում է, որ «ի սոյն ամս բացաւ դուռն բարկութեան յերկնից ի վերայ աշխարհիս մերոյ»-ն<sup>3</sup> հայոց ՆՂԶ թվականն է (=1047 թ.), որի ընթացքում սելջուկները երկու նվազով մեկը՝ Հասան ինուլի, մյուսը՝ Իբրահիմ Յանալի գլխավորությամբ ավարառական արշավանքներ են կատարել Հայաստանի տարբեր վայրերի վրա: Արիստակես Լաստիվերտցին սելջուկների արշավանքների դեկավարների անունները չի տալիս:

Հասկանալի է դառնում նաև 10-րդ գլխի վերջին հատվածում սպրդած գրչական սխալն, որը նախնական բնագրի հայոց ՆՂԶ թվականի փոխարեն ունի հայոց ՆՂԳ թվականը<sup>4</sup>: Կատարվել է Զ-ն Գ-ի փոխվելու գրչական սխալ: Մանավանդ հայոց ՆՂԶ թվականի դեպքերից փոքր ինչ առաջ Արիստակես Լաստիվերտցին բյուզանդացիների կողմից Անիի գրավումը դրել է հայոց ՆՂԴ թվականին<sup>5</sup>: Պարզ է, որ Կամենասը (=Կեկավմեն) Ասիտին փոխարինել է հայոց ՆՂԶ (=1047 թ.) տարում:

Քննարկված տարեթվերի վերականգնումը, որը կատարեցինք համառոտ, կարևոր է նաև հայոց կաթողիկոսների տարիները ճշգրտելու տեսանկյունից: Ըստ Արիստակես Լաստիվերտցու տվյալների Սարգիս կաթողիկոսը մահացել է հայոց 470 թվականի ձմռանը (Հունվար 6-Մարտ 20-ի միջև), որը 1022 թվականն է: Նա երկու տարի առաջ՝ իր կենդանության ժամանակ, կաթողիկոս է ձեռնադրել Պետրոս Գետադարձին, այն է՝ 1020 թվականին (1022-2 կամ 470-2), որը հայոց 468 թվականն էր: Ասողիկի հաղորդման համաձայն Սարգսին կաթողիկոս են ձեռնադրել հայոց 441 թվականին Ջատկից հետո եկող երկուշաբթի կամ երեքշաբթի, որը համարժեք է 992 թվականի Մարտի 27-ին կամ Մարտի 28-ին:

<sup>1</sup> Տե՛ս Աճ. էջ 67:  
<sup>2</sup> Տե՛ս Աճ. էջ 61:  
<sup>3</sup> Տե՛ս Աճ. էջ 64:  
<sup>4</sup> Տե՛ս Աճ. էջ 63:  
<sup>5</sup> Տե՛ս Աճ. էջ 61:

Արիստակես Լաստիվերտցու նախնական բնագրի մեր վերականգնած տարբերակների համաձայն Կամենաս-Կեկավմենը եկել է Անի և փոխարինել Ասիտին հայոց 496 թվականին (=1047 թ.): Նա անբարյացակամ վերաբերմունք է դրսևորել Պետրոս Գետադարձ կաթողիկոսի նկատմամբ, դեռ ավելին Անիից աքսորել է՝ ուղարկելով Կարինի գավառի Արծն ավանը:

Պետրոս Գետադարձը իր նոր նստավայրն է հասել Աստուածայայտութեան տոնի մոտերքը և այնտեղ կատարել այդ տոնը, որը հայոց 496 թվականի կտրվածքով համարվեց է 1048 թվականի Հունվարի 6-ին:

Ըստ ականատեսի՝ Արիստակես Լաստիվերտցու, տվյալների Հունվարի 6-ին Պետրոս Գետադարձին կալանավորել են և բանտարկել «Խաղտոյ Առիճ» բերդում<sup>1</sup>: Անիից կալանավորել են նաև նրա քեռորդուն՝ Խաչիկին, որը փոխանորդն էր, բերել են նոյն գավառ և բանտ են նստեցրել «Սեալ Քար» բերդում<sup>2</sup>: Նրանք բանտարկված մնացել են «Մինչև մերձ ի Զատկին»<sup>3</sup>, այսինքն՝ մինչև Ապրիլ 3-ը, որից հետո նրանց տարել են Կոստանդնուպոլիս:

Արիստակես Լաստիվերտցին առանձին հատվածի մեջ՝ 14-րդ գլխում, սելջուկների 1048 թ. արշավանքները նկարագրելուց հետո և Կարսի ավերումից առաջ (1054 թ. սկիզբ), տեղեկացնում է, որ Պետրոս Գետադարձին Կոստանդնուպոլսում պահեցին երեք տարի, այսինքն՝ 1048-1051 թթ. (1048+3), որից հետո Աստու Արծրունու միջնորդությամբ արձակեցին և եկավ հաստատվեց Սեբաստոպոլսի Սուրբ Խաչում:

Նա այնտեղ մնացել է երկու տարի և մահացել, այն է՝ 1051-1053 թթ. (1051+2): Պարզվում է Պետրոս Գետադարձի մահվան տարին, այսինքն՝ 1053 թվականը:

Այդ տարում կաթողիկոս է դարձել Խաչիկը, որին Պետրոս Գետադարձը ձեռնադրել էր դեռևս 1047 թ.: Անիից աքսորվելու ժամանակ:

1053 թվականին, Խաչիկի կաթողիկոս դառնալը լսելուց անմիջապես հետո, Բյուզանդիայի թագավոր Կոստանտին Մոնոմախը իր պատվիրակի միջոցով նրան բերման է ենթարկում կրկին Կոստանդնուպոլիս: Պատճառը, ըստ Արիստակես Լաստիվերտցու, Պետրոս Գետադարձի գանձերն էին և հայոց եկեղեցուն հարկի տակ դնելը: Խաչիկ կաթողիկոսը երեք տարի, այն է՝ 1053-1056 թթ. (1053+3) բանտարկված է եղել Կոստանդնուպոլսում, որից հետո նրան արձակեցին և նստավայր տվեցին 2-րդ Հայքի Տարանտա գավառում (ըստ այլ աղբյուրների՝ Թավաբլուրում):

Արիստակես Լաստիվերտցին այլևս չի անդրադառնում Խաչիկ կաթողիկոսի գործունեությանը, թեև մանրամասն նկարագրում է հետագայի դեպքերը մինչև 1064/5 թթ. (իսկ համառոտ 1071 թ. իրողությունները հատկապես Մանազկերտի ճակատամարտը): Անկասկած է, որ 1064/5 թթ. Խաչիկ կաթողիկոսը դեռևս մահացած չէր:

Մյուս ականատեսի Մատթեոս Ուռհայեցու տեղեկությունների համաձայն Գրիգոր Վկայասերը՝ Խաչիկ կաթողիկոսի հաջորդը, մահացել է Գրիգոր Լուսավորչի պահաքի շաբաթ օրը Տրէ ամսին, այն է՝ հայոց 555 թվականին (=1106 թ.): Մատթեոս Ուռհայեցին Գրիգոր Վկայասեր կաթողիկոսի մահը դրել է հայոց 554 թվականի տակ: Նրա մոտ հայոց և քրիստոնեական թվականի տարբերությունը 552 է, ուստի՝ 1106 թվականին (554+552): Հայոց 554 թվականին Գրիգոր Լուսավորչի պահաքի շաբաթ օրը ընկել է ոչ թե Տրէ ամսին, ինչպես վկայում է Մատթեոս Ուռհայեցին, այլ Արաց ամսին: (Աւելի մանրամասն տես Գրիգորի պահաքի մեջ):

Այնպես որ, նա նկատի է ունեցել 1106 թվականը: Ըստ նույն աղբյուրի Գրիգոր Վկայասերը կաթողիկոս էր 40 տարի, այն է՝ 1066-1106 թվականներին (1106-40=1066), ուստի Խաչիկի

<sup>1</sup> Տե՛ս, Աճ. էջ 64:

<sup>2</sup> Տե՛ս, Աճ. էջ 64

<sup>3</sup> Տե՛ս, Աճ. էջ 64

կաթողիկոսության վերջին տարին 1066 թվականն է:

Ականատես պատմիչների վկայությունների և մեր ստույգ հաշվումների համաձայն 10-րդ դարի վերջի 12-րդ դարի սկզբներին հայոց կաթողիկոսների շարքը և ժամանակագրությունը հետևյալ տեսքն ունի՝

Սարգիս-992-1020 թթ.

Պետրոս-1020-1053 թթ.

Խաչիկ-1053-1066 թթ.

Գրիգոր-1066-1106 թթ.

Ինչպես նկատելի է վերոհիշյալ տարեթվերը էպպես տարբերվում են ընդունված ժամանակագրությունից:

Այս համառոտ ակնարկը կատարեցինք այն պատճառով, որ կրկին անգամ ցույց տանք տոնների, ամսաթվերի և շաբաթվա օրերի համադրության միջոցով ստացված արդյունքների արդյունավետությունը ոչ միայն աղբյուրագիտական, այլև պատմական զանազան խնդիրների լուծման գործում:

Շարունակենք Սուրբ Խաչի տոնի քննությունը:

Սուրբ Խաչի մեկօրյա կանոնը վերածվեց 8 օրյա 11-րդ դարում, որը հիմնավորվում է Վենետիկի 285 թվահամարի գրչագրով, ինչպես և Գրիգոր Վկայասերի Տոնանամակի տվյալներով: «Կանոնք ընթերցուածոց»-ի խմբագրություններից մեկում, որը Վենետիկի 285 թվահամարի ձեռագիրն է, տոնական տարվա վերջում ավելացվել է Սուրբ Խաչի տոնի ութօրյա կանոնները շաբաթվա օրերով<sup>1</sup>: Այդ 8 օրյա կանոնները վերականգնել ենք հայոց տոնական օրերի քննության մեջ առանձին գլխի տակ:

Գրիգոր Վկայասերի Տոնանամակի խմբագրության մեջ վկայվել է սուրբ Խաչի ութօրյա կանոնները փոքր ինչ այլ ձևակերպմամբ, այն է՝

«Նորին [Սեպտեմբերի] ԺԴ. Տաւն պատուական և Սուրբ Խաչին Քրիստոսի Աստուածոյ մերո...: Երկրորդ աւուրն...» Երրորդ աւուրն...: Չորրորդ աւուրն...: Հինգերորդ աւուրն...: Ի վեցերորդ աւուրն...: Եւթներորդ աւուրն...: [Ութներորդ աւուրն]...»<sup>2</sup>:

Վենետիկի 639 թվահամարի գրչագիրը, որը Գրիգոր Վկայասերի և Կիրակոս Դրագարկեցու Տոնանամակների խմբագրությունների թվին է պատկանում և ընդօրինակվել է 12-րդ դարի 3-րդ կամ 4-րդ քառորդին, Սուրբ Խաչի համար արձանագրել է հետևյալ կարգը.

«Սեպտեմբերի ԺԴ. Նաւակատիք. սուրբ Խաչին...: Սեպտեմբեր ԺԴ. Տուցանի Փրկչական Սուրբ Խաչն...»

Երկուշաբթի աւր. ժողովին ի սուրբ Մատրանն եւ այս կանոն կատարի...»

Երեքշաբթի [աւր] ժողովին ի սուրբ Մատրանն եւ այս կանոն կատարի...:

Չորեքշաբթի աւր ժողովին ի սուրբ Սիովն եւ այս կանոն կատարի...:

Հինգշաբթի [ա]թի աւր ժողովին ի սուրբ լեառն Զիթենեաց եւ այս կանոն կատարի...:

Ուրբաթ աւր ժողովին ի սուրբ Գողգոթայ եւ այս կանոն կատարի...:

Շաբաթ աւր ժողովին ի սուրբ Յարութիւն եւ այս կանոն կատարի...»:

Հիշյալ կանոններից պարզ երևում է, որ սուրբ Խաչի տոնի առաջին օրը կատարել են կի-

<sup>1</sup> Տե՛ս Վենետիկի 285 թվահամարի ձեռագիրը, Ս. Մեմենյան, Աշխ., էջ 595-606:

<sup>2</sup> Ձեռ. № 979, էջ 367բ-374ա:

րակի, թեև ունի միայն Սեպտեմբեր 14-ին նշումը:

Հետագայում ընդօրինակված ճաշոցները կրկնում են նախորդներին Հնագույն և նորագույն խմբագրություններով նաև ամսաթվերով, որոնք գրանցել է հետևյալ կարգը.

«Սեպտեմբեր ԺԳ. Նաևակատիք սրբոյ Յարութեան Երուսաղէմի մեծ եկեղեցոյն... սեպտեմբեր ԺԴ. Տաւն է մեծահոգակ վերացման սուրբ և պատուական ինչին Քրիստոսի Աստուծոյ...: Երկրորդ աւուրն...»

Երրորդ աւուրն...

Չորրորդ աւուրն...

Հինգերորդ աւուրն...

Եւթներորդ աւուրն...» (940 թվահամարի գրչագիր ՃԻԱ-ՃԻԸ համարների տակ)

936 թվահամարի գրչագրում կարդում ենք. «Ինչին շաբաթ աւրն. Նաևակատեաց... Սուրբ ինչին...»<sup>1</sup>:

6235 թվահամարի ճաշոցում գրված է. «Սեպտեմբերի ԺԳ. Սուրբ ինչին...»<sup>2</sup>:

Հիշյալ ամսաթիվը գրչական սխալ է, այլ սուրբ ինչի տոնը կատարել են Սեպտեմբերի 13-ին կիրակի օրը: 2948 թվահամարի ձեռագրում կարդում ենք. «Յերկրորդում աւուր կիրակէին ժողովին ի սուրբ Մարտիրոսն և ցուցանի պատուական փայտ խաչին ամենայն ժողովըրդեան» այնուհետև երկուշաբթի - շաբաթվա կանոնները<sup>3</sup>:

5479 թվահամարի ճաշոցում գրված է. «Սեպտեմբեր ամսոյ որ աւր ԺԴ. Նաևակատիք սուրբ եկեղեցոյ և այս կանոն կատարի...»<sup>4</sup>:

Այստեղ ևս Սեպտեմբերի 14-ը գրչական սխալ է, այլ Սուրբ ինչի տոնը կատարվել է Սեպտեմբերի 15-ին՝ կիրակի: Համարժեք տվյալներ կան Սուրբ ինչի և նրա օրերի կապակցությամբ այլ ճաշոցների խմբագրությունների մեջ<sup>5</sup>:

Հայոց ճաշոցների տվյալներից պարզ է դառնում, որ վաղ շրջանում տոնվող նավակատեաց եկեղեցու տոնական օրերը վեր են ածվել սուրբ ինչի տոնական օրերի: Միայն Հիշյալ տոնին նախորդող շաբաթ օրն է պահպանել Երուսաղեմի եկեղեցիների հիշատակը:

Հայոց Յայսմավուրքների խմբագրությունները պահպանեցին Սեպտեմբերի 14-ը և նրան համարժեք դարձրին Հայոց անշարժ տոմարի Հոռի 5-ը, սակայն Սուրբ ինչի տոնը արդեն նշվում էր կիրակի և տատանվում էր Սեպտեմբեր 11-17-ի սահմաններում նայած տարի:

Ներկայացնենք որոշ տվյալներ քաղված Յայսմավուրքների տարբեր խմբագրություններից:

Ըստ Վենետիկի 1048 թվահամարի գրչագրի՝ «[Սեպտեմբերի] ԺԴ. Տաւն է հոգակաւոր բազմաժողով վերացման սուրբ և պատուական խաչին Քրիստոսի...»:

Ըստ 3082 թվահամարի համառոտ Յայսմավուրք՝ «Նոր[ին] Հոռի] Ե. Տաւն վերացման սուրբ ինչին... ԺԴ [Սեպտեմբեր]» (էջ 390):

Ըստ 179 թվահամարի համառոտ Յայսմավուրքի՝ «[Հոռի] Ե. Տաւն վերացման սուրբ ինչին...»:

1 Ձեռ. № 936, էջ 94բ-97բ:

2 Ձեռ. № 6235, էջ 73ա:

3 Տե՛ս Ձեռ. № 2948:

4 Ձեռ. № 5479, էջ 217բ:

5 Տե՛ս Ձեռ. №№ 5414, էջ 334բ-346ա, 7741, էջ 391ա-397բ, 939, էջ 443բ-459բ, 4437, էջ 182բ-189բ, 4698, էջ 267ա-267բ և այլն:

չին Քրիստոսի Աստուծոյ մերոյ. ԺԴ [Սեպտեմբեր]»:

Ըստ 4741 թվահամարի գրչագրի՝ «Հոռի Ե եւ ի սեպտեմբեր ԺԴ. Տօն է սուրբ և պատուական խաչին Քրիստոսի» (էջ 29ա):

Ըստ Գրիգոր իլլաթեցու Յայսմավուրքի խմբագրության՝ «Հոռի Ե եւ Սեպտեմբեր ԺԴ. Տօն է ամենայաղթ եւ հոգակաւոր Սուրբ ինչին Քրիստոսի»<sup>1</sup>:

Հայոց Յայսմավուրքների ընդարձակ խմբագրությունների մեջ բերվում են Սուրբ ինչի պատմության հետ կապված բազմաբնույթ տեղեկություններ: Սուրբ ինչի կամ ինչվերացի տոնական օրերի մասին ուշագրավ տեղեկություններ են տալիս Հայոց տոնացույցերի խմբագրությունները: Բերենք Հնագույն գրչագրերի վկայությունները:

759 թվահամարի Տոնացույցի խմբագրության մեջ կարդում ենք. «էջ (շաբաթ). Նաևակատեաց սրբոյ ինչին...»:

Կիւրակէն սրբոյ ինչին, տաւնս ութ աւր և զչորեքշաբաթի և զուրբաթ մի ուտեր: Իսկ զկնի ութ աւուրն ի նույն կիրակէն՝ յարութեան»<sup>2</sup>:

Համարժեք տեղեկություններ է տալիս նաև 179 թվահամարի Տոնացույցի խմբագրությունը: Պարզվում է, որ 11-13-րդ դարում փաստորեն տոնվել է միայն Սուրբ ինչի տոնը ութօրյա կանոններով: Դրությունը փոխվում է 14-րդ դարի սկզբներին, երբ այդ 8 օրյա կանոնները վեր են ածվում և ինչի և եկեղեցու տոնական օրերի:

752 թվահամարի Տոնացույցի խմբագրության մեջ կարդում ենք. «Շաբ[աթ]. Նաևակատեաց ինչին...: ինչվերացին գիշերն հսկումն է և դնի սուրբ խաչն ի վերա բազմոցի...»:

Առաւ[աւտուն]... և ապա ելանեն խաչիւ ի դուրս և անդաստան աւր[հնէն], և դառնան, և ասեն խաչի շր (= շարական), և դնի սուրբ խաչն և Աւետարանն և երկրպագեն և ասեն խաչի քո Քրիստոս երկ. Քրիստոսի սուրբ խաչ. աղ[եղուիւ]. պահպա. և այլ չելանեն ի դուրս...»:

Երկուսն ժողովին ի դուռն եկեղեցոյ և հասարակաց ժամանակագրութիւն կատարեն և այլ ոչ ելանեն ի Թափաւր մինչև ի Մառզարդարն: Այս շաբաթս ի բուն ինչի և եկեղեցո տաւն է»:

Այնուհետև բերել է երկուշաբթիից մինչև շաբաթ օրվա կատարվող կանոնները<sup>3</sup>:

Շրջանառութեան մեջ է մտնում «ինչվերաց» տերմինը: Հետագայում ընդօրինակված տոնացույցերի խմբագրությունները կրկնում են նախորդ բնագրի տվյալները որոշ սրբագրումներով և հիմնականում չեն տարբերակում թե որ օրերն են հատկացրել խաչի և որ օրերն՝ եկեղեցու տոներին<sup>4</sup>:

Միմեոն Երեւանցին տվել է նախորդ կանոնները և հստակեցրել է ինչի և եկեղեցու տոնական օրերը: Նրա տոնացույցի խմբագրության մեջ գրված է. «Շաբաթ՝ տօն է սրբոյ եկեղեցւոյ՝ ի նաևակատիս սրբոյ խաչին»:

Կանօն վերացման սրբոյ խաչին: Սրբոյ խաչի վերացման կիւրակի է. ի գիշերի հսկումն է...»:

Երկուշաբաթ՝ Տօն է ինչին...

Երեքշաբաթ՝ Տօն է եկեղեցւոյ...

Չորեքշաբաթ՝ Տօն է եկեղեցւոյ...

1 Տե՛ս տպագիր՝ էջ 94-98:  
2 Ձեռ. № 759, էջ 173ա:  
3 Տե՛ս Ձեռ. № 752, էջ 171բ-172բ:  
4 Տե՛ս Ձեռ. №№ 767, էջ 174բ-175բ, 2092, էջ 28ա-բ, 9838, էջ 177ա-178բ, 4164, էջ 200ա-204բ, 8598, էջ 106բ, 5419, էջ 215ա, 5440, էջ 215բ-217ա, 4459, էջ 95ա-բ, 5436, էջ 187ա, 509, 417բ-418ա և այլն:

Հինգշաբաթ՝ Տօն է եկեղեցւոյ...

Ուրբաթ՝ Տօն է իսաչի...

Շաբաթ՝ տօն է իսաչի...» (էջ 246-261):

Այս կարգն է պահպանվում նաև այժմյան տոնացույցում:

Այսպիսով Կյուրեղ Երուսաղեմացու թղթից հետևում է, որ խաչի գյուտը եղել է 4-րդ դարի սկզբներին, որից հետո այն մտել է. Երուսաղեմի Տոնացույցի մեջ և նշվել է Նավակատեաց Եկեղեցու 8 օրյա տոնաշարքի երկրորդ օրվա կանոնի մեջ, իբրև անշարժ տոնի օր, այն է՝ Սեպտեմբեր 14-ը: Այնտեղ չի առանձնացվել Սուրբ իսաչի տոնի օրը: 5-րդ դարի 20-ական թվականներին Երուսաղեմի Տոնացույցից փոխառվեց այդ տոնը միայն երկու օրյա կանոններով:

Սուրբ իսաչի տոնը հավանաբար վերածեց առանձին տոնական կանոնի Հովհան Օձնեցու կողմից խմբագրված «Կանոնք ընթերցուածոց»-Տոնացույցի մեջ 8-րդ դարի 20-ական թվականներին:

10-րդ դարի վերջից իսկ վերջնականում 11-րդ դարի վերջերից Սուրբ իսաչի տոնը անշարժից դարձվեց շարժական և տոնվեց Սեպտեմբեր 14 ± 3 օր կիրակի, այսինքն Սեպտեմբեր 11-7-ի օրերից մեկում նայած տարի:

11-13-րդ դարերում Սուրբ իսաչի տոնը հայոց մեջ տոնվեց 8 օրյա կանոններով, որպես միայն խաչի տոներ, իսկ 14-րդ դարի սկզբներից՝ թե խաչի, թե եկեղեցու: Այս վերջին կարգը պահպանվեց հետագայում և փոխ առնվեց Սիմեոն Երևանցու կողմից և հասավ մեր օրերը:

\*\*\*

Սուրբ իսաչի տոնական շարքի մեջ իր ուրույն տեղն ունի Վարագա իսաչի տոնը: Ըստ պատմական ավանդության ապագա Վարագա իսաչը Պատրոնիկից փոխանցվել է Հռիփսիմէին: Բրիտանացիների հալածանքների ժամանակ հիշյալ խաչը Հռիփսիմեն թաքցրեց Վարագա սարի վրա, իսկ ժամանակ անց՝ Թողիկի վանահայրույթյան օրերին Սուրբ Նշանը երևաց և տեղափոխվեց Վարագա եկեղեցի 7-րդ դարի կեսերին: Հավանաբար այդ ժամանակներից սկզբնավորվեց Վարագա իսաչի տոնը, սակայն վաղ շրջանի մասին տեղեկություններ չունենք, թեև նշված ժամանակ տոնի կատարումը կարող էր լինել միայն անշարժ տոնական կանոնով: Վաղ շրջանից չի հասել Վարագա իսաչի տոնի օրվա որևէ ամսաթվային նշում, ինչպես հուլյան, այնպես էլ հայոց շարժական տոմարներով: Վարագա իսաչի տոնական օրերի հետ կապված տվյալները, որոնք առկա են ուշ շրջանի Ճաշոցների, Տոնացույցերի և Յայսմավուրքների խմբագրություններին մեջ, քննության ենք ենթարկել հայոց շարժական տոմարի ամսաթվերի մեջ և ընթերցողը կարող է ծանոթանալ այս աշխատության 18-րդ գլխում: Այստեղ տալիս ենք միայն ամփոփիչ արդյունքները: Ըստ երևույթին Վարագա իսաչի տոնը եղել է անշարժ և հավանաբար դրվել է Աստուածածնի տոնից հետո որևէ օր 7-10-րդ դարերի ընթացքում: Բնագրերի տվյալներից երևում է, որ 10-րդ դարի վերջում - 11-րդ դարում Աստուածածնի տոնը կանոնվեց Օգոստոս 15 ± 3 օր կիրակի կամ Օգոստոս 12-18-ին ընկնող Կիրակիներից մեկում նայած տարի, իսկ Վարագա իսաչին՝ Օգոստոս 22 ± 3 օր կիրակի կամ Օգոստոս 19-25-ին համընկնող կիրակիներից մեկում նայած տարի: Հիշյալ տոնը այդ կարգով տոնվեց մինչև 14-րդ դարի սկզբները, իսկ տեղ-տեղ ավելի ուշ ժամանակ: Հիմնականում 14-րդ դարի սկզբներից հետո, իսկ լոկալ խմբերում փոքր ինչ ուշացումով, Վարագա իսաչի տոնի կանոնը խմբագրվեց և տեղափոխեցին իսաչվերացից հաշված 15-րդ օրը նույնպես կիրակի, այսինքն Սեպտեմբերի 28 ± 3 օր կիրակի նայած տարի: Հետագայում Վարագա իսաչի տոնի օրը խմբագրության չի ենթարկվել և նույնութամբ փոխանցվեց Սիմեոն Երևանցու Տոնացույցի խմբագրությանը և տոնը կատարվում է մինչև այժմ: Վերոհիշյալ երկու խմբագրությունների ընթացքում Վարագա իսաչի տոնը վերածվեց շարժա-

կանի, թեև 1-ին դեպքում այն կատարվում էր Օգոստոս 22 ± 3 օր, կիրակի, իսկ 2-րդ դեպքում՝ Սեպտեմբեր 28 ± 3 օր, կիրակի: Այլ խոքով Վարագա իսաչի օրվա տոնացույցային փոփոխություններն ակնհայտ են:

\*\*\*

Սուրբ իսաչին նվիրված հաջորդ տոնը վերաբերում է Գիւտ իսաչին: Այդ տոնի վերլուծությունը տվել ենք 18-րդ գլխում, որոշ դիտողություններ ենք արել նաև 19-րդ գլխում: Այստեղ նպատակահարմար ենք գտնում շարադրել մեր հետազոտության ամփոփիչ արդյունքները և եզրակացությունները:

Վաղ շրջանում Գիւտ իսաչին տոնը հատուկ օր չի ունեցել, այլ հավանաբար նշվել է Սուրբ իսաչի տոնաշարքի օրերից մեկում կամ հենց Սուրբ իսաչի օրը: Այն առանձնացած ենք տեսնում 12-րդ դարի կեսերից և վկայված հայոց անշարժ տոմարի կարգով գրված ճաշոցների խմբագրությունների մեջ Մարերի 10-ի կանոնի տակ, որի հուլյան տոմարի համարժեքն է Մայիս 17-ը: Վերոհիշյալ համարժեք ամիս-ամսաթվերն են բերել հայոց Յայսմավուրքների խմբագրությունները:

13-րդ դարից Գիւտ իսաչի տոնը մտավ հայոց տոնացույցերի խմբագրությունների մեջ: Վերջիններս Գիւտ իսաչի օրը սահմանել են իսաչվերացի կիրակիից հաշված 7-րդ կիրակին, իսկ Հայոց Ճաշոցի խմբագրությունների մեջ՝ 5-րդ կիրակին, որոնք համընկնում են համապատասխանորեն Հոկտեմբեր 26 ± 3 օր կամ Հոկտեմբեր 23-29-ի կիրակիներից մեկին նայած տարի, ինչպես և Հոկտեմբեր 12 ± 3 օր կամ Հոկտեմբեր 9-15-ին ընկնող կիրակիներից մեկին նայած տարի:

16-րդ դարում ընդօրինակված տոնացույցի մեջ Գիւտ իսաչի տոնը դրվել է Սուրբ իսաչից հաշված 6-րդ կիրակի (իմացիր Սուրբ իսաչի հաջորդ կիրակիից հաշված 6-րդ կիրակին, այն է՝ Սուրբ իսաչից հաշված 7-րդ կիրակին), միաժամանակ 4-րդ կիրակիի (իմացիր Սուրբ իսաչի հաջորդ կիրակիից հաշված 4-րդ կիրակին, այն է՝ Սուրբ իսաչից հաշված 5-րդ կիրակին) տակ և բացատրել է. «... Ոմանք յայս կիրակիս Գիւտ իսաչին տօնէն ի հետ տարէն գրոցն, և ոմանք այլ (նկատի ունի 7-րդ կիրակին): Զոր կամիս արա և Մարերի ամսոյ ի ժ տաւնեա (բերել է Յայսմավուրքնային տվյալը)»<sup>1</sup>:

Պարզվում է, որ Գիւտ իսաչի տոնը 13-16-րդ դարերում զուգահեռաբար ոմանք տոնել են 5-րդ, ոմանք՝ 7-րդ կիրակի: 16-րդ դարում, ինչպես երևում է մյուս տոնացույցերի տվյալներից, Գիւտ իսաչի տոնը Սուրբ իսաչից հաշված 7-րդ կիրակիի տարբերակը վերջնականորեն ընդունվեց և այդպես էլ փոխանցվեց Սիմեոն Երևանցու տոնացույցի խմբագրություն, հասավ մեր օրերը: Գիւտ իսաչի տոնը 12-րդ դարում նշել են անշարժ Տոնական օրով՝ Մարերի 10-ին կամ Մայիս 17-ին, իսկ 13-րդ դարից սկսած տոնը վերածվեց շարժականի: Քննարկվող տոնի օրվա գրանցումները հայոց շարժական տոմարի ամիս-ամսաթվերով, որոնք վերլուծել ենք աշխատության մեջ, ցույց են տալիս, որ Գիւտ իսաչի տոնը վաղ շրջանից սկսած գերակշռող է եղել իսաչվերացից հաշված 7-րդ կիրակին, թեև եղել են տոնողները 5-րդ կիրակին: Սակայն 16-րդ դարից մինչև այժմ ոչ մի փոփոխություն չկրեց և հաստատուն կերպով տոնվում է իսաչվերացի 7-րդ կիրակիի կանոնի տակ:

\*\*\*

Վերոհիշյալ տոներով սուրբ իսաչի տոնական շարքը հայոց տոնացույցերում ավարտվում է: Սակայն որոշ բնագրեր արձանագրել են Սուրբ իսաչի հետ կապված այլ տոնական օրերի մա-

<sup>1</sup> Ձեռ. № 4874, էջ 196բ:



սին:

15-րդ դարի Յայսմավուրքների խմբագրութուններից ոմանք, ինչպես և 17-րդ դարի տոնացույց - Յայսմավուրքի համառոտ տարբերակում գրանցվել են Նունեի Խաչի տոնի մասին: Այսպես Գրիգոր Խլաթեցու Յայսմավուրքի խմբագրության մեջ կարդում ենք. «Արեգ ԻԲ և Մարտի Լ... Յայսմ աւուր տօն է Նունեայ սուրբ խաչին...»<sup>1</sup>:

1670 թ. գրված Տոնացույց-Յայսմավուրքի համառոտ խմբագրության մեջ, որտեղ բերվել են հունաց, հայոց և լատինացոց տոները Մարտի 30-ի կանոնի տակ վկայվել է. «Տօն Նունեայ (քնագրում՝ Նուանեայ) Սուրբ Խաչին»<sup>2</sup>:

Պարզ է, որ Նունեի Խաչի տոնի օրը անշարժ էր և նշվել է տեղայնացված ձևով՝ նրան նվիրված եկեղեցիներում, քանի որ բացակայում է Հայոց Տոնացույցների, Ճաշոցների և մի շարք Յայսմավուրքների խմբագրութուններում:

Հայոց Յայսմավուրքների խմբագրութուններում գտնում ենք Հացունեաց Խաչի պատմութունը: Սակայն այդ տոնի օրը ևս տեղայնացված էր և տոնվում էր լուկա ձևով: Առկա են նաև այլ անվանական խաչի պատմութուններ, որոնց տոները հավանաբար նույնպես տոնվել են առանձին եկեղեցիներում, սակայն դրանք ևս չեն մտել տոնացույց և չեն ստացել համընդհանուր հնչեղութուն: Այսպիսով Սուրբ Խաչի տոնաշարքի մեջ առկա են Սուրբ նշանի տարբերակներ, որոնց տոները կատարել են առանձին տեղում:

ՀՈՎՀԱՆՆԵՍ ՄԿՐՏՉԻ ԿԱՄ ԿԱՐԱՊԵՏԻ ՏՈՆԱԿԱՆ ՕՐԵՐԸ ՀԱՅՈՑ ՄԵՋ

Հայոց եկեղեցու կողմից ընդունված սրբերի մեջ իր ուրույն տեղն ունի Հովհաննես Մկրտիչը կամ Կարապետը: Հայ մատենագրական տվյալները հնարավորութուն են տալիս ոչ միայն վերականգնել Հովհաննես Մկրտչի հիշատակի օրերը, այլև դիտել դրանք պատմական զարգացման ընթացքի մեջ և բացահայտել տոների ծագման ժամանակը, նրանց փոփոխութունները ժամանակագրական կտրվածքով:

Հովհաննես Մկրտիչը հայոց քրիստոնեական տոնացույցում ունեցել է բազմաթիվ տոնական օրեր և նրա հետ այդ առումով կարող է մրցել միայն Գրիգոր Լուսավորիչը, որն էլ ըստ ավանդության եղել է Հովհաննես Մկրտչի տոներից երկուսի ներդնողը հայոց մեջ: Հայագիտության մեջ Հովհաննես Մկրտչի կամ Կարապետի տոնական օրերին անդրադարձել են Մ. Ավգերյանը, Մ. Օրմանյանը, Ն. Ակիսյանը, Իսկ վերջերս Պողոս Անանյանը<sup>1</sup>:

Ուսումնասիրութունների տեսակետների մասամբ կանդրադառնանք կապված որոշ հարցադրումների հետ, որոնք հնարավոր է դարձել հիմնավորել նոր նյութերի և մոտեցումների հիման վրա:

Անցնենք տոնական օրերի բացահայտմանը և պատմական այն փոփոխութուններին, որոնք տեղի ունեցան չորրորդ - 18-րդ դարերում:

Դեռևս 5-րդ դարի առաջին կեսում ապրող Բյուզանդարան պատմության հեղինակը վկայել է, որ Հովհաննես Մկրտչի հիշատակի օրը համընկել է «զտօնս նաւասարդաց» կամ «նաւասարդաց ժամանակօք» հետ: Նա միաժամանակ գրում է, որ այդ տարի տոնի օրը կիրակի էր «եւ յայնմ աւուր (կիրակի - Թ. Վ.) տօն դիպեցաւ յիշատակի մեծին Յովաննու, որ ի Գրիգորէ և ի Տրդատայ յաւանին Բագաւանին կարգեալ էր»:

«Հայոց դիցարանի տոները» հատվածում ցույց ենք տվել, որ Ամանորեան-Նավասարդեան - Նոր պտղոց տոները կատարվել են ամառային արեադարձից հետո, այն է՝ Հունիսի վերջերին - Հուլիսի սկզբներին, ուստի Հովհաննես Մկրտչի հիշատակի օրը եղել է Հունիսի 24-ին: Տարվա այդ ժամանակն էին տոնում Հովհաննես Մկրտչի տոնը նաև հարևան եկեղեցիները՝ ասորիները և հույները, ինչպես նշել է Ն. Ակիսյանը:

Քրիստոնեական այդ մեծ սրբին հեթանոսական Ամանորեան տոների օրերին տեղադրելը պատահական չէ: Նա էր, որ պետք է հեթանոսական տոնը փոխարկեր քրիստոնեականի: Սկզբնաաղբյուրի հաղորդման համաձայն այդ տոնի օրը կիրակի էր, ուստի առաջնորդվել են անշարժ տոմարով հավանաբար հուլյան: Բյուզանդարան պատմության հեղինակը ընդգծել է, որ Հովհաննես Մկրտչի տոնի օրը սահմանել են Գրիգոր Լուսավորիչը և Տրդատ Թագավորը, ուստի նրա հիշատակի օրը սկսել են տոնել 4-րդ դարից: Ի դեպ Հունիսի 24-ին կիրակի եղել է բազմաթիվ տարիներ (311 թ., 316 թ., 322 թ., 339 թ., 334., 350 թ., 361 թ. և այլն): Քանի որ սկզբնաաղբյուրը այդ տվյալները հաղորդում է Գնելի սպանության կապակցությամբ, ուստի

1 Տպագիր՝ էջ 689-697:  
2 Ձեռ. № 860, էջ 25ա-բ:

<sup>1</sup> Մ. Ավգերյան, Լիակատար վարք եւ վկայաբանութիւն սրբոց, Վենետիկ, 1810, Բ. Ա., էջ 11-36, Աճռ, Բ. Բ, 1811, էջ 536-566, Աճռ, Բ. Գ, 1812, էջ 56-73, Աճռ, Բ. Ե, 1813, էջ 377-388, Մ. Օրմանյան, Ազգապատում, Բ. Ա. մաս Ա, Պեյրուք. 1959, էջ 88-94, Ն. Ակիսյան, Հայոց եկեղեցական տարից եօթներորդ դարու սկիզբը, Հանդես ամսօրեայ, ԿԱ տարի, 1947, էջ 171-179, Ն. Ակիսյան, Քննութիւն Ս. Սահակի վերագրուած կանոններու եւ հայոց եկեղեցական տարից Է դարու սկիզբը, Վիեննա, 1950, էջ 95-108, Պ. Անանյան, Քննական անատողութիւններ, Բագմավէպ, 1993, թիվ 1-4, 151 տարի, Վենետիկ 1993, էջ 7-16:



դեպքը վերագրվել է 350 թ., ավելի հավանական 361 թվականին (= Հունիս 24 = Մարգաց 1 = Կիրակի): Հովհաննես Մկրտչի հիշատակի օրը տոնել են Բագավանում, որը ցույց է տալիս տոնի տեղայնացված բնույթը: Այն փաստորեն շարունակությունն էր հեթանոսական աստվածների տոների և հետագայում այդ հեթանոսական սրբավայրերը վեր են ածվում քրիստոնեական ուխտատեղերի:

Հովհաննես Մկրտչի տոնի օրվա հիշատակությունը որոշ սրբագրություններ, այսինքն՝ Աթանազիսի վկայի հետ, գտնում ենք Գրիգորիսի վարքի կամ Ագաթանգեղոսի պատմության մեջ. «Եւ զյիշատակ վկայիցն բերելով (Գրիգոր Լուսավորիչը - Ռ. Վ.) Համադրեաց ի տօն մեծ հուշակեալ, սնտեացն պաշտման ի ժամանակի՝ Դիցն Ամանորոյ ամենաբեր նոր պտղոց տօնին, Հիւրընկալ դիցն Վանատրի, զոր յառաջագոյն իսկ ի նմին տեղոջ պաշտէին յուրախութեան Նաւասարդի աւուր: Զի ժողովեալ ի յիշատակ մեծի Յովանու և սրբոյ վկայի աստուծոյ Աթանազիսէի՝ յայն աւուր խմբեալ ի նմին յաւանի (Բագավանի - Ռ. Վ.) տօնեսցեն»: Գրիգորիսի վարքի հեղինակը նաև վկայել է, որ Հովհաննես Մկրտչի և Աթանազիսի հիշատակի օրը կատարել են Տարոնում Սահմի 7-ին, որը նույնպես սահմանել է Գրիգոր Լուսավորիչը: Առաջադրած խնդիրը լուծելու համար գոյություն ունի երկու ճանապարհ, որոնցից մեկը բերում է անլուծելի հակասության: Այսպես եթե հայոց շարժական տոմարի Նավասարդի 1-ը համարժեք ընդունենք Օգոստոս 29-ին, ապա հետագարձ հաշվով կստանանք 356-359 թթ., իսկ Սահմի 7-ը զուգադրելի է նոյեմբերի 3-ին: Օգոստոս-Սեպտեմբերին տեղադրելով «տաւնս Նաւասարդաց» - «Նոր պտղոց» տոնի տեղը կընկնենք հակասության մեջ, որովհետև այդ ժամանակ երբեք նոր պտղոց տոն չէր կարող լինել, այլ այն լինում էր ամառային արևադարձից հետո: Երկրորդ ճանապարհն այն է, որ հայոց շարժական տոմարի Սահմի 7-ը համարժեք ընդունենք Օգոստոսի 29-ին, որը վկայվել է «Կանոնք ընթերցուածոց»-ում որպես Հովհաննես Մկրտչի հիշատակի օր: Մի կողմից ստանում ենք Սահմի 7-ի քառամյակը, այն է՝ 620-623 թթ., մյուս կողմից «ամենաբեր Նոր պտղոց» - Ամանորեան - Նավասարդեան տոների հուլյան համարժեքը, որն է Հունիս 24-ը: Միաժամանակ ակնհայտ է դառնում, որ Սահմի 7-ը հետագա ընդմիջարկության արդյունք է, որը կատարվել է Գրիգորիսի վարքի խմբագրության ժամանակ, այսինքն՝ 620-623 թթ.: Ի դեպ Օգոստոս 29 = Սահմի 7-ի զուգահեռ տարիները 624-627 թթ. քառամյակը չէ ինչպես կարծել է Պ. Անանյանը: Տարվա կտրվածքով հուլյան և հայոց տոմարների ամսաթվերի համարժեք ժամանակը ստանալու համար միակ տարբերակը այն է, որ գտնվի հայոց շարժական տոմարի ցանկացած ամսի 1-ը: Այսպես, Օգոստոս 29 = Սահմի 7, որտեղից Օգոստոս 23 = Սահմի 1 = 620-623 թթ., այսինքն տարվա կտրվածքով հուլյան և հայոց ամսաթվերը գործում են նույն օրինաչափությամբ, իսկ ժամանակի մեջ հաստատուն է թողնվում հուլյան անշարժ տոմարի ամսաթիվը, իսկ հայոց ամսաթվերը շարժվում են չորս տարվա պարբերաշրջանով: Անանյանը գտել է Օգոստոս 28 = Սահմի 7-ի համարժեք քառամյակը, այն է = 624-27 թթ.:

Սահմի 7-ի փաստը ցույց է տալիս, որ անշարժ կերպով նշվող տոները համադրվել են հայոց շարժական տոմարի ամսաթվերի հետ և Հովհաննես Մկրտչի տոնը, որին ավելացել է նաև Աթանազիսին, եղել է Հունիս 24-ին: Այդ օրը, ինչպես նշվեց վկայված է նաև հուլյան և ասորիների տոնացույցերում իբրև Հովհաննես Մկրտչի տոնի օր: Ակնհայտ է, որ այդ տոնի օրը փոխառնված էր 4-րդ դարից:

Ի դեպ 6-րդ դարի կեսերին գրած Ներսես կաթողիկոսի և Ներշապուհ եպիսկոպոսի (տեղապահ) կանոնական հրամաններում կամ թղթերում վկայված է. «Տաւն սրբոյն Յովհաննու Մկրտչի եւ վկայի, զոր նախակարգեաց առաքեալն եւ խոստովանողն Քրիստոսի եւ հայր վերստին նորոգման բոլոր Հայաստան աշխարհիս Գրիգորիոս ի վանս, զի ուխտադրութեան պա-

հաւք հաստատեալ»<sup>1</sup>: Ինչպես նկատելի է 6-րդ դարի կեսերին ի տարբերություն Ագաթանգեղոսի պատմության 620-623 թթ. կատարված ընդարձակ խմբագրության, Աթանազիսի անունը դեռևս չէր մտել շրջանառության մեջ և փաստագրել է «վկայի» անորոշ ձևով: Դժբախտաբար ստույգ հայտնի չէ, թե բնագրի հեղինակները Հովհաննես Մկրտչի և Աթանազիսի հնագույն հիշատակված երկու տոներից այն է՝ Օգոստոսի 29-ը և Հունիս 24, որ տոնի օրն են նկատի ունեցել:

Հայոց տոնացույց ըստ շաբաթուցի տվյալները, որոնք հայտնի են հետագա դարերից, որտեղ Հովհաննես Մկրտչին և Աթանազիսին միասին վերցրած հատկացրել են մեկ տոնական օր, ցույց են տալիս, որ վերոհիշյալ վկայությունը վերաբերում է Հունիս 24-ին:

Մեջ բերված բնագրերից պարզ է դառնում, որ Հովհաննես Մկրտչի տոները տոնվել են հուլյան տոմարի ամիս-ամսաթվերով, որը երբեմն-երբեմն համադրել են հայոց շարժական տոմարի ամիս-ամսաթվերի հետ, այլ խոսքով 4-8-րդ դարերի սկզբներին նրանց հիշատակի օրերը կատարվել են հուլյան տոմարի հիման վրա: Մանավանդ եթե նկատի ունենանք, որ Սահակ կաթողիկոսը վերջնականորեն ներդրեց հուլյան տոմարը հայոց մեջ:

Հովհաննես Մկրտչի (և Աթանազիսի) հիշատակի տոնի օրը, որը կատարվում էր Հունիս 24-ին փոփոխություն կրեց 8-րդ դարի սկզբներին:

Հովհաննես Օձնեցին խմբագրեց Սահակ կաթողիկոսի տոնացույցը, որը հետագա կաթողիկոսների կողմից նույնպես ենթարկվել էր մասնակի փոփոխությունների, հիմնեց «Տոնացոյց ըստ շաբաթուց»-ը, որտեղ Հովհաննես Մկրտչի և Աթանազիսի հիշատակի տվյալ օրը սահմանեց Պենտեկոստից հաշված 12-րդ օրը հինգշաբթի: Այդ են վկայում հետագա դարերից հայտնի տոնացույցերի տվյալները: Բերենք դրանք:

Ըստ 936 թվահամարի գրչագրի՝ «Հինկշաբաթի. սրբոյն Յովաննու] եւ Աթանազիսի վկայի...» (էջ 69ա, 70ա):

759 թվահամարի ձեռագրում (1278 թ.) գրված է. «Եւ (հինգշաբաթ). Յովհաննու Մկրտչի և Աթանազիսի եպիսկոպոսի» (էջ 169ա-բ):

Ըստ 179 թվահամարի գրչագրի (1292 թ.)՝ «Եւ (հինգշաբաթ). Յովաննու և Աթանազիսի եպիսկոպոսի...»:

752 թվահամարի գրչագրում (1314 թ.) գրված է. «Եւ. Յովաննու Կարապետին և Աթանազիսի եպիսկոպոսի...» (էջ 166բ):

Ըստ 4514 թվահամարի ձեռագրի (1323 թ.). (Պենտեկոստից հաշված 12 օրը) «Սահմի] է (7). Յովաննու]» (լուսանցքում՝ «հինգշաբթի. Յովաննու կարապետին] եւ Աթանազիսի հայրապետին]. այս նշխարացն է») (էջ 252ա):

2092 թվահամարի գրչագրի (ԺԴ դար) գրված է. (Պենտեկոստից հաշված 12-րդ օրը) «(Ե)շբ. Յովաննու Կարապետին և Աթանազիսի ...ի Սահմի է» (էջ 225բ):

7203 թվահամարի ձեռագրում (1440/1 թթ.) գրված է. «Եւի. Յովհաննու Կարապետին և Աթանազիսեայ եպիսկոպոսին» (էջ 66բ):

Ըստ 5667 թվահամարի ձեռագրի (1440/1 թթ.)՝ «Եւ. Յովն և Աթանազիսեայ հայրապետին...» (էջ 126բ):

9838 թվահամարի գրչագրում գրված է. «Եւի. Յովաննու Կարապետին և Աթանազիսի եպիսկոպոսին» (171ա):

<sup>1</sup> Կանոնագիրք հայոց, հ. Ա., էջ 397-402:

2032 թվահամարի ձեռագրում (1551 թ.) գրված է. «Եջի. Յովանու Մկրտչին և Աթանա-  
գինէ եպիսկոպոսի) Հոկտեմբերի 17» (էջ 81ա):

Միսիմամբ է գրված Հոկտեմբերի 17-ը պետք է լիներ Հոկտեմբերի 16: Միմեոն Երևանցու  
տոնացուցում գրանցված է. «Հինգշաբթ... տօն է սրբոցն Յովհաննու Կարապետին և Աթա-  
նագինեայ եպիսկոպոսին»:

Հովհան Մամիկոնյանը «Տարոնի պատմութիւն» աշխատանքի մեջ շարադրել է Հովհան-  
նես Մկրտչի և Աթանագինեի նշխարների ձեռքբերման պատմությունը և նրանց տեղադրումը  
Տարոնի եկեղեցիներում, միաժամանակ նշել է, որ Գրիգոր Լուսավորիչը Սուրբ Կարապետի տոնը  
կարգադրել է կատարել միշտ Նավասարդի մեկին: Ակնհայտ է, որ Հովհան Մամիկոնյանի մոտ  
Նավասարդի 1-ի նշումը հայոց շարժական տոմարի ամիս-ամսաթիվ է: Եթե ընդունենք, որ հե-  
ղինակը նկատի է ունեցել Հովհաննես Մկրտչի և Աթանագինեի տոնի օրը, որը կատարվել է  
Պենտեկոստեից հաշված 12-րդ օրը, հինգշաբթի, ապա կգտնենք հայոց շարժական տոմարի  
Նավասարդի 1-ի համարժեք ամիս-ամսաթիվը հուլյան տոմարով տարիների կտրվածքով:  
Պարզվում է, որ Նավասարդի 1-ը համարժեք է Մայիս 30-ին 720 թվականին և Մայիս 27-ին՝  
739 թվականին: Ուշագրավ է, որ Պենտեկոստեից հետո եկող 12-րդ օրը, հինգշաբթի, Նավա-  
սարդի 1-ին ուրիշ օրեք տարիներում չեն եղել:

Հովհան Մամիկոնյանը մեկ այլ առիթով նշել է 7 խոտաճարակների նահատակության օ-  
րը հայոց շարժական տոմարի Քաղոց 4-ով: Յայսմավուրք ժողովածուներում 7 խոտաճարակ-  
ների հիշատակի օր է սահմանվել Սեպտեմբերի 30-ին: Ընդունելով Քաղոց 4 = Սեպտեմբեր 30  
համարժեքությունը, որտեղից Քաղոց 1 = Սեպտեմբեր 27 = 720-723 թթ.:

Արդյոք պատահական զուգահեռություն է Նավասարդի 1-ով ստացված 720 թ. և Քաղոց  
1-ով գտած 720-723 թթ.: Կարծում ենք, որ ոչ: Այդ ամսաթիվերը արտացոլել են Հովհան Մա-  
միկոնյանի Տարոնի պատմության գրելու տարիների տոմարական իրողությունները: Ասենք  
նաև, որ «Տոնացուց ըստ շաբաթուց»-ի խմբագրություններից հայտնի է, որ 7 խոտաճարակնե-  
րի հիշատակի օր է սահմանվել Սուրբ Խաչի Կիրակիից հաշված 5-րդ կիրակիից հետո եկող եր-  
կուշաբթին կամ Սուրբ Խաչից հետո եկող 4-րդ կիրակիին հաջորդող երկուշաբթին, այսինքն՝  
տոնը վեր է ածվել շարժականի: Ուշագրավ է, որ 720 թ. Սեպտեմբերի 30 = Քաղոց 4 = երկու-  
շաբթի: Այսպիսով Հովհաննես Մկրտչի և Աթանագինեի տոնի օրվա, այն է՝ Նավասարդ 1 (= Մայիս 30), 7 խոտաճարակների նահատակության ամսաթիվով, որն է Քաղոց 4 (= Սեպտեմբեր  
30) և հայոց տոնացուցի շաբաթվա օրվա՝ երկուշաբթիի նշումներով ստանում ենք 720 թվա-  
կանը, որը հավանաբար եղել է Հովհան Մամիկոնյանի «Տարոնի պատմություն» երկի գրելու  
ստորին սահմանը, իսկ վերինը կլինի 734 թվականը: Հարկ է նշել, որ Հովհաննես Մկրտչի հի-  
շատակի օրը հայոց շարժական տոմարի Նավասարդի 1-ը տարիների կտրվածքով տեղափոխ-  
վում է Հունիս 24-ից (620-623 թթ.) Մայիս 30 (720 թ.), ապա ինչպես կտեսնենք Ապրիլ (9-րդ  
դարի վերջ - 10-րդ դարի սկիզբ և Հունվար (13-րդ դար):

992 թվականին Վարդավառի տոնի համար գրված մեկնության մեջ այդ տոնի օրը  
գրանցվել է հայոց շարժական տոմարի Սահմի 5-ի (տարընթերցված՝ 7-ի) համարժեքով, այն է՝  
«... եւ ի Սահմի հինգ Յովհաննու (Կարապետին) եւ Աթանագինէ...»<sup>1</sup>:

992 թ. Պենտեկոստեից հաշված 12-րդ օրը, հինգշաբթին հավասար է Սահմի 5-ին, որը  
համարժեք է հուլյան տոմարի Մայիս 26-ին:

Հանրահայտ է, որ Պենտեկոստեն շարժական տոն է և տոնվել է Զատիկից հաշված 50-րդ

օրը, իսկ Հովհաննես Մկրտչի և Աթանագինեի հիշատակը կատարել են Պենտեկոստեից հաշված  
12-րդ օրը, հինգշաբթի, ուստի եղել է հիմնականում Մայիսի 21-ից մինչև Հունիս 24-ն ընկած  
սահմաններում նայած տարի: Բավական է նշել, որ 532 ամյակի միայն մեկ պարբերաշրջանի  
ընթացքում Հովհաննես Մկրտչի և Աթանագինեի հիշատակի օրը ընկել է Մայիսի 27-ին, Հու-  
նիսի 4-ին, 13-ին, 14-ին և 18-ին ավելի քան 20 անգամ և այլն:

«Տոնացուց ըստ շաբաթուց»-ի օգտագործումով, որը սկսվեց կիրառվել Հովհան Օձնեցի  
կաթողիկոսի ժամանակ՝ 720 թվից հետո, Հովհաննես Մկրտչի և Աթանագինեի հիշատակի օրը՝  
Հունիս 24-ը, որը անշարժ էր, վերածվեց շարժական տոնի:

992 թ. Հովսեփը թարգմանեց «Տոնացուց յունական, այն է՝ Synxarion օրթողոքս եկեղեց-  
ւոյն Կոստանդնուպոլսոյ»: Այն մեզ է հասել 1302 թ. Սեբաստիայում ընդօրինակված գրչագրով,  
որը խմբագրված է Ներսես Կլայեցուց (1166-1173 թ.) հետո, որտեղ Հովհաննես Մկրտչի տոնի  
կապակցությամբ գրված է. «Ի ԻԴ (24) Յունիս ամսոյ տաւն է Մննդյան Մկրտչին Յոհաննու եւ  
Մկրտչին, գրեալ է յԱւետարանն Ղուկայ»<sup>1</sup>:

11-րդ դարի վերջում և 12-րդ դարի սկզբներում գրված Գրիգոր Վկայասերի (Գրիգորիս և  
Կիրակոս Դրագարկեցու) Տոնանամակ-Տոնացուցում և նրանց հետևությամբ ընդօրինակված և  
որոշ չափով խմբագրված տոնացուցերում, որտեղ սրբերի հիշատակի կամ տոնի օրերը տրվել են  
հուլյան տոմարով, մուծվեց Հովհաննես Մկրտչի հիշատակի օրը իբրև նրա ծննդյան տոն, Հու-  
նիս 24-ը՝ հունական (լատինական) Տոնացուց - Յայսմավուրքների ազդեցության տակ: Բե-  
րենք վկայությունները:

979 թվահամարի ձեռագրում (1286/7 թթ.) գրված է. «Նորին (այսինքն՝ Յունիս) ԻԴ (24).  
ծնունդ Յովհաննու Մկրտչի ի ծնողացն եւ յիշատակ հաւր նորա Զաքարիա եւ մաւր նորա Ե-  
ղիսաբեթի (էջ 329ա): Այսպիսի վկայություններ կան նաև 940 թվահամարի և այլ ձեռագրե-  
րում:

Գրիգոր Վկայասերին, ինչպես և հունական Յայսմավուրքներին հետևած որոշ գրչագրեր  
Հովհաննես Կարապետի ծննդյան տոնը նշել են Մարգաց 18-ին (= Հունիս 24): Այսպես, 3082  
թվահամարի Տոնացուց-Յայսմավուրքում (= 1267 թ.) գրված է. «Նորին ժԼ (Մարգաց) տաւն  
ծննդեան Մկրտչին (լուս. ԻԴ (Յունիս))» (էջ 397ա):

7203 թվահամարի ձեռագրի (1440/1 թթ.). «Այս են տոնք հոռմայեցուց...» վերնագիրը  
կրող բնագրում գրված է. «Յունիս... ԻԴ Մնունդ Յովհաննու...» (էջ 142բ-143բ):

Սակայն Հունիս 24-ի մուծումը ժամանակավոր բնույթ էր կրում, որովհետև «Տոնացուց  
ըստ շաբաթուց»-ները, ինչպես տեսանք, շարունակեցին տոնել Հովհաննես Մկրտչի և Աթա-  
նագինեի տոնը Պենտեկոստեից հաշված 12-րդ օրը, հինգշաբթի:

Հովհաննես Մկրտչի և Աթանագինեի տոնը գործադրության մեջ էր: Դրա լավագույն  
վկայությունը գտնում ենք Հաղարծնի Աստուածածին եկեղեցու (կառուցված 1281 թ.) վրա թո-  
ղած արձանագրության մեջ. «Յուսովն այ (Աստուծոյ), Հասան եւ ամուսին իւր Խորիշա միա-  
բանեցան սբ (Սուրբ) Աստուածածնիս եւ սբ (Սուրբ) Գրիգորիս: Վարդապետքս և միաբանքս  
սահմանեցաք Բ աւր պատարագ, ի տաւնի Յովհաննու եւ Աթանագինէ (այսինքն՝ Պենտեկոս-  
տեից հաշված 12-րդ օրը): Ա Հասանա, Ա Խորիշահի. կատարեչք աւրհնին յայ (յԱստուծոյ) Ա-  
մէն»<sup>2</sup>:

Հարկ է նշել, որ հայոց անշարժ տոմարի հիման վրա կազմված Տոնացուց-Յայսմա-

<sup>1</sup> Ղ. Ալիշան, Հայապատում, էջ 90-91, Երուսաղեմի 1272 թվահամարի ձեռագիր, էջ 149բ-153ա, С. F. Conubear, Armenorum rituale, p. 452.

<sup>1</sup> Հ. Ոսկյան, Աշխատ. էջ 709:

<sup>2</sup> Դիվան հայ վիմագրության, պրակ VI, Ե., 1977, էջ 47:

վուրքները Հովհաննես Մկրտչի և Աթանազիների տոնի օր սահմանեցին Սահմի 6-ին (Հոկտեմբեր 15), Սահմի 7-ին (= Հոկտեմբեր 16) և Սահմի 5-ին (= Հոկտեմբեր 14), հետևելով Ագաթանգեղոսի պատմության և 992 թ. գրված Վարդավառի տոնի մեկնության մեջ վկայված Սահմի 5-7-ի ամսաթվերին, որոնք, ինչպես տեսանք, ունեն հուլյան այլ համարժեքներ: Բերենք որոշ վկայություններ:

832 թվահամարի գրչագրում (1154/5 թթ.) գրված է. «Սահմի է (= Հոկտեմբեր 16). Յովհաննու Մկրտչի եւ Աթանագինէ...» (էջ 28ա):

Ըստ 3082 թվահամարի ձեռագրի (1267 թ.) «Նոր[ին] է (Սահմի) (լուս. ԺԶ (Հոկտեմբեր)... Յովհաննու և Աթանագինէի» (էջ 390 բ):

979 թվահամարի Տոնացույցի (1278 թ.) շարունակության մեջ, որը հայոց անշարժ տոմարով է, գրված է. «Սահմի է. Յովհաննու Մկրտչի և Աթանագինէ վկայի...» (էջ 439բ):

179 թվահամարի գրչագրում (1292 թ.) նշվել է. «Ե (5) (սահմի). Յովհաննու Կարապետի և Աթանագինէ եպիսկոպոսի... (լուս. ԺԴ (Հոկտեմբեր))»:

3266 թվահամարի տոնացույցում գրված է. «Սահմի [է]. Յովհաննու Մկրտչի և Աթանագինէ» (էջ 162ա):

4977 թվահամարի Տոնացույցում վկայված է. «Սահմի է. Յովհաննու եւ Աթանագինէ...» (էջ 57բ):

8179 թվահամարի Տոնացույց-Յայսմավուրքում Պենտեկոստից հետո բերել է հետևյալ վերնագիրը. «Վկայաբանութիւն սրբոյն Յովհաննու եւ Աթանագինէի» (էջ 140ա), միաժամանակ բովանդակության մեջ Ագաթանգեղոսի պատմության վկայությունը (էջ 144բ):

Վերոհիշյալ վկայությունների հեղինակներից ոմանք հատկապես տոնացույցերում Սահմի 5-6-7-ը տալիս, ինչպես տեսանք, նշում են, որ հիշյալ տոնը կատարվում է Պենտեկոստից հաշված 12-րդ օրը, սակայն նրա հիշատակի օրվա կարգացվելիք ընթացումները կարող է վերցնել Յայսմավուրքներից: Այնպես որ Հայոց անշարժ տոմարի Սահմի 5-6-7-ին, որը համարժեք էր Հոկտեմբերի 14-16-ին երբեք Հովհաննես Մկրտչի և Աթանագինէի տոն չի կատարվել:

Բերված տվյալները ցույց են տալիս, որ Հովհաննես Մկրտչի կամ Կարապետի քննարկվող տոնը, որին հետագայում միացել են նաև Աթանագինեն (որը կատարվել է Հունիս 24-ին) սկսել են տոնել 4-րդ դարից սկսած, համենայն դեպս 350 թ. կամ 361 թ. արդեն գործադրության մեջ էր մինչև 8-րդ դարի սկզբները, կատարվել է Հուլյան անշարժ տոմարի Հունիսի 24-ին համադրվելով հայոց շարժական տոմարի ամիս ամսաթվերի հետ: 720-ական թվերից հետո Հովհաննես Մկրտչի և Աթանագինէի տոնը մտել է «Տոնացույց ըստ շաբաթուց»-ի մեջ և տոնել են Պենտեկոստից հետո 2-րդ կիրակիի հինգշաբթին, որով Հուլյան համարժեքը խախտվել է և ստացել Հուլյան տոմարի այլ համարժեքներ: Այդ տոնը տոնվում է մինչև այժմ:

10-րդ դարի վերջում թարգմանված Հովսեփ Կոստանդնուպոլսեցու Տոնացույցում և 11-րդ դարի վերջին - 12-րդ դարի սկզբներին Գրիգոր Վկայասերը նոր որակով փորձեցին վերականգնել Հունիս 24-ը՝ հունա-լատինական ծեսերի ազդեցության տակ, սակայն լայն ճանաչում չստացավ: Ահավասիկ այն փոփոխությունները, որոնք կատարվել են Հովհաննես Մկրտչի, ինչպես և Աթանագինէի տոնի օրվա հետ կապված:

\*\*\*

Անցնենք Հովհաննես Մկրտչի հաջորդ տոնի օրվա քննությանը:

5-րդ դարի 20-ական թվականների սկզբներին Սահակ կաթողիկոսը ստեղծեց Հայոց

Քրիստոնեական Տոնացույցը, որն անվանեց «Կանոնք ընթերցուածոց»: Այն փոխառված էր Երուսաղեմի Տոնացույցից միաժամանակ խմբագրված: Այդ Տոնացույցը մեզ է հասել երեք ընդօրինակություններ, որտեղ Հովհաննես Մկրտչի հիշատակի օրը գրանցվել է Օգոստոսի 29-ի կանոնի տակ: Այսպես, 985 թվահամարի գրչագրում (9-րդ դար) գրված է. «Ազոստոս ամսոյ որ աւր ԻԹ (29). Յովհաննու Մկրտչի և այս կանոն կատարի. Սաղմոս ձժԵ. Կցուրդ... ի գործոց սուրբ առաքելոց... Աղեղուիա. Սաղմոս ձժԴ... Աւետարան ըստ Մատթեոսի (ձնԳ)...» (էջ 272բ-274բ):

Փարիզի 44 թվահամարի ձեռագրում (X-XI դդ.) նույն կանոնն է, միայն Օգոստոսի փոխարեն գրված է Հունվար. այն է՝ «Յունուարի ամսոյ որ աւր ԻԹ է Յովհաննու Մկրտչին...»: Հունվարը իրավացիորեն առաջարկել է ուղղել Օգոստոս Ծ. Կոնիբերը (էջ 516-527), որը ընդունվել է հետագա հետազոտողների կողմից:

Գրիգորիսի վարքի կամ Ագաթանգեղոսի պատմության 620-623 թթ. կատարած ընդարձակ խմբագրության մեջ վկայվել է. «Եւ հրամայեաց (Գրիգոր Լուսավորիչը - Ռ. Վ.) կատարել անդ (Տարոնում - Ռ. Վ.) ամ ամէ, ի նմին տեղու ժողովեալ ամենեցուն, գլխատակ սրբոցն (Հովհաննես Մկրտչի և Աթանագինէի - Ռ. Վ.), որ օր եաւլթն էր Սահմի»<sup>1</sup>:

Հիշյալ հատվածում Հովհաննես Մկրտչի հիշատակի օրը գրանցվել է հայոց շարժական տոմարի համարժեքով, այն է՝ Սահմի 7 (= Օգոստոսի 29), որն, ինչպես տեսանք վերևում, ընդմիջարկություն է կատարված 620-623 թթ.:

Միաժամանակ Ագաթանգեղոսի պատմության հեղինակը վկայել է, որ հիշյալ տոնի օրը սահմանել է Գրիգոր Լուսավորիչը, ուստի կարելի է պնդել, որ Հովհաննես Մկրտչի տոնի օրը Սահակ կաթողիկոսը մտցրել է հայոց տոնացույցի մեջ ոչ միայն նկատի ունենալով, որ Երուսաղեմի և այլ եկեղեցիների տոնացույցերում առկա էր այդ տոնի օրը, այլ հիմնականում այն, որ նշված տոնի օրը սահմանել էր Գրիգոր Լուսավորիչը, այսինքն Հովհաննես Մկրտչի հիշատակի 2-րդ տոնը նույնպես փոխառվել էր և կատարվում էր Հայաստանում 4-րդ դարից սկսած: Մանավանդ, եթե նկատի ունենանք, որ Ագաթանգեղոսի պատմության կամ Գրիգորիսի վարքի նախնական բնագրի հեղինակն ամենայն հավանականությամբ Մեսրոպ Մաշտոցն էր: Հարկ է նշել, որ Ագաթանգեղոսի պատմության ընդարձակ խմբագրության մեջ ավելացվել էր միայն Սահմի 7-ը և «Նաւասարդի աւուր»-ը, իսկ մյուս հատվածները անշուշտ կային նախնական բնագրում: Սահակ կաթողիկոսի գրած «Կանոնք ընթերցուածոց»-ի ավանդությունը կապված Հովհաննես Մկրտչի տոնի օրվա հետ պահպանեցին հետագա բնագրերը:

992 թվականին Ատոմ Վարազեցին խմբագրեց «Կանոնք ընթերցուածոց»-ը, որը վերանվանվեց Հոռոմագիր: Այնտեղ, որ հայտնի է դարձել 832 թվահամարի ընդօրինակված ձեռագրից (1154/5 թթ.) գրված է. «Ազոստոս ԻԹ. Յովհաննու Մկրտչի...» (էջ 217բ):

Հետագայում ընդօրինակված ծառայ անվանվող բնագրերում ևս վկայված է Հովհաննես Մկրտչի հիշատակի օրը Օգոստոսի 29-ին: Այսպես, 5356 թվահամարի ձեռագրի (13-րդ դ.) ընդօրինակության մեջ գրված է. «[Ն]աւասարդի Ա. Յովհաննու Մկրտչի» (էջ 246), իսկ 1525 թվահամարի ընդօրինակության մեջ. «Ի յիշատակի սրբոյն Յովհաննու Կարապետի և Մկրտչի...» (էջ 456բ): Միայն նշենք, որ 5356 թվահամարի ձեռագրի ընդօրինակության մեջ Նավասարդի Ա-ն մտել է Հայոց անշարժ տոմարի ազդեցության տակ և Օգոստոսի 29-ը փոխարինվել է Օգոստոսի 11-ով, որի մասին կխոսենք քիչ հետո:

992 թ. թարգմանած Կ. Պոլսի Տոնացույցում գրված է. «ԻԹ (29) (Ազոստոս) տաւն է գլխատման յառաջընթաց Կարապետին եւ Մկրտչին, գրեալ է յԱւետարանն Ղուկայ»<sup>2</sup>:

1 Ագաթանգեղայ, Պատմություն հայոց, պատ. 815, էջ 425:

2 Հ. Ոսկյան, Աշխ. աշխ., էջ 711:

Գրիգոր Վկայասերի կազմած Տօնանամակի ընդօրինակութեամբ տոնացուցերում ևս պահպանվել են ուշագրավ տեղեկութիւններ Հովհաննես Մկրտչի հիշյալ տոնի օրվա կապակցութեամբ:

979 թվահամարի ձեռագրի ընդօրինակութեան մեջ կարդում ենք. «Նորին (Աւգոստոս - Ռ. Վ.) ԻԹ. գլխատումն Կարապետին Յովհաննու...», իսկ 940 թվահամարի ընդօրինակութեան մեջ գրված է. «Աւգոստոս ԻԹ/նաւ/ասարդ Ա. Յովհաննու...»:

7203 թվահամարի ձեռագրի (1440/1 թթ.) «Այս են տօնք հոռմայեցւոց...» վերնագիրը կրող գրչագրում ասվում է. «Աւգոստոս... ԻԹ գըլխատմանն Յովհաննու» (էջ 142բ-143բ), որից ակնհայտ է դառնում, որ Հովհաննես Մկրտչի «Գլխատման» բնորոշումը հունա-լատինական տոնացուցերի ազդեցութեան հետեանք էր:

Բոլորովին այլ ձևակերպում են տվել «Տօնացոյց ըստ շաբաթուց»-ները: Ըստ նրանց Հովհաննես Մկրտչի հիշատակի տոնը կատարվել է Աստուածածնի տոնից, որը միշտ կիրակի է, հաշված երրորդ կիրակիի շաբաթ օրը կամ Աստուածածնից հետո եկող 2-րդ կիրակիի շաբաթ օրը, այսինքն Աստուածածնի կիրակիից հաշված 21-րդ օրը:

Ըստ 759 թվահամարի ձեռագրի՝ «էջ (Շաբաթ). Յովհաննու Մկրտչի, յԱւգոստոս ԻԹ» (էջ 172բ):

Ըստ 179 թվահամարի ձեռագրի՝ «էջ. Յովհաննու Մկրտչի»:

Ըստ 752 թվահամարի ձեռագրի՝ «Շաբաթ. Յովհաննու Կարապետին և յիշատակ Յոբա արդարո...» (էջ 172բ):

Ըստ 4514 թվահամարի ձեռագրի՝ «յԱւգոստոս ԻԹ. Յովհաննու... (լուս. Շաբաթ աւր Յովհաննու Կարապետին և Յովբա արդարոյն» (էջ 329բ):

Ըստ 767 թվահամարի գրչագրի՝ «ՇԲ. Յվն(Յովհաննու) և Յոբայ արդարոյն» (էջ 174ա):

Ըստ 2092 թվահամարի ձեռագրի՝ «ՇԲ. օր սրբոյ Խաչին բարեկենդան է. Յովհաննու Կարապետին տաւն է... յԱւգոստոս ԻԹ» (էջ 228ա):

Ըստ 7203 թվահամարի բնագրի՝ «Շաբ. Յովհաննու Կարապետին և Յոբայ արդարոյն» (էջ 81ա):

Ըստ 5667 թվահամարի ընդօրինակութեան. «ՇԲԹ. Յվն Կրպին (Յովհաննու Կարապետին) և յիշատակ Յոբա արդարոյն...» (էջ 135ա):

Ըստ 9838 թվահամարի ձեռագրի՝ «Շաբ. Յովհաննու Կարապետին և յիշատակ Յոբայ արդարոյ» (էջ 176բ):

Ըստ Սիմեոն Երեանցու տոնացուցի՝ «Հինգշաբաթ. Տօն է Յովհաննու Կարապետին և Յոբայ արդարոյն»:

Հովհաննես Օձնեցու կազմած «Տօնացոյց ըստ Շաբաթուց»-ի մեջ վերոհիշյալ բանաձևումը չկա: Այն բացակայում է նաև Ատոմ Վարապետի Հոռոմագիրում: Հովհաննես Մկրտչի հիշատակի օրը Օգոստոսի 29-ին նշելը փոխվել է Ասողիկը Պատմութիւնը ավարտելուց, այն է՝ 1005 թ. հետո, երբ նրա տոնը կատարել են Աստուածածնի կիրակիից հաշված 3-րդ կիրակիի շաբաթ օրը. և Օգոստոսի 29-ը անշարժից վեր է անվել շաբաթականի ու տոնը կատարվել է Սեպտեմբեր 1-7-ի սահմաններում:

Հայոց շաբաթական տոմարի ամսաթվերի ուսումնասիրութիւններից ևս պարզվում է, որ «Տաւնացոյց ըստ շաբաթուց»-ների մեջ Աստուածածնի տոնի օրը փոփոխութիւն է կրել 11-րդ դարի սկզբներին, ուստի Հովհաննես Մկրտչի այդ տոնի օրը իբրև շաբաթ օր նույնպես տոնացուց է մտել 11-րդ դարի վերջերից:

Թեև «Տօնացոյց ըստ շաբաթուց»-ի փոփոխութեանը Յայսմավուրք-Տօնացուցերում անմոռաց մնաց Հովհաննես Մկրտչի հիշատակի օրը: Բերենք մի քանի վկայութիւններ:

Ըստ 3082 թվահամարի համառոտ Յայսմավուրքի. «Նորին] (Նաւասարդի) ԺԹ. Գըլխատմանն Յովհաննու (լուս. ԻԹ (Աւգոստոս))» (էջ 389բ):

Ըստ 179 թվահամարի բնագրի՝ «ԺԹ (Նաւասարդի). Տաւն Գլխատման Յովհաննու Մկրտչի. ԻԹ (Աւգոստոս))»:

8179 թվահամարի ձեռագրում Աստուածածնից հետո գրված է. «Յիշատակ եւ Գիւտ սրբոյ գլխոյն Յովհաննու Մկրտչին Քրիստոսի» (էջ 187ա):

9337 թվահամարի ձեռագրում գրված է. «ԻԹ (Աւգոստոսի). ԺԹ (Նաւասարդի). Տաւն գլխատմանն Յովհաննու»:

Տպագրված (1708 թ.) Յայսմավուրքում գտնում ենք հետևյալ հիշատակութիւնը. «Նաւասարդ ԺԹ եւ Օգոստոս ԻԹ. տոն է գլխատմանն Յովհաննու Կարապետին» (էջ 57-60):

Նյութերի ուսումնասիրութիւնը ցույց է տալիս, որ Հովհաննես Մկրտչի հիշատակի օրը սահմանել է ըստ ավանդութեան Գրիգոր Լուսավորիչը, այսինքն՝ տոնը տոնվել է 4-րդ դարից: Այն Հայոց Տօնացույց մտավ 5-րդ դարի 20-ական թվականների սկզբներից Սահակ կաթողիկոսի կողմից և տոնվում էր հուլյան տոմարի Օգոստոսի 29-ին: Այդպես շարունակվեց տոնվել և 620-623 թթ. համադրվեց Հայոց շաբաթական տոմարի Սահմի 7-ին: 11-րդ դարի վերջերին Հովհաննես Մկրտչի տօնի օրը սահմանվեց Աստուածածնից հաշված 3-րդ կիրակիի շաբաթ օրը, որի հետեանքով տոնը անշարժից վերածվեց շաբաթականի և տոնվեց Սեպտեմբեր 25-31-ի սահմաններում ընկնող շաբաթ օրերից մեկում և այդպես զուգահեռաբար նշվեց համարյա մինչև վերջ, սակայն Սիմեոն Երեանցին Հովհաննես Մկրտչի տոնը սահմանեց Աստուածածնից հաշված 3-րդ կիրակիի հինգշաբթի օրը դրանով իսկ տոնի օրերի սահմանները նեղացան Սեպտեմբերի 31-ից Սեպտեմբերի 5-ը:

\*\*\*

Հովհաննես Մկրտչի հաջորդ տոնի մասին հիմնականում տալիս են «Տօնացոյց ըստ շաբաթուց»-ի բնագրերը:

Բերենք այդ վկայութիւնները:

Ըստ 936 թվահամարի ձեռագրի ընդօրինակութեան. «[Նոր կիրակիին] շաբաթ աւրն Յովհաննու Մկրտչի գլխատմանն...» (46բ):

Ըստ 759 թվահամարի գրչագրի ընդօրինակութեան. «[Զկնի Զատկին] շաբաթն աւրն Յովհաննու» (էջ 168բ):

Ըստ 179 թվահամարի բնագրի՝ «[Զկնի Զատկին] ի նոյն շաբաթն աւրն Յովհաննու...»:

Ըստ 752 թվահամարի ձեռագրի ընդօրինակութեան. «[Զկնի Զատկին] շաբաթ Յովհաննու Մկրտչին...» (162բ):

Ըստ 4514 թվահամարի գրչագրի՝ «[Զկնի Զատկին]. շաբաթ աւր Յովհաննու Կարապետին... (լուս. «Շաբաթ աւր սրբոյն Յովհաննու Կարապետին»)» (էջ 171ա):

Ըստ 767 թվահամարի ձեռագրի՝ «[Զկնի Զատկին] շաբաթ Յովհաննու» (149ա):

Ըստ 2092 թվահամարի բնագրի ընդօրինակութեան՝ «շաբաթն աւրն Յովհաննու գլխատմանն... Այս տաւնս ի Յայսմավուրքն յԱւգոստոս ԻԹ է» (էջ 225բ):

Ըստ 7203 թվահամարի ձեռագրի ընդօրինակութեան՝ «[Զկնի Զատկին] շաբաթ Յովհաննու Մկրտչին գլխատմանն...» (էջ 63ա):

Ըստ 5667 թվահամարի գրչագրի ընդօրինակության՝ «[Զկնի Զատկին] շաբաթի Յովանու Մկրտչին...» (117բ):

Ըստ 9838 թվահամարի ձեռագրի ընդօրինակության՝ «[Զկնի Զատկին] շաբ[աթ]. Յովանու Մկրտչին...» (էջ 165ա)

Ըստ 2031 թվահամարի բնագրի ընդօրինակության՝ «[Զկնի զատկին] շաբ[աթ]. Յովանու Մկրտչի...» (61բ)

Ըստ Սիմեոն Երևանցու Տոնացույցի՝ «[Զկնի Զատկին] շաբաթ. յիշատակ է գլխատման սրբոյն Յովհաննու Մկրտչին...»:

Վկայակոչված նյութերում շփոթ կա միայն 936 թվահամարի ձեռագրի ընդօրինակության մեջ, քանի որ ոչ թե նոր կիրակիի շաբաթ օրն էր, այլ մինչև նոր կիրակիի շաբաթ օրը: Գլխատման բնորոշմանը կանգրդառնանք փոքր ինչ հետո: Տոնացույցերի նյութերը ցույց են տալիս, որ Հովհաննես Մկրտչի հիշատակի օր է սահմանվել Զատկից հետո եկող շաբաթ օրը. այն է՝ Զատկից հաջված 7-րդ օրը: Քանի որ Զատիկը շաբաթական տոն էր, ուստի Հովհաննես Մկրտչի վերոհիշյալ տոնը նույնպես շաբաթական էր, որի հետևանքով նրա տոնի օրը տատանվել է Զատկի օրերը տատանման հետ միասին միայն վեց օրվա տարբերությամբ, այն է՝ Մարտի 28-ից մինչև - Մայիս 1-ը ընկած ամսաթվերում:

532-ամյա Զատկացուցակում Հովհաննես Մկրտչի հիշյալ տոնի օրը եղել է հետևյալ ամսաթվերում (փակագծում տրվում է տոնի օրվա կրկնվելը, այսինքն նույն ամսաթվում քանի անգամ է կատարվել):

Մարտ 28 — (4)	Ապրիլ 12 — (17)
Մարտ 29 — (8)	Ապրիլ 13 — (16)
Մարտ 30 — (8)	Ապրիլ 14 — (19)
Մարտ 31 — (11)	Ապրիլ 15 — (16)
Ապրիլ 1 — (16)	Ապրիլ 16 — (16)
Ապրիլ 2 — (16)	Ապրիլ 17 — (20)
Ապրիլ 3 — (20)	Ապրիլ 18 — (16)
Ապրիլ 4 — (16)	Ապրիլ 19 — (22)
Ապրիլ 5 — (16)	Ապրիլ 20 — (15)
Ապրիլ 6 — (20)	Ապրիլ 21 — (17)
Ապրիլ 7 — (16)	Ապրիլ 22 — (23)
Ապրիլ 8 — (17)	Ապրիլ 23 — (15)
Ապրիլ 9 — (20)	Ապրիլ 24 — (16)
Ապրիլ 10 — (15)	Ապրիլ 25 — (20)
Ապրիլ 11 — (20)	Ապրիլ 26 — (16)
	Ապրիլ 27 — (12)
	Ապրիլ 28 — (12)
	Ապրիլ 29 — (9)
	Ապրիլ 30 — (7)
	Մայիս 1 — (5)

Ինչպես նկատել է Հովհաննես Մկրտչի տոնի օրերը հիմնականում տատանվել են Ապրիլ

1 - Ապրիլ 26-ի սահմաններում:

992 թվականին գրված Վարդավառի տոնին նվիրված մեկնության մեջ Արամազդի տոնը համադրվել է Հովհաննես Մկրտչի տոնի հետ, մոտավոր արժեքով, միաժամանակ ասվում է, որ այն սահմանել է Գրիգոր Լուսավորիչը Նավասարդի 1-ին՝ այն է՝ «... կարգեր ի Նաւասարդի Ա-ն (Ղ. Ալիշանի մոտ՝ մի) Յովհաննու կարապետին տօնել»: Մենք անդրադարձել ենք այս հարցին նախաքրիստոնեական տոների քննության առիթով: Այժմ ասենք այսքանը: 992 թվականին գրված մեկնություն-տոնապատճառի մեջ բնագրի հեղինակը նկատի է ունեցել Հովհաննես Մկրտչի այն տոնի օրը, որը կատարել են Զատկից հետո եկող շաբաթ օրը, այսինքն Զատկից հաջված 7-րդ օրը: Բնագրի մեջ Նավասարդի 1-ը տրված է հայոց շաբաթական տոմարով, ուստի 992 թվականին Զատիկը կատարվել է Նավասարդի 5-ին, իսկ Հովհաննես կարապետի տոնը Նավասարդի 11-ին (= Ապրիլ 2):

Հովհան Մամիկոնյանի տեղեկության քննությունից պարզ դարձավ, որ Հայոց շաբաթական տոմարի Նավասարդի 1-ին Հովհաննես Մկրտչի տոնը 8-րդ դարի 20-30-ական թվականներին կատարվել է Պենտեկոստեից հաջված 12-րդ օրը, այսինքն՝ Պենտեկոստեից հետո: Նավասարդի մեկը բերեց Հովհաննես Մկրտչի նոր տոնի ստեղծմանը՝ Զատկից հաջված 7-րդ օրը, ինչպես երևում է վերոհիշյալ բնագրի վերլուծությունից և պետք է պարզել այդ տոնական օրվա ստեղծման ժամանակը:

Հարկ է նշել, որ Հովհաննես Մկրտչի այդ տոնը մտել է հայոց «Տոնացոյց ըստ շաբաթուց» 9-րդ դարի 2-րդ կեսից ոչ շուտ և 10-րդ դարի 30-ական թվերից ոչ ուշ: Այդ է ցույց տալիս 992 թվականին գրված Վարդավառի մեկնություն-տոնապատճառը: Բանն այն է, որ Հովհաննես Մկրտչի տոնի օրը, որը կատարվել է Զատկից հաջված 7-րդ օրը Նավասարդի 1-ին կատարվել են հետևյալ տարիներին՝

862 թ.	Նավասարդ 1	= ապրիլ 25
876 թ.	— " —	= ապրիլ 21
890 թ.	— " —	= ապրիլ 18
904 թ.	— " —	= ապրիլ 14
918 թ.	— " —	= ապրիլ 11
932 թ.	— " —	= ապրիլ 7

Ակնհայտ է, որ Նավասարդի 1-ին փաստագրված Հովհաննես Մկրտչի տոնը կատարվել է 862-932 թթ. սահմաններում, այսինքն բացի վերոհիշյալ թվականներից Նավասարդի 1-ին Հովհաննես Մկրտչի տոն չի կատարվել: Հետևությունը պարզ է, 9-րդ դարի 2-րդ կեսին արդեն կատարվել է Հովհաննես Մկրտչի հիշյալ տոնը, այլպես 992 թ. չէր համադրվի Նավասարդի 1-ի հետ: Այլ խոսքով նրա հիշյալ տոնը սահմանվել է «Տոնացոյց ըստ շաբաթուց»-ի երկրորդ խմբագրության մեջ, այն է՝ 876 թ., երբ Գրիգոր Լուսավորչին նվիրված նոր տոնական օրեր ավելացվեցին:

Ուշագրավ տեղեկություններ ունենք հայերեն վիճակական արձանագրություններից Հովհաննես Մկրտչի վերոհիշյալ տոնի մասին: Տոնի օրը սահմանվել է պատարագ տալ Հովհաննես Արմանացուն՝ Հաղարծնի առաջնորդին:

Բերենք Գոշավանքի Աստուածածին եկեղեցու արձանագրությունը.

«Ա(ստուծո)վ. եւ՝ տ(Տեր) Յովանէս Արմանեցի ազատ գրեցի զԳետկա ժողովուրդս ի հարկէ, որ տաին յաթոռն, յիշխանութե(ան) Գոնցա խաթունին, ի խնդրո կիրակոս վարդապե-

1 Հովհան Մամիկոնյանի «Տարոնի պատմություն» աշխատության ազդեցության տակ:



տին, ի հայրութե(ան) Աբուամ վարժապետի: Զոր զայս խափանէ, յայ (յԱստուծոյ) եւ յամէն սրբոցն նգովեալ եղիցի, եւ կատարողքն՝ աւրնհեալ: Միաբանքս տուաք նմա պատարագ զմեծ եկեղեցիս, ի տաւնին Յովաննու՝ ի Զատկին. անխափան: Գրեցան ՉԹ (1260/1 թթ.) վկայութեամբ Յովաննուսի... Վարդան Վարդապետի»<sup>1</sup>:

Վիմական արձանագրութիւններում մասամբ են շեշտել Հովհաննես Կարապետի տոնի ուղղակի օրերը, իսկ մի խմբում նշվել է ընդհանուր ձևով. Հովհաննես Մկրտչի կամ Կարապետի:

\*\*\*

Հովհաննես Սարկավազը 11-րդ դարի վերջերին Հայոց շարժական տոմարը վերածեց անշարժի: Դրանից հետո ստեղծված Յայսմավուրքները-Տոնացույցերը, ինչպես և վիմական արձանագրութիւնները ընդօրինակված որոշ ձաշոցները փաստագրել են Հովհաննես Մկրտչի մի նոր տոնի մասին:

Բերենք այդ տեղեկութիւնները:

Ըստ 832 թվահամարի Յայսմավուրքի (1154/5 թթ.) «Նաւասարդի Ա (= Օգոստոս 11), յիշատակ Յովհաննու Մկրտչի և այս կանոն կատարի...» (էջ 1ա-3բ):

Ըստ 5356 թվահամարի ձաշոցի (13-րդ դ.) «[Ն]աւասարդի Ա. (= Օգոստոս 11) Յովհաննու Մկրտչի և այս կանոն կատարի...» (էջ 296բ):

Ըստ 3082 թվահամարի Տոնացույց-Յայսմավուրքի (1267 թ.) «Նաւասարդի Ա, որ է Աւգոստոս (լուս ժԱ). Յովաննու Մկրտչի և Աթանագին...» (էջ 389ա): Ըստ 179 թվահամարի (1292 թ.) Յայսմավուրք - Տոնացույցի՝ «Նաւասարդի Ա եւ Աւգոստոս ժԱ. Տաւն է Յովաննու Մկրտչին...»:

Ըստ 9337 թվահամարի (14-րդ դ.) ձեռագրի՝ «Նաւասարդի Ա և յԱւգոստոս ժԱ. Տօն Յովհաննու Մկրտչի...»:

Ըստ 767 թվահամարի (1337 թ., 15-րդ դ.) Տոնացույցի ընդօրինակութեան Քրիստոսի Մենդյան և Աստուածայայտութեան 8 օրյա տոներից անմիջապես հետո գրված է. «Նաւասարդի Ա որ է Օգոստոսի ժԱ. տօն է Յովաննու ծնընդեան, զոր կարգեալ է սրբոյն Գրիգորի Լուսաւորչին: (Որից հետո շարունակում է) ի յԱստուածածնի պահքն կառնու. այս չէ տեղն... (էջ 123 բ):

Մորո ձորո վանքի արձանագրութիւններից մեկում գրված է. «Յանուն այ, ես՝ Յովանէս միաբանեցայ ած ածինս. եւ հայրս Գրիգոր (առաջնորդել է 1197-1213 թթ.) եւ այլ միաբանքս ետուն ինձ Ե (5) ժամ զէկեղեցիս ի Նաւասարդի Ա զՅովանու տաւնին եւ Դ (4) աւր հետ իւր: Այլ Գ (3) ինձ եւ Բ (2) ամուսնոյ իմոյ: Որ խափանէ մեր մեղացն պարտական է. կատարիչքն աւրհնին յայ»<sup>2</sup>:

Մակարավանքի Գավթի արձանագրութիւնը վկայում է. «Ես՝ Շրուան մեծ յուսով միաբանեաց ած ածինս եւ ետու իս (40) դահեկան եկեղեցիս: Առաջնորդս Դաւիթ (առաջնորդութեան տարիներն են 1220-1250 թթ.) եւ միաբանքս ետուն ինձ Բ աւր ժամ ի տաւն Յովաննու, նոր տարեմտին (այսինքն՝ Նավասարդի 1-ին = Օգոստոսի 11-ին): Ով խափանէ, իր մեղացն տէր է»<sup>3</sup>:

1 Դիվան հայ վիմագրության, պրակ VI, Ե. 1977, էջ 82:

2 Դիվան հայ վիմագրության, պրակ VI, Ե. 1977, էջ 140:

3 Դիվան հայ վիմագրության, պրակ VI, Ե. 1977, էջ 185:

Հայրավանքի Գավթի հավանաբար 13-րդ դարի արձանագրութեան մեջ գրված է. «Ի տաւն սբ Կարապետին Ա ժամ Արնենու Դեղին զնաւասարդն տաւն եւ Ա ժամ Յովանիսի, կատարողքն աւրհնին յայ. ած. ողորմի Մալուծին Ա ժամ Արնեն ի նոյն տաւնի. կատարողք աւրհնեն յայ եւ Ա ժամ Խոցաղեղին Արնեն ի նոյն տաւնի Կարապետին. ով խափանէ Դատի յայ»<sup>1</sup>:

Յայսմավուրքում գրված է. «... եւ նոյն կարգեաց (Լուսավորիչն - Ռ. Վ.) ամ յամէ տօն կատարել սբ Կարապետին մեծաւ հանդիսիւ ի Նաւասարդի ի Ա (= Օգոստոս 11)»<sup>2</sup>:

Վերոհիշյալ փաստերը ցույց են տալիս, որ Հովհաննես Մկրտչի կամ Կարապետի նոր տոն է սահմանվել 11-րդ դարի վերջերից հետո: Այս տոնը չմտավ հայոց շաբաթական տոնացույցի մեջ, որովհետեւ Աստուածածնից հետո տոնվում էր Հովհաննես Մկրտչի հիշատակի օրը:

\*\*\*

10-րդ դարի վերջից Տոնացույց-Յայսմավուրքները վկայում են Հովհաննես Մկրտչի մի նոր տոնի մասին: Բերենք այդ տեղեկութիւնները:

7530 թվահամարի Յայսմավուրքում (ԺԳ դար) գրված է. «Քաղոց Լ և Յունվ[ար] է. վերստին տաւնէ Յայտնութե(ան) և յիշատակ Յովանու Մկրտչի և Ստեփանոսի Նախավկաի» (էջ 90ա):

Ըստ 3082 թվահամարի գրչագրի (1267 թ.) «Նոր[ին] (Քաղոց) Լ (30). տաւն Մենդյան եւ Յայտնութեան Քրիստոսի և յիշատակ Յովաննու Մկրտչի (լուս է (7) [Յունուարի])» (էջ 193ա):

Ըստ 179 թվահամարի բնագրի (1292 թ.) «(Քաղոց) Լ (30). Տաւն Յայտնութեան և յիշատակ Յովանու Մկրտչին և Ստեփանոս նախավկային. յայսմ աւուր Սանդխտոյ կուսին (լուս. է [Յունուար])»:

992 թ. Հովսեփ Կոստանդնուպոլսեցու թարգմանած, որն ի դեպ խմբագրված է հետագա դարերում, Տոնացույցում Հունվարի 7-ի տակ գրված է. «Վերստին տաւն է. Աստուածայայտութեանն եւ յիշատակ սուրբ եւ փառաւորեալ Կարապետին եւ Մկրտչին Յովհաննու»<sup>3</sup>: Ըստ Գրիգոր Խլաթեցու Յայսմավուրքի՝ «Քաղոց Լ (30) և Յունվարի է (7). Վերստին տօն է Մենդեան և Յայտնութեան Քրիստոսի աստուծոյ և յիշատակ սրբոյն Յովաննու Կարապետին և Ստեփանոսի Նախավկային»<sup>4</sup>:

Վերոհիշյալ վկայութիւնները ուղղակի փոխառութիւններ են հունական Տոնացույց-Յայսմավուրքներից, որտեղ ինչպես նշել է Մ. Ավգերյանը, «Վարք սրբոյն Յովհաննու Կարապետի, որ է Մկրտչի» գրվել է Հունվար 7-ին<sup>5</sup>:

Սակայն նշված ուղղակի փոխառութիւններից բացի և հունական ծեսի ազդեցութեան տակ հայոց տոնացույց է մուտք գործել սկսած 13-րդ դարից Հովհաննես Մկրտչի հիշատակի օրը Քրիստոսի Մենդեան և Աստուածայայտութեան 8 օրերից (6-13) հունվար, անմիջապես կամ որոշ սրբերի տոներից հետո:

Բերենք այդ տեղեկութիւնները:

2948 թվահամարի ձեռագրում գրված է. «Նաւասարդի ի Ա-ն. Յովաննու Մկրտչի և այս

1 Դիվան հայ վիմագրության, պրակ IV, Ե., 1973, էջ 74:

2 Տպագիր, էջ 14:

3 Լ. Ոսկյան, Յուցակ հայերէն ձեռագրաց Մխիթարեան Մատենադարանի ի Վիեննա, աշխ. Լ. Ոսկյանի, Բ. Բ. Վենետիկ, 1963, էջ 700:

4 Տպագիր, էջ 426-429:

5 Լիակատար վարք և վկայութիւն սրբոց, Բ. Ա., էջ 11-36:



կանոն կատարի...»: Ի դեպ Մատենադարանի Համառոտ ձեռագրաց ցուցակի հեղինակները ըստ երևույթին ելնելով ձեռագրի գրչական առանձնահատկություններից թվագրել են 13-րդ դարով: Գրչագիրը Տոնացույց-Ճաշոց է. առանց շաբաթվա օրերի, բայց տոները դրված են հերթակա- նությամբ, սկզբից կիսատ է: Սկսել է Ձատկից: Տոնացույց-Ճաշոցում առկա է միայն մեկ ամ- սաթիվ Նավասարդի մեկ՝ Հովհաննես Մկրտչի տոնի կապակցությամբ, որը դրված է Քրիստոսի Մենդեան և Յայտնութեան 8 օրերից անմիջապես հետո, այսինքն՝ Հունվարի 14-ին կամ 15-ին: Ընդունելով, որ այդ ամիս-ամսաթիվը հայոց շաբաթական տոմարով է և համադրել է Հունվարի 14-15-ի հետ ստանում ենք այդ ամսաթիվերի տարիները, այն է՝

1. Հայոց ՉԺ թվական (= 1261 թ.) = Նավասարդ 1 = Հունվար 15 = շաբաթ:
2. Հայոց ՉԺԲ թվական (= 1263 թ.) = Նավասարդ 1 = Հունվար 15 = երկուշաբթի:
3. Հայոց ՉԺԵ թվական (= 1266 թ.) = Նավասարդ 1 = Հունվար 14 = Հինգշաբթի:
4. Հայոց ՉԺԷ թվական (= 1268 թ.) = Նավասարդ 1 = Հունվար 14 = Շաբաթ:

Պարզ է, որ Հովհաննես Մկրտչի տոնը Քրիստոսի Մենդեան օրերից հետո առաջին կանո- նում կարող է գրվել միայն հիշյալ տարիներին: Հասկանալի է նաև, որ 2948 թվահամարի գրչագիրը գրվել է կամ 1261 թ. կամ 1263 թ. կամ 1266 թ. կամ 1268 թ.:

Այլ խոսքով ձեռագիրն ընդօրինակվել է 1260-ական թվականներին: Ինչու հանգամանո- րեն կանգ առանք այս բնագրի թվագրման վրա, որովհետև Հովհաննես Մկրտչի հիշատակի օրը Նավասարդի մեկին առաջին անգամ գրվել է այս բնագրում, երբ, Հայոց շաբաթական տոմարի Նավասարդը թևակոխել է Հունվարի 14-15-ի սահմանները: Բերենք հաջորդ վկայությունները:

759 թվահամարի ձեռագրի (1278 թ.) մեջ գրված է՝ «Նաւասարդի Ա. Յովհաննու Մկրտչին տաւն է» (էջ 178բ): Ի դեպ վերոհիշյալ Տոնացույցը ամբողջական է, սկսել է Ձատկից և տոների նշումները կատարել է շաբաթական շարքով միաժամանակ տալով ամիս-ամսաթիվերով: Մեծա- մասամբ տալիս է հուլյան ամսաթիվեր, իսկ հայոց ամսաթիվ օգտագործել է երկու անգամ: Այդ ամսաթիվերը տրված են հայոց շաբաթական տոմարի ամիս-ամսաթիվերով: Դրանցից մեկով այն է՝ Նավասարդի 1-ով հնարավոր է ընդօրինակության նախագաղափարի և Հովհաննես Մկրտչի տոնի առաջացման ժամանակը որոշել: Հովհաննես Մկրտչի հիշատակի օրը տրված է ոչ թե Քրիստոսի Մենդեան և Յայտնութեան 8 օրից անմիջապես հետո, այսինքն՝ Հունվար 14-ին կամ 15-ին, այլ թվարկված են մի քանի սրբեր, որից հետո 8-րդ կանոնի տակ Հովհաննես Մկրտչի է:

Հունվարի 13-ից հետո և Առաջավորի Բարեկենդանից առաջ տոնվող սրբերի 8-րդ կանոնի տակ հիշյալ տոնը կարող էր մուծվել Տոնացույց հետևյալ տարիներից մեկում, այն է՝

1. 1215 թ. = Նավասարդ 1 = Հունվար 27 = Հովհաննես Մկրտչի տոնի օր = երեքշաբթի = 8-րդ օր կամ կանոն:
2. 1219 թ. = Նավասարդ 1 = Հունվար 26 = շաբաթ = 8-րդ տոնելի օր կամ կանոն = Հովհաննես Մկրտչի տոնի օր:

Հարկ է նշել, որ Հունվարի 13-ից հետո և Առաջավորի Բարեկենդանից առաջ սրբերի տո- ները մեկ կանոնի տակ գույգ գույգ կամ երեք երեք նշել են, երբ այդ հատվածում տոնելի օրե- րը քիչ են եղել: Այսպես, Հովհաննես Մկրտչի հիշատակի օրը 1247 թ. եղել է Նավասարդ 1 = Հունվար 19 = շաբաթ = 4-րդ տոնելի օր = 7 և 8-րդ կանոնը միասին: Նրա հիշատակի օրը կարող էին տոնել նաև 3-րդ տոնելի օրը, այս անգամ երեքական կանոններով նշելու դեպքում: Հաշվումներից պարզ է դառնում, որ Հովհաննես Մկրտչի այդ տոնի օրը, որը գրանցել է հայոց շաբաթական տոմարի Նավասարդի 1-ը և 8-րդ կանոնը, Տոնացույց է մտել 1215 թ. կամ 1219 թ.:

Միաժամանակ հասկանալի է, որ 759 թվահամարի գրչագրին ընդօրինակվել է 1215 թ. կամ 1219 թ. գրված նախագաղափար օրինակից, երբ նկատի ենք ունենում, որ Հովհաննես

Մկրտչի հիշատակի օրը հայոց շաբաթական տոմարի Նավասարդի 1-ի և 8-րդ կանոնի նշումնե- րով. Հունվար 13 - Առաջավորի Բարեկենդանի միջև ուրիշ որևէ ժամանակ էլ կարող ներդրվել տոնացույցի մեջ:

Ուշագրավ է, որ 179 թվահամարի գրչագրում (1292 թ.) կրկին Հովհաննես Մկրտչի այդ տոնի օրը կարծես ավանդույթ դարձած գտնում ենք Նավասարդի 1-ին և 8-րդ կանոնի տակ:

Իսկ 752 թվահամարի Տոնացույցի խմբագրությունը (1314 թ.) քննարկվող տոնը տեղա- փոխել է 6-րդ կանոնի տակ, թեև պահպանել է Նավասարդ 1-ի նշումը (էջ 151բ):

677 թվահամարի գրչագրում, որը «Տաւնացոյց տարոյն» վերնագիրն է կրում և գրիչը ա- վարտել է ընդօրինակությունը 1337 թ. Հոկտեմբերի 13-ին, երկուշաբթի օրը, Հովհաննես Մկրտչի տոնը տեղափոխել է առաջին կանոն: Այն ունի Նավասարդի 1 = Օգոստոս 11 համար- ժեքները: Հետագայում ընդօրինակված տոնացույցերի մեջ Հովհաննես Մկրտչի տոն առաջին տեղում դնելը հիմնականում դարձել է կանոն, որոնք երբեմն պահել են Նավասարդի 1-ը իսկ հաճախ չունեն այդ նշումը: Այնպես, որ 14-րդ դարի 30-ական թվականներից սկսած Հովհան- նես Մկրտչի քննարկվող տոնը տեղափոխել են Պենտոստայարպետի և Աբիսողոմ սարկավագի տոնից առաջ ըստ տոնացույցի տվյալների, որը ճաշոցների ազգեցություն հետևանք էր: Դրան- ցից 2948 թվահամարի գրչագրի տվյալները բերեցին վերևում: 4514 թվահամարի Ճաշոցը, որն ընդօրինակվել է 1322/3 թթ., առաջին կանոնի տակ տալիս է. «Նաւասարդի Ա. Յովհաննու Մկրտչին...», իսկ ստորին լուսանցքում՝ «Յովհաննու Կարապետին»<sup>1</sup>:

7741 թվահամարի ձեռագիրը, որն ընդօրինակվել է 1360 թվականին, քննարկվող տոնը տալիս է առաջին կանոնի տակ, միաժամանակ ներքին լուսանցքում բացատրել է. «Յովհաննու ծննդեան տօնդ յայս ժամս ի հօս կու տաւնուեր, վասն այն այստեղ գրեցա»<sup>2</sup>: Հնագույն ճա- շոցների և տոնացույցերի տվյալների համաձայն Հովհաննես Մկրտչի տոնը տեղափոխել են ա- ռաջին կանոն մասամբ 1260-ական թվականներից, իսկ հիմնականում 14-րդ դարի 20-30-ա- կան թվականներից և հետագայում ընդօրինակված գրչագրերի համար դարձել է կանոն:

Ի դեպ 1293 թ. Հովհաննես Կարապետի հիշյալ տոնը վկայված է արդեն գործառնություն մեջ: Բերենք այդ տեղեկությունը: Գոշավանքի Գավթի արևմտյան մուտքի ճակատի (արտա- քուստ) արձանագրության մեջ կարդում ենք. «Կամաւն այ (Աստուծոյ) ես Սարգ[իս] ... բեցի, որդի Գայլաձագին միաբանեցա ս՝ ք. (սուրբ) ածածնիս (Աստուածածնիս): Հաստատեցին մեզ Դ (4) պատարգ ի տաւնի Յովհաննու Կարապ[ետին] զկնի Յայտնութե[ան] զԱ (1) իմ հաւրն՝ Գայլաձագին. զԱ (1) իմ մաւրն՝ Մամաքին. զԲ (2) իմ եղբարցն Բուսլանին եւ Աղբերկանն: Կատարիչք՝ աւրհնին յայ (յԱստուծոյ): Ի թվ[ին] ՉիԲ (1293)»<sup>3</sup>:

Ի դեպ հայոց ՉիԲ թվին (= 1293 թ.) Հովհաննես Մկրտչի հիշատակի օրն ընկել է կամ Նավասարդի 9-ին (= Հունվար 15, Հինգշաբթի) կամ Նավասարդ 11-ին (= Հունվար 17, շաբա- թի): Հավանականը վերջինն է: Հետագա դարերից եկող տոնացույցերի ընդօրինակությունները նույնպես գրանցել են Հովհաննես Մկրտչի հիշյալ տոնը: 2092 թվահամարի ձեռագիրը (14-րդ դ.) տալիս է ուշագրավ բացատրություններ. «Ով գերագույնդ թէ ի յԼ (8) աւրէիցն և յԱռաջա- տրին մէջն բարեկենդան քիչ լինի դու գՅովհաննու տաւնն. զՊետրոսի եւ Աբիսողոմայն. զԱն- դոնի անապատականի. զԹեոդոսի թագաւորին յայս դեհս տաւնի ու թէ աւուրք լինի նա հետ Յայտնութեան Ը աւրացն տաւնի... հետ ի յութ աւրացն առաջին կիւրակեն չցն ՉԴ եւ առաջի տաւն Յովհաննու Կարապետին ի Նաւասարդ Ա-ն, հետ այսօր Պետրոսի հայրապետի և Աբիսո-

1 Տե՛ս Ձեռ. № 4514, էջ 15բ:

2 Տե՛ս Ձեռ. № 7741, էջ 32բ:

3 Դիվան հայ վիմագրության, պրակ VI, Ե. 1977, էջ 87:

դոմ սարկաւագի... Յունվար ԺԱ» (էջ 230ա-231ա): Հունվարի 11-ը Հնագույն ամսաթվի ընդ-  
միջարկութունն է:

Ըստ 7203 թվահամարի ձեռագրի՝ «Յետ Ը աւրէիցն Յովաննու Մկրտչի»:

9838 թվահամարի ձեռագիրը տալիս է «Նաւասարդի Ա. Յովաննու ծննդեան...» (էջ  
153բ):

Հարկ է նշել, որ ուշ շրջանում հատկապես ընդօրինակված տոնացույցերը հանել են Նա-  
վասարդի մեկի նշումը:

4874 թվահամար ձեռագրի (16-րդ դարի) ընդօրինակողը հետևյալ կերպ է բացատրում  
Հովհաննես Մկրտչի հիշյալ տոնի առաջացումը. «... Իսկ զկնի Ը (8) օրէից տօն առնես Յովան-  
նու Մկրտչին է: Նախատօնակ արա. ահ Ակ. արեգական արդարութեան իւր սարաւքն: Եւ թէ  
կամիս իմանալ զպատճառն Յովաննու տօնելոյն Նաւասարդի Ա (1), որ է Օգոստոս ԺԱ (11).  
տօն է Յովաննու ծննդեան, զոր կարգեալ է Սրբոյն Գրիգորի Լուսավորչին ի յԱստուածածնի  
պահքն կառնու, այս չէ տեղն: Ապա դու աշպէս իմացիր, զի Հայք առասպել վարէին մինչև ի  
սուրբ Գրիգոր Լուսաւորիչն իմացեալ զայսպիսի առասպել տօնն Լուսաւորիչն խափանեաց և  
Սուրբ Յովաննու տօն կարգեաց ի Նաւասարդի Ա (1) և երբ զնախանջն (նահանջն - Ի. Վ.) ի  
յայնմն տեղուջս դադարեցոյց, որ Ը (8) օրէքս ելնէ, որ անպայճառ կա: Եւ այդպէս իմացիր  
զտաւն Սրբոյն Յովաննու Մկրտչին» (էջ 162ա-բ)

Այստեղ շփոթված են տոմարական մի քանի իրողութիւններ, սակայն իմաստն այն է, որ  
Նավասարդի մեկը չորս տարին մեկ տեղափոխվելով Օգոստոսի 11, հասել է Հունվար 14 և ա-  
վարտել իր շարժումը:

Միմեոն Երեւանցու Տոնացույցում գրված է. «յետ Ը օրէիցն տօնք եթէ տօնիցին սոքա են.  
նախ տօն ծննդեան սրբոյն Յովհաննու Կարապետին... ապա...»: Ընդգծված ապա-ի հետևան-  
քով դեռևս 16-րդ դարից մինչև այսօր տոնները կոչվեցին Ապայից տոններ: Կարծում ենք կասկած  
չի կարող լինել, որ Հովհաննես Մկրտչի կամ Կարապետի վերոհիշյալ տոնի օրը հայոց տոնա-  
ցույց մտավ 13-րդ դարի 10-ական թվականներին՝ Հունական Յայսմավուրքների Հունվար 7-ի  
ազդեցութեան տակ:

Իսկապես ավանդական Նավասարդի 1-ով ստեղծվեց Հովհաննես Մկրտչի նոր տոն, որը  
մինչև 14-րդ դարի սկզբներն ընկած էր հուլյան Հունվար ամսի 27-14-ի միջև և հաճախ հար-  
մարեցնում էին Նավասարդի 1-ին, սակայն հետագայում Նավասարդ ամիսը պահեցին: Այն  
հետագայում մնաց հայոց տոնացույցում, բայց կորցրեց ամիս-ամսաթվի նշումը:

Այսպիսով, վերոհիշյալ քննութիւններից պարզ դարձավ, որ Հայոց շարժական տոմարի  
Նավասարդի 1-ով նշվել է Հովհաննես Մկրտչի (և Աթանազիոսի) հիշատակի օրերը բացի ան-  
շարժ օրերից սկսած 7-րդ դարից: Նավասարդի 1-ը համադրվել է հուլյան տոմարի տարբեր հա-  
մարժեքների հետ՝ Հունիս 24, Մայիս 30, Ապրիլ 7-25, Հունվար 27-26, 14-15 և այլն:

Հայոց շարժական տոմարի շարժունակութեան հետևանքով ավանդական Նավասարդի  
1-ը ծնել է Հովհաննես Մկրտչի կամ Կարապետի տոնական օրեր պատմական տարբեր ժամա-  
նակներում բացի անշարժ տոններից այն դրվել է Հայոց Տոնացույցի մեջ տարբեր ժամանակնե-  
րում, այն է՝ Պենտեկոստից (8-րդ դ.), Զատիկից (9-րդ դ.), Աստուածածնից (11-րդ դարից հետո)  
և Քրիստոսի Մննդեան և Յայտնութեան 8 օրերից հետո (13-րդ դ.): Այնպես որ Հովհաննես  
Մկրտչի տոնական օրերի զարգացման պատկերն ակնհայտ է դառնում պատմական կտրված-  
քով:

\*\*\*

Վերոհիշյալ թվարկմամբ չի սպառվում Հովհաննես Մկրտչի տոնական օրերը հայոց մեջ:

Հայտնի են ևս երեք տոնական օրվա նշումներ: Տոնացույց-Յայսմավուրքները տալիս են  
հետևյալ վկայութիւնները:

992 թ. Հովսեփ Կոստանդնուպոլսեցու թարգմանած Տոնացույցը տալիս է հետևյալ տեղե-  
կութիւնը՝ «ԻԴ (24) (Փետրուար) Գիւտ պատուական գլխոյն Յովաննու Կարապետին եւ  
Մկրտչին»<sup>1</sup>:

3082 թվահամարի ձեռագրում գրվում է. «Նոր(ին) (Մեհեկանի) ԺԸ. Գիւտ գլխոյն Յո-  
վաննու Կարապետին Քրիստոսի (լուս. ԻԴ (Փետրվարի))» (էջ 394ա):

179 թվահամարի բնագրում կարդում ենք. «ԺԸ (Մեհեկի). գիւտ պատուական գլխոյն Յո-  
վաննու Կարապետին և Մկրտչին (լուս. ԻԴ (Փետրվարի))»:

8179 թվահամարի Տոնացույց-Յայսմավուրքում Աստուածածնի տոնից հետո գրում է.  
«յիշատակ եւ գիւտ սրբոյ գլխոյն Յովաննու Մկրտչին Քրիստոսի», իսկ բնագրում գրված է.  
«... Եւ կատարի տաւն գիւտի պատուական եւ սուրբ գլխոյն Յովաննու Մկրտչին Մեհեկի ԺԸ  
եւ ի Փետրուարի ԻԴ...» (էջ 187ա-188ա):

2031 թվահամարի ձեռագիրը (1551 թ.) տալիս է հետևյալ տեղեկութիւնները. «Շաբ(աթ)  
Յովաննու Կարապետի և յիշատակի Յորա արդարոյ և է Օգոստ(ոս) ԻԹ և Սեպտ(եմբեր) ԺԶ և այլ  
գիտ Փետրվար ԻԴ. Մայիս Զ» (էջ 102բ):

Հիշյալ ամսաթվերից Մայիսի 6-ը և հավանաբար Սեպտեմբեր 16-ը Հորի տոնի հուլյան  
ամսաթվերն են, իսկ Օգոստոսի 29-ը և Փետրվարի 24-ը՝ Հովհաննես Մկրտչի:

Գրիգոր իշխանացու Յայսմավուրքում գրված է. «Մեհեկանի ԺԸ և Փետրվարի ԻԴ. Գիւտ  
Գլխոյն Յովհաննու Մկրտչին»<sup>2</sup>:

7529 թվահամարի Յայսմավուրքում (1326 թ.), որն ակնհայտորեն պատկանել է հունա-  
դավան-լատինադավան հայերին կարդում ենք. «Մեհեկի ԺԸ. Փետրվ(արի) ԻԴ. գիւտ սուրբ  
գլխոյն Յովաննու Մկրտչի» (էջ 134ա):

Մ. Ավգերյանը «Գլխատուամն սրբոյն Յովհաննու Մկրտչի» տոնի օրվա կապակցութեամբ  
բերել է հուլյան տոմարի զուգահեռները, որն ընդունված էր հունական և լատինական եկեղե-  
ցիներում այն է՝ Փետրվարի 24<sup>3</sup>: Ակնհայտ է դառնում, որ 10-րդ դարի վերջից-13-րդ դարե-  
րում հայերեն թարգմանված Տոնացույցը և հայոց Տոնացույց-Յայսմավուրքները փոխ են առել  
այդ ամսաթիվը ավելացնելով հայոց անշարժ տոմարի ամսաթիվը: Հովհաննես Մկրտչի հիշյալ  
տոնը Հայաստանում կարող էր տոնվել միայն լոկալ ձևով: Բացի Տոնացույց-Յայսմավուրքնե-  
րից ուրիշ բնագրերում չենք գտնում այդ տոնի մասին վկայութիւններ:

Յայսմավուրք-Տոնացույցերում գտնում ենք Հովհաննես Մկրտչի տոնի օր նաև Հուլիս  
11-ին: Այսպես 179 թվահամարի ձեռագրում գրված է. «Ե (Հրոտից). Տաւն ծննդեան Յովաննու  
Մկրտչին (լուս ԺԱ (Յուլիս))»:

8295 թվահամարի ձեռագրի (1381 թ.) մի տոմարական աղյուսակում գրված է. «Յովհան-  
նու ծնունդն ԺԱ (Յուլիս)» (էջ 3բ): 2031 թվահամարի Տոնացույցը (1551 թ.) Քրիստոսի  
Մննդեան և Յայտնութեան 8 օրերից (Հունվար 6-13) հետո տոնվող սրբերի մեջ հիշատակել է  
Հովհաննես Մկրտչին հետևյալ ձևակերպմամբ. «Նաւասարդի Ա. Յ[ուլիս] ԺԱ. ծնունդ[ը] Յո-  
վաննու» (էջ 17ա): Հարկ է նշել, որ վկայված Նավասարդի 1-ը 13-րդ դարում գրանցված  
Քրիստոսի Մննդեան 9-րդ օրից հետո տոնի օրվա հիշատակութիւնն է և ոչ Նավասարդի 1 =

<sup>1</sup> Հ. Ոսկյան, Գշվ. աշխ., էջ 703:

<sup>2</sup> Տպագիր, էջ 551-3:

<sup>3</sup> Լիակատար վարք և վկայութիւն սրբոց, Բ. Ա., էջ 536-566:

Հուլիսի 11-ի, որի քառամյակը 552-555 թթ. են: Նյութերը ցույց են տալիս, որ 13-րդ դարի վերջերից Տոնացույց-Յայսմավուրքները գրանցել են Հովհաննես Մկրտչի մի տոնի օրվա մասին, որը համարվեց էր Հուլիսի 11-ին:

16-րդ դարի որոշ տոնացույցեր Հովհաննես Մկրտչի հիշյալ տոնի օրը մուծել են «Տոնացույց ըստ շաբաթույց»-ների մեջ և անշարժ ձևով տեղադրել Հուլիսի 11-ին:

Վերջապես Հնագույն Յայսմավուրքների գտնում ենք հետևյալ տեղեկությունը.

Ըստ 2695 (էջ 172բ) և 9585 (էջ 267ա) թվահամարների Յայսմավուրքների. «Մարգաց Իթ (29) և Յուլիսի Ե (5) Ծնունդ Յովաննու»:

\*\*\*

Հովհաննես Մկրտչի կամ Կարապետի հիշատակի կամ տոնի օրերի հնագույն վկայությունները (անկախ նրանից մենակ, թե այլ սրբի հետ է) չեն առանձնացնում իբրև նրա Ծննդեան, Գլխատման, Նշխարացն և Գլխի Գյուտի օրեր, այլ հիշատակում են պարզապես «Յովհաննու մկրտչի», «յիշատակի մեծին Յովաննու», «գլխատակ սրբոցն» և այլն: Սակայն հետագա «Տոնացույց»-երում և Յայսմավուրքներում մասամբ դասակարգել են Հովհաննես Մկրտչի տոնի օրերը ըստ վերոհիշյալ հատկանիշների, սակայն բավականին տարբեր: Գրիգոր Վկայասերը և նրան հետևած տոնացույցերը (979, 940 և այլն) Հովհաննես Մկրտչի ծննդեան օրը դրել են Հունիսի 24-ին, այդպես են վարվել որոշ Յայսմավուրքներ. ինչպես օրինակ 3082 թվահամարի ձեռագրում (1267 թ.), որը հունական և լատինական Յայսմավուրքների ազդեցության հետևանք է: Իսկ մի խումբ Տոնացույցեր (752, 767, 9838, 5667 թվահամարների ձեռագրեր), ինչպես և Սիմեոն Երևանցու Տոնացույցում Հովհաննես Մկրտչի ծննդեան օրը նշել են Քրիստոսի Ծննդեան և Յայտնութեան 8 օրերից կամ անմիջապես հետո Հունվարի 14-ին (767, 5667, Ս. Երևանցու Տոնացույց) կամ որոշ սրբերին տոներից հետո (752, 9838), որը նույնպես հունական Յայսմավուրքների ազդեցության հետևանք է: Որոշ հայկական Յայսմավուրքներ անմիջապես փոխ են առել հունական տոնի օր Հունվարի 7-ը, որպես «յիշատակ Յովաննու Մկրտչի և Ստեփանոսի Նախավկային» (179, 7536 և այլն) դնելով Քաղոց 30-ը՝ հայոց անշարժ տոմարի համարվեց: Սակայն այդ բոլոր տոնացույցերը դնում են անշարժ տոմարի Նագոստոսի ԺԱ տոն է Յովաննու ծննդեան, զոր կարգեալ է սրբոյն Գրիգորի Լուսաւորչին ի Աստուածածնի պահքն կառաւ. այս չէ տեղն»<sup>1</sup>:

Հովհաննես Մկրտչի կամ Կարապետ տոնական օրերի դասակարգման հնագույն փորձերից մեկը գտնում ենք Վարդան Արևելցու «Տոնապատճառ»-ում, որտեղ գրված է. «Եւ մեծ ասացուք յաղագս տաւնիցն զանագանութեան սրբոցն, թէ որպէս ըստ չորից յեղանակաց բաժանեալ են ի միմեանց ըստ պատահման աւուրցն: Վասն զի առաջին է որ մուտն Նաւասարդի ամսոյ. Նահատակութեան է յիշատակ և գլխատմանն, զոր մշտնջենաւորապես տաւնէ լի (Եկեղեցի) սուրբ: Իսկ երկրորդն, որ յաւուրս Պենտակոստէին մերձաւոր Նոր Կիրակէին. Դիր է սրբոյն Գրիգորի ի բառնալ գայթակղութեանց անահտական պատկերին և արամազդաին և փոխաբերիլ ճմարտութեան տաւնիւք ի տեղառջն յայնորիկ սրբոյն Յովաննու, և ի միւսումն շաբաթն Աստուածածնին: Իսկ երրորդ տաւնն ի Սահմի է (7). Յովաննու և Աթանագինէին գալ սուրբ նշխարացն, և տեղի առնուլ կառացն ի ձորակին մերձ յԱշտիշատ Տարունոյ՝ գաւրն գայն տաւն ուրախութեան հրամանեցին կատարել ի հանգրստեան սրբոցն: Իսկ չորրորդն Գիւտ է սուրբ Գլխոյն Յովաննու յԱմասիայ քաղաքի, որ բերաւ ի մրակեցացն և յայտնեցաւ Աստուածասիրաց անձանց ի Իթ-ն Աւգոստոս ամսոյ: Արդ այս չորիւք տաւնիւքս պատուի մեծն Յովաննէս

<sup>1</sup> Ձեռ. № 767, էջ 123բ:

ըստ չորից եղանակաց տարոյն մաքրութեան) և ըստ չորից տիեզերաց Մի (աշխարհի) կատարելութեան, որ ընդ բոլոր հանուրց կաթողիկէ եկեղեցի յարդար ի տաւնիւք հոգևոր ուրախութեամբ...»<sup>1</sup>:

Վարդան Արևելցու հիպոթետիկ դասակարգումից կարելի է հետևեցնել, որ Նավասարդի 1-ի (հունվարյան) տոնը նվիրված էր Հովհաննես Մկրտչի նահատակության և գլխատման հիշատակին, Սահմի 7-ինը, որը նույն է ինչ Պենտեկոստից հետո եկողը որպես և Աստուածածնից տոները նշխարաց և ուրախութեան հիշատակ էր, իսկ Օգոստոսի 29-ինը՝ Հովհաննես Մկրտչի գլխի գյուտի տոն էր:

Բացառիկ տոնացույցեր (2031 թվ. ձեռ.) և որոշ Յայսմավուրքներ (179 թվ. ձեռ. և տպագիր Յայսմավուրք) Հովհաննես Մկրտչի ծննդեան տոնը նշել են մի դեպքում Քրիստոսի Ծննդեան և Յայտնութեան 8 օրերից հետո (ոչ անմիջապես) միաժամանակ տալով հետևյալ ձևակերպումը. «Նաւասարդ Ա. Յ[ուլիս] ԺԱ. Ծնունդ Յովաննու» (2031, էջ 17ա), կամ (անմիջապես) «Նաւասարդի Ա Յովաննու Մկրտչի» (ձեռ. 179), իսկ որոշ Յայսմավուրքներ հետևյալ ձևակերպմամբ՝ «Ե (Հրոտից - Ի. Վ.) տաւն ծննդեան Յովաննու Մկրտչին... ԺԱ (Յուլիս) (ձեռ. 179): Այլ խոսքով Հուլիսի 11-ին են համարել Հովհաննես Կարապետի ծննդեան տոնի օրը:

Այսպիսով, վերոհիշյալ քննությունից պարզ է դառնում, որ Հովհաննես Մկրտչի ծննդեան հիշատակի օր է ընդունվել Հունիսի 24-ը, Հուլիսի 11-ը Օգոստոսի 11-ը, ինչպես և Քրիստոսի Ծննդեան և Յայտնութեան 8 օրերից հետո (Հունվար 14 և այլն): Ասենք միայն, որ հիշյալ տոնը, որը ունի Նավասարդի մեկ նշումը տոնացույց է մտել 13-րդ դարից:

Հովհաննես Մկրտչի Գլխատման օրը նույնպես դրվել է տոնացույցի տարբեր տեղերը: Գրիգոր Վկայասերի Տոնանամակի բնագրերում տրված է հետևյալ ձևակերպումը «Նորին (Աւգոստոս) Իթ. Գլխատումն Կարապետին Յովհաննու...»<sup>2</sup>, իսկ Յայսմավուրք-Տոնացույցերում՝ «Ժթ (Նաւասարդի). Տաւն գլխատման Յովաննու Մկրտչի. Իթ (Աւգոստոս)<sup>3</sup>, «Նորին (Աւգոստոս) Ժթ (լուս. Իթ (Աւգոստոս). գլխատմանն Յովաննու»<sup>4</sup>:

9337 թվահամարի ձեռագրում Նավասարդի 19 և Օգոստոսի 29-թ. «տաւն գլխատմանն Յովաննու»:

Հովհաննես Մկրտչի գլխատման օրը տեղադրվել է Ջատից հետո եկող շաբաթ օրը հետևյալ տոնացույցերում (936, 2092, 7203 և Սիմեոն Երևանցու), որոնք ունեն հետևյալ ձևակերպումը «Նոր Կիրակին շաբաթ աւրն Յովաննու Մկրտչի գլխատմանն...»<sup>5</sup>, «Ձկնի զատկին շաբաթն աւրն Յովաննու Գլխատմանն...»: Միաժամանակ բնագրի հեղինակը կամ արտագրողը շարունակել է «... այս տաւնս ի Յայսմավուրքն յԱւգոստոս Իթ (29) է»: Այսինքն կողքի ասել, որ հիշյալ տոնի ընթերցումները տես Յայսմավուրքի Օգոստոսի 29-ի տակ: 7203 - ձեռագրի հեղինակը ձևակերպել է. «/զկնի Ջատկին շաբաթ. Յովաննու Մկրտչին Գլխատման» (63ա):

Սիմեոն Երևանցին գրում է. «Ձկնի Ջատկին շաբաթ. յիշատակ է գլխատման սրբոյն Յովհաննու Մկրտչին»:

Հովհաննես Մկրտչի գլխատման տոնի օրը՝ Ջատից հաշված 7-րդ օրը, հայոց Տոնացույց է մտել 9-րդ դարի 4-րդ քառորդից, որը ավելի հին է քան Գրիգոր Վկայասերի Տոնանամակի

<sup>1</sup> Ձեռ. № 4139, էջ 62բ-66բ:

<sup>2</sup> Ձեռ. № 979, էջ 362բ:

<sup>3</sup> Ձեռ. № 179:

<sup>4</sup> Ձեռ. № 3082, էջ 389բ:

<sup>5</sup> Ձեռ. № 2092, էջ 225բ:

տվյալները, որտեղ ինչպես տեսանք Հովհաննես Մկրտչի գլխատման օրը դրվել է Օգոստոսի 29-ին: Հովհաննես Մկրտչի Գլխի Գյուտի օր են արձանագրել մի շարք Յայսմավուրքներ, այսպես 3082 թվահամարի ձեռագրում գրված է. «Նոր(ին) (Մեհեկանի) ԺԸ. Գիւտ Գլխոյն Յովհաննու Կարապետին Քրիստոսի (լուս. ԻԴ (Փետրվարի) (394ա):

179 թվահամարի ձեռագրում տրվում է հետևյալ ձևակերպումը. «ԺԸ (Մեհեկի) Գիւտ պատուական գլխոյն Յովհաննու Կարապետին և Մկրտչին (լուս. ԻԴ (Փետրվարի)»: Ուշագրավ է, որ 8179 թվահամարի Տոնացոյց-Յայսմավուրքը, որը դժբախտաբար կիսատ է, Աստուածածնից հետո եկող սրբերի շարքում գրել է. «Յիշատակ եւ գիւտ սրբոյ Գլխոյն Յովհաննու Մկրտչին Քրիստոսի», միաժամանակ շարադրանքում ավելացրել է. «Եւ կատարի տաւն Գիւտի պատուական եւ սուրբ գլխոյն Յովհաննու Մկրտչի Մեհեկի ԺԸ եւ ի Փետրուարի ԻԴ...» (188ա): Այս ամսաթիվը ևս հունական Յայսմավուրքի ազդեցութունն է կրում, որը սակայն ըստ Մ. Ավգերյանի Գլխատումն սրբոյն Յովհաննու Մկրտչի օրն էր: Այն նաև կատարել են Օգոստոսի 29-ին ինչպես հունական, այնպես էլ լատինական եկեղեցիներում:

Վերջապես 1323 թվահամարի ընդօրինակված Տոնացույցում, որը տոնական տարին տալիս, միաժամանակ սրբերի հիշատակի օրերի վրա ավելացնում է թե հուլյան, թե հայոց անշարժ տոմարի ամսաթիվեր, հաղորդում է մի ուշագրավ փաստ կապված Հովհաննես Մկրտչի օրերից մեկի հետ: Բերենք այդ բնագիրը, որտեղ Պենտեկոստից հաշված 12-րդ օրվա համար գրում է. «Սահ(մի) է (7). Յովհան սղ. կց.» իսկ լուսանցքում՝ «հինգշաբթի Յովհաննու Կարապետին) եւ Աթանազիոսի հայրապետին. այս նշխարացն է» (էջ 252ա):

Նյութերի քննությունը ցույց է տալիս, որ մինչև 8-րդ դարի սկզբները Հովհաննես Մկրտչի կամ Կարապետի տոների օրերը հայոց մեջ չէր առանձնացված և դասակարգված, այլ հիշատակում են «Յովհաննու Մկրտչի» կամ «Յիշատակ մեծին Յովհաննու» կամ «գլխատակ սրբոցն» ձևերով: Նրա երկու տոնի օրերը, այն է՝ Հունիսի 24 նախկին Ամանորեան-Նավասարդեա-Նոր պտուղոց օրերից մեկը և Օգոստոս 29 (= Սահմի 7 = 620-623 թթ.):

Հետագայում Յովհաննես Մկրտչի տոնի օրերը ստացան տարբեր անվանումներ՝ Ծննդեան, Գլխատման, Նշխարաց, Գիւտ Գլխոյն, որոնք թեև շատ հստակեցված չէին Բայց արտացոլում էին Հովհաննես Մկրտչի տոնական օրերի զարգացման ընթացքը: Հովհաննես Մկրտչի տոներից մեկը, որը կատարվում էր Զատիկից հետո եկող 7-րդ օրը առաջացավ 9-րդ դարի 4-րդ քառորդին, իբրև գլխատման տոն, որը Գրիգոր Վկայասերի տոնացույցում տեղափոխվեց Օգոստոսի 29 հունական և լատինական ծեսի ազդեցության տակ:

18-րդ դարում Սիմեոն Երևանցին հստակեցրեց Հովհաննես Մկրտչի տոների որակումները և դասակարգեց հետևյալ կերպ.

Քրիստոսի Ծննդեան և Յայտնութեան 8 օրերից հետո (Հունվար 14 և այլն) ընդունեց իբրև Հովհաննես Կարապետի Ծննդեան տօն, Զատիկից հետո եկող շաբաթ օրը (շաբաթական) իբրև հիշատակ Հովհաննես Մկրտչի Գլխատման, Պենտեկոստից հետո եկող 12-րդ օրը (շաբաթական). տօն Հովհաննես Կարապետի և Աթանազիոսի: Վերջապես Աստուածածնից հետո եկող 3-րդ կիրակիի հինգշաբթի օրը (շաբաթական) տօն Հովհաննու Կարապետին և Յոթ արդարին:

Այս կարգավիճակով էլ այժմ տոնում է հայոց եկեղեցին Հովհաննես Մկրտչի կամ Կարապետի տոները:

### ԳՐԻԳՈՐ ԼՈՒՍԱՎՈՐԶԻ ՏՈՆԱԿԱՆ ՕՐԵՐԸ ՀԱՅՈՑ ՄԵՋ

Սահակ կաթողիկոսը Երուսաղեմի Տոնացույցը թարգմանեց հունարենից հայերեն և մասամբ խմբագրեց, ինչպես տեսանք, մոտ 410-ական թվականների վերջերին - 420-ական թվականների սկզբներին և անվանվեց «Կանոնք (կամ կանոնադրութիւնք) ընթերցուածոց»:

Գրիգոր Լուսավորչի հիշատակի օրը չմտավ այդ Տոնացույցի մեջ, թերևս նաև այն պատճառով, որ Հայոց քրիստոնեութան պատմությունը դեռևս գրված չէր: Այն տեղի ունեցավ 5-րդ դարի 20-40-ական թվականներին, երբ անկասկած Սահակ կաթողիկոսի պատվերով շարադրվեցին առանձին վարքերի և վկայաբանությունների ձևով երեք դպրութիւններ (գրքեր), ինչպես վկայել է «Բիւզանդարան Պատմութիւնք»-ի հեղինակը: Համառոտակի ասենք, որ առաջին դպրութիւնը Աբգարի թուղթն էր ավելացրած Թադեոս առաքյալի և Սանդուխտ կույսի վկայաբանությունը, որոնցից, ինչպես ցույց ենք տվել Աբգարի թուղթը ասորերենից հայերեն թարգմանեցին Եգնիկ Կողբացին կամ Հովսեփ Պաղնացին կամ երկուսը միասին 416-419 թվականների սահմաններում: Իսկ Թադեոս առաքյալի և Սանդուխտ կույսի վկայաբանությունը գրեց Սամուել եպիսկոպոսը 420-423 թթ. քառամյակում: Երկրորդ դպրութիւնը՝ «Գիրք Գրիգորիսի» կամ «Ագաթանգեղայ Պատմութիւնք»-ը գրվեց 428-435 թթ. սահմաններում, ամենայն հավանականությամբ Մեսրոպ Մաշտոցի կողմից: Երրորդ դպրութիւնը՝ «Բիւզանդական պատմութիւնք»-ը՝ 435-445 թթ. միջև հավանաբար Մուշէ Տարոնացու կողմից: Ինչևէ թե՛ Գրիգորի վարքի, թե՛ Բիւզանդարան պատմությունների, թե՛ պատմիչների, թե՛ հետագայի հայոց հայրապետների և վարդապետների թղթերի և այլ նյութական հուշարձանների պատմությունների մեջ գտնում ենք բազմաբնույթ տեղեկություններ, որոնք հիմնավորում են, որ Գրիգոր Լուսավորչի հիշատակը արդեն տոնվում էր, նրա գերեզմանը դարձել էր սրբատեղի, գտնված նշխարները վեր էին անվել Սուրբ մասունքների, ինչպես նրան նվիրված Մատուռ-Եկեղեցիների, այնպես էլ՝ կաթողիկոսարանի: Գրիգոր Լուսավորչի դարձել էր սուրբ նահատակ Հայքում և Կովկասում Քրիստոնեության հաղթարշավի ճանապարհին: Գրիգորիսի կամ Ավետարների պատմության մեջ Գրիգոր Լուսավորչի դեռևս մահացած չէ: Գառնիկ անունով մի ճգնավոր տեսիլքի շնորհիվ գտնում է Գրիգորի նշխարները Դարանաղեաց գավառի Մանեայ այլք վայրում: Նա սրբի մասունքների մի մասը բերում և հողին է հանձնում Թորդանի եկեղեցում, իսկ մյուս մասը տարվում է կաթողիկոսարան, որտեղից մասունքների մի մասը հետագայում հասնում է Ջենոն կայսրին: Վերջապես նշխարներից տանում և թաղում են Բագարանի մատուռում, որը Գրիգոր Լուսավորչի անունն էր կրում: «Բիւզանդարան պատմութիւնք»-ի հեղինակն արդեն գիտի Թորդանի եկեղեցում Գրիգոր Լուսավորչի մասունքների թաղման մասին, ուստի այդ պատմությունը, եթե ոչ գրավոր ապա գոնե բանավոր հայտնի էր հոգևորականության շրջանակներին, իսկ նրա գրավոր տարբերակը գրանցել է Մովսես Խորենացին:

«Բյուզանդարան Պատմութիւնք»-ի հավանական հեղինակ Մուշէ Տարոնացին գրում է. «Արդ այս տեղիք (խոսքը Տարոնի եկեղեցիների մասին է - Ռ. Վ.) վասն յառաջարկարգութեան կանոնաւ ի հայրապետացն եւ ի թագաւորացն պատուեալք լինէին, որպէս ի Դարանաղեաց գաւառին եկեղեցին Թորդանու պատուի վասն գերեզմանացն հայրապետին Գրիգորի եւ Արիստակէսի: Սոյնպէս եւ յիշատակս թագաւորին Տրդատայ թէ կամոք, թէ ակամայ, որ արժանի լեալ էր նախածանօթ ի Քրիստոս հաւատայ, վասն այսորիկ կամ եղև աշխարհին զնախնեաց

ժամանակին հարանայց եպիսկոպոսաց զայս տեղիս պատուել, ուր սոքա եղեալն էին, զի սիրելի էր աշխարհին պատուել զառաջընծայն Քրիստոսի զթագաւորն իւրեանց Տրդատ նոյնպէս եւ զյառաջեպիսկոպոսն զնախավաստակն Գրիգորիս. սոյնպէս և ի գաւառն Այրարատեան զնախավկայան Քրիստոսի ուր Գայիանէն եւ Հռիփսիմէն կային իւրեանց գործակցօք հանդերձ, սոյնպէս առաւել եւ զնախակեղեցին»:

Վերոհիշյալ տեղեկութիւնները աներկբա ցույց են տալիս, որ Գրիգորի, Արիստակեսի և Տրդատի հիշատակները տոնել են Թորդանում, իսկ Գայանէին և Հռիփսիմէին՝ Վաղարշապատում: Ուշագրավ վկայութիւններ է հայտնում Ղազար Փարպեցին: Նա գրում է, որ Ներսէս Կամսարականը, որի եղբորը պարսիկները գերի էին վերցրել, վշտահար հետևում էր պարսից զորքին, հուսալով որ կարող է ազատել նրան, Ղազար Փարպեցին շարունակում է. «Եւ մերձեալ որպէս թէ օթեւան միով ի սուրբ տեղի տան նահատակի Գրիգորի ի գեօղն որ անուանեալ կոչի Բագաւան և տեսեալ Կամսարական Ներսէսի գտեղին նահատակին Գրիգորի եւ յիշելով զտրտմակցութիւն սրբոյ ընդ վշտացեալս եւ զհամարձակութիւն սրբոյ առն Գրիգորի առ Աստուած, ձայն սաստիկ Բարբառոյ հանդերձ արտասուօք արձակեալ առ Աստուած աղաղակեալ ասելով. Տէր Գրիգոր, որ զսաստիկ մէջ ամբարշտութեանն մեղաց մերոց մերժեալ փարստեցեր յաշխարհէս Հայոց, փարստես եւ զիմ սաստիկ մէջ տրտմութեանս ի սրտէս եւ շնորհեա ինձ զանձկալի զեղբայր իմ տեսնել առողջ առ իս. քանզի հնարաւոր է Աստուծոյ ամենայն, եւ զքո խնդիր քաջ արործելով կամի լսել և կատարէ: Եւ այսպէս մեծածայն բարբառով եւ ողբալով աղաղակեց Կամսարականն Ներսէս առ այլն Աստուծոյ Գրիգորիոս ոչ թէ բերանով բարբառէր, այլ սրտին աղաղակէր: Եւ նորա լուեալ՝ վաղվաղակի ասաց զՔրիստոս եւ Փրկչէն Աստուծոյ անդ եւ անդ հանեալ զկապեալն Հրահատ ի շրջափակ զգուշութենէ պահպանացն արձակէ խաղաղութեամբ առ սիրելի եղբայրն իւր եւ յաշխարհ»<sup>1</sup>:

Պարզ է, որ Բագավանում՝ Գրիգոր Լուսավորչի անունը կրող Մատուռում, նշել են նրա հիշատակի օրը: Գրիգոր Լուսավորչի տոնի օրվա քննութիւնը կկատարենք շարադրանքի ընթացքում:

Վահանանց պատերազմում նահատակվում է Սյունեաց սեպուհ Յազդը. «Մերձ ի տեղի սուրբ մատրանն առաքելանման նահատակին սրբոյն Գրիգորի, ի գեօղն որ կոչի Բագաւան, ի նահանգին Բագրեւանդ, ի լանջակողմն լերինն որ անուանի Նպատ, մոտ ի սուրբ տեղի մատրանն որպէս երկու քարընկեցօք: Եւ կատարեալ սրբոյ սիւնի սեպչին Յազդ զընթացս նահատակութեան իւրոյ յամսեանն Հոռի, որ օր ՉԶ էր ամսոյն, եւ ամփոփեալ նշխարք նորա եղան ի սուրբ մատրանն Գրիգորի»<sup>2</sup>:

Ն. Ակինյանը իրավացիորեն գրում է. «Բագավան Եփրատի վրա, շինուած էր և գիտենք Փաւստոսէն, թէ հոն. «ուստի բղխեալ հոսեն ակունք Եփրատա գետոյն», «յառաջու կայանքն էին մեծին Գրիգորի առաջնոյ, որում տեղեացն Ոսկիք կոչեն» ծաղկոտն գաւառի մեջ (Փաւստ. 2. 16): Ուստի զարմանալի չէ, որ յետ մահուան նշխարները ամփոփուած Ըլլային Բագաւան»<sup>3</sup>:

Գրիգոր Լուսավորչի նշխարները պահվում էին նաև կաթողիկոսարանում և պատեհ առիթով օգտագործում ի բարօրութիւն ժողովրդի: Ղազար Փարպեցին պատմում է, որ Վարդանանց պատերազմին մասնակից Հայոց նախարարները, երբ 450 թ. վերադարձան Տիգրանից, նրանց դիմավորեցին «գասք պաշտօնէից Քրիստոսի բերելով ընդ ինքեանս զնշան կենսատու խաչին եւ

զնշխարս սրբոյն առաքելանման նահատակին Գրիգորի»<sup>1</sup>:

Բացի այդ Վահան Մամիկոնյանը, երբ 486/7 թթ. վերադարձավ Պարսկաստանից, որպես ոչ միայն սպարապետ Հայոց, այլև մարզպան, նրան դիմավորեց Հովհան Մանդակունի կաթողիկոսը «պատուական նշանաւ խաչին եւ սուրբ նշխարօքն ճգնագգեաց նահատակին Գրիգորի»<sup>2</sup>:

Վերոհիշյալ վկայութիւնները ևս կասկած չեն թողնում, որ Գրիգոր Լուսավորչի հիշատակի օր է եղել և այն կատարել են պարբերաբար, ինչպես ընդունված էր մյուս սրբերի համար:

Ն. Ակինյանը ճշմարտացի է, երբ գրում է, որ 5-րդ դարում «կար Հայ սրտին մեջ Գրիգորի պաշտամունք»: Այնուհետև ավելացնում է. «Դժբախտաբար չունինք որ եւ է կռուան հաստատելու թե տարւոյն որ օրը սահմանուած էր Լուսաւորչին յիշատակին, սակայն այն աներկբայելի է, թէ սուրբ մը, որ ուներ ի անուան նուիրուած եկեղեցին պետք է ունենար իր յիշատակին ձօնուած օր մ'ալ»: Նա անհավանական ենթադրութիւն է անում, այն է՝ «Հաւանօրէն այդ օրը կ'իյնար Նաւասարդեան տօներուն, ի Բագաւան աշխարհովքն կը հաւաքուէին Նաւասարդի առաջին օրերուն տօնախմբելու Յովաննու Մկրտչին յիշատակը. անշուշտ այս առիթով կը տօնուէր նաեւ Հայոց Լուսաւորչի յիշատակը»<sup>3</sup>:

Գրիգոր Լուսավորչի հիշատակի օրը յուրաքանչյուր տարի ստույգ որոշելու համար բարեբախտաբար կովաններ կան: Դա Հովհան Մանդակունու խմբագրած «Կանոնք ընթերցուածոց»-ի և Ստեփանոս Սյունեցու տվյալներն են, որոնք կքննենք փոքր ինչ հետո:

6-րդ դարի և 7-րդ դարի սկզբների բնագրերում ևս ընդգծվել են Գրիգոր Լուսավորչի պաշտամունքը շնչադրված բնորոշումներով: Այսպես, 550-ական թվականների սկզբներին գրած Ներսես կաթողիկոսի և Ներշապուհ եպիսկոպոսի կանոնական թղթում, այն է՝ «... թէ որպէս սահմանեցաւ կարգ ուխտի և որոշման վանաց» կիրառվել են հետևյալ արտահայտութիւնները.

1. «ԼԸ... եւ երիցս երանեալն քաջ նահատակն Քրիստոսի Գրիգորիոս...»:

2. «ԽԴ... ընկալեալ ի քաջ նահատակին՝ ի տեառնէն Գրիգորէ...»<sup>4</sup>: Վրթանես Քերթովի թղթերում (604-607 թթ.) տեղ են գտել համարժեք բնորոշումներ, այն է՝ 1. «... Երանելի նահատակն Քրիստոսի եւ հայր մեր Գրիգորիոս»: 2. «... եւ ի քաջ նահատակէն տեառն Գրիգորէ...»<sup>5</sup>:

Հովհաննես Գաբրելեանցի կաթողիկոսի թղթում ևս առակա են այդ բնորոշումները: Դեռ ավելին Հովհաննես կաթողիկոսի ժամանակ, ինչպես վկայել է Աղուանից պատմութեան հեղինակ Մովսեսը, Գրիգորի նշխարների մի մասը տեղափոխել են Աղուանք, որը հիմնավորում է Գրիգոր Լուսավորչի պաշտամունքի տարածումը: Ուշագրավ են «Գիրք թղթոց»-ի և Սեբեոսի տեղեկութիւնները Գրիգոր Լուսավորչի անվամբ նոր եկեղեցիներ կառուցելու մասին: Ըստ այդ բնագրերի մինչև 572 թ. ապստամբութիւնը Դվինում կար Գրիգորի անվամբ փայտաշեն եկեղեցի, որն ապստամբութեան ժամանակ այրեցին, իսկ 607-617 թթ. սահմաններում Մմբատ Բագրատունու ծախսերով կառուցվում է քարաշեն եկեղեցի՝ ոչնչացված եկեղեցու տեղը: Սեբեոսը տեղեկացնում է նաև, որ Գրիգոր Լուսավորչի տեսիլքի ազդեցութեան տակ Ներսես Տայեցի

<sup>1</sup> Ղ. Փարպեցի, Պատմութիւն Հայոց, էջ 139:

<sup>2</sup> Աճղ, էջ 140-141:

<sup>3</sup> Տե՛ս Ն. Ակինյան, Ս. Գրիգոր Լուսավորչի տօները Նէոպոլսի մոտ մարմարեայ տօնացոյցի՞ն վրայ, Մատենագրական հետազոտութիւններ, քննութիւն եւ բնագիր, հ. Ե, Վիեննա, 1953, էջ 27-28:

<sup>1</sup> Աճղ, էջ 55:

<sup>2</sup> Աճղ, էջ 27:

<sup>3</sup> Տե՛ս Ն. Ակինյան, Ազվ. աշխ., Աճղ, էջ 28:

<sup>4</sup> Տե՛ս Կանոնագիրք հայոց, հ. Ա., էջ 393 և 402:

<sup>5</sup> Տե՛ս Գրիք թղթոց, էջ 93, 112-113 և 138:



կաթողիկոսը կառուցել է տալիս Զվարթնոցը 649-661 թթ. սահմաններում որոշ ընդհատումներով և նրա հիմքերի մեջ դրել են սուրբ Գրիգորի նշխարներից:

Անցնենք Գրիգոր Լուսավորչի հիշատակի օրվա հարցին:

Գրիգոր Լուսավորչի տոնի կատարման ապացույցը նրա վարքն է. այն է՝ Գիրք Գրիգորիսի կամ Ագաթանգեղոսի՝ Ավետարանի պատմությունը: Սակայն նրա վարքում հասկանալի պատճառով, իսկ վաղ շրջանի մյուս սկզբնաղբյուրներում նշումներ չեն պահպանվել Գրիգոր Լուսավորչի հիշատակի օրվա կապակցությամբ, թեև նրա տոնը կատարել են 420-ական թվականներից, եթե ոչ ավելի վաղ, Մարտի 9-ին՝ նախապես իբրև անշարժ տոն: Դրա հիմնավորումը քողարկված ձևով գտնում ենք տոնական տարվա կտրվածքում, երբ Հովհան Մանդակունին կանոնաց Գրիգոր Լուսավորչի հիշատակի օրը այս անգամ իբրև շարժական տոն, որի մասին քիչ հետո: Հիշյալ նկատառումից ելնելով կարծում ենք, որ մինչև 480-ական թվականները Գրիգոր Լուսավորչի օրը նշվել է Մարտի 9-ի կանոնի տակ, երբ «Կանոնք ընթերցուածոց»-ի Սահակյան տարբերակում այդ օրը տոնվում էր «Քառասնից և այլոց մատիրոսաց» հիշատակը: Այս տարբերակը մենք գերադասում ենք նաև հետևյալ պատճառով: Երբ Հովհան Մանդակունին Մեծ Պահլավի շրջանի շաբաթ օրերին սահմանեց թեոդորոս գորավարի, Կյուրեղ և Հովհաննես Երուսաղեմցիների, Սեբաստիայի քառասուն վկաների, որից հետո Գրիգոր Լուսավորչինը կողք կողքի, փաստորեն տոնացույցային տարվա այն հատվածում, երբ վերոհիշյալ սրբերի տոները կատարվել էին անշարժ տոնական օրերով և նույնիսկ այդ տոները շարժականի վերածվելուց հետո էլ որոշակի հաճախականությամբ համընկնում էին նախկին անշարժ օրերի հետ:

480-ական թվականներին, ինչպես տեսաք, Հովհան Մանդակունին խմբագրեց Հայոց Տոնացույցը, այն է՝ «Կանոնք ընթերցուածոց»-ը, Գրիգոր Լուսավորչի հիշատակի օրը կանոնաց Մեծ Պահլավի կամ Աղուհացից օրերում՝ հինգերորդ կիրակիից հետո եկող շաբաթ կամ Զատիկից ետ հաշված 16-րդ օրը: Այն Զատիկի շարժական լինելու հետևանքով ընկնում էր Մարտ 1 - Ապրիլ 10-ի ամսաթվերից մեկում նայած տարի: Բերենք մեզ հասած որոշ վկայություններ: Վենետիկի 285 թվահամարի գրչագիրը, որը «Կանոնք ընթերցուածոց»-ի Հովհան Մանդակունու կամ 2-րդ խմբագրության ուշ ընդօրինակություն է, Մեծ Պահլավի հինգերորդ կիրակիից հետո արձանագրել է. «Շաբաթ. Սրբոյն Գրիգորի...»<sup>1</sup>:

Երևանի 5356 թվահամարի ձեռագրում, որը նույնպես «Կանոնք ընթերցուածոց»-ի 2-րդ խմբագրության ուշ շրջանի տարբերակ է, գրված է. «Վեցերորդ շաբաթու. Սրբոյն Գրիգորի չարչաբանաց եւ Վիրապընկեց [ա]ռնելոյ...: Գիւտ նշխարաց սրբոյն Գրիգորի եւ այս կանոն կատարի...»<sup>2</sup>:

Ագաթանգեղոսի Պատմության 620-623 թթ. կատարած ընդարձակ խմբագրության ընդօրինակությունների մեջ գտնում ենք հետևյալ սահմանումները.

1. «Հինգերորդ շաբաթ աւրն. վկայաբանութիւն սրբոյն Գրիգորի Հայոց Լուսաւորչին, որ վկայեաց առաջի Տրդատայ թագաւորին»:

2. «Վեցերորդ շաբաթ աւրն. Յիշատակ է սրբոյն Գրիգորի Հայոց Լուսաւորչի յԱգաթանգեղայ պատմութենէն»: 1-ին տարբերակը ավելի մոտ է Հովհան Մանդակունու կանոնքին:

Վերոհիշյալ կանոնի տարբեր խմբագրությունները հակասություններ չեն, այլ հաշվման արդյունք: Այն հեղինակները, որոնք հաշվել են Բուն Բարեկենդանից հինգերորդ կիրակիից հետո արձանագրել են «Հինգերորդ շաբաթ աւրն», այսինքն հինգերորդ կիրակիից հետո եկող շաբաթ են դրել Գրիգոր Լուսավորչի հիշատակի օրը: Իսկ այն գրիչները, որոնք ձևակերպել են

<sup>1</sup> Ս. Մեմենյան, Գշվ. աշխ. էջ 545-606:

<sup>2</sup> Ձեռ. № 5356, էջ 146բ-151ա:

«Վեցերորդ շաբաթ աւրն», նկատի են ունեցել Բուն Բարեկենդանի 6-րդ կիրակիին նախորդող շաբաթ օրը:

Ստեփանոս Սյունեցին Աղուհացից օրերի քննության կապակցությամբ անդրադարձել է Գրիգոր Լուսավորչի և Տրդատ թագավորի տոնական օրվան, որը ըստ նրա կատարել են Մեծ Պահլավի օրերին, այսինքն՝ Բուն Բարեկենդանից հաշված 5-րդ կիրակիից հետո եկող շաբաթ օրը: Նա կողմնակիորեն հիմնավորում է Հովհան Մանդակունու կանոնը և վերոհիշյալ վկայությունների վավերականությունը 8-րդ դարից առաջ ընկնող ժամանակահատվածի համար:

Բերենք Ստեփանոս Սյունեցու տեղեկությունը: Նա գրում է. «Եւ ապա զկնի զքառասներորդ զպահսն հրամայեաց պահել, որպէս Իսրայելեանքն այն, զելիցն զփրկութիւնն ի փարաւոնի, կամ զՆիւուեացուցն՝ որ դարձան և ապրեցան: Արդ մինչ առաջին մեք զայս պահեցաք, դուք Սեղբեստրոսի և Կոստանդիանոսի տաւնք կատարեիք, և Կոստանդիանոս զիւր լուսաւորութեան աւուրս պահէր և տաւն Գրիգորի և Տրդատայ տաւնէր. քառասուն և չորս ամ Հռովմ և Եգիպտոս պահեցին ընդ մեզ և ընդ ձեզ, և մինչև ցայժմ Ասորիք պինդ պահեն: Իսկ անաւրէն Մարկիանոս զսրբոյ Կոստանդիանոսի լուսաւորութեան աւուրցն զպահսն եբարձ, և պանդրուտոյ կարգեաց հակառակ այնմ և փոխանակ այնմ շաբաթու պանիր ուտելոյ, զքառասներորդ պահսն զամենայն ապականեաց»<sup>1</sup>:

Այսպիսով վերոհիշյալ վկայությունները ցույց են տալիս, որ Հովհան Մանդակունու խմբագրած «Կանոնք ընթերցուածոց»-ից սկսած կանոնվել է Գրիգոր Լուսավորչի և Տրդատ թագավորի առաջին և հնագույն շարժական տոնական օրը, որը Բուն Բարեկենդանից հաշված 5-րդ կիրակիից հետո եկող շաբաթն էր: Այն ակնհայտորեն շարժական տոն էր, քանի որ կապվում էր Զատիկի հետ, իսկ վերջինս տեղաշարժվել է Մարտի 22-ից Ապրիլ 25-ը՝ 35 օրվա սահմաններում, ուստի Գրիգոր Լուսավորչի և Տրդատ թագավորի հիշատակի օրը կատարվել է Մարտի 1- Ապրիլ 10-ն ընկած ամսաթվերից մեկում նայած տարի:

Ստանալով Գրիգոր Լուսավորչի և Տրդատ թագավորի տոնական օրվա հուլյան ամսաթվերը, կարծում ենք դժվար չէ պատասխանել նաև այն հարցին, թե ինչու է նրանց առաջին տոնը դրվել տոնացույցային տարվա այդ հատվածում: Արամազդի և Անահիտի տոները, ինչպես տեսանք, կատարվել են Մարտի 20-ին և Ապրիլի սկզբներին, իսկ Գրիգոր Լուսավորչի շարժական տոնը եղել է Մարտի 1 - Ապրիլ 10-ի սահմաններում: Դժվար չէ հետևեցնել, որ հեթանոսական տոները վեր են ածել քրիստոնեականի և Գրիգոր Լուսավորչի և Տրդատ թագավորի տոները պետք է մոռացության տային Արամազդի և Անահիտի հետ կապված տոնական հուշերի մնացորդները:

Հայոց 325 թվականից (= 876/7 թթ.) սկսած Տոնացույցում Գրիգոր Լուսավորչի հիշատակի նոր օրեր ավելացան և մեկը մյուսից տարբերակելու համար ստացան տարբեր անվանումներ - որակումներ: Ուշ շրջանում ընդօրինակված տոնացույցերի խմբագրություններից հայտնի է, որ վաղ շրջանում տոնվող միակ օրը պահպանվեց, թեև, ինչպես կտեսնենք, տրվել են զանազան որակումներ, ինչպես և նրանից առանձնացավ Տրդատ թագավորի հիշատակի օրը: Հոգեգալըստից հաշված 14-րդ օրը շաբաթվա կանոնի տակ դրվեց Գրիգոր Լուսավորչի Ելն ի Վիրապէն տոնը, իսկ Հոգեգալստից հաշված 28-րդ օրը, նույնպես շաբաթվա կանոնի տակ նշվեց Գրիգոր Լուսավորչի նշխարաց գյուտի հիշատակը: Մեզ հասած հնագույն բնագրերում Խառնաշփոթ է Բուն Բարեկենդանից հաշված 5-րդ կիրակիից հետո եկող շաբաթ օրվա Գրիգոր Լուսավորչի տոնի որակման հետ կապված: Այդ կանոնի տակ են դնում մի կողմից ընդհանրապես Գրիգոր Լուսավորչի հիշատակի օրը, որը հասկանալի է և գալիս է վաղ շրջանից, մյուս դեպքում տալիս են նոր որակումներ, այն է՝ Ելն ի Վիրապէն, Մուտն ի Վիրապէն, չարչարանքն, Գիւտ նշխարաց ի

<sup>1</sup> Տե՛ս Գրիք թղթոց, էջ 334:



Կոստանդնուպոլիս, ոչ միայն առանձին, այլև դրանց տարբեր խմբավորումներով: Դեռ ավելին Գիւտ նշխարաց ի Կոստանդնուպոլիս պատմութիւնը շարադրելիս Գրիգոր Լուսավորչի հին տոնի սկզբնավորումը թյուրիմացաբար կապում են Գեորգ Գառնեցի կաթողիկոսի և Աշոտ Բագրատունու ժամանակի հետ: Այսպես, ըստ մի ճառընտիրի տվյալների՝ «եւ իրագործեցան ասացեալքս ի քառասնորդսն մեծի պասեքի, ի հինգերորդում շաբաթուն: Ի ժամանակս Տեառն Գէորգայ Հայոց կաթողիկոսի և Աշոտոյ բարեպաշտի՝ կարգեցան տօն սրբոյն Գրիգորի»: Նույն բնագրի մեկ այլ տարբերակ գտնում ենք Փարիզի 178 թվահամարի գրչագրում, այն է՝ «... եւ իրագործեցան ասացեալքս ի քառասնորդսն մեծի Պասեքի ի հինգերորդումն շաբաթուն, ի ժամանակս Տեառն Գեորգայ Հայոց կաթողիկոսի եւ Աշոտոյ Բարեպաշտի» (ՄԸ համարի տակ):

Գրիգոր Լուսավորչի հին տոնի վերագրելը հիշյալ հեղինակներին և ժամանակին ակնհայտ թյուրիմացութիւնն է: Սակայն այդ տեղեկութիւնը ցույց է տալիս Գրիգոր Լուսավորչի նոր տոնական օրերի ստեղծման ժամանակը: Հարկ է նշել, որ ուշ շրջանում «Գիւտ նշխարաց ի Կոստանդնուպոլիս»-ը դրել են հիշյալ կանոնի տակ «Մուտն ի Վիրապէն» կամ «չարչարանաց»-ի հետ համատեղ: Այն հասկանալի է դարձնում վերոհիշյալ բնագրի սխալի աղբյուրը:

10-րդ դարով թվագրվող իրարից անկախ երկու բնագրերի, ինչպես և ուշ շրջանի սկզբնաղբյուրների տվյալների Գրիգոր Լուսավորչի տոնների համար տալիս են հայոց շարժական տոմարի ամիս-ամսաթվեր, որոնք են՝ Սահմի 15, Սահմի 10 և Տրէ 10: Հայոց տոնացույցային եղանակը հնարավորութիւն է ընձեռում վերոհիշյալ ամսաթվերի վերլուծութիւնի հիման վրա լուծել Գրիգոր Լուսավորչի տոնական օրերի և նրանց նոր որակումների ծագման ու բացահայտման հետ կապված հարցերը: Անցնենք այդ ամսաթվերի քննութիւնը: Վենետիկի 169 թվահամարի գրչագրում, որը «Կանոնք ընթերցուածոց»-ի 3-րդ խմբագրութիւնի 10-րդ դարի վերջի ընդօրինակութիւնն է. «Ի հինգերորդ շաբաթու քառասնորդաց»-ի ուրբաթ օրվանից հետո, այսինքն շաբաթի կանոնը սահմանել է. «Սահմի ամսոյ որ աւր ժե. Սրբոյն Գրիգորի ելն ի Վիրապէն...»<sup>1</sup>:

Նկատելի է, որ հիշյալ կանոնը դրվել է Գրիգոր Լուսավորչի Հին տոնի տեղը, բայց որակվել է «Ելն ի Վիրապէն» անվամբ: Մինչդեռ Հայոց տոնացույցների բոլոր խմբագրութիւնները «Ելն ի Վիրապէն» տոնը դրել են Հոգեգալստից հաշված 14-րդ օրը, շաբաթի կանոնի տակ: Թերևս մտածենք, որ «Ելն ի Վիրապէն»-ը նախապես դրվել է Գրիգոր Լուսավորչի հին տոնի տեղը, իսկ հետագայում տեղափոխվել տոնացույցի հիշյալ տեղը: Այս տարբերակը նույնպես բացառելի է: Բանն այն է, որ հիշյալ գրչագրի մեծ վկայված մյուս տոնի ամսաթվերով, ինչպես ցույց ենք տվել, ընդօրինակութիւնը թվագրվում է 994 թվականով, իսկ նրա նախագաղափար գրչագիրը՝ 9-րդ դարի վերջով: Հասկանալի է, որ «Ելն ի Վիրապէն»-ը դնելով Գրիգոր Լուսավորչի հին տոնի տեղը և ունենալով Սահմի 15-ը պետք է ստանանք, ըստ հայոց տոնացույցային եղանակի, 9-10-րդ դարերի կամ ավելի վաղ տարիներ, մինչդեռ գտնում ենք 1231 թվականը, որպես այդ տոնի կատարման ամենավաղ տարի, որը կրկին հակասում է գրչագրի թվագրմանը: Ուշագրավ է հայոց շարժական տոմարի Սահմի 1-ը 900-1000 թթ. սահմաններում համարելի է հուլիս 14 - Մայիս 20-ին, Սահմի 15-ը համարվել է հունիս 28 - Մայիս 24-ին, իսկ Գրիգոր Լուսավորչի հին տոնը նույն ժամանակ ընկել է Ապրիլ 16 - Մարտ 7-ի միջև նայած տարի և Սահմի ամսին չի համապատասխանել: Այստեղից ևս ակնհայտ է, որ Սահմի 15-ը չէր կարող լինել Գրիգոր Լուսավորչի հին տոնի օրը, մանավանդ Սահմի 15-ը ընկնում էր Հոգեգալստից հաշված 14-րդ օրվա սահմաններում, որը հուլյան տոմարով եղել է հունիս 20 - Մայիս 13-ի միջև նայած տարի: Այժմ տեղադրենք Սահմի 15-ը Պենտեկոստից հաշված 14-րդ օրը և տեսնենք ինչ արդյունքներ է տալիս «Հայոց տոնացույց» ծրագիրը, այն է՝

Ներկա թվական	Հուլյան ամիս	Հուլյան ամսաթիվ	Ծաբաթվա օր	Հայոց թվական	Հայոց ամիս	Հայոց ամսաթիվ	Ծաբաթվա օր
977	6	9	7	426	3	15	7
991	6	6	7	440	3	15	7
1005	6	2	7	454	3	15	7
1019	5	30	7	468	3	15	7

Հաշվումները ևս ցույց են տալիս, որ Ելն ի Վիրապէն տոնը կատարվել է Հոգեգալստից հաշված 14-րդ օրը, շաբաթ: Հետևութիւնը պարզ է, Վենետիկի 169 թվահամարի գրչագրի ընդօրինակողը փորձել է Գրիգոր Լուսավորչի հին տոնի տեղը տեղափոխել «Ելն ի Վիրապէն»-ը՝ ընդմիջարկելով նոր տոնի կանոնը: Հասկանալի է դառնում, որ 876/7 թթ. սահմանած նոր տոններից մեկը եղել է «Ելն ի Վիրապէն»-ը, որը 10-րդ դարի վերջին փորձել են տեղափոխել հնագույն տոնի տեղը:

Գրիգոր Լուսավորչի «Ելն ի Վիրապէն» տոնի կատարման՝ նրա սահմանումից հետո ավելի քան 50 տարի հետո, լավագույնս պատշաճ թոճմա Արծրունու շարունակողի տեղեկութիւնն է, որն ունի հայոց շարժական տոմարի Սահմի 10-ի նշումը: Բերենք Անանու Ածրունու ուշագրավ հավաստումները, որը թվագրելուց հետո, նրանց արժեքները բացառիկ են դառնում, ոչ միայն տոնական, այլ պատմական մի շարք տեսանկյուններով: «Յաղագս մեծի պատերազմին ընդ առնն [= Մուֆլիհ - Ռ. Վ.] արաբացոյ ի դրունս մայրաքաղաքին Դունայ, եւ որ ինչ գործք քաջութեան, մեծի արքային Հայոց Գագկայ, եւ որ ինչ յաղթութեանն գործք» վերնագիրը կրող 10-րդ հատվածում կարդում ենք. «Եւ որպէս ի վեր անդ պատմեցաք վասն անիշխան լինելո երկրին Պարսից, ըստ գրեցելումն թէ «գատաւոր ոչ գոյր Իսրայէլի», և իւրաքանչյուր ոք զիւր միտս հաճէր: Ի սոյն ժամանակս այր մի արաբացի ազգաւ, այր հմուտ պատերազմաց և գործոց զինուորութեան. սա կոկոզավիդ ամբարտաւանութեամբ յինքն հայեցեալ՝ կարծեաց ինքնագլուխ լինել: Ուստի և զօր գումարեալ յանկարծօրէն թևակոխեաց անցանել ընդ Գողթնաստան և ընդ աւանն Նախճաւան, զբռնամբ ածեալ և զգօրս Շարուրն կոչեցեալ գաւառի, գայ հասանէ մինչև ցմեծ մայրաքաղաքն Դուին, և վաղվաղակի հարկապահանջս և ոստիկանս առաքեալ յԱյրարատեան գաւառ և մինչև ցԱրագածն կոչեցեալ ոտն, որ է բաժին կալուածոց Աբասայ որդւոյ Սմբատայ՝ ընդ իւրումն նուաճէ իշխանութեամբ: Եւ քանզի Աբաս ոչ կարողանայր ի դիմի հարկանել բռնացելոյն ի վերայ ինքնեան՝ ձայն արկանէ յարքայ և ձեռն հրեշտակաց և հրովարտակաց, զի եկեալ փրկեցէ գնա ի հարկապահանջ բռնութեանցն հինից. և արքայի յիշեալ զգութ արեան հարազատութեանն՝ եւ գնաց զօրօք բազմօք զհարազատին խնդրել զքէն վրիժուց:

Իսկ Աբաս որդին Սմբատայ հպարտացեալ գայ իջանէ ի դաշտն Վաղարշապատ քաղաքի, կամեցեալ յառաջագոյն քան զգալուստն մեծի թագաւորին Հայոց Գագկայ անձինն ինչ ստանալ պարծանս: Իսկ այրն այլազգի քանզի զիտէր գնմանէ, թէ ոչ է հմուտ պատերազմաց՝ ելեալ հասանէ ի վերայ նորա սակաւ զօրօք և հարեալ գնա ի փախուստ դարձուցանէ: Մաշեալ ի սուր սուսերի ի զօրացն նոցա արս իբրև ն, և առեալ զկապուտ զօրացն և զբնակչաց երկրին և հրճիք արարեալ զաշխարհն ամենայն՝ դառնայ ի քաղաքն մեծաւ յաղթութեամբ և բազում աւարաւ: Եւ Աբաս այնուհետև փախստեալ եղեալ մազապուրծ անկանի յաշխարհն Վրաց: Եւ արքայի լուեալ զգոյժ աղաղակիս այսորիկ՝ վաղվաղակի հասանէ ի դուռն Դունայ զեզր գետոյն Երասխայ, հանդէպ վիրապին սրբոյ, յորմէ ելեալ մեծն սուրբն Գրիգորիոս լուսաւորեաց զՀայաստան աշխարհս: Իսկ այլազգին յորժամ ետես զբանակ արքային մեծի սփռեալ առ լեռամբն Գինոյ կոչեցեալ բլեր, որ արդարև անուն բլակին մարգարէաբար, իբրու յանապակ զինոյ զմայ-

<sup>1</sup> Վենետիկի 169 թվահամարի բնագիր, էջ 116ա, տե՛ս Ս. Մեմենյան, Ազգ. աշխ., էջ 567-588:

լեալ ուրախ արար զարքայ յիւրումն սահմանեալ վայրի, որ թէպէտ և ի բարձանս առեալ զչնորճ յաղթութեանն, բարեխօսութեամբ սուրբ Լուսաւորչին, որոյ և իւր իսկ տօնախմբիւր յիշատակ յամսեանն սահմի, որ օր ժ էր ամսոյն, սակայն և բլուրն շնորհս ունելով՝ ոչ ունայնանայ ի գովեստից աստի պատմութեանցս, և այնուհետև առն ամբարշտի զօր գումարեալ արս իբրև ժԳՆ դիմէ ի վերայ արքայի, գունակ այլոց ոմանց զնա կարծելով, և մինչդեռ արեգակն յերրորդ ժամուն արփիաթև էր զկամարն երկնի, և դեռ ընթեռնոյր Աւետարանն սուրբ՝ գայ ոմն ի սուրհանդակաց և ասէ. «ընդ էր ձիգ և յաւէժ աղօթէ տէր իմ արքայ, և ահա ճակատ այլազգեացն մերձեցաւ ի բանակ սրբութեան տեառն»: Եւ արքայ այնուհետև կայիւն սրտիւ և հեղահամբոյր քաջութեամբ ոչ զաչս և ոչ զբարբառ առ ազդողն ամբառնայ, այլ կատարեալ զսովորական աղօթսն, իմացեալ զիմաստնոյն թէ, «տեառն է պատերազմ, և թէ «տէր ամբարտաւանից հակառակ կայ, և տայ զչնորհսն խոնարհացն»:

Յայնժամ արքայ վառեալ ի գէն և ի զարդ արիական քաջութեան, առեալ զգօրսն գնդին Հաւատացելոց, հանդարտ յառաջ մատուցեալ՝ գունդս գունդս պատշաճաբար յօրին է զիւրոյ ճակատուն. և ապա այնուհետև սուսերամերկացն հայլք զմիմեամբք խառնեցան, և ճայթմունք և թնդիւնք և փայլատակմունք իբրև յամպոց ի վայր թափեալ երևեցան, և ահագին օրա սկսաւ լինել: Յայնժամ ի վերին օգնականութենէն զօրացեալ լինէր արքայ իւրականն զօրօք, մանաւանդ զի և սուրբ հայրապետին Հայոց մեծն Եղիսէ. ելեալի կատարս բլերն Գինոյ հանդերձ քահանայական դասիւքն, հանգոյն սրբոյն Ներսէսի անխոնարհելի ունելով զձեռս, մինչև պարտեցաւ երկրորդն Աղամէկ. ուստի և գունդ գնդիւ անցեալ զօրացն Հայոց՝ գայ պատահէ արքայ զմիջոցաւ ռազմին այլազգեաց, յորում էին արք հետևակք ըմբշամարտ զինակրաց իբրև զորք հազարք. որոց ի դիմի հարեալ արքայի, իբրև կայծակն ընդ եղէզն հարեալ՝ այնպէս խորտակեաց զռազմաց զօրուն այլազգեաց. և այնուհետև բազմութիւն դիակացն յերկիր անկելոցն էին թանձրացեալք ի վերայ երեսաց դաշտին իբրև զօրայս անդույ լիոյ յաւուրս հնձոց. ուստի և ընդ սրախողխողսն և ընդ գետավէժսն սատակեցան արք իբրև ԸՆ, և զբարանց երկերիւր աւելի կամ պակաս զարիւնս անձանցն պարգևս նոցունց շնորհէ. և հրամայէ արձակել, զի երթեալ ի քաղաքն պատմեցեն զոր տեսին: Եւ ինքն արքայ աճապարեալ անցանէ ընդ գետն Երախ, կամելով հերձիգ առնել զքաղաքն ծագէ ի ծագ, և զաշխարհն շուրջանակի, մինչև ծերք քաղաքին անկան առ ոտս նորա խնդրեն զխաղաղութիւն, տալով հարկս և պատանդս. զոր առեալ արքայ դառնայ խաղաղությամբ յամուրն Դարիւնս, բարձեալ զգէն և զասպազգէն առն և ձիոյ զօրացն այլազգեաց այնչափ բազմութեամբ, և ի բազմու աւարառուաց իւրոցն զօրաց ոչ-ինչ տուժէ արքայ յումբէք, այլ հրամայի հանդէպ երեսաց տանել զինչև շահեցաւ»<sup>1</sup>:

Վերոհիշյալ տեղեկութիւններէն պարզ դարձավ, որ Գագիկ Արծրունին Գրիգոր Լուսավորչի ելն ի Վիրապէն տոնը կատարել է հայոց շարժական տոմարի Սահմի 10-ին, միաժամանակ վերոհիշյալ քննութիւնից և հայոց տոնացույցերը խմբագրութիւններէն հայտնի է, որ այդ տոնը Պենտեկոստից հաշված 14-րդ օրն էր, շաբաթ, ուստի ըստ «Հայոց տոնացույց»-ի հաշվումների ստանում ենք.

Ներկա թվական	Հուլյան ամիս	Հուլյան ամսաթիվ	Շաբաթվա օր	Հայոց թվական	Հայոց ամիս	Հայոց ամսաթիվ	Շաբաթվա օր
933	6	15	7	382	3	10	7
947	6	12	7	396	3	10	7

<sup>1</sup> Տե՛ս Թովմա Արծրունի և Անանուհ, Պատմութիւն տանն Արծրունեաց, Ե., 1985, էջ 464-468:

961	6	8	7	410	3	10	7
975	6	5	7	424	3	10	7
989	6	1	7	438	3	10	7
1003	5	29	7	452	3	10	7

Հաշվարկված տարիներից ընդունելին 933 թվականն է համարժեք հայոց 382 թվականին, իսկ տոնի օրը Հունիս 15-ը զուգադրելի Սահմի 10-ին, որովհետև հաջորդ տոնի կատարման օրը, այն է՝ 947 թվականին Գագիկ Արծրունին արդեն մահացած էր, որից բազարատունեաց Աբբաս թագավորն օգնութիւն է խնդրել Ատրպատականի Մուֆլիհ ամիրայից եկած վտանգի առաջն առնելու և Գագիկ Արծրունին հաղթել է նրան 933 թվականի Հունիս 15-ին: Երուսաղեմի 121 թվահամարի գրչագրի 2-րդ մասում, որը «Կանոնք ընթերցուածոց»-ի 3-րդ խմբագրութեան ընդօրինակութիւն է կատարված հայոց ՈնԱ թվականին (= 1192/3 թթ.) առկա է հետևյալ տեղեկութիւնը. «Սահմի ժ. Գրիգոր Լուսավորչի ելն ի Վիրապէն ի վեցերորդում շաբաթի...»: Այստեղ ևս Գրիգոր Լուսավորչի ելն ի Վիրապէն տոնը դրվել է Զատիկից ետ հաշված 16-րդ օրը, շաբաթ և կանոնվել է Սահմի 10-ի տակ: Այն քննութիւնը, որ կատարեցինք Սահմի 15-ի համար վերաբերում է նաև Սահմի 10-ին: Ավելացնենք նաև, որ «Ելն ի Վիրապէն» տոնը տեղա. յրելով Զատիկից ետ հաշված 16-րդ օրը և համարելով Սահմի 10-ին, ըստ «Հայոց տոնացույց» ծրագրի հաշվումների, ստանում ենք հետևյալ տարեթիվերը՝ 1187 թ. 1201 թ. և 1212 թ., որոնցից վերջին երկուսը ընկնում են նոյնիսկ ձեռագրի ընդօրինակման հիշատակարանի տարեթիվից ավելի ետ: Պարզ է, որ Երուսաղեմի 121 թվահամարի ընդօրինակութիւնը կատարվել է 10-րդ դարի նախագաղափար գրչագրից, որովհետև Սահմի 10-ին է եղել «Ելն ի Վիրապէն» տոնը միայն այդ ժամանակ՝ Պենտեկոստից հաշված 14-րդ օրը: Այդ նախագաղափար գրչագրում, ինչպես Վենետիկի 169 թվահամարի ձեռագրում (միայն Սահմի 15-ի նշումով) փորձ է արվել հիշյալ տոնի օրը տեղադրել հին տոնի տեղը կամ պարզապես ընդմիջարկութիւն է:

Ասենք նաև, որ Սահմի 10-ն անցել է հետագայում ընդօրինակված ձառնների, Տոնացույցերի և Յայնամավորքների խմբագրութիւններին, վեր է ածվել հայոց անշարժ տոմարի ամսաթվի և ստացել հուլյան տոմարի այլ համարժեք, որոնց տվյալները կներկայացնենք քիչ հետո:

Ինչ վերաբերում է Տրէ 10-ին, ապա նրա հնագույն հիշատակութիւնը գտնում ենք 832 թվահամարի գրչագրում, որը հայոց անշարժ տոմարի ամսաթվային կարգով գրված ձառն է: Այնտեղ կարդում ենք. «Տրէի ժ. Գիւտ ոսկերաց սրբոյն Գրիգորի եւ այս կանոն կատարի...»<sup>1</sup>:

Տրէ 10-ը նախապես եղել է հայոց շարժական տոմարի ամիս-ամսաթիվ, որն առաջացել է տոնացույցային ճանապարհով, երբ Գրիգոր Լուսավորչի նշխարաց գյուտի հիշատակը սկսել են տոնել Հոգեգալստից հաշված 28-րդ օրը, շաբաթվա կանոնի տակ: Այն հետագայում է վերածվել հայոց անշարժ տոմարի ամսաթվի, որովհետև հայոց անշարժ տոմարի Տրէ 10-ին (= նոյեմբեր 18) երբևէ չի կատարվել Գրիգոր Լուսավորչի նշխարանների գյուտի հիշատակը:

Հայոց շարժական տոմարի Տրէ 10-ի և Հոգեգալստից հաշված 28-րդ օրվա համադրմամբ գտնենք Գրիգոր Լուսավորչի նշխարաց գյուտի հիշատակի օրվա կատարման տարիները: «Հայոց տոնացույց» ծրագրի հաշվումները տալիս են հետևյալ արդյունքները.

<sup>1</sup> Ձեռ. № 832, էջ 37ա-38բ:

Ներկա թվական	Հուլյան ամիս	Հուլյան ամսաթիվ	Ծաբաթվա օր	Հայոց թվական	Հայոց ամիս	Հայոց ամսաթիվ	Ծաբաթվա օր
1001	6	28	7	450	4	10	7
1015	6	25	7	464	4	10	7
1043	6	18	7	492	4	10	7

Հաշվումները ցույց են տալիս, որ Տրէ 10-ը իբրև Գրիգոր Լուսավորչի նշխարաց գյուտի հիշատակի օր առաջացել է 11-րդ դարի 1-ին կեսի հիշյալ տարեթվերին և 832 թվահամարի գրչագրի ընդօրնակողն իր նյութերը քաղել է այդ ժամանակվա հավանաբար մի ճաշոցից կամ Տոնացույցից և վեր է ածել Հայոց անշարժ տոմարի ամսաթվի: Պարզ է, որ Գրիգոր Լուսավորչի նշխարաց գյուտի հիշատակի օրը առաջացել է ավելի վաղ քան նա կատանար Հայոց շարժական տոմարի ամսաթիվ: Այդ տոնի սկզբնավորումը ևս կապվում է 9-րդ դարի 4-րդ քառորդի կամ 10-րդ դարի սկզբների հետ:

Այսպիսով Գրիգոր Լուսավորչի տոների կապակցությամբ վաղ շրջանում գրանցված ամսաթվերի վերլուծությունը հատկապես տոների տարիների բացահայտումը, ինչպես վերը բերված բնագրերի նշումները, ցույց են տալիս, որ Տոնացույցում Գրիգոր Լուսավորչին նվիրված նոր տոներ առաջացան 9-րդ դարի 4-րդ քառորդին՝ Գեորգ Գառնեցու և Աշոտ Բագրատունու ժամանակ: Այդ տոներին, ինչպես և հին, տրվեցին անվանումներ-որակումներ իրարից զանազանելու համար: Վերջապես Գրիգոր Լուսավորչին նվիրված հիշյալ երեք տոնական օրերը, ըստ տոնացույցային տարվա կտրվածքի, կրել են հետևյալ անվանումները, այն է՝ Բուն Բարեկենդանից հաշված 5-րդ կիրակիից հետո եկող շաբաթ օրը ստացել է «Մուտն ի Վիրապն» կամ «չարչարանաց» որակումը, Պենտեկոստից հաշված 14-րդ օրը՝ «Ելն ի Վիրապէն», իսկ Պենտեկոստից հաշված 28-րդ օրը՝ «Գիւտ նշխարաց»:

Բերենք դրանց հաստատող տեղեկություններ, որոնք Հայտնի են հետագա բնագրերից, ըստ տոնացույցային կարգի՝ առանձին-առանձին և տեսնենք ինչ խմբագրությունների են ենթարկվել այդ տոները պատմական կտրվածքով: Սկսենք հնագույն տոնից վկայակոչելով ճաշոցների, Տոնացույցների և Յայսմավորքների խմբագրությունների տվյալները:

Ատոմ վարագեցու Հոռոմագիրի խմբագրության մեջ, որին կցվել է, նաև Հայոց անշարժ տոմարի ամսաթվերի կարգով գրված ճաշոց, գտնում ենք հետևյալ գրանցումը. «Վեցերորդ շաբաթուն. Սրբոյն Գրիգորի Հայոց Լուսավորչի: Ի Տրէ է գտանես: Անտի կարգա Նովին աւետարանաւ»<sup>1</sup>:

Այստեղ 12-րդ դարի կեսերի խմբագիրը պահպանել է տոնի հին և ընդհանրացնող ձևակերպումը, թեև նկատի է ունեցել «Մուտն ի Վիրապ» կամ «Չարչարանքն» համարժեք որակումները: Նա չի բերել տոնի ժամանակ ընթերցվելիք նյութերը, հավանաբար չկրկնելու համար, այլ հղել է Տրէ 10-ի կանոնը, որտեղ առկա են տոնածիսական բնագրերի քաղվածքները:

13-րդ դարի վերջերին ընդօրինակված ճաշոցի խմբագրության մեջ Մեծ Պահքի հինգերորդ կիրակիից հետո եկող կանոնում գրում է. «Շաբաթ աւր. Սուրբ Գրիգորի...»<sup>2</sup>:

936 թվահամարի ճաշոցի խմբագրության մեջ կարդում ենք. «Վեցերորդ շաբաթ. Սուրբ Գրիգորի...: Վեցերորդ կիրակէին ճաշոյն...», որից հետո բացատրել է. «Այս յետ Սուրբ Գրիգորին

է»<sup>1</sup>: Ասել է թե Գրիգոր Լուսավորչի տոնը մեծ Պահքի հինգերորդ կիրակիից հետո եկող շաբաթ օրն է:

6235 թվահամարի ճաշոցի խմբագրության մեջ, որն ունի նաև Հայոց անշարժ տոմարի ամսակարգով ճաշոցի հավելում, արձանագրվել է. «Վեցերորդ շաբաթուն. Յիշատակ սրբոյն Գրիգորի Լուսավորչի: Ի Սահմի Ժ(10) գտանես, անդ կարդա»<sup>2</sup>:

Այստեղ ևս առակա է 832 թվահամարի ճաշոցի օրինաչափությունը, միայն հղել է Սահմի 10-ի կանոնը:

7741 թվահամարի ճաշոցի խմբագրությունը «Հինգերորդ շաբաթ քառասորդաց» կանոնի տակ վկայել է. «Շաբաթ. սրբոյն Գրիգորի Լուսավորչին...»<sup>3</sup>:

Ինչպես նկատել է ճաշոցների խմբագրությունները տալիս են միայն Գրիգոր Լուսավորչի անունը՝ առանց որակման թեև. ինչպես կտեսնենք հասկացել են իբրև «Մուտն ի Վիրապ» կամ «չարչարանքն»: Այդպիսի տեղեկություններ ենք գտնում նաև որոշ տոնացույցների խմբագրությունների մեջ: 2092 թվահամարի Տոնացույցի խմբագրության մեջ կարդում ենք. «Ե երորդ շաբաթին. Տաւն է սրբոյն Գրիգորի Հայոց Լուսավորչի... Տրէ ի տասն»<sup>4</sup>:

Ուշագրավ են 179 թվահամարի գրչագրի տոնացույցների խմբագրությունների տվյալները.

1. «Ե [կիրակէի] էշ [շաբաթ]. Սուրբ Գրիգորի...» (էջ 528ա-531բ)

Հոգեգալստից հաշված 14-րդ օրվա համար՝

2. «էշ [շաբաթ]. Գրիգորի Լուսավորչին...»

3. «[Աղուհացիցն] հինգերորդ շաբաթն աւրն. Սրբոյն Գրիգորի Լուսավորչի մուտն ի Վիրապն» (էջ 540բ):

Ակնհայտ է, որ հեղինակը Գրիգոր Լուսավորչի նույն տոնի համար մի դեպքում տալիս է նրա անունը միայն, իսկ 2-րդ դեպքում որակել է «մուտն ի Վիրապն»: Այն ցույց է տալիս, որ այդ տոնը անկախ ընդգծումից ընկալվել է իբրև «Մուտն ի Վիրապն»: Այդպես է նաև հեղինակի Հոգեգալստից հետո եկող տոնի ընկալումը, միայն այս դեպքում հասկացել է «Ելն ի Վիրապէն»: Տոնացույցների խմբագրությունների հստակված տեղեկությունները կրեւենք քիչ հետո, այժմ ներկայացնենք տոնապատճառների տվյալները, որոնք միանշանակ են:

2021 թվահամարի Տոնապատճառի խմբագրությունն ունի՝ «Հինգերորդ շաբաթն. Սրբոյն Գրիգորի չարչարանքն...»<sup>5</sup>:

5561 թվահամարի Տոնապատճառում արձանագրվել է. «Ե[կիրորդ շաբաթն. Սրբոյն Գրիգորի չարչարանքն: Ե է Ժ ն [= հնգետասան] ամաւքն Գրիստոսի չարչարակցեալ և մեք զմեր պահաւք չարչարանքս ընդ հաւրն մերս խառնեալք...»<sup>6</sup>:

Մյուս գրչագրերը կանոնի մակարդակով տալիս են համարժեք տեղեկություններ<sup>7</sup>: Ի դեպ հիշյալ որակումը գտնում ենք հիմնականում տոնապատճառների խմբագրությունների շարադրանքներում:

Հայոց հնագույն տոնացույցների և ճաշոցների խմբագրությունները հստակեցնում են

1 Ձեռ. № 936, էջ 21ա-31ա:

2 Ձեռ. № 6235, էջ 149ա:

3 Ձեռ. № 7741, էջ 112ա-113ա:

4 Ձեռ. № 2092, էջ 234ա:

5 Ձեռ. № 2021, էջ 81ա:

6 Ձեռ. № 5561, էջ 2ա:

7 Ձեռ. № 3082, էջ 94բ, 5443, էջ 144ա-145ա և այլն:

1 Տե՛ս Ձեռ. № 832, էջ 175ա:

2 Ձեռ. № 1028, էջ 119ա:

Գրիգոր Լուսավորչի հիշյալ տոնի անվանումը, իսկ հետագայի ընդօրինակությունները ավելացնում նոր տոնի որակում, որոնք նշվեցին զուգահեռաբար:

Ըստ 759 թվահամարի Տոնացույցի կանոնի՝ «Հինգերորդ շաբաթն աւրն. Գրիգորի Լուսավորչի մուտն ի Վիրապն...»<sup>1</sup>: 179 թվահամարի տվյալները բերեցինք վերևում:

Ըստ 752 թվահամարի գրչագրի՝ «Շաբ(աթ). Սրբոյն Գրիգորի Լուսավորչի մուտն ի Վիրապն...»<sup>2</sup>:

Ըստ 4514 թվահամարի ծառցի՝ «[Հինգերորդ շաբաթու պահոցն] շաբաթ աւր. Սուրբ Լուսավորչին»։ իսկ ներքին լուսանցքում՝ «Շաբաթ աւր. Սուրբ Լուսավորչին Մուտն ի Վիրապն»<sup>3</sup>:

Ըստ 4916 թվահամարի գրչագրի՝ «Շաբաթ աւր. սրբոյն Գրիգորի մուտն ի Վիրապն...»<sup>4</sup>:

Համարժեք վկայություններ են թողել նաև 16-17-րդ դարերի տոնացույցերի խմբագրությունների գրչագրերը<sup>5</sup>:

Միմեոն Երևանցու մոտ կարդում ենք. «Շաբաթ. Տօն է սրբոյն Գրիգորի Լուսավորչին մերոյ: Սա կոչի շարչարանացն և մտին ի Վիրապն»:

Բերված տեղեկությունները կասկած չեն թողնում, որ Գրիգոր Լուսավորչին նվիրված հնագույն տոնը՝ նրա տոնական օրերի ընդլայնման հետևանքով 9-րդ դարի վերջերից ստացել է նոր անվանում, այն է՝ Մուտն ի Վիրապն կամ նրա համարժեքը «չարչարանքն», որը Միմեոն Երևանցու տոնացույցի խմբագրության միջոցով անցավ և հասավ մինչև մեր օրերը:

14-րդ դարի 30-ական թվականների վերջերից մինչև 17-րդ դարի սկզբները վերահիշյալ տոնի հետ միասին նշել են Գրիգոր Լուսավորչի նշխարաց գյուտի հիշատակի օրը, թեև ինչպես տեսանք մի խումբ տոնացույցերի խմբագրություններ չեն արձանագրել այդ որակումը, որը խոսում է նրա ոչ պարտադիր տեղ տեղ տոնելու մասին: Մինչև տոնացույցերի տվյալների քննության անցնելը բերենք մի խումբ ճառագույցների խմբագրությունների վկայություններ, որտեղ Գրիգոր Վկայասերի Տօնանամակի ազդեցության տակ, Գրիգոր Լուսավորչի Գիւտ Նշխարաց ի Կոստանդնուպոլիս հիշատակը թեև տարբեր անվանումների, փորձել են տոնել անշարժ տոնական օրով և գրանցել Սեպտեմբեր 30-ի կանոնի տակ:

979 թվահամարի ծառցում, որը Գրիգոր Վկայասերի Տօնանամակի խմբագրության ընդօրինակություն է, արձանագրվել է. «Նորին (Սեպտեմբեր) Լ. Գիւտ Նշխարաց սրբոյն Գրիգորի Լուսավորչի և Հայրապետի Հայոց Մեծաց, եւ յիշատակ սրբոց Հոփսիմեանց...»<sup>6</sup>: իսկ 940 թվահամարի ծառցի խմբագրության մեջ կարդում ենք. «Սեպտեմբեր Լ. Ննջումն սրբոյն Գրիգորի Հայոց Լուսավորչի: Ի սոյն աւուրս է և Գիւտ Նշխարաց տաւն...» (ՃԼԷ համարի տակ):

Հիշյալ հուլյան տոմարի ամիս-ամսաթիվն առաջացել է հունական տոնացույցի ազդեցությունների տակ:

Դրա լավագույն ապացույցը գտնում ենք Հովսեփ Կոստանդնուպոլսեցու 992 թ. հունարենից հայերեն թարգմանած հունական Տոնացույց-Յայսմավուրքի մեջ, որը հայտնի է 1302 թ. խմբագրությամբ: Վենետիկի 1048 թվահամարի գրչագրում գրված է. «(Սեպտեմբեր) Լ. Վկայասերանութիւն) եւ սքանչելագործութիւնս սրբոյն Գրիգորի Հայոց մեծաց»: Այնուհետև Հ. Ոսկ-

յանը ավելացնում է. «Կը շարունակուի «Յայսմաւուր կատարի տաւն սրբուհի կրանաւորացն եւ կոյս վկայիցն Քրիստոսի Հոփսիմեայ եւ Գայիանայ, որք ի Տրդատայ Հայոց արքայէն մարտիրոսացան ի Մեծ Հայք: Կատարեցաւ սրբուհի Հոփսիմէ ի Սեպտեմբեր ԻԶ եւ սրբուհի Գայիանէ՝ ԻԷ: Բայց տաւն նոցա ընդ սրբոյն Գրիգորի կատարէ. գոր Գիրք սրբոյն Գրիգորի ուսուցանեն...»<sup>1</sup>:

Բերված տեղեկություններից պարզվում է, որ Սեպտեմբերի 30-ը գալիս է հունական տոնացույցից, իսկ Գրիգոր Վկայասերը վերցրել է այդ ամսաթիվը և անշարժ տոնական օրով կանոնել այդ տոնը իր Տօնանամակում, որից անցել է նաև որոշ ճառագույցների: Դեռ ավելին այդ տոնական կանոնը գտնում ենք նաև Յայսմավուրքների խմբագրությունների մեջ: Այսպես 179 թվահամարի համառոտ Յայսմավուրքի խմբագրության մեջ գրված է. «(Հոռի) ԻԱ. Վկայութիւն) կամ վկայութիւն) և սքանչելագործութիւն սրբոյն Գրիգորի Հայոց Լուսավորչի և յիշատակ սրբուհի(ոց) Հոփսիմէ և Գայիանէ Լ (Սեպտեմբեր)»:

9585 թվահամարի գրչագրում կարդում ենք. «Հոռի ԻԱ. Սեպտեմբեր Լ. Վկայասերանութիւն Սրբոյն Գրիգորի Հայոց Լուսավորչին»<sup>2</sup>:

7529 թվահամարի գրչագրում գրանցվել է. «Հոռի ԻԱ. Սեպտեմբեր Լ. Վկայ(յա)թիւն) սրբոյն Գրիգորի Հայոց Լուսավորչին և տօն ննջման նորա»<sup>3</sup>:

Ըստ 7433 թվահամարի գրչագրի՝ «Հոռի ԻԱ եւ Սեպտեմբեր Լ. Վկայութիւն սրբոյն Գրիգորի Հայոց Լուսավորչի եւ խոստովանողի նահատակի»<sup>4</sup>:

Ըստ Գրիգոր Նյաթեցու Յայսմավուրքի խմբագրության՝ «Հոռի ԻԱ եւ Սեպտեմբեր Լ. Գիւտ Նշխարացն սրբոյն Գրիգորի Լուսավորչին մերոյ»<sup>5</sup>:

Ակնհայտ է, որ վերահիշյալ բոլոր որակումների տակ հասկացել են Գրիգոր Լուսավորչի հիշատակի և նշխարաց գյուտի պատմությունը, որը տեղի ունեցավ Կոստանդնուպոլսում:

Գրիգոր Վկայասերի Տօնանամակ մտնելուց հետո հնարավոր է, որ այդ տոնը լուրջ ձևով տոնվել է, սակայն 14-րդ դարի սկզբներին այն մտավ Տոնացույց և զրվեց «Մուտն ի Վիրապն»-ի հետ ըստ էության վերածվելով շարժական տոնի:

Ուշագրավ է, որ Հայոց տոնացույցերը բոլորովին այլ տեղ են դրել Գյուտ Նշխարացի օրը, որը տեղի ունեցավ Գառնիկ ճգնավորի կողմից Սեպուհ լեռան մոտ Մանյա այրք վայրում և չեն համարել իրար, այսինքն՝ չեն կատարել նույն օրը, թեև հիշյալ տոնի առաջացման շարժառիթը դարձել է Կոստանդնուպոլսում հայտնաբերված Նշխարաց գյուտը:

Ինչևէ, Գիւտ Նշխարաց ի Կոստանդնուպոլիս տոնը, իբրև Գրիգոր Լուսավորչի հիշատակի օր արդեն 9-րդ դարում նշվում էր հույների մոտ և զրված էր Սեպտեմբերի 30-ին: Այդ անշարժ տոնը մտավ Գրիգոր Վկայասերի Տօնանամակի մեջ և հետագայում հնարավոր է որ տեղայնացված ձևով նշվել է, սակայն լայն կիրառություն չի ունեցել անշարժ տոն լինելու պատճառով: Այդ վիճակից դուրս գալու համար 14-րդ դարի սկզբներից հիշյալ տոնի օրը վերածվեց շարժականի և զրվեց «Մուտն ի Վիրապն» տոնի կանոնի տակ և նրա հետ տոնվեց զուգահեռ, իսկ Յայսմավուրքների տվյալներն օգտագործվեց այդ տոնի կատարման ժամանակ:

1 Ձեռ. № 759, էջ 180բ:

2 Ձեռ. № 752, էջ 155ա:

3 Ձեռ. № 4514, էջ 88ա:

4 Ձեռ. № 4916, էջ 170ա-բ:

5 Տե՛ս Ձեռ. № 5440, էջ 69ա-79ա, 4164, էջ 141ա-բ, 5386, էջ 113ա-բ, 587, էջ 184ա-բ և այլն:

6 Ձեռ. № 979, էջ 382ա:

1 Վենետիկի 1048 թվահամարի գրչագիր, էջ 39բ, տե՛ս Յուզակ հայերէն ձեռագրաց Մխիթարեան Մատենադարանի Վիեննա, հատոր Բ, կազմեց Հ. Համազասպ Ոսկեան Մխիթարեան ուխտէն, Վիեննա, 1963, էջ 692-695:

2 Ձեռ. № 9585, էջ 10ա:

3 Ձեռ. № 7529, էջ 5ա:

4 Ձեռ. № 7433, էջ 57բ:

5 Տպագիր՝ էջ 134-136:

Այժմ բերենք հայոց տոնացույցերի տվյալները հիշյալ տոնի առթիվ:

767 թվահամարի Տոնացույցի խմբագրութան մեջ կարդում ենք. «Վեց շաբաթ. Սրբոյն Գրիգորի մուտն ի Վիրապն և Գիւտ նշխարաց ի Կոստանդնուպոլիս...»<sup>1</sup>:

7203 թվահամարի գրչագիրն արձանագրել է. «Շաբ(աթ). Սրբոյն Գրիգորի Գիւտ նշխարացն, ոմանք մուտն ի Վիրապն ասեն»<sup>2</sup>:

5667 թվահամարի Տոնացույցում գրել է. «Հինգ(երրորդ) շաբ(աթ). սրբոյն Գրիգորի մե-րոյ Լուսաւորչի մուտն է Վիրապն և գիւտ նշխարացն ի Կոստանդնուպոլիս...»<sup>3</sup>:

9836 թվահամարի գրչագիրն արձանագրել է. «Հինգերորդ շաբ(աթ). Սրբոյն Գրիգորի Հա-յոց Լուսաւորչին գիւտ նշխարացն է Կոստանդնուպալիս և մուտն ի Վիրապն»<sup>4</sup>:

5419 թվահամարի բնագրում կարդում ենք. «Հինգ(երրորդ) շաբ(աթ). Սրբոյն Գրիգորի Հայոց Լուսաւորչի մուտն ի Վիրապին եւ գիւտ նշխարացն ի Կ. Պոլիս»<sup>5</sup>:

Ըստ 4874 թվահամարի տոնացույցի ընդօրինակութան՝ «Հինգ(երրորդ) շաբաթ Սրբոյն Գրիգորի Հայոց Լուսաւորչին մուտն ի Վիրապ և գիւտ նշխարացն ի Կոստանդնուպոլիս»<sup>6</sup>:

5436 թվահամարի գրչագիրն ունի՝ «Շաբ(աթ). Սրբոյն Գրիգորի Լուսաւորչին Հայոց մուտն ի Վիրապն եւ գիւտ նշխարացն, որ ի Կ. Պալիս»<sup>7</sup>:

587 թվահամարի Տոնացույցի ընդօրինակութունը վկայել է. «Հինգերորդ շաբաթ օրն. Սրբոյ Գրիգորի Հայոց Լուսաւորչի մուտն ի Վիրապն եւ Գիւտ նշխարացն ի Կոստանդնուպոլ-սի»<sup>8</sup>: Ակնհայտ է, որ Գրիգոր Լուսավորչի երկու Տոնները զուգահեռաբար նշել են:

Այսպիսով նյութերի ուսումնասիրութունը ցույց է տալիս, որ Գրիգոր Լուսավորչի հնա-գույն և միակ տոնը, որ կանոնվել է Մեծ Պահքի հինգերորդ կիրակիից հետո եկող շաբաթ օրը, իբրև շարժական տոն, սկիզբ առավ 5-րդ դարի 80-ական թվականներից: 9-րդ դարի վերջին՝ Գրիգոր Լուսավորչի տոնական օրերի ընդլայման հետևանքով, քննարկվող տոնը ստացավ նոր անվանում «Մուտն ի Վիրապ» կամ նրա համարժեքը «չարչարանքն»: 14-րդ դարի 10-ական թվականներից հիշյալ տոնին միացվեց նաև «Գիւտ նշխարաց ի Կոստանդնուպոլիս»-ը, որը գո-յատեւեց մինչև 17-րդ դարի սկզբները, որից հետո այդ կանոնից հանվեց: Տոնացույցի այդ հատվածում դրված տոնը այժմ տոնվում է իբրև Գրիգոր Լուսավորչի «չարարանացն և մտին ի Վիրապէն» զուգորդութամբ:

\*\*\*

Գրիգոր Լուսավորչին նվիրած հաջորդ տոնական օրը, որն անվանվել է «Ելն ի Վիրա-պէն», տոնացույցում սահմանվել է Հոգեգալստեան կիրակիից հաշված երկրորդ կիրակիից հետո եկող շաբաթ օրվա կանոնի տակ, այսինքն՝ Հոգեգալստեան կիրակիից հաշված 14-րդ օրը: Հարկ է նշել, որ հաճախ սկզբնաղբյուրներում Հոգեգալստեան կիրակին չեն հաշվել տվել են առա-ջին կիրակի ձևակերպումը նկատի ունենալով Հոգեգալստեան երկրորդ կիրակին, այնպես որ այն սխալ է, այլ հաշվման ձև:

1 Ձեռ. № 767, էջ 131բ:

2 Ձեռ. № 7203, էջ 24բ և 63ա:

3 Ձեռ. № 5667, էջ 104բ:

4 Ձեռ. № 9836, էջ 156բ:

5 Ձեռ. № 5419, էջ 177բ:

6 Ձեռ. № 4874, էջ 164ա-179ա:

7 Ձեռ. № 5436, էջ 158բ-160բ:

8 Ձեռ. № 587, էջ 184ա-բ:

Քննարկվող տոնական օրը տոնացույց մտավ 9-րդ դարի 4-րդ քառորդին՝ Գեորգ կաթո-ղիկոսի և Աշոտ Բագրատունի թագավորի ժամանակ, թեև որոշ բնագրեր վերագրել են Զաքարիա կաթողիկոսին, իսկ Գրիգոր իլյաթեցին բերելով հակասական տեղեկություններ չգիտի ստույգը որն է: Այսպես, 5197 թվահամարի տոնապատճառի խմբագրութան մեջ. «Ե երրորդ շաբաթուն. Սրբոյն Գրիգորի ի չարչարանքն» կանոնի տակ գրել է. «Դարձեալ լուսարուք թէ յաւուրս Աշո-տոյ առաջին թագաւորի Բագրատունոյ և Զաքարիա պատրիարքի Հայոց» եկել է Լեւոն կայսրի և Փոտ պատրիարքի դեսպան Նիկիտան և գրուցել է Գրիգոր Լուսավորչի, Հոբիփսիմեի, Գայանեի իսկ որոշ տարբերակներում Սարգսի և Բագոսի նշխարների գյուտի մասին: Այդ կատարվել է, ինչպես վկայում են որոշ բնագրեր Հայոց 325 (= 876/7 թթ.) թվականին: Ըստ հիշյալ բնագրի նշխարների գյուտի կապակցութամբ հույները տոն են սահմանել «և էր Աղուհացիցն Ե երրորդ շաբաթուն շաբաթ»: Իսկ Զաքարիա կաթողիկոսը և Աշոտ թագավորը լսելով այդ պատմու-թյունը հիշյալ օրը դրեցին Գրիգոր Լուսավորչի տոնը, որը 'Լազարի տոնի օրն էր, իսկ վերջինս տեղափոխեցին 6-րդ շաբաթ':

Մեկնութան մեջ առկա են բազմաթիվ սխալներ: Նախ հնագույն «Կանոնք ընթերցու-ծոց»-ն ունի 'Լազարի կանոնը Մեծ Պահքի 6-րդ կիրակիից հետո եկող շաբաթ օրը և հետագա-յում ընդօրինակված ճաշոցներն ու տոնացույցերը առանց փոփոխութան պահել են այդ կանո-նը և խմբագրելու ոչ մի հետք կամ անհրաժեշտութուն չի եղել, ուստի հիշյալ հեղինակները չեն փոխել այդ կանոնը, մասնավոր ինչպես տեսանք Գրիգոր Լուսավորչի հնագույն տոնը դրվել է միշտ Մեծ Պահքի 5-րդ կիրակիից հետո եկող շաբաթ օրը:

Հունական տոնացույցերը Գրիգոր Լուսավորչի և այլոց տոնը նշել են անշարժ տոնական օրով Սեպտեմբերի 30-ին: Նրանք չեն ունեցել սրբերի շարժական տոններ: Այն բնորոշ է Հայոց սրբերի տոներին, ուստի հիշյալ կանոնը ստեղծվել է Հայոց հողի վրա և կապ չունի հիշյալ հե-ղինակների հետ: Վերջապես ըստ այդ մեկնութան Զաքարիան, իսկ այլ բնագրերով Գեորգ կա-թողիկոսներից մեկն ու մեկը անկասկած վերջինը, սահմանել են այլ տոնական օրեր նվիրված Գրիգոր Լուսավորչին, այն է՝ «Ելն ի Վիրապն» և «Գիւտ նշխարացն», իսկ «Գիւտ նշխարացն ի Կոստանդնուպոլիս»-ն շարժառիթ է հանդիսացել նոր տոնական օրերի առաջացման համար և վերջինս, ինչպես տեսանք, զուգահեռ տոնվել է «Մուտն ի Վիրապին» կամ «չարչարանքն» ո-րակվող տոնի հետ:

Տեսանք, որ Գրիգոր Լուսավորչի «Ելն ի Վիրապն» անվանվող տոնը կատարել է Գրիգոր Արծրունին 933 թվականին, ուստի նոր տոնական կանոնը ստեղծվել է 9-րդ դարի 4-րդ քառոր-դին և 933 թ. ստացել է Հայոց շարժական տոմարի ամիս-ամսաթիվը, այն է՝ Սահմի 10-ը, ինչ-պես և Սահմի 15-ը, Սահմի 4-ը՝ 10-րդ դարի ընթացքում: Վերջինս կքննենք քիչ հետո:

Հայոց անշարժ տոմարի ամսաթվերի կարգով գրված հնագույն ճաշոցի մեջ կարդում ենք. «Սահմի Ժ. Սրբոյն Գրիգորի Ելն ի Վիրապէն եւ այս կանոն կատարի...»<sup>2</sup>:

Համարժեք վկայութուն ենք գտնում Վենետիկի 639 թվահամարի գրչագրի «Տաւնք ըստ Հայոց ամսոց...» վերնագրի տակ<sup>3</sup>: Ակնհայտ է, որ Սահմի 10-ը գալիս է վաղ շրջանի բնագրե-րից, քանի որ երբևէ Գրիգոր Լուսավորչի ելն ի Վիրապն տոնի չեն կատարվել Հայոց անշարժ տոմարի Սահմի 10-ին, այլ այդ կանոնի տակ դրված ընթերցվելիք նյութերը կարդացել են Պեն-տեկոստեից հաշված 14-րդ օրը: Միայն նշենք, որ Հայոց շարժական տոմարի Սահմի 10-ը վեր է ածվել Հայոց անշարժ տոմարի համարժեք ամսաթվի: Հետագայում ինչպես նույնատիպ, այն-պես էլ տոնացուցային կարգով ընդօրինակված ճաշոցների խմբագրութունների, մասամբ տո-

1 Տե՛ս Ձեռ. № 5197, էջ 61ա:

2 Ձեռ. № 832, էջ 30բ-31բ:

3 Տե՛ս Ս. Շենճեմյան, Աշխ. աշխ., էջ 619:



նացույցերում իրենց հաստատուն տեղն են գտնում թե Սահմի 10-ը, թե կանոնի բովանդակությունը: Ըստ 6235 թվահամարի գրչագրի՝ «Սահմի Ժ. Սրբոյ Գրիգորի ելն ի Վիրապէն»<sup>1</sup>: Ըստ 3266 թվահամարի ձաշոցի՝ «Սահմի Ժ(10). Սրբոյն Գրիգորի ելն ի Վիրապէն եւ այս կանոն կատարի... (Ձեռ. N° 3266, էջ 164բ):

4977 թվահամարի ձաշոցի խմբագրութեան մեջ, թեև դրել է Պենտեկոստից հաշված 14-րդ օրվա տակ, բայց գրել է «Սահմի Ժ. Սրբոյն Գրիգորի ելն ի Վիրապէն» (Ձեռ. N° 4979, էջ 59ա):

4514 թվահամարի գրչագիրը Պենտեկոստից հաշված 2-րդ կիրակիից հետո եկող շաբաթ օրվա կանոնի տակ արձանագրել է. «Սահմի Ժ. Լուսավորչ(ի)»...», իսկ ներքին լուսանցքում՝ «Շաբաթ աւր. Սրբոյն Գրիգորի ելն ի Վերապէն» (Ձեռ. N° 5414 էջ 253բ):

Իսկ ըստ 2092 թվահամարի Տոնացույցի խմբագրութեան՝ «էշ (շաբաթ, բնագրում՝ Գշ). Սրբոյն Գրիգորի ելն ի Վիրապէն... ի Սահմի տասն»<sup>2</sup>:

Հայոց Յայտնավորքների համառոտ և ընդարձակ խմբագրությունների գրչագրերը Գրիգոր Լուսավորչի ելն ի Վիրապէն տոնի համար ունեն Սահմի 4 (= Հոկտեմբեր 13) ամսաթվային նշումները՝ հայոց անշարժ տոմարի և նրա հուլյան համարժեքի կանոնի տակ:

Ըստ 3082 թվահամարի գրչագրի՝ «Նորին՝ Սահմի Դ. Սրբոյն Գրիգորի ելն ի Վիրապէն... ԺԳ (հոկտեմբեր)»<sup>3</sup>: Համարժեք տեղեկություն է բերել նաև 179 թվահամարի գրչագիրը:

Ըստ 7529 թվահամարի Յայտնավորքի ընդարձակ խմբագրութեան՝ «Սահմի Դ և Հոկտեմբեր ԺԳ...: Յայտնավորքի սուրբ Գրիգորի ելն ի Վիրապէն. Գիտ ի Նոյեմբ(ե)ր ԺԸ և ի Սեպտեմբեր Լ»<sup>4</sup>: Ինչպես նկատելի է հղել է Նոյեմբեր 18-ի և Սեպտեմբեր 30-ի կանոններում գրված բնագրերը, որոնք բացակայում են հիշյալ հատվածում:

2695 թվահամարի Յայտնավորքի ընդարձակ խմբագրությունն արձանագրել է. «Սահմի Դ և Հոկտեմբեր ԺԳ. Սրբոյն Գրիգորի ելն ի Վիրապէն»<sup>5</sup>: Բավարարվենք բերված տեղեկություններով:

Հիշյալ բնագրերում, թեև Գրիգոր Լուսավորչի ելն ի Վիրապէն տոնը կանոնվել է Սահմի 4-ի (= Հոկտեմբերի 13) տակ, սակայն Հոկտեմբերի 13-ին երբևէ չի կատարվել այդ տոնը, այլ Հոգեգալստից հաշված 14-րդ օրը, ուստի Սահմի 4-ը դառնում է Հայոց շարժական տոմարի ամսաթիվ:

Համադրելով Սահմի 4-ը և Պենտեկոստից հաշված 14-ից օրը, ըստ Հայոց տոնացույցային եղանակի, ստանում ենք հետևյալ տարեթվերը, այն է՝ 917 թ., 953 թ. և 967 թ.: Պարզվում է, որ Հայոց Յայտնավորքների խմբագրությունները Սահմի 4-ը քաղել են 10-րդ դարի բնագրերից և հետագայում վեր են ածել Հայոց անշարժ տոմարի ամսաթվի ու տվել Հոկտեմբեր 13-ի համարժեքը:

Հայոց ճաշոցների և տոնացույցների խմբագրությունները Գրիգոր Լուսավորչի ելն ի Վիրապէն տոնի կանոնը տվել են հիմնականում շաբաթ օրվա տակ՝ դնելով Հոգեգալստից հաշված 2-րդ կիրակիից հետո եկող շաբաթ օրը կամ Հոգեգալստից հաշված 14-րդ օրը: Բերենք տարբեր ժամանակներից քաղված մի խումբ նույնարժեք տեղեկություններ, որոնք ունեն միայն սրբագրական որոշ տարբերություններ: Ըստ 936 թվահամարի ձաշոցի ընդօրինակության՝ «Սրբոյն

Գրիգորի ելն ի Վիրապէն...»<sup>1</sup>:

Ըստ 7741 թվահամարի ձաշոցի խմբագրության՝ «Շաբաթի աւր. Յիշատակ է սրբոյն Գրիգորի ելն ի Վիրապէն...»: Նույն կանոնը գրանցվել է նաև ներքին լուսանցքում<sup>2</sup>:

5455 թվահամարի ձաշոցի ընդօրինակության մեջ կարդում ենք. «Շաբաթ աւր. Սրբոյն Գրիգորի ելն ի Վիրապէն...»<sup>3</sup>:

Վկայակոչենք նաև տոնացույցների տվյալները: 759 թվահամարի գրչագրում գրված է. «էշ (շաբաթ). սրբոյն Գրիգորի ելն ի Վիրապէն...»<sup>4</sup>: Նույնարժեք տեղեկություն է տալիս 179 թվահամարի գրչագիրը:

752 թվահամարի Տոնացույցի խմբագրությունը արձանագրել է. «Շաբ(աթ). Սրբոյն Գրիգորի ելն ի Վիրապէն...»<sup>5</sup>:

7203 թվահամարի գրչագրում գրված է. «(Առաջին կիրակին որ գկնի Գալստեան Սուրբ Հոգոյն) շաբ(աթ). Սրբոյն Գրիգորի ելն ի Վիրապէն...»<sup>6</sup>:

5667 թվահամարի Տոնացույցի ընդօրինակությունն ունի՝ «(Ա կիրակիից հետո). Շաբաթ աւր. Սրբոյն Գրիգորի ելն ի Վիրապէն...»<sup>7</sup>: Համարժեք տեղեկություններ ենք գտնում նաև մյուս տոնացույցների խմբագրությունների մեջ<sup>8</sup>:

Սիմոն Երևանցին պահպանել է հին կանոնը և Հոգևոյ Գալստեան-Պենտեկոստին հաջորդող առաջին կիրակիից հետո եկող շաբաթ օրվա տակ տվել է. «Կանօն սրբոյն Գրիգորի Լուսավորչին մերոյ ելման ի Վիրապէն: Շաբաթ. Տօն է սրբոյն Գրիգորի Լուսավորչին երանելոյն ի Վիրապէն»:

Այսպիսով Հայոց տոնացույցների խմբագրությունները ևս միանշանակ Գրիգոր Լուսավորչի ելն ի Վիրապէն տոնը սահմանել են Պենտեկոստից հաշված 14-րդ օրը և հաշվել են Հոգեգալստից հետո առաջին կիրակիից, որովհետև Հոգեգալստյան տոնը ներսես Շնորհալին կանոնել էր 8 օր և ավարտվում էր Հոգեգալստից հետո եկող կիրակիին: Այն հաշվման ձև է և ոչ սխալ:

Գրիգոր Լուսավորչի ելն ի Վիրապէն տոնը սկզբից ևեթ շարժական էր և կատարվել է Մայիս 8 - Հունիս 26-ի սահմաններում նայած տարի:

Այսպիսով Գրիգոր Լուսավորչին նվիրված նոր տոնը, որն անվանվեց Ելն ի Վիրապէն սկիզբ առավ 9-րդ դարի 4-րդ քառորդից, իբրև շարժական տոն և որևէ փոփոխության չենթարկվեց հետագայում: Նա որոշ ժամանակ անց ստացավ Հայոց շարժական տոմարի ամսաթվեր, այն է՝ Սահմի 15, Սահմի 10 և Սահմի 4, որոնցից վերջին երկուսը հետագայում վերածվեցին Հայոց անշարժ տոմարի ամսաթվերի և գրանցվեցին ձաշոցների, Տոնացույցների և Յայտնավորքների խմբագրությունների մեջ, սակայն Քննարկվող տոնը միշտ կատարվեց Հոգեգալստից հաշված 14-րդ օրը, շաբաթվա կանոնի տակ և Հայոց ամսաթվերով բնագրերը օգնում էին հեշտությամբ գտնել այդ տոնին նախատեսվող ընթերցվելիք նյութերը:

1 Ձեռ. N° 936, էջ 71ա-74ա:

2 Տե՛ս Ձեռ. N° 7741, էջ 304ա-305ա:

3 Տե՛ս Ձեռ. N° 5455, էջ 193բ:

4 Ձեռ. N° 759, էջ 169բ:

5 Ձեռ. N° 752, էջ 66բ:

6 Ձեռ. N° 7203, էջ 63ա-66բ:

7 Ձեռ. N° 5667, էջ 126բ:

8 Տե՛ս Ձեռ. N° 9536, էջ 171ա, 2031, էջ 81ա, 4459, էջ 88ա-բ, 4164, էջ 182բ, 4874, էջ 187ա-բ և այլն:

1 Ձեռ. N° 6235, էջ 24ա:

2 Ձեռ. N° 2092, էջ 262ա:

3 Ձեռ. N° 3082, էջ 390բ:

4 Ձեռ. N° 7529, էջ 14ա:

5 Ձեռ. N° 2695, էջ 277ա:



Գրիգոր Լուսավորչին նվիրված հաջորդ տոնական շարքը. ըստ տոնացույցային տարվա կարգի, սկսվել է Հոգեգալստյան տոնից հաշված 4-րդ կիրակիից հետո եկող երկուշաբթի և ավարտել շաբաթ օրով, որտեղ երկուշաբթիից ուրբաթ սուրբ Գրիգորի անվամբ Պահքն էր, իսկ Շաբաթ օրը նվիրված էր Գրիգոր Լուսավորչի նշխարների գյուտի հիշատակին: Այն շարժական տոն է և կատարվել է Հունիս 6 - Հուլիս 10-ի սահմաններում նայած տարի, քանի որ տոնը ընկել է Պենտեկոստից հաշված 28-րդ օրը:

Տրէ 10-ի վերլուծութունից, ինչպես և նախորդ տոնների քննութունից պարզ դարձավ, որ «Գիւտ նշխարաց»-ը սկիզբ է առել 9-րդ դ. 4-րդ քառորդից, թեև Տրէ 10-ի հնագույն գրանցումն ունենք 12-րդ դարի կեսերից: Բացի վերը նշված ամսաթվից ունենք Տրէ 20-ը: Բերենք այդ վկայութունը: Ըստ 6235 թվահամարի ճաշոցի՝ «Տրէ Ի. Գիւտ նշխարաց սրբոյն Գրիգորի...»<sup>1</sup>: Կիրառելով Հայոց տոնացույցային եղանակը և համադրելով Տրէ 20-ը ու Պենտեկոստից հաշված 28-րդ օրը, որպես Գրիգոր Լուսավորչի նշխարաց Գյուտի հիշատակի օր, ստանում ենք այդ տոնի հնագույն տարին այն է՝ 1075 թվականը, որտեղ Տրէ 20-ը համարժեք է Հունիս 20-ին: Պարզ է, որ այդ ամսաթիվը գալիս է 11-րդ դարից և 6253 թվահամարի ճաշոցը իր նյութերը քաղել է 11-րդ դարի նախագաղափար գրչագրից:

Տանք մյուս ճաշոցների խմբագրութունների տվյալները: Ըստ 7741 թվահամարի գրչագրի՝ «(Երրորդ կիրակէ). Շաբաթ աւր. Գիւտ նշխարաց սրբոյն Գրիգորի...», ներքին լուսանցքում՝ «Շաբաթ աւր. Գիւտ նշխարաց սրբոյն Գրիգորին Հայոց Լուսաւորչին»<sup>2</sup>:

Ըստ 5455 թվահամարի բնագրի՝ «(Չորրորդ կիրակիից հետո) Շաբաթ աւր. Սրբոյն Գրիգորի Գիւտ նշխարացն...»<sup>3</sup>:

4977 թվահամարի ճաշոցն ունի՝ «Տրէ Ժ(10) Գիւտ նշխարաց սրբոյն Գրիգորի Լուսավորչին...»<sup>4</sup>:

Քիչ հետո տոնացույցերի խմբագրութունների տվյալները ներկայացնելիս կերևա, որ ճաշոցների նման հիշյալ տոնը մեկ դրված է Պենտեկոստից հետո եկող 3-րդ և 4-րդ կիրակիից հետո եկող շաբաթ օրը: Այն հակասութուն չէ, այլ հաշվման արդյունք: Մի դեպքում 4-րդ կիրակիից հետո գրանցելով հաշվել են Պենտեկոստի կիրակին, իսկ մյուս դեպքում 3-րդ կիրակի ասելով 1-ին կիրակին հաշվել են Պենտեկոստից հետո եկող կիրակին:

Վկայակոչենք Տոնացույցերի խմբագրութունների տեղեկութունները:  
Ըստ 759 թվահամարի գրչագրի՝ «Զկնի Հոգւոյ գալստեան Երրորդ կիրակէ... ապա Պա[հ]ք Սրբոյն Գրիգորի բայց տաւնք լինի:

էշ (շաբաթ). Սրբոյն Գրիգորի Լուսաւորչին...»<sup>5</sup>: Համարժեք տվյալներ ունի նաև 179 թվահամարի գրչագիրը: Ինչպես նկատելի է հիշյալ տոնացույցերի խմբագրութունները բերել են Գրիգոր Լուսավորչի անունը, բայց չեն որակել այն, սակայն մյուս բնագրերից և հետագա տոնացույցերի ընդօրինակութուններից երևում է, որ խոսքը գնում է. «Գիւտ նշխարաց»-ի մասին: Ըստ 752 թվահամարի Տոնացույցի խմբագրության՝ «Գ կիր[ակէ]... և ապա Պահք Սրբոյն Գրիգորի, բայց տաւն լինի... Շաբ[աթ]. Գիւտ նշխարաց Սրբոյն Գրիգորի Լուսաւորչին...»<sup>6</sup>:

Ըստ 767 թվահամարի գրչագրի՝ «(Պենտիկոստից հետո 1-ին կիրակիից հաշված 3-րդ կիրակիից հետո)... ապա Պահք Սրբոյն Գրիգորի և է միջինք ամուան Յիսնակացն, բայց տոն լինի... Շաբաթ. Գիւտ նշխարաց Սրբոյն Գրիգորի Լուսաւորչի»<sup>1</sup>:

Ըստ 7203 թվահամարի Տոնացույցի՝ «Երրորդ կիր[ակէ]... եւ ապա Պահք Սրբոյն Գրիգորի և միջինք ամուան Յիսնակացն, բայց տաւնք լինի:

Շաբաթ. Գիւտ նշխարաց Սրբոյն Գրիգորի Հայոց Լուսաւորչին»<sup>2</sup>:

Ըստ 5667 թվահամարի գրչագրի՝ «Գ երրորդ կիրակին... եւ ապա Պահք Սրբոյն Գրիգորի և է միջինք ամուան Յիսնակացն, բայց տաւն լինի:

Շաբաթ. Գիւտ նշխարաց Սրբոյն Գրիգորի Լուսաւորչին...»<sup>3</sup>:

Համարժեք տեղեկութուններ են տալիս 16-17-րդ դարերի տոնացույցների խմբագրութունները միայն ավելացնում են. «Ի լեառն Սեպուհոյ»<sup>4</sup>:

Գրիգոր Լուսավորչի նշխարների Գյուտի հիշատակը միշտ կատարել են հիշյալ շարժական օրերին, թեև Հայոց Յայնամավուրքների խմբագրութունները գրանցել են Հայոց անշարժ տոմարի Նոյեմբերի 18-ի տակ: Հասկանալի է, որ Յայնամավուրքների նյութերը օգտագործել են «Գիւտ նշխարաց»-ի տոնի համար, որը կատարում էին Պենտեկոստից հաշված 28-րդ օրը: Բերենք որոշ տվյալներ Յայնամավուրքներից:

3082 թվահամարի համառոտ Յայնամավուրքի խմբագրության մեջ կարդում ենք. «Նորին՝ Տրէ] Ժ. Պատմութիւն սրբոյն Գրիգորի ծնընդեանն և սընընդեանն և ուսման և մահուան և գիւտ ոսկերացն ԺԸ (Նոյեմբեր)»<sup>5</sup>:

179 թվահամարի համառոտ Յայնամավուրքի խմբագրության մեջ գրված է. «[Տրէ] Ժ. - Գիւտ նշխարաց Սրբոյն Գրիգորի Լուսաւորչին... ԺԸ (Նոյեմբեր)»<sup>6</sup>:

7530 թվահամարի Յայնամավուրքի ընդարձակ խմբագրության մեջ արձանագրվել է. «Տրէ Ժ. Նոյեմբեր ԺԸ. Գիւտ նշխարաց Սրբոյն Գրիգորի Հայոց Լուսաւորչի...»<sup>7</sup>:

9585 թվահամարի Յայնամավուրքի ընդարձակ խմբագրության մեջ գրանցվել է. «Տրէի Ժ և ի Նոյեմբեր ԺԸ. Պատմութիւն սրբոյն Գրիգորի Լուսաւորչին և վասն մահուան և Գիւտ ոսկերացն...»<sup>8</sup>:

2695 թվահամարի Յայնամավուրքի խմբագրության մեջ վկայվել է. «Տրէ Ժ և Նոյեմբեր ԺԸ. Պատմութիւն սրբոյն Գրիգորի Լուսաւորչին ծնընդեանն և սընընդեանն և ուսման նորա և մահուանն և գիւտ ոսկերացն...»<sup>9</sup>:

4741 թվահամարի գրչագրում տրված է. «Տրէ Ժ եւ նոյեմբ[եր] ԺԸ. Պատմութիւն սրբոյն Գրիգորի Լուսաւորչին, ծնընդեանն և սընընդեան և ուսման նորա և մահուանն և գիւտ ոսկերացն...»<sup>10</sup>:

Գրիգոր ինքնուրու Յայնամավուրքի խմբագրության տվյալները կքննենք առանձին: Այսպիսով Գրիգոր Լուսավորչի նշխարների Գյուտի տոնը կատարվել է Հոգեգալստեան կիրակիից

1 Ձեռ. № 767, էջ 162բ-163բ:  
2 Ձեռ. № 7203, էջ 66բ-67ա:  
3 Ձեռ. № 5667, էջ 127ա:  
4 Ձեռ. № 9836, էջ 171բ, 2031, էջ 82բ, 4459, էջ 88բ-89ա, 4164, էջ 184բ, 4874, էջ 187բ-188ա և այլն:  
5 Ձեռ. № 3082, էջ 391բ:  
6 Ձեռ. № 179, էջ 541բ:  
7 Ձեռ. № 7530, էջ 28ա:  
8 Տե՛ս Ձեռ. № 9585, էջ 56ա:  
9 Ձեռ. № 2695, էջ 321բ:  
10 Ձեռ. № 4741, էջ 90բ:

1 Ձեռ. № 6235, էջ 27բ:  
2 Ձեռ. № 7741, էջ 313ա-բ:  
3 Ձեռ. № 5455, էջ 205բ:  
4 Ձեռ. № 4977, էջ 62բ:  
5 Ձեռ. № 759, էջ 170ա:  
6 Ձեռ. № 752, էջ 166բ:

Հաշված 4-րդ կիրակիից հետո եկող շաբաթ օրը կամ Պենտեկոստեից հաշված 28-րդ օրը, որը տատանվել է Հունիս 6-Հուլիս 10-ի սահմաններում նայած տարի: «Գիւտ Նշխարաց»-ը ստացել է Հայոց շաբաթական տոմարի ամսաթվեր, այն է՝ Տրէ 10 և Տրէ 20, որից Տրէ 10-ը վեր է անվել Հայոց անշարժ տոմարի ամսաթվի և ստացել Նոյեմբեր 18-ի հուլյան տոմարի համարժեքը, որի ժամանակ երբևէ այդ տոնը չի կատարվել, այլ այդ կանոնի տակ դրված նյութերը օգտագործել են շաբաթական տոնի համար: Այժմ էլ հիշյալ տոնը տոնվում է առանց փոփոխությունների:

\*\*\*

Անցնենք Գրիգոր Լուսավորչի տոների դասակարգման խնդրին: Գրիգոր Լուսավորչի և նրա հետ կապված տոնական օրերի դասակարգմանն է նվիրել 2335 թվահամարի ժողովածուի (1476 թ.) մեջ գետեղված բնագիրը, որի հեղինակը անհայտ է: Այդ անանուն բնագիրը շարադրված է Հարց ու պատասխանի ձևով: Բերենք այդ բնագրի մեջ հետաքրքրող հատվածը, այն է՝ «Եւ արդ գիտել պարտ է: Զի ստուգիւ աւուրք եւթն են խորհրդական տաւնից յիշատակի սրբոյն Գրիգորի. ըստ եւթանց շրջագայութեան (կողքի լուսանցքում նշան է դրված և ավելացված բեր և հղված է այդ նշանը 2-րդ ամի վրա, որ նշանակում է շրջագայութեանը կարգաշրջաբերութեան) կենցաղոցս և ըստ եւթնից աւուրց շաբաթոյն, գեւթն արփի շնորհաց հոգւոյն ընդ ունակն պատուելով: Եւ է առաջին աւր յիշատակ սրբոյն Գրիգորի մուտն ի Վիրապն, որ է յԱւգոստոս ի տասն եւ եւթն, կարգեալ զխորհրդապէս սկիզբն փրկութեան մերոյ: Երկրորդն՝ Ելն ի Վիրապէն. Աւետիք ելանելոյն մեր ի խաւարային բանտէ կռապաշտութեան: Եւ երրորդն հուպ առ նմին Տեսլեանն է տաւն՝ հիմնարկութեան եկեղեցւոյ սրբոց ի Վաղարշապատ քաղաքի: Խորհրդաբար զմեզ առնելով տաճար սրբոյ երրորդութեան հիմն արի վերա վիմին հաւատոյ: Եւ այսօրիկ երկրորդն տաւնքս ի Յունիս կատարին զկնի միմեանց, սուղ ինչ միջոցաւ որոշեալ ի միմեանց: Չորրորդն՝ Ննջման է տաւն, ի Սեպտեմբերի յերեսունն ստուգապես և ճշմարիտ: Եւ թէ ոք հակառակեսցի տգիտաբար անգիտելի լինի զաւր մահուանն նորին: Ի մարդկանէ ոչ ոք հուպ եղեալ, զի մովսիսաբար պատուեալ և այսոսիկ, զի մի ի պատաւն առցի ի դեռաբուսիկ հաւատացելոցն: Եւ վասն այսր իրաց եղելոց հակառակաւն, եթէ զայրասցի ի միտս իւր տարակուսեալ բժշկեսցի ի խորհրդոց այսու աւրինակաւ վերձանութեան աստուածային գրոց հետեւելով և գիտասցէ այնպիսին: Զի երանելին Յոհան Բարձրեան խնդրեալ աղաւթիւք յԱստուծոյ և յայտնեց նմա Աստուած, որ և ասէ յիւրում ճառին ի սեպտեմբերի յերեսունն ցուցանելով ստուգիւ զաւր ննջման Լուսավորչին մեր: Հինգերորդ Գիւտ Նշխարացն ի ձեռն Գառնկոյ ճգնաւորի, որոյ յայտնեալ ի Տիառնէ ի լերինն Սեպուհ: Արժանացել գտողին մերոյ և ժողովողին յամալական (յամոցական) վարուց, զոր բարձեալ ամփոփեաց ի գեաւղն Թորդան յիւրում պարտիզի, որ ասի եղեալ մեծին Գրիգորի վարձ զաւրականութեան թագաւորն Տրդատէս շնորհեալ, թէ է ճշմարիտ որպէս ասիւ: Եւ այս տաւն ի յիշատակ կատարի ի Հոկտեմբերի ԼԱ: Վեցերորդն Փոխումն Նշխարացն է, զոր տարեալ Զենոնի կայսեր ի Բիւզանդիոն, ընդ որս և զսրբոյ կուսին Հովհաննէսէն և այլոց սրբոց: Եւ կարգեալ եղև զայս տաւն կատարել ի Դեկտեմբեր ԺԸ: Իսկ եւթներորդն վերադարձումն է Նշխարացն ի Կոստանդինուպուլսէ ի Հայք ի ձեռն Գրիգորի պատրկի մեծափառ իշխանի, զոր կարգեցին տաւնել յաւուրս քառասնորդաց մեծի պասէքին ի հինգերորդում շաբաթիւն: Եւ այս որպէս ասացաւ խորհրդաբար թուով տաւնախմբաթեամբ պատուել զհայր լուսոյ հնազանդելոց որդւոց նորին և պատուել մտերմաբար սիրով զերախտաւ, որ առաջնորդն մերոյ փրկութեան և տեսուչ ոգւոց մերոց: Զի այսու փոքր ինչ աշխատութեամբ մասնաւորեալ գտցուք երկուց նորին, հետեւելով նորուն խթատուն բարեպաշտիւ ըստ կարողութեան, որով ընկալցուք հատուցումն բարի ի Տիառնէ ի ձեռն նորին բարեխաւութեան...»<sup>1</sup>:

Ինչպես նկատելի է Հարց ու պատասխանի անանուն հեղինակը իր նյութերը քաղել է

<sup>1</sup> Ձեռ. № 2335, էջ 66բ-67բ:

նախորդ շրջանի բնագրերից և մեկնաբանել դրանք: Գրիգոր Լուսավորչի հիշատակի տոները դասակարգել է յոթ տարբեր օրերի: Դրանցից առաջինը «յիշատակ սրբոյ Գրիգորի մուտն ի Վիրապն, որ է յԱւգոստոսի տաս եւ եւթն», ըստ վերոհիշյալ հեղինակի: Իսկապես Գրիգոր Լուսավորչի հնագույն և միակ տոնն էր, որն սկիզբ առավ 5-րդ դարի 80-ական թվականներից, իբրև շաբաթական տոն: Սակայն այդ տոնը կատարվել է Մարտ 1 - Ապրիլ 10-ի սահմաններում նայած տարի: Տվյալ դեպքում Օգոստոս 17-ի նշումը հեղինակի անգիտությունն արգասիքն է: Բացի այդ պարզեցինք, որ այդ տոնը «մուտն ի Վիրապն» անվանումը ստացել է 9-րդ դարի 4-րդ քառորդից սկսած, երբ Գրիգոր Լուսավորչի տոնական օրերը ավելացան տոնացույցում: 14-րդ դարի սկզբներից հիշյալ տոնի հետ զուգահեռաբար տոնվում էր նրա «Գիւտ Նշխարաց ի Կոստանդնուպոլիս»-ը: Անանուն հեղինակը Գրիգոր Լուսավորչին նվիրված երկրորդ տոնը համարել է «ելն ի Վիրապէն»-ը, որը դրել է Հունիս ամսին: Այն, ինչպես տեսանք, շաբաթական տոն էր, որն առաջացավ 9-րդ դարի 4-րդ քառորդին և դրվեց Պենտեկոստեից հաշված 14-րդ օրը և տոնվում էր Մայիս 23 - Հունիս 26-ի սահմաններում նայած տարի:

Անանուն հեղինակը Գրիգոր Լուսավորչի տոնաշարքի մեջ է մտցնում «տեսլանն է տաւն՝ հիմնարկութեան եկեղեցւոյ սրբոյ ի Վաղարշապատ քաղաքի», այսինքն՝ նաւակատեաց եկեղեցւոյ տոնը և նույնպես դնում է Հունիս ամսին: Այն իբրև շաբաթական տոն, ինչպես տեսանք, չէր կարող ստեղծվել 8-րդ դարից ավելի վաղ և տոնը կատարվել է Պենտեկոստեի հաջորդ կիրակին, որն ընկել է Մայիս 17 - Հունիս 20-ի սահմաններում նայած տարի, իսկ հետագայում տոնը տեղափոխվեց Պենտեկոստեից հաշված 3-րդ կիրակին, որի մասին է գրում հեղինակը: Ըստ հեղինակի Գրիգոր Լուսավորչի հիշատակին նվիրված չորրորդը՝ «ննջման է տաւն, ի Սեպտեմբերի յերեսունն ստուգապես և ճշմարիտ»: Պարզեցինք, որ Գրիգոր Լուսավորչի «Գիւտ Նշխարաց ի Կոստանդնուպոլիս» տոնը, իբրև նրա հիշատակի օր, նշվել է հուլյանի մոտ և դրվել է Սեպտեմբերի 30-ին: Այդ անշարժ տոնը Գրիգոր Վկայասերը մտցրեց իմ Տօնանամակի մեջ, որից հետո հավանաբար տոնվեց տեղայնացված ձևով: Սակայն իբրև անշարժ տոն լայն տարածում չգտավ: Այդ վիճակից դուրս գալու համար 14-րդ դարի սկզբներին այդ տոնը դրվեց «Մուտն ի Վիրապն» կանոնի տակ և նշվեց զուգահեռաբար: Այն վերածվեց շաբաթական տոնական օրվա և Սեպտեմբեր 30-ի և նրա համարժեք Հայոց անշարժ տոնի ամսաթվի տակ եղած նյութերը օգտագործվեցին տոնի կատարման ժամանակ:

Այլ խոսքով Սեպտեմբերի 30-ը կորցրել էր իր նախնական իմաստը, որովհետև այդ տոնը կատարվում էր Մարտ 1 - Ապրիլ 10-ի սահմաններում նայած տարի: Գրիգոր Լուսավորչին նվիրված հինգերորդ տոնը հեղինակը համարել է «Գիւտ Նշխարացն ի ձեռն Գառնկոյ ճգնաւորի, որոյ յայտնեալ ի Տիառնէ ի լերինն Սեպուհ», «եւ այս տաւն ի յիշատակ կատարի ի Հոկտեմբերի ԼԱ»:

Հիշյալ տոնը, ինչպես տեսանք, դրվել է Պենտեկոստեից հաշված 28-րդ օրը և իբրև շաբաթական տոն կատարվել է Հունիս 6 - Հուլիս 10-ի սահմաններում նայած տարի: Դեռ ավելին Հայոց Յայսմավուրքների խմբագրութունները գրանցել են Հայոց անշարժ տոմարի Տրէ 10-ի և նրա համարժեք հուլյան տոմարի Նոյեմբերի 18-ի տակ, թեև կատարել են շաբաթական օրերին, ուստի Հոկտեմբերի 31-ի նշումը թյուրիմացության արդյունք է և հավանաբար գալիս է Հայոց անշարժ տոմարի Սահմի 22-ից: Ըստ հեղինակի Գրիգորի Լուսավորչին նվիրված «վեցերորդն փոխումն Նշխարացն է, զոր տարեալ Զենոնի կայսեր ի Բիւզանդիոն ընդ որս և զսրբոց կուսին Հովհաննէսէն և այլոց սրբոց: Եւ կարգեալ եղև զայս տաւն կատարել ի Դեկտեմբեր ԺԸ»: Այստեղ հեղինակը նկատի է ունեցել Սեպտեմբերի 30-ը, որը գալիս է հունական տոնացույցներից և Գրիգոր Վկայասերի Տօնանամակի խմբագրութուններից, իսկ 14-րդ դարի սկզբներից դրվեց «Մուտն ի Վիրապն» տոնի կանոնում և այդ երկուսը միասին տոնեցին: Անանուն հեղինակը Գրիգոր Լուսավորչին նվիրված 7-րդ տոնն է համարել «վերադարձումն ի Նշխարաց ի Կոս-

տանդնուպալսէ ի Հայք ի ձեռն Գրիգորի պատրկի մեծափառ իշխանի, զոր կարգեցին տաւնել յաւուրս քառասնորդաց մեծի պասեքին ի Հինգերորդում շաբաթ(աթ)ուն»:

Գրիգոր Լուսավորչին նվիրված տոնական օրերի քննութիւնից պարզվեց, որ Հիշյալ տոնը հնագույնն է և միայն 14-րդ դարի սկզբներին միացրին «Վերադարձումն ի նշխարաց ի Կոստանդնուպալսէ ի Հայք» տոնը: Ուշագրավ է, որ Գրիգոր Լուսավորչի նշխարների վերադարձն իրականացրել է, ըստ հեղինակի, Գրիգորը՝ Պատրիկ մականվանվող իշխանը, որի անունը մյուս բնագրերում բացակայում է և պարզ է թե խոսքը ում մասին է, թերևս Գրիգոր մագիստրոս Պահլավունու:

Քննարկվող բնագրի մեջ 2-րդ և 3-րդ տոների մասին տված տեղեկութիւնը, այն է՝ «եւ այսոքիկ երկոքին տաւնքս (նկատի ունի ելն ի Վիրապեն և նավակատեաց եկեղեցոյ) ի Յունիս կատարի զկնի միմեանց, սաղ ինչ միջացաւ որոշեալ ի միմեանց», ցույց է տալիս, որ հեղինակն ապրել է 14-րդ դարում: Բանն այն է, որ նավակատեաց եկեղեցու տոնը Պենտեկոստից հետո եկող կիրակիից տեղափոխվեց հաջորդ կիրակի 13-րդ դարի վերջում - 14-րդ դարի սկզբում և միայն 14-րդ դարի բնագրերում ենք գտնում, որ ելն ի Վիրապեն տոնի դրված է Պենտեկոստից հաշված 14-րդ օրը, իսկ նավակատեաց եկեղեցունը՝ 15-րդ օրը: Բացի այդ Գրիգոր Լուսավորչի մուտն ի Վիրապեն տոնի հետ դրվեց նրա «Գիւտ նշխարաց ի Կոստանդնուպոլիս» կանոնը 14-րդ դարի սկզբներից, որի մասին խոսում է նա: Հեղինակի Գրիգոր Լուսավորչի տոների դասակարգումը, ինչպես կտեսնենք նման չէ Գրիգոր իշխանի հետ, ուստի նա ապրել է 14-րդ դարում: Քննութիւնից պարզ դարձավ, որ անանուն հեղինակը շփոթել է Գրիգոր Լուսավորչի տոների հետ կապված շատ հարցեր և հատկապես նրա 7 տոնական օրերի դասակարգումը: Տոնացույցների մեջ, ըստ տոնացույցային կարգի, Գրիգոր Լուսավորչին ունեցել է երեք կանոն որից առաջինն է մեջ, ինչպես տեսանք, զուգահեռ դրվել է նաև «Գիւտ նշխարաց ի Կոստանդնուպոլիս»-ը: Իսկ Յայսմավորքների խմբագրութիւններում կանոնված տոների նյութերը միայն օգտագործվել է այդ օրերի համար և նրանք առանձին անշարժ օրերի տակ չեն կատարվել: Հարկ է նշել, որ հեղինակը Գրիգոր Լուսավորչի «տեսլեանն է՝ տաւն» հիմնարկութեան եկեղեցոյ սրբոց ի Վաղարշապատ քաղաքի», այսինքն Պենտեկոստից հաշված 15-րդ օրն է համատեղ «տեսլեանն» տոն, մինչդեռ այն ընկալվում էր նավակատեաց եկեղեցու տոն, թեև վերագրվում էր Գրիգոր Լուսավորչին: Սակայն Տոնացույցերում Աստուածածնից առաջ ընկնող շաբաթ օրվա տոնն է համարվել «Շողակաթինն տեսլեան սրբոյ Գրիգորի Լուսաւորչին»<sup>1</sup>, իսկ Յայսմավորքների խմբագրութիւնների մեջ այն դրվել է Քաղոց 10-ի և Դեկտեմբեր 18-ի (Գրիգոր իշխանից ցու մոտ՝ 11-ին) կանոնի տակ՝ «տեսիլ սրբոյն Գրիգորի Լուսաւորչի» ձևակերպումներով<sup>2</sup> և նյութերն օգտագործվել են տոնացույցի շարժական տոնի ժամանակ:

Գրիգոր Լուսավորչի տոնական օրերի դասակարգմանն է անդրադարձել նաև Գրիգոր իշխանի: Վերջինս Տրէ 10-ի կանոնի տակ գրել է. «Իսկ վասն աւուրց տօնիցն թէ ոք տարակուսեցի չորք յայտնի և չորք յորում աւուր և տօնեացի ընդունելի է. զի դրուածու տօնք բազումք են մեզ և այլոց քրիստոնէից: Այլ ընկալցիս զբանս զայս առ ի հաստատութիւն մտաց: Որպէս թէ՛ զտօն յղութեան Տրէ ամսո ի ԻԱ (= Նոյեմբեր 29) կատարի եւ զծննդեանն՝ Հրոտից Լ (= Օգոստոս 5), իսկ զըջարչարանացն՝ Արաց ի ԻԸ (= Փետրվար 4), մուտն ի Վիրապեն՝ Մեհակի ի ԻԲ (Փետրվար 28) ելն ի Վիրապէն՝ Սահմի ի Ժ (= Նոյեմբեր 2, պետք է սրբագրել՝ Սահմի ի Դ = Հոկտեմբեր 13) ասի, իսկ տեսլեանն Սահմի ի ԻԲ (= Հոկտեմբեր 31), եւ նընջմանն տօնն՝ ըստ մեծի Յոհաննու Ոսկիբերանի Սեպտեմբեր Լ (30), որ է Հոռի ի ԻԱ, Տրէ ի Ժ (= Նոյեմբեր 18)

<sup>1</sup> Տե՛ս Ձեռ. N°N° 752, էջ 169բ, 451ա, էջ 312բ, 767, էջ 16րա, 5667, էջ 132ա, 9836, էջ 174բ, 5440, էջ 113բ, 4459, էջ 91ա-93ա, 4164, էջ 192ա, 4874, էջ 191ա և այլն:

<sup>2</sup> Տե՛ս Ձեռ. N°N° 3082 էջ 392բ, 17ր, 7530 էջ 68ա, 9585 էջ 95բ, 4717 էջ 138բ և այլն:

գիւտ նշխարաց, որ եղև նախ և առաջին ի ձեռն Գառնկոյ ճգնաւորին. որ ըստ հրամանի Աստուծոյ ի վերուստ ի տեսլեանն եղ ի գիւղն Թորդան կոչեցեալ եւ հրամանաւ Ջենոնի կայսերն թէ մասն ինչ եթէ յոյով տարեալ եղև ի Կոստանդինապօլիս և յետոյ դարձեալ բերաւ ի Հայս: Բայց որք զոր հանգստին, տարակոյս ընկենուն թէ որպէս ասի յոմանց թէ Գրիգորիոսի աղուանից կաթողիկոսին տարեալ եղև նշխարքն յոյսան եւ թէ որպէս ասացաք մերոյ Լուսաւորչին մաս ինչ տարեալ եղև բայց յետոյ դարձեալ եղքն ըստ Սաղմոս երգեցողին՝ Հանեցան ծառայք քո ընդ քարինս...»<sup>1</sup>:

Ուշագրավ է, որ Գրիգոր իշխանիցին Յայսմավորքի խմբագրութիւնի մեջ միայն հինգ ամսաթվերի կանոնների տակ է տալիս Գրիգոր Լուսավորչին նվիրված տոնական օրերը, այն է՝

1. «Նաւասարդ Դ և Օգոստոս ԺԴ. Տօնէ շողակատին իջման միածնին բանին Աստուածոյ ի Վաղարշապատ քաղաքին (էջ 19-20)

2. «Հոռի ԻԱ եւ Սեպտեմբեր Լ. Գիւտ Լուսավորչին մերոյ. (էջ 134-136):

3. «Տրէի Ժ եւ Նոյեմբերի ԺԸ. Պատմութիւն սրբոյն Գրիգորի Լուսաւորչին և վասն անտանելի և բազմաչարչար տանջանացն» (էջ 261-270):

4. «Քաղոց ԺԱ և Դեկտեմբեր ԺԹ. Տեսիլ սրբոյն Գրիգորի զոր ետես ի Վաղարշապատ քաղ: զիջումն Միածնին Աստուծոյ և զշինումն եկեղեցեացն և այն գրէալ է ի Նաւասարդի Դ բայց աստ եղաք զհարցումն Լուսաւորչին մերոյ ընդ հրեշտակին» (էջ 361-364):

5. «Արաց ԻԸ և Փետրվարին Դ... Յայսմ տօն է չարչարանաց Լուսաւորչին մերոյ սրբոյն Գրիգորի» (էջ 499-501):

Ի դեպ վերջին կանոնի հիշյալ հատվածը բացակայում է 15-րդ դարի մի քանի գրչագրում:

Գրիգոր իշխանիցին իրատեսական մոտեցում է ցուցաբերել Գրիգոր Լուսավորչին նվիրված տոների դասակարգմանը: Նա գրում է, որ հայտնի է Գրիգոր Լուսավորչին նվիրված չորս տոնական օրեր, իսկ մյուս չորսը, որ նա բերել է, կարելի է տոնել դրանցից մեկն ու մեկում: Պարզ է, որ նա նկատի ունի Հայոց Տոնացույցի տոները, թեև բերել է Հայոց անշարժ տոմարի ամսաթվերով, որոնցից երեք կանոն նվիրված էր Գրիգոր Լուսավորչին, իսկ 4-րդը՝ Գրիգոր իշխանիցին ընդունել է Քաղոց 11-ի և Նավասարդի 4-ի կանոնը, այսինքն՝ տեսնալն սրբոյն Գրիգորինը:

Ուշագրավ են բերված Հայոց անշարժ տոմարի ամսաթվերը, որոնց թիվը հասնում է 10-ի: Շարադրանքում անդրադարձել ենք Գրիգոր Լուսավորչի տոների հետ կապված ամսաթվերին, այն է՝ Սահմի 15, 10 և 4, Տրէ 10 և 20, որոնք գալիս են Հայոց շարժական տոմարից և դրանցից մի մասը հետագայում վերածվեցին Հայոց անշարժ տոմարի ամսաթվերի ու ստացան հուլյան տոմարի նոր համարժեքներ: Հայոց շարժական տոմարից կարող էին գալ նաև Գրիգոր իշխանիցի վկայված ամսաթվերից ոմանք: Այսպես, եթե ընդունենք, որ Հոռի 21-ը եղել է Հայոց շարժական տոմարի ամսաթիվ և արտացոլել է Գրիգոր Լուսավորչի Գյուտ նշխարացի հիշատակի օրը, որը կատարվել է Հոգեգալստից հաշված 28-րդ օրը, ապա դրանց համադրումը տալիս է 11-րդ դարի մի խումբ տարիներ, այսինքն Հոռի 21-ը իբրև նշխարաց տոնի ամսաթիվ առաջացել է 11-րդ դարում և տեղ գտել նաև Գրիգոր իշխանիցի մոտ վերածվելով Հայոց անշարժ տոմարի ամսաթվի՝ ստանալով Սեպտեմբեր 30-ի նոր համարժեքը:

Դժբախտաբար չունենք հաստատուն տվյալներ, որոնք հնարավորութիւն տային համադրելու վերոհիշյալ ամսաթվերը մյուս տոների հետ թեև հասկանալի է, որ Գրիգոր իշխանիցին մի դեպքում օգտագործել է Հայոց շարժական տոմարի, իսկ մյուս դեպքում Հայոց անշարժ տո-

<sup>1</sup> Տե՛ս տպագիր, էջ 261-270:

մարի ամսաթվային արժեքները:

Գրիգոր Լուսավորչի տոնական օրերի ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ նախապես Գրիգոր Լուսավորչին ունեցել է մեկ տոնի օր, որը կատարել են հավանաբար Մարտի 9-ին, իբրև անշարժ տոն: 480-ական թվականների սկզբներին Հովհան Մանդակունին հիշյալ տոնը սահմանեց Բուն Բարեկենդանից հաշված 5-րդ կիրակիից հետո եկող շաբաթվա կանոնի տակ, որով այն վերածվեց շաբաթական տոնի:

9-րդ դարի 4-րդ քառորդից սկսած Տոնացույցում Գրիգոր Լուսավորչի նոր տոնական օրեր առաջացան, որի պատճառով անհրաժեշտություն եղավ, ինչպես հին, այնպես էլ նոր տոներին տալ անվանումներ-որակումներ: Հնագույն տոնը ստացավ «Մուտն ի Վիրապն» կամ «Չար-չարանքն»՝ զուգադրելի անվանումները, որին 14-րդ դարի սկզբներից գումարվեց «Գիւտ Նշխարաց ի Կոստանդնուպոլիս»-ը: Իսկ նոր տոներն ունեցան «Ելն ի Վիրապէն» և «Գիւտ Նշխարաց» որակումները, որոնցից առաջինը դրվեց Պենտեկոստեից հաշված 14-րդ օրը, իսկ երկրորդը՝ Պենտեկոստեից հաշված 28-րդ օրը, որոնք հետագայում որևէ փոփոխություն չկրեցին և տոնվում են այսօր ևս: Գրիգոր Լուսավորչին նվիրված նոր տոնական օրեր հայտնի են Յայս-մավուրքների խմբագրություններից, սակայն դրանցից և ոչ մեկը չմտավ «Տօնացոյց»:

ՊԱՀՈՑ (ՊԱՀՔԻ) ՕՐԵՐԸ ՀԱՅՈՑ ՄԵՋ

Հայ եկեղեցու արարողության համեմատ, ըստ Մ. Օրմանյանի հաշվումների, յուրաքանչ-յուր տարի իբրև 160 օր կերակուրի պահքեր կան, որոնց միայն 117 օրեր ծիսական պահքեր են<sup>1</sup>:

Հայոց տոնական տարվա կտրվածքով պահքի օրերը սկսում են Առաջավորի կամ Սարգսի անունները կրող պահքով, որը սահմանել է Հովհան Մանդակունին «Կանոնք ընթերցուածոց»-ի երկրորդ խմբագրության մեջ 480-ական թվականների սկզբներին: Սակայն ավելի վաղ հայտնի է «Կանոնք ընթերցուածոցի»-ի առաջին խմբագրությունը, որտեղ իրենց հաստատուն տեղն ունեն միայն չորեքշաբթիի և ուրբաթի ինչպես և Քառասնորդաց պահքերը: Դրանց մասին տեղեկություններ ենք գտնում կանոնական սկզբնաղբյուրներում: Պահքի առանձին օրերի քննությունից հետո միայն կանցնենք տոնացույցային տարվա պահքերի առանձին խմբերին սկսելով Առաջավորի պահքից, թեև պատմական տեսանկյունից կրնանք հակասուլթ-յան մեջ, որովհետև ավելի վաղ ծագում ունի Քառասնորդաց պահքը:

Ի տարբերություն հրեաների, որոնք պահքի օրեր էին սահմանել երկուշաբթին և հինգ-շաբթին, քրիստոնյաները պահքի առանձին օրեր կարգեցին չորեքշաբթին և ուրբաթը: Թեև վաղ շրջանում պահքի օրերի մեջ էին մտցնում շաբաթն ու նույնիսկ կիրակին:

Բերենք չորեքշաբթի օրը հաստատող մի քանի վկայություններ, որտեղ որոշ կանոններում մեկնվում են նրանց առաջացումը:

Ըստ «Սահմանք և կանոնք զոր եղին աշակերտք ի Քրիստոսի եկեղեցոյ սրբոյ յես վերա-նալոյ Տեառն» վերտառությունը կրող բնագրի, որն ստեղծվել է 366 թ. կամ 377 թ. անվանվել նաև «Վարդապետություն առաքելոց» կամ կրճատ՝ «Կանոնք առաքելականք», 3-րդ կանոնում կարդում ենք. «Գ. Կարգեցին առաքելալքն եւ եղին Հաստատութեամբ, թէ աւր չորեքշաբաթու ի պահս եղիցի, զի ի նմա գուշակեաց եւ յայտնեաց Տէրն կենարար զխորհուրդ չարչարանաց իւրոց, եւ մատնութիւն, եւ դատաստանի, եւ խաչելութեան, եւ մահուան եւ յարութեան՝ աշա-կերտացն իւրոց. եւ տրտմեցան առաքելալքն: Արդ՝ եղիցի ի պահս եւ ի սուգ եւ ի պաշտաւն եւ յաղաւթս ցնծութեան եւ ուրախութեան»<sup>2</sup>:

«Երկրորդ առաքելական կանոնիս գլուխ 26» վերնագիրն ունեցող բնագրի, որը նույնպես 4-րդ դարի 2-րդ կեսի խմբագրություն է և բնագրի մեջ ունի «Սահմանք եւ կանոնք սուրբ առաքելոցն՝ ի ձեռն Կղեմայ, առաքելալ Հեթանոսաց» և «Կանոնք երկրորդ առաքելականք» վեր-նագրերը, 66-րդ կանոնի տակ գրված է. «ԿԴ. Եթէ ոք եպիսկոպոս կամ երեց կամ սարկաւազ կամ վրակարգաց կամ սաղմոս երգող զսուրբ քառասներորդսն ոչ պահեսցէ եւ զչորեքշաբաթի եւ զուրբաթի՝ լուծցի, բայց եթէ վասն հիւանդութեան մարմնոյ ինչ խափան լինիցի, իսկ եթէ ժողովրդական ոք իցէ՝ որոշեսցի»<sup>3</sup>:

«Կանոն Յովհանու Մանդակունու Հայոց կաթողիկոսի» վերնագիրը կրող բնագրի, որը գրվել է 480-ական թվերի սկզբներին, 8-րդ կանոնում վկայել է. «Ը. եւ որ ի չորեքշաբաթու յ ուրբաթու մարտիրոսաց յիշատակ առնէ եւ տաւնս զեմամբ՝ մեղք են, զի եթէ ի կարգի էր, ապա Չատկին ուրբաթն աւր պարտ էր առնել մատաղ, զի Քրիստոս աստուած արարիչն երկնի եւ

<sup>1</sup> Տե՛ս Մ. Օրմանյան, Հայոց եկեղեցի, Ե., 1993, էջ 215:

<sup>2</sup> Տե՛ս Կանոնագիրք Հայոց, Բ. Ա, էջ 30:

<sup>3</sup> Տե՛ս Կանոնագիրք Հայոց, Բ. Ա, էջ 92:

երկրի ուրբաթուն խաչեցաւ, եւ ընթերցուածք եւ սաղմոսք եւ Աւետարանք այն աւր շատ է, եւ ամենայն մարդիկ այն աւր ազատեցան ի մեղաց, եւ դրախտն այն աւր բացաւ ի ձեռն աւագակին, եւ զմարդիկ ի ծառայութենէ այն աւր ազատեաց եւ ի սատանայէ այն աւր ցերծոյց Քրիստոս, բայց կարգք եկեղեցւոյ զայն աւր զատ պահել հրամայեն, եւ փոխանակ նորա ուտել զայլ վեց աւուրսն մինչեւ ց'Պենտեկոստէն»<sup>1</sup>:

«Սահմանադրութիւն կանոնի Վաչագանայ Աղուանից արքայի եղեալ ի ժողովն որ յԱղու(է)նս եղեւ գլուխ(ք) ի Ա» վերնագրի տակ 14-րդ կանոնում կարդում ենք. «ԺԴ. Եւ որ չորեքշաբթու կամ ուրբաթու միս ուտէ յառաջ քան զաղուհացն՝ մի շաբաթ պահեսցէ: Եթէ երիցու առաջի ոք գայ եւ վկայէ վասն մարդոյն, թէ չէ այդպէս, աւագ շինին կալցի եզն մի զմարդոյն եւ յերեցն տայցէ»<sup>2</sup>:

Եփրեմ Ասորուն վերագրվող և «Կանոնք Տեառն Եփրեմի արդիւնակատար կրանաւորի գոր ուսուցանէր յանապատին ի կուսութեան ճառէն գլուխ(ք)Ը» վերնագրի կրող բնագրի 8-րդ կանոնի տակ ասվում է. «Ը. Եւ տերունական պատարագ կիրակէի եւ յայլ աւուրս անխտիր կատարեսցեն, իսկ ի չորեքշաբթու եւ յուրբաթու՝ ոչ»<sup>3</sup>:

Թադեոս առաքյալին վերագրվող «Սահմանք կանոնաց սուրբ առաքելոյն Թադէոսի ի քաղաքին Ուռհայ ի լուսաւորել զնոսա գլուխք ԼԳ» բնագրի 24-րդ կանոնի մեջ վկայում է. «ԻԴ. Հարցումն. Զչորեքշաբթ եւ զուրբաթ որպէս արժան է պահել:

Պատասխանի. Արժան է քրիստոնէից զուրբաթ եւ զչորեքշաբթ պահել եւ աղաւթել, զի աւուրք չարչարանաց Տեառն մերոյ են, տրտում արտասուաւք յիշելով զնորա խոնարհութիւնն, եւ գոհանալով զնմանէ, որ եկն եւ փրկեաց զմեզ իւրովք չարչարանաւքն պահել մինչև ցինն ժամն»<sup>4</sup>:

Ըստ «Կանոնք սուրբ ժողովոյն որ ժողովեցան ի Թէոդոսուպալիս որ այժմ կոչի Կարնոյ քաղաք գլուխ(ք) Թ.» Բնագրի, որը վերագրվում է 7-րդ դարին սակայն 11-րդ դարի խմբագրութեան է, 7-րդ կանոնի տակ արձանագրել է. «է. Բայց եթէ ուրբաթի կամ չորեքշաբթի հանդիպի՝ (խոսքը՝ վասն աւրինաւոր տաւնի Քառասներորդաց տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի, գոր ի Փետրուարի ԺԴ-ն հրամայեցաւ կատարել տե՛ս 6-րդ կանոնի մեջ), ըստ վերնագրոյն պատուիրանից պահաւք տաւնեսցեն եւ մի լուծմամբ կերակրոց կամ ըմպելեաց. եւ եթէ ոք ի հաւատացելոց անցցէ ըստ կանոնեաց սահմանադրութիւնդ՝ անհիշեալ լիցի, վասն զի այսպէս պատուիրեցաւ ընդ ամենայն աշխարհ ի սրբոց առաքելոցն եւ աւանդեցաւ մեզ եւ մեք այնմ հետեւեալ եմք, զոր նոքա քարոզեցին եւ հաստատեցին: Թէպէտ եւ զատեալք եւ մեկնեալք ի փշաբեր անապատ գնացին ոմանք եւ եղեն լուցկիք հրոյ եւ կերակուր որդանցն, այլ մեզ քաւ լիցի խոտորել ի սրբոց քարոզութենէն, ապա եթէ գտցի զայս արարեալ՝ աւտար եղիցի ի մէնջ եւ ի սրբոց աւրհուութենէ հեռի եղիցի»<sup>5</sup>:

Բերենք ուրբաթ օրվա մասին լրացուցիչ տվյալներ և նրա մեկնությունը:

«Կանոնք Առաքելականք»-ի 4-րդ կանոնում սահմանվել է. «Դ. Կարգեցին առաքելաւքն եւ եղին հատատութեամբ, թէ ուրբաթ եղիցի ի պահս ի սուգ եւ տրտմութիւն վասն զի գոր ինչ ասացաւն յաւուրն չորեքշաբթու զվասն չարչարանաց Փրկչին մերոյ՝ յուրբաթուն կատարեցաւ. յորժամ չարժեցան արարածք ամենայն եւ խաւարեցան լուսաւորք ի յերկինս: Պահեալ լիցի

1 Տե՛ս Կանոնագիրք Հայոց, հ. Ա, էջ 498:

2 Տե՛ս Կանոնագիրք Հայոց, հ. Ա, էջ 96:

3 Տե՛ս Կանոնագիրք Հայոց, հ. Ա, էջ 58:

4 Տե՛ս Կանոնագիրք Հայոց, հ. Բ, էջ 36:

5 Տե՛ս Կանոնագիրք Հայոց, հ. Բ, էջ 253-254:

մինչև ցիններորդ ժամն»<sup>1</sup>:

Ներկայացնենք կիրակի և Շաբաթ պահքին արգելող կանոնները:

«Կանոնք Գանգրայ գլուխ ԻԴ» բնագրի 18-րդ կանոնում կարդում ենք. «ԺԸ. Եթէ ոք իբրեւ ի կարծիս պահոց արհամարհիցէ զաւր կիրակէի եւ ի պահոց թիւ արկ կամ ի գործ, որպէս զայլ աւուրս, ոչ գտցէ հանգիստ յարքայութեանն Աստուծոյ եւ մեծ ժողովն նզովէ եւ մերժէ»<sup>2</sup>:

«Կանոնք Լաւորդիկեայ» բնագրի 29-րդ կանոնում գրված է. «ԻԹ. Չէ արժան քրիստոնէից զհրէից վարս ունել եւ բանդագուշել եւ դատարկացուցանել զաւր շաբաթուն. այլ գործել արժան է, բայց զաւր կիրակէին պատուել արժան է, եւ հանգչել արժան, որպէս քրիստոնեայք, ապա եթէ գտցի ոք հրէաբար՝ նզովեալ լիցի»<sup>3</sup>:

«Կանոնք երկրորդ առաքելականք»-ի 59-րդ կանոնում արձանագրվել է. «ՄԹ. Եթէ ոք ժառանգաւոր գտցի զաւր կիրակէին կամ զշաբաթու պահելով՝ որոշեսցի»<sup>4</sup>:

«Բարսղի գիր կանոնական վասն պէսպէս եւ Բիւրապատիկ ախտից գլուխք ՄՀԲ» բնագրի 31-րդ կանոնում ասվում է. «ԼԱ. զշաբաթ եւ զկիրակէ եւ զՊենտակոստէ մի ոք իշխեսցէ ընդ պահաւք արկանել, բայց զայսահարսն»<sup>5</sup>: Իսկ նույն բնագրի 80-րդ կանոնում գրված է. «Զ. Որ աւր կիրակէի կամ զՊենտակոստէ զպահաւք արկանէ քան զկարգեալսն առաքելոցն՝ նզովեալ եղիցի»<sup>6</sup>:

Գրիգոր Լուսավորչին վերագրվող 28-րդ կանոնում վկայված է. «ԻԸ. Պարտ է Քրիստոնէից պատուել զաւր կիրակէի, աղաւթել եւ հանագչել ի նմա, ապա եթէ ոք պահեսցէ հրէաբար՝ նզովեսցի ի Քրիստոսէ»<sup>7</sup>:

Հովհան Մանդակունու 1-ին և 2-րդ կանոններում գտնում ենք հետևյալ տեղեկությունները.

1. «Ա. Վասն սրբոյ պասեքին պահոցն ի կանոնս ի շաբաթու ոչ հրամայի պահել եւ յայտ անտի է, զի շաբաթ աւր՝ երիկունն ապաշխարութեան, չքարոզի ի մի դէմսն ըստ Մովսէսի աւրինադրին հրամանի պարտ իմք պատուել եւ ի միւս, զի կարապետ է մեծի թագաւորին յառաջընթաց, ընդ առաւելանէ ճրագաւք եւ մոմեղինաւք կիրակէին»:

2. «Բ. Այլ վասն կիրակէի պահելոց, ոչ կանոնք հրամայեն եւ ոչ վարդապետք, այլ նզովեն եւ անէծս ի վերայ դնեն. զնոյն եւ ՅԺԸ եպիսկոպոսքն ի Նիկիայ՝ ի սուրբ ժողովն, նզովս կարգեցին եւ կնքեցին»<sup>8</sup>:

Կանոնք Վաչագանա բնագրի 13-րդ կանոնում ասվում է. «ԺԳ. Որ մեռելոցի ուտէ եւ որ ի Քառասներորդսն միս ուտէ եւ որ ի կիրակէի գործ ինչ գործէ եւ յեկեղեցի չերթաց՝ երեցն պատուհաս արասցէ ժողովրդեամբ հանդերձ»<sup>9</sup>:

«Կանոնք Տեառն Յովհաննիսի իմաստասիրի Հայոց կաթողիկոսի գլուխ ԼԲ» բնագրի 6-րդ և 7-րդ կանոններում ասվում է.

1 Տե՛ս Կանոնագիրք Հայոց, հ. Ա, էջ 30:

2 Տե՛ս Կանոնագիրք Հայոց, հ. Ա, էջ 197:

3 Տե՛ս Կանոնագիրք Հայոց, հ. Ա, էջ 235:

4 Տե՛ս Կանոնագիրք Հայոց, հ. Ա, էջ 91:

5 Տե՛ս Կանոնագիրք Հայոց, հ. Բ, էջ 108:

6 Աճ, էջ 120:

7 Տե՛ս Կանոնագիրք Հայոց, հ. Ա, էջ 249:

8 Տե՛ս Կանոնագիրք Հայոց, հ. Ա, էջ 492-497::

9 Տե՛ս Կանոնագիրք Հայոց, հ. Բ, էջ 96:



1. «Զ Արժան է ի սուրբ քառասներորդս պահոցն՝ յաւուր շաբաթու եւ կիրակէի պատարագ մատուցանել ահիւ եւ երկիրդիւ, ըստ սահմանելոյ սրբոց հարցն յամենայն ժողովուրդս իւրեանց: Իսկ եթէ ոք հակառակեալ ընդդիմասցէ մերում հրամանիս կամ բանիւ կամ գործով, թէ ուխտաւոր է լուծցի, թէ աշխարհական՝ որոշեսցի»:

2. «Է. Այլ վասն պահելոյ եւ լուծանելոյ զշաբաթ եւ զկիրակէ ի սուրբ քառասներորդ պահոցն, այս իւրաքանչիւրի կամս թողեալ լիցի. միայն գոհանալով զԱստուծոյ՝ առանց խղճի եւ հակառակութեան եւ առանց բամբասելոյ զընկերն, զոր կամեսցի՝ եւ արասցէ հանդերձ պարկեշտութեամբ երկոքին ընդունելի են Աստուծոյ եւ յաւանդութենէ եկեղեցւոյ Քրիստոսի»<sup>1</sup>:

Ի դեպ Կանոնք Նիկիականի 20-րդ հոդվածում գրված է. «Ի. Զի են ոմանք որ ի կիրակէի ծունր դնեն կամ յաւուրսն մինչև զՊենտեկոստէն, կամ եղեւ՝ զի ամենապէս յամենայն իշխանութեան միաբան արժան է պահել զկարգ զոր ինչ եղ սուրբ ժողովն, զի յուրն կալով զաղաթսն մատուցեն Տեառն ամենայն երկիր»<sup>2</sup>:

Իսկ Կանոնք երկրորդ Նիկիականքի 20-րդ, 68-րդ և 104-րդ հոդվածներում արձանագրվել է.

1. «Ի. Ոչ է պարտ կիրակէի յաղաթսն կալ եւ ծունր կրել, եւ ոչ յաւուրս Պենտեկոստէիցն»<sup>3</sup>:

2. «ԿԸ. Եթէ ոք յաղագս ճգնութեան պահիցէ յաւուր կիրակէի եւ աւուրս Պենտեկոստէից՝ նզովեալ եղիցի»<sup>4</sup>:

3. «ԸԴ. Ոչ է պարտ ի քառասներորդս պատարագ մատուցանել, թէպէտ եւ մարտիրոսաց յիշատակ իցեն, բայց ի շաբաթ եւ ի կիրակէէ»<sup>5</sup>:

Չորեքշաբաթի և ուրբաթ իբրև պահքի օրեր գործադրության մեջ ենք տեսնում «Կանոնք ընթերցուածոց»-ների բոլոր խմբագրությունների մեջ սկսած 5-րդ դարի սկզբներից: Թեև վաղ շրջանի տոնական տարվա կտրվածքում չորեքշաբթի և ուրբաթ օրերը համապատասխան ընթերցուածներով ապահովված են միայն Բուս Բարեկենդանից մինչև Զատիկից հետո եկող կիրակի օրերն, որոնք հետագայում աստիճանաբար ընդլայնվում են և տարվա յուրաքանչյուր չորեքշաբթի և ուրբաթ ստանում է իր կանոնը: Հարկ է նշել, որ չորեքշաբթի և ուրբաթ օրերին ընկել են տոնական օրեր հատկապես 5-8-րդ դարերում, երբ տոնական տարին հիմնականում անշարժ էր, այսինքն սրբերի տոները կատարվում էին ամսաթվերով: Այս դեպքում տոնը կատարել են, բայց պահել են նաև պահքը: Այդ երևում է թեկուզ Կարնո ժողովի կանոնից, որը վերաբերվում է Տեառնընդառաջի տոնին: Այդպես էր նաև հետագայում, երբ տոնացույցերի տարեկան շարքում անշարժ տոներ էին տնվում:

\*\*\*

Հայոց Տոնացույցում Առաջավորի պահքը, ինչպես տեսանք, սահմանեց Հովհան Մանդակունի կաթողիկոսը, երբ խմբագրեց «Կանոնք ընթերցուածոց»-ը 480-ական թվականների սկզբներին, ըստ երևույթին հիմնվելով Գրիգորիսի Վարքի մեջ տեղ գտած վկայությունների վրա, որոնք վկայակոչվում են հետագա հեղինակների կողմից: «Կանոնք ընթերցուած»-ի խմբագրությունների մեջ պահպանվել են այդ կանոնի մնացուկները միայն: Այսպես, 5479

1 Տե՛ս Կանոնագիրք Հայոց, Բ. Ա, էջ 518-519:

2 Տե՛ս Կանոնագիրք Հայոց, Բ. Ա, էջ 131:

3 Տե՛ս Կանոնագիրք Հայոց, Բ. Բ, էջ 76:

4 Տե՛ս Կանոնագիրք Հայոց, Բ. Բ, էջ 84:

5 Տե՛ս Կանոնագիրք Հայոց, Բ. Բ, էջ 88:

թվահամարի գրչագրում, որը Հովհան Մանդակունու Կանոնքի հետագա ընդօրինակություն է, պահպանվել է հետևյալ հատվածում. «ՅԱռաջավորի պահոցն շաբաթ աւր. յիշատակ է սրբոյն Սարգսի զաւրավարի և այս կանոն կատարի...»<sup>1</sup>: Առաջավորի պահքի կանոնները ամբողջական գտնում ենք տոնացույցերի խմբագրությունների մեջ, որոնց մասին կիսոսենք հետագա շարադրանքում: Իսկ այժմ բերենք վաղ շրջանի որոշ տեղեկություններ:

«Կանոնք Ներսէսի կաթողիկոսի եւ Ներշապհոյ Մամիկոնէից եպիսկոպոսի գլուխ[ք] Լէ» բնագրի 29-րդ հոդվածում կարդում ենք. «Իթ ի սուրբ քառասներորդացն պահսն եւ կամ յառաջաւորս նորին մի ոք իշխանեսցէ լուծանել ըստ սրբոյ կանոնի, եթէ լուծցէ ոք ի քահանայից կամ յաշխարհականաց զաւուրցն կերակուր պատճառաւ հիւրաց կամ գործակալաց, յեկեղեցի մի իշխեսցէ մտանել՝ մինչև տուժեսցի աղքատաց ապաշխարութեամբ»<sup>2</sup>: Նույն հեղինակների «... - թէ որպէս սահմանեցաւ կարգ ուխտի և որոշման վանաց» բնագրի մեջ, որը ինչպես տեսանք սխալմամբ վերագրվել է Սահակ կաթողիկոսին, 40-րդ կանոնի տակ գրված է. «... եւ Առաջաւոր պահոցն կատարումն...»<sup>3</sup>:

604-607 թթ. գրված մի նամակում, որը Մովսես եպիսկոպոսը հղել է Վրթանես քերթողին, արձանագրել է. «... և ոչ ապականել զխորհուրդ եւթն շաբաթոցն պահոց, այլ ընուլ զսուրբ քառասներորդսն, հնգաւրեայ յառաջաւոր պահովքն»<sup>4</sup>:

Գրիգոր Արշարունու «Մեկնութիւն ընթերցուածոց»-ում պահպանվել են. «յառաջաւոր պահոց կիրակէին...» և «իսկ յառաջաւոր պահոցն երկուշաբաթոյն...» արտահայտություններ<sup>5</sup>:

Առաջավորի պահքի մասին ուշագրավ տեղեկություն է տալիս Ստեփանոս Սյունեաց եպիսկոպոսը Անտիոքի եպիսկոպոսին ուղղված թղթում: Բերենք այդ արժեքավոր վկայությունը, այն է՝ «Այլ վասն Առաջաւորի պահոցն զմեզ զի՝ հայհոյէք: Առէք զգիրս մերոյ Լուսաւորչին, ընթերցէք. զի նա է մեր լուսաւորութեան աւուրք առաջինք, զնա եմք պահել ծոմաջան և անսուղ մինչև յանանունս անկամ. զի յորժամ ել նա ի Վիրապէն, ետես զաշխարհս մեր զամենայն դիւամոլեալ և ամենեքեան անկեալ առ ոտս նորա լացին, մինչև ինքն ընդ նոսին յարտասուս ելեալ, և զհինգ աւրն անսուղ պահեաց ինքն հանդերձ թագաւորաւն և ամենեքումք, և ապա սկսաւ ի վարդապետութիւն աւուրս վաթսուն, և դեռ չէին մկրտեալք, և իբրև մկրտեցան ամենեքեան ի միասին, վասն յիշատակի մերոյ լուսաւորութեանն կրկին անգամ պահեցաք և պահեմք մինչև ցայժմ»<sup>6</sup>:

Բերենք Ասողիկից մի հատված. «Եւ ի նմին աստուածահրաշ յայտնութեամբ ելեալ ի Վիրապէն Սուրբ Գրիգոր՝ լուսաւոր վարդապետութեամբ սկիզբն առնէ և բժշկութեան հարուածոցն, որ հինգ օր անսուղ մնացեալ ամենայն բազմութեանն, ունեն զնելով վարդապետութեան սրբոյն Գրիգորի, որ են Առաջաւոր Պահք, ամի ամի պահեալք մինչև ցայժմ, թող զայլ ևս Կ օր վարդապետութեան նորա»<sup>7</sup>:

Հայոց տոնացույցերի և ճաշոցների խմբագրությունների մեջ արձանագրվել են Առաջավորի Բարեկենդանի կիրակիի, նրանից հետո եկող պահքի օրերի՝ երկուշաբթիից ուրբաթ, ինչպես և շաբաթ օրը կատարվող սուրբ Սարգսի հիշատակի տոնը: Այդ ամբողջ շաբաթը. ինչպես և հետագա շաբաթները շարժական էին և Պահքի ամսաթվերը կախված էին Զատիկի օրվանից: Ա-

1 Ձեռ. № 5479, էջ 22բ:

2 Տե՛ս Կանոնագիրք Հայոց, Բ. Ա, էջ 488:

3 Տե՛ս Կանոնագիրք Հայոց, Բ. Ա, էջ 398:

4 Տե՛ս Գիրք թղթոց, էջ 124-125:

5 Տե՛ս Մեկնութիւն ընթերցուածոց, էջ 110-112:

6 Տե՛ս Գիրք թղթոց, էջ 333:

7 Տե՛ս Ստեփանոսի Տարօնցոյ Ասողկան Պատմութիւն տիեզերական, էջ 61:

ուղափոխի կիրակին ընկնում էր Զատիկի կիրակիից ետ հաշված 11-րդ կիրակին, այսինքն Զատիկից ետ հաշված 71 օր, իսկ 70-66 օրերը ընկնում էին պահքի օրերը, իսկ 65-ը՝ Սարգսի հիշատակի օրը: Առաջավորի Բարեկենդանը և նրանից հետո եկող շաբաթը Զատիկի օրերը Մարտի 22 - Ապրիլ 25-ին ընկնելու պատճառով եղել են Հունվար 11-17-ի և Փետրվար 14-20-ի սահմաններում նայած տարի: Այս հաշվումները հասարակ տարիների համար է, իսկ նահանջ տարիներին դրանք ընկնում են Հունվար 12-18-ից մինչև Փետրվար 15-21-ի սահմաններում նայած տարի:

Հնագույն տոնացույցերի խմբագրությունների մեջ Առաջավորի կիրակիի և նրանից հետո եկող պահքի շաբաթի համար փաստել են հետևյալ կարգը.

Առաջավորի կիրակի

Բշ (երկուշաբաթ). Պահք Առաջավորին

Գշ (երեքշաբաթ). Պահք Առաջավորին

Դշ (Չորեքշաբաթ). Պահք Առաջավորին

Եշ (Հինգշաբաթ). Պահք Առաջավորին

Ուրբաթ. (Պահք Առաջավորին), Նինուեացուցն

Շաբաթ. Սրբոյն Սարգսի զաւրավարին որդույ նորա Մարտիրոսի<sup>1</sup>:

Ճիշտ է ուրբաթ օրվա համար, իբրև պահքի օր չկա որևէ հիշատակություն, սակայն վերոհիշյալ բնագրերում վկայված Հնգօրյա պահքի տեղեկությունը, ինչպես և տոնի հետ միասին պահք պահելը, որը նշել է Կարնո ժողովի կանոնը ցույց է տալիս, որ Առաջավորի պահքի ուրբաթ օրը եղել է թե պահքի օր, թե նշվել է «Նինուեացուց» հիշատակի օրը:

Վերոհիշյալ կարգի վերականգնումը հաստատվում է նաև հետագայում ընդօրինակված տոնացույցերի և ճաշոցների տեղեկություններով: Բերենք դրանք:

752 թվահամարի գրչագրի համաձայն՝ «Առաջավորին Բարեկենդանին կիրակի... և ապա պահք և տաւն ոչ լինի», ուրբաթ օրը սահմանել է «Յունանու մարգարէին որ առ Նինուէ», իսկ շաբաթ օրը՝ Սարգսի զորավարի<sup>2</sup>:

2092 թվահամարի Տոնացույցի տվյալներով «Պահք Առաջավորին, որ եւ սրբոյն Սարգսի անուանեցօ (= աւ), որից հետո ուրբաթ կանոնել է «Նինուէացոցն եւ Յունանու մարգարէին», իսկ շաբաթ՝ Սարգսի զորավարին<sup>3</sup>:

5667, 9838 և 4164 թվահամարի տոնացույցերի խմբագրությունների համաձայն «Առաջավորի Բարեկենդանին կիրակին... եւ ապա պահք Առաջավորին և տոն ոչ լինի...», որից հետո ուրբաթ՝ Յունանու մարգարէին, իսկ շաբաթ՝ Սարգսի զորավարի<sup>4</sup>:

7203 թվահամարի գրչագրի տվյալներով՝ «իսկ Առաջավորին Բարեկենդանին... եւ յայս պահքս տաւն ոչ լինի այլ ապաշխարութեան հարցերոյն կարգն», որից հետո ուրբաթ «Յովանու մարգարէին որ սա Նինուեացիսն», իսկ շաբաթ օրը Սարգսի զորավորի և նրա որդու Մարտիրոսի և «չորեք Ժ-ան զինվորացն»<sup>5</sup>:

7741 թվահամարի Ճաշոցի խմբագրության մեջ կարդում ենք. «Զկնի Առաջավորին կիրա-

կէի աւուրն...» կամ «Զկնի Առաջավորի պահոցն. Սրբոյն Սարգսի...»<sup>1</sup>:

Ուշագրավ է 759 թվահամարի Տոնացույցի բացատրությունը, այն է՝ «Եւ եթէ յԱռաջավորին պահքն մտանէ յութ աւրէիցն դու զտաւնն արա և մի ուտեր, զի կրկին պահք է»<sup>2</sup>: - Հիշյալ մեկնությունը առկա է նաև այլ բնագրերում: Պարզ է դառնում, որ Առաջավորի պահքը, երբ լինում է Հունվար 11-13-ի օրերին, որոնք մտնում են Քրիստոսի Մենդեան և Յայտնութեան 8 օրերի մեջ ոչ միայն տոն է կատարվում, այլ Առաջավորի պահքը, այսինքն տոնը չի հանում պահքի օրերը, որը մեր կարծիքով վերաբերվում է նաև Նինուեացոց հիշատակի օրվանը:

14-րդ դարի սկզբներից «Առաջավորին կիրակին» վերանվանվել է «Առաջավորի Բարեկենդանի կիրակին», իսկ «Նինուեացուցն»՝ «Յունանու մարգարէին, որ առ Նինուէ», «Յունանու Մարգարէին», «Նինուէացոցն եւ Յունանու մարգարէին», «Յովանու մարգարէին, որ առ Նինուեացիսն» և «Յովանու մարգարէին, որ առ Նինուէ» ձևերով, իսկ շաբաթ օրվա կանոնին պատահում է ավելացրած «և չորեք Ժան զինուորացն»<sup>3</sup>:

Սիմեոն Երևանցու Տոնացույցում Առաջավորի Պահքի մասին գրել է. «Եւ ապա պահք առաջավորին և տօնք ոչ գոն ի չորս աւուրսն այս պահոց», այնուհետև՝ «ուրբաթ օրն՝ յիշատակ է Յօնանու մարգարէի», որից հետո շաբաթ՝ Սարգսի զորավորի և այլոցն: Ստացվում է, որ պահքը տեւել է չորս օր, թեև պահքը և տոնը միասին էին կատարում: Կարծում ենք, որ Նինուեացոց հիշատակի օրը նախապես տոնել են շաբաթ օրը: Հովհան Օձնեցին, երբ սահմանեց Սարգսի զորավորի և նրա որդու Մարտիրոսի հիշատակի օրը շաբաթ, Նինուեացոցը տեղափոխեց ուրբաթ և պահպանեց պահքի 5-րդ օրը:

Պատահական չէ, որ Առաջավորի պահքը ունեցել է ևս երկու անուն, այն է՝ «Նինուէացոցն ի հնումն եւ սրբոյն Սարգսի ի նորումս», ինչպես վկայել է Սամուել Կամրջածորեցին: Այժմ բերենք Տօնապատճառների մեկնություններից մի քանիսը կապված Առաջավորի Պահքի և այդ շաբաթվա տոների մասին:

1007 թվահամարի գրչագրի մեջ հավանաբար Սամուել Կամրջածորեցու «Տաւնապատճառ»-ում «Պատճառ Առաջավորին» հատվածում գտնում ենք հետևյալ մեկնությունները.

1 «... եւ այլ աւրինակ: Սուրբ Գրիգոր յօրժամ ել ի Վիրապէն Տրդատա պահք եղ Ե աւր, վասն Ե զգայարանացն, զի սրբեսցին եւ էր ժամ ամարային»<sup>4</sup>:

2. «... մնաց նոցա անիծից պանրուտեքն, եւ Նիւէացուցն ի հնումն եւ սրբոյն Սարգսի ի նորումս»<sup>5</sup>:

3. «Նոյնպէս և ոմանք Սուրբ Սարգսի պահս ասեն, ըստ այսմ իմացիս զաւանդ մերոյ ազգիս»<sup>6</sup>:

4. «... իսկ յետ բազում ժամանակաց սուրբ Սարգիս (բնագրում Գրիգոր) մարտիրոսական նահատակութեամբն ի կատարման պահոց Առաջավորացն յաւր շաբաթու ի նմին ամսեանն նահատակեցաւ»<sup>7</sup>:

1 Տե՛ս Ձեռ. № 7741, էջ 49ա-բ:

2 Տե՛ս Ձեռ. № 759, էջ 178ա:

3 Տե՛ս Ձեռ. №№ 752, էջ 157ա, 767, էջ 128ա-բ, 2092, էջ 231ա, 5667, էջ 101բ, 7203, էջ 21բ-22ա, 9833, էջ 155ա, 4164, էջ 137ա-բ, 5398, էջ 112ա, 5419, էջ 174բ և այլն:

4 Տե՛ս Ձեռ. № 1007, էջ 104բ:

5 Տե՛ս Ձեռ. № 1007, էջ 101բ:

6 Տե՛ս Ձեռ. № 1007, էջ 108ա:

7 Տե՛ս Ձեռ. № 1007, էջ 108ա:

1 Տե՛ս Ձեռ. № 759, էջ 179ա, ինչպես և 179 թվահամարի գրչագիրը:

2 Տե՛ս Ձեռ. № 752, էջ 153ա:

3 Տե՛ս Ձեռ. № 2092, էջ 231ա:

4 Տե՛ս Ձեռ. №№ 5667, էջ 101բ, 9838, էջ 155ա, 4164, էջ 136ա-137ա:

5 Տե՛ս Ձեռ. № 7203, էջ 21բ-22ա:

5. «Իսկ յայս առուրս եղեւ վկայութիւն սրբոյն Սարգսի յԱրտաշատ քաղաքի, որ այժմ կոչի Դւին եւ մեք տաւնեմք զյիշատակ նորա ի նմին առուր շաբաթ եւ պահս Աստուծոյ պահեմք եւ ոչ նորա...»<sup>1</sup>:

3795 թվահամարի գրչագրում, որը Սամուել Կամրջաձորեցու Տօնապատճառի մի այլ տարբերակ է, «Պատճառ Առաջաւորաց Պահոց» ենթավերնագրի տակ ունի. «... Իսկ յետ բազում ժամանակաց Սուրբ Սարգիս մարտիրոսական նահատակութեամբ ի կատարման պահոցն Առաջաւորաց յառուր շաբաթու, ի նմին ամսեան նահատակեցաւ եւ հայոց թագաւոր ոչ գոյր, եւ ի բռնակալութիւն պարսից թագաւոր էր (շաղկերտ ամբարիշտ, եւ Յունաց Թեոդոս փոքր: Իսկ յայս առուրս եղև վկայութիւն սրբոյն Սարգսի յԱրտաշատ քաղաքի, որ այժմ կոչի Դվին եւ մեք տաւնեմք զ(յ)իշատակ նոսա ի նմին առուր շաբաթու եւ զպահսն Աստուծոյ ասեմք եւ ոչ նորա... եւ ոմանք սուրբ Սարգսի պահս ասեն, ըստ այսմ իմասցի զաւանդ մերո(յ) ազգիս...»<sup>2</sup>:

«Վասն երեխայից ընթերց(ու)ածոցն մեկնութենէ» ենթավերնագրի տակ կարդում ենք. «Եւ նա (Կյուրեղը - Ռ. Վ.) ընգալաւ զնոսա եւ երեխանցոյց եւ կարգեաց պահս նոցա Գ շաբաթ յառաջ քանզ նասներորդն եւ մինչ ի ճրագալոյցն, եւ ապա մկրտեր եւ հաղորդեցուցաներ փրկարար խորհուրդն... ապա մարդամիրեաց եւ զԲ շաբաթն Բարեկենդանացոյց... Սկիզբն պահոց երեխայից առաջին շաբաթն էր, որ Առաջաւորք ասի, եւ զկնի Բ շաբաթն Բարեկենդան: Չայս հաստատուն գիտեմք յամենայն վարդապետաց որ ի մեր ժամանակս հասին...»<sup>3</sup>:

Վերոհիշյալ միտքը փոխանցվել է 1888 թվահամարի Տօնապատճառին, որի «Պատճառ պահոցն առաջաւորութեան» ենթավերնագրի տակ գրված է. «... և բազում անգամ առաջի սրբոյ հայրապետին (Կյուրեղ Երուսաղեմցուն - Ռ. Վ.) եւ խնդրեին զմկրտութիւն. ընկալաւ եւ երեխայացոյց զնոսայ, եւ կարգեաց նոցայ պահս երեք շաբաթ՝ յառաջ քան զՔառասներորդացն պահս. մինչ ի ճրագալոյցն անդ մկրտեր եւ հաղորդեցուցաներ ի փրկական խորհուրդն: Իսկ ազգակիցքն իւրեանց եւ այլ չարայխոսքն ասացին, եթէ ծանր է կարգ քրիստոնեից, զամենայն առուրք մեր ի պահեմք չկարեմք տանել այնպիսի կարգ: Նոքա պատմեցին Կիրղի, ապա մարդայտրեաց եւ գերկոյ շաբաթն Բարեկենդանացոյց: Ապա յսկզբան պահոցն պատուեր ետ նոցայ լուսացարուք եւ յաղագս այսորիկ վերնայգիր ընթերցւածոցն ասէ. Ընթերցուածք վարդապետութեան ի գիր անկելոցն եւ հանդերձելոց կնիք առնուլ: Ի գիր անկեալ երեխայք էին, որ հանդերձեալ էին մկրտել ի ճրագալոցին հրեայքն: ... Այսպէս կարգով ամրացոյց ԺԸ ընթերցուած, յամաւթ արար զչարայխաւսքն: Սկիզբն պահոց երայխայիցն առաջին շաբաթն Առաջաւորք անուանեցան եւ զկնի երկու շաբաթն Բարեկենդանութիւնք: Չայս հաստատուն գիտեմք յամենայն վարդապետաց, որ յիմ ժամանակս հասին զայս ասացին: Այլ եւ այս ևս պատճառ կարեոր է. սկիզբն ի Յակոբայ Առաջաւորացս, ապա Կիրեղ հաստատեաց: Սկիզբն Բաղարջակերացն, որ էր հին Պասեք, զոր Քրիստոս ի վերնայտունն կատարեաց: Լրումն լուսնին յԱպրիլի ԺԴ էր (պետք է ուղարկել՝ Նիսանի ԺԴ կամ Ապրիլի ի (Դ - Ռ. Վ.), որ է զլուիս Ժ և Թ երեկին եւ երկրորդն ի Մարտի ի չորքն (= 24) եւ Երրորդն՝ յերրորդ ամին չարչարանացն Քրիստոսի, յԱպրիլի ԺԲ (12), որ (է) երեքտասան լուսնին տարին եւ գերեքտասան ամն կարծեցին (հաշվել է Մարտի 25-ի լրումից - Ռ. Վ.), զի գեին կրթեալ, որ էին ի հաւատս եւ ի գիտութիւն: Բայց Եսայ խնամութիւն վարկանիմ յԱստուծոյ, եւ երեք շաբաթաւք յառաջ սկսանիմ զպահս Քառասներորդին, որ ոչ լիներ լրումն Պասեքին, զկնի երկնայմիջակին հասարակաւորութեան, այլ արտաքս առաջի աւրինակաց, որ յարարչութեան եւ որ յեզիպտոսի, եւ որ ի հին Պասեքին, եւ որ ի նոր Պասեքի ճշմարտութեանս Քրիստոսի:

Ապա յայնժամ զկնի միոյ շաբաթոյ պահելոյ յայտնեաց Աստուած Յակոբայ զխոտորումն ժամանակի պահոցն եւ ի տերունական լրմանէն եւ Յակոբ զայն շաբաթն, որ պահեալ էին առաջաւորք հաստատեաց քառասներորդին, եւ յայսմաէ Կիրեղ երեխայիցն կարգեաց: Այսպէս հաստատեցին Գեորգ եւ Պետրոս, եւ Անանէ եւ Բարսեղ. հայոց վարդապետաքն եւ գիտնաւորքն: Այլ կարճագոյն պատճառ ասացից հինգ առուր յառաջ քան զլինելութիւն մարդոյն...

Հինգ աւր ելանել սրբոյն Գրիգորի ի Վիրապէն պահս աւանդեաց մերում աշխարհիս: Ոմանք ի սկիզբն Կ (60) առուր առ նայ զային յորժամ արձակեաց զխորուածեալսն, եւ զկնի հինգ առուրն գտեսիլն ետես: Գրիգորիս ի մեկնութեան ընթերցուածիս տարայկուսի է ինձ. միաւորէ զԱռաջաւորսն ընդ Քառասներկին եւ ութերեակաւքն կատարեալ զՔառասներորդն եւ ի վեցերորդ ուրբաթին գրեալ է. կատարեցաւ պահք Քառասներորդացն, եւ Գրիգորիս Առաջաւորաւքն յուր Ե. երբե(ա)կաւքն ասէ ի բաց բառնալով զշաբաթ եւ զկիրակէ ի թուոց Քառասներորդացն, գեղեցիկ նմանեցուցեալ զառանց ընթերցուածայգիր զԱռաջաւորսն նահապետացն: Այլ կարծին հեռի գոլ զաւրինակն, բայց գեղեցիկ է մեկնութիւն նորաց ընթերցուածայգրին Յակոբայ եւ զայն ի ներքս բերէ եւ չաւտարացուցանէ զխորհուրդն»<sup>1</sup>:

Նույն գրչագրի «Այլ խորհուրդ» ենթավերնագրի տակ կարդում ենք. «... յերիս առուրս շաբաթն ի չորեքշաբաթն եւ յուրբաթն, որ բնական պահեքն քրիստոնեից, որով լինի առուրք Ե, ըստ հինգ զգալութեանցն, որով մարդիկ զխաթոց մեղաց ընդ ունին նովին չափ առուրք սրբին եւ ազատին եւ վասն այսորիկ ասի Առաջաւորք, զի յառաջ այգոյն աւրինակեցաւ եւ Առաջաւոր է տերունական պահոցն յաղագս Բարեկենդանա մերձեալ է արքայութիւն որ սիրին զպահսն զԱստուած սիրին: Առաջին աւր պահոցն կիրակէն է եւ վերջին աւր Չատիկը: Բարեկենդանն զփափակութիւն դրախտին աւրինակ է եւ է ի թիւ պահոցն զի սկիզբն պահոցն ի դրախտին աւանդեալ յամենայն պտղոցն ուտել: Այս Բարեկենդան է»<sup>2</sup>:

«Արդ Առաջաւորացն բազում պատճառք...» ենթավերնագրի տակ բերվում է.

1. «(Քաղկեդոնի ժողովում) ընդդեմ Առաջաւորացն գերկրորդ շաբաթն պանրոտոյ եղին...»<sup>3</sup>:

2. «Եւ դարձեալ այլ իմն աւրինակէ երանեալ սուրբն Գրիգոր յորժամ ել ի Վիրապէն Տրդատայ հինգ աւր պահք եղիր ըստ հինգ սգարանացն. զի սրբեցին եւ էր յամառային ժամանակն, իսկ Սեղեբստրոս Հռոմայ հայրապետն յորժամ զԿոստանդիանոս մկրտեաց նմա եղիր Ե աւր պահք եւ էր ձմեռնային ժամանակ... և դարձեալ Նինուեացիոցն խորհուրդն ի հնումն իսկ ի նորս սրբոյն Սարգսի»<sup>4</sup>:

1979 թվահամարի գրչագրում ևս «Յաղագս Առաջաւորի Պահոցն» ենթավերնագրի տակ կարդում ենք. «... Յետ ժամանակաց անցելոց Սուրբ Սարգիս ի գլուխ Առաջաւորաց պահոց նահատակի ի Շապհո Պարսից արքայէ. ի Յունւարի ԼԱ. Մարտիրոս անուն որդովն... Եւ մեք զպահքն ոչ նմա պահեմք կամ անւանեմք, այլ Առաջաւոր ըստ հասցելոց խորհրդոյս: Այլ որպէս Աղուհացիցն առաջին շաբաթուն շաբաթ օրն Թէոդորոսի տօնեմք եւ զշաբաթն բազումք նմա անւանեն, նոյնպէս և աստ. զպահքն Աստուծոյ պահեմք ի թողութիւն մեղաց մերոց և տօն Սարգսի տաւնեմք»<sup>5</sup>:

Այսպիսով Առաջավորի կիրակին և նրան հետևող հնգօրեա պահքը Տոնացուց մտցրեց

<sup>1</sup> Տե՛ս Ձեռ. № 1007, էջ 108ա:

<sup>2</sup> Տե՛ս Ձեռ. № 3795, էջ 78բ-79ա:

<sup>3</sup> Տե՛ս Ձեռ. № 3795, էջ 86բ:

<sup>1</sup> Տե՛ս Ձեռ. № 1888, էջ 168բ-170ա:

<sup>2</sup> Տե՛ս Ձեռ. № 1888, էջ 171ա:

<sup>3</sup> Տե՛ս Ձեռ. № 1888, էջ 235ա:

<sup>4</sup> Տե՛ս Ձեռ. № 1888, էջ 235ա-բ:

<sup>5</sup> Տե՛ս Ձեռ. № 1979, էջ 81բ:

Հովհան Մանդակունի կաթողիկոսը 480-ական թվահամարների սկզբներին, իսկ Հովհան Օձնեցին սահմանեց ուրբաթ օրը՝ Նինուեցացոյ հիշատակը, իսկ շաբաթ՝ Սարգսի զորավարի և նրա որդու՝ Մարտիրոսի հիշատակները: Այդ պահին անվանվել է Առաջավորի, Նինուեցացոց և Սարգսի: Այն մեկնել են և կապել վաղ շրջանում ապրող հեղինակների հետ, որովհետև այդ երկույթների նախատիպերը սկիզբ են առել ավելի վաղ քան կանոնվել է Տոնացույցում:

\*\*\*

5-րդ դարի 20-ական թվականների Հայոց առաջին գրավոր Տոնացույցում հիմնականում կանոնականացված ենք տեսնում Քառասնորդաց կամ Մեծ պահքի շրջանում կատարվող տոնածիսական կարգը, որը հետագայում ևս կրեց փոփոխություններ: Այդ կանոնականացված կարգը գալիս էր 4-րդ դարից: Բերենք այդ բնագրերի տեղեկությունները:

Կանոնք Առաքելականի 8-րդ կանոնում գրված է. «Ը. Կարգեցին առաքելաբն եւ եղին Հաստատութեամբ. թէ զիս աւր պահս կարգեսցեն յամենայն չարութենէ, ի մեղաց եւ ի կերարոյ, յառաջ քան զաւրն չարչարանաց Փրկչին մերոյ. եւ ապա արասցեն զաւրն չարչարանաց՝ պասեք Տեառն եւ տաւն յարութեան Փրկչին. ընթերցցին Գիրք մարգարեական եւ առաքելականք, որ պատմեսցեն զչարչարանացն Տեառն եւ զգուշակումն յարութեան Փրկչին: Քանզի եւ ինքն իսկ տէր մեր Քրիստոս, տէր տաւնից եւ տարեկանաց. պահեաց զիս տիւ եւ զիս գիշեր. նոյնպէս եւ Մովսէս ի Սինէական լեռինն ի ձեռն պահոցն իբրեւ սիրելի բարեկամ խաւսէր ընդ Աստուծոյ եւ մեծապես պատիւ գտեալ յերկնաւոր արքայէն՝ ահեղ երեսաւք արքունական աւրէնս եւ կանոնս բերելով իջանէր առ ժողովուրդն: Նոյնպէս եւ նախանձաւորն Հեղիաս ի ձեռն քառասնեաւորայ պահոցն մեծամեծ նշանս եւ զաւրութիւնս գործելով՝ ապա փառաւորեալ անհատակ յերկինս. եւ երեք մանկունքն ի ձեռն սրբութեան պահոցն ի մահուանէ թագաւորին ապրեցան, հրեշտակ Աստուծոյ էջ առ նոսա. զբոցն բորբոքեալ շիջուցին, զթագաւորն ի գիտութիւն ճշմարտութեան անին, եւ ինքեան բարի անուամբ կեցեալ արժանի եղեն արքայութեան Քրիստոսի»<sup>1</sup>:

Կանոնք Կղեմայ 64-րդ հոդվածում կարդում ենք. «ԿԴ. Եթէ եպիսկոպոս կամ երեց կամ սարկաւագ կամ գրակարգաց սաղմոսերգող զսուրբ քառասներորդսն ոչ պահեսցէ եւ զչորեքշաբաթի եւ զուրբաթ՝ լուծցի, բայց եթէ վասն հիւանդութեան մարմնոյ ինչ խափան լինիցի, իսկ եթէ ժողովրդական ոք իցէ՝ որոշեսցի»<sup>2</sup>:

Գանգրայի կանոնների 20-րդ և 21-րդ հոդվածները վերաբերվում են Քառասնորդաց պահքին, այն է՝

1. «Ի. Եթէ ոք ի մարդկանէ կատարեալ Հասակաւ, առողջ մարմնով, քրիստոնեայ անուն ի վերայ եւ զիս աւր զպահսն ի գլուխ ոչ տալնիցի, այնպիսին նզովեալ լիցի»:

2. «ԻԱ. Եթէ ոք զՔառասունսն պահեսցէ սուրբ եւ ի Չատկի հինգշաբաթի աւրն քան զՀաղորդել աւրինացն եւ բաժակի սրբելոյ, եթէ այլ ինչ աւելի Համարձակիցի ուտել՝ զպահս զոր պահեսցա ընդունայն են եւ ի մեծ ժողովոյն նզովեալ լինիցի»<sup>3</sup>:

Ի դեպ Գանգրայի կանոնների հունական բնագրում բացակայում են 20, 21, 23 և 24 կանոնները, որոնք անկասկած ավելացրել է թարգմանիչ-խմբագիրը՝ ամենայն հավանականութեամբ Գյուտ կաթողիկոսը 464-467 թթ.:

Գանգրայի կանոնների (24 կանոն) վերջաբանում հունարենից Հայերեն կատարած թարգմանիչ-խմբագիրը գրում է. «...Չայս կանոնս զոր եղաք եւ գրեցանք ի Գանգրա վասն Հաստա-

տութեան կարգի աւրինաց ուշ աւելի ինչ եւ ոչ աւտարտի ի մեջ բերեալ, այլ զոր սուրբ ժողովն կանոնեցին՝ զնոյն ի լրութիւն բովանդակեցաք...» (Կանոնագիրք Հայոց, հ. Ա, էջ 201): Այս հատվածում (չունի հունարեն բնագիրը) թարգմանիչ-խմբագիրն ասում է, որը երևում է նաև կանոնների քննությունից, Գանգրայի 20 կանոններն է թարգմանել-խմբագրել և լրացրել է չորս կանոններով, այն է՝ 20, 21, 23 և 24: Հիշյալ վերջաբանի այդ մասը Հովհան Օձնեցունը էլ, որովհետև Գանգրայի այդ կանոններից բառացի օգտվել են դեռևս 604-607 թթ.) այն է՝

Գանգրայի կանոնները

Ի. Եթէ ոք ի մարդկանէ կատարեալ հասակաւ, առողջ մարմնով, քրիստոնեայ անուն ի վերայ եւ զիս աւր պահսն ի գլուխ ոչ տալնիցի, այնպիսին նզովեալ լիցի:

ԻԱ. Եթէ ոք զՔառասունսն պահեսցէ սուրբ եւ ի Չատկի հինգշաբաթի աւրն քան զհաղորդել աւրինացն եւ բաժակի սրբելոյ, եթէ այլ ինչ աւելի համարձակիցի ուտել՝ զպահս զոր պահեսցա ընդունայն են և ի մեծ ժողովոյն նզովեալ լինիցի (Կանոնագիրք Հայոց, հ. Ա, էջ 198)

Մովսէս եպիսկոպոսի և Վրթանես Բերթողի թղթակցությունը

Եւ սահմանեցին այսպէս, եթէ ոք կատարեալ հասակաւ, առողջ մարմնով, քրիստոնեայ անունի վերայ և զքառասնարեայ պահս ի գլուխ ոչ տալնիցի, նզովեալ լիցի: Եւ եթէ յաւագ շաբաթուն ի հինգշաբաթին աւր քան զհաղորդել սուրբ խորհրդեան՝ բերան ոչ լուծցէ, նզովեալ լիցի և ամենայն պահք Քառասներորդացն ընդունայն լիցի (Գիրք թղթոց, էջ 124-125)

Պարզ է, որ Գանգրայի կանոնները թարգմանվել են 604-607 թթ. առաջ: Այստեղ ևս տեսնում ենք Նիկիայի ժողովի վավերագրերի և Անկյուրիայի կանոնների թարգմանիչ-խմբագրի ձեռքը, ուստի այդ թարգմանություն-խմբագրությունը վերագրում ենք Գյուտ կաթողիկոսին թվագրելով 464-467 թթ.:

Հաղորդելի կանոնների 46, 47, 48 և 49 հոդվածները վերաբերում են Քառասներորդաց պահքի այս կամ այն կարգին, այն է՝

1. «ԽԶ. Չի է պատշաճ ի Քառասներորդսն Հաց մատուցանել, բայց եթէ շաբաթու եւ կիրակէի»:

2. «ԽԷ. Չէ արժան ի Քառասներորդսն յաւագ շաբաթուն հինգշաբթի աւր բերան լուծանել, զի մի ամենայն պահք Քառասներորդացն անարգեսցին. այլ արժան է զամենայն Քառասներորդս պահել եւ լոկ աշտունհացիւ մխիթարել զանձինս»:

3. «ԽԸ. Չէ մարթ եւ պատշաճ ի Քառասներորդսն զմարտիրոսացն յիշատակ կատարել շաբաթու եւ կիրակէի»:

4. «ԽԹ. Չէ արժան ի Քառասներորդսն Հարսանիս կամ ի ձեռնդս ուրուք տաւնս առնել»<sup>1</sup>:

Երկրորդ Նիկիական կանոնների 99, 104 և 105 հոդվածները նույնպես վերաբերում են Քառասներորդաց պահքի տարբեր կարգերի մեկնաբանմանը:

1. «ՂԹ. Ոչ է պարտ յետ երկուց շաբաթուց Քառասն[եր]որդացն ընդունել զոք ի մկրտութիւն»:

2. «ՃԴ. Ոչ է պարտ ի Քառասներորդսն պատարագ մատուցանել, թէպէտ եւ մարտիրոսաց յիշատակ իցեն, բայց ի շաբաթէ եւ ի կիրակէէ»

3. «ՃԵ. Ոչ է պարտ զՔառասն[եր]որդս մեծի հինգշաբթին լուծանել, այլ չորակեր լինել»<sup>2</sup>:

<sup>1</sup> Տե՛ս Կանոնագիրք Հայոց, հ. Ա, էջ 239:

<sup>2</sup> Տե՛ս Կանոնագիրք Հայոց, հ. Բ, էջ 88-89:

<sup>1</sup> Տե՛ս Կանոնագիրք Հայոց, հ. Ա, էջ 33:  
<sup>2</sup> Տե՛ս Կանոնագիրք Հայոց, հ. Ա, էջ 92:  
<sup>3</sup> Տե՛ս Կանոնագիրք Հայոց, հ. Ա, էջ 198:

480-ական թվականների սկզբներին, ինչպես տեսանք, Հովհան Մանդակունին Ձատկի կիրակիից ետ հաշված 8-րդ կիրակին անվանեց Բուն Բարեկենդանի կիրակի, իրը Անծ Պահքի կիրակի և նրա յուրաքանչյուր շաբաթ օրերը սահմանեց հերթականությամբ Թեոդորոս զորավարի, Կյուրեղ Երուսաղեմացու, Հովհաննես Երուսաղեմացու, Սեբաստիայի քառասուն մանկանց, Գրիգոր Լուսավորչի և Ղազարի յարութեան հիշատակի օրերը: Այս կարգը անփոփոխ պահպանվեցին հետագայում ընդօրինակված ճաշոցներն ու տոները:

Հայոց կանոնական բնագրերում, որոնք ստեղծվել են 5-8-րդ դարերում, գտնում ենք կանոններ, որոնք վերաբերում են Քառասներորդաց պահքին և նրա այս կամ այն կողմին կապված տոնածիսական կարգի հետ:

Վաչագանի կանոնների 13 և 14-րդ հոդվածներում իր արտահայտությունն է գտել «Քառասներորդան» - «գԱղուհացան», այն է՝

1. «Որ զմեռելուտի ուտէ եւ որ Քառասներորդան միս ուտէ եւ որ ի կիրակէի գործ ինչ գործէ եւ յեկեղեցի չերթայ՝ երեցն պատուհաս արասցէ ժողովրդեամբ հանդերձ»:

2. «ԺԴ եւ որ չորեքշաբաթու կամ ուրբաթու միս ուտէ յառաջ քան գԱղուհացան՝ մի շաբաթ պահեսչէ: Եթէ երիցուն առաջի ոք գայ եւ վկայէ վասն մարդոյն, թէ չէ այսպէս, աւագ շինին կալցի եզն մի զմարդոյն եւ յերեցն տացէ»<sup>1</sup>:

Ներսէսի և Ներշապուհի կանոնների 29-րդ հոդվածում կարդում ենք. «Իժ. Ի սուրբ քառասներորդացն պահան եւ կամ յառաջաւորս նորին մի ոք ի իշխեսցէ լուծանել ըստ սրբոյ կանոնին, եթէ լուծցէ ոք ի քահանայից կամ յաշխարհականաց զաւուրցն կերակուր պատճառաւ հիւրոց կամ գործակալաց, յեկեղեցի մի ի իշխեսցէ մտանել՝ մինչեւ տուժեսցի աղքատաց ապաշխարութեամբ»<sup>2</sup>:

«... Թէ որպէս սահմանեցաւ կարգ ուխտի...» բնագրում հիշատակվում է «Տաւն միջնոց քառասներորդացն Ձատկի», իսկ 41-րդ հոդվածում գրված է. «ԽԱ.... Նոյնպէս եւ հաց ապաշխարողացն զոր յաւուրս քառասներորդացն առնեն հանգիստ շաբաթու կամ կիրակէի»<sup>3</sup>:

Հովհան Իմաստասեր կաթողիկոսի կանոններում գտնում ենք հետևյալ կարգերը.

1. «Ե. Չէ արժան ի սուրբ քառասներորդս Ձատկին եւ մինչեւ ի սուրբ պենտեկոստէն Հարսանիս առնել...»:

2. «Զ. Արժան է ի սուրբ քառասներորդս պահոցն՝ յաւուր շաբաթու եւ կիրակէի պատարագ մատուցանել ահիւ եւ երկիւղիւ ըստ սահմանելոյ սրբոց հարցն յամենայն ժողովուրդս իւրեանց: Իսկ եթէ ոք հակառակեալ ընդդիմացի մերում հրամանիս կամ բանիւ կամ գործով, թէ ուխտաւոր է լուծցի, թէ աշխարհական որոշեսցի»:

3. «Է. Այլ վասն պահելոյ եւ լուծանելոյ զշաբաթ եւ զկիրակէ ի սուրբ քառասներորդս պահոցն, այս յիւրաքանչիւր կամս թողեալ լիցի»<sup>4</sup>:

Թագոս առաքյալին վերագրվող կանոններում 26 համարի տակ կարդում ենք. «ԻԶ. Հարցումն. Զսուրբ Քառասներորդ ո՞րպէս արժան է պահել:

Պատասխանի. Զսուրբ Քառասունսն պահեսցեն հաւատացեալքն սրբութեամբ, ուրոյն զշաբաթ եւ զկիրակէ. եւ յորժամ յաւր չարչարանաց Տեառն գայցեն, տքնեսցեն եւ անդադար աղաւթեսցեն, ժպիտ մի ումեք ելցէ յայն աւուրսն, այլ արտասուս ըստ Տեառն մերոյ, եւ զկենա-

րար պասեքն արասցեն ցնծալով ընդ յառնել տեառն մերոյ, աղաւթիւք փառաւորել զնա՝ որ փրկեաց զմեզ քարութեամբն իւրով եւ ետ մեզ երգակից լինել վերնոցն»<sup>1</sup>:

«Կանոնք Կարնոյ» բնագրում առկա են 6-րդ և 7-րդ կանոնները, որտեղ վկայել է.

1. «Զ. Վասն աւրինաւոր տաւնի Քառասներորդաց Տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի զոր ի Փետրվարի ԺԴ-ն հրամայեցաւ կատարել փառս Աստուծոյ եւ մի տաւնել ընդ հերձուածողս, որք դրութեամբ Արտեմոնի մոլորեցան յուղիղ ճանապարհէն եւ զգիր եւ զընթերցուած փոխեցին... Ապա եթէ ի պահս սուրբ Ձատկի աղուհացիցն Քառասներորդացն հանդիպի, յորում աւուր հանդիպի՝ ի նմին աւուր տաւնեսցի սաղմոսիւք եւ աւհրնութեամբ և երգ հոգևորք...»:

2. «Է. Բայց եթէ ուրբաթի կամ չորեքշաբթի հանդիպի՝ ըստ վերագոյն պատուիրանից պահաւք տաւնեսցեն եւ մի լուծմամբ կերակրոց կամ ըմպելեաց եւ եթէ ոք ի հաւատացելոց անցցէ ըստ կանոնեալ սահմանադրութիւնդ՝ անիծեալ լիցի...»<sup>2</sup>:

Ներկայացնենք «Մեկնութիւն ընթերցուածոց» - «Տաւնապատճառ» բնագրերում տեղ գտած վերլուծությունները Քառասներորդաց պահքի մասին, որից հետո միայն կանենք մեր եզրակացությունները:

Գրիգոր Արշարունին «Մեկնութիւն ընթերցուածոց»-ում գրում է. «... կատարելով քառասնօրեայ պահովքն, որ երկիցս կատարի մի՝ ըստ Մովսեսի եւ եղիայի խորհրդաբար ի Ղազարուն յարութիւն յառաջին երկուշաբաթոյն եւ միւսն ըստ Փրկչին յերկրորդ շաբաթուն երկուշաբթոյն ի յիւր յարութիւնն եւ երկուքին ընդ միմեանս միանալով պահք քառասնորդացն կատարէն քառասուն եւ ութ: Եւ սոցա բարեկենդանի կիրակէն ըսկիզբն լինելով, եւթնիցս եւթն յինքն դառնալով եւ զՁատիկն ի վերայ բերելով կատարէ զյիսունն»<sup>3</sup>:

Ի դեպ Ստեփանոս Սյունեցին Անտիոքի եպիսկոպոսին ուղղված թղթում մեկնել է Քառասներորդաց պահքն և տվել նրա հետ կապված հետագա փոփոխությունը հույների մոտ: Բերենք այդ ուղաբերված վկայությունը, այն է՝ «Եւ ապա զկնի զքառասներորդ զպահս հրամայեայ պահել. որպէս Իսրայելեանքն այն. զելիցն զփրկութիւն ի փարաւոնի, կամ զհինուէացուցն՝ որ դարձան և ապրեցան: Այդ մինչև առաջին մեք զայս պահեցաք, դուք Սեղբեստրոսի և Կոստանդիանոսի տաւն կատարէիք, և Կոստանդիանոս զիւր լուսաւորութեան աւուրս պահէր, և տաւն Գրիգորի և Տրդատայ տաւնէր, քառասուն և չորս ամ շաբաթ և եգիպտոս պահեցին ընդ մեզ և ընդ ձեզ: Իսկ անաւրէն Մարկիանոս զսրբոյն Կոստանդիանոսի զլուսաւորութեան աւուրցն զպահսն եբարձ, և պանդրուտոյս կարգեաց հակառակ այնմ. և փոխանակ այնմ շաբաթու պանիր ուտելոյ, զքառասներորդ պահսն զամենայն ապականեաց...»<sup>4</sup>:

1888 թվահամարի Տոնապատճառի մեջ «Պատճառ պահոցն առաջաւորութեան» ենթավերնագրի տակ, որն ամենայն հավանականությամբ գալիս է Սամուել Կամրջաձորեցուց, գրված է. «... Գրիգորիս ի մեկնութեան ընթերցումիս տարակուսի է ինձ. միաւորէ գԱռաջաւորսն ընդ քառասնեկին և ութերեակաւքն կատարեալ զՔառասներորդսն և ի վեցերորդ ուրբաթին գրեալ է. կատարեցաւ պահք Քառասնորդացն, և Գրիգորիս Առաջաւորքն յութ Ե երրեկաւքն ասէ ի բաց բառնալով զշարսթ և զկիրակէ ի թուոց Քառասներորդացն գեղեցիկ նմանեցուցեալ ցառանց ընթերցուածայդիւր զԱռաջաւորսն նահապետացն»<sup>5</sup>:

1888 թվահամարի գրչագրի «Յաղագս տաւնին Տեառնընդառաջին» ենթավերնագրի տակ

1 Տե՛ս Կանոնագիրք Հայոց, հ. Բ, էջ 96:

2 Տե՛ս Կանոնագիրք Հայոց, հ. Ա, էջ 488:

3 Տե՛ս Կանոնագիրք Հայոց, հ. Ա, էջ 397-400:

4 Տե՛ս Կանոնագիրք Հայոց, հ. Ա, էջ 518-519:

1 Տե՛ս Կանոնագիրք Հայոց, հ. Բ, էջ 37:

2 Տե՛ս Կանոնագիրք Հայոց, հ. Բ, էջ 252-254:

3 Տե՛ս Գրիգոր Արշարունի քորեպիսկոպոսի Մեկնութիւն ընթերցուածոց, էջ 112:

4 Տե՛ս Գիրք թղթոց, էջ 334:

5 Տե՛ս Ձեռ. № 1888, էջ 168բ-170ա:



ներկայացնում է. «իսկ ի. ասնաւեայ պահքն Քրիստոսի. յետ Մկրտութեանն զայս նշանակ է՝ ի վերջստին ծնըծդէնէն մերմէ մինչև ցմահ, որպէս թէ զամենայն աւուրս կենաց մերոյ սգով և մեծաւ տառապանաւք անցուցանեմք ի տարժանեալ կեանս մեր...»<sup>1</sup>:

3795 թվահամարի գրչագրի Տօնապատճառի մեջ «Պաւղոսի և Սամուելի և Գրիգորի և այլոց վարդապետաց յաղագս իս որդաց ասացեալ ի մեկնութիւն ընթերցուածոց» ենթավերնագրի տակ կարդում ենք.

«Գրիգոր Գանձակեցի որ զընթերցվածն մեկնեաց զեւարեա պահսն ի Ժ. երրորդն (թերևս սրբագրել ի իս երրորդն) խառնէ և ապա լինի իս, և զԵ աւրն ոչ խառնես ԼԵ լինի մինչև զշաբաթն և զկիրակեն ի բաց հանես...»<sup>2</sup>:

2021 թվահամարի գրչագրում «Վասն Բարեկենդանին յետին կիրակէին» ենթավերնագրի տակ վկայել է. «... իսկ սուրբ ի. երրորդ անւանի պահս. զի իս աւր է մինչև ի վեցերորդ շաբաթին ուրբաթն ի Ղազարոյ(յ) յարութիւն...»<sup>3</sup>:

Վերոհիշյալ կանոններում, ինչպես և նրանց մեկնությունների մեջ Մեծ Պահքի օրերի հաշիվը տարբեր է և բաժանվում է հիմնականում չորս խմբի: Առաջին դեպքում, ինչպես գրում է Սամուել Կամրջածորեցին, Գրիգոր Արշարունին հաշվել է երկուշաբթիից ուրբաթ օրերը, բայց թողնելով շաբաթ և կիրակին, ընդգրկելով Առաջավորի պահքը (5 օր) և Բուն Բարեկենդանից մինչև Ջատկին նախորդող ուրբաթ օրը (7 շաբաթ) ներառյալ, այսինքն... 5 օր x 8 (1+7) շաբաթ (= 40 օր): Երկրորդ դեպքում առկա բնագրում, որը հավանաբար Ջաքարիա կաթողիկոսի խմբագրութան արդյունքն է, (Գրիգոր Արշարունին) Մեծ Պահքը հաշվել է 48 օր, այսինքն՝ Բուն Բարեկենդանից մինչև Ջատկին նախորդող ուրբաթ օրը, որտեղ ընդգրկել են շաբաթ և կիրակի օրերը: Բայց այս դեպքում 40 օրվա գաղափարը խաթարվում է: Երրորդ տարբերակն այն է, որ Մեծ Պահքի օրերը հաշվել են Բուն Բարեկենդանի կիրակիից մինչև Ղազարու հարությանը նախորդող ուրբաթ օրը, որը իսկապես 40 օր է, երբ ներ ենք առնում շաբաթ և կիրակի օրերը սկսած Բուն Բարեկենդանի կիրակիից: Սակայն վաղ շրջանի բնագրերը կիրակի օրը հաստատապես չեն մտցնում Պահքի օրերի մեջ, ուստի Բուն Բարեկենդանի երկուշաբթիից մինչև Ջատկին նախորդող մեծ հինգշաբթին՝ ներառյալ շաբաթ օրերը, պահքի մեջ, լինում է 40 օր:

Գրիգոր Գանձակեցու տարբերակով ստացվում է 40 օր այնպես ինչպես Գրիգոր Արշարունու մոտ, ներառելով Առաջավորի պահքը և չհաշվելով շաբաթն ու կիրակին: Միաժամանակ Բուն Բարեկենդանից հաշված Ջատկից առաջ ընկնող ուրբաթ տալիս է 35 օր, երբ նկատի չենք ունենում շաբաթ և կիրակի օրերը:

Այժմ հաշվարկն արվում է Բուն Բարեկենդանից հաշված բոլոր օրերը Ղազարի հարության շաբաթ ներառյալ 41 օր, իսկ առանձին շաբաթ են համարում մեծ շաբաթը մինչև Ջատկի: Վաղագույնը, կարծում ենք այն հաշվարկն է, որը հաշվում են Բուն Բարեկենդանի երկուշաբթիից մինչև Ջատկին նախորդող մեծ հինգշաբթին ներառյալ՝ այդ օրերի մեջ մտցնելով շաբաթվա օրերը, որով պահպանվել է 40 օրվա գաղափարը: Սրա հիմնավորումը գտնում ենք Գանգրայի ժողովի 21-րդ կանոնում, որը ավելացվել է հավանաբար Գյուլտ կաթողիկոսի կողմից, Մովսես եպիսկոպոս և Վրթանես Քերթովի թղթակցության մեջ: Այն երևում է Հովհան Օձնեցու կանոնից, որ շաբաթ օրը պահքի մեջ մտցնելը ըստ ցանկության էր: Ինչևէ առկա են տարբերակներ, որոնք բխել են կանոններից, սակայն Քառասներորդաց պահքի գաղափարը հստակորեն կապվում է 40 ցերեկվա և գիշերվա հետ, այն է՝ 40 օրվա, որը կարող է լինել միայն

1 Տե՛ս Ձեռ. № 1888, էջ 205բ:  
2 Տե՛ս Ձեռ. № 3795, էջ 96ա:  
3 Տե՛ս Ձեռ. № 2021, էջ 76ա:

մեկ դեպքում, որի մասին խոսեցինք վերևում, չհաշված Գրիգոր Արշարունու տարբերակը, որը ավելի ուշ է առաջացել, քան Քառասներորդաց պահքը ընդհանրապես: Այլ խոսքով, Քառասներորդաց պահքը այդ տեսքով 4-րդ դարից ավելի վաղ չէր կարող առաջանալ:

Քառասներորդաց պահքի առաջին շաբաթին տրվել է Թեոդորոսի (պահք) անվանումը: Սամուել Կամրջածորեցու Տօնապատճառում գրված է. «... որպէս զԱղուհացիցն առաջին շաբաթն պահելով եւ յաւուր շաբաթուն սրբոյն Թեոդորոսի տաւենեմք, որպէս ոմանք սուրբ Թեոդորոսի շաբաթ ասեն»<sup>1</sup>:

Նույն ձևով այն գտնում ենք 3795 թվահամարի գրչագրում, այն է՝ «... որպէս զԱղուհացիցն զառաջին շաբաթն պահելով և յաւուր շաբաթուն սրբոյն Թեոդորոսին տաւենեմք և որպէս ոմանք սուրբ Թեոդորոսի շաբաթ ասեն...»<sup>2</sup>:

1979 թվահամարի գրչագրում կարդում ենք. «Այլ որպէս Աղուհացիցն առաջին շաբաթուն շաբաթ օրը Թէոդորոսի տօնեմք և զշաբաթն բազումք նմա անւանեն...»<sup>3</sup>:

Մեծ Պահքի առաջին շաբաթին Թեոդորոսի անուն տալը չէր կարող ավելի վաղ լինել քան 5-րդ դարի 80-ական թվականների սկզբները, քանի որ Հովհան Մանդակունին է այդ շաբաթ օրը սահմանել, Թեոդորոս զորավարի հիշատակը, թերևս այդ անվանումը գալիս է Սամուել Կամրջածորեցու ժամանակներից կամ նրանից որոշ ժամանակ առաջ, այն է 10-րդ դարից Մեծ Պահքի վերջին շաբաթին, որը հնագույն տոնացույցերում ունի ասենք «երկուշաբթի աւր ի Ջատկի պահին» ձևակերպումը, տրվել է «Մեծի երկուշաբթի» արտահայտությունը, իսկ ամբողջ շաբաթին՝ Մեծ, չարչարանաց կամ բացառիկ դեպքում Ավագ շաբաթ անվանումը: Այդ շաբաթվա օրերը նույնիսկ ունեն առանձին անուններ: Ասենք «հինգշաբաթի աւր՝ հին Ջատկին» հին ձևակերպման, որը պահպանվել է նույնիսկ մինչև 15-րդ դարը, փոխարինել է «Մեծի հինգշաբաթի աւր» անվանումը: Իսկ «այգուն ուրբաթուն» արտահայտությունը փոխարինելու են գալիս «Մեծ ուրբաթուն» կամ «Դիր Ջատկին» ձևակերպումները: «Շաբաթ աւր երեկուն Ջատկին» արտահայտությունը փոխարինելու է գալիս «Մեծի շաբաթուն» կամ «Ճրագալոյժ Ջատկին» անվանումները: Այլ խոսքով Մեծ Պահքի կամ Քառասներորդաց Պահքի վերջին շաբաթը և նրա առանձին օրերն ստացել են տարբեր անվանումներ, որոնք օգտագործվել են զուգահեռաբար սկսած 5-րդ դարից, թեև մատենագրական բնագրերում հանդիպում են տարբեր ժամանակներից: Մեծ Պահք հնագույն անվանումները հանդիպում են հետևյալ տարբերակներով՝ «զիս աւր պահս», «Քառասներորդան», «Քառասունսն», «պահք Քառասներորդացն», «զԱղուհացան», «ի Սուրբ Քառասներորդացն պահսն», «ի Սուրբ Քառասներորդս պահոցն», «զՍուրբ Քառասներորդ», «զՍուրբ Քառասունսն պահսեցեն», «Քառասնօրեաց պահովքն», «Ընդ Քառասնեկին», «Քառասնաւրեայ պահքօ Քրիստոսի» և այլն:

\*\*\*

Հովհան Մանդակունու 7-րդ կանոնում գրված է. «է. ի Պենտեկոստէն յառաջ ծոմոյն պահս ցուրբաթ աւր պահել եւ յուրբաթուն ուտել՝ անկարգութիւն է. պահել պարտ է մինչև ցերեկոյն, եւ զուրբաթ որպէս կիրակէ պատուեն եւ ի գործոյ դատարացուցանեն՝ մեղք են, եւ կոչեն զնա ծեր, եւ ո՞յր տեսալ է զնորա ծերութիւն, զի Ե աւր աւագ են քան զնա»<sup>4</sup>: Հիշյալ կանոնից պարզ է դառնում, որ Պենտեկոստէից առաջ ծումապահքի օրեր են և ուրբաթին ուտելն անկարգություն է, սակայն պարզ չէ թե նկատի է ունեցել Համբարձուցից հետո և Պենտեկոստ

1 Տե՛ս Ձեռ. № 1888, էջ 1007, էջ 108ա:  
2 Տե՛ս Ձեռ. № 1888, էջ 3795, էջ 78բ-79ա:  
3 Տե՛ս Ձեռ. № 1888, էջ 1979, էջ 81բ:  
4 Տե՛ս Կանոնագիրք Հայոց, Բ. Ա., էջ 497-498:

տեղից առաջ ընկած բոլոր օրերը, թե միայն չորեքշաբթի և ուրբաթ օրերը: Այս հարցը պարզաբանում է «Կանոնք առաքելականք»-ի 11-րդ կանոնը, որտեղ կարդում ենք. «ԺԱ. Կարգեցին առաքելալքն եւ եղին հաստատութեամբ, թէ ի Զատկէն մինչեւ ի խերորդ աւր վերացման նորա ուրախութիւն եւ ցնծութիւն եղիցի, զի աւուրք յարութեան են եւ փեսայն յառագաստի, ապա յետ տաւնի վերացմանն պահեսցեն, եւ դարձեալ Մ-երորդ՝ տաւն կատարեսցի, եւ իբրեւ զառաջին Զատկին՝ գառն զենցի»<sup>1</sup>:

Այս կանոնն ասորական բնագրում բացակայում է: Հասկանալի է, որ այն Հովհան Մանուկունու կանոնի ամփոփումն է և լրացումը, որը կատարվել է 547 թվականի խմբագրության ժամանակ: Հիշյալ հոդվածում ավելի քան պարզ ասվում է, որ Համբարձման տոնից հետո մինչև Հոգեգալստեան տոն պահքի օրեր են, հավանաբար հանած շաբաթ և կիրակի օրերը: Ուշ հայտնի է 5667 թվահամարի տոնացույցի բացատրությունը, որտեղ ասվում է. «... Զի ի Համբարձմանէ մինչև ի Պենդակոստն պահեսցեն և թէ ծանր թուի զբովանդակն պահել զչորեքշաբթին և զուրբաթ պահոց են»<sup>2</sup>: Ակնհայտ է, որ այն վերոհիշյալ կանոնի արձագանքն է, միայն մեղմացմամբ, որովհետև առաջարկվում է, եթե ծանր է ամբողջ օրերը պահել, ապա չորեքշաբթի և ուրբաթ իբրև կանոն պահոց օրեր են և այդ օրերին պարտադիր է պահել: Այս սուղ տեղեկություններն իսկ ցույց են տալիս, թերևս 5-րդ դարի 80-ական թվականներից, իսկ ավելի հաստատուն կանոն դարձած 547 թվականից Համբարձումից Պենտեկոստե պահքի օրեր են եղել մինչև նույնիսկ 1440 թվականը, երբ ընդօրինակվել է հիշյալ Տոնացույցը, բայց վերջին շրջանում հավանաբար ըստ ցանկության:

\*\*\*

Վերոհիշյալին հակառակ հետազայում իր հաստատուն տեղն ունեցող Պենտեկոստից հետո եկող պահքի մասին վաղ շրջանի բնագրերում չկա որևէ տեղեկություն, հավանաբար նրա համար, որ այդ դեռևս գոյություն չունեն: Հոգեգալստից հետո երկուշաբթիից ուրբաթ պահքի օրեր է սահմանել հավանաբար Հովհան Օձնեցին իր խմբագրած տոնացույցի մեջ կամ նրա տոնացույցի 9-րդ դարի 4-րդ քառորդին կատարված խմբագրության մեջ:

Ի դեպ՝ հնագույն «Կանոնք ընթերցուածոց»-ների խմբագրությունների մեջ Պենտեկոստի օրը դրվել է մեկ օրվա կանոնի տակ, այն է՝ «Յաւուր սրբոյ Պենտեկոստէին կիւրակէն աւր...»<sup>3</sup> կամ «Մեծի և հրաշափառ Գալստեան Սուրբ Հոգւոյն...»<sup>4</sup>: Սակայն պահքի օրերի համար չկա որևէ կանոն:

Հնագույն տոնացույցերը արձանագրել են. «Եւթներորդ կիրակի[է]. Պենտակոստէ... և շաբաթն պահք...»

Շաբաթն աւրն Երեմիայ մարգար(էի), ի Մայիս Ա...»<sup>5</sup>: Համարժեք տեղեկություն է տալիս 179 թվահամարի գրչագիրը, միայն գրված է. «Ը կիրակի[է]. Պենտեկոստ»: 752 թվահամարի Տոնացույցի խմբագրության մեջ գրված է. «Պենտակոստին գիշերն հսկումն է... Ապա պահք Երիւ(յ) և տաւն ոչ լինի:

Շաբ[աթ]. Երեմիա Մարգարէին:

Ա կիրակին, որ զկնի Եղիայի պահոցն եկեղեցոյ[յ] տաւն է»<sup>6</sup>:

Ակնհայտ է, որ Հոգեգալստից հետո եկող երկուշաբթի-ուրբաթ պահքի օրեր էին, որն անվանել են Եղիայի անունով: Առկա նյութերով դժվար է պնդել, որ Հոգեգալստեան պահքի կարգը սկիզբ է առել Հովհան Օձնեցու տոնացույցի խմբագրությունից, սակայն առկա են որոշ տվյալներ, որոնք ցույց են տալիս հիշյալ Պահքի վաղ ծագումը:

Սամուել Կամբլաձորեցու «Տաւնապատճառ»-ի խմբագրության մեջ գտնում ենք տեղեկություններ ընդհանրապես հայոց մեջ ընդունված հինգ պահքերի, որոնց թվում Պենտեկոստի պահքի մասին, այն է՝ «... որպէս պահեմք զԵ (գրչագիր՝ է, ուղղել ենք այլ բնագրերի հիման վրա) աւր զկնի Պենտեկոստէին, Ե՝ Վարդավառին, Ե՝ Փոխման Աստուածածնին, Ե՝ Վերացման Խաչին, յորժամ ի վերնատանէն ի յարութիւն փոխեցին Ե՝ Յայտնութեան եւ Մննդեան Քրիստոսի»<sup>1</sup>:

Վերոհիշյալ տեղեկությունից պարզ է դառնում, որ Հոգեգալստից հետո եկող հնագույն պահքը կիրառության մեջ էր 10-րդ դարի վերջերին - 11-րդ դարի սկզբներին, ուստի այն տոնացույցի 9-րդ դարի 4-րդ քառորդի կամ Հովհան Օձնեցու խմբագրության արդյունք է:

Եղիայի պահոցի մասին հիշատակություն կա Մատթեոս Ուռհայեցու մոտ: Նա գրում է, որ Հայոց 561 թվականին (= 1112 թ.) կոմս Ճոսլին մտավ Սրուճ քաղաքը, որի վրա թուրքերը արշավեցին Եղիայի շաբաթ օրը: Այդ տարի Պենտեկոստեն եղել է Հունիսի 9-ին, իսկ նրանից հետո եկող շաբաթ օրը՝ Հունիս 15-ին: Վերջինս ճիշտ հաշվարկել է Հ. Բարթիկյանը<sup>2</sup>: Ակնհայտ է, որ Եղիայի անվամբ պահքը առկա էր 11-րդ դարի վերջում - 12-րդ դարի սկզբներին, ուստի նրա առաջացումը կապվում է ոչ ուշ քան 11-րդ դարի հետ: Այլ խոսքով Հոգեգալստից հետո եկող պահքը սկզբնավորվել է կամ 8-րդ դարի 20-ական թվականներից՝ Հովհան Օձնեցու օրոք կամ 9-րդ դարի 4-րդ քառորդից, այսինքն՝ տոնացույցի 1-ին կամ 2-րդ խմբագրության արդյունք է:

Ներսես Շնորհալի կաթողիկոսի ժամանակ (1166-1173 թթ.) Հոգեգալստեան կարգը փոխվեց և մեկ օրյայից վերածվեցին 8 օրյա տոնական օրերի, սակայն պահքի օրերը մնացին և նշվում էր զուգահեռաբար:

767 թվահամարի Տոնացույցի խմբագրությունը բերում է երկու խումբ կանոնները և բացատրում. «Իսկ եթէ զայս Ը աւրս տօն չառնես դու Եղիայի պահոց սկիզբն արա ապաշխարութեան հարցերուն և ասա կարգաւն»<sup>3</sup>:

Համարժեք բացատրություններ են տալիս այլ գրչագրեր<sup>4</sup>:

5667 թվահամարի Տոնացույցի խմբագրության մեջ կարդում ենք. «Բայց այս Ը աւրս, որ տօնել սահմանած է տօնեսցի, բայց պահքն մի լուծցի, զի կրկին պահք է»<sup>5</sup>:

Նման բացատրություններ են գրանցված տոնացույցի մյուս ընդօրինակությունների մեջ<sup>6</sup>:

4874 թվահամարի գրչագրին բացատրում է. «Եւ դարձեալ թէ ոչ կամիս զՀոգոյ Գալստսն տօնել Ը օրէից, զօրն ի լման կատարել, դու գիշերն տօնէ և ի ճաշուն ի վեր պահոց կարգն կատարէ, որպէս և գրեալ է: Եւ թէ այլ խստապարանիս և ոչ կամիս տօնել զուրբ օրն»

1 Տե՛ս Ձեռ. № 1007, էջ 108բ:

2 Տե՛ս Ձեռ. № 5667, էջ 122բ-123ա:

3 Տե՛ս Ձեռ. № 985, էջ 248-251:

4 Տե՛ս Վեճեսիկի 169 թվահամարի գրչագիր, էջ 267ա:

5 Տե՛ս Ձեռ. № 759, էջ 169ա-բ:

6 Տե՛ս Ձեռ. № 752, էջ 165ա-166ա:

1 Տե՛ս Ձեռ. № 1007, էջ 108բ:

2 Տե՛ս Մատթեոս Ուռհայեցի, Ժամանակագրություն, աշխ. թարգմ. և ծանոթ. Հ. Բարթիկյանի, Ե. 1973, էջ 214-215:

3 Տե՛ս Ձեռ. № 767, էջ 160 ա-բ:

4 Տե՛ս Ձեռ. № 2031, էջ 74բ, 3668, էջ 58բ-62բ և այլն:

5 Տե՛ս Ձեռ. № 5667, էջ 123ա

6 Տե՛ս Ձեռ. № 4164, էջ 179ա, 4441, էջ 248ա, 5436, էջ 177ա, 8598, էջ 73բ-79ա, 5419, էջ 201բ և այլն:

դուն Եղիայի պահոց սկիզբն արա ապաշխարութեան հարցերոյն...»<sup>1</sup>:

Ներսես Շնորհալու սահմանած կարգը աստիճանաբար կանոնների վերածվեց և Հոգեգալստեան 8 օրյան և հնգօրյան Պահքը կատարել են զուգահեռաբար, որը պահպանեց Սիմեոն Երևանցին և այժմ տոնվում է փաստորեն 12-րդ դարի սահմանումներով:

\*\*\*

Սուրբ Գրիգոր Լուսավորչի անվամբ պահքը, տոնացույցային տարվա կարգի համաձայն, սկսվել է Հոգեգալստի կիրակիից հաշված 4-րդ կիրակիից հետո եկող երկուշաբթիից և ավարտել ուրբաթ օրով: Այն շաբթական պահք է և կատարվել է Հունիս 1-5-ից - Հուլիս 5-9-ի սահմաններում նայած տարի: Բերենք տոնացույցերի խմբագրությունների տեղեկությունները:

759 թվահամարի գրչագրում արձանագրվել է. «Ջկնի հոգևոյ Գալստեան երրորդ կիրակի... ապա պահքը սրբոյն Գրիգորի, բայց տաւնք լինի...»<sup>2</sup>: Նույնարժեք տվյալներ է տալիս 179 թվահամարի Տոնացոյց ըստ շաբաթուցը:

752 թվահամարի գրչագրում գրված է. «Գ Կիրակի... և ապա պահք սրբոյն Գրիգորի, բայց տաւն լինի...»<sup>3</sup>:

767 թվահամարի Տոնացույցի խմբագրության մեջ Պենտեկոստեից հետո եկող 1-ին կիրակիից հաշված 3-րդ կիրակիից հետո վկայել է. «Ապա պահք սրբոյն Գրիգորի և է միջինք ամուսն Թիսնակացն, բայց տոն լինի...»<sup>4</sup>:

7203 թվահամարի գրչագրին ունի՝ «Երրորդ կիրակի... եւ ապա պահք սրբոյն Գրիգորի և միջինք ամուսն Թիսնակացն, բայց տաւնք լինի...»<sup>5</sup>:

Ըստ 5667 թվահամարի գրչագրի՝ «Գ. երրորդ կիրակին... եւ ապա պահք սրբոյն Գրիգորի և է միջինք ամուսն Թիսնակացն, բայց տաւն լինի...»<sup>6</sup>: Համարժեք վկայություններ ունեն 16-17-րդ դարերի տոնացույցերի խմբագրությունները<sup>7</sup>:

Քննարկվող պահքի օրերը կարող էին առաջանալ 9-րդ դարի 4-րդ քառորդից հետո, երբ Գրիգոր Լուսավորչի տոնական օրերն ընդլայնվեցին տոնացույցում և հիշյալ պահքից հետո շաբաթ օրը դրվեց «Գիւտ նշխարաց սրբոյն Գրիգոր Լուսաւորչին» տոնի օրը, իր հետ բերեց նաև պահքի անվանմանը՝ Գրիգոր Լուսավորչի, թեև այդ շաբաթվա ընթացքում տոնում էին և այլ սրբերի հիշատակները և զուգահեռաբար պահքի օրեր էին: Գրիգոր Լուսավորչի անունը կրող պահքի մասին հնագույն հիշատակությունը, թեև քողարկված ձևով, գտնում ենք Սամուել Կամրջաձորեցու մոտ: Նա գրում է. «Եւ այլ աւրինակ: Սուրբ Գրիգոր յորժամ ել ի Վիրապէն Տրդատայ պահք եղ Եւ աւր վասն Ե զգայարանացն, զի սրբեսցին եւ էր ժամն ամարային»<sup>8</sup>: Այստեղ Սամուել Կամրջաձորեցին թեև խոսում է Առաջավորի պահքի մասին, բայց «էր ժամն ամարային» արտահայտությունը հուշում է Գրիգոր Լուսավորչի անվամբ պահքի գոյությունը նրա ժամանակ, քանի որ Առաջավոր պահքը երբեք ամուսն ժամանակ չի եղել այլ միայն Գրիգոր Լուսավորչի պահքն էր, ինչպես տեսանք, ամուսն ժամանակ լինում: Ամառային

1 Տե՛ս Ձեռ. № 4874, էջ 186ա-187բ:  
2 Տե՛ս Ձեռ. № 759, էջ 170ա:  
3 Տե՛ս Ձեռ. № 752, էջ 166բ:  
4 Տե՛ս Ձեռ. № 767, էջ 162բ-168բ:  
5 Տե՛ս Ձեռ. № 7203, էջ 66բ-67ա:  
6 Տե՛ս Ձեռ. № 5667, էջ 127ա:  
7 Տե՛ս Ձեռ. № 9836, էջ 171բ, 2031, էջ 82բ, 4459, էջ 88-89ա, 4164, էջ 184բ, 4874, էջ 187բ-188ա և այլն:  
8 Տե՛ս Ձեռ. № 1007, էջ 104բ:

մեծ պահքի մասին հաջորդ հիշատակությունը գտնում ենք Մատթեոս Ուռհայեցու մոտ: Նա հայոց 554 թվականի դեպքերի կապակցությամբ գրում է, որ Սուրբ Հայրապետ Տեր Գրիգորիսը վախճանվեց Տրէ ամսին, ամառային Մեծ Պահքի առաջին շաբաթվա շաբաթ օրը և Մեծ շուքով թաղվեց Քեսուհի մոտ գտնվող Կարմիր վանքում<sup>1</sup>:

Մատթեոս Ուռհայեցին Գրիգոր Վկայասեր կաթողիկոսի վախճանը դրել է հայոց 554 թվականին, միաժամանակ նա հայտնում է, որ Գրիգոր Վկայասերը մահացել է Տրէ ամսին՝ ամառային մեծ Պահքի առաջին շաբաթվա շաբաթ օրը:

Ըստ Մատթեոս Ուռհայեցու հայոց մեծ թվականի և Քրիստոնեական թվականի տարբերությունը 552 է, ուստի պարզ է, որ նա նկատի է ունեցել 1106 թվականը և ոչ թե 1105 թվականը, ինչպես ընդունվել է մինչև այժմ: Բանն այն է, որ որ հիշյալ տարեթվերից մեկն ու մեկի ընտրությունը ճշտվում է Տրէ ամսի և ամառային մեծ պահքի առաջին շաբաթվա շաբաթ օրվա հիշատակություններով, այլ խոսքով տեսնենք Պենտեկոստեից հաշված 28-րդ օրը որ տարիներին է ընկել Տրէ ամսին:

Հայոց 553 թվականին (=1104 թ.) Պենտեկոստեից հաշված 28-րդ օրը եղել է Քաղոց 10-ին (= Հուլիս 2), որովհետև Ջատիկն ընկել է Ապրիլ 17-ին, իսկ Պենտեկոստեն՝ Ապրիլ 17-ին:

Հայոց 554 թվականին (= 1105 թ.) Պենտեկոստեից հաշված 28-րդ օրը եղել է Քաղոց 2-ին (= Հունիս 24), որովհետև Ջատիկն ընկել է Ապրիլ 9-ին, իսկ Պենտեկոստեն՝ Մայիս 28-ին:

Հայոց 555 թվականին (= 1106 թ.) Պենտեկոստեից հաշված 28-րդ օրը եղել է Տրէ 17-ին (= Հունիս 9), որովհետև Ջատիկն ընկել է Մարտ 25-ին, իսկ Պենտեկոստեն Մայիս 13-ին: Պարզ է, որ Մատթեոս Ուռհայեցին նկատի է ունեցել 1106 թ., որովհետև միայն այդ թվականին Տրէ ամսին է եղել ամառային մեծ պահքի առաջին շաբաթվա շաբաթ օրը: Նա հայոց 554 թվական է գրել նկատի ուենալով ՇԼԲ-ի թվականը, որն իր ժամանակ մեկ տարով առաջ էր ընկել և դարձել 555 թվական, որովհետև հիշյալ օրը նավասարդից հետո էր կատարվում: Այսպիսով Գրիգոր Վկայասեր կաթողիկոսը մահացել է 1106 թվականի Տրէ 17-ին (= Հունիս 9):

Սիմեոն Երևանցին հետևել է նախորդ տոնացույցերի կարգին: Նա գրել է. «Երրորդ կիրակի՝ զկնի հոգևոյ Գալստեան եւ ապա պահք սրբոյն Գրիգորի Լուսաւորչի մերոյ, բայց տօնք լինի» (էջ 188-192): Հիշյալ պահքի կարգը և անվանումը գործում է այժմ:

Այսպիսով 9-րդ դարի 4-րդ քառորդին հայոց տոնացույցում ավելացան պահքի օրերը Պենտեկոստեից հաշված 4-րդ կիրակիից հետո եկող երկուշաբթի-ուրբաթ օրերին, իսկ շաբաթ օրը սահմանվեց. «Գիւտ նշխարաց սրբոյն Գրիգորի Լուսաւորչին» հիշատակի օրը, որի հետևանքով այդ պահքը կրեց Գրիգոր Լուսավորչի անունը, որը ուշ շրջանում անվանվել է նաև «միջինք ամուսն Թիսնակացն»:

\*\*\*

Կասկածից վեր է, որ Հովհաննես Մանդակունին գրել է կանոններ: Դրա ապացույցը Անանիա Շիրակացու վկայությունն է կապված Քրիստոսի Մեծնդն ու Յայտնությունը միասին Հունվարի 6-ին կատարելու հետ: Հովհան Մանդակունու կանոնները հետագայում ենթարկվել են խմբագրման: Հիշատակենք ցանկի է (7) կանոնը, որը բնագրում դրվել է Ջ (6) կանոնի տակ, այն է՝ «Ի Պենտեկոստէ մինչև ցՎարդավառն Բ շաբաթք ուտին եւ մին պահի Վարդավառն՝ տաւն առաքելոցն Մատուռն ըստ հնումն, Տաղաւարահարացն ի նորումս նաւակատիք Սուրբ տեղեաց Երուսաղեմի եւ մարտիրոսաց հիշատակք»<sup>2</sup>:

1 Տե՛ս Մատթեոս Ուռհայեցի Աղվ., աշխ, էջ 198-199:  
2 Տե՛ս Կանոնագիրք Հայոց, Բ. Ա, էջ 497:

Բավական է ընկալել կանոնի առաջին նախադասության բովանդակությունը, որպեսզի պարզ դառնա, որ այդ կանոնը 10-11-րդ դդ. խմբագրությունն է: Հոգեգալստից մինչև Վարդավառ ընկնող հատվածում, ըստ հնագույն տոնացույցերի տվյալների, առաջին շաբաթն Եղիայի պահքն է, որից հետո երկու շաբաթ տոնել են սրբերի հիշատակները, այսինքն մեկ շաբաթ պահք է երկու շաբաթ ուտիք: Դրանից հետո մեկ շաբաթ պահք է, որը Գրիգոր Լուսավորչի անվամբ էր, թեև կատարել են նաև սրբերի հիշատակները, և երկու շաբաթ ուտիք է ու նշել են սրբերի հիշատակները: Այսինքն նույն օրինաչափությունը ինչ նախորդում: Վերջին շաբաթը Վարդավառի պահքն է, որի մասին բնագրում կարծես թե ոչ մի խոսք չկա: Մեր համոզմամբ Եղիայի և Գրիգոր Լուսավորչի անուններով պահքերն առաջացել են ամենավաղը 9-րդ դարի 4-րդ քառորդից հետո 10-րդ դարի ընթացքում, ուստի քննարկվող կանոնը մտել է բնագրի մեջ 11-րդ դարում: Մանավանդ Հովհան Մանդակունու «Կանոնք ընթերցուածոց»-ի մեջ, որը հայոց տոնացույցի 2-րդ խմբագրությունն էր, բացակայում է ոչ միայն Վարդավառի կանոնը, այլև վերահիշյալ բոլոր պահքերի օրերը: Այլ խոսքով Ձ (6) կանոնը անվանվել է և առաջացել է 10-11-րդ դարերում: Այդ կանոնը, թեև անվանումները չի տալիս, բայց նկատի է ունեցել Եղիայի, Գրիգոր Լուսավորչի պահքի օրերը, թերևս նաև Վարդավառի և հանդիսանում է հնագույն վկայություններից մեկը այդ պահքի օրերի մասին:

Ասեմք նաև, որ Եպիփան Կիպրացուն վերագրվող կանոնները «Հարցումն Թէոդոսի քահանայի եկեղեցւոյն Կեսարա առ երանելի Եպիփան ի Կիպրոս» ենթավերտառություն տակ նույնպես առկա են պահքի օրերի մասին: Այնտեղ քառասորդաց պահքն քննությունը կատարելուց հետո կարդում ենք. «... Վասն այսորիկ եւ նզովս եղին, որք զյղիութիւն անլէնս վարկանէին առաջին սուրբ հարքն զչորեքշաբաթ և զուրբաթ եւ զուխտի շաբաթսն Վարդավառին եւ զԱստուածածնին, զսրբոց Խաչին եւ Յայտնութեան շաբաթն եւ զԱռաջաւորսն ընդ նմա համեմատեցին ի պահս պնդութեան: Եւս առավել ի վերայ այնոցիկ եկեցին շնորհքն Աստուծոյ որ զերեք յիսունս պահեսցին յանուն Սուրբ Երրորդութեանն զՋատիկն եւ զՎարդավառն եւ զՅայտնութեանն եւ ի փրկութեան Տեառն առցին զԱւետիս եւ որք լուծանեն զԱռաջաւորսն եւ զԱղուհացսն եւ զուտիցն եւ զՎարդավառին եւ զսուրբ Աստուածածնին եւ զսրբոյ Խաչին եւ զՅայտնութեան շաբաթն եւ զչորեքշաբաթն եւ զուրբաթն՝ նզովեսցին ի սուրբ հարցն...»<sup>1</sup>:

Բավական է դիմել պահքի անվանումներին՝ Առաջավորի, Վարդավառի, Սուրբ Խաչի, Աստուածածնի, Յայտնութեան և այլն, որպեսզի վերանա Եպիփան Կիպրացու անունը և հիշյալ կանոններն անվավեր համարվեն՝ դրվելով ամենավաղը 10-11-րդ դարի բնագրերի շարքում և այնտեղ հիշատակված որոշ պահքի օրերի համար ընդունել հնագույն վկայություններից մեկը:

Սամուել Կամրջաձորեցին Տօնապատճառի մեջ, ինչպես տեսանք, տեղեկացրել է Վարդավառի հնգօրյա պահքի մասին: Ատոմ Վարագեցու Հոռոմադիրում Վարդավառից առաջ ընկնող շաբաթ օրը դրվել է Տապանակի հիշատակի օրը, որը ստացել է նաև «Բարեկենդան Վարդավառի» անվանումը, որը հուշում է պահքի գոյությունը:

Անկասկած է, որ Վարդավառի պահքը կիրառության մեջ էր 10-րդ դարի վերջում: Հարկ է բերել «Երանելոյն քերդողի Սիւնեաց Ստեփանոսի [պատասխան ի առ վարդապետն Աղւանից [= Աղուանից]]» վերնագիրը կրող բնագրի տեղեկությունը, այն է՝ «Սկիզբն և պահին ամենայն պահոց զուրբաթ և զչորեքշաբաթի գտաք առաքելական հրամանաւն յաշակերտաց Տեառն և զպահ սուրբ Խ որդացն: Եւ զերիսս զայս ի բաց կալ ի կրոց զոհից ի հեղձուցելոյ և յարենէ: Իսկ պահք Վարդավառին ի սրբոյն Յակոբայ եղեալ է, ցի յայսմ տաւնի եղև սկիզբն պատարա-

<sup>1</sup> Տե՛ս Կանոնագիրք Հայոց, Բ. Ա, էջ 277-288:

զի մատուցանել և աղ աւրինել. ձեռամբ սրբոյն Յակոբայ եղբաւր Տեառն: Իսկ Սուրբ Նշանին պահքն և Սուրբ Աստուածածնին յորժամ սուրբ առաքեալքն յԵրուսաղէմ ժողովեցան յուրբաթ անսղութեամբ ամենեքեան պահեցին յոտանաւոր տքնութեամբ ի պատիւ սպասաւորութեան սրբուհւոյն, և ապա զփայտեղեն անաւթն եղ ի վերայ երեսացն իւրոց՝ աղաչանաւք սուրբ առաքելոցն...»<sup>1</sup>:

Հիշյալ մեկնության հեղինակը օգտագործել է նախորդ շրջանի ինչպես գրավոր, այնպես էլ բանավոր ավանդությունը պահքերի վերլուծության համար, սակայն Ստեփանոս Սյունեցուն չենք կարող վերագրել այդ բնագիրը և Վարդավառի, Աստուածածնի, Խաչի պահքերը չենք կարող վերագրել գոնե 8-րդ դարի սկզբներին, որովհետև դրանց գոյություն մասին ունենք ոչ ավելի վաղ քան 10-րդ դարի վերջերի տվյալներ, ուստի հիշյալ բնագրի հեղինակը ապրել է 10-րդ դարից ոչ վաղ և բնագրում հիշատակված պահքերի մասին տեղեկությունները վերաբերվում են ոչ թե 8-րդ դարին, այլ 10-րդ դարից հետո կատարվող իրողություններին:

Վարդավառի պահքի մասին բերենք տոնացույցերի և ճաշոցների տվյալները:

759 թվահամարի գրչագիրն արձանագրել է. «Ձկնի Հոգւոյն Գալստեան վեցերորդ կիրակի... և ապա պահք վարդավառին և տաւնք ոչ լինին»<sup>2</sup>:

Ի դեպ գրչագրի մեջ հաշվել է Հոգեգալստի կիրակիից հետո եկող կիրակիից, որի հետևանքով Պահքը արձանագրել է 6-րդ կիրակիից հետո, այն իրականում 7-րդ կիրակիից հետո է, երբ հաշվում ենք Հոգեգալստյան կիրակիից: Այդպես են ներկայացրել նաև մյուս գրչագրերը, որովհետև Հոգեգալուստն կատարում էին 8 օր, այսինքն՝ կիրակիից կիրակի, որի հետևանքով առաջին կիրակին Հոգեգալստից հետո հաշվում էին Հոգեգալստից հաշված 3-րդ կիրակին:

752 թվահամարի Տոնացույցի համաձայն «Ձ կիրակի... և ապա պահք Վարդավառին և տաւնք ոչ լինի»<sup>3</sup>:

Հայոց տոնացույցերի և ճաշոցների հետագա խմբագրությունները հիմնականում տալիս են համարժեք տեղեկություններ<sup>4</sup>:

Որոշ ճաշոցներ Հոգեգալստյան 6-րդ (այն է՝ 7-րդ) կիրակին բնորոշել են «Բարեկենդանին Վարդավառի պահոցն», «երկուշաբթի աւուրն Վարդավառի պահոցն» և այլն<sup>5</sup>:

Սիմեոն Երևանցու տոնացույցում պահպանվել են Վարդավառի պահքի հնագույն կանոնները, որը գործում է մինչև այժմ:

Վարդավառի պահքը սկսել է Հունիս 22-26-ից մինչև Հուլիս 25-30-ի սահմաններում նայած տարի: Այսպիսով Վարդավառի պահքը Հայոց տոնացույցում առկա է 10-րդ դարի վերջում, որը նշանակում է հիշյալ կարգի ավելի վաղ ծագում, թերևս այն գալիս է տոնացույցի 2-րդ խմբագրության ժամանակներից, այն է՝ 9-րդ դարի 4-րդ քառորդից: Այն կարող էր գալ Հովհան Օձնեցու խմբագրած տոնացույցից, եթե վավերական համարենք Ստեփանոս Սյունեցուն վերագրվող մեկնությունը:

<sup>1</sup> Տե՛ս Ձեռ. № 2040, էջ 428բ:

<sup>2</sup> Տե՛ս Ձեռ. № 759, էջ 170բ:

<sup>3</sup> Տե՛ս Ձեռ. № 752, էջ 167ա-բ:

<sup>4</sup> Տե՛ս Ձեռ. №№ 767, էջ 163բ-164ա, 2092, էջ 226ա-227ա, 5667, էջ 128ա, 7203, էջ 68ա, 9838, էջ 172ա, 2031, էջ 84բ-85ա, 4164, էջ 186բ, 4874, էջ 188բ-189ա, 5419, էջ 206բ, 5436, էջ 180ա, 7741, էջ 324բ-328բ, 5455, էջ 217բ-222ա, 939, էջ 362ա-367ա, 4437, էջ 116բ-121բ, 4506, էջ 240բ և այլն:

<sup>5</sup> Տե՛ս Ձեռ. №№ 7741, 939 և այլն:

\*\*\*

Աստուածածնի պաշտի մասին որոշ տեղեկութիւններ բերվեցին վերը կատարված շարադրանքի մեջ: Այժմ տանք տոնացույցերի խմբագրութիւնների տվյալները:

Ըստ 759 թվահամարի Տոնացույցի՝ «Զկնի Վարդավառի հինգերորդ կիրակի(է)... և ապա [պահք] Աստուածածնին...»<sup>1</sup>:

Ըստ 752 թվահամարի գրչագրի՝ «Դ կիրակի(է)... եւ ապա պահք Աստուածածնին և տաւնք ոչ լինի»<sup>2</sup>:

Ըստ 767 թվահամարի տոնացույցի՝ «Չորրորդ կիրակի... և ապա պահք Աստուածածնի»<sup>3</sup>:

Ըստ 7203 թվահամարի գրչագրի՝ «Չորրորդ կիրակի... եւ ապա պահք Սուրբ Աստուածածնին և տաւն ոչ լինի»<sup>4</sup>:

Ըստ 5667 թվահամարի Տոնացույցի՝ «Չորրորդ կիրակի... եւ ապա պահք Աստուածածնին և տօն ոչ լինի...»<sup>5</sup>:

Աստուածածնի պահքի մասին համարժեք տեղեկութիւններ են տալիս նաև այլ գրչագրեր<sup>6</sup>:

Հարկ է նշել, որ Վարդավառ - Փոխման Աստուածածնի միջև շաբաթների քանակը տարբեր էր և տատանվում էր 7 շաբաթից 2 շաբաթվա սահմաններում, ուստի Աստուածածնի պահքը պարտադիր լինում էր վերջին շաբաթվա երկուշաբթի-ուրբաթ օրերին: Քանի որ Փոխման Աստուածածնի տոնը կատարվում էր Օգոստոս 15 ± 3 օր, այսինքն Օգոստոսի 12-18-ի կիրակիներից մեկում, ապա պահքը կատարվում էր տոնին նախորդող շաբաթվա մեջ:

Սամուել Կամրջաձորեցու և այլ բնագրերի տվյալներից հայտնի դարձավ որ Աստուածածնի հնգօրյա պահքը տոնացույցում առկա է 10-րդ դարի վերջերին - 11-րդ դարի սկզբներին: Իսկ հայոց շարժական տոմարի ամսաթվերի վերլուծութիւնից պարզ դարձավ, որ Աստուածածնի պահքը սկիզբ է առել ամենավաղը 9-րդ դարի վերջերին - 10-րդ դարի սկզբներին, ուստի հասկանալի է, որ քննարկվող պահքի կանոնները տոնացույց են մուտք գործել վերոհիշյալ ժամանակներից և հետագայում ընդօրինակված տոնացույցերի խմբագրութիւնները, որոնց թվում Սիմեոն Երևանցունը, ինչպես և ճաշոցները պահել են Աստուածածնի պահքի կարգը անփոփոխ, որը և գործում է ներկայումս:

\*\*\*

Աստուածածնի պահքին հաջորդում է Սուրբ Խաչի հնգօրյա պահքը, որի մասին տեղեկութիւններ տվեցին վերոհիշյալ շարադրանքի մեջ: Այժմ բերենք տոնացույցերի խմբագրութիւնների վկայութիւնները:

759 թվահամարի գրչագրի համաձայն. «Զկնի Աստուածածնին չորրորդ կիրակի(է)... և ապա պահք Խաչին և տաւն ոչ լինի...»<sup>7</sup>:

767 թվահամարի Տոնացույցի համաձայն. «Գ կիրակի(է)... և ապա պահք Սուրբ Խաչին և

1 Տե՛ս Ձեռ. № 752, էջ 171բ-172ա:  
2 Տե՛ս Ձեռ. № 752, էջ 169ա:  
3 Տե՛ս Ձեռ. № 767, էջ 169ա:  
4 Տե՛ս Ձեռ. № 7203, էջ 74բ:  
5 Տե՛ս Ձեռ. № 5667, էջ 132ա:  
6 Տե՛ս Ձեռ. №N° 9838, էջ 174բ, 4164, էջ 192ա, 5419, էջ 112ա և այլն:  
7 Տե՛ս Ձեռ. № 759, էջ 172բ:

տօն ոչ լինի...»<sup>1</sup>:

Ըստ 5667 թվահամարի գրչագրի՝ «Չորրորդ կիրակի(է)... և ապա Պահք սուրբ Խաչին և - տօն ոչ լինի...»<sup>2</sup>:

Տոնացույցերի և ճաշոցների խմբագրութիւնները կրկնում են վերոհիշյալ կանոնները կամ բերում են Սուրբ Խաչի պահքի երկուշաբթի - ուրբաթ կարգը<sup>3</sup>:

Քանի որ Աստուածածնին - Սուրբ Խաչ հատվածում շաբաթների քանակը մեկով ավելացել է, ուստի Սուրբ Խաչի պահքը դրվել է Խաչվերացին նախորդող շաբաթվա երկուշաբթի - ուրբաթ օրերին, այն է Սեպտեմբեր 11 - 17-ի կիրակիից առաջ ընկնող շաբաթվա մեջ:

Սուրբ Խաչի կամ Խաչվերացի տոնը կիրակիի կանոնի տակ ենք տեսնում 898 թվականին ընդօրինակված «Կանոնք ընթերցուածոցի» 3-րդ խմբագրութիւնի մեջ, ուստի Սուրբ Խաչի պահքը կարող էր տեղ գտնել 9-րդ դարի 4-րդ քառորդին խմբագրված տոնացույցի մեջ, թեև հնագույն Վկայութիւնը Սամուել Կամրջաձորեցունն է, որպես արդեն գործող պահք: Այդ պահքը կիրառվում է այժմ անփոփոխ:

\*\*\*

14-րդ դարի սկզբներից Վարագա Խաչի տոնը և նրան նախորդող Գեորգ գործարի հիշատակի օրը, որ կատարում էին Փոխման Աստուածածնից հետո եկող շաբաթ և կիրակի օրերին, տեղափոխվեց Սուրբ Խաչի կամ Խաչվերացի կիրակիից շաբաթ և երրորդ կիրակի օրը, իսկ սուրբ Խաչից հաշված երկրորդ կիրակիից հետո երկուշաբթիից - ուրբաթ սահմանվեց պահքի օրեր, թեև սրբերի հիշատակի օրերը, որոնք տոնվում էին այդ շաբաթ մնաց, այսինքն և պահք էր և տոն:

Հայոց տոնացույցերի խմբագրութիւնները ոչ միայն պահպանել են այդ պահքի կանոնները, այլ տվել են երկու անվանումներ, այն է՝ Գեորգ գործարի և Վարագա Սուրբ Խաչին:

2092 թվահամարի Տոնացույցի խմբագրութիւնի մեջ Սուրբ Խաչի և եկեղեցու ութօրյա տոնների կիրակին համարել է. «Սուրբ Գէորգին Բարեկենդան կիրակի(է)» և առաջին անգամ հանդիպում ենք «Պահք սուրբ Գեորգեա» անվանմանը, իսկ շաբաթ օրը դնում է հիշյալ սրբի հիշատակի օրը<sup>4</sup>:

5667 թվահամարի Տոնացույցի խմբագրութիւնը արձանագրել է՝ «Երկրորդ կիրակի(է)... եւ ապա պահք Վարագայ Խաչին, բայց տաւն լինի»<sup>5</sup>:

4164 թվահամարի գրչագիրը տվել է հիշյալ երկու անվանումները, այն է՝ «... Յետ Ը օրէից Սուրբ Խաչին. յայս կիրակիս... եւ ապա պահք Վարագա Սուրբ Խաչին, որ ասի Սուրբ Գէորգայ, բայց տօնք լինի»<sup>6</sup>:

4437 թվահամարի ճաշոցն արձանագրել է. «Պահք Սրբոյ Գէորգեա եւ տօն լինի», իսկ 4566 թվահամարի ճաշոցն երկուշաբթի օրվա կանոնի տակ գրել է. «Պահք և տաւն»:

Սիմեոն Երևանցին այդ պահքի համար ընդունել է հիշյալ երկու անվանումներից մեկը՝

1 Տե՛ս Ձեռ. № 767, էջ 174ա:  
2 Տե՛ս Ձեռ. № 5667, էջ 135ա-բ:  
3 Տե՛ս Ձեռ. №N° 752, էջ 171բ, 2092 էջ 228ա, 7203, էջ 81ա, 2833, էջ 222բ, 9838, էջ 176բ, 4164, էջ 199ա-բ, 4874, էջ 193ա-բ, 5419, էջ 214ա, 4454, էջ 94ա-բ, 5436, էջ 186բ, 509, էջ 416բ, 7741, էջ 387ա-391բ, 5455, էջ 285ա-291բ, 939, էջ 438բ-443բ, 4437, էջ 179բ-182բ և այլն:  
4 Տե՛ս Ձեռ. № 2092, էջ 228ա-բ:  
5 Տե՛ս Ձեռ. № 5667, էջ 138:  
6 Տե՛ս Ձեռ. № 4164, էջ 204բ:



«Վարագայ Արբոյ Խաչիներ»-ը:

Այսպիսով 14-րդ դարում առաջացած Գեորգեա և Վարագա Խաչի պահքը արմատավորվեց Հայոց տոնացույցում և գործում է այժմ ևս: Վերոհիշյալից պարզ է դառնում, որ հիշյալ պահքը գալիս է, ոչ այնքան վաղ շրջանից, թեքևս ունի ավելի քան 750-ամյա հնություն: Ակնհայտ է, որ պահքի օրերը ընդլայնվել են Հայոց Տոնացույցում աստիճանաբար:

\*\*\*

Հայոց տոնացույցում պահքի հաջորդ հնգօրյան դրել են Յիսնակամտի կիրակիից հետո եկող երկուշաբթի-ուրբաթ օրերին: Յիսնակամուտը կատարել են Նոյեմբեր 18 ± 3 օր, կիրակի այն է՝ Նոյեմբեր 15-21-ի կիրակիներից մեկում նայած տարի, ուստի պահքն ընկել է Նոյեմբեր 16-20-ի և 22-26-ի սահմաններում նայած տարի: Բերենք տոնացույցերի խմբագրությունների վկայությունները:

759 թվահամարի գրչագրում կարդում ենք. «Կիրակէն յարութեան... և ապա պահքը Յիսնակին...»<sup>1</sup>:

Համարժեք տեղեկություն է տալիս 179 թվահամարի Տոնացույցում, միայն Պահք Յիսնակից հետո ավելացրել է «և տաւնք ոչ լինի...»:

752 թվահամարի Տոնացույցում գրված է «Բ կիրակէյ... եւ ապա պահք Յիսնակացն և տաւն ոչ լինի»<sup>2</sup>:

14-րդ դարում ընդօրինակված և խմբագրված 2092 թվահամարի Տոնացույցում արձանագրվել է. «Կիրակէյ... Պահք Յիսնակամտին Բշ(երկուշաբթ). Յիսնակաց պահքն...: Ոմանք քամահարելով զայս Քրիստափորի պահք ասեն, բայց Մընդեան Յիսնակացն առաջի շաբաթն է ճշմարիտ:

Շաբաթ աւրն ոմանք Քրիստափորի տաւնեն եւ ոմանք՝ սրբոց Աւետարանչացն»<sup>3</sup>:

Պարզվում է, որ նույն Պահքին տվել են տարբեր անվանումներ, այն է՝ Քրիստոսի Մննդեան Յիսնակաց առաջին շաբաթի պահք և Քրիստափորի պահք: Հետագայում ընդօրինակված տոնացույցերի խմբագրությունները քննարկվող կիրակին որակել են ինչպես առաջին կիրակի<sup>4</sup> կամ «Յիսնակաց Բարեկեղանի կիրակին»<sup>5</sup>, իսկ Պահքը՝ «Յիսնակամտին» կամ «Յիսնակաց»<sup>6</sup>: Դրան հակառակ հնագույն ճաշոցների խմբագրությունները հիշյալ կիրակին բնորոշել են որպես տասներորդ կիրակի կամ պարզապես կիրակի: Ըստ 4514 թվահամարի ճաշոցի՝ «Տասներորդ կիրակէ...», ստորին լուսանցքում՝ «Կիրակէն Բարեկեղան է», ապա «Պահք է Յիսնակաց»<sup>6</sup>:

Ըստ 7741 թվահամարի ճաշոցի՝ «Տասներորդ կիրակէդ Բարեկեղան է Յիսնակացն», որից հետո՝ «Երկուշաբթի աւր. Յիսնակաց պահոցն»:

Միմեոն Երևանցին պահել է ճաշոցների կարգը որոշ խմբագրությամբ, այն է՝ «Տասներորդ կիրակէ զկնի սրբոյ Խաչին», ապա տվել է բացատրություն, որը քննել ենք աշխատանքի այլ հատվածում, որից հետո բերել է «Մետասաներորդ կիրակէ»-ի կանոնը և Յիսնակի պահոց օրերը՝ երկուշաբթիից ուրբաթ:

1 Տե՛ս Ձեռ. № 759, էջ 175բ-176ա:

2 Տե՛ս Ձեռ. № 752, էջ 175ա:

3 Տե՛ս Ձեռ. № 2092, էջ 229ա-բ:

4 Տե՛ս Ձեռ. №№ 5667, էջ 142ա, 7203, էջ 92ա-բ, 9838, 4874, 6337, էջ 247ա, 5436 և այլն:

5 Տե՛ս Ձեռ. № 4164, էջ 210բ-211ա:

6 Տե՛ս Ձեռ. № 4514, էջ 380ա-384ա:

Յիսնակամուտը Նոյեմբեր 18 ± 3 օր կիրակի է սահմանվել, որն ունեցել է տարբեր անվանումներ, սկզբնավորվել է այդ կարգով ոչ ավելի վաղ քան 11-րդ դարը:

\*\*\*

Հայոց տոնացույցերը Յիսնակամտից հաշված 4-րդ կիրակիից հետո եկող երկուշաբթի-ուրբաթ օրերին կանոնել են «Սուրբ Յակոբայ» Պահքը:

Բերենք տոնացույցերից որոշ վկայություններ:

179 թվահամարի գրչագրի համաձայն՝ «Չորրորդ կիրակէյ... և ապա պահքը սրբոյն Յակոբայ, բայց տաւնքս լինին»<sup>1</sup>:

752 թվահամարի Տոնացույցի համաձայն՝ «Ե կիրակէյ... եւ ապա պահք սրբոյն Յակոբայ, բայց տաւն լինի»<sup>2</sup>:

Հետագայում ընդօրինակված տոնացույցերի և ճաշոցների հիշյալ պահքի կարգը տալիս հետևել են նախորդ գրչագրերին և սրբերի հիշատակի օրերի հետ միասին կանոնել են «Սուրբ Յակոբայ» պահքը<sup>3</sup>: Միմեոն Երևանցին նույնությամբ պահպանել է «Սուրբ Յակոբայ» պահքի կանոնները:

Այսպիսով, Ստեփանոս Գույնբրիցանցը իր խմբագրած «Տաւնացոյց ըստ շաբաթուց»-ում, որը կատարել է 1292 թվականին վկայել է «Սուրբ Յակոբայ» Պահքի գոյությունը, որը հետագայում մտավ կենցաղ և պահպանվեց մինչև այժմ: Հարկ է նշել, որ տոնացույցերում 5-րդ կիրակի ասելով հասկացել են Յիսնակամտի նախորդ կիրակին, որը հակասություն չէ այլ հաշվման արդյունք:

\*\*\*

Հայոց եկեղեցական տարվա վերջին պահքը Քրիստոսի Մննդեան կամ Յայտնութեան անվանվող պահքն էր, որն սկսվել է Դեկտեմբերի 30-ին և ավարտվել Մննդեան Ճրագալոյցից (= Հունվար 5) առաջ ընկնող օրերից մեկով նայած տարի:

Առկա տոնացույցերի և ճաշոցների մեջ պահպանվել է հիշյալ պահքի այն կարգը, որն արտացոլում է Գրիգոր Վկայասերի Տոնանամակից հետո եկող իրողությունները: Բանն այն է, որ Գրիգոր վկայասերն Հունվար 1-ին սահմանեց Բարսեղ Կեսարացու և հավանաբար Գրիգոր Նյուսացու հիշատակի օրերը, իսկ Հունվարի 2-ին՝ Սեղբեստրոսինը, վերջապես Հունվարի 28-ին՝ Եփրեմ Ասորուն, որոնց հիշատակները Տոնացույց ըստ շաբաթուցի մեջ թե Գրիգոր Վկայասերի ու Կիրակոսի, թե հետագայում խմբագրված տոնացույցերի և ճաշոցների մեջ միավորեցին և տոնեցին Մննդեան կամ Յայտնութեան պահոց շաբաթ օրը:

Բերենք տոնացույցերից որոշ քաղվածքներ:

Ըստ 759 թվահամարի գրչագրի՝ «Չկնի Յիսնակամտին վերցերորդ կիրակէ... եւ առաքելոցն տաւնեն լինին: Քանզի ի Յարութեան (= Մննդեան, Յայտնութեան) պահքն յետ Դ աւր ուտիք համարեա...»

Բարեկեղան է Յայտնութեան Տեառն: Թէ պահքը հանդիպի Բարեկեղանին աւրն հարցն յԶԲ...

Յարութեան պահոցն շաբաթն աւրն. Սրբոյ Բարսեղի և եղբաւր նորին Գրիգորի Նիւսա-

1 Տե՛ս Ձեռ. № 179, էջ 539ա-540բ:

2 Տե՛ս Ձեռ. № 752, էջ 176ա:

3 Տե՛ս Ձեռ. №№ 5667, էջ 142բ-143ա, 7203, 9838, 4164, էջ 212բ-213ա, 6952, էջ 292ա-բ, 5440, էջ 220բ, 4514, էջ 393ա-395ա, 7741, էջ 454ա-458բ և այլն:

ցոյ և սրբոյն Սեղբեստրոսի Հռովմայ Հայրապետի և ար[բ]ա Եփրեմի Յունուարի) Ա:

Կիրակէն Յարութեան... և աւրս ի Յայտնութեան պա[հ]քն Հանդիպի և ապա պահոցն Յունուարի Ե ձրագալոյց է»<sup>1</sup>: Համարյա համարժեք տեղեկութիւններ է տալիս նաև 179 թվահամարի գրչագիրը:

Ըստ 752 թվահամարի գրչագրի «է կիրակէ) ... ապա յառաջ քանզ Յայտնութեան պահքն Դ աւր համարեա...

Յայտնութեան Բարեկենդանին կիրակէ)...

Եւ Յայտնութեան պահոցն...

շաբ[աթ]. Բարսղի...

Կիրակէ) թէ ի պահքն Հանդիպի Հ[արցն] ԴԶ. միածին որդի»<sup>2</sup>:

7203 թվահամարի Տոնացույցի խմբագրութիւնն բերել է 752 թվահամարի գրչագրի համարժեք տեղեկութիւններ, միաժամանակ բացատրել. «Շաբ[աթ] աւր, որ մէջն Հանդիպի Յայտնութեան պահոց Բարսղի տօնեա, և թէ շաբաթ աւր չհանդիպի դու Յունուարի Ա տաւնեա սրբոյն Բասիլիոսի Կեսարացոյն...»<sup>3</sup>: Իսկ 4164 թվահամարի Տոնացույցի խմբագրութեան մեջ գտնուում ենք մեկ այլ բացատրութիւն, այն է՝ «Ով տօնասեր եղբայր ի միտ առ յորժամ Յայտնութեան Բարեկենդանն շաբաթ օր լինի կիրակի պահք կու լինի: Գիտցիր, որ այն տարի Բարսեղն ի իւր տեղն չի տօնվիր...»<sup>4</sup>:

4874 թվահամարի գրչագիրը բացատրել է. «... Հանապազ Յայտնութեան Բարեկենդանն Դեկտեմբերի Իթ է, թէ կիրակի Հանդիպի Հ[արցն] ԳԿ ասա... Եւ է որ օրապահք Հանդիպի դու մի ուտեր և մի տօներ՝ յառաջն տօն է և զԴեկտեմբերի ԼԱ աւր համարէ որ ի պահքն չըսխալիս...», այնուհետև տալիս է՝ «Իսկ Յայտնութեան պահոցն առաջի օր... երկրորդ աւուր..., երրորդ աւուրն... չորրորդ աւուրն..., ուրբաթ... Շաբաթ. Սրբոյ Բարսեղի...

Եւ թէ ի պահքն կիրակի Հանդիպի դու Հ[արցն] ԴԶ ասա...»<sup>5</sup>: Նույնարժեք տեղեկութիւններ են տալիս մյուս տոնացույցերի և ճաշոցների խմբագրութիւնները<sup>6</sup>: Սիմեոն Երևանցին հետևել է ավանդական կարգին: Նա գրում է. «Իսկ յառաջ քան զՅայտնութեան պահքն՝ չորս օր համարեա... Ըստ ցուցման տարեգրոյն...», որից հետո ավելացնում է. «Ի մեջ աւագ տօնից պատահել Չորեքշաբաթ, ուրբաթ և կիրակէ՝ յառաջ քան զՅայտնութեան պահքն են սոքա» և բերում է այդ օրերի կարգը, որից հետո՝ «Եւ ապա պահք Մննդեան և Յայտնութեան Քրիստոսի Աստուծոյ մերոյ և տօնք ոչ լինի»: Նա տալիս է պահքի օրերի կանոնները և «ի պահոց Շաբաթ օրն՝ է սրբոցն Բարսեղի Հայրապետին...», որից հետո բացատրում է. «Ի կիրակէն՝ որ ի Յայտնութեա պահոցն Հանդիպի Հարց ԴԶ» և տալիս է «Կանօն ճրագալուցի Մննդեան Տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի» ու ավարտում Տոնացույցի տոնական կարգը:

Սամուել Կամրջաձորեցու Տօնապատճառի մեջ Հանդիպում ենք «Յայտնութեան եւ Մննդեան Քրիստոսի» հնգօրյա պահքը գործադրութեան մեջ, այսինքն՝ այն փաստով է 10-րդ դարի վերջերին 11-րդ դարի սկզբներին, սակայն կասկած չկա, որ Հիշյալ պահքը պետք է գո-

<sup>1</sup> Տե՛ս Ձեռ. № 759, էջ 177ա-բ:

<sup>2</sup> Տե՛ս Ձեռ. № 752, էջ 176ա-բ և 144ա-բ:

<sup>3</sup> Տե՛ս Ձեռ. № 7203, էջ 96ա-բ:

<sup>4</sup> Տե՛ս Ձեռ. № 4164, էջ 214բ-215ա:

<sup>5</sup> Տե՛ս Ձեռ. № 4874, էջ 199բ-200բ:

<sup>6</sup> Տե՛ս Ձեռ. №№ 8633, էջ 116բ, 1591, էջ 332ա, 933, էջ 81բ, 9838, էջ 182բ-183ա, 2031, էջ 127ա, 6952, էջ 293ա, 5440, էջ 221ա-223ա, 4962, էջ 163բ-164ա, 5436, էջ 193ա-բ, 4514, էջ 400ա-402ա, 936, էջ 118բ-134բ, 7741, էջ 464բ-478բ, 4107, էջ 880-918, 939, էջ 535բ-548բ, 4698, էջ 321ա և այլն:

յուրթյուն ունենար ավելի վաղ: 1888 թվահամարի Տօնապատճառում հեղինակը քննարկվող պահքի սահմանող հեղինակ է ճանաչում Սեղբեստրոսին: Նա գրում է. «... Իսկ Սեղբեստրոս Հռովմայ Հայրապետն, յորժամ զԿոստանդիանոս մկրտեաց, նմա եղիր Ե աւր պահք և էր ձմեռնային ժամանակ...»<sup>1</sup>:

Եփրեմ Ասորուն վերագրվող կանոնների 6-րդ հոդվածում կարդում ենք. «Զ. Պահք Աստուածայայտնութեան այսպէս կարգեցան. կրաւնաւորաց եւ այրեաց եւ ապաշխարողաց՝ Մ աւր պահք կարգեցան եւ հաստատեցան, իսկ աշխարհականաց՝ ութաւրեայ, բայց ի պահել ութաւրեայ եւ զկիրակէն, այլ որպէս Աստուածայայտնութիւնն ինքն ոչ լուծանի, այլ լուծանէ զառաքելական հրամանն, նոյնպէս եւ զկիրակէն ծոմացուցանէ, վասն զի լուծանէ զչորեքշաբաթն եւ զուրբաթն»<sup>2</sup>:

Այստեղ հեղինակը հավանաբար նկատի ունի Յիսնակամտից - Մնուկը ընկնող 50 օրն, երբ գրում է, որ 50 օր պահք կարգեցան, իսկ ութօրեան մեզ անհասկանալի է, թերևս խմբագրենք ի հնգօրեա:

1185-1187 թ. գրված մի բնագրում բերվել է Մննդեան պահքի շարժական տոմարի ամիսամսաթիվը, այն է՝ «Մինչև յայս ճառէի, յամսեան Հրոտից, որ աւր Ա էր, եւ առաջին Մննդեան պահոցն, էհաս Բարկութիւն սաստիկ յԱստուծոյ ի վերա մեք. յաղագս ծովացեալ մեղաց մերոց...»<sup>3</sup>: Այստեղ Հոռի 1-ը համարժեք է ընդունվել Դեկտեմբերի 30-ին, որպես Մննդեան պահք առաջին օրվա:

Այսպիսով, Մննդեան Պահքի ներկա տարբերակը գալիս է Գրիգոր Վկայասերի Տօնանամակից, իսկ ավելի վաղ այդ պահքը գործադրվել է Սամուել Կամրջաձորեցու ժամանակ, իսկ դրանից առաջվա համար ունենք Անանիա Շիրակացու վկայութիւնը, այն է՝ « Եւ վասն զի ի միում աւուր ամսոյն զերկոսեան տաւնեմք, անմարթ էր զաւրն յայտնել. վասն զի յայդ և յայդ աւուր դիպան. այդ ունիմք զքանիաւնութիւն ամսոյն եւ շաբաթաւրեայ մաքրութեամբ պահովք պարկեշտանամք յառաջագոյն (ընդգծումը մերն է - Ռ. Վ.) եւ տաւնեմք յոր աւուր եւ պատահէ, եւ եաւթն աւուր զկնի, զի ոչ ընդ ժամանակի եւ ընդ աւուրց իշխանութեամբ փակի Աստուած, ըստ տերունեան ձայնին. փակի Աստուած, ըստ տերունեան ձայնին. թէ տէր է որդի մարդոյ եւ շաբաթու»<sup>4</sup>: Հիշյալ տեղեկութեան մեջ շաբաթօրյա պահք է նախատեսում հնգօրյայի փոխարեն: Ասենք նաև, որ հնագույն «Կանոնք ընթերցուածոց»-ների խմբագրութիւնների մեջ բացակայում են Քրիստոսի Մննդեան պահքի կանոնները, ուստի այն գալիս է ամենավաղը 6-րդ դարից:

<sup>1</sup> Տե՛ս Ձեռ. № 1888, էջ 295ա-բ:

<sup>2</sup> Տե՛ս Կանոնագիրք Հայոց, Բ. Բ, էջ 57-58:

<sup>3</sup> Տե՛ս Ձեռ. № 3777, էջ 319ա:

<sup>4</sup> Անանիա Շիրակացու մատենագրութիւնը, էջ 291:

Բնագրեր՝

Երևանի Մատենադարանի օգտագործած ձեռագրերի համարների ցուցակ.  
142, 164, 179, 202, 507, 508, 509, 510, 587, 589, 590, 720, 722, 752, 754, 759, 767, 774, 832, 836, 933, 936, 939, 940, 979, 985, 1007, 1028, 1204, 1324, 1418, 1511, 1519, 1522, 1591, 1888, 1897, 1912, 1979, 2021, 2024, 2025, 2026, 2027, 2028, 2029, 2030, 2031, 2032, 2035, 2040, 2092, 2095, 2195, 2238, 2335, 2338, 2439, 2679, 2680, 2695, 2819, 2825, 2833, 2948, 3082, 3208, 3266, 3276, 3658, 3668, 3722, 3745, 3777, 3795, 4107, 4139, 4164, 4298, 4437, 4438, 4441, 4459, 4477, 4506, 4507, 4514, 4515, 4614, 4628, 4698, 4741, 4791, 4806, 4866, 4874, 4876, 4916, 4962, 4977, 5197, 5252, 5336, 5338, 5356, 5386, 5388, 5398, 5414, 5419, 5436, 5440, 5443, 5455, 5479, 5561, 5667, 5956, 6235, 6301, 6337, 6338, 6500, 6501, 6535, 6637, 6638, 6952, 7200, 7203, 7256, 7357, 7433, 7468, 7529, 7530, 7543, 7741, 7748, 8112, 8179, 8598, 8630, 8633, 8904, 8913, 9046, 9335, 9337, 9585, 9838, 9876, *ինչպես և Փարիզի 178 թվահամարի ձեռագրի միկրոֆիլմը (879 համարի տակ) և Երուսաղեմի 1277 թվահամարի միկրոֆիլմը: Իսկ մնացած ձեռագրերի տվյալները քաղել ենք ձեռագրացուցակներից:*

1. Ագաթանգեղայ Պատմութիւն Հայոց, Տիգրիս, 1909:
2. Մխիթարայ Այրիվանեցւոյ, Պատմութիւն Հայոց, Մ., 1860:
3. Սամուել քահանայի Անեցւոյ, Հաւաքմունք ի գրոց պատմագրաց, Վաղարշապատ, 1893:
4. Ստեփանոսի Տարոնեցւոյ Ասողական Պատմութիւն տիեզերական, 2-րդ տպ., Ս. Պետերբուրգ, 1885:
5. Պատմութիւն Տարոնոյ գոր թարգմանեաց Ձեռք Ասորի, Վենետիկ, 1832:
6. Թովմայի վարդապետի Արծրունւոյ Պատմութիւն տանն Արծրունեաց, Թիֆլիս, 1917:
7. Գրիգորի Արշարունւոյ քորեպիսկոպոսի Մեկնութիւն ընթերցուածոց, հր. Գ. Ջրեքյանի, Վենետիկ, 1964:
8. Փավստոս Բուզանդ, Պատմութիւն Հայոց, Ե., 1981:
9. Կիրակոս Գանձակեցի, Պատմութիւն Հայոց, Ե., 1961:
10. Կիրակոս Գանձակեցի, Պատմութիւն, Վենետիկ, 1805:
11. Գիրք Պիտոյից, Ե., 1993:
12. Գիրք Թղթոց, Թիֆլիս, 1901:
13. Մխիթարայ Գոշի Դատաստանագիրք Հայոց, հրատ. Վ. Բաստամյանցի, Վաղարշապատ, 1880:
14. Մխիթար վարդապետ Գոշ, Թուղթ առ Վրացիս յաղագս ուղղափառութեան հաւատոյ, հրատ. Պ. Մուրադյան, Գանձասար, հ. 6, Ե., 1996:
15. Դիվան հայ վիմագրութեան, պր. VI, Ե., 1977:
16. Դիվան հայ վիմագրութեան, պր. IV, Ե., 1973:
17. Հովհաննես կաթողիկոսի Դրասխանակերտւոյ, Պատմութիւն Հայոց, Թ., 1912:
18. Փիլոնի Երրայեցւոյ մնացորդք ի Հայս, աշխ. Մ. Ավգերյանի, Վենետիկ, 1826:
19. Եզնիկ Կողբացի, Եղծ աղանդոց, Թիֆլիս, 1914:
20. Եղիշեի վասն Վարդանանց եւ Հայոց պատերազմի, աշխ. Ե. Տեր-Մինասյանի, Ե., 1957:
21. Սրբոյ Հօրն մերոյ Եղիշէի վարդապետի մատենագրութիւնք, Վենետիկ, 1859:

22. Սրբոյն Եփրեմի մատենագրութիւնք, հ. Բ, Վենետիկ, 1836:
23. Մանր ժամանակագրութիւններ, կազմ. Վ. Հակոբյանը, հ. 1, Ե., 1951. հ. 2, 1956:
24. Հովհաննես Իմաստասիրի Աւձնեցւոյ Մատենագրութիւնք, Վենետիկ, 1833:
25. Պատմութիւն Արիստակիսի Լաստիվերտցւոյ, աշխ. Կ. Յուզբաշյան, Ե., 1963:
26. Մովսես Խորենացւոյ Պատմութիւն Հայոց, Ե., 1991 և Թ., 1909
27. Սրբոյն Հօրն մերոյ Մովսէսի Խորենացւոյ մատենագրութիւնք, Վենետիկ, 1865:
28. Կանոնագիրք Հայոց, հ. Ա, Ե., 1964:
29. Կանոնագիրք Հայոց, հ. Բ, Ե., 1971:
30. Գ. Հովսեփյան, Հիշատակարանք ձեռագրաց, հ. Ա, Անթիլիաս, 1951:
31. Եւսեբիոս Կեսարացւոյ Պատմութիւն եկեղեցւոյ, Վենետիկ, 1877:
32. Զ. Էյնաթյան, Հակոբ Ղրիմեցի. Տոմարագիտական աշխատութիւններ, Ե., 1987:
33. Ա. Մաթևոսյան, Հայերեն ձեռագիր հիշատակարաններ Ե-ԺԲ դդ., Ե., 1988:
34. Գրիգոր Մագիստրոս, Թղթեր, Ալեքսանդրապոլ, 1910:
35. Յովհան Մամիկոնեան, Պատմութիւն Տարոնոյ, աշխ. Աշ. Աբրահամյանի, Ե., 1941:
36. Յայսմաւորք, Կ. Պոլիս, 1706 (1708):
37. Անանիա Շիրակացի, Տիեզերագիտութիւն և տոմար, աշխ. Աշ. Աբրահամյանի, Ե., 1940:
38. Բ. Պատկանյան, Անանիայի Շիրակունւոյ մնացորդք բանից, Ս. Պետերբուրգ, 1877:
39. Թուղթ ընդհանրական... (Ներսես Շնորհալի), Էջմիածին, 1865:
40. Պատմութիւն Սեբէոսի, աշ. Գ. Աբգարյանի, Ե., 1979:
41. Ստեփանոս Սիւնեաց եպիսկոպոսի Պատմութիւն տանն Սիսական, Մոսկվա, 1861:
42. Սոփերք Հայկականք, հ. Բ, Վենետիկ, 1853, հ. Ը, 1853:
43. Վարք և վկայաբանութիւն սրբոց, Վենետիկ, 1874. հ. Ա և Բ:
44. Տօնացոյց, խմբ. Սիմէօն Երևանցի, Էջմիածին, 1835:
45. Մատթեոս Ուռհայեցի, Ժամանակագրութիւն, աշխ. Թրգմ. և ծան. Հ. Բարդիկյանի, Ե., 1973:
46. Ղազար Փարպեցի, Պատմութիւն Հայոց, Ե., 1981:
47. Ն. Ակինյան, Ցուցակ Հայերեն ձեռագրաց Հռոմի հայոց Հիւրանոցի ի ս. Վլաս եւ Լեւոնեան հայ վարժարանի, Վիեննա, 1961:
48. Ցուցակ Հայերեն ձեռագրաց Թավրիզի, կազմեց Հ. Աճառյան, Վիեննա՝ 1910:
49. Հ. Սահակ վրդ. Ճեմճեմյան, Մայր ցուցակ Հայերեն ձեռագրաց մատենադարանի Մխիթարյանց ի Վենետիկ, 1993:
50. Ս. Ճեմճեմյան, Ցուցակ..., հ. Ե, Վ., 1995:
51. Ն. Ոսկյան, Ցուցակ Հայերեն ձեռագրաց Մխիթարեան Մատենադարանի ի Վիեննա, հ. Բ, 1963:
52. Ն. Պողոսյան, Մայր ցուցակ ձեռագրաց սրբոյ Յակոբեանց, հ. 1, Երուսաղեմ, 1966:
53. Ն. Պողարյան, Ցուցակ..., հ. Բ:
54. Ն. Պողարյան, Ցուցակ..., հ. Գ:
55. Ն. Պողարեան, Մայր ցուցակ ձեռագրաց սրբոյ Հակոբեանց, հ. 4-րդ, Երուսաղեմ, 1969:
56. Ն. Պողարյան, Ցուցակ ..., հ. Թ:
57. Բ. Սարգսյան, Ցուցակ Հայերեն ձեռագրաց մատենադարանին Մխիթարեանց ի Վենետիկ, հ. 2-րդ, Վենետիկ, 1924:

58. Հ. Տաշյան, Ցուցակ հայերեն ձեռագրաց կայսերական մատենադարանին ի Վիեննա, Վիեննա, 1891:

Գրականություն

Հայերեն

1. Անանիա Շիրակացու լուսնի պարբերաշրջանները, տպ. պատր. Աշ. Աբրահամյանը, Ե. 1962:
2. Աշ. Աբրահամյան, Անդրեսաի տոմարական աշխատությունները (տե՛ս «Բնագիտության և տեխնիկայի պատմությունը Հայաստանում». Հ. VI, Ե., 1967):
3. Աշ. Աբրահամյան, Հայոց Գիր և գրչություն, Ե., 1973:
4. Աշ. Աբրահամյան, Աղբյուրագիտական վիճելի մի քանի հարցերի մասին, ՊԲՀ, 1976, № 2:
5. Աշ. Աբրահամյան, Անդրեսա Բյուզանդացու տոնացույցի թարգմանության ժամանակը, ՊԲՀ, 1980, № 2:
6. Ի. Աղամյան, Հայկական թվականի մասին գիտելիքներ, Բազմավեպ, 1966, թիվ 7-8 և 9-10:
7. Ն. Աղոնց, Դարձեալ Կորիւնի շուրջը, Հանդես Ամսօրեայ, 1928:
8. Ղ. Ալիշան, Հայապատում, Վենետիկ, 1901:
9. Ղ. Ալիշան, Հին հավատք կամ հեթանոսական կրոնք հայոց, Վենետիկ, 1895:
10. Ղ. Ալիշան, Յուզիկք, Ա:
11. Ղ. Ալիշան, Յուզիկք հայրենաց հայոց, Վենետիկ, 1869:
12. Ն. Ակինյան, Հայոց թվականի հաստատության ժամանակ, տե՛ս Հանդես Ամսօրեայ, 1904 № 4:
13. Ն. Ակինյան, Հայոց թվականի հաստատության ժամանակ հոգվածիս քննութեանց պատասխանս, Անդ.:
14. Ն. Ակինյան, Մատենագրական հետազոտություններ, Հ. Ե, Վիեննա, 1963:
15. Ն. Ակինյան, Քննություն Ս. Սահակի վերագրուած կանոններու եւ հայոց եկեղեցական տարին է դարու սկիզբը, Վիեննա, 1950:
16. Ն. Ակինյան, Յովսեփ Կոստանդնուպոլսեցի թարգմանիչ Յասմաուրքի (991), տե՛ս Հանդես Ամսօրեայ, 1957, ՀԱ տարի, թիւ 1-2:
17. Ն. Ակինյան, Մատենագրական հետազոտություններ, Հանդես Ամսօրեայ, 1966 թիվ 10-12, 1970 թիվ 1-3:
18. Է. Աղայան, Անդրեսա Բյուզանդացու երկուհարյուրամյա տոնացույցը և նրա հայերեն թարգմանությունը, Բանբեր Երևանի Համալսարանի, Ե., 1979, № 2:
19. Է. Աղայան, Նախամաշտոցյան հայ գրի ու գրականության, մեսրոպյան այբուբենի և հարակից հարցերի մասին, Ե., 1977:
20. Է. Աղայան, Ակնարկներ հայոց տոմարների պատմության, Ե., 1986:
21. Է. Աղայան, Անդրեսաի երկուհարյուրամյա գատկացուցակի թարգմանության ժամանակի մասին, ՊԲՀ, 1980, № 2:
22. Է. Աղայան, Հայոց բուն թվականի սկիզբը և Հայկական շրջանները, Լրաբեր (հաս. գիտ.), 1983, № 11:
23. Գ. Աղանյանց, Տոմար և տոնացույց Հայաստանյայց եկեղեցւոյ, Տփղիս, 1894:
24. Գ. Անանյան, Քննական նկատողություններ, Բազմավեպ, 1993 թիվ 1-4:
25. Գ. Անանյան, Պատմական յիշատակարանը մը Դուինի Բ ժողովի մասին, Բազմավեպ, 1957, թիվ 5-6:

26. Ն. Անդրիկյան, Տեղեկություններ Սանդուխտի վկայաբանութեան վրա, Բազմավեպ Հ. ԿԳ, Վենետիկ, 1905:
27. Ն. Անդրիկյան, Սանդուխտի վկայաբանութեան թարգմանիչը, Բազմավեպ, 1907:
28. Փ. Անթափյան, Վարդան Արևելցի գիրք Ա, Ե., 1987:
29. Փ. Անթափյան, Տոնապատճառ ժողովածուն և Վարդան Արևելցին, տե՛ս Բանբեր Մատենադարանի № 10, 1971:
30. Մ. Ավգերյան, Լրումն լիակատար վարուց և վկայաբանութեան սրբոց, Վենետիկ, 1814, Հ. ԺԱ:
31. Մ. Ավգերյան, Լիակատար վարք և վկայաբանութիւն սրբոց, Հ. Ա, 1810. Հ. Բ, 1911. Հ. Գ, 1912. Հ. Դ, 1813, Հ. Զ:
32. Թ. Ավդալբեգյան, Միրհը Հայոց մեջ, տե՛ս Հայագիտական հետազոտություններ, Ե., 1969:
33. Մ. Ավդալբեգյան, «Յայսմավուրք» ժողովածուները և նրանց պատմական արժեքը, Ե., 1982:
34. Հ. Բաղալյան, Օրացույցի պատմություն, Ե., 1970:
35. Նորայր Բյուզանդացի, Կորիւն վարդապետ եւ նորին թարգմանությունը, Տփղիս, 1900:
36. Գ. Բրուտյան, Հայոց տոմարի որոշ հարցերի մասին, տե՛ս Էջմիածին, 1983, № 7 և 1985 № 5:
37. Յ. Գաթրճյան, Սրբազան Պատալ սգամատոյց Հայոց, 1897:
38. Ս. Գնունի, Տօմարական համառոտ գիտելիք, Վաղարշապատ, 1888:
39. Գ. Զարբհանալյան, Պատմութիւն Հայկական հին դպրութեան, Վենետիկ, 1886:
40. Զ. Էյնաթյան, «Պատճէն տումարի հայոց մեծացն» և նրա մի քանի մեկնությունները, տե՛ս Լրաբեր, 1976, № 7:
41. Հ. Յ. Թորոսյան, Կանոնք Ս. Սահակայ, Բազմավեպ, 1938:
43. Բ. Թումանյան, Հայ աստղագիտության պատմություն, Հ. Ա, Ե., 1964. Հ. Բ, Ե., 1968:
44. Բ. Թումանյան, Հայ աստղագիտության պատմություն, Ե., 1956:
45. Հովհաննես Իմաստասերի Մատենագրությունը, Ե., 1956:
46. Գ. Խալաթյանց, Հայոց թվականի հաստատության ժամանակ, տե՛ս Հանդես Ամսօրեայ, 1904 № 4:
47. Լ. Խաչիկյան, ԺԴ դարերի ձեռագիր հիշատակարաններ, Հ. Ա, Ե. 1955:
48. Գ. Կոստանդյան, Աստղաբաշխութիւն համառոտ, Զմյուռնիա, 1853:
49. Հ. Վ. Հացունի, Հայաստանեայց եկեղեցին Լուսաւորչէն յառաջ, Բազմավեպ, 1926 (Օգոստոս, Սեպտեմբեր, Հոկտեմբեր)
50. Գ. Յովսեփյան, Թովմա Մեծոփեցու կյանքը, Վաղարշապատ, 1914:
51. Ստ. Մալխասյանց, ժամանակագրական խնդիրներ հայոց հին մատենագրության մեջ, Տեղեկագիր ՀՍՍՌ ԳԱ, 1944, № 6-7:
52. Գ. Մանուկյան, «Լաստիվերցոյն՝ Մեկնութիւն ընթերցուածոց», տե՛ս Էջմիածին, 1969, № Ե:
53. Ա. Մարաբյան, Գրիգոր Խլաթեցու պատմագրական երկերը, տե՛ս ՊԲՀ, 1977, № 2:
54. Ն. Մելիք-Թանգյան, Հայոց եկեղեցական իրավունք, Շուքի 1903:
55. Անանիա Շիրակացու մատենագրությունը, Ե., 1944:
56. Մ. Չամչյան, Պատմութիւն Հայոց, Հ. Ա, 1874, Վենետիկ, Հ. Բ, 1785:
57. Պատմութիւն կաթողիկէ վարդապետութեան ի հայս և միութեան նոցա ընդ հռոմէական եկեղեցւոյ ի Փլորենտեան սիւհոգոսի, գրեց Ա. Պալճյան, Վենետիկ, 1877:
58. Շառլ Ռընու, «Ճաշոց գրքի ծագումն ու զարգացումը», ՊԲՀ, 1982, № 2:

59. Շառլ Ռընու, Աստուածայայտնութեան տօնը Երուսաղէմում Դ եւ Ե դարերում ըստ Երուսաղէմի հայկական ճաշոց գրքի, Գանձասարը, 1996:
60. Գ. Սարգսյան, Գրիգոր Անաւարգեցիին հայրապետ եւ գրիչ, Բազմավէպ, 1947, №9-10, 1948, № 1-2, 4-9, 1949, № 3-4:
61. Օ. Սեքուլյան. Շառլ Ռընուի գրքի գրախոսականը. տե՛ս Հանդես Ամսօրեայ, 1969, թիվ 1-3:
62. Լ. Սիմյոնով, Հայկական տոմարի մի քանի հարցերի մասին, տե՛ս Մատենադարանի գիտական նյութերի ժողովածու, Ե., 1944, № 1:
63. Տոմարագիտութիւն ընդհանուր եկեղեցական եւ քաղաքական, աշխ. ի հ. Խաչատուր վարդապետէ Սիւրմելեան ի Միսիթարեան Միաբանութենէ, Վենետիկ, 1818:
64. Ա. Սրապյան, Բանասիրական ճշգրտումներ, տե՛ս ՊԲՀ № 4:
65. Ռ. Հ. Վարդանյան, Հայոց տոմարական եղանակը, Թարգմանական բնագրերի ժամանակը, Ե., 1993:
66. Ռ. Վարդանյան, Հայաստանի չափերն ու կշիռները, Ե. 1989:
67. Ռ. Վարդանյան, Անանիա Շիրակացու հիշատակարանների մեկնութեան շուրջը և մի քանի տոմարական-ժամանակագրական հարցեր, տե՛ս ՊԲՀ, 1987, № 1:
68. Հ. Տաշյան, Վարդապետութիւնն Առաքելոց անվաւերական կանոնաց մատեանը, Վիեննա, 1896:
69. Գ. Տեր-Մկրտչյան, Ազաթանգեղոսի աղբյուրներից, հ. Ա, Ե., 1979:
70. Մ. Օրմանյան, Հայոց եկեղեցին, Ե. , 1993:
71. Մ. Օրմանյան, Ազգապատում, հ. Ա, Պեյրութ, 1959:

Օտար լեզուներով.

- Ա. Э. Бикерман, Хронология древнего мира, М., 1975.
- Բ. Н. Марр, Крещение армян, грузин, абхазов и аланов святым Григорием (Арабская версия), Спб, 1905.
- Գ. Мифы народов мира, М., 1980.
- Դ. Л. А. Тер-Петросян, Сиро-Армянские литературные связи в 4-5 вв. (Автореферат), Ленинград, 1986.
- Ե. М. Э. Посов, История Христианской церкви, Киев, 1991.
- Ա. А. Baumstark, Liturgie comparee principes et methodes pour l'etude des liturgies chitennes 3<sup>e</sup> edition, reoue Pardom Bernard Botte, Cevetoge, 1953.
- Բ. А. Baumstark, Neuerchlossene urkonden altchristlicher Perik opon ordnung des ostaramaischen sprachgedietes, dans oriens chritianus, 3., 5., Band 1 (1927).
- Գ. А. Baumstark, Festbreuier und Kirchenjahr der Syrischen Jakobiten (stuzien zuz Geschich und kultur des Altertums, 3), Peder zborn, 1910.
- Դ. B. Botte, Le lestonnaire Armenien et la fete de le Theotokos a Jerusalem au ve siecle, dans Sacris Erudiri, 8 (1949).
- Ե. (Dom Botte) Archive fur Liturgie Wissenschaft III/2 (1954).
- Զ. B. Capelle, La Fete de le Vierge, a Jerusalem au Ve siecle, dans Le musem 561 (1943).
- է. C. F. Conubeare The Armenian version of Revelation and Cyril of Alexandria's Scholia of the Incarnation and Epistle on Easter, Zodon, 1907.
- Ը. C. F. Conubeare The Armenian, Canons of St. Sahak, Catholicos of Armeniana (390-439 A. D.), of Armerican Jerusal of Theology, 2, 1894.

Թ. C. F. Conybeare, Rituale Armenorum, Oxford, 1905.

Ճ. E. Dulaurier, Recherche la chronologie Armenienn, Paris, 1859.

ՃԱ. Ginzel. Handbuch der matematischen und technischen chronologie, II Band, Leipzig, 1914.

ՃԲ. V. Grumel, La Chronologie, Paris, 1958.

ՃԳ. A. Mai, Scriptorum veterum nova collectioe vaticanis codicibus edita, t.X, 2, Romae, 1838.

ՃԴ. Paul Peeters. S. I., Pour L'Histoire Du Synaxaire Armenien, Extrait des Analecta landiana, tome XXX, Bruxelles, 1911.

ՃԵ. Renoux Athanase, Le Codex Armenien Jerusalem 121. I Intriducion aux origines de la liturgie Hierosalymitaine Lumieres nouvelles (Patrologia orientalis, Tome XXXV. Fascicrele 1 № 163), Brepols-Turnhoue, Belgique 1969.



**ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ**

ՄՈՒՏՔ	
ԳԼՈՒԽ Ա	5
ՀԱՅՈՑ ԴԻՑԱՐԱՆԻ ՏՈՆԵՐԸ	
ԳԼՈՒԽ Բ	8
«ԿԱՆՈՆՔ ԸՆԹԵՐՑՈՒԱԾՈՑ»-Ը	
ԳԼՈՒԽ Գ	25
ՈՐՈՂՆՔ ԵՆ ՍԱՀԱԿ ԿԱԹՈՂԻԿՈՍԻ ԿԱՆՈՆԱԿԱՆ ՀՐԱՄԱՆՆԵՐԸ ԵՎ ԹՂԹԵՐԸ	
ԳԼՈՒԽ Դ	45
ԱՆԴՐԵԱՍԻ 200-ԱՄՅԱ ԶԱՏԿԱՑՈՒՑԱԿԸ	
ԳԼՈՒԽ Ե	64
ՔՐԻՍՏՈՍԻ ԾՆՆԴԵԱՆ ՏՈՆԻ ԽՆԴԻՐԸ «ԿԱՆՈՆՔ ԸՆԹԵՐՑՈՒԱԾՈՑ»-Ի ԽՄԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԴԱՍԱԿԱՐԳՈՒՄԸ ՀՈՎՀԱՆ ՄԱՆԴԱԿՈՒՆԻՆ ԵՎ ՀԱՅՈՑ ՏՈՆԱՑՈՒՑՅԻ ՆՈՐ ԽՄԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ	
ԳԼՈՒԽ Ջ	95
ՀԱՅՈՑ ՏՈՆԱԿԱՆ ՏԱՐԻՆ 6-ՐԴ ԴԱՐԻ 50-ԱԿԱՆ ԹՎԱԿԱՆՆԵՐԻՆ	
ԳԼՈՒԽ Է	108
ԷԱՍՅԱՆ 532-ԱՄՅԱ ԶԱՏԿԱՑՈՒՑԱԿԸ ԵՒ ՀԱՅՈՑ ԹՎԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԸ	
ԳԼՈՒԽ Ը	115
«ԿԱՆՈՆՔ ԸՆԹԵՐՑՈՒԱԾՈՑ» ԵՐՐՈՐԴ ԽՄԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ: ԱՐՏԵՄՈՆԱԴԻՐ ԸՆԹԵՐՑՈՒԱԾՈՑԻ ՈՐՈՇ ՏՈՆԵՐԻ ԿԻՐԱՌՈՒՄԸ ՀԱՅՈՑ ՄԵՋ 630-710-ԱԿԱՆ ԹՎԱԿԱՆՆԵՐԻՆ	
ԳԼՈՒԽ Թ	141
ՍՐԲԵՐԻ ՀԻՇԱՏԱԿԻ ՏՈՆԵՐԻ ԿԱՏԱՐՈՒՄԸ ՀԱՅՈՑ ՄԵՋ (4-8-ՐԴ ԴԱՐԵՐ)	
ԳԼՈՒԽ Ճ	144
ՀԱՅՈՑ ԸԼԲ ԶԱՏԿԱՑՈՒՑԱԿԸ ԵՎ ԱՆԱՆԻԱ ԾԻՐԱԿԱՑԻՆ	
ԳԼՈՒԽ ԺԱ	147
ՀՈՎՀԱՆ ՕՋՆԵՑՈՒ ԱՐՄԱՏԱԿԱՆ ԲԱՐԵՓՈՒՆՈՒՄՆԵՐԸ ՀԱՅՈՑ ԺԱՇՈՑ-ՏՈՆԱՑՈՒՑՑՈՒՄ	
ԳԼՈՒԽ ԺԲ	198
8-ՐԴ ԴԱՐՈՒՄ ՍՏԵՂԾՎԱԾ ՏՈՆԱԿԱՆ ԲՆԱԳՐԵՐԸ	
ԳԼՈՒԽ ԺԳ	207
«ՄԵԿՆՈՒԹԻՒՆ ԸՆԹԵՐՑՈՒԱԾՈՑ» («ՏՈՆԱՊԱՏԺԱՌ») ԺՈՂՈՎԱԾՈՒԻ ԱՌԱՋԱՑՈՒՄԸ ԵՒ ՆՐԱ ՀԵՏԱԳԱ ԽՄԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ	
ԳԼՈՒԽ ԺԴ	214
ԱՏՈՄ ՎԱՐԱԳԵՑՈՒ ԽՄԱԳՐԱԾ ՀՈՒՈՄԱԴԻՐԸ (10-րդ դարի վերջ)	
ԳԼՈՒԽ ԺԵ	227
ՍԱՐԿԱՎԱԳԱԴԻՐ ՏՈՄԱՐԸ ԵՒ ԸԼԲ-Ը	
ԳԼՈՒԽ ԺԶ	230
ԳՐԻԳՈՐ ՎԿԱՅԱՍԵՐԻ ՏՈՆԱՆԱՄԱԿԸ	
ԳԼՈՒԽ ԺԷ	267
«ՅԱՅՄԱՎՈՒՐՔ» ԺՈՂՈՎԱԾՈՒԻ ՍՏԵՂԾՈՒՄԸ ԵՎ ՆՐԱ ՀԵՏԱԳԱ ԽՄԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ (9-15-ՐԴ ԴԴ.)	
ԳԼՈՒԽ ԺԸ	280
ՆՈՐԱԳՈՒՅՆ ՄԵԹՈԴՆԵՐԸ ԵՎ ՍԱՐԿԱՎԱԳԱԴԻՐ ՈՒ ԱՅԼ ԺԱՇՈՑՆԵՐԻ, ՏՈՆԱՑՈՒՑՑԵՐԻ, ՅԱՅՄԱՎՈՒՐՔՆԵՐԻ ԱՄՍԱԹՎԵՐԻ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆԸ	
ԳԼՈՒԽ ԺԹ	298
ՀԱՅՈՑ ՏՈՆԱՑՈՒՑՑԵՐԻ ԵՎ ԺԱՇՈՑՆԵՐԻ ՏՈՆԱԿԱՆ ՕՐԵՐԸ ԵՎ ՆՐԱՆՑՈՒՄ ԿԱՏԱՐՎԱԾ ԽՄԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՔՆՆՈՒԹՅՈՒՆԸ (9-18-ՐԴ ԴԱՐԵՐ)	
ԳԼՈՒԽ Ի	420
ՄԱՐԻԱՄ ԱՍՏՈՒԱԾԱԾՆԻ ՏՈՆԵՐԸ ՀԱՅՈՑ ՄԵՋ	
ԳԼՈՒԽ ԻԱ	522
ՍՈՒՐԲ ԽԱՉԻ ՏՈՆԱԿԱՆ ՕՐԵՐԸ ՀԱՅՈՑ ՄԵՋ	
ԳԼՈՒԽ ԻԲ	553
ՀՈՎՀԱՆՆԵՍ ՄԿՐՏՉԻ ԿԱՄ ԿԱՐԱՊԵՏԻ ՏՈՆԱԿԱՆ ՕՐԵՐԸ ՀԱՅՈՑ ՄԵՋ	
ԳԼՈՒԽ ԻԳ	569
ԳՐԻԳՈՐ ԼՈՒՍԱՎՈՐՉԻ ՏՈՆԱԿԱՆ ՕՐԵՐԸ ՀԱՅՈՑ ՄԵՋ	
ԳԼՈՒԽ ԻԴ	589
ՊԱՀՈՑ (ՊԱՀՔԻ) ՕՐԵՐԸ ՀԱՅՈՑ ՄԵՋ	
	613

Ռաֆիկ Հովակիմի Վարդանյան  
Հայոց Տոնացույցը (4-18-րդ դարեր)

Рафик Овакимович Вартанян  
Армянский календарь (4-18 века)  
(на армянском языке)  
Ереван 1999

Խմբագիր Գ. Հ. Կարախանյան  
Համակարգչային ձևավորումը Շուշանիկ Մուրաֆյանի  
Վերստուգող սրբագրիչ Վ. Դերձյան

Հանձնված է շարվածքի 15.02.98 թ.: Ստորագրված է տպագրության 19.07.99 թ.,  
չափերը 60x84<sup>1/8</sup>, տպաքանակ 500: Տպագրական 40,5 մամուլ: Օֆսեթ  
տպագրություն, թուղթ՝ օֆսեթ N 1, պատվեր 2, գինը՝ պայմանագրային

ՀՀ ԳԱԱ «Գիտություն» հրատարակչություն, Երևան, Մարշալ Բաղրամյան պող. 24գ  
Երևանի պետհամալսարանի տպարան, Երևան, Արշակունյաց փող. 52